

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

ОЧЕРКИ ПО  
ИСТОРИИ СРЕДНЕАРМЯНСКОГО  
ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

1

ИЗДАТЕЛЬСТВА АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1972

ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա

Միջին գրական հայերենը, որ XII—XVII դարերի հայոց կենդանի գրական լեզուն էր, հայերենի զարգացման ամենից ավելի քիչ ուսումնասիրված մի շրջանն է: Սույն հատորը, որ կազմել են Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատակիցները (Հովհաննես Մուրադյան—«Ներածություն», «Հնչյունաբանություն», Մաղինա Մուրադյան—«Բառագիտություն», Սամվել Անթոսյան—«Խոնարհման համակարգը», «Զթեքվող խոսքի մասեր»), բազմապիսի սկզբնաղբյուրների հանգամանալից քննությամբ ներկայացնում է միջին գրական լեզվի ինչպես ընդհանուր, նույնպես և առանձին կարգերին հատուկ կարևոր իրողությունները:

Խմբագրությամբ  
Է. Բ. ԱՂԱՅԱՆԻ

## Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Փ

«Միջին գրական հայերենի պատմության ակնարկներ» այս հատորը, որ կոլեկտիվ-հեղինակային աշխատանք է, իր մեջ ընդգրկում է «Ներածություն» և «Հնչյունաբանություն» (հեղինակ՝ Հ. Գ. Մուրադյան), «Բառագիտություն» (հեղինակ՝ Մ. Հ. Մուրադյան), ձևաբանությունից՝ «Խոնարհման համակարգը» և «Զթեփոզ խոսքի մասեր» (հեղինակ՝ Ս. Մ. Անթոսյան) բաժինները:

Աշխատության հեղինակներն իրենց առջև նպատակ են դրել՝ ի մի բերել և ամբողջացնել այս բնագավառում մինչև օրս կատարված հետազոտությունների արդյունքները, ամենաբազմազան սկզբնաղբյուրների ընձեռած փաստական նյութի հիման վրա վերանայել տեսական որոշ դրույթներ ու եզրակացություններ, հնարավորության սահմաններում ավելի ամբողջական տեսույթներ կայացնել լեզվական առանձին մակարդակներում հանդես եկող միավորների նկարագիրը: Եվ շնայած այն բանին, որ մինչև այս աշխատության հրատարակ գալը, մեր լեզվի պատմության այս շրջանի հետազոտության բնագավառում կատարվել է որոշակի աշխատանք (տե՛ս սույն աշխատության «Ներածության» առաջին բաժինը), այնուամենայնիվ, այս գիրքը իր մի շարք կողմերով, հատկապես լեզվական նոր նյութի ընդգրկման ու մեկնաբանման տեսակետից, նոր խոսք կարող է լինել գիտության արդի էտապում:

Հեղինակները, միաժամանակ, հեռու են այն մտքից, թե սույն հատորում ներկայացվածը իր ֆննարկած խնդիրների, առաջ փաշած հարցադրումների ու դրանց լուծման, ինչպես նաև փաստական նյութի ընդգրկման տեսակետից, այս բնագավառում կատարվող աշխատանքի վերջին սահմանն է: Հայտնի է, որ միջին հայերենը մեր լեզվի այլ փուլերի համեմատությամբ ավելի փիչ և ոչ ամբողջ խորությամբ ուսումնասիրված բնագավառ է: Այս իսկ տեսակետից էլ բնական պիտի համարել, որ այստեղ առաջ փաշված որոշ հարցադրումներ, որպես նորություններ, կարող են երբեմն վիճելի լինել, իսկ որոշ եզրակացություններ էլ՝ դեռևս ո՛չ բավարար հիմնավորված ու փաստարկված: Անշուշտ, միջնադարյան նոր սկզբնաղբյուրների հայտնաբերմամբ ու օգտագործմամբ, Մատենադարանի ձեռագրային ֆոնդի ավելի լայն ընդգրկմամբ, հետագայում զարող են ավելի ճշգրտվել ու լրացվել այս կամ այն հարցի մեկնաբանման



նետ կապված եզրակացություններն ու կոաֆումները: Սակայն, այսուհանդերձ, այն հարցերը, որոնք առաջ են քաշված այս աշխատության մեջ, իրենց բնույթով ոչ միայն կարող են հետաքրքրություն ներկայացնել, այլև՝ մեծապես նպաստել այդ նույն ուղղությամբ կատարվելիք հետագա որոնումներին:

Հեղինակները պատրաստ են ընդունելու ամեն մի օգտակար խորհուրդ ու անաչառ ֆենադատական դիտողություն, որոնք կօգնեն նրանց իրենց հետագա աշխատանքներում:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ն Ե Ր

Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Միջին հայերենի պատմությանը նվիրված ամեն մի նոր ուսումնասիրություն, գիտության մեջ նոր խոսք ասելու իր հավակնության հետ միասին, չի կարող անտեսել այն ուսանելին ու արժեքավորը, որ ձեռք է բերվել գիտության նախորդ շրջանի անխոնջ մշակների ջանքերով: Միայն այդ բոլորի քրննադատական յուրացմամբ և փաստական նոր նյութի ուսումնասիրությամբ է հնարավոր լուսաբանել լեզվի պատմության տվյալ շրջանի բազմաթիվ հարցերը: Իսկ այդ հարցերը, իրոք որ շատ են՝ ինչպես ընդհանուր տեսության, այնպես և լեզվական կոնկրետ երևույթների մեկնության տեսակետից:

Չնայած որ սույն ուսումնասիրության մեջ այս կամ այն լեզվական երևույթի քննության ընթացքում որոշակի վերաբերմունք է ցուցաբերվում նախկինում դրանց պատմական լուսաբանման նկատմամբ, այնուամենայնիվ, այստեղ անհրաժեշտ է միջին հայերենի ուսումնասիրության պատմության մի համառոտ ակնարկ, նկատի ունենալով այն հիմնական հեղինակներին ու նրանց աշխատությունները, որոնք որոշակի դեր են խաղացել այս բնագավառի գիտական մտքի զարգացման գործում:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեջ խոշորագույն իրադարձություն էր մեծ հայագետ Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության լույս աշխարհ գալը (1866 թ., Վիեննա): Գրաբարի հմուտ մասնագետ, օժտված լեզվական երևույթների խոր դիտողականությամբ, միաժամանակ կանգնած լինելով ժամանակի լեզվաբանական մտքի առաջավոր դիրքերում, Այտընյանը հայոց լեզվի պատմության մի շարք կնճռոտ հարցերի քննության մեջ հանդես բերեց դրանց պատմականության խոր ըմբռնում:

Մեր նպատակից ու ծրագրից դուրս է՝ տալ այդ մեծարժեք ուսումնասիրության մանրամասն վերլուծությունը կամ՝ նրանում արժարժված բոլոր հարցերի շարադրանքը: Այդ աշխատությունից մեզ, մասնավորապես, հետաքրքրում են այն հարցերը, որոնք անմիջապես առնչվում են միջին հայերենի առաջացման, զարգացման և նրա հետ կապված այլ խնդիրների հետ:

Նպատակ ունենալով պաշտպանելու աշխարհաբարի դատը և այդ կապակցությամբ ուրվագծելու աշխարհաբարի առաջացման պատմական ընթացքը, Այտընյանը դար առ դար հետևում է հայերենի լեզվական հուշարձաններում տեղ գտած փոփոխություններին, հին լեզվի օրինաչափություններից

կատարվող շեղումներին, քննում է դրանց էությունը և ցույց տալիս, որ աշխարհաբարի տարրերը սկիզբ են առնում դեռևս հին լեզվի (գրաբարի) ընդերքում և աստիճանական զարգացմամբ միայն հասնում լեզվական նոր որակի: Արդեն իսկ V դարի մատենագրության առանձին հուշարձանների լեզվական քննությունը նրան բերում է այն համոզման, որ «...եղած դիտողություններն ու բերված օրինակները գլխավորաբար երկու բան կհաստատեն. մեյ մը՝ հին մատենագրական հայերենին ժամանակակից ընտանեկան կամ ուսմական հայերենի մը գոյությունը և մեյ մնալ՝ որ հիմա աշխարհաբարի հատուկ մնացած կամ զուտ աշխարհաբար երևցած բացատրություններ արդեն շատ հնուց կենդանի էին՝ մանավանդ նույն հասարակ լեզվին մեջ, կամ թե ըսենք, գրավոր լեզվին մեջ ցանցառ՝ բայց ընտանի խոսվածքի մեջ, որչափ կերևա, սովորական էին»<sup>1</sup>:

Սակայն IV—V դարերի Հայաստանում մատենագրական հայերենին զուգահեռ «ընտանեկան կամ ուսմական հայերենի» գոյությունը Այտընյանը չի ըմբռնում որպես երկու տարբեր լեզուների (կամ բարբառների) առկայություն: Այդ երկուսի տարբերությունը նա ընդունում է «...այնչափ միայն՝ որչափ որ միշտ և ամեն տեղ կենդանի լեզու մը յուր բարձրագույն և խոնարհագույն կարգերը կունենա, յուր գրավորական ու ժողովրդականը կզանազանե, հասարակորեն քերականական տարբերություններով ալ, որոնցմե որչափ ավելի կխորշի մատենագրությունը՝ նույնչափ ավելի հեռու կմնա այն մասեն, որ արդեն սկսած է տիրող ըլլալու: Եվ ահա այս մասն է՝ որ իրոք ալ հառաջացած զարգացած՝ հետզհետե առած նորանոր ձևերովն ու կրած այլայլություններովը վերջին դարերուս կենդանի լեզուն եղած է»<sup>2</sup>:

Գրաբարի ընդերքում աշխարհաբարի տարրերի առաջացման ու զարգացման նույն եզրակացությունը Այտընյանը գալիս է նաև միջին շրջանի լեզվական հուշարձանների ուսումնասիրությամբ: Հատվածներ մեջքերելով միջնադարյան առակներից, Մխ. Հերացու Զերմանց մխիթարությունից (ԺԲ դար), Սմբատի Պատմությունից (ԺԳ դար), որոնց լեզուն մի շարք էական կողմերով տարբերվում է հին մատենագրության լեզվից, Այտընյանը իրավացիորեն նկատում է, որ այդպիսի մի լեզվական որակ անհնար է, որ ստեղծվեր մի հարյուրամյակի ընթացքում: «Մենք այս լեզուն, — գրում է նա, — գործածության ժամանակեն առնելով՝ ԺԱ և ԺԲ դարերուն լեզուն կանվանենք, բայց խորհրդածություն մը ասոր ժամանակագրական դիրքն ավելի կճշգրտե: — Եթե, ինչպես բացահայտ կտեսնենք, ԺԱ և ԺԲ դարուց լեզուն և մեր կամ մեր նախընթաց դարուներ իրարու շատ մերձավոր են, և 6, 7 հարյուր տարվո փոփոխությունն այնչափ մեծ չէ եղած, բնական է հետևցնել՝ թե անկե գոնև քանի մը դար հառաջ ալ նույն էր կամ գրեթե նույն. որպեսզի չըսենք թե Թ դարուն մեջերը նոր հայերեն մը հանկարծ երևան ելած է. վասնզի կարելի չէ մտածել՝ որ հարյուրավոր նորանոր բառեր, այնչափ նշանակությանց այլայլություններ, տարբեր տարբեր կաղմություններ, և միով բանիվ՝ բոլորովին նոր քերականությամբ նոր լեզու մը՝ մեկ կամ երկու դարու միջոցին մեջ կերպացած ընդհանուր ու հասարակ եղած և հնույն տեղը փոխանակած ըլլա»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Քննական քերականություն», էջ 62:

<sup>2</sup> Անդ, էջ 120:

<sup>3</sup> Անդ, էջ 161:

Տարբեր դարերի մատենագրական հուշարձանների լեզվական փաստերի քննությունը Այտընյանը որոշակի փորձ է անում կատարելու հայոց լեզվի պատմության այս ժամանակահատվածի շրջանաբաժանումը: Նա VI դարի վերջից մինչև X դարն ընկած ժամանակաշրջանը անվանում է միջին դարեր: Այս էտապի համար բնորոշ է համարում նախորդ շրջանում ստեղծված լեզվական նոր երևույթների զարգացումն ու գործածության հաճախացումը: Ընդ որում, եթե մատենագրության սկզբից մինչև VI դարը հին և նոր լեզվի միջև եղած շեղումները ունեն դեռևս կենդանի լեզվի գրավոր և բանավոր արտահայտություններին հատուկ տարբերությունների աստիճան, ապա VII դարը համարում է այն սահմանագիծը, որտեղ որոշակիորեն արդեն ծնված է նորը, թեև դեռևս թույլ և շճանաչված:

Հին գրավոր լեզվին զուգահեռ բանավոր խոսակցական լեզվի զարգացումը VII դարից հետո ընկած ժամանակաշրջանում, ըստ Այտընյանի, հասցնում է այն բանին, որ արդեն XI դարում հին մատենագրության լեզուն դադարում է կենդանի լինելուց, որին փոխարինելու է գալիս հնի ընդերքում ծնված նոր լեզուն: XI—XV դարերի այս հայերենը Այտընյանը անվանում է «նախնյաց» կամ «ստորին դարուց ուսուցողական», որի բնորոշ առանձնահատկություններից է համարում՝ «անմշակություն, անմիօրինակություն և օտարություն հաճախություն»<sup>4</sup>: Իր ուսումնասիրության արդյունքները Այտընյանին հիմք են տվել ասելու, որ «...գաղթականությանց սկզբներեն հառաջ Հայաստանի (և Կիլիկիայի) աշխարհիկ լեզուն քանի մը տեսակ էր»<sup>5</sup>: Սա նշանակում է, թե Այտընյանը զարգացման միասնական պրոցես չէր վերագրում միջնադարի բանավոր խոսակցական լեզվին: Եվ հենց այդ հիմքի վրա է, որ նա աշխարհիկ լեզվի զարգացումը դիտում է որպես առանձին զավառականների զարգացում, որոնք իրենց բնական ընթացքով հասան ժամանակակից բարբառներին և նրանց տարբեր հիմքերի վրա բարձրացող գրական լեզուներին:

Սակայն չպետք է մոռանալ, որ Այտընյանի աշխատության նպատակը միջին հայերենի, իր խոսքերով ասած՝ «նախնյաց ուսուցողական» ուսումնասիրությունը չէր: Հետևելով աշխարհաբարի տարրերի առաջացման և նրանց զարգացման պրոցեսին, նա կողմնակի կերպով տվել է նաև հայոց լեզվի միջին շրջանի պատմության հետ կապված մի շարք տեսական հարցերի քննությունը:

Քանի որ աշխարհաբարի առաջացման ու կազմավորման պրոցեսի ամբողջ ընթացքը միաժամանակ նաև միջին հայերենի առաջացման ու կազմավորման պատմությունն է, այս իսկ տեսակետից էլ Այտընյանի «Քննական քերականությունը» և հատկապես այդ աշխատության «Նախաշավիղ» բաժինը, որպես տեսական ուսումնասիրություն, իր մի շարք դրույթներով մինչև այժմ էլ չի կորցրել իր թարմությունը և գիտական արժեքը: Միաժամանակ Այտընյանի «Քննական քերականությունը» որոշակի դեր է խաղացել հայերենի հետագա պատմական ուսումնասիրությունների տեսության և մեթոդի մշակման գործում: Լեզվի պատմական զարգացման ըմբռնումը, հատկապես մեր լեզվի միջին շրջանի՝ «նախնյաց ուսուցողական» առանձնացումը որպես հայերենի պատմական մի փուլի, որը ոչ թե լեզվի աղավաղման կամ խաթարման արդ-

<sup>4</sup> Նշվ. աշխատությունը, էջ 147:

<sup>5</sup> Անդ, էջ 165:

յունք էր, այլ նրա բնական և օրինաշափ զարգացման հետևանքը, որդեգրվում է հետագա ուսումնասիրողների կողմից: Այս առումով Ղ. Հովնանյանի «Հետազոտութիւնք նախնայաց ռամկորենի վրա» աշխատութիւնը Այտրնյանի դրույթների հետագա զարգացումն ու փաստական հիմնավորումն է՝ հասկացես միջին հայերենի նյութի քննութեամբ:

Հովնանյանը ևս իր առջև նպատակ չի դնում քննարկվող շրջանի լեզվի համակողմանի հետազոտութիւնը, այլ՝ «...այն մասանցն եվեթ պիտի նվիրենք մեր գլխավոր ուշադրութիւն, որք կապ ու հարաբերութիւն ունին արդի լեզվիս հետ, այն մասանց՝ կրեմ՝ զորս եղանակով իվիք մեզի սեպհականած ենք կամ՝ որոնց մեզի ընտելանալ բաղձալի կերևա»<sup>6</sup>: Ուսումնասիրութեան այդ եղանակը ունեւր միանգամայն գործնական նպատակներ. «նախնայաց ռամկորենը» պետք էր ուսումնասիրել արդի լեզվի կառուցվածքը հասկանալու և մյուս կողմից՝ արդի լեզուն միջին հայերենի բառերով ու դարձվածքներով հարստացնելու համար:

Իր աշխատութեան «նախաշափիդ» բաժնում Հովնանյանը իր առջև խնդիր է դնում պարզել, թե որտեղից և ե՞րբ ծագեց «նախնայաց ռամկորենը»: Այտրնյանի հետևողութեամբ Հովնանյանը V դարի Հայաստանում ընդունում է առանձին գավառականների առկայութեանն այն շափով, որ դրանցից մեկի վրա բարձրացած գրավոր լեզուն ժողովուրդը «կհասկընար, յուր սովորական բարբառեն անշուշտ շատ տարբեր ըլլալով»<sup>7</sup>:

Գրականութեան սկզբնավորման շրջանում իրարից որոշ տարբերութեաներ ունեցող գավառականների գոյութիւնը ապացուցելու համար, բացի Այտրնյանի բերած փաստարկներից, Հովնանյանը նշում է նաև հետևյալները. ա) արփի, սաղարթ, փարթամ, տոփանք, տրոհել, հրճուել..., ածանցված՝ աղօթել, ողջունել, ուրախանալ, ուրախացուցանել, պատասխանել, գեղջուկ, վաղեմի... բառերի գործածութիւնը Սահակի և Մեսրոպի կրտսերագոյն աշակերտների լեզվում. բ) կրտսեր աշակերտների օգտագործած նախածանցների մեծ մասը մեկնվում է հայերենից ավանդված բառերով. անհասկանալի են մնում՝ բաղ-, մակ-, տրամ-, փաղ- և այլ ածանցներ, որոնք, հավանաբար, այլ բարբառներից են վերցված. գ) հին բայական ձևերին զուգահեռ, սկզբնապես գեռուս շատ քիչ, բայց հետագայում ավելի հաճախ հանդիպող նոր ձևեր՝ անցան=անց, ելաւ=ել, իջաւ=էջ, հասաւ=հաս, մտաւ=եմուտ, կեցաւ=եկեաց, կացաւ=եկաց... տուին=ետուն, դրին=եդին, դրաք=եդաք, լսեց=լուաւ, հասի՛ր=հաս, գիտացի՛ր=գիտա՛, տուէ՛ք=տո՛ւք, դրէ՛ք=դի՛ք և այլն<sup>8</sup>:

Այս փաստերից Հովնանյանը եզրակացնում է՝ «Ըստ մեզ՝ ավելի պատշաճ կերևա ըսել թե այս ամենայն բառերն ու ձևերը ի գիրս առաջին թարգմանչաց շեն գտնվիր, վասնզի անծանոթ էին դեռ այն դարուն, կամ այն բարբառոյն՝ զոր հիմն առին գրավոր լեզվին, հատուկ ըլլալով այլ գավառական բարբառոց, հորոց հետո առին երկրորդ թարգմանիչք կամ հաջորդ դարուց մատենագիրք»<sup>9</sup>:

Ըստ Հովնանյանի, իրարից ոչ շատ տարբերութեաններ ունեցող այդ գա-

<sup>6</sup> Ղ. Հովնանյան, Հետազոտութիւնք նախնայաց ռամկորենի վրայ, Տետր Ա, 1897, Վիեննա, էջ Ը:

<sup>7</sup> Անդ, էջ 2:

<sup>8</sup> Անդ, էջ 16:

<sup>9</sup> Անդ, էջ 7:

վառականներն են, որ գրավոր լեզվին զուգահեռ զարգանում են հետագա դարերում, իսկ գրավոր լեզուն չի կարողանում դրանք անհետացնել և միակ տիրողը դառնալ: «Նախնայաց ռամկորհներ,—եզրակացնում է Հովնանյանը,—ծագած է Հայաստանի ժամանակակից գավառականներեն, և զանազան եղանակավորմամբ՝ հին գրավոր լեզվեն. կամ թե խառնուրդ է ժամանակակից գավառական բարբառոց և գրավոր լեզվի»<sup>10</sup>:

Միջնադարյան հուշարձանները Հովնանյանին դիտել են տալիս, որ դրանք լեզվական տեսակետից նույն ժամանակաշրջանում միատարր չեն: Որոշ հեղինակների մոտ դեռևս շարունակվում է հին լեզվի ավանդական կիրառությունը. մի այլ կարգի հուշարձաններում լեզուն առավել ժողովրդական է՝ համարյա զերծ հին լեզվի տարրերից. մի երրորդ կարգի աշխատությունների լեզուն խառն է հին և նոր լեզվի տարրերով: Այս իսկ տեսակետից էլ Հովնանյանը, ըստ օգտագործած լեզվի բնույթի՝ գրավոր հուշարձանները դասակարգում է շորս հիմնական խմբերում. ա) գրաբար աշխատություններ, որոնք բացառապես գրված են հին՝ ավանդական լեզվով. բ) ռամկախառն գրականություն, որտեղ իշխող լեզուն գրաբարն է, որը, սակայն, զերծ չէ ժողովրդական լեզվի տարրերից. գ) գրաբարախառն, ուր գերիշխում է ժողովրդական լեզուն՝ գրաբարյան որոշակի տարրերով. և դ) ռամկական գրականություն, որի հիմնական լեզուն ժողովրդական խոսքն է:

Հովնանյանը իր ուսումնասիրության առարկան է դարձնում ռամկական գրականությունը և նրա լեզվի հետազոտությունը: Եվ թեև իր հետազոտած գրականության լեզվի տարրերի առաջին արձագանքները նա արձանագրում է VII դարից սկսած, բայց ռամկագիր մատենագրության սկիզբը համարում է Ներսես Շնորհալու (XII դար) հանելուկները, որպես այդ գրականության սկզբնավորման հիմնական աղբյուր: Այս ձևով ժամանակագրական հաջորդականությամբ ուսումնասիրությունը Շնորհալուց հասցվում է մինչև նորագույն բժշկարանները, ներառելով միջնադարյան ինչպես ինքնուրույն, այնպե՛ս և թարգմանական աշխատությունները: Քննության եղանակը առավելապես բանասիրական է. գրավոր հուշարձաններից բերվում են ընդարձակ քաղվածքներ, երբեմն նաև՝ համեմատական տեքստեր: Աշխատության այս մասը պարունակում է առատ փաստական նյութ:

Հովնանյանի ծառայությունը նրանում է, որ Այտընյանից հետո նա ամենայն ուժով ընդգծեց և փաստական հարուստ նյութի հիման վրա ապացուցեց «ռամկագիր» գրականության ու «ռամկորհն» լեզվի ինքնուրույն գոյությունը միջնադարում, որոշակիորեն ցույց տալով այն գրավոր հուշարձանները, որոնք գրված են ժողովրդական լեզվով, դրանով իսկ հող նախապատրաստելով այդ լեզվի հետագա գիտական ուսումնասիրության համար:

Այս իսկ տեսակետից Յոզեֆ Կարստի ուսումնասիրությունները և հատկապես նրա Historische Grammatik des Kilikisch-Armenischen (Strassburg, 1901) աշխատությունը առաջընթաց մի քայլ էր միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում: Այստեղ առաջին անգամ պատմա-համեմատական մեթոդով հետազոտության են ենթարկվում միջնադարյան գրական հուշարձանների լեզվական երևույթները: Հեղինակը, մի կողմից օգտագործելով Այտընյանի և Հովնանյանի աշխատանքի արդյունքները և մյուս կողմից՝ իր իսկ

<sup>10</sup> Անդ, էջ 10:

հավաքած հսկայածավալ նյութի մշակմամբ, տալիս է այն լեզվի ամբողջական պատկերը, որ ինքը անվանում է կիրիկյան հայերեն:

Միջին հայերենի սկզբնավորման ու ծագման տեսական հարցերում Կարստը հիմնականում հանգում է իր նախորդների տեսակետին: Նրանց նման ընդունելով, որ հին հայերենը լեզվական տեսակետից ներկայացնում էր համեմատաբար մի միասնություն, այնուամենայնիվ, նա այդ լեզվի մեջ նկատում է մի շարք խորթ ներթափանցումներ, որոնց առկայությունը դասական հայերենում հնարավոր է համարում միայն որպես կենդանի ժողովրդական կամ խոսակցական լեզվի արտահայտություններ: Կարստի կարծիքով՝ գրական կյանքի ամենավաղ շրջանից սկսած, խոսակցական լեզվի ազդեցությունը մշտականորեն անհաղթահարելի զարգացման մեջ է եղել, թեև V—X դարերի ժամանակամիջոցում այդ խոսակցական լեզվի տարրերը դեռևս երկրորդական, ստորադաս դեր են խաղացել: Սակայն, արդեն X դարից առաջ, հին հայերեն գրական լեզուն մահացման էր դատապարտված, թեև այն երկար ժամանակ շարունակում էր իր գոյությունը խիստ կանոնների ենթարկված գրական լեզվի տրադիցիաների ուժով: Այդ տրադիցիաների հաղթահարման կենսական ուժը Կարստը տեսնում է հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մեջ, երբ XI դարում Կիրիկիայում հայկական պետականության ստեղծմամբ, հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքի ծանրության կենտրոնը բուն երկրից տեղափոխվում է այստեղ, երբ քաղաքական, տնտեսական ու կուլտուրական վերածննդին զուգահեռ՝ հնացած տրադիցիաների շղթաների հետ միասին՝ փշրվում են նաև հին մեռած լեզվի կաշկանդող շղթաները: Սկսվում է գրական մի նոր շրջան, որն առավելապես համապատասխանում էր հայ ժողովրդի կյանքին և նրա գոյության նոր պայմաններին: Գրական այդ ստեղծագործությունները գրվում են ժողովրդի բերանում խոսվող կենդանի լեզվով, որն իր առանձնահատկություններով «հավասարապես տարբերվում է ինչպես հին, այնպես և նոր հայերեններից և ներկայացնում է հատուկ լեզվական շրջան, որը կարող է կոչվել որպես միջին հայերեն»<sup>11</sup>:

«Այսպիսով, — գրում է Կարստը, — միջին հայերեն մենք անվանում ենք հին և նոր հայերենների միջև ընկած անցման ժամանակաշրջանը»<sup>12</sup>, որի սկիզբը համարվում է X, իսկ ավարտը՝ XV դարը, որտեղից սկսվում է նոր հայերենի ժամանակաշրջանը:

Չնայած այն հանգամանքին, որ միջին հայերեն կոչված լեզվաշրջանը իր բնորոշ առանձնահատկություններով մի ընդհանուր զարգացման վիճակ է մատնանշում, այնուամենայնիվ, Կարստը գտնում է, որ այն չի ներկայացնում մի միասնական ու միատարր լեզու, քանի որ նրա մեջ որոշակիորեն երևում են բարբառային նշանակալից երանգներ: Իր այս միտքը ապացուցելու նպատակով նա բերում է հետևյալ փաստարկումները: Մխիթար Հերացու լեզուն Սմբատի լեզվից տարբերվում է հետևյալ հատկանիշներով. ա) Հերացու մոտ հոգնակի ուղղականը ունի ւ վերջավորությունը, Սմբատի մոտ միայն 4 բառում. բ) ը-ն հաճախ զարգանում է ի-ի. օր. չի ժխտական մասնիկում. մինչդեռ Սմբատի մոտ՝ չը. գ) Հերացու մոտ վաղակատար դերբայը վերջավորվում

<sup>11</sup> Տե՛ս Historische Gramm., էջ 2:

<sup>12</sup> Անդ.



է նք, Սմբատի մոտ՝ ել: Նշված հեղինակների լեզվից Կարստը տարբեր է համարում Բջնիի 1358 թ. մի արձանագրության լեզուն. ինչպես՝ էսիր, Սմբատի մոտ՝ այտոր, ճորտերի(ն), Սմբատի մոտ՝ ճորտերո(ն), հեծելի, Սմբատի մոտ՝ հեծելո, բերաց, Սմբատի մոտ՝ եբեր: Տարբեր է նաև ախրապատինում հանդիպող՝ տեսել (Սմբատի մոտ՝ տեսնուլ), շաքս (Սմբատի մոտ՝ շաք), երիկ (Սմբատի մոտ՝ այրիկ), անձնական դերանվան III դեմքի համար ոյր (Սմբատի մոտ՝ իր), ոյրեն, յ-ոյրմէն (Սմբատի մոտ. յիրմէն) և այլն: Վերջապես, սրանցից բոլորովին տարբեր են Վարդանի մոտ հանդիպող՝ «ի սրտումս դրի զքո խօսքդ», «քեզ աղօթք են առնում» ժողովրդական ձևերը, որոնք Կարստը համարում է արևելահայ թարբանների առաջին վկայությունները<sup>13</sup>:

Այսպիսով, թեև Կարստը միջին հայերենը համարում է լեզվական մի առանձին շրջան, որն իր առանձնահատկություններով մի կողմից տարբերվում է հին ու նոր հայերեններից և մյուս կողմից էլ հենց իրեն իսկ բնորոշ գծերով ներկայանում որպես մի ընդհանուր վիճակ, այնուամենայնիվ, միաժամանակ շեշտում է նաև այդ նույն շրջանում բարբառային տարբերությունների գոյությունը:

Այն հանգամանքը, որ քննարկվող ժամանակաշրջանի «առավագիր» մատենագրության գերակշիռ մասը ներկայանում է կիրիկյան շրջանից և իր լեզվական առանձնահատկություններով համեմատական մի միասնություն է կազմում, որը սակայն ունի որոշակի տարբերություններ այլ գրական հուշարձանների լեզվից, Կարստին բերում են այն եզրակացության, թե «կիրիկյան հայերենը տարածված ոչ միակ բարբառն էր, թեև նա մեզ համար ամենալավ հայտնի և կարևոր միջին հայերենյան բարբառ է»<sup>14</sup>: Լեզվական փաստերի անմիօրինակությունը և այդ հիմքի վրա մի միասնական լեզվի ընդունման անհնարինությունն է եղել պատճառը, որ Կարստը իր ձեռքի տակ չունենալով ամբողջ միջին հայերենի հետազոտության համար անհրաժեշտ նյութը, բավարարվել է միայն կիրիկյան հայերենի ուսումնասիրությամբ, մի բան, որ շատ որոշակիորեն ընդգծված է նրա աշխատության վերնագրում: Այս բոլորից երևում է նաև, որ միջին հայերեն ասելով՝ Կարստը հասկանում էր հայերենի հին և նոր շրջանների միջև ընկած պատմական ժամանակամիջոցի լեզուն: Կիրիկյան հայերենը, որի հետազոտությամբ զբաղվում է նա, այդ շրջանից մեզ լավ հայտնի բարբառներից մեկն է:

Անդրադառնալով հայոց լեզվի պատմության մեջ կիրիկյան հայերենի գրաված դիրքին, Կարստը գտնում է, որ այն իր հնչյունական վիճակով և քերականությամբ պատկանում է հայ բարբառների արևմտյան խմբին: Պատմական այդ ժամանակի համար Կարստը նույնիսկ ընդունում է միջին արևմտահայերեն մի խոսվածքի գոյությունը, որը եղել է, եթե ոչ ամբողջ արևմտյան խմբի, ապա գոնե, նրա բարբառների մի մասի մայրը:

Նկատելով, որ կիրիկյան հայերենը իր լեզվական որակով շատ բան ունի հին հայերենից և, ըստ էության, հին հայերենի բանավոր-խոսակցական լեզվի բնական զարգացումն է, Կարստը եզրակացնում է. «Դասական լեզվից դուրս կանգնած մի հին հայերեն բարբառի ընդունումը, որից առաջացած լինի կիրիկյան հայերենը, պարզապես բացառված է»<sup>15</sup>:

<sup>13</sup> Նշվ. աշխատությունը, էջ 3—4:

<sup>14</sup> Անդ, էջ 5:

<sup>15</sup> Անդ, էջ 6:

Կարստի սույն աշխատությունը իր փաստական հարուստ նյութով և տեսական ընդհանրացումներով մի խոշոր ավանդ էր հայագիտության և հատկապես հայոց լեզվի պատմության բնագավառում: Այս աշխատությունը ևս, ինչպես կտեսնենք, իր որոշակի ազդեցությունն է թողել միջին հայերենին նվիրված հետագա ուսումնասիրությունների վրա<sup>16</sup>:

Մեր լեզվի միջին շրջանի ուսումնասիրության հարցերով զբաղվել է նաև անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը: Հատկապես ուշագրության արժանի գործ է նրա «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատությունը, որտեղ հայ հին ժողովրդական երգերի՝ հայրենների հետ կապված բազմաթիվ բանասիրական ու գրականագիտական հարցերի քննության հետ միասին, նա անդրադարձել է նաև նրանց լեզվին:

Աբեղյանը իր ուսումնասիրությունը կատարել է հիմք ունենալով Կարստի վերը նշված աշխատությունը: Վերջինս նրա համար ծառայել է որպես համեմատության եզր՝ հայրեններում միջին հայերենի ձևերը ի հայտ բերելու և, առհասարակ, հին հայերենի լեզվական ձևերից շեղվող բառային և քերականական նորաբանությունները մեկնաբանելու համար: Հարուստ փաստական նյութի քննությունը Աբեղյանին բերել է այն համոզման, որ նշված երգերի՝ «հայրենների լեզուն միակերպ չէ. դրանց մեջ գտնում ենք լեզվական շերտավորումներ: Իշխող լեզուն է միջին հայերենը (ընդգծումը հեղինակինն է:—ՉՄ), որ իր հնչյունների գրությամբ և քերականությամբ պատկանում է արևմտյան բարբառներին և համարվում է Կիլիկիայում խոսված բարբառը (նկատի ունի Կարստի տեսակետը:—ՉՄ): Դրան շատ մոտ են եղել հյուսիս-արևմտյան Հայաստանի և փոքր Հայաստանի բարբառները<sup>17</sup>:

Հայրենների լեզվի անմիօրինակության և նրանց մեջ առկա լեզվական շերտավորումների միտքը Աբեղյանի մոտ հիմնավորվում է սկզբնաղբյուրների բազմաթիվ փաստերով: Միևնույն բառի տարբեր գրությունները, քերականական միևնույն իմաստի դրսևորման տարբեր ձևերը և, առհասարակ, լեզվական միևնույն միավորների տարատեսակությունները տվյալ երգի տարբերակներում՝ Աբեղյանը համարում է միջնադարյան հայ բարբառների լեզվական առանձնատեսակությունների դրսևորումներ:

Աբեղյանը իր այս ուսումնասիրության համառոտությունը շարադրել է նաև «Գուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուի (Երևան, 1940 թ.) ներածության մեջ, ուր մի քանի էջի վրա, թեև ամփոփ, բայց ավելի որոշակիորեն տվել է հայրենների և ժողովրդական այլ խաղերի լեզվի էական կողմերը: Հարցի լուսաբանման տեսակետից ավելորդ չենք համարում մի հատված մեջ բերելու այդ ներածությունից:

«Մեր այս հին տաղերը,—գրում է Աբեղյանը,—լինելով աշխարհականների բանաստեղծություն, հորինված են ոչ թե հին եկեղեցական հայերենով, գրաբար լեզվով, այլ ժամանակի կենդանի խոսակցական լեզվով, որ 12-րդ դարուց սկսած դարձել է գրական լեզու: Դա միջին հայերենն է, որ մի անցման լեզու է հին հայերենից դեպի նոր հայերենը և թեպետ գրաբարին դեռ ավելի

<sup>16</sup> Կարստի արժեքավոր աշխատություններից մեկը՝ նվիրված միջին հայերենի բառապաշարի քննությանը (Միջին հայերենի բառարան), դեռևս անտիպ է և գտնվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում:

<sup>17</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 1927, № 2—3, էջ 225:

մոտ է, քան աշխարհաբարը, բայց նրանցից մեծ շափերով տարբեր է: Գրաբարի ազդեցությունը, գրական ճանապարհով, չի երևում հայրենների մեջ, ինչպես հաճախ այդ տեսնում ենք նույն միջին հայերենով հորինող բանաստեղծների երգերի մեջ: Գուսանական երգերը հենց այդպես էլ զերծ պիտի լինեին գրաբարի ազդեցությունից, որովհետև գրաբարը վաղուց դադարած է եղել կենդանի ժողովրդական լեզու լինելուց:

Պետք է նկատի ունենալ և այն, որ այդ գուսանական ժողովրդական տաղերը հորինված են զանազան դարերում և այլ և այլ տեղերում, և դրանց հեղինակները եղել են զանազան բարբառներով խոսող մարդիկ: Բնականաբար այդ փոքրիկ երգերի լեզուն միակերպ չի, դրանց մեջ երևան են գալիս նաև տարբեր բարբառների ձևեր: Ապա քանի որ դրանք ապրել են բերանացի, դրանց լեզուն ևս, ինչպես ժողովրդական երգերի լեզուն ընդհանրապես, միշտ ենթակա է եղել փոփոխության, միշտ վերանորոգվել է: Վարիանտները նկատի ունենալով՝ տեսնում ենք, որ հին լեզվական ձևերին, հնացած բառերին ու բառաձևերին, բառերի հին շարադասական ձևերին փոխանակել են նորերը: Հաճախ բուն հայերեն բառերի տեղ անցել են օտար բառեր. մի բարբառային ձև կամ բառ փոխված է մի ուրիշ բարբառային ձևի կամ բառի: Այսպես՝ նույն բառերը գործածված գտնում ենք տարբեր ձևերով՝ օնքեր, ունքեր, ուներ, յունքեր. այլ, ալ, էլ. ան, էն. կայր, կար, կեր. ոտից, ոտվնու. անկալ, ինկալ, ընկավ. տեսանել, տեսնել, տեսնուլ. ելանել, ելնել, ելնուլ. շեմ ի սիրել, շեմ սիրել, շեմ սիրեր և այլն: Երբեմն այսպիսի տարբեր ձևեր կան ոչ միայն վարիանտների, այլև միևնույն հայերենի մեջ. հին ձևի հետ նորը, մի բարբառային ձևի կողքին մի ուրիշ բարբառինը»<sup>18</sup>:

«Բայց և այնպես, չնայելով այս բոլոր լեզվական շերտավորումներին, հայրենների մեջ իշխող լեզուն միջին հայերենն է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին»<sup>19</sup>, — եզրակացնում է Աբեղյանը:

Քանի որ Աբեղյանի օգտագործած գրավոր աղբյուրների գրչության ժամանակը XVI դարից այն կողմ չի անցնում, ուստի և հայրենների լեզվական առանձնահատկությունների մասին արած նրա դիտողությունները առավելապես վերաբերում են այդ և հետագու դարերի հայերենին: Սակայն մյուս կողմից, հենց այն հանգամանքը, որ XVI դարի սկզբնաղբյուրները հայրենների մեջ ի հայտ են բերում լեզվական անմիակերպություններ, պետք է ենթադրել, որ այդ երևույթը շէր կարող բացատրված լինել նաև նախորդ հարակից դարերում: Այս իսկ տեսակետից, միջին հայերենին նվիրված այլ աշխատությունների, ինչպես և սկզբնաղբյուրների շարքում, իրենց որոշակի տեղն ունեն նաև Աբեղյանի ուսումնասիրություններն ու հրատարակած նյութերը:

Հայոց լեզվի պատմության, այդ թվում նաև միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում իր նշանակալից ավանդն ունի մեծանուն հայագետ Հ. Աճառյանը: Նրա գրչին պատկանող այնպիսի մոնումենտալ աշխատություններ, ինչպիսիք են «Հայոց լեզվի համեմատական քերականություն», «Հայոց լեզվի պատմություն», «Հայերենի արմատական բառարան», «Հայոց անձնանունների բառարան» և այլն, իրենց մեջ պարունակում են ոչ միայն հայոց լեզվի պատմության տեսական հարցեր, այլև բազմազան հարուստ փաստական նյութ՝ այդ նույն հարցերի վերաբերյալ: Միջին հայերենի տեսության հարցերի

<sup>18</sup> Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 19—20:

<sup>19</sup> Անդ:

ավելի հանգամանալից շարադրանքը տրված է նրա «Հայոց լեզվի պատմութեան» 2-րդ հատորում, որին և մենք դիմում ենք:

Մեզ հետաքրքրող լեզվական շրջանը Հ. Աճառյանը ևս անվանում է միջին հայերեն: Այդ լեզվի առաջացումը Աճառյանը ներկայացնում է հետևյալ կերպ. V դարում գրի առնված հայերենը Վաստատուն և անփոփոխ մնում էր նույն գրքերում: Եկեղեցին անձեռնմխելի պահում էր այն՝ իբրև սուրբ գրքերի լեզու և աշակերտներն ու հետագա հեղինակները սովորում էին դպրոցում, իբրև օրինակելի լեզու: Երբ նրանք պետք էին ունենում գրի առնելու իրենց մտքերը, աշխատում էին, որքան հնարավոր էր իրենց, հետևել այդ օրինակելի լեզվին: Այդպիսով Ե դարի լեզուն ոչ միայն Ե դարի գրվածքների, այլև հետզհետե իրար հաջորդող դարերի գրվածքների մեջ մնում էր անփոփոխ, ենթարկվելով միայն անհատական ոճային փոփոխությունների և մերժելով ամեն օտար նյութական ազդեցություն: Ընդհակառակը՝ ժողովրդական լեզուն, որ Ե դարում նույնն էր գրական լեզվի հետ, մի կողմից բնական աճումով և մյուս կողմից օտար ազդեցությունների տակ՝ հետզհետե փոխվում էր ազատորեն, այնպես որ գրական անփոփոխ լեզվի ու ժողովրդական հարափոփոխ լեզվի միջև տարբերությունը քանի գնում մեծանում էր»<sup>20</sup>:

Աճառյանը իր այդ միտքը պատկերում է սուր անկյան միջոցով, որի գագաթը V դարի լեզուն է, ուր համընկնում են գրական և բանավոր լեզուները: Անկյան կողմերից մեկը, որը պատկերվում է հորիզոնական գծով, ներկայացնում է անփոփոխ գրական լեզուն. անկյան մյուս կողմը՝ հորիզոնականից դեպի ցած բացվածքով, ներկայացնում է ժողովրդական լեզուն, որը քանի գնում, ավելի է հեռանում գրական լեզվից: Գրական և բանավոր լեզուների միջև հետզհետե աճող տարբերությունները և հատկապես անփոփոխ մնացող գրավոր լեզվի համեմատ հարափոփոխ բանավոր լեզվի անկաշկանդ զարգացումը հասցնում է այն բանին, որ այդ ընթացքի մի ժամանակահատվածից սկսած՝ գրավոր լեզուն դառնում է անհասկանալի ժողովրդի լայն խավերին և, ըստ էության, դառնում է գրքային, սովորովի լեզու: Քանի որ բանավոր լեզվի փոփոխությունը տեղի է ունենում աստիճանաբար և բարեշրջության օրենքներով, Աճառյանը գտնում է, որ դժվար, նույնիսկ անհնար է որոշել, թե որտեղից է սկսվում ժողովրդական լեզվի սկիզբը: Այնուամենայնիվ, այդ երկու լեզուների «տարբերությունը մեծագույն չափերի է հասնում ԺԱ դարից հետո»<sup>21</sup>: Այս շրջանում է, որ գրական լեզուն կոչվում է գրաբար, իսկ խոսակցական բանավոր լեզուն՝ «գոեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, ռամկորեն, սովորական խոսք, աշխարհական խոսք, աշխարհաբար»<sup>22</sup>: Աճառյանը բերում է մատենագրական վկայություններ այդ անվանումների վերաբերյալ: Փաստեր է բերում նաև այն մասին, որ գրաբարը նշված ժամանակաշրջանում անհասկանալի լեզու էր: Եվ այդ անհասկանալիությունն էր պատճառը, որ անհրաժեշտություն է առաջանում գրավոր լեզվի համար դիմելու ժողովրդական լեզվին. «այսպես սկսվեց միջին հայերեն գրականությունը»<sup>23</sup>:

«Միջին հայերեն գրականության հնագույն հիշատակարանը Վահրամ սպարապետի որդի Գրիգորի պատմական դեղագիրն է 1037 թվից, գրված բժիշկ

<sup>20</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Կ. II, էջ 226:

<sup>21</sup> Անդ, էջ 230:

<sup>22</sup> Անդ, էջ 231:

<sup>23</sup> Անդ, էջ 233:

Քուսայիդի ձեռքով»<sup>24</sup>։ Սակայն այս շի նշանակում, թե Աճառյանը միջին հայերենի սկզբնավորությունը նույնացնում է գրականության սկզբի հետ։ Նրա կարծիքով՝ «Միջին հայերեն բանավոր լեզուն... շատ ավելի հին էր քան գրավորը»<sup>25</sup>։

Միջին հայերենի բարբառային հիմքի վերաբերյալ Աճառյանը հետևյալ տեսակետն է պաշտպանում։ Մերժելով V դարում հայ բարբառների գոյությունը, նա դրանք ընդունում է XI—XII դարերում։ «Այս ժամանակ (XI—XII դդ. — ՆՄ) արդեն կազմված էին Հայաստանում և Հայաստանից դուրս գաղթավայրերում զանազան բարբառներ, իրարից ավելի կամ պակաս մեծ տարբերությամբ։ Միջին հայերենն էլ ուրեմն մի բարբառ չէր, այլ ուներ իր զանազան ձևերը, ինչպես հին բարձր գերմաներենը կամ միջին բարձր գերմաներենը։ Այս զանազան ձևերը ընդհանրապես մեզ հայտնի չեն. կա նրանցից միայն մեկը (այն է կիլիկյան բարբառը), որ թեև գաղթավայրի մի բարբառ, բայց պետականության շնորհիվ ստացավ ավելի պատվավոր դիրք և անցավ գրականության։ ...Այս բարբառը կամ լեզուն է՝ որ պիտի կոչենք այսուհետև կիլիկյան հայերեն և որ միջին հայերենի ճյուղերից մեկն է միայն»<sup>26</sup>։

Միջին հայերենում բարբառների առկայության և կիլիկյան հայերենը այդ բարբառներից մեկը լինելու միտքը Աճառյանը նորից է շեշտում իր հիշյալ աշխատության մեջ. «Վերջին անգամ պետք է կրկնել այն՝ ինչ որ ասացինք վերևում, թե միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր, որ պետականության շնորհիվ բարձրացավ գրականության։ Ուրիշ բարբառների հետքեր երևան են գալիս տարբեր վայրերում գրված գրքերի և արձանագրությունների մեջ»<sup>27</sup>։ Աճառյանը բերում է նաև լեզվական փաստեր՝ ցույց տալու համար միջին հայերենի բարբառային տարբերությունները։ «Արձանագրությունների և հիշատակարանների մի կանոնավոր հետազոտություն պիտի կարողանա անշուշտ ավելի շատ բան ասել այս շրջանի հայերեն բարբառների վերաբերմամբ»<sup>28</sup> — եզրակացնում է նա։

Միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում բեղմնավոր աշխատանք էր սկսել պրոֆ. Ս. Ղազարյանը։ Երկար ժամանակ Երևանի պետական համալսարանում դասավանդելով հայոց լեզվի պատմություն, տարիների ընթացքում ուսումնասիրելով միջնադարյան գրավոր հուշարձանների լեզվական երևույթները, նա իր հետազոտությունների արդյունքները հրատարակեց նախ՝ «Հայոց լեզվի համառոտ պատմություն» և ապա՝ «Միջին հայերեն» աշխատությունների մեջ։ Գեոևս առաջին աշխատության մեջ, թեև ընդհանուր գծերով, նա անդրադառնում էր միջին հայերենի պատմության տեսական հարցերին և նրա նկարագրությանը։ Այստեղ Ս. Ղազարյանը միջին հայերեն ասելով հասկանում էր «X—XVII դարերի հայ գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»<sup>29</sup>։

<sup>24</sup> Անդ, էջ 233.

<sup>25</sup> Անդ, էջ 234.

<sup>26</sup> Անդ, էջ 238.

<sup>27</sup> Անդ, էջ 253.

<sup>28</sup> Անդ, էջ 254.

<sup>29</sup> Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 231.

Բնականաբար, Ս. Ղազարյանը միջին հայերենը չէր դիտում որպես միատարր լեզու: Նրանում նա տարբերում էր լեզվական նոր և հին շերտեր, լեզվական նույն իմաստն արտահայտող տարբեր ձևեր: Ըստ որում, միջին հայերենի շրջանում լեզվական նոր տարրերի առավել կամ պակաս ընդգծվածությունը նա պայմանավորված էր համարում «գիրք գրող հեղինակի ըմբռնունքների, գրքի բովանդակության, հեղինակի կրթական մակարդակի և գրաբարին տիրապետելու աստիճանի»<sup>30</sup> հանգամանքներով: Այս իսկ տեսակետից էլ լեզվական նոր տարրերի առավել դրսևորումը նա հատուկ էր համարում գեղարվեստական և մասամբ նաև գիտական գրականությունը:

Միջին գրական հայերենը, Ս. Ղազարյանի կարծիքով, ենթարկվում էր մշակման «մի շարք բարբառների հիման վրա, ավելի ճիշտ, գրականության լեզվի մեջ ներթափանցում էին այդ ժամանակ եղած հայ բարբառների այն իրողությունները, որոնք հասկանալի էին ամբողջ հայ ժողովրդին»: Այդ մշակման ընթացքում օգտագործվում էին նաև գրաբարյան հասկանալի ձևեր, բայց և «կիրառվում էին լեզվական միևնույն կանոնը արտահայտող տարբեր ձևեր, որոնք ցույց էին տալիս, որ այդ լեզվի մշակման ու կայունացման պրոցեսը դեռևս չի ավարտվել»<sup>31</sup>:

Հայերենի զուտ միջին շրջանի ուսումնասիրությանն է նվիրված Ս. Ղազարյանի «Միջին հայերեն» աշխատությունը: Հեղինակը մտադիր էր մի քանի գրքերի մեջ ամբողջացնել այս շրջանի լեզվի նկարագրությունը, սակայն նա կարողացավ իրականացնել իր մտադրության մի մասը միայն՝ հրապարակելով միջին հայերենի հնչյունաբանությանը վերաբերող ուսումնասիրությունը: Այստեղ նույնպես ընդունելով, որ միջին հայերեն ասելով պետք է հասկանալ «X—XVII դարերի գեղարվեստական, գիտական, այլև պատմական գրականությանը ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»<sup>32</sup>, Ս. Ղազարյանը միջին գրական հայերենի խոսակցական հիմքի վերաբերյալ իր արտահայտած կարծիքը վերանայում և առաջ է քաշում մի այլ հայեցակետ:

«Մենք չենք պաշտպանում այն լեզվաբանների կարծիքը,— գրում է նա,— որոնք գտնում են, թե եղել են տարբեր միջին հայերեններ, թե միջին հայերենի այդ տարբեր ձևերից մեկը՝ կիլիկյան բարբառը, գրականության աստիճանի բարձրացավ և պահպանվեց, իսկ մնացած ձևերը գրի չառնվեցին ու չհասան մինչև մեր ժամանակները: Մեր կարծիքով միջին հայերենը կիլիկյան հայկական թագավորությունից առաջ իր հիմնական արտահայտություններով ուրվագծված էր, հետևաբար կիլիկյան բարբառը չէր, որ գրական լեզվի աստիճանի բարձրացավ, թեև նա իր որոշ իրողություններով ներթափանցեց գրական լեզվի սահմանները»<sup>33</sup>: Ս. Ղազարյանը իր այս տեսակետը հիմնավորված է համարում հետևյալ փաստարկներով. կիլիկյան թագավորության ստեղծման ժամանակաշրջանում կիլիկյան բարբառը միասնական չէր, քանի որ կիլիկիայի բնակչությունը միատարր չէր. այն աճում էր Վասպուրականից, Անիից, Վանանդից, Գանձակից և այլ վայրերից գաղթած հայ բնակիչների հաշվին, որոնք

<sup>30</sup> Անդ, էջ 231:

<sup>31</sup> Անդ, էջ 241:

<sup>32</sup> Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 92—93:

<sup>33</sup> Անդ, էջ 92:

տարբեր բարբառների կրողներ էին: «Պատմական այդ հանգամանքը նկատի ունենալով, — եզրակացնում է հեղինակը, — մենք կարծում ենք, որ միջին հայերենը Կիլիկիայի բարբառը չէր, և Կարստի ուսումնասիրությունը ոչ թե Կիլիկիայի բարբառի, այլ միջին հայերենի զարգացման մի փուլի ուսումնասիրությունն է»<sup>34</sup>:

Մենք վերը տեսանք, որ Կարստը սխալմամբ չէր իր աշխատությունը վերնագրել «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն»: Նա իր հետազոտությունների ընթացքում եկել էր այն հաստատ համոզման, որ կիլիկյան շրջանի գրավոր հուշարձանների լեզուն դրսևորում է համեմատաբար միասնական օրինաչափություններ, ի հակակշիռ այլ վայրերում գրված մատենագրության ու վիճակյալ արձանագրությունների լեզվի, որոնք հանդես են բերում այլ օրինաչափություններ: Ինչ խոսք, որ կիլիկյան հայերենն ինքը ևս բացարձակորեն միատարր չէր և այդ իսկ պատճառով էլ նրա միասնականությունը ընդունվում է հարաբերականորեն՝ համեմատած այլ վայրերում գրի առնված հայերենի օրինաչափությունների հետ:

Այնուհետև, ճիշտ է, որ չպետք է նույնացնել կիլիկյան բարբառը կիլիկյան գրական հայերենի հետ, բայց այդ չի նշանակում, որ կիլիկյան գրական հայերենը հիմնված չէր կիլիկյան բարբառի խոսակցական հիմքի վրա, ինչպես և դրանից չի բխում, թե կիլիկյան գրական հայերենը միջնադարյան միակ, ընդհանուր գրական լեզուն էր, այն էլ իր գրի առման շրջանում և որպես այդպիսին՝ միջին հայերենի պատմական զարգացման մի փուլը:

Մյուս կողմից, նախորդ ուսումնասիրողներից և ոչ մեկը չի ժխտել կիլիկյան թագավորության ստեղծումից առաջ միջին հայերենի օրինաչափությունների առկայության փաստը: Սկսած Այսրնյանից և Հովնանյանից, գիտություն մեջ շեշտվել է, որ միջնադարում երևան եկող հայերենի նոր որակի տարրերը առաջացել են նրան նախորդող շրջանում. այնպես որ՝ ուսումնասիրողներից և ոչ մեկի մտքով չի անցել կարծելու, թե միջին հայերենը սկսվում է կիլիկյան հայերենով:

Վերը շարադրվածից երևում է, որ պրոֆ. Ղազարյանը մերժելով կիլիկյան հայերենին զուգահեռ միջին հայերենի այլ տարբերակների առկայությունը և Կարստի ուսումնասիրած կիլիկյան հայերենը դիտելով որպես միջին հայերենի զարգացման մի փուլի արտահայտությունը, ըստ էության ընդունում է մի միասնական, ամբողջ հայություն համար ընդհանուր միջին գրական հայերենի գոյությունը, թեև իր սահմանման մեջ՝ միջնադարում ընդունում է հայ բարբառների առկայությունը: Եվ այս տեսակետից էլ պատահական չէ, որ նշված աշխատության մեջ հեղինակը միջին հայերենի հնչյունաբանության ուսումնասիրությունը կատարում է իր ընդունած սկզբունքով: Այստեղ X—XVII դարերի գրավոր հուշարձաններում վկայվող հնչյունական փոփոխությունները, առանց հաշվի առնելու նրանց առաջացման և վկայության ժամանակագրությունը, ներկայացվում են որպես միասնական մի լեզվի օրինաչափություններ: Մինչդեռ լեզվի պատմաբանի համար քննարկվող ժամանակաշրջանի երկու ժայռակետերը (X—XVII դդ.) չեն կարող ունենալ միևնույն արժեքը: X դարը, հետագա դարերում լայն ծավալ ստացող և մատենագրությամբ առատորեն վկայվող, լեզվական երևույթների նախադուռն է, որտեղ, սակայն, հետագայի ո՛չ բոլոր լեզվական օրինաչափություններն են վկայվում: Դա, ըստ

<sup>34</sup> Նշվ. աշխատությունը, էջ 92:

էութեան, միջին շրջանի նախապատրաստական շրջանն է, երբ լեզվական նոր երևույթների ծավալմամբ, այդ նորը շատ որոշակիորեն սկսում է գիտակցորեն գործադրվել միայն XII դարից: Հետագա դարերում, կյանքի կոչված լեզվական նոր երևույթների մի մասը կայունանում ու ավելի է ծավալում իր կիրառութեան շրջանակները, մյուսները՝ ստանում են կիրառութեան ավելի նեղ ոլորտ: Նույն ժամանակներում լեզվի ներքին զարգացումը կյանքի է կոչում և ավելի ընդարձակում նոր լեզվական երևույթներ. այնպես որ՝ XVII դարում միջին հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների զարգացումը գնում է դեպի աշխարհաբարացում և բարբառների աշխուժացում: Հասկանալի է, որ լեզվի պատմության համար շահագրգիռ կարևոր է այս բոլորի հաշվառումը: Եվ չնայած Ս. Ղազարյանի «Միջին հայերեն» աշխատության մեջ հավաքված է բավականին առատ փաստական նյութ, սակայն վերջինս չի ենթարկվել ժամանակագրական մշակման, որի հետևանքով ստացվում է այն տպավորությունը, թե հնչյունական այն երևույթները, որոնք նկարագրվում են աշխատության մեջ, հենց սկզբից ևեթ (X դարից) գոյություն են ունեցել և հատուկ են ամբողջ շրջանին:

Հայոց լեզվի պատմության միջին շրջանի լեզվական այս կամ այն երևույթի առաջացման ժամանակաշրջանի, ինչպես նաև միջին հայերենի բնույթի և նրա տեսական այս կամ այն հարցի վերաբերյալ արժեքավոր դիտողություններ ունեն սովետահայ այլ լեզվաբաններ: Այստեղ հատկապես պետք է նշել պրոֆ. Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական առանձնահատկությունները» և «Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ», պրոֆ. Գ. Զահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» և «Հայոց լեզվի զարգացման փուլերը»<sup>35</sup> աշխատությունները, որոնք իրենց քննարկած հարցերով անմիջապես առնչվում են միջին հայերենի ուսումնասիրության հետ: Պրոֆ. Ա. Աբրահամյանի հայերենի դերբայներին նվիրված աշխատության մեջ, օրինակ, քննարկվում և պարզաբանվում են նաև միջին հայերենի բայական համակարգի այնքան կարևոր միավորները, ինչպիսիք են դերբայները և նրանց կիրառությունները անցյալ պատմական ժամանակաշրջանում<sup>36</sup>:

Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատությունը հիմնված լինելով լեզվական փաստերի պատմական զարգացման հաշվառման վրա, հաջող մի փորձ է՝ հին ու նոր հայերենների հետ միասին տալու նաև միջին հայերենի պատմության շրջանաբաժանումը, նշելով նրա պատմական էստապները, որտեղ յուրաքանչյուր էտապը բնութագրվում է իր առանձնահատկություններով:

Պրոֆ. Գ. Զահուկյանը մեր լեզվի միջին շրջանի համար տարբերում է՝ միջին հայերեն, միջին գրական հայերեն, կիրիկյան հայերեն, կիրիկյան գրական հայերեն տերմինները և նրանց մեջ դնում է որոշակի բովանդակություն: Այսպես, կիրիկյան հայերենը բանավոր-խոսակցական լեզվի այն ամբողջությունն է, որ խոսվում էր կիրիկյան պետականության շրջանակներում: Նա

<sup>35</sup> Նախ հրատարակվել է «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը», վերնադրով (Երևանի պետհամալսարանի «Գիտական աշխատություններ» ժողովածվում, 1956, № 7):

<sup>36</sup> Սովետահայ լեզվաբանների՝ միջին հայերենի այս կամ այն լեզվական երևույթի վերաբերյալ արած արժեքավոր դիտողությունների մասին խոսվում է սույն աշխատանքի համապատասխան բաժիններում:



հիմնական գծերով արտահայտված է նաև կիրիկյան գրական հայերենում, հետևաբար, վերջինս կիրիկյան հայերենի գրական արտահայտությունն է, որը իր մեջ, բացի կիրիկյան հայերենի բարբառային խոսակցական լեզվի հիմնական հատկանիշներից, ներառում է նաև այլ բարբառների այլ առանձնահատկություններ: Միջին գրական հայերենը, կիրիկյան գրական հայերենի համեմատությամբ, ավելի լայն հասկացություն է. նա իր մեջ ընդգրկում է ինչպես կիրիկյան գրական հայերենը, այնպես և Կիրիկիայից դուրս գրի առնված կամ գրավոր արտահայտություն ստացած միջին հայերենի դրսևորումները: Սրա համեմատությամբ՝ միջին հայերեն ընդհանուր տերմինի տակ հասկացվում է միջնադարյան հայերենների՝ ինչպես գրավոր, այնպես և բանավոր դրսևորման բոլոր արտահայտությունները:

Պրոֆ. Գ. Զահուկյանը այն կարծիքին է, որ «Կիրիկյան միջին հայերենը դառնում է Կիրիկիայի հայկական պետականության պաշտոնական լեզուն, բայց պատմական որոշ հանգամանքներում չի կարողանում հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին. շարունակում է իբրև գրական լեզու գործել նաև գրաբարը, միաժամանակ Կիրիկիայի սահմաններից դուրս գրավոր արտահայտություն են ստանում և միջին հայերենի բարբառային այլ տարբերակներ»<sup>37</sup>:

Միջին հայերենի տեսության որոշ հարցեր շոշափվեցին նաև այն բանավեճերի ընթացքում, որոնք ծավալվեցին հայերենի բարբառների և նրանց բաղաձայնական համակարգի ծագման հարցի շուրջը՝ 1958—61 թթ.:

Առաջ քաշելով և պաշտպանելով այն տեսակետը, ըստ որի հայերենի բարբառները իրենց բաղաձայնական համակարգով կայուն ու հաստատուն են եղել մինչև X դարը, ուրեմն՝ նրանք եղել են մինչև X դարը, որից հետո սկսվել է նրանց, իբրև բարբառների, քայքայման, վերանալու դանդաղ պրոցեսը<sup>38</sup>, պրոֆ. Ա. Ղարիբյանը հայերենի բարբառների ժամանակակից բաղաձայնական վիճակը համեմատելով հնդկրոպական վիճակի հետ, բարբառները դասակարգեց ըստ նրանց բաղաձայնական համակարգի և դրանք առանձնացրեց մի քանի խմբերում, գտնելով, որ դրանց (բարբառների) մեծ մասը նախագրաբարյան գոյացություն է և որ դրանք իրենց հնչյունական համակարգը պահպանել են հնդկրոպական նախալեզվի վիճակից սկսած<sup>39</sup>, շեղվելով այդ միտքը ավելի հիմնավորելու համար պրոֆ. Ա. Ղարիբյանը սկսեց օգտագործել նաև բարբառների ձևաբանական տարբերությունները: Ըստ հնչյունաբանական դասակարգման՝ միջին հայերենը մտնում էր բարբառների այն խմբի մեջ (4-րդ), որտեղ ներկայացված բարբառները կատարել էին ոչ թե ձայնեղ և խուլ պայթականների ու պայթաշփականների տեղափոխություն (ինչպես ընդունված էր մինչ այդ գիտություն մեջ), այլ, իբր, ձայնեղները ներկայացնում են հնդկրոպական ձայնեղները, իսկ խուլները առաջացել են հնդկրոպական շնչեղ ձայնեղներից:

Այս տեսակետը շրջադարձից բանավեճին մասնակցած շատ լեզվաբանների, այդ թվում նաև հայ լեզվաբանների կողմից: Մասնավորապես հայ լեզվա-

<sup>37</sup> Գ. Բ. Զահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, Նրևան, 1964, էջ 43, Գ. Բ. Զահուկյանի շրջանաբաժանման սկզբունքները գրված են այս աշխատության հիմքում:

<sup>38</sup> Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 3, էջ 247:

<sup>39</sup> Անդ, էջ 244:

բաններից պրոֆ. պրոֆ. Գ. Սևակը, էդ. Աղայանը, Գ. Զահուկյանը, Ս. Ղազարյանը անառարկելի փաստարկումներով ցույց տվին, որ հայերենի ժամանակակից բարբառները, այդ թվում նաև միջին հայերենը, ավելի հին շեն, քան գրաբարը:

Ուշագրավ է, որ արտասահմանյան լեզվաբաններից Բենվենիստը և Ֆոգտը ժամանակակից հայ բարբառներում առկա շնչեղ ձայնեղների գոյությունը բացատրում էին դրանց առկայությունը արդեն իսկ գրաբարի շրջանում: Վերոհիշյալ լեզվաբաններից անկախ «Вопросы языкознания» հանդեսում տպագրած իր հոդվածում նույն միտքը զարգացրեց նաև Գ. Բ. Զահուկյանը:

Արժանի է հիշատակման նաև լեհ գիտնական Լ. Զաբրոցկու կարծիքը՝ հատկապես կիրիկյան հայերենի բաղաձայնական համակարգի փոփոխության վերաբերյալ: Լ. Զաբրոցկու կարծիքով կիրիկյան հայերենում բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունը կատարվել է հնչույթաբանական մակարդակի ազդեցությամբ: Ենթադրվում է՝ քանի որ հայերենում նկատելի է բաղաձայնների ձախից դեպի աջ տեղաշարժի ընդհանուր տենդենց, ապա կիրիկյան հայերենում ձայնեղների խլացմամբ, խուլերն էլ պետք է որ շարժվեին դեպի շնչեղ խուլերի շարքը, բայց քանի որ վերջիններս ամբողջ հայերենում անփոփոխ են ու տեղաշարժման չեն ենթարկվում, ապա վտանգ է առաջանում խուլերի և շնչեղ խուլերի նույնացման: Առաջանում է, այսպես կոչված, հնչույթաբանական ճգնաժամ, որի ազդեցությամբ առաջանում է հետադարձ շարժում. հին հայերենի խուլերի արտասանությունը թուլանում է և, քանի որ ձայնեղների շարքը արդեն ազատ է (նրանք փոխվել էին խուլերի), խուլերը ձայնեղանալով՝ գրավում են նրանց տեղը<sup>40</sup>:

Հիմնական գծերով այս է հարցի պատմության ընդհանուր և համառոտ նկարագիրը<sup>41</sup>:

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ

Թեև մատենագիտության տեսության վերը տրված համառոտ ակնարկը միայն ընդհանուր պատկերացում կարող է տալ հայոց լեզվի պատմության միջին շրջանի ուսումնասիրության բնագավառում կատարված աշխատանքների մասին, բայց այդ ակնարկից երևում է նաև, որ տվյալ շրջանի լեզվի պատմության ոչ բոլոր հարցերն են հավասարապես լուծված և, որ այդ հարցերից շատերը դեռևս կարոտ են լուրջ ուսումնասիրման: Առհասարակ, միջին գրական հայերենի առաջացման ու զարգացման, նրա խոսակցական հիմքի ու տարածման սահմանների, նրա գոյատևման ժամանակաշրջանի, միջնադարում հայերենի բարբառային բաժանվածության հարցերը դեռևս ենթակա են փաստարկման ու հիմնավորման:

Սակայն նախքան այս հարցերի քննարկմանը անցնելը, անհրաժեշտ է պարզաբանել, թե որոնք են ուսումնասիրության այն կոնկրետ սկզբունքները, որոնց կիրառմամբ բացահայտվում են այս շրջանի լեզվի առանձնահատկու-

<sup>40</sup> Вопросы языкознания, 1961, № 5, էջ 37:

<sup>41</sup> Ավելի մանրամասն տե՛ս ինչպես վկայակոչված, այնպես և մատենագիտական ցանկում բերված աշխատություններում:

թյունները, որոնց հիման վրա առանձնացվում է լեզվական տվյալ շրջանը և պայմանականորեն անվանվում «միջին հայերեն»:

Միջին հայերենի լեզվական երևույթների ուսումնասիրման, նկարագրման և պատմական փոփոխությունների ընթացքը մեկնաբանելու համար անհրաժեշտորեն գործադրվում են որոշ սկզբունքներ, որոնք հիմնականում հանգում են պատմական և համեմատական մեթոդների կիրառմանը:

Լեզվական երևույթների պատմական քննությունն ապահովելու համար, բնականաբար, պահանջվում են համեմատովող եզրեր: Միջին հայերենի ուսումնասիրության համար այդպիսի մի եզր է հանդիսանում հին հայերենը՝ իր գրաբար վիճակով: Համեմատովող նման մի եզրի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ միջին հայերենը ժամանակագրական կարգով և իր կառուցվածքային առանձնահատկություններով համարվում է (և է) հին հայերենին հաջորդող պատմական էտապ, ուստի և նպատակահարմար է համարվում քննարկվող շրջանի լեզվի կառուցվածքում արձանագրվող լեզվական միավորները համեմատել նախորդ շրջանի լեզվական միավորների հետ: Այդ համեմատությունների ընթացքում նկատի են առնվում լեզվի բոլոր մակարդակների միավորները՝ նրանց ձևական և իմաստային առումներով: Ըստ որում, նման մոտեցմամբ, այն բոլորը, որ միջին շրջանում հանդես է գալիս որպես հին նորմայից կատարվող շեղում, դիտվում է որպես պատմականորեն առաջացած և նոր շրջանին հատուկ արտահայտություն: Վերջիններս տվյալ շրջանի լեզվի համար կարող են բնորոշ համարվել միայն այն դեպքում, երբ մի կողմից՝ հանդես են գալիս որոշակի օրինաչափություններով և մյուս կողմից՝ հաստատվում են մատենագրական բավարար փաստերով:

Սակայն հին հայերենի նորմայից կատարված շեղումները ոչ բոլոր դեպքերում են ընկալվում համեմատության այս աստիճանում, և անհրաժեշտություն է առաջանում ընտրել համեմատության մի լրացուցիչ եզր ևս: Այս նպատակին առավել հաջողությամբ ծառայում են նոր հայերենը և հատկապես նրան ժամանակակից բարբառները: Ճիշտ է, սրանք և՛ ժամանակագրորեն, և՛ իրենց կառուցվածքային առանձնահատկություններով միջին հայերենին հաջորդած պատմական էտապ են, բայց հենց նրանով, որ նրանք հայերենի ամբողջ պատմության մեջ ամենաեռին, ուստի և դարպացման ավելի ուշ վիճակ են ներկայացնում և իրենց մեջ ունեն անցյալ պատմական շրջաններից ժառանգած բազմաթիվ լեզվական երևույթներ, դրանով էլ հիմք են տալիս միջին հայերենի մեջ կատարված երևույթների գնահատմանը: Եվ եթե հին հայերենը որպես հիմնական համեմատովող եզր, հնարավորություն է տալիս բացահայտելու միջին շրջանի լեզվական փոփոխությունների արտաքին կողմը, ապա նոր հայերենի և նրան ժամանակակից բարբառների մասին մեր գիտելիքները պոտենցիալ հնարավորություն են ստեղծում գնահատելու այդ փոփոխությունների ներքին կողմը, իմաստավորելու հին հայերենի համեմատությամբ կատարված շեղումների ներքին իմաստը, նրանց մեջ առանձնացնելու մի՛ կողմից այն բոլորը, ինչ հատուկ է տվյալ շրջանի պատմական ընդհանուր զարգացմանը, մյուս կողմից նշելու այդ ընդհանուրից կատարվող շեղումները՝ որպես միջնադարյան տարբեր բարբառներին հատուկ դրսևորումներ: Հետազոտության ընթացքում համեմատովող այս եզրը (նոր հայերենը և նրա բարբառները) բոլոր ուսումնասիրողների կողմից էլ այս կամ այն չափով հաշվի է առնված: Եվ դա բնական է, քանի որ միջին հայերենում հանդես եկող լեզվական միև-

նույն միավորների տարբեր արտահայտությունների մեկնաբանությունը անհամեմատ հեշտանում է, երբ նկատի ենք ունենում նոր հայերենի բարբառների նմանօրինակ փաստերը: Այս տեսակետից հատկապես շահագանց կարևոր է հայերենի բարբառների բաղաձայնական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների հաշվառումը՝ միջին հայերենի ժամանակաշրջանում տարբեր վայրերում խոսված հայերենների հնչյունական համակարգի բացահայտման համար, որը, ի դեպ, դժվար է անել միայն հին հայերենի հետ համեմատությունների միջոցով:

Հնչյունաբանական հետազոտությունների համար կարևոր նշանակություն ունի նաև փոխառությունների և նրանց գրադարձության հիմունքների պարզաբանումը: Այս տեսակետից որպես համեմատության եզր վերցվում են փոխատու լեզվի բառաձևերը, որոնք համեմատվում են հայերենում դրանց գրադարձված ձևերի հետ: Նման համեմատություններով պարզվում են ո՛չ միայն օտար բառերի՝ հայերենում գրավոր արտահայտության հիմունքները, այլև, որ ավելի կարևոր է, բացահայտվում են միջին հայերենի տարբեր դրսևորումներում հին հայերենի համեմատությամբ կատարված հնչյունափոխական երեվոյթները: Նույն նպատակներին կարող են ծառայել նաև օտար աղբյուրներում տառադարձված հայերեն բառաձևերը:

Այս սկզբունքները կիրառելիս նկատի է առնվում նաև մի այլ հանգամանք: Բանն այն է, որ միջին հայերենը գրի է առնվում ո՛չ որպես մի նոր՝ հայերենի բնույթին խորթ լեզու, որը կտրված է իր պատմական անցյալից: Որպես գրավոր լեզու, նա առավելապես հիմնված է անցյալի ավանդույթների վրա: Բավական է ասել, որ գրության մեջ օգտագործվում է ո՛չ թե նորաստեղծ մի այբուբեն (ինչպես, ասենք, նոր պարսկերենում, պահլավերենի համեմատությամբ), այլ հաջողությամբ գործադրվում է դարերի քննություն բռնած մեսրոպյան այբուբենը և այդ հիմքի վրա՝ հայերեն բառերի հին ուղղագրությունը: Հին լեզվի գրության սկզբունքների պահպանումը և անցյալի գրական ժառանգության օգտագործումը իրենց հետ բերում են նաև լեզվական ավանդական ձևերի առատ կիրառություններ:

Առհասարակ, միջնադարյան հայ հասարակությունը իր մշակույթի, գրականության և հոգևոր կյանքի բոլոր թելերով կապված է իր անցյալի հետ: Նորը ստեղծվում է անցյալի ժառանգության յուրացմամբ, անցյալի ուսանելի փորձի հաշվառմամբ, նախորդ շրջանի գրական ու գիտական նվաճումների օգտագործմամբ: Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև այն, որ միջնադարում կրթական գործը առավելապես կատարվում էր հին հայերենով, նրա նորմաների ուսուցմամբ, որը իրականանում էր հին դասական մատենագրության երկերի ընթերցմամբ, ապա պարզ կլինի, թե ինչքան ուժեղ պիտի լիներ հին լեզվի ազդեցությունը միջին գրական հայերենի վրա, որի գրական ու գրավոր հուշարձանների ստեղծողները նշված հասարակական միջավայրի ծնունդն էին:

Այս բոլոր հանգամանքները պայմանավորում են այն իրավիճակը, որ միջնադարյան մատենագրության և այլ գրավոր հուշարձանների լեզվում հավասարապես հանդես են գալիս և՛ հին, և՛ նոր ձևերը: Գրական ու գրավոր որոշ աղբյուրներում գերակշռում են հին, մյուսներում՝ նոր լեզվաձևերը: Շատ դեպքերում, նույնիսկ նույն հեղինակի միևնույն աշխատության կամ այլ գրավոր տեքստում, այդ հինն ու նորը հանդես են գալիս իրար կողք կողքի: Հաս-

կանալի է, որ լեզվի պատմության տվյալ շրջանի համար կարևորը ոչ թե ավանդական ձևերն են, այլ դրանցից կատարվող շեղումները: Եվ քանի որ այս նորը ոչ միշտ է ստանում գրավոր արտահայտություն (ավանդապահության պատճառով), ուստի չպետք է այն տպավորությունը ստեղծվի, թե այն լոկ պատահական բնույթ է կրում: Անկախ հնի և նորի քանակական հարաբերության, զուգաձևությունների մեջ միշտ առաջնությունը պատկանում է նորին:

Հին լեզվի ձևերից կատարվող շեղումների մեջ էլ, իրենց հերթին, նկատելի են տարբերակներ՝ տարաձևեր: Սրանք, ըստ էության, ժամանակի խոսակցական-բարբառային լեզվաձևեր են, որոնք թափանցել են գրավոր խոսքի մեջ և մեծ արժեք են ներկայացնում լեզվի պատմության համար:

Այսպիսով, միջին հայերենի լեզվական շրջանի առանձնացման հիմքը նրանում կատարված որակական փոփոխություններն են, որոնք բացահայտվում են հիմնականում նախորդ շրջանի լեզվական ձևերի համեմատությամբ: Այդ և այլ համեմատությունները երևան են բերում լեզվի բոլոր մակարդակներում տեղի ունեցած էական փոփոխություններ, որոնք և հանդիսանում են մեզ հետաքրքրող լեզվական շրջանի բնորոշ առանձնահատկությունները:

### ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Եթե համառոտակի թվարկելու լինենք այդ առանձնահատկությունները, որոնք տվյալ դեպքում խիստ կարևոր են միջին հայերենի բնութագրման համար, ապա կարելի է ասել հետևյալը<sup>42</sup>.

1. Հնչյունաբանական տեսակետից միջին հայերենում արձանագրվում են հետևյալ երևույթները.

ա) Հին հայերենի յոթ ձայնավորների (ա, ե, է, ի, ու, ը) փոխարեն միջին հայերենի համար բնորոշ են վեցը՝ ա, ե, ի, ու, ը, օ, օ, օ: Եթե հին հայերենում ե և է ձայնավորները հակադրվում էին միմյանց իրենց բաց կամ փակ լինելու հատկանիշով, ապա միջին դարերում կա՛մ փոխվում է դրանց տարբերակման հիմքը, կա՛մ էլ վերանում է դրանց տարբերությունը: Որոշ վայրերում ե-ն բառասկզբում, իսկ այլ տեղերում նաև բառամիջում, ստանում է յե երկհնչյունի արժեք կամ նույնիսկ՝ երկբարբառային արժեք: Միջին հայերենի այլ տարբերակներում հին ե-ի և է-ի գործածության տարբերություններ չկան և դրանք, շատ հաճախ, գրության մեջ փոխարինվում են մեկը մյուսով: Նույնպիսի երևույթ արձանագրվում է նաև ու-ով արտահայտված հնչյունի իմաստավորման մեջ: Որոշ տարբերակներում այն բառասկզբում վերածվում է երկհնչյուն ՎՕ-ի կամ երկբարբառային ՎՕ-ի, այլ տարբերակներում ունի պարզ օ ձայնավորի որակ: Նկատելի է նաև, որ այդ ձայնավորը, որոշ վայրերում, բառամիջի դիրքում ևս ստանում է երկբարբառային երանգ (ՎՕ): Սրանց զուգահեռ արձանագրվում է նաև ու > ու հնչյունափոխություն:

բ) Միջին դարերում հայերենի բոլոր տարբերակները պահպանել են ու, ի ձայնավորների՝ բառաթեքման ժամանակ շեշտի հետ կապված հնչյունափոխության հատկությունը: Սակայն այստեղ նորն այն է, որ նման փոփոխու-

<sup>42</sup> Միջին հայերենի լեզվական առանձնահատկությունների շարադրանքը տրվում է պրոֆ. Գ. Բ. Զահուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ տրված բնութագրումների և մեր անձնական դիտողությունների հիման վրա:

թյան հնթարկվում են նաև ա, ե, ո ձայնավորները, մի բան, որ հատուկ չէր նախորդ շրջանի լեզվին: Հատկանշական է, որ հիշյալ ձայնավորները սղվում կամ փոխվում են ը-ի ո՛չ միայն կապված շեշտի տեղափոխության հետ, այլև բառային ուղիղ ձևերում: Այս երևույթը առավել հատուկ է միջին հայերենի արևմտյան տարբերակներին: Ի տարբերություն նախորդ էտապի, քննարկվող ժամանակաշրջանում ա, ո, ե ձայնավորները հանդես են գալիս նաև բառավերջի դիրքում:

գ) Լեզվական այս շրջանի համար բնորոշ են հին երկբարբառների պատմական փոփոխություններ: Թեև մատենագրության մեջ արձանագրվում են նաև երկբարբառների երկհնչյունային արտասանության փաստեր, բայց դրանք, ավելի շուտ, հին երկբարբառների վերացման և այդ հիմքի վրա նրանց չգիտակցման պայմաններում՝ գրքային արտասանության արտահայտություններ են: Միջին հայերենի բանավոր և դրա հիմքի վրա արտահայտված՝ գրավոր վկայություններում հին երկբարբառները պարզվում և վեր են ածվում պարզ ձայնավորների: Սակայն, այստեղ ևս, պատմական փոփոխության պրոցեսը միասնական չէ: Ամբողջ միջին հայերենի համար ընդհանուր օրինաչափություն է առ երկբարբառի՝ օ պարզ ձայնավորի վերածվելը: Մյուս երկբարբառների փոփոխությունների ընթացքը միասնական չէ: Մի կողմից արձանագրվում են ոյ>ու, եա>ե, ալ>ա, իւ>ու փոփոխությունները, մյուս կողմից դրանք հանդես են գալիս նաև ոյ>ի, եա>ա, ալ>է, իւ>ի արտահայտություններով: Ըստ մատենագրության ընձեռած փաստերի՝ միջին հայերենի վաղ շրջանի համար ավելի բնորոշ է առաջին շարքի փոփոխությունը, թեև այստեղ ևս հանդիպում են երկրորդ կարգի փոփոխություններ: Նշված երկբարբառների պարզեցման պրոցեսում որոշակիորեն երևում են բարբառային բաժանվածության առանձնահատկությունները:

դ) Միջին շրջանում հայերենի որոշ տարբերակներում գիտակցվում է մի նոր հնչյուն. դա շրթնատամային խուլ շփման ֆ-ն է, որի գոյությունը, սակայն, դատելով մեր արևելյան մի շարք բարբառների ներկա վիճակից (Ղարաբաղ, Զանգեզուր և այլն), ընդհանուր չէր ամբողջ հայերենի համար: Այդ հնչյունը իր գրային արտահայտությունն է ստանում գրական լեզվում:

ե) Լեզվական զանազան փաստերի համադրությամբ պարզվում է նաև, որ միջին հայերենի բաղաձայնական համակարգը և հատկապես նրանում հպական հնչյունների (պայթականների և պայթաշփականների) շարքերը հանդես են գալիս տարբեր օրինաչափ փոփոխություններով: Ավելի պարզ ասած, հայերենի ք, գ, դ, ձ, ջ, պ, կ, տ, ծ, ց գրերով արտահայտված հնչյունները միևնույն որակը չունեն: Ըստ որում, հին ձայնեղ հպականները միջին հայերենի տարբերակներում միևնույն դիրքում մի դեպքում մնում են անփոփոխ, մի այլ դեպքում ներկայացնում են խուլ հնչյուններ, մի երրորդ դեպքում՝ շնչեղ խուլեր: Որոշ տարբերակներում բառասկզբի դիրքում դրանց համապատասխանում են շնչեղ ձայնեղներ: Սրանց հակառակ՝ հին խուլ հպականները ունեն երկու վիճակ. կամ մնում են անփոփոխ, կամ ներկայանում որպես ձայնեղ հնչյուններ: Բաղաձայնների այս տեղաշարժերը ընդհանուր չեն ամբողջ միջին հայերենի համար: Այսպես կոչված կիլիկյան գրական հայերենը հանդես է բերում հին ձայնեղների խլացման և խուլերի ձայնեղացման օրինաչափ փոփոխություններ: Կիլիկյան լեզվական միջավայրից դուրս, Հայաստանի այլ վայրերում արձանագրվում են բաղաձայնների փոփոխությունների

մյուս օրինաչափությունները: Ավելի ընդհանրական է ձայնեղ հպականների շնչեղ խլացումը Ե ձայնորդից հետո, թեև կան նաև միջին հայերենի այնպիսի տարբերակներ, որոնց մեջ նշված դիրքում ձայնեղները պահպանվում են:

զ) Քննարկվող շրջանի հայերենի բոլոր տարբերակներում գրաբարի ղ-ն (որ նախորդ շրջանում Լ-ի կատկային մի տարբերակն էր և կազմում էր լ-ի հետ հակադրություն), արդեն ուներ չ հնչումը. և քանի որ այդ փոփոխությունը ամբողջ հայերենի համար միասնական էր, ապա ղ-ի չ արտասանությունը տարածվում էր նաև գրաբար տեքստերի վրա: Այս նոր հնչյունը դառնում է ետնալեզվային շփական X-ի լծորդը և նրա հետ կազմում հակադրություն: Սրանք որպես նույն շաբթի ձայնեղ և խուլ հնչյուններ՝ հաճախ փոխարինում են իրար, և այդ՝ հատկապես պայթականների հարեանությունամբ, երբ ո՛չ միայն ղ-ն է փոխվում խ-ի, այլև ձայնեղ հպականը զրկվում է իր ձայնեղությունից:

է) Որպես բարբառային խիստ ընդգծված առանձնահատկություն արձանագրվում է հին հայերենի հ-ի փոխարեն խ-ի օգտագործում, այն էլ հատկապես Վասպուրականի և նրան հարող շրջաններում. մի բան, որ հատուկ է այդ վայրերի և այսօրվա բարբառներին:

Բառասպելի յ կիսաձայնը շատ տեղերում արժեքավորվում է որպես հագագային հ հնչյուն, թեև երևույթը համատարած չէ. որոշ վայրերում այդ յ-ն ընկնում է: Հաճախակի են դառնում ձայնորդահանգ ն վերջավորությամբ բառերի բառավերջի հ-ի անկման դեպքերը (ոտն>ոտ, գառն>գառ և այլն): Այս երևույթը ևս, դատելով մեր ժամանակակից որոշ բարբառների տված փաստերից, համատարած և ընդհանուր չէր:

2. Էական փոփոխություններ արձանագրվում են նաև ձևաբանական համակարգում:

ա) Անունների հոլովման մեջ թեև պահպանվում են հին հոլովման ընդհանուր օրինաչափությունները, բայց նկատելի են որոշակի շեղումներ ու անալոգիկ կազմություններ: Միջին հայերենի արևմտյան տարբերակներում առավել ուժեղանում է ու հոլովումը, որը և ընդհանրանում է հոգնակի թվի համար: Դրան հակառակ, միջին հայերենի արևելյան մի շաբթ տարբերակներում գերիշխել է սկսում ի հոլովումը (նաև հոգնակի թվի համար): Արձանագրվում է ոչ հոլովման սահմանների ընդլայնում, սակայն ոչ ամբողջ միջին հայերենի համար: Եթե որոշ վայրերում ունենք կնոջ, քոջ, տիրոջ և այլն ձևերը, ապա դրանց կողքին արձանագրվում են նաև կնկան, քոեք (ֆվեք, ֆեք), տիրի, ինպես նաև վերջին երկուսի գրաբարյան ֆեռ, տեառն ձևերը և այլն: Լայն կիրառություն է ստանում գործիականի ով վերջավորությունը, որը ընդհանրանում է բոլոր հոլովումների համար. սակայն որպես բարբառային տարբերակ հանդես է գալիս նաև գործիականի օմ (ձկօմ) վերջավորությունը՝ առաջացած գրաբարյան ամբ վերջավորությունից: Միջին շրջանում սահմանափակվում է Բ հոգնակերտի գործածության ոլորտը, նրա փոխարեն լայնորեն կիրառվում են եք, նի, նեք, սրանց հետ նաև՝ որոշ խմբի բառերի համար՝ վի, տի. ստան, աճ հոգնակերտները: Նկատելի է, որ հայերենի որոշ տարբերակներում եք-ը որպես հոգնակերտ, օգտագործվում է ինչպես միավանկ, այնպես և բազմավանկ բառերի համար: Այլ տարբերակներում եք ստանում են միայն միավանկ բառերը: Սրանց մեջ, որոշ վայրերի խոսվածքների բազմավանկ բառերին հատուկ են նի, այլ վայրերին՝ նեք հոգնակերտները: Դերանունների հո-

լովումների մեջ ևս նկատելի են փոփոխություններ. հատկապես նշելի են անցումները դեպի անվանական հոլովման ձևերը:

բ) Միջին հայերենը թեև ժառանգում է հին հայերենի խոնարհման հիմնական առանձնահատկությունները, բայց այդ համակարգի մեջ մտցնում է որոշակի փոփոխություններ: Հայերենի որոշ տարբերակներում գրաբարյան ներկայի ձևերը շարունակում են իրենց հին կիրառությունները, այլ տարբերակներում դրանք ստանում են ստորադասականի (ըզձականի) իմաստ: Սակայն, դրանցից դուրս, հայերենի այլ գրսևորումներում լայն կիրառություն է ստանում կա-ով կազմվող ներկան, որ առավել հատուկ է կլիկյան և արևմտյան մի շարք բարբառների: Նույն ժամանակներում սկսում են զարգանալ (թերևս արևելյան բարբառներում) ու կիրառվել ում անկատար դերբայով կազմվող ներկայի և անցյալ անկատարի ձևերը, թեև դրանց վաղ վկայությունները մատենագրության մեջ պատահում են հազվադեպ<sup>43</sup>: Միջին հայերենի պատմական ամբողջ շրջանի համար, այնուամենայնիվ, բնորոշը մնում է կա-ով ներկայի կիրառությունը, որը որպես գրական լեզվի նորմա տարածվում և գործածության մեջ է մտնում նույնիսկ այն վայրերում, որտեղ բանավոր-խոսակցական լեզվում կիրառվում էին ներկայի այլ ձևեր (ուս-ով ներկայից բացի, վկայություններ կան նաև կա-ով և կա-ով կազմվող ձևերի մասին):

Ամբողջ միջին հայերենում վերանում են գրաբարի ստորադասականի ձևվերը: Եվ եթե, այնուամենայնիվ, դրանք հանդիպում են այս շրջանի մատենագրության մեջ, ապա միայն որպես տուրք ավանդական ձևերին:

Լայն կիրառություն են ստանում վաղակատար և հարակատար (մեր արդի ըմբռնմամբ) դերբայներով կազմված ժամանակային ձևերը: Արձանագրվում են վաղակատարի եւ և ել վերջավորություններով զուգաձևեր՝ որպես բարբառային ընդգծված տարբերություններ:

Նախորդ շրջանի բայական անկանոնությունները նոր ձևավորում են ստանում. այդ անկանոնությունների մի մասը վերանում է: Նկատելի են դրանցից մի քանիսի բարբառային տարբեր դրսևորումները, ինչպես, օրինակ՝ եկն=եկա=երեկ, ետ=տուա (տաւ, տվաւ և այլն)=երես և այլն:

Բայերի կրավորականի կազմության մեջ լայն տարածում են ստանում (ու) վձածանցով կազմությունները, որոնք բնորոշ շէին գրաբարին: Պատճառականի հին ուցանել, ցուցանել վերջավորության ամփոփմամբ՝ ավելի գործածական է դառնում ցնել վերջավորությունը:

3. Այս շրջանի շարահյուսական կառուցվածքի համար բնորոշ են դառնում հետևյալ առանձնահատկությունները: Ամենաընդհանուր առումով, խիստ փոփոխություններ նկատվում են բառերի շարադասության բնագավառում: Որոշակիորեն ընդգծվում է որոշիչի և հատկացուցիչի առավելապես նախա-

<sup>43</sup> Վարդանի մոտ հանդիպող «բեզ աղօթք են առնում» հանրահայտ փաստի կողքին ամենահավաստի վկայությունը պետք է համարել 1474 թ. Վայոց-ձորում ընդօրինակված «Յայսմաւորքի» գրիչներից մեկի՝ Զաթէոսի, հիշատակագրություններից մեկում արձանագրված օրինակը. «Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին» (Ն. Խաչիկյան, ԺԾ դ. հձհ, հ. II, էջ 358): Հայտնի է, որ հայերենի այն բարբառները, որոնք սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են ում վերջավորությամբ անկատար դերբայով, ունեն նաև ում վերջավորությամբ ներգոյական հոլով: Այս տեսակետից հատկանշական է նաև նույն «Յայսմաւորքի» մի այլ գրիչ՝ Գալուստի, հիշատակագրության հետևյալ հատվածը. «Գ. (3) տեղ է գրած յ(ե)ղեզիս, Հերմոնի վանք, Աստուածածնումն, էս տետրս» (ն. տ. էջ 359), որտեղ ընդգծված բառը ևս հաստատում է ում ճյուղի բարբառ(ներ)ի գոյությունը:



դաս գործածությունը և նրանց անհամաձայնությունը որոշյալի և հատկացյալի հետ: Խիստ սահմանափակվում են զրաբարյան նախդիրների գործածության շրջանակները: Սրանցից հատկապես զ-ն է, որ գործուն կիրառություն ունի, այն էլ որպես հայցականի ցուցիչ՝ միայն հայերենի որոշ տարբերակներում. այլ վայրերում հանդիպում են տրուկանաձև հայցականի կիրառության ցրի-նակներ: Բառահարաբերություններ արտահայտելու համար լայնորեն կիրառվում են կապերը և կապական բառերը, որոնք մասամբ փոխարինում են հին նախդիրներին: Հին շաղկապների կիրառական վերաիմաստավորման հետ՝ լայնորեն կիրառվում են նաև նոր շաղկապներ:

4. Բառապաշարում արձանագրվում են բազմաթիվ հայերեն նորակազմություններ, արմատական բառեր, որոնք վկայված չեն նախորդ շրջանից և գրական լեզվի մեջ են մտել բարբառներից, հին բառաձևերի նոր իմաստավորումներ, ինչպես նաև փոխառություններ արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն, թուրքերեն և այլ լեզուներից: Արաբերեն ու պարսկերեն փոխառությունները ավելի ինտենսիվ են միջին հայերենի վաղ շրջանում և մասնավորապես բժշկագիտական աշխատություններում. բառապաշարային այդ շերտի մի մասը ավելի լայն տարածում ունի և արձանագրվում է համարյա բոլոր վայրերում. մյուս մասի տարածվածությունը ավելի սահմանափակ է և համեմատաբար ունի տեղային կամ մասնագիտական փոխառության բնույթ: Պարսկերենից կատարվող փոխառությունները շարունակվում են նաև հետագայում: Ցրանսերեն փոխառությունների մեծ մասը հատուկ է միայն կրիկյան հայերենին՝ որպես նրա վարչական-ավատական հարաբերությունները բնորոշող մի իրողություն: Ցրանսերեն բառերի մի շնչին մասը միայն գրական ճանապարհով տարածվել է ամբողջ միջին հայերենում (պարոն և այլն): Թուրքական փոխառությունները նախապես սակավաթիվ են, սակայն աստիճանաբար դրանց թիվը ժամանակի հետ աճում է և արդեն XVI—XVII դարերում հասնում է մեծ չափերի:

Ընդհանուր գծերով սրանք են միջին դարերում արձանագրվող հայերենի բնորոշ առանձնահատկությունները: Վերը տրված բնութագրումներից առնչվազն երևում է երկու բան. նախ, որ տվյալ շրջանի լեզուն իր նախորդ շրջանի համեմատությամբ ներկայացնում է մի նոր որակ, և երկրորդ, որ այն ամբողջովին, իր մեջ վերցրած, չի կարելի դիտել որպես միասնական, ընդհանուր օրինաչափություններով նորմավորված մի կուռ սիստեմ: Թվարկված լեզվական նոր երևույթները ժամանակի տարբեր հատվածներում և դրա մի հատվածի առանձին դրսևորումներում միևնույն արտահայտությունները չունեն: Մի կողմից միևնույն ժամանակահատվածում արձանագրվում են զարգացման տարբեր տենդենցներ, իսկ մյուս կողմից՝ ամբողջ շրջանի մեջ լեզվական երևույթները հանդես են բերում փոփոխությունների տարբեր ինտենսիվություն: Հատկանշական է, որ XVII դարի սահմաններից ինչքան գնում ենք դեպի ետ, այնքան պակասում են նշված առանձնահատկությունների վկայությունները. որոշ լեզվական երևույթներ նույնիսկ դադարում են, կամ ավելի ճիշտ՝ մատենագրության մեջ չեն արձանագրվում, որը, անշուշտ, նրանց ոչ գործուն լինելու չափանիշն է:

Այսպիսով, միջին հայերեն հասկացությունը ամենաընդհանուր առումով վերաբերում է վերը նկարագրված լեզվական ամբողջ շրջանին: Այն իր մեջ ընդգրկում է միջին դարերում հանդես եկող հայերենի բոլոր տարատեսակնե-

րը, գրական և բանավոր-խոսակցական լեզվի բոլոր դրսևորումները, այն ամենը, ինչ որպես օրինաչափ երևույթ հատուկ է նրա պատմական զարգացմանը:

## ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԻՄՔԻ, ՆՐԱ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱԺԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ինքնին հասկանալի է, որ մի լեզվի համակարգում կատարված նման որակական փոփոխությունները (ինչպիսիք հատուկ են միջին հայերենին) չէին կարող առաջանալ միանգամից, մեկ կամ երկու հարյուրամյակների ընթացքում: Դրանց առաջացման համար իրավացիորեն ենթադրվում է պատմական զարգացման երկարատև ուղի:

Ոմանց այն ենթադրությունը, թե միջին հայերենի, ինչպես և առհասարակ, մեր բարբառների լեզվական կառուցվածքը եղել է նախապես (գրաբարի շրջանում), բայց, իբր թե, պատմական որոշ հանգամանքների պատճառով չի գրանցվել ու ավանդվել գրավոր հուշարձաններում, փաստական բավարար հիմք չունի: Այդ ենթադրությունը չի հաստատվում ո՛չ միայն բավարար փաստարկումների բացակայության պատճառով, այլև նրանով, որ միջին հայերենի համակարգի բոլոր այն երևույթները, որոնք դիտվում են որպես հնից կատարված շեղումներ, լիովին բացատրվում են որպես նախորդ շրջանի լեզվական միավորների պատմական փոփոխություններ: Ետդասական շրջանից մեզ հասած առանձին լեզվական փաստերը և հայերենի բարբառային բաժանվածության մասին հատ ու կենտ տեղեկությունները միայն կարող են հաստատել միջին հայերենի առանձին լեզվական երևույթների նախնականությունը, բայց ո՛չ նրա ամբողջ կառուցվածքի գոյությունը այն ժամանակներում:

Վերն արդեն ասվել է, որ լեզվական հուշարձանների քննության ընթացքում ուսումնասիրողը ժամանակագրորեն ինչքան ետ է գնում, այնքան ավելի նվազում և երբեմն, նույնիսկ, դադարում են նորն արձանագրող փաստերի վկայությունները: Եվ այդ առավել վերաբերում է 12-րդ դարից առաջ ընկած ժամանակաշրջանի լեզվական հուշարձաններին, որոնց մեջ, քանի գնում ենք դեպի մեր գրականության սկզբնավորության շրջանը, միջին դարերի աղբյուրներում վկայվող երևույթները անհետանում են, և այդ շրջանի լեզվի ընդհանուր օրինաչափություններից կատարվող շեղումները ընդունում են այնպիսի միկրոսկոպիկ բնույթ, որոնց հայտնաբերումը՝ նույնիսկ հմուտ հետազոտողից, պահանջում են մեծ ջանքեր ու կարողություններ: Օրինական հարց է ծագում. եթե հին հայերենի գրառման ժամանակաշրջանում նրան զուգահեռաբար գոյություն ունեւր նաև միջին հայերենի լեզվական կառուցվածքը, ապա ինչո՞ւ այն մատենագրության մեջ երևան չի գալիս այնպես, ինչպես միջին դարերում<sup>44</sup>: Հարցի պատասխան չի կարող լինել վերը նշված «պատմական հանգամանքներ» ընդհանուր հայտարարությունը, որովհետև նման հանգամանքներ գոյություն ունեին նաև միջին դարերում: Մնում է կարծել, որ միջնադարում հանդես եկող լեզվական որակը գոյություն չունեւր հին հայերենի գրառման

<sup>44</sup> Կարևոր հանգամանք է նաև այն, որ թեև հին հայերենի լեզվական հուշարձանները մեզ հասել են միայն միջնադարյան ընդօրինակություններով, բայց դրանց մեջ բացի գրազարկան տարբերություններից և ոչ էական շեղումներից (որոնք նույնպես հին հայերենյան են), այլ առանձնահատկություններ հանդես չեն գալիս:

ըրջանում, որ այդ նոր համակարգը հայերենի պատմական զարգացման հետագա վիճակն էր՝ նրա ներքին զարգացման արդյունքը:

Սակայն սխալ կլիներ կարծել, թե միջին հայերենը իր բոլոր դրսևորումներով հանդերձ առաջացել ու զարգացել է հին հայերենի գրաբար վիճակից: Գրաբարը գրավոր և գրական մշակման ենթարկված լեզու էր, թեև իր գրառման շրջանում հիմնված էր կենդանի խոսակցական լեզվի վրա: Այդ լեզվի մշակման ու հետագա զարգացման ընթացքը այնպիսին էր, որ չէր կարող հասցնել միջին հայերենի որակին: Ավելին. գրական մշակման ընթացքում նրա մեջ մուծված արհեստական տարրերը նրան ավելի էին հեռացնում այդ լեզվի երբեմնի բանավոր-խոսակցական հիմքից: Ավելի ճիշտ կլինի ասել, որ միջին հայերենը զարգացել է գրի առման շրջանի հայերենի այն բանավոր-խոսակցական տարբերակներից, որոնք առանձնապես խիստ տարբերություններ չունեին ժամանակի գրավոր լեզվից, բայց և, այնուամենայնիվ, ինչ-ինչ առանձնահատկություններով տարբերվում էին նրանից: Եվ հենց այդ տարբերակների հիմքի վրա է, որ հետագա դարերում նախապես եղած տարբերությունները զարգանում, ծավալվում և առաջացնում են միջին հայերենի առանձին տարբերակները:

Պատմական զարգացման ընթացքում 5-րդ դարի գրական լեզուն և նրան ժամանակակից բանավոր-խոսակցական լեզվի տարբերակները ունեցել են միանգամայն այլ ճակատագրեր:

Պատմական ու քաղաքական մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների պատճառով՝ գրական լեզուն հետագա դարերում աստիճանաբար ենթարկվում է մեկուսացման: Դրանում, թերևս, ամենավճռական նշանակություն է ունենում հայկական պետականության վերացումը: Եթե միասնական ու կենտրոնական պետականության պայմաններում երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը և դրանց զարգացումը այս կամ այն չափով ապահովում էին նաև միասնական լեզվի գոյության հիմքերը, ապա կենտրոնական պետականության վերացման հետ միասին, նշված կապերի թուլացմամբ, սահմանափակվում էին գրական լեզվի հասարակական ֆունկցիաները: Հայ պետականության կորստով, փաստորեն, գրական լեզուն դառնում է եկեղեցու պաշտոնական լեզուն. նրա հասարակական ֆունկցիան սահմանափակվում է միայն եկեղեցու շրջանակներում և գործադրվում է նրա կարիքներին համապատասխան: Դրան հակառակ, հայ հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում շարունակում է հաղորդակցման իր դերը կատարել բանավոր-խոսակցական լեզուն:

Ստեղծված քաղաքական պայմաններում գրական լեզուն հնարավորություն չունի լրիվ իր ազդեցությանը ենթարկելու բանավոր-խոսակցական լեզվի տարբերակները և դրանք իր մեջ ձուլելու: Այդ մասամբ հնարավոր էր անել մասսայական գրագիտության և գրական երկերի բազմատիրաժ հրատարակությունների միջոցով, մի բան, որ, սակայն, անիրականանալի էր այն ժամանակվա տնտեսական և արտադրության միջոցների զարգացման մակարդակի պայմաններում: Տպագրական արհեստի բացակայության պայմաններում, երբ գրքերի «բազմացումը» կատարվում էր արտադրությունների միջոցով, ինչքան գրական երկեր կարելի էր արտադրել, որ հնարավոր լիներ դրանցով մի ամբողջ ժողովրդի լեզու պահել գրական լեզվի ազդեցության տակ: Նկատի ունենալով այն ժամանակվա պայմանները և «հրատարակչա-

կան» հնարավորությունները, պետք է կարծել, որ սկզբնապես հայատառ գիր-  
քը թվով շատ սահմանափակ էր և եղածներն էլ հիմնականում եկեղեցու և երկ-  
րի ունեւոր դասի սեփականությունն էին: Մյուս կողմից՝ գրական լեզուն գոր-  
ծադրողները այն մշակման ենթարկելիս, անտեսում էին բանավոր-խոսակցա-  
կան լեզվում կատարվող տեղաշարժները: Ընդհակառակն, գրական լեզվի  
մշակման ընթացքում նրա մեջ մուծվում էին հայերենի ընդհանուր զարգաց-  
մանը խորթ, արհեստական տարրեր, որոնք գրական լեզուն ավելի էին հե-  
ռացնում նրա ժողովրդական հիմքերից: Բավական է նշել, որ գրական լեզվի  
մշակման ընթացքում կատարված այնպիսի նորամուծություններից մեկը, ինչ-  
պիսին էր նախածանցների ստեղծումը և նրանցով բազմաթիվ նոր բառերի  
կերտումը (որը, ի դեպ, հետագայում ընդունվեց գրական լեզուների կողմից),  
անարձագանք մնաց բանավոր-խոսակցական լեզվում:

Ժողովրդական լեզվի ակունքների նկատմամբ անտարբերությունը զու-  
գակցվում էր ավանդապահությունը: Գրականության սկզբնավորության շրջա-  
նի լեզուն համարվում էր օրինակելի և պարտադիր իր բոլոր կողմերով: Նրա  
մշակումը ընդունվում էր միայն բառակազմական և ոճական սահմաններում:

Այս բոլոր հանգամանքները նպաստում են այն բանին, որ գրական լե-  
զուն՝ գրաբարը, դատապարտվում է մեկուսացման և աստիճանական մահաց-  
ման:

Մինչև VII—VIII դարերը, քանի դեռ բանավոր-խոսակցական լեզվի մեջ  
կատարված փոփոխությունները չէին հասնում այնպիսի մի աստիճանի, որ  
ակնհայտ լիներ նրա խզումը գրական լեզվից, վերջինս դեռևս շարունակում  
էր իր նեղ հասարակական ֆունկցիաների կատարումը, սակայն հետագա մի  
քանի դարերի ընթացքում այդ խզումը դառնում է որոշակիորեն ընդգծված,  
որով և գրական լեզվի հիմքի խնդիրը դառնում է օրակարգի հարց: Ուստի և  
այս տեսակետից տարօրինակ չեն XI—XII դարերում հին գրական լեզվի ան-  
հասկանալիության և ուսման համար ժողովրդական լեզվով գրելու անհրաժեշտու-  
թյան մասին արված հայտարարություններն ու խոստովանությունները:

Հակառակ գրական լեզվի (գրաբարի), որը դրված էր որոշակի շրջանակ-  
ների մեջ և կաշկանդված ավանդականությամբ, ժողովրդական լեզվի բանա-  
վոր տարբերակները շարունակում են զարգանալ իրենց օրինաչափություննե-  
րով: Արտաքին ոչ մի հանգամանք չի խոչընդոտում նրանց այդ շարժմանը:  
Ընդհակառակն, հայ ժողովրդի կյանքում ստեղծված պատմական պայմաննե-  
րը որոշակիորեն նպաստում են այդ ներքին շարժմանը:

Եթե հայ ժողովրդի կենտրոնական պետականության վերացումը բացա-  
սաբար է անդրադառնում միասնական գրական լեզվի և նրա ազդեցության  
ապահովման գործում, ապա այն, մյուս կողմից, ստեղծում է տերիտորիալ,  
քաղաքական ու տնտեսական մասնատվածություն, որը նպաստավոր պայ-  
մաններ է ստեղծում առանձին տերիտորիալ կամ վարչական շրջանների լեզվի  
անկաշկանդ զարգացման համար: Միասնական ու կենտրոնական պետակա-  
նության վերացումը, ավելին՝ օտար զավթիչների արշավանքները, հայ ժողո-  
վրդի ազատագրական պատերազմները, թշնամու գերակշիռ ուժերին դիմա-  
դրելու նրա օրհասական ճիգերը, այդ պատերազմների պատճառով երկրի  
ավերածությունը, տնտեսության անկումը և այդ հիմքի վրա որոշ բնակա-  
վայրերի բնակչության տեղահանությունները, բռնի և կամովին գաղթերը,—  
բացասաբար են անդրադառնում մի շարք առումներով: Երկարատև օտար

լուծը իր հետ բերում է լեզվական օտար ազդեցություններ (նախ՝ արարական, այնուհետև թուրք-թաթարական ու պարսկական). բնակչության տեղահանություններն ու գաղթերը փոխում են բնակավայրերի բնակչության կազմը, ստեղծում լեզվական փոխազդեցություններ (նույն լեզվի տարբեր բարբառների միջև), առաջացնում առանձին համայնքներ՝ մեկուսացած հայ բնաշխարհից: Այսպիսի պայմաններում վարչական որոշ շրջաններ մի քանի սերունդների ընթացքում վարում են մեկուսացած կյանք: Քաղաքական մանր միավորումներում ամփոփված որոշ տերիտորյալ շրջաններ համեմատաբար ավելի սերտ հարաբերությունների չու կապերի մեջ են մտնում, և այդ հիմքի վրա դրանց տերիտորյալ լեզուները մշտական փոխազդեցության մեջ են դրվում: Այս բոլորի հետևանքով, ժողովրդի խոսած լեզուն, որ ուներ իր զարգացման ներքին օրենքները, տարբեր վայրերում զարգացման ուրույն հունի մեջ է ընկնում: Ներքին այդ օրինաչափություններից մի քանիսը, թերևս, ընդհանուր հայկական են եղել և որոշակիորեն ընդգծվել են դեռևս ավելի վաղ շրջանում, ուստի և նրանց զարգացման արդյունքները ամենուրեք նույնն են, ինչպես օրինակ՝ կարելի է հիշել հնչյունական համակարգում ղ-ի և արտասանությունը, կամ ալ երկբարբառի օ պարզ ձայնավորի վերածվելը և այլն: Սակայն կան նաև երևույթներ, որոնք ընդգրկում են վարչական մեծ տերիտորիաներ կամ պարզապես՝ վայրից վայր ունեն բարբառային ընդգծված տարբերություններ:

Այսպիսով, հայերենի գրի առման շրջանի բանավոր-խոսակցական լեզվի դրսևորումներն են, որ վերը նշված գործոնների փոխազդեցությամբ և իրենց ներքին զարգացման օրինաչափությունների ուժով գալիս հասնում են մինչև միջին դարերը, ստեղծելով լեզվական մի նոր համակարգ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով հանդերձ:

Մատենագրական տվյալները վկայում են, որ այդ նոր համակարգը իր ընդհանուր գծերով, թեև դեռևս տարտամ, երևում է արդեն IX—X դարերում, և, ամենայն հավանականությամբ, նրա տարբերակներից մեկը, Անիի թագավորության՝ բագրատունիների ժամանակաշրջանում, կարող էր բարձրանալ գրականության աստիճանի, եթե այդքան վաղաժամ շկործանվեր այդ պետությունը: Այդ են վկայում վիմական արձանագրությունների, ձեռագրերի հիշատակարանների, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու տաղերում և այլուր հանդիպող ժողովրդական լեզվի ձևերը:

Սակայն լեզվի պատմական զարգացման ընթացքը շարունակվում էր: Հայ ժողովրդի բերանում հնչվող լեզուն XI—XII դարերում արդեն որոշակիորեն տարբերվում էր գրքային՝ հին գրական լեզվից: Եվ եթե գրավոր լեզուն պետք է ծառայեր հասարակությանը, ապա պետք է վերանայվեր կամ փոխվեր նրա խոսակցական հիմքը:

Կիրիկյան հայկական պետության ստեղծմամբ առաջանում է խիստ անհրաժեշտություն՝ որոշելու գրավոր և բանավոր լեզվի փոխհարաբերության հարցը: Նորաստեղծ պետականության հիմքերը ամրապնդելու, նրա բաղաբական ու տնտեսական գործունեությունը ապահովելու, հասարակության արտադրական հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև նման մի զարգացած հասարակության կուլտուրական պահանջները բավարարելու համար հին գրական լեզուն պիտանի չէր, քանի որ այն հասարակության լայն խավերի համար անհասկանալի էր: Հենց այս հիմունքով էլ կիրիկյան պետության

մեջ նրա գրավոր լեզվի հիմքում դրվում է Կիլիկիայի հայության ժամանակի խոսակցական լեզուն<sup>45</sup>։

Կիլիկյան հայերենի գրական լեզվի աստիճանի բարձրանալը տեղի է ունենում բուն Հայաստանում հայ պետականության բացակայության պայմաններում, ավելին՝ մոնղոլական-թուրքական ավերիչ արշավանքների, տընտեսության ու կուլտուրայի անկման պայմաններում, երբ դրան հակառակ՝ կիլիկյան պետության ապահով սահմաններում զարգանում են տնտեսությունը, առևտուրը, քաղաքները, կուլտուրան, գիտությունը և այլն։ Ամբողջ հայության ուշադրությունը ուղղվում է դեպի այդ պետականությունը, դեպի նրա հասարակական կյանքն ու մշակույթը։ Բուն երկրի բնակչությունը՝ հալածված օտարների հարստահարությունից, երբեմն ապաստան է գտնում այդ պետության սահմաններում։ Այս առումով, չնայած որ նույն միջնադարում գոյություն ունեին հայերենի բանավոր-խոսակցական լեզվի բազմաթիվ տարբերակներ, կիլիկյան հայերենը գրավոր, ապա և գրական լեզու դառնալով, նրա որոշ օրինաչափություններ, որոնք խորթ չէին ժամանակի հայերենի ընդհանուր զարգացման և ընդհանուր էին նաև այլ տարբերակների համար, այլ վարդերում ընդունվում են որպես նոր ժամանակների գրական լեզվի նորմաներ։ Կիլիկյան հայերենի գրառման շրջանում այնքան ընդգծված չէ դեռևս նրա նորմաների տարածվածությունը ամբողջ Հայաստանում, միայն հետագա դարերում, երբ արդեն խորտակվել էր հայկական և այդ պետությունը, այդ լեզվի որոշ օրինաչափություններ ընկնում են միջնադարյան գրական հուշարձանների (հատկապես գեղարվեստական և բժշկագիտական գրականության) հիմքում, մանավանդ որ այդ լեզվին բնորոշ շատ առանձնահատկություններ հարազատ էին արևմտահայ մի շարք բարբառների։

Այս տեսակետից կիլիկյան հայերենի գրական լեզու լինելը պետք է ընդունել որոշ վերապահությամբ։ Նա ինքը՝ կիլիկյան հայերենը իր գոյության ամբողջ շրջանում միօրինակ չէր։ Եվ դա հասկանալի է, քանի որ նրա հիմքում ընկած բանավոր-խոսակցական հայերենը ևս միատարր չէր։

Կիլիկիան, ըստ էության, հայկական մի մեծ գաղթավայր էր, որտեղ հավաքված էին բուն Հայաստանից տեղափոխված տարբեր բարբառների ներկայացուցիչներ, որոնց մեջ առանձնապես գերակշռում էին արևմտահայ բարբառների կրողները։ Եվ չնայած այն բանին, որ այս երկրում, մինչև հայկական պետականության ստեղծվելը, դեռ շատ վաղ ժամանակներից, ապրում էին հայեր, բայց, այնուամենայնիվ, նրա պետականության ստեղծման շրջանում, բնակչության հիմնական մասը կազմում էին բուն Հայաստանից՝ հատկապես նրա արևմտյան շրջաններից արտագաղթվածները։ Այնպես որ, կիլիկյան հայերենը փաստորեն գրի էր առնվում արևմտահայ բարբառների ընդհանրությունների հիման վրա։ Հենց սրանով պետք է բացատրել այն հանգամանքը,

<sup>45</sup> Այս տեսակետից բնորոշ են Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի առաջաբանի հետևյալ տողերը. «Բնազում աշխատանօք աշխատեցայ ի Դատաստանագիրքս ծերացեալ մտօք, վասնզի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի չէին ի հասկընալ և ոչ յօկտել գայր։ Եւ ես բազում աշխատությամբ փոխեցի զսա ի հին և ի դժարաբառ և յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր և ի սովորական բառս, ի թրւականութեանս Հայոց ԶԺԴ (1265) ամին՝ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ և որդոյ սորա Լեւոնին» (Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 4)։

որ այս նույն ժամանակներում Կիլիկիայից դուրս՝ բուն Հայաստանի արևմուտ-  
յան շրջանների լեզուն, իր հիմնական առանձնահատկություններով այնքան  
մոտ է կիլիկյան հայերենին:

Սակայն Կիլիկիայում գրի առնված ժողովրդական հայերենը հնարավո-  
րություն չունեցավ մշակվելու և դառնալու կանոնավոր ու միասնական օրի-  
նաչափություններով գրական լեզու: Դրան նախ՝ խանգարում էր նրա հիմքում  
ընկած խոսակցական լեզվի անմիօրինակությունը: Չնայած գրավոր լեզվի  
հիմքում ընկած բանավոր լեզվի ընդհանրություններին, այնուամենայնիվ,  
սնվելով ժողովրդական լեզվի ակունքներից, նա իր մեջ էր առնում նաև նրա  
տարբերությունները, որոնք և առաջացնում էին անմիօրինակություններ:  
Մյուս կողմից՝ այդ տարբերությունները հաղթահարելու և դրանք միասնական  
գրական լեզվի մեջ ձուլելու համար պահանջվում էր երկարատև ժամանակ,  
որից, սակայն զրկվեց գրական լեզուն՝ կիլիկյան պետականության վերացման  
հետևանքով:

Կիլիկիայի հայ պետականության անկումից հետո գրական լեզուն, ինչ-  
պես բուն երկրում, այնպես և նրանից դուրս, ավելի է ենթարկվում տեղական  
բարբառների ազդեցությանը: Եվ թերևս դրանով է պայմանավորված այն  
հանգամանքը, որ XIV—XV դարերից սկսած խիստ աշխուժանում են հայ բար-  
բառները, որոշակիորեն սկսում են ընդգծվել վաղ աշխարհաբարի արևմտա-  
հայ և արևելահայ տարբերակների ուրվագծերը:

Մենք վերը տեսանք, որ միջին հայերենի խոսակցական հիմքի վերաբեր-  
յալ գիտություն մեջ արտահայտվում էր երկու հիմնական կարծիք: Գիտնա-  
կանների մեծ մասը միջին հայերեն ասելով հասկանում է քննարկվող շրջանի  
լեզվի բոլոր տարբերակները, որոնցից միայն մեկն է համարվում ավելի լավ  
վկայված գրավոր հուշարձաններում. դա կիլիկյան հայերենն է: Ըստ մյուս  
կարծիքի՝ միջին հայերենը միասնական օրինաչափություններով լեզու է, իսկ  
կիլիկյան հայերենը՝ նրա զարգացման մի փուլը: Երկու դեպքում էլ ուշադրու-  
թյան կենտրոնում է կիլիկյան հայերենը, և կամա թե ակամա, միջին հայե-  
րենը ներկայացվում է նրա: առանձնահատկությունների շրջանակներում: Որ  
կիլիկյան հայերենից դուրս Հայաստանում կային նաև հայերենի այլ տարբե-  
րակներ, առաջին տեսակետի կողմնակիցները ո՛չ միայն չեն ժխտում, այլև  
իրենց համար մատչելի լեզվական փաստերով աշխատում են հիմնավորել այն,  
սակայն նյութի անբավարարության պատճառով այդ տարբերակների քննու-  
թյան հարցը մնում է բաց:

Ստորև քաղվածաբար մեջ են բերվում մի քանի հատվածներ հայերեն ձե-  
ռագրերի հիշատակարաններից, որոնց լեզվում, ժամանակի հայերենին հա-  
տուկ ընդհանուր օրինաչափություններից բացի, առկա են նաև ա՛յլ առանձնա-  
հատկություններ, որոնք ունեն տեղային-բարբառային բնույթ: Բերվող  
հատվածները գրված են համարյա նույն ժամանակամիջոցում, բայց տարբեր  
վայրերում և տարբեր հեղինակների կողմից: Եվ չնայած այն բանին, որ այդ  
հիշատակարանների լեզվի առանձնահատկությունները առավելապես ակնար-  
կում են արևելահայ լեզվի զարգացման տենդենցները, այնուամենայնիվ,  
նրանց մեջ իսկ կան նաև բարբառային որոշակի տարբերություններ<sup>46</sup>:

<sup>46</sup> Ավելի մանրամասն փաստարկումներ տե՛ս սույն ուսումնասիրության մեջ:

## Գրիգոր Ախալցխեցու հիշատակարանից (գրված Հերմոնի վանքում)

Ու մինչև ի գրոց կէսս, որ կու գրէի միաբանատուն ու սեղանատեղ կայր, յետոյ վանիցս տնտեսն գնաց ու վանից սեղանատեղս արեբեցաւ ու երկպառակութիւնն ի միաբանքս անկաւ, որ բամբասանք ու տրտունջն շատացաւ, ու եղան ամէնն ինքնագլուխ խցւոր: Ու ամէն խուց ունէին ու ես ոչ, ու ամէն հաց ունէին ու ես ոչ, ու զվանիցս հացն վերայ իւրեանցն բաժանեցին ու ինձ ոչ տվին, թէ նայ դարիպ է, նրայ բաժին մի տէք, ու ամէնն մոնթ, սպասաւոր ունէին ու ես ոչ, ու ամէնն սիրելի ունէին, որ հաց ու թաց կու բերէին ու ինձ ոչ, ու ամէնն կուերթէին ի վարդապետի խուցն, ուտէին ու խմէին ու ես ոչ, ու վարդապետն զամէն մարդու քաղց գիտենէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ միաբանքն մին մին տանէր ի խուցն ու կերակրէր ու զիս ոչ, ու ամէն մարդու գոհ ու գանգատ հարցանէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ մխիթարէր ու զիս ոչ, ու ես նրայ սրբութեանն համար նստլի կու գրէի սոված ու քաղցած ու գնի ոչ: Տնտեսին գնալն մին դիրն Գ(3) արբ հաց շկերայ ու ես ուզեցի ոչ, մին դիրն Բ(2) արբ անաւթի կացի ու ուզեցի՝ նա հաց տվին ոչ, ու մին արբ մինչև իրիկուն անաւթի կացի, մին խիար ընկաւ զէն կերայ ոչ ու մենակ, մինչ յիրիկուն, գիր կու գրէի: Երբ ի ժամ կու երթայի եղբարքն ինձ քէն ին արել, ի հետս խաւտէին ոչ, ու վաղէնէ մինչ յիրիկուն մաւտ վարդապետն գան գիշերուի՝ ես ի մաւտն էի ոչ, ու շաբաթն մէկ հետ զաւրինակն կուզէր վարդապետն, թէ կու երթամ ու ես լմնել կարէի ոչ, ու վարդապետին մեծ աշակերտն ինձ խիստ կու աւզնէր, կու երթէր մաւտ ի վարդապետն, թէ Ախալցխեցուն արինակ կու տաս ու ինձ ոչ: Եղբարցս աւգնութիւնն այս շափս էր ու մարմնաւոր ուրախութիւնն ինձ ի յայս գրոցս գրելս այս շափս էր: Ու վարդապետն գրիեանք բաժնեց աշակերտացն Բ(2) ու Գ(3) ու ինձ մէկ մ'ոչ: Աստուծոյ համար, ով որ զարիպութիւն չէ գնացել, թող այլ շերթայ. զհոգու խոցն ի սատանայէ լեզուաւ ասել կարեմ ոչ: Ու ճանապարհ կայր ինձ գնալու ու միտքս հանգէր ոչ. և զայն ամէնայն վիշտս քաշել եմ ի գրոց գրելս ու մարդ գիտէր ոչ: Մին այլ մեծ աշակերտն զմին փոքր արեղա կու ծեծէր, թէ Գրիգորին թուղթ չէ՞ր կու կոկես ու ի դուս ձգես ոչ: Յետոյ արարիչն աստուած, որ զամենայն տարակոյս ի մարդոյ կու բառնայ ու զամենայն քաղց կու լնու ու կերակրէ, յարոյց մին բարի մարդ ու եղաւ ինձ հայր ու իւր կողակիցն ինձ մայր, մինչև զգիրքս լմնեցի՝ զտղին շալակովն հանապազ հաց ինձ կու ղրկէին, տացէ նոցա տէր աստուած զայն հացն, որ ուտեն ու այլ ոչ քաղցենան... Ու ես հէնց խեղճ ու մենակ, որ մէկ բարչ ջրի բերող անգամ ոչ ունէի, բայց զաստուած աւգնական ունէի, ու կաման աստուծոյ սկսայ ու կարողութեամբն նորին ՀԳ(74) արն վճարեցի (Ժն դ. հճհ, հ. I, էջ 657—658):

## Աղվանքի Մաթէոս կաթողիկոսի հիշատակագրութիւնից

Ես՝ Մաթէոս Աղուանից կաթողիկոս ունէի մաւտ Յոհանէս էրէցն՝ Առաքել իրիցու որդին ԶՌ(6000) դեկան ստակ ու Ի(20) թաղար ցորեն՝ ղապալու շա-



փոփն: Իւրեանքն ի Քրիստոս փոխեցան, իրք մին շունին, զոր զիմ պարտքն տէին, տանուտէրք և ք[ահանա՞յք] մէջ ընկան, աւետարանս ու Ա(1) ձի, Ա(1) թ[ամբ] բերին, թէ այլ իրք մին շունին, երես դրին, թե խեղջ են, ես այլ խղջացի, ձին ու թամբն յետ տվի, զաւետաթանն առի (ԺԵ դ. հձհ, հ. I, էջ 439):

1460 ք.

Աղթամարում՝ հոնձա տիկնոջ պատվերով ընդօրինակված Աւետարանի հիշատակարանում

Արդ, որք ճաշակեք յաստուածային բուրաստանես և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ՝ յիշեսջիք յերկնագնաց յաղաւթս ձեր զյառաջ յիշեցեալ զստացող սուրբ Աւետարանիս գեոնձէն, և զծնաւդքն զՄկրտիչն և զՈսկին, և զկողակիցն զՅովանէսն, և զորդին զԲարիոքն, որ դառն ցաւ և անբուժելի ախտ հանդիպաւ և ի յիսանէ հեռացաւ, և ի տանէ և ի յընդանեաց բաժանեցաւ, և ի յաշխարհէս վայելմանց անողորմ երես դարձուցեր, և ի յաւտար երկիր է մեռեր, և ինձ էնց սուգ ահեղ տուեր, որ կսկիծն ի սիրտս է հասեր և զիմ աչերս է լալոտ պահեր, գիշեր ու ցերեկ լացեր, և արև ի յիմ սիրտս չէ դիպեր, ոչ անձինս մխիթար գտեր և ոչ լեզուս յորդոր զրուցեր, զբան արարչին լսեր և անձինս ումէկ զսուրբ Աւետարանս ստացեր, և իմ զաւակին փոխան եմ եղեր (ն. տ., հ. II, էջ 143—144):

1462 ք.

Տուփխիսում ընդօրինակված ձեռագրի գրիչ Դավթի հիշատակարանից

Եւ ձէն ընգաւ քաղաքս, թէ քիչ հեծել է. ի քաղաքէս ԲՃ(200) լաւ տղամարդիկ ի դուրս ելան յետնէ՝ ինչուր ի կաւձին՝ ի ջրի էն դէհն գնացին հետևակ, դադրած, նետերն հատած և անարող(՞) և անսլեհ ...Եւ մեծ հեծելն ի դուս էին եկել, և երկու դիմաց բուրբել, և զամէն կոտորել և ի սուր քաշել, և զամենոց գլուխն տարել: Վայ ինձ զէն աւուրս սուքն, զլացն ով կարէ բերան պատմել, որ զէն տղամարդիկն անգլուխ և մերկ բերէին դասու ի դաս, հէնց որ ոչ ով զիւր մեռելն շկարէր ճանաչել: Եւ զայն աւուր լացն, զողբն ոչ ով շի կարել պատմել, վայ ինձ Ռ(1000) բերան (ն. տ., էջ 169):

1474 ք.

Վայոց-Ձորում ընդօրինակված Յայսմատուրփի գրիչների հիշատակագրութիւններից

ա) Գրիչ Զաֆէոս

Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին (ն. տ., էջ 358):

ԶԹումա նորաբողբոջ քահանայն յիշեցէք յաղաւթս, որ այսար երեկ ու ինձ երկու ձիթով բաղարջ եբեր, որ ես կերա. նաև զմայր նորա, որ աղարկեալ էր զայն մեծ-մեծ հացերն:

Գիտեմ որ տուն և գիր պակաս կայ յայս ճառս, ապա վկայ է արս, որ յարինական շկէր, մի մեղադրէր:

Ով սուրբ կարդացող, ինձ հայնց թվաց, թէ բան կայ պակաս, թէ կարես նա բերան ասայ, թէ չէ՝ նա վայ տուր զծոյլս, որ յայլ տեղ կամ յայլ գիրք որոնեցի ոչ (ն. տ., էջ 359):

բ) Գրիչ Գալուստ

Աւրհնեալ է արարիչն աստուած, որ զմեզ բարով թափեց ի յէս գրէս, զի Բ. եղբարքս է. (7) տարի էր, որ վերա ինք, Ռ. (1000) բռունք պրծանք:

Գ. (3) տեղ է գրած յ[Ծ]ղեգիս, Հերմոնի վանք, Աստուածածնումն, էս տետրս...

Թողութիւն արարէք, ով եղբարք, մատս մանկաղով կտրել ի, հէնչանք կարացի գրել, փառք աստուծոյ: Ա. (1) ոչխրի արիւն գնաց: (ն. տ., էջ 359):

Ըստեղս հասայ՝ բարկութիւնն նիյ ընգաւ. ացին (<ասացին), թէ Հասանբէկ կոխեցաւ, արինական պահեցաւ, գրողս խատատեցաւ տետրս շմնեցաւ, վա՛յ մեզ:

Շնհաւոր շիրդուն՝ իմ քիրն մեռաւ, իմ շքիլոն կտորեցաւ, թողութիւն արարէք:

Ձէս տետրս գրելիս խիստ դառնացայ, վա՛յ,  
Մէր շունի, Ա. քոյր ունի, էն էլ մեռաւ, վա՛յ,  
Քանի միտս ընկնէր, գրիչս ձեռնէս վեր ընկնէր,  
Խիստ կարաւտ ի՛նչ շտեսայ, (վա՛յ):

Սուրբ Սարգսի պասին ացի ծով կենամ. ինքն գլուխս ման երեկ ու քիրն յերազի տեսայ ու խիստ դառնացայ, հէնձ որ ձեռս թուլացաւ ու կաղամբարն վեր ընկաւ:

Այս ճառս գրեցաւ  
Ացին թէ տէրն վաղշանեցաւ  
Եպիփանու դասաւորեցաւ.  
Մեղաւորս հէնձ դառնացաւ,  
Որ ձեռս թիւացաւ:

Ով ընթերցող եղբարք, աղաչեմ զձեզ, զի խոշորանաց գրոյս անմեղադիր լիւր, զի ժամատուն կու շինին, բան էի արել և ձեռս խամացել էր. յամենայն ժամ վարդապետն կանչէր և ես վռագեցայ... թէ տետրս լմնեմ (ն. տ., էջ 360):

Թվում է, մեկնաբանութիւններն ավելորդ են: Չնայած եղած ընդհանրութիւններին, որոնք պայմանավորված են այդ բարբառների տերիտորյալ ընդհանուր զարգացմամբ, բերված հատվածները լեզվական տեսակետից ունեն նաև էական տարբերութիւններ: Հատկապես պետք է շեշտել Վայոց Ձորում գրված ձեռագրի հիշատակագրութիւնների լեզուն, որը մի փոքրիկ հատվածում որոշակիորեն երևան է բերում բուլղոստի տարբեր կառուցվածքի առանձնահատկութիւններ: Այստեղ հանդիպող հնչյունափոխական այնպիսի երկվայթները, ինչպիսիք են՝ ցայտեաց>ցեթեց, արարեալ>արել, կայր>կէր, այս>էս, այն>էն, այլ>էլ, մայր>մէր, այնչափ>հէնչանք, էաք>ինք, (չ)ունէի>(չ)ունի, այստեղս>ըստեղս, ասացին>ացին, մատնս>մատս, ձեռնս>

ձեռք, քոյր>քիր, թուլացաւ>թիւացաւ և այլն և այլն (որոնց մի մասը հատուկ է նաև բերված մյուս հատվածների լեզվին՝ որպես արևելյան բարբառների), ձևաբանական այնպիսի ակնառու օրինակներ, ինչպիսիք են՝ գրում ի (գրում էի), Աստուածածնումն (նեղգ. հոլ.), գրելիս (անկ. դերբ.) և այլն, դրա լավագույն ապացույցներն են: Հատկանշական է նաև այն, որ Աղթամարում Խոնձա տիկնոջ պատվերով ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում, որ սկզբվում է առավելապես գրաբար լեզվով և հետո միայն անցնում ժողովրդական լեզվին, որոշակիորեն երևում է վաղակատար դերբայի ետ-ով ձևերի կիրառությունը, հակառակ մյուս հատվածների, որոնց մեջ այդ դերբայը հանդես է գալիս ել վերջավորություններ:

Հարկ չկա այստեղ կանգ առնելու նաև այլ կարգի (բառապաշարային, շարահյուսական և այլ) տարբերությունների վրա: Ակնհայտ է, որ նշված հատվածների լեզուն իր էական կողմերով տարբերվում է այն լեզվից, որ անվանվում է կիրիկյան հայերեն և որի առանձնահատկությունները հատուկ են նաև արևմտահայ մի շարք բարբառների: Եվ եթե վերը նշված առանձնահատկությունները արձանագրվում են որպես համակարգ XV դարում, ինչ խոսք, որ դրանք գոյություն ունեին նաև նախորդ՝ XIII—XIV դարերում, հետևաբար և կիրիկյան հայերենը միջին հայերենի միակ դրսևորումը կամ նրա զարգացման մի փուլը չէր:

Ինչպես վերև արդեն ասվեց, կիրիկյան հայկական պետականության վերացմամբ՝ աստիճանաբար սկսում է թուլանալ նաև նրա գրական լեզվի ազդեցությունը՝ տարբեր վայրերում խոսվող հայերենների վրա, և այդ հիմքի վրա ավելի ևս աշխուժանում են տերիտորյալ բարբառները: Այդ պրոցեսին նպաստում են երկրի խիստ մասնատվածությունը, տարբեր վարչական շրջանների ու գավառների տնտեսական ու քաղաքական թույլ կապերը, նրանց փակ ու մեկուսացված կյանք վարելը և այլն: Ժողովրդի միակ քաղաքական միավորող ուժը մնում է եկեղեցին, բայց վերջինս էլ անտարբեր է գտնվում նոր ժամանակների լեզվի նկատմամբ և իր՝ մշակութային, գաղափարական գործունեության ընթացքում շարունակում է կիրառել գրաբար լեզուն: Երկրի մասնատվածությունը նպաստում է արդեն իսկ մասնատված լեզվական տարբերակների ինքնուրույն զարգացմանը: Քաղաքական աննպաստ հանգամանքների բերումով հայ հասարակության հոծ զանգվածներ հեռանում են բուն երկրից և գաղթօջախներ ստեղծում մայր երկրից շատ հեռու՝ օտար լեզվական միջավայրում: Այսպիսի գաղութներ են ստեղծվում Ղրիմում (Սուրխաթ, Կաֆա), Ուկրաինայում (Կիև), Ռումինիայում, Լեհաստանում (Լվով, Կամենեց-Պոդոլսկ), Հունգարիայում և այլուր: Կտրված մայրենի լեզվի սնուցող ակունքներից, լեզվական օտար միջավայրում, հայերենի այդ տարբերակները զարգանում են մի կողմից՝ իրենց ներքին օրինաչափություններով և մյուս կողմից՝ ենթարկվում շրջապատի լեզուների ազդեցությանը, որը նրանց աստիճանաբար հանում է պատմության ասպարեզից:

Քուն երկրում, շնայած քաղաքական ու տնտեսական աննպաստ պայմաններին, հայ հասարակությունը ոչ միայն կարողանում է պահպանել իր գոյությունը, այլև ստեղծում է նյութական և հոգևոր արժեքներ: Գրավոր լեզվի աշխարհաբարացումը ավելի ուժեղ է արտահայտվում այս ժամանակվա գրական հուշարձաններում: Եվ շնայած այն բանին, որ դեռևս որպես գրական լեզու շարունակում է գոյություն ունենալ նաև գրաբարը, բայց, այնուամենայ-

նիվ, գրական երկերի հիմնական լեզուն դառնում է ժամանակի խոսակցական լեզուն:

XVI—XVII դարերում շատ որոշակիորեն ընդգծվում են ժամանակակից հայ բարբառների հիմնական հատկանիշները. սակայն գրական լեզվի զարգացումը գնում է ոչ թե այդ բոլոր տարբերակների գրի առման ճանապարհով, այլ երկու հիմնական ուղղություններով: Արևմտահայ և արևելահայ բարբառների տարբերությունների հիմքի վրա ուրվագծվում է զարգացման երկու հիմնական տեղեկեց, որոնք հետագայում հասցնում են աշխարհաբարի երկու տարբերակների առաջացմանը:

### ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՐՑԸ

Մենք վերը տեսանք, որ միջին հայերենի լեզվական շրջանի համար տարբեր գիտնականներ վերցնում են տարբեր ժամանակահատվածներ (այստեղ կանգ կառնենք դրանցից երեքի վրա):

Կարսուր միջին հայերենը տեղավորում է X—XV դարերի միջև ընկած ժամանակամիջոցում: Եթե նկատի ունենանք, որ նա բացառապես զբաղվում է կիլիկյան հայերենի քննությունով, ապա նրա ընդունած ժամանակագրության մեջ վերջին սահմանագիծը՝ XV դարը, արդարացվում է: X դարը իր քննարկած լեզվական շրջանի սկիզբը համարելիս, Կարսուր, հավանաբար նկատի է ունեցել մի կողմից այդ ժամանակաշրջանում ժողովրդական լեզվի տարրերի առկայությունը և մյուս կողմից ենթագրելով, որ XII—XIII դարերում գրի առնվող նոր լեզուն պետք է որ ունեցած լիներ առնվազն 2—3 հարյուրամյակի զարգացման պատմություն: Հետևաբար Կարսուր ընդունած ժամանակագրությունը վերաբերում է ոչ միայն կիլիկյան գրական հայերենին, այլև նրան նախորդած նախապատրաստական շրջանին:

Պրոֆ. Ս. Ղազարյանը, ինչպես արդեն ասվել է, միջին հայերենը տեղավորում է X—XVII դարերի սահմանագծում: Այստեղ ևս X դարը որպես սկիզբ վերցվում է, նկատի ունենալով նոր լեզվի տարրերի առաջին վկայությունները: Եվ քանի որ միջին հայերենը չի սահմանափակվում միայն կիլիկյան հայերենով, ուստի և այն հասցվում է մինչև XVII դարը: Բնականաբար, այդպիսի շրջանաբաժանման համար հիմք են հանդիսացել քննարկվող լեզվի առանձնահատկությունների ամենավաղ վկայությունները և ամբողջ շրջանին բնորոշ առանձնահատկությունները, ընդհուպ՝ մինչև վաղ աշխարհաբարի ձևավորումը:

Պրոֆ. Գ. Զահուկյանը միջին հայերենի լեզվական շրջանը տեղավորում է XII—XVI դարերի միջև: Ըստ որում, նախապատրաստական շրջանը, որ նա անվանում է նախամիջին հայերենյան ենթաշրջան (հին շրջանի վերջին էտապը), ընդգրկում է VIII—XI դարերը: Միջին հայերենի ամբողջ շրջանը նա բաժանում է երկու ենթաշրջանների՝ կիլիկյան նորմավորման և աշխարհաբարացման: Առաջինը ընդգրկում է XII—XIV դարերը և բնորոշվում է այն առանձնահատկություններով, որոնք հատուկ են կիլիկյան գրական հայերենին: Աշխարհաբարացման ենթաշրջանը ընդգրկում է XV—XVI դարերը, երբ կիլիկյան պետականության անկումից հետո Հայաստանի մասնատումը և շարունակվող գաղթները «է՛լ ավելի են ուժեղացնում բարբառային եղած տարբե-

րությունները, առաջ բերում նոր գծեր, բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների աճող տարբերություններ... Գրական լեզվի տարբերակների անմիօրինակությունը ավելի է աճում, բարբառայնություններն ավելի են բազմանում»<sup>47</sup> և այլն, որոնց զարգացումը, ըստ էության, հասցնում է լեզվական նոր շրջանին՝ աշխարհաբարին:

Պատմության ամեն մի շրջանաբաժանում, անշուշտ, ունի որոշ պայմանականություն: Այդ առավել վերաբերում է լեզվի պատմությանը, որտեղ մի ժամանակահատվածում արձանագրվող լեզվական որակը երբեք չի ստեղծվում անմիջապես ու միանգամից, ուստի և անհնար է սահմանագծել նրա սկզբի անվերապահ ժամանակը: Սակայն իր պայմանականությամբ հանդերձ, ամեն մի շրջանաբաժանում ունի նաև իր գիտական հիմքը: Այս իսկ տեսակետից, միջին գրական հայերենի սկզբնավորությունը ավելի ճիշտ կլինի համարել XII դարը, նկատի ունենալով հետևյալ հանգամանքները: Նախ (որ ամենակարևորն է)՝ այս ժամանակահատվածում է, որ հասարակայնորեն գիտակցվում է նոր գրական լեզվի անհրաժեշտությունը և հենց այդ անհրաժեշտության գիտակցմամբ էլ ժամանակի խոսակցական լեզուն՝ իր ուրույն համակարգով, ստանում է գրավոր արտահայտություն: Մյուս կողմից, նախորդ շրջանում այդ համակարգի տարրերը գրավոր լեզվում դեռևս որակ չեն կազմում. դրանք հանդես են գալիս որպես շեղումներ հին լեզվական ձևերից: Եվ չնայած այն հանգամանքին, որ XII դարում արձանագրվող լեզվի կառուցվածքի հիմնական տարրերը, անշուշտ, կային նախորդ դարի խոսակցական-բանավոր լեզվում, բայց քանի որ նրանք այդ ժամանակներում ամբողջությամբ՝ որպես համակարգ, չեն արձանագրվում և չեն ստանում ընդհանուր ճանաչում, ուստի և չեն կարող համարվել գրական լեզվի սկզբնավորության ժամանակի շարժանիչներ:

Միջին հայերենի պատմության մեջ XII—XIV դարերը որպես առանձին ենթաշրջան առանձնացնելը նույնպես պայմանական է:

Հայերենի պատմական զարգացումը միջին դարերում նրան հասցնում է բարբառային բաժանվածության, որոնք ստեղծում են միջին հայերենի տարբերակները: XI—XII դարերի սահմանագծում հայերենի բանավոր-խոսակցական լեզվի տարբերակները հավասար դիրքում և պայմաններում էին. երկրի քաղաքական դրությունը նրանցից և ոչ մեկին առավելություն չէր տալիս: Գրական լեզվի ֆունկցիան կատարում էր գրաբարը, մինչդեռ ժողովրդի խոսակցական լեզուն հայերենի տեղային բարբառներն էին: Բայց հենց որ կիլիկյան պետականության պայմաններում այդ բանավոր-խոսակցական լեզուներից մեկը բարձրանում է պետական-պաշտոնական լեզվի աստիճանին, փոխվում է նրա դիրքը և հարաբերությունը միջին հայերենի մյուս տարբերակների նկատմամբ:

XII—XIV դարերում նոր գրականությունը ստեղծվում է առավելապես այդ լեզվի հիմքի վրա, չնայած այն բանին, որ գրի առնված այդ լեզվի կողքին շարունակում են գոյություն ունենալ հայերենի նաև մյուս տարբերակները: Վերջիններս իրենց քաղաքական դիրքի պատճառով չեն դառնում գրական լեզու և այդ իսկ պատճառով որոշակիորեն հանդես չեն գալիս գրավոր աղբյուրներում: Եվ արտաքինապես ստեղծվում է այն տպավորությունը, որ իբր թե կի-

<sup>47</sup> Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, էջ 48:

Միջին հայերենի սկզբնաղբյուրները, ըստ իրենց բովանդակած նյութի ու հորինման բնույթի, խիստ բազմազան են. գիտական ու գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագիտական և թարգմանական աշխատություններ, ձեռագիր բառարաններ ու քերականագիտական երկեր, ժամանակագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ ու վիմական արձանագրություններ, պետական ու պաշտոնական փաստաթղթեր, արտոնագրեր ու կալվածագրեր, տարբեր իրերի և առարկաների վրա փորագրված կամ ասեղնագործված հիշատակագրություններ և այլն և այլն: (Ամենալայն առումով, որպես սկզբնաղբյուրներ կարող են ծառայել միջնադարյան գրչությունը մեզ հասած բոլոր գրավոր հուշարձանները, եթե նկատի ունենանք, որ ամենահին ձեռագրերը պահպանվել են IX դարից):

Բնական է, որ սկզբնաղբյուրների բնույթի և բովանդակության նման բազմազանությունը իր հետ բերում է նաև լեզվի արտահայտչական միջոցների, նրա ոճական ձևավորումների և լեզվական այլ ձևերի տարբերություններ, որոնք պայմանավորված են մի կողմից՝ տվյալ հեղինակի նպատակագրությամբ, նրա երկի ներքին բովանդակությամբ, հին գրավոր լեզվին տիրապետելու աստիճանով և մյուս կողմից՝ այն ազդեցությամբ, որ տվյալ գրավոր խոսքի վրա ունեցել է իր ապրած միջավայրի խոսակցական լեզուն:

Հիշյալ աղբյուրների մի մասը, շնայած այն բանին, որ հորինված է ավելի վաղ ժամանակներում և իր լեզվական առանձնահատկություններով անմիջապես չի առնչվում ուսումնասիրվող շրջանին, սակայն ընդօրինակված լինելով միջնադարում, այս կամ այն չափով իր վրա կրում է արտագրության ժամանակի լեզվի կնիքը: Այդ հիմնականում արտահայտվում է հին ուղղագրական նորմաներից կատարվող շեղումներով, որոնք, անշուշտ, կարող են բացատրվել որպես ընդօրինակող գրիչների ժամանակակից լեզվի արտահայտություններ: Միայն այս առումով տվյալ աղբյուրները կարող են հետաքրքրություն ներկայացնել լեզվի պատմության մեզ հետաքրքրող էտապի համար: Սակայն, ինչ խոսք, որ այս բոլորի մեջ հիմնականը, այնուամենայնիվ, այն գրավոր աղբյուրներն են, որոնք անմիջապես վերաբերում են միջին հայերենին: Սրանց մեջ, լեզվական տեսակետից, ավելի պակաս արժեք ունեն այն աշխատությունները և բնագրերը, որոնք առավելապես գրված են գրաբար լեզվով: Իրանցից, մասնավորապես, պատմագիտական և քերականագիտական աշխատություններում լեզվական առանձին ձևերի՝ հին նորմայից կատարվող շեղումները կամ նրանց մեջ թափանցած օտար բառերը, ինչպես նաև քերականների կողմից այս կամ այն ուղղագրական կանոնի մասին արված դատողությունները, կամ՝ ժամանակի բանավոր խոսքի մասին արտահայտած դիտողությունները որոշակի հիմք կարող են տալ մեր պատկերացումներին:

Ինչ վերաբերում է այն գրավոր աղբյուրներին, որոնք գրված են միջին հայերենով և լեզվական տեսակետից պարունակում են հարուստ և առատ նյութ, ապա դրանք իրենց հորինման և մեզ հասած գրչության ժամանակի տեսակետից միասնական չեն: Մի կողմ թողնելով ամեն մի հեղինակի լեզվական անհատականությունը բնորոշող առանձնահատկությունները, մեզ հետաքրքրող սկզբնաղբյուրները գրված են տարբեր ժամանակներում (XII—XVII դդ. սահմաններում) և տարբեր վայրերում: Հասկանալի է, որ օգտա-

գործման ենթակա լեզվական այդ ամբողջ նյութը իր նպատակին չի կարող ծառայել, եթե նկատի չունենանք այդ աղբյուրների ժամանակագրությունը: Եվ իսկապես, XII—XVII դարերում ստեղծված երկերի լեզվական փաստերը չի կարելի քննել որպես մի ժամանակի և մի միասնական լեզվի արտահայտություններ, ինչպես նաև XII դարում ստեղծված, բայց XVII դարի ընդօրինակություններ հասած բնագրի տվյալներով ճիշտ չի լինի դատողություններ անել XII դարի լեզվի վիճակի մասին: Այս իսկ տեսակետից կարևոր է նաև սկզբնաղբյուրները գնահատել ըստ նրանց ժամանակագրության:

Ըստ ժամանակի՝ աղբյուրները բաժանվում են երկու խմբի.

ա) սկզբնագիր՝ աղբյուրներ՝ բառիս բուն իմաստով, որոնք իրենց հորինման ու գրչության ժամանակներով համընկնում են: Սրանք մեզ հասել են իրենց սկզբնական բնագրերով, առանց միջնորդավորության (չեն ընդօրինակվել), ուստի և հավաստի աղբյուրներ են իրենց ժամանակի լեզվական երկվությունների ուսումնասիրության համար: Եվ քանի որ այս սկզբնագիր աղբյուրներն իրենց հերթին տարբեր պատմական ժամանակների ծնունդ են, հետևաբար նրանք լեզվի պատմության համար արժեքավոր են ո՛չ միայն տվյալ լեզվական երկույթի հավաստիության տեսակետից, այլև հնարավորություն են տալիս հետևելու այդ երկույթների առաջացման ու զարգացման ընթացքին: Այդպիսի սկզբնագրեր են հայերեն ձեռագրերի հիշատակարանները, վիմական արձանագրությունները, տապանագրերը և այլ լեզվական հուշարձաններ (հատկապես ետին դարերում): Սրանց մեջ հատկապես արժեքավոր են ձեռագրերի հիշատակարաններն ու արձանագրությունները և՛ իրենց վավերականություններով, և՛ նրանով, որ միջին հայերենի վաղ շրջանի, հատկապես նրան նախորդած շրջանի (որ չափազանց կարևոր է լեզվի պատմության համար) ուսումնասիրության այլ սկզբնագիր աղբյուրներ շատ քիչ կամ նույնիսկ չեն պահպանվել: Մյուս կողմից, եթե այլ տիպի գրավոր աղբյուրները համարյա հնարավորություն չեն տալիս մի ժամանակահատվածում քննելու տարբեր վայրերում հայերենի ունեցած դրսևորումները, ապա հիշատակարաններն ու արձանագրությունները առատ նյութ են տալիս այդպիսի քննության համար, չնայած այն բանին, որ դրանց լեզուն շատ դեպքերում ունի որոշ կաղապարայնություն և առանձին բնագրերում՝ գրաբար հորինվածք:

Վիմական արձանագրությունների մասին պետք է ասել նաև հետևյալը: Դրանք փորագրված են պատմական հուշարձանների վրա՝ տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում: Դրանց բնագրերին հնարավոր է լինում ծանոթանալ միայն հրատարակված՝ տպագիր վիճակում: Այդ նշանակում է, որ այդ աղբյուրները ուսումնասիրողի ձեռքն են անցնում ո՛չ անմիջապես, այլ մասնագետ և ոչ մասնագետ հավաքողների միջնորդությամբ: Սակայն արձանագրությունները, որոնք շատ դեպքերում գրված են փակագրություններով, կամ ժամանակի ընթացքում դժվար ընթեռնելի ու եղծված հատվածներ ունեն, աղբյուրագետների կողմից ունեցել են տարբեր վերծանություններ: Նախկինում արձանագրությունների վերծանումը և նրանց բովանդակության վերականգնումը առավելապես հետապնդել են պատմագիտական նպատակներ: Այդ իսկ պատճառով, վերծանությունների ժամանակ ուղադրությունից վրիպել են լեզվական «մանրուքները», առաջնությունը տրվել է վերականգնվող արձանագրության բովանդակությանը: Հասկանալի է, որ այդպիսի սկզբունքով նեղակայացված արձանագրությունների տեքստերը գիտական մեծ արժեք ներկայ-

յացնել շեն կարող՝ հատկապես լեզվաբանական ուսումնասիրությունների համար: Արձանագրությունների վստահելի աղբյուրներ են ա՛յն հրատարակությունները, որոնց մեջ վերծանությունները կատարված են գիտական հիմունքներով և որոնց կից կան նաև դրանց բնագրերը հաստատող լուսանկարներ: Նման ժողովածուներ (Դիվաններ), ինչպես նաև առանձին պատմական հուշարձանների ուսումնասիրության կից արձանագրություններ հրատարակվել են վերջին տասնամյակների ընթացքում՝ սովետահայ հմուտ աղբյուրագետների կողմից<sup>48</sup>:

բ) Գրավոր աղբյուրների երկրորդ խմբի մեջ մտնում են այն բոլոր գրական ու գրավոր հուշարձանները, որոնք շեն ներկայացված հեղինակային բնագրերով, կամ, որ նույնն է, մեզ են հասել հետագա արտագրություններով: Այս տիպի աղբյուրներում, ինչպես այդ երևում է նույն երկի տարբեր գրությունների համեմատություններից, նկատելի են ո՛չ միայն ուղղագրական, այլև բնագրային շեղումներ ու տարբերություններ<sup>49</sup>: Արդ, այս տարբերություններից ո՞րն է հարազատ հեղինակային բնագրին. մի հարց, որի լուծումը պահանջում է բանասիրական մանրակրկիտ աշխատանք, որը մեր խնդիրներից ու նպատակներից դուրս է: Սակայն այդ տարբերությունների համեմատությունը ցույց է տալիս, որ մի ձեռագրում, օրինակ, սովյալ բառը ունի իր ավանդական գրությունը, մի երկրորդում այն ներկայանում է այնպիսի մի ուղղագրությամբ, որ ակնարկում է նրա բարբառային արտասանությունը, մի այլ դեպքում սովյալ բառը առհասարակ փոխարինված է այլ հոմանիշ բառով և այլն: Հասկանալի է, որ առաջինը արժեք չունի. այն ներկայացնում է ավանդական բառաձևը. մյուս երկուսը հետաքրքիր են նրանով, որ մի դեպքում նշվում է կատարված հնչյունափոխական երևույթը, մի այլ դեպքում՝ բառի տեղային կիրառությունը: Շատ հնարավոր է, որ այդ փոփոխությունները հատուկ են եղել հենց հեղինակային լեզվին. բայց քանի որ մենք հեղինակային բնագիրը վերականգնել չենք կարող, մնում է, գոնե, այդ փոփոխությունները վերագրել գրչության ժամանակի և վայրի լեզվի առանձնահատկություններին:

Մի քանի կոնկրետ օրինակներ: 2. Երզնկացու տաղերից մեկում, որ զետեղված է համեմատաբար ամենավաղ ձեռագրերից մեկում (Մաշտոցի անվան Մատենադարանի № 8029 ձեռագիր), ընդօրինակված 1376 թ. Տերտեր Երեվանցու կողմից, հանդիպում ենք հետևյալ բառաձևերին՝ աղվոր, անուշ, խաբվիլ, բարուն, ստեղծեց, ջոհար կամ ջուհար և այլն: Նույն բառերը նույն տաղի XVI—XVII դարերի գրչությունների մի մասում ունեն հետևյալ արտահայտությունները՝ աղուոր, անոյշ, խաբուիլ, բարոյն || բարույն, ստեղծեաց, ձոհար և այլն: 1376 թ. ձեռագրի մեջ արձանագրված ուղղագրական շեղումները բանավոր լեզվում կատարված հնչյունափոխական երևույթների արտահայտություններ են, որոնք մեզ հայտնի են մեր ժամանակակից բարբառներից: XVI—XVII դարերի գրչություններում դրանք ունեն ավանդական ուղղագրություն, որը մեզ ոչինչ չի ասում կատարված փոփոխությունների մասին (բացի վերջին օրինակից, որտեղ փոխառյալ բառի գրադարձված ձևը նշում է, որ սովյալ գրչի ապրած լեզվական միջավայրում հին հայերենի խուլերը ձայնեղացել էին): Հնարավոր է, որ 1376 թ. ձեռագիրը հիշյալ բառերի ուղղագրու-

<sup>48</sup> Տե՛ս օգտագործված աղբյուրների ցանկը:

<sup>49</sup> Այդ բանում համոզվելու համար բավական է միայն թերթի միջնադարյան հեղինակների գիտական հրատարակությունները:



թյան մեջ հարազատ չի մնացել հեղինակային բնագրին: Կարելի է ենթադրել նաև, որ հետագա գրչությունները կատարվել են ո՛չ թե նշված ձեռագրի վրայից և ո՛չ թե ներկայացնում են այդ «սխալների» սրբագրությունը, այլ ընդօրինակվել են մի այնպիսի ձեռագրից (հեղինակային կամ ոչ հեղինակային՝ միևնույն է), որտեղ պահպանված է եղել նշված բառերի ավանդական գրությունը: Ինչ էլ որ ենթադրելու լինենք, մի բան պարզ է. 1376 թ. ձեռագիրը արտացոլում է եթե ոչ վաղ, ապա գոնե իր ժամանակի և իր գրչի լեզվում կատարված փոփոխությունները: Հետևաբար, տվյալ դեպքում, Հ. Երզնկացու լեզվի մասին չենք կարող դատել ո՛չ այս և ո՛չ այն գրչություններով: Լավագույն դեպքում խոսք կարող է լինել ընդօրինակման ժամանակի լեզվի առանձնահատկությունների մասին:

Մի այլ օրինակ: XIII դարում ապրած բժշկապետ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» բժշկարանի մեջ հասած երկու ձեռագրերի (A—1465—1473 թթ. և B—XVII դարի գրչությամբ) համեմատությունը, որ կատարել է բնագրի հրատարակիչ Ա. Ս. Կծոյանը, պարզել է հետևյալը. «B ձեռագիրը ընդօրինակված է A-ից: Այդ ընդօրինակությունը, սակայն, չի կատարված բառացի պատճենահանման ձևով. գրիչը, պատվիրատու խոջա Պողոսի խորհուրդներով, իր ընդօրինակության մեջ սրբագրել է բնագիրը, ուղղել բացարձակ վրիպակները և, ամենից ուշագրավն է, փորձել է ոճական ու լեզվական խմբագրման ենթարկել բնագիրը, միջին հայերենի շատ ձևեր փոխելով գրաբարյան ձևերի:

Այսպես, օրինակ, A ձեռագրում ամենուրեք «հիվանդություն» հասկացողությունն արտահայտված է «նեղ» տերմինով, իսկ B-ն «նեղ»-ի փոխարեն միշտ գրում է «ցաւ»։ A-ն գրում է «նշաննիս», B-ն—«նշանքս», A «զերթ»—B «որպէս», A «շնուփն»—B «շունքն», A «հանց»—B «այնպէս», A «զիրեանքն»—B «զինքեանս», A «յայտք»—B «սոցայ», A «սպրկիկ»—B «յիստակ», A «այրնէ»—B «առնէ», A «շաք»—B «շափ», A «ուռիցնիս»—B «ուռիցքս», A «հահնդի» (խախանդի)—B «հանդարտի», A «աղէկ»—B «լաւ», A «առողջէ»—B «լաւանա» և այլն և այլն:

Կան բազմաթիվ նախադասություններ, որոնք ըստ իմաստի նույնը լինելով, B ձեռագրում այլ լեզվական կաղապարի մեջ են դրվել, ստանալով գրաբարյան երանգ: B ձեռագրի գրիչը հաճախ փոխել է նաև A-ի ուղղագրությունը<sup>50</sup>:

Ասվածներից երևում է, որ այն գրավոր աղբյուրները, որոնք մեզ չեն հասել իրենց սկզբնագրերով, տվյալ հեղինակի լեզվի, նրա ապրած ժամանակաշրջանի լեզվական երևույթների ուսումնասիրության համար վստահելի աղբյուրներ լինել չեն կարող: Սա առավելապես վերաբերում է հնչյունաբանական հետազոտությունների բնագավառին, երբ հնչյունափոխական օրինաչափությունների բացահայտման համար այնքան կարևոր են ուղղագրության մեջ թույլ տրված շեղումները և օտար բառերի գրադարձությունը<sup>51</sup>:

<sup>50</sup> Տե՛ս Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, Երևան, 1962, էջ XV:

<sup>51</sup> Միջին հայերենի ձևաբանական և շարահյուսական երևույթների քննության ժամանակ այս աղբյուրները օգտագործվում են, եթե տվյալ լեզվական հուշարձանի ստեղծման և հետագա գրչության ժամանակների միջև տարբերությունը մեծ չէ և ընդգրկում է շուրջ մեկից մինչև մեկ ու կես հարյուրամյակ:

ինչպես վերը ասվեց, նախամիջինհայերենյան շրջանի լեզվական երևույթների քննության համար կարևոր և հավաստի սկզբնագիր աղբյուրներ են ձեռագրերի հիշատակարաններն ու վիմական արձանագրությունները, ինչպես նաև բնագրերով հասած այլ տիպի վավերագրեր: Սրանց հետ միասին՝ միջին հայերենի առաջին էտապի (XII—XIV դդ.) համար առավել հավաստի աղբյուրներ կարող են համարվել Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատութունը, սակայն ո՛չ հրատարակված բնագիրը (Վենետիկ, 1832 թ.), որի հիմքում ընկած է XVI—XVII դդ. ձեռագիր և ակնհայտորեն իր վրա կրում է ետին դարերի արտագրողների լեզվի կնիքը, այլ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 416՝ ձեռագիրը՝ ընդօրինակված 1279 թ., համարյա մի դար հետո այդ աշխատության ստեղծման ժամանակից (Հերացին իր այդ գործը գրել է 1184 թ.):

Սմբատ Սպարապետի աշխատութուններից կարևոր աղբյուրներ են նրա «Դատաստանագիրքը», որի գիտական համեմատական բնագիրը հրատարակել է Ա. Գ. Գալստյանը (Երևան, 1958 թ.), նկատի ունենալով Կարստի (Ստրասբուրգ, 1905 թ.), Կլտչյանի (էջմիածին, 1918 թ.) հրատարակությունները և Մաշտոցի անվան Մատենադարանի ու Մխիթարյան միաբանության գրադարանի մեկական ձեռագրերը: Դրանցից ամենահին գրությունը ունի մխիթարյան ձեռագիրը՝ ընդօրինակված 1331 թվականին, որը, ըստ էության, կատարված է աշխատության ստեղծումից մոտ 66 տարի հետո (Սմբատը իր աշխատությունը գրել է 1265 թ.):

Մյուսը Սմբատի «Տարեգիրքն» է, որը ունի երեք հրատարակություն. մուկովյան (1856 թ.), փարիզյան (1859 թ.) և վենետիկյան (1956 թ.): Առաջին երկուսի հիմքում ընկած են ետին դարերի գրչությանը ձեռագրեր, մինչդեռ վենետիկյան հրատարակությունը կատարված է 1280—1315 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում օրինակված ձեռագրի վրայից, որը համարյա համընկնում է հեղինակի ապրած ժամանակին<sup>52</sup>: Սմբատի երրորդ Անսիզ Անտիոքայ թարգմանական աշխատության հրատարակված բնագրի հիմքում ընկած է 1330—31 թթ. ձեռագիր գրչություն, որը նույնպես մոտ է նրա ստեղծման ժամանակին:

Այս շրջանի համար կարևոր են նաև Ներսես Շնորհալու շափածո ստեղծագործությունները և դրանց մեջ հատկապես՝ հանելուկները: Թեև մինչև այժմ մենք չունենք դրանց համեմատական ու գիտական հրատարակությունը, բայց վենետիկյան 1928 թվականի հրատարակությունը կարելի է հավաստի աղբյուր համարել միայն այնքանով, որքանով որ այն կատարված է տասից ավելի ձեռագրերի բաղդատությանը «յորոց մանաւանդ չորք վաղեմիք են և հարազատ» հեղինակային բնագրին:

Խաչատուր Կեչառեցուց (1260—1330)<sup>53</sup> մեզ հասած ստեղծագործությունները զետեղված են տարբեր ժամանակներում ընդօրինակված ձեռագրերում:

<sup>52</sup> Վենետիկյան հրատարակության առաջաբանում մասնավորապես ասված է. «Սմբատ իր Տարեգիրքը գրած է ԺԳ դարու տիրող լեզվով, այդ լեզուն ուներ դեռ գրաբարի մաքուր ձևեր և քերականական հավատարմություններ, ինչ որ կգտնենք ներկա հրատարակության օրինակին մեջ ծայրե ծայր: Մինչ մյուսները (խոսքը վերաբերում է մոսկովյան ու փարիզյան հրատարակությունների բնագրին.—ՆՄ) ամենքն ալ ԺԶ և ԺԷ դարերու անկյալ ձևերով և ուսմկորենով լեցուն են» (Տե՛ս էջ ԺԸ):

<sup>53</sup> Մ. Թ. Ավդալբեգյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 20:

Ամենահին ձեռագիրը (№ 8030), որի մեջ տեղավորված են նրա աքրոստիկոսով գրված կրոնական բովանդակությամբ երեք տաղերը (որոնցից այլ ձեռագրալին տարբերակներ հայտնի չեն), ունի 1341 թ. գրչութուն: Սակայն այս ոտանավորները լեզվական հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ իրենց բովանդակությանը համապատասխան՝ գրված են գրաբարով: Այն ստեղծագործությունները, որոնք իրենց մեջ ունեն միջին հայերենին հատուկ լեզվական ձևեր, ավանդված են համեմատաբար ավելի ուշ ընդօրինակություններով: Դրանց մեջ երեք տաղ տեղ են գտել 1417 թ. մի ձեռագրում (№ 8689) և մեկը՝ 1466 թ. ձեռագրում (№ 425), որոնք ունեն նաև ետին դարերի գրչությամբ տարբերակներ: Տաղերի մնացած մասը մեզ հասել է XVI—XVIII դարերի արտագրություններով, ուստի և դրանցով դժվար է պատկերացում կազմել Կեչառեցու ապրած ժամանակաշրջանի լեզվի մասին, մանավանդ որ ձեռագրերը ունեն բառական, քերականական և ուղղագրական տարբերություններ:

Հովհաննես (Պլուզ) Երզնկացուց (XIII դար) ավանդված են բազմաթիվ ստեղծագործություններ, այդ թվում չափածո երկեր, զանազան մեկնություններ (դրանց մեջ նաև Մեկնութիւն քերականին), քարոզներ, ճառեր և այլն: Սակայն սրանց մեջ լեզվական հետաքրքրություն հատկապես ներկայացնում են չափածո գործերը: Ամենահին ձեռագրերը, որոնց մեջ պահպանված է բանաստեղծի տաղերի մի մասը (թվով իննը), վերաբերում են 1314, 1331, 1376 թվականներին. տաղերի մյուս մասը ընդօրինակված է XV—XVI և հետագա դարերից հասած ձեռագրերի մեջ, հետևաբար Երզնկացու ժամանակաշրջանի լեզվի մասին ավելի հավաստի և ստույգ փաստեր կարող են տալ վաղ շրջանի գրչություններով հասած ձեռագրերը:

Ֆրիկի (XIII դ.) տաղերից տարբեր ժամանակներում հրատարակվել են տարբեր ժողովածուներ: Մեզանում առաջին ժողովածուն լույս է տեսնում 1937 թ., որը պարունակում է ընդամենը 21 տաղ: Այս ժողովածուն նպատակ չի դնում տալու տաղերգուի ոտանավորների բաղդատական բնագիրը՝ այն թողնելով է ակադեմիական հրատարակությանը: 1941 թվականին լույս է տեսնում Ֆրիկի բանաստեղծությունների մի նոր ժողովածու, որն ընդգրկում է շուրջ չորս տասնյակ տաղեր: Այստեղ բնագրերը ներկայացված են տարբեր ձեռագրերի բաղդատությամբ, սակայն, մի բան, որ տարօրինակ է՝ օգտագործված ձեռագրերը նկարագրված չեն, և մեզ անհայտ է մնում նրանց գրչության ժամանակը:

Ֆրիկի ոտանավորների ամենակատարյալ հավաքածուն Տիրայր արքեպիսկոպոսի Նյու-Յորքում հրատարակած «Դիվանն» է: Այս ժողովածուում զետեղված տաղերի համեմատական բնագրերը կազմելիս հեղինակը օգտագործել է տարբեր երկրների գրադարաններում պահվող հայերեն ձեռագրերը (այդ թվում նաև նախասովետական Հայաստանի՝ էջմիածնի գրատան ձեռագրերը), Դիվանի մեջ ընդգրկված տաղերը ունեն իրենց ծանոթագրությունները, առանձին ձեռագրերի տարբերակները և գրչագրական տարբերությունները: Բայց այստեղ ևս բացակայում են օգտագործված ձեռագրերի գրչության թվականները<sup>54</sup>, մի հանգամանք, որ անհնար է դարձնում կամ, ավելի ճիշտ, դժվար

<sup>54</sup> Ձեռագրերի նկարագրության, նրանց գրչության թվականների և դրանց հետ կապված այլ գրառումների թղթերը՝ հեղինակի արտասահման մեկնելու ժամանակ, մնացել են էջմիածնում և այդ իսկ պատճառով տեղ չեն գտել ներկա հրատարակության մեջ: Մեր պրպտումները պարզեցին, որ այդ գրառումները բազմաթիվ այլ ձեռագրերի ու գրությունների հետ միասին գտնվում

րացնում է դրանցում նկատվող լեզվական երևույթները մի որոշակի ժամանակի վերադրելը<sup>58</sup>։

Կոստանդին Սրզնկացու և բժշկապետ Գրիգորիսի՝ մեզ հասած երկերի մասին խոսք եղել է վերը։

Արժեքավոր սկզբնաղբյուր է նաև «Գիրք վաստակոց» (Геопоника) աշխատությունը (Վենետիկ, 1877 թ.)։ Սա հիմնականում երկրագործության վերաբերյալ մի ժողովածու է, որ նախապես կազմված է եղել հունարեն՝ հույն տարբեր հեղինակների երկերից կատարված ծաղկաքաղով, ապա թարգմանվել է արաբերեն, որի վրայից էլ կատարված է հայերեն թարգմանությունը։ Հայերեն թարգմանությունը կատարված է համարվում XIII դարում՝ Կիլիկիայում։ Եվ չնայած այն բանին, որ հրատարակված բնագրի հիմքում ընկած է անթվական մի ձեռագիր, բայց դատելով աշխատության լեզվից, որ հարում է կիլիկյան հայերենին, պետք է կարծել, որ այն հարազատորեն է արտահայտում թարգմանության ժամանակի լեզվական վիճակը։

Վարդան Այգեկցու (XII—XIII դդ.) առակները ցրված են տարբեր դարերի ձեռագիր մատյաններում։ Սրանց գիտական համեմատական բնագրերը կազմել ու հրատարակել է Ն. Մառը՝ օգտվելով ինչպես Հայաստանի, այնպես և նրանից դուրս գտնվող գրադարանների ձեռագրային ֆոնդերից։ Բնագրերը պատրաստված են խնամքով, տրված են տարբեր ձեռագրերում հանդիպող տարբերակները, բերված են հիմնական բնագրից խիստ շեղումներ ունեցող տարբերակները և այլն։ Սակայն, չնայած այս բոլորին, այդ բնագրերի հիման վրա դժվար է ճշգրիտ պատկերացում կազմել Վարդան Այգեկցու ապրած ժամանակի, առավել քան՝ հեղինակի լեզվի վերաբերյալ։ Այդ դժվարությունը առաջանում է ո՛չ միայն այն պատճառով, որ նշված ձեռագրերը հասել են մեզ ետին դարերի գրչություններով, այլև մի այլ գորեղ պատճառով, որը պայմանավորված է առակների ժանրային առանձնահատկություններով։ Բանն այն է, որ առակները իրենց բնույթով ավելի մոտ լինելով ժողովրդական ստեղծագործություններին, ազատ և անկաշկանդ կերպով ենթարկվել են փոփոխությունների։ Ձեռագիր մատյաններից ընդօրինակվելիս նրանք ենթարկվել են խմբագրությունների, վայրից վայր իրենց մեջ առնելով խմբագրողների լեզվի առանձնահատկությունները։ Ի տարբերություն գեղարվեստական այլ ստեղծագործությունների, առակները ունեցել են նաև բանավոր կյանք։ Նրանք պատմվել են ժողովրդի բերանում, փոխանցվել սերնդից սերունդ և այդ ձևով փոփոխությունների ենթարկվել։ Անհատի երբեմնի ստեղծագործություն հանդիսացող առակը մի քանի սերունդների ընթացքում բանավոր կյանք վարելուց հետո նորից է գրի առնվել, և այսպիսով ստեղծվել են միևնույն առակի մեկից ավելի տարբերակները։ Այս իսկ տեսակետից առակների մատուցած լեզվական նյութը կարող է ունենալ ընդհանուր ճանաչողական արժեք և կարող է օգտագործվել միայն այն ժամանակների համար, որում նրանք գրի են առնվել։

են Մաշտոցի անվան Մատենադարանի՝ Տիրայր վարդապետի անվան տակ պահվող արխիվում (ցուցակ № 47), որը բաղկացած է 17 թղթապանակներից։ Մեզ հետաքրքրող ձեռագրերի զբոլության թվականները պարզելու համար պահանջվում էր մանրակրկիտ և տեական բանասիրական աշխատանք։

<sup>58</sup> Մաշտոցի անվան Մատենադարանում Ֆրիկի տաղերը պարունակող ամենահին գրչության ձեռագրերը վերաբերում են XV—XVI դարերին։

XV—XVII դարերի լեզվական հուշարձանները իրենց հորինման և գրչության ժամանակներով կա՛մ մոտավորապես համընկնում են, կա՛մ դրանց տարբերությունները առանձնապես մեծ չեն:

Հովհաննես Թլկուրանցու (XIV—XV դդ.) տաղերի ամենահին ձևագրային օրինակները պահպանվել են XVI և հետագա դարերից: Ժամանակագրորեն հին է նաև 1513 թվականին հրատարակված առաջին տպագիր Տաղարանը, որտեղ այլոց ստեղծագործությունների հետ միասին կան նաև Թլկուրանցու տաղերը: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողները<sup>56</sup>, այդ տպագիր Տաղարանի հիմքում ընկած ձևագիրը արդեն ունեցած է եղել մի քանի ընդօրինակություններ: Հետևաբար, ինչպես Տաղարանը, այնպես և այլ գրչություններով հասած տաղերը հեղինակային անմիջական բնագրեր չեն:

Բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու (XV դ.) երկերից հրատարակված են երկուսը՝ «Անգիտաց անպէտ» և «Օգուտ բժշկութեան»: Դրանցից առաջինը Կ. Բասմաջյանի հրատարակությունն է (Վիեննա, 1926 թ.), ուր սկզբնաղբյուրների համեմատությամբ ճշտված են բազմաթիվ փոխառյալ բառեր ու տերմիններ (որոնք աղավաղված են եղել ընդօրինակությունների ժամանակ), որով և բնագիրը, բժշկագիտական տեսակետից, մեծապես շահել է: Սակայն այդ հրատարակությունը լեզվական հետազոտությունների տեսակետից ունի մի պակասավոր կողմ. հրատարակիչը ավանդական ուղղագրությունը պահպանելու ձգտումով՝ սրբագրել է բնագրում հանդիպող ուղղագրական սխալները: Ահա թե ինչպես է մեկնաբանում այդ բանը Կ. Բասմաջյանը. «Ուղղագրության մասին՝ անհոգ է Ամիրդովլաթ, օրինակ զերդ գրած է «զէտ», խեւ՝ «խէվ», ձուք՝ «ձուգ», երբ՝ «եփ», ցրդի՝ «ձրթի» և «ծրթի», թրջել՝ «դրջել», թմրեցնել՝ «դրմրեցնել», թարգման՝ «թարքման», փտած՝ «փթած», բարք՝ «բառք», դուրս՝ «դուս», շոգի՝ «շոքի», զարնել՝ «զայնել», անթտակ՝ «անդտակ», սնկան՝ «սնկանն», փայծղան՝ «փայծղանն» և այլն. իսկ ու-ով գրվելիք շատ բառեր գրված են վ-ով, ինչպես՝ «րխտավորութիւն», «պատեղվոր», «լվանալ», «լցվել» և այլն: Ասոնցմե զատ դ դիմորոշ հոգն առհասարակ գրած է տ-ով: Արդ, այս բոլորը կարևոր համարեցի սրբագրել ներկա հրատարակությանս մեջ»<sup>57</sup>:

Ակնհայտ է, որ վերը բերված բառերի ուղղագրությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում որպես կատարված հնչյունափոխական երեւոյթների վկայություններ:

Ամիրդովլաթի մյուս աշխատությունը՝ «Օգուտ բժշկութեան»-ը, հրատարակվել է ակադ. Ստ. Մալխասյանցի կողմից (Երևան, 1940 թ.): Աշխատության գիտական տեքստը պատրաստելիս հաշվի են առնված այդ երկի՝ Հայաստանի Մատենադարանում առկա տարբեր ձևագրերը. դրանց համեմատությամբ ընտրվել են հեղինակի լեզվին հատուկ ձևերը, իսկ ձևագրային տարբերությունները նշվել են տողատակում:

Սակայն սրանց համեմատությամբ, լեզվական տեսակետից, անգնահատելի արժեք է ներկայացնում Մաշտոցի անվան Մատենադարանի № 8871 ձևագիրը, որը պարունակում է Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» աշխատության հեղինակային օրինակը: Այս բնագիրը մեծապես արժեքավորվում է նրանով, որ, որպես հեղինակային ձևագիր, կարող է ուղեցույց հանդիսանալ մյուս՝ հրատարակված աշխատությունների լեզվական նյութը օգտագործելիս:

<sup>56</sup> Տե՛ս էմ. Պիվազյան, Հովհաննես Թլկուրանցի, Երևան, 1960, էջ 20—29:

<sup>57</sup> Տե՛ս Ամիրդովլաթի Ամասացայ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբ Կ. Յ. Բասմաջյան, Վիեննա, 1926, էջ ԺԲ:

Մկրտիչ Նաղաշի (XV դ.) տաղերի առավել կատարյալ ժողովածուն հրատարակվել է մեզանում (Երևան, 1965 թ.), որի մեջ հաշվի են առնված ինչպես նախորդ հրատարակությունները, այնպես և մեր Մատենադարանում պահպանված ձեռագրերը: Հեղինակի տաղերից միայն մեկն է պահպանվել իր ապրած դարաշրջանի գրչությամբ հասած մի ձեռագրում (Ձեռ. 965, 1432 թ.): Տաղերի մնացած մասը մեզ հասել է XVI և առավելապես XVII դարի ընդօրինակություններով:

Գրիգորիս Աղթամարցու (XVI դարի առաջին կես) տաղերի գիտա-համեմատական բնագրերը հրատարակել են Ն. Ակինյանը (Վիեննա, 1958 թ.) և Մ. Ավդալբեգյանը (Երևան, 1963 թ.): Սրանցից երկրորդը ավելի կատարյալ է, քանի որ կազմված է ինչպես Ակինյանի հրատարակության հաշվառմամբ, այնպես և մաշտոցյան Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերի հիման վրա, այդ թվում նաև 1556 թվականի գրչությամբ № 8968 ձեռագրի օգտագործմամբ, որտեղ պահպանված են Գ. Աղթամարցու 17 տաղերը և որը իր գրչության ժամանակով համընկնում է հեղինակի ապրած ժամանակին:

Ինչպես վերև արդեն ասվել է, միջնադարում մայր հայրենիքից դուրս ստեղծվում են հայկական առանձին՝ կղզիացած գաղթօջախներ: Դրանց լեզվի մասին հնարավոր է լինում որոշ գաղափար կազմել այդ վայրերում ընդօրինակված ձեռագրերի և դրանց կից արված հիշատակագրությունների օճաթային թղթային: Այդ գաղթօջախներից առաջմ միայն մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի հայկական համայնքի լեզվի վերաբերյալ մենք ունենք ավելի լավ պատկերացում, շնորհիվ մի շարք հրատարակված նյութերի և մասնավորապես դատական այն արձանագրությունների, որոնք հայտնաբերվել և հրատարակվել են վերջին ժամանակներս: Արձանագրությունները բնագրեր են, գրված XVI դարի երկրորդ կեսում և լրիվ պատկերացում են տալիս Կամենեց-Պոդոլսկի հայության լեզվական վիճակի մասին:

XV—XVII դարերի լեզվական երևույթների մասին, բացի այդ դարերի հեղինակների գործերից, արժեքավոր նյութ են տալիս նաև այն ձեռագրերը, որոնք թեև ստեղծված են եղել ավելի վաղ ժամանակներում, բայց մեզ են հասել ետին դարերի գրչություններով և մի քանի ընդօրինակություններով: Նույն դարում կատարված որևէ աշխատության մի քանի ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ նայած այն բանին, թե ում կողմից և որտեղ է կատարվել տվյալ ձեռագրի արտագրությունը, բնագրում համապատասխանաբար արտահայտվում են տարբեր բարբառային առանձնահատկություններ արձանագրող գրչագրություններ, քերականական տարբերություններ և այլն:

Միջին հայրենի երկրորդ ենթաշրջանի նյութերն այս տեսակետից ավելի առատ ու բազմազան են: Այստեղ օգտագործվում են նաև հայ ժողովրդական միջնադարյան երգերը, գեղարվեստական արձակը, որոնք որպես ժողովրդական ստեղծագործության նմուշներ, հիմնականում ապրելով բերանացի, ավելի շատ են ենթակա եղել փոփոխությունների ու ձևափոխությունների, քան առանձին հեղինակային գործերը: Արձակի որոշ ստեղծագործություններ նույնիսկ ունեն այնպիսի տարբերակներ, որոնք լեզվական տեսակետից խիստ տարբերվում են իրարից:

Ինչ խոսք, որ այս նույն ժամանակների լեզվի առանձնահատկությունների բացահայտման համար առատ նյութ են տալիս նաև ձեռագրերի հիշատակարաններն ու վիմական արձանագրությունները, մանր ժամանակագրությունները և այն բոլոր սկզբնաղբյուրները, որոնց մասին խոսք չեղավ այստեղ, բայց որոնք գրի են առնվել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում և այս կամ այն չափով նպաստում են հարցի ուսումնասիրությանը:

## ՀՆՉՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միջին հայերենի հնչյունական համակարգի և վերջինիս մեջ հին հայերենի հնչյունների կրած փոփոխությունների հետազոտությունը, բնականաբար, կատարվում է այն սկզբնաղբյուրների հիման վրա, որոնց մի մասի նկարագրությունը տրվել է վերը: Ի՞նչ շնայած այդ աղբյուրների ընձեռած հարուստ փաստական նյութին, այնուամենայնիվ, նման հետազոտությունը կապված է որոշակի դժվարությունների հետ: Այդ դժվարություններն, առաջին հերթին, պայմանավորված են նրանով, որ միջին հայերենը մեզ չի ներկայանում որպես մեր օրերի կենդանի խոսակցական լեզու: Այն անցյալ, պատմական մի էտապ է, որ արձանագրված է միայն գրավոր հուշարձաններում: Այն հանգամանքը, որ այդ լեզուն օգտագործում է հին հայերենի գրի առման ժամանակներում հորինված մեսրոպյան այբուբենը, դեռ ոչինչ չի նշանակում, քանի որ դեռևս հարց է՝ մեսրոպյան այբուբենի տառերը այս շրջանում պահել, թե՞ փոխել էին իրենց հորինման շրջանի նշանակությունը:

Հայտնի է, որ ինչպես միջին, այնպես և հին հայերեն տեքստերը մենք այժմ կարդում ենք ավանդական՝ մեր այսօրվա արտասանությամբ: Այդ արտասանության մեջ շատ բան չի համընկնում իր նախնական՝ գրի առման շրջանի հնչմանը, որը նախապես հարազատ էր իր գրային պատկերին: Գրության և արտասանության միջև առաջացած այդ տարբերությունները պատմական զարգացման արդյունք են, որոնք ավելի ընդգծված ձևով հանդես են գալիս հայերենի բարբառներում: Այսօր էլ մեր ժողովրդի երկու գրական լեզուներում (արևելահայ և արևմտահայ) միանգամայն այլ արժեքներ են տրվում ձայնեղ և խուլ պայթականներն ու պայթաշփականներն արտահայտող տառանշաններին: Արևելյան գրական հայերենը համեմատաբար ավելի հարազատորեն է արտահայտում այդ տառերին տրված նախնական հնչյունական արժեքները (առավելապես բառասկզբի դիրքում), որին հակառակ՝ արևմտահայ գրական լեզվում դրանց տրվում են այլ հնչյունական արժեքներ: Սակայն, ինչպես հայտնի է, երկու դեպքում էլ գրության ձևը մնում է նույնը՝ ավանդականը, և դրանք (գրության ձևերը) արտաքնապես ոչնչով չեն մատնում իրենց ներքին տարբերությունները: Եվ եթե այդպես է մեր օրերի հայերենի տարբերակներում, ապա կարո՞ղ ենք արդյոք պնդել, թե նման մի երևույթ թաքնված չէ նաև պատմության գիրկն անցած լեզվի գրավոր հուշարձաններում: Այս հանգամանքը մեզ ստիպում է շեղվել ավանդական գրության խաբկանքին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանց հնչման հիմնական առանձնահատկությունները հայտնի են հին հայերենից: Անհրաժեշտ է դառնում պարզել, թե



այդ ավանդական գրութեան մեջ այս կամ այն տառի տակ հնչյունական ի՛նչ արժեք էր թաքնված: Այդ անհրաժեշտությունը առաջանում է հենց նյութի քննության ընթացքում, լեզվական փաստերի ճնշման տակ, երբ հին ուղղագրական կանոններից կատարվող շեղումները, այս շրջանում կատարված փոխառյալ բառերի գրադարձված ձևերը որոշակիորեն ակնարկում են հնչյունափոխական այնպիսի երևույթներ, որոնց մի մասը մեզ հայտնի են մեր ժամանակակից բարբառներից: Եվ շնայած այն բանին, որ ուղղագրական տարբեր շեղումները և օտար բառերի գրադարձման սկզբունքները մատենագրության մեջ ոչ միշտ են հետևողականորեն արձանագրվում ու կիրառվում և ամենուրեք չէ, որ նույնն են, այնուամենայնիվ, այդ հակասությունների հիման վրա է, որ հնարավոր է լինում թափանցել իրականում կատարված և այն ժամանակ գոյություն ունեցած հնչյունական և հնչյունափոխական երևույթների էություն մեջ: Այս նպատակի իրականացման հիմնական ելակետն այն է, որ ավանդական՝ հնից ժառանգված բառաձևերից կատարվող շեղումները դիտվում են ոչ այլ ինչ, եթե ոչ որպես հին գրական լեզվի համեմատությամբ բանավոր-խոսակցական լեզվում կատարված փոփոխությունների արտահայտություններ: Դեռ այսօր էլ, գրական լեզվի ուղղագրական նորմաներին ոչ քաջահմուտ մեկը, իր գրավոր խոսքի մեջ թույլ է տալիս այնպիսի սխալներ, որոնք կա՛մ գալիս են ընդհանուր խոսակցական, կա՛մ նեղ բարբառային արտասանության նորմաներից: Կասկածից դուրս է, որ միջնագարջան սկզբնաղբյուրներում ևս հին գրական լեզվի նորմաներից կատարվող ուղղագրական շեղումները ունեցել են իրենց նմանօրինակ հիմքը: Սակայն, մյուս կողմից, եթե մենք մեր ուսումնասիրությունների ընթացքում պետք է հենվենք նմանօրինակ սխալների կամ շեղումների վրա, ապա պարզ է դառնում, որ այս դեպքում հետազոտության ոլորտի մեջ կարող են մտցվել միայն այնպիսի բնագրեր, որոնք առանց որևէ միջնորդավորման՝ ուղղակիորեն ներկայացնում են իրենց բուն ժամանակի լեզվական վիճակը: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ լեզվական քննության վերը նշված սկզբունքների կիրառման դեպքում, կարևոր է ո՛չ այնքան տվյալ սկզբնաղբյուրի հորինման, որքան նրա գրչության ժամանակը: Ինչպես արդեն ասվել է վերը, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միևնույն երկի տարբեր, և նույնիսկ նույն ժամանակաշրջանում, կատարված առանձին ընդօրինակությունները հանդես են բերում օտար բառերի գրադարձման, հայերեն բառերի ուղղագրության տարբերություններ: Փաստական այդ նյութերը, անշուշտ, ժամանակագրորեն գնահատվում են մի կողմից որպես միևնույն լեզվի պատմական զարգացման տարբեր էտապների դրսևորումներ (թեև այստեղ ևս բացառված չէ նաև բարբառայնությունը), մյուս կողմից, նույն ժամանակաշրջանում հանդես եկող տարբերությունները՝ որպես տերիտորիալ-բարբառային արտասանության արտահայտություններ: Ինչ խոսք, որ այս տեսակետից, ուշ գրչություններով ավանդված աղբյուրները թյուր, ոչ ճիշտ պատկերացում կարող են տալ մեզ հետաքրքրող՝ վաղ ժամանակաշրջանի լեզվի հնչյունական համակարգի մասին: Այդ իսկ պատճառով առավել նպատակահարմար է դառնում առաջին հերթին օգտագործել վիճակական արձանագրություններն ու ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև այն սկզբնաղբյուրները, որոնք ժամանակագրորեն մոտ են կանգնած ուսումնասիրվող ժամանակաշրջանին:

լեզվական միևնույն ձևի տարատեսակությունները, նույն բառի տարբեր գրչությունները որոշակի դժվարություններ են առաջացնում տվյալ շրջանի հնչյունական և հնչյունափոխական հիմնական օրինաչափությունների որոշման գործում: Այնուամենայնիվ, շնայած այդ դժվարություններին, անհրաժեշտ է լինում, նկատի ունենալով օգտագործվող ձևերի հաճախականությունը և տարածվածության աստիճանը, առանձնացնել հիմնական օրինաչափությունները, դրանք զատելով ոչ հիմնականներից, որոնք մեծ մասամբ նեղ բարբառային տարբերությունների արտահայտություններ են:

Վերջապես, կարևոր է նաև հնչյունական տարբեր երևույթների տեղայնացումը, որը, սակայն, որոշ դեպքերում անհնար է լինում կատարել: Այդ խնդրի լուծումը դժվարանում է նրանով, որ միջնադարյան մատենագրության գերակշիռ մասը հեղինակային սկզբնագրեր չեն, ուստի և դրանց մեջ հանդիպող կամ արձանագրվող լեզվական ձևերը չեն կարող հատկացվել այն լեզվական միջավայրին, որի ծնունդն է տվյալ երկի հեղինակը: Նույնիսկ ձեռագրերի հիշատակարանները, որոնց մի մասի գրչության վայրերը որոշակիորեն հայտնի են, ո՛չ բոլոր դեպքերում են հնարավորություն տալիս երևույթը տեղայնացնելու, քանի որ գրիչը հաճախ լինում է լեզվական այլ միջավայրից: Թերևս այս է պատճառը, որ նույն վայրում գրված ձեռագրերում հանդիպում են հընչյունական և լեզվական այլ կարգի տարբերություններ: Նման դեպքերում, հնչյունական երևույթը տեղայնացնելու փոխարեն՝ հնարավոր է լինում միայն այն արձանագրել:

Այս բոլորից հետո անհրաժեշտ է ավելացնել նաև հետևյալը: Քանի որ միջին հայերենի հնչյունական համակարգի, նրա մեջ կատարված փոփոխությունների ուսումնասիրությունը հնարավոր է լինում անել միայն գրավոր աղբյուրների հիման վրա, ուստի լեզվական միավորների քննության ժամանակ, թեև մի կողմից մենք նկատի ենք ունենում լեզվական տրադիցիան, բայց մյուս կողմից՝ ամբողջովին տուրք շտալով այդ տրադիցիային, հնարավոր միջոցներով աշխատում ենք պարզել քննարկվող շրջանի հայերենի հնչյունական համակարգում տեղի ունեցած փոփոխությունները: Նկարագրելով միջին հայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները, միաժամանակ պատշաճ ուշադրության են արժանանում նաև պատմական հնչյունափոխության երևույթները: Վերջիններիս նկատմամբ որոշակի փորձ է արվում պարզելու նրանց առաջացման կամ առաջին վկայության ժամանակը և տալու նրանց զարգացման ընթացքը (իհարկե, օգտագործելով նաև այդ բնագավառում այլ ուսումնասիրողների ստացած արդյունքները):

Կրկնություններից խուսափելու նպատակով ուսումնասիրությունը չի բաժանված միջին հայերենի՝ վերը նշված ժամանակագրական երկու էտապների: Առանց խախտելու ժամանակագրական հաջորդականությունը, հնչյունական երևույթները քննվում են իրենց պատմական զարգացման մեջ:

Լեզվական փաստերն օգտագործելիս հիմնական շեշտը դրվում է սկզբնագիր աղբյուրների և առավել վաղ ընդօրինակություններով հասած բնագրերի վրա: Այստեղ մենք առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ լեզվի պատմության համար ավելի էական են տվյալ հնչյունական երևույթի ավելի վաղ վկայությունները, քան դրանց նստի դարերում արձանագրվող ձևերը:

## ՉԱՅՆԱՎՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

2. Հայտնի է, որ մեսրոպյան այբուբենի հորինման շրջանում՝ այդ այբուբենի ա, ե, է, ի, ու, ը տառերը ունեցել են ձայնավոր հնչյունների արժեքներ: Քանի որ միջին գրական հայերենը օգտագործում է այդ նույն այբուբենը, հետևաբար բնական կլինի կարծել, որ նա նույնպես նշված տառերը գործածում է որպես համապատասխան ձայնավոր հնչյուններ արտահայտող նշաններ: Սակայն այս ենթադրությունն ինչքան էլ ակնհերև թվա, այնուամենայնիվ, կարիք ունի փաստական հիմնավորման, եթե հատկապես նկատի ունենանք, որ նույն բանը չի կարելի ասել բաղաձայններն արտահայտող տառերի վերաբերյալ:

Առաջին հերթին դիտենք այդ տառանշաններն ունեցող հետևյալ նվազագույն հակադրությունները.

զարդ : զերդ	բան : բուն	հաւ : հով	գար (գայր) : գիր
կար : կեր	լար : լուր	կաւ : կով	կաց : կից
հազ : հեզ	զարկ : զուրկ	կախ : կոխ	լաց : լից
քար : քեր	ծառ : ծուռ	բաց : բոց	կար : կիր
խաչ : խեչ	կամ : կում	կաթ : կոթ	մաս : միս
շաղ : շեղ	համ : հում	կապ : կոպ	շար : շիր
տաղ : տեղ	մաղ : մուղ	շար : շոր	տապ : տիպ
բարդ : բերդ	կալ : կուլ	կաճ : կոճ	և այլն:

Ինչպես երևում է՝ նշված զույգերի տարբերակումը գրություն մեջ տեղի է ունենում ա, ե, ու, ո, ի տառերի հակադրությունների միջոցով: Իրոք, առաջին սյունակի զույգերն իրարից տարբերվում են միայն ա և ե տառանշաններով, երկրորդում՝ ա և ու, երրորդում՝ ա և ո, չորրորդում՝ ա և ի, այն ժամանակ, երբ զույգերի մյուս նշանները նույնական են: Կարելի է օրինակներ բերել նաև ե : ու (ո, ի), ու : ք (ի), ո : ի զուգադրությունների համար, սակայն դրանով երևույթի էությունը չի փոխվի: Վերը բերված զույգերի հակադրությունից երևում է նաև, որ ա, ե, ո, ու, ի տառերը հնչույթի արժեք ունեն:

Սակայն սրանով դեռևս չի պարզվում, թե հիշյալ տառերը հնչյունների որ կարգին են պատկանում: Որ դրանք ձայնավորների արժեք ունեն, մեզ թելադրվում է այն պարզ իրողությամբ, որ բերված բառաշարքերում դրանք՝ ինչպես միջին հայերենից առաջ, այնպես և նրանից հետո (այժմ), հնչվում են որպես ձայնավոր հնչյուններ: Բայց, մյուս կողմից, նկատի ունենալով դրանց մեր արդի հնչումը, ինչպես նաև՝ մեր ժամանակակից բարբառներում նրանց ունեցած համապատասխանությունները, կարող ենք ենթադրել նաև նույն ձայնավորների որակական այլ առանձնահատկություններ: Այսպես՝ ա տառանշանը հնարավոր է որ a-ին զուգահեռ ունեցած լինի նաև այլ տարբերակներ (շրթնայնացած, քմայնացած և այլն): նույնը կարելի է ասել նաև ու-ի և ո-ի մասին: Միաժամանակ, ո-ն հնարավոր է՝ որ ունեցած լինի ո՞օ երկբարբառային երանգ կամ պարզապես՝ երկհնչյուն vo-ի, ինչպես և ե-ն՝ պարզ բաց e-ի, կամ ie երկբարբառային ու ye երկհնչյունային արժեք և այլն:

Միջին հայերենին արդյոք հատուկ են եղել այդ առանձնահատկությունները և արդյոք դրանք հնչյունական արժեք են ունեցել, թե միայն միևնույն ձայնավոր հնչյունի դիրքային կամ բարբառային արտահայտությունները լի-

նելով, մնացել են լոկ որպես նրա հիմնական տարբերակներ: Կասկածից դուրս է, որ եթե վերը նշված առանձնահատկություններից մեկն ու մեկը հանդես գար իմաստատարբերակիչ դերով, և գրության ձևը հնարավորություն չտար այն արտահայտելու, ապա լեզվի մեջ անհրաժեշտորեն կստեղծվեր պահանջվող ձևը: Դրա լավագույն օրինակը հենց միջին հայերենում օ և ֆ գրերի մուտքն է՝ պայմանավորված դրանց հնչույթային արժեքավորման հետ: Սակայն այս բացատրությունը դեռևս չի նշանակում, թե միջին հայերենում ընդհանրապես և նրա տարբերակներում մասնավորապես, չէին կարող տեղի ունեցած լինել ձայնավոր հնչյունների վերը նշված փոփոխությունները: Ինչպես կտեսնենք ստորև, լեզվական փաստերի քննության ընթացքում, այդ փոփոխությունների մի մասը իրապես արձանագրվում է մատենագրության մեջ:

3. Միջին հայերենում մուտք գործած օտար բառերի քննությունը, հայերենում նրանց գրադարձված ձևերի համեմատությունը փոխատու լեզվի մայր ձևերի հետ, ցույց են տալիս, որ հայերենի ա գիրը համապատասխանում է օտարլեզվյան ա հնչյունին: Հատկանշական է, որ այդ գրի արժեքը հիմնականում մնում է նույնը՝ բառի մեջ գրաված բոլոր դիրքերում. այսինքն՝ այն, ինչպես բառամիջում ու բառավերջում, այնպես և բառասկզբում, ունի միևնույն նշանակությունը: Այդ համապատասխանությունը երևում է մի կողմից՝ միջին հայերենում ավելի ընդհանուր գործածություն ստացած այնպիսի փոխառյալ բառերում, որոնք արձանագրվում են համարյա ամենուրեք և տարբեր գրավոր հուշարձաններում, ինչպես, օրինակ՝ արբ. atlas=ատլաս (Վիմ. արձանագրություններում, տե՛ս օր. ԿՂ Սան. 111, 1197 թ.) =աթլաս (գեղ. գրականության մեջ, տե՛ս օր. Ֆր. Դիվան, էջ 545, Կոստ. Երզ. 140 և այլուր), արբ. halal=հալալ (Ձեռագրերի հիշատակարաններում՝ ամենուրեք, տե՛ս օր. ԺԴ հճ. 189, Նախիջևան, 1324 թ., 353, Անի, 1347 թ. և այլն. Վիմական արձանագրություններում, տե՛ս օր. ԿՂ. Սան. էջ 147, 1061 թ., 162, 1275 թ., Դհվ. I, Անի, էջ 13, 1008 թ., 44, 1036 թ. և այլն), նակ՝ խալալ ձևով (ԺԴ հճ. 282, Արճեշ, 1336 թ. և այլն), արև. թրբ. athabeg=աթաբակ (Գ. Հովս. հճ. 451, 1173 թ., ՏՅԳ, 1224 թ. և այլն)=աթապակ (ԺԴ հճ. 614, 1396 թ. և այլն. նույնը նաև արձանագրություններում), արբ. 'alani=ալանի (Սմբ. Դատ., Կոստ. Երզն., Ֆր., նաև ձեռ. հիշատակարաններում ու վիմ. արձանագրություններում), արբ. xabar=խաբար // խապար (Կոստ. Երզն., Հովհ. Երզն., Սմբ. Տար., Մխ. Հեր. և այլն, ինչպես նաև արձանագրություններում, հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում) և այլն, և այլն:

Եվ եթե այս տիպի օրինակների նկատմամբ կարելի է առարկել այն պատճառաբանությամբ, թե սրանց ընդհանուր ուղղագրությունը կարող է պայմանավորված լինել այդ բառերի լայն գործածությամբ և այդ հիմքի վրա ընդհանուր ուղղագրության մշակմամբ, սակայն մյուս կողմից գրադարձման նույն սկզբունքը առկա է նաև ավելի սակավադեպ հանդիպող բառերում, որոնց մի մասը տերմիններ լինելով կամ վերաբերելով հասարակական կյանքի այս կամ այն բնագավառին, իրենց գործածության ոլորտով նեղ՝ ոչ համահայկական բնույթ ունենալով, այնուամենայնիվ, փոխատու լեզվի հնչյունը արտահայտում են ա գրի միջոցով: Այդպիսի բազմաթիվ բառերից կարելի է հիշել միայն ավելի բնորոշները. այսպես, օրինակ՝ միայն կիլիկյան հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող բառերից՝ հֆր. passage=բասաճ «խաչակիրների արշավանք», հֆր. plaid=բլայթել «դատարանում պաշտպանվել», հֆր.

canne, cane = գան «երկարութիան չափ», լտ. legato = լիկաա//լիկաթ «Հոռմի պապի դեսպան», հուն. λογογραφεύς = լոգոգրափա «ծախված ապրանքի գինը», ֆր. marc = մարկ «արծաթյա դրամ», ֆր. bassine = պացից «կոնք, լոգանքի տաշտ» և այլն, և այլն. բժշկագիտութիանը՝ դեղաբույսերին վերաբերող տերմիններ, ինչպեսիք են՝ արբ. buhrān = բուրհան «հիվանդութիան ճգնաժամ», արբ. labiāb = լաբիաբ «բաղեղ, պատատուկ», պրս. zukham = զուքամ «հարբուխ», արբ. qārura = կարուրայ//խարուրայ «ապակյա միզաման», արբ. qifāl = կիֆալ «զարկերակ», արբ. nammam = նամամ «վալրի դաղձ», պրս. šahbalut = շահբալուտ «արքայակաղին», արբ. šarāb = շարապ «մրգաջուր, օշարակ», պրս. sarsām = սարսամ «գանգուղեղի պատյանների բորբոքում», պրս. isphanax = սպանախ «ծմեղ», արբ. tabāšir = տապաշիր «կավիճ» և այլն, և այլն, ինչպես նաև տարբեր լեզվական հուշարձաններում հանդիպող այլ հազվադեպ բառեր, ինչպես՝ արբ. ālath = ալաթ «պարագաներ, պիտուլքներ», արբ. basar = բասար «իմաստություն», պրս. dāsthan = դաստան «պատմություն», արբ. mazād = մազաա «աճուրդ», պրս. sarhang = (դրափոխություն) սրահանգ «զորքի սպա» և այլն, և այլն: Մյուս կողմից էլ հայերենի ա-ն է օտար լեզուներում տառադարձվում այդ լեզուների a-ով, ինչպես, օրինակ՝ ասպետ = Ἀσπετης, Անի = انى, Արցեշ = ارجيش, Բարերդ = بارت, Բալու = بول, Բագրևանդ = باغروند և այլն (արաբերենում e ձայնավոր չլինելու պատճառով այն տառադարձվում է a-ով կամ i-ով)<sup>1</sup>:

Այսպիսով, միանգամայն օրինաչափորեն՝ բերված օրինակներում փոխատու լեզվի a ձայնավորը համապատասխանում է հայերենի ա գրին, ինչպես նաև հակառակը: Այս օրինաչափությունը առավելապես պահպանվում է միջին հայերենի առաջին էտապում և հատկապես նրան նախորդած սկզբնական շրջանում: Թեև այստեղ հանդիպում են նաև օտարլեզվյան a-ի ե (է)-ով տառադարձելու մասնակի դեպքեր (ինչպես, օրինակ՝ պրս. hamyan = հեմիան՝ ներս. Շնորհ. ԲԶ, 569, արբ. ha ĭib = հէճիպ, ԿԳ, Սան. 149, ԺԳ դար, արբ. sarraf = սէրէֆիկ // սերեֆիկ. Անս. 81 և այլն), սակայն դրանք կարող են բացատրվել կամ փոխատու աղբյուրի բարբառային բնույթով, կամ՝ օտար ä-ի մասնակի բնույթով: Հավանական կարելի է համարել, որ այն, որոշ դեպքերում ու բառերում, ունեցել է առաջնային շարքի ստորին բարձրացման ä-ի որակ, որը հայերենում, հատկապես նրա այն տարբերակներում, որոնց հատուկ չէր առաջնային շարքի ä-ն, համապատասխանաբար արտահայտվել է ե (է)-ով, ինչպես այդ որոշ վայրերում սովորական է դառնում հետագա (XV—XVII) դարերում կատարված պարսկական ու թուրքական փոխառությունների մեջ: Եվ եթե նկատի ունենանք, որ նոր պարսկերենում վերացել է երկար և կարճ a-ի հակադրությունը, և դրանց տարբերակումը կատարվում է ետնալեզվայնության ու առաջնալեզվայնության հատկանիշների վրա, ապա բացատրված չէ, որ այդ երևույթը սկսած լինել արդեն միջին հայերենի վաղ շրջանում:

Հայտնի է, որ արաբերենը և պարսկերենը (վերջինս ավելի վաղ ժամանակներում) ունեին կարճ ու երկար ձայնավորներ: Հայերենին խորթ էր ձայնավորների քանակական հատկանիշը: Նշված լեզուներում երկար ու կարճ a-երի հակադրությունն այնքան որոշակի է եղել, որ հայերի կողմից a կարճ

<sup>1</sup> Արաբերեն օրինակները բաղված են «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» գրքից (Երևան, 1965 թ.), որտեղ նման տառադարձման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել: Հունարեն օրինակը վերցված է Կարստի նշված աշխատությունից:

հնչյունը ընկալվել է որպես ռեդուկցիայի ենթարկված ձայնավոր և որոշ լեզվական հուշարձաններում, որպես այդպիսին, արտահայտվել է հայերենի ը-ի միջոցով, կամ ուղղակի սղվել է՝ գրության մեջ շարտահայտվելով: Այսպես, օրինակ՝ մի կողմից ունենք արբ. qal'a = կլայ «ամրոց», պրս. mazgith = մըգկիթ, արբ. maġlis = մնլիս «հավաքույթ» (նաև մաճլիս), պրս. nazla = ճզլայ, «գրիպ հիվանդությունը», արբ. bal'gam = պլղամ «լորձ» և այլն, որոնք ձայնավորի սղումը ունեն նախաշեշտ վանկում, մյուս կողմից այդ երևույթը արձանագրվում է բառավերջի դիրքում՝ շեշտի տակ, այս դեպքում արտահայտվելով ը գրի միջոցով: Այս տեսակետից հետաքրքրական է XIV դարում Սյունիքում գրված մի ձեռագրի (Մաշտոցի անվան մատենադարանի № 7151 ձեռագիրը) մեջ զետեղված արաբերեն-պարսկերեն-հայերեն անավարտ բառարանի նյութը<sup>2</sup>: Այս բառարանում (որի արաբերեն ու պարսկերեն մասերն էլ հայատառ են) օտարլեզվյան բառերի կարճ a ձայնավորը որպես օրինաչափություն ներկայանում է ը տառով: Նույնիսկ պարսկերենի բայական دَدَن (դան, թան) վերջավորությունները, որոնք շեշտի տակ են, ունեն դըն, թըն գրությունը: Բերենք մի քանի օրինակներ բառարանի պարսկական և հայկական մասից՝ փակագծերում տալով պարսկերենի արաբատառ ձևերը և դրանց ընդունված տառադարձությունը. հրդ դադըն—իրաունս տալ (حَق دَادَن = haqq dādan), քիճի քշիդըն—քէն քարշել (کینه کشیدن = khīni khašidan), ազմուդըն—փորձել (آزمودن = āzmūdan), փասուխ գադըն—պատասխանել (پاسخ دادن = phāsux dādan), ֆրմուդըն—հրամայել (فرمودن = farmudan), բերուն ավըրդըն—արտաքս բերել (اوردن = birūn āvardan), փուրսիդըն—հարցանել (پرسیدن = phursidan), բըզըրդըն գրիֆթըն—լանձն առնուլ (بگردن گرفتن = bagardan girifthan), ընդըր խուլասթըն—ի ներս հայցել (ندر خواستن = andar xasthan), ճագահ գուֆթըն յանկարծակի ասել (ناگاه گفتن = nāgāh gufthan) և այլն:

Այս օրինակներից կարելի էր ենթադրել, որ բառարան կազմողը կուրորեն հետևել է բնագրի գրությանը և հայերենում գրադարձել է միայն այն ձայնավորները, որոնք պարսկերենում արտահայտված են տառանշաններով: Բայց այս ենթադրությունը ճիշտ կարող է լինել միայն ՚-ով արտահայտված հնչյունի համար: Ս և i ձայնավորները հայերենում գրադարձված են և այն դեպքում, երբ պարսկերենում դրանք գրության մեջ բացակայում են: Հետևաբար, գրադարձության նման սկզբունքի կիրառման պատճառը բնագրի գրությանը կուրորեն հետևելը չէ, այլ մի ուրիշ հանգամանք: Կարծում ենք, որ պարսկերենում գրությամբ շարտահայտված a-ն այնքան թույլ ու կարճ մի ձայնավոր է եղել, որ այն ընկալվել է որպես հայերենի ը-ին մոտ մի հնչյուն և միայն այդ հիմունքով արտահայտվել ը-ի միջոցով:

Սակայն անկախ գրության այս ձևերից, որոնք առավել վերաբերում են արաբերենի ու պարսկերենի կարճ a հնչյունի բնույթին, քան հայերենի ա-ին, վերջինս իր գրային արտահայտությամբ հիմնականում համապատասխանում էր իր ավանդական հնչյունական տրժեքին և իր մեջ միավորում էր այն բոլոր հնարավոր հնչական տարբերակները, որ նա կարող էր ձեռք բերած լինել բանավոր լեզվի առանձին տարբերակներում: Այս իսկ տեսակետից դժվար է տալ

<sup>2</sup> Այս բառարանի վրա մեզ սիրով մատնացույց արեց Մատենադարանի գիտաշխատող Զ. Ամալյանը:

նրա բնախոսական ճշգրիտ բնորոշումը<sup>3</sup>։ Այդ տարբերակների հիմքի վրա է, որ բանավոր-խոսակցական լեզվի առանձին դրսևորումներում (բարբառներում) հետագայում տեղի են ունենում ա>է, ա>օ և այլ հնչյունափոխական երեվույթներ<sup>4</sup>։

4. Միջին հայերենում ձայնավոր հնչյունների արժեք ունեն նաև ու և ի տառանշանները։ Մրանցից ու գիրը, ճիշտ է, ձայնավորից առաջ արտահայտում է նաև v բաղաձայնը, սակայն մեր լեզվի այս շրջանի համար դա ոչ թե հնչյունական, այլ ուղղագրական նշանակություն ունի։

Ու=ս համապատասխանությունը հաստատվում է այն բազմաթիվ փոխառյալ բառերի օրինակներով, որ միջին հայերենի շրջանում վերցվել են տարբեր լեզուներից. բերենք մի շարք օրինակներ. արբ. şulţan=սուլթան (ամենուրեք), julab=նուլապ (բժշկագիտական աշխատություններում, ինչպես, օր. Մխ. Հեր. ՁՄ ձեռ. 416, 25բ. 44ա և այլն), zukham=զուքամ (ն. տ.) պրս. արբ. burj=բուրջ/պուրճ (Ժ՛ի հձճ. 106, 1314 թ., նաև Անիի վիմական արձանագրություններում), հֆր. duc=տուկ/զուկ (Մանր ժմնկ. I, էջ 74, 1296թ. Մմբ. Տար. 19, Անիի արձանագրություններում և այլն), արբ. qumās=կումաշ, (Անս. 19), ֆր. double=տուպլ (ն. տ.), թրք. çavuş=չաուշ/չավուշ (ն. տ.) և այլն։ Օտար՝ մասնավորապես արաբական աղբյուրներում հայերենի ու-ն արտահայտված է ս արժեքով, այսպես, օրինակ՝ Ուրմիա=ارمیه Բալու=بالو ձապաղչուր=چابلجور, Մուշ=مش و և այլն<sup>5</sup>։

Նկատի ունենալով այս և բազմաթիվ այլ նման համապատասխանություններ, հայերենի ու գրանշանի տակ պետք է հասկանալ այնպիսի մի ձայնավոր հնչյուն, որը իր շրթնայնացվածությամբ հակադրվելով մյուս բոլոր ձայնավորներին, միևնույն ժամանակ հակադրվում է օ շրթնային ձայնավորին իր արտաբերման տեղի և լեզվի բարձրացման աստիճանով։ Ծիշտ է, լեզվի բարձրացման աստիճանը մեզ հայտնի չէ, բայց նկատի ունենալով մեր բարբառներում այդ ձայնավորի ունեցած տարբերակները, կարող ենք ենթադրել, որ այն

<sup>3</sup> Պրոֆ. Ս. Ս. Ղազարյանը իր «Միջին հայերեն» աշխատության մեջ (էջ 147) բերում է միջին հայերենի ձայնավոր հնչյունների համեմատական տախտակը, որտեղ, ի շարս այլ ձայնավորների, տալիս է նաև ա-ի բնախոսական նկարագիրը՝ որպես ետնալեզվային, միջին բարձրացման, շրթնարացվածքային ձայնավոր։ Նման սահմանում կարելի է ընդունել խիստ վերապահությամբ, քանի որ ա տառով արտահայտված հնչյունի նման բնութագրման համար պետք է ունենալ կենդանի խոսքի տվյալներ։ Մինչդեռ միջին հայերենը մեզ համար պատմական էտապ է, որի գրային նշանները մենք ընկալում ենք մեր այսօրվա լեզվական պրակտիկայով։

<sup>4</sup> Որ ամբողջ միջին հայերենի համար ա տառանշանի տակ պետք է միավորել 2 հնույթի բոլոր հնարավոր տարբերակները, ապացուցում են մեր բարբառների փաստերը։ Ժամանակակից հայ բարբառների մի մասում 2 ձայնավորը մնում է նույնությամբ. բարբառների մի այլ խմբում, որոշակի դիրքում, այն հանգստե է զալիս առաջնային շարքի ստորին բարձրացման ǣ-ի որակով. մի երրորդ խմբում, նույն դիրքում, 2-ի դիմաց e է, որը որոշակիորեն զարգացել է նախորդից (ǣ-ից)։ Բարբառների այլ խմբերում հայերենի 2-ի փոփոխության այլ ուղղություն է նկատվում. որը վայրերում (օր. ն. Բայազետի խոսվածքում և այլուր) 2-ն ետնալեզվային ստորին բարձրացման՝ շրթնայնության երանգով ձայնավոր է, ուրիշներում նույնի դիմաց մաբուր շրթնայնացած օ ձայնավոր է (օր. Ազուլիսի բարբառում), որը նույնպես զարգացել է իր նախորդ տարբերակից և այլն։ Ժամանակակից հայ բարբառներում տեղի ունեցած այս փոփոխությունները ունեցել են իրենց արմատները միջին դարերում, հետևաբար այդ միջին հայերենի ա-ն էլ իր որակով եղել է այնպիսին, որ հիմք է սվել հետագա այդ փոփոխություններին։ (Այս հարցերի քննարկումը այստեղ բացառում ենք, թողնելով հայերենի պատմական հնչյունաբանությանը)։

<sup>5</sup> Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» աշխատությունը։

արտահայտում էր ինչպես ետնալեզվային, այնպես և առաջնալեզվային շրթ-նայնացած ü ձայնավորը: Միջին հայերենի շրջանում դրանք իմաստատարբերիչ արժեք չունեին և հանդես էին գալիս որպես նույն և հնչույթի երկու տարբերակներ, ուստի և արտահայտվում էին նույն գրանշանով: Հենց այդ երկու տարբերակների հիմքի վրա է, որ հայ բարբառների մի մասում, այնտեղ, ուր ու-ն ունեցել է ետնալեզվային արտաբերում (միայն մի աստիճանով տարբերվելով օ-ից), պատմականորեն հնչյունափոխվել է օ-ի (համտ. Ղարաբաղի, Ջանգեզուրի, Մեղրու և այլ բարբառների օրինաչափ փոփոխությունները), մինչդեռ ու-ի առաջնալեզվային տարբերակը որոշակի դիրքում մնացել է անփոփոխ (ü): Հատկանշական է նաև, որ միջին հայերենում նույն ու-ի միջոցով արտահայտված են նաև իւ և ոյ երկբարբառներից պարզված ձայնավորները, որոնք մեր բարբառների մի մասում ունեն առաջնային շարքի շրթնայնացած ձայնավորի (ü) որակ:

5. Ի գրի հնչյունական արժեքը երևում է հետևյալ օրինակներում. արբ. պրս. 'alani=ալանի (Մմբ. Դատ., Կոստ. Երզնկ., Ֆր. և այլն), արբ. 'amir=ամիր (հիշատակարաններում, արձանագրություններում և այլուր), արբ. Abu-ul-ğarib=Ապլղարիպ (Մմբ. Տար., Անիի արձանագրություններում և այլուր), հֆր. sire=սիր (Մմբ. Տար., Մանր. Ժմնկ. և այլն), պրս. igdiš=իկաիշ (Անս. 63), հֆր. lige=լից (ն. տ.), թրք. yarğuçi=արղուչի (Մանր Ժմնկ., ԺԴ հճ և այլն), ինչպես նաև օտար աղբյուրներում, այնպիսի տեղանունների տառադարձության մեջ, որոնց հայկական ձևերը հայտնի են մեզ. Ալիս (գետը)=اليسى, Ամիգ=اميدى, Անի=انى, Խիզաճ//Հիզաճ=حيزان, Դվից/Դուլից=دوچ, Վարդաճիս=ورتنيسى և այլն<sup>6</sup>:

Այս և նման բազմաթիվ օրինակներում ի=i համապատասխանությունը գոյություն ունի ինչպես շեշտի տակ, այնպես և շեշտից առաջ ու բառասկզբում, բացառությամբ բառասկզբի այն դեպքերի, երբ այն գտնվում է շփական-պայթական (սկ, սպ, շկ և այլն) կապակցություններից առաջ: Այդ դիրքում i-ն ընկնում է՝ ենթադրելով մի թույլ բ-ի արտասանություն, թեև այն գրության մեջ չի արտահայտվում (օր. պրս. isphanax=սպանախ. Մխ. Հեր.):

6. Ավելի պրոբլեմատիկ է ե և է տառերի հնչյունական արժեքի հարցը: Թեև միջին գրական հայերենը հետևելով ավանդական գրությանը՝ աշխատում է պահպանել այդ գրերի հին ուղղագրական նորմաները, սակայն փաստերը ցույց են տալիս, որ դրանցից հատկապես ե-ի հնչյունական արժեքը փոխվել էր ըստ բառում գրված դիրքի:

Մենք վերը, հայերենի ա գրի հնչյունական արժեքի մասին խոսելիս նշեցինք, որ նրա տակ կարելի է ենթադրել նաև a ձայնավորի առաջնալեզվային տարբերակը՝ նկատի ունենալով փոխառյալ մի շարք բառերում փոխատու լեզուների այդ ձայնավորի դիմաց հայերենի գրության մեջ երբեմնակի հանդիպող է (ե)-ով ձևերը<sup>7</sup>: Սակայն նման գրադարձությունը բխում է ոչ թե է//ե

<sup>6</sup> Տե՛ս «Արաբական աղբյուրները» աշխատության մեջ:

<sup>7</sup> Կարծառը այս հնչյունը համարում է կարճ կամ բաց e(ä) ձայնավոր, հիմք ունենալով հետևյալ համապատասխանությունները. բլտպիր=արբ. iädbir սերեֆիկ=արբ. (խսկց.) säträf, քրվագ=նպրս. khä rvän, գումբեթ=նպրս. gumbäd, չարեկլ=նպրս. čaryäk, հառեկզ=հֆր. harnais (harnais, harness), ջաստել=հֆր. chastel, ֆրեթ=հֆր. frère, Պեկթ=իտ. Benetto, հֆր. Beneit, Մանսել=հֆր. Mancel, Ջապէլ=հֆր. Isabelle, Ըուուէթ=հֆր. Roger (տե՛ս նշվ. աշխ. էջ 18): ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, իսկապես հֆր., իտ.



գրերի հնչյունական արժեքից, այլ պայմանավորված է միայն նրանով, որ առաջնային շարքի ձայնավորը ավելի հարմար է համարվում գրադարձելու այդ տառով, և գրային արտահայտություն ստանալուց հետո, այն վերարտադրվում է որպես e:

Հին հայերենի գրի առման ժամանակաշրջանում մեսրոպյան այբուբենում ե և է գրերի առկայությունն ինքնին ակնարկում է, որ դրանք տարբեր հնչյունական որակներ էին: Ապացուցված է, որ դրանցից առաջինը ներկայացնում էր բաց e ձայնավորը, իսկ մյուսը՝ երկբարբառային երանգ ունեցող ey հնչյուն, որն արդեն դասական հայերենում կորցնելով իր երկբարբառային երանգը՝ վերածվել էր փակ e ձայնավորի: Հայերենի ետդասական շրջանում, բանավոր լեզվի հետագա զարգացման ընթացքում, խոսակցական տարբերակներում այդ ձայնավորները թերևս նույնանում են: Արդեն իսկ մեզ հասած հայերեն առաջին ձեռագրերում արձանագրվում է ե և է գրերի գրություն շփոթ: Այնտեղ, ուր ըստ ավանդական ուղղագրության պետք է գրվեր ե, գրվում է է, ուր պիտի գրվեր է, ունենք՝ ե: Այսպես, օրինակ՝ 887 թ. գրչության մեջ Լազարյան ճեմարանի հայտնի ավետարանի ձեռագրում ունենք եթե, եղեալ եին, գայթաղեին, կոչեին և այլն, փոխանակ՝ եթէ, եղեալ էին, գայթաղէին, կոչէին և այլ ձևերի: Այս ձեռագիրը բացառություն չէ: Նույն երևույթը առկա է նույն ժամանակների և այլ ձեռագրերում. ինչպես, օրինակ՝ IX դարի գրչության մեջ հասած № 1001 ձեռագրում՝ ոչ ծնանեիր, ոչդ երկնեիր, եթե, առնեին և այլն. նույնը նաև IX—X դդ. գրչության № 985 ձեռագրում՝ խնդրեին, թեպէտ, եթե գալոց եիր, գիտեի, գիտեիր թե և այլն: Նույնը նաև հիշատակարաններում ու արձանագրություններում՝ մէղաց (Գ. Հովս. հձ. 152, 988 թ.), համբէրեալ (ն. տ. 153, 988 թ.), երեց (ԿՂ Հաղբ. 991 թ.), էթէ (ն. տ. 1021 թ.) և այլն, և այլն: Օրինակները կարելի է բազմապատկել:

Սակայն չպետք է կարծել, թե նշված օրինակներում է-ի փոխարեն ե և հակառակ գրությունը կիրառվում է հետևողականորեն. դրանց զուգահեռ արձանագրվում են նաև ավանդական գրության մեջ ձևեր: Այդ երկու տառերի գրության շփոթը ավելի է հաճախանում հետագա դարերում, երբ համարյա ամենուրեք, հատկապես բառամիջի դիրքում, խախտելով ավանդական ուղղագրությունը, մի գրի փոխարեն գրվում է մյուսը:

Ե-ի և է-ի գրության շփոթը, նույն դիրքում մեկը մյուսով փոխարինելը, անշուշտ նշանակում էր, որ դրանք տվյալ դեպքերում իրենց հնչյունական որակով նույնանում էին: Հայերենի խոսակցական տարբերակների մեծագույն մասում հենց նրանց արտասանության նույնության պատճառով է, որ ե և է գրերի արժեքները գրավոր լեզվի տարբեր դրսևորումներում ընկալվում են որպես մի հնչյուն՝ գրության տարբեր արտահայտություններով:

Այս տեսակետից ուշագրավ է նաև հետևյալ երևույթը: Գրաբարի եա երկբարբառը միջին հայերենի տարբերակների մեծագույն մասում հնչյունափոխ-

---

օրինակների e-ին հայերենում համապատասխանում է է-ն, սակայն արաբա-պարսկական փոխառությունների մայր ձևերում ոչ թե e է, այլ առաջնային շարքի ստորին բարձրացման ä, որը չի նույնանում ֆրանս-իտալական e-ին, թեև այդ ä-ն իր արտասանական տեղով շատ մոտ է e-ին և հայերենում այդ իսկ պատճառով ներկայանում է է-ի միջոցով: Միաժամանակ պետք է նշել, որ այդ նույն բառերի ä-ի դիմաց հայերենում ունենք ո՛չ միայն է, այլև զուգահեռաբար՝ ե (սերեֆիկ, շարեկ, ֆրեյ և այլն), ինչպես նաև թուպիր // քատպիր, քաւվան, կումբաբ՝ վկայված ձևերը, որոնցից առաջինում ä-ն սղվել է, իսկ մյուսներում պահպանվելով հանդերձ՝ ներկայացված է հայերենի ա-ով:

վում և գրության մեջ արտահայտվում է և և է գրերով, ըստ որում, եա-ի փոխարեն ե-ն հանդես է գալիս փակ վանկում (գրեալ > գրել, գրեաց > գրեց, թեև մասնակիորեն հանդիպում են նաև է-ով ձևեր), իսկ է-ն՝ բառավերջի բաց վանկում (գրեա > գրէ): Կասկածից դուրս է, որ դրանք նույն հնչյունի արտահայտման տարբեր ձևեր են, և տվյալ դեպքում տարբեր տառերով արտահայտվելը ո՛չ թե հնչյունական, այլ ուղղագրական արժեք ունի:

Սակայն այս բոլորի հետ միասին մենք շենք կարող անցնել մի շարք փաստերի կողքով, որոնք ակնարկում են նաև այլ համապատասխանութուններ: Անառարկելի է, որ միջնադարյան աղբյուրներում, այնուամենայնիվ, հանդիպում են այնպիսի բառաձևեր և օտար բառերի այնպիսի տառադարձություններ, որոնք նշում են բառամիջում և և է տառերի հնչյունական տարբեր արժեքների մասին: Նկատի պիտի ունենալ նաև այն, որ մեր ժամանակակից բարբառների մի մասում հին հայերենի և և է ձայնավորների կրած փոփոխությունները հիշեցնում են միջնադարում նկատվող այդ երևույթը: Հենց այս հիմունքով է, որ Կարստը կիլիկյան հայերենում և գրի համար, շեշտի տակ, ենթադրում է ie (կամ ye) արժեքը: Ըստ այդ վարկածի ենթադրվում է, որ միավանկ բառերի բառասկզբում և բառամիջում, ինչպես նաև բազմավանկ բառերի վերջին վանկում ե-ն պետք է որ արտասանվեր ie, իսկ բազմավանկ բառերի ինչպես բառասկզբում, այնպես և շեշտից առաջ գտնված դիրքում՝ e: Կարստի այս եզրակացությունը մի կողմից հենվում է նրա այն տեսական դրույթի վրա, ըստ որի՝ կիլիկյան հայերենը իր հնչյունական և ձևաբանական առանձնահատկություններով հարում է հայ բարբառների արևմտյան խմբին և. որպես այդպիսին, չէր կարող շունենալ նրա առանձնահատկությունները, մյուս կողմից այդ ենթադրությունը հիմք է տվել հայերեն որոշ բառերի տառադարձությունը օտար լեզուներում. ինչպես՝ Մանծկերտ = Μαντζικέρτ, ասպետ = Ασπετης, պարոն Օշին Վասիլեց = barone Ossino Bassiliensi, ինչպես նաև հայերենում մի քանի օտար բառերի տառադարձությունները. ինչպես՝ նպրս. čäryäk = չարեկ և չարեկե՞, հֆր. banier = պաներ, հֆր. chancelier (բյուզ. χαντζι.թերդ) = ջանցլեր, հֆր. solier = սոլեր՞:

Այսպիսով, նկատի ունենալով այդ փաստերը, բառամիջի դիրքի համար կարելի է ենթադրել ե-ի երկբարբառային ie արժեքը, սակայն ո՛չ որպես համահայերենյան երևույթ, այլ որպես ե-ի արժեքի մի տարբերակ, քանի որ այդ նույն դիրքում արձանագրվում են, ինչպես արդեն ասվել է, ե-ի և է-ի զուգահեռ գրությունների բազմաթիվ վկայություններ ոչ միայն կիլիկիայից դուրս, այլ և կիլիկյան մատենագրության մեջ. այսպես՝ զէդ // զեդ, ամէն // ամեն, մէն // մեն, աղէկ // աղեկ, քաւէլ // քաւել, զարթէլ // զարդէլ // զարդել, վզէն // վզեն, սամսրչէք // սամսրչեք, սէրէֆիկ // սերեֆիկ, ֆրէր // ֆրեր, պողէր // պողլեր և այլն, և այլն, որոնց վրա մատնացույց է անում հենց ինքը՝ Կարստը: Նշանակում է՝ շեշտի տակ ե = ie համապատասխանությունը նույնիսկ կիլիկյան հայերենի համար ընդհանրական և օրինաչափ չէր:

<sup>8</sup> Այս բառաձևը ունի նաև չարեկ գրությունը: Ամենայն հավանականությամբ, այս բառի ճիշտ ձևը փոխատու լեզվում եղել է ոչ թե čäryäk, այլ čaräk, ինչպես և այժմ է և. պարսկերենում (چارک), որը հայերենում նախ տառադարձվել է չարեկ // չարէկ՝ ե-ի և է-ի հնչյունական նույն արժեքով, և հետո միայն չարեկե՞՝ ըստ ե-ի բարբառային արտասանության: Ի միջի այլոց, Կարստը չարեկե՞ բառաձևը քաղել է «Պիրք վաստակոց» աշխատությունից, որի հրատարակության հիմքում ընկած ձեռագրի գրչության թվականը անհայտ է:

<sup>9</sup> Տե՛ս Կարստ, նշվ. աշխատությունը, էջ 19:

Բառասկզբում ևս նկատելի է ե և է գրերի օգտագործման սահմանների խախտում, ինչպես, օրինակ՝ եկեղեցի // էկեղեցի, երէց // էրէց, եթէ // էթէ, Երուսաղէմ // էրուսաղէմ, երեկ // էրեկ (= եկավ) և այլն, և այլն: Եվ քանի որ նման երկգրությունները հանդիպում են միևնույն լեզվական հուշարձաններում, ապա պետք է ենթադրել, որ դրանց մեջ տարբեր գրություններով արտահայտվում է միևնույն հնչյունը: Որ բառասկզբի ե-ն այդ զուգագրությունների ֆոնի վրա ունենք e ձայնավորի արժեք, կռահվում է միայն այն բանով, որ այն արտահայտվում է նաև է-ի միջոցով, իսկ վերջինս բառասկզբում շատ որոշակիորեն հանդես է գալիս e ձայնավորի արժեքով: Այդ երևում է հատկապես մի շարք օտար բառերի (հիմնականում՝ անձնանունների) տառադարձման մեջ. այսպես, օրինակ. թրք. e | «ժողովուրդ» բառից տարբեր բարդություններով ունենք վկայված հետևյալ անձնանունները՝ էլամիր, էլբասան, էլբեզի, էլդար, էլթանգի, էլմէլիք, էլսաթուն, էլխութլու և այլն, որոնց բառասկզբի է-ն համապատասխանում է օտարլեզվյան e-ին: Այսպես նաև էլթի=թրք. elthi, էլլի=e | լի բառերում՝ վկայված 1266—1304 թվականներից<sup>10</sup>: Բառասկզբի է-ի e արժեքը, մյուս կողմից, հաստատվում է ե-ի նույն դիրքում այլ հնչյունական արժեքով: Վերը թեև նշվեց բառասկզբի դիրքում ե-ի e հնչյունական որակի մասին, բայց դա նրա արտահայտություններից մեկն էր, այն էլ միայն միջին հայերենի որոշ տարբերակներում, մինչդեռ այլ տարբերակներում այն պատմականորեն հնչյունափոխվել էր ie (ye)-ի: Այս երևույթը ևս արձանագրվում է փոխառությունների մեջ. այսպես, օրինակ՝ հունական փոխառություն հանդիսացող եռիէս // եռես // երեփս տարբեր գրություններով վկայված միևնույն բառը հունարենում ունի ἱερεις «քահանա» բառածիր<sup>11</sup>: Հայերենում թեև այդ բառը հանդես է գալիս տարբեր գրություններով, բայց բոլորն էլ բառասկզբում ունեն ե, որը համապատասխանում է հունարենի բառասկզբի ie հնչյունախմբին: Այդ նույն երևույթը արձանագրվում է նաև փոխառյալ անձնանունների հետևյալ օրինակներում. Եզդանշահ=պրս. yezdān-šah՝ վկայված 1258 թվականից. նույն արմատական (yezdān) բառից ունենք նաև Եզդանբախշ=պրս. yezdān-baxš «աստվածատուր» անունը՝ վկայված 1327 և հետագա թվականներից, որոնց մեջ պարսկերենի բառասկզբի ye-ն հայերենում արտահայտված է ե գրով. Եթար=թրք. yethar և այլն:

Կարևոր է նշել նաև այն, որ երբ օտար անձնանունը սկսվում է ya, yo, yu հնչյունակապակցություններով, հայերենը այդ հնչյունի դիմաց դնում է եա, եո, եու կապակցությունները. ինչպես՝ Եադիգար // Եատկար, Եադիգարսուլթան // Եատկարսուլթան (վերջինս՝ 1269 թվից), որոնց առաջին մասը համապատասխանում է պրս. yādīgār «հիշատակ» բառին. կամ՝ Եադիխան, Եադշահ՝ կազմված պրս. yād «հիշողություն» և xan, šah բառերից. Եուդաշ=yoldaš, Եուսուֆ=արբ. yusuf և այլն: Այս երևույթը ուշագրավ է նրանով, որ դրանց մեջ օտարլեզվյան y-ն ձայնավորից առաջ հայերենում տառադարձվել է ո՛չ թե յ-ով, որը, ինչպես կտեսնենք, այս շրջանում բառասկզբում այլևս չունենր y արժեք, այլ ե-ով, որը բառասկզբի դիրքում որպես յոտացիայի ենթարկված հնչյուն, ավելի հարազատորեն էր արտահայտում օտար հնչյունի էությունը:

<sup>10</sup> Այս և ստորև բերվող անձնանունների օրինակները, նրանց ստուգաբանությունն ու վկայության ժամանակները քաղված են Հ. Աճառյանի «Անձնանունների բառարան»-ից:

<sup>11</sup> Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Բ.

Շատ հնարավոր է, որ միջին հայերենի շրջանում է ձայնավորը ունեցած լինի նաև e-ի և i-ի միջին արտասանությունը տարբերակ, որը հետագայում հիմք է տվել ե>ի հնչյունափոխությանը, մի երևույթ, որ այնքան տարածված է մեր արևելյան բարբառների մի մասում և որը մասնակիորեն արձանագրվում է նաև միջին հայերենի որոշ հուշարձաններում (այս մասին տե՛ս հնչյունափոխության բաժնում):

Ամփոփելով է և է տառերի հնչյունական արժեքների մասին վերը շարադրվածը, կարելի է ասել, որ այդ գրերից է-ն բառի մեջ գրաված բոլոր դիրքերում և ամբողջ միջին հայերենում ունեն հնչյունական նույն նշանակությունը՝ e: Ե գիրը միջին հայերենի տարբեր դրսևորումներում ստանում էր հնչյունական տարբեր արժեքներ. որոշ վայրերում այն բառամիջում և բառավերջում նույնանում էր է-ի արտասանության հետ, այլ վայրերում ստանում յe երկբարբառային երանգ, որը հավանական է՝ կատարվում էր շեշտի տակ: Նման երևույթ տեղի է ունենում նաև բառասկզբի դիրքում, և հավանական է, որ երկբարբառային կամ ye երկհնչյունային արժեքավորում ստանում է այն տարբերակներում, որտեղ նման փոփոխություն կատարվել էր նաև բառամիջում: Առայժմ եղած տվյալների հիման վրա հնարավոր չէ պարզել այն վայրերը, որտեղ կատարվել են այդ փոփոխությունները:

7. Միջին հայերենի ձայնավորներից է նաև o-ն, որը գրության մեջ արտահայտվում է ո, օ, ալ գրանշաններով: Վերջիններիս համապատասխանությունը օ հնչյունին ապացուցվում է փոխառյալ բառերում օտարլեզվյան օ-ի տառադարձությամբ. այսպես, օրինակ՝ ունենք ալոդոթ=հուն. *αλοδοτος*, լօդօխա=հուն. *λοδοχια*, պարոն=ֆր. *baron*, սօլ=հֆր. *sol*, ալդրել // օդրել=հֆր. *otreier*, կոմս=լտ. *comes*, ձաւլիւն=ֆր. *Josselin* և այլն, որոնց մեջ օտարլեզվյան օ-երը հայերենում տառադարձված են կա՛մ ո-ով, կա՛մ օ (ալ)-ով: Այդ տառադարձությունները մի կողմից ցույց են տալիս ալ(օ)=ո համապատասխանությունը և մյուս կողմից՝ որ այդ երկուսը իրենց հերթին համապատասխանում են օտարլեզվյան օ հնչյունին: Որ ո և ալ (օ) տառանշանները բառամիջում հնչյունական արժեքներով շատ դեպքերում համընկնում են, ապացուցվում է նաև ավանդական բառերի երկգրություններով: Այս հարցի մանրամասն քննությունը թողնելով երկբարբառների փոփոխություններին նվիրված բաժնին, այստեղ բերենք միայն մի քանի օրինակներ այդ երկգրություններից: Այսպես, օրինակ՝ մի կողմից ունենք Կոստանդնուպոլիս (Գ. Հով. հձ. 201, 1007 թ.), իսկ մյուս կողմից՝ Կոստանդնուպոլիս (ն. տ. 465, 1176 թ., 561, 1192 թ.), Քրիստափառ (ն. տ. 490, 1182 թ.) և Քրիստափոր (ն. տ. 491, 1182 թ.), Կոռիկոս բառաձևի կողքին ունենք նաև Կաւոիկաւս («Ի պարոնութեանն Աւշնի տեառն Կաւոիկաւսոյ»—Մ. Քեշ., Ցուց., էջ 105, գրչ. ժամանակը՝ 1323 թ., վայրը՝ Սիս): Նման զուգագրությունները ավելի առատ են ենթակայական դերբայի գրության մեջ, երբ հավասարապես օգտագործվում են նրա վերջավորության ող և օղ (ալղ) ձևերը. այսպես, օրինակ՝ ծնող (Գ. Հով. հձ. 216, 1030 թ., 222, 1040 թ., 569, 1139 թ. և այլն) և ծնաղ (ն. տ. 218, 1033 թ., 219, 1038 թ. և այլն), ընթերցաղ (ն. տ. 379, 1161 թ.) և ընթերցող (ն. տ. 499, 1184 թ.) և այլն:

Այս փաստերը կարող են հիմք տալ ասելու, որ միջին հայերենում մետրոպայան այբուբենի ո գիրը բառամիջում հանդես է բերում օ հնչյունի արժեք և իր էությունը համընկնում է ալ երկբարբառի հնչյունափոխությունից առաջացած օ ձայնավորի հետ:

Օ-ն ձայնավորների մեջ միակ հնչյունն է, որ իր շրթնայնության հատկանիշով հարում է ու-ին, սակայն, ինչպես արդեն ասվել է վերը, նրանք հավանաբար տարբերվում էին իրարից արտաբերման ժամանակ լեզվի բարձրացման աստիճանով, և այդ հիման վրա է, որ ստեղծվում են նվազագույն հակադրություններ (ինչպես՝ թուք : թոք, լուր : լոր, խուզ : խոզ, խուց : խոց, կութ : կոթ, կուռ : կոռ, կուշտ : կոշտ, կուտ : կոտ, հուն : հոն || հօն, հուր : հոր || հօր և այլն, և այլն)։ Սակայն, այն հանգամանքը, որ նրանց տարբերակումը իրականանում է միայն լեզվի բարձրացման տարբեր աստիճանների միջոցով, և վերջիններս էլ գտնվում են նույն ետին շարքում, իրար կողք-կողքի՝ հնարավորություն է ստեղծում մի աստիճանից մյուսին անցնելու, որով փաստորեն կատարվում է հնչյունափոխություն։ Թերևս սրանով է պայմանավորված վաղ միջնադարյան աղբյուրներում հազվագեղարեն արձանագրվող այն երեւութը, երբ միևնույն բառի գրության մեջ զուգահեռաբար հանդիպում են ո և ու գրերը։ Կարստը այս մասին ենթադրում է, որ կիլիկյան հայերենում ո-ն ուներ օ-ի և Ա-ի միջին արտասանություն, և այդ հիմքի վրա է, որ օտար Ա-ն և օ-ն հայերենում հակադարձաբար արտահայտվում են ո-ով կամ ու-ով. նա բերում է հետևյալ օրինակները. Rupinus = Ռոբեհն, Curchus, Culchus, Curco, Courc (Coricus, Colco, Corc ձևերի կողքին) = կուսիկուս, Ֆր. bouteille, boutillier = Պոդլիք, հՖր. chaperon = ջաբրոն // ջաբրուն, հՖր. chalonge = ջալունջ, հՖր. comte = գունթ<sup>12</sup>։ Սրանցից, իսկապես, մի բանիսը ունեն տարբեր գրություններ, հատկապես Ռուբէն // Ռոբէն՝ կիլիկյան ժամանակագրություններում, Սմբատի Տարեգրքում և այլն, սակայն մյուս օրինակների վկայությունները խիստ հազվադեպ են։ Չնայած վերջին հանգամանքին, այնուամենայնիվ, փաստ է, որ նշված օրինակները վկայվում են և՛ ո-ով, և՛ ու-ով, բայց չենք կարծում, թե նման զուգահեռությունների պատճառն այն է, որ ո-ն ունեցել է ու-ի և օ-ի միջին արտասանությունը։ Այդ գրություններից մեկը պարզապես օտար բառաձևի պատճենումն է, իսկ մյուսը՝ հետագա հնչյունափոխության արդյունք։ Մանավանդ, ինչպես կտեսնենք ձայնավորների հնչյունափոխությանը նվիրված բաժնում, միջին հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներին խորթ չէր ինչպես ո > ու, այնպես և ու > ո հնչյունափոխությունը։ Սկզբնապես, իհարկե, ենթադրելի է, որ ո > ու փոփոխության համար միջանկյալ օղակ է հանդիսացել ո-ի մի այնպիսի արտասանություն, որ ավելի շուտ ունեցել է ոօ երկբարբառային երանդ<sup>13</sup>։

Այստեղ կարևոր է նշել նաև հետևյալը։ Առ երկբարբառի հնչյունափոխությանը առաջացած օ հնչյունը ամենայն հավանականությամբ լրիվ շափով չէր համընկնում միջին հայերենում ո գրին տրվող հնչյունական արժեքին (համենայն դեպս, ո՛չ ամբողջ միջին հայերենում)։ Այդ երկուսի լրիվ նույնության

<sup>12</sup> St'v Karst, նշվ. աշխատությունը, էջ 21։

<sup>13</sup> Արդյոք անցումնային այդ վիճակը չ'ն' ներկայացնում որոշ ձևագրերում հանդիպող այն բառաձևերը, որոնց մեջ ածանցավոր բառերի ավանդական -աւոր, -ուր վերջավորություններում բաց է թողնվում Վ-ն։ Այստեղ կարելի է հիշատակել, օրինակ՝ Գրիգորիս բժշկապետի աշխատության վաղ շրջանի գրություններում հասած ձևագրի հետևյալ օրինակները. ուծարնայ (մյուս ձևագրում և հրատարակության տեքստում՝ ուծովնայ < ուծով-անայ), որ ակնհայտորեն ուծարնայ բառաձևն է. քիւնայոր (փխ. քունաւոր), կարէոր (փխ. կարեւոր), ամուսնայոր (փխ. ամասնաւոր «ամուսնացած»), ձգեցոր (փխ. ձգեցւոր) և այլն։ Մենք կարծում ենք, որ այս օրի-

դեպքում ոչ մի անհրաժեշտություն չէր զգացվի աւ-ից առաջացած օ-ի համար այբուբենի մեջ լրացուցիչ մտցնել մի նոր տառ (օ): Որ մատենագրության մեջ հանդիպում են աւ (օ), ո զուգագրությունների բավական թվով փաստեր, այդ նշան է այն բանի, որ միջին հայերենի որոշ տարբերակներում դրանք իսկապես նույնական էին, սակայն, մյուս կողմից, երբ անհրաժեշտաբար գրության մեջ մտցվում է օ տառը, որպեսզի աւ-ից հնչյունափոխված օ հնչյունը գրության մեջ շփոթվի ո-ի հնչյունական արժեքի հետ՝ ապա ակնհայտ է, որ դրանք տարբերվում էին իրարից՝ եթե ոչ ամբողջ միջին հայերենում, ապա գոնե նրա տարբերակների մեծագույն մասում:

Հայտնի է, որ գրաբարի դասական շրջանում ո տառով արտահայտվող հնչյունը, անկախ բառում գրաված դիրքի, ուներ օ ձայնավորի արժեք, այդ թվում նաև բառասկզբում: Միջին հայերենի բառասկզբի ո-ի համար ուսումնասիրողները այլ արժեքներ են տալիս: Ըստ որում, տարբեր ուսումնասիրողներ հնչյունական արժեքի տարբեր սահմաններ են նշում: Կարստը, օրինակ, կիրիկյան հայերենի բառասկզբի ո-ին վերագրում է ՎՕ երկհնչյունային արտասանություն, բայց միայն միավանկ բառերի համար. երկու և ավելի վանկ ունեցող բառերի բառասկզբի ո-ի համար ընդունում է օ համապատասխանությունը: Պրոֆ. Ս. Ղազարյանը բառասկզբի ո>ՎՕ համապատասխանությունն ընդունում է ո՛չ միայն ամբողջ միջին հայերենի համար, այլև որպես ընդհանուր օրինակափոխություն՝ միավանկ և բազմավանկ բառերի համար, թեև բացառված չի համարում նաև առանձին բառերում ո=օ համապատասխանությունը<sup>14</sup>: Երկու ուսումնասիրողներն էլ տվյալ հնչյունափոխական երևույթի հիմնավորման համար մատենագրական փաստեր չեն բերում, և, ըստ էության, նշված ո>ՎՕ փոփոխությունը բառասկզբում ընդունում են որպես ինքնին հասկանալի մի բան, հավանաբար նկատի ունենալով մեր բարբառներում կատարված փոփոխությունները և մեր գրական լեզուների ավանդական արտասանությունը: Այդ երևույթի հիմնավորման համար մատենագրական փաստեր չբերելը բացատրվում է ո՛չ թե նրանով, որ սույն գիտնականների ուշադրությունից վրիպել են դրանք, այլ պարզապես նրանով, որ օգտագործած մատենագրությունը նրանց այդ տիպի փաստեր չի ընձեռել: Փոխառյալ բառերը, որոնք հարուստ նյութ են տալիս հայերենի մյուս հնչյունների արժեքի որոշման համար, ո-ի բառասկզբի դիրքի համար համարյա ոչինչ չեն տալիս: Այն հատ ու կենտ օրինակները, որոնք բառացիորեն հնարավոր է լինում պեղել սկզբնագրերից, խոսում են ոչ թե բառասկզբի ո>ՎՕ արժեքի մասին, այլ վերաբերում են ո=օ համապատասխանությանը: Այսպես, օրինակ՝ Հայոց

նակներում ո-ն ունեցել է ՎՕ երկբարբառային արտասանություն: Կարելի էր, իհարկե, ենթադրել նաև, որ ածանցի մեջ ու կապակցությունը փոխարինվել է ո-ով՝ պարզապես ո>ՎՕ հնչյունափոխության փաստի հաշվառմամբ, բառասկզբում նրա ունեցած հնչյունական արժեքի անալոգիայով, բայց այս դեպքում անբացատրելի է մնում, թե ինչու՞ այն բառերում, որոնց մեջ ածանցի ո-ին նախորդում է ձայնավոր՝ ավելանում է չ: Ամենայն հավանականությամբ այդ չ-ն մուծվում է ճորանջի կանխման նպատակով: Իսկ վերջինս կարող էր տեղի ունենալ միայն երկու ձայնավորների միացման սահմանագծում: Այսպես դատելով՝ պետք է ընդունել, որ քիւնաչոր, ամուսնաչոր բառաձևերի չ-ից հետո ո՛չ թե ՎՕ-ն հնչյունակապակցություն է (որն սկսվում է բաղաձայնով), այլ երկբարբառային ՎՕ ձայնավոր մի հնչյուն: Ո՛ր ենթադրությունն էլ ընդունելու լինենք, այնուամենայնիվ, մի բան որոշակի է, որ ո-ն բերված բառերում պարզ օ ձայնավորի արժեք չունի:

<sup>14</sup> Տե՛ս Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 216:

Ոստան տեղանունը արաբական աղբյուրներում հանդիպում է *أستان* (ustān) արտահայտությամբ. քանի որ արաբերենը շունի օ ձայնավորը, բնականաբար այն արտահայտել է Ա-ի միջոցով: Բայց դա էլ իր հերթին նշանակում է, որ հայերենի այն տարբերակում, որից վերցված է այդ բառը, այն տվյալ դիրքում (բառասկզբում) ունեցել է օ, քանի որ ՎՕ-ի արտասանության դեպքում արաբերենը հնարավորություն կունենար այն արտահայտելու (գոնե ՎԱ-ի միջոցով): Մի այլ օրինակ՝ 1237 թ. գրչության մի ձեռագիր հիշատակարանում ունենք. «քանզի մեք Գրիգոր և Վարդան, որպես զվոտիտ և զընզար ամուլք ընգալանք զարարս մշակին» (Գ. Հով. հձ. 922). այստեղ ընդգծված բառը հայերեն վտիտ-ն է, որի գաղտնավանկի ը-ն հնչյունափոխվել է ո-ի՝ բառասկզբում ստեղծելով ՎՕ հնչյունակապակցությունը, բայց այն չի տառադարձվել ո-ով<sup>15</sup>: Նման մի օրինակ ունենք XV դարից. «յիշեցէք ի Քրիստոս զմահտեսի Մկրտիչն և զվոֆելն մեր պարոն Խաչատուրն» (ԺԾ հձհ. 511). ընդգծված բառը փոխառություն է արաբերեն vakhil բառածնից, որի հոգնակին է vukhala, այն էլ նոր պարսկերենում արտասանվում է vokhala. հայերենը թերևս եզակի և հոգնակի ձևերի կոնտամինացիայով կազմված բառածն է. բայց այստեղ ևս բառասկզբի ՎՕ հնչյունախմբի դիմաց հայերենում ունենք նույնպիսի հնչյունախումբ՝ վո: Այս օրինակների վրա կարելի է ավելացնել հայկական գաղթօջախներից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի, հայկական դատարանի արձանագրություններում վկայվող մի քանի օտար բառերի տառադարձությունները, որոնք նույնպես նշում են բառասկզբի ո>օ համապատասխանությունը: Այսպես. այդ սկզբնադրում ունենք՝ վոյթ «համայնքի ընտրովի առաջնորդ, ավագ», որից վոյթուքին, վոյվոտայ, անձնանուններում՝ վոյթո, վոյթովսիյ, վոլոշին, վոռոբյուցա և այլն: Անառարկելի պիտի համարել, որ եթե այս գաղութի հայերենում բառասկզբի ո-ն հնչյունափոխված լիներ ՎՕ-ի, ապա նշված անունները պիտի տառադարձվեին ո-ով. բայց իրականում ունենք օտար հնչմանը հարազատ վո կապակցությունը, որ նշանակում է, թե հայերենի այս տարբերակում բառասկզբի ո>ՎՕ փոփոխությունը տեղի չէր ունեցել:

Վերը բերված օրինակները լավագույնս խոսում են այն մասին, որ բառասկզբի ո-ն միջին հայերենի ոչ բոլոր տարբերակներում էր փոխվել ՎՕ-ի: Այդ նույն միտքը կարելի է հիմնավորել նաև այն երկգրություններով, որոնց մեջ բառասկզբում մի վայրում գրվում է ո, մի այլ վայրում՝ աւ(օ): Այսպես, օրինակ՝ «ի թագաւորութեան Աւշնի» (ԺԴ հձհ. 158, 1319 թ. Ակներ) և «ի թագաւորութեան Ոշնոյ» (ԺԴ հձհ. 157, 1319 թ. Գեղարքունի), «ի շառաւեղէ Ուպիլեանց» (ԺԴ հձհ. 99, 1314 թ. գրիչը Կիլիկիայի Ակներ ուխտից), «...յեպիսկոպոսութեան... տէր Օրբելի» (ԺԴ հձհ. 157, 1319 թ. Գեղարքունի): Ակներևորեն այս օրինակներում բառասկզբի ո-ն ունի օ հնչյունի արժեք (հմմտ. նաև լտ. Ossin)<sup>16</sup>: Այսպես նաև Տերտեր Երևանցու կողմից 1341 թ. ընդօրինակված Ճառընտիրի ձեռագրում (№ 8030. էջ 34բ) որդի բառի թեքված ձևերից մեկում ունենք աւրդոյն: Յովհաննէս անձնանունը միջնադարյան աղբյուրներում հանդիպում է բազմիցս, այլ և այլ գրչություններով, և դրանց մեջ նաև Ովաննէս (ԺԴ հձհ. 158, 1319 թ. Վասպուրական), Ոհաննէս (Գ. Հով. հձ. 817, 1221 թ.)

<sup>15</sup> Որ դա իսկապես վտիտ բառն է, ապացուցվում է կողքը գրված հոմանիշ բառով՝ նգար = պրս. nizar «վտիտ, նիհար»:

<sup>16</sup> Տե՛ս Kars t, նշվ. աշխատությունը, էջ 19:

ձևերով, որոնք նույնպես ակնարկում են բառասկզբի *n*-ի պարզ օ ձայնավորի արժեքը: Այս փաստերից առնվազն կարելի է մակաբերել, որ միջին հայերենի մի շարք տարբերակներում բառասկզբի *n*=օ համապատասխանությունը գործուն օրինաչափություն էր, և այդ իսկ տեսակետից ճիշտ չէր լինի ամբողջ միջին հայերենի համար ընդունել *n*>*vo* փոփոխությունը: Սակայն, մյուս կողմից, չի կարելի ժխտել նաև ուսումնասիրվող շրջանի հայերենի որոշ տարբերակներում բառասկզբի *n*-ի կրած փոփոխության փաստը: Պետք է ենթադրել, որ այդ փոփոխությունը նախ սկսվում է *n*-ի  $\widehat{uo}$  երկբարբառային արժեքավորմամբ: Թերևս այդ հիմքի վրա է, որ հայերենի որոշ տարբերակներում *n*-ն հետագայում վերածվում է պարզ ու ձայնավորի (Սյունիք, Մեղրի, Կարճևան և այլն), այլ տարբերակներում բառասկզբի  $\widehat{uo}$  երկբարբառը սկսում է ընկալվել որպես ուօ երկհնչյուն, և հայերենի ընդհանուր օրինաչափությամբ՝ ու-ն ձայնավորից առաջ հնչյունափոխվելով *v*-ի, *n*-ի դիմաց ստացվում է *vo* երկհնչյուն: Այստեղ ևս սկզբնաղբյուրներում պատահող առանձին, հատ ու կենտ օրինակներ մատնում են կատարված փոփոխությունը: Այսպես, օրինակ, Կոստ. Երզնկացու տաղերից մեկում ունենք. «Բլբուլն ասէ յիս խօսելով, թե՛ դու վանց վա՛ր ես խև եղել» (120): Ընդգծված բառը *n*, ով դերանվան թեքված ոչ *r* ձևից առաջացած բարբառային տարբերակ է: Այն ենթադրում է նախ բառասկզբի *n*>*vo* ( $\widehat{uo}$  երկբարբառային ձևից) փոփոխություն (voyr) դեռևս այն ժամանակ, երբ չէր կատարվել երկբարբառի պարզեցում. այնուհետև ոչ երկբարբառի օրինաչափ փոփոխությամբ ստացվել է վա՛ր ձևը: Գրիգորիսի «Քնու-թիւն բնութեան և նորին ցաւոց» աշխատության մեջ արաբերեն ٱوۋار բառը տառադարձված է ոսուաս (ցնորք, մտքի պղտորում)<sup>17</sup>: Կասկած լինել չի կարող, որ այստեղ բառասկզբի *n*-ն արտահայտում է մի երկհնչյուն, որ սկսվում է *v*-ով<sup>18</sup>: Նման մի օրինակ են նաև արաբերեն vaqi բառի հայերենում ռխվ, ողֆ, ողբ գրչություններով բառաձևերը, որոնք հանդիպում են միջնադարյան հիշատակարաններում և այլուր. որոնց մեջ արաբերենի va-ի դիմաց բառասկզբում ունենք *n* (*a*>*o* հնչյունափոխությունը թերևս կարելի է բացատրել նաև շրթնատամնային *v*-ի ազդեցությամբ?):

Այս օրինակներում բառասկզբի *n*>*vo* համապատասխանությունը գոյություն ունի ինչպես միավանկ, այնպես էլ բազմավանկ բառերում: Օրինակները թեև քիչ են, և այդ իսկ պատճառով էլ դժվար է դրանք տեղայնացնել, բայց պետք է ընդունել, որ, եթե միջին հայերենի որոշ տարբերակներ բառասկզբի *n*-ն ընկալում էին որպես պարզ օ ձայնավոր, ապա այլ տարբերակներում *n*-ի փոփոխությունը ընթանում էր կապված բառի վանկերի քանակի հետ: Նախ, ինչպես ասվեց, որոշ տարբերակներում այն ուներ երկբարբառային արժեք, իսկ

<sup>17</sup> Տե՛ս նշվ. աշխատությունը, էջ 144, թեև ձեռագրերից մեկը ունի նաև ոսուաս, աուաս, որոնցից հատկապես երկրորդը գրչագրական վրիպում է: Սակայն նույն բառը առանց գրչագրական տարբերակների տե՛ս նույն տեղում, էջ 185:

<sup>18</sup> Գրիգորիսի հիշյալ աշխատությունը հեղինակային բնագիր չէ (ամենավաղ ձեռագիրը XV դարից է) և, ամենայն հավանականությամբ, այն անցել է մի շարք ընդօրինակությունների միջով: Վկայակոչված բառի բառասկզբի *n*-ի գրությունը կարող է այնքանով միայն վստահություն ներշնչել, որ այն որպես բժշկագիտական տերմին, և ո՛չ ընդհանուր գործածության բառ, կարող էր պահպանել հեղինակային գրության ձևը: Սակայն նույն ձեռագրում հանդիպում են նաև հայերեն բառեր, որոնց բառասկզբի *n*-ն արտահայտված է ալ գրությամբ (ալտեին<ոտեին, յալտեեր<յոտեեր, ալուվանն<ոռովայնն), որոնք, հայտնի չէ՛ գալիս են հեղինակային բնագրից, թե հետագա ընդօրինակություններից:



այնտեղ, որտեղ ունի արժեքավորվում էր որպես երկհնչյուն, մի մասում այն հատուկ էր միայն միավանկ բառերին, մի այլ մասում երևույթը ընդգրկում էր նաև երկվանկ և բազմավանկ բառերը:

8. Մեսրոպյան այբուբենի մեջ հայերենի ձայնավորներն արտահայտող տառերից է նաև ը-ն: Ճիշտ է, սրանով արտահայտված հնչյունի արժեքը քրն-նարկվող ժամանակաշրջանի փոխատու լեզուների փաստերով անհնար է ստուգել, բայց նկատի ունենալով, որ հայերենի պատմական տարբեր փուլերում և նրա բարբառներում հին ը-ին միշտ համապատասխանում է նույնձ հնչյունը, այդ համապատասխանությունը բացառված չի համարվում նաև միջին հայերենում: Այստեղ մի կողմից հաշվի են առնվում շեշտի տակ գտնվող ըստ: աստ, ընդ: անդ և նման ձևերի նվազագույն հակադրությունները և մյուս կողմից՝ բառասկզբի և բառամիջի գաղտնավանկային՝ համեմատաբար թույլ դժբախտության դեպքերը<sup>19</sup>: Ըստ որում, ձայնավորների մեջ լինելով ամենաթույլը, նրա բացարձակ կիրառության հիմնական ոլորտը (ըստ ուղղագրության կանոնների) սահմանափակվում է միայն բառասկզբի դիրքով (ըղուղ, ըղունկ, ընկեր, ընկուղ, ընկոյգ, ընտիր, ընթերցող, ըռոմբ, ըռափիկ և այլն), այն էլ հիմնականում դ, ն, մ, ու ձայնորդներից առաջ: Բառասկզբի դիրքում համեմատաբար ավելի թույլ դրսևորում ունի սուլական // շշական + պայթական կապակցություններից առաջ: Եվ թեև այս դիրքում, ըստ ուղղագրական կանոնների, բացառվում էր նրա նշանացի արտահայտությունը, սակայն միջնադարյան ձեռագրերը նման գրության բազմաթիվ օրինակներ են տալիս: Մի քանի օրինակներ միայն մի ձեռագրից՝ ըստուերացել (Ձեռ. 8030, էջ 3բ. 1341 թ.), ըստեղծեր (ն. տ. 7բ), ըսգենու զկերպարանս (ն. տ. 59ա), ըսգեցարուք (ն. տ. 65ա), ըսգեցոյ (ն. տ. 98բ) և այլն: Համեմատաբար թույլ դիրք է նաև բառամեջը, որտեղ այս հնչյունը հանդես է գալիս գաղտնավանկերում: Մատենագրության մեջ, և հատկապես շափածո ստեղծագործություններում, ուր շափազանց կարեւոր է բառերի վանկատման պարզությունը, բանաստեղծական տողի վանկային կառուցվածքը, գաղտնավանկերում լսվող ձ -ն շատ հաճախ ստանում է գրավոր արտահայտություն (ինչպես՝ շընչաւոր, շըրթներ, քըրծեր, լըսել, խըմել, հընձել և այլն): Առաջին իսկ պահանջված ձեռագրերում էլ հանդիպում ենք նույն երևույթին. այսպես՝ IX—X դարերի գրչության մեջ № 985 ձեռագրում՝ հըրաման (3բ), սըրոյ մեռան (ն. տ. 7ա), ոչ սըտեմ (8ա) ժողովըրդեանըն (8ա) և այլն: Հատկապես առաջին վանկում ը-ի առկայությունը պայմանավորված է հայերենում երկու բաղաձայնով բառ սկսելու անհնարությամբ: Ինչպես վերը ասվեց, եթե այդ բաղաձայնները սուլական // շշական + պայթական դուրսգործությամբ են, ձ -ն արտասանվում է բառասկզբում, մյուս բաղաձայնների դուրսգործության դեպքում ձ -ն արտասանվում է առաջին բաղաձայնից հետո: Այս առանձնահատկությունը, որ խարսխված է հայերենի արտասանական բաղաձայնի վրա, գալիս է դեռևս հին հայերենից և հարատևել է մինչև մեր օրերը: Այսօր էլ մենք նման բառերի արտասանության ժամանակ հնչում ենք մի թույլ ձ, որը շատ որոշակիորեն, որպես վանկարար ձայնավոր, հանդես է գալիս հատկապես բառերի վանկատման ժամանակ (լը-սել, խը-մել, հըն-ձել և այլն):

<sup>19</sup> Որ բազմավանկ բառերի բառասկզբի ը-ն ևս թույլ ձայնավոր է, երևում է հետևյալ օրինակից՝ «...Որչափ ես առաւել զետանիսն նորա (Լազարյան ձեռարանի 887 թ. գրչության մեջ ավետարան, էջ 25բ), որտեղ ընտանիք բառի ը-ն գրության մեջ չի արտահայտվել: Ձ նախդիրի հավելմամբ ստեղծվել է գաղտնավանկ:

9. Հին հայերենի ձայնավորներն արտահայտող տառերի հնչյունական արժեքները պարզելուց հետո, միջին հայերենի ձայնավորների ընդհանուր նկարագիրն ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ է քննել նաև այն փոփոխությունները, որ կրել էին այդ հնչյունները մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Այդ բանը մասամբ արվել է և և՛ զրբերի արժեքների քննության ընթացքում, երբ ցույց էր տրվում, թե ինչպես դրանք պահպանելով իրենց ավանդական գրության ձևերը, միջին հայերենի առանձին տարբերակներում, այնուամենայնիվ, արտահայտում էին տարբեր հնչյունական երանգներ:

Այս բաժնում նպատակ է դրվում քննել միջին հայերենում հին հայերենի ձայնավորների մեջ կատարված պատմական այն փոփոխությունները, որոնք հատկապես պայմանավորված են եղել հայերենի շեշտադրության առանձնահատկությամբ և կամ նրանց արտաբերման հետ կապված հոգեբանական ու արտասանական այլ գործոններով: Այդ փոփոխությունները, ինչպես կտեսնենք, երբեմն կրում են ընդհանուր, երբեմն՝ մասնակի բնույթ, բայց, այնուամենայնիվ, իրենց էությունամբ հարազատ ու տիպական են մեր լեզվի միջին շրջանին և դրանով իսկ՝ նրա հնչյունական նկարագրի կարևոր գծերն են:

Նախ շեշտի մասին:

10. Հայտնի է, որ գրաբարում շեշտը կայուն-շարժական էր և հիմնականում դրվում էր բառի վերջնավանկի ձայնավորի վրա: Շեշտից առաջ գտնվող վանկերի ձայնավորների արտասանությունը բնականաբար թուլանում էր: Բայց եթե այդ հանգամանքը որևէ էական հետևանք չէր թողնում ա, օ, և ձայնավորների արտասանության որակի վրա<sup>10</sup>, ապա, հատկապես բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ, երբ շեշտը տեղափոխվում էր ավելացած վանկի կամ վանկերի վերջին ձայնավորի վրա, նախնական բառաձևի վերջին վանկի ու, ի, է ձայնավորները ենթարկվում էին հնչյունափոխության: Ըստ որում՝ ու-ն և ի-ն հնչյունափոխվում էին ը-ի, կամ պարզապես սղվում, է-ն նույն պայմաններում փոխվում էր ի-ի:

Հայերենը նշված ձայնավորների հնչյունափոխական այս առանձնահատկությունը պահպանեց իր գոյություն ամբողջ ժամանակաշրջանում: Ավելին. հայերենի որոշ տարբերակներ նշված ձայնավորների սղման կամ ը-ի հնչյունափոխվելու հատկությունը տարածեցին նաև մյուս ձայնավորների վրա:

Այդ բանը որոշակիորեն երևում է նաև միջին հայերենում:

Շեշտը միջին գրական հայերենում ևս կայուն-շարժական է: Այն, գրաբարի նման, միշտ բառավերջի լիարժեք ձայնավորի վրա է: Սակայն ուսումնասիրողների կողմից միջին հայերենի համար ընդունվում է երկու շեշտ՝ գլխավոր և երկրորդական: Գլխավոր շեշտը ընկնում է բառավերջի վանկի ձայնավորի վրա, երկրորդականը՝ առաջին վանկի ձայնավորի վրա (երկվանկ և բազմավանկ բառերում): Առաջին վանկում երկրորդական շեշտի ընդունումը հիմնավորվում է նրանով, որ բազմավանկ բառերում բառաթեքման ժամանակ

<sup>10</sup> Հատ ու կենտ բառերում այդ ընդհանուր օրինաչափությունից կատարվող շեղումները, ինչպես, օրինակ՝ աստուած—աստուծոյ, արմատ—արմտիք, լիսեռն—լստան !| լիտան, ծիծեռն—ծիծռան, սիսեռն—սիսռան (նաև սիսեռան) և այլն (Տե՛ս Ա. Ա. Արբախյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1958, էջ 11, 12), ոչնչով չէին խախտում հիմնական օրինաչափությունը:

ձայնավորների սղում կամ անկում տեղի է ունենում միայն միջնավանկում, բայց ո՛չ առաջին և վերջին վանկերում, հակառակ մեր մի շարք բարբառների, որոնց մեջ բազմավանկ բառերում շեշտից առաջ գտնվող բոլոր ձայնավորներն են հնչյունափոխվում կամ սղվում, ներառյալ նաև առաջին վանկում գտնվողները (օրինակ՝ Մեղրու, Կարճևանի և այլ բարբառներում), որը բացատրվում է միայն մի սուր շեշտի առկայությամբ:

Միջին հայերենում վերջնավանկային շեշտին զուգահեռ, որոշ տարբերակներում ենթադրելի է նաև շեշտի վերջընթեք գործածություն, ինչպես այդ հատուկ է մեր արևելյան շատ բարբառների:

Շեշտի առանձնահատկության հետ կապված վերը նշված հնչյունափոխական երևույթների օրինակներ մենք կտեսնենք հետագա շարադրանքում:

11. Մեր լեզվի նախորդ շրջանի՝ գրաբարի համար, ինչպես արդեն ասվել է, ա-ն կայուն ձայնավոր էր, քանի որ այն բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ շեշտից զրկվելով՝ չէր հնչյունափոխվում: Միջին հայերենում այս ձայնավորի երբեմնի կայունության հատկությունը խախտված է: Նախ՝ որպես պատմական փոփոխության արդյունք, արձանագրվում է նրա անկումը կամ սղումը բազմավանկ բառերի միջնավանկում և երկրորդ՝ որպես գործոն օրինաչափություն, նույն փոփոխությանն է ենթարկվում նաև բառաթեքման ժամանակ, երբ շեշտազրկվում է: Առաջին դեպքում գործ ունենք պատմական հնչյունափոխության հետ, երբ ա-ի սղումը կամ անկումը առկա է բառական անկախ և ուղիղ ձևերում և չի կապվում տվյալ համակարգի մեջ գործող՝ շեշտի հետ կապվող հնչյունափոխության հետ: Երկրորդ դեպքում օրինաչափությունը գործոն և տվյալ համակարգին հատուկ առանձնահատկություն է և անմիջապես առնչվում է շեշտադրության և նրա ազդեցությամբ կատարվող փոփոխության հետ: Թեև երկու դեպքում էլ էական նշանակություն է ստանում շեշտը, սակայն մի դեպքում նրա ազդեցությունն արձանագրվում է որպես ավարտված հետևանք, իսկ երկրորդ դեպքում՝ շարունակվող: Քննենք այս երկու դեպքերն առանձին-առանձին:

ա) Նախ՝ ա-ի սղումը կամ անկումը բառական ուղիղ ձևերում: Անշուշտ, այս փոփոխությունը կատարվել է շեշտի ազդեցությամբ: Արդեն պատմական շրջանում սկսել է ընդհանրանալ նախաշեշտ վանկերի ձայնավորների, այդ թվում նաև ա-ի, արտասանության թուլացումը, և քանի որ տվյալ դեպքում ա-ի կորուստը կամ փոփոխությունը չի անգրադարձել բառիմաստի շփոթման վրա, ուստի և այն ընկել կամ սղվել է: Հայերենի այն տարբերակներում, որտեղ բազմավանկ բառը բացի գլխավորից ունեցել է նաև երկրորդական շեշտ, այն էլ առաջին վանկում, ա-ի սղումը կամ անկումը տեղի է ունեցել միջնավանկում: Այս երևույթը հատկապես հատուկ է կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին: Այսպես, Պարոն Կոստանդինի 1271 թ. դաշնագրում ունենք՝ հասկնալ, հավնել. Լևոն Գ-ի 1288 թ. արտոնագրում՝ մեռնիլ, պանրնջիլ, Սմբատի Դատաստանագրքում՝ նանչնալ, թագուր // թագվուր, գանկտվուր, գանկտել, սպաննել, տուզնվիլ և այլն, Մխ. Հերացու Զեքմանց Մխիթարության 1279 թ. ձեռագրում՝ դարտկել, հասկնալ, տաֆնալ, խոռնալ, անցնել, տապկած և այլն, Անսիդ Անտիոքա աշխատության մեջ՝ հարցնել, ասցել, գանկտել, մատղջցնել, դատստնել, ամրնալ, նանչել, ավտալ, ելնել և այլն, Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ...» աշխատության մեջ՝ ուժովնալ կամ ուժոռնալ, արձկնալ, հասնիլ,

տաճնալ, տաճցնել, հատնիլ, յաւելնալ, երևնալ, հաստնալ, ելնել, կատղիլ, սպիտկուց, սպիտկիլ, սպիտկութիւն, ցամբիլ և այլն, Ամիրզոյ վաթի «Ուսումն բժշկութեան» աշխատութեան հեղինակային ձեռագրում՝ պակսել, հասկնալ, բաժնիլ, հիւրնդուքիւն, հարցնել, հասնիլ և այլն, և այլն: Օրինակներ շնք բերում այլ հեղինակներից և այլ աղբյուրներից, որոնք ավելի հետին շրջանից են և լի են այս հնչյունափոխութիւնը վկայող օրինակներով:

բ) Ա-ի սղումը կամ անկումը բառաթեքման կամ ածանցման ժամանակ կատարվում է նույն հիմունքներով և վկայվում է վերը հիշատակված սլըզբնաղբյուրներում: Այստեղ շեշտի տակ գտնվող ա-ն բառաթեքման ընթացքում շեշտազրկվելով՝ հնչյունափոխվում է ը-ի կամ ընկնում: Այս օրինակաբանությանն են ենթարկվում ո՛չ միայն բազմավանկ բառերը, այլև այն երկվանկ բառերը, որոնք երկրորդ վանկում ունեն աս. ինչպես, օրինակ՝ ապրանք, գանկատ, դարպաս, հիւանդ, ճակատ, խանդակ, քաղաք և այլն: Մի քանի օրինակներ սկզբնաղբյուրներից. «...Արգիլէին զվանկներոյն կումաշն» (Հեռն Գ-ի արտոնագրում), «...մեր քաղքնոյն որ ի մեր ձեռք կան» (ն. տ.), «Քանց կարեն հաճէլ ու ասանէլ (չօտրն) խանդկազ» (Մմբ. Գատ.), «Չառառնէրոյն քանէրն» (ն. տ.), «Ժողովէ զամէն զքաղքնոյն եպիսկոպոսունքն» (ն. տ.), «Ապրնացն» (Անս.), «Ի դարպսէն» (ն. տ.), «Առնու զիր իրաւունքն դարպսովն» (ն. տ.), «Ի քաղքն» (ն. տ.), «մնաց զրկողն տուգնաց ներքև» (ն. տ.), «երկթէ միլ» (Ամիրզ. Ուս. բժշկ.), «քաղքին առնվելուն պատճառն» (ն. տ.), «պէտ առնէն հիւրնդին» (ն. տ.), «չաղջի վերին քարն» (ն. տ.), «Ի ճակտին վերայ է» (ն. տ.), «այն մեծ երկին» (<երակին), ի փայծղէն, բէրնին, ի խոչկէն (ն. տ.) և այլն:

12. Պետք է ենթադրել նաև, որ միջին հայերենի որոշ տարբերակներում (հատկապես արևելյան) բառական շեշտը ունեն որ այլ առանձնահատկութիւն: Հավանաբար այն վերջընթեր էր և իր բնույթով սուր: Այս ենթադրութեանը հիմք են տալիս սկզբնաղբյուրներում հանդիպող հնչյունափոխական այն դեպքերը, երբ բազմավանկ բառերում ընկնում է ո՛չ թե բառամիջի ձայնավորը և պահպանվում առաջին վանկինը, այլ ընդհակառակն՝ մնում է բառամիջինը և ընկնում բառասկզբի կամ առաջին վանկի ա-ն: Հաղբատի վանքի վիմական արձանագրութիւններում վկայված են նման ձևեր. այսպես՝ «եւ որ պկասցանել ջանա՝ նղոված է» (Կղ. Հաղբ. 145, 1061 թ.), «եթէ ոք այս գրոյս հակառ կա կամ պկսուցանել ջանա» (ն. տ. 156, ԺԱ դ.), «կատարողքն արհնին Այ, եւ զփանդին (<խափանողքն) դատին» (ն. տ. 171, ԺԳ դ.): Նույն վայրի 1067 թ. մի արձանագրութեան մեջ զուգահեռաբար գործածված են Սհակա և Սահակա սեռականի ձևերը (ն. տ. 157): Սրանց վրա կարելի է ավելացնել՝ «...ես Տիրապետ՝ Հրպետի որդիս վկայ եմ» (ԺԳ հձհ. 330, 1341 թ.) օրինակը, որտեղ Հայրապետ անձնանվան մեջ շեշտից առաջ սղվել ու հնչյունափոխվել են ա ձայնավորը և այ երկբարբառը: Միջնադարում տարածված բառաձև է Ռստակէս, Ռստակէս անձնանունը, որը առաջացել է Արխատակէս-ից՝ բառասկզբի ա-ի անկմամբ. այն վկայվում է առավելապես Վայոց ձորի, Սյունիքի, Վասպուրականի, Ռշտունյաց երկրի, Արևելյան Հայաստանի այլ վայրերում գրված ձեռագրերի հիշատակարաններում և արձանագրութիւններում (տե՛ս ԺԾ հձհ. I, II, III Գհվ. III և այլն): Ավելի հին վկայութիւն է՝ Գ. Հովս. հձ. 216, 1030 թ., 222, 1040 թ.:

Բառասկզբում ա>ը արձանագրվում է մի քանի բառերում: Նկատելի է, որ այդ հնչյունափոխութիւնը կատարվում է և ոնգայինից առաջ. ինչպես՝ ան-

կանել>ընկելի—«ի յոտներն այտոց ընկելի» (Մխ. Հեր. 50 բ), «կու ընկեին ի մեղանքն» (Անս. 35), «եւ թէ քահանայ ի վերայ ծառի կամ ի վերայ պատի քար դնէ՛ եւ ընկելի ու մարդ սպաննէ, նա այլ պատարագ չկարէ այնել» (Սմբ. Գատ. 32), «մաթղն զխելան կորուսանէ և ընկելի» (Գրիգ. 49), «է՛ր չի ընկելի յոտքն ի նորայ» (Հով. Երզնկ. 231), «ձուկն ի սիրոյ յանկարծ ընկելի կարթ» (Հով. Թլկ. 154) և այլն (այս բառաձևը հանդիպում է ամենուրեք), անկողին> ընգողին.—«պոռյքն յազգն դառնայ, զարթ ի յընգողնէն» (Անս. 47): Բարբառների հետագա աշխուժացմամբ XV—XVI դարերի մատենագրության մեջ ներթափանցում են բառասկզբի ա>ը հնչյունափոխության այլ օրինակներ, ինչպես՝ ընել (<անել<այնել<առնել), ըսել (<ասել), ըմպէն (<ամէն) և այլն:

13. Ա-ի մասնակի փոփոխություններից մեկը նրա e ձայնավորի վերածվելն է, որը ընդհանուր օրինաչափություն չի նկատվում, արձանագրվում է առանձին բառերի շրջանակներում. այսպես՝ «Մինչ ածէ զմահն ու մատ է, եւ անդորմ գրաւոն գայ, Ո՛չ ի ծեր կու խնայէ, ո՛չ ի մանուկ ՚ւ ո՛չ յերեխայ» (Ֆր. 293), «...մեր յոյժ երեխաւորին Սարգսին... և յոյժ երեխաւորն իմ» (ԺԴ հճ. 75—76, 1311 թ. Կիլիկիա), «...աղաչեմ յիշել ...գերեհաւոր եղբայրն իմ և զայլ ամենայն երեխաւորն իմ» (ԺԵ հճ. II, 102, 1458 թ. Աղթամար): Կարծում ենք, որ այս օրինակներում ա>ե փոփոխությունը կատարվել է առաջընթաց առնմանությամբ: Հետևյալ օրինակներում՝ «...զեղբարսն իւր զէլեֆսան և զԹաւաքալ» (ԺԵ հճ. I, 137, 1412 թ. Ոստան), «...զգուռն փակեցին և զբանլիքն առին, և այլ յերջել գնացին ի տունն Կարապետին... Յերջել զմակին, ներսիսուկս առին ու վերամբարձ տանէին... նա յերջեանց առին զվեղար վեղարգտակին» (ԺԴ հճ. 275—76, 1335 թ. Կիլիկիա), Ալեֆսան>էլեֆսան, առաջեալ>յերջե բառերում ա>ե փոփոխությունը պետք է կարծել, որ կատարվել է հտրնթաց առնմանությամբ: Նույն օրինաչափությամբ ունենք՝ յամել>յեմել—«...կարէ յեմել ի յիր տունն» (Անս. 25), «...ապա թե այլ յեմէ նա տարի մի և օր մի» (ն. տ. 15): Ա-ից առաջացած այդ ե-ն փոխվել է ի-ի յամեցուցանել>յամեցնել>յեմեցնել>յիմեցնել (Անս. 81) բառում:

Սանահինի 1356 թ. մի արձանագրության մեջ արծաթ բառի դիմաց ունենք երծաթ. ահա վկայությունը. «ետու: Ա: երծաթի խաչ ու այլ գրեանք» (Կղ. Սանահ. 152): Սարկաւազ բառի դիմաց մի հիշատակարանում Երկու անգամ ունենք սերկեւազ (Գ. Հովս. հճ. 908, 1236 թ.):

14. Մեր լեզվի այս շրջանում արձանագրվում է գործիականի ամբ վերջավորության ա-ի օ հնչյունափոխություն: Օրինակները թեև սակավ են, բայց որպես հոլովական վերջավորություն, պետք է կարծել, որ երևույթը օրինաչափ է եղել միջին հայերենի որոշ տարբերակների համար: Օրինակներ. «...Սպանախ նշի կաթամ... զայս զամէնս կաթամ ի բան պահէ» (Մխ. Հեր. Չեռ. 416, 30ա, 48ա), «իւր անձօմն կեցցումն այնէ» (Անս. 57), «...հաստատէ զհիլայքն իր անձօմն» (ն. տ. 33), «ունի խիսմն ընդ ձեռօմն» (ն. տ. 27) և այլն: Այս հնչյունափոխությունը թերևս կատարվել է մթ շրթնայինների ազդեցությամբ (բ-ն ընկել է հետագայում):

15. Գրաբարում ու-ն անկայուն ու թույլ ձայնավոր էր: Շեշտազրկությունից հնչյունափոխվում էր ը-ի կամ ընկնում: Այդ տեղի էր ունենում հատկապես բաղաձայնով սկսվող միավանկ և բազմավանկ այն բառերում, որոնց մեջ ու-ն գտնվում էր բառավերջի փակ վանկում: Ու-ի այդ հատկությունը պահպանվում էր նաև միջին հայերենի շրջանում: Հատկապես այն բառերն ու բա-

ուսմանը, որոնք ավանդաբար գործածվում էին միջին գրական հայերենում, ունի սղում կամ պահպանում էին գրաբարի նմանողությունը: Այդ օրինակափությանն էին ենթարկվում նաև այն նոր բառաձևերը, որոնց հարացուցային բաղադրիչները նախապես ունեին այդ փոփոխությունը, ինչպես, օրինակ՝ ջուր — ջրեք, բուն — բներ (= բներակներ) և այլն: Երկվանկ բառերի առաջին վանկի ուն, ինչպես գրաբարում, այստեղ ևս բառաթեքման ժամանակ մնում էր անփոփոխ, թերևս միջին գրական հայերենի շեշտադրության առանձնահատկության պատճառով, երբ բազմավանկ բառի առաջին վանկը կրում էր երկրորդական շեշտ: Այդ բանը հատկապես երևում է փոխառյալ բառերում. ինչպես, օրինակ՝ ճուլպա — «ճուլպալ իմէ» (Մխ. Հեր. 44ա), խուլպայգ — «խուլպայգով» ն. տ. 47բ), զուքամ — «զրած է ի զուքամին դուռնն» (ն. տ. 31ա), կուղպակ — «զնեցի հալալ ընչից իմոց կուղպականի» (ԴՏՎ. I, Անի, 44, 1036 թ.), «կուղպակնով» (ն. տ. 63, 1215 թ.) և այլն: Սակայն բառական ուղիղ ձևերում, երբ բազմավանկ բառում ուն գտնվում էր շեշտից դուրս, ընկնում կամ հնչյունափոխվում էր ր-ի, ինչպես, օրինակ՝ «կորսնէ առ եպիսկոպոսն զկարգն» (Սմբ. դատ. 35): Այս դիրքում ուն ընկնում էր հատկապես պատճառական բայերի ուցանել վերջավորության մեջ, ինչպես՝ կեցուցանել > կեցցընել, պաղեցուցանել > պաղցնել, նմանեցուցանել > նմանցնել, տաքացուցանել > տաքցնել և այլն: Պատճառականի ցրենել / ցնել վերջավորությունը միջին հայերենում տարածված և գրական լեզվի նորմայի հասած ձև է:

Փոխառյալ միավանկ և երկվանկ բառերի երկրորդ փակ վանկի ու-ի հընչունափոխությունը կայունացած չէ. վկայված են ինչպես շհնչունափոխված, այնպես և հնչունափոխված բառաձևեր. այսպես, օրինակ՝ կուրս — «կուրսեր» (Մխ. Հեր. 42բ. 47բ. և այլն), քափուր — «քափուրի կուրս արա» (ն. տ. 32ա), շաուր — «շաուրի լեզուով» (Անս. 9), դուկ — «թագաւորին կոստանդեա դուկի» (ԴՏՎ. I, Անի, 37, XIII դ.), բուրջ — «շինեցի զբուրջներս» (ն. տ. 4. XIII դ.) և այլն. իսկ մյուս կողմից՝ «շինեցաւ դուռնս եւ բրջներս» (ԴՏՎ. I, Անի, 7, 1206 թ.), ջալունջ — «գայ ջալրնջէ (= գանգատվում է, բողոք է հայտնում) ի դարպասն» (Անս. 51) «եփ ծնողքն մեռնին՝ նա կարենան ջալրնջել ի վերայ հայրենեցն» (ն. տ. 19) և այլն:

16. Այս բոլորից դուրս հայերենի ու ձայնավորը որոշակի դիրքերում և առանձին բառերում, ինչպես նաև բարբառային որոշ տարբերակներում, կրել էր և այլ փոփոխություններ:

Ամենարնդհանրական, գրական լեզվի նորմայի աստիճանի հասած օրինակափոխություն է ձայնավորից առաջ ու-ի Վ բաղաձայնի վերածվելը: Ձեռագրերում միջնադարյան գրիչները թեև այս դեպքում ևս ուղղագրության մեջ առաջնությունը տալիս են ավանդական ձևերին, բայց, այնուամենայնիվ, սկզբնաղբյուրներում բազմաթիվ վկայություններ կան կատարված փոփոխության մասին: Ըստ որում, հիշյալ դիրքում ու-ի Վ արժեքը գրության մեջ արտահայտվում է վ կամ ռ գրերով (ստորև բերվող վկայություններում, ավելի հավաստի լինելու համար, բերվում են միայն վ-ով օրինակներ): Կատարված փոփոխությունը վկայվում է առաջին իսկ ձեռագրերում: Այսպես, օրինակ՝ 912 թ. ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում՝ «...34Ա թվակաճիս» (Գ. Հովս. 109), 966 թ. գրված մի այլ հիշատակարանում՝ «ի թվականութեանն հայոց...» (ն. տ. 1021) և այլն:

Միջին գրական հայերենի ժամանակաշրջանում այս երևույթն արձանագրվում է տարբեր վայրերում գրված ձեռագրերի և վիճական արձանագրությունների մեջ, մի հանգամանք, որ վկայում է երևույթի ոչ միայն օրինաչափ, այլև համահայկական լինելը: Ահա մի շարք օրինակներ XII—XIV դարերի սկզբնաղբյուրներից. «Գնեցի ...զաւետարանս եւ տվի ի մեծահոշակ վանքս Մաղարդիս» (Գ Նովս. հձ. 451, 1173 թ.), «...ձեռնատվութեամբ...ընթերցվածոց» (ն. տ. 554, 1190—91 թթ. Այրիվանք), «...Գրեցաւ ի քվիին» (ն. տ. 739, 1208 թ. Սանահին), «...ստեղծվածք գործ գործաւորին» (ն. տ. 954, 1244 թ. Կիլիկիա), «...ի Ոն քվո ...տվաք զՄանթշա կէսն» (Կղ. Սանահ. 106, 1191 թ.), «տվաք ի Սանահինս... միաբանքս տվաք» (ն. տ. 133, 1221 թ.), «տվի հիւրատունն» (ն. տ. 162, 1275 թ.), «տվաք խաչ մեծածախս» (ն. տ. 154, 1291 թ.), «ի քվականիս հոոց» (Դհվ. III, Վայոց ձոր, 49, 1149 թ.), «ուխտ տվաք հերենիք... ա ժողովուրդ տվի յիշատակ հոգո իմո» (ն. տ. 51, 1259 թ. Վայոց ձորի արձանագրություններում բազմիցս՝ տվի, տվին, տվաք), «զԿոծմակոթն տվի սբ Առաքելոցս» (Դհվ. II, Տաթև. 21, 1281 թ.), «ի վերա հանգստարանի հար իմո եւ փվեր... իմ փվերն արնեն» (Կղ. Հաղբ. 175, 1189 թ.) «փվերոդոյ իւրոյ» (ն. տ. 259, 1225 թ.), «փվերոդին» (ն. տ. 184, 1233 թ.), «տվաք ճ դահեկան» (ն. տ. 168, 1253 թ.), «ի քվի ԶԺ» (ն. տ. 166, 1261 թ.), «բաժ ու տամդա շէին տվել» (Դհվ. I, Անի, 23, 1280 թ.), «տվաք զմեր պահէզն» (ն. տ. 40, 1293 թ.), «կատարեցի ...պատվական մարգարիտս...ի քվականից հայոց...» (ԺԴ հձհ. 31, 1304 թ. Երզնկա), «ես շէի հմուտ արվեստի» (ն. տ. 50, 1307 թ. Արճեշ), «ի քվականութեանն հայոց» (ն. տ. 70, 1310 թ. Վան), «հաճոյ քվեր ... փառս մատուցանէին տվողին» (ն. տ. 139, 1318 թ. Եղիվարդ), «...ոչ հաշվելով զծաշս ... և զտուրս արվեստավորացն» (ն. տ. 141, 1318 թ. Եղիվարդ) և այլն, և այլն:

Այդ հնչյունափոխությունը արտահայտվում էր նաև ու շաղկապի մեջ, երբ այն հանդես էր գալիս ձայնավորից առաջ. ըստ որում այդ երևույթը գրություն մեջ տարբեր կերպ էր արտահայտվում. կամ պարզապես ու-ի փոխարեն գրվում էր վ, կամ ու-ի հետ նաև վ: Այսպես, օրինակ՝ Պարոն Կոստանդնի՝ Սարվանդիքարի տիրոջ 1271 թ. դաշնագրի տեքստում ունենք՝ «Կու լինէր շատ զրոյց ի մեր մէնջ վ ի յիրէնցն»: «Անսիզ Անտիոքայ» թարգմանական աշխատության մեջ բարդ թվականի կազմում՝ «Դարպասն տայ իր վասն թուրքելոյ տասնվիաւթն ար, և տասնվիաւթն ար վասն իրացն որ կու շալնջվի... և հետ երկու տասնվիաւթնիս տվվի : խ : ար այլ» (Անս. 23): Նույն տեղում՝ որպես նախադասություններ կամ համազոր անդամներ շաղկապող բառ. «կամենայ դատստնիլ ու վ ուզել զիրաւունքն ի յիր խամէն» (ն. տ. 23), «տֆնդէ ու վ ուրանայ և ասէ թէ՛ Զէ» (ն. տ. 27) և այլն:

17. Մատենագրությունը որոշակի փաստեր է տալիս նաև u>o հնչյունափոխության վերաբերյալ, որը թեև բնորոշ չէ միջին հայերենի բոլոր տարբերակների համար, բայց որպես պատմական հնչյունափոխության երևույթ, հետաքրքիր է հայերենի ժամանակակից մի շարք բարբառներում առկա նույն երևույթի առաջին վկայությունը լինելու տեսակետից: Երևույթը արձանագրվում է արդեն իսկ X դարի սկզբնաղբյուրներում, ինչպես, օրինակ, Մլքե թագուհու ավետարանի հիշատակարանում՝ «Ծս Մլքէ ... հայոց քագոնի» (Գ. Նովս. հձ. 109, 912 թ.), Վայոց ձորում 990 թ. գրված մի արձանագրության մեջ՝ «բազում աշխատութեամբ եւ մեծ յսաւս բերի դոռն եկեղեցոյս. կանգնեցի

նշան սուրբ խաչիս զաւակաց արեւշատքեան» (ԴՏՎ. III, 41—42): Հետագա դարերում նույնպէս հանդիպում են նման վկայութիւններ, ինչպէս Տաթևի 1365 թ. մի արձանագրութեան մեջ «յանուն սրբոհու ամածնին» (ԴՏՎ. II, 30): Սրանց վրա պետք է ավելացնել մի քանի բառերի ու-ով և ու-ով հանդիպող զուգագրութիւնները, որոնք նույնպէս խոսում են վերը նշված հնչյունափոխութեան մասին: Օրինակ, Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատութեան № 416 ձևագրում արաբերենից փոխառված ۲۰۵ բառը բազմիցս հանդիպում է նուպայ // նաւպայ // նուպայ գրութիւններով: Նման զուգագրութիւններ կան Սմբատի «Տարեգրքում», որտեղ Ռուբէն անձնանունը հավասարապէս հանդես է գալիս և Ռուբէն ձևով: Ավելի լավ օրինակ է Գողթան զավատում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում հետևյալ վկայութիւնը. «բառնայ ի մենջ տէր աստուած զսով, զսուր, զմարախ, զթոթոռ, զջորակ (ջորեակ), զղալոյ» (ԺԵ, հՃԿ. II, 256, 1467 թ. Յղնա): Նման մի օրինակ է տալիս Հաղբատի արձանագրութիւններից մեկը՝ «նորոգումն ամենայն փրկչիս... Ասլայմազի դօսուրն Ալամն հա(ե)գաւ առ Քս» (ԿՂ. Հաղբ. 142, 1655 թ.): Թերևս լինեն և այլ օրինակներ: Չնայած այն բանին, որ երևույթն արձանագրող վկայութիւնները ժամանակի տեսակետից միասնական չեն, բայց տարածական տեսակետից որոշ չափով տեղայնացած են և հատուկ են հատկապէս Արևելյան Հայաստանի խոսվածքներին: Հատկանշական է նաև այն, որ Յղնայում գրված հիշատակարանում, որից բերված են ու>ո հնչյունափոխութեան օրինակները, միաժամանակ կան նաև ո>ու փոփոխութեան վկայութիւններ (ինչպէս՝ Գողթան> Գողթան, պարուն>պարուն): Դա կարևոր հանգամանք է, քանի որ այն բարբառներում, որոնց մեջ հին հայերենի ու-ն օրինաչափորեն փոխվել է օ-ի, հին ո-ն էլ իր հերթին փոխվել է ու-ի:

18. Այս ժամանակների գրավոր լեզվի մեջ իրենց արտահայտությունն են ստացել բանավոր-խոսակցական լեզվում ու-ի պատմական հնչյունափոխութեան և այլ երևույթներ:

Ու-ն ընկել կամ ը-ի էր փոխվել բառակցքում, հատկապէս դ-ից առաջ: Այսպէս, օրինակ՝ ուղղորդ բառի մեջ ընկել էր առաջին վանկը: Միջին հայերենի այն տարբերակները, որոնք դ-ով բառ չէին սկսում, դրանից առաջ որպէս հենարան դնում էին ը: Օրինակներ՝ «Ով խոհեմդ, թէ ապաշխարութեան հարցներն ինչուրվի պասն լմնել լինի, նա զորդ է» (Գ. Հովս. հձ. 665, XII դ. վերջը), «եւ էրէկ (=եկավ) զորդ ի Մլունն» (ԺԳ հձԿ. 295, 1337 թ. Այաս), բայց նաև՝ «Դարպասն պարտի որ ըզորդ լսէ զպարոնին գանգատն ու զնարա պացխունն և դատել ըզորդ» (Անս. 15), «եւ ըզորդ հասակն տասնուհինգ տարին է» (ն. տ. 17), «Գան ու ասեն որ հիւանդ է ըզորդ» (ն. տ. 25), «մէկն ըզորդ է և մէկն ծուռ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ժա), «Եւ ինքն ըզորդ է զետ այլ աղիքն» (ն. տ. իր): Այս նույն բառաձևից է նաև ըզորդել, ըզորդութիւն, ինչպէս՝ «լեզուն... զկերակուրն կու ըզորդէ, որ ծամելու հեշտ լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. լզ), «Եւ այս է ըզորդութիւնն, որ ցուցընել պիտի» (Անս. 67), «Դատաւորին պարտ է փնտռել ըզորդութեամբ հւ ընտրել զակամայ սպանութիւն» (Սմբ. Դատ. 32—33) և այլն: Այս բառաձևերը հանդիպում են և այլ սկզբնաղբյուրներում և հարատևում են մինչև մեր ժամանակակից բարբառները:

Ուղեղ բառի դիմաց ունենք ըզուղ, ըղեղ (հնարավոր են նաև առանց ը-ի ձևեր). ինչպէս՝ «ըզուղս կրակցի է: ...կերաւ զականջն ու զլեզուն ու զըզուղն... ո՞ւր է ըզուղն, ի կրակոյն էր արծել, ըզուղ շունէր» (ԺԳ հձԿ. 275, 1335 թ. Կի-



լիկիա), նույն բառաձևերը նաև բժշկագիտական աշխատություններում, ինչպես՝ «Եւ յառաջն յիշենք պատան իր ի յղուղն լինի, թէ որպէս լինի երակացն շարժիլն ըզեղին ցաւոյն և այն անդամոցն, որ ի յղեղանն ընծաին» (Գրիգ. 3), «տաքնայ այն մաշկն, որ ի վերայ զղանն է» (ն. տ. 52), «հաստատի ցան ի զուղն» (ն. տ. 54), «իրենն հարամ ըզուղ ասեն» (Ամիրդ. Ուս. բժշկ. իա), «ոսկր և ըզեղ և երակ...» (ն. տ. 67) և այլն:

Նույն երևույթը տեղի է ունեցել նաև ուղարկել բառում: Հայերենի որոշ տարբերակներում այն բառակազմում ստացել է յ հնչյունը՝ յուղարկել, ինչպես և ունենք վկայված. «...և թէ ոք դատրատնի ի դարպասն և յուղարկէ ու կոչէ զինք... և յուղարկէ հեծ մի այլ ... յուղարկէ դարպասն երկու լիճ ճորտ» (Անս. 25), այնուհետև ու-ն դ-ից առաջ հնչյունափոխվել է ը-ի, որը գրութայն մեջ սովորաբար չի արտահայտվում. ինչպես, օրինակ՝ «...վարդապետ մի յղրկեց զաշկերտն, թե զնա գլուխ գնէ... յղրկեց շորս արեղայ» (ԺՊ հճհ. 275, 1335 թ. Կիլիկիա), «յղրկեց պապն յաւգնութիւն» (Մանր ժմնկ. II, 61, XIII դ. Կիլիկիա), «Գող և ծեծվոր չէ պարտ յղարկել թագվորին» (Սմբ. Դատ. 12), «և թէ երէց ի հեծման մարդ յղարկէ թէ շուտ գնա ի յինա բանն» (ն. տ. 32), «ի սիրտն յղարկէ» (Մխ. Հեր. 46բ), «Զկորեկն յղարկէ յուղվ» (ԺԵ հճհ. II, 283, 1469 թ. Տալշող գյուղ), և այլն: Սրանց զուգահեռ արձանագրվում է նաև առանց յ-ի հավելման և դ-ից առաջ ու-ի անկմամբ ձևը (երբեմն հենց նույն սկզբնաղբյուրներում), ինչպես՝ «Եւ թէ այլ ասէ դեռ, թե հիւանդ եմ, նայ զրկէ դարպասն երկու լիճ ճորտ այլ» (Անս. 25), «...տղին շալակովն հանապազ հաց ինձ կու զրկէին» (ԺԵ. հճհ. I, 658, 1419 թ. Հերմոնի վանք), «Ոչ զրկեցեք քեզ նաֆաղայ... զրկէ որդանցըն նաֆաղայ» (Ցր. 332), «զարունն ի լերդէն ի սիրտն կու զրկէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. իբ), «զինքն ի սիրտն զրկէ» (ն. տ. իե) և այլն: Բարբառային մի այլ տարբերակ է աղարկել (<ուղարկել), որտեղ պետք է ենթադրել, որ ո՛չ թե ու-ն է հնչյունափոխվել ա-ի, այլ ու-ի անկումից հետո ա-ն ավելացել է որպես հենարան. օրինակ՝ «...մեզ նոր կարասէ գինի էր աղարկել մին գաւ» (ԺԵ հճհ. 429, 1478 թ. Վայոց ձոր), «աղարկեալ էր գայն մեծ-մեծ հացերն» (ն. տ. 359, 1474 թ. Վայոց ձոր), «Զինչ որ քեզ բաժին հասնի անդէնին, դու գայն աղարկէ (Հովհ. Երզն. 151. այս տեքստի մի այլ տարբերակում՝ յողարկէ):

19. Հին հայերենի ի ձայնավորը միջին հայերենում պահպանել էր հնչյունափոխվելու իր հատկությունը: Այստեղ ևս, բառաթեքման ընթացքում ի-ն շեշտակորույս լինելով փոխվում էր ը-ի կամ սղվում: Այդ մի կողմից արտահայտվում էր հին հայերենից ավանդված բառերում, ինչպես, օրինակ՝ «զղարքնի փուքսն» (Մխ. Հեր. 11բ), «կիսատաք ջուր ի վերայ մարմնոյն և ի գլխոյն շափէ» (ն. տ. 28բ), «սերկելի ուսպն» (ն. տ. 31բ), «ի մսին ջուրն արկ» (ն. տ. 42բ), «ի վերայ սրտին և լերդին պահէ» (ն. տ. 45) և այլն, և մյուս կողմից՝ այլ լեզուներից մուտք գործած օտար բառերում, ինչպես, օրինակ՝ «լինի որ վկայովն խիսմն դիմախօս է... վկայութիւն երես ի խամին» (Անս. 29), «և թէ վկայն լիճ (=ճորտ) շլինի, նա վանս (<վասն) այնոր շմնայ՝ յիշվէ վկայութիւն ի վերայ լճին» (ն. տ.), ինչպես նաև սրանից կազմված լուսին «ճորտություն, հպատակություն» բառում և այլն: Բառաթեքման ընթացքում ի-ի փոփոխութայն այս առանձնահատկությունը, որ գործում էր միջին հայերենի տարբերակների մեծագույն մասում, ժառանգություն էր հին հայերենից:



(ԴՏՎ. I, ԱԷԻ, 17, 1220 թ.), «Իրիցուն տեղն մասն մի բաժին նորայ տան» (Սմբ. Դատ. 35), «այրի իրիցկին» (ն. տ. 34), «Յոհանէս իրիցու» (ԺԴ ՏՃՏ, 36, 1305 թ.), «Ստեփանոս իրիցորդի» (ն. տ. 124, 1317 թ.), «յամսեանն յունուարի յիրեմ արն» (ն. տ. 77, 1311 թ.), «թէ դատրստեանն յիրիկունն լինայ լել... ինչի յիրիկունն» (Անս. 27), «քան գառջի իրիկունն» (Ամիրդ. Ուս. բժշկ. խզ), «եւ արլ յիշեմ զիրեզ գիճութիւն թէ որպես է» (ն. տ. լա) «գուշակէ որ պեղժ խառնուածքն իրիկամն հոտել է» (ն. տ. կը), «գուզն որ զետ ձէթ երկնայ, գուշակէ որ իրիկմին եղն կու հալի» (ն. տ. կզ) և այլն:

Բառասկզբի ե-ն փոխվել է բ-ի կամ ընկել եղունկն բառում, ինչպես՝ «...երբ ի վերայ դրնկանն կաթեցնես» (Մխ. Հեր. 39բ), «ըրընկունքն զերդ զարծուոյ ետին» (ն. տ. 45ա), «երկնայ սպիտակ ի դունկն է անուանի պիսակ եղենգան» (Գրիգ. 42), «մատնիշունն ուռից է, որ ի տաք մաղձէ լինի յդունկն և մատնն» (ն. տ. 45), «մատներուն ծարին ըղնկուվին թէ սենայ» (Ամիրդ. Ուս. բժշկ. հթ) և այլն:

Բառամիջում ե>ռ հնչյունափոխություն արձանագրվում է ցերեկ>ցորեկ բառում. այսպես՝ «զայս հապս գիշերն և ցորեկն ներքև լեզուին պահէ» (Մխ. Հեր. 48ա), «իւր բորիլն ցորեակն լինի քան ի գիշերն» (Գրիգ. 40), «գիշեր ու ցորեկ» (Յր. 492), «քանզի ցորեկն պատիկ էր» (ԺԾ ՏՃՏ. I, 387, 1428 թ. Խութ գավառ), «շատ աւգտէ թե գիշեր և ցորեկ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծբ) և այլն:

Ե-ն ընկել էր մի շարք բազմամասնկ բառերի միջնամասնկում, այսպես, օրինակ՝ «Գիտեան, որ բարի բարուք լինի» (Սմբ. դատ. 7), «ծախեն զինքն ու զիր տունն ու զինչ ունեայ» (ն. տ. 10, 14, 20, 21, 30 և այլն), «կարէ պարոնն ունեալ զլիճ ճորտուն ապրանքն» (Անս. 17, 9, 23, 27, 29 և այլն), «զէտ վայլէ իր ազգին» (ն. տ. 19), «Երսուն եւ ութ ամ էր նորա» (Յր. 316) և այլն: Այս փոփոխությունը թերևս պայմանավորված է եղել միջին հայերենի արևմտյան տարբերակների շեշտադրության առանձնահատկությամբ, երբ զլիսավոր և երկրորդական շեշտից դուրս գտնվող ձայնավորները թուլանալով՝ ընկնում էին:

Միջնադարյան սկզբնադրություններում արձանագրվում են նաև հին հայերենի եղբայր բառաձևին զուգահեռ աղբար, աղբե բարբառային տարբերակներ. այսպես, օրինակ՝ «զբուրն զՏիկին եւ զաղբարն Սիրն» (Գ. Հովս. հձ. 235, 1058 թ.), «ոչ որդի ունէր ոչ աղբէր» (ԴՏՎ. III, Վայոց ձոր. 59, 1296 թ.), «միաբանք սահմանեցին Ը ժամ... իմ աղբերաց հոգոյն» (Լ. տ. 78, 1284—92 թթ.), «մեր ախբար որդարս» (ն. տ. 37, 1292 թ.), «զհարազատ եղբայրն իւր զԱղբարիկն» (ԺԴ ՏՃՏ, 156, 1319 թ.) և այլն:

21. Ինչ վերաբերում է հին հայերենի է ձայնավորին, ևուպ այն բառական ուղիղ ձևերում հիմնականում մնում էր անփոփոխ, հնչյունափոխության ենթարկվելով միայն բառաթեքման ընթացքում, երբ շեշտադրվում էր: Հայտնի է, որ է-ն գրաբարում հանդես էր գալիս բառասկզբում՝ միայն միավանկ բառերում: Բազմամասնկ բառերում նրա տեղը վերջին վանկում էր (և՛ փակ, և՛ բաց): Երկու դեպքում էլ, բառաթեքման ընթացքում, շեշտից զրկվելով՝ հնչյունափոխվում էր ի-ի: Այդպես էր նաև միջին գրական հայերենում. ինչպես, օրինակ՝ «նշի ձիթով (<ձէթ) տապկած» (Մխ. Հեր. 21բ), «իշու (<էշ) կաթն տուր խմելոյ» (ն. տ. 39բ), դկին տիրոջն (<տէր) և սլին տիրոջն բնութիւնն լուծանին» (ն. տ. 42բ), «վասն սիրոյ» (<սէր) (ԺԴ ՏՃՏ. 521, 1376 թ.) և այլն, և այլն:

Հնից եկող այս օրինաչափությունը, պետք է կարծել, որ ընդհանուր շէր ամբողջ միջին հայերենի, նրա բոլոր դրսևորումների համար: Այդ առավել վերաբերում էր միավանկ բառերին: Բազմավանկ բառերի վերջին վանկի է-ն՝ մասնավորապես անձնանուններում, բառաթեքման ժամանակ կարող էր երկու վիճակ ունենալ: Գրանցից մեկում է-ն մնում էր անփոփոխ, իսկ մյուսում՝ հնչյունափոխվում էր ի-ի: Այս մասին մենք վկայություն ունենք մեր քերականների մոտ: Այսպես, Գրիգոր Տաթևացու «Լուծումն դժուարիմաց բանի» լրկասիրության մեջ կա հետևյալ տեղեկանքը. «Տես զհոլովդ է-ով ասէ և ոչ ինով կամ եշով. այսպէս՝ Արիստակէսի, Վրթանէսի, Մովսէսի, Ներսէսի. զի այս ստոյգ է և հայեցի քան զայն՝ Արիստակիսի, Վրթանիսի, Ներսիսի և այլն, զի այն աշխարհական է և արցախային»<sup>21</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ գրական լեզվի (գրաբարի) համար օրինաչափ են համարվում ոչ հնչյունափոխված ձևերը. հնչյունափոխվածները համարվում են ժողովրդական-բարբառային (նույնիսկ տեղայնացվում է՝ «արցախային»): Բայց ինչպես կարելի է նկատել, ժողովրդական համարված ձևերը ավելի հարազատ են գրաբարյան է-ի հնչյունափոխության բնույթին, հետևաբար ոչ հնչյունափոխվող բառաձևերն են շեղվում է-ի հիմնական օրինաչափությունից: Սակայն անկախ նրանից, թե դրանցից որն ենք ընդունում հին հայերենի համար օրինաչափ, քերականի վկայությունն ինքնին հաստատում է է-ի հնչյունափոխության գրական և ժողովրդական տարբերակների գոյությունը:

Վերն ասվեց, որ է-ն բառական ուղիղ ձևերում հիմնականում մնում է անհնչյունափոխ: Սակայն սկզբնաղբյուրներում հանդիպող հնչյունափոխված որոշ ձևեր վկայում են, որ եթե ո՛չ ամբողջ միջին հայերենում, ապա գոնե նրա բնավոր-խոսակցական տարբերակների մի մասում այն ևս որոշ դիրքերում սկսել էր փոփոխության ենթարկվել: Եղած օրինակները բոլորն էլ վերաբերում են է>ա հնչյունափոխությանը: Դրա առաջին վկայությունը արձանագրված է Վայոց ձորի 931 թվակիրն ունեցող մի արձանագրության տեքստում, որտեղ եղիշէ անձնանունը փորագրված է եղիշա ձևով՝ բառավերջի է>ա հնչյունափոխությամբ. ահա բնագրի այդ հատվածը. «32 թկիս ես եղիշա ի : 2 : կարգես առաջ արարի» (ԴՏՎ. III, 14): Բառավերջի դիրքում է>ա հնչյունափոխություն արձանագրվում է նաև Մարգարէ>Մարգարայ բառում (ա-ից հետո յ-ն համր է. այն գրվում էր միայն ըստ ավանդական ուղղագրության), թեև վկայությունները առաջինի համեմատությամբ ավելի ուշ շրջանից են, բայց այստեղ դրանք արդեն ընդունված բառաձևեր են. բերենք մի քանի օրինակներ. «հոգևոր եղբայրս մեր Մարգարայ» (ԺԵ հձՏ. I, 5, 1401 թ. Տաթև), «...քաջ րաբունապետիս մերոյ Մարգարայ վարդապետիս» (ն. տ. 216, 1418 թ. Վարագ), «...տէր Յովհաննէս եպիսկոպոսի և Մարգարայ վարդապետի» (ն. տ. 619, 1448 թ. Վան) և այլն: Երրորդ օրինակը վերաբերում է էական բայի ներկայի եզակի երրորդ դեմքի է-ին, որի այ գրությունը (այստեղ ևս յ-ն համր է) վկայված է Վայոց ձորի տապանաքարերից մեկի վրա. այսպես՝ «ի թիւ 2ԽԳ այս այ հանգիստ Ովանիսի (ԴՏՎ. III, 24, 1295 թ.): Այսպիսով, մեր ժամանակակից բարբառների էական բայի եզակի երրորդ դեմքի ա ձևի վաղեմությունը հասնում է մինչև XIII դարը. իսկ եթե նկատի ունենանք առհասարակ է>ա հնչյուն-

<sup>21</sup> Տե՛ս Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 324:

նափոխությունը, որը նույնպես կենդանի է մեր ժամանակակից մի շարք բարբառներում, ապա դրա առաջին վկայությունը հասնում է մինչև X դարը:

Վերը նշված Մարգարէ անձնանվան բառավերջի է-ն մի շարք բարբառներում ընկնելով՝ տվել է Մարգար, այժմ շատ սովորական, բառաձևը: Միջնադարյան շաղկապները այս ձևի համար նույնպես ունեն վկայություններ. այսպես, օրինակ. «ետու գրել սուրբ աւետարանս յիշատակ ինձ... էրէց եղբարց իմոց Թումի և տէր Մարգարին» (ԺԵ հճՏ. I, 336, 1427 թ. Շամբի-ձոր գավառ), «...յիշատակ ինձ, և ... Տիրատրին, Քրիստաւատրին, Իսրայէլին, Մարգարին, Թորոսին...» (ԺԵ հճՏ. III, 128, 1488 թ.), «յիշատակ ... մարս Զմուրթին, և եղբարն Մարգարին» (ն. տ. 362, 1424 թ.) և այլն:

22. Ո-ի կրած փոփոխության մասին մասամբ արդեն խոսվել է ձայնավորներն արտահայտող տառերի հնչյունական արժեքի քննության ընթացքում: Այդտեղ, ճիշտ է, շեշտը հիմնականում դրվել է այն բանի վրա, թե միջին հայերենի շրջանում հին հայերենի ո տառը հնչյունական ինչ արժեք էր արտահայտում, բայց հենց այդպիսի հարցադրումն էլ հնարավորություն էր տալիս բացահայտելու ո-ի, որպես ձայնավոր հնչյունի, դիրքային մի շարք փոփոխությունները: Ըստ որում, ինչպես ցույց էին տալիս փաստերը, փոփոխության ընթացքը ամբողջ միջին հայերենի համար միասնական և ընդհանրական չէր: Հայերենի որոշ տարբերակներ, ինչպես բառասկզբում, այնպես և բառամիջում, ո-ին տալիս էին նույն օ արժեքը, որ նշանակում է, թե դրանց մեջ հին օ հնչյունը փոփոխության չէր ենթարկվել: Դեռ ավելին՝ այստեղ հին ո-ն և ա-ից առաջացած օ-ն նույնանում էին: Տարբերակների մի այլ խումբ այլ կերպ է արժեքավորում ո-ն, թեև այստեղ ևս փոփոխությունների առկա վիճակը միասնական չէ: Ընթացիկ է միայն, որ այս խմբի բարբառներում ո-ի հնչյունափոխության ընթացքը նախապես եղել է միասնական: Այն ամենուրեք

սկսվել է ո-ի ՍՕ երկբարբառային արժեքավորմամբ՝ բառի մեջ գրաված բոլոր դիրքերում և այնուհետև խմբի առանձին տարբերակներում ստացել զարգացման տարբեր ընթացք: Այդ հիմքի վրա խոսվածքների մի մասում բառասկզբի

ՍՕ-ն զարգացել է ՎՍՕ-ի կամ պարզապես՝ ՎՕ-ի. այդ անցումը միանգամայն արդարացիված է, քանի որ հայերենի համար միանգամայն օրինալի է Ա>Վ հնչյունափոխությունը ձայնավորից առաջ: Այս դեպքում ո-ի երկբարբառային արտասանությունը մեծ մասամբ պահպանվում է նաև բառամիջի դիրքում: Այլ

բարբառներում նախնական ՍՕ երկբարբառային արտասանությունից զարգացել է Ա, ինչպես բառասկզբի, այնպես և բառամիջի դիրքերում: Դրան թերևս նպաստել է երկբարբառի հնչերանգի մեջ կատարված փոփոխությունը. հավանաբար այն ստացել է իջնող երկբարբառի երանգ, որի ժամանակ արտասանության մեջ շեշտվել է առաջին բաղադրիչը և այնուհետև ամբողջապես պարզվելով՝ արդյունքում ստացվել է Ա պարզ ձայնավոր:

Ո-ի երկհնչյունային և երկբարբառային փոփոխության վերաբերյալ փաստեր, ինչքան որ այդ հնարավոր էր մատենագրական տվյալներով, բերվել են վերը. այստեղ կանգ կառնենք հատկապես ո>ու հնչյունափոխության և այդ ձայնավորի այլ կարգի փոփոխությունների վրա:

Միջին հայերենի առանձին տարբերակներում կատարված ո>ու հնչյունափոխությունը հիմնավորվում է մի շարք փաստերով:

Նախ՝ մատենագրության մեջ, թեև ցաք ու ցրիվ, այս ու այնտեղ, բայց այնուամենայնիվ հանդիպում են բառաձևեր, որոնց մեջ ըստ կատարված հրն-

չյունափոխության ու հնչական վիճակի՝ ուն արտահայտված է ու գրով: Դա առավել ակնառու երևում է, երբ համեմատում ենք այնպիսի բառաձևեր, որոնց մեջ հերթագայվում են ո||օ||ու գրերը. այսպես, օրինակ՝ տումար սովորական գրությունը զուգահեռ ունենք նաև տամար // տումար (ԺԴ հճ. 146, 1318 թ.), տումար (ն. տ. 98, 1318 թ., 104, 1314 թ., 123, 1316 թ. և այլն), կաթողիկէ բառի դիմաց՝ կաթաղիկէ (ԿՂ. Հաղբ. 154, 1024 թ.), կաթողիկէ (Գ. Հովս. հճ. 766, 1214 թ.), Լամբրոն-Լամբրան (Գ. Հովս. հճ. 564, 1193 թ., 618, 1198 թ. և այլն), Լամբրուն (ն. տ. 632, 1198 թ., 631, 1198 թ., 901, 1233 թ., ինչպես նաև Սմբ. Տարեգ.՝ ամենուրեք և այլն), նաև Լապրուն (ԺԴ հճ. 68, 1310 թ.), Թումա կամ Թովմա—Թամա (Գ. Հովս. հճ. 510, 1185 թ.), Թումա (ԺԴ հճ. 42, 1306 թ., 132, 1317 թ. և այլն, և այլն): Այսպիսի եռագրություններ ունեն նաև այլ բառեր. ինչպես՝ կաթողիկոս-կաթաղիկոս-կաթուղիկոս, կաթողիկոսութիւն-կաթաղիկոսութիւն-կաթուղիկոսութիւն, Գոհար-Գաւհար-Գունար, նույնիսկ փոխառյալ բառերում՝ ջաւհար-ջունար (Ջեռ. 8029, 231 բ. 1376 թ.) և այլն: Ավելի հին վկայություններ են ո>ու հնչյունափոխության հետևյալ օրինակները՝ «Աստուած թուղու (<թողու) զուր (<զիր) զանցանքն» (Գ. Հովս. 235, 1058 թ.), «յառաջնորդութեամբ հար Թումասու» (ն. տ. 246, 1064 թ.), Լազարյան ճեմարանի ավետարանի անթվակիր մի հիշատակարանում՝ «մեղացս թուղութիւն ...Տեր պապուն Սիմաունի» (Գ. Հովս. հճ. 85) և այլն:

Այդ հնչյունափոխությունն առավել որոշակիությամբ հանդես է գալիս Գողթան գավառում գրված ձեռագրերի հիշատակարաններում: Այստեղ բացի Գունար, Թումա, Մուսէս և այլ տարածված անուններից, որոնք հանդես են գալիս և այլ վայրերում գրված սկզբնաղբյուրներում, ունենք նաև հետևյալ վկայությունները. «...նորոգեցաւ ի թուին ԶԺԶ (1467), ի թագաւորութիւն պարուն Զանհանշա միրզախս, ի հայրուպետութիւնն տեառն Ստեփանոսի արհեպիսկոպոս Գուղթան գաւառիս» (ԺԾ հճ. II, 256, 1467 թ. Յղնա), «...յիշեցէք յաղաւթս Շմաւուն արեղէն ... փառաւոր պատուով և ծածկուցով պահէ զուրբ աւետարանս» (ն. տ. 420, 1477 թ. Գողթան գավառ), «ցանկացող եղեալ աստուածային պատուիրանիս քահանայ ումն կրանաւոր ճգնայտեսակ տէր Կոստանդ» (ԺԾ հճ. III, 480, XV դ., Ագուլյաց վանք): Բերված վկայություններում հնչյունափոխությունը արտահայտված է ընդգծված պարուն>պաւուն, Գուղթան>Գուղթան, Շմաւուն>Շմասուն, ծածկեց>ծածկուց, ումն>ումն բառերում, որոնք ինչպես շեշտի տակ են, այնպես և շեշտից դուրս, ինչպես բառամիջում են, այնպես և բառասկզբում: Միջին հայերենի այս տարբերակում, ինչպես արդեն նշվել է վերը, հին հայերենի ուն էլ իր հերթին հնչյունափոխվում էր օ-ի (գրություն մեջ արտահայտվում էր ո-ով), որը ավելի հավաստի է դարձնում ո>ու հնչյունափոխության գոյությունը:

Կատարված հնչյունափոխություն օգտին են խոսում նաև այլ փաստեր, մասնավորապես այնպիսի բառաձևեր, որոնք խիստ փոփոխության ենթարկվելով և արտաքնապես այլևս նման չլինելով իրենց նախավոր ձևերին և վերջիններին հետ իրենց ունեցած կապի մթազնմամբ, մատենագրության մեջ հանդես են գալիս միայն հնչյունափոխված վիճակով: Այսպես է, օրինակ, մինչև որ կապակցությունը, որը միջին հայերենում հանդես է գալիս այլևայլ ձևերով: Նախնականին ավելի մոտ է մինչուր ձևը, որն արդեն ունի ո>ու փոփոխությունը. օրինակ՝ «իւր ակոյան ի տեղն մնայ և խիստ ցաւ լինի և մինչև

այն կենայ ցան՝ մինչուր ակուայն հանեն» (Գրիգ. 47): Այդ հնչյունափոխված մինչուր ձևից մ-ի անկամաբ ստացվել է ինչուր. օրինակ՝ «Ապա թող հանչաբ համբերէ ոք իր խամին, ինչուր աղէկ վկայք շինէ» (Անս. 33): Այս վերջին ձևից ածած ունենք՝ ինչուրվի, ինչպես՝ «ինչուրվի կարմունջն» (ԴՏՎ. I, Անի, 63, 1215 թ.), «ի դոանս վանիցս առչել պահէզն ու լանջն ինչուրվի Գլիձորի դունն, ինչվի դետն ու գետեղերն» (ԴՏՎ. I, Անի, 63, 1215 թ.): Ինչպես երևում է վերջին մեջբերումից, այդ բառաձևը ունի նաև ինչվի արտահայտությունը, որի մեջ ընկել են նաև հնչյունները (ինչուրվի>ինչվի): Այդ բառաձևը առկա է նաև Լևոն Գ-ի 1288 թ. գրած արտոնագրի տեքստում. ինչպես՝ «ինչվի կու երթային ի Տարս ու բաժտանէն թուխթ բերեր ի մինապանն, նա շարգիլեն»: Նույն փոփոխությունը կատարված է ցուր «մինչև, մինչև որ» բառում, որը կազմված է ց նախդիրից և ուր բառից՝ \*ցուր «մինչև որ». օրինակ՝ «եփէ, ցուր շուրն հատանի և կաթն մնայ» (Մխ. Հեր. 48ա), «եփէ ցուր մնա բ լիտր» (ն. տ. 48բ) և այլն:

Սրանք, անշուշտ, բարբառային ձևեր են, որոնք բանավոր լեզվից թափանցել են գրավոր լեզվի մեջ, բայց և մյուս կողմից վկայում են, որ ո>ու հնչյունափոխությունը խորթ չի եղել միջին հայերենին: Եվ եթե այն նրա որոշ տարբերակներում գործել է որպես օրինաչափ երևույթ, ապա բացաված չէ, որ այլ տարբերակներում այն սկսվել, ընդգրկել է որոշ բառեր, բայց հետագայում օրինաչափությունը չի տարածվել և մնացել է անավարտ:

Այնուհետև. միջին հայերենի առանձին տարբերակներում կատարված ո>ու հնչյունափոխության համար փաստարկ կարող է ծառայել նաև հետևյալը: Մատենագրության մեջ, սկսած X դարից, հանդիպում են բառաձևեր, որոնց մեջ աւ երկբարբառի փոխարեն ունենք ու. այսպես՝ աստանաւր>աստանուր, տաւն>տուն, յաւժարիլ>յուժարիլ, մաւրու>մուրու (սրանց մասին ավելի մանրամասն և վկայությունները տե՛ս աւ երկբարբառի հնչյունափոխությանը նվիրված հատվածում՝ § 31): Կարծում ենք, որ սրանց մեջ ո՛չ թե աւ-ն է հնչյունափոխվել ու-ի, այլ երկբարբառից առաջացած օ-ն, որը որոշ բարբառներում նույնանալով ո-ի հետ, այնուհետև ենթարկվել է նույն ո>ու փոփոխությանը:

Բառասկզբի դիրքում դ-ից առաջ ո-ն ընկել է հետևյալ բառերում. «եւ իւր պատճառն պլղամին հաստութիւն և ղորկութիւնն (<ողորկութիւնն) լինի» (Մխ. Հեր. 54բ), «նիւթն հաստ և ղորկուտ լինի» (ն. տ. 52ա):

23. Նկատելի են նաև ո>ա հնչյունափոխության օրինակներ, որոնք թերևս բացատրվեն որպես փոխադրեցական հնչյունափոխության մասնակի դեպքեր: Այսպես, օրինակ՝ վերը նշված կաթողիկոս // կաթուղիկոս // կաթաղիկոս բառաձևերի կողքին ունենք նաև կաթաղիկոս (Գ. Հովս. հձ. Լազարյան ճեմարանի ավետարանի հիշատակարաններում գործածված երկու անգամ. 228, 1046 թ., 329, 1118 թ. նաև հետագա դարերում գրված ձեռագրերի հիշատակարաններում), որը առաջընթաց առնմանության արդյունք է: Ետընթաց առնմանությունամբ ո>ա ունենք Յավհանէլս>Յաւանէլս անձնանվան մեջ՝ «յորժամ Յաւանէլս հայոց թագաւորն վախճանեցաւ» (Գ. Հովս. հձ. 223, 1041 թ.), ինչպես նաև Շնորհաւոր>Շնահաւոր անձնանվան մեջ, որ բազմիցս հանդիպում է հիշատակարաններում և վիժական արձանագրություններում. օրինակ՝ «Եւ Շնահաւոր Տփսեցին» (Կղ. Հաղբ. 168, 1253 թ.):

Գերանվանական մի քանի ձևեր, ինչպես նորա, նոբա, նոցա որոշ սկզբնաղբյուրներում ունեն նառա, նաբա, նացա արտահայտությունները. բերենք օրինակներ. «Գրեցաք զհամբարձումն արս զամէն եկեղեցիք նացա ժամն, մինչ ուխտս ի հաստատութե եւ զաւուրս հացն ի նացա անուն զսեղանիս» (ԿՂ. Սանահ. 106, 1191 թ.), «զամէն էկեղեցիքս նացա» (ն. տ. 123, ԺԳ դ.), «Պարպասն պատեհ է, որ դատէ ու իրաւունքն այնէ ի վերայ պարոնին գանկըտնացն, և նառա պացխնին զոր լսեն» (Անս. 15), «ըղորդ լսէ զպարոնին գանգատն ու զնառա պացխունն» (ն. տ.), «ազատեցաւ ի նառայ (ն. տ. 67, 83), «Ես Սարգիս որ տլի Թանատի վանից սբ Ստեփանոսի զՋատինայ վարին հողն նացան հայրենիք, նաբա տվին ինձ» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 32, XIV դ.) և այլն:

24. Նկատելի են նաև ո հնչյունի անկման կամ ը-ի փոխվելու դեպքեր: Այս փոփոխությունն հիմնականում կատարվում է բազմավանկ բառերի բառամիջում, երբ ո-ն շեշտից դուրս է. այսպես, օրինակ՝ «երակնին ժողվեալ լինին» (Գրիգ. 6), «զմատունսն պատրուէ» (ն. տ. 37), «Եւ շաղայմիսն, որ է պատրուտիլ ձեռացն և ոտիցն, ի սև մաղձէ լինի. և իւր նշանն յայտնի պատրուտիլն է» (ն. տ. 45), «բորբւէ և շինէ քամտուկ ի կուրծքն» (ն. տ. 106), «բորբւէ արիւն և շարան» (ն. տ. 145), «խոցուէ զերդ նետով» (Մխ. Հեր. Ձեռ. 416, 25բ), «ժողվել» (Սմբ. Դատ. 29 և այլն), «ժողվել տայ ի դարպասն» (Անս. 13, 15 և այլն), «ի պարճութիւն Ադիբեկի» (ԺԾ հճհ. II, 81, 1457 թ. Յիպնա վանք), «...կու ասէն թէ զխատի մի տաճկնին այսացիք կտտրել են» (ԺԳ հճհ. 274, 1335 թ. Կիլիկիա) և այլն, և այլն:

Ո-ն ը-ի է փոխվում նաև դերանվանական ձևում, այն էլ ոչ ամենուրեք, այս փոփոխությունը արձանագրվում է արևելյան որոշ բարբառներում, օրինակ՝ «նրայ բաժին մի տէք... ես նրայ սրբութեան համար» (ԺԾ հճհ. 657, 1419 թ. Հերմոնի վանք, Վայոց ձոր):

25. Գրաբարյան ը-ն միջին հայերենում համարյա թե մնում է անփոփոխ: Այդ թերևս պայմանավորված էր նրանով, որ լինելով հայերենի ամենաթույլ ձայնավորը, ը-ն իր վրա էր վերցնում նաև այլ ձայնավորներից հնչյունափոխված վանկարարի դերը: Նրա ծանրաբեռնվածությունը ավելի էր մեծանում միջին հայերենի շրջանում, քանի որ այստեղ բացի աւ-ից և ի-ից՝ ը-ի էին փոխվում նաև մյուս ձայնավորները:

Այն հաստ ու կենտ օրինակները, որոնց մեջ վկայվում է ը-ի փոփոխությունը, հիմնականում վերաբերում են գաղտնավանկի և երբեմն էլ բառասկզբի շփական+պայթական կապակցությունից առաջ արտասանվող ը-ին:

Բառամիջում ը-ի փոփոխությունը հիմնականում կապված է հաջորդ վանկի ձայնավորի բնույթի հետ, որի առնամանությամբ ը-ն կամ նույնանում է նրա հետ, կամ մոտենում ըստ արտասանության տեղի: Այդ տիպի փոփոխություններ են արձանագրվում հետևյալ օրինակներում. պտուկ>պուտուկ. «յորժամ առնուն ջերմն ջուր և արկանեն ի հով պուտուկ, անպատճառ տաքնայ հով պուտուկն ի ջերմ ջրէն, ապա թե առնուն հով ջուր և արկանեն ի տաք պուտուկ, նոյնպէս տաքնայ հով ջուրն ի տաք պուտուկէն. արիւնակ է պուտուկն շոր և պինտ անդամոցն» (Մխ. Հեր. Ձեռ. 416, 1279 թ. 11ա), «ի քարէ պուտուկ արկ» (ն. տ. 42ա), «երբ պուտուկ կամ պղնձի որ ի վերայ կրակի լինի» (Վստկ. 13) և այլն: Դժուար>դժար>դիժար. որի մեջ ենթադրելի է, որ աւ-ն ունեցել է առաջնային շարքի ձ-ի որակ, որի ազդեցությամբ էլ գաղտնավանկի ը-ն փոխվել է



ի-ի. «գիտեմ, տէր; քեզ չէ դիժար, ազատել զհիւանդս ի ցաւէն» (Խաչ. Կեչ. 140), «թի շոր լինի՝ դիժար է զրուցելու» (Ամիրդ. Ուս. բժշկ. լգ). ծմել>ծիմէլ՝ ետընթաց թերի առնմանությամբ. «թաղթ և մաշ և վլիտան, որ է ծիմէլ» (Մխ. Հեր. 40ա), դրի>դիրի՝ ետընթաց լրիվ առնմանությամբ. «վասն այն դիպաւ ոտքս ի քարի, որ աւելի ջանք չի դիրի» (Յր. 288), նույնը նաև՝ ցիմ>ցիմի. «զիր շուրն լեղի է արել այնոր համար, որ ճանճ և ցիմի ի մէջն չի մտէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. լգ), «եւ թե շատ լինի և քիչ գիճութիւն՝ գուշակէ ցիմի լի-նի» (ն. տ. հգ) և այլն:

Նկատելի է ը-ի հնչյունափոխություն բառասկզբում և բառամիջում՝ ստ, շա կապակցություններից առաջ. ինչպես՝ «ստամոքսն յիստակի» (Մխ. Հեր. 26ա), «կաթն սբ և յիստակ» (ն. տ. 41ա), «տալ... զխիչիփարն ի ճանկերոյն յիստակած» (ն. տ. 50), «եւ անդ յիստակի ի պղտորութենէն... զլեղի նուշն ծե-ծեն ի մէջն արկանեն, շուտ յիստակի» (Վստկ. 5), «զինքն նոյնպես յիստակ տեսանես» (ն. տ. 11), «քակեցէք զիշտեմարանս իմ և մեծագինս շինեցէք» (Չեռ. 8030, 81ա), «թէ ես յայտաւարանս յոսկելն յիշտապել եմ ու անփոյթ առնել, նա աստուած զիմ մեղքն ոչ թողու... յիշտապաւրքն ամօթով լինին» (ԺԵ հձԿ. I, 228, 1419 թ. Ոստան) և այլն:

Սակայն այս փոփոխությունները մասնակի բնույթ ունեն և հատուկ են եղել միջին հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների մի մասին միայն:

26. Ձայնավորների պատմական փոփոխության վերը նկարագրված երե-վույթները, անշուշտ, կատարվել են տարբեր պատճառներով:

Բառական ուղիղ ձևերում ձայնավորների սղման կամ ը-ի փոխվելու հիմ-նական շարժառիթը անպայմանորեն եղել է միջին հայերենի շեշտադրության առանձնահատկությունը: Հենց այն հանգամանքը, որ երկվանկ և բազմավանկ բառերի թեքման ժամանակ, բացի ի, ու ձայնավորներից այդ փոփոխությանն էին ենթարկվում նաև մյուս ձայնավորները, հիմք է տալիս ասելու, որ բառա-կան ուղիղ ձևերում ևս բառամիջի ձայնավորների սղումը կատարվել էր շեշտի ազդեցությամբ: Ըստ որում այս հնչյունափոխությունը խիստ տիպական է կի-լիկյան հայերենի և միջին հայերենի արևմտյան այլ տարբերակների համար: Այստեղ թեև ո և ե ձայնավորների հնչյունափոխությունը արձանագրվում է սակավ օրինակներով, բայց դա բացատրվում է ո՛չ թե օրինաչափության ան-հետևողականությամբ, այլ միայն նրանով, որ սվյալ դիրքում, ա-ի համեմա-տությամբ, մյուս ձայնավորները ավելի քիչ հաճախականություն ունեն:

Բառասկզբում կատարված փոփոխությունները հիմնականում արձանա-գրվում են հին ձայնորդներից առաջ ընկած դիրքում:

Ձայնավորների հնչյունափոխության մյուս դեպքերը պայմանավորված չեն շեշտով: Իրանց մի մասի մեջ կատարված փոփոխությունները պարզապես արդյունք են հարևան հնչյունների ազդեցության և այս իսկ տեսակետից էլ դիտելի են որպես փոխազդեցական կամ դիրքային փոփոխություններ:

Միջին հայերենի բանավոր-խոսակցական որոշ տարբերակներում նկա-տելի է նաև մի այլ օրինաչափ երևույթ, երբ ձայնավորների փոփոխությունը չի կարելի բացատրել ո՛չ շեշտով և ո՛չ էլ հարևան հնչյունների ազդեցությամբ: Այդ հատկապես վերաբերում է ա>ե, ս>ու, ե>ի, ինչպես նաև ե>ա, ու>ո, ի>ե փոփոխություններին: Այս շարքերի համադրությունից երևում է, որ

եթե մի դեպքում ավելի լայն բացվածքի ձայնավորներն են փոխվում ավելի նեղերի, ապա մյուս դեպքում կատարվում է հակառակը՝ նեղ բացվածքի ձայնավորներն են փոխվում ավելի լայն բացվածքի ձայնավորների. ընդ որում, այդ անցումները կատարվում են նույն շարքի սահմաններում, այսինքն՝ երբ փոխարկվող և փոխարկված հնչյունները մնում են արտաբերման նույն ոլորտում: Այսպես, ու-ն և ու-ն, որոնք փոխարկվում են մեկը մյուսին՝ նույն ետնալեզվային շարքի շրջանայնացած ձայնավորներ են, այն տարբերությամբ, որ ու-ն ու-ի համեմատությամբ ունի ավելի վերին աստիճանի և ավելի նեղ բացվածքի արտասանություն: Նույնը վերաբերում է նաև ե-ին և ի-ին, որոնք որպես առաջնային շարքի ձայնավորներ իրարից տարբերվում են լեզվի բարձրության և բացվածքի աստիճանով: Սրանց մեջ թերևս բացառություն կարելի էր համարել ա>ե և ե>ա զույգերը, բայց այստեղ էլ պետք է կարծել, որ ա՛յն ա-ն, որ տեղաշարժվում էր է-ի, ոչ թե ետնալեզվային ձ-ն էր, այլ նրա առաջնալեզվային ստորին բարձրացման տարբերակը՝ ձ-ն, որը նույն շարքի միջին բարձրացման e-ի հետ գտնվում էր նույնպիսի հարաբերության մեջ, ինչպիսիք էին մյուս զույգերը:

Ձայնավորների այս տեղաշարժերը որպես համակարգային օրինաչափություններ շատ տարտամ ձևով են արձանագրվում միջին հայերենի սկզբնաղբյուրներում, թեև դրանցից մեկը (ո>ու և ու>ո) շատ որոշակիորեն վկայվում և տեղայնանում է Գողթան գավառում: Այնուամենայնիվ, ինչպես այս, այնպես և մյուս հնչյունափոխական երևույթների արժեքը կայանում է նրանում, որ դրանք առաջին պատմական վկայություններն են այն փոփոխությունների, որոնք այժմ արձանագրվում են մեր ժամանակակից բարբառներում:

#### ԳՐԱԲԱՐԻ ԵՐԿԱՐԱՐԱՌՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

27. Գրաբարում, ձայնավորներից բացի, վանկարարների արժեք ունեին նաև երկբարբառներն ու եռբարբառները: Գրանք ձայնավորների կամ ձայնավորի ու ձայնորդի սերտ զուգորդությամբ արտաբերվող բարդ հնչյուններ էին: Գրաբարի երկբարբառներն էին՝ այ, աւ, եա, իւ (եւ), ոյ, տ (վերջինս միայն հոլովական վերջավորության մեջ). եռբարբառները՝ եայ (իայ՝ միայն բառում), եաւ, տյ (վերջին երկուսը նույնպես հիմնականում հոլովական վերջավորության մեջ): Երկբարբառներից այ, աւ, իւ (եւ)–ը շեշտի նկատմամբ իներտ էին, այսինքն՝ նրանք բառական անկախ ձևերում կարող էին լինել ինչպես շեշտի տակ, այնպես և շեշտից դուրս, այնպես որ շեշտագուրկ լինելիս հնչյունափոխության չէին ենթարկվում. օրինակ՝ փայտ–փայտի, փայտակերտ. ձայն–ձայնի, ձայնարկու. աւգուտ, աւգուասէր. կարատ, կարատաճամ, կարատաճւ. հիւր–հիւրամեծար և այլն: Սրանց հակառակ, եա, ոյ երկբարբառները և եայ, եաւ, տյ եռբարբառները ունեին որոշակի դիրքային կիրառություն. հանդես էին գալիս միայն բառավերջի շեշտյալ վանկում և շեշտի նկատմամբ զգալուն էին, այսինքն՝ բառաթեքման կամ բառաբարդման ու ածանցման ժամանակ շեշտակորույս լինելով՝ հնչյունափոխվում ու վերածվում էին պարզ ձայնավորների. այսպես, օրինակ՝ ատեան–ատենի, ատենապետ. մատեան–մատենի, մատենագիր. երևոյթ–երևութի, երևութական. ծածկոյթ–ծած-

կութի. պաշտաւնեայ-պաշտաւնէի. աշտեայ-աշտէի և այլն: Շեշտի հետ կապ-ված այս առանձնահատկութիւնն է հենց, որ որոշակի դեր է խաղացել երկ-բարբառների ու եռաբարբառների մի մասի հետագա պատմական հնչյունափո-խութեան համար:

Արդեն իսկ գրաբարի դասական շրջանում նկատելի է որոշ երկբարբառ-ների փոփոխութիւն (ընկեաց>ընկէց): Գրաբարի ետդասական շրջանում սկիզբ առած երկբարբառների ու եռաբարբառների պարզ ձայնավորի վերածվելու տենդենցը հետագա դարերում սկսում է ավելի ծավալվել և ընդհանրանալ՝ հայերենի բանավոր խոսակցական լեզվի առանձին տարբերակներում: Միջին հայերենի ժամանակաշրջանում այդ փոփոխութիւնները, որոշակի օրինաչա-փութիւններով, արդեն ավարտված իրողութիւններ են: Ըստ որում, բանա-վոր-խոսակցական լեզվի դրսևորումներում հիմնականը հին երկբարբառների և եռաբարբառների վերացումն է, նրանց վերածվելը պարզ ձայնավորների, այն դեպքում, երբ բանավոր լեզվում կատարված փոփոխութիւնների հիմքի վրա իմաստավորվում են դրանց նոր արտասանութիւնները որպես հնչյունա-կան կապակցութիւններ՝ հատկապես հին գրական լեզվի և նրա ազդեցու-թյամբ գրավոր լեզվում մուտք գործած բառաձևերի մեջ: Այսպիսով, քննարկ-վող լեզվական շրջանում գրաբարի երկբարբառներն ու եռաբարբառները այլևս հին որակը չունենին. նրանք ավանդական արտասանութեամբ գիտակցվում էին որպես հնչյունական կապակցութիւններ, իսկ բանավոր-խոսակցական լեզվում պարզապես վերածվել էին պարզ ձայնավորների:

Քննենք դրանց փոփոխութիւններն առանձին-առանձին:

28. Գրաբարյան այ երկբարբառը միջին հայերենյան տեքստերում այն-տեղ, որտեղ արտահայտվում էր ավանդական գրութեամբ, ընկալվում էր որ-պես երկհնչյուն այ: Հատկապես կիլիկյան գրական հայերենում, որի վրա առավել զգալի է հին լեզվի գրավոր ավանդների ազդեցութիւնը, բնագրերում առավելութիւն է տրվում այ գրութեանը. ինչպես՝ այս, այդ, այտ, այն, այտոր, այտոր, այնոր, հայր, մայր, եղբայր, այրուկին, այրիկ և այլն, թեև այստեղ ևս նկատելի է խոսակցական լեզվում կատարված փոփոխութիւնների ներթա-փանցում գրավոր լեզվի մեջ: Գրաբարյան այ երկբարբառի այ երկհնչյունային արժեքը բացահայտվում է հատկապես փոխառյալ բառերում, որոնց մայր ձևերի ai // ay երկհնչյունները հայերենում տառադարձվում են այ-ով. ինչպես, օրինակ՝ ֆր. plaid=բլայթ, որից և բլայթել «դատարանում պաշտպանվել» (Անս. 19, 23, 33), հֆր. maistre=մայստր (Սմբ. Տարեգ. 188, 199, 218, Կի-լիկյան դաշնագրերում), արբ. maydan=մայտան «հրապարակ» (Սմբ. Տարեգ. 51), հֆր. bail=պայլ «պարոնի փոխանորդ» (Անս. 9), որից պայլութիւն (Անս. 11, 17), հֆր. saisie=սայզայ, որից սայզել «գրավ դնել» (Անս. 23, 57), հֆր. failier=ֆայլել «դատի մեջ պարտվել» (Անս. 61, 63) և այլն:

Անշուշտ, մատենագրութեան մեջ հանդիպում են նաև այնպիսի բառաձևեր, որոնց մեջ այ-ը ակնհայտորեն երկհնչյունային կամ երկբարբառային արժեք չունի, ինչպես հետևյալ բառաձևերում՝ տանայատճառ (Գ. Հովս. հճհ. 556), պատմայգիրք (ն. տ. 975), գերայհոշակ (ն. տ. 36), սրբայսէր (ն. տ. 45), համայշուռնչ, մեղսայքալիչ (ն. տ. 49), աստուածայպահ, աստուածայնուագ, բազմայշարշար (ն. տ. 77) և այլն, և այլն: Նման օրինակներում յ-ն հավելա-կան է, և ինչպես երևում է, դրվել է բարդութիւնների մեջ և հողակապից հե-տո և պարզապես սխալ գրչութիւն է, չպայմանավորված ոչ մի հնչյունափո-

փոխական երևույթով<sup>22</sup>։ Այս տիպի գրչություններում յ-ի առկայութիւնը, թեր-  
ևս, պետք է բացատրել նրանով, որ բարդության առաջին եզրը ա հոդակապի  
հետ գիտակցվել է որպէս մի ամբողջութիւն և վերջում ստացել յ՝ ըստ ուղղա-  
գրական այն կանոնի, թե բառավերջի ա-ից հետո միշտ գրվում է կիսաձայն յ։

Հին գրական հայերենի այ երկբարբառը իր երկհնչյունային արտահայ-  
տութիւնից բացի, մատենագրութիւն մեջ հանդես է գալիս նաև պարզ ձայնա-  
վորի արժեքով։ Դա պատմականորեն կատարված փոփոխութիւն է, որ տեղի  
էր ունեցել հայերենի կենդանի-խոսակցական դրսևորումներում և իր արտա-  
հայտութիւնն էր ստացել նաև գրավոր լեզվում։ Կիլիկյան հայերենի մեջ նման  
փոփոխութիւնները գրական լեզվի նորմա չեն. դրանք գրավոր լեզվում արձա-  
գանքներն են բանավոր-խոսակցական լեզվում կատարված հնչյունափոխական  
տեղաշարժերի։ Այնուամենայնիվ, այն, ինչ հետագայում որպէս օրինաչափ  
երևույթ մուտք է գործում գրավոր լեզվի սահմանները, արձանագրվում է նաև  
այս շրջանում։ Դեռ ավելին, մատենագրական փաստերը ցույց են տալիս, որ  
այ երկբարբառի (և առհասարակ բոլոր երկբարբառների) պարզ ձայնավորի  
վերածվելը սկսվել էր միջին հայերենի նախորդ շրջանում։

Այ-ի պատմական փոփոխութիւնը սկզբից ևեթ գնացել է երկու հիմնական  
ուղղութիւններով. այ>ա և այ>է։ Փաստերը ցույց են տալիս, որ առաջինը  
ծավալվում և օրինաչափ է դառնում առավելապէս արևմտյան, իսկ երկրորդը՝  
արևելյան բարբառներում։ Գրական լեզվում այդ փոփոխութիւնները նախա-  
պես թույլ արտահայտութիւն են ստանում. հետագայում ավելի հաճախանում  
են դրանց գրավոր վկայութիւնները։ Բերենք օրինակներ նախ այ>ա հնչյու-  
նափոխութիւն վերաբերյալ. այսպէս՝ «զաղբարն Սիրն» (Գ. Հովս. հձ. 235,  
1058 թ. Կիլիկիա), «չիշեսջիբ... և մարն իմ» (ԺԴ հձհ. 27, 1304 թ. Կիլիկիա),  
«զստացող սորա... զտէր հարպետն Վրթանէս... Վրթանէս հարպետն ընչիւր  
խնդրեաց... ի Վրթանէս հարպետիս ազգէ... ի հարպետ Վրթանիսէս» (ն. տ.  
421—422, 1356, Ղրիմ), «ով եղբար» (Գ. Հովս. հձ. 591, 1195 թ.), «եւ որ  
կարդաք և ընդօրինակէք» (ն. տ. 686, 1201 թ. Երզնկա), «Որք կարդաք զիս  
յաղաւթս յիշեցէք» (Դհվ. I, Անի, 7, 1222 թ.), «կանգնեցի զսինս զաս» (ԿՂ  
Սանահ. 114, 1181 թ.), «զըռգիբն վարէ և հանէ յիրմէ» (Մխ. Հեր. ձեռ. 416, 24ա),  
«եթէ որ մշակ վարձէ ու առանց խնամոց հանցչաք շատ հալածեցնէ ի բան»  
(Սմբ. Դատ. 18, վերջինիս համար հմմտ. նույնի հայնց ձևը՝ էջ 9, 15, 21, 26,  
27 և այլն), յերկանք (<երկայն), փածղան (<փայծաղան), վաթել (<վայթել),  
լանք (<լայնք), վար (<վայր), աս (<այս), հանց և այլն՝ բժշկապետ Գրիգորի  
սի աշխատութիւն մեջ, թեև պետք է նշել, որ այստեղ ևս, ինչպէս միջնա-

<sup>22</sup> Տարօրինակ է, որ Կարսը վկայակոչելով այս կարգի գրչութիւնները (նրա մոտ՝ աս-  
տուածայաճ, ըզտայբեն, ձեռնայորեց), սրանք ևս կովան է դարձնում ապացուցելու կիլիկյան  
հայերենում այ>ա հնչյունափոխութիւնը։ Նա կարծում է, որ եթե նման բառաձևերում այ գրու-  
թյան մեջ յ-ն համր է, և այ-ը ամբողջութեամբ մենաբարբառի արժեք ունի, ապա կիլիկյան հա-  
յերենում այ երկբարբառը արտասանվում էր a (տե՛ս Karst, նշվ. աշխ., էջ 23)։ Այդ միտքը  
ապացուցելու համար նա վերցնում է նաև բառավերջի դիրքը, ուր հանձնա, գրաբարից ավանդված  
բառերի մեջ, բառավերջի յ-ն (ա-ից հետո) գրութիւն մեջ բաց է թողնվում, ստեղծելով նույն  
բառի այ-ով և ա-ով զուգահրոթիւններ (ձառայ || ձառա, բահանայ || բահանա, Սմբատայ ||  
Սմբատա և այլն)։ Սակայն պետք է նկատել, որ բառավերջի բաց վանկում այ-ը երկբարբառ չէ,  
և այս դիրքում յ-ն պարզապէս ընկել է։ Իսկ որ կիլիկյան հայերենում տեղի էր ունեցել այ>ա  
հնչյունափոխութիւն, հատկապէս նրա բանավոր-խոսակցական տարբերակում, ապացուցվում է  
անմիջական փաստերով։

դարձան վաղ, և հատկապես կիլիկյան աղբյուրներում, հիմնականը, այնուամենայնիվ, այ գրության պահպանումն է:

Այ>ա հնչյունափոխության երևույթը ավելի լայն տարածում է ստանում *XIV—XV* և հետագա դարերի գրավոր լեզվում: Այսպես, Ամիրզողլաթ Ամասիացու (*XV* դ.) երկերում և հատկապես «Ուսումն բժշկութեան» հեղինակային բնագրում (*Ձեռ. 8871, Ժամ. 1459 թ.*) այ>ա հնչյունափոխության գրավոր արտահայտությունը գրական լեզվի նորմայի արժեք է ստանում. այստեղ ունենք. այլ>ալ, այծ>ած, այն>ան, այնր>անոր, այս>աս, այսր>ասոր, այր>արիկ, երկայն>երկան, երկայնութիւն>երկանութիւն, ծայր>ծար, ձայն>ձան, մայր>մար, վայր>վար, վայրել>վարել և այլն, և այլն, թեև այստեղ ևս հին գրական լեզվի ազդեցութեամբ օգտագործվում են նաև այ-ով ձևեր, բայց քանակային այլ հարաբերակցությամբ:

Այս նույն հուշարձաններում առանձին բառերում արձանագրվում են այ>է հնչյունափոխության մասնակի դեպքեր, որոնք թերևս այլ բարբառային ներթափանցումների արտահայտություններ են. ինչպես, օրինակ՝ «երեք հետ պատե՛հ է որ ձենել տայ» (*Սմբ. Դատ. 9*), «յայս օրվնէս ինչվի ժե օր, և յեգցենէ ի ժե օր և յեգուցն մէկայն» (*Անս. 13*) և այլն: Սակայն սրանք վերը նշված հուշարձաններում որակ չեն կազմում և ընդհանուր առմամբ տիպական չեն արևմտյան բարբառների համար:

29. Նույն ժամանակներում միջին հայերենի այլ տարբերակներում շատ որոշակիորեն ընդգծված է այ>է հնչյունափոխությունը, հատկապես Վասպուրականի, Սյունիքի, Արարատյան գավառի, Վայոց ձորի և Արևելյան Հայաստանի այլ վայրերի մշակութային օջախներում ստեղծված ձեռագրերում ու պատմական հուշարձանների վիմական արձանագրություններում: Բերենք այս օրինաչափությունը վկայող օրինակներ. «Որ կարդէ՛ք կամ արինակէք» (*ԺԴ հճ. 70, 1310 թ. Վան*), «յիշեցէք զտէ՛ր իմ» (*ԺԵ հճ. I, 128, 1459 թ. Աղթամար*), «յիշեցէք և զեղբայրս մեր զԹումայ կրանաւոր... մինչ Թումէս զմեզ աստ հանգոյց» (*ԺԴ հճ. 114, 1315 թ. Լիմ կղզի*), «ողորմագութ պարունէ՛ս մեր» (*ն. տ. 140, 1318 թ. Նղիվարդ*), «ցանկէր (<ցանկայր) փրկագործ սուրբ աւետարանիս» (*ն. տ. 207, 1323 թ. Սյունիք*), «շատ աշխատեցայ, էնոր համար որ կէս բանին աւելի դեռ ի տեղն էր» (*ն. տ. 522, 1377 թ. Աղթամար*), «հերենի՛ք տվի» (*ԴՏՎ II, Հալիձոր, 52, 1265 թ.*), «Գնեցի զԱտոմի էգին... ով զէգին հիւրատանէն հանէ» (*ԿՂ. Սանահ. 162, 1275 թ.*), «իմ հերէնի էգոյն» (*ն. տ. 166, 1291 թ.*), «տվաք զմեր դրամագին էգին» (*ն. տ. 163 ԺԴ դ.*), «զհայրն իմ ըզԴաւիթ և զՄելիթ՝ իմ մէր» (*ԺԵ հճ. I, 38, 1403 թ. Առաք. Սյունեցի*), «երեք հարիւր ու քսան տունքս, որ ի սմա կէր» (*ն. տ. նույնի*), «Հերապետ» (*ն. տ. 73, 1407 թ. Գր. Տաթևացի*), «մեռաւ Թումէն» (*ն. տ. 114, 1410 թ.*), «էլ մարդոյ հաղ ու դաւ... չկայ» (*ն. տ. 109, 1410 թ. Ստ. Թավրիժեցի*), «զեղնցիքն էլ կու ցանկան, թէ զմեզ էլ մասն լինի յայս գիրքս» (*ն. տ. 150—51, 1413 թ. Մոկաց երկիր*), «Հերպետ» (*ն. տ. 135, 1412 թ. Թովմա Մեծոփեցի*), «աէին» (<տային) (*ն. տ. 439, 1434 թ. Մաթ. կաթողիկոս Աղուանից*), «Խերպետ» (*ԺԵ հճ. II, 70, 1456 թ. Բաղեշ*), «հերպետութիւն» (*ն. տ. 87, 1457 թ. Յիպնա վանք*), «եւ ձէն (<ձայն) ընգաւ քաղաքս» (*ն. տ. 169, 1462 թ. Տփխիս*), «հենց որ ոչ ով զիւր մեռելն չկարէր ճանաչել» (*ն. տ.*), «ով կարդի՛ք» (*ԴՏՎ. II, Սյունիք, Սյունի վանք, 91, 1307 թ.*), «որք զվարճանէ՛ք» (*ԴՏՎ. I, Անի, 43, 1271 թ.*), «հալալ գանձով գնեցի ի հերենէտիւրաց» (*ն. տ.*

63, 1215 թ.), «ով կարդէք» ԴՏՎ. III, 25, 1305 թ. Վայոց ձոր. նույն կարդէք բառաձևը նաև աջլ արձանագրություններում տե՛ս էջ 30, 1341 թ., 37, 1283 թ., 46, 1200 թ. և այլն), «զմեր հերնի (<հայրենի) գեղն զԱկող ի վաննս սր ուխտ տվաք հերենիք» (ն. տ. 51, 1259 թ.), «մէք էլ գերեզման հատաք» (ն. տ. 144, 1367 թ.), «ոչ որդի ունէր ոչ աղբէր» (ն. տ. 59, 1296 թ.), «Գեղո տղէքն գերի թափեցին» (ն. տ. 146, 1367 թ.), «զԳազարափոսին էգին» (ն. տ. 56, 1346 թ.), «տուաք ի մեր հալալ հայրենեաց... էգին» (ն. տ. 81, 1348 թ.), Հերմոնի վանքում (Վայոց ձոր) 1419 թ. գրված ձեռագրի հիշատակարանում (գրիչ՝ Գրիգոր Ախալցխեցի)՝ տէք (<տայք), երթէին (<երթային), գիտենէր (<գիտենայր), էն (<այն), հէնց (<հայնց) (ԺԵ հճՏ. I, 657—658). նույն վանքում մի այլ գրչի 1474 թ. գրած հիշատակարանում՝ «էս տետրս... հէնչանք կարացի գրել... հէնն (<հայնց)» (ն. տ. 359—360). Տերտեր Երևանցու ընդօրինակած Ճառերն-տիրում (Ձեռ. 8030. 1341 թ.)՝ «ընդ միտսն իւր զարմանէր» (37ա), «արդ, այս է գիր գրոյն գոր գրեալ կէր (<կայր)» (45բ), «միաբանեցան ծերք և տղէք» (59բ), «Բհէք (<բահանայք)... տանտիկնէք» (70ա), «երբեմն զզացեալ այրին դառնէր (<դառնայր) ուրախութեամբ» (76բ), «անուշ խաւսք էլ շունիս որ տաս աղբատին» (97ա) և այլն, և այլն: Օրինակները շին սահմանափակվում միայն բերվածներով. դրանք կրկնվում են նշված վայրերի աղբյուրներում և հուշարձաններում, ընդգրկում նոր բառեր: Փաստերը ավելի են հաճախանում հետագա դարերի սկզբնաղբյուրներում:

Ինչպես երևում է օրինակներից, այ՝ է հնչյունափոխությունը բավական տարածված ու տեղայնացված երևույթ էր: Ամենայն հավանականութեամբ այն գործուն օրինաչափություն էր, որ ընդգրկում էր նույնիսկ ոչ փակ վանկի որոշ հնչյունադիրքեր (տային>տէին, երթային>երթէին): Հատկանշական է նաև, որ եթե բառավերջի բաց վանկի այ-ի մեջ յ-ն համը էր (բահանայ>բահանա, տղայ>տղա, Թումայ>Թումա և այլն), ապա ք հոգնակերտի կամ հոգերի հավելմամբ առաջացած փակ վանկում գործում էր նույն այ՝ է օրինաչափությունը (ֆահանէք, տղէք, Թումէն և այլն): Հետևաբար պետք է ենթադրել, որ այստեղ ո՛չ թե բառավերջի ա-ն է հնչյունափոխվել է-ի, այլ նախնական այ-ը: Ուստի այ՝ է հնչյունափոխությունը ավելի հին երևույթ է, քան բառավերջի բաց վանկում յ-ի անկումը:

Այսպիսով, միջին հայերենի հենց սկզբնական էտապում հին հայերենի այ երկբարբառը հանդես է բերում երկու կարգի փոփոխություն՝ այ>ա և այ>է: Այդ երկու փոփոխությունների համար բերված օրինակներից կարելի է համադրել՝ աղբար || աղբեր, մար || մէր, հարպետ || հերպետ, կարդաք || կարդէք, հանցաք || հէնչանք, ալ || էլ, ան || էն, աս || էս, անոր || էնոր, ձան || ձէն և այլն, որոնք ինքնին հաստատում են այ-ի պատմական փոփոխության երկվությունը:

Սկզբնաղբյուրներում արձանագրվում են նաև այ երկբարբառի հնչյունափոխության մասնակի դեպքեր, որոնք, վերը նշված հիմնական օրինաչափություններից դուրս, տեղ են գտել առանձին բառերում: Այսպես, օրինակ՝ այգի բառի դիմաց միջին հայերենի արևելյան տարբերակների էգի ձևին զուգահեռ հանդիպում է դրանից զարգացած (թերևս՝ ետրնթաց առնմանությամբ) իգի ձևը. ինչպես՝ «Ես Սիմիանս տվի զմեր հայրենի իգին» (ԴՏՎ. III, 76, 1309 թ., Վայոց ձոր, Թանատի վանքի արձանագրություններում), «Եւ տվիք զմեր գնած իգին Սխտորալեզ» (ն. տ. 82, 1353 թ.), «տնկեցի... իգիս վայելուս» (ԴՏՎ.

II, Սյունիք, Հալիձոր, 52, 1265 թ.): Հանդիպում են նաև այ երկրարբանի-  
ր-ի հնչյունափոխվելու դեպքեր. ինչպես՝ «լաւ ըստայ (<ալստո) ամաշել, քան  
յահեղ ատեանն հրապարակի» (ԺԵ հճհ. I, 151, 1413 թ. Մոկաց երկիր), «բս-  
տեղս հասայ» (ԺԵ հճհ. II, 360, 1474 թ. Վայոց ձոր), «ես Դաւիթ՝ իմ վանացս  
եղբաւս վկայ եմ այս գրոյս» (Գ. Հովս. հճ. 251, 1067 թ.), «ես Տիրապետ՝  
Հրպետի որդիս վկայ եմ» (ԺԴ հճհ. 330, 1341 թ.): Վերջին երկուսում այ>ը  
հնչյունափոխութիւնը թերևս կատարվել է այ>ա (եղբայր>եղբար, Հայրա-  
պետ>Հարպետ) փոփոխութիւնից հետո:

30. Միջին հայերենի արևմտյան որոշ տարբերակներում մի քանի բառե-  
րում այ-ի դիմաց ունենք ո, ինչպես՝ պայծառ>պոծառ. «Ողորմեա Դշխուին և  
Պոծառին» (Գ. Հով. հճ. 820—21, 1222 թ. Սեբաստիա), պայման>պոման. «նա  
թե գայ յայն անուանեալ պոմանն... բայց թե չգայ ի դարպասն և ոչ ի պո-  
մանն» (Անս. 13. այստեղ առհասարակ այս նույն ձևով բազմիցս. տե՛ս էջ 15,  
47, 59, 71, 75, 77, 81 և այլն), ինչպես և սրանից կազմված՝ պայմանա-  
թուղթ>պոմնթուխտ (Անս. 75) բարդութիւն մեջ: Սակայն այս փոփոխութիւն-  
ներն իրենց բնութիւն խիստ մասնակի են և հատուկ միայն մեկ կամ մի քանի  
բարբառների և ընդգրկում են առանձին բառեր:

31. Միջին հայերենի շրջանում գրաբարյան աւ երկբարբառը փակ վան-  
կում պարզվել ու վեր էր ածվել օ պարզ ձայնավորի: Մյուս երկբարբառների  
կրած փոփոխութիւնների համեմատութեամբ՝ այս երկբարբառի հնչյունափո-  
խութիւնը ընդհանուր, միասնական ու համատարած բնույթ էր կրում, իր մեջ  
ներառելով նաև գրաբարը: Ավելի պարզ ասած, երբ կենդանի խոսակցական  
հայերենի բոլոր տարբերակներում ավարտվել էր աւ>օ անցումը, այլևս մոռա-  
ցութեան էր տրվել աւ-ի երբեմնի երկբարբառային արժեքը, և գրաբարյան բա-  
ռերի որոշակի դիրքերի աւ-ը ընկալվում էր որպես օ. հենց այդ հիմքի վրա էր,  
ինչպես կտեսնենք ստորև, որ գրութեան մեջ աւ-ը հաճախ շփոթվում էր ո-ի  
հետ, իսկ հետագայում՝ դասական ու ետդասական հայերենի ուղղագրութեամբ  
գրված տեքստերի միջնադարյան ընդօրինակութիւններում, գրիչները աւ-ը,  
ըստ արտասանութեան, արտահայտում էին նոր մուտք գործած օ տառի միջո-  
ցով: Անշուշտ, աւ երկբարբառի օ-ի փոխվելու օրինաչափութեան համահայկա-  
կան լինելը վկայում է նրա վաղեմութիւնը:

Կատարված այդ փոփոխութիւնը, միջնադարից՝ որպես՝ գրական լեզվի  
նորմա, ավանդաբար հասել է մեզ, և այժմ մենք հայերեն բառերում գրաբար-  
յան աւ երկբարբառի դիմաց ամենուրեք արտասանում ենք օ և մեր ուղղագրու-  
թեամբ բառասկզբում արտահայտում օ, բառամիջում՝ ո տառերով (աւր=օր,  
աւձ=օձ, կարաւտ>կարոտ=կարոտ, ծանաւթ>ծանօթ=ծանոթ): Գրական հա-  
յերենի համար բացառութիւններ են նաւթ և աղաւնի (մեր ուղղագրութեամբ՝  
նավթ, աղավնի) բառերը<sup>23</sup>, որոնց մեջ չի գործել վերը նշված հնչյունական  
օրենքը: Ուսումնասիրողների ենթադրութեամբ՝ աւ երկբարբառից հետո արտա-  
սանվել է մի թույլ ջ, որի պատճառով էլ լ-ն ընկնելով երկու ձայնավորների  
միջև՝ ստացել է Վ բաղաձայնի արժեք, որի հետևանքով աւ-ը դադարել է երկ-  
բարբառ լինելուց:

Սակայն ո՛չ բոլոր փակ վանկերում է, որ աւ-ը ենթարկվել է փոփոխու-

<sup>23</sup> Հայտնի է, որ հայերենի մի շարք բարբառներում այդ բառերը ևս ենթարկվել են ընդհա-  
նուր օրինաչափութեանը (եօթ, ըղօնի):

թյան: Պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը, որ մի ուշագրավ աշխատություն-հոդված է նվիրել այս երկբարբառի պատմական փոփոխությանը, այդ օրենքը գործուն չի համարում. «ա) քերականական մասնիկների (հոգեր, հոգնակիություն և հոլովակերտ մասնիկներ) հավելման դեպքում, ինչպես՝ հաւք, կաքաւք, նաւք (հոգն. ուղղ.), (զ)հաւս, (զ)կաքաւս, (զ)նաւս (հոգն. հայց.), առակաւդ (=այդ առակով), համբաւս (=այս համբավը), կտաւն (=այն կտավը կամ կտավը) և այլն. բ) շեշտափոխության դեպքում, երբ աւ հնչյունախմբից հետո եղած ձայնավորը սղվում է, և այդպիսով աւ-ը ընկնում է բաղաձայնի մոտ, ինչպես՝ շաւիլ-շաւղի, շաւղաց, Դաւիթ-Դաւթի և այլն»<sup>24</sup>: Սակայն, ինչպես կարելի է նկատել, նշված դիրքերում աւ-ը երկբարբառ չէ, քանի որ բառական ուղիղ ձևվերում այն գտնվում է կա՛մ բառավերջում, կա՛մ նրան հաջորդում է ձայնավոր հնչյուն, որի պատճառով էլ լ-ն այլևս երկբարբառի տարր չէ և հանդես է գալիս միայն բաղաձայն Վ-ի արժեքով: Այնպես որ վերը նշված դիրքերում աւ-ը պարզապես ունի av երկհնչյունի նշանակություն, և նրա բաղադրիչ լ-ն պահպանում է Վ-ի իր արժեքը նաև քերականական մասնիկների հավելման ու բառաթեքման դեպքում, երբ ստեղծվում է փակ վանկ: Եվ հենց այդ է պատճառը, որ որոշ քերականական մասնիկների հավելման ժամանակ դրանցից առաջ ստեղծվում է գաղտնավանկ:

Ինչպես ասվել է վերը, միջին հայերենի շրջանում աւ>օ հնչյունափոխությունն արդեն կատարված իրողություն էր: Սակայն, շնայած դրան, ձեռագրերը երկար ժամանակ շարունակում են աւ գրությունը, մինչև որ դրան համապատասխան՝ գործածության մեջ է դրվում օ գիրը: Տեղի ունեցած հնչյունափոխությունը մատնում են մի կողմից՝ հայերենում մուտք գործած օտար բառերի տառադարձված ձևերը, որոնք փոխատու լեզվի օ հնչյունը հայերենում ներկայացնում են աւ տառակապակցությամբ, ինչպես՝ հֆր. *otrei* = աւրել, ֆր. *Josseïin* = ճաւսին, հֆր. *sol* = սաւ և այլն, և մյուս կողմից՝ ավանդական ուղղագրությունից կատարվող շեղումները, երբ մի դեպքում աւ-ի փոխարեն զըրվում է ո, ինչպես՝ յաւդուած = յոդած, իսկ մի այլ դեպքում, ընդհակառակն՝ ո-ի փոխարեն՝ աւ, ինչպես՝ յոգնամեղ = յաւգնամեղ: Ավանդական ուղղագրության խախտմամբ ստեղծվում են միևնույն բառի գրության զուգահեռ ձևեր, ինչպես՝ Քրիստափոր // Քրիստափար, Կոստանդնուպոլիս // Կոստանդնուպաւլիս և այլն, որոնք և հավաստում են փակ վանկում աւ-ի նոր հնչյունական արժեքի մասին:

Եվ եթե XII—XIII դարերում աւ>օ հնչյունափոխությունը լրիվ ձևավորված և բավարար փաստերով հաստատվող օրինաչափություն է, ապա բնական է, որ նրա սկզբնավորությունը պետք է փնտրել նախորդ դարերում: Պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանի վերը հիշատակած հոդվածում մատենագրական փաստերով ցույց է տրված, որ այդ երևույթի առաջին վկայությունները հասնում են մինչև X դարի սկզբները, թեև բացառված չի համարվում նաև, որ այդ օրենքը կարող էր գործած լինել ավելի վաղ, քան առաջին վկայություններն են: Եվ իսկապես, լաղարյան ձեմարանի 887 թ. գրչագիր ավետարանում ունենք՝ «ընդ ամենայն երկիրն ասաւոց» (Լուսատիպ ավետարան, էջ 9), որտեղ ասորոց կամ

<sup>24</sup> Ա. Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական գիտություններ), 1957, № 4, էջ 72:



ասորոց բառաձևի ու-ի փոխարեն գրված է աւ: Նշանակում է աւ>օ հնչյունափոխության առաջին վկայությունը հասնում է մինչև IX դարը: Հաջորդ՝ X դարից Ա. Ա. Աբրահամյանի կողմից բերված օրինակներն են՝ պաշտոնեայք և փառոք բառաձևերը<sup>25</sup> (ավանդական պաշտաւնեայք և փառաւք ձևերի դիմաց), որոնց մեջ աւ-ը ներկայացված է ու-ով: Սրանց վրա կարելի է ավելացնել 988 թ. մի ձեռագրի հիշատակարանում հանդիպող յոդաձոյ օրինակը («քանզի ոչ եթե ի պարզ եւ յոդաձոյ ի վնաս տկարութիւն անգաք» Գ. Հովս. հձ. 152), որտեղ նույնպես աւ երկբարբառը (յալդաձոյ) տառադարձված է ըստ արտասանության: Այս նույն ժամանակներում նկատելի է նաև հակառակ տառադարձության միտումը, երբ աւ-ը գիտակցվելով որպես օ ձայնավորի արտահայտման նշան, ավանդական ու-ի փոխարեն գրվում է աւ, ինչպես, օրինակ՝ յալգնամեղ (փոխ. յոգնամեղ), երկու անգամ վկայված 988 թ. գրչության մի ձեռագրի հիշատակարանում («յալգնամեղ եւ անարժան ծառայ... յոյժ յալգնամեղ էի» Գ. Հովս. հձ. 153)<sup>26</sup>: XI դարից կարելի է հիշել հետևյալ օրինակները. «ընծաեաց 3(300) դահեկան սբ կաթաղիկոս յիշատակ» (Կղ. Հաղբ. 154, 1024 թ.), «զԹորոս զյալգնամեղս յիշեսչիք» (Գ. Հովս. հձ. 220, 1036 թ.) և այլն:

Վերը ասվեց, որ աւ>օ հնչյունափոխությունը ավելի վաղ կատարված լինելու հիմքեր ունի, քան մատենագրական փաստերն են վկայում: Այդ ենթադրության մեջ նկատի ունենք ո՛չ միայն այն, որ լեզվական ամեն մի նոր երեվույթի գրի առմանը միշտ նախորդում է նրա առաջացման և կայունացման մի որոշակի շրջան, այլև այն, որ սկզբնաղբյուրներում արձանագրվում է աւ-ի այլ կարգի մի փոփոխություն, որը աւ>օ հնչյունափոխությունը դարձնում է ավելի հին: Դա աւ-ի փոխարեն ու-ի առկայությունն է:

Հայտնի է, որ հայերենի մի շարք բարբառներում, այդ թվում նաև միջին հայերենի որոշ տարբերակներում, ձայնավորների նեղացման ընդհանուր պրոցեսում օ-ն հնչյունափոխվում է Ա-ի (կոկ>կուկ, կոկել>կուկիլ): Բարբառներում նկատելի է նաև, որ այդ հնչյունափոխությունը ընդգրկում է նաև աւ-ից առաջացած օ-ն (աղաւթք>աղօթք>աղութք): Մի բան պարզ է, որ նախ կատարվել է աւ>օ անցումը, որի հետևանքով աւ-ից ստացված օ-ն և նախնական օ-ն գիտակցվել են որպես նույն հնչյուններ և ապա այդ հիմքի վրա ունեցել հետագա փոփոխություն՝ օ>Ա: Սկզբնազիր աղբյուրներում թեև շատ սակավ, բայց օրինակներ կան աւ (>օ)>ու անցման համար: այսպես՝ «աստաճուր ածային նշանիւս յիշել զհայր Սուփան» (Դհվ. III, Վայոց ձոր, 15, X դար), «միաբանք Ա ժամ սահմանեցին սբ Յակոբին տունին» (ն. տ. 51, 1289—99 թ.), «մի յուժարիք զնոցայ խաւսքն լսե(ա)լ» (Ձեռ. 8030, էջ 104ա, 1341 թ.), «(յիշեցէք) և զմուրուն (>մօրուն) զՄէլէք խաթուն» (ԺՅ հձհ. II, 224, 1464 թ. Շատվան գյուղ):

Եթե այս փոփոխության առաջին վկայությունը X դարն է, ապա պետք է ընդունել, որ աւ>օ փոփոխությունը շատ ավելի վաղ պիտի կատարված լիներ, որի լրիվ ավարտից ու կայունացումից հետո միայն հնարավոր պիտի լիներ օ>ու անցումը: Նշենք նաև, որ Վայոց ձորը աշխարհագրական տեսակետից անմիջապես հարում է ժամանակակից Զանգեզուրին, որի բարբառներում խիստ օրինաչափ են ինչպես աւ>օ>ու, այնպես և ու>ու հնչյունափոխություն-

<sup>25</sup> Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխատությունը, էջ 75:

<sup>26</sup> Անդ:

ները, ինչպես նաև Գողթան գավառին, որտեղ գրված միջնադարյան ձեռագրերը փաստեր են տալիս ո>ա հնչյունափոխության վերաբերյալ:

Ինչպես արդեն ասել ենք, շնայած կատարված ալ>օ հնչյունափոխությանը, գրութայան մեջ երկար ժամանակ այն շարունակում էր արտահայտվել ալ տառերով, թեև այնտեղ, ուր նա հնթարկվել էր փոփոխության՝ արտասանվում էր օ: Գրութայան և արտասանության միջև առաջացած այդ հակասությունը որոշակի դժվարություններ էր ստեղծում գրավոր լեզվի համար և այդ, հատկապես այն պատճառով, որ բանավոր լեզվում շատ դեպքերում ա-ով և ալ-ով արտահայտված հնչյունները համընկնում էին իրենց արժեքով, մինչդեռ գրությունը, որ հիմնված էր՝ ավանդական ուղղագրության վրա, ստիպված էր տարբերակել դրանք: Սրան ավելանում էր նաև այն, որ հին ա-ի հնչյունական արժեքը միջին հայերենի մի շարք տարբերակներում ուներ երկբարբառային կամ երկհնչյունային բնույթ և լրիվ կերպով չէր համընկնում ալ>օ-ի հետ: Ճիշտ է, հայերենի որոշ դրսևորումներում՝ ա-ն ուներ նաև օ պարզ ձայնավորի արժեք, բայց պետք է ենթադրել, որ այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, նկատի ունենալով ինչպես բառակազմի դիրքն ու բառամեջը, այնպես և բառի միավանկությունն ու բազմավանկությունը, միջին հայերենի բոլոր տարբերակներում ալ-ը և ա-ն նույն հնչյունը արտահայտել չէին կարող: Այս հակասությունների հաղթահարման պահանջով է, որ անհրաժեշտություն է առաջանում ալ-ից հնչյունափոխված ձայնավորը արտահայտել մի նոր տառանշանով, որի համար վերցվում է լատիներենի օ-ն:

Դժվար է ասել, թե ե՞րբ, ո՞վ և որտե՞ղ առաջին անգամ գործածության մեջ դրեց այդ տառը: Ընդունված է ասել, որ նորամուծությունը կատարվել է XII դարում: Սակայն, եթե վստահելու լինենք փաստերին (քանի որ դրանք տպագիր աղբյուրներից են), ապա պետք է ընդունել, որ օ-ի առաջին վկայությունները հասնում են մինչև XI դարի սկիզբը: Այդ օրինակներն են, նախ՝ 1007 թ. Մակեդոնիայում գրված մի ձեռագրի հիշատակարանում՝ «յաղօթս յիշեցէք» (Գ. Հովս. հձ. 201), և ապա՝ հայոց Պետրոս կաթողիկոսի (Գետադարձի) 1046 թ. գրած մի հիշատակարանում՝ «մեծաւ փափագաւնօք հտ գրել» (ն. տ. 231):

Օ տառի կիրառությունը պետք է կարծել, որ նախապես եղել է անհատական նորամուծություն: Մյուս կողմից ենթադրելի է, որ նրա մուտքը լուրջ դիմադրության է հանդիպել հայ լուսավորչական հոգևորականության կողմից՝ որպես սրբապղծություն սուրբ մեսրոպյան տառերի մեջ մի նորը, այն էլ լատինականը ընդունելը: Թերևս այս է եղել պատճառը, որ շնայած գրության և արտասանության մեջ առաջացած հակասության հաղթահարման պահանջին և վերջինիս լուծման նպատակով առաջադրված ու կիրառված տառատեսակին, ձեռագրերում միայն հատ ու կենտ օրինակներ են պատահում ընդհուպ մինչև XIII դարը, իսկ որոշ ձեռագրեր նաև XIV—XV դարերում համառորեն շարունակում են ավանդական ալ գրությունը: Միայն սկսած XIV դարից առանձին ձեռագրեր (այն էլ, թերևս, կապված տվյալ գրչի դավանաբանական պատկանելության հետ) սկսում են հետևողականորեն կիրառել օ տառը: Որպես բնորոշ օրինակ կարելի է հիշել 1306 թ.՝ IX դարի մի ձեռագրի հիշատակարանի ընդօրինակության մեջ հետևյալ օրինակները՝ անհետագօտելի, յօժարութիւն, մտօք, հոսանօք, արդեօք, օգտեաց, օգնականութիւն, աստանօր, աղօթից, օրինակ, համառօտաբար, պարգեօք, ամօթ, զօրութիւն, խօսեցայց և այլն, և

այլն (Գ. Հովս. հձ. 617), երբ մյուս կողմից, օրինակ՝ Սմբատի Տարեգրքի XIII—XIV դդ. ընդօրինակված ձեռագրում օ գրության փոխարեն ամենուրեք աւ է<sup>27</sup>:

XIV—XV դարերից սկսած հաղթահարվում է հին հայերենի աւ-ի ավանդականությունը, և փակ վանկի հնչյունափոխված աւ-ի փոխարեն ձեռագրերում սկսում են գրել օ: Որոշ գրիչներ նույնիսկ շափազանցությունների են հասնում. աւ-ի փոխարեն օ են գրում այնպիսի դիրքերում, որտեղ այդ հնչյունափոխությունը բացառվում էր (ելօ<ելաւ, մեոօ<մեռաւ և այլն):

32. Գրաբարյան եւ երկբարբառը, ինչպես արդեն ասվել է, ուներ բառի մեջ իր կայուն տեղը. այժմ հանդես էր գալիս միայն շեշտի տակ՝ վերջնավանկում. ըստ որում, այդ դիրքը առկա էր ո՛չ միայն բառական ուղիղ ձևերում, այլև ստեղծվում էր քերականական վերջավորությունների մեջ: Բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ՝ շեշտից առաջ ընկնելով, հնչյունափոխվում էր է պարզ ձայնավորի (ինչպես՝ սենեակ-սենեկի, սենեկապան):

Սիջին հայերենի շրջանում հայերենի խոսակցական տարբերակներում գրաբարյան եւ երկբարբառը հնչյունափոխվելով վեր էր ածվել օ պարզ ձայնավորի, որը գրության մեջ արտահայտվում էր ե // է տառերով: Պատմական հնչյունափոխություն այս երևույթը թերևս պետք է կապել գրաբարում եւ-ի շեշտից առաջ ե-ի փոխվելու հատկության հետ. հավանական է, որ այդ դիրքում կատարված փոփոխությունը այնուհետև անցել է բառական ուղիղ ձևերին և հետագայում ընդհանրացել: Արդեն իսկ X—XI դարերի սկզբնագիր աղբյուրներում արձանագրվում են եւ-ի օ հնչյունափոխվելու փաստեր, ինչպես՝ «Որդի Աշոտի սինեց (<սինեաց) իշխանի» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 13, X դ.), «ռղարմէ ասացէք» (ն. տ. 14, 931 թ.), «Գրիգոր գրել է յետին կրրանաւոր» (Գ. Հովս. հձ. 193. Ժ—ԺԱ դ.) և այլն:

Այս հնչյունափոխությունը, շնչին բացառություններով, ընդհանուր է ամբողջ միջին հայերենի, կամ ավելի ճիշտ՝ նրա բանավոր-խոսակցական բոլոր տարբերակների համար: Այն արտահայտվում էր.

ա) Բառական անկախ կամ ուղիղ ձևերում, ինչպես՝ «ոչ էի տեղեկ բայից և բառից» (Գ. Հովս. հձ. 680, 1201 թ.), «այլ բանս մտաւ ածեաց արբանեկն սատանայի» (ԺԴ հձհ. 46, 1307 թ.), «գրեցաւ մատենս այս» (ն. տ. 20, 1203 թ.), «ի թվականութեանս հայկազենս սեոի» (ն. տ. 92, 1313 թ.), «մի սիրէք գաշխարհս ու զկենքս» (Ձեռ. 8029, 238ա, 1376 թ.), «ի մատենս» (ԿՂ. Հաղբ. 180, 1221 թ.), «Ծաշ միակեցս... յիշեցէք զՇաշ միակեցս» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 68, 69, 1297 թ.), «...ես խաշատուր միակէց» (ԿՂ. Սանահ. 159, 1280 թ.), «մուտ ի սէնեկ քո» (Ձեռ. 8030, 56ա), «փոխեցաւ ի մահուանէ ի կենք» (ն. տ. 69ա), «վա՛յ ինձ որդեկ իմ» (ն. տ. 71ա), «սնոտի եւ անցաւոր է այս կենքս» (ն. տ. 76բ), ցորեն (Լեոն Գ-ի 1288 թ. դաշնագրում), «նման է իւր շտերն ի կորեկ» (Գրիգ. 35), «նմանին ի մանր կորեկ» (ն. տ. 40) և այլն:

բ) -եաւ, -նեաւ, հոգնակերտներում. ինչպես՝ «ուլի ոսներ» (Մխ. Հեր. Ձեռ. 416, 21, 1279 թ.), դեղեր (ն. տ. 30ա, 38բ). հիւանդութեներն (ն. տ. 34ա), աւեր (ն. տ. 39բ), կաթներտ (ն. տ. 40բ), նիւթերն (ն. տ. 10բ), «գրագում քաղաքս և զբերդերս էառ» (Գ. Հովս. հձ. 906, 1236 թ.), «երկու դաս ու-

<sup>27</sup> «Բնագրին մեջ օ գիրը գոյություն չունի, այլ ըստ հին ձևին՝ աւ կգրվեր միշտ. մեր հրատարակության մեջ այն բոլոր աւ-երը, որ օ պիտի կարգացվեն՝ օ տպեցինք» (Սմբատի Տարեգրքի հրատարակչի առաջաբանը, էջ Ժբ):

բերն» (ն. տ. 857, 1227 թ.), «եբեր զտետրերս ի սուրբ Գրիգորոյ յանապատէս» (ն. տ. 854, 1227 թ.), «համբարձման արեր» (ն. տ. 873, 1231 թ.), «եկին ամէն շներն» (ԺԴ հճհ. 276, 1335 թ.), «այսացիքն զխատին և զդանշմներն սպանել են» (ն. տ. 274, 1335 թ.), յամէն տաւներտ (Սմբ. դատ. 13), «ամէն մարդոյ զեաններ» (ն. տ. 16), «լաւ գիտենային զայրուկնոջ բաներն» (ն. տ. 20), «ամենայն վաներն» (Սմբ. Տարեգ. 14), «անկանէր յամուր բերդերս» (ն. տ. 26), «առաքեաց առ կոմսերն... կոմսերն փախեան» (ն. տ. 154—155), «սպանին զշեխերն» (ն. տ. 158), «զամենայն հայերն» (ն. տ. 171), «կանգնեցի զղասերս» (Դհվ. II, Տաթև, 24, 1251 թ.), «շինեցաւ դուռնս և բրջներս» (Դհվ. I, Անի, 7, 1206 թ.), «շինեցի հալալ ընչիւք իմով զաշտինաներս» (ն. տ. 34, 1213 թ.), «եաշորկանն հողերն» (ն. տ. 63, 1215 թ.), «Հաղբատա գեղերն... այս գեղերս» (ԿՂ. Հաղբ. 168—169, 1210 թ.), հորտեր (Անս. 9, 13, 25, 27 և այլն), լներ (ն. տ. 11), արեր (ն. տ. 27), որբեր (ն. տ. 51), իրաւներ (ն. տ. 43), ծայրեր (ն. տ. 59), այսպես նաև Գրիգորիս բժշկապետի աշխատութեան մեջ՝ ննդեր, զաներ, լարեր, շտեր, ազգեր, խոցեր, մաշկեր, կոպեր, մաղձեր, արեր, ծնկներ, աչեր, կոճեր, արմկներ և այլն, և այլն:

գ) Գրաբարյան անցյալ դերբայի -եալ վերջավորութեան մեջ, ինչպես՝ «ապաւիներ յողորմութիւն այ» (Դհվ. I, Անի, 43, 1050 թ.), «բաժ ու տամղա շէին տվել» (ն. տ. 23, 1280 թ.), «...որ յառաջն շէր լել» (ն. տ. 30, XIII դ.), «չոր էր բերել ի վանքս ու ի յանտիրութենէ խաղտել էր ու կտրել» (ն. տ. 64, 1310 թ.), «անիծել լիցի» (ԿՂ Սանահ. 139, 1291 թ.), «շինել էր» (ն. տ. 145, ԺԳ դ.), «ի փորացաւութեան դուռն յիշել եմ» (Մխ. Հեր. 30բ), «չորութիւն լինի հանդիպել... զմարմինն բնիկ դարտկել լինի» (ն. տ. 34բ), «մարմնոյն զարութիւն հատել լինի և կտրել» (ն. տ. 38ա), «զի քահանայ անունս եղել, զահագին արն շեմ յիշել, ոչ տէր մեղայ եմ ասացել, զերթ խոզ ի տիղմ եմ քաւալել» (ԺԴ հճհ. 22, 1304 թ.), «գոռոզ ազգն իսմայիլի գլխակորել ընկրկեցան... և հետամուտ եղել մինչև ի մուտս արևու» (ն. տ. 24, 1304 թ.), «աշխատել են ի հետ մեր ու զապրիկն ու զկոտորակն պատրաստել են մեզ» (ն. տ. 28, 1304 թ.), «զգիրքս է կապել» (ն. տ. 34, 1305 թ.), «աւզնել են ի սուրբ աւետարանս» (ն. տ. 50, 1307 թ.), «զքացել է յիս» (ն. տ. 52, 1307 թ.), «չէի ամենեւին լսել զսայ» (ն. տ. 61, 1309 թ.), «այսր աղագաւ եմ գրել» (ն. տ. 70, 1310 թ.), «տեսել զվայրապար կացս իմ» (ն. տ. 143, 1318 թ.), «հնազանդել էին շար հրամանին» (ն. տ. 276, 1335 թ.), «յոյժ զարհուրել եմ և հիացել զարմանամ» (Չեռ. 8030, 1341 թ. 38 բ), «զարմացել եմ» (ն. տ. 40բ), «գրել ես» (ն. տ. 45բ), «դարձել ասէ» (ն. տ. 68ա), «զիս է ստեղծել» (Չեռ. 8029, 231ա), «ճանաչվի որ հին թագավորի է լել» (Սմբ. Դատ. 17), «վասն անհաւատութեան շէ մեռել հայրն» (ն. տ. 15), «զիւր հնկակն տվել է» (ն. տ. 13), «սուրբ առաքեալքն են սանմանել» (ն. տ. 19), «ասցել են» (Անս. 19, 23 և այլն), «այրել ես» = արել ես (ն. տ. 15), «հետ իրենց ծննդեանն է լել» (ն. տ. 19), «ես զայն իրքն կալել եմ... մեռել է» (ն. տ. 23), «տղա է լել ի մէջն» (ն. տ. 37), «շատ մարդ է մեռել» (Գրիգ. 50) և այլն, և այլն:

դ) Բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի -եաց վերջավորութեան մեջ; ինչպես՝ «զնեց զայս սուրբ աւետարանս» (Գ. Հովս. հճ. 569, 1193 թ.), «սպասաւորեց մեզ» (ն. տ. 718, 1204 թ.), ընծայաւորեց (ն. տ. 716, 1204 թ.), ստեղծեց... պատուեց (Չեռ. 8029, 233բ), հրամայեց, յարինեց, խալեց, հրապուրեց (ն. տ. 234ա), փորձեց (ն. տ. 236բ), շպահեց (ն. տ. 237ա), կապեց (Սմբ. Դատ. 26), ծախեց (ն. տ. 20), «ծաղկեց զաւետարանս և

զլխագրեց» (ԺԴ հձհ. 28, 1304 թ.), փրկեց (ն. տ.), անեց (ն. տ. 121, 1316 թ.), ազնեց, յրկեց, գնեց, լսեց (ն. տ.), ուզեց (Անս. 35), վազեց (Ձեռ. 8030, 75ա), շինեց (ն. տ. 80բ), զարդարեց (ն. տ. 84բ), ստեղծեց (ն. տ. 84բ), սիրեց (ն. տ. 89բ), «տիրեց քաղաքիս» (Դհվ. I, Անի, 63, 1215 թ.), «անեսեց տաւնն» (ԿՂ Սանահ. 116, 1181 թ.) և այլն, և այլն:

ե) Բուն հրամայականի -եա վերջավորութեան մեջ, թեև սրանց կիրառութիւնը սահմանափակվում է հիմնականում այնպիսի աշխատութիւններում, որոնց մեջ տրվում են հանձնարարութիւններ, հրահանգներ, ինչպես՝ «ընդ իրար խառնէ» (Մխ. Հեր. 32ա), «ի հով շուրն քացախ խառնէ» (ն. տ. 32բ), «ա՛ն կարոսի ունդ, աղա՛ և մաղէ՛ և տո՛ւր» (ն. տ. 33ա), «զմարմինն... սրբէ՛ խիարի շամբարով» (ն. տ. 39բ), «զայտ զամէնտ հաւաբէ» (ն. տ. 43բ), «գնա՛ գլուխ գնէ՛» (ԺԴ հձհ. 275, 1335 թ.), «Սիրէ՛ դու զքո կնիկն» (Հովհ. Երզն. Ձեռ. 8029, 227ա) և այլն:

զ) Հոլովական -եա վերջավորութեան մեջ, ինչպես՝ «եւ ի հաւն առնուն իրենց քահանայից գիտութեամբ» (Սմբ. դատ. 30), «զհոգաբարձութիւն երիցանց իրենք այնեն» (ն. տ. 27), «հետ իրենց ծննդեանն է լել» (Անս. 19), հայրենեցն (ն. տ. 19, 23, 45, 47, 51, 53 և այլն), որդեցն (ն. տ. 31, 55 և այլն), «վասն իրենց նեղութեանց» (Գրիգ. 47), «թվենայ իրենն, թե ծանր իրք ի վերայ կայ» (ն. տ. 64), «բաժանեցան թիկանց զօթուածքն ի միմեց» (ն. տ. 71), «ամէն մարդոյ միտք իրեն հաւանի» (Հով. Երզն. Ձեռ. 8029, 232ա), «աղաչեմ... անմեղադիր լինիք խոշորութենն» (ԺԴ հձհ. 61, 1309 թ.), «աղաչեմ զամենիսն բոլորով սրտիւ» (ն. տ. 143, 1318 թ.), «գրեցաւ յամսնս աւգոստոս» (ն. տ. 63, 1309 թ.), «Սալուբեց սուրբ նշանս... ի հալալ արդեց իմոց» (Դհվ. I, Անի, 43, 1271 թ.), «իրենց որդուն» (ն. տ. 64, 1310 թ.), «ես Սարգիս Միլենց» (ն. տ. 3, 1320 թ.), «որդի Սմբատաւեց... յազգն Յոնենց... Գաւոթունեց գեղին կէսն, Մշակունեց կէսն» (ն. տ. 63, 1215 թ.), «ի տանէ Աշակունեց» (ԿՂ Սանահ. 97, ԺԱ դ.), «որչափ եկեղեցիքս ի շինութեան էն» (ն. տ. 97, ԺԱ դ.), «ի հայրապետութենն տն Դիոսկորոսի» (ն. տ. 147, 1061 թ.), «ըստ նախնեց իմոց» (ն. տ. 118, 1271 թ.), «ետուն մեզ Գ պատարագ ի տանի Հոփսիսմեց» (ն. տ. 158, 1289 թ.), «գալլստեն արն» (ն. տ. 164, ԺԳ դ.), «Թաղիադինին որդեցն» (ԿՂ Հաղբ. 117, 1249 թ.), «յազգէ Մամիկունեց» (ն. տ. 197, 1280 թ.), «հանդերձ որդովք իրենց» (ն. տ. 205, 1283 թ.), «յազգէ Աւրպէլենց» (Դհվ. III, Վայոց ձոր, 55, 1317 թ.), «զսբ Սիոնի տակի հողն Վարդապետեց առաք» (ն. տ. 56, 1318 թ.), գալստէն < գալլստեան (ն. տ. 76, 1307 թ.), «ետու հալալ հերենեց» (ն. տ. 80, 1336 թ.), «զՄազմանեց եւ զԱւանչեց» (ն. տ. 81, 1348 թ.) և այլն, և այլն:

Բերված օրինակներով, իհարկե, չեն սպառվում ո՛չ սկզբնաղբյուրները և ո՛չ էլ դրանցում վկայված փաստերը: Մենք օրինակներ չենք բերում միջնադարյան այլ հեղինակներից: Առհասարակ քննարկվող շրջանում ստեղծված կամ ընդօրինակված բոլոր ձեռագրերում էլ այս կամ այն չափով արտահայտված է եւ>է հնչյունափոխութիւնը: Եվ չնայած այն բանին, որ ժամանակի գրավոր լեզվում, այնուամենայնիվ, ընդունված է պահպանել հին գրական լեզվի ուղղագրական նորմաները, սակայն գրութեան այդ հին ձևի և բանավոր-խոսակցական լեզվում նրա հնչյունական համապատասխանի միջև առաջացած անհամապատասխանութեան պատճառով, գրավոր լեզվի մեջ մուտք են գործում հնչականին առավել մոտ ձևերը: Բնականաբար, հին գրավոր լեզուն՝

գրաբարբը, որ այս շրջանում, թեև ո՛չ կենդանի, բայց և այնպես շարունակում էր իր գործառնությունը, վերը նշված հնչյունափոխության հիմքի վրա եա-ն այլևս չի գիտակցում որպես երկբարբառ և նրան տալիս է չա երկհնչյունի արժեք: Եվ թեև մատենագրությունը եա-ի նման (երկհնչյունային) արտասանություն համար գրության նոր ձև չի տալիս, բայց դա ինքնին հասկանալի է, բանի որ եա-ն իր գրային բաղադրիչներով դյուրութամբ կարողանում է փոխարինել չա երկհնչյունին, ինչպես կարելի է համոզվել այս ժամանակներում հանդիպող Կիլիկիա // Կիլիկեա, Մարիամ // Մարեամ և նման զուգագրությունների օրինակով:

Վերը նշված եա>ե հնչյունափոխության կողքին հանդիպում են նաև եա>ա փոփոխությամբ վկայվող առանձին օրինակներ. դրանցից որոշ բառաձևեր հանդես են գալիս միայն այս օրինաչափությամբ, ինչպես, օրինակ՝ իրեար>իրար. «ընդ իրար խաննէ» (Մխ. Հեր. 30բ), «երկու մաղձն խանին ընդ յիրար» (Գրիգ. 27), «ի յիրար կցեալ են» (ն. տ. 28), «սիրեցէք զիրարս» (Ձեռ. 8030, 93բ) և այլն: Այլ օրինակներում եա>ա հնչյունափոխությունը առկա է այնպիսի բառերում, որոնք զուգահեռաբար ունեն նաև եա>ե հնչյունափոխություն (տե՛ս վերը բերված օրինակները). «ըստ հայկազան (<հայկազան) թուականի» (ԺԴ հձհ. 96, 1313 թ.), «ծովուն գեղագունաց» (Գ. Հովս. հձ. 710, 1204 թ.), «շինեցի սենակ Բ» (Դհվ. I, Անի, 33, 1040 թ.), «թոռն Աւագ Համագասպանց» (Կղ. Սանահ. 128, 1211 թ.), «ես Ձեւլանց Մէլիբս» (ն. տ. 139, 1291 թ.), «ես՝ Համլիկ, որդի Սմպատա, յազգէ Համագասպանց» (ն. տ. 130, 1229 թ.), «ես Գոհարմլիբս, թոռն Համագասպանց» (ն. տ. 109, 1258 թ.), «Աբէսալմանց հաւղն» (ն. տ. 122, 1214 թ.) և այլն: Սրանք, անշուշտ, այլ բարբառային օրինաչափության արտահայտություններ են: Այսօր էլ հայերենի բարբառներում մի տեղ ունենք Դավթենց, Արշակենց և այլն, մի այլ տեղ՝ Դավթանց, Արշականց: Այնուամենայնիվ, գրական միջին հայերենի և նրա տարբերակների մեծամասնության համար բնորոշ է եա>ե հնչյունափոխությունը:

33. Հին հայերենի երկբարբառներից էր նաև ոյ-ը, որը հանդես էր գալիս շեշտի տակ՝ վերջնավանկում. շեշտից առաջ ընկնելով՝ հնչյունափոխվում էր պարզ u ձայնավորի (լույս-լուսաւոր): Այս առանձնահատկությունը ավանդաբար պահպանվում էր նաև միջին հայերենի շրջանում, որպես հին գրավոր լեզվի հատկություն: Այստեղ նորն այն էր, որ հին լեզվի շեշտի տակ դառնալու ոյ-ը գիտակցվում էր որպես երկհնչյուն uy, հատկապես հին գրավոր տեքստերի ընթերցանության ժամանակ: Եվ միջին հայերենում էլ, երբ անհրաժեշտ էր լինում հայերեն տառադարձել օտարլեզվյան ui // uy երկհնչյունը, օգտագործվում էր ոյ տառակապակցությունը: Այդ են ապացուցում առնվազն հետևյալ բառերի տառադարձությունները, որ բերում է Կարստը. հֆր. Baldouin = Պաղտոյն, հֆր. Louis = Լոյս, հֆր. Cuilner = գոյներ<sup>26</sup> և այլն: Այս շարքում ունենք նաև հուն. փոխառած Προϊξ = պոյք (Սմբ. Տարեգ. 52), որտեղ oi = ոյ համընկնում են, բայց բառաթեքման ժամանակ կատարվող փոփոխությունը՝ «ի պուզացն» (Անս. 19), կարող է ենթադրել տալ, որ այստեղ ևս ոյ-ը գիտակցվել է նույն արժեքով:

Սկզբնաղբյուրները այս երկբարբառի գրական uy արտասանության փաստեր համարյա թե չեն տալիս, և դա, թերևս, արդարացվում է նրանով, որ ոյ

<sup>26</sup> Տե՛ս Karst, նշվ. աշխատությունը, էջ 25:

երկբարբառի՝ բանավոր-խոսակցական լեզվի բոլոր տարբերակներում պարզ-վելու ֆոնի վրա, գրութայն այդ ձևը մնում է միայն երկհնչյունը արտահայտելու համար: Առայժմ եզակի մի օրինակ է Հաղբատի վանքի արձանագրություններում հանդիպող Բույրա գործիականի ձևը, որի մեջ գրական արտասանության փաստը վկայվում է նաև հայերեն բառում. ահա այդ հատվածը՝ «Ծս Մարիամ, դուստր Կիրկէի արքաի, իմ Բույրա... միաբանեցա» (ԿՂ. Հաղբ. 176, 1200 թ.):

Սակայն այս չէ միջին հայերենի համար բնորոշը: Քննարկվող շրջանում, ընդհակառակն, հին հայերենի ոչ երկբարբառը մյուս երկբարբառների նման պարզվել ու փոխարկվել էր պարզ ձայնավորի: Որպես առավել հիմնական օրինակափոխություն արձանագրվում է նրա ոչ>ու փոփոխությունը, որը շատ որոշակիորեն արտահայտվում էր նաև գրությամբ: Այս հնչյունափոխության հիմքը, պետք է կարծել՝ նույնն է, ինչ որ շեշտի տակ հանդես եկող մյուս երկբարբառներինը, այն է՝ նախաշեշտ հնչյունափոխված ձևի անցումը բառական ուղիղ ձևին:

Միջին հայերենի շրջանում ոչ>ու փոփոխությունն արդեն ավարտված իրողություն է և հաստատվում է վկայությունների բավական լայն ընդգրկմամբ ու փաստերի առավել հաճախականությամբ: Հատկանշական է, որ երևույթը ընդգրկել էր ո՛չ միայն բառական ուղիղ ձևերը, այլև հոլովական -ույ, -ոյ վերջավորությունները: Ըստ որում, շնայած այն բանին, որ միջին հայերենի շրջանում այդ վերջավորությունները ընկալվում էին որպես օ ձայնավոր (այդ դեպքում, ինչպես կտեսնենք, յ-ն համր տառ էր), բայց ստորև բերվող օրինակները հավաստում են, որ պատմական հնչյունափոխությունը ընդգրկել էր նաև այդ դիրքը՝ հավանաբար նախքան յ-ի անկումը, փակ վանկում՝ հոգերի հավելմամբ: Դա հաստատվում է հատկապես այն օրինակներով, որոնց մեջ նույն աղբյուրում միևնույն բառը զուգահեռաբար հանդես է գալիս և՛ ոյ, և՛ ու հոլովիչներով: Բերենք մի շարք բնորոշ օրինակներ ինչպես բառական ուղիղ ձևերում, այնպես և հոլովական վերջավորություններում կատարված հնչյունափոխության համար: Մի. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության 1279 թ. ընդօրինակության մեջ (Ձեռ. № 416) ամենուրեք ունենք ուծ< ոյծ, վատուծ<վատոյծ. ինչպես՝ ուծ տուր (26ա), ուծ տան (32ա), ուծ առնուն (36ա), վատուծ լինի (27բ, 28ա, 29ա, 38ա և այլն), «յերեկունն (<երեկոյ) տուր զայս դեղս» (ն. տ. 42բ), «երեկունն տուր խմելոյ» (ն. տ. 47ա) և այլն: Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ...» աշխատության մեջ՝ «հին ընկուզն (<ընկոյզ) և սոխն» (էջ 52), «ջիլն որ թուլ (<թոյլ) է» (73), «տղայքն այլ շուտ (<շոյտ) ողջանան» (ն. տ. 73, 113), «յառաջն յիշենք զխուլն, զի խոյլն լինի զերդ սիսեռն» (ն. տ. 31), կոյր>կուր (ն. տ. 85), «ընչուն ելնելն» (ն. տ. 107), «մարդն որ լուծ լինի և լոյծն սև լինի կամ կանանչ» (ն. տ. 210), ուծ (ն. տ. 209), զրոյց>զրուց, շատագրուց մարդն (ն. տ. 204) և այլն: «Անսիզ Անտիոքայ» աշխատության մեջ՝ «ուծ լինան այրել» (էջբ 27, 29, 37, 39 և այլն), «վատուծ լինալ» (ն. տ. 35), «դատստնելն յիբիկունն լինայ լել» (ն. տ. 27), «ինչվի յիբիկունն» (ն. տ.) և այլն: Այլ սկզբնաղբյուրներում. «ոչ ի ցուցս (<ցոյցս) մարդկան» (Գ. Հովս. հձ. 40, 1170 թ.), «յուծ (<յոյծ) տառապանալք» (ն. տ. 555, 1190 թ. Այրիվանք), «աստուած ողորմի Առուծին հոգուն (<հոգւոյն) և Աղբարականն որդուն (<որդւոյն)» (ն. տ. 569, 1193 թ.), «մերձ ի յայս սրբուհուն (<սրբուհւոյն) Մանէ» (ն. տ. 681, 1201 թ. Դարանաղայց գա-

վառ), «զվանս արտաբու (<արտաբոյ) Երուսաղէմի» (ն. տ. 774, 1215 թ. Երուսաղէմ), «ի յիշխանութեանս մերոյ Վահրամա... որու (<որոյ) տէր Յիսուս ողորմեսցի» (ն. տ. 803, 1219 թ.), «սուղ աշխատանաց փոխհատուց (<փոխհատուց) լինել» (ն. տ. 113, 1252 թ.), «զգիր անփութ (<անփութ) արնէ» (ն. տ. 976, 1246 թ.), «գրեցաւ... ի խնդրոյ մեծ սպարապետին Հայոց Սըմբատա... եղբար թագաւորին Հայոց Հեթմոյ... ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ» (ն. տ. 953, 1244 թ.), «ողորմեսցի... և Աստուածատրու... ի փրկութիւն եղբար իմոյ Աստուածատրոյ» (ն. տ. 686—87, 1201 թ. Դարանաղյաց գավառ), «գունն (<գոյն) գնայ և անպիտան լինի» (Չեռ. 8030, 77բ), «թէ անուշ (<անոյշ) է ու թէ վատ» (ն. տ. 81բ), «անձինն զարութիւնն որ է ուժն» (ն. տ. 83բ), «պաշտէր անուշ քաղցր եղանակ» (Ներս. Շն. ԲԶ 565), «Գրեցաւ տաւնցուցս (<տաւնցոյցս)» (ԺԵ, հճհ. I, 99, 1409 թ. Երուսաղէմ), «ձիթի տակն էր և ճրագն լուս (<լոյս) պակաս» (ԺԵ հճհ. 387, 1428 թ. Խութ գավառ), «յուան (<յոյսն) ամենեցուն» (ն. տ. 59, 1406 թ. Տաթև), «եբբ կու տա իմ աչքս լուս» (ԺԴ հճհ. 312, 1338 թ. Մխ. Անեցի), «իրենց որդուն Զաքարի եւ վասն մեր ճգուս յիշատակ բերաք ջուրս» (Դհվ. I, Անի, 64, 1310 թ.), «միաբանքս ետուն մեզ զատկի ճրագալուցն (<ճրագալոյց) մեզ պատարագել» (ԿՂ Հաղբ. 214, 1273 թ.) և այլն, և այլն:

Միջին հայերենում և հատկապես նրա բանավոր-խոսակցական տարբերակների մեծագույն մասում գրաբարայն բոյր և նրա սեռական-տրական ֆեռ հոլովածակին փոխարինում են համապատասխանաբար բուր և բուր (գրութայան մի քանի տարբերակներով), բուրոջ // բուջ բառաձևերը: Ըստ որում, սրանք ստանում են միջին գրական հայերենի նորմայի աստիճան. իսկ բոյր և ֆեռ ձևերը դիտվում են որպես գրաբարայն բառաձևեր: Մի քանի օրինակներ ձեռագրերի հիշատակարաններից բոյր>բուր փոփոխութայան համար. «յիշեցէք և զբուրն իւր» (ԺԵ հճհ. 135, 1413 թ. Եկեղեց գավառ), «յիշեսցիք և զբուրն իւր» (ն. տ. 444, 1434 թ. Կաֆա), «զբուրն իմ զՇամշէն» (ն. տ. 660, 1429 թ. Մեծոփա վանք), «զբուրն զԵղիսաբեդ» (ԺԵ հճհ. II, 138, 1460 թ. Արծկե), «բաժանեց եւ դուստր ի մարէ, բուր յեղբարէ» (ն. տ. 149, 1461 թ. Եղերդուտ վանք՝ Մուշի մոտ), «յիշեսցիք և բուր իմ Յագիզ» (ն. տ. 228, 1464 թ. Էրէրան վանք), «զբուրն իմ» (ն. տ. 305, 1470 թ. Աղթամար) «զբուրն իւր» (ն. տ. 323, 1471 թ. Խառաբաստա վանք) և այլն, և այլն: Այս բառի վրա հատուկ ուշադրություն դարձրինք այն պատճառով, որ շնայած բուր բառաձևի այսքան տարածվածությանը, այնուամենայնիվ, մատենագրութայան մեջ հանդիպում է նաև ֆիւր հնչյունափոխված տարբերակը, որը մի այլ բարբառային օրինաչափություն է. առայժմ դրա առաջին վկայությունն է Հաղբատի վանքի 1273 թ. մի արձանագրութայան մեջ՝ «ֆիւրենց հայրենաւքն» (ԿՂ Հաղբ. 196), իսկ XV դարից՝ Վայոց ձորում գրված մի հիշատակարանի հետևյալ հատվածինը՝ «իմ ֆիւրն մեռավ, իմ շքիւնն կոտրեցաւ. ինքն գլուխս ման երեկ ու ֆիւրն յերազի տեսայ ու խիստ դառնացայ» (ԺԵ հճհ. II 360, 1474 թ.):

Հետագա դարերի հիշատակարաններում և այլ սկզբնագիր աղբյուրներում ոչ>ու հնչյունափոխութայան վկայությունները շարունակվում են: Այս տեսակետից հատկանշական է Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» հեղինակային ձեռագիրը, որի մեջ ունենք՝ գոյն>գուն, լոյս>լուս, ընկոյզ>ընկուզ, շոյս>շուտ, ֆնֆոյշ>ֆնֆուշ, ստոյզ>լստուֆ, բոյս>բուս, ոյժ>ուժ, լոյժ>լուժ, մքնագոյն>մքնգուն, անոյշ>անուշ, քոյլ>թուլ և այլն, և այլն:

34. Արդեն իսկ գրաբարի շրջանում արձանագրվում է եւ ու իւ երկբար-



բառների արտասանության նույնացում, որը արտահայտվում էր նաև գրության մեջ՝ ստեղծելով միևնույն բառի ուղղապրական զուգաձևություններ, ինչպես՝ ալիւր // ալիւր, աղբիւր // աղբիւր, առեւծ // առիւծ, բելւր // բիւր, հարելւր // հարիւր, մեւս // միւս և այլն<sup>29</sup>: Սրանցից եւ-ով ձևերը համարվում են ավելի հին, այն ժամանակ, երբ հետագա դարերում մատենագրության մեջ ավելի կիրառելի են դառնում իւ-ով ձևերը:

Նկատի ունենալով այս երկբարբառի հետագա պատմական հնչյունափոխության ընթացքը և միջին հայերենի ժամանակաշրջանում նրա գրավոր արտահայտության ձևերը, պետք է ենթադրել, որ, չնչին բացառություններով, այս երկբարբառի հնչյունական արժեքին առավել համապատասխանել է իւ-ով ձևը: Այդ է պայացուցում նաև նրա հետագա երկհնչյունային արժեքավորումը, որ ավանդաբար հասել է մեզ և այժմ գոյություն ունի որպես գրական արտասանության նորմա:

35. Գրաբարում իւ-ը հարում էր այն երկբարբառներին, որոնք կարող էին լինել ինչպես շեշտի տակ, այնպես և շեշտից դուրս. բառաթեքման ու ածանցման ժամանակ շեշտազուրկ լինելով՝ հնչյունափոխության շեր ենթարկվում (ինչպես՝ բիւր, բիւրակն, բիւրական, առիւծ-առիւծոյ և այլն):

Լինելով բարդ հնչյուն, բաղկացած ի և Վ ձայնավորներից՝ այս երկբարբառն իր մեջ կրում էր փոփոխության ենթարկվելու երեք պոտենցիալ հնարավորություն: Որպես բարձրացող հնչերանգով երկբարբառ, նա կարող էր վերածվել երկհնչյունի (յւ)՝ պահպանելով միայն երկրորդ բաղադրիչի ձայնավորական հատկանիշը: Այդ նույն հնչերանգով նա կարող էր վերածվել իր երկրորդ բաղադրիչի որակին (ւ), իսկ որոշ դեպքերում՝ առաջին բաղադրիչի ազդեցությամբ փոխել արտասանության տեղը (ւ̄): Փոփոխության երրորդ հնարավոր վիճակը կարող էր ստեղծվել իջնող հնչերանգի դեպքում, երբ երկբարբառի պարզեցման պրոցեսում վանկարարի հիմնական դերը իր վրա էր վերցնում առաջին բաղադրիչը (ի): Վերջին երկու դեպքում էլ, նայած հնչերանգի բնույթին, երկբարբառի բաղադրիչներից կարող էին ընկնել առաջինը կամ երկրորդը. դա տեղի էր ունենում թիրևս և այն պատճառով, որ հայերենում ի-ն և Վ-ն համեմատաբար թույլ ձայնավորներ էին:

Միջին հայերենում, նրա գործառնության շրջանում, հին երկբարբառների պարզեցման ընդհանուր պրոցեսում, իւ-ի փոփոխության այդ երեք վիճակներն էլ արձանագրվում են գրավոր սկզբնաղբյուրներում:

Գրաբարյան իւ (իւ) երկբարբառի երկհնչյունային արժեքը, նրա պարզ ձայնավորների վերածվելու հիմքի վրա, շատ դյուրությամբ արտահայտվում էր իր հին իւ գրությամբ, ուստի և անհրաժեշտություն չկար նրա երկհնչյունային արժեքը արտահայտելու համար որևէ նոր միջոցի դիմելու: Սակայն, այնուամենայնիվ, սկզբնաղբյուրները որոշ փաստեր տալիս են նրա երկհնչյունային արտասանության: Այսպես, օրինակ՝ միւս բառաձևի դիմաց մի շարք վկայություններով ունենք միուս գրությունը. ինչպես՝ «զմիուսն սիրիցէ, կամ զմիւնն մեծարիցէ, և զմիուսն արհամարհիցէ» (Ձեռ. 8030, էջ 53ա, բ), «ի բո միուս անկամ գալստեանդ» (Ն. տ. 70ա), «միուս անկամ գալուստն» (Ն. տ. 100ա), «ի միուս անգամ գալլստեանն» (ԺԵ հձհ. I, 325, 1424 թ.) և այլն: Կատարված նույն փոփոխության մասին են վկայում նաև հետևյալ փաստերը:

<sup>29</sup> Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևնարկ, Երևան, 1958, էջ 8:

Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» հեղինակային ձեռագրում ունենք արիւն բառի այբուն գրչութիւնը. ինչպես՝ «Եւ հանց որ այբունն ի ծիծն եփի» (էջ 16), «Ես ինքն զայբունին զմբուրն ինք քաշէ» (ն. տ. իդ): Պարզ է, որ բերված օրինակներում այբուն բառածեր առաջացել է արյուն նախաձոր ձևից՝ րչ>յր դրափոխությամբ: Նման օրինակներ են նաև՝ «Գայ զայբիւն» (Անս. 33), «այբոյն շիինի ելած» (ն. տ. 61) և այլն, թեև սրանց մեջ և ձայնավորը արտահայտված է իւ, ոյ տառանշաններով:

Քննարկվող շրջանի մատենագրական աղբյուրները ավելի առատ փաստեր են տալիս այդ երկբարբառի պարզ ձայնավորի վերածվելու վերաբերյալ: Այստեղ առկա է երկու կարգի փոփոխություն՝ իւ>ու և իւ>ի: Պետք է ենթադրել, որ դրանք նախապես եղել են նույն երկբարբառի երկու տարբեր բարբառային հնչյունափոխության դրսևորումներ՝ կապված դրանցում հնչերանգի (բարձրացող կամ իջնող) բնույթի հետ: Սակայն միջին հայերենի շրջանում բարբառային այդ սահմանները խախտված են, և նույն վայրերում ու սկզբնաղբյուրներում հանդիպում են և՛ այս, և՛ այն օրինակափոխյանը ենթարկվող բառեր: Այնուամենայնիվ, միջին հայերենի տարբերակների մեծամասնության համար բնորոշ է իւ>ու փոփոխությունը, բացառությամբ որոշ ձևերի, որոնց մեջ գրական լեզվի համար տիպական է իւ>ի անցումը: Ենթադրելի է նաև, որ իւ-ից առաջացած և (ու) ձայնավորը վայրից վայր ունեցել է նաև քմայնացման երանգ, որը, սակայն, գրությամբ չի արտահայտվել: Բերենք իւ>ու փոփոխությունը արձանագրող մի շարք վկայություններ. «աստուած թուղու զուր (<զիր) զյանցանքն» (Գ. Հովս. հձ. 235, 1058 թ.), «գնեց զայս սուրբ ավետարանս... ուր յիշատակ ուր ծնողած» (ն. տ. 569, 1193 թ.), «ողորմի Առուծին հոգուն» (ն. տ. 569, 1193 թ.), «եւ զնոյն բուրայպատիկ եւս արարին» (ն. տ. 381, 1170 թ.), «նաւթն եւ կուպրն՝ ձուքն եւ ապակին» (Սմբ. Դատ. 16), «ուր (<իւր) մեղացն թողութիւն հայցեցէք» (ԺԴ հձհ. 234, 1313 թ.), «նայ որ պառկիլն դժարնայ, և երբ նստի և ի յոտն ելնէ՝ դուրանայ... և շնչուն ելնելն դուր լինի» (Գրիգ. 107) և այլն: Փաստերն ավելի առատ են հաջորդ դարերի սկզբնաղբյուրներում՝ «Արի և քաջ վարդապետին Սուենաց եպիսկոպոսին» (ԺԵ հձհ. I, 63, 1406 թ.), «Գրեցաւ ի վանքս՝ զՍտաթև, յերկիրս Սուենաց» (ն. տ. 87, 1406 թ., Տաթև), «եղև գրաւ սորա ի յուքհարուր թվականի և յիսուն և եթն յաւելորդի» (ն. տ. 89, 1408 թ.), «ով պատուական եղբայրք, ընտրեալք ի բուրոց» (ն. տ. 112, 1410 թ. Սարկովագանց վանք), «Ես վերջին ստացող խուն (<հիւն) ներսէս... խունն խոցողին» (ն. տ. 125, 1411 թ.), «յիշեցէք... զխունն թումէն» (ԺԵ հձհ. II, 313, 1471 թ. Աղթամար), «դարձեալ յիշեսջիք... զխունն Մարգարէն» (ն. տ. 10, 1456 թ. Բաղնշ) և այլն: Ինչպես նաև Ամիրդովլաթի հեղինակային ձեռագրում՝ «գարունն ի լերդէն ի սիրտն կու դրկէ» (էջ իբ), «եւ թե ձուն (<ձիւն) լինի, նայ ձնին սպտկութիւնն աշիցն զեն առնէ» (Ժգ), «գիտացիր որ աստուած զմարդուն ոսկերքն հիմն և սուն (<սիւն) է արել անձինն» (Ժբ), «հուսուսային (<հիւսիսային) քամի փշէ և անձրև և ձուն պակաս գայ» (ն. տ. ձգ), «քիթն արունիլն» (ն. տ. ծդ), «կարմիր շաքարն ի հարուր դր ջուրն խառնէ» (ն. տ. ծա) և այլն: XVI—XVII դարերից հասած ձեռագրերում ավելի հաճախ են նման գրչությունները:

Տեղի ունեցած իւ>ու հնչյունափոխությունը վկայվում է նաև այնպիսի գրչություններով, որոնց մեջ ու-ի փոխարեն գրված է իւ: Այս տեսակետից առայժմ ամենահին վկայությունն է 944 թ. Անիի արձանագրություններից մեկը. «Ես Շուշան տիկնաց տիկին, զիզակից (փոխանակ՝ զուգակից) Գրիգոր-

րո իշխանի» (ԴՏՎ. I, 32) օրինակը: Նման օրինակներ կան և հաջորդ դարերից՝  
ինչպես՝ «գիւզակից Գրիգորի» (ԴՏՎ. I, Անի, 55, 1210 թ.), «նեղեր, որ ի յայս  
անդամունքս ընծային՝ այս են. կայ որ ի ձիւն (<ձուն) լինին, և են որ ի յե-  
րանքն» (Գրիգ. 164. նույն էջում երկու անգամ) և այլն:

Վերն ասվել է, որ իւ երկբարբառը շեշտազրկությունից չէր հնչյունափոխ-  
վում: Սակայն մյուս կողմից միջին հայերենում ունենք այսպիսի վկայություն-  
ներ՝ «Ուտից, որ ի սև մաղձէ լինի, յայն որ ընծայեալ է ի յարնէն և իւր մրրէն»  
(Գրիգ. 33), «սերմն ի յարնէն ընծայի» (ն. տ. 36), «իւրեանքս ի յայրած արը-  
նին բուխարէն լինին» (ն. տ. 43), «թաթխէ ի յայն արնէն ի վերայ հացին և  
ձգէ ի շուն մի այլ» (ն. տ. 46), «և թէ ձուն լինի, նայ ձնին սպտկութիւն աշիցն  
զեն առնէ» (Ամիրդ., Ուսմն. բժշկ. ժգ) և այլն: Պարզ է, որ բերված օրինակ-  
ներում սղվել կամ ը-ի է փոխվել ոչ թե իւ երկբարբառը, այլ նրանից առաջա-  
ցած ու ձայնավորը, որին և հատուկ էր հնչյունափոխվելու հատկությունը:

Իւ>ի հնչյունափոխությունը հիմնականում արձանագրվում է դերանվա-  
նական ձևերում, թեև այս օրինաչափությանը հարում են նաև հատ ու կենտ  
այլ բառեր: Այսպես, օրինակ՝ «իւրենց որդուն» (ԴՏՎ. I, Անի, 64, 1310 թ.),  
«ինք իր կամաւ ուզէ» (Սմբ. Դատ. 27), «պարտի թագաւորն զիր իրաւունքն  
տանել ըղորդ» (ն. տ. 9), «Եւ նոքա զիւրենց տասնեակն տան յիւրենց եկեղե-  
ցացն» (ն. տ. 12), «պատեհ է որ ավտան իր» (Անս. 25), «բերէ զիր պէտքն»  
(ն. տ. 27), «ի յիւրենց շինին ընկաւ» (ն. տ. 33), «զշոգիքն վարէ յիւրմէն» (Մխ.  
Հեր. 24ա), «ամէն մարդոյ միտք իրեն հաւանի» (Հովհ. Երզն. 186, 1376 թ. ձե-  
ռագրում) և այլն, և այլն: Առհասարակ միջնադարյան տեքստերում սովորա-  
կան ձևեր են՝ իր, իրեն, իրենց և այլն: Այս օրինաչափությանն են հարում նաև  
մի քանի այլ բառեր. ամենավաղ վկայությունն է՝ «ես Սոփի սինեաց տիկին...  
կին Սմպատա որդի Աշոտի Սինեաց իշխանի» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 13, X դ.),  
«մատանի էր անակն եղիր Սոփի Սինեաց» (ն. տ. 13, X դ.), այսպես նաև՝  
երկիւղ>երկիղ (Անս. 29, Մխ. Հեր. 20ա, բ, 26բ և այլն), այս բառի դիմաց  
հանդիպում է նաև երկեղ ձևը (Հովհ. Երզնկ. 185, 1376 թ. ձեռագրում), որը  
համեմատելի է երկեղ տարբերակի հետ:

Մատենագրության մեջ հանդիպում են նաև իւ երկբարբառի ոչ գրության  
դեպքեր. ինչպես, օրինակ՝ արոյն (Մխ. Հեր. 43բ, 46ա), ալոյր (ն. տ. 48ա,  
50ա), նոյթ (ն. տ. 45բ), գործածված սովորական արիւն, ալիւր, նիւթ ձևերի  
հետ միասին, «փորէին զհիմն պարսպին խորագոյն, և հանեալ զքարն և սոյն  
(<սին) եղեալ ի տեղին» (Սմբ. Տարեգ. 163), «շինեաց յանուն իւր սոյն մի ի  
քաղաքին Հոռմա» (Մանր ժմնկ. II. 39, XIII դ. Կիլիկիա) և այլն: Գրության  
այս ձևերում ոչ-ը այլ բան չի ներկայացնում, քան նույն ու հնչյունը: Ուղղա-  
գրական այս շեղումները այն բանի հետևանք են, որ միջին դարերում հայե-  
րենի և ձայնավորը արտահայտվում էր ո՛չ միայն ու գրանշանով, այլև իւ, ոյ  
տառակապակցություններով, քանի որ դրանցով արտահայտվող երկբարբառ-  
ները հնչյունափոխությամբ ստացել էին ս-ի արժեք:

Գրազգրական տարբերակներով ունենք նաև գիւղ, գեւղ, գեաւղ, գեղ: Սրան-  
ցից երկրորդը գրության հին ձև է, որից և զարգացած պիտի լինի վերջինը՝  
գեղ ձևը: Վերջինս մյուսներին հավասար տարածված բառաձև է (օրինակ՝  
«ի գեղն, որ կոչի Շիկբակ» (ԺԴ հճհ. 94, 1313 թ.), որ կենդանի է նաև մեր ժա-  
մանակակից բարբառներում: Դրանցից առաջինը՝ գիւղ («ի գիւղս որ կոչի  
Աւանս» ԺԴ հճհ. 132, 1317 թ.), ըստ իւ երկբարբառի հնչյունափոխության

ընդհանուր ընթացքի, պետք է որ ունենար և արտասանությունը (գրական լեզվի ցւ տարբերակի հետ միասին), ինչպես և ունենք՝ «ի գուղս եկեղեցի իսկի չկար շինած» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 192, 1263 թ.) օրինակում: Հավանաբար բարբառային մի այլ ձև է գեաւղ-ը, որը ունի նաև գրութայն գեօղ տարբերակը («ի գեաւղս, որ կոչի Բատանց»): ԺԴ հձհ. 133, 1317 թ.):

Եւ>ե հնչյունափոխություն՝ արձանագրվում է եւղ>եղ բառում, ինչպես՝ «Կովն լիտր մի եղ տայ պարոնին» (Սմբ. Դատ. 13), «Ա. լիտր եղ, Բ մեղը» (ԺԾ հձհ. I, 71, 1407 թ. Խիզան) և այլն, թեև հանդիպում է նաև իւղ բառաձևը:

Այսպիսով, շնայած ւայն բանին, որ իւ և եւ երկբարբառների արտասանության նույնացման պատճառով հիմնական փոփոխությունը ւ է, բայց, այնուամենայնիվ, կան բառեր էլ, որոնք տարբեր բարբառներում փոփոխության հիմքում ունեցել են եւ տարբերակը. դրանցից են հատկապես գեւղ>գեղ, եւղ>եղ և վերը հիշատակված երկեւղ>երկեղ. թերևս գտնվեն այլ օրինակներ:

36. Գրաբարյան իա կապակցությունը հետագայում ստանում է երկբարբառի արժեք: Իա երկբարբառի հնչյունափոխությունը փաստորեն նույնանում է եա-ի փոփոխության հետ: Այդ ընդհանուր ընթացքը թերևս պայմանավորված է եղել նրանով, որ դրանց առաջին բաղադրիչները դարձել էին նույն հնչյութի տարբերակներ: Թեև օրինակները քիչ են, բայց եղածներն էլ մի ընդհանուր օրինաչափության տակ են գնում. այսպես, օրինակ՝ «յիշատակ ինձ և Մարէմ տիկնա... զՄարէմ տիկին... յիշման արժանի արասջիք» (Գ. Հով. հձ. 555—56, 1190 թ.), Մարէմ (ն. տ. 1015, 1250 թ.): Այսպես նաև միջին հայերենում լայն տարածում ստացած մէկ թվականում, որ հնչյունափոխված է միակ ձևից:

37. Եռաբարբառներից իայ-ը գրաբարում իսկ արձանագրվում է սակավաթիվ բառերում: Միջին հայերենի այն տարբերակները, որոնք գործածության մեջ ունեցել են միայն բառը, այն հնչյունափոխել են մէն-ի, որտեղ եռաբարբառի դիմաց e պարզ ձայնավոր է: Մի քանի օրինակներ. «Մարդ որ մարդ պրկէ՝ ամէնն զինչ կենա՝ պրկաւղին է, եւ զրեհն<sup>30</sup> մէն պարոնին» (Սմբ. Դատ. 12, 17, 28 և այլն), «Յետ իր մահուն աւագ որդին ժառանկէ պապենի ապրանքն մէն» (Անս. 19, 59, 79 և այլն), «զանձնըդ տրւիր վասն օրինաց, Մէն կանգնելով հազրի դիմաց» (Հովհ. Թլկ. 198) և այլն: Այս նույն օրինաչափությամբ ունենք մեռակ // միռակ՝ առաջացած միայնակ բառաձևից: Երկու ձևվերն էլ հավասարապես հանդես են գալիս սկզբնաղբյուրներում և շատ հաճախ հենց նույն բնագրում. ինչպես՝ «Ու ի հետ տարոյն ու աւուրն մեռակ յետ գայ, առանց ոչինչ դիմախօսութեան առնու ղուպրանքն» (Անս. 13), «ձիւտը այնէ միռակ» (ն. տ. 17), «իւր որդիքն միռակ... կարեն գալ ու ջալընջել և առնուլ զապրանքն» (ն. տ. 23), «մեռակ ի դարպասն շղիմէ» (ն. տ. 31), «մեռակ կարճ համէ, որ կովիին» (ն. տ. 33), «մեռակ մարդ ի ներս ածէ» (Սմբ. Դատ. 8, 21) և այլն:

38. Եայ եռաբարբառի հնչյունափոխությունը փաստորեն նույնանում է եա-ի փոփոխության հետ: Լինելով բառավերջում և կորցնելով վերջահանգ յ-ն, այն վերածվում էր երկբարբառի. հետևաբար փոփոխությունը գնում էր նույն ուղղությամբ, ինչ որ եա երկբարբառինը: Ըստ որում, արձանագրվում են ինչպես բաց, այնպես և փակ վանկերում կատարված փոփոխություններ: Այս տեսակետից միջին հայերենի համար բնորոշ բառ է գրաբարի քրիստոնեայ բա-

<sup>30</sup> Հրատարակված տեքստում՝ զրհին:

հաձևը, որ մի կողմից ունի ֆրիստոնէ հնչունափոխված ձևը, ինչպես՝ «կոտորեաց բազում թուրք և քուրդ և ֆրիստոնէֆ» (Գ. Հովս. հձ. 878, 1231թ.), «հայ ֆրիստոնէֆս ի մեկ տեղի պիտի ժողովեն և սպանեն» (ԺԴ հձհ. 275, 1335 թ.), «եթե ֆրիստոնէ գֆրիստոնէ կամաւք սպանէ» (Սմբ. Դատ. 11), «ապա թէ Բրիստոնէ այլ լինի սպանածն» (ն. տ. 31), «Դու երզվիր զետ ֆրիստոնէ» (Անս. 25) և այլն<sup>31</sup>, մյուս կողմից, այս բառը ունի նաև ֆրիստոնայ գրչությունը. եթե նկատի ունենանք յ-ի համրությունը, ապա եռաբարբառի փոխարեն ա է. այսպես՝ «ասէ թէ ես ֆրիստոնայ հմ» (Ձեռ. 8030, 86ա), «ով որ ֆրիստոնայ է՝ թե մահ հանդիպի յիշոցաւք ոչ հայհոյե գֆրիստոնէն» (ն. տ. այստեղ փակ վանկում կրկին եայչէ): Հանդիպում են փակ վանկում նաև եայչայ փոփոխության դեպքեր, ինչպես նույն ձեռագրում՝ «եթէ հրայֆ եթէ հեթանոսք» (49ա), հրայֆն (45բ) և այլն: Սակայն այստեղ էլ միջին գրական հայերենի համար հիմնականը եայչէ փոփոխությունն է, որ հավանաբար նախ կատարվել է փակ վանկում և հետո միայն ընդհանրացել՝ ընդգրկելով նաև բաց վանկը:

39. Եռաբարբառներից տյ-ը, ինչպես ասվել է, հիմնականում հանդես էր գալիս հոլովական վերջավորության մեջ: Միջին հայերենի ժամանակաշրջանում այդ վերջավորության լ-ն ընկել էր, և հին հայերենին հատուկ թեքված այնպիսի բառաձևեր, ինչպիսիք էին, օրինակ՝ ուղտյ, բարտյ, հոգտյ և այլն, այս շրջանում հանդես էին գալիս ուղոյ, բարոյ, հոգոյ ձևերով (երբեմն նաև հոդերով): Հոլովական տյ վերջավորության մեջ լ-ի անկումը արձանագրվում է դեռևս առաջին իսկ ձեռագրերում և նրանց ժամանակակից վիճակն արձանագրություններում, ինչպես, օրինակ՝ «ի թագաւորութեան Սնպատա ուղո վասակա» (Դհվ. III, Վայոց ձոր, 41, 990 թ.), «խաչս Սարգիս առաջնորդի եկեղեցոյս է» (ն. տ. 14, X դ.), «ի թագաւորութեանս Սնպատա ուղո Աշոտո» (Դհվ. II, Տաթև, 19, 1043 թ.), «Ես Գրիգոր վասն իմ մեղուցեալ հոգոյս» (Դհվ. I, Անի, 13, 1008 թ.), «ետու զիմ ուղոյն զԱպուխամրի ոգէբաթին» (ն. տ. 32, XI դ.) և այլն: Ամենահին վիպականներն է VI—VII դարերի մի տապանաբարի վրա պահպանված մականագրության մեջ ուղո սեռականի ձևը. ահա բնագիրը. «Այս է հանգիստ Դաւթի Գըթունեաց տն ուղո վասակա բարէպա(շտ)ի» (Հայ. արձ. առակ. 50, Ապարան): Այս փաստերը վկայում են, որ նշված եռաբարբառի մեջ լ-ի անկումը կատարվել էր միջին հայերենի ժամանակաշրջանից դեռևս շատ առաջ: Ի-ի անկմամբ այդ եռաբարբառը վերածվում էր երկբարբառ ոյ-ի և օրինաչափորեն փակ վանկում հնչունափոխվում ու-ի: Մի քանի օրինակներ՝ «Յաստընվորս ենք կարաւտ յերկնիցն ի բարուն» (Հովհ. Երզնկ. Ձեռ. 8029, 1376 թ. էջ 231ա), «մեք վասն արեւշատութե(ան) պարոն Շահանջի եւ Խուանդլին եւ իրենց ուղուն Զաքարի եւ վասն մեր հոգուս յիշատակ բերաք ջուրս» (Դհվ. I, Անի, 64, 1310 թ.) «Այս նշան փրկական կանգնեալ Յակոբոսէ յանուն սրբոհու ածածնին» (Դհվ. II, Տաթև, 30, 1365 թ.) և այլն:

40. Եւս եռաբարբառը հանդես էր գալիս շեշտի տակ՝ բառավերջում: Սրա փոփոխությունն արձանագրվում է հրկու ուղղությամբ: Բաց վանկում, երբ նրան շէր հաջորդում որևէ բաղաձայն, նրա լ բաղադրիչը ստանում էր Վ-ի ար-

<sup>31</sup> Սրանց մեջ եռաբարբառից առաջացած Ե-ի է գրությունը ունի միայն ուղղագրական արժեք, քանի որ գրության ժամանակ հաշվի է առնված գրաբարում եայ-ի հնչունափոխությունից առաջացած ձայնավորի ուղղագրության է ձևը (ինչպես՝ քրիստոնեայ-քրիստոնէի):

ժեք, և մնում էր եա երկբարբառը, իսկ սա, ինչպես ասվել է վերը, փոխվում էր e-ի: Հոլովական վերջավորությունից դուրս նման բառեր քիչ են հանդիպում. այստեղ ունեք սեաւ>սև, առաջեաւ>առջև (վերջինս կապի ֆունկցիայով), որոնք տարածված բառաձևեր են միջին հայերենում: Ինչպես կարելի է նկատել, նույն փոփոխությանն էր ենթարկվում նաև եզակի գործիականի եա վերջավորությունը. մի օրինակ ևս՝ «ընդ հավանեա (<հովանեա) սուրբ Գրիգորի» (ԺԴ հձհ. 117, 1315 թ.):

Հոգնակի գործիականի եա վերջավորության մեջ հնչյունափոխությունն այլ ընթացք էր ստացել: Եռբարբառն այստեղ թեև գտնվում էր փակ վանկում, բայց վերածվել էր ո՛չ թե մենաբարբառի, այլ երկհնչյունի՝ եաւք>եօք: Հնչյունափոխությունն այստեղ ընդգրկել էր եռբարբառի միայն աւ մասը, սակայն այս անցումը փաստորեն կատարվել էր այն բառերի հոգնակի գործիականի ազդեցությամբ, որոնք ունեին աւ վերջավորություն, և օրինաչափորեն աւ-ը հնչյունափոխել էին օ-ի, ինչպես՝ աշակերտ-աշակերտաւք>աշակերտօք, հրաման-հրամանաւք>հրամանօք, իր-իրաւք>իրօք և այլն: Այսպիսով, եաւք>եօք փոփոխությունը գրական լեզվին հատուկ օրինաչափություն էր, և նրա նման աթեքավորումը կապված էր աւ երկբարբառի ընդհանուր հնչյունափոխության հետ:

#### ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆՆԵՐ

41. Ուսումնասիրվող շրջանում հնչյունափոխությունն ընդգրկել էր նաև միջին հայերենի բաղաձայնական համակարգը, հատկապես նրա պայթական և պայթաշփական հնչյունների ձայնեղ և խուլ շարքերը: Այդ փոփոխություններն իրականում ավելի բազմազան էին, քան նկարագրված են գրականության մեջ և իրենց բնույթով հիշեցնում են այն ելևէջները, որոնք արձանագրվում են մեր ժամանակակից բարբառներում:

Միջին հայերենի շրջանից այդ փոփոխություններից գիտությունն առավել լավ հայտնի է միայն մեկը՝ կիլիկյան հայերենի բաղաձայնական համակարգը: Այս համակարգի գիտական առաջին նկարագրությունը պատկանում է Կարստին, որն իր վերը նշված՝ կիլիկյան հայերենի պատմական քերականությանը նվիրված աշխատության մեջ բացահայտեց ու նկարագրեց այդ փոփոխությունների էությունը: Այդ համակարգը գրաբարի համեմատությամբ ներկայացնում էր մի այնպիսի վիճակ, որտեղ հին ձայնեղ ու խուլ հպականները (պայթականները և պայթաշփականները) փոխել էին իրենց տեղերը, անփոփոխ պահելով շնչեղ խուլերի շարքը: Այն, գրաբարի նման, ուներ եռաստիճանություն, միայն այն տարբերությամբ, որ այստեղ հին խուլ պայթական ու պայթաշփական հնչյունները դարձել էին ձայնեղ, իսկ ձայնեղները՝ խուլ:

Կիլիկյան հայերենի բաղաձայնական համակարգը շատ հաճախ սխալմամբ վերագրվում է ամբողջ միջին հայերենին. այդ ստացվում է հատկապես այն դեպքում, երբ միջին հայերենի բաղաձայնական համակարգ ասելով հասկանում են կիլիկյանը: Մինչդեռ իրականում սրանք տարբեր բաներ են: Ինչպես կտեսնենք ստորև, միջին հայերենում կային բաղաձայնական տարբեր համակարգեր, որոնցից մեկն էլ կիլիկյանն էր:

Միջին հայերենի բաղաձայնական համակարգի հարցում մի փոքր այլ մոտեցում ունի պրոֆ. Ս. Ղազարյանը: Ելնելով իր այն դրույթից, թե «...Կարստի ուսումնասիրությունը ո՛չ թե կիրիկյան բարբառի, այլ միջին հայերենի զարգացման մի փուլի ուսումնասիրություն է»<sup>32</sup>, նա մի կողմից կիրիկյան բաղաձայնական համակարգը փաստորեն վերագրում է ամբողջ միջին հայերենին, բայց և մյուս կողմից՝ միջին հայերենի համար ընդունում է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ, որտեղ հին հայերենի ձայնեղ հպականները վերածվել էին շնչեղ-խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների (հին շնչեղ-խուլերի պահպանմամբ): Այս միտքը առավել որոշակիությամբ արտահայտված է նրա «Հայոց լեզվի համառոտ պատմություն»<sup>33</sup>, իսկ որոշ վերապահումներով, նաև «Միջին հայերեն» աշխատության մեջ<sup>34</sup>: Այս հակասությունը, մեր կարծիքով, առաջացել է այն պատճառով, որ պրոֆ. Ս. Ղազարյանը միջին հայերենի համար անպայմանորեն ցանկացել է գտնել մի ընդհանուր բաղաձայնական համակարգ: Սակայն մատենագրության մեջ նկատելով հին ձայնեղ հպականների շնչեղ-խլացման դեպքեր, որոնք իսկապես նշում են մի այլ համակարգի գոյության փաստը, նա, նույն ժամանակում երկու զուգահեռ համակարգերի գոյությունը անհամատեղելի համարելով, կիրիկյանը հատկացրել է միջին հայերենի մի փուլին, իսկ երկաստիճան խլազուրկ համակարգը համարել նրա հետագա զարգացման արդյունք, թեև վերը նշված աշխատությունների մեջ միջին հայերենի բաղաձայնական համակարգի համար բնորոշ է համարում երկաստիճանությունը:

Գուցե և հարցադրման այդպիսի անհատակության, կամ թերևս Կարստի աշխատության ճնշող հեղինակության փաստով պետք է բացատրել այն հանգամանքը, որ գիտության մեջ առ այսօր միջին հայերենի բաղաձայնական համակարգ հասկացության տակ լռելյայն շարունակում է հասկացվել կիրիկյանը:

Վերը շարադրվածից երևում է, որ միջին հայերենի, որպես հայոց լեզվի պատմական մի փուլի, բաղաձայնական համակարգի բնույթի և նրա տարբերակների հարցը դեռևս մնում է բաց և կարոտ է քննության:

Հայտնի է, որ հայերենի ժամանակակից բարբառներում կան տարբեր բաղաձայնական համակարգեր, որոնք որպես պատմական գոյացություններ, պետք է որ իրենց արմատներն ունեցած լինեին միջին հայերենի շրջանում: Հանրահայտ փաստ է Անանուն Մեկնիչի (VII դար) «էր իսկ ճշմարտապես և ի տեսակի խօսիցն, որպես բազուկ, պազուկ, փազուկ» ասույթը, որը ուղղակի վկայություն է հպականների մեջ տեղի ունեցած տեղաշարժերի: Հիշենք նաև Աճառյանին, որ թեպետ V դարի հայերենի համար բացառում էր բարբառների գոյությունը, բայց առանձին լեզվական տարբերությունների և, մասնավորապես մեզ հետաքրքրող բաղաձայնների փոփոխությունների հաշվառմամբ, ստիպված էր ընդունելու գոնե ենթաբարբառների առկայությունը, նշելով, ոչ «դ>թ, ձ>ց, ք>փ, մի խոսքով թրթռունի և թավի փոխանակությունը սովորական երևույթ էր հունաբանների ժամանակ (Ձ դար)»<sup>35</sup> և այլն, և այլն:

Հարկ կա՝ արդյոք ասելու, որ եթե հին հայերենի բաղաձայնական հա-

<sup>32</sup> Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 92:

<sup>33</sup> Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 258, 259:

<sup>34</sup> Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 167, 172:

<sup>35</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 135:

մակարգի մեջ կատարված փոփոխությունների վկայությունները հասնում են մինչև VI դարը, ապա դրանք առավել ևս պետք է որ գոյություն ունենային միջին հայերենի շրջանում:

42. Այն հանգամանքը, որ միջին հայերենը որպես գրավոր լեզու խիստ կաշկանդված է գրաբարի ավանդական նորմաներով, և լեզուն գործադրողները որոշակի ձգտում են հանդես բերում պահպանելու ուղղագրական հին կանոնները, և այս իսկ տեսակետից լեզվական միավորների գրային արտահայտության մեջ տառերը ոչ բոլոր դեպքերում կարող են նրանց իրական հնչման շփանիշ լինել,—անշուշտ, այս բոլորը դժվարացնում են բաղաձայնների օրինաչափ փոփոխությունների ուսումնասիրության գործը: Սակայն, մյուս կողմից, գրության մեջ հին ուղղագրական նորմաներից կատարվող շեղումները, հայերենում օտար բառերի, ինչպես նաև օտար աղբյուրներում հայերեն բառերի տառադարձությունները,—այս բոլորը հնարավորություն են տալիս հաստատելու որոշակի օրինաչափություններ:

Այնուամենայնիվ, բացի այս բոլորից; բաղաձայնների մեջ կատարված փոփոխությունների իրական պատկերը պարզելու տեսակետից, անհրաժեշտ է սկզբունքորեն պարզել նաև այլ հարցեր: Նախ, օրինական հարց է ծագում. այդ ուղղագրական շեղումները, տառադարձված ձևերը ունե՞ն արդյոք իրական հիմք, թե պարզապես վրիպակներ և գրչագրական սխալներ են: Այստեղ պատասխանը դրական է: Այն հանգամանքը, որ այդ ուղղագրական շեղումների մեջ հերթագայվում են ք // պ // փ, գ // կ // ք, ղ // տ // ք և այլ նույն շարքի հնչյուններ և ո՛չ թե ք // գ // ղ, պ // կ // տ և այլն, ինքնին խոսում է այն մասին, որ դրանք պատահական ու սովորական սխալներ չեն, այլ օրինաչափ անցումներ՝ կապված միջնադարյան այս կամ այն բարբառի բաղաձայնական համակարգի առանձնահատկության հետ: Սակայն այսքանն էլ դեռևս քիչ է: Եթե ավանդական բառաձևի մեջ, ասենք, օրինակ, ք-ի փոխարեն գրված է պ, մենք վստահորեն չենք կարող ասել, թե այստեղ մենք գործ ունենք ձայնեղի խլացման հետ (թեև այդպես էլ կարող է լինել), քանի որ այդ նույն աղբյուրում մի օտար բառի տառադարձման մեջ տեսնում ենք հակառակ երևույթը, երբ օտար Ե-ն տառադարձված է հայերենի պ-ով: Նշանակում է միայն գրության ձևով, հայերենի տառանշանով հնարավոր չէ պարզել նրա հնչյունական արժեքը, հետևաբար և նրանում կատարված փոփոխությունը: Այդ բանը հնարավոր էր անել, եթե մեզ հայտնի լինեին միջնադարում հայերենի տարբերակներում առկա բաղաձայնական համակարգերը, բայց այդ էլ մեզ անհայտ է: Ստեղծվում է կախարդական շրջան, որից, թվում է; թե դժվար է դուրս գալ: Բայց, այնուամենայնիվ, կա ելք: Եվ այդ ելքը հայերենի ժամանակակից բարբառներն են, որոնք հնարավորություն են տալիս կողմնորոշվելու այդ բարդ ու խճճված հարցում:

43. Հայտնի է, որ հայերենի բարբառներում հին հպականների երեք շարքերի (ք, գ, ղ, ձ, ջ // պ, կ, տ, ծ, ց // փ, ք, ց, չ) փոփոխությունները (կամ համապատասխանությունները) ունեն հետևյալ արտահայտությունները (այստեղ և հետագայում նկատի ունենք հիմնականում բառասկզբի դիրքը).

ա) Հին եռաստիճանության<sup>36</sup> պայմաններում ձայնեղ հպականների շար-

<sup>36</sup> Հին հայերենի (գրաբարի) համար պայմանականորեն ընդունում ենք եռաստիճան (ձայնեղների, խուլների և շնչեղ-խուլների շարքերով) բաղաձայնական համակարգ, թեև այժմ եռաստիճանության սահմաններում ընդունված է նաև ձայնեղների փոխարեն շնչեղ-ձայնեղների շարքը: Գրանից հարցի էությունը չի փոխվում:



բը, բացի այն, որ ունի շնչեղ-ձայնեղացում և պարզ ձայնեղների պահպանում, փոխվել է նաև մյուս երկու շարքերի որակին, մի դեպքում՝ խուլերի (բ>ք, գ>կ, դ>տ և այլն) և մյուս դեպքում՝ շնչեղ խուլերի (բ>քհ, գ>կհ, դ>տհ և այլն)։

բ) Հին խուլերի շարքը, ընդհակառակն, եթե մի դեպքում մնացել է անփոփոխ, ապա մի այլ դեպքում փոխվել է հակառակ ուղղությամբ՝ ձայնեղների պ>ք, կ>ց, տ>ժ և այլն)։

գ) Հին շնչեղ-խուլերի շարքը ամենուրեք մնացել է անփոփոխ (այստեղ նկատի չունենք փոխազդեցական և դիրքային հնչյունափոխության առանձին դեպքերը)։

Այսպիսով՝ ժամանակակից հայ բարբառների հպականների համակարգում արձանագրվում է չորս շարք՝ շնչեղ-ձայնեղներ, ձայնեղներ, խուլեր և շնչեղ-խուլեր։

4. Եթե պայմանականորեն ընդունելու լինենք, որ նշված տեղաշարժերը կարող էին տեղի ունեցած լինել նաև միջնադարում, ապա շատ բնական է մակաբերել, որ կատարված այդ փոփոխությունների հիմքի վրա խախտված պիտի լինեին նրանց գրավոր արտահայտության հին ձևերը։ Իրոք. եթե, ասենք, խուլերի շարքը տեղաշարժվել ու փոխվել էր ձայնեղների, ապա հին խուլերն արտահայտող գրերն այժմ պետք է ստանային ձայնեղների արժեք։ Այսպես նաև մյուս փոփոխությունների դեպքում։ Այս կարևոր հանգամանքը նկատի ունենալով, վերը նշված տեղաշարժերի բնույթի հաշվառմամբ, կարելի է որոշել, թե այս շրջանի պայթական և պայթաշփական հնչյունները հայերենի այբուբենի ի՞նչ տառերով կարող էին արտահայտվել։

ա) Շնչեղ-խուլ հնչյունները մի կողմից կարող էին արտահայտվել մեսրոպյան այբուբենի փ, ֆ, ք, ց, շ տառերով, քանի որ, ինչպես ասվեց, ամբողջ հայերենում բաղաձայնների այդ շարքը (բառասկզբում) անփոփոխ էր և դրանք այլ հնչյուններ արտահայտել չէին կարող։ Մյուս կողմից՝ շնչեղ-խուլ հնչյունների նույն շարքը կարող էր արտահայտվել հայերենի ք, գ, դ, ձ, ջ տառերով։ Սա գրության մեջ տեղի էր ունենում այն պարզ պատճառով, որ ձայնեղների փոփոխություններից մեկը շնչեղ-խուլ դառնալն էր։ Այն համակարգում (կամ համակարգերում), որտեղ հայերենի ք, ց, ժ, յ, յ ձայնեղ հպականները փոխարկվել էին շնչեղ-խուլերի, ք, գ, դ, ձ, ջ տառերով կարտահայտվեին քհ, կհ, տհ, զ, ճ հնչյունները։

բ) Խուլ հպականները կարող էին արտահայտվել կա՛մ հին խուլերն արտահայտող պ, տ, կ, ծ, ց տառերով, երբ այդ շարքը մնացած լիներ անփոփոխ, կա՛մ հին ձայնեղներն արտահայտող ք, գ, դ, ձ, ջ տառերով, երբ դրանցով արտահայտված հնչյունները տեղաշարժված լինեին խուլերի։

գ) Ձայնեղ հպականները կարող էին արտահայտվել կա՛մ հին ձայնեղները ներկայացնող ք, գ, դ, ձ, ջ տառերով, երբ դրանք մնացած լինեին անփոփոխ, կա՛մ հին խուլերի՝ պ, տ, կ, ծ, ց գրերով, երբ խուլերը տեղաշարժված լինեին ձայնեղների։

դ) Շնչեղ-ձայնեղները կարող էին արտահայտվել միայն ք, գ, դ, ձ, ջ շարքի գրերի միջոցով, քանի որ հպականների մյուս շարքերից ո՛չ մեկը չի փոխարկվում այս շարքի հնչյուններին։

Արդ, հաշվի առնելով բաղաձայնների տեղաշարժերի պայմաններում նրանց գրավոր արտահայտության հնարավոր դեպքերը, քննենք, թե միջին հայերենում հպականների պատմականորեն առաջացած ինչպիսի՛ փոփոխու-

թյուններ են արձանագրվում և այդ հիմքի վրա ի՛նչ համակարգեր կարելի է առանձնացնել:

Նախ արձանագրվող տեղաշարժերի մասին ընդհանրապես:

45. Միջին հայերենում շնչեղ-խուլերի շարքի անվթար կամ անփոփոխ մնալը ապացուցվում է ո՛չ միայն ժամանակակից հայ բարբառների ընձեռած փաստերով կամ միջնադարյան գրավոր աղբյուրներում այդ հնչյունների ավանդական գրությամբ, որը, տվյալ դեպքում, կարող է և խաբուսիկ լինել, այլ և քննարկվող շրջանում հայերենի մեջ մտած այն բազմաթիվ օտար բաների գրությամբ, որոնց մեջ օտարլեզվյան շնչեղ-խուլերը հայերենում արտահայտված են մեր այբուբենի համապատասխան տառերով: Այս տեսակետից առանձնապես կարևոր են արաբա-պարսկական և թուրքական փոխառությունները, որոնց փոխատու լեզուները ունենալով երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ, բազմաթիվ օրինակներ են տալիս շնչեղ-խուլերի գրավոր արտահայտության համար: Ըստ որում, օտարլեզվյան շնչեղ-խուլի գրավոր արտահայտությունը հայերենում ընդհանուր է նրա բոլոր տարբերակների համար՝ բառի մեջ գրաված բոլոր դիրքերում: Այսպես, օրինակ՝ շնայած թրք. athābeg բառի ձայնեղ պայթականների տարբեր տառադարձություններին, որը պայմանավորված է տարբեր վայրերի բաղաձայնական համակարգերի առկայությամբ, շնչեղ-խուլ th-ն ամենուրեք տառադարձվում է ք-ով. ինչպես՝ «Աթաբակ Ալտիզին» (Գ. Հովս. հձ. 451, 1173 թ.), «ի տերութես Ածասէր աթաբակ Իւանէի» (Դհվ. I, Անի, 7, 1222 թ.), «Ես Խուանդզէս զուզակից աթաբակ Շահնշահի» (ն. տ. 27, 1320 թ.), «ես աթապակ Վարհամ» (ն. տ. 44, 1342 թ.), «... յիշխանութեն... աթաբակ ամիրսպասալար պարոն Սաղունին» (Կղ Հաղբ. 193, 1273 թ.), «... յ պարոնութեան աթապակ Իւանին» (ԺԴ հձհ. 614, 1396 թ.) և այլն: Սակայն ավելի վստահելի օրինակներ են այն բառերը, որոնք օտարլեզվյան շնչեղ-խուլերը ունեն բառասկզբում. այսպես, օրինակ՝ արբ. thadbir=թապիր//թատպիր, պրս. thāza=թածա//թագա, պրս. tha]=թան, արբ. khāfur=քափուր//քաֆուր, պրս. khah—ruba=քահրբայ, պրս. phānid=փեմիա, պրս. pharhiz=փահրեզ, պրս. çarx=չարի, պրս. çārahk=չարեկ//չարեկ, թրք. çavuş=չաւուշ//չավուշ և այլն, և այլն: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել նաև բառամիջի և բառավերջի դիրքերի համար, որտեղ նույնպես օտարլեզվյան շնչեղ-խուլերը հայերենում հիմնականում արտահայտվում են համապատասխան տառերով:

Բերված օրինակներում, ինչպես երևում է, փոխատու լեզուների ph, th, kh, ç շնչեղ-խուլ հնչյունները հայերենում արտահայտված են փ, թ, ք, չ տառերով, որը միաժամանակ նշանակում է, որ հայերենի տառերի այդ շարքը ուներ շնչեղ-խուլերի արժեք: Օրինակների մեջ չի արտահայտված միայն ց շնչեղ-խուլը, քանի որ վկայակոչված լեզուների մեջ բացակայում է այդ հնչյունը: Մի օրինակ ունենք ֆրանսերենից՝ hassine=պացին (Անս. 45), ուր ss-ի դիմաց հայերենում ց է: Սակայն հին ֆրանսերենի, ինչպես և առհասարակ եվրոպական լեզուների խուլերի շնչեղությունը հավանաբար շատ թույլ է եղել, որի պատճառով էլ նրանք հայերի կողմից հիմնականում ընկալվել են որպես պարզ խուլեր: Հենց այդ պատճառով էլ, ինչպես կտեսնենք, այդ հնչյունները կիլիկյան հայերենում գիտակցվել են որպես խուլեր: Անկախ այս բոլորից, քանի որ փոխառյալ բառերի տառադարձությամբ հաստատվում է հայերենի շնչեղ-խուլերի մեծամասնության անփոփոխ մնալը, այդ շարքում

ց-ն բացառութիւն կազմել չէր կարող, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ ձայնեղների ընդհանուր շնչեղ-խլացման պրոցեսում (որի մասին ստորև) հնչյունափոխված ձ-ն արտահայտվում էր ց-ի միջոցով:

Սկզբնաղբյուրներում հանդիպում են և այնպիսի բառաձևեր, որոնց մեջ շնչեղ-խուլ հնչյունները (այդ թվում և բառասկզբինը) արտահայտված են հայերենի ձայնեղներն արտահայտող (բ, գ, դ, ձ, ջ) տառերով: Բայց սրանք ո՛չ թե մատնանշում են շնչեղ-խուլների ձայնեղացում, այլ ընդհակառակն, դրանցով արտահայտվում են համապատասխան շնչեղ-խուլ հնչյուններ:

46. Խուլ պայթականներն ու պայթաշփականները, ինչպես արդեն ասվել է (նկատի ունենալով բարբառներում այդ շարքի փոփոխությունները), կարող էին ներկայանալ երկու վիճակում: Մի դեպքում մնալ անփոփոխ, մյուս դեպքում՝ փոխվել ձայնեղների: Անփոփոխ դրութիւնը գրութիւն մեջ այլ կերպ չէր կարող արտահայտվել, քան ավանդական գրութիւն պահպանմամբ: Ըստ որում, խուլների անփոփոխ մնալը հնարավոր էր մի՛ կողմից հին եռաստիճանութիւն պայմաններում և մյու՛ս կողմից՝ ձայնեղազուրկ երկաստիճան համակարգում:

Հայտնի է նաև, որ խուլների անփոփոխ վիճակին զուգահեռ, միջին հայերենի շրջանում առկա էր նաև խուլների տեղաշարժը դեպի ձայնեղների շարքը: Այս երևույթը հանգամանորեն ուսումնասիրված ու բացահայտված է հատկապես այն փոխառյալ բառերի միջոցով, որոնց մեջ փոխատու լեզվի ձայնեղ հպականները տառադարձված են հայերենի հին խուլներն արտահայտող տառերով, այսինքն՝ օտարլեզվյան *b, g, d, j* հնչյունները ներկայացված *ե պ, կ, տ, ճ* գրերով, որ ինքնին նշանակում է, թե սրանք ունեին ձայնեղ հնչյունների արժեքներ: Բերենք օրինակներ բառասկզբի դիրքի համար. հֆր. *baron* = պարոն, որից նաև պարոնութիւն<sup>37</sup>, հֆր. *bail* = պայլ, որից նաև պայլութիւն, հֆր. *bassine* = պացին, արբ. *burj* = պուրճ, արբ. *buq* = պուկ, արբ. *bābunaj* = պապունիճ, արբ. *bizarqatun* = պզրկտուն, արբ. *balγam* = պըլղամ//պալղամ, արբ. *buxār* = պուխար, հֆր. *défendre* = տըֆընդել, հֆր. *double* = տուպլ, հֆր. *duc* = տուկ, հֆր. *douaire* = տուայր, հուեն. *διδάχτη* = տիաթիկ, արբ. *darba* = տարպայ, արբ. *dafthar* = տֆթար, արբ. *durāj* = տուռայճ, արբ. *Julab* = ցուլապ, հֆր. *Iosselin* = ձաւալին և ալլն, և ալլն:

Ինչպես կարելի է նկատել, խուլների ձայնեղացումը հատուկ էր ո՛չ միայն բառասկզբի, այլև բառի մեջ գրաված բոլոր դիրքերին: Սրանց վրա կարելի է ավելացնել բառամիջի և բառավերջի դիրքերի հետևյալ օրինակները. արբ. *mahlab* = մահլապ, արբ. *yalaba* = խալապա, արբ. *xabar* = խապար, արբ. *rubb* = ռուպ, արբ. *hab* = հապ, արբ. *'unnab* = յունապ, արբ. *šarāb* = շարապ, պրս. *sakhanjabin* = սքնճալին, արբ. *sadr* = սատր, արբ. *mazād* = մազատ, պրս. *igdiš* = իկտիշ, արբ. *maydan* = մայտան, լտ. *legato* = լիկաթ, հֆր. *lige* = լիճ Շճորտ», որից նաև լնութիւն, անլին և ալլն, և ալլն<sup>38</sup>:

<sup>37</sup> Պարոն բառակը հիմնականում հանդիպում է նշված ձևով. այն փոխառութիւն շրջանում՝ արևմտյան բարբառներում հարազատորեն էր արտահայտում փոխատու լեզվի ձայնեղ պայթականը հայերենի պ-ի միջոցով: Հետագայում այդ բառակը տարածվեց Հայաստանի արևելյան շրջաններում գրականութիւն միջոցով, որի պատճառով էլ պահպանվեց պ-ով գրութիւնը. այնուհետև պարոն բառակը ընկալվեց արևելյան արտասանութիւնը և շրջանառութիւն մեջ մտավ *paron* արժեքով: Սակայն հանդիպում է նաև բարոն ձևով (տե՛ս § 47):

<sup>38</sup> Օրինակները հիմնականում քաղված են Սմբատի Դատաստանագրքից, Տարեգրքից, Անտիզ Անտիոքայ աշխատութիւնից, Մխ. Հեռացու Ջերմանց Մխիթարութիւնից:

Հիմնվելով վերը բերված համապատասխանությունների վրա և դատելով հակառակ կողմից, պետք է ասել, որ հայերենի պ, տ, կ, ն, ծ (թեև վերջինիս համար օրինակներ չկան հասկանալի պատճառով) տառերով արտահայտվում էին b, d, g, j, ձայնեղ հնչյունները:

Եռու հպականների տեղաշարժը, ինչպես նաև այդ պատճառով ձայնեղները խուլերով արտահայտելու երևույթը դրսևորվում էր ուղղագրության մեջ կատարվող մի այլ շեղումով: Հայտնի է հայերենի բարբառների այն առանձնահատկություններից մեկը, երբ ռնգային մ և ն հնչյուններից հետո ոչ միայն պահպանվում է ձայնեղ հպականների որակը, այլև շատ դեպքերում խուլերն են դրանց առնմանությամբ ձայնեղանում: Եվ շնայած այն բանին, որ մեր բարբառները հանդես են բերում պայթական ու պայթաշփական հնչյունների այլ և այլ փոփոխություններ, բայց նշված ռնգայիններից, և հատկապես ն-ից հետո, ձայնեղների տեղաշարժեր հիմնականում չեն կատարում: Այդ իսկ տեսակետից՝ միջնադարյան մատենագրության մեջ հին նգ, նբ, նդ, նձ, նջ կապակցությունների փոխարեն նկ, նպ, նտ, նծ, նճ գրությունները արտահայտում են հենց կ, պ, տ, ծ, և տառերի ձայնեղ որակը, քանի որ այն բարբառներում, որտեղ ձայնեղները խլացել էին և խուլերը ձայնեղացել, նշված դիրքում ձայնեղ հպականների անփոփոխ մնալը հնարավոր էր արտահայտել միայն այդ ձևով:

Միակ դիրքը, որտեղ խուլերը պահպանում էին իրենց որակը, դա խուլ սուլականների և շշականների հարևանությամբ էր, ինչպես, օրինակ՝ սպաննել // սպանել, շտապել, քշտել և այլն: Այդ շատ որոշակիորեն երևում է և այն օտար բառերում, որոնց մեջ սուլականի մոտ հանդես եկող խուլ պայթականը հայերենում արտահայտվում էր խուլի նշանով, ինչպես՝ հֆր. chastier = ջաւտել, իտ. contestabile = գուճգուստապլ, հֆր. maistre = մայստո և այլն:

47. Հին ձայնեղ հպականների շարքի համար, եթե մի կողմից արձանագրվել են օրինաչափ փոփոխություններ դեպի պարզ խուլերի շարքը, ապա մյուս կողմից ակնհայտ է նաև, որ կան միջին հայերենի այնպիսի տարբերակներ, որոնց մեջ այդ բաղաձայնները պահպանում են իրենց հին որակը: Զայնեղ հպականների անփոփոխ վիճակի պահպանումը հատկապես բացահայտվում է այն սկզբնաղբյուրներում, որոնց մեջ փոխառյալ բառերի օտարլեզվյան ձայնեղները հայերենում ևս արտահայտված են ձայնեղներով, և այդ այն դեպքում, երբ այլ կարգի սկզբնաղբյուրներում դրանք ներկայացնում են հին խուլերն արտահայտող տառերով: Այսպես, օրինակ՝ եթե որոշ սկզբնաղբյուրներում օրինաչափորեն ունենք արբ. burj = պուրճ, հֆր. duc = տուկ, հֆր. baron = պարոն և այլն, իսկ այլ սկզբնաղբյուրներում, այլ օրինաչափությամբ՝ duc = դուկ, burj = բուրջ (Անիի արձանագրություններում), baron = բարոն (Վայոց-ձորում) և այլն, ապա ակնհայտ է, որ թեև երկու դեպքում էլ տարբեր տառերով արտահայտված են նույն ձայնեղ հնչյունները, բայց ձայնեղությունը մի դեպքում նշված է հին խուլի, մյուս դեպքում ձայնեղ տառի միջոցով: Ինչ խոսք, որ երկու տառադարձություններից մեկը արձանագրում է խուլի ձայնեղացում, իսկ մյուսը՝ ձայնեղի պահպանում: Ինչպես կտեսնենք ստորև, միջին հայերենի որոշ տարբերակներում միանգամայն հետևողականորեն է կիրառվում տառադարձության ձայնեղ = ձայնեղ սկզբունքը: Եվ թեև այս դեպքում իրական հնչումը համընկնում է նրանց գրավոր արտահայտության ձևերի հետ և հնարավոր չէ դրանց հիման վրա դատողություններ անել, բայց հենց միայն օտար բառերի տառադարձված ձևերը բավական են պնդելու, որ միջին

հայերենում ձայնեղ հպականների դրսևորումներից մեկը նրանց ձայնեղության պահպանումն էր:

48. Քննարկվող շրջանում ձայնեղ հպականների պատմական փոփոխություններից մեկը, որ համեմատաբար ավելի լավ է ուսումնասիրված, նրանց խլացումն է: Այդ հատկապես երևում է այն սկզբնաղբյուրներում, որոնց մեջ փոխառյալ բառերի օտարլեզվյան խուլ հնչյունները հայերենում հետևողականորեն ներկայացվում են մեսրոպյան այբուբենի ք, գ, դ, ջ տառերով: Բերենք մի շարք օրինակներ կիլիկյան սկզբնաղբյուրներից. հֆր. plaid=բլայթ, որից բլայթել, հֆր. privileg=բրվլիե, հֆր. canne, cane=զան, հֆր. prince=բրինձ, իտ. contestabile=զուևդուստապլ, chambrelan=ջամբուլայ, հֆր. chastier=ջաստել, հֆր. chalonge=ջալունջ, որից ջալընջել և այլն:

Բառասկզբի դիրքում օտարլեզվյան խուլ հպականների տառադարձումը հայերենի ձայնեղներով ինքնին նշանակում է, որ տվյալ համակարգի սահմաններում հայերենի հին ձայնեղները փոխվել էին խուլերի և տվյալ դեպքում, բերված օրինակներում ձայնեղներն արտահայտում էին ո՛չ թե իրենց նախկին հնչյունական արժեքը, այլ՝ խուլ հնչյունների: Իսկ այս նշանակում է, որ միջին հայերենի բաղաձայնական համակարգի համար բացի վերը նշված ձայնեղ հպականների շարքի անփոփոխ պահպանումից, առկա էր նաև այդ շարքի մի նոր որակը՝ խլացումը:

49. Մատենագրությունը բավականին փաստեր է տալիս նաև ձայնեղ հպականների մի այլ կարգի փոփոխության վերաբերյալ. դա նրանց շնչեղ-խլացումն է: Այս երևույթը առավել առատ փաստերով արձանագրվում է հատկապես բառամիջի և բառավերջի դիրքերում, երբ տեղի ունեցած հնչյունափոխությունը, ըստ հնչական դրույթյան, անմիջական արտահայտություն է ստանում շնչեղ-խուլերը ներկայացնող տառերով: Այդ հատկապես արձանագրվում է ձայնավորից հետո բառավերջում և Ե ձայնորդից հետո ընկած դիրքում: Մի քանի բնորոշ օրինակներ. «արեան գուփն» (Գ. Հովս. հձ. 909, 1236 թ.), «...զթումաս սարկաւաճն աղաչեմ յիշել» (ն. տ. 874, 1231 թ. Կիլիկիա), «...եհաս ինձ սու՛ք անմխիթար» (ն. տ. 857, 1227 թ. Խլայթ), «ընլով հո՛քս» (ն. տ. 588, 1195 թ.), յաղա՛ս (ն. տ. 496, 1183 թ. երեք անգամ), «...քուրոշս սորին՝ Շնոֆոր տիկնա» (ԺԴ հձհ. 429, 1357 թ. Կաֆա), «...քուրոշն Թանկ Ազիզին» (ն. տ. 353, 1347 թ. Անի), փափազ>փափաֆ և դրանից ածանցված ձևերում՝ «ըստ փափաճման իմոցս» (ԺԴ հձհ. 27, 1304 թ. Կիլիկիա), «յաղագս փափաճանաց նորա» (ն. տ. 42, 1306 թ. Բերդակ), «փափաճ յոյժ տենչալի... ի փափաճ սորին» (ն. տ. 44, 1306 թ. Հովհ. Երզնկացի), «փափաճն ստիպէր զիս... փափաճելի» (ն. տ. 52, 1304 թ. Կիլիկիա), «յեռափափաճ սէր նոցա» (ն. տ. 66, 1310 թ. Հարատես վանք), «յոյժ փափաճանաւք» (ն. տ. 94, 1313 թ. Տայոց երկիր), «փափաճող եղէ... զփափաճ անձին իմոյ» (ն. տ. 96, 1315 թ. Սեբաստիա), «փափաճումն բանից» (ն. տ. 135, 1317 թ. Գլաձոր), «ողորմեա... Սարճիս» (ն. տ. 32, 1304 թ. Երզնկա. 150, 1318 թ. Կիպրոս), «զկարճն առնուն» (Մմբ. Դատ. 23, Գ. Հովս. հձ. 39, 1170 թ.), «անթարճմանաբար» (Գ. Հովս. հձ. 825, 1223 թ.), «թարճմանաց» (ն. տ. 71, 1306 թ.), «վարթայպետիս Դաւթի» (ԺԴ հձհ. 8, 1302 թ. Սյունիք), «աւարումն եղաւ ւամբրոն բերթի» (ն. տ. 521, 1376 թ. Այաս), «Վարթերին աւզնականութեամբ ... Վարթերին և ծնողաց ... Վարթին» (Գ. Հովս. հձ. 975, 1246 թ.), «վայ անեն իմ որթոյն», (ն. տ. 657, ԺԲ դ.) և այլն, և այլն:

Նույն դիրքում ձայնեղների շնչեղ-խլացման երևույթն են հաստատում հակառակ գրությամբ ձևերը, երբ հին շնչեղ-խուլ հնչյունները արտահայտված են ձայնեղի տառերով. ինչպես, օրինակ՝ «ռահ ու զգիրզ (<զգիրթ) ի յարեգակն հանին» (ԺԴ հճՏ. 275, 1335 թ. Կիլիկիա), «ես թաթեոս տուի զիմ գիրզս ի Հոռոմա Ոսպեթալս» (Գ. Հովս. հճ. 846, 1226 թ.), «եսու յածածնիս ը գիրզ» (ԿՂ. Սանահ. 111, 1197 թ.), «յիշեցէք, ով սուրբ ընթերձողք» (ԺԴ հճՏ. 55, 1307 թ.) և այլն:

Բացի բերված օրինակներից, ինչպես հնչական գրությամբ, այնպես և նրա հակառակ գրությամբ օրինակներ հանդիպում են բոլոր ձևագրերում, որ վկայում է այն մասին, որ բառամիջում և բառավերջում ձայնեղ հպականների շնչեղ-խլացումը չափազանց տարածված երևույթ էր, թեև բացառված չէր այնպիսի բարբառների գոյությունը, որոնց մեջ այդ դիրքերում ձայնեղները պահպանած լինեին իրենց ձայնեղությունը:

Վերը բերված օրինակներում երկու դեպքում էլ՝ գրության տարբեր միջոցներով, արձանագրվում է միևնույն երևույթը՝ ձայնեղ հպականների շնչեղ-խլացումը: Սակայն ձայնեղների շնչեղ-խլացումը որպես համակարգային երևույթ միայն այս տիպի փոփոխությունների փաստերով չի կարելի լրիվ հիմնավորված համարել (թեև սրանց մի մասը կարող է բխել այդ համակարգից), քանի-որ բառամիջում և բառավերջում շնչեղ-խլացումը, ինչպես այդ հայտնի է մեր ժամանակակից բարբառներից, տեղի է ունենում տարբեր բաղաձայնական համակարգերի սահմաններում: Ուստի և այն՝ որպես համակարգային երևույթ, պետք է հիմնավորվի առավելապես բառասկզբի դիրքի օրինակներով:

Բառասկզբում ևս ձայնեղ հպականների շնչեղ-խլացումը դրսևորվում է երկու եղանակով: Նախ, երբ կատարված հնչյունափոխությունը արձանագրվում է ըստ արտասանության, այսինքն, երբ ըստ հնչական գրության հին ձայնեղ հպականները արտահայտվում են շնչեղ-խուլների տառերով: Բերենք միայն մի քանի օրինակներ. «...Ողորմեա Յովաննէս քահանայի և գրչի... այլև նփրեմի մանկագոյն քահանայի, որ հայցեցին գրել ի քիրքս» (Գ. Հովս. հճ. 855, 1227 թ.), «Թիւ քրքիս է հայոց թիւէն ՉԻԱ» (ԺԴ հճՏ. 181, 1322 թ.), «ես տիկնաց տիկին, դուստր Քրգորոյ մագիստոսին» (Վիմ. Տար. 22. 1042 թ. Տեկոր, և թև օրինակը վստահելի է). ավելի վաղ շրջանի վկայություն է՝ «...ի ձեռաց Թաթի կորապաղատի» (Գ. Հովս. հճ. 166, 999 թ. Կոզովիտ) և այլն: Բերված վկայություններում գիրք, Գրիգոր, Գալիք բառերի բառասկզբի հին ձայնեղ հպականները ըստ արտասանության կամ կատարված փոփոխության տառագարձվել են շնչեղ-խուլներն արտահայտող տառերով (քիրք, Քրիգոր, Թաթի), և քանի որ հին շնչեղ-խուլների շարքը անփոփոխ մնալու պատճառով նրանց գրանշանները այլ հնչյուններ արտահայտել չէին կարող, ուստի և որոշակի է, որ բերված օրինակներում գործ ունենք ձայնեղ հպականների շնչեղ-խլացման հետ: Ավելի ուշ շրջանի ձևագրերի մեջ ավելի հաճախակի են հանդիպում գրության նման ձևեր, ինչպես՝ քեղեցիկ (<գեղեցիկ), քնալ (<գնալ), քէղ (<դեղ), քրունք (<գրունք=գիր) և այլն, և այլն:

Սրանց վրա թերևս կարելի է ավելացնել նաև բառամիջի անկախ դիրքում արձանագրվող փոփոխությունները, ինչպես՝ «...Մայրաքաղաքին Սեփաստիոյ (ԺԴ հճՏ. 163, 1320 թ.), «...յայսմ ամի շո՛ւաւ յՆրուսաղէմ» (ն. տ. 148, 1318 թ.), Թաթիոս // Թաթէոս (Գ. Հովս. հճ. 741, 1210 թ., ԺԴ հճՏ. 607, 1394 թ.) և այլն:

Ճայնեղների շնչեղ-խլացման հրեույթն արտահայտվում է նաև հակառակ գրությամբ, երբ շնչեղ-խուլ հնչյունները ներկայացվում են ձայնեղ տառերով. այսպես, օրինակ՝ «...Մատնեցաւ աշխարհն հայոց ի ձեռն խուժաղուժ ազգացն, որ կոչի դադար» (Գ. Հովս. հձ. 931, 1238 թ.), «...ի տեառն Դադէոսի ժամանակի» (ն. տ. 166, 999 թ. Կոզովիտ. նույն գրիչի մոտ՝ նույն էջում՝ զուգահեռաբար նաև՝ Թադէոս), «...յոգնամեղ և բցուն գրչի խաշատրոյ» (ԺԴ հձհ. 63, 1309 թ.) և այլն: Բերված օրինակներից մեկը՝ thathar ցեղանունը, որ հայերենի այլ սկզբնաղբյուրներում օրինաչափորեն տառադարձված է թաթար ձևով, այստեղ դրա դիմաց ունենք դադար. պարզ է, որ եթե օտար շնչեղ-խուլը արտահայտված է ձայնեղով, և վերջինս էլ ունի շնչեղ-խուլի արժեք, ապա այստեղ գործ ունենք ձայնեղի շնչեղ-խլացման հետ: Հայերենի համար Թադէոս և փցուն բառերում շնչեղ-խուլների արտահայտումը ձայնեղներով նույնպես նշան է ձայնեղների շնչեղ-խլացման, քանի որ, ինչպես նշվել է, շնչեղ-խուլ հնչյունները բառասկզբում տեղաշարժի չէին ենթարկվել, ուստի և իրենցից բացի այլ արժեքներ ունենալ չէին կարող: Հատկանշական է նաև, որ ինչպես վերը նշված Թաիթ (<Դաիթ>), այնպես և ստորև բերված Դադէոս բառաձևերը հանդիպում են Կոզովիտում գրված նույն հիշատակարանում (999 թ.):

Այսպիսով, միջին հայերենում ձայնեղ հպականների պատմական փոփոխություններից մեկն էլ նրանց շնչեղ-խլացումն է:

50. Եթե ընդհանրացնելու լինենք վերը շարադրվածը, ապա կարելի է ասել, որ միջին հայերենի շրջանում հպականների երեք շարքերը՝ բացի հին եռաստիճանությունից ապահանման վիճակից, հանդես էին բերում նաև ձայնեղ և խուլ շարքերի փոփոխություններ: Ըստ որում ձայնեղ հպականները մի դեպքում փոխվել էին խուլների, մի այլ դեպքում՝ շնչեղ-խուլների, մինչդեռ խուլների տեղաշարժը կատարվել էր հակառակ ուղղությամբ. նրանք անցել էին ձայնեղների շարքը:

Հասկանալի է, որ այս փոփոխությունները չէին կարող տեղավորվել մի սխտեմի մեջ, և բնական է կարծել, որ այդ տեղաշարժերը միջին հայերենի առանձին տարբերակներում ստեղծում էին բաղաձայնական տարբեր համակարգեր:

51. Այժմ փորձենք, ինչքան այդ հնարավոր է մատենագրական տվյալներով, վեր հանել միջին հայերենի շրջանում առկա բաղաձայնական համակարգերը:

Դրանցից, ինչպես արդեն ասվել է, գիտությունը առավել լավ հայտնի է այսպես կոչված կիլիկյան համակարգը: Միջին հայերենի այս տարբերակում, միևնույն սկզբնաղբյուրներում հանդիպող օտար բառերի տառադարձման մեջ այնպիսի մի սկզբունքի կիրառում, երբ օտարլեզվյան խուլերը ներկայացվում են հայերենի ձայնեղներով, և ձայնեղները խուլերով, ինչպես, օրինակ՝ մի կողմից՝ plaid=բլայթ, privileg=բրվլիք, cane=գան, chastier=չաստել և այլն և մյուս կողմից՝ bail=պայլ, baron=պարոն, banier=պաներ, double=տուպլ և այլն, պարզորոշ ակնարկում են հին ձայնեղ հպականների շարքի տեղաշարժը դեպի խուլերը և հին խուլերինը՝ դեպի ձայնեղները: Արդյունքում, իհարկե, պահպանվել է եռաստիճանությունը (քանի որ այստեղ ևս անփոփոխ են շնչեղ-խուլները), բայց այն տարբերությամբ, որ հին ձայնեղներն ու խուլերը փոխել են իրենց տեղերը: Ըստ այդմ, բաղաձայնների կիլիկյան համա-

կարգը ունի հետևյալ պատկերը (փակագծերում տրված են հնչյունները արտահայտող տառերը).

b (պ)	g (կ)	d (տ)	j (ծ)	ǰ (ճ)
p (բ)	k (ք)	t (դ)	c (ձ)	č (ջ)
ph (փ)	kh (ք)	th (թ)	ç (ց)	č̣ (չ)

Այս համակարգը ամենայն որոշակիություններ արտահայտված է կիլիկյան մատենագրության մեջ, ինչպես, օրինակ՝ Մմբատ Սպարապետի «Դատաստանագիրք», «Տարեգիրք», թարգմանական «Անսիզք Անտիոքայ» աշխատություններում, մանր ժամանակագրություններում, դաշնագրերում, հիշատակարաններում և այլուր: Ամենայն հավանականությամբ այս համակարգը հատուկ էր ոչ միայն կիլիկյան պետականության շրջանակներում գործածվող հայերենին, այլ նաև Արևմտյան Հայաստանի այլ բարբառներին:

52. Միջին հայերենի շրջանում պետք է առանձնացնել նաև եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ, որի մեջ հին ձայնեղների, խուլների և շնչեղ-խուլների շարքերը պահպանվել էին անփոփոխ: Այս համակարգի երևարկումը թեև դժվարանում է նրանով, որ այն իր արտահայտման ձևերով համընկնում է ավանդական գրության հետ, բայց վերը նկարագրված կիլիկյան համակարգի ֆոնի վրա, որտեղ ձայնեղներն ու խուլները գրության մեջ արտահայտվում էին իրենց հին արժեքներին հակառակ գրանշաններով, եռաստիճան անտեղաշարժ համակարգը բացահայտվում է հենց նրանով, որ այս դեպքում օտարլեզվյան հնչյունները ներկայացվում են իրենց հին համապատասխանություններով: Որպես բնորոշ օրինակ կարելի է բերել Մատենադարանի № 7151 ձեռագրում պահպանված հայատառ արաբերեն-պարսկերեն-հայերեն բառարանի մեջ օտար բառերի տառադարձությունը: Բառարանը, որը գրված է XIV դարում Սյունիքում, թեև անավարտ է և ընդգրկում է միայն ا, ب, ت տառերով սկսվող արաբերեն բառերը, բայց հատկապես նրա պարսկական մասը հնարավորություն է տալիս որոշելու բառասկզբի դիրքում հպականների ունեցած արժեքները: Ինչպես կտեսնենք ստորև բերվող օրինակներում, պարսկերենի b, g, d, j ձայնեղ հպականները այստեղ ո՛չ միայն բառասկզբում, այլև բառամիջում ու բառավերջում, համապատասխանաբար տառադարձված են հայերենի p, q, r, z տառերով, որ ինքնին նշանակում է, թե այս համակարգում ձայնեղների տեղաշարժ տեղի չէր ունեցել: Բերենք մի շարք օրինակներ, ձեռագրի բնագրից հետո ուղիղ փակագծերում նշելով պարսկերեն բառի արաբատառ գրությունը և դրա տառադարձությունը.

բզուրգթըր—մեծագոյն [بزرگتر = buzurgthar],

բըզդըն գրիֆթըն—յանձն առնուլ [بگردن گرفتار = bagardan girithan],

բազ գրդանիդըն—դարձեալ շրջեցուցանել [بازگردانیدن = bāz gardānidan],

բերուն ավըրդըն—արտաքս բերել [بیرون آوردن = birūn āvardan],

գուզըթըր—անցանել [گذشتن = guzašthan],

գնդում—ցորեն [گندم = gāndum],

դաւթան—սիրելիք [دوستان = dusthān],

դուշման—թշնամիք [دشمنان = dūšmanān],

դուրի—հեռաորութիւն [دوری = dūrī],

ջահիդ քրդըն—ջանս առնել [جاهد کردن = jahid khardan] և այլն, և այլն:

Անփոփոխ վիճակ արձանագրվում է նաև շնչեղ-խուլների տառադարձության մեջ, ինչպես, օրինակ.



փեշ ամբողջը—լառաջ գալ [پيشی آمدن = phiš āmadan],  
 քմթըր—պակասագոյն [کمتر = khamthar],  
 քիքի քշիգըն—քէն քարշել [کنه کشیدن = khini khašidan],  
 փասուխ դաղըն—պատասխանել [پاسخ دادن = phāsux dādan],  
 փաքի դիլ—սրբութիւն սրտի [پاکه دل = phākhi dil] և այլն:

Պարզ խուկերը տառադարձութիւններում հասկանալի պատճառով արտահայտված շեն, քանի որ պարսկերենը շունի այդ հնչյունները: Սակայն հայերենի այս տարբերակում խուլ հպականների անփոփոխ մնալը որևէ կառուցած չի հարուցում, քանի որ դրանց տեղաշարժման դեպքում (իսկ այս դեպքում պիտի փոխվեին ձայնեղները) կիսախտվեր տառադարձման միասնական սկզբունքը, և օտարլեզվյան ձայնեղները կարտահայտվեին հայերենի հին խուկերն արտահայտող տառերով: Բայց այս բնագրում հետևողականորեն կիրառված է տառադարձութիւն ձայնեղ=ձայնեղ սկզբունքը՝ բառի մեջ այդ հնչյունների գրաված բոլոր դիրքերում:

Այսպիսով, բացի կիլիկյան եռաստիճան տեղաշարժ-տեղափոխութիւնից, միջին հայերենում արձանագրվում է նաև եռաստիճան անտեղաշարժ համակարգ՝ հին ձայնեղ, խուլ և շնչեղ-խուլ հպականների շարքերի անփոփոխ պահպանմամբ: Այսպես.

b (բ)	g (գ)	d (դ)	j (ձ)	ǰ (ջ)
p (պ)	k (կ)	t (տ)	c (ծ)	č (ճ)
ph (փ)	kh (ք)	th (թ)	ç (չ)	č̣ (չ)

Թե մատենագրութիւն մեջ ո՞ր հեղինակները և ի՞նչ գործեր ունեն իրենց հիմքում այս համակարգը, դժվար է ասել, քանի որ մի կողմից դրան խանգարում է ավանդական ուղղագրութիւնը, որի հետ համընկնում է այս համակարգը, և մյուս կողմից շատ ձեռագրերում ընդօրինակութիւնների ժամանակ խախտվել են օտար բառերի տառադարձութիւնները: Կարելի է միայն ենթադրել, դատելով վերը բերված բառարանի օրինակից, որ այդ համակարգը հատուկ է եղել հայերենի արևելյան մի շարք բարբառների:

53. Եթե վերը նշված արաբերեն-պարսկերեն-հայերեն բառարանի մեջ օտարլեզվյան ձայնեղ հպականները բառի մեջ գրաված բոլոր դիրքերում արտահայտվում էին նույն արժեքներն ունեցող տառերով, ապա մյուս կողմից կան սկզբնագիր աղբյուրներ էլ, որոնք օտարլեզվյան ձայնեղների բառասկզբի և բառամիջի տառադարձման մեջ սկզբունքային տարբերութիւններ են դնում: Բառասկզբի դիրքում այդ հնչյունները արտահայտվում են ձայնեղ հպականների միջոցով, մինչդեռ բառամիջում ու բառավերջում՝ խուլ հպականներով: Այսպես, օրինակ՝ Կոստ. Երզնկացու տաղերում (նկատի ունենք առավել վաղ ընդօրինակութիւն մը հասած բնագիրը) բառասկզբի դիրքում օտար b, g, d, ǰ հնչյունների դիմաց միշտ ունենք բ, գ, դ, ջ, ինչպես՝ bahar=բահար «գարուն», bašar=բասար «իմաստութիւն», bišumār=բիշմար «անհաշիվ», bimār=բիմար «հիվանդ», guibašakhar=գուբաշաքար «շաքարով վարդ», gunahkhar=գուճահքար «մեղավոր», duvlath=դովլաթ «կայք, ունեցվածք», dāsthan=դաստան «պատմութիւն», ĵafā=ջաֆա «անիրավութիւն», ĵumla=ջումլայ «ամբողջ», ĵuhar=ջոհար «գոհար» և այլն, այն դեպքում, երբ բառամիջի ու բառավերջի դիրքերում նույն b, g, d, ǰ հնչյունները արտահայտված են համապատասխանաբար պ, կ, տ, ճ տառերով. այսպես՝

bixabar=բիթապար, bidār=բիտար «արթուն, զգաստ», thaj=թա՛ն «թագ», thadbir=թապիր «միջոց», qalb=ղալպ «սուտ, կեղծ, խարդախ», qabul=ղապուլ «ընդունելի», maġlis=մալիս «ժողով, հավաքույթ», murād=մուրաւ «հիղձ, ցանկութուն», naqd=նաղա «կանխիկ», šadi=շատի «ուրախութուն», ĵallad=ջալատ «դահիճ», phulād=փուլատ «պողպատ» և այլն, և այլն:

Ի՞նչով բացատրել տարբեր դիրքերում գրության այս երկվությունը: Առերևույթ չափազանց տարօրինակ է թվում, որ օտարլեզվյան նույն շարքի ձայնեղները բառի մեջ գրաված տարբեր դիրքերում արտահայտվում են տարբեր եղանակներով:

Եթե այս համակարգում ձայնեղները մնացել էին անփոփոխ, ինչպես այդ վկայում են բառասկզբի տառադարձությունները, ապա ի՞նչ անհրաժեշտութուն կար այդ նույն հնչյունները բառամիջում և բառավերջում արտահայտելու խուլերի միջոցով: Ավելին. չէ՞ որ ըստ տառադարձության այդ սկզբունքի՝ բառամիջի ու բառավերջի խուլերն էլ փոխվել էին ձայնեղների, է՛լ ինչո՞ւ էր բառասկզբի ու ոչ բառասկզբի դիրքերի տառադարձության հակադրությունը: Տարբեր դիրքերում միևնույն հնչյունները ձայնեղ և խուլ տառերով արտահայտելը ենթադրել է տալիս, որ բառասկզբի և ոչ բառասկզբի ձայնեղներն իրենց բնույթով տարբեր էին: Այդ տարբերությունը այլ բան լինել չէր կարող, քան շնչեղության և ոչ շնչեղության հակադրությունը:

Պարզվում է, որ այս համակարգի բառասկզբին հատուկ չէին պարզ ձայնեղները: Հին ձայնեղ հպականները այստեղ ընկալվում էին որպես շնչեղ ձայնեղներ: Վերջիններս իրենց ձայնեղությամբ հակադրվում էին նույն դիրքի շնչեղ-խուլերին, իսկ շնչեղությամբ ու ձայնեղությամբ՝ պարզ խուլերին: Այս երկու շարքերն էլ բառասկզբում մնացել էին անփոփոխ: Պարզ խուլերի այս դիրքում անփոփոխ մնալը պարզվում է այն բանից, որ եթե սրանք այս դիրքում նս (ինչպես բառամիջում ու բառավերջում) փոխված լինեին ձայնեղների, ապա ոչ մի անհրաժեշտութուն չէր լինի բառասկզբի ու բառամիջի դիրքերի համար կիրառել տառադարձության տարբեր սկզբունքներ. այս դեպքում բառասկզբի օտարլեզվյան ձայնեղները պարզապես կարելի կլիներ արտահայտել պ, կ, տ, և տառերով (ինչպես արվում է ոչ բառասկզբի դիրքերի համար)՝ այդ ձևով ձայնեղները հակադրելով շնչեղ ձայնեղներին: Բայց, ինչպես տեսանք, այդպես չէ: Բառասկզբում օտարլեզվյան ձայնեղները ունեն ք, գ, դ, ջ, իսկ բառամիջում ու բառավերջում՝ պ, կ, տ, և արտահայտությունը: Այս նշանակում է, որ խուլերի տեղաշարժը կատարվել էր միայն բառամիջի և բառավերջի դիրքերում:

Այս համակարգը, եթե նկատի ունենանք միայն բառասկզբի համապատասխանությունները, եռաստիճան է, որտեղ կան հպականների երեք շարքեր. հին ձայնեղներին համապատասխան շնչեղ-ձայնեղներ, հին խուլերին համապատասխան խուլեր և շնչեղ խուլերին համապատասխան շնչեղ խուլեր: Այսպես՝ բառասկզբում.

bh (բ)	gh (գ)	dh (դ)	jh (ձ)	ĵh (ջ)
p (պ)	k (կ)	t (տ)	c (ժ)	č (ճ)
ph (փ)	kh (ք)	th (թ)	ç (ց)	č̣ (չ)

Ոչ բառասկզբի դիրքում հպականները այս համակարգում ունեն երկու շարք, այսպես.

b (պ)	g (կ)	d (տ)	j (ժ)	ĵ (ճ)
ph (փ)	kh (ք)	th (թ)	ç (ց)	č̣ (չ)

Այստեղ միայն պարզ չէ բառամիջի և բառավերջի հին ձայնեղների վիճակը. բառասկզբի ձայնեղների նման նրանք ևս շնչեղութուն ունեին, թե պարզ ձայնեղներ էին:

Այս համակարգը մեր ժամանակակից բարբառագիտության մեջ անվանվում է քառաստիճան, որտեղ, անշուշտ, հաշվի են առնված ո՛չ միայն բառասկզբի, այլև բառամիջի ու բառավերջի դիրքերում ձայնեղ հպականների ունեցած փոփոխություններն ու համապատասխանությունները: Այսպիսի համակարգ ունեն Կարնո, Մշո, Նոր Զուղայի և այլ բարբառներ<sup>39</sup>:

Այսպիսով, միջին հայերենին հատուկ է մի այլ բաղաձայնական համակարգ ևս՝ եռաստիճան ձայնեղագուրկ (եթե նկատի ունենանք միայն բառասկզբի դիրքը), կամ քառաստիճան (եթե նկատի ունենանք բոլոր հպականները՝ առանց հաշվի առնելու ինչ դիրքում հանդես գալը):

54. Սկզբնագիր աղբյուրների փաստական նյութի հիման վրա հնարավոր է լինում առանձնացնել մի համակարգ ևս. դա երկաստիճան խլազուրկ համակարգն է, որտեղ ձայնեղ հպականների շարքը տեղաշարժվել է դեպի շնչեղ-խուլների շարքը, խուլ հպականները դարձել են ձայնեղ, իսկ հին շնչեղ-խուլերը մնացել են անփոփոխ: Այսպիսով, այս համակարգում կան ձայնեղներ (առաջացած հին խուլերից) և շնչեղ-խուլեր (առաջացած ձայնեղներից և հին շնչեղ-խուլների պահպանմամբ): Այսպես.

b (պ)	g (կ)	d (տ)	j (ծ)	j̄ (ճ)
ph (բ, փ)	kh (ք, ք)	th (դ, թ)	ç (ձ, ջ)	ç̄ (ջ, ջ)

Որ նման համակարգ պիտի որ լիներ միջին հայերենի շրջանում, կասկած հարուցել չի կարող, քանի որ ձայնեղների շնչեղ-խլացման օրինակներ հայտնի էին դեռևս նախամիջինհայերենյան շրջանից: Հիշենք, թեկուզ վերը բերված Աճառյանի այն միտքը, թե հունաբան հայերենի շրջանում շատ սովորական էր ձայնեղի և շնչեղ-խուլի փոխանակությունը, Անանուն մեկնիչի՝ մեր բարբառներում առկա բազուկ, պազուկ, փազուկ փոխանցման մասին վկայությունը և այլն: Եթե սրանք գոյություն ունեին միջին հայերենի շրջանից մի քանի դար առաջ, առավել քան օրինաչափ պիտի լինեին լեզվական մի շրջանում, որտեղ բարբառային երևույթներն իրենց ավելի զգացնել են տալիս:

Վերը արդեն բերվել են ձայնեղների շնչեղ խլացման օրինակներ (Գրիգոր>Քրիգոր, գիրք>քիրք, Դաւիթ>Թաւիթ, կամ հակառակ գրությունք՝ Թաւար=դադար, փցուն=բցուն, Թաղեոս=Դաղեոս և այլն), այստեղ ասենք միայն, որ այնտեղ, որտեղ առկա է ձայնեղ հպականների շնչեղ-խլացման երևույթը, ունենք երկաստիճան խլազուրկ համակարգ, քանի որ երբ ձայնեղները հնչյունափոխվում են շնչեղ-խուլերի և հին շնչեղ խուլերի հետ հանդես են գալիս մի շարքում, ապա հին խուլերն էլ փոխվելով ձայնեղների, ստեղծում են հպականների երկու շարք՝ ձայնեղ և շնչեղ-խուլ հնչյուններով:

Երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ, մեզ թվում է, ընկած է միջնադարյան հայտնի բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» հեղինակային բնագրի (Մատենադարանի № 8871 ձեռագիր, գրչության թվ. 1459) հիմքում: Այս ձեռագիրը թեև բաղաձայնների արտահայտման մեջ հանդես է բերում ուղանդական գրության պահպանման միտում, բայց որոշ բառաձևեր, այնուամենայնիվ, մատնում են նրա հեղինակի

<sup>39</sup> Տե՛ս Ա. Ս. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 60:

խոսած լեզվի հիմքում ընկած բաղաձայնական համակարգի էությունը: Այս ձեռագրում հայերենի շնչեղ-խուլ հնչյուններից մի քանիսը արտահայտվում են ինչպես իրենց համապատասխան, այնպես և հին ձայնեղներն արտահայտող տառերով: Այսպես, օրինակ՝ բառակզբում գրության մեջ շփոթվում են ք և դ տառերը, ինչպես՝ թոջել // դոջել, թրջոց // դոջոց, փորձել // բորձել, թաժայ // դաժայ բառերում. ըստ որում, վերջինը փոխառություն է և փոխատու լեզվում ունի \*th(thaza):

Գրության նույն ձևը հանդիպում է նաև բառամիջում և բառավերջում, այստեղ նաև ք-ի և գ-ի զուգագրություններով. ինչպես՝ վաթել // վադել, երթալ // երդալ, ալթալ // ադալ, ստամոք // ստամոգ, կամօք // կամօգ, անկոթ // անկոդ և այլն: Բառամիջի համար կան նաև փոխառյալ բառերի օրինակներ, երբ օտարլեզվյան kh-ն տառադարձվում է կ՝ ք-ով, ինչպես՝ հաքիմ // հագիմ (<hakhim), զուքամ // զուգամ (<zukham):

Այս համակարգում հին խուլերը տեղաշարժվել էին ձայնեղների: Այդ երևում է փոխառյալ բառերում օտարլեզվյան ձայնեղների տառադարձությունից, որոնք ինչպես բառակզբում, այնպես և բառամիջում ու բառավերջում արտահայտվում են խուլերի միջոցով. պապ <bab, պուխար <buxār, պալղամ <balḡam, տարպայ <ṭarba, ցուլապ <julāb, շարպաթ <šarbāth, սավտայ <savda, շարապ <šarāb և այլն:

55. Այսպիսով, միջին հայերենի մեջ առնվազն կարելի է առանձնացնել հետևյալ չորս համակարգերը՝ եռաստիճան անտեղաշարժ, եռաստիճան՝ տեղաշարժ-տեղափոխությամբ, քառաստիճան (կամ եռաստիճան ձայնեղազուրկ՝ բառակզբի դիրքում) և երկաստիճան խլազուրկ: Կարելի է ենթադրել նաև երկաստիճան ձայնեղազուրկ, եռաստիճան խլազուրկ և այլ համակարգերի առկայությունը, որոնք անպայմանորեն գոյություն ունեին միջին հայերենի շրջանում, սակայն որոնց բացահայտման համար մեր՝ վերը առաջարկած սկզբունքները բավարար չեն և այլ միջոցներ են անհրաժեշտ դրանք տեսնելու սկզբնաղբյուրներում:

Մյուս կողմից բաց է մնում նաև վերը նշված չորս համակարգերի տարածվածություն, նրանց տեղայնացման հետ կապված հարցերի ճշտումը, որը պահանջում է հետագա բանասիրական և տեքստաբանական մանրակրկիտ աշխատանք:

#### ՇՓԱԿԱՆ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐ

56. Պայթական և պայթաշփական բաղաձայնների համեմատությամբ հին հայերենի շփականները միջին հայերենի շրջանում համեմատաբար կայուն վիճակ էին ներկայացնում: Այստեղ միայն, պատմական զարգացմամբ, հին կատկային ձայնորդ դ-ն կոշտանալով և իր արտասանության տեղով ավելի ետ գնալով, վեր էր ածվել ետնալեզվային ձայնեղ շփական շ-ի: Պատմական զարգացման արդյունք էր նաև շրթնատամնային ձայնեղ շփական v-ի կողքին՝ նրա խուլ լծորդ ք-ի հանդես գալը, որը սկսում է արտահայտվել լատիներենից ընդօրինակված ֆ տառանշանի միջոցով: Այսպիսով, քննարկվող շրջանում առկա էին ձայնեղ և խուլ շփականների շարքեր, որոնք համապատասխանաբար արտահայտվում էին հետևյալ տառերով.

վ—ֆ  
ժ—շ

զ—ւ  
ղ—խ

—Ե

57. Շրթնատամնային ձայնեղ շփական v հնչյունը հիմնականում արտահայտվում էր վ տառանշանով, ինչպես ունենք ավանդական գրության ձևերում՝ վարդապետ, վարել, ժողվել || ժողովել, խորվել || խորովել, վկայ, կով, ծով և այլն: Որ այդ գրանշանը ուներ v-ի արժեք, երևում է փոխառյալ բառերում եղած համապատասխանություններից, ինչպես՝ արբ.՝ *duvlath*=գովլաթ (Կ. Երզն. 211), պրս. *bi-vafa*=բէվայֆայ (ն. տ. 184), ֆր. *privilge*=բրվլիճ (Անս. 67) և այլն: Սակայն այս նույն v հնչյունը արտահայտվում էր նաև և և ու գրանշաններով: Ինչպես կտեսնենք, ւ-ն քննարկվող շրջանում ոչ երկբարբառի կազմում ուներ շրթնատամնային պարզ շփական v հնչյունի արժեք, ուստի և տարօրինակ չէ, որ նույնիսկ օտար բառերի մեջ փոխատու լեզվի v-ն հայերենում արտահայտվում էր նաև ւ-ով, ինչպես՝ թրթ.-թթր. *ճavւճ*=շավուշ, բայց նաև՝ շաուշ (Անս. 9), արբ. *savda*=սաւդայ (Մխ. Հեր. 10բ) և այլն: Այդ նույն փոխանցումները՝ նույն հնչյունի համար մե'կ այս և մե'կ այն տառի գործածությամբ, արձանագրվում են նաև հայերեն բառերում, ինչպես՝ հաւատացեալ-հավատացեալ (Սմբ. Դատ. 24), լուսաւորիչ-լուսավորիչ (ԺԴ հձհ. 6, 1302 թ.), աւելի-ավելի (ն. տ. 16, 1303 թ.), շնորհիւ-շնորհիվ (ն. տ. 82, 1311 թ.) և այլն (այս մասին ավելի մանրամասն տե՛ս § 75):

Շրթնատամնային ձայնեղ շփական v-ի գրությունը ու տառով՝ հին ուղղագրության արդյունք է: Չնայած այն բանին, որ պատմական հնչյունափոխությամբ ձայնավորից առաջ ու-ն հնչյունափոխվել էր v-ի, բայց ըստ ուղղագրական հին կանոնների՝ այն շարունակում էր գրվել ու: Գրության այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ թուին-թվին, տուին-տվին, թուական-թվական, պատուիրան-պատվիրան, պատուական-պատվական, արուեստ-արվեստ, հաշուել-հաշվել և այլն, ո՛չ միայն նշում են ձայնավորից առաջ ու-ի կրած փոփոխությունը, այլև այն, որ v-ն տվյալ դիրքում արտահայտվում էր նաև ու-ի միջոցով:

Հին հայերենի վ-ն համեմատաբար կայուն բաղաձայն էր, այն քննարկվող ժամանակաշրջանում համարյա թե փոփոխություն չէր ենթարկվում: Այն հատ ու կենտ օրինակները, որոնց մեջ արձանագրվում է վ-ի փոփոխություն, փոխազդեցական հնչյունափոխության արդյունք են, որոնց մասին խոսք կլինի ստորև:

58. Շրթնատամնային խուլ շփական ʎ-ն նոր հնչյուն էր միջին հայերենում: Այն հանգամանքը, որ ֆ-ն հանդես էր գալիս ո՛չ միայն օտար, այլև հայերեն բառերում, ենթադրել է տալիս, որ այն առաջացել էր հայկական հողի վրա: Հայերենի բաղաձայնների մեջ ձայնեղ և խուլ շարքերի առկայությունը պոտենցիալ հնարավորություն էր ստեղծում ձայնեղ v-ի կողքին՝ նրա խուլ ʎ տարբերակի առաջացման համար: Բավական էր միայն ձայնեղության հատկանիշի կորուստ, և v-ն կվերածվեր ʎ-ի: Այդպիսի փոփոխությամբ է, որ ունենք՝ «...առնուն զիրէնց բայժն ի ձանբէն, զինչցեղ ինչֆի յայս ար էն առել՝ որ զթուխթս գրեցաք» (Պարոն Կոստանդինի 1271 թ. դաշնագրում. Պ. Հովն. Հնտ. Նախ. ոսմկ. 258. նույնի համար հմմտ. «...ինչվի կու երթային ի Տարս», ն. տ., Լևոն Գ-ի 1288 թ. արտոնագրում), «...որոյ անուն իշխան Շնոփոր յորջորջի» (ԺԴ հձհ. 29, 1304 թ. Արձեշ. հակառակ նրա ձայնեղ արտահայտությունը՝ «...յիշեսցիք ...ևս առաւել զՇնոհվոր, որ բազում աշխատ

տանք կրեաց ի վերա մեր» ն. տ. 80, 1311 թ.), «...կապեաց յինքն նաֆթ (Նաւթ) Գ շիշ և կապեաց թուղթ ի ծայր ըումբին» (Սմբ. Տարեգ. 52), «...հրամայեաց նաֆթի բորբոքել զսայլսն» (ն. տ. 95) և այլն:

Խոսքը շփական ֆ հնչյունի գրավոր առաջին վկայությունները արձանագրվում են XIII դարի սկզբնաղբյուրներում, թեև բացառված չէ նաև, որ նրա գիտակցումը և բանավոր-խոսակցական լեզվում նրա կիրառությունը կատարված լինի գրի առնվելուց ավելի վաղ: Ընթացիկ է նաև, որ ֆ-ի՝ որպես վ-ի խոսք լծորդի, առաջացումը և գիտակցումը նախապես տեղի է ունեցել հայերենի բանավոր-խոսակցական լեզվի արևմտյան տարբերակներում, հատկապես կիլիկյան հայերենում, որի հետ և առնչվում են առաջին վկայությունները: Բացի վերը բերված օրինակներից այստեղ կարելի է հիշատակել նաև օտար բառերի տառադարձությունները. ինչպես՝ «...Ես Կոստանդին ծառայ աստուծոյ եւ որդի պարոն Ճաֆրէ... ալամնաց ֆրէր Իանն» (Կոստանդինի 1271 թ. դաշնագրում), «...Եւ զինչ իսկի ֆռանկ կտաւ ելնէ հաստ ու բարակ...» (Առն Գ-ի արտոնագրում, սրա հետ համատ. «...ապրիշմագործ եւ փռանգ շրիկ» (Գհվ. I, Անի, 22, 1276 թ.), «...Եւ յայնժամ եկն թագաւորն Երուսաղէմի և խաչագահստ ֆրեբեհ» (Սմբ. Տարեգ. 178), «...ու թէ հիւլայածն ֆայլէ՝ նա հագաւ զմեղանքն» (Անս. 63), «...և քշտօղն տֆրնդէ, նա հագաւ զմեղանքն» (ն. տ. 31), «...տեսէք որ իմ ֆուլան լիճ ճորտ երեկ առջև ֆուլան լճերոյ» (ն. տ. 11), «...Եւ թէ սերեֆիկ ոսկի գնէ կամ արծաթ» (ն. տ. 81), «...Զբարեպաշտ իշխան զսիր ճոֆրի... յիշեսչիք» (Գ. Հովս. հձ. 977, 978, 1248 թ.), «...յամս նիկիֆաւոայ կայսեր Յունաց» (ն. տ. 117, ձեռագիրը 965 թվից է, բայց ընդօրինակված է ԺԳ դարում), «...վախճանեցաւ գունդն Ճաֆուն՝ սիր ճուանն» (Մանր. ժմնկ. II, 83, 1296 թ. Կիլիկիա) և այլն, և այլն: Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել կիլիկյան մատենագրությունից, որտեղ օտարլեզվյան ի-ն համապատասխանաբար հայերենում տառադարձված է ֆ-ով: Սակայն միշտ այսպես չէ այլ սկզբնաղբյուրներում: Օրինակ, Մխ. Հերացու Զերմանց մխիթարութեան 1279 թ. ընդօրինակումում հասած ձեռագրում (№ 416), օտարլեզվյան ի-երը հիմնականում տառադարձված են փ-ով, ինչպես՝ լիւուփաւ (21ա, 25ա, 40ա և այլն), եիւուփաւ (21բ), փափոււ (21բ, 32ա, 44ա և այլն), շափ (60բ) և այլն, այն դեպքում, երբ վենետիկյան հրատարակությունը, որի հիմքում ընկած է ավելի ուշ շրջանի մի այլ ձեռագիր, այդ բառերի փ-ի փոխարեն ունի ֆ՝ նոնոֆար, քաֆուր, շաֆ և այլն: 1279 թ. ձեռագրում ֆ-ով հանդիպող հատ ու կենտ օրինակները որակ չեն կազմում, քանի որ այստեղ հիմնական սկզբունքը ի-ն փ-ով արտահայտելն է: Մյուս կողմից նկատելի է նաև, որ այս ձեռագիրը հետագայում ենթարկվել է վերանորոգման, որոշ տեղերում ակնհայտորեն փ-ն ջնջված ու վրայից ավելացված է ֆ: Այս փաստերը խոսում են այն մասին, որ ֆ-ի կիրառությունը, գոնե այս ձեռագրի ընդօրինակության ժամանակներում, դեռևս գրական լեզվի նորմայի չէր վերածվել: Կարելի է ենթադրել նաև, որ օտար բառերում ի-ի փոխարեն ֆ գրությունը գալիս էր հեղինակային բնագրից, որին հետևելով ընդօրինակողը, այնուամենայնիվ, որոշ տեղերում դրանք ուղղել և դարձրել է ֆ:

Մյուս կողմից պետք է կարծել, որ միջին հայերենի բանավոր-խոսակցական ո՛չ բոլոր տարբերակներին էր հատուկ ի-ն: Այսօր էլ մեր արևելյան բարբառների մի մասը (Սյունիքի, Ղարաբաղի և այլն) չի ձանաչում այդ հնչյունը և օտար փոխառությունների մեջ, գրաբարի նման, դրա փոխարեն դնում է

փ: Ինչ խոսք, որ այդ հատկությունը հայերենի այդ տարրերակները պետք է որ ունեցած լինեին նաև միջին դարերում:

Հաջորդ դարերում, հատկապես սկսած XIV-ից գրական ու գրավոր լեզվի մեջ փոխառյալ բառերի օտարլեզվյան ի-ի դիմաց բացառապես սկսում է գործածվել ֆ-ն: Այստեղ գեղարվեստական գրականության և հատկապես բժշկագիտական աշխատություններում առատորեն օգտագործվում են արաբապարսկական ծագում ունեցող բառեր, որոնք տառադարձվում են ըստ հնչական դրույթյան, այսպես, օրինակ՝ laʿīf=լատիֆ, hayf=հայիֆ, nāfe=նաֆալ, sadaf=սադաֆ, khafer=քաֆուր, fiqān=ֆղան, safrā=սաֆրալ, bisifath=բեսիֆաթ, bivāfa=բեվաֆալ, jāfā=ջաֆա և այլն, և այլն: Նույնիսկ հին ձեռագրերի ընդօրինակությունների ընթացքում, երբ գրիչներին հայտնի էր տվյալ օտար բառի արտասանությունը, նրանք հին փ-երի փոխարեն գնում էին ֆ:

59. Հին հայերենի շականները, որոնք արտահայտվում էին ժ և շ տառերով, առաջինը ձայնեղ, երկրորդը խուլ հնչյունի արժեքով, նույն որակով հանդես էին գալիս նաև միջին հայերենի շրջանում: Բազմաթիվ օտարլեզվյան բառեր, որոնք այս շրջանում փոխառվել ու տառադարձվել են հայերենում՝ § հնչյունի դիմաց համապատասխանաբար ունեն շ գիրը, այսպես, օրինակ՝ պրս. bi-šumār=բէշմար, պրս. gulbašakhar=գուլբաշաքար, պրս. šadī=շատի, պրս. šah-baluth=շահբալուտ, պրս.-արբ. šaf=շաֆ, շաֆ, արբ. šarab=շարապ, արբ. tabāšir=տապաշիր, պրս. igdiš=իկտիշ, արբ. qumāš=կումաշ, արբ. šeix=շեխ և այլն, և այլն: Օտարլեզվյան Ն-ի տառադարձումը շ-ով և մյուս կողմից՝ հին հայերենից ավանդված բառերի կազմում շ-ի գրության հետևողականությունը, բավարար ապացույցներ են արձանագրելու, որ միջին հայերենի շրջանում շ տառով արձանագրված § հնչյունը մնացել էր անփոփոխ և ընդհանուր էր ամբողջ հայերենի համար: Անշուշտ, մատենագրության մեջ արձանագրվում են նաև առանձին բառերում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք, որպես փոխազդեցական հնչյունափոխության երևույթներ, կջնջվեն առանձին:

Մեսրոպյան այբուբենի ժ տառով արտահայտվող հնչյունի համար փոխառյալ բառերում համապատասխանություններ չկան. սակայն այն հանգամանքը, որ գրության մեջ ժ-ի և շ-ի փոխանցումներ չկան, դրանք չեն շփոթվում մեկը մյուսով, պետք է ընդունել, որ այս հնչյունը ևս միջին հայերենում մնացել էր անփոփոխ:

60. Միջին հայերենում սուլականներն արտահայտվում էին մեսրոպյան այբուբենի զ և ս տառերով, առաջինը՝ ձայնեղ, երկրորդը՝ խուլ հնչյունի արժեքով: Միջին դարերում այդ տառերին տրվող հնչյունական արժեքները ևս որոշակիորեն արտահայտված են օտար բառերի տառադարձության մեջ: Այսպես, ձայնեղ շ=զ համապատասխանության համար ունենք. արբ. zukhām = զուքամ, արբ. nazla = նզլայ, արբ. bizarqatun = պզրկտուն, արբ. arzaq = ըռզակ, արբ. mazād = մազատ, հֆր. harnafs = հառնէզ<sup>40</sup>, հֆր. saisia = սայզալ, պրս. mazgith = մզկիթ և այլն:

Այստեղ միայն thaza = քաժա բառն է, որ որոշ սկզբնաղբյուրներում (Մխ. Հեր. Ամիրզ. և այլն) շ-ի փոխարեն ունի չ, որը հայերենում ոչ թե հնչյունա-

<sup>40</sup> Հին ֆրանսերենում ձայնավորների միջև և բառավերջում հանդես եկող s-ն ունեցել է ձայնեղ շ-ի արժեք:

փոխութիւնն արդյունք է, ալլ հավանական է, որ այդ ձևով էլ վերցված է՝ որպէս փոխատու լեզվի բարբառային տարբերակ:

Ուով s=ս հնչյունի համապատասխանութիւնն են արտահայտում արբ. rasm=ռասմ, արբ. qurs=կուրս/ղուրս, արբ. şandal=սանտալ, պրս. sarsām=սարսամ, արբ. savdā=սաւզալ, պրս. ispanāx=սպանախ, արբ. başar=բասար, պրս. bi—şifath=բէսիֆաթ, պրս. dāstān=դաստան, արբ. maʃlis=մճլիս, Ֆր. princesse=բրնձէս, իտ. contestabile=գունդուստապլ, լտ. dux=դուքս, արբ. rayls=ըռալիս, Ֆր. maistre=մայստր, պրս. sarhang=սրահանգ, Ֆր. assises=անսիզ. հֆր. chastier=չաստել, արբ. şadr=սատր, Ֆր. sol=սոլ, Ֆր. passage=բասսձ, Ֆր. losselin=ձաւսլին, Ֆր. sénéchal=սինչալ, Ֆր. sire=սիր և այլն, և այլն:

Ինչպէս նկատելի է, մասնավորապէս ֆրանսերենի ss-ն բառամիջում և s-ն բառասկզբում հայերենում արտահայտվում են u-ով. միակ բացառութիւնը Ֆր. bassin = պացին (Անս. 45) բառն է, ուր ss-ի դիմաց հայերենում պալթաշփական ց է: Այս տարբերութիւնը հավանաբար գալիս է փոխատու լեզվից:

Վերը բերված օրինակները ցույց են տալիս միջին գրական հայերենում մեքսոպայան այբուբենի երկու տառերին՝ զ-ին և ս-ին տրվող հնչյունական արժեքները: Իսկ ինչ վերաբերում է այդ հնչյունների փոփոխութիւնը, ապա նկատելի է, որ հատկապէս զ-ն որոշակի դիրքում կորցնում է իր ձայնեղութիւնը՝ վերածվելով ս-ի, որը արտահայտվում էր նաև գրութիւն մեջ: Այդ հնչյունափոխութիւնը ընդհանուր միջին հայերենյան բնույթ չէր կրում. հավանաբար այն կատարվել էր նրա այն տարբերակներում, որոնց մեջ առկա էր ձայնեղ պայթականների խլացում: Այդ միտքը թելադրվում է այն փաստով, որ ավանդական զ-ի փոխարեն ս-ն հանդիպում է հիմնականում ձայնեղ պայթականներից առաջ ընկած դիրքում, այսպէս, օրինակ՝ «...արտաքին սգայութեանս... սգայութիւն ի սգալեաց, և սգայութեամբ եիցն տրամակայիլ» (Գ. Նով. հձ. 226, 1046 թ.), «...ասդեցեալ ձայն» (ն. տ. 229, 1046 թ.), «կասդուրիչ» (ն. տ. 363, 1154 թ.), «սգուշացուցանէ» (ն. տ. 42, 1170 թ.), «վշտատէս ասգս հայոց» (ն. տ. 813, 1221, Տարսոն), «եմք սբաղեալք» (ն. տ. 866, 1230 թ., Թեոդոպոլիս), «ի պատճառս սգաստութեան» (ԺԴ հձհ. 18, 1303 թ.), «ձգնասգեստ կրանաւորիք» (ն. տ. 52, 1307 թ.), «զհինգ սգարանս» (ն. տ. 140, 1318 թ.), «մեծագին սգեստիւք զարդարեցին զնայ... և ետուն զամենայն պէտս սգեստիցն» (ն. տ. 141, 1318 թ.), «սգաստութիւն սգարանաց» (Ձեռ. 8030, 34ա, 1341 թ.), «զխորտակեալս կասդուրեացես» (ն. տ. 36ա), «սգուշութեամբ» (ն. տ. 37ա), «սբաղեցուցանէ» (ն. տ. 40բ), «սգայութեանցն» (ն. տ. 41բ), «սկիսբն» (ն. տ. 42ա), «սգաստանալ» (ն. տ. 47ա), «սգեցաւ ...սգեցուցանէ» (ն. տ. 53բ), «սգեհնու զկերպարանս» (ն. տ. 59ա), «սգեհնու դենձակ» (ն. տ. 59բ), «ասդող եղև ձայն» (ն. տ. 61ա), «ասդողական է ձայնն» (ն. տ. 61բ), «սգաստութիւն» (ն. տ. 61բ), «ոչ ասդ առնիցես փողով» (ն. տ. 62բ), «սգաստացուցի» (ն. տ. 74բ), «սգեցուցանեն նմա» (ն. տ. 87ա), «սգուշանալ» (ն. տ. 93ա), «զմերկն ըսգեցոյ» (ն. տ. 98բ) և այլն, և այլն:

Անկախ դիրքում զ-ի փոխարեն ս-ի գրութիւն համարյա չի հանդիպում. մեզ հայտնի է միայն՝ «Արտավա սնուն» (Գ. Նով. հձ. 718, 1204 թ. Մուշ) օրինակը, որտեղ բառավերջի զ-ն նույնպէս խլացած է: Մատենագրութիւն



մեջ թերևս կարող են լինել նման հատ ու կենտ այլ օրինակներ ևս, որոնք մեզ չեն հանդիպել: Սակայն միանգամայն օրինաշափ պետք է համարել ոչ անկախ դիրքում զ-ի խլացումը միջին հայերենի որոշ տարբերակներում: Որ միջնադարյան որոշ բարբառներում պայթականներից (տվյալ դեպքում՝ խլացած պայթականներից) առաջ հին ձայնեղ զ-ն խլանում էր, ապացուցվում է նաև նրանով, որ առհասարակ հին ա-ի զ գրություն չի գրանցվում: Այստեղ, ա-ի ձայնեղացում հանդիպում է միայն բառասկզբի և բառավերջի անկախ դիրքերում, այն էլ շատ եզակի օրինակներում, ինչպես, օրինակ՝ «յիշեցէք Զուքիաս» (Գ. Հով. հձհ. 759, 1212 թ.), Արտաշէզ (ն. տ. 22, 1254 թվականին կատարված՝ 618 թվականի ձեռագրի ընդօրինակության մեջ):

Հին ձայնեղ զ-ի դիմաց ծ ունենք մարզպան > մարծպան բառում, որտեղ հավանաբար ծ-ն ունեցել է ձայնեղ ձ-ի որակ. օրինակ՝ «...Ծս բուրդս, Հասան, Համազասպ(պ), Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համզսպա մարծպանի» (ԿՂ. Սանահ. 106, 1191 թ.):

61. Ինչպես արդեն նշվել է, հին հայերենում շփականներից ո՛չ բոլորն էին, որ նույն շարքում հանդես էին գալիս ձայնեղ և խուլ զույգերով. դրանցից էր նաև x (խ)-ն, որը միակ ետնալեզվային շփական բաղաձայնն էր հին հայերենում: Սակայն այն հանգամանքը, որ հայերենի բաղաձայններն առհասարակ, այդ թվում նաև շփականների գերակշիռ մասը, ունեին իրենց ձայնեղ և խուլ տարբերակները (զ : ա, ծ : շ, իսկ միջին հայերենի շրջանում նաև վ : ֆ), պտտենցիալ հնարավորութուն էր ստեղծվում ետնալեզվային շփական x-ի բացակա զույգի առաջացման համար: Այսպիսով, խուլ x (խ)-ի կողքին ձայնեղ γ -ի առաջացումը կատարվում էր զուտ հայկական հողի վրա՝ հին հայերենի ձայնորդ ղ հնչյունի պատմական փոփոխությամբ: Գասական գրաբարի ղ-ն, որը հին հայերենի 1 ձայնորդի կատկային մի տարբերակն էր, իր պատմական զարգացմամբ վեր է ածվում ետնալեզվային ձայնեղ շփական γ -ի՝ պահպանելով գրային արտահայտություն իր հին ձևը: Այնպես որ միջին հայերենում ղ գրով արտահայտված հնչյունը ինչպես հին հայերենից ավանդված, այնպես և փոխառյալ բառերում, այլևս շուններ իր հին արժեքը: Այս առումով էլ այս հնչյունի քննությունը շթողներով ձայնորդների բաժնին, կատարում ենք այստեղ:

Աճառյանը դեռևս 1948 թ. իր «Ծ՞րբ և դարձավ Ղ» ուշագրավ հոդվածում գրում էր. «Ամենքիս հայտնի է, որ Ծ դարում հայերը ունեին երկու տեսակ լ. մեկը նուրբ լ, որ արտասանվում էր լեզվի ծայրով, ինչպես այսօրվա մեր լ ձայնը, և երկրորդ՝ հաստ կամ թանձր լ, որ արտասանվում էր լեզվի հետևի մասով: Այսպիսի հնչյուն ունեին նաև լատինները, ունեին լեհերը և ինքս էլ լսել եմ Պոլսի հունաց արդի արտասանության մեջ: Այսպիսի լ ձայնը հին հայերը գրում էին ղ տառով, որ ապա ավելի թանձրանալով, դարձավ արդի կոկորդական ղ և սրանով ստացանք այնպիսի աններդաշնակ բառեր, ինչպես են խաղաղ, խաղող, ուղեղ և այլն: Սրանք նախապես հնչվում էին խալալ, խալալ, ուլել և այլն»<sup>41</sup>:

Հաշվի առնելով այն հագամանքը, որ ժամանակակից բոլոր հայ բարբառներում համատարած է հին ղ-ի ետնալեզվային γ -ի վերածվելու երևույթը,

<sup>41</sup> Հ. Աճառյան, Ծ՞րբ և դարձավ Ղ, ՀՄՄՀ ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1948, № 5, էջ 33:

ակ. Հ. Աճառյանը իր այդ ուսումնասիրության մեջ հանգում էր այն եզրակացության, թե «Ղ ձայնի կոկորդային  $\gamma$  հնչումը արդեն ձևացած է եղել հայության մեջ նախ քան Կիլիկիայի գաղթականությունը (1080 թ.) և նախ քան Բագրատունյաց պետության կործանումը և Անիի գաղթը (1046 թ.)—ԺԱ դար»<sup>42</sup>:

Աճառյանը այդ երևույթի սկիզբը դնում է IX դարը՝ հենվելով մատենագրական երկու փաստի վրա: Դրանցից մեկը Բուղա անվան տառադարձությունն է (արբ. կամ թրբ. ܒܘܓܐ-ܒܘܓܐ «ցուլ»), որը IX դարի արաբական հայտնի ոստիկանի անունն է: Սակայն Աճառյանը այս անվան տառադարձության նկատմամբ վստահ չէ: Հաշվի առնելով, որ բուղա «ցուլ» անունը հետագա դարերում հայոց մեջ շատ տարածված ու սովորական բառ էր և որ Բուղա ոստիկանի անունն էլ այդ ձևով հանդես է գալիս այդ դարերից հասած ձեռագրերի մեջ, Աճառյանը հնարավոր է համարում նրա նախնական Բալխա ձևի սրբագրությունը: Այս տեսակետից էլ լավագույն վկայություն է համարում Կաղանկատվացու մոտ հանդիպող Բաղողի ամիրայի անվան տառադարձությունը, թեև սա ևս ևս ետին շրջանի ձեռագրային ընդօրինակությամբ հասած ձև է: Բաղողի անձնանունը Աճառյանը նույնացնում է ամիրա Հասան-բին-Ալի-ալ Բաղդիս-ալ Մամունի անձնավորության անվան հետ. ապա եզրակացնում է. «Բաղողի կամ Բաղդիս այնպիսի անսովոր անուն է, որ կարելի չէ մտածել, թե որևէ գրիչ սրբագրած լինի Բուղա անվան նման, ուստի նա անշուշտ հարազատ է և ղ = չ տառադարձությունը տանում է Թ դարի կեսը»<sup>43</sup>:

Աճառյանի ինչպես այս, այնպես և մյուս օգտագործած փաստերը թեև չեն գալիս սկզբնագիր աղբյուրներից, բայց շնորհիվ նրա մտքի խորաթափանցության, ղ-ի  $\gamma$  դառնալու ժամանակաշրջանի հարցը հիմնականում ստացել է իր ճիշտ լուծումը:

Մեր կողմից հավաքված լեզվական փաստերը, որոնք գալիս են միայն սկզբնագիր աղբյուրներից, ներկայացնում են այդ երևույթի հետևյալ իրական պատկերը:

ա) Օտարլեզվյան  $\gamma$ -ն հայերենում այն դեպքում կարող էր արտահայտվել ղ-ով, երբ վերջինս ունենար տառադարձվող հնչյունի արժեքը. հակառակ դեպքում  $\gamma$ -ն պետք է արտահայտվեր ըստ հայերենի արտասանական բազայի հնարավորության՝ նրան մոտ հնչյունով: Նման հնչյուն արտահայտող տառանշան էր խ-ն: Եվ իսկապես. 991 թվականին գրված մի խաչքարի վրա կարդում ենք՝ «...Ես Խաբիբ կանգնեցիք սուրբ Քրիստափորո (հոգոյն), զիս յիշեցեք» (Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 51): Ընդգծված հատուկ անունը արբ. غريب Կարիբ բառն է, որի  $\xi$ -ն, որ հետագա դարերում տառադարձվում է ղ-ով, այստեղ արտահայտված է խ-ով (որ խ-ն այս շրջանում ուներ x-ի արժեք, կտեսնենք ստորև): Նույնպիսի տառադարձություն ունենք նաև Հաղպատի 1021 թ. գրված մի վիմական արձանագրության մեջ՝ Ապլխարիփ<sup>44</sup> (ԿՂ, Հաղբ. 150) անվան մեջ, նույնը նաև Սանահնի XI դարի առաջին կեսի մի արձանագրության մեջ՝ «...Ես Աբլխարիփ Հայոց մարզպան» (ԿՂ, Սանահ. 97): Այստեղ նույնպես արբ. Abu-ul-Կարիբ անվան  $\gamma$ -ի դիմաց

<sup>42</sup> Նշված աշխատությունը, էջ 34:

<sup>43</sup> Անդ, էջ 36:

<sup>44</sup> Կոստանյանցի Վիմ. Տար.-ում, էջ 15, սխալ է վերծանված. Ապլխարիփ՝ փոխ. Ապլխարիփ:

հայերենում ունենք խ: Սակայն նույն ժամանակների վիճակն արձանագրություններում ունենք նաև  $\gamma = \eta$  համապատասխանությունը: Այսպես. Անիի Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու արձանագրություններից մեկում ունենք «...ես Ապլղարիպ մարզպան...» (ԳՏՎ. I, Անի, 46, 1035 թ.), որտեղ հայերենի  $\eta$ -ն արդեն համապատասխանում է արաբերենի  $\xi$ -ին: Մի քանի տարով ավելի վաղ վկայություն է Անիի Առաքելոց եկեղեցու արձանագրություններից մեկում հանդիպող Աբղամբ անձնանվան օրինակը, որտեղ նույնպես ունենք  $\eta = \gamma$  համապատասխանությունը: Ահա արձանագրության այդ հատվածը. «...շնորհին Այ ես Աբղամբ որդի Վահրամա իշխանաց իշխանի» (ն. տ. 12, 1031 թ.)<sup>45</sup>:

Այս օրինակները համադրելով Սանահնի և Հաղպատի վանքի արձանագրություններում վկայված ձևերի հետ, կարելի է ենթադրել, որ օտարլեզվյան  $\gamma$  -ի դիմաց  $\eta$ -ով և խ-ով զուգահեռ ձևերի գոյությունը պայմանավորված է եղել նրանով, որ հայերենի  $\eta$ -ն վաղուց արդեն ուներ ետնալեզվային  $\gamma$  -ի արժեք և այդ հիմքի վրա է փոխվել իր լծորդ խ-ին: Սակայն այս ենթադրությունը ճիշտ լինել չի կարող, քանի որ, ինչպես կտեսնենք ստորև, այս ժամանակներում  $\eta$ -ի լծորդը ոչ թե խ-ն էր, այլ լ-ն, և սրանք են, որ գրության մեջ հաճախ շփոթվում են մեկը մյուսով: Մյուս կողմից կարելի է ենթադրել նաև, որ խ-ով ձևը ներկայացնում էր ավելի հին վիճակ՝ որպես արտահայտություն այն բանի, որ հայերը ըստ իրենց արտասանական բազայի հնարավորությունների՝ օտարլեզվյան  $\gamma$ -ն ընկալում էին որպես  $\chi$ : Ըստ այս վարկածի, որ ավելի հավանական է, խ-ով ձևերը ավելի հին են և գալիս են այն ժամանակներից, երբ հայոց մեջ  $\eta$ -ն դեռևս լ-ի մի տարբերակն էր: Մի բան միայն անառարկելի է, որ արդեն XI դարի սկզբներին օտարլեզվյան  $\gamma$  -ն հայերենում տառադարձվում էր  $\eta$ -ով, որ նշանակում է, թե այն արդեն ետնալեզվային շփական բաղաձայնի արժեք ուներ, ուստի և կատկային ձայնորդից շփական բաղաձայնի անցնելու պրոցեսը վերաբերում է նախորդ դարին (կամ դարերին):

բ) Ուշագրավ է մի այսպիսի երևույթ ևս: Ինչպես վերը արդեն ասվել է, հին հայերենում  $\eta$ -ն որպես լ-ի մի տեսակը, լծորդվում էր հայերենի լ-ի հետ: Այս իսկ տեսակետից պատահական չէ, որ հայերեն առաջին իսկ ձևագրերում գրության մեջ միևնույն բառում շփոթվում են  $\eta$  և լ տառերը: Սա, անշուշտ, մի կողմից նշանակում է, որ սրանք իրենց հնչյունական արժեքներով մոտ էին իրար, և մյուս կողմից, որ բխում է վերը ասածից՝  $\eta$ -ն դեռևս չուներ ետնալեզվային շփական բաղաձայնի արժեք: Այստեղ կարելի է հիշատակել օրինակ, Մատենադարանի №№ 985 (Ժամ. IX—X դդ.), 1001 (Ժամ. IX դ.) ձևագրերը, Լազարյան ձեմարանի 887 թ. գրչության մեջ ավետարանը և այլն, որոնց մեջ այլ / յայդ, թոյլ / թոյդ, գայլ / գայդ և այլ ձևերի հետ առկա են այնպիսիները, որոնց մեջ  $\eta$ -ի և արժեքը կասկած չի հարուցում, ինչպես, օրինակ՝ «...զամենայն հիւանդս որ նեղեալ եին» (Լազ. ձեմ. ավ.): Նման ձևեր հանդիպում են նաև նույն ժամանակներում գրված այլ ձևագրերում<sup>46</sup>, Հե-

<sup>45</sup> Նման օրինակներ հաճախանում են հետագա թվականների արձանագրությունների մեջ:

<sup>46</sup> Այսպես, օրինակ. հմուտ աղբյուրագետ, պատմաբան Վ. Հակոբյանը «Կանոնագիրք հայոց» համահավաք բնագրին կցած իր ուսումնասիրության մեջ, խոսելով Կիլիկիայում 1098 թ. գրված Կանոնագրի № 131 ձևագրի գրչության հանգամանքների մասին, ուղղագրական այլ դիտողությունների շարքում նշում է նաև՝ «Գրիչը անհետևողականություն է հանդես բերել  $\eta$  և լ տառերի գործածության մեջ, հաճախ գրում է, օրինակ՝ փայղակ, այդ, այղում, իսկ ավելի հաճախ՝ այլ, այլում» (էջ LX):

տաքթեր օրինակ է նաև Անիի Առաքելոց եկեղեցու արածնագրություններում արբ. halal բազի հալալ տառագարձությանը զուգահեռ, մի անգամ հանդիպող հաղալ գրությունը (տե՛ս ԳՎՎ. I, 13, 1008 թ.: Այս արձանագրության քարը թեև մաշված է, բայց լուսանկարի մեջ որոշակիորեն երևում է ղ տառի գլուխը), որտեղ ղ-ին տրված է 1-ի արժեք, այն դեպքում, երբ մի քիչ ավելի ուշ՝ 1031 թ. գրված, այդ նույն հուշարձանի մի այլ արձանագրության մեջ Արողաւո՛ւ անձնանվան տառագարձությամբ վկայվում է  $\gamma = \eta$  համապատասխանությունը:

Քանի որ անցումն այս շրջանում արդեն կատարված իրողություն է, ուստի և կարելի է կարծել, որ վերը բերված halal բառի տառագարձության մեջ թույլ տրված սխալը գալիս է նախորդ շրջանի՝ 1-ի և ղ-ի ուղղագրական շփոթից, մի երևույթ, որ հայերեն որոշ բառերում շարճնակվում է մինչև XII դարը:

զ) Ուշագրության արժանի փաստ է նաև այն, որ եթե մինչև XII դարի կեսերը խիստ հաճախական է 1-ի և ղ-ի գրության շփոթը, ապա նշված ժամանակից հետո մատենագրության մեջ սկսվում են ղ-ի և խ-ի ուղղագրության խախտումները, մի երևույթ, որն իր հերթին ղ-ի արժեքի փոփոխության մի նոր ապացույց է: Այսպես, օրինակ, VII դարի մի ձեռագրի հիշատակարանում, որն ընդօրինակվել է 1170 թվականին, թուղթ բառի ղ-ի փոխարեն մի քանի անգամ արձանագրված է խ. ինչպես. «...թխտոյս շարագրութիւն» (Գ. Հովս. հձ. 37), «...Եւ գրեցան ըստ խնդրողացն պիտոյից թուլթ ԽԴ» (ն. տ. 38), «...Թուխտս առաջին խոստովանութեան» (ն. տ. 45): Պարզ է, որ բերված օրինակներում ղ-ի փոխարեն խ գրությունը հնչյունափոխության հետևանք է, բայց այդ հնչյունափոխությունը կարող էր կատարվել միայն այն դեպքում, եթե ղ-ն արդեն ուներ  $\gamma$ -ի արժեք: Ղ-ի  $\gamma$  հնչման մասին է խոսում նաև ավանդական խ-ի փոխարեն ղ գրությունը, ինչպես վկայվում է նույն ձեռագրի հիշատակարանում. «...փաղչել յագահաց յափշտակողաց» (Գ. Հովս. հձ. 42, 1170 թ.), քանի որ, եթե ղ-ն ունենար 1-ի արժեք, չէր կարող փոխարինել խ-ին: Հետագա՝ XIII—XIV դարերում ավելի են հաճախանում ղ-ի և խ-ի ուղղագրական խախտումները, ինչպես, օրինակ. «...լինէր արեան ճապախիս ի բազում տեղիս» (Գ. Հովս. հձ. 813, 1221 թ. Տարսոն), «...շատ պակաս գտայ յառաջին օրինակն և որչափ կարի, խորդեցի» (ն. տ. 845, 1226 թ.) և այլն: Այսպիսով՝  $\eta > \gamma$  փոփոխությամբ ղ-ն դադարում է 1-ի զույգը լինելուց և դառնում է խ-ի լծորդը և այդ հիմքի վրա որոշ դիրքերում հնչյունափոխվում խ-ի (ղ-ի դիրքային այդ փոփոխությունների մասին տե՛ս § 89):

Այժմ, սկզբնաղբյուրների նյութի հաշվառմամբ, դեռևս դժվար է ասել, թե ղ-ի  $\gamma$  հնչումը նախապես Հայաստանի ո՛ր մասում առաջացավ և այնուհետև տերիտորիալ ի՛նչ հաջորդականությամբ տարածվեց, թեև Աճառյանը գտնում է, որ «Իմ ենթադրությամբ ղ ձայնը նախ երևան եկավ հյուսիսում, Աղվանքի սահմանակից հայոց մեջ՝ Թ դարի սկզբից (Կաղանկատուացին), ապա իջավ հարավ. Ժ դարի կեսին դեռ տատանյալ դրության մեջ է (Դրասխանակերտցի), իսկ ԺԱ դարում արդեն ամբողջ երկրում տարածված է (Ասողիկ)»<sup>47</sup>:

Առայժմ ամենահավաստի փաստերի հիման վրա կարելի է արձանագրել հետևյալը. ղ-ի  $\gamma$  հնչման առաջին վկայությունները առայժմ տալիս են միայն

47 Տե՛ս 2. Աճառյան, նշվ. հոդվածը, էջ 40:

XI դարի սկզբնաղբյուրները: X դարի արձանագրությունները նույն օտար բառերի  $\gamma$ -ի դիմաց դնում են խ: Այս նույն ժամանակներում սկզբնագիր աղբյուրներում  $\eta$ -ն և  $\lambda$ -ն հանդես են գալիս որպես լծորդ հնչյուններ, և  $\lambda$ -ն շատ հաճախ գրության մեջ շփոթվում է  $\eta$ -ի հետ:  $\lambda$ -ի  $\gamma$  հնչման ձևավորմամբ  $\eta$ -ն դառնում է ետնալեզվային խուլ շփական խ-ի ձայնեղ լծորդը. այս փոփոխությամբ խախտվում է նախորդ շրջանում առկա  $\eta$ :  $\lambda$  հակադրությունը և ստեղծվում է մի նոր հակադրություն՝  $\eta$ : խ, և այս հիմքի վրա արձանագրվում են  $\eta > \lambda$  հնչյունափոխության օրինակներ:

Այս բոլորից թերևս կարելի է հանգել այն եզրակացության, որ  $\eta$ -ի  $\gamma$  հնչման սկիզբը հավանաբար պետք է համարել IX դարի վերջերը կամ X դարի սկզբները և այն ավարտված համարել XI դարի սկզբներին:

62. Հայերենի ետնալեզվային շփական խ-ի մասին քիչ բան է մնում ասելու: Վերը շարադրվածից ինքնին բխում է, որ մեսրոպյան այբուբենի խ տառով արտահայտվող հնչյունը միջին հայերենի շրջանում էլ պահպանում էր  $\chi$ -ի արժեքը: Այդ որոշակիորեն երևում է փոխառյալ այն բառերում, որոնց մեջ օտարլեզվյան  $\chi$  հնչյունի դիմաց հայերենը դնում է ոչ այլ ինչ, եթե ոչ խ: Այսպես, օրինակ՝ պրս.  $\xi arx = \text{չարխ}$  (Մժբ. Տար. 155), արբ.  $\text{tābix} = \text{տապախ}$  (ն. տ. 173), արբ.  $\xi eix = \text{շեխ}$  (ն. տ. 158), արբ.  $xabār = \text{խապար}$  (ն. տ. 182), պրս.  $bixabar = \text{բեխապար}$  (Կ. Երզնկ. 210, 211), արբ.  $muxā\text{t}ara = \text{մուխաթարայ}$  (Մխ. Հեր. 52ա), արբ.  $buxār = \text{պուխար}$  (ն. տ. 27ա), պրս.  $isphanāx = \text{սպանախ}$  (ն. տ. 28ա, 30ա) և այլն<sup>48</sup>:

Մատենագրության մեջ հանդիպում են որոշ բառաձևեր, որոնց մեջ ավանդական խ-ի փոխարեն  $\eta$  է, ինչպես, օրինակ՝ սղալ (<սխալ), անսղալ, սղալանք և այլն: Սակայն սրանց մեջ դժվար թե խուլ  $\nu$ -ի կողքին  $\lambda$ -ն հնչյունափոխված լիներ  $\eta$ -ի: Այսպիսի գրչություններում պարզապես գործ ունենք լծորդ հնչյուններն արտահայտող տառերի գրության շփոթի հետ:

Այս շրջանում հանդիպում են նաև խ-ի փոխարեն  $\eta$ -ով բառաձևեր: Ամենահին վկայությունն ունենք 912 թվականից՝ Մլքե թագուհու ավետարանի սկզբնագիր հիշատակարանում, այսպես. «...իմ ձեռամբս եւ ծաճաւք եմ շինեալ» (Գ. Հովս. հձ. 109): Այնուհետև ունենք օրինակներ և հետագա դարերից, ինչպես՝ «...անհոնջ գգովելին» (ն. տ. 612, 1198 թ.) «...հեղամուտ արասցէ» (ն. տ. 613, 1198 թ.), «...եւ կայր մեզ այլ գիրս գրելոյ հաղտետրակս... առնէի գտետրակս հաղին և գրէի երես մի» (ԺԳ հձհ. 23, 1304 թ. Վասպուրական) և այլն: Գրության այս ձևերը, թերևս, մեր ժամանակակից որոշ բարբառներում (օր. Արարատյան) հանդես եկող  $\lambda > \eta$  հնչյունափոխության առաջին վկայություններն են, հատկապես հաղ, հաղտետրակ բառերում, սակայն բացառված չէ նաև, որ այդ օրինակների մի մասում պարզապես իր արտահայտությունը գտած լինի  $\eta$ -ի և  $\lambda$ -ի գրության շփոթը՝ հատկապես այն բարբառների (օր. Վասպուրականի) ազդեցությամբ, որոնց մեջ կատարված էր  $\eta > \lambda$  հնչյունափոխությունը (տե՛ս ստորև):

63. Այս բաժնի սկզբում բերված շփականների շարքի վերջին ներկայացուցիչը  $\eta$  տառով արտահայտված հնչյունն է, որը, եթե նկատի ունենանք նրա ժամանակակից հնչումը, կոկորդային մի պարզ շունչ էր, որ առաջանում էր թոքերից դուրս մղվող օդի թույլ հոսանքի աղմուկից՝ առանց ձայնալարերի

<sup>48</sup> Բերված օրինակները վկայվում են նաև այլ սկզբնաղբյուրների մեջ:

մասնակցության: Ժամանակակից հայ բարբառներում այդ խուլ հնչյունի կող-  
քին առկա է նաև նրա ձայնեղ տարբերակը (օր. Կարնո բարբառում), որը  
առաջինից տարբերվում է միայն նրանով, որ սրա արտաբերման ժամանակ  
մասնակցում են նաև ձայնալարերը: Անշուշտ, այս հնչյունը իր նախատիպը  
պիտի որ ունեցած լիներ միջին դարերում, բայց առայժմ մատենագրական  
տվյալներով հնարավոր չէ պարզել և հաստատել նրա գոյությունը քննարկվող  
շրջանում: Միայն կարելի է ենթադրել, որ յ>հ հնչյունափոխությամբ առաջա-  
ցած հնչյունն է, որ միջին հայերենի որոշ տարբերակներում ունեցել է այդ  
ձայնեղ հագագի որակը:

Ինչ վերաբերում է հ-ին և նրանով արտահայտված հնչյունին, ապա այն  
միջին գրական հայերենում համապատասխանում էր նրա խուլ տարբերակին,  
որը երևում է հատկապես այն օտար բառերի տառադարձության մեջ, որոնք  
ունեն հ. ըստ որում այդ համապատասխանությունն առկա է բառում գրաված  
բոլոր դիրքերում, այսպես, օրինակ՝ արբ. hab=հապ, պրս. hū=հու շա-  
րավալից արյուն», արբ. hunar=հունար, արբ. harāmi=հարամի, ֆր. har-  
nais=հառնեկ «կարասիք», արբ. hila=հիլայ Շամբաստանություն», արբ.  
buhārān=բուրհան «հիվանդության ճգնաժամ», պրս. šahbaluth=շահբալուտ  
Շարքալակադին», պրս. khah<sup>2</sup>-ruba=քահրբայ, արբ. mahr=մահր «հարս-  
նացուի օժիտ», արբ. bahār=բահար «գարուն», պրս. gunāhkhār=գունահ-  
քար «մեղավոր», պրս. juhar=ջոհար=ջուհար և այլն:

Սակայն գրական լեզվից դուրս, միջին հայերենի որոշ տարբերակներում  
հ-ի փոխարեն ունենք խ:

Վերը՝ խ հնչյունի քննության ժամանակ, նշվեց, որ մատենագրության մեջ  
հին խ-ի փոխարեն գրվում է հ (հաղ<խաղ): Այդ երևույթը համարելով խ-ի  
բարբառային հնչյունափոխության մասնակի մի արտահայտություն, մենք  
միաժամանակ նման գրության ձևերը արդյունք էինք համարում այն բարբառ-  
ների ազդեցության, որոնց մեջ կատարվել էր հ>խ հնչյունափոխությունը:  
Եվ դա բնական է: Եթե տվյալ բարբառում հին լեզվի բառասկզբի հ-երը օրի-  
նաչափորեն փոխվել են խ-ի, բայց ավանդական ուղղագրությամբ դրանք  
պետք էր շարունակել գրել հ-ով, ապա դրանով դժվարանում էր այդ երկու  
տառերի ուղղագրության հարցը և, բնականաբար, առաջանում էր գրության  
շփոթ: Հենց այդ է պատճառը, որ գրիչները շարունակելով կողմնորոշվել  
տվյալ բառի ուղղագրության մեջ՝ բառը մերթ գրում են ըստ իր հնչման (խաց)  
և մերթ՝ այդ հնչյունաբանական երևույթի հոգեբանական ազդեցությամբ՝  
հակառակ տառադարձությամբ (հելամուտ): Այս դժվարության մասին ան-  
կեղծորեն խոստովանում է Թովմա Արծրունու պատմությունը Աղթամարում  
լնդօրինակած Դանիել գրիչը իր հիշատակարանում: Նա գրում է՝ «...Եւ դար-  
ձեալ յերես անկեալ աղաչեմ զբարի ընթերցողսդ և անմեղադրութիւն խնդրեմ  
վասն սխալանաց գրոցս, եթե աւելի կամ պակաս գտանիցի ի սմա, եթէ կէտ,  
եթէ տուն և եթէ ստոր և եթէ յայլ ինչ բառ, ի հէ կամ ի հոյ, զի գիտնա-  
կանքն քաջ գիտեն, որ ի հին գրեանք այսպիսեացս ոչինչ փոյթ է արարած, և ես  
անհմուտ գու սոցա՝ զոր ինչ լսեալ էաք յեկեղեցական գրոց ի բառիցս յայս-  
ցանէ՝ զնոյն գրեցաք, և զոր արտաբոյ սոցա էր՝ ոչ գիտելով թէ որպէս էր...»  
(ԺԴ հձհ. 13, 1303 թ.):

Հ>խ հնչյունափոխությունն առավել հատուկ է եղել Վասպուրականի հայ  
խոսվածքներին: Դա ապացուցվում է ո՛չ միայն Դանիել գրչի վկայությամբ,

մասնակցութեան: Ժամանակակից հայ բարբառներում այդ խուլ հնչյունի կողքին առկա է նաև նրա ձայնեղ տարբերակը (օր. Կարնո բարբառում), որը առաջինից տարբերվում է միայն նրանով, որ սրա արտաբերման ժամանակ մասնակցում են նաև ձայնալարերը: Անշուշտ, այս հնչյունը իր նախատիպը պիտի որ ունեցած լիներ միջին դարերում, բայց առայժմ մատենագրական տվյալներով հնարավոր չէ պարզել և հաստատել նրա գոյությունը քննարկվող շրջանում: Միայն կարելի է ենթադրել, որ յ>հ հնչյունափոխութեամբ առաջացած հնչյունն է, որ միջին հայերենի որոշ տարբերակներում ունեցել է այդ ձայնեղ հագագի որակը:

Ինչ վերաբերում է հ-ին և նրանով արտահայտված հնչյունին, ապա այն միջին գրական հայերենում համապատասխանում էր նրա խուլ տարբերակին, որը երևում է հատկապես այն օտար բառերի տառադարձության մեջ, որոնք ունեն հ. ըստ որում այդ համապատասխանությունն առկա է բառում գրաված բոլոր դիրքերում, այսպես, օրինակ՝ արբ. hab=հապ, պրս. hū=հու շաբադալից արլուն», արբ. hunar=հուհար, արբ. harāmi=հարամի, Ֆր. harnais=հառնեզ «կարասիք», արբ. hila=հիլայ «ամբաստանություն», արբ. buhrān=բուրհան «հիվանդության ճգնաժամ», պրս. šahbaluth=շահբալուտ «արքայակաղին», պրս. khah-ruba=քահրբայ, արբ. mahr=մահր «հարսնացուի օժիտ», արբ. bahār=բահար «գարուն», պրս. gunāhkhār=գուհահ-քար «մեղավոր», պրս. juhar=ջոհար=ջուհար և այլն:

Սակայն գրական լեզվից դուրս, միջին հայերենի որոշ տարբերակներում հ-ի փոխարեն ունենք խ:

Վերջ խ հնչյունի քննության ժամանակ, նշվեց, որ մատենագրության մեջ հին խ-ի փոխարեն գրվում է հ (հաղ<խաղ): Այդ երևույթը համարելով խ-ի բարբառային հնչյունափոխության մասնակի մի արտահայտություն, մենք միաժամանակ նման գրության ձևերը արդյունք էինք համարում այն բարբառների ազդեցության, որոնց մեջ կատարվել էր հ>խ հնչյունափոխությունը: Եվ դա բնական է: Եթե տվյալ բարբառում հին լեզվի բառասկզբի հ-երը օրինաչափորեն փոխվել են խ-ի, բայց ավանդական ուղղագրությամբ դրանք պետք էր շարունակել գրել հ-ով, ապա դրանով դժվարանում էր այդ երկու տառերի ուղղագրության հարցը և, բնականաբար, առաջանում էր գրության շփոթ: Հենց այդ է պատճառը, որ գրիչները չկարողանալով կողմնորոշվել տվյալ բառի ուղղագրության մեջ՝ բառը մերթ գրում են ըստ իր հնչման (խաց) և մերթ՝ այդ հնչյունաբանական երևույթի հոգեբանական ազդեցությամբ՝ հակառակ տառադարձությամբ (հելամուտ): Այս դժվարության մասին անկեղծորեն խոստովանում է Թովմա Արծրունու պատմությունը Աղթամարում ընդօրինակած Դանիել գրիչը իր հիշատակարանում: Նա գրում է՝ «...Եւ դարձեալ յերես անկեալ աղաչեմ զբարի ընթերցողսդ և անմեղադրութիւն խնդրեմ վասն սխալանաց գրոցս, եթե աւելի կամ պակաս գտանիցի ի սմա, եթէ կէտ, եթէ տուն և եթէ ստոր և եթէ յայլ ինչ բառ, ի ինչ կամ ի հոյ, զի գիտնականքն քաջ գիտեն, որ ի հին գրեանք այսպիսեացս ոչինչ փոյթ է արարած, և ես անհմուտ գու սոցա՝ զոր ինչ լսեալ էաք յեկեղեցական գրոց ի բառիցս յայսցանէ՝ զնոյն գրեցաք, և զոր արտաքոյ սոցա էր՝ ոչ գիտելով թէ որպէս էր...» (ԺԴ հՃ. 13, 1303 թ.):

Հ>խ հնչյունափոխությունն առավել հատուկ է եղել Վասպուրականի հայ խոսվածքներին: Դա ապացուցվում է ո՛չ միայն Դանիել գրչի վկայությամբ,

որը գործել է Աղթամարում, այլև սկզբնագիր տվյալներով, որոնք գրված են Վասպուրականում կամ նրան հարող գավառներում: Բերենք մի շարք օրինակներ. «...զամենայն ազգատոխմքն իմ...» (ԺԴ հձհ. 130, 1317 թ. Արճեշի գավառ), «...որոյ անուն Շախընշախ կոչի, ստացաւ զսայ ի խալալ և յարդար վաստակոց իւրոց» (ն. տ. 281, 1336 թ. գրիչ՝ Թումա Արճիշեցի), «...ի յարդար և ի խալալ վաստակոց իւրոց» (ն. տ. 170, 1321 թ.), «...խլու և հպատակ եղև» (Գ. Նովս. հձ. 610, 1198 թ.), «...զժախահոտ և զխոնաւուն վայրս» (ն. տ. 612, 1198 թ.), «...նս՝ վերջին ստացողս խուսն (<հիւսն) ներսէս ստացայ զաւետարանս ...յիշատակ ինձ ...և խուսն խոցղեղին» (ԺԵ հձհ. I, 125, 1411 թ.), «...անուանակից սուրբ նախատակին» (ն. տ. 309, 1429 թ.), «...զնախապետ՝ Թոռն նորին» (ն. տ. 309, 1423 թ.), «...միայն խոյակապ սուրբ խաչս է մնացեալ» (ն. տ. 326, 1425 թ., Աղթամար), «...յիշեսչիք ...և զեղբայրն իւր զխուսն Մարգարէն» (ԺԵ հձհ. II, 70, 1456 թ., Բաղեշ), «Աստուած-ողորմի ասացէք Յովանէսին, որ նախատակեցաւ ի Շաշմուտի բերդն» (ն. տ. 102, 1458 թ., Աղթամար), «...թէ մեծ է և թէ փոքր, թէ խարուստ է և թէ աղքատ» (ն. տ. 183, 1462 թ., Կտուց անապատ) և այլն:

Ավելորդ ենք համարում օրինակներ բերել հետագա զարերից հասած ձեռագրերից, որոնց մեջ, ինչքան մոտենում ենք մեր ժամանակներին, այնքան առատ են վկայութունները: Սակայն նորից պետք է շեշտել, որ հ>խ հնչյունափոխությունը հատուկ էր միայն Վասպուրականի և նրան հարող շրջանների հայերեն խոսվածքներին և ոչ տիպական միջին գրական հայերենի համար:

#### ՋԱՅՆՈՐԴՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

64. Հայերենի լ, դ, մ, յ, ն, ո, ր, Վ տառերով արտահայտվող հնչյունները միայն պայմանականորեն՝ հետևելով դրանց ավանդական անվանմանը, կարելի է համարել ձայնորդներ, քանի որ դրանք ո՛չ միայն միջին հայերենի, այլև նրան նախորդած շրջանում իսկ արդեն վեր էին ածվել սովորական բաղաձայնների: Սրանցից դ-ն, ինչպես արդեն ասվել է, քննարկվող շրջանում փոխարկվել էր ձայնեղ շփական շ-ի և հին խ-ի հետ հանդես էր գալիս նույն շարքում որպես նրա ձայնեղ լծորդը: Ինչպես կտեսնենք ստորև, ձայնորդներից յ-ն և Վ-ն նույնպես ենթարկվել էին փոփոխության. դրանցից հատկապես վերջինը ոչ երկբարբառային դիրքում նույնացել էր Վ բաղաձայնի հետ և այլևս մի առանձին հնչյուն չէր արտահայտում: Այդ շարքից միայն լ, մ, ն, ո, ր հնչյուններն էին, որ պահպանել էին իրենց հին արժեքները և որպես բաղաձայններ հպականներից ու շփականներից առանձնանում էին միայն նրանով, որ հանդես էին գալիս միայնակ՝ առանց լծորդների:

65. Հայերենի լ-ի լ արժեքը միջին հայերենում որոշակիորեն երևում է հետևյալ փոխառյալ բառերում. արբ. ālāt=ալաթ «պարագաներ, պիտուլքներ» (Անս. 47), ֆր. plaid=բլայթել «պաշտպանվել դատարանում» (ն. տ. 19, 33), ֆր. privilege=բրվիլեմ (ն. տ. 67), ֆր. lige=լիմ (ն. տ. 9 և այլն), արբ. galaba=խալապա (ն. տ. 39), արբ. hila=հիլայ (ն. տ. 33), ֆր. bail=պալլ (ն. տ. 9), ֆր. chalonge=չալունջ (ն. տ. 19), ֆր. sol=սոլ (ն. տ. 29), ֆր. double=տուպլ (ն. տ. 83), արբ. fulān=ֆուլան (ն. տ. 11), ֆր.



faillir=ֆայլել «դատի մեջ պարտվել» (Ն. տ. 63), արբ. lablab=լաբլաբ (Մխ. Հեր. 60 բ), արբ. Julāb=ճուլապ (Ն. տ. 25բ), արբ. maqlat=մակալաթ «ճառ» (Ն. տ. 11ա), արբ. nazla=նզլայ (Ն. տ. 45ա, 46ա), արբ. balḡam=պղամ (Ն. տ. 10բ, 11ա), արբ. sandal=սանտալ (Ն. տ. 25ա), պրս. bulbul=բլբուլ (Կ. Երզնկ. 119, 120, 121, 131 և այլն), պրս. gulbašakhar=գուլբայշաքար (Ն. տ. 144, 148), արբ. duvlath=դովլաթ (Ն. տ. 211), արբ. qalb=ղալպ (Ն. տ. 196), արբ. qabūl=ղապուլ (Ն. տ. 198), արբ. Jumla=ջումլայ (Ն. տ. 185), արբ. Jallād=ջալադ (Ն. տ. 185), պրս. phūlād=փուլադ (Ն. տ. 185), իտ. contestabile=գոնդուստալ (Սմբ. Տար. 200), լատ. legato=լիկաթ (Ն. տ. 220), լիկուս (ԺԴ հձհ. 35, 1305թ.), արբ. mahlab=մահլապ (Սմբ. Դատ. 16), ֆր. Josselin=ձաւսլին (Գ. Հովս. հձ. 351, 1130 թ.) և այլն:

Այս օրինակները որոշակիորեն ցույց են տալիս, որ հայերենի լ-ն ուներ 1-ի արժեք. բայց այս հիմնական համապատասխանությունների կողքին կային նաև մասնակի շեղումներ:

Բազմաթիվ փոխառյալ բառերի մեջ բացառություն է կազմում նախ՝ ֆր. marechal=մարաչախա բառը, որտեղ 1-ի դիմաց առկա է խ: Այստեղ, անշուշտ, խ-ն զարգացել է դ-ից: Աճառյանը այդ բառաձևը համեմատում է ֆր. marechal բառի հետ: Հենվելով հին հայերենում գործող՝ Մեյեի հայտնագործած այն օրենքի վրա, ըստ որի՝ բաղաձայնից առաջ միշտ լինում է ղ, և ոչ լ, և նկատի ունենալով Մեյեի բանավոր այն դիտողությունը, որ հին ֆրանսերենի ալ հնչյունախումբը ô ձայնավորի փոխվելիս՝ անցել է աչ աստիճանով, Աճառյանը իրավացիորեն գտնում է, որ marechal բառաձևը հայերենում 1-ից առաջ նախ պետք է ունեցած լիներ ղ (\*մարաչաղա), որից հետո միայն կարող էր հնչյունափոխվել խ-ի<sup>49</sup>:

Սրանից առնվազն կարելի է եզրակացնել, որ marechal բառի փոխառման ժամանակ ֆրանսերենում ալ-ը արդեն գտնվում էր աչ-ի աստիճանի վրա, հետևաբար և, եթե հայերենում այն տառադարձվել է աղ-ով, ապա վերջինիս մեջ ղ-ն ուներ չ-ի արժեք: Նման օրինակներ են նաև Կարստի աշխատության մեջ բերվող Ըոնաղտ, Ռընաղտ < Renald, Պաղտին, Պաղտոյն < Balduin, Baldouin անունների տառադարձությունները (որոնց վկայակոչում է նաև Աճառյանը), ուր նույնպես ալ-ը համապատասխանորեն արտահայտված է աղ կապակցության միջոցով: Հետևաբար, մարաչախա բառում 1-ի փոխարեն խ-ի առկայությունը ավելի հավանական է դառնում Մեյեի բանավոր դիտողության մեկնաբանությամբ, քան նույնի՝ վերը նշված օրենքի կիրառությամբ:

Աճառյանը բերում է նաև արաբերենից փոխառված قفيل=qufil «փականք» բառի օրինակը, որի առաջին վկայությունը գտնում է Օրբելյանի մոտ՝ կոպղեալ ձևով<sup>50</sup>: Նա իրավացիորեն այդ բառաձևը ավելի հին է համարում, քան Օրբելյանի ապրած ժամանակաշրջանը (մեռել է 1304 թ.), քանի որ բաղաձայնից հետո 1-ն արտահայտված է ղ-ով (ըստ Աճառյանի նկատած այն օրինաչափության, որ բաղաձայնից հետո էլ գրվում է ղ, և ոչ լ, ինչպես՝ աստղ, արկղ, կոնդ և այլն): Ինչպես կարելի է նկատել, կոպղ բառաձևը ևս հայոց մեջ մտել է դեռևս այն շրջանում, երբ ղ-ն չ չէր դարձել, հակառակ դեպ-

<sup>49</sup> Հ. Աճառյան, Երբ 1 դարձավ ղ, նշված հանդեսում, էջ 34:

<sup>50</sup> Անդ:

քում ո՛չ միայն 1-ն կտառադարձվեր 1-ով, ինչպես ունենք վերը բերված գունդուստապլ=contestabile, տուպլ և այլ նման բառերում, այլև զ(Յ)-ն պետք է տառադարձվեր դ-ով, ինչպես ունենք հետագայում (երբ դ-ն արգենն չ էր)՝ դալպ=qalb, դապուլ=qabul և այլն:

Մեր բարբառներում տարածված կօղպանֆ, կօղպիս, կօղպէֆ, կօղբէս, գրղբագ, գրղբանֆ, գրմղագ, դույբախֆ, կօխպէս, գօղբել, գրղբել և այլ նման ձևերը, որոնց վկայակոչում է Աճառյանը, ցույց են տալիս միայն, որ դրանք զարգացել են կոպղ ձևի վրայից՝ դ=չ ընդհանուր հնչյունափոխության պայմաններում, մանավանդ եթե նկատի ունենանք նաև մեր արևելյան մի շարք բարբառներում այդ նույն բառի դուփուլ, դուփրլ (Չանգեզուր, Ղարաբաղ) տարբերակները, որոնց մեջ հարազատորեն են արտահայտված օտարլեզվյան չ և 1 հնչյունները:

Օտարլեզվյան 1-ի տառադարձման այս օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ VIII—IX դարերում, երբ պիտի որ կատարված լինեին արաբական առաջին փոխառությունները, դ-ն դեռևս չ-ի արժեք չէր ստացել: Այդ առավել երևում է արբ. qufl բառի կոպղ կամ կողպ ձևերից մեր բարբառներում զարգացած տարբերակների օրինակներից, որոնք 1-ի փոխարեն դ ունեն միայն ըստ դիրքային արտահայտության: Եթե ընդունելու լինենք, որ բարբառներում այդ բառաձևի լայն տարածման համար պիտի պահանջվեր ոչ քիչ ժամանակ, ապա, թվում է, թե դ-ի ետնալեզվային շփական բաղաձայն դառնալու սկզբնավորությունը պետք է տեղափոխել X դարի սկիզբը:

66. Ինգային բաղաձայններ արտահայտող մ և ն տառերը պահպանել էին իրենց հնչյունական հին արժեքները: Այդ որոշակիորեն երևում է մի կողմից փոխառյալ բառերում, ուր ամենուրեք փոխատու լեզուների մ և ու-հնչյունները հայերենում համապատասխանորեն արտահայտված են մ և ն գրերով և, մյուս կողմից, ավանդական բառաձևերի գրության մեջ՝ շեղումների և «ուղղադրական սխալների» բացակայությամբ:

Մ=m համապատասխանությունն են նշում, օրինակ՝ արբ. zukhām=զուքամ (Մխ. Հեր. 31ա), արբ. maqlat=մակալաթ (ն. տ. 11ա), արբ. muxatara=մուխատրայ (ն. տ. 52ա), արբ. balgam=պլղամ (ն. տ. 10բ), արբ. rasm=ռասմ (ն. տ. 47ա), պրս. sarsam=սարսամ (ն. տ. 30ա), արբ. qumāš=կումաշ (Անս. 19), արբ. mazād=մազատ (ն. տ. 79), արբ. mahr=մահր (ն. տ. 45), ֆր. marc=մարկ (ն. տ. 29), պրս. bi-šumār=բեշմար (Կ. Երզնկ. 211), պրս. bimār=բիմար (ն. տ. 210), արբ. maʿlīs=մելիս (ն. տ. 143), արբ. murād=մուրատ (ն. տ. 191), արբ. Jumla=ջումլայ (ն. տ. 185), իտ. empereur=բմբրուր (Մմբ. Տար. 225), լատ. comes=կոմս (ն. տ. 104), արբ. harāmi=հարամի (ն. տ. 122, Մմբ. Դատ. 31), արբ. mahlab=մահլապ (Մմբ. Դատ. 16), ֆր. maistre=մայստռ (Մմբ. Տար. 218), արբ. maydan=մայտան (ն. տ. 51), պրս. mazgith=մզկիթ (ն. տ. 155), արբ. amānat=ամանաթ (ԺԴ հձհ. 295, 1337թ.) և այլն:

Հայերենի մ-ի հնչյունափոխությունն առհասարակ չի նկատվում, բացառությամբ բայական ժամանակների հոգնակի թվի առաջին դեմքի -մֆ վերջավորության, որը միջին հայերենի տարբերակների մեծագույն մասում հնչյունափոխված է -նֆ-ի (տամֆ>տանֆ):

67. Օրինաչափ համապատասխանությունն գոլություն ունի նաև օտարլեզվյան ու-ի և հայերենի ն-ի միջև. այսպես՝ արբ. babunaʾj=պապունիմ

(Մխ. Հեր. 28ա), արբ. sandal=սանալ (ն. տ. 25ա), արբ. buhrān=բուրհան (ն. տ. 8ա), արբ. hunar=հունար (ն. տ. 42բ), արբ. 'unnāb=յունապ (ն. տ. 27բ), արբ. nauba=նոպայ//նուպայ (ն. տ. 53), ֆր. bassine=պացին (Անս. 45), ֆր. chalonge=չալունջ (ն. տ. 19), ֆր. canne=գան (ն. տ. 79), ֆր. harnais=հառնեզ (ն. տ. 19), ֆր. banier=պաներ *«դատարանի ծանուցում»* (ն. տ. 43), արբ. naqd=նադա (ն. տ. 19. Կ. Երզնկ. 173), պրս. gunākhār=գունահար (Կ. Երզնկ. 189), պրս. dāstan=դաստան (ն. տ. 154,) hanap=հանապ (Մմբ. Տար. 31), արբ. qantara=կանդարայ (Մմբ. Դատ. 9), իտ. contestabile=գունգուստապլ (Մմբ. Տար. 200), ֆր. princesse=բրննես (ն. տ. 204), ֆր. prince=բրինն (ն. տ. 108), ֆր. baron=պարոն (ն. տ. 163) և այլն<sup>51</sup>:

Ն-ի անկման մասին տե՛ս § 79:

68. Մեսրոպյան այբուբենի յ տառով արտահայտված հնչյունը հայերենի գրի առնելու շրջանում բառի մեջ գրաված բոլոր դիրքերում էլ հանդես էր գալիս նույն *յ* կիսաձայն հնչյունի արժեքով:

Միջին հայերենը թեև հետևում է հին ուղղագրությանը և այդ նույն դիրքերում շարունակում է պահել գրության հին ձևերը, բայց ինչպես կտեսնենք, այստեղ միայն բառամեջն է, որ յ տառին տալիս է հին կիսաձայնի արժեքը. բառակիզբը հանդես է բերում յ>ն փոփոխություն, այն դեպքում, երբ բառակերթի դիրքում յ-ն պարզապես համը հնչյուն է:

Բառասկզբում կատարված փոփոխությունը ենթադրվում է նախ նրանով, որ ինչպես ժամանակակից հայերենում, այնպես և նրա բարբառներում, այդ դիրքի յ-ին այժմ համապատասխանում է հ, ինչպես՝ յատակ=հատակ, յատուկ=հատուկ, յարութիւն=հարութիւն, յաւէտ=հավէտ, յիմար=հիմար, յիշել=հիշել և այլն: Այս երևույթը, որ այնքան օրինաչափ ու ընդհանրական է, չէր կարող իր արմատները շունենալ միջնադարում: Եվ իսկապես, սկզբնաղբուրները նման փոփոխության մի շարք օրինակներ են տալիս:

Կատարված հնչյունափոխությունը նախ արձանագրվում է ըստ յ-ի արտասանական նոր դրության՝ հ-ի միջոցով: Այսպես, օրինակ՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ունենք. «...յորում ժամանակի ունէր զաթոռ հայրապետութեան հայոց տէր Գրիգորիս մակհորջորջեալ (<մակյորջորջեալ) Անավարզեցի» (ԺԴ հձհ. 6, 1302 թ., Գլաձոր), «...այր մեծիմաստ և հոքնահանճար (<յոգնահանճար) ...զհոքնամեղ (<զյոգնամեղ) գրիչս» (ն. տ. 6, 7, 1302 թ., Գլաձոր), «...ձեռամբ հոգնամեղ և թարմատար գրչի» (ն. տ. 34, 1305 թ.), «...գրեցաւ սա հոգնամեղ և սուտանուն և փցուն և յետին գրչի» (ն. տ. 69, 1310 թ.), «...և զեկեղեցիս քարահատակ (<քարայատակ) կործանեաց» (ԺԵ հձհ. 5, 1401 թ., Տաթև) և այլն: Բերված օրինակներում (մակ)յորջորջեալ, յոգնահանճար, յոգնամեղ, (քարա)յատակ բառերում բառասկզբի յ-ն ըստ հնչյունական իր նոր արժեքի արտահայտված է հ տառի միջոցով:

Նույն երևույթը արտահայտված է նաև հակառակ գրություններ, երբ հ հնչյունն է դրսևորվում յ-ի միջոցով. այսպես, օրինակ՝ «Հոգոյն գալստեանն պատարագն մի՝ Մարիամա է, վասն միաբանական յոգոյն, մինչ ի գալուստն

<sup>51</sup> էջերը նշվում են միայն վկայությունները հավաստի դարձնելու համար: Բերվող ձևերը կրկնվում են հիշյալ աշխատություններում, իսկ դրանցից շատերը վկայվում են նաև այլ սկզբնաղբուրներում:

Քի» (ԿՂ Սանահ. 112, ԺԳ դ.): Այս բնագրում նույն հոգի բառի հոգոյն թեք-ված ձևը արտահայտված է նաև յոգոյն գրչությամբ, ուր բառասկզբի յ-ն ունի հ-ի արժեք: Նման օրինակ է միջնադարյան աղբյուրներում տարածված հայնց, հանց, հենց բառաձևերի կողքին յէնց գրության ձևը. ինչպես՝ «Յայսմ ամի ջուրքն յէնց պակասեցան, որ բազում գետաղաց շաղացք խափանեցան» (ԺՅ ՀՃՀ. I, 93, 1405 թ.): 1341 թ. գրված մի Ճառքնտիրի (Ձեռ. 8030) մեջ հարստութիւն բառը գրված է՝ «...յարստութիւնն յաղբատութիւն դառնայ» (էջ 83բ) և այլն: Իհարկե, գրության ինչպես այս, այնպես և վերը նշված հ-ով ձևերը շատ սակավ են: Եվ դա ինքնին հասկանալի է, քանի որ մի կողմից ուղղագրական հանոնները պահպանվում էին գրության մեջ, մյուս կողմից յ>հ ընդհանուր հնչյունափոխության պայմաններում՝ բառասկզբի յ-ն առանց որևէ ուղղագրական բարեփոխության արտահայտում էր իր նոր արժեքը:

Այստեղ ուշագրավ է մի այսպիսի երևույթ ևս: Հայտնի է, որ գրաբարում ի նախդիրը ձայնավորից առաջ փոխվում էր յ-ի: Միջին հայերենում այդ նույն դիրքում թեև պահպանվում էր յ գրությունը, բայց դրանից առաջ անպայմանորեն ավելանում էր մի ի: Այսպես, օրինակ՝ «...երդմնցնէ զայն վկայքն դարպասն ի խաչն ու ի յաւետարանն» (Անս. 57), «...դարպասն ի կահրա պատեհ է որ այնէ, որ զիր գինն ի յինք դարձնէ» (ն. տ. 63) և այլն: Ի նախդիրի կրկնակի գործածության նման օրինակներ շատ հաճախ են հանդիպում միջինհայերենյան տեքստերում: Գրության այսպիսի ձևերը ստեղծվում են այն բանի պատճառով, որ բառասկզբի յ-ի հ հնչյունափոխությամբ մթազնվում է նրա նախդրային ֆունկցիան, և նրա այդ դերը ապահովելու նպատակով է, որ կրկին գրվում է ի:

Բառասկզբում յ-ի կրած փոփոխության փաստը հաստատվում է նաև այն փոխառյալ բառերի օրինակներով, որոնք բառասկզբում ունենալով ց, հայերենում համապատասխանաբար արտահայտված են ո՛չ թե յ-ով, այլ Ե-ով, որը այս դիրքում արտահայտում էր կիսաձայն ց հնչյունը, ինչպես, օրինակ՝ եաղութ, եասաման, եար, եարաղ, եասիր, եոլդաշ, Եադիզար և այլն:

Ենթադրելի է նաև, որ բառասկզբի յ-ի հնչյունափոխությամբ առաջացած հ-ն միջին հայերենի տարբերակների մի մասում ունեցած լինի ձայնեղության երանգ, ինչպես այդ արձանագրվում է հայերենի ժամանակակից բարբառների մի մասում: Առայժմ դժվար է այդ ենթադրության օգտին ծանրակշիռ փաստարկներ բերել: Ենդիրը դժվարանում է նրանով, որ այն բարբառներում, որոնց մեջ յ-ն ստացել էր ձայնեղ հ-ի արժեք, նույն դիրքում հակադրվում էր խուլ հ-ին, և այս իսկ տեսակետից գրության մեջ կարող էր արտահայտվել միայն յ-ի միջոցով:

Բառասկզբի յ-ի անկման մասին տե՛ս § 82:

69. Բառամիջի դիրքերում յ-ն պահպանել էր իր հին արժեքը: Այդ հաստատվում է ոչ միայն հայերեն բառերի ուղղագրության մեջ յ-ի և հ-ի գրության շփոթի բացակայությամբ, այլև նրանով, որ փոխառյալ բառերի մեջ օտարլեզվյան կիսաձայն ց-ն հայերենում հետևողականորեն գրադարձվում էր յ-ի միջոցով: Մի քանի օրինակներ. ֆր. plaid=բլայթ (Անս. 33), ֆր. bail=պայլ (ն. տ. 9), ֆր. saisie=սայզայ (ն. տ. 57), ֆր. douaire=տուայր (ն. տ. 21), ֆր. faille=ֆալլե (ն. տ. 63), արբ. rayis=բռալիս (Մմբ. Տար. 33), ֆր. maistre=մայստր (ն. տ. 199), արբ. maydan=մայտան (ն. տ. 51) և այլն:

70. Հին հայերենում բառավերջի յ-ն հանդես էր գալիս ա և և ձայնավորներից հետո: Միջին հայերենի շրջանում, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ փաստերը, այդ դիրքում յ-ն պահպանվել էր միայն միավանկ բառերի վերջում: Բազմավանկ բառերում թեև ավանդաբար այդ յ-ն գրվում էր, բայց այն համր տառ էր և չէր արտասանվում: Այդ էր պատճառը, որ ինչպես վիմական արձանագրություններում, այնպես և տարբեր այլ սկզբնագիր ձեռագրերում այդ յ-ն գրության մեջ շատ հաճախ չէր արտահայտվում:

Բառավերջի յ-ի անկման սկզբնավորումը և այդ երևույթի ավարտն ու ընդհանրացումը հայոց լեզվի մեջ տեղի էր ունեցել մինչև միջին հայերենի ժամանակաշրջանը: Ինչպես ցույց է տվել պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը, այդ երևույթի գրավոր առաջին վկայությունները սկսվում են VI դարից՝ վիմական արձանագրությունների մեջ: Դրանք տապանաքարերի վրա գրված հիշատակսկզբություններ են, որոնց մեջ սեռական հոլովով հանդես եկող անունների ա և և հոլովիչներից հետո բաց է թողնված յ հնչյունը: Ահա այդ վաղ վկայությունների տեքստը. «Այս գիրս Գէորգա քահանայի է»։ «Այս է հանգիստ Դաւթի Գթունեաց տն որդո Վասակա քարէպա(շտ)ի»<sup>52</sup>: Պրոֆ. Աբրահամյանը վկայակոչում է նաև Դվինի կաթողիկե եկեղեցու կղմինդրե ծածկի՝ VII դարի սկզբների մի արձանագրության մեջ ծառայ ձևի փոխարեն ծառա գրությունը, որը վկայող արձանագրության լրիվ տեքստը հրատարակված է նաև «Հայերեն արձանագրությամբ առարկաներ» ժողովածուի մեջ. այսպես՝ «Ծս Յովաննես վարդապետ ծառա սրբոյ Գրիգորի յաղաւթս յիշէցէք ի (տէ)ր»<sup>53</sup>:

Հետագա դարերում այդ երևույթի դրսևորման փաստերը ավելի հաճախանում են, թերևս պայմանավորված գրավոր աղբյուրների առատությամբ: Վերը նշված, ինչպես և այլ սկզբնագիր փաստերի հիման վրա պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը եզրակացնում է. «...Արդեն IX դարում լրիվ կերպարանք էր ստացել արտասանության մեջ բառավերջի յ հնչյունի անկման օրենքը, մասամբ արտացոլում գտնելով նաև գրության մեջ»<sup>54</sup>: Այնպես որ միջին հայերենի շրջանում երկվանկ և բազմավանկ բառերի բառավերջի յ-ն սոսկ համր հնչյուն էր և գրության մեջ այդ դիրքում նրա պահպանվելը ուներ միայն ուղղագրական նշանակություն:

XII—XIV դարերի մատենագրության մեջ բազմաթիվ են բառավերջի դիրքում այդ հնչյունի անկման փաստերը, որոնց մեկ առ մեկ վկայակոչելը ավելորդ ենք համարում: Սակայն այս երևույթի օրինաչափ լինելը հաստատելու համար հարկ է հիշել միջին հայերենում մուտք գործած այն օտար բառերը, որոնք թեև փոխատու լեզվում բառավերջում ունեն միայն ձ, բայց հայերենում, այնուամենայնիվ, վերջից ստանում են յ: Այդպիսի տառադարձումը ևս ցույց է տալիս, որ այդ յ-ն հնչյունական արժեք չունի և գրվում էր միայն հին ուղղագրության պահպանման պահանջով: Այսպես, օրինակ՝ պրս. thaza = բաժայ (Մխ. Հեր. 50բ), արբ. qantara = կանգարայ (Մմբ. Դատ. 9), արբ.

<sup>52</sup> Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1957, № 4, էջ 80: Փաստերը բաղված են 4. Ղաֆաղարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատությունից: Երկրորդ տապանագիրը հրատարակված է նաև «Հայերեն արձանագրությամբ առարկաներ» ժողովածուի մեջ (էջ 50):

<sup>53</sup> Անդ. Նակ՝ «Հայերեն արձանագրությամբ առարկաներ», էջ 155:

<sup>54</sup> Ա. Աբրահամյան, նշվ. աշխատությունը, էջ 82:

qārura = կարուբայ (*Մխ. Հեր. 21ա*), արբ. muxāṭara = մուխատրայ (*ն. տ. 52ա*), արբ. nazla = նզլայ (*ն. տ. 45ա*), արբ. savda = սավդայ (*ն. տ. 10բ*), պրս. khah-ruba = քահրբայ (*ն. տ. 42բ*), արբ. qal'a = կալայ (*Սմբ. Տար. 29*), ֆր. chambrelan = ջամբրոլայ (*ն. տ. 211*), արբ. hila = հիլայ (*Անս. 33*), ֆր. saisie = սայզայ (*ն. տ. 57*), արբ. darba = տարպայ (*ն. տ. 25*), արբ. jumla = ջումլայ (*Կ. Երզնկ. 185*) և այլն: Հատկանշական է, որ այս կարգի փոխառվալ բառերում հանդիպում են նաև առանց յ-ի ձևեր, ինչպես՝ արբ. ḡalaba = խալապա (*Անս. 39*), արբ. jafa = ջաֆա (*Կ. Երզնկ. 211*) և այլն:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք յ հնչյունի մասին վերը ասածները, ապա պետք է ընդունել, որ միջին հայերենի շրջանում հին հայերենի յ կիսաձայնը պահպանվել էր միայն բառամիջում: Բառասկզբում այն հնչյունափոխվել էր հ-ի, իսկ բառավերջում՝ ընկել:

71. Քննարկվող շրջանում հին հայերենից ավանդված Դ հնչյունի երկու՝ կոշտ և փափուկ տարբերակները շարունակում էին իրենց գոյությունը: Որ մեսրոպյան այբուբենի ու և Ե տառերը այս շրջանում էլ ունեին ի և Դ հնչյունների արժեքներ, հաստատվում է մի քանի հանգամանքներով: Նախ, այդ տառերով արտահայտված հնչյունների հնչույթային արժեքը դրսևորվում է առու: արու, լուռ: լուր, կռել: կրել, վառ: վար, վառել: վարել և այլ նման զույգերում, որոնց մեջ իմաստի տարբերակում կատարվում է ո: Ե հակադրությունը: Մյուս կողմից օտար բառերի տառադարձումը ևս ցույց է տալիս այդ երկու հնչյունների տարբերակված գործածությունը քննարկվող շրջանում: Արաբերենից, ֆրանսերենից, իտալերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառած բառերում այդ լեզուների բառամիջի և բառավերջի Դ-ի դիմաց հայերենը հիմնականում դնում է Ե. ինչպես, օրինակ. ֆր. outreier = արքեի (*Անս. 21*, *Սմբ. Տար. 107*), ֆր. privilege = բրվլեճ (*Անս. 67*), արբ. mahr = մահր (*ն. տ. 45*), ֆր. marc = մարկ (*ն. տ. 29*), պրս. čarak = չարակ (*ն. տ. 83*), ֆր. banier = պանեթ (*ն. տ. 43*), արբ. šadr = սաթ (*ն. տ. 45*), արբ. darba = տարպայ (*ն. տ. 25*), ֆր. douaire = տուայր (*ն. տ. 21*), թրք. yarḡuči = արղուչի (*ԺԴ հձհ. 24*, *1304 թ.*), արբ. buhrān = բուրհան (*Մխ. Հեր. 10բ*), արբ. qārura = կարուբայ (*ն. տ. 21ա*), արբ. qurs = կուրս (*ն. տ. 45ա*), արբ. hunar = հուճար (*ն. տ. 42բ*), արբ. muxāṭara = մուխատրայ (*ն. տ. 52ա*), արբ. bizarqatun = պզրկաուն (*ն. տ. 44ա*), արբ. buxār = պուխար (*ն. տ. 27ա*), պրս. sarsām = սարսամ (*ն. տ. 30ա*), արբ. ṭabāšir = տապաշիր (*ն. տ. 41ա*), պրս. khah-ruba = քահրբայ (*ն. տ. 41ա*), իտ. empereur = քմբուր (*Սմբ. Տար. 225*), արբ. xabar = խապար (*ն. տ. 182*), պրս. čarx = չարխ (*ն. տ. 155*), ֆր. baron = պարոն (*ն. տ. 165*), արբ. burj = պուրճ (*ն. տ. 220*), պրս. sarhang = սրահանգ (*ն. տ. 150*), ֆր. frère = ֆրեթ (*ն. տ. 178*), պրս. bahar = բահար (*Կ. Երզնկ. 117*), արբ. bašar = բասար (*ն. տ. 132*), պրս. bi-xabar = բիխապար (*ն. տ. 211*), պրս. bi-šumār = բեշմար (*ն. տ. 211*), պրս. bidār = բետար (*ն. տ. 198*), պրս. bimār = բիմար (*ն. տ. 210*), պրս. gulbašakhar = գուլբայշաքար (*ն. տ. 148*), պրս. gunāhkhār = գուճահքար (*ն. տ. 189*), արբ. thadbir = թապիր (*ն. տ. 203*), թապիր (*Մխ. Հեր. 24բ*), արբ. murād = մուրաա (*Կ. Երզնկ. 168*), արբ. muṭrab = մտրուպ (*ն. տ. 157*), արբ. javr = ջավր (*ն. տ. 211*), արբ.-պրս. jūhar = ջոհար (*ն. տ. 208*), արբ. qanṭara = կանդարայ (*Սմբ. Դատ. 9*), ֆր. prince = բրինձ (*Մանր ժմնկ. 77*), ֆր. stre = սթր (*Սմբ. Տար. 200*) և այլն:

Սրանց հակառակ հունարենից կատարված փոխառություններում այդ լեզվի *ρ*-ի դիմաց հայերենը ունի կոշտ *ռ*, որով պետք է կարծել, թե հունարենում այդ հնչյունը վերը նշված լեզուների *ρ*-ի համեմատությամբ ավելի թրթռուն արտասանություն ունի. այսպես, օրինակ՝ ἀφῆρησις = օփիսեռիս «ամենօրյա» (Մխ. Հեր. 51բ), λογαρισίς = լոգոսիս «ծախված ապրանքի գինը» (Անս. 83), προίξ = պռոյք «օծիտ» (Սմբ. Տար. 52): Արաբերենի ուժգին *ʿ*-ի դիմաց, որը արաբերենում գրություն մեջ արտահայտվում է թաշտիդով, հայերենը օրինաչափորեն ունի *ռ*, ինչպես՝ durraǰ = տուրայն (Մխ. Հեր. 23ա): Օրինաչափ է նաև ֆրանսերենից փոխառված harnais = հարնեզ բառում *r* = *n* համապատասխանությունը, քանի որ այն հայերենում գտնվում է ն ընդհանրից առաջ: Միայն ֆր. maistre = մայստր (Սմբ. Տար. 198, 218), ֆր. chambrelan = ջամբոլայ (ն. տ. 211) բառերում է (գուցե գտնվեն և ուրիշները), որ *ρ*-ի դիմաց ունենք *ռ*: Սրանք թերևս իրենց դիրքային առանձնահատկությամբ է, որ տառադարձվել են այսպես:

72. Բառասկզբում միջին հայերենը *ρ* չի ընդունում, ուստի և օտար այն բառերը, որոնք բառասկզբում ունեցել են *ρ*, հայերենում տառադարձվել են *ռ*-ով, որի արտասանության ժամանակ սկզբից եղել է նաև մի թույլ *ը*, որը հաճախ գրություն մեջ չի արտահայտվել. այսպես, օրինակ՝ արբ. rumb = ռուպ (Մխ. Հեր. 26բ), արբ. rasm = ռասմ (ն. տ. 49ա), արբ. rayis = ըռայիս (Սմբ. Տար. 33) և այլն: Այս նույն շրջանում է, որ Արիստակէս բառում առաջին վանկի կորստով՝ *ρ*-ն մնալով բառասկզբին, փոխվել է *ռ*-ի՝ Ռեստակէս // Ռեստակէս (վկայություններ տե՛ս § 12):

73. Միջնադարյան սկզբնաղբյուրներում հանդիպում են նաև *n* > *ρ* փոխանցման դեպքեր, օրինակ՝ «...զպատարագն Գերգայ արենն» (ԿՂ Հաղբ. 165, ԺԳ դ.), «...իմ քվերն արենն, եւ յէտ իմ՝ ինձ եւ իմ քվերն արենն» (ն. տ. 175, 1189 թ.), «...արող շնուին փախչին ի յուրմէն» (Գրիգ. 45), «...արող չեալ դառնային ի տունս իւրեանց. փոխանակ արողութեան՝ մահացան» (ն. տ. 47), «...անփութ արնլ» (Գ. Հովս. հձ. 976, 1246 թ.), «...զյետին գուրլայն մորացայ» (ԺԴ հձՏ. 38, 1305 թ.) և այլն:

Համեմատաբար ավելի սակավադեպ են *ρ* > *n* փոփոխության դեպքերը: Այստեղ ունենք, օրինակ, ձայնավորների միջև՝ խորեն > խոռեն. — «Այս իմ գիր է խոռենա» (ԴՏվ. III, Վայոց ձոր, 119, XIII դ. վերջը), ետընթաց առնմանությամբ՝ շուրջառ > շուղջառ. ինչպես՝ «...տվաք զմեր պահէզն ի Կարուց դռան... Ա շարէկ ի կաթողիկէս եւ շուղջառ» (ԴՏվ. I, Անի, 40, 1293 թ.), «...զիմ ոսկի ապանանի գոնծէն տվաք» (ԴՏվ. III, Վայոց ձոր, 56, 1318 թ.). վերջին օրինակում *ρ*-ն *ռ* է դարձել մինչև դրափոխությունը, երբ ձայնավորների սղմամբ *ρ*-ն ընկել է անմիջապես ն-ից առաջ (ապարանջան > ապրենան > ապոնան > ապանան):

Սրանք բոլորն էլ բանավոր լեզվի առանձին տարբերակներում կատարված փոփոխություններ են, երբեմն նաև անհատական լեզվի առանձնահատկություններ, որոնք գրիչ-փորագրողների և արտագրողների կողմից մուծվել են գրավոր լեզվի մեջ:

74. Առնել բայի վերը նշված արենլ ձևի կողքին արձանագրվում է նաև նրա այլունլ տարբերակը, ինչպես՝ «...վերաբերութիւն այրենլ» (Մխ. Հեր. 26բ), «...աճոելոյն սկիզբն ի ճոանցն այրենլ» (ն. տ. 33ա), «...կարող ենք ճար այրենլ՝ ապիկիք արկանելով» (ն. տ. 60) և այլն, որը անցման օղակ է նույն

բայի այնքան ձևի համար: Վերջինս տարածված է հատկապես կիրիկյան հայերենում: Մի քանի օրինակներ. «...իր աղէկ մարդօքն այնէ կեցցութիւն... այնէ զինչ սահմանն է» (Լեոն Գ-ի 1288 թ. արտոնագրում), «...նա շունի հրամանք, որ տիաթիկ այնէ» (Անս. 49), «...իրենց պացխուն պարտին որ այնեն» (ն. տ. 51), «...թէ այնէ այրիկն տիաթիկ ու թէ շայնէ» (ն. տ. 55), «...հնազանդութիւն այնէ եպիսկոպոսն եպիսկոպոսին» (Սմբ. Դատ. 27), «...նա զինչ կամենայ կարէ այնել» (ն. տ. 31), «...պատարագ շկարէ այնել» (ն. տ. 32) և այլն: Թերևս հենց այս այնել ձևից էլ զարգացել է անել բարբառային տարբերակը, ինչպես՝ «Ձով դու սիրով նատար անես, Անանց կրակով զանձնիկն այրես» (Հով. Թլկ. 126), «Բայց ինչ անեմ, ճարակ չկայ» (ն. տ. 127), «Ձարկամն զայդ չէր անեք, զինչ որ դուն կանես» (ն. տ. 151) և այլն: Չեռագրերում հանդիպում է նաև սրանից զարգացած մի այլ տարբերակ՝ այնել // անել > էնել. — «Աստէնս չէնէ զիս ամօթով, Անդէն բաժին կեր գեհենու» (Հով. Թլկ. 138) և այլն. իսկ ավելի ուշ՝ նաև ընել:

75. Միջին հայերենում գրաբարի ձայնորդներից ւ-ն ոչ-երկբարբառային դիրքում, այն է՝ ձայնավորից առաջ, ձայնավորների միջև և բառավերջում, իր արտասանությամբ ու հնչյունական արժեքով համընկնում էր շրթնատամնային վ բաղաձայնի հետ: Այդ համապատասխանությունը գոյություն ունեւ դեռևս նախամիջին հայերենյան շրջանում և ընդհանուր էր հայերենի բոլոր տարբերակների համար: Այն իր գրավոր արտահայտությունն է ստանում հենց առաջին սկզբնագիր ռաբբուրներում: Առաջին գրավոր վկայությունները հանդիպում են վիմական արձանագրություններում, որտեղ ըստ ւ-ի հնչյունական արժեքի, այն դրսևորվում է վ-ի միջոցով: Այսպես, օրինակ. Արուճի 869 թ. մի արձանագրության մեջ Քրդաւագ բառի փոխարեն գրված է Քրքավաֆ (Վիմ. Տար. 3, Ալիշ. Այր. 144, Շահխթ. 61): X դարից ունենք՝ «...երես Աշոտ յվանէ զշաղացն» (Վիմ. Տար. 9, 981 թ., Ալիշ. Այր. 146), «...ես Դավիթ Վարդա որդի... գրավթի զայգին... վասն Դավթի հոգւոյն» (Վիմ. Տար. 10, 992 թ., նույնը նաև Ալիշ. Շիր.): Թեև այս օրինակները շունեն իրենց լուսանկարները, որոնց միջոցով կարելի լիներ հաստատ համոզվել դրանց հավաստիության նկատմամբ, բայց կասկածելու հիմքեր էլ չկան, քանի որ նույն երևույթը արձանագրվում է նաև նույն ժամանակների ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես, օրինակ, 966 թ. մի հիշատակարանում ունենք. «...շնորհիվ ամենակալին աստուծոյ կատարեցավ ավետարանս» (Գ. Հովս. հձ. 1021):

Այսպիսով, միջին հայերենի շրջանում ոչ-երկբարբառային դիրքում հանդես եկող ւ-ն արդեն ուներ շրթնատամնային ձայնեղ շփական Վ-ի արժեք, թեև այստեղ ևս, ուղղագրական այլ կանոնների պահպանման հետ միասին, ավանդաբար շարունակվում էր ւ գրությունը: Այնուամենայնիվ, այս ժամանակներում բազմաթիվ են ուղղագրական վրիպումները և ւ-ի փոխարեն վ-ով գրության ձևերը: Միայն մի օրինակ պարոն Կոստանդինի 1271 թ. դաշնագրից. «...մենք չէաք ի հավնել... հայնց հավնեցաք... լինի հաստատուն յավիտեան... մեծահարկի ձիավորացն»:

Մի շարք բառերում ավանդական կամ ուղղագրությամբ ընդունված ւ-ի փոխարեն ունենք ֆ. ինչպես՝ ինչի // ինչվի > ինչֆի. — «...ինչֆի յայս արէն» (Պար. Կոստանդինի դաշնագրում), նախ > նաֆթ. — «...և կապեաց յինքն նաֆթ Գ շիշ և կապեաց թուղթ ի ծայր ըմբին» (Սմբ. Տար. 52), «...հրամայեաց նաֆթի բորբոքել զսայլսն» (ն. տ. 95), շնորհաւոր > շնոֆոր. — «...որոյ անուն



իշխան Շնոֆոր յորջորջի» (ԺԴ հձհ. 29, 1304 թ.), «...և քուրոշս սորին՝ Շնոֆոր տիկնա» (ն. տ. 429, 1357 թ.), «...շնոֆոր տեսնուս» (Կ. Երզնկ. 143) և այլն: Անշուշտ, այս բառերում ՎՖ հնչյունափոխությունը կարող է բացատրվել միայն այն դեպքում, եթե ընդունելու լինենք, որ Վ-ն ունեցել է Վ-ի արժեք, որից հետո միայն, ձայնեղությունը կորցնելով, դարձել է խուլ շփական ֆ:

Այսպիսով, հին հայերենի ձայնորդներից մի քանիսի մեջ կատարված որակական փոփոխությունների հետևանքով՝ միջին հայերենում նրանց շարքը սահմանափակվում էր լ, մ, յ, ո, ի, ր հնչյուններով, որոնք համապատասխանաբար արտահայտվում էին լ, մ, յ (բառամիջում ու միավանկ բառերի վերջում. իսկ բառասկզբում՝ ե), ն, ո, ր գրերով:

#### ՀնչՅՈՒՆԱՓՈՒՅՄԱՆ ԱՅԼ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

76. Բայցի պատմափառ հնչյունափոխության այն ծրարություններից, որոնք նկարագրվել են վերը՝ հպական, շփական ու ձայնորդ հնչյունների փոփոխություններին նվիրված բաժիններում, միջին հայերենի շրջանում հին հայերենից ավանդված որոշ բառերի կազմում կատարվել էին և այլ կարգի փոփոխություններ, որոնք արտահայտվում էին հնչյունների անկամամբ կամ հավելմամբ, հնչյունների ամփոփմամբ ու դրափոխությամբ, առնմանությամբ և տարնմանությամբ:

Ի տարբերություն մինչև այժմ նկարագրված հնչյունափոխական երեւույթների, որոնք օրինաչափորեն ընդգրկում էին տվյալ հնչյունի համանման բոլոր դիրքերը և այս իսկ տեսակետից ստանում էին հնչյունական օրենքի արժեք, հնչյունների անկաման, հավելման, դրափոխության և այլ կարգի փոփոխությունները բնորոշվում են նրանով, որ դրանք հիմնականում կատարվում էին առանձին բառերի ու բառախմբերի սահմաններում և հետևողական, բացառություններ չընդունող հնչյունական օրենքի արժեք չէին ստանում: Ինչպես կտեսնենք ստորև, դրանցից ամեն մեկը՝ առանձին-առանձին վերջրած, որպես ընդհանուր երևույթ իր մեջ երևան է բերում տարբեր հնչյունների մասնակի փոփոխություններ:

#### ՀնչՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ

77. Վերը՝ բաղաձայնների քննության ընթացքում (տե՛ս § 70), արդեն նշվել է, որ բառավերջի կիսաձայն յ-ն միջին հայերենում ընկել էր, և եթե այն գրության մեջ դեռևս պահպանվում էր, սպա միայն ըստ սովորության ու հին ուղղագրական կանոնների հետևողության: Քննարկվող շրջանում այն փաստորեն համր հնչյունի արժեք ունեւր: Բաւավերջի ա-ից և ո-ից հետո յ-ի անկումը ամենաընդհանրական օրինաչափություն էր, որ հանդես էր գալիս միջին հայերենի բոլոր դրսևորումներում:

Բառական միավորներում հնչյունների անկման երևույթը, իհարկե, չէր սահմանափակվում միայն վերը նշվածով: Այստեղ ևս գրավոր աղբյուրները բավարար նյութ են տալիս նրա սյն հիմնական դրսևորումների վերա-

բերյալ, որոնք ծավալվելով՝ հետագայում լայն տարածում ստացան մեր ժամանակակից բարբառներում:

Մտենագրութեան մեջ դրանք իրենց վկայութիւններին հաճախականութեամբ և բառական միավորների ընդգրկման ծավալով համաչափ չեն և վայրից վայր տարբերութիւններ են տալիս: Այնուամենայնիւ, դրանցից մի քանիսը իրենց սկիզբն են առնում դեռևս միջին հայերենին նախորդած շրջանում՝ վկայվելով առաջին իսկ սկզբնաղբյուրներում:

78. Համեմատաբար տարածված երևույթ է Ի-ի անկումը, որը տեղի է ունենում բառամիջում, երբ նրան անմիջապէս նախորդում կամ հաջորդում է մի այլ բաղաձայն հնչյուն:

ա) Արդեն իսկ X դարի վիմական արձանագրութիւններում վկայութիւններ ունենք ջրաղաց բառի հնչյունափոխված ջաղաց ժողովրդական բառաձևի վերաբերյալ (տե՛ս Վիմ. Տար. 8, 966 թ., 9, 981 թ. և այլն): Պետք է ենթադրել, որ այս բառում Ի-ի կորուստը կատարվել է ավելի վաղ, քան նրա առաջին վկայութիւններն են, քանի որ միջին հայերենի ժամանակաշրջանում այն արդեն բավական լայն տարածում ունի, հանդես է գալիս բառաբարդութիւններում և արձանագրվում է տարբեր վայրերում գրված աղբյուրներում: Այսպէս, օրինակ՝ «...երբ պիտենայ իւր ջաղացեղն իւր է» (Գ. Հովս. հձ. 250, 1067 թ.), «...ակն մի ջաղաց...ջաղացանոյն ծառաութիւնն» (ԴՏՎ. I, Անի, 58, XII դ.), «...կէս ակն ջաղաց... Գլիճորին ջաղաց» (ն. տ. 63, 1215 թ.), «Թողի զջաղացնոյս ամենոյ զդամղէն» (ն. տ. 28, XIV դ.), «...դերկու ակնի ջաղացն յԱռփա» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 246, 1279—90 թթ.), «ջուր հանել ի գետոյ ջրելոյ կամ ջաղցնոյ» (Սմբ. Դատ. 16), «...փնեցի զՀուներո ջաղաց» (ԴՏՎ. II, Սյունիք, 41, 1397 թ.), «Յայսմ ամի ջուրքն յէնց պակասեցան, որ բազում գետաղաց ջաղացք խափանեցան» (ԺՅ հձհ. I, 53, 1405 թ. Անժղնապատ), «...գնեցի զջաղացն Շամօյէն» (ն. տ. 475, 1437 թ., Արճեշ), «...իրենքն ջաղաջք են անձինն, և որպէս որ ջաղջին վերին քարն ուժով է...» (Ամիրդ. Ուս. բժշկ. ի), «...զջաղցպան Աղուպն յիշեցէք» (ԺՅ հձհ. II, 140, 1460 թ. Արծկե), «...զՄկրտիչ ջաղացպանն» (ն. տ. 303, 1470 թ. Աղթամար), «...շինեցի զջաղացն... յետոյ նորոգեցի զջաղացն», (ԿՂ Սանահ. 145, 1520 թ.) և այլն:

բ) Արժան, արժանի, արժել, արժենալ բառաձևերին զուգահեռ սկզբնաղբյուրներում արձանագրվում են նաև Ի-ի անկմամբ՝ աժան, աժնիկ, աժել (այժել), աժենալ ձևերը. ինչպէս՝ «...աժենայ մարկ մի արծաթ» (Անս. 29), «Թող աժէ քանի ու այժէ» (ն. տ. 11), «Մէկ կայ, որ հազար աժէ, հազար կայ, որ մէկ մի շաժէ, Այն մէկն որ հազար աժէ, մոտ յանգետին փող մի շաժէ» (Հով. Երզնկ. 154), «...գիտունն ի յանգիտաց մէջն ծառայ է շարաշար, Որ նման խամ ապիկու յաժան ձգեն անգին ջօհար» (Կոս. Երզնկ. 201), «...Թէ խաղողի շիվ լնուս՝ զամէնն աժէ» (Վստ. 68), «Աժնիկ ես դու այդոր» (Յր. 360), «...պագ մի յերեսէդ աժէ զԵրզնկան» (Հով. Թ՛ւլ. 156) և այլն: Նույն բառաձևերը հանդիպում են նաև այլ ձեռագրերում և հատկապէս միջնադարյան ժողովրդական տաղերի, երգերի ու արձակի տեքստերում:

գ) Նույն փոփոխութիւնը հանդես է բերում նաև երբ բառը, որի դիմաց որոշ աղբյուրներում ունենք եփ, եք գրչութիւնները. օրինակ՝ «...եւ վանց վաճուկներոյն, որ եփ կու գան՝ նա զիրենց սնդուկնին կու բանան» (Լեոն Գ-ի 1288 թ. արտոնագրում), «...զդարբնի փուբսն, որ եք ի յինքն քաշէ զբնիկ տաք

աւղն» (Մխ. Հեր. 11բ), «...ոչխարն եփ գառն կամ ուլ բերէ» (Սմբ. Դատ. 13), «...եփ զուզվի եւ կարգվի» (ն. տ. 21 և այլն), «Եփ զայս լսէ զրկածն» (Անս. 59), «...ու եփ երթայ՝ ի հետն տանի» (ԺԵ հձհ. I, 211, 1418 թ.), այսպես նաև Ամիրզոյվաթի «Ուսումն բժշկութեան» հեղինակային բնագրում բազմաթիվ օրինակներով. ինչպես՝ «...եփ մարդն հիւանդ լինի» (էջ 1է), «...եփ զգինին շափաւոր խմէ» (ն. տ. խգ) և այլն: Այսպես նաև նրա մյուս՝ հրատարակված աշխատություններում: Այս բառաձևը, առհասարակ, ավելի հաճախ է հանդիպում ուշ շրջանի ընդօրինակություններով հասած ձեռագրերում:

դ) Ենտհավոր բառը մատենագրության մեջ հանդես է գալիս այլ և այլ հնչյունափոխված ձևերով, այդ թվում նաև ր-ի կորստով. ինչպես՝ «...աստուած շնհատր առնէ» (ԺԵ հձհ. I, 392, 1420 թ. Սյունավանք), «...աստուած շնհատր արասցէ» (ն. տ. 179, 1415 թ.) և այլն: Ավելի տարածված է այս բառի անձնանվան գործածությունը՝ և՛ արական և՛ իգական առումներով. ինչպես՝ «...ես Ենահատր Տփխեցի» (ԿՂ Հաղբ. 168, 1253 թ.), «...քուրջս սորին՝ Ենօֆոր տիկնա» (ԺԴ հձհ. 429, 1357 թ. Կաֆա), «...յիշատակ հարն Թումայի և մօրն Ենհորի» (ԺԵ հձհ. I, 398, 1430 թ. Խոսրովավանք), «...հարն իւր Ենօֆոր պարոնին» (ն. տ. 493, 1438 թ.), «...մօր իմոյ Ենհվորին» (ն. տ. 15, 1401 թ.), Ենհտր (ն. տ. 44, 1404 թ.), Ենուհոր (ն. տ. 45, 1404 թ. Տշող գյուղ), Ենօֆոր-խաթուն (ն. տ. 345, 1425 թ.), Ենօֆոր պարոն (ն. տ. 65, 1406 թ.) և այլն:

ե) Միջին հայերենի շրջանում հին փառչել-ի դիմաց համեմատաբար կայուն բառաձև է փառչել-ը, թեև որոշ ձեռագրեր, այնուամենայնիվ, հետևում են հին ուղղագրությանը: Մի քանի օրինակներ փառչել բառի կիրառությանը. «...ի յերկար փառչէ» (Մխ. Հեր. 26ա), «...կոպքն թուլանայ և ի վայր փառչի» (ն. տ. 38ա), «փառչել տուր» (ն. տ. 47ա և այլն), փառչեմ «քաշքոց» (Անս. 67), «...նա զէդ սպաննաւղ ապաշխարութիւն փառչէ» (Սմբ. Դատ. 32), «...ճորտն ըզպահուցն կու փառչէ» (Ներս. Շնորհ. ԲԶ 572), «...զայն ամէն շարշարանքն Յիսուս չէր փառչէ» (Ֆր. 245), «...փառչեմ գրեռն մէկ մէկի» (ն. տ. 249), «...վարսերդ ոսկի թելով փառած» (Հով. Թլկ. 158), «...մագմըզուկն ի յինք փառչէ... գիճութիւնն ի յինքն փառչէ» (Ամիրգ. Ուս. բժշկ. իգ, իգ), «...զամէն կոտորել և ի սուր փառչել» (ԺԵ հձհ. II, 169, 1462 թ. Տփխիս), «...զահմաթ կու փառչէ» (ԺԵ հձհ. I, 407, 1413 թ. էրէզ անապատ) և այլն:

զ) Բանավոր-խոսակցական լեզվի որոշ տարբերակներում ր-ն ընկել էր նաև դուրս>դուս բառում. ինչպես՝ «...ի դուս ձգես ոչ» (ԺԵ հձհ. I, 658, 1419 թ. Հերմոնի վանք), «...ի դուս էին եկել» (ԺԵ հձհ. II, 169, 1462 թ. Տփխիս), «... ի դուսէն զէն դպնու» (Ամիրգ. Ուս. բժշկ. ժթ), «...ի դուսէն պէտ առնեն» (ն. տ. ժ, նաև իթ, խե և այլն):

է) Միջին հայերենի զերդ «ինչպես, որպես» (հնչյունափոխված զիւարդ-ից) բառը ր-ի կորստով հանդես է գալիս նաև զէդ // զէտ ձևերով. ինչպես՝ «Շրխուկ մի կայր զեւ ըզֆրրեր» (Ներս. Շնորհ. ԲԶ 565), «...ի շուրջ կու գայ զեւ փերեզիկ» (ն. տ. 565), «...իրեն հովին զեւ հրեշտակ» (ն. տ. 566), «...զեդ ըզորդ ու հաւատարիմ մարդ» (Անս. 33 և այլն), «...զեդ մարդասպան ձգեն զինք եւ դատեն» (Սմբ. Դատ. 21 և այլն), «...յորժամ երակն զէտ մոչիմ ժածի» (Ամիրգ. Ուս. բժշկ. կգ) և այլն:

ը) Որոշ բառերում ր-ի անկումը արձանագրվում է միայն կիլիկյան սկզբնաղբյուրներում, այն էլ ոչ բոլորում: Այսպես, օրինակ՝ հրաման, հրա-

մայել, հրաւերք բառերի դիմաց ճամանք, համել, հաւերք ձևերը առավելապես հանդիպում են «Անսիգ Անտիոքայ» թարգմանական աշխատության մեջ, ինչպես ունենք՝ «...մնաց ի պարոնին համանքն» (Անս. 33, 49, 53 և այլն), «...կու համէ քեզ դարպասն» (ն. տ. 43), «...կարէ ուննալ և համել իր ամէն ընչիցն» (ն. տ. 51), «առանց պարոնին համնաց» (ն. տ. 13), «անհամանք է կել ճորտն» (ն. տ. 13), «...և հաւերքն, որ պարոնն զճորտն հրաւիրէ» (ն. տ. 9), «...եղև խնամութիւն ընդ ինք և ընդ ընբրուրն պապուն համնաւք» (Մանր ժմնկ. II, 64, XIII դ. Կիլիկիա) և այլն: Այս նույն բառաձևերը հանդիպում են նաև Սմբատի Դատաստանագրքի այն ձևագրում, որը դրվել է Կարստի հրատարակության հիմքում:

թ) Մասնակի բնույթ ունի Ե-ի անկումը հետևյալ բառերում. «...իրէնց պիտի ընդ նեկսէ ի պուրճն» (Պար. Կոստանդինի 1271 թ. դաշնագրում), «...նա սպկիկ (<սպրկիկ) կորոյս զիր իրաւունքն» (Անս. 67. այս բառաձևի մասին տե՛ս § 94, դ), «...յորժամ երակն զետ մոջիմ ծածիք» (Ամիրդ. Ուս. բժշկ. կգ), «...զինքն պինդ բունել է, որ ի տեղացն չի ծածիք» (ն. տ. 1), «...ի տանէ Աշակունեց» (ԿՂ Սանահ. 97, ԺԱ դ.), «...ի տոհմէ Պալհաւունի, յազգէ Աշակունեաց» (ն. տ. 147, 1067 թ.):

ժ) Ը-ն ընկել էր նաև ճանապարհ բառում: Այս բառը Ե-ի անկմամբ և միջնավանկի ա-ի սղմամբ նախ դարձել է ճանպահ, ինչպես և վկայվում է՝ «Ապա թէ ուրդի որ ի ճանպահ հարամիք ի վերայն ընկնին» (Սմբ. Դատ. 31), այնուհետև բառավերջի հ-ի անկմամբ, իսկ որոշ վայրերում նաև շրթնային պ-ի առնմանությամբ՝ և>մ, ապա պ-ի ձայնեղացմամբ ու շնչեղ-խլացմամբ ստացվել են ճանպա, ճանբա, ճամբա, ճամփա գրչագրական տարբեր ձևերը և այդ հիմքի վրա նաև՝ ճամփորդ. այսպես, օրինակ՝ «Ճամփորդ քեզ յայնժամ ասեմ, որ զճամփի հատն գիտենաս» (Հով. Երզնկ. 144), «...Առնուն զիրէնց բայժն ի ճանքէն» (Պար. Կոստանդ. 1271 թ. դաշն.), «...ի խոչկէն ի դուս կու վայրէ, որ ի բերնին ճանփէն և ի քթէ ի դուրս ելանէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. իե) և այլն: Հետագա դարերում ճամփա բառաձևը ավելի է ընդհանրանում ու ստանում լայն գործածություն:

79. Հնչյունի անկման երևույթը ընդգրկել էր նաև և ձայնորդը: Այստեղ հատկապես արձանագրվում է գրաբարի բաղաձայն+ն վերջավորությամբ բառերի բառավերջի ն-ի կորուստը: Հավանական է, որ այն միջին հայերենի առաջին էտապում դեռևս խիստ օրինաչափ չէր, որի պատճառով էլ սկզբնազբերում սակավ են դրանց վկայությունները: Ենթադրելի է նաև, որ այս երևույթը նախ սկսվում է հայերենի արևմտյան տարբերակներում և հետո միայն տարածվում արևելյան բարբառների մի մասում: Արևելյան բարբառների մյուս մասում, հավանաբար, այդ փոփոխությունը տեղի չի ունենում, ինչպես և ունենք նրանց ժամանակակից էտապում:

ա) Լեզվական որոշ հուշարձաններում, հատկապես Սմբատի «Դատաստանագրքում», նույնի թարգմանությամբ՝ «Անսիգ Անտիոքայ» երկում, Կոստ. Երզնկացու տաղերի ընդօրինակություններում առավել կամ պակաս հետևողականությամբ կիրառվում է ինքն զերանվան ինք ձևը. օրինակներ՝ «երթան առ ինք... տեսնուն զինք... չկարէ զինք այլ ոք նեղել... չի ճանչել ի յինք իրք ցաւ... ասեն ընդ ինք» (Անս. 25 և այլն, նույն ինք ձևը նաև Սմբ. Դատ. 9, 17, 19, 20, 21, 22 և այլն, Կոստ. Երզնկ. 117, 119, 126, 132, 133, 151 և այլն):

Այս օրինաչափությունը պետք է որ ընդգրկած լիներ և-ով վերջացող և

այլ բառեր, բայց ավանդական ուղղագրութեանը հետեւելու պատճառով հնչյունափոխված ձևերը միշտ չէ, որ գրի են առնվել: Այնուամենայնիվ, թեև ոչ հետևողականորեն, բայց և այնպես նման օրինակներ արձանագրվում են, և ինչքան ձեռագրերը ավելի ետին դարերի ընդօրինակութուններ են, այնքան ավելի հաճախ են վկայութունները: Այսպես, օրինակ՝ Մխ. Հերացու «Ձերմանց մխիթարութեան» ամենավաղ ընդօրինակութեամբ հասած ձեռագրում հետևողականորեն գրվում է ջերմ (փխ. ջերմն), նույնիսկ հոգնակիի կազմութեան մեջ և-ն չի վերականգնվում, ինչպես այդ սովորական է այլ միավանկ բառերի հոգնակիի կազմութեան մեջ: Այս թերևս նշանակում է, որ այս բառի առանց և-ի ձևը սովորական և ընդունված կազմութունն էր, և և-ի կորուստը նրանում ավելի վաղ էր կատարվել, քան նրա առաջին վկայութունն է: Միայն մի օրինակ այս բառաձևի համար. «Չլինի ի հետն այլ ցեղ ջերմ ի բորբոսային ջերմերոյն» (Մխ. Հեր. 46բ):

Այս նույն դիրքում և-ի անկումը արձանագրվում է տարբեր սկզբնաղբյուրներում հանդիպող տարբեր բառերում. այսպես, օրինակ՝ «Գիրս մնա, ձեռս գնա» (ԺԴ հձհ. 130, 1317 թ.), «...կենդանարար ռոպ համբուրեմ» (Ձեռ. 8030, 7ա, 1341 թ.), «Չկայ հրաման յարինաց, որ կարէ ի կարգաւորաց եկեղեցոյ ընդ թերահաւատ կամ ընդ այլազգի մարդոյ խնամութիւն այնել՝ ոչ ուննալ ճարս եւ ոչ տալ» (Սմբ. Դատ. 30), «...զի անարինի սերմէ է եւ տեղի լինի նախատանաց» (ն. տ. 25), «...ատար սերմի ծնունդ» (ն. տ. 8), «...Գիր ձեռս ի մէջ թիկանցն» (Գրիգ. 77), «Ձերիվարդ որ ձեռ բերիր եւ հեծար անվախ...» (Խաչ. Կեչ. 171), «Արդ համբուրեմ ըզձեզ ռովիս» (ԺԴ հձհ. 308, 1338 թ. Մխ. Անեցի), «Սառնամանեաց դողն է կալել ու կու փշրէ կզակ և առամ» (Յր. 253), «...զերդ զաղընձած սերմ եմ գերիս» (ն. տ. 264), «...զերդ մարգարիտ ի բուռդ ունիս» (ն. տ. 272), «...մատս մանկաղով կտրել ի» (ԺԵ հձհ. II, 359, 1474 թ. Վայոց ձոր), «...ձեռս թուլացավ ու կաղամբարն վեր ընկաւ» (ն. տ. 360, 1474 թ. Վայոց ձոր), «...ձեռս կու դողայր» (ԺԵ հձհ. I, 229, 1419 թ. Գեղարքունի, 245, 1420 թ., ԺԵ հձհ. II, 192, 1463 թ. և այլն), «...մարդկան կապես բեռ ու շալակ» (Հով. Թլկ. 193) և այլն:

Սրանց վրա կարելի է ավելացնել և այնպիսի օրինակներ, որոնց մեջ և-ն ակնհայտորեն որոշյալ հոդ է. ինչպես՝ «...ցուր ջուրն հատանի և կաթն մնայ» (Մխ. Հեր. 48ա), «Ծզն այլ ծառութիւն շպարտի, զի զիւր հնկակն տվել է» (Սմբ. Դատ. 13), «...կարաւղ է թագաւորն... տալ զլեռն եւ զդաշտն» (ն. տ. 8) և այլն:

Այս դիրքում և-ի անկման ամենահին վկայութունը թերևս Անիի արձանագրութուններում հանդիպող հետևյալ օրինակում է. «...տուաք ումով և ծառովք պտղաբերովք» (Դհվ. I, 48, 1036 թ.):

Ամիրդովլաթի հեղինակային ձեռագրում հանդիպում են այսպիսի օրինակներ՝ «...կերակուրն զարպայ և սիսեռ» (Ժբ), «...յորժամ երակն գետ մոջիմ ժաժի» (կգ, հՅ, ձբ), վայրի դաղձ (ժբ), «...ԺԲ մատ է յերկանքն» (իբ), «...բաղցր խնձոր և քաղցր նուռ» (դբ) և այլն: Նույն երևութիւնը առկա է Ամիրդովլաթի հրատարակված աշխատութուններում. այսպես, օրինակ՝ «Ասեղ մն անցնես» (Ամիրդ. Օգ. բժշկ. 210), «...Առ շէճ էրմանի և դաղձ» (ն. տ. 116), «...կաթ կերած չլինի» (ն. տ. 65), «...Որոյ ականջն ուրդ լինի» (ն. տ. 226), «...եւ ի վերայ թաժա կաթ լնուն» (Ամիրդ. Անգ. անպ. 178), «Եւ ի վերայ աղի ձուկ ուտես» (ն. տ. 31) և այլն:

բ) Որոշ աղբյուրներում և-ի անկում նկատելի է նաև բառամիջի դիրքում: Այսպես, օրինակ՝ Վայոց ձորի վիմական արձանագրութուններում կանգնել բայը շատ հաճախ վկայվում է կանգնել // կանկել ձևերով՝ երկրորդ և-ի կորըստով. այս ձևերի հաճախականությունը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ գրանք սովորական և ընդունելի բառաձևեր էին այդ վայրի հայերենի համար: Մի երկու օրինակ. «...նս Ալամս կանկեցի զխաշս» (ԴՏՎ. III, 46, 1200 թ.), «...կանգեցաք զխաշս» (ն. տ. 45, 1283 թ.), «...նս Յովանէս ու Բարէոքս կանկեցաք խաշս» (ն. տ. 50, 1284 թ.) և այլն:

Միջին հայերենի շրջանում տարածված բառաձևեր են մտնել և մտնուլ՝ առաջացած հին մտանել բայից, միջնավանկի ա-ի սղմամբ և որոշ տարբերակներում՝ լծորդության փոփոխությամբ: Սակայն այս բայը հանդիպում է նաև մտել տարբերակով, որ փաստորեն կազմված է առանց ածանցի. այսպես, օրինակ՝ «...տայ... զայլ ամէն ազգ հագոյցք, զոր ձիաւորին պիտի որ ի կռիւ մտէ» (Անս. 31), «...ի յոսկորն մտէ և նասուր առնէ» (Գրիգ. 45), «...յերբ այս խայթածս ի շող ջուրն մտէ, նայ հեշտէ» (ն. տ. 50), «...բուխարն ի զլուխն ելնէ և յղուղն մտէ» (ն. տ. 55) և այլն:

Սակայն ինչպես այս վերջին, այնպես և Վայոց ձորում բառամիջի և-ի անկման դեպքերը միայն առանձին բարբառներում կատարված փոփոխություններ են, որոնք լայն տարածում չեն ստացել:

80. Ընկնող հնչյուններից է նաև հ-ն: Նրա անկումը բառասկզբում արձանագրվում է հաւատալ, հայնց<sup>55</sup>, հնձան բառերում: Սրանցից առաջինը համեմատաբար ավելի լայն տարածում ունի և թվում է, թե հատուկ էր հատկապես արևմտյան բարբառներին, իսկ վերջինը՝ արևելյան բարբառներին. օրինակներ՝ «Աւատա որ չէ նա խիստ խեռ» (Ներս. Շնորհ. ԲԶ 579), «Դարպասն պատեհ է որ առջի տարպայն ավտայ իր» (Անս. 25), «...Երդմանն շպիտի աւտալ» (ն. տ. 73), «Դարեհ, ալանջ դիր բանիս, Աւատայ և դու ինձ լսէ» (Խաչ. Կեչ. 174), «Այն մարդն որ աւտայ սորա... Չաւտամ թէ նա խելք ունի, աւտա որ խիստ յիմար է» (Հով. Երզնկ. 151), «...թէ զիս պէտմէտ թողուս, Չաւտամ թէ այլ զիս տեսնուս» (Կոս. Երզնկ. 162), «Բայց այնց (<հայնց) ջանա, որ բնիկ շճովցնես գտեղին» (Մխ. Հեր. 24բ), «Յամաքեցոյ և այնց տուր» (ն. տ. 39բ), «...տուի ...յԱկոռի՝ զնձանադուուն (<զհնձանադուուն), ի Վեղէ՝ զպարոնին գնած բաժինն» (ԴՏՎ. III, Վայոց ձոր, 246, 1273—90 թթ.), «...էտու զիմ այգին, որ ի գեղին առաջի՝ ընձանատնով» (ԿՂ. Սանահ. 158, 1289 թ.), «...տվի վարամ Սամծերու Բ էգի իր ընձ(ան)ովն, զՏաւաւերու էգին իր ընձանովն ...Կոշայ ձորի Բ ջաղացն, իգին ընձանովն, Քարյտակի իգին ընձանովն» (ն. տ. 136—37, ԺԵ դ.) և այլն:

Բառամիջում ևս և-ի կորուստը վկայվում է սակավաթիվ բառերում. ինչպես՝ «...շատ ի պաք (<պահք) լինի կացել» (Մխ. Հեր. 38բ), «...օրն պաք էր՝ շորեքշարթին» (Հով. Թլկ. 210, 211), «...Սուրբ Սարգսի պապին (<պահս) ացի ծոմ կենամ» (ԺԵ հճհ. II, 360, 1474 թ. Վայոց ձոր), «Գիտացիր

<sup>55</sup> Հայնց-ը թեև ծագում է հին հայերենի յայնց դերանվանական ձևից, բայց միջին հայերենում այլևս չի գիտակցվում նրա կապը յայնց-ի հետ, և այդ է պատճառը, որ այն ամենուրեք գրվում է բառասկզբի և-ով՝ հայնց, հանց, հէնց: Նույնիսկ այս ծամանակներում հազվադեպորեն հանդիպող յէնց ձևի մեջ էլ յ-ն ընկալվում էր որպես հ: Ուստի և կարծում ենք, որ այդ հ-ն է, որ ընկել է, և ոչ թե յ-ն:

որ այս քիթն մարդուն երեսացն շնորհն (<շնորհքն) է և առանց քթի իսկի մարդուն երեսն շնորհ չունի» (Ամիրդ. Ուս. բժշկ. 14), «...կերակուր քիչ ուտէ և պաք շատ բռնէ» (ն. տ. Ժ) և այլն:

Անճանաչելիորեն ձևափոխված է քանց բառաձևը, որը քանց որ կապակցությամբ հանդես է գալիս շաղկապական կիրառությամբ՝ «հենց որ, թե որ» իմաստներով: Այս բառաձևը պիտի որ առաջացած լինի քէ հանց (<հայնց) որ հարադրական կիրառությունից՝ է և հ հնչյունների անկմամբ, քանի որ և՛ ձևով, և՛ իմաստով անմիջապես առնչվում է նրա հետ. օրինակներ՝ «Թողում զքեզ ի բաց, քանց որ ինձ նենգես» (Հով. Թլկ. 145), «Չարխի դեղած նետով սիրտըս խոցեր ես, Պազով սիրտըս լափէ, քանց որ հավան ես» (ն. տ. 146):

Ճանապարհ և շնորհաւոր բառերի մասին տե՛ս § 78, Ժ, դ:

81. Միջին հայերենի այն տարբերակները, որոնք շափ բառը նախապես օգտագործել են շափի ձևով, հետագայում դրա մեջ կորցրել են փ-ն. ձևափոխված շափ բառաձևն էլ ընկած է նրանով կազմվող նոր բառերի հիմքում: Օրինակներ՝ «...իւր կիսոյն շափ խնծորի ջուր...» (Մխ. Հեր. 42ա), «...որշափ կարէ, զքուն լինելն ջանայ» (ն. տ. 44ա), «...հաւասար լինին և միաշափ» (ն. տ. 52բ), «...այնչափ իմ հերենի էգոյն, որ ի Լանջին» (ԿՂ. Սանահ. 166, 1291 թ.), «...ապա թող հանչաք համբերէ» (Անս. 33), «հանչափ իշխանութիւն» (ն. տ. 53), «...այնէ ի շափ մի իրք» (ն. տ.), «...այնչափ պտղաբեր լինին» (Վստ. 47), «...Դիր ի կարասն շափ մի» (ն. տ. 100), «...խեճեպն ափշափ մի ի տակոիճս սնկի՛ն ընու» (ն. տ. 21), «...որպէս է զշափն նիւթերուն» (Ամիրդ. Ուս. բժշկ. Ժ), «...սև շիտ ելնէ սիստան մի շափ» (ն. տ. հթ) և այլն: Ավելորդ ենք համարում օրինակներ բերել ավելի ուշ ժամանակներից հասած աղբյուրներից, որոնց մեջ ավելի առատ են վկայությունները:

82. Բառասկզբի յ-ն, ինչպես արդեն ասվել է, միջին հայերենի տարբերակների մեծագույն մասում հնչյունափոխվել էր հ-ի: Հավանական է, որ անցումնային այդ պրոցեսում հայերենի որոշ բարբառներ, եթե ոչ բոլոր բառերում, ապա գոնե դրանց մի մասում, կորցնում էին բառասկզբի յ-ն: Այս ձևով է, որ ունենք՝ «...այն ծառոյն տէրն պէտ առնէ նմա գառակն (<յատակ) բրէ և ջուր տայ» (Մխ. Հեր. 36ա), «...յանխնայ կոտորեցին մինչև լցաւ արեամբ ատակ տաճարի» (Սմբ. Տար. 21), «...առ զխրզն, որ խզայ և ձգէ ի ջուրն, թէ ատակի, նայ բարակցաւ է, և թէ ի վերայ ջրին գայ, նայ շէ բարակցաւ» (Գրիգ. 115), «Գնաս դու անողորմ ի հուրն՝ յահագին ի գուբն անատակ» (Ֆր. 369), «Այդ անատակ ծովուդ նման» (Հովհ. Թլկ. 159), «...արիւնն ամէ (<յամէ) և յուշ վաթի» (Գրիգ. 168), «...նաքան տվին ինձ զայտնու(թն // <յայտնութիւն) Ե ար» (Դհվ. III, Վայոց ձոր, 82, XIV դ. I կես): Ինչպես նաև Յակոբ անձնանվան Ակոբ ձևում. օրինակներ՝ «...գԱկոբ այբեղայն սրբակրօն» (ԺԾ հձհ. I, 174, 1415 թ. Մեծոփայ վանք), «...և զհայրեղբարս իմ գԱկոբ» (ն. տ. 489, 1438 թ. Վարդիսուպան՝ Վրաստանում), «...յիշատակ ինձ... և եղբար իմ Ասլան-Բէկին և Ակորին» (ն. տ. 541, 1442 թ.), «...զեղբարքն իմ զՄարգարէն և գԱկոբ միայնակեացն» (ԺԾ հձհ. III, 27, 1482 թ.) և այլն: Այսպես նաև Յովհաննէս անձնանվան Յոհաննէս, Յովաննէս, Յոհան և այլ տարբերակների կողքին բազմաթիվ վկայություններով արձանագրվում են Ոհաննէս, Ովաննէս ձևերը, ինչպես՝ «...եղբարք իմ՝ զՄխիթար և գՈվաննէս» (Գ. Հովս. հձ. 508, 1185 թ. Սաղմոսավանք), «...գՈվաննէս Միջնաղբերցի» (ն. տ. 721, 1204 թ. Մուշ), «...ի հոգեւոր

տեառնէն տէր Ոճաննիսէ հայոց կաթողիկոսէ» (ն. տ. 817, 1221 թ.), «...ձե-  
ռամբ Ովաննէս գրչի» (ԺԳ հճհ. 158, 1319 թ. վասպուրական), Ովաննէս (ԺԵ  
հճհ. I, 7, 1401 թ. Ոստան) և այլն:

Ամիրդովլաթի վերը նշված հեղինակային ձեռագրում յիսուն թվականը և  
նրանից բաղադրված ձևերը ունեն իսուն, իսունմէկն, իսունվերկուս, իսունվի-  
րէֆ, իսունեւշորս, իսուննիւկ, իսունվեց, իսունեւթն, իսունեւտք արտահայտու-  
թյունները:

Միջնադարյան տաղերգուների մոտ յօնֆ բառաձևի դիմաց ընդունված  
բառեր են՝ ուներ, ունֆ, ընֆվի և այլն, որոնց մեջ նույնպես յ-ն ընկած է: Մի  
քանի օրինակներ՝ «Աչեր ունէր թավրեզտանի, Ընֆվին ըզխելթըս կու տանի»  
(Հով. Երզնկ. 164), «Տեսայ աչեր զէտ ըզծովեր, Ուներ քան զամպ ու  
զտարիայ» (Հով. Թլկ. 122), «Աչեր ունիք զէտ ըզծովեր, Ուներ ունիք քան  
թուխ ամպեր» (ն. տ. 142), «Աչերն է ծով, ունֆն թուխ ամպ» (ն. տ. 148),  
«Ուներդ կամարակապ ի վեր քաշեր ես» (ն. տ. 152. նույն ձևով նաև էջ 154,  
157, 162, 189), այսպես նաև այլ հեղինակների մոտ:

83. Միջին հայերենի առանձին բարբառներում ք-ն ընկել էր գործիականի  
ամբ վերջավորութայն մեջ, ինչպես, օրինակ՝ «...սպանախ նշի կաթամ»  
(Մխ. Հեր. 30ա), «...զայս զամէնս կաթամ ի բանի պահէ» (ն. տ. 48ա),  
«...բակայի շուր նշի կաթամ» (ն. տ. 51ա), «...վկայնին վկայն, որ լել է  
ուծն, և ունի խիսմն ընդ ձեռով զխլոցքն» (Անս. 27), «...մէկն որ հաստատէ  
զհիւլայքն իր անձամն» (ն. տ. 33), «...խոստանայ, որ իր անձամն կեցցումն  
այնէ ընդդէմ իր» (ն. տ. 57) և այլն: Այս բառաձևերը, անշուշտ, առաջացել են  
կաթամբ, անձամբ, ձեռամբ ձևերից, ուստի և որպես հոլովական վերջավորու-  
թյան մեջ կատարված փոփոխություն, օրինաչափ է եղել տվյալ լեզվական մի-  
ջավայրում: Թերևս այս հնչյունափոխության ազդեցությունամբ է ընկել ք-ն նաև  
ծծումբ>ծծում բառում, ինչպես ունենք Հերացու վաղ ընդօրինակությունամբ  
հասած ձեռագրում՝ «...լուանուիւն ծծմի ջրով» (Զեռ. 416, 12բ):

84. Սկզբնաղբյուրներում արձանագրվում են բաղաձայնների անկման  
նաև այլ մասնակի դեպքեր, ինչպես, օրինակ՝ մ-ի անկում Սմբատ>Սիբատ  
անձնանվան մեջ. — «...շինեցաք զեկեղեցիս փրկութեան Սիբատա եւ Գուրգե-  
նա» (ԿԼ Հաղբ. 142, 991 թ.), ինչպես նաև արմալ>ամբալ>ապբալ բառում  
(օրինակը տե՛ս § 94, ը):

Զ-ի անկում շուրջ>շուր // ծուռ բառում, ինչպես՝ «...ի շուռ կու գայ քան  
զդիւհահար» (Հով. Թլկ. 160), «...ի ծուռ գալոյ և ի բաղանիս մտանելոյ պատ-  
րաստ կենայ» (Մխ. Հեր. 25բ), «...շթողու որ փսխէ և կամ զխելքն ի ծուռ  
ածէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծզ) և այլն: Առհասարակ այս երկու ձևերը հավա-  
սարպպես հանդիպում են ետին դարերի ձեռագրերի մեջ, երբ դրանց ընդօրի-  
նակությունների ժամանակ գրիչները նախընտրում են իրենց բարբառին հա-  
րազատ ձևը:

Դ-ի անկում արձանագրվում է Արտաւագղ>Արտաւագ անձնանվան մեջ.  
«...նս Սաթս, թոռն Սմպատա եւ որդի Արտաւագա» (ԿԼ Հաղբ. 163, ԺԳ դ.),  
«նս Սաթս, որդի Արտաւագա արհնեցի զեկեղեցիքս» (ԿԼ Սանահ. 145, ԺԳ դ.):  
Արձանագրությունները գրված են տարբեր վայրերում, բայց պատկանում են  
նույն անձին, ուստի և Արտաւագ բառաձևը այս վայրի համար սովորական է:

Ս-ի անկում ունենք հետևյալ օրինակում. «...ացին թէ Հասան-Բէկ կոխ-  
ւեցաւ... Սուրբ Սարգսի պասին ացի ծոմ կենամ» (ԺԵ հճհ. II, 360, 1474 թ.)



վայոց ձոր): Այստեղ վկայվող ացիւն, ացի բառաձևերը հնչյունափոխվել են նախավոր ասացիւն, ասացի. ձևերից, նախ միջնավանկի ա-ի սղմամբ, որ շատ սովորական երևույթ է («...սուտ են նոքա, զինչ ասցիւն ու վկայեցին վանց իր» Անս. 29), ապա և ընկել է ա-ն:

Մառայութիւն > ծառութիւն, հրամայել > համել բառերը, որոնք առավել հատուկ են կիլիկյան հայերենին և բազմաթիվ վկայութիւններով արձանագրվում են Սմբատի «Գատաստանագրքի» և «Անսիզ Անտիոքայ» թարգմանական աշխատութեան մեջ, ունեն այ երկհնչյունի կորուստ. օրինակ՝ «...վասն զի ամէն եկեղեցական հայնց է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառութենէն՝ զէզ հեծելվոր, որ թրով իր այնէ զթոշակն» (Սմբ. Գատ. 21), «...այլ վայր առնէ զիր ծառութիւնն» (Անս. 13), «...կարճ համէ որ կովին» (ն. տ. 33), «Եթե ուրդի որ ոք մի սայզած լինի զինչ ու լինի, ի լճի ապրանք, թէ ծառութենով և թէ անծառութիւն, և կամենայ դատաստնել...» (ն. տ. 23) և այլն:

Արձանագրվում է նաև հարկադրականի պիտի եղանակիչի փոփոխութիւն՝ առաջին վանկի կորստով, որպես առանձին բարբառներում կատարված երեւույթ. ինչպես՝ «Մաղկեալ ես, տերև ունիս, Յայտից այլ շուտով տի թափիս» (Խաչ. Կեչ. 156), «Եւ դեռուս ի տարակուսի եմք, ոչ գիտելով թէ յառաջիկայն զինչ ծնանի մեզ և կամ թէ որպէ՛ս տի զերծանիմք յայսպիսի դառն նեղութեանցս» (ԺԵ հձհ. I, 195, 1417 թ. Գանձասար), «...ի դառն և ի նեղ ժամանակիս, որ չգիտեմք, թէ ի՛նչ տի լինի հայոց ազգիս: ...Աւա՛հ, ու հազար աւա՛հ, ճշմարիտ, որ այս տի լինի» (ԺԵ հձհ. II, 382, 1475 Կտուց անապատ), «...չգիտեմք ինչ տի լինի հայոց ազգիս ի գայլոց միջիս» (ն. տ. 386, 1475 թ. Բազենց անապատ) և այլն:

#### Հ Ն Չ Ց Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

85. Հնչյունների ամփոփումը որպես հնչյունափոխական երևույթ կատարվում է այնպիսի բառերում, որոնք իրենց կազմում ունեն իրար հաջորդող նման վանկեր: Այդպիսի բառերի արտասանութեան ժամանակ կրկնվող հընչյունախմբերը ամփոփվում են մի վանկում, որով և տվյալ բառի վանկերի քանակը մեկով կրճատվում է, և բառը ստանում է նոր կերպարանք: Ամփոփմամբ առաջացած նման բառաձևեր շատ կան ժամանակակից հայերենում: Հիշենք թեկուզ գրական հայերենի անել բայի արել և արած դերբայական ձևվերը, որոնք համեմատաբար ավելի հին գոյացութիւններ են և առաջացել են հին հայերենի առնել բայի արարեալ և արարած բայաձևերի ամփոփմամբ, մի երևույթ, որի առաջին վկայութիւններին հանդիպում ենք միջին հայերենի շրջանում:

Վերն արդեն ասվել է, որ հին առնել «անել» բայը միջին հայերենի տարբերակներում հանդես էր գալիս այլ և այլ հնչյունափոխված ձևերով՝ արնել, այրնել, այնել, անել, էնել, ընել: Սակայն շնայած այս փոփոխութիւններին, սրանք բոլորն էլ անցյալի հիմքից կազմված ձևերում հանդես էին բերում վանկերի ամփոփման նույն օրինաչափութիւնը: Ըստ որում, ամփոփումը կատարվում էր անցյալ դերբայի, հարակատարի, անցյալ կատարյալի և հրամայականի ձևերում: Բերենք մի շարք օրինակներ՝ «...ոչ քշտել է և ոչ ծեծել և ոչ

իր քաշանք այրել (<արարեալ>) (Անս. 61), «...տեսաք որ ուժ էր արած (<արարած) անիրաւ դադմաճից» (ԴՏՎ. I, Անի, 22, 1276 թ.), «...ձեզ արել եմ շատ շարիս» (ԺԴ հճհ. 309, 1338 թ.), «...եղբարքն ինձ քէն ին արել, ի հետս խաւէին ոչ» (ԺԵ հճհ. I, 658, 1419 թ. Վայոց ձոր), «...շատ հայրութիւն արեք է մեզ» (ԺԵ հճհ. II, 339, 1472 թ. Կտուց), «Այդ անատակ ծովուդ նման, որ զիս քեզ արիւր (<արարեք) դարար» (Հով. Թլկ. 159), «Տէր, զայս ինչ արիւր» (ն. տ. 211), «Երկաթէ օղեր արին (<արարին), Իւր ոտից կոճերն անցուցին» (ն. տ. 206), «...արին շահ ու զեն» (Տր. 248), «Ես Յովանէս, որ զԹումէն ինձ որդէգիր էրի... ինձ հոգւոյ որդի եմ էրել» (ԺԵ հճհ. II, 36, 1453 թ.), «...ղազա էրին և :է: հոգի սպանեցին» (ն. տ. 321, 1471 թ.), «...իմ տէր, թողութիւն արէ՛ք (<արարէք>)» (Հով. Թլկ. 209) և այլն:

Հնչյունների ամփոփման այս նույն երևույթը արձանագրվում է և այլ բաներում, որոնք, սակայն, որպես առանձին բարբառներում կատարված փոփոխություններ, հետագայում գրական լեզվի մեջ շատան և մնացին իբրև բարբառային իրողություններ: Հատկանշական է նաև, որ ստորև բերվող բառաձևերի մեծագույն մասը հանդիպում է Ամիրդովլաթի երկերում, որի լեզուն առավել ժողովրդական ու խոսակցականին մոտ լինելու տվյալներ ունի: Օրինակներ բերում ենք նաև Ամիրդովլաթի հրատարակված աշխատություններից, նկատի ունենալով, որ դրանց մեջ հանդիպող բառաձևերի հավաստիությունը հաստատվում է նրա հեղինակային բնագրի օրինակներով: Այսպես, ուրեմն, հնչյունների ամփոփման այլ օրինակներ:

Անանուխ>անուխ.—«Առ մեզը մէկ լիտր և քացախ ա լիտր և լից զերկուքն այլ ի քարէ աման և եոցու և կապ մն անուխ ի վր ձգէ, որ անուխին ուժն ի մեղրն և ի քացախն ելնէ, և հան զանուխն ձգէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ճ), «Եւ թէ քեզ պիտենայ, որ, գտնուս զաշխարհ, կամ զանիստնն, կամ զանուխն՝ դու տես ի վերայ այբին» (Ամիրդ. Օգ. բժշկ. 7), «Եւ թէ զինքն ի ջուրն եփես և քամես, և անուխ խառնես, և ի վերայ աղի ձուկ ուտես, զճիճին յաղեցն հանէ» (Ամիրդ. Անգ. անս. 31):

Արթնանալ>արդնալ.—«...և քուն լինալն և արդնալն այլ ըղեղէն է» (Ամիրդ. Ուս. բժշկ. իբ):

Գրակակար>գրակար.—«...յիշեցէք... զգրակարի որդին՝ զՅովանէսն» (ԺԵ հճհ. II, 144, 1460 թ. Աղթամար):

Դեղեփալ>դէփալ.—«Տէր աստուած ողորմի պարոն Թամար դէփալին և Ալէքսանդրէ թգօրին» (ԺԵ հճհ. II, 171, 1462 թ.): Դեղեփալ—վրաց. «թագուհի»:

Իրերաց>իրաց.—«...լիճ ճորտեր իրաց ուժ լինան այրել» (Անս. 27), «...թէ որ հետ իրաց նետ ձգէ՝ նա անցնի եւ մարդոյ դիպի ու մեռնի» (Սմբ. Դատ. 33): Ամփոփումը կատարվել է ե>ի հնչյունափոխությունից հետո, երբ առաջին երկու վանկերը նույնացել են (\*իրիրաց):

Լայնանալ>լանանալ>լանալ.—«Եւ այն ջեղերն, որ մէջն փուճ է և եփ մթնէ՝ կու լանայ և լուսուն նեղ լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. 1ա):

Խաղաղեցուցանել>խաղեցնել «հանգստացնել».—«Շնխաղողի ջուր և գառնալեզվի ջուր տուր օժել և խմել, որ զցան խաղեցնէ» (Ամիրդ. Օգ. բժշկ. 125), «...եւ թէ կանաց կաթն թրջես և յականջն կաթեցնես, զցան խաղեցնէ» (Ամիրդ. Անգ. անս. 28):

Խաղաղիլ>խաղիլ «հանգստանալ, հանդարտվել».—«...եւ զբանձին հուն-

տրն ծեծէ և աղով և քացխով, և մազմատայ արա և զգլուխն յիստկէ, որ ցան խաղի» (Ամիրդ. Օգ. բժշկ. 245):

Հոտոտալ>հոտալ «հոտոտել, հոտ քաշել».—«...հոտայ քթով» (Ամիրդ. Ուս. բժշկ. 12), «...անուշահոտ տան հոտալ» (Ամիրդ. Օգ. բժշկ. 63):

Հաոտալիք>հոտալիք.—«...եւ զտաք դեղերն, և զանուշ հոտալիք հոտայ, որ է մուշքն և զալիան» (Ամիրդ. Օգ. բժշկ. 242):

Մանանելի>մանելի.—«Եւ ուտէ մանելի և շիպ և աղ» (Ամիրդ. Օգ. բժշկ. 160), «Եւ այն իրքն, որ զպալղամն պակսեցնէ՝ օգտէ, որ է սիսոան ջուրն և ծեծած մանելան» (ն. տ. 282):

Մունակկար>մունկար.—«...մունկրերն եւ զտակկրերն զինքն (= շրեշը) ի գործ կու արկանեն» (Ամիրդ. Անգ. անպ. 226):

Շաղաղել>շաղել.—«...զչոր կարմիր վարդն ծեծես և ջրով շաղես և տաս» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծթ), «...մեղրով շաղէ և պահէ 2 ամիս» (ն. տ. 89), «Եւ քէ զծառն այրես, մոխիր այնես, և քացխով շաղես, և ի վերայ ճառահաթին դնես՝ օգտէ» (Ամիրդ. Անգ. անպ. 43): Օգ. բժշկության մեջ զուգահեռաբար նաև շաղվել ձևով, ինչպես՝ «Ջամէնն ծեծէ և մաղէ և հազրի ջրով շաղէ և կամ ուրի տերեւի ջրով շաղվէ և դիր ի ճակատն» (էջ 115):

Սպանանելի>սպանել.—«...նայ ի ժմուն սպանէ զմարդն» (Ամիրդ. Ուս. բժշկ. իե):

Փաքաթել>փաթել.—«...եւ զլուխն ուրի տերևով և փրփրեմով փաթէ և օծէ վարդէջուր» (Ամիրդ. Օգ. բժշկ. 115), «Ջբամբակն ի մլին ծարն փաթեն պինտ և թաթխեն զինքն ի սուսանին ձէթն» (ն. տ. 225):

Աւաւրել>(օրօրել)>աւրել.—«...եւ մարն կու պիտի որ զնորայ կաթն քիչ քիչ տայ և կամաց աւրէ և աղէկ խաւովի զրուցէ... որժամ կաթն տաս տղին, նաև կամաց աւրէ, որպէս որ մարդն շատ ուտէ և խմէ՝ չէ աղէկ աշխատիլն, նոյնպէս և կաթնայկեր տղան այլ, որժամ կաթն տան, չէ պատէհ, որ պինդ աւրեն, որ զեն շառնէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծէ):

Աւաւրոց (օրօրոց)>օրոց.—«Մըտիկ դու հիւսանն արա, որ թապութ ւ օրոց շինէ նայ» (Հով. Երզնկ. 157), «...և ի տղին որոցքն<sup>56</sup> սև հլունի կախեն, որ աշիչն զսևութիւնն յաւելցնէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծէ):

Անշուշտ, հատկապես Ամիրդովլաթից բերված օրինակները չեն սպառվում միայն վկայակոչվածներով. դրանք, որպես նրա լեզվին հատուկ բառաձևեր, կրկնվում են շատ հաճախ:

## Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Հ Ա Վ Ե Լ Ո Ւ Մ

86. Միջին հայերենում հնչյունի հավելում ունեցող բառերը հիմնականում բարբառային գոյացություններ լինելով, իրենց մեծագույն մասով հետագայում էլ մնացին որպես այդպիսիք: Դրանցից մի քանիսը, ավելի լայն տարածում ստանալով, արժեքավորվեցին որպես զրական լեզվի բառաձևեր և հարատևվեցին մինչև մեր օրերը:

Այդպիսի փոփոխություն ունեցող բառերից հատկապես պետք է հիշել մեք

<sup>56</sup> Այս բառը ձևագրում գրված է հենց այսպես: Անշուշտ բառակզբի ո-ն այստեղ ունի օ-ի արժեք:

դերանվան մենք ձևը, որի վկայությունները սկսվում են միջին հայերենի հենց սկզբնական շրջանում: Այսպես, օրինակ, Պարոն Կոստանդինի 1271 թվականի դաշնագրում հետևողականորեն կիրառված է այդ բառաձևը. «...մենք ու ամենայնմէ՛ծ Մայստոն Ոսրիթլուն Ալամնացն Ֆրեր Իանն ...մենք չէաք ի հավնել ...էկաք մէնք ու վերոյանվանել Մայստոն ի վերոյանվանել տեղին ...ու հայնց հավնեցաք մենք ու Մայստոն ... ի յայն տնվոյն տեղն որ շինել էին, որ մենք չէաք ի հավնել...» (Ղ. Հովն. Հետ. նախ. ռամ. 258): Այս դերանունը մենք ձևով լայն կիրառություն է ստանում կրիիկյան հայերենում, ապա և միջին գրական հայերենում. այսպես, օրինակ՝ «...մենք կու առնունք ի մեր վերայ, որ մենք ծառայենք զքեզ» (Անս. 53), «Պարոնայք, մենք եկել ենք ձեր առջև զէդ ըղորդ ու ճշմարիտ դարպասու ... ու սար ենք, որ զինչ ցեղ զուք համէք ու պատեհ տեսնոյք՝ մենք կեցցնենք» (ն. տ. 59), «Ձեր խօսքդ մեզ դեղ եղաւ, ձեր տեսողք ենք մենք խնդացել, Հազար երնեկ այս աւուրս, որ մէկ տեղ ենք մենք ժողովել» (Հով. Երզնկ. 147), «Աշխարհս է կանաչ մարգեր, մենք ի մէջն ենք կաբու ձագեր» (ն. տ. 158), «...մենք զինքն փոքր և քիչ շինեցաք, որ կարդացողն շուտ հասկնայ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ԺԹ), «...մենք կու բռնենք և կու յիմանանք» (ն. տ. 4), «...զջաղցրպան Աղուպն յիշեցէք... որ զթանաքի գղթորն կու տէր (<տայր), որ մենք կու գրէաք» (ԺԾ հձհ. II, 140, 1460 թ. Արծկե) և այլն:

Սակայն ենթադրելի է նաև, որ միջին հայերենի ոչ բոլոր տարբերակներում էր, որ մեք դերանվան մեջ ավելացել էր ն-ն: Մեր այս ենթադրությունը հիմնվում է այն փաստի վրա, որ մեր ժամանակակից բարբառների մի մասում այդ հավելումը տեղի չի ունեցել և այժմ դրանցում արձանագրվում է առանց ն-ի ձևը:

Ն-ի հավելում առկա է նաև արտասու՛մ արտասու՛նք // արցունք բառում. այսպես, օրինակ՝ «Ձի կայ, որ լինի յայս ցաւ դժար և յոլով, և բշտանալ աչիցն, և պնդիլ, և շատ արտասու՛նք» (Գրիգ. 79), «...և լինի, որ հետն արտասու՛նք ելնէ և կարմրէ» (ն. տ. 80), «արտասու՛նք նորա» (Ձեռ. 8030, 71ա, 1341 թ.), «...որժամ քրտինքն զէտ աչից արցունք աղի լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. հզ) և այլն:

Նույն ոնգային հնչյունը ավելանում է նաև հետևյալ բառերում. կանաչ> կանանչ.— «Գոյնն լինի մթոյն՝ ընդ կանանչ և ընդ սև ի մէջ» (Գրիգ. 44), «...փոխեն զմարմինն ի կերպէ ի կերպ՝ կամ կարմրագոյն, կամ ի սև գոյն, կամ ի կանանչ» (ն. տ. 47), «Կանանչ մնայ զնշդարին» (Հով. Երզնկ. 121), «Տարէն ելուկ նման կանանչ ուտիկ ես» (ն. տ. 150), «Դու ես կանանչ աղբիւր, ի ծով նրմանես» (ն. տ. 152) և այլն. նանաչել>նանանչել.— «...այս նեղերս ի մաղձերոյն գունէն նանանչեն» (Գրիգ. 42), «...զիւր տէրն շնանանչէ» (ն. տ. 45), «...նանանչես զինքն ի ցաւոյն, որ ի ստամոքբերանն լինի» (ն. տ. 112), և այլն. Կամուրջ>կարմունջ (ն-ն ավելացել է դրափոխությունից հետո).— «...ինչուրովի կարմունջն» (Դհվ. I, Անի, 63, 1215 թ.) և այլն, շիջանիլ>շինջանիլ.— «...ճրագ որ շինջանի» (Ձեռ. 8030, 80բ, 1341 թ.) և այլն:

Ինչպես կարելի է նկատել, ն-ի հավելումը կատարվում է հպականներից առաջ: Նման բառաձևեր ավելի առատ են հետագա դարերի ձեռագրերում (ականք>անկանք, ֆաչալ>ֆանչալ, մեծ>մենձ, ֆիթ>ֆինք և այլն)—որպես բարբառային իրողությունների թափանցում գրավոր լեզվի մեջ:

Որոշ ձեռագրերում ն-ի հավելում ունի դու դերանունը. այսպես՝ «Եւ յերբ հայիս այս ուռիցս, դուն տեսնուս զայն տեղն» (Գրիգ. 33), «Դուն քեզ պետ արայ» (ն. տ. 46), «Տուր դուն ինձի խրատ՝ դու խիստ խիկար ես» (Հով. Թլկ. 147), «Զարկամն զայդ շէր աներ, զինչ որ դուն կանես» (ն. տ. 151) և այլն:

87. Մեր ժամանակակից բարբառներում տարածված երևույթ է նր հընչունների միջև դ-ի հավելումը: Միջին հայերենի բարբառներում այս հնչյունափոխությանը ենթարկված բառերը ևս արձանագրվում են գրավոր աղբյուրներում. այսպես՝ «...թածա և մանտը ձուկն նշի ձիթով տապկած» (Մխ. Հեր. 21բ), «...մանտը ձուկն թածա» (ն. տ. 20ա), «...պանդրի շուրն, որ է շոտտ» (ն. տ. 44բ), «...մի բեռանց ծանդը մատներ զտկարս» (Զեռ. 8030, 3բ), ճեղքադրական երկրպագնութեամբ (ն. տ. 7ա), զայսպիսի ծանդը (ն. տ. 91բ), ծանդը դնէ... ծանդը դիր (ն. տ. 91բ, 100բ), զծանդն ու զթեթկն (Զեռ. 3029, 198, 1376 թ.), «մանտը է գիրս» (ԺՅ հճհ. I, 151, 1413 թ. Մոկաց երկիր), «գլուխն և աշքն ծանդրանայ» (Ամիրգ. Ուս. բժշկ. խզ, նույն բառաձևը նաև խ, ծզ և այլն), «ծանդը բնութիւն լինի» (ն. տ. 4, 4գ), «...նորայ հապն մանդը և լատիֆ կու պիտի» (ծ, կբ, կգ և այլն), «...զտաք հացն որ ի քոնտրէն ելնէ, մի ուտել ... և խորվուն, որ ի քոնտրէն ելնէ» (ն. տ. ծե) և այլն:

Մր հնչյունների մեջ մուծվում է բ. ինչպես՝ արմաւ>ամբրաւ (բ-ն ավելացել է դրափոխութունից հետո).—«...ոուպ, մեղր, ամբրաւ, սև շամիչ» (Գրիգ. 35), «...ուտելուն լինի որպէս միս և ամբրաւ և գինի և թուզ» (Ամիրգ. Ուս. բժշկ. կգ), քմրհնդի>քմրհնդի.—«...քմրհնդոյ շուր, և նոան սքնկպին ի բանի պահէ» (Մխ. Հեր. 32ա):

Մր հնչյունների մեջ ավելանում է տ, ինչպես՝ խստրովիկ>խոստրովիկ.— «Ես Գոնցէ, ամուսին Վարհամալ, որդոյ Շահունեցո, դուտոր խոստրովիկ՝ յազգէ Տարսաիճեանց» (Դհվ. III, Վայոց ձոր, 56, 1346 թ.):

Միջին հայերենի որոշ տարբերակներում տալ և զալ բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի ետ, եկն միավանկ ձևերի սկզբից ավելացել է եր երկհնչյունը, որի հետևանքով այդ բառաձևերը դարձել են երկվանկ՝ երետ, երեկ (վերջինում ն-ի անկմամբ), ինչպես, օրինակ՝ «...տեսէք որ իմ ֆուլան լիճ ճորտ երեկ առչև ֆուլան լճերոյ, որ են այս անուն, ու երետ ի յիս ի պայլութիւն զիր ապրանքն, ու ես շառի» (Անս. 11), «...զգեկանն ի տէրն երետ սերեֆիկն ... ամ թէ երետ զկումաշն ի տէրն ու թէ շերետ՝ ինք գիտէ» (ն. տ. 83), «ՊՄ թուին սաստիկ և թանձր մարախ երեկ ի Շամբէն ի վեր՝ դեղին և Դ թեան» (ԺՅ հճհ. I, 3, 1401 թ.), «Եւ զմեծ մսքիթն քակել երետ» (ն. տ. 3, 1401 թ.), «...նայ հանց պատասխան երետ» (Հով. Թլկ. 206), «Յժուն մայրն ի դուրս երեկ, զիս խածեց» (ն. տ. 155), «Ի սուր և ի կտոր երեկ ու քարով նա քարկոծեցաւ» (Հով. Երզնկ. 156), «...զվանքս մեզ էրետ» (Դհվ. I, Անի, 64, 1310 թ.) և այլն:

#### ՆՁՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՄԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐՄԱՆՈՒՄ

88. Միջին հայերենի առանձին տարբերակներում կատարված առնամանուխան և տարնամանության երևույթները բացահայտվում են միայն այն ժամանակ, երբ դրանք չեն համընկնում բաղաձայնների մեջ կատարված տեղաշար-

ժերի հետ և ակնհայտորեն երևան են բերում այդ երևույթներին հատուկ դիրքային փոփոխություններ:

Սկզբնաղբյուրներում ավելի առատ փաստերով վկայվում են առնմանությունամբ կատարված փոփոխությունները: Այստեղ առկա են դիրքային երկու իրավիճակներ: Մի դեպքում փոխազդող հնչյունները գտնվում են անմիջապես կողք-կողքի և դրանց անմիջական հարևանությունից էլ առաջանում է հնչյունափոխությունը: Արտասանության պրոցեսում հնչյուններից մեկի այս կամ այն հատկանիշը անցնում է հարևան հնչյունին, որով և վերջինս այդ հատկանիշով նմանվում է առաջինին:

89. Ինչպես արդեն ասվել է, միջին հայերենի շրջանում հին հայերենի ձայնորդ ղ-ն ուներ ետնալեզվային ձայնեղ շփական չ-ի արժեք: Այս հնչյունը, երբ բառի մեջ անմիջապես գտնվում էր խուլ հնչյունի հարևանության մեջ, կորցնում էր իր ձայնեղությունը և վերածվում խուլ հնչյունի, որը և գրության մեջ շատ հաճախ արտահայտվում էր խ-ի միջոցով: Այսպես, օրինակ՝ «...թէ հայնց լինի, որ մէկն ու մէկն ի խամբրոյն թուխթ ունեայ, նա թխթով գտվի. ապա թող տեսնուն, որ թուխթն վտահ լինի ու ըղորդ» (Անս. 39), «...թուխթ գրվի» (ն. տ. 47), «...զայս թուխթս հասկնայք» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.), «...զթուխթս գրեցաք... տվաք զմեր թուխթս» (ն. տ.), «...բաժտանէն թուխթ բերեր» (Լևոն Գ-ի 1288 թ. արտոն.), «...ով որ սրով և դանակով մերձենա ի սուրբ գիրքս և հատանէ ի թխթէս» (ԺԾ հճհ. I, 114, 1410 թ.), «...զայս Բ թխթիկս նա գրեաց ի վանս Խառաբաստայ» (ն. տ. 145, 1413 թ. թուխթ ձևով հանդիպում է և այլ շատ ուրիշ սկզբնաղբյուրներում), «...շխթայիւք ...շխթայից» (Գ. Հովս. հճ., 61, 1306 թ.), «...անյախթ հոետորի» (ԺԴ հճհ. 136, 1317 թ. Գլաձոր), «...կապեալ է ի շխթայս» (ն. տ. 144, 1318 թ. Բերկրի), «...որպէս ասխան (<ասղան) հետեր» (Գրիգ. 43), «...իւր խայթածին հետն զերթ ասխան հետ լինի... իւր ցանն է որպէս ասխան խոթած» (ն. տ. 49), «...ամեն մարդոյ խախք ու կատակ» (Հով. Թլկ. 193) և այլն:

Ղ>խ փոփոխությունից հետո, որոշ բառերում, խ-ի ազդեցությամբ՝ նրան հաջորդած ք-ն շնչեղազրկվում է, ինչպես, օրինակ՝ «...թխտոյս շարագրութիւն .... թուխտս առաջին խոստովանութեան» (Գ. Հովս. հճ. 37, 45, 1170 թ.), «...թխտով որոշի» (Սմբ. Դատ. 25), «...թանաքս հում է ու թուխտս հին» (ԺԾ հճհ. II, 235, 1465 թ. վան), «...զթուխտս կոկեաց» (ն. տ. 215, 1464 թ. Հայոց թառ), «...շի կարէ յախտել զշարկամն» (Ամիրդ. Ուս. բժշկ. հէ), «...հիւրնդութիւնն կու յախտէ զբնութիւնն» (ն. տ. է) և այլն:

Ղ-ն խ-ի է փոխվում նաև ձայնեղ հպականի հարևանությամբ: Այստեղ ենթադրելի է, որ այդ փոփոխությունը տեղի է ունեցել նախ ձայնեղների տարնմանությամբ, որի հետևանքով ղ-ն զրկվել է ձայնեղությունից, ապա և նրանից առաջացած խուլ խ-ի ազդեցությամբ ձայնեղազրկվել է ձայնեղ հպականը: Ավելի վաղ վկայություններում գրության մեջ արտահայտված է դրանցից միայն մեկի խլացումը, բայց քանի որ եղած օրինակներում մի դեպքում արտահայտված է ղ-ի, մի այլ դեպքում՝ հպականի խլացում, պետք է ենթադրել, որ արդեն իսկ այս վկայությունների շրջանում ղ+հպական կապակցության երկու եզրերում էլ առկա էր խուլի արտասանություն: Օրինակներ. «...մեք Աւտարկա որդիքս՝ Հասան ու Խոցադեղ, մեր ախբաւր որդաւքս մեր սրտի յաւժարութեք զմեր հայրենի հողն ի Խուլաբարին տվաք ի սբ Ստեփանոս» (Դհվ. III, Վայոց ձոր, 37, 1292 թ.), «...զնորաբոխբոջ դեռաբոյս որդիքս իմ» (ԺԾ հճհ. I, 50, 1405 թ.

ծրեան), «Ապա թէ առջի այրկանն տղայքն աղչկներ լինին՝ և հետի այրկանն կտրիճ լինի, նա որձն ժառանգէ» (Անս. 37), «...և յայստեղն արմանցքն այս է, որ թէ կտրիճ տղայ լինի, նայ յաջ դիհու արգանդն լինի, և թէ աղչիկ լինի, ի ձախն լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. ժզ), «...և թէ հով և նաւար լինի՝ տղան աղչիկ լինի» (ն. տ. ժէ), «...թէ կնկան ձախ ծիծն թոշմած լինի, նայ գուշակէ որ աղչիկ ձգէ կնիկն» (ն. տ. լդ) և այլն: Բայց ավելի ուշ՝ երկու եզրերի խլու-թյունն էլ արտահայտված է գրությամբ, ինչպես, օրինակ՝ «...բաժինքն ի դօռն տվինք Հախպատա սբ նշ» (ԿՂ Հաղբ. 142, 1655 թ.), «...վախմ տվի դուռն Հախպատայ սբ նշ.-ին» (ն. տ. 224, 1655 թ.), «Աւետիս եպկս հախպատցի... Յակոբս տվի ի դուռն Հախպատայ» (ն. տ. 225, 1655 թ.) և այլն:

Խուլ հնչյունի առնմանությամբ է, որ մի քանի բառերում վ(լ)-ի փոխարեն որոշ սկզբնաղբյուրներ ունեն ֆ. օրինակ՝ «...գինչ ցեղ ինչֆի (<ինչվի) յայս արէն առել» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.), նաև ֆ>նաֆթ և այլն (օրինակները տե՛ս § 75):

Շնչեղ խուլի ազդեցությամբ տ-ն շնչեղանում է փաել բառում, ինչպես, օրինակ՝ «...ի հողն յուշ կու փթի» (Ամիրդ. Օգ. բժիշկ. 28), «...ժանկատով պատրուգ դնես, որ գփթած միսն ուտէ և սրբէ» (ն. տ. 238), «...մեղրով շաղվէ և դիր ի փթածի վրան» (ն. տ. 247), «...զակուային տկերուն միսն փթեցնէ» (ն. տ. 256) և այլն: Նույն ձևով նաև Անգիտաց անպէտ-ի այն ձևագրում, որ դրվել է Բասմաջյանի հրատարակության հիմքում, ինչպես այդ վկայում է հրատարակիչը<sup>57</sup>:

Ս-ից առաջ արձանագրվում է կ-ի շնչեղացում, ինչպես նաև հակառակ երևույթը՝ Է-ի շնչեղագրվում, որոնք, հավանական է, տարբեր բարբառների օրինաչափություններ են. օրինակ՝ «...ծերքն բնութեամբն վատուծ են և իւրեանց հայտղականքն և փոփոխական զօրութիւնքն պա՛սեալ է» (Գրիգ. 39), «...իրէնց պիտի ընդ նեկսէ ի պուրձն, թէ իրէնց պիտի ընդ դրացէ խէչ պրճին» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.):

Խուլի շնչեղացում ունի նաև վատթար>վաթթար բառը, որ արձանագրվում է 989 թ. մի հիշատակարանում (Գ. Հովս. հձ. 159): Այդ բառի նման արտասանություն ունենք և ժամանակակից հայերենում:

90. Առնմանությամբ բաղաձայնների փոփոխություն կատարվում է ոչ միայն իրար կողք-կողքի գտնվող հնչյունների փոխազդեցությամբ: Շատ հաճախ փոխազդող հնչյունները միջարկվում են այլ, երբեմն մեկից ավելի, հնչյուններով: Այստեղ ևս դիտվում են նույն կարգի փոփոխությունները՝ միայն այն տարբերությամբ, որ եթե անմիջապես իրար հարևանությամբ հանդես եկող հնչյունների փոփոխությունը կատարվում էր միայն խլության, շնչեղ խլության սահմաններում, ապա այս դեպքում առնմանության պրոցեսում որոշակի դեր ունեն ձայնեղ հնչյունները, որոնք իրենք են ազդում խուլերի վրա և նրանց դարձնում ձայնեղ: Այժմ օրինակներ՝ իրենց վկայություններով:

Հին հայերենի շուրջ բառը միջին հայերենի որոշ տարբերակներում զ-ի անկմամբ հանդես է գալիս շուռ և ծուռ ձևերով. վերջինում շ>ծ փոփոխությունը կատարվել է զ-ի ազդեցությամբ, երբ այն դեռ չէր ընկել: Ժուռ բառաձևը վկայվում է տարբեր սկզբնաղբյուրներում, ինչպես՝ «...ծուռ գալոյ և բաղա-

<sup>57</sup> Տե՛ս Ամիրտովյաթի Ամասիացոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց..., Վիեննա, 1926, էջ ԺԲ.

նիս մտանելոյ պատրաստ կենայ» (Մխ. Հեր. 25բ), «...ի ծուռ կու գաս զօրն անդադար» (Հով. Երզնկ. 159), «...գրեւիքն ի ծուռ ածէ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծգ) և այլն:

Շ>ժ փոփոխություն ունեն և այլ բառեր: Այսպես, օրինակ՝ ետրնթաց լրիվ առնմանություն մը վկայվում են շարժել>ժաժել (բ-ի անկմամբ), ինչպես՝ «...յորժամ երակն զետ մոջիմ ժաժի» (Ամիրդ. Ուս. բժշկ. կգ), «...ի տեղացն շի ժաժի» (ն. տ. 1) և այլն, ինչպես նաև նույն բայի պատճառական ձևում՝ «...անուշ անուշ խօսվի կամկար խօսի՝ յորժամ կաթն ծծէ կամ ժաժցնէ» (Ամիրդ. Օգ. բժշկ. 66) և այլն: Նույնը նաև աշխոյժ>աժխոյժ բառում, ինչպես՝ «...աղաչեմ զսուրբ ընթերցողսդ և աժխոյժ մտաւորսդ» (ԺԾ հճհ. I, 187, 1416 թ.) և այլն: Այս կարգի ամենահին վկայությունը թերևս բաշխել>բաժ-խել բառում վկայվող փոփոխությունն է, որտեղ առաջընթաց թերի առնմանություն մը, այսինքն՝ բառասկզբի ձայնեղի ազդեցությամբ, շ-ն ձայնեղացել է: Ահա այդ օրինակը՝ «...բաժխենեմ տխմարաց զուսումն» (Գ. Հովս. հճ. 154, 988 թ.):

Ամիրդովյաթի աշխատություններում առավել կամ պակաս հետևողականությամբ օգտագործվում է ջրաղաց բառի ջաղաչ ձևը (բ-ի անկմամբ), որտեղ առաջընթաց առնմանությամբ ց-ն լրիվ նմանվել է ջ-ին. այսպես, օրինակ՝ «...իրենքն ջաղաչք են անձինն, և որպէս որ ջաղջին վերի քարն ուժով է, նոյնպէս և այլ վերի ակուանին ուժով է քան զվարինն» (Ամիրդ. Ուս. բժշկ. ի), «Զխօսողին ըղեղն ջաղջաց փոշիով խառնես ջաղվես և սիստան շաք տաս, որ ուտէ» (Ամիրդ. Օգ. բժշկ. 240), «Եւ թէ ջաղջաց փոշին գինով եոցնես» (Ամիրդ. Անգ. անպ. 37) և այլն:

Ետրնթաց թերի առնմանությամբ աստիճան>աշտիճան բառում ց-ի ազդեցությամբ և սուլականը դարձել է շշական շ, քանի որ ներգործող հնչյունը ևս իր մեջ ունի շշականի տարր. այսպես՝ «Եւ՝ Տիրարն, ծառայ Քրիստոսի, շինեցի հալալ ընչիւք իմով զաշտիճաներս մեծափառ սրբոյ կաթողիկէիս» (Դհվ. I, Անի, 34, 1213 թ.), «...եպիսկոպոսութեան աշտիճանի» (Գ. Հովս. հճ. 645, 1200 թ.), «...արժանաւոր այնմ աշտիճանի» (ն. տ. 945, 1241 թ.), «...գառաջնորդական ունին աշտիճան» (ն. տ. 961, 1244 թ.), «...լուծին յաշտիճանացն» (Սմբ. Տար. 33), «...էր սա աշտիճանաւ սենեսկալ Հայոց» (ն. տ. 222), «...առեալ զաշտիճան արհեսպիսկոպոսութեան» (ԺԴ հճհ. 183, 1323 թ.) և այլն<sup>58</sup>:

Առաջընթաց առնմանությամբ, շնչեղ խուլի ազդեցությամբ խուլ տ-ն շնչեղացել է ցայտել>ցաթել, ցեթել բառում, ինչպես՝ «...Եւ այն տեղն, որ արեգակն շի ցաթէ՝ իսկի բոյս և անասուն և կենդանի շի լինի» (Ամիրդ. Օգ. բժշկ. 21), «...յորժամ արնն ցաթէ՝ տուր» (ն. տ. 61), «Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին» (ԺԾ հճհ. I, 358, 1474 թ. Վայոց ձոր) և այլն:

<sup>58</sup> «Կանոնագիրք հայոց» աշխատության հրատարակիչ Վ. Հակոբյանը իր համահավաք բնագրի ձեռագրերից մեկի (№ 131, գրչ. ժամ. 1098 թ., վայրը՝ Կիլիկիա) ուղղագրության մասին արած դիտողությունների շարքում նշում է նաև, որ «Մի երկու բառ՝ աստիճան, ուրիշն գործածված են հնագույն արտասանությամբ. օրինակ՝ աշտիճան, արկուն» (Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ LX): Մեզ հայտնի չէ, թե ինչ նոր ստուգաբանությամբ է նա աշտիճան ձևը աստիճան-ից ավելի հին համարում, երբ շ. Աճառյանի «Արմատական բառարանում» հիմնաձևը համարվում է աստիճան-ը, իսկ մյուսը՝ նրա ձևփոխությունը:



Այն բառի սեռական-տրական աշից ձևում շ-ի ազդեցությամբ հոլովական վերջավորության ց-ն լրիվ առնմանվել է: Այս բառաձևը վկայվում է հատկապես Ամիրզովլաթի լեզվում, ինչպես՝ «...աշիչն զսևութինն յաւելցնէ» (Ամիրզ. Ու. բժշկ. Ժ), «...ի ծոծրկէն ապիկիս առնելն օգտէ աշիչն և գլխուն» (Ամիրզ. Յգ. բժշկ. 64), «...վարդի ձէթ և հաւկթի դեղնուց յիրար խառնէ և ի վերայ աշիչն դիր» (ն. տ. 181), «Եւ աշիչն և գլխուն երակնին կանգնի, և շատ արցունք գայ աշիչն մարդուն» (ն. տ. 195) և այլն:

Առաջինթաց առնմանության արդյունք է նաև՝ «...ըզՍմբատ հայոց սպարապետս յիշեջիք» (Գ. Հովս. հձ. 951, 1244 թ.) օրինակում ընդգծված բառաձևի ս>շ փոփոխությունը, որ կատարվել է շ-ի ազդեցությամբ:

Այս բոլորով, իհարկե, չեն սպառվում այն դեպքերը և օրինակները, որոնք ցրված են մեր միջնադարյան ձեռագրերում ու սկզբնագիր այլ աղբյուրներում: Սակայն կարծում ենք, որ այսքանն էլ լրիվ պատկերացում է տալիս վերը նկարագրված հնչյունափոխական երևույթի մասին:

#### ՀՆՁՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԻԱՑՈՒՄ

91. Միջին հայերենի սկզբնաղբյուրներում հանդիպող հնչյունների բարդացման երևույթը որոշ բառերում միանգամայն օրինաչափ ու պատճառաբանված կարելի է համարել, քանի որ տվյալ դեպքում հին բառաձևի համեմատ նորում հանդես եկող բարդ հնչյունը փոխարինում է իրար կից այնպիսի երկու հնչյունների, որոնք փաստորեն այդ բարդ հնչյունի բաղադրիչներն են և հեշտությամբ կարող են վերածվել մի բարդ հնչյունի: Այստեղ այս երևույթը արձանագրվում է հատկապես իրար կողք-կողքի հանդես եկող խուլ պայթական ու շփական հնչյունների ոլորտում: Այսպես, օրինակ՝ պատասխան բառի բառամիջի ա-ի սղումից հետո ստեղծված պատասխան բառաձևում տս հնչյունները մի արտաբերմամբ վերածվել են ց-ի՝ պացխուն (ա>ու հնչյունափոխությամբ), ինչպես՝ «...նա իսկի շայնէ մարդոյ պացխուն» (Անս. 37), «...բերես զքո սիգեղն և զինչ այլ պէտք ունիս, որ իր պացխուն այնես» (ն. տ. 43. այս աշխատության մեջ հետևողականորեն՝ պացխուն): Այսպես նաև արտասուխ>արտսուխ (ն-ի հավելմամբ)>արցունք բառում. օրինակներ՝ «...յաշիցն արեան արցունք հանէ» (Կոստ. Երզնկ. 132), «Արցունքն սապոն լինի, սևութիւնըն սպիտականայ» (Հով. Երզնկ. 149), «...աշից արցունք աղի լինի» (Ամիրզ. Ու. բժշկ. հգ) և այլն: Նույն հիմունքով կրտսեք, վաքսուն բառերում տս, քս հնչյունակապակցությունները փոխվել են ց-ի, ինչպես՝ «...կրցեք եղբայրն իր» (Մանր ժմնկ. II, 49, XIII դ.), «...ի թուաբանութեան Հայկազեան տոմարի Պ-երորդի վացսունեռորդի<sup>59</sup> երրորդի» (ԺԾ հձհ. I, 163, 1414 թ. Վայոց ձոր): Թշուառ բառի քշ հնչյունների միասնական արտասանությամբ ստացվել է շուառ ձևը. «...շուառս քան զամենեսին» (Գ. Հովս. հձ. 517, 1187 թ. Հոռոմոսի վանք), «...զշուառս գրիչ՝ զՄխիթարիչ Անեցի» (ն. տ. 675, ԺԳ դ. սկիզբը) և այլն:

Անշուշտ, այս փոփոխությունները հատուկ էին միայն միջին հայերենի առանձին տարբերակներին:

<sup>59</sup> Այստեղ հնչյունափոխությունից հետո ս-ն պահպանվել է թերևս հաջորդ վանկում լինելու պատճառով:

92. Վերը նշվածների համեմատ՝ մի քանի բառերում բարդ հնչյունը հանդես է գալիս միայն շփականի փոխարեն: Պարզ է, որ այս հնչյունափոխությունն իր բնույթով միանգամայն տարբերվում է առաջինից: Եթե այնտեղ միանգամայն տրամաբանական է բարդ հնչյունի առաջացումը իր համապատասխան բաղադրիչներից, ապա այստեղ այդ հիմքը վերանում է: Այստեղ բարդ հնչյունը հանդես է գալիս այն շփականի փոխարեն, որը կարող է լինել նրա բաղադրիչներից մեկը: Այսպես է, օրինակ՝ քանց բառը: Հայտնի է, որ այն առաջացել է գրաբարի քան նախադրության և զ նախդրի կապակցությունից: Հավանական է, որ զ-ն նախապես խլացել է և ապա փոխվել ց-ի: Պարզ հնչյունից բարդին անցնելուն ամենայն հավանականությամբ նպաստել են նման այլ կազմությունները: Մի քանի օրինակներ. «...քանց զամուրչէքն այլ իրք շտան ... իրաւունք շտան քանց սամորչէքն ի պըթէն» (Լևոն Գ-ի 1288 թ. արտոն.), «...շտան քանց ի հարիւրն մէկ» (ն. տ.), «...քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գետններ» (Սմբ. Դատ. 16), «Եւ ոչ կարէ եպիսկոպոսն իւր եպիսկոպոսութեան ժառանգ դնել, քանց զայն որ ընտրութեամբն Աստուծոյ եւ հայրապետին եւ ամենայն ժողովրդեանն արժանի այնեն» (ն. տ. 24) և այլն:

Վանց, որ առաջացել է վասն բառաձևից՝ դրափոխությամբ (տե՛ս § 94, Ե) և այնուհետև բառավերջի ս-ն փոխել ց-ի: Ինչպես այս, այնպես և վերը նշված քանց-ը, այդ փոփոխությունը կատարել են հայնց (հանց, հէնց), թանց (<թէ հայնց) բառերի նմանակությամբ: Վանց-ը բավական տարածված նախադրություն է, օրինակ՝ «...շինել էին զիրէնց տունն վանց իրենց բայժուն» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.), «Եւ վանց վաճուկըներոյն, որ եփ կու գան՝ նա զիրենց սնդիկնիս կու բանան» (Լևոն Գ-ի 1288 թ. արտոն.) և այլն (այլ օրինակներ տե՛ս § 94, Ե):

Պատին, որ առաջացել է պատիժ բառից՝ ժ>ն(ջ) փոփոխությամբ, ինչպես՝ «Եւ ով որ սուտ տէր կանկնի կամ ծախելոյ կամ խորելոյ կամ պակասութիւն ենելոյ՝ զպատինն ի սուրբ Աստուածածնէն առնու» (ԺԵ հճհ. II, 67, 1456 թ. Բասեն), «...խաչահանողսցն առցէ և զպատինն Յուդայի» (ն. տ. 449, 1480 թ.):

Զ-ի փոխարեն ձ ունեն մարգել>մարձել, մարգպան>մարծպան բառերը, երկուսն էլ ր-ից հետո, ինչպես՝ «...զմարմինն յուշիկ յուշիկ աճուելով մարձէ» (Մխ. Հեր. 33ա), «Ես Քուրդս, Հասան, Համազասպ(պ), Սարգիս, որդիք Սըմբատա, որդո Համազասպ մարծպանի» (ԿՂ Սանահ. 106, 1199 թ.): Պետք է կարծել, որ այս վերջին երեք բառերում շփականի փոխարեն պայթաշփականները բարբառային հին գոյացություններ են:

Վերը նշված բոլոր ձևերն էլ (բացի վերջինից) կենդանի են այժմ հայերենի ժամանակակից բարբառներում:

93. Այստեղ հարկ է նշել մի երևույթ ևս, որը թեև չի առնչվում հնչյունների վերը նկարագրված բարդացման հետ, բայց ուշագրավ է այնքանով, որ արձանագրվելով մեր ժամանակակից բարբառներում, վկայվում է նաև հին ձեռագրերում: Դա տևական կամ ուժգին մ-ի արտասանությունն է ամէն բառում (նաև դերանվանական առումով), որը արտահայտվում է նաև գրության մեջ՝ կրկնակի մ-ով. այսպես, օրինակ՝ «...Ողորմեա Քրիստափորի հոգւոյ եւ կնոջ Այգոցին, ամմէն» (Գ. Հովս. հճ. 378, 1161 թ.), «...ի յիշատակ իւր և ծնողաց և եղբարց, ամմէն» (ն. տ. 1004, 1249 թ.), «...ամմէնք զքէն ի ձեզ պիտի հանէք» (ԺԴ հճհ. 275, 1335 թ.) և այլն:

94. Դրափոխությունը սովյալ բառի կազմի մեջ մտնող հնչյունների ընդունված հաջորդականության խախտումն է, երբ բառի արտասանության ընթացքում հնչյուններից մեկը արտաբերվում է ժամանակից ավելի շուտ՝ փոխելով իր տեղը հնչյունական շղթայում: Առաջանալով զուտ հոգեբանական հողի վրա և հատուկ լինելով միայն կենդանի-խոսակցական լեզուներին, այս երեվոյթը գործում է միայն առանձին բառերում ու բառաձևերում:

Հայերենին առավելապես հատուկ է բաղաձայնների դրափոխությունը:

Միջին հայերենի սկզբնաղբյուրներում արձանագրվող դրափոխված բառաձևերը թեև հիմնականում երևան են բերում այն հիմնական դեպքերը, որոնք մեզ հայտնի են մեր ժամանակակից բարբառներից, բայց դրանք պատմության համար հետաքրքիր են ոչ միայն նրանով, որ այդ փոփոխությունների առաջին վկայություններն են, այլև նրանով, որ միջին հայերենը լինելով կենդանի խոսակցական լեզու, բացահայտում է այդ երևույթի կենսականությունը:

Այստեղ որոշ դրափոխված բառաձևեր ունեն բավական լայն տարածում և արձանագրվում են ավելի շատ սկզբնաղբյուրներում: Այդ հանգամանքը կարող է ենթադրել տալ, թե դրանք ավելի վաղ կատարված ձևափոխություններ էին, որ ունեն այդքան ընդհանրական բնույթ: Որոշ ձևեր, թեև վկայվում են սակավ օրինակներով (կապված սովյալ բառի գործածության ոլորտի սահմանափակության հետ), բայց, դատելով մեր ժամանակակից բարբառներում դրանց տարածվածության և գրական լեզուներում նրանց կիրառության փաստից, պետք է կարծել, որ այն ժամանակ էլ ունեին գործածության լայն ոլորտ:

Առանձին դրափոխված բառաձևեր ակնհայտորեն ունեն սովյալ վայրում, երբեմն նույնիսկ անհատական լեզվում կատարված փոփոխության բնույթ, բայց այս բոլորը, այնուամենայնիվ, հետաքրքիր են այնքանով, որ դրափոխության երևույթը բացահայտում են անհատականից մինչև ընդհանուրը: Այժմ կոնկրետ օրինակներ.

ա) Դատարկ բառի ր հնչյունը տ-ից առաջ ընկնելով՝ առաջացրել է դարտակ դրափոխված ձևը. սրանից ունենք նաև դատարկել > դարտակել, դարտկել, դարտակնալ: Սրանք լայն տարածում ունեն և արձանագրվում են տարբեր գրավոր հուշարձաններում. *այսպես, օրինակ՝ «...դարտակ նա չէ ուփկի ընկեր»* (Ներս. Շնորհ. ԲՁ 567), *«...Նու փորն փարփուտ և դարտակ երևնայ»* (Մխ. Հեր. 38ա), *«...դարտկէ ճրագուն գիճութին»* (ն. տ. 45ա), *«...եւ յայլ ամենէն դարտակ եյնէ»* (Անս. 55), *«...դարտակ գրաստէն կէս սպ առնուին»* (Դհվ. I, Անի, 22, 1276 թ.), *«...յերբ երակքն դարտկիւն, նայ քարշեն ի լերդէն, և յերբ լերդն դարտկիւն, նայ քարշէ ի յայն երակացն, որ անուանին մասարիխայ, և յերբ մասարիխան դարտակնայ, նայ քարշէ ի բարակ աղեացն, և յերբ բարակ աղիքն դարտկի, նայ քարշէ ի ստամոքացն, և յերբ ստամոքն դարտրկի...»* (Գրիգ. 129), *«...դարտակ ստամոքն»* (ն. տ. 54), *«Այն ճեղն, որ զպտուղն ունի, քան զդարտակն ի ցած կու կենայ»* (Հով. Երզնկ. 154) և այլն:

բ) Կամուրջ բառում ր-ի դրափոխությամբ ստացվել է կարմուրջ (չ-ից առաջ ն-ի հավելմամբ) բառաձևը. օրինակներ՝ *«...ինչուրվի կարմուրջն»* (Դհվ. I, Անի, 63, 1215 թ.), *«...Կարմուրջն կապած ես ապիկի»* (Հով. Թլկ. 160), *«...Հաստատ ւ ամուր պահէ զկարմուրնն ... Թուրքաց հեծելն առաջ եկան, Զկարմուրնն առին ու կանգնեցան»* (ն. տ. 202) և այլն:

գ) Լուանալ բառում, այն բանից հետո, երբ ու-ն ա-ից առաջ հնչյունափոխվել էր վ-ի (լվանալ), միջին հայերենի որոշ տարբերակներում կատարվել է լվ>վլ դրափոխություն. օրինակ՝ «...հալալ վլանալ» (ԺԵ հճհ. I, 117, 1410 թ.), «...ի պաղ շուր վլացվի» (Ամիրդ. Ուս. բժշկ. խէ) և այլն:

դ) Միջին հայերենին հատուկ սպրկիկ, սպրկուկ բառերը առաջացել են սուրբ «մաքուր» բառից՝ ածանցմամբ ու դրափոխությունով: Նախ կազմվել է իկ ածանցով ձևը՝ սուրբ+իկ=սրպիկ, ինչպես և կա վկայված՝ «Դու ասա ընդ կինն, որ առնու լվացած սրպիկ և սպիտակ կտաւի և շալկէ» (Գրիգ. 167), ապա այդ ածանցավոր ձևին նորից ավելացել է իկ ածանցը, ինչպես՝ «...թէ որ շոր թուզ շատ ուտէ և ընկոյզ, և մարմինն չլինի սրպիկի, նայ շատ ոջիւ և անիծ ընծայի» (Գրիգ. 39. տե՛ս նաև 167-ի տողատակը): Սրպիկի ձևից էլ առաջացել է դրափոխված սպրկիկ, սպրկուկ. ինչպես՝ «...չիմանայ զիրքն սպրկիկ» (Գրիգ. 72B ձեռագիր), «...վայրի քօշ մի կայր քարձուկ Անուշահոտ ու սպրկուկ» (Ներս. Շնորհ. ԲԶ 570), «Բայց թէ այգին կամենաս լինի սպրկիկ գետին ու կակուղ՝ նա ի պակասն երեք մշակ պիտի որ փորէ» (Վստ. 9), «...կոխողքն (խաղողին) սպրկիկ պիտին յամենայն ախտից» (ն. տ. 85) և այլն:

ե) Միջին հայերենի վանց կապը առաջացել է գրաբարի վասն նախադրությունից՝ սն>նս դրափոխությամբ, ս>ց հնչյունափոխությամբ: Այսպես, օրինակ՝ «Եւ թէ վկայն լիճ չլինի, նա վանս այնոր շմնայ, յիշվէ վկայութիւնն ի վերայ լճին» (Անս. 29), բայց ավելի հաճախակի են ս>ց փոփոխությամբ ձևվերը (նույնիսկ նույն աղբյուրում), ինչպես՝ «Բայց վանց այնոր, որ անհամանք է ելել ճորտն, նա թող հայնց այնէ, որ այս փէ աւուրս ընդ նեքսէ դառնայ» (Անս. 13), «Եւ այս վանց այնոր է, որ տղա է լել ի մէջն» (ն. տ. 37), «Եւ երդնու ի խաշն և յաւետարանն՝ որ սուտ են նոքա, զինչ ասցին ու վկայեցին վանց իր, և երթայ յիր բանն» (ն. տ. 29), «...չինել էին զիրէնց տունն վանց իրենց բայժուն» (Պար. Կոստանդ. 1271 թ. դաշնագ.), «Եւ վանց վաճակներոյն» (ն. տ.), «Սիրտս է ի սուզ մտեալ վանց քո կարօտուն» (Խաչ. Կեչ. 136), «Սուրբ Եփրեմ զայն այնչափ ճառերն, որ ասաց, Վանց սիրոյն Աստուծոյ ըզմեզ խրատէր» (Ֆր. 247. Ֆրիկի Դիվանում վասն ձևի դիմաց ձեռագրերը հաճախ դնում են վանց) և այլն:

Այստեղ դնում ենք նաև այլ դրափոխված բառեր իրենց վկայություններով:

զ) Խստոր>սխտոր.—«...տաք կերակուրն, որ է հին ընկուզն, և սոխն, սխտորն և պղպեղն» (Գրիգ. 52, 66 և այլն), «...սխտոր և սոխ և տաք դեղեր լինի ի մէջն» (Ամիրդ. Ուս. բժշկ. ծգ) և այլն:

է) Փետուր>թեպուր, թեփուր.—«Մէկիկ հաւուկ մի կայր փոքրիկ, ւ ի գլուխն ունէր սեւուկ թեպրիկ» (Ներս. Շնորհ. ԲԶ 560), «Թեպրիկ կտուր թեփուրին» (Հով. Թլկ. 212) և այլն:

ը) Արմաւ>ամբաւ>ամբրաւ (դրափոխությունից հետո մե հնչյունների միջև բ-ի հավելմամբ).—«...ոռայ, մեղր, ամբրաւ, սև շամիչ» (Գրիգ. 35), «...ամբրաւ և գինի և թուզ» (Ամիրդ. Ուս. բժշկ. կգ.) նաև մ-ի անկմամբ՝ ապրաւ՝ «...նուռն այլ եբաց հազար ակոսայն, Ապրաւն ի ծառն կախեցաւ» (Հով. Թլկ. 167) և այլն:

թ) Վարհամ>Վարհամ.—«Ես արթապակ Վարհամ ... հրամանաւ արթապակ Վարհամա» (Դհվ. I, Անի, 44, 1342 թ.), «Ես Դուդա, մայր Վարհամա եւ

Քրդին» (ԿՂ Սան. 132, 1240 թ.), «...ի վարհամա որդեացն գնեցի» (ԿՂ  
Հաղբ. 174, 1220 թ.) և այլն:

ժ) Բանալի>բալնիֆ.—«...զգուռն փակեցին և զբալնիֆն առին» (ԺԴ հճհ.  
275, 1335 թ., Կիլիկիա):

ժա) Պահլաունի>Պալհաունի.—«Ես Աբլխարիփ Հայոց մարզպան...  
յազգէ Պալհաունի» (ԿՂ Սան. 97, ԺԱ դ. Ա կես), «...Ես Շապուհիկս իշխանաց  
իշխան, որդի Գարբանիէլին, ի տոհմէ Պալհաունի» (ն. տ. 147, 1061 թ.).  
մինչդեռ Անիի արձանագրություններում նույն ժամանակներում՝ Պահլաունի,  
օրինակ՝ «...քրիստոսասէր մարզպանին Ապլղարիպա, որդո Գրիգորո Պահլա-  
ունո» (Դհվ. I, Անի, 48, 1036 թ.):

ժբ) Ապարանջան>առպնճան.—«...զիմ ոսկի առպնճանի զոնծէն տվաք՝  
զսբ Սիոնի տակի հողն վարդապետենց առաք» (Դհվ. III, վայոց ձոր, 56,  
1318 թ.):

ժգ) Արկղ>աղկր.—«...շինեա մեծ աղկրեբ ... ծեփեա զաղկրն ի ներ-  
քուստ և դրուց» (Վստկ. 132):

Հնչյունների դրափոխություն արձանագրվում է նաև փոխառյալ բառե-  
րում. այսպես.

ժդ) Նաղշ(ած)>նաշխած.—«...նաշխած դեղերով» (Զեռ. 8029, 232ա,  
1376 թ.):

ժե) Դաղմա // տաղմա>դամղա // տամղա.—«Ես Մխիթար, որդի Գրիգոր  
հուցիսին, որ Անոյ տաղմաճի էի... թողի զջաղացնոյս ամենոյ զդամղէն»  
(Դհվ. I, Անի, 28, XIV դ. սկիզբը). տամղա ձևով երեք անգամ Անիի 1280 թ.  
մի արձանագրության մեջ (էջ 23) և այլն:

ժզ) Անդովլաթ>անդօլվաթ.—«Հասան Ալին՝ անդօլվաթն այն, եկեղեցի  
շինեաց զՄակուայն» (ԺԵ հճհ. II, 334, 1472 թ.):

ժէ) Բուհրան (արբ. buhrān)>բուրհան.—«...և զիւր բուրհանն՝ ի նոյն  
արն առնէ, և արձակի ի քսանուշորս պահն» (Մխ. Հեր. 10բ), մինչդեռ Գրի-  
գորիսի մոտ առանց դրափոխության՝ «...զի ցան, որ լինի յամէն գլուխն, նաչ  
կամ լինի բուհրանէ, կամ լինի հետ տաբութեանն» (էջ 51):

Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, դրափոխության են-  
թարկվում են առավելապես ձայնորդ հնչյունները:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ի

Միջին դարերում համալրված մեսրոպյան այբուբենը և նրա միավորների  
ենչյունական արժեքը միջին հայերենում

ա=a  
բ=bh, b, p, ph  
գ=gh, g, k, kh  
դ=dh, d, t, th  
ե=e, ye, ie  
զ=z  
է=e  
ը=ə  
թ=th  
ժ=ž  
ի=i  
լ=l  
խ=x  
ժ=c, j  
կ=k, g  
հ=h  
ձ=jh, j, c, ç  
ղ=γ

ճ=č, j  
մ=m  
յ=y, h\*  
ն=n  
շ=š  
ո=o, vo, uo  
չ=č  
պ=p, b  
ջ=jh, j, č, ç  
ռ=r  
ս=s  
վ=v  
տ=t, d  
ր=r  
ց=ç  
ւ=v  
փ=ph  
ք=kh  
և=ev, yev  
օ=o  
ֆ=f

\* Բառասկզբի դիրքում:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ II

Հին հայերենի հնչյունների փոփոխությունները միջին հայերենում<sup>1</sup>

Ձայնավորների փոփոխությունները

$\omega > \emptyset, \emptyset$   
 $\epsilon > ye, ie, i$   
 $\xi > e, a$

$\rho > e, \emptyset, \emptyset$   
 $\sigma > vo, uo, u, \emptyset$   
 $\nu > \emptyset, o, v, \emptyset$

Երկարբառների և եռարբառների փոփոխությունները

$\omega > o, u$   
 $\rho > u(\bar{u}), i$   
 $\epsilon \omega > e, a$   
 $\sigma > u(\bar{u})$

$\rho \omega > e$   
 $\sigma \rho > a, e (\emptyset)$   
 $\epsilon \omega > ev, yo$   
 $\rho \omega > e$

$\epsilon \sigma > e$

Բաղաձայնների փոփոխությունները

$\rho > bh, p, ph$   
 $\tau > gh, g, kh$   
 $\eta > dh, t, th$   
 $\delta > |h, c, \zeta$   
 $\chi > |h, \check{c}, \check{\zeta}$

$\mu > b$   
 $\lambda > g$   
 $\sigma > d$   
 $\delta > |$   
 $\epsilon > |$

$\eta > \gamma (> x)$   
 $\iota > v$   
 $l > h$   
 $\varsigma > (x)$

<sup>1</sup> Բերվում են միայն այն հնչյունները, որոնք իրենց հին արժեքներից բացի, միջին հայերենի առանձին տարբերակներում ենթարկվել են օրինաչափ փոփոխությունների:

Մ. Ն. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Բ Ա Ռ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն



## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Միջին հայերենի բառապաշարի քննութեամբ նպատակ ունենք ներկայացնելու հայոց լեզվի զարգացման նույն փուլին բնորոշ բառային իրողութիւնները, հին շրջանի համեմատութեամբ բառապաշարային տարբերութիւններն ու փոփոխութիւնները՝ իրենց ներքին և արտաքին պայմանավորվածութեամբ:

Բառապաշարի քննութեամբ սկզբնապես զբաղվել են ականավոր գիտնականներ Ա. Այտրնյանը, Ղ. Հովնանյանը, որոնք մի շարք արժեքավոր դիտողութիւններ են արել:

«Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատութեան մեջ Ա. Այտրնյանը ուշադրութիւն է նվիրել այն հարցին, թե դասական մատենագիրներից հետո ընկած ժամանակաշրջանում հայերենի բառապաշարի մեջ ինչպիսի փոփոխութիւններ են տեղի ունեցել և երբ են սկսվել դրանք: Նա նկատել է, որ արդեն IX—X դարերի գրական հուշարձաններում երևան են եկել այնպիսի բառեր (փոխառյալ, նորակազմ, իմաստափոխված), որոնք բնորոշ են եղել լեզվի զարգացման միջին շրջանին: Այտրնյանը բերում է այսպիսի օրինակներ՝ համիմաղ «դատախազ», խոստակդար «որդիներ, զավակներ, հաջորդներ», սեռ, բնասեռ կամ բնասար, խոռ, խուղ, մեպակ «հրամանագիր», շար «հսրկ», բեկար «տուրք», մատակ «ջուր հանելու տեղ», սեւերես, շնորհատօր, արեւատուփիւն «երկար կյանք», վաղն, հայրեւատէր «կալվածատեր», ինչ «մինչև», ջրթափ «ջրվեժ», ձեռնատօր «արվեստատօր» և այլն<sup>1</sup>:

Փոխառյալ բառերի շուրջ կարևոր դիտողութիւններ ունի Ղևոնդ Հովնանյանը: «Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ» մեծարժեք աշխատութեան մեջ նա բերել է տարբեր լեզուներից կիլիկյան հայերենին անցած մի շարք բառեր, քննել դրանց ներթափանցման պատճառները, որոշել արժեքն ու դերը: Ղևոնդ Հովնանյանը ճիշտ կերպով նշել է, թե օտար բառերի շափազանց հաճախութիւնը միջին հայերեն գրականութեան մեջ անխուսափելի հետևանք է ժամանակի որոշ հանգամանքների. «Բանասիրական տեսակիտէ նայելով՝ մեծապէս անհաճոյ է շափազանց յաճախութիւն օտար բառից ի սոյն գրութիւնս, եւ վերիվերոյ հայեցմամբ՝ ճաշակի պակասութեան կամ նորասիրութեան և եթ արդիւնք կը կարծուի: Բայց իրն ամէն պարագայիւքն որ նկատուի, կը տեսնուի թէ այնպէս չէ. այլ բնական հետևութիւն է քաղաքական և ուսումնական վիճակի ազդին և հանգամանաց ժամանակին: Այսմ դիրքաւ կը համոզի ամենայն ոք՝ երբ միտ ղնէ թէ սահմանակցութիւն այլալեզու ժողո-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Այտրնեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 142:

վրդոց, քաղաքական յարաբերութիւն օտար անգաջ հետ, վերին իշխանութիւն օտարազգի տէրութեան, ինչպիսի մեծ ազդեցութիւն կ'ունենա ազգի մի լեզուին վրայ, և թէ դարական տևողութիւն այս հանգամանաց՝ որչափ օտարամտութեան պատճառ կու տայ»<sup>2</sup>: Նման հանգամանքներում հաճախ լեզվից լեզու անցնում են այնպիսի բառեր, որոնք ավելորդ են, որոնց հաստատուն համարժեքները առկա են փոխառու լեզվում, բայց երբեմն մղվում են ետին պլան: Ղ. Հովնանյանը բերում է այս կարգի փոխառութիւններ ֆրանսերենից՝ տըֆընդել (հյ. արգելու, արգիլել), ջաստել (պատժել), մարիաճ (ամուսնութիւն), լէ (թագաւոր), տուպլ (կրկին), տպլել (կրկնել): հունարենից՝ տիաթիկ (կտակ), նոմոս (օրէնք), նոմիկոս (օրէնսգէտ), լաղարիաս (հաշիւ): արաբերենից՝ խըսմ (հակառակորդ), ըռըշֆաթ (կաշառ), հարմել (անիրաւել), շարէկ (քառորդ), ֆուլան (այսինչ)<sup>3</sup>:

Միջին հայերենի բառապաշարով զբաղվել է բանասեր Մկրտիչ Պոտուրյանը: Իր աշխատասիրութեամբ լույս տեսած Կ. Երզնկացու տաղերի գրքույկին (հրտ. Վենետիկ, 1905 թ.) նա կցել է մի բառարան, որտեղ բացատրել և ստուգաբանել է Երզնկացու գործածած փոխառյալ և բարբառային բազմաթիվ բառեր: Այսպես՝

Պարսկերեն. ազար «վիշտ, նեղութիւն, վշտացած», անդիշայ «միտք, մտատանջութիւն», բահար «գարուն», բէխապար «անտեղյակ», բէշըմար «անթիվ, անհաշիվ», բէսիֆաթ «տգեղ», բիմար «հիվանդ», գանգալ «կատակ», գունահըար «մեղավոր», հար «սիրելի», զահր «թուլն», զառ «ոսկի», զերայ «որովհետև», զէրուզապար «վարուվեր», շահ «ջրհոր», սազ «նվագարան», սարխօշ «գինով», փոլատ «պողպատ», բուշատ «ուրախութիւն»:

Արաբերեն. ալանի «հայտնի», բասար «խելք, բանականութիւն», բէտար «զվարթ», դովլաթ «ունեցվածք, կարողութիւն», զանախ «կեղտոտ», թատպիր «միջոց, հնար», թուրուշ «կույր, տխուր», խայալ «ցնորք», հաճաթ «գործիք, պիտույք», հարիֆ «ընկեր», դաֆիլ «անզգուշ», դուսա «վիշտ», ջամիյաթ «բազմութիւն», ջար «բռնութիւն», ջաֆա «տանջանք, զրկանք», ջումլա «ժողով», ջօհարի «գոհարավաճառ», սաւատ «սևութիւն» (արբ. servat), սէքին «պարկեշտ», քիպր «մեծութիւն», ֆէլ «համայք», ֆրիաթ «բողոք»:

Բարբառային. ալինատ «որոգայթ», աղետալ «խղճալ», ասուն «շատախոս» (գրբ. իմաստն է՝ բանական), գահել «մտրակել», դրուրդ առնուլ «թունդ ելնել», զատիլ «հեռանալ, բաժանվել», զարնել «խփել, կանգնեցնել, կառուցել, շինել», ըղորդ «ճշմարիտ», զպնահար «ամոթահար», շինել (զբան) «զրել, շարագրել» և այլն<sup>4</sup>:

Միջին հայերենի բառապաշարի հավաքման և գիտական ուսումնասիրութեան գործում անգնահատելի վաստակ ունի բազմաշնորհ հայագետ Նորայր Բյուզանդացին, որը, ցավոք, դեռևս իր արժանի գնահատութիւնը չի գտել հայ լեզվաբանութեան պատմութեան մեջ: Օտար երկնքի տակ, Ստոկհոլմում, հարազատ մարդկանցից հեռու, տնտեսական և հոգեկան ծանր, նվաստացուցիչ պայմաններում նա ձեռնամուխ է եղել հայագիտական կարևորագույն խնդիրների լուծման՝ ստեղծելով բազմաթիվ մեծարժեք գործեր: Մահից հետո նրա

<sup>2</sup> Ղ. Հովնանեան, Հետազօտութիւնք նախնեաց ոսմկօրէնին վրայ, Վիեննա, 1897, էջ 266:

<sup>3</sup> Անդ, էջ 271:

<sup>4</sup> Հմմտ. Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Վենետիկ, 1905, էջ 42-ից:

ձեռագրերը անխնամ թողնվել են նկուղում, և մի մասը հեղեղի ճարակ է դարձել: Որոշ ձեռագրեր, բախտի բերումով միայն, փրկվել են, հանձնվել Փարիզի Կյուլպենկյան գրապահոցին, որտեղից մի քանիսի մանրաժապավենները ուղարկվել են հայրենի Մատենադարանին: Մանրաժապավենների մեջ է, ի թիվս շատ արժեքավոր ձեռագրերի, միջին հայերենի ընդարձակ բառարանը՝ «Բառագիրք ստորին հայերենի» (1884—1894 թթ.), որի միայն հինգ հատր- ները կան (Ա.-ից Պ տառեր): Այս բառարանը, կարծում ենք, ավարտված է եղել և լրիվ. փաստն այն է, որ Նորայր Բյուզանդացին բառահոգվածներում հաճախ հղումներ է անում Զ-ով, Ս-ով, Ք-ով սկսվող բառերին, այնինչ Պ տա- ուց հետո բառարանն ընդհատվում է: Բառարանի վերջին հատորները, Զ-ից Գ տառերի ընդգրկմամբ, անտարակույս, կորել են, թերևս հեղեղի ժամանակ:

Բառարանը բացատրական է: Կան նաև ստուգաբանական վերլուծություն- ներ: Այստեղ ամփոփված են գրաբարին անծանոթ արմատական, նորակազմ, հին գրականությունում ավանդված, բայց իմաստափոխված, նոր շրջանում փո- խառնված բառերը, որոնք ներկայացված են բնորոշ գրական օրինակներով. յուրաքանչյուր իմաստային նրբերանգն արտահայտելու համար բերված են համապատասխան նմուշներ:

Բառարանի արժեքը մեծ է ոչ միայն հեղինակի կատարած վիթխարի աշ- խատանքի շնորհիվ, այլև Վենետիկի, Վիեննայի, Փարիզի հազվագյուտ ձե- ռագրական գանձերի օգտագործմամբ, գանձեր, որոնցից շատերը հայրենի- քում չկան:

Միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության գծով մեծ երախտիք ունի գերմանացի նշանավոր հայագետ, կիրիկյան հայերենի հմուտ գիտակ Յոզեֆ Կարստը: Իր „Historische Grammatik des Kilikisch-Armenischen“ աշխատության մեջ (հրտ. Ստրասբուրգ, 1901 թ.) նա գիտականորեն բացա- տրել է միջին հայերենյան մի շարք բառերի ծագումը: Բացի այդ, կազմել է մի ընդարձակ ստուգաբանական բառարան՝ „Wörterbuch des Mittelarmeni- schen“,<sup>5</sup> ուր հավաքել է միջին հայերենի բնիկ և փոխառյալ բառերը, ենթար- կելով դրանք ծագումնաբանական բնութային: Բառարանում եղած ստուգաբա- նությունների մեծ մասը ճիշտ և ընդունելի է:

Ինչպես Յոզեֆ Կարստի, այնպես էլ Նորայր Բյուզանդացու հիշյալ բառա- րանները կարևոր ներդրում են միջին հայերենագիտության ասպարեզում, ուստի թե՛ մեկի, թե՛ մյուսի հրատարակության գործը անհետաձգելի խնդիր պիտի համարել:

Միջին հայերենյան բառերի ստուգաբանության բնագավառում իրենց նշա- նակալի դերն ունեն մեծանուն հայագետներ Հյուբշմանը<sup>6</sup>, Հրաչյա Աճառյանը<sup>7</sup>, Ստեփանոս Մալխասյանցը<sup>8</sup>: Մեր օրերում այս ուղղությամբ աշխատում է բա- նասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Բաբկեն Զուգասրվյանը, որը միջին հայերենում գործածական պարսկերեն, արաբերեն բառերի մի շարք ինքնուրույն ստուգաբանություններ ունի<sup>9</sup>:

<sup>5</sup> Ձեռագիր վիճակում պահվում է Մաշտոցի անվան պետական Մատենադարանում:

<sup>6</sup> Hübschmann, Die semitischen Lehnwörter im Altarmenischen, ZDMG, 1892, էջ 226—228: Hübschmann, Armenische Grammatik.

<sup>7</sup> Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, է (Հավելված):

<sup>8</sup> Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, II, III, IV:

<sup>9</sup> Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, Երևան, 1965, էջ 244—256 (բառարանը): Գր. Աղբամարցի, 1963 (բառարանը):

Այսպիսով, միջին հայերենի բառապաշարի հավաքման և ծագումնաբանական վերլուծության գծով հայագետների կողմից մեծ աշխատանք է կատարված, աշխատանք, որը հնարավորություն է ընձեռում դիմելու հետագա քայլերի:

Մեր խնդիրը միջին հայերենի բառապաշարի ընդհանուր նկարագրությունն է, բառաշերտերի քննությունը, բառակազմական, իմաստաբանական բնորոշ իրողությունների վերլուծությունը, պատմական, հասարակական ու կրթական այն հանգամանքների պարզաբանումը, որոնք նպաստել են բառապաշարի մեջ կատարված փոփոխություններին:

## ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՇԵՐՏԵՐԸ

Միջին գրական լեզվի դերը հայերենի բառապաշարի պատմության մեջ հստակորեն պատկերացնելու համար կարելի է նրա բառապաշարը տարրալուծել շերտերի՝ բոլոր բառերի ավանդման պատմական հաջորդականության.

- 1) գրաբարից ավանդված բառեր,
- 2) միջին հայերենով ավանդված բառեր:

Տվյալ բաժանմամբ պարզվում են մի կողմից բառապաշարային այն ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն գրաբարի և միջին հայերենի միջև, մյուս կողմից՝ այն նորությունները, որոնք բերում է միջին գրական լեզուն:

### I. ԳՐԱԲԱՐԻՑ ԱՎԱՆԴՎԱԾ ԲԱՌԵՐ

Լեզուն մնում է տվյալ լեզուն հենց նրանով, որ դարերի ընթացքում, որքան էլ փոփոխությունների ենթարկվի՝ քանակական կամ որակական, պահպանում է իր բառապաշարի հիմնական կորիզը, հնչյունական համակարգի, քերականական կառուցվածքի բազմաթիվ բնորոշ գծերը: Այսպես է և գրաբարից միջին հայերեն անցումը: Միջին հայերենը թեև նոր որակ է գրաբարի համատարածումը, բայց և այնպես հայերեն է՝ թե՛ բառապաշարով, թե՛ հնչյունական համակարգով ու քերականությամբ:

Միջին գրական լեզուն գրաբարից ժառանգել է նրա բառապաշարի ամենակենսունակ տարրերը, երկու ճանապարհով՝

1) Բնական, այսինքն՝ ումիկ և ուսյալ ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի միջոցով,

2) Արվեստական, այսինքն՝ գիտունների՝ գրաբարից ունեցած գրական ազդեցության շնորհիվ:

Բնական ճանապարհով միջին գրական լեզվին անցել են բնիկ և փոխառյալ այնպիսի բառեր, որոնց մեծ մասը ընդհանուր է հայերենի բոլոր դրսևորումների համար.

արեւ || արեգակ, լուսին, լուսնհար, լուսնոտ, լոյս (լուս, \*լիս), աստղ, ամպ, երկինք, կայծակ (կէծակ), կարկուտ, կարկտածեծ, ձիւն (ձուն, \*ձին), բուք, բքախեղդ, անձրեւ (անձրով), անձրեւաջուր, հեղեղ, գետ, գետամէջ, գետառ, գետատար, առու, աղբիւր (ախպուր), աղբրակ, ակ (<ակն), հուն, ալի(ք), անդունդ, հող, հողագործ, հողածին, հողեղէն, երկիր, երկրային, երկրասէր, հով, հովնալ (<հովանալ), սար, բլուր, լեռ (լեռն<լեառն), լեռնային, դաշտ, անտառ, անապատ և այլն:

Անտուած, սուրբ, սրբահոգի, սրբասէր, սրբազան, երդում(ն), ուխտ, եկեղեցի, խաչ, դրախտ, հրաշք, վանք, վանական, երէց (իրէց, իրից), միայնակեց (մինայկեց), քարոզ, քարոզել, ծոմ, պաս, զոհ, զոհատուն, կախարդ, դեւ, դիւահար, դժոխք, դերեզման, գերեզմանոց, սատանայ, գուշակ, անէծք, անիծել, միւտոն (մեոսն), ընծայ (ընծա), օրհնել, պաշտել, աղօթել և այլն:

աչ(ք), ականջ, ունկ(ն), ոունգ, բերան, լեզու, լինդ, քիմք, ատամ, երես, ճակատ, քունք, մօրու (<մօրուք), կոկորդ, ուս, թեւ, արմունկ (<արմուկն), ափ, աջ, աջիկ, մատ(ն), մատնիք (<մատանի), մատնեհար (<մատանեհար), մատնեհրել (<մատանեհարել), եղունգ(ն), թիկ(ն), սիրտ, լերդ (<լեարդ), կող, մէջք, ծգնկ, երանք // արանք, արգանդ, ոտ (ոտն, ոտք), ոտնհար (ոտնահար), ոտնկոխ, ոտնաման, ոտնաշափ, միս, մսակեր, ոսկոր, ոսկրածուծ, յօդ, մկան // մուկ(ն), գլուխ, ջիլ // ջիղ, երակ, մաշկ, մաշկել, արիւն (արուն, արոյն), քրտինք, թուք, արցունք (<արտասուք), միտ(ք), հոգի, հոգեկ (<հոգեակ) և այլն:

խիթ, խուլ (<խոյլ), խոց, վերք, կուր (կոյր), մահ, մահրար (<մահարար), դարման, ճար և այլն:

էրիկ (այրիկ), կին, կնիկ, հայր (հար, հէր), մայր (մար, մէր), հօրա // հօրու, մօրու, աղբայր (աղբար, աղբեր) // եղբայր (եղբեր), թոռ (<թոռն), քոյր (քուր, \*քիր), զաւակ, մանուկ, որդի, հարս(ն), հարսնացու, սկեսուր, սկեսրար (<սկեսրայր), տալ, քենի, փեսայ, փեսացու, ընտանի, ընտանիք, դերդաստան, որբ, ընկեր, ազգ, տղայ, հարազատ, հարեւան, դրացի, մամ, պապ, պառաւ, պոռնիկ, պոռնկորդի, տոհմ, արու, մարդ, օտար և այլն:

արօր, բահ, բիր, եղան, թիակ, լուծ, սամի, գութան, խոփ, մաճ, ուրագ, մանգաղ և այլն:

էգի (այգի), արտ, արօտ, արօտատեղ, պահէգ, պարտէգ, պարտիգպան, մարգ, ածու, աճել, բուսնիլ (<բուսանել), բրել, հերկել, վարել, պեղել, քաղել, դիզել, պտուղ, միրգ, բերք, կթել, կթոց, դալար, գդիշ (>գադիշ) և այլն:

բոյս, գարի, սիսեռ(ն), կաղին, հացի, թեղի, նոճի, թզենի, արմատ, ծառ, ծառուտ, բուն, ոստ, որթ, որթատունկ, կեղեւ, թուփ, տերեւ, ցողուն, խաղող, ծիրան, դեղձ, արմաւ, ազոխ, անանուխ, կանեփ, կանկար, համասպրամ, շահասպրամ, մանուշակ (մանիշակ, մանեմշակ), վարդ, շուշան, շաղգամ, պրդպեղ, սոխ, վարունգ, անիսոն, կիտրոն, ստեպղին, կաղամբ և այլն:

անասուն (անսուն), այծ (ած, էծ), գառ(ն), ուլ, ուլիկ, մաքի, ոչխար, որոճ, խաշինք, խոճկոր, խոզ, խոզրած (խոզրարծ), եզ(ն), կով, մոզի, ընջուղ (<ընջիւղ) «մեծ հորթ», մատակ, ցուլ, գոմէշ, քուտակ, ձի, ձիաւոր, ձիապան, երմակ (<երամակ), շուն, կատու, էշ, աւանակ, ջորի, ջորեպան, գրաստ, ուղտ, ուղտապան, մեղու, տզրուկ, ձուկ(ն), ձկնորս, փոկ, կէտ, կրիայ, կոկորդիլոս, տառեխ, հաւ, հաւձագ, թռչուն, սագ, բազէ (բազա), բադ, կաքաւ, կաշաղակ, սարեկ (<սարեակ), տատրակ, սիրամարգ, արծիւ, ծիծեռ (<ծիծառն), կոռնկ, ուրուր, ազուաւ, թիթեռ(ն), ճանճ, սարդ, տիգ, մրջին (մրճիմ), գորտ, մուկ(ն), մուշկ, առնէտ, կուղպ, խլուրդ, ոզնի, կուզ, մողէս, օձ, իծ, քարբ, վիշապ, կապիկ, եղնիկ, վագր, լուսան, վարազ, յովազ, արջ, գայլ (գալ, գէլ), բորենի, աղուէս, առիւծ (առուծ, առոյծ), փիղ և այլն:

բուտ, բտել, որոճալ, արածել, արօտ, արօտտեղ (<արօտատեղի), գոմ, փարախ, կու(կոյ), թրիք, հօտ, նախիր, նախրորդ, հովիւ, էգ, ստերջ, որձ և այլն:

կարթ, թակ (<թակն), ճախրակ (<ճախարակ), աղօրի, շաղաց (<չրա-  
ղաց), հերին (<հրուն, հրոյն), դարբին, թիթեղ, դերձակ, տուտ, տաշել, հի-  
նել, հալել, ծեփել և այլն:

գիր, մատեան, երգ, երգել, դպիր, դպրանոց, դպրատուն, վրձին, նկար,  
նկարել, ծաղկել, քանդակ, քանդակել, պատկեր, պատկերահան, աշկերտ  
(աշակերտ), վարժիլ (վարժվիլ), տոմար, կարկին (կարակին), կանոն, թմբուկ,  
նուագ, վին, տաւիղ, քնար, գուսան, մեղեգի, թեատրոն, առակ, առասպել և  
այլն:

գոյն (գուն), դեղին, ճերմակ, սեւ (<սեւ), սպիտակ (խսպիտակ), սպի-  
տրկել (<սպիտակել), կարմիր, շէկ, խարտեշ (խարտեաշ), գորշ, կապոյտ,  
կանաչ (կանանչ):

գանձ, գրաւ, գրաւկան (<գրաւական), աժել (<արժել), աժենալ (<ար-  
ժենալ), գին, գնել, տոկոս, վարձ, վճար, վճարել, վաճառք, վաճըռկան (<վա-  
ճառական), տոյժ, վնաս, համբրել (<համբել, համարել), հաւսար (<հաւա-  
սար) և այլն:

տուն, դուռ(ն), պատուհան (պատրհան), անկիւն, արին, որմ(ն), պատ,  
ցիւ, քիւ, գերան, դարպաս, կամար, կամարակապ (կամարկապ), բեմ (բեմբ),  
մատուռ, կամուրջ (կարմունջ), պարիսպ, պարսպել, տաճար և այլն:

անկողին, բարձ, վերմակ, սաւան, վարտիք, շապիկ, աստառ, բազպան,  
գրպան, զանկապան, սոնապան, բեհեզ, կերպաս, բամբակ, բուրդ, դիպակ,  
խոյր, փիլոն, սքեմ, մուճակ, քսակ, պսակ, գինդ, մանեկ (մանեակ), թագ,  
յազնիլ (<ագանեկ), օծնել (օծանել, օծել) և այլն:

կաթ(ն), դալ, կորկոտ, աղանձ, կեր, կերակուր, ալիւր (ալուր, ալոյր),  
խմոր, թան, մածուն, մեղր, շիր, շուր, կարագ, ճարպ, ապուխտ, խորտիկ, ճաշ,  
շաքար, պանիր (պանդիր), պաշար, պաքսիմատ, օշարակ, նկանակ, նշխար:

աման, կոնք, կուժ, պնակ, կաթսայ, կթղայ, թակոյկ, կողով, բաժակ,  
դաւաթ, դոյլ տրգալ (տգալ<տարգալ), հաւան, այրել (էրել), վառել, եռալ,  
եփել, լեսել (<լեսուլ), խանձել, լուանալ || լուալ || լուանիլ, խաշել (<խար-  
շել), քամել, քերել, մրուր, պղպջակ || պօղօճակ, վանդակ, տախտակ, պատ-  
րոյզ (պատրուք), ճրագ, մոմ, կրակ, բոց, հուր, տակառ և այլն:

մի || մին || մէկ, երկու, երեք (իրեք), չորս (չորք), հինգ, ...հարուր (հա-  
րիր, հարիւր), հազար, դանգ, դրամ, փող, դեկան (<դահեկան), առջի (առա-  
ջին), վերջի (յերջի, վերջին), մղոն, լիտր, ամբողջ, ամեն (<ամենայն), աւելի  
(ավլի, էվլի), երկար || երկան (երկէն, երկայն), շատ և այլն:

արծաթ, արծաթագործ, արճիճ, պղինձ, ոսկի, ոսկերիչ, ոսկեկար, ոսկե-  
նկար, ժանգ, ժանգապատ, ժանգիլ, ձիւթ, ձիւթել, կուպր, բիրեղ, ապակի  
(ապիկի), կնդրուկ, խոնկ, խնկաման, ռետին, ռետնային, սնգոյր, սպունգ,  
նաւթ, քար, վէմ, մարմար, յակինթ, դմրուխտ, աղամանդ:

ամ, տարի, դար, ժամ, ժամանակ, ամիս, ամառ(ն), գարուն, ձմեռ(ն),  
աշուն, օր, տիւ, առաւօտ, գիշեր, երեկոյ (իրիկուն), ցերեկ (ցորեկ), ուրբաթ,  
շաբաթ, կիրակի (կիրակէ), ըոպէ, տեղ (տեղի), մօտ, հեռի, մէջ, վրայ (վե-  
րայ), առջեւ (առաջեաւ) և այլն:

աւան, մարգ, շէն, ոստան, գեղ (գեօղ, գիւղ), ագարակ, սահման, ճան-  
պահ (ճանփայ, ճանապարհ) և այլն:

դատ, դատաստան, դատաւոր, իրաւունք, հասոյթք, պատիժ, պատժել,  
մահապարտ, մահրար (<մահարար), աքսոր, ապահարզան, հրաման (հա-

ման), հրամայել (համել), հաւերք (հրաւերք), հրաւիրել, վկայ, վկայել, վճիռ, օրէնք, ատեն (<ատեան), ատենապետ, ծառութիւն (ծառութէն, ծառայութիւն), պայման (պոման || պովն), պատճէն, պաշտպան, մուրհակ, բաժին, բաժնել (բաժանել):

արշաւ, աւար, ապուռ, ապուել, դրօշ, զինուոր, զօրք, թշնամի, գերի, գերել, պատերազմ, պատերազմել, վաշտ, գունդ, սպարապետ, իշխան, արքայ, արքայորդի, արքայադուստր, արքաներայր, թագաւոր (թագուոր), թագաւորել, ապստամբ, ապստամբել և այլն:

զէնք, զրահ, նիզակ, պարս, վահան, սաղաւարտ, տէգ, նետ և այլն:

անուն, անթուն, արդար, աղբատ, ասել, հաւատալ (աւտալ, հաւտալ), ատել, անկնիլ (ընկնիլ, անկանիլ), բերել, բոլոր, բութ, բարակ, բարկնալ (բարկանալ), խոր, խորնալ (խորանալ || խորվնալ), գալ, երթալ, գնալ, զբտնուլ || գտնել (գտանել), գործել, ժողվել (ժողովել), դադրել (դադարել), դառնալ, դնել, ելնուլ || ելնել (ելանել), թողուլ || թողնել, եղնիլ (եղնել) || ելնել (ըլնել, ըլլալ), այնել (անել, առնել), լինիլ (լնիլ || լինենալ || լնալ), զգալ, ընկնուլ (<ընկենուլ), թմբիլ, թռչել || թռնուլ, երեւնալ || երելիլ, ուննալ (ունենալ || ունիլ), լաւ, լուռ, լիրք, կեղծ, խածնել (խածանել), ծաղր, ծիծաղ, ծամել, ծնել, կատակ, կենդանի, կողմ(ն), հարսնիք, հանդերձ, զգեստ (սգեստ), հասնել (հասանել) || հասնուլ, հայել, նայել, հարկնել (հարկանել), հարցնել, (հարցանել), հեծնուլ, հին, հոտ, հում, ձրի, շոր, շորնալ (<շորանալ), ճանշել (ճանաշել), մանր, մեծ, մեղկ, մեղմ, մեռնիլ || մառնիլ, մնալ, մոլոր, մոռնալ (մոռանալ), մտնուլ || մտել || մտանել, մրսիլ (մսիլ), յարիլ, նստիլ, նոր, ողբ, ողբալ, դորկ (<ողորկ), ողջ, ոռնալ, ուտել, ուրանալ, պինդ, պլոկել, ջանալ, ջնջել, սիրել, սխալ, սուտ, ստանալ, տալ, տեսնուլ || տեսնել (տեսանել), ցելել (<ցելուլ), ցրել, սփռել, ցուցնել (ցուցանել), ցաթել (<ցայտել), փործել, փլնուլ (<փլանիլ), փոքր, փրփուր, քուն, օգուտ, անոյշ, աշխատել (աշխատիլ), ապսպարել (ապսպրել), արագ, արժան, արկնել (արկանել), արձակ, աւեր, բնակիլ || բնակվիլ, գովել, դժար (դժուար), դարտակ (<դատարկ), լի, զօրութիւն, զգոյշ, թշուառ, թռչակ, կերպ, հաճիլ || հաճենալ, հանդարտ, հզօր, հնար, ճարակ, յիշատակ, յիշել, մուրալ, նշան, նպաստ, շնորհ, շտապ, պացխուն (<պատասխան), պատիւ, պատուէր, պատրաստ, պարզ, պետք, սով, սուգ, վատ, շար, նենգ, նենգաւոր, վիճակ, վիշտ, վստահ, վտանգ, տանջել, վերնալ (վերանալ), փառք, փառաւոր, փտիլ, քանդել, քաշել (քարշել, քեշել), շալակ, օրինակ, գուբ, ծրար, փրկել և այլն:

այս (աս, էս), այդ (ատ, էտ), այն (ան, էն), այլ (ալ, էլ), սա, դա, նա, ես, դու, ինք (ինքն), մեք (մենք), եմ, դի, ինչ, զինչ, իր (իր, ուր, ոյր), թէ, մի, ոչ (չ), մէն, միթէ, նա «ահա», ով, ոք, մի (մ'), և (ու), ուր, ուրեմն, քան (քանձ, քանց):

անգամ, միշտ, յաւէտ, յանդիման, նման, պէս, վասն (վանց) և այլն:

\* \* \*

Ավանդական բառերի հետ հաճախ մրցման մեջ են մտնում միջին հայերենի բարբառներում և խոսակցական տարբերակներում զործածական նրանց բնիկ կամ փոխառյալ նույնանիշները, որով զրական լեզվում առաջ է գալիս նույնիմաստ բառերի կուտակում: Այսպես՝

ուղղել // ըղորդել.



Սմբ. Դատ. «Բուն յառաջ հրամայեալ է սուրբն Սահակ՝ որ յամէն տարի հայրապետքն ժողովք այնեն ի մայրաքաղաքն, եւ ուղղեն զհաւատոյ եւ զեկեղեցւոյն կարգած բաներն եւ հանեն զծուռն: Եւ եպիսկոպոսունքն զհետ այնոր ամէն մէկ ի յիր վիճակեալ քաղաքն եւ ի թեմն փնդոէ եւ ըզորդէ եւ փիրիսկոպոսերն յամէն ժամ ամէն մէկ զիր վիճակն» (ՂԶ, 225):

շարժել // ժածցընել.

Վրդ. Այգ. «Պիտէր ինձ հանց մարդ մի, որ գար զան դմակն ժածցընէր. որ ես տեսանէի, թէ ինչ կար ի ներքին: ...Բազում աւուրս մտայվարժեցաւ, թապտիր և հնար գտաւ և ասաց, թէ ո՛ւր գտնում մարդ մի, որ գայ զայս դմակս շարժէ. որ ես յիմանամ, թէ ի ներքին ինչ կայ» (ՀԱԳ, 348):

հարբեճալ // խումբել.

Սմբ. Դատ. «Յաղագս որ հարբեճան եւ խալապայ ու վնաս այնեն:—Հրամայէ օրէնքս որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատել, մէկ վասն արբեցութեանն, որ ինք մարդ էր, ու հանչաք խմեց՝ որ խումբեց ու զայն վնասն արար, եւ այլ ի հետ՝ վասն վնասուն զոր զործեց» (ՂԶ, 213):

բննել // անդիճել.

2. Երզն. «Ձայլոց մեղք դու մի՛ քրննեք,  
զբոյն յերակ մըտօքդ անդիճէ» (ՀԵ, 145):

հայիլ // մտիկ անել.

2. Երզն. «Խնձոր ձգեց՝ մըտիկ շարի,  
մէկ մ՝ այլ ձգեց՝ ցածցա՝ ւ առի» (ՀԵ, 164):  
«Աւաղ մեզ հայիլ պիտի յայն արեւն որ լոյս կու ծագէ»  
(անդ, 157):

շրջիլ // ի շուրջ գալ // ի ժուռ գալ.

Ն. Շնորհ. «Յամէն շրջի ինքն ի քարեր,  
Ունի ծախու մազէ քրճեր» (ԲԶ, 612):

2. Երզն. «Ի կեր՝ ւ ի խում ես հետ մեղաց, ի ժուռ կու գաս զօրն  
անդադար» (ՀԵ, 159):

«Վերի վաներացն ի շուրջ կուգայ,  
Ու խունկ ու մոմ կու խոստանայ» (անդ, 165):

4. Երզն. «Շուրջ գամ ու հարցանեմ զքեզ» (ԿԵ, 162):

«է՛ր դաֆիլ կաս յաշխարհիս՝ ւ անհոգ ի ժուռ գաս կամկար»  
(անդ, 194):

ապստամբել // մոտել.

Սմբ. Դատ. «Վասն որ թէ եպիսկոպոս մոտէ ի հայրապետէ: ...Զնոյն այնէ եպիսկոպոսն եկեղեցականի՝ որ ապստամբէ յիրմէ» (ՂԶ, 210):

լսել // մոել // մտիկ դնել.

Յրիկ. «Հանդէս ունիմ բան մի վիճի,  
Թէ դու լսես քո ծառայի» (ՀԱԳ, 1):

«Յորժամ որ ի յետ քակիս ու ձգես ի յաշքդ խոլոր...

Տաս ի վիզն՝ ւ ի վայր ձգես, չի մոտս զոչ ոք թազաւոր»

(անդ, 8):

4. Երզն. «Աղէկ մըտիկ դիւ ու ճանչէ (զբանս)» (ԿԵ, 195):

«Եւ դաֆիլ հանց հասանէ վերայ մարդուն՝ որ չկայ ճար,...

Ոչ եղբայր սիրուն մըռէ, ոչ սիրելի և կամ օտար» (անդ, 194):

«Զիմ գանգատս լքեսցէ՛ք, յիսնէ առէք բան մի խրատ»

(անդ, 184):

խօսիլ // գրուց(ն) տալ.

Կ. Երզն. «Բլբուլն ասէ յիս խօսելով,

թէ՛ դու վանց վո՛ւր ես խեւ եղել» (ԿԾ, 120);

«Մարդկան գառն երևի ի գրուցն տալ» (անդ, 207);

հարկանել (հարկենել) // զարենել (զարկենել) // ֆշտել.

Վրդ. Այգ. «Եւ բարկացաւ էրէցն եւ սկսաւ հարկանել զնա. Եւ ասէ ցերեցն. մի հարկանեալ զիս. թէ հանց կու հաւատաս, որ աւետարան է խօսք Քրիստոսի, ընդէ՛ր ոչ կատարեցեր, զոր կարդացեր» (ՀԱԳ, 341);

Սմբ. Դատ. «Եւ թէ յուսցնելն՝ վարդապետ զաշակերտ ֆշտէ ու մեռնի, նա նոյն սպաննող է» (ՍԳ, 26);

Հեթում, Պտմ. խր. «Եւ ի ժը արն մայիսոյն հաշիշի մի ֆշտեց սեր Աւտուարտին Ե դանկ զարկք» (ՄԺ, II, 76);

Կ. Երզն. «Ուներդ աղեղունք լարես՝

Գաղտուկ նետերով զարենս» (ԿԾ, 159);

վնաս // վզեան (վզեն) // գէն.

Սմբ. Դատ. «Բայց թէ ածող չկենայ դրած՝ լաւ փրթուցած լինայ ու այնէ վնաս, նա անսնոյն տէրն վճարէ զվզենն եւ զդարպսուն հնկակն» (ՂԶ, 223);

Գիրք վատ. «Այլ որք զկարասն ուզեն ստէպ բանալ եւ յամէն վնասէ պահել յառնուն՝ նա թող առնուն ծովու ջուր կամ մոխրջուր, եւ լուանան աղէկ զկարասն» (ՂԶ, 104): «Եւ ոչ թէ այս վզեանս միայն ի յամեցուցանելն է, այլ եւ ամենայն պատահարաց ներքեւ ի բաց է, կարկտին եւ այլոցն» (անդ):

Վրդ. Այգ. «Ի շահուն տեղն զեն բերես ՚ւ աշխարհի առակ լինիս»

(ՀԱԳ, 347):

վնասուար // վզենկարար.

Սմբ. Դատ. «Ձի թէ պառիկոս առանց դարպսու իշխէ հաշտիլ ընդ վնասուարն՝ նա գող է ու տուգանք պարտի» (ՂԶ, 223);

Գիրք վատ. «Որձ մեղուն բնաւ յարօտ չելանէ, ամէնն ի կոճակն հանգիստ կու կենան. եւ զինչ մարին կու գործէ՛ զայն կուտեն, եւ ամէնեւին վզենկարար են» (ՂԶ, 101):

սխալ (սղալ) // խալաք (խալատ, դալատ, դալաք).

Սմբ. Դատ. «Մեծ բան է բժշկութիւնն ի ստածումն մարդկան, եւ շատ սպանութեններ կու լինի ընդ խալատ... թէ կամաւ լինի սղալն եւ կամ վասն պղման, նա զէտ մահապարտ զինք սպանենն» (ՂԶ, 214);

շոգ // շոդ // տոք.

Գիրք վատ. «Եւ են ոմանք որ այլ անէկ առնեն. ծեծեն զչամիչն եւ ի մուտան խառնեն, եւ բաղարջիկս առնեն, եւ ի ներքս կոճակին դնեն, ձմեռն ցրտոյն եւ ամառն խիստ շոդոյն. զի ի ցրտոյն եւ ի տօթոյն վախէ եւ չելանէ ի դուրս մեղուն» (ՂԶ, 101):

Մխ. Հեր. «Ապա թէ դարձեալ այն ծառոյն տէրն պէտ առնէ նմա... ի խիստ ցրտոյ կ ի խիստ շոդոյ պահէ զծառն, լինի որ յանկարծ այն ծառն դարձեալ յիր բնական բնութիւն դառնայ» (ՄԶ, 37): «Որ ի ջրին շոգոյն կ ի տաքութէնէն մարմինն շոգանայ շոյտ կ քրտնի» (անդ, 133):

վատ // մէշում.

Մաղ. Աբ. «Իսկ Փնտուխտարն էր մօրուօք եւ ունէր մէշում ձի... Սղուրն իջեալ ի տաճիկ ձիոյն՝ ետ ի Փնտուխտարն, եւ ինքն ելաւ ի վատ ձին» (ՂԶ, 245):

հնարայգետ // յայար.

Վրդ. Այգ. «Կայր աղուէս մի խիստ յայար» (ՀԱԳ, 345): «Եւ էր նայ վնասակար շար եւ հնարայգէտ» (անդ):

ուծով // նորով (ջորով) // կահրայութեամբ.

Սմբ. Անս. «Եւ գայ մէկ մի այլ՝ առնու զինք ուծով և կահրայութեամբ, առանց դարպտուն, նա գայ զըրկածն ու դատըստընի ի դարպասն» (ՂԶ, 197):

Ն. Քուշ. «Երէկ ցորեկով բարով տանէին մէկ եար մի նորով.

ըզնա նորով է տարած կամ խաբած է զինք դրամով» (ՀԱԳ, 147):

ընդ որ (ընդոր, զոր) // յուր.

Ն. Քուշ. «Մոցիկս է ծոցիդ սովոր, ալ ընդ ո՞ր երթայ, մէկ ասա՛»

(ՀԱԳ, 136):

«Ատով խոցեցիր դու զիս, ես դարիպ եմ, երթամ ի ընդոր՝»

(անդ, 138):

«Այս աստնվորիս վերայ, դու մատնի, ես ակն ի վերայ.

Դոր որ պաղ աղբիւր մի կայ, դու կանաչ, ես ցօղն ի վերայ»

(անդ, 145):

«Իմ եար բարձրագնայ լուսին, յո՞ւր կ'երթաս գիշերդ անհուն»

(անդ, 141):

վասն (վանց) // համար.

Սմբ. Անս. «Եւ թէ այրն ու կինն տղայ ուննան, եւ զիրենց ինչքն կամ հայրենեստանն՝ վասն իրիք կարեաց ծախել լինան եւ մսխել... նա քանի հայրն ու մայրն կենդանի կենայ, նա որդիքն չկարեն բնաւ ինչ ազգ ջալունջ այնել յայն մսխածն» (ՂԶ, 193): «Եւ թէ տղայ կենայ տիկնոջն, նա պիտի որ ուննայ տիկինն զմէկայ կէսն զապրնացն վանց սողային» (անդ): «Եւ այս վանց այնոր է, որ տղայ է լել ի մէջն» (անդ, 194):

Կ. Երզն. «Ես վանց քո սիրոյդ համար

Խեւ եմ և եղեալ խումար» (ԿԵ, 159):

«Վասն իմ սրտիս սիրուն համար՝

Մէջ անգիտաց հաքր եմ Ենգել» (անդ, 122):

Զ. Թլկ. «Դու ստեղծեր զկինն ի կողէն

Վասն Ադամայ սիրոյն համար» (ՀԱԳ, 83):

«Սիրուն շղիմացաւ նախահայրն Ադամ.

Վանց սիրու ելաւ Եղեմ դրախտէն հան» (անդ, 89):

բնաւ // իսկի.

Սմբ. Դատ. «Հրամայէ օրէնքս որ վարդապետ բնաւ վարձ շառնու վասն գրոց, կամ այլ գիտութեան եկեղեցւոյ ուսմանց իսկի չէ պատե՛հ վարձ առնուլ եւ ապա ուսցնել» (ՂԶ, 216):

բժիշկ // հաքիմ (հէքիմ).

Մաղ. Աբ. «Զի գնացին անհաւատ ջհուտ մի բժիշկ գտան, եւ բերին առ Խուլն» (ՂԶ, 243): «Այլ իբրեւ գիտաց անօրէն Խուլն թէ այնչափ խեղճս գործեաց եւ ոչինչ օգտեցաւ, ...հրամայեաց բերել զջհուտ հէքիմն, եւ իւրեան առաջի ճեղքել զփորն եւ ընկենուլ շանց» (անդ):

Սմբ. Անս. «Եւ գայ բժիշկն տեսնու, եւ ասէ այն երզմամբն՝ որ «ցաւ ունի»» (ՂԶ, 194):

Վրդ. Այգ. «Ասաց. թող ուտեմ ես յիւրմէն. ինձ խիստ աղէկ է. զի մեր հաքիմներն ասացեր են, թէ այնպիսի դմակն ամենայն ցաւ, որ ի փորն և յաղիսն լինի... դեղն այս է» (ՀԱԳ, 347):

առողջանալ // յաջեճալ.

Վրդ. Այգ. «Ձջուրն առէք, որ խմէ, որ առողջանայ» (ՂԶ, 305):

Ախրապ. «Եւ զայն գրենք որ Գրիգոր Վահրամայ որդին իւրն արար եւ այնով յաջեցաւ» (ՂԶ, 415):

Կտակ // տիաթիկ // անդարձ.

Սմբ. Դատ. «Վասն տիաթիկերոյ հաստատուն լինելոյ:—Եթէ կամի ոք գիտել զհաստատուն կտակն, նա այս է» (ՂԶ, 218):

Արձգր. 1230 թ. Յախաց Քար. «Յանուն Աստուծոյ, ես Մարտիրոս զիմ Եղեգեաց հայրենի հողն ... ի Յախացքարի սուրբ Յովհաննէս տուի. իմ հայրենեաց անդարձ էր» (ՂԱՍԿ, 155):

Արձգր. 1218 թ. Անի. «Կաման Աստուծոյ եւ Շանուշս կենակից Խաչերեսին անդարձով Խաչերեսին շինեցի զբուրջս յիշատակ մեզ» (ՂԱՇ, 43):

օրէնք // անսիգ // ճումս.

Սմբ. Դատ. «Կու հրամայէ օրէնքս որ ձգեն զինք ի դուրք յեկեղեցոյն» (ՂԶ, 215): «Եւ թէպէտ ճամսով է զանդրանիկն կացուցանել յաթոռ ինքնակալութեան, բայց վասն օգտութեան աշխարհաց իրաւունք է, որ աղէկ տեսնու հայրն իր ամէն գաւառքն եւ գաւառապետացն տեսովն եւ ս. եկեղեցովն, որ յոր հաճին յորդոց թագաւորին... նա զայն կացուցանեն յաթոռ թագաւորութեան հօրն» (ՍԳ, 16):

Սմբ. Անս. «Եւ թէ այրիկն ուզենայ որ տիաթիկ այնէ, ...նա ունի անսիգովն համանք որ կարէ այնել, ապա ի վերայ իր բաժնին» (ՂԶ, 196):

հրաման—հրամայել (համան—համել) // հուրմ—հուրմ այնել.

Արտոնագիր Լեոն 5-րդ թագաւորի. «Ի թագաւորական բարձր հրամանաց. վաճառականքն բերին առ մեզ զայն համանքն՝ որ մեր ի Քրիստոս հանկուցեալ հայրն է պարգեւել իրենց. ու կու համենք քեզ որ զիրենք ի վրայ այն համանացն տաս պահել, որ մեր հայրն է պարգեւել իրենց» (ՂԶ, 261):

Վրդ. Այգ. «Ես եւ. կին ունիմ եւ յիմ հուրմն կոյ պահեմ զամէնն» (ՀԱԳ, 333):

«Եւ թագաւորն հուրմ արար՝ թէ Զինչ յիմ իշխանութիւնս այգի կայ, զամէնն քակեցէք» (ՂԶ, 283):

կապիկ // ապուզէն // մէմուն (մայմուն).

Վրդ. Այգ. «Կապիկէն բաժնուելէն ետեւ զվագրը տեսաւ» (ՂԶ, 303):

«Ասի յառակաց՝ թէ Ապուզէն արար թագաւորութիւն վաթսուն տարի» (անդ, 305): «Եւ ապուզէն հաւատաց նմա վասն երախտեաց զոր արարեալ էր ընդ նմա. ասէ կրիայն. Գիտացիր, հղբայր իմ սիրելի կապիկ, զի կին իմ հիւանդ է, եւ ասացին բժիշկքն՝ թէ զկապիկի սիրտն եւ զերիկամունսն եփեցեն, ու զջուրն առէք որ խմէ, որ առողջանայ» (անդ): «Ի ճանապարհի մի վերայ ջրհոր մի կայր ցամաք, եւ ի յայն ջրհոր կայր մէմուն մի եւ վագր մի եւ օձ մի» (անդ, 280): «Ձգեաց պարան, եւ ելաւ մայմունն եւ յետ նորա վագրն եւ ապա օձն» (անդ):

շրթունք // պուռկ (պուռնկ).

Մկ. Նաղաշ. «Միշտ զպուռնկն ծումոէ,

Զմարդիկ կու ձգէ ի քարն ի վայր» (ՀԱԳ, 83):

«Շրթունք շող է լուսեղէն,

Պոնկնէդ ի վայր թափի ճուհար» (անդ, 82):

Ինչպես տեսնում ենք, միջին գրական լեզուն հին հայերենից ժառանգած

բազմաթիվ բառերի զուգադրում է նորանոր համարժեքներ՝ առանց նախորդներին դուրս մղելու գործածությունից: Ավանդական այդ բառերի՝ խոսակցական լեզվում կենդանի լինելու մասին վկայում են նրանցից շատերի հնչյունափոխված արտահայտությունները. համանք (<հրաման), համել (<հրամայել), սղալ (<սխալ), հարկնել (<հարկանել), վնասարար (<վնասարար), վանց (<վասն) և այլն:

Նույնանիշների այս տիպի զուգադրումները շարունակվում են միջին գրական լեզվի զարգացման ամբողջ ընթացքում՝ վերջ ի վերջո շահագելով բառային համարժեքների կիրառման հաստատուն նորմավորման: Սա ամենից առաջ արդյունք է ժամանակի հասարակական և քաղաքական հանգամանքների, որոնք գրական լեզվի մշակման պրոցեսի միասնականացման համար բարեպատեճ շէին:

#### ԳՐԱԲԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Միջին գրական լեզուն, իհարկե, գրաբարից չի ժառանգել նրա ամբողջ բառապաշարը. բավական թվով բառեր ու ոճեր կա՛մ իսպառ դուրս են մղվել գործածությունից, կա՛մ կիրառվում են հին գրական լեզվի ազդեցությամբ: Միջին գրականում անգործածական են գրաբարյան այնպիսի բառեր ու ոճեր, ինչպես՝ անդրէն, ո՞, զի՞, յո՞ «ուր», է՞ր աղագաւ, յոր սակս, ի հէճուկս, դուզնաքեայ, փութանակի, վաղվաղակի, ձրձիտ «հափշտակող», շաղիղ «լեռ», երախան «սեղան», բազմական «սեղան նստող», ելուչ «արգելք», աշխարան «սգատեղի», աշխարել «սգալ», շոշել «նեղվել», շամբշել «մոլեգնել», ցականել «կարիք զգալ», նքողել «ցամաքել», գագաշել «ցնդաբանել», դլալ «գաղարել», դալակել «ճարել», մարթել «կարողանալ», կեալ «ապրել», կալ յակաստանի «ապահով լինել», գոգել «ասել», ամալ «լցնել», տիք «տարիք», նու «հարս», ակն ի խոնարհ «համեստ», առ ականէ «երեսանց», ածել զմիմեամբք «ընտանեցնել», ի վերայ հասանել «հասկանալ», ի բերանս լինել «պապանձվել», գան ըմպել «ծեծ ուտել», եղջիւր ածել «գոռոզանալ», ելանել ընդ սուր «խնքնասպան լինել», ի թիւ արկանել «հաշվել», լու առնել «իմացնել», լու ի լու «լսելով», ընդ խաղ արկանել «կատակի վերածել», կական բառնալ «գոռոռալ», հարկանել զանձն «տրտմել», ընդ ոտն հարկանել «ոտքի տակ առնել», ընդ մտաւ ածել «միտքը դնել», ի մտաց անկանել «խելագրկվել», յանդ ելանել «լրանալ, հասնել», յանգ հանել «կատարել, լրացնել, հասցնել», ի հնարս մտանել «հնար փնտրել» և այլն:

Այս բառերի փոխարեն միջին գրականում գործածվում են ա՛յլ համարժեքներ՝ թե՛ հին հայերենից պահպանվող, թե՛ միջին հայերենյան. այսպես՝

անդրէն → այլվայր (այլվի, այլվայ), կրկիճ, նորու, ի նորու, նորէն, դարձեալ, տուպլ, ի նոյն պահն, ի նոյն պահուն, մէկ հեաի, ի հօն, հունկայ (հոնկայ, հօնկա)

ո՞ → ո՛վ

զի՞ → է՛ր (յէ՛ր), ընդէ՛ր

է՞ր աղագաւ → է՛ր (յէ՛ր)

է՞ր սակս → է՛ր (յէ՛ր)

ի հէճուկս → նկրու (զգրու)

դուզնաքեայ → դուն, դուն ինչ, դոնի, ֆշիկ մի, պզտիկ մի, մթխալ մի, ննու  
մի

վաղվաղակի → շոյտ, շուտով, շտապ, շտապով, կանուխ, թէգ, թէգով,  
փութով

ձրձիտ → աւան, աւագակ, թալանող (թալնող)

շաղիղ → նաշ, լէշ, դիակ

երախան → սեղան, խուն (խօն, խան)

աշխարի → սգալ, ողբալ, ֆիղան այնել

շոշել → նեղիլ (նեղվիլ), ի սիրտ ելնուլ (ելնել)

շամբշել → շնալ, պոռնկիլ

ցականել → սնկիլ

նքողել → աղվընալ

գագաշել → խեւնալ, ընդ այլ խօսիլ, ընդալ ասել

դլալ → դադարիլ (դադրիլ)

դալակել → նարեյլ, նար այնել, թետպրել

կեալ → ապրել

ամալ → լցնել, լնուլ, վաթել

նու → հարս(ն)

ի վերայ հասանել → հասկնալ

ելանել ընդ սուր → անընգման լինիլ

ի թիւ արկանել → համբրել (համբել), հաշվել

լու առնել → իմացնել, իմաց այնել

յանգ ելանել → լմննալ, կատարիլ

յանգ հանել → լմնել, լմնցնել, ի հուն հանել և այլն:

Միջին գրական լեզվի զարգացման ամբողջ ընթացքում գրաբարը չէր գա-  
դարել գրական լեզու լինելուց, չէր կորցրել գրական լեզվի իր իրավունքները,  
և շատ հեղինակներ, մասնավորապես բուն Հայաստանում, իրենց երկերը  
գրում էին գրաբարով: Գրաբարը շարունակում էր մեծ հարգ վայելել իր մշակ-  
վածության, կատարյալ պերճության համար: Հատկապես բարձր ոճի ստեղ-  
ծագործությունները՝ հոգևոր տաղերը, բանաստեղծությունները, ճառերը և  
այլն, գրվում էին գրաբարով: Այստեղից էլ մե՛րթ ուժեղ, մե՛րթ ավելի թույլ  
արտահայտված այն ազդեցությունը, որ ուներ հին գրական լեզուն նոր մշակ-  
վող միջին հայերենի վրա:

Միջին գրական լեզվի բառապաշարում գրաբարի ազդեցությունն արտա-  
հայտվում էր հին գրական լեզվին հատուկ այնպիսի բառերի ու ոճերի օգտա-  
գործմամբ, որոնք խոսակցական միջին հայերենում արդեն գործածական  
չէին. այս դեպքում միջին հայերենին բնորոշ բառերը փոխարինվում էին զուտ  
գրաբարյան համարժեքներով.

հօս (հոս), այստեղ → աստ

հօն (հոն), ի հօն,

հունկայ, հօնկայ,

ունկայ, այնտեղ → անդ

յետ, ի յետ, հետ,

ի հետ, յետոյ, յետեւ → զկնի

ի զատ, հեռի → ի բաց

մօտ, ի մօտ, ի

խէշն, քովն, կուշտըն → առ, մերձ  
 հետ, ի հետ, խէշ → ընդ, հանդերձ  
 կողմ(ն), դէ՛հ (դեհ), դի → կոյս  
 շատ, անթիւ → բազում  
 լման, ի լման → լրիւ  
 թրջել, թացել, գիջցնել → թանալ  
 յղարկել, ուղարկել, ո-  
 ղորկել, ղրկել, որողկել,  
 ըղարկել → առաքել  
 ձայնել (ձէնել), կանչել → կոչել, աղաղակել  
 լսել, մոռել, մտիկ՝ դնել → անսալ  
 կարենալ → մարթել  
 գինել, սարել → վառել և այլն:

Գրաբարից եկող այս կարգի բառերը, որոնք միջին հայերենում լուրջ գրական կիրառութիւն ունեն և բնորոշ շին նրա խոսակցական տարբերակներին, կարելի է դիտել իբրև փոխառութիւններ հին գրական լեզվից:

#### ԻՄԱՍՏԱՓԻՆՈՒԹՅՈՒՆ

Գրաբարից ավանդված բազմաթիւ բառեր միջին գրական լեզվում հանդես են գալիս նոր իմաստներով:

Իմաստափոխութեան ուղիները տարբեր են, իսկ ակունքը հասկացութիւնների միջև եղած որևէ առնչութիւնն է:

Կան բառեր, որոնք նոր իմաստավորում են ստացել իրենց կիրառութեան ոլորտներն ընդարձակելու նախապարհով: Այսպես՝

Տնկել—գրբ. «հողի մեջ տունկ դնել», միջ. հյ., նակ՝ «բնադրել».

«Եւ երբ մեղու կամենաս տնկել, դու յամէն կոճակ թագ մի դիր, նա այն շամէն մեղուքն ժողով պահէ» (ՂՂ, 100):

Արածել—գրբ. «արածեցնել», միջ. հյ., նակ՝ «կերակրել» (կենդանուն).

«Եւ զձագն (մեղուի) այսպես արածեա. դիր ի տաշտ գինի եւ մեղր, խառնեա ընդ իրեար յառաջեանին, եւ լաւահոտ ճիւղք հանդերձ ծաղկովն ի վերայ շարեա» (ՂՂ, 100—101):

Գանել—գրբ. «ծեծել», միջ. հյ.՝ «վնասել, վիրավորել».

«Պատրաստ կաց ի բերելն, որ շքշտես և շգանես զտունկն» (Գիրք վստ., 65):

Գան—գրբ. «ծեծ, հարված», միջ. հյ.՝ «վնասվածք, վերք».

«Վասն պախրէի, որ կաղայ... լուա զկճղակսն տաք ջրով, և գիտ զգանն, և ապա հին տաք մարդոյ գողով լուա...» (Գիրք վստ., տե՛ս նՐԱՂ):

«Օգտէ այն գաներուն, որ ի յաղիքսն լինի» (Ամիրտ., տե՛ս նՐԱՂ):

Գազան—գրբ. «կատաղի», միջ. հյ., նակ՝ «սաստիկ, թունդ».

«Ի զգազան աղջուր դնես (զմատղաչ դդումն)» (Գիրք վստ., 173):

«Տե՛ս որ քացախն գազան շինի» (անդ, 188):

Քաջ—գրբ. «խիզախ, լավ», միջ. հյ., նակ՝ «թունդ».

«Առ գարեալիւր, եւ տուղտ եւ հազրի ունդ միաշաք, աղա մանտր, եւ սպիտակ եւ քաջ քացխով շաղղէ» (ՂՂ, 148):

Պարկեշտ—գրք. «Ժուժկալ, շափավոր, ողջախոհ, համեստ», միջ. հյ., նաև՝ «սակավ».

«Հետ այնոր կերակուր թեթև և պարկեշտ կերակրի, զերդ հաւու ձագ որ պարկեշտ համեմնով եփած լինի» (ՄՀ, 11):

«Եւ այլ կու լինի՝ որ ի վայր լուծանի մաղձն, և շատ քրտնի, զի պարկեշտ է նիւթն որ է մաղձն» (անդ, 91):

Ճարտար—գրք. «արվեստավոր, հնարագետ, հմուտ, վարպետ, քերթող», միջ. հյ., նաև՝ «լավ», «զգուշորեն, հաշոդությամբ».

«Եւ երբ ելանեն մեղուքն ի կոճակէն յարօտ եւ դատարկի կոճակն՝ դու ճարտար սրբէ զկոճակն ի ցեցէ եւ ի սարդիտտայնէ եւ յաղբէ եւ համէն աղտէ. եւ ճարտար դարձեալ ի տեղն դիր» (ՂՀ, 103):

«Եւ այն որ ճարտար շարժի՝ լաւ է, դու զայն ուն քաղեա» (Գիրք վատ. տե՛ս նԲՄՀ):

«Ճարտար հասուցանէ զթուզն» (Գիրք վատ., 38):

«Այս կեանքս գուբ է և խաւար,

Եւ ի ձեռէնդ լապտէր շունիս,

Դարան այլուն և կա թաքել,

Ճարտար քայլէ որ շրմբորնիս» (ՀԱԳ, 17):

Խշխան—գրք. «խշխան», միջ. հյ., նաև՝ «կարևոր, գլխավոր».

«Եւս առաւել պատճառ այս լինի՝ որպէս սուզն և հոգսն և մտավարժութիւն: ահն և երկիրն, ցանկութիւնն և զիպն... և որ սոցին նման են, որ շորացնեն և տաքացնեն զմարմինն զերդ յերկարօրեայ ջերմերն ... և տաք հիւանդութեներն, որ յիշխան յանդամունս լինին» (ՄՀ, 35):

«Որ շրմժայի այտոց ի յանդամն մին յիշխան անդամոցն» (անդ, 95):

Խոր—գրք. «խորունկ», «փոս, վիհ, անդունդ, խորք», միջ. հյ., նաև՝ «որովայն».

«Եւ ասաց, թէ ամէն անձս ծանդրացեալ է և խորս կոյ խոստէ ի դիմաց դմակին» (ՀԱԳ, 347):

Պեղծ (<պիղծ)—գրք. «անսուրբ, գարշ, զազիր, աղտեղի», միջ. հյ., նաև՝ «վատ», «վնաս».

«Եւ յորժամ հիւանդն ի քուն կենայ, եւ աչքն ի բաց կենայ, որ շէր իր սովորութիւն ի յառողջութեան ժամն հայնց լինի՝ նա եւ այս պեղծ նշան է» (ՂՀ, 145):

«Եւ դեռ կարէ լինել որ հայնց մեծ հարկ հանդիպի բժշկին՝ որ սղալէ ու չկարէ գալ առ հիւանդն, կամ որ վասն աղէկի դեղ տայ՝ նա պեղծ բերէ» (ՂՀ, 214):

Ժխոր (ժղոր)—գրք. «խառնածայն աղաղակ, աղմուկ, շփոթութիւն», միջ. հյ., նաև՝ «փոթորիկ, այեկոթութիւն», «խռով».

«Եւ եղեւ սաստիկ ժղոր ծովու և կտրեցան Խ բերդնաւ» (ՄԺ, II, 75):

«Է՛ր կու կենաս հետս ժխոր» (Ստ. Եւդ., 219, տե՛ս նԲՄՀ):

Դիր—գրք. «դիրք, կարգ», միջ. հյ., նաև՝ «անգամ».

«Յամէն տաճիկ քաղաք երկու հազար խոզ առաքեաց և հրամայեաց դնել տաճիկ խոզարածս, և յամէն շաբաթ դիր մի՝ սապոնով լուանալ, և զատ ի յարօտոյն՝ ամէն վաղ և երեկոյ տալ նուշ և ամպրաւ խոզիցն ուտելոյ» (Մաղ. Աբ., տե՛ս նԲՄՀ):

Տես—գրք. «տեսք, տեսիլք», «տեսութիւն», միջ. հյ., նաև՝ «կարծիք», «հավանութիւն».



«Եւ թէպէս ու նմանաւոր է որ զանդրանիկն կացուցանեն յաթոռ ինքնա-  
կալութեանն, բայց վասն օգտութեան աշխարհաց՝ իրաւունք է որ աղէկ տես-  
նու հայրն՝ իւր ամէն գաւառօքն եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկե-  
ղեցոյն տեսովն, որ յոր հաճին յորդիքն եւ գիտենան որ բարի բարութ լինի եւ  
աստուածասէր եւ երկիրով եւ ընտանիքն, նա դայն կացուցանեն յաթոռ ինք-  
նակալութեան հօրն, որ հովուէ գեղբարքն եւ զերկիրն» (ՂԶ, 220):

Բարակ—գրբ. «նուրբ», միջ հյ., նակ՝ «մանրամասն».

«Նա կու հրամայէ թէ աղէկ բարակ հետաքրքիր պիտի լինել, անընկճահն  
ազգեր են» (ՂԶ, 210):

Գնալ—գրբ. «հեռանալ, անցնել», միջ. հյ. նակ՝ «պակասել».

«Ծփեա, որ երեք լիւրն գնայ» (Գիրք վստ., 112):

Գոյանալ—գրբ. «գոյութիւն առնել», միջ. հյ., նակ՝ «աճել».

«Բայց թէ ի վատթար կաթէն ի լան փոխէ որ զտղայն՝ նա գոյանայ և գի-  
րանայ և ապրի նույնպէս և զտունկն» (Գիրք վստ., 60):

Չափել—գրբ. «չափել», միջ. հյ., նակ՝ «լցնել».

«Եւ յետ այնոր զեղկ ջուրն ի վերայ մարմնոյն շափէ, և ապա սաւանով  
ծածկէ, և ի դուրս գայ, և պառկելով հանգչի» (ՄԶ, 11):

Խանգրել (<խանգարել)—գրբ. «խանգարել, ավիրել», միջ. հյ. «հար-  
ձակման ենթարկել, ասպատակել».

«Թագաւորն Երուսաղեմի Պաղտին խանգրեց զՄարցիք, որ եղև Զ-երորդ  
խանգրումն ի տեղին, որ կոչի Մարծաֆար (ՄԺ, II, 57):

Ննեգել—գրբ. «դավել, խաբել, ստել, խարդախել, զրկել, անիրավել»,  
միջ. հյ., նակ՝ «վնասել». գրաբարում բառիս կիրառութիւնը սահմանափակ-  
վում է մարդկանց փոխհարաբերութիւններու շրջանակում, իսկ միջին հայե-  
րենում «վնասել» իմաստով դուրս է գալիս այդ շրջանակից. օր.

«Կու հրամայէ օրէնքս, որ երբ ձագերով բոյն գտնվի, ու զմայր ի վերայ...  
նա մի՛ ննեգել մօրն» (ՄԴ, 78):

Ջուգել—գրբ. «լծակցել, զուգավորել, զոգել, շաղկապել, հարմարել», միջ.  
հյ.՝ «սարքել, պատրաստել, դարձնել».

«Մըճիս զուգէ և մեծ ժողով»,

Բըլբուլի գան դասըս-դասով» (Կն, 122):

«Դու զհուրն ջուր զուգէ» (անդ, 198):

«Քաղեն դիս և տանին, շաքրով խառնեն այն հաքըմնին,

Ու զուգեն կուլպաշաքար, ես դեղ լինիմ սրտացաւին» (անդ, 144):

«Հրամանն յԱստուծոյ լինի, ես զուգեմ բզբեզ թագաւոր» (ՀԱԳ, 9):

«Եւ երբ ջուրն ի զուգել լինիս՝ այս նշանով զուգէ» (ՂԶ, 416):

«Եւ ապա զուգէ զայս, եւ դիր ի վերայ ճակատին» (անդ, 148):

Հալծիլ (<հալածիմ)—գրբ. հետապնդվել, վանվել, հեռացվել, մերժվել».

միջ. հյ., նակ՝ «չարչարվել» (աշխատանքի մեջ):

«Եւ ես ուժգին տենչմամբ և բազում աշխատութեամբ գտի զսա և հալծե-  
ցայ ի փոխելն» (Սմբ. Անս., Առաջբ.):

Պնդել—գրբ. «պնդացնել, հաստատել, ամրացնել, կապել, կաշկանդել,  
ճնշել, սեղմել», միջ. հյ., նակ՝ «բանտարկել», «պահանջել».

«Բայց ի վերայ ամենայնի դատաւորաց ստուգելոյն է դատաստանն,  
պնդելն և թողուլն» (ՄԴ, 78): Գործածված է «բանտարկել» իմաստով:

«Նա կու պնդէ օրէնքս՝ որ երբ ի վանքն իջնուն, նա թէ կին կենայ ի հետ՝

չելնէ ի շուրջ գայ ի վանքն, հապա հարկօք ի ծածուկ կենան» (ՂԶ, 221): Գործածված է «պահանջել» իմաստով:

Կեցցենել (<կեցուցանել)—գրբ. «կյանք տալ, ապրեցնել, փրկել, առողջացնել, պահել», միջ. հյ., նաև՝ «հաստատել, ապացուցել».

«Ու սար եմ որ կեցցենեմ անսիզովն երկրիս որ իրաւ կու ասեմ» (ՂԶ, 198):

Մեծրել (<մեծարել)—գրբ. «հարգել, պատվել, գովել, փառավորել», միջ. հյ., նաև՝ «թուլլատրել».

«Թող աղէկ գիտնան որ կու համբերեն, զի շկայ ամենկին հրամանք որ իրէց ի յայլ իրիցու ծխի մահ երթայ, քաւել թէ տեղոյն երէցն մեծրէ» (ՂԶ, 221):

Իրք—գրբ. «հրողութիւն», «գործ», միջ. հյ., նաև՝ «որևէ».

«Ապա թէ բժիշկն ասէ, որ շի ճանչել ի յինք իրք ցաւ եւ ոչ տկարութիւն, նա ապա բերեն յառաջ այն լիճ ճորտերն զխաշն եւ զաւետարանն, եւ ասեն ընդ ինք» (ՂԶ, 194):

«Ապա թէ տեսնուն որ ցաւ շուննայ, ու ասեն որ յիրենց ամէն ճանչելն իրք ցաւ շունի, նա դարպասն հրաւիրէ զինք երրորդ անգամ» (անդ):

Մի շարք բառերի իմաստափոխութիւնը պայմանավորված է նրանց փոխաբերական կիրառութեամբ.

Մորն—գրբ. «դալար ոստ», միջ. հյ., նաև՝ «դեռատի» (կին), «մանկամարդ գեղեցկուհի».

«Մըտրուպ, դու սազէ զշաշթայն,

Որ մորնն խաղայ մոյտան.

Ա՛յ, մորն ու բարակ ՚ւ երկայն,

Քո տեսն ի լուսին նըման» (ԿԵ, 156):

«Եկին ու խապար բերին, թէ սիրած մորնն ըզքեզ մոռացաւ» (ՆՐԱԶ):

«Հանց գեղեցիկ մորն ու շիտակ

Պատկեր գեղով առ յիս հասաւ» (ԿԵ, 163):

Ն. Քուչակը բերում է մորն բառի այնպիսի կիրառութիւն, որտեղ փոխաբերութեան եզրը հստակորեն երևում է, բառը արտահայտում է նաև իր սկզբնական իմաստը.

«Պաղշայ մի տնկեր եմ ես, թէ ինչ աղէկ մորննր կայ ի ներս.

Մնուցի ու ի հաս բերի, խլեցին զայն, կուլամ ես» (ՀԱԳ, 136):

Աւաղ—գրբ. «խեղճութիւն», միջ. հյ., նաև՝ «նիհար».

«Եւ գէր մարդոյ երակն վատուծ լինի, և աւաղ մարդոյն՝ ուժով» (ՂԶ, 144):

Տուլ—գրբ. «ցուլ», միջ. հյ., նաև՝ «տարփածու, սիրեկան».

«Վասն կնոջ, որ ցուլն ի խէշն գտնվի ու սպանվի» (ՍԴ, 51):

«Թէ ոք զկինն և զցուլն յիր տուն խէշ իրար գտնու ու սպաննէ, նա անդատապարտ է ի դարպսէ» (անդ):

«Եթէ ումէք կին ի բոզութեան բռնվի և կամ մարդ ցուլ առ ինքն, նա պատեհ է ստուգութեամբ քննել զճշմարիտն, թէ կինն զցուլն է հարկել ու խաբել թէ ցուլն զկինն» (անդ, 52):

Շալակ, գրբ. «բեռ», միջին հյ., նաև՝ «պարտականութիւն».

«Վասն զի նեհն որ կու կեցնէ զամէնն, եւ թագաւորացն է շալակն, եւ Աստուած յիրենցմէ խնդրէ զամէնն» (ՂԶ, 217):

Հատնիլ (<հատանիմ), գրբ. «կտրվել», միջին հայերեն, նաև՝ «վերջանալ».

«Եւ եփէ ցուր ջուրն հատնի և կաթն մնայ» (ՄՂ, 51):  
Ցաքիլ(-ել) (<ցայտել), գրբ. «թուշել (ջրի)», միջին հյ., նաև՝ «ծագել (արևի, լույսի)».

«Երբ արեգակն ցաթէ» (ՄՂ, 106):

«Ոնց տի լուսով յիս ցաթեցաւ» (ԿԾ, 164):

Հարթել, գրբ. «կոկել, դուրել, շտկել», միջին հյ., նաև՝ «կեղծել».

«Եւ զայնոք որ դրամ զշտեն կամ դրամ հարթեն՝ անզեղը է պարտնութիւնն, զձեռքն կտրէ ի պակասն» (ՂՂ, 216):

Դիզանալ. գրբ. «դիզվել», միջին հյ., նաև՝ «զարմանալ».

«Եւ աղուէս դիզացաւ և ասէ. մի՞ թէ յերագս իցէ այս» (ՀԱԳ, 351):

Անուշցնել (<անուշացուցանել), գրբ. «համեղացնել», միջին հյ., նաև՝ «համեցնել».

«Հրամայէ (օրէնքն) գորբերն և զաղբատքն ստածել և խնամել և անուշցր-  
նել ի գործքն, որ շատք դիմեն ու գան ի յուսումն» (ՂՂ, 216):

Քնֆշցնել (<քնքշեցուցանել), գրբ. «փայփայել», միջին հյ.՝ «նվիրատրել, վարձատրել».

«Եւ թէ ուսցնողն լինի աղբատ՝ նա թէ (աշակերտն) իր կամաւ զվարդա-  
պետն քնֆշցնէ ու կամ իրք տայ, նա այն հերիք է հոգևոր սերմանողացն՝ որ  
զմարմնաւոր հունձքն ժողովեն» (անդ):

Իմաստափոխության ենթարկված այս կարգի բառերը միջին դիրք են  
գրավում գրաբարյան և միջին հայերենյան բառաշերտերի միջև. իբրև բառեր  
գրաբարյան են, իսկ նոր իմաստավորումներով՝ միջին հայերենյան:

## II. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՎ ԱՎԱՆԴՎԱԾ ԲԱՌԵՐ

Միջին գրական լեզուն ասպարեզ է հանում գրաբարին անծանոթ բազմա-  
թիվ նորահայտ բառեր, որոնք կարելի է ըստ նրանց ծագման դասգասել երեք  
խմբերի.

1) բնիկ բառեր,

2) ենթաշերտային բառեր,

3) փոխառյալ բառեր:

Քննենք յուրաքանչյուր խումբն առանձին:

### 1. ԲՆԻԿ ԲԱՌԵՐ

Միջին գրական լեզուն խոսակցական հայերենից ընդունել է մի շարք  
հնդեվրոպական բառեր, որոնք, նայելով նրանց ծագմանը, հայերենի մեջ գո-  
յություն են ունեցել նրա ծննդյան իսկ օրից: Այս բառերը հին գրականությամբ  
չեն ավանդվել, երբեմն համապատասխան մատենագրության բացակայության,  
երբեմն ոչ ընտիր դիտվելու պատճառով: Հնագույն ծագումով այս բառերը մի-  
ջին հայերենյան կոչելու առիթը տվյալ գրական լեզվի միջոցով նրանց հայտնի  
լինելն է:

Մանոթանանք այս խմբի բառերին.

Թաթաւ. գրաբարում անկախ գործածություն չունէր. հանդես էր գալիս  
տարբեր բաղադրությունների մեջ, ինչպես՝ թաթաւել «թաթախել», արյունա-  
թաթաւ, մեղսաթաթաւ. միջին հայերենում անկախորեն գործածվում է «անձրև»

իմաստով. <հնդեր. tap արմատից՝ կրկնությամբ. \*թալթալ (տե՛ս Հ. ԱՃ., Արմ., Բ, 1031):

Մշուշ. հնդեվրոպական մէջ (< meigh ) բառի մի տարբերակն է: Պայթական / շփական հերթագայությունը, ինչպես գիտենք, բնորոշ է սլավոնական լեզուներին. լեհ. mgła/mży, ռու. мгла / мжигъ: Այսպիսի հերթագայության մի հազվագյուտ օրինակ է հայերենի մէջ / մրժ / մրշուշ տարբերակների արտահայտութիւնը: Մրժ ձևը գործածական է Շատախի բարբառում՝ «մառախուղ» իմաստով, մրժիկ «մշուշ»՝ Մանիսայի բարբառում, մրժալ «բարակ անձրևի»՝ Չենկիլիերի բարբառում, որոնք համընկնում են լեհ. mży, չեխ. mžl, ռու. мжигъ տարբերակներին: Մշուշ բառը, մեր կարծիքով, կազմվել է մուշ արմատի կրկնությամբ, որը մրժ (<\*մուժ) արմատի մի տարբերակը պիտի լինի. շ / ժ համապատասխանության համար թերևս կարելի է համեմատել շուրջ, շուռ / ժուռ, շորթ / ժեռ տարբերակները (ՄՄ):

Մգիլի «նեխել», «բորբոսնել», «ամպել». ահադ. Հ. Աճառյանն այս բառը կապում է հնդեր. meigh > մէջ բառի հետ, համարելով նրա լ ածականով տարբերակը, որի համապատասխան ձևերը կան նաև ցեղակից լեզուներում. հուլ. migla, ռու. мгла, լեհ. mgła:

Մգոիլի «նեխել», «բորբոսնել», «ճաքճքվել». <meigh արմատից՝ ո ածականով:

Մօրտ «ճահիճ». այս բառը, կարծում ենք, որ գրք. մօր բառի տ ածականով տարբերակն է: Իսկ մօր՝ «տիղմ, ճահիճ», ծագում է հնդեր. mauri արմատից, որի ցեղակիցներն են՝ հուն. μῦρω «հոսել, ողողել, ողբալ», լիթ. mūrstu, mūrti «բոլորովին թրջվել», maura «ճահճախին մի բույս» և այլն (հմմտ. Հ. ԱՃ., Արմ., Դ, 1210):

Բողջն «գունդ». վկայվ. Բժ. Ա, 86. «Զաղցած դեղերտ քիչ քիչ ի ներս լից և խառնէ ճիճն, որ բողջն շիինի՝ ինչվի կապի» (KWM): Այս բառի արմատը՝ բող, ծագումնային կապ ունի բարբառային բուլ «խմորի գունդ», ընդհ. հայերեն բուլ-որ «կլոր, ամբողջ», բլ-որ բառերի բուլ / բոլ / բլ տարբերակների հետ և ծագում է հնդեր. bhol արմատից՝ ջ ածականով և և մասնիկով (ՄՄ):

Բողջ «պալար, ուռուցք, վերք». կա և բղջուն «պալարոտ», <հնդեր. bhol արմատից՝ ջ ածականով (ՄՄ):

Բովել «աղանձել». <հնդեր. bhē արմատի bho ձայնդարձից (տե՛ս Հ. ԱՃ., Արմ., է, 108):

Բովը «վավաշոտ», «շվայտ». վկ. ն. Կրակ., Վասն ողորմ. «նա շատ բողբորոյ և բովը մարդկաց է տուել զիւր վաստակէն» (տե՛ս ՆԲՄՀ): Բովը բառը, մեր կարծիքով, ծագումնային կապ ունի բորբ-ոք, բորբ բառերի հետ և, ինչպես սրանք, առաջացել է հնդերոպական bho—bhr—o հիմքից (բորբ բառի ծագման մասին տե՛ս Հ. ԱՃ., Արմ., Ա, 1175): Բորբ բառի մեջ, ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել bh/r դրափոխութիւն, որի հետևանքով բաղաձայնին հաջորդող bh-ն օրինաչափորեն հայերենում դարձել է բ: Բովը բառում այդպիսի դրափոխութիւն չի կատարվել, ուստի ձայնավորից հետո bh-ն, դարձյալ օրինաչափորեն, տվել է վ (bhobro): Հնչյունական այս համապատասխանությանը համոզվելու համար կարելի է համեմատել գործիական հոլովի՝ ձայնավորին հաջորդելիս վ/ւ և բալուձայնին հաջորդելիս բ հոլովակազմիչները. սիրո-վ, սրտի-ւ, եզեր-բ, աստեղ-բ, որոնք բոլորն էլ միևնույն bh մասնիկից են առաջացել:

Միջին հայերենը վկայում է այնպիսի բառաձևեր, որոնք հաստատում են բովր / բորբ, ինչպես և բով բառերի ծագումնային կապը. դրանք են՝ բովել / բովել / բովհրել / բորվել, բուրբ «խարկել» իմաստով. վերջին բառաձևում՝ բորվել, նկատվում է վ / ր դրափոխություն, որը, անկասկած, ուշ շրջանի երե-վույթ է, այլապես բաղաձայնից հետո վ (<bh) չէր ստացվի. պարզ ասած՝ բորվել ձևն անցել է բովել ճանապարհով (ՄՄ):

Բոկեղ «կլոր հաց». <հնդեր. bhōg «խորովել» բառից (տե՛ս Ն. Աճ., Արմ., է, 107):

Լֆշիլ «փափկել, հալվել». վկ. Ախրապ. «Ապա ինչ այտ ցաւտ նմա դիպաւ եւ նա ի Մուֆարդինն գնաց, որչափ ձմեռնաւուրք էր՝ բժիշկն չարար նմա դեղ, ասէր՝ թէ Յայս աւուրքս դեղն չօգտէ, զի մարդն այնց սառուցած լինի զերդ հողն, եւ չօգտէ դեղն՝ ինչուր լֆշի (՝)» (ՂԶ, 415) (Լֆշիլ բառի մոտ Ղ. Հովնան-յանը հարցական է դրել՝ իբրև անհասկանալի—ՄՄ):

Գրիգոր Նարեկացին գործածում է լֆնուլ՝ նույն նշանակությամբ, ինչ որ վերը բերված լֆշիլ բայն է. «Սառեալ մեղօք՝ ոչ լֆնուն ջերմութեամբ արեգա-կանն»: Լֆնուլ բայը ակադ. Աճառյանը կցում է լիլի՝ «կակղել, թուլանալ, հալ-վել» բային (Արմ., Գ, 236), որը Պոկորնին ստուգաբանում է հնդեր. leg / lēg / log / lōg արմատից (Pokorny, II, 422—423. Աճառյան, Արմ., է, 140):

Ինչպես լֆնուլ, նույնպես և լֆշիլ բայերը իմաստով լիովին համընկնում են լիլի բային, բայց հնչյունական արտահայտությամբ տարբեր են, քանի որ կ-ի փոխարեն հանդես են բերում ֆ (հնդեր. lēg / lōg արմատը հայերենում կարող էր տալ լիկ / լուկ, բայց ոչ՝ լիֆ / լուֆ): Հավանորեն լֆշիլ բայի նախնական ձևը եղել է \*կշիլ, և չ սոսկածանցի հնչյունական առնամանությամբ կ-ն արտասան-վել է ֆ: Իսկ լֆնուլ բայը թերևս լֆշիլ բայի մի ձևափոխությունն է, ինչպես որ ունենք՝ մտանել—մտնուլ, ելանել—ելնուլ, իջանել—իջնուլ, տեսանել—տես-նուլ, ուռչիլ—ուռնուլ, փախչիլ—փախնուլ, թաքչիլ—թաքնուլ կամ, որ ավելի հավանական է՝ գրչագրական սխալի հետևանքով լիևուլ բայը գրանցված է լֆնուլ:

Թարմ «նոր». ըստ Ն. Բյուզանդացու՝ միջին հայերեն բառ. <իջ արմատից՝ մ մասնիկի հավելումով (Հր. Աճ., Արմ., Բ, 1155—1156):

Թարբ (թարփ) «ձուկ որսալու կողով», «վանդակապատ». վկ. 1215 թ. արձգ. (Վիմ. տար., 59), Մ. Կաղանկ., <հնդեր. էջր արմատից (Ն. Աճ., Արմ., է, 133):

Թառ «թռչունների թառելու, ինչպես և պտուղ կախելու հատուկ ձող». վկ. Գիրք վստ., 132, 134, 225, Ն. Շնորհ., Հան. («Գիրք») և այլն: <հնդեր. tars կամ տրս արմատից (Արմ., Բ, 1134):

Մանձ «ցորենի կճեպ». <հնդեր. g<sup>1</sup>eg<sup>1</sup> արմատից (տե՛ս Արմ., Գ, 736):

Մոլ «ծառերի բնի մոտ բուսած ավելորդ ճյուղ». <հնդեր. mol արմատից (անդ, Գ, 1093):

Չիր «չորացրած միրգ»: Չոր արմատի տարբերակն է. < k<sup>2</sup>seros (Աճ., Արմ., Ե, 745):

Մաթ «դոշաբ». < madhu «քաղցր». հուն. μέθυ, լիթ. medus, սլավ. med (ստուգբ. Յ. Կարստի. տե՛ս WM):

Բող (բողիկ բույսը). <հնդեր. bhol (ստգբ. Ն. Աճ., տե՛ս Արմ., Ա, 1139): նույն արմատից, կ աճականով՝ բողկ:

Դաղձ(ն) «վայրի անանուխ». <հնդեր. dhal արմատի dhլ ձայնդարձից՝ ձ աճականով (անդ, Բ, 288):

Գինն «համեմ». <հնդեր. vëndhā (անդ, 204):

Բուս «բեղմնավորված» (ձու). բերում է ն. Բյուզանդացին «Բառագիրք ստորին հայերենի» աշխ. մեջ: Այս բառը, մեր կարծիքով, ցեղակից է բոյժ և բուս բառերին և, ինչպես սրանք, ծագում է հնդեր. bhug<sup>1</sup> արմատից:

Մարի «էգ թռչուն», «էգ մեղու». <հնդեր. mṛī (Հ. Աճ., Արմ., Դ, 917):

Մոզի «մեծ հորթ». <հնդեր. mozg<sup>1</sup>ho (անդ, 1091):

Բոռ <հնդեր. bhor (անդ, Ա, 1165):

Մլուկ «փայտոջիլ». <mōl արմատից (անդ, Դ, 1061):

Առեղ «սայլի անվի խարխա». ետնաբար՝ «առաստաղի մեջտեղի գերանը»: Այս բառը, մեր կարծիքով, բաղադրյալ կազմութիւն ունի՝ առ նախդիր և եղ արմատ, որոնք երկուսն էլ հնդեվրոպական ծագում ունեն: Առ (<par) նախդիրն իբրև բաղադրիչ հանդես է գալիս շատ բառերի մեջ, ինչպես՝ առէջ «կտավի երկարությամբ ձգված թելերը», առակ, առաստաղ, առապար. եղ (<q<sup>u</sup>el) «դառնալ, պտտվել» արմատով ունենք՝ եղան, յեղով, եղել, եղանիլ և այլն:

Դակուր (դակու) «ուրագ», «կացին». <dhāg<sup>2</sup> արմատից (Աճ., Արմ., Բ, 378—379):

Սար «պատրաստ». սար-ել «պատրաստել», «գինել». <հնդեր. kṣ արմատից (անդ, Ե, 123): Օր. «Պարոնայք, իսայ գրաստս իմ է, ու կորուսի. լուկամ փրթաւ, ու հիմայ գտայ զինքս հետ իսա մարդոյս ու սար եմ որ կեցցընեմ անսիգովն երկրիս որ իրաւ կու ասեմ» (ՂԷ, 198):

Գրաբարին սար արմատը անծանոթ չէ, բայց իբրև անկախ բառ հանդես չի գալիս, այլ՝ զանազան բաղադրութիւնների մեջ. սարք, սարքել, սարիք:

Դոն—ճարտարապետական զարդ է. ըստ ակադ. Ա. Թամանյանի՝ սյունների միացումը վերևից (արխիտրավ): Ակադ. Հ. Աճառյանը համարում է հնդեվրոպական բառ (տե՛ս Արմ., Բ, 588):

Արծնել «տաք երկաթով կամ գունավոր մոմով փայտի վրա նկարել»: <հնդեր. arḡ<sup>1</sup> արմատից, որից գրաբարը վկայում է արծարծել (Աճ., Արմ., Ա, 689):

Գաղել «թաքցնել». <vol/vel արմատի v| ձայնդարձից (անդ, 30):

Գերփել «ավերել, կողոպտել». <verph արմատից (ստգբն. Պետերսոնի. տե՛ս Pokorny, I, 291—292, Աճ., Արմ., է, 114):

Շոլոր «շփոթված, մոլորված», «խենթ». կազմված է շոլ+որ բաղադրիչներիով: Արմատը՝ շոլ, ցեղակից է շեղ/շիլ/շաղ խմբին և ծագում է հնդեր. sqel/sqēl/sq| արմատի sqol ձայնդարձից (ՄՄ):

Փնթի «թափթփված», «կեղտոտ». <հնդեր. փին և թի բառերից (Հ. Աճ., Արմ., Զ, 1239):

Սպոնկ / սպրկիկ / սպլուք «մաքուր», «բոլորովին». արմատն է սպր / սպո / սպլ (<\*սուբր, \*սուբո, \*սուբլ). ծագում է հնդերոպական k<sup>1</sup>սbhrō արմատից, որից գրաբարում բ/ր դրափոխությամբ կազմվել է սուրբ բառը: Միջին հայերենյան վերոհիշյալ ձևերում այդպիսի դրափոխութիւն չկա:

Դոն «կլոր հաց, թոնրան բոքոն». <հնդեր. dhon արմատից (Հ. Աճ., Արմ., Բ, 585—586):

Գողկ / գողտ «մահիճ». <հնդեր. vol/vel/v| արմատից՝ կ, տ աճականներիով (ՄՄ):

Լակ «շան, կատվի ջրալի ուտելիք». <հնդեր. lak արմատից (Աճ., Արմ., Դ, 140):

Մանչ «տղա երեխա». աղադ. Ն. Աճառյանը ստուգարանում է հնդեր. mas «տղա» արմատից, որ հայերենում պիտի տար մա, բայց չ աճականով տվել է մաչ, ապա ն-ի հավելումով՝ մանչ (Արմ., է, 165):

Մոել «լսել». արմատն է մուռ, որ ծագում է հնդեր. mu արմատից՝ ո աճականով: Ռ աճականի համար կարելի է համեմատել բա-ռ, լու-ռ, թի-ռ, չե-ռ և այլն: Mu արմատից է նաև մու-նջ բառը (Աճ., Արմ., Դ, 1169):

Յերնել «վեր կենալ». արմատն է յեր, որը գրբ. ար/յար (յառն-ել) արմատի մի տարբերակն է. ծագում է հնդեր. er/or/ɣ արմատի er ձայնդարձից (ՄՄ): Իսկ ար/յար ծագում են չ ձայնդարձից (հմմտ. Աճ., Արմ., Դ, 1246):

Յերակ «միշտ» գրբ. յար «կից», «միշտ» արմատի է ձայնդարձով տարբերակն է՝ կազմված -ակ մասնիկով (ՄՄ):

## 2. ԵՆԹԱՇԵՐՏԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Միջին հայերենը ավանդում է գրաբարին անծանոթ բազմաթիվ այնպիսի բառեր, որոնց ծագումը հաճախ դժվար է պարզել: Դրանց զգալի մասը, անշուշտ, հայ ժողովրդի կազմի մեջ ձուլված տարբեր ցեղերի ու ժողովուրդների բառապաշարի հետքերն են, որ, հիմնականում, միջին հայերենի բարբառներից. ներթափանցել են գրական լեզվի մեջ: Հետաքրքրականն այն է, որ ենթաշերտային բառերի շարքում քիչ չեն բնիկ բառերին հատուկ ածանցմամբ, ձայնդարձով, աճականներով կազմութունները, որոնց գոյության փաստը տարբեր հիմքեր կարող է ունենալ՝ հնդեվրոպական ծագումը (թեև դեռ չապացուցված), հայերենի մեջ ա՛յն ժամանակ ներթափանցելը, երբ նրանում դեռ գործուն էին նախալեզվին բնորոշ ածանցման, ձայնդարձի, աճականների կիրառության օրենքները, որոնք բնականորեն տարածվում էին նաև եկամույծ բառերի վրա:

Ահա այս կարգի բառերից մի քանիսը.

Լեսպ «շերտ», լեզբն «կտոր», լեստ «դանակի երկաթյա մասը», լաստ «ածեկի», լաս «գերանդու մեկ հարվածով կտրած խոտի մասը», լազ-ել/լես-ել «ողորկել», լես-ան «ողորկ»:

Ինչպես տեսնում ենք, բառի արմատն է լես/լաս/լեզ/լազ, որ հանդես է գալիս ձայնդարձի երկու աստիճաններով՝ \*e>ե/\*->ա և պ, բ, տ աճականներով:

Ըստ Յ. Կարստի՝ այս բառը ցեղակից է լեզու բառին (տե՛ս WM), որ, մեր կարծիքով, համոզիչ չէ:

Կուց «կիցբուռ», կից «միասին», ձայնդարձի երկու աստիճաններով՝ \*o>ու և \*ē>ի:

Շուռ «բշտիկ, վերք» / շիտ (նույնը) (<\*ō>ու / \*ē>ի):

Ող «յուղ» / եղ / եպ / իպ (\*o>ո / \*e>ե):

Յերջ «խորշ» / ուրջ (\*e>ե / \*o>ո):

Շուռ / ժուռ / շուր-ջ / շուր-ք-ն / շոռ-տ-իկ / շոր-տ-իկ:

Ժեռ «գույն» / ժուռ (նույնը) / շոր-ք (նույնը):

Շաղ-իլ «խառնվել» / շող-ախ «շաղախ» / շաղ-ախ:

Կեռ «ծուռ» / կոր «թեք» / կոռ-ել «թեքել»:

Կնին «պուտուկ» / կնուռ:

Խոռ «դատարկ» / խոռ-ոչ / խոր-շ / խոր:

Գուշ «դատարկ», «գավաթ» / գուշ-պ «ծերպ»:

Խեռ «ծուռ» / խոռ «խորոր»:  
Միլ / ծիղ / ճիւղ / ճեղ / ճաղ / ծղ-ի «ուղթ» / ճող-ել / ճղ-ուղ «ճյուղավոր  
անիվ. ճախարակ»:

Կոթ / կանթ:

Խղ-ձ-ակ «շնչարգելութուն» / ճեղ-ձ / խեղ-ղ-ել:

Լուր-թ / լուր-ջ:

Կուլթ «մետաղյա հալոցք» / կեղթ / կղութ:

Պատեղ-ուր «հղի» / պտուղ «բերք»:

Ճուտ «ձագ» / ճետ «սերունդ»:

Ճուկ «թեթ. ծուռ» / ճիկ-ն / ջիգ-ր «խոտորնակ», որից՝ ճկրու (ճկուռ, ջրգ-  
րու) «ի հեճուկս»:

Քենթ «էգ շուն» / քնթ-ալ «էգ շան՝ ցանկությամբ կատաղելը»:

Յեմ-ել «ուշանալ» / յամ-են-ալ:

Յեմո «համառ» / յամառ:

Հեմ «այժմ, արգ» / հիմայ և այլն:

Միջին գրական լեզվի վկայած ենթաշերտային բառերը բնության, մարդու,  
կենդանիների, բույսերի, երկրագործության, խաշնարածության, տնային տրն-  
տեսության, շինարարության վերաբերող բառեր են, որոնք կարելի է խմբավոր-  
ել ըստ իմաստային-կիրառական ոլորտների.

Բնության վերաբերող բառեր.— գուշպ «ծերպ», երեզ «ապառաժ», երի-  
զուտ «ապառաժուտ», յերջ «խորշ», եղէզ «ջրոտ գետին», զամպ «լեռան վրա  
դիզված ձյուն», ծամակ «անարև տեղ, ձոր», շուաք / շուք «ստվեր», շոգ «տաք»,  
նիգ «ծանր օդ», պաղ «ցուրտ, սառույց», թուրմ(ն) «խավար», դրուրդ «ալեկո-  
ծութուն», շահար «անտառ», մացառ «թփուտ», խաւիղ «բուրաստան,  
դրախտ», ժուկ «ժամանակ», հեց «փոքր միջոց, կարճ ժամանակ»:

Մարդուն վերաբերող բառեր.— ակոայ «ատամ», թոռ «ականջաբլթակ»,  
շլնի «վիզ», սոսոր «կոկորդ», վիզ «պարանոց», թուշ «այտ», բէճ «թիկունք»,  
գահ «թիկունք», կոնակ, կոթունք «թիկունք», նուս «մեջք», ծղի (ծղիք, ծղիկ)  
«դաստակը, ձեռքը և մատերը միասին», մուրց «բոունցք», կուց (գուձ) «կից-  
բուռ», մաճուճիկ «ճկուլթ», ճիւ «թև, ոտք», ճուռ(ն) «ուղթ», աճուկ «երանք»,  
բումբ «սրունքի մսոտ մասերը», գուճ «ծնկի կոճը, ծալքը», կուտկէն «սա-  
պատ», գարգ «ոսկրոտի, կմախք», դունդ «փափուկ միս», միզն «բարակ  
մաշկ», ճրոր «աղիք, փորոտիք», իլկամ «երիկամ», բուշտ «միզապարկ», գոզ  
(գոյզ) «մեզ», դէկ «ընկերք», բոճ «լորձ», շոճ «ուժ»:

Ճաղատ «հերթափ», թնշուկ «խճճված (մազ)», գուուզ «գանգրամազ», գոշ  
«կարճամորուս», քարձ «անմորուս», պլուզ «կարճահասակ», տղնդեր «փո-  
րեղ», սուք «ամուկ» (տղամարդ) (օր. «Մի՛ եղիցի քեզ այր սուք և կին ամուկ»,  
տե՛ս Ն. Աճ., Հայ նոր բառեր, Բ, 241. վկ. Հակ. Մժբն.), շահմ «խենթ», շահմել  
«խենթանալ», խեւ «խելառ»:

Բնավորություն, վարքագիծ.— շլատ / ժլատ, գուճ «կծծի», ցեցմեց «քմա-  
հաճ», շեթ «հիմար, անխելք» (օր. «Վասն կնկան որ փնթի ու շեթ լինի» Սմբ.,  
Դատ.), լքսուռ «աշառու, կողմնապահ», խեռանք «նենգություն», կելուրք  
«խարդախություն»:

շպոնել «հրել», քշտել «խափել, հարվածել, կտրել», ռուտել, կշտել «հեր-  
քել», բոհրել «խաբել», բշտել «կոպտել», շիթել «խայթել», լեխել «ջարդ ու  
փշուր անել, սաստիկ ծեծել»:



**Հարաբերություն.**—պիզմ(ն) «թշնամություն» (օր. «Թէ կամաւ լինի սղալն եւ կամ վասն պզման, նա գէղ մահապարտ զինք սպաննեն» Սմբ. Դատ., 22, 214), ճիկր (ճիկո, շիգր) «հակառակություն», մուտ «իրարանցում, աղմուկ», մուտել «ապստամբել», գէթ անել «վնաս տալ», ճօշ «բամբասանք», գճտիլ «վիճել», գոգել «կովել», աշել / եշել / էշել / իրիշել / իրիշկել «նայել», սլալ «դիտել», արուրք «ամուսնական կապ՝ հեթանոսական կամ կախարդական», պագ «համբույր»:

**Գերդաստան.**—նան «մայր», լաճ «տղա», կտրիճ «տղա, երիտասարդ», ճետ «սերունդ», աղօր «սերունդ, շառավիղ», ծլուկ «ծառա», ճորտ «ենթակա»:

**Վիճակ.**—շուար / շիւար «մոլոր», աւօտ-շաւօտ «անորոշ», գեր «ողբ», ծրուսիլ «նիհարել», նծուրիլ «հլուծվել», թահրիլ «հոգնել», ~~սոճկիլ~~ «այրվել»:

**Պետական կյանք.**—գոնաճառ «գենք ու զրահ», գոայ «պատիժ», շարէտ / շարիաթ «տոկոս, վաշխ»:

**Տնայնավարություն.**—խախալ «մաղ», խախալել «մաղել», տաստել «մաղել», խնոցի <խին / խէն «պարարտություն» արմատից, ձճում «խնոցի», լեթոն «երկանքի վերին քարը», կճիճ «պուտուկ», պուլիկ «կուժ», սան «կաթմա», կանթ «ունկ», բոնձ «խեցու բեկոր», կանդիւ (կանդրիւ) «խոտից հյուսված խցան, բերնակալ», ծպղել «ամանի բերանը կալնել», ծպնել «կապել», կցղայ «կապ», ախժիք «մրուր», ալութ «օջախ», անթեղ «տաք մոխիր», մծիր / մճիր «մոխիր, մուր», խշուր «կալան» նաև՝ «շուղ», վերջին իմաստի հետ է կապվում՝ խշրել «ամանի բերանը շուղերով փակել». կոճել «կտրտել, շարդտել, տրորել», կործել «բերանի վրա շրջել», կործ «շուռ տված» (աման), աճոել «տրորել», բայծել «բաժանել», ստոծել «անշատել», ջնթել «հավաքել», վոնտել «փռել», խճել «իրար վրա լցնել», մայգել «համտեսել», մամշել «համփոխել», ժողխիլ «հոտել», շմորիլ «փտել», նգտիլ «բորբոսնել», տղկիլ «թացանալ, թրջվելուց ուռել», ճիրիլ «տրորելով հյութը հանել», խախաց «պանրի մակարդ», շիճուկ / շտուկ «ամանից, կաթից անջատված ջուր», որից՝ շճել «քամել»:

**Բունջ գուլ, բութ», գուլ, գուշ «դատարկ», թոշ «թուլլ, լայն», թորթոշ «ուռ-ձացած», թաղ «խիտ, կուռ», որից՝ թաղիլ «խտանալ», թաղկիլ (նույնը), լեկուր «ամուր», պէտ (բէդ) «խոշոր, մեծ», ձարբ «խոշոր», գար «կեռ», խեռ «ծուռ», կէզ(ն) «թեք», որից՝ կէզնել «թեք դնել», շիտակ «ուղիղ», փոթոր «ոլորուն», ճուկ «թեք, ծուռ», որից՝ ճկել «թեքել», ջոջ «մեծ», ճճու «քիշ», գոց «փակ», գէզ «բիծ», թիլ (նույնը), խոռ «ծակ», եղկ «գոլ», բրոր «պղտոր», բարկ «թեք», նժուաղ «մեղմ» (կրակ), հարհանդ (նույնը):**

**Երկրագործություն.**—բունձ «հող», մգուայ (մքուայ) «ճաքճքված գետին», թալ «լծվար», վարսամ «ճշուղ», շաշ «ճշուղ», կոթ «ցողուն», մոլ «տեքու», վարակ «բույսի ծունկ», գշխայ «ծուռ ու մուռ ճշուղ», տոլի «խաղողի որթ», կոյզ «կույտ», աղկուլզ, աղուրի «տաշտաթաղ անելու ճշուղ», պանդրել «թաղ անել», տառ «ծառի սերմ», կուտ «հատիկ, կորիզ», խեշ «խաղողի չոր կուտ», սիմ «արդյունք, բերք» (օր. «Ի քոյ դրացնին արտէն ի հետ շհնձես, թէ ոչ նա հարամ է, և զքոյին սիմն տանի», Սմբ., Դատ., 207), եղի «կիսահաս ցորեն», շիճ «փշացած ցորեն», շոպ «բույսի արևահարություն», ճոն «հաճար», աշարայ «հաճար», գելաս «յուղը հանելու պատրաստած կտավատ», ձաւար «թեփահան արված ցորեն», ձարձատ «ծեծված» (հացահատիկ), կորկոտ «ծեծված, թեփահանված ցորեն», կոխ «խաղողակոխ», լաս «գերանդու մեկ հարվածով կտրած խոտ», խոզան «հնձված հասկերի մնացորդ», խզուզ «կալի մնացորդ»,

ծեղ «դարման», մոեղ «հարդի շյուղ», արգատ «չորացած ճյուղ».

խէչակ «բույսի հենարան», կշոշ «մանգաղ», ցագան (ցաքան) «տափան, վարած հողը հարթելու և սերմը ծածկելու գործիք»:

Անասնապահութիւն.— պախրէ «տավար», կալել «երեք տարեկան էրինջ», կալմուխ (նուլնը), գեհ «ոչխարի, այծի հոտ», խալամ «անասունի գանգ», կաթինք / կայթք «անասունի ծնկները և ազդրերը», պոզ «կոտոշ», սիրամ «սպիտակաբաշ», ձար «ծիու մազ», պոյր «ծիու գլուխ», տոշ «ծիու անդամ», գշկուր «չոր անասնաղբ», թիթրէն (թիթէն, թիթմէն) «աթար», կորկ «անասունի վրա կպած անասնաղբ», ճպոտ «վարոց», պախուց (պահուց, պախուրց) «սանձ», կուրդին / կորդին «թամբ», կուրդնել (կուրդել) «թամբել».

Ճետ «աքլոր», պղող «չբեղմնավորված ձու»:

Արհեստագործութիւն.— գզիր «կողով հյուսելու սեզ», գշիր «ծակիչ գործիք», դուր «հյուսնի հեղույս», երիթ «փայտ ճեղքելու սեպ», կաստ «աքցան», գիծեռ(ն) «փականք», կոտիտ «բանալու ժանիք», հոր «դազգահ», թեզան «կտավի լայնքի թելերը», լիմ «կարժառ», կան «ոլորք», ման «ոլորք, շրջան», մճուճ «հանգույց», թեռ «բրդի թել», ճոթ «կտոր, ծայր», շորտիկ (հյուսվածքի մի ձև), խծիպ «ոլորակար», խծպել «ոլորելով կարել», ճղուղ «ճյուղավոր անիվ, ճախարակ», խիզար «մեծ սղոց», գերբ(ն) «ջնջոց, ջրաղացի ավել», վաք «ջրաղացի առվակ», կոստղ «թուշուն բռնելու հատուկ փայտ», թարփ (թարբ) «ձուկ բռնելու կողով»:

Մետաղագործութիւն.— խարամ «հալելի մետաղի մանրուք», մճիր «հալված մետաղի կեղտը», կուղթ / կեղթ / կղութ «մետաղյա հալոցք», ժառատ «մազնիս»:

Շինարարութիւն.— սիմ «կոթող», պոյր (պուր) «գմբեթ», կոօնք «տանիք», աճառք / ոճորք «առաստաղ», առիք (նուլնը), շեմ «սեամ», պախտ «հարկ», ժպեղ «գերան», մարդակ (նուլնը), խիպար «որմնադրութեան մեջ գործածվող մանր քար», կոէզ «ձյութ», մոլայ / մոլ «հարդախառն շաղախ», որից՝ մոլել «ծեփել», հոփ «ավազան, փոս»:

Արվեստ և ուսում.— քիս «գրելու կավ», շոճ «նվագ, նվագարան», տաղ «մեղեդիով բանաստեղծութիւն»:

Բժշկութիւն.— խամ «թանձր մաղձ», կոծիծ «եւլունդ», շուտ / շիտ «խոց, վերք», տոն «բշտիկ», որից՝ տոնոտ «բշտավոր», վահր «թարախ», փեղ «քոս», գողի «բորոտ», զմաստ «ջրգողութիւն», ցախցաւ «պլերիտ», կիծ «ծակոց», փաղաղ «գլխապտույտ», վարսամ «էպիլեպսիա», ստուկ «գրգիռ», գոյղի «ձեռքերը, ոտքերը կարծրացած», կոկիլ «գողենալ», խղձակ «շնչարգելութիւն», որից՝ խղձակիլ «շնչակտուր լինել», լեկրոտ «հոգեկան հիվանդ, որ ուզում է անընդհատ պարել», նաժ «կերախտ», սիս «աչքի պղտորվելը, կամշ», ձմայթ (ձմաթ) «ձյան անդրադարձումից առաջացած աչքացավ», պատեղ «հղիութիւն», յիստել «ցամաքել» (արյան), լիմ(ն) «վիրակապ», գոխ (գրխ) «կլիզմա», փօլօլ «հաբ»:

Բույսեր.— բծիծ «ծովի խոտ», զարօշ «լերդախոտ», արժպայ «օճառախոտ», թորթ «մարեմախոտ», ժախ «վայրի բողկ», գիմ «կոճղեզավոր ուտելի մի բույս», գոզի (կոզի) «սնձի տերևներով բողկանման մի բույս», գիր «քնաբեր մի բույս», բոգ «օձի սխտոր», թնշուկ «ազնիվ սունկ», խոշ «փուշ», ճղեմ «սեզ», գիհի «փշատերև մի բույս», խօզ «մամուռ, գորտնբուրդ», կասկ «շագանակ», սին «փշատ», դամոն «սալոր», լոբահ «խաղողանման մի պտուղ»,

մոմոշ «վայրի ծառերի պտուղ» (կաղին, խոզկաղին, շագանակ), զկեռ, զամբուռ «վաղամեռուկ», պլուտ «դառը և թունավոր մի տունկի սերմ», ճփնի «երիցուկ», զոխ «բույսի հասած ցողուն», կորճ «ընկույզի կեղև», ճիւ (նույնը), ոզոխ «ընկույզի կանաչ կեղև», գուռ «ընկույզի միջուկ», կտեւ «կեղև», փուր (նույնը), թօպ (թուպ) «ճուղած, վտիտ» (միրգ), ժաժ «խակ», ժուռ «խակ, թթու»:

Կենդանիներ.— բուճուճ «ծովի ողնի», զիւշ/զոշ (զօշ) «խլուրդ», խեշափառ «խեցգետին», խլէզ «մողես», մորմ «փոքր մողես», ժիժի «ճպուռ», կիտուռ «մորեխ», անժեղ «կաշաղակ», արօռ «ջրային մի թռչուն», բուբու «հոպոպ», գրէ (գռէ, գրեճ) «կռունկ», դոխ «կաքավի ձագ», խիւ «սարյակ», մըրտիմ «վայրի բաղ», դալ (ձուկ է), ամար «գեղարբունի» (ձուկը), անձրուկ «մանր ձուկ», արիկ «մի թունավոր միջատ», գարաւ «տիգ», գոբս «փայտոջիլ», մաթիլ «մանր ոջիլ», ժժմակ «ճիճու, գեռուն», կոյլ (կոլ) «սև գլխով մի ճիճու» (օր. «Ջարարեհ, որ հայերեն կոլ կու ասեն, ... եւ այսօր կերպն այս է որ ինքն սևգլուխ որդկներ է, որ վերեն կարմիր և մեջն սև լինի» Ամիրտ., Անգ. անպ.), կրօր «ջրային ճիճու, ձայն արձակող», նեպուկ «բազմոտանի ճիճու», կոր «կարիճ», մոր «թունավոր սարդի նման միջատ», գամբո «մեծ շուն», քէնթ «էգ շուն», ցնգնեկ «ծնել» (շան, նակ՝ մարդու՝ արհամարհաբար), կտապիլ/ի կուտապ գալ/կտուտիլ «գալարվել» (օձի):

Գույներ.— ժեռ/ժուռ/շորթ «գույն», պլուզ «կապույտ», լուրթ/լուրջ «մուգ, կապույտ», ճնդիկ «գուտ սև», գերմակ «սպիտակ» (օր. «Կին մի մեծայհասակ և սաստիկ գերմակ և գէր մերկացաւ ի տուն իւր, և սկսաւ ծունդը դնել և աղօթել մեծայհասաշանօք և լալով» Վրդ. Առ., ՀԱԳ, 328):

Հագուստ.— լաթ «շոր», գուտի «գլխարկ», բուճ «կարճ գուլպա», շագոյր «պայուսակ»:

Ուտելիք.— խճուղ «երշիկ», ճմուռ «յուղի մեջ տապակած հաց», վոշ/վոիկ «ձավարի ապուր», սպաս «թանապուր», կասկ «եփած զարի, հերիսա», փոխինդ «խարկած, բոված ալյուր», լաւաշ/լօշ, շօթ «լավաշ», կսկուժ «շոր, կարծր հաց», գաթայ, բլիթ «կլոր թխվածք», սինձ «կոմպոտ», ժուռ «յուղ», ող (նույնը), սանոն «պանրի գլուխ», լեսպ «շերտ» (օր. «Երկու լեսպ պանիր» Ոսկիփ., 414), փոթոթ «տտիպ», շոռ «աղի»:

Մակբայներ և երկրորդական խոսքի մասեր.— խէշ «մոտ», կուշտ (նույնը), բով (նույնը), գատ «հեռու», հեմ/հիմայ «այժմ», ամ «ահա, արդ», յամ/յեմ «ուշ», ճիճն «հաճախ, ստեպ», ի ճիճն «միշտ», դուն «մի փոքր», դոնիւ (նույնը), փաթ «անգամ», հեղ/հաղ (նույնը), գէմ «չէ՞ որ, իհարկե», բաղ «միայն», ի գատ «բացի», գատել/զարդել (նույնը), քաւել (նույնը), իշտ/հուշտ «լա՛վ, ա՛խ, ափսո՛ս»:

Արհամարհական արտահայտություններ.— լամուկ «թուրքի տղա», բոժոր «տաճիկ»:

Այսպիսով, միջին գրական լեզուն կորստից փրկում է ամենավաղ ժամանակներից մեր լեզվում եղած, բայց դասական մատենագրության մեջ տեղ չգտած բազմաթիվ բառեր, որոնց ակունքը, իհարկե, միջին հայերենի բարբառները և խոսակցական տարբերակներն են:

Այս բառերից շատերը ցարդ կենդանի են բարբառներում: Օրինակ՝

Եղէզ, միջ. հյ. «ջրոտ գետին», վկայված Վիմ. տար. 223. «Ետու զիմ գանձագին հողերն, զԳերմատու տնափնիքն, առաջի եղէզն, գինեկոյ ճանա-

պարհն, միջի եղէզն...» (հմմտ. Հ. Աճ., Արմ., Բ, 701). արէգ ձևով հանդիպում է Բուլանըխի բարբառում և նշանակում է «գետափ», «ծովափ» (տե՛ս անդ, է, 124):

Նիգ «ծանր օդ». վկ. Սմբ. Գատ. 3,30. «Վասն որ ոք զիր հորն բանայ և մարդ ատէ ի ներք՝ նա նիգն սպաննէ. ու մարդն ի նգէն խեղդվի» (հմմտ. Հ. Աճ., Արմ., Ե, 119). Նիգ ձևով պահպանված է Խոյի, Մարաղայի բարբառներում՝ նույն նշանակությամբ:

Ակոայ «ատամ». վկ. Ամիրտ., Ոգ. բժ. 247. «էհանան ասէ, թէ շոր դեղերով ստածումն արա, և զայն գիճութիւն որ յակոային տակն է՝ շորցու». գործածական է Կարնո, Մշո, Ակնա, Արաբկիրի, Զեյթունի, Խարբերդի, Պոլսի, Տրապիզոնի, Նոր Նախիջևանի, Թբիլիսիի բարբառներում:

Բոււբ «սրունքի մտտ մասերը». վկ. Ստ. Լեհ. (տե՛ս Նորայր Բյուզ., Բառ. ֆր., 613ա). Խարբերդի բարբառում գործածական է «ուրք» իմաստով (Հ. Աճ., Արմ., Ա, 1197):

Գոգ «մեզ», վկ. Մխ. Հեր., Զերմ. մխ., 81. «Եւ իւր գոգն հաղ մի նուար լինի և սպիտակ և ղորկուտ, և հաղ մի թանձր լինի և պղտոր և կարմիր»: Տարածված է Զենկիլերի, Պոլսի, Բայազետի, Ղարաբաղի բարբառներում:

Քշտել «խիբել, հարվածել, ծեծել». վկ. Բժ. 1438 Թ. «Նոյնպէս և յործամ երկու ձեռացն երակն հաւտար քշտեն, նա այնոր անուն հաւտար ասեն» (ՂՀ, 144): Գործածական է Զեյթունի, Հաճնի բարբառներում:

Լեխել «շարդել, փշրել, սաստիկ ծեծել». վկ. Յայամ., դեկտ. 20: Գործածական է Վանի բարբառում:

Մոտել «ապստամբել». վկ. Հեթում, Պտմ. Խր. «Եւ սիր Սիմոն տ Մունֆարթն... մոտեցոյց զիշխանքն և զարքն ընկլիզաց ընդդէմ թագաւորին» (ՄԺ, II, 72). Զենկիլերի բարբառում նշանակում է «ղրդել, գրգռել, խոսք խոնկել» (Հ. Աճ., Գու. բռ., 799):

Աշել / էշել / յաշ ունել «նայել». վկ. Վրդ., Առ., Բ, 139, 140 (տե՛ս ՆԲՄՀ). տարածված է Կարնո, Խնուսի, Խոտրջուրի, Համշենի, Ղարաբաղի (յէշիլ), Մալաթիայի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Թբիլիսիի բարբառներում:

Լան «տղա, երիտասարդ». վկ. Ոսկիփ. (տե՛ս Նորայր Բյուզ., Բառ. ֆր., 733բ). գործածական է Մշո, Վանի, Մոկսի, Շատախի, Մարաղայի, Նոր Նախիջևանի, Սեբաստիայի, Խարբերդի, Ասլանբեկի բարբառներում: Նույն իմաստով Կիլիկիայի բարբառները գործածում են կտրիճ բառը, որ միջին հայերենում վկայված է Սմբատ Սպարապետի, Ամիրդովլաթ Ամասիացու, Ն. Քուչակի մոտ:

Թանրիլ «հոգնել». վկ. Մխ. Հեր., Զերմ. մխ., 22. «Յործամ Թանրի մարդն, և ոտն ի քարն դիպի, կամ ի յուրքն և ի յանդամն ելունդ ելանէ, կամ այտոց լինի, կամ զարկս առնու, նա ջանայ բնութիւն որ արիւն յղարկէ անդ, ողջացուցանել զտեղին». դանրիլ ձևով գործածական է Զեյթունի բարբառում՝ նույն նշանակությամբ (հմմտ. Հ. Աճ., Արմ., Բ, 1097):

Խախալ «մաղ». վկ. Ոսկիփ., որից՝ խախալել «մաղել». հանդիպում է Երևանի, Ղարաբաղի, Թբիլիսիի բարբառներում (տե՛ս անդ, Գ, 326):

Խնացի. վկ. Ոսկիփ. տարածված է Կարնո, Երևանի, Խարբերդի, Համշենի, Սեբաստիայի, Ղարաբաղի բարբառներում: Նույն իմաստով Մշո, Վանի, Շատախի, Մոկսի, Խլաթի, Մարաղայի, Խոյի բարբառները գործածում են ձձում (ծծում, ծծում) բառը:

Կանդիւ «խոտից հյուսված բերնակալ»։ վկ. Գիրք վստ., 94. գործածական է Շատախի բարբառում կանդրիվ ձևով և նշանակում է «խցան»։ Կա նաև Վանի, Մշո, Ախալքալաքի բարբառներում (որի մասին տե՛ս Ն. ԱՃ., Արմ., Գ, 951)։ Կուրդին (կուրդին) «թամբ, համետ»։ վկ. Առաք., Պտմ., 413. «Կուրդինն որ է պաղանն», որից՝ կուրդնել / կուրդել «թամբել»։ վկ. Յրիկ.

Մէկի ձեռուին է գերդ գողի,

Որ ոչ կարէ կուրդել շորի (ՀԱԳ, ?)։

Այս բառը գործածական է Մշո (կուռտիգ), Շատախի (կուրտէնք'), Ուզմի (կուրտէն), Մոկսի (կուրթինք') բարբառներում։

Հետաքրքրականն այն է, որ քրդերենը հանդես է բերում կուրդին բառի մի այլ տարբերակ՝ kortan, որը հայկականին ցեղակից, բայց ինքնուրույն մի ձև է։

Քուրքերենն այս բառն ունի kürdün ձևով, որ, անկասկած, հայերենից է փոխառված. կուրդին բառի բառավերջի ի-ն, Քուրքերենին հատուկ ձայնավորների ներդաշնակության օրենքով, բառասկզբի ու-ի ազդեցությամբ դարձել է ու(ü). kurdin > Քրք. kürdün։

Խզուզ «կալի մնացորդ»։ վկ. Կիր. Գանձ. (տե՛ս KWM). տարածված է Մշո, Վանի, Շատախի, Խարբերդի բարբառներում։

Անձեղ (անձեղ) «կաշաղակ»։ վկ. Վրդ., Առ. (տե՛ս ՆՐԱՀ). գործածական է Զեյթունի, Հաճնի, Ակնա, Մշո, Վանի, Ուզմի, Մոկաց, Շատախի բարբառներում։

Գոց «փակ»։ վկ. Գիրք վստ. (տե՛ս KWM). տարածված է Պոլսի, Կարնո, Ակնա, Արաբկիրի բարբառներում։

Բռոբ «պղտոր»։ վկ. Տաթև., ամ., 196. «կողն գերեսն փայլուն ունի և գմէջն բռոբ»։ Վանի բարբառում՝ պրոբ «պղտոր», Երևանի բարբառում՝ բրոբ «գինու դիրտ» (տե՛ս Ն. ԱՃ., Արմ., Ա, 1230)։

Խծիպ «ոլորակար» (տե՛ս ՆՐԱՀ), որից՝ խծպել «ոլորակարել»։ Երևանի բարբառում հանդիպում է խուծապ ձևով՝ նույն նշանակությամբ։

Խէշ «մոտ», «հետ»։ Կիլ. Գիվան. գր. «Թէ իրէնց պիտի ընդ նեկսէ ի Պուրճն, Թէ իրենց պիտի ընդ դրացէ խէշ պրճին» (ՂՀ, 258). Սմբ., Դատ., 51. «Թէ ոք զկինն և զցուլն յիր տուն խէշ իրար գտնու ու սպաննէ, նա անդատապարտ է ի դարպսէ»։ գործածական է Զեյթունի, Հաճնի, Բեյլանի, Խարբերդի, Մշո, Մարաշի, Սվեդիայի, Վանի բարբառներում։

Այսպիսի օրինակներ դեռ շատ կարելի է բերել, բայց կարծում ենք, եղած փաստերը բավական են, ցույց տալու համար միջին գրական լեզվի սերտ կապը իր բարբառների հետ։

### 3. ՓՈՆԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ

Միջին հայերենում պատկառելի շափերի են հասնում օտարամուտ բառերը, որոնց զլխավոր ազբյուրներն են՝ արաբերենը, պարսկերենը, հունարենը, իտալերենը, ֆրանսերենը, թուրքերենը, ինչպես և ասորերենը, վրացերենը։

Օտար բառերի առատ մուտքը միջին գրական լեզվի մեջ արդյունք է հասարակական, քաղաքական այն իրավիճակի, որն ուղեկցում էր մեր ժողովրդին նրա գոյատևության տվյալ էտապում։

Պատմական Հայաստանը, հայտնի է, որ բարի կամ չար առիթներով մըշտական շփման մեջ էր սահմանամերձ բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների հետ. Արևելքից՝ պարսիկների, արաբների, սելջուկների, հյուսիսից՝ վրացիների

րի, հարավից՝ արաբների, ասորիների, քրդերի: Բուն հայկական հողերում էլ տարբեր ժամանակներում, լավ կամ վատ ակնկալություններով, հաստատվել էին օտար ժողովուրդներ ու ցեղեր. հույն, ասորի, հրեա, պարսիկ, արաբ, սելջուկ, քուրդ, մոնղոլ, թուրք:

Հայկական Կիլիկիան, ինչպես պատմական Հայաստանը, եզերված էր տարբեր ժողովուրդների դրացիությամբ՝ իտալացիների, ֆրանսիացիների, գերմանացիների, հույների, արաբների: Երկրի ներսում ևս օտարազգիները փոքր թիվ չէին կազմում. հայերից բացի, քաղաքներում ապրում էին հույներ, ասորիներ, իտալացիներ. ծայրամասային հողերում հիմնավորվել էին խաչակիր ֆրանկ ասպետներ, որոնք վասալական կախման մեջ էին հայ թագավորներից: Կիլիկիայի թագավորները քաղաքական և առևտրական կապեր ունեին Եվրոպայի, հարևան խաչակիր պետությունների, մոնղոլ իշխանությունների հետ: Ազնվականությունը խնամիական հարաբերությունների մեջ էր խաչակիրների Երուսաղեմյան, Կիպրոսյան թագավորությունների, Անտիոքի իշխանության հետ:

Այս հանգամանքներն անխուսափելիորեն նպաստում էին հայոց լեզվի և դրացի լեզուների փոխներթափանցմանը:

Լեզուների մերձեցմանը խթանում էր բարձր վերելք ապրող առևտուրը: Տնտեսապես և կուլտուրապես դարգացած հայկական վաճառաշահ քաղաքները՝ Անին, Կարսը, Երզնկան, Արծնը, Տարսոնը, Ադանան, Մամեստիան դարձել էին միջազգային առևտրի կարևոր օղակներ, ուր կողք-կողքի առևտուր էին անում հայ, պարսիկ, հույն, իտալացի, իսպանացի, արաբ վաճառականները: Առևտրի առաջընթացը արգավանդ հող էր տարբեր լեզուների սերտ շփման համար և առավելագույն շափով բարձրացնում էր նրանց փոխազդեցության հնարավորությունները:

Ինչպես հայերենը, այնպես էլ պարսկերենը, հունարենը, իտալերենը, իսպաներենը, ասորերենը, արաբերենը այս շրջանում ենթարկվել են իրենց շփվող լեզուների անդիմադրելի ազդեցության:

Օտար բառերի ներթափանցումը միջին հայերենի մեջ տեղի էր ունենում թե՛ տարբեր ժողովուրդների հետ հայերի ունեցած անմիջական շփման, թե՛ մշակութային կապերի միջոցով: Հայ մտավորականները բազմաթիվ լեզուներ գիտեին: Ինքնուրույն ստեղծագործություններով հայրենական գիտությունը հարստացնելուն զուգընթաց նրանք թարգմանում, վերլուծում, մեկնաբանում էին օտար լեզուներով եղած արժեքավոր երկերը: Այս ճանապարհով արաբերենից, հունարենից, իտալերենից, ֆրանսերենից, պարսկերենից միջին հայերենի մեջ մուտք էին գործում գիտական նշանակություն ունեցող բազմաթիվ բառեր ու տերմիններ, որոնք բնույթով տարբեր էին անմիջական շփման ուղիով ներթափանցած բառերից: Վերջիններս արտացոլում էին առօրյա կյանքը, մարդկային սովորական հարաբերություններ, առաջինները՝ գիտության այս կամ այն մասնաճյուղին վերաբերող հասկացություններ:

Մշակութային բառերը ներթափանցում էին հիմնականում գրականության միջոցով, ուստի՝ գրական փոխառություններ էին, իսկ սովորական կյանքի բառերը՝ բանավոր լեզվի միջոցով, ուրեմն՝ ժողովրդական փոխառություններ էին:

Միջին հայերենի փոխառությունների մեծագույն մասը կազմում են արաբերեն բառերը<sup>1</sup>: Ակադեմիկոս Հ. Աճառյանն իր «Արմատական բառարանում» բերում է արաբերենից հայերենին անցած 702 բառ՝ թե՛ իր, թե՛ այլ լեզվաբանների ստուգաբանած: Գերմանացի ակնավոր հայագետ Յոզեֆ Կարստը իր «Wörterbuch des Mittelarmenischen» («Միջին հայերենի բառարան») աշխատության մեջ, որը գրել է ավելի ուշ, քան Հ. Աճառյանն իր «Արմատական բառարանը», մատենագրական նորանոր նյութերի օգտագործման հիման վրա արաբական փոխառությունների թիվը հասցրել է շուրջ 1100 բառի:

Այս մեծաքանակ բառապաշարի գրեթե կեսը գրական փոխառություններ են:

Արաբները միջնադարում հռչակված էին մի շարք գիտությունների ասպարեզներում՝ մաթեմատիկա, աստղագաշխուսթյուն, քիմիա, բժշկություն: Եվրոպայի և Արևելքի առաջավոր ժողովուրդները ծանոթանում, ուսումնասիրում ու թարգմանում էին արաբ գիտնականների գործերը: Հայերը, հատկապես XII դարից սկսած, բազմաթիվ թարգմանություններ են արել արաբերենից՝ գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ: Միջնադարյան Հայաստանում առանձնապես սիրված և առաջադիմած բնագավառ էր բժշկագիտությունը, որով պայմանավորված է հայերի հատուկ հետաքրքրությունը դեպի արաբ բժշկությունը: Արաբերենից թարգմանված բազմատեսակ երկերում, ինչպես և ինքնուրույն ուսումնասիրություններում երևան էին գալիս արաբերեն անվանումներ՝ աստղագիտական, քիմիաբանական տերմիններ, բուսանուններ, դեղանուններ, ախտանուններ: Այս կարգի փոխառություններից որոշ բառեր, որոնք ընդհանուր կիրառական արժեք ունեին, տարածվում էին ժողովրդի մեջ, ընդունվում հասարակության կողմից, մի շարք բառեր ու բառանուններ գործածություն էին գտնում մասնագետների նեղ շրջաններում, շատ անգամ էլ գրական փոխառությունները անօգտագործելի մնում էին գրքերում՝ դառնում մեռած պատմություն:

Միջին հայերենում վկայված է արաբերենից և արաբերենի միջնորդությամբ այլ լեզուներից (հունարեն, լատիներեն, պարսկերեն) ներթափանցած ավելի քան 320 բուսանուն, որոնց մի զգալի մասը նույն շրջանի գրականության մեջ իսկ գործածվում է եզակիորեն և գրեթե նստվածք չի տվել: Այդ կարգի բառերից են՝ աալուսան <aalusan «վառվառուկ», ախհաւան <aqhavan «եղիցուկ», այրաս <ayras «կապույտ շուշան», ալսուս <al-sūs «մատուտակ», բալուտ <balūt «խոզկաղին», բիլեդիր <belādur «կատվախոտ», բտում <butum «բեկեկ», լապսան <labsān «մանանեխ», լուֆ <lūf «նվիկ», կրփե <qarfa «դարչին», հավր <havar «կաղամախի», հորփ <hurī «կոտեմ», հումայլ <humais «թրթնչուկ», հաւէն <havāi «համեմ», ճաւարս <javars «խաղող», միշմիշ <mišmiš «ծիրան», ուաիկ <ulaiq «մոռ», չումար <jum-mār «արմավ», պապա <batbāt «հովվի բիր», սադիր <sa'tar «ուռ», ֆուտանէն <fultanaī «դաղձ», քիմե <kam' «բողբոջ»:

Մի շարք դեղաբույսերի արաբերեն անուններ հաստատորեն մուտք են գործել միջնադարի հայ բժշկագիտության ասպարեզ, արժանացել լայն գործածության: Ահա դրանցից մի քանիսը՝

<sup>1</sup> Արաբերեն փոխառությունները ստուգելիս մեզ օգնել է հմուտ արաբագետ Ս. Զուլյաբը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Աֆիոն (ափիոն) «խաշխաշ» <afiyūn (այս բառի հունական ձևն է՝ ὀπιον, պարսկականը՝ abyūn). «Եւ ա՛ն աֆիոն և վարդեղուր, տրորէ և զականջթոն և զքնեքն օժէ, որ ի քուն լինի» (ՄՂ, 30):

Աֆիլմէլիֆ (աֆիլ-մէլիֆ, քիլմէլիֆ). խոտեղեն բույս է՝ «մեղրածուծ» <iklil-ul-malik. «...պապունած և աֆիլմէլիֆ և դարի տերև... զամէնն ի պտուկն դիր և ջրով եոցու» (ԱՕԲ, 230):

Ջաֆրան «քրքում» <zaʿfarān. «Ա՛ն ստեպղինի հունդ և ջրկոտեմի հունդ և սամիթ և սոխի և ծնեքեկի հունդ... և ղուստ և զաֆրան կէս կէս բաժին» (ԱՕԲ, 403):

Հնդիպէ (հնդուպայ, հնտուպէ) «դառնիճ, եղերդ» <hindibā. «Սպեղանի դիր... հնդիպէի ջրովն» (ՄՂ, 8):

Ղար (կար). «դափնի» <γάρ. «Ա՛ն... դարի տերև, հուլպայ և ծաթրին» (ԱՕԲ, 230):

Ղուստ (կոստ, կուստ) Apilotaxis Lappe բույսի արմատն է <qust. «Ղուստի ձէթ և լեղի նշի ձեթ օժէ տաք տաք» (ԱՕԲ, 234):

Նոնէս (նարճիս) «նարդիս» <nirjis (այս բառի պարսկերեն ձևն է՝ nārgis). «Հոտոտալ տուր ի նանուշահոտ ծաղկունքն զերդ խիրին և նոնէսն» (ՄՂ, 10):

Պապունան (պապունէճ, բարունիճ, բարունած, բերունած) «երիցուկ» <bābūnaʿ. «Ա՛րկ ի վերայ գլխոյն եղկ ջուր, յոր եփած լինի շոր մանուշակն և վարդ և բարունիճ» (ՄՂ, 8): «Ա՛ն մանուշակ և նունուֆար և պապունան ԱԱ բաժին» (ԱՕԲ, 491):

Պզրդատուն (բզրդատուն, պզրկատուն, պզրդաթուն) «կտավախոտ» <bazr qatūnā «Ի վերայ լերդին սանտալի և վարդի կամ քաֆուրի սպեղանի դիր՝ պզրկատունի տերևին ջրովն» (ՄՂ, 8): «Տուր... մալէզ պզրդաթունով և նշի ձիթով» (ԱՕԲ, 494):

Յունապ (ունապ) <unḡāb (կարմիր պտուղ է). «Եւ ա՛ն... հինգ դրամ յունապի ըմպելի» (ՂՂ, 416): «Ա՛ն դամոնաշիր եւ յունապ մետասան հատ» (անդ, 417): «Եւ ի հիւանդութեանն սկիզբն զքնութիւնն կակղացո... ունապով» (անդ, 459):

Ղոնհան (ոահան) <raihān «ասպրամ». «Եւ ի ներս երկու դրամ Ղոնհանի հունդ խառնէ կամ պզրդատուն ի նոյն շաքսն» (ՂՂ, 419):

Արաբերենից միջին հայերենին անցած մի քանի բուսանուններ հարատեւել, հասել են մինչև մեր օրերը: Դրանց մեջ անշուշտ կան բանավոր կերպով անցած բառեր: Արդի գրականում ունենք՝ հիճա <hinḡā, ցարինջ <nārīn], շամամ <šamām, պատիճեան (պատնջան) <bādīnjan, բակլա <bāqilā, ոահան (ոհհան) <raihān, հաշիշ <hašiš: Բարբառներում, նշված բառերից բացի, հանդիպում են ասմին (լասմին), <yāsamīn. Շատախի բարբառում պահպանվել է ոչ միայն ծաղկի իմաստով, ինչպես՝ «Պանգվէր էր թուխ ասմին», այլև հատուկ անվան նշանակութիւնն է ստացել (Ասմին, սեռ. Ասմինկէ). խոխ <արբ. خاوخ «սալոր, դեղձ». Վանի, Մոկաց, Շատախի բարբառներում գործածվում է «դեղձ» իմաստով:

118 բառ վերաբերում է բժշկագիտությանը: Արաբ բժշկութիւնը մեծ հեղինակութիւն էր վայելում միջնադարում, ուստի արաբ բժշկութիւն մեջ կիրառվող բառանունները ընդունվում էին նաև մյուս ժողովուրդների մասնագետների կողմից:

Հայ բժիշկները օգտագործում էին արաբերեն, հունարեն, պարսկերեն բժշկական տերմիններ, բայց դա նրանց մոռացնել չէր տալիս սեփական մաս-



նագիտական բառագանձը: Օտար բառերի կողքին նրանք դնում էին համապատասխան հայերեն անվանումները կամ, երբ բացատրում էին հայերեն բառնուններով, բերում էին նաև դրանց արաբերեն, հունարեն, պարսկերեն համարժեքները: Այսպես՝

«Իսկ այն ազգ ջերմն որ պատճառն շոր և պինտ անդամունքն լինին, հոռոմն լիթկոն ասէ, և տաճիկն (իմա՝ արաբ—Մ. Մ.) դեկ, որ թարգմանի հալևմաշ. և այլ ոմանք սեղմ ասեն. և հայք բարակ ասեն» (ՄԶ, 4):

Արբ. դեկ < diqq բառի դիմաց Հերացին դնում է հայերեն բարակ, հալևմաշ:

«Եւ պատրաստ կա՛ յամ ի տաք և ի շորային իրաց, որ չիօխի ի բարակ ջերմն, որ է դեկ» (ՄԶ, 19):

«Զայս ջերմս հոռոմն սինէնիս անուանէ, և տաճիկն մտքկ, որ թարգմանի սուր և ի յար: Այլ յառաջդ ասացաք թէ սուր ջերմն՝ որ ի յար լինի և առանց նոպայի, ի յարենէ լինի, որ բորբոսի ի ներքս ի յերակն» (ՄԶ, 64):

Արբ. մտքկ < mdbq, հյ. սուր ջերմն:

«Վասն ստածման և բժշկութեան յիստակ տեստատէօս ջերմանն, զոր հոռոմն ակոուս անուանէ, և տաճիկն խասլա, որ թարգմանի անապակ և յիստակ մաղձին ջերմն» (ՄԶ, 95):

Արբ. խասլայ < hāliṣa, հյ. յիստակ ջերմն:

«Ապա երբ գիտենաս զպատճառն և զխլտն՝ որ է նիքն, որոյ ընծայեցաւ ջերմն, դիրաւ բժշկես» (ՄԶ, 116):

Արաբ. խլտ < xlid, հյ. նիք (մարմնի մեջ եղած հեղուկ նյութերը):

«Եւ վարդն՝ զոր հարսանիթէ ասեն, և աղաւնեաց տունն՝ ֆուքէշ, նոյնպէսն իւր պատճառն արոյնն լինի, զերդ որ ծաղիկն է» (ՄԶ, 79):

Արբ. հարսանիթէ < ḥarasān «կարմրուկ», հյ. վարդ:

«Եւ ի յամ կերակրոց՝ որ զսատայն շարժեն և զսավտայն ընծայեն, որ է սև մաղձն, պատրաստ կալ» (ՄԶ, 19—20):

Արբ. սավտայ < saudā, հյ. սև մաղձ:

«Եւ սատայն, որ է սև մաղձն, բերէ ջերմութիւն Բ. օր ընդ մէջ» (ԳՔՔ, 19):

«Իսկ սաֆրայն, որ է դեղին մաղձն, բերէ ջերմութիւն օր ընդ մէջ, զի ինքն միջակ է՝ ընդ սև մաղձն և ընդ պըլղամն» (անդ, 19):

Արաբ. սաֆրայ < ṣafrā, հյ. դեղին մաղձ:

«Եւ նեղն, որ անուանի նսիահ, ասեն իւրեանն մոռաց» (անդ, 3):

նսիահ < արբ. nsiān, հյ. մոռաց:

«Ճմուտն, որ ասեն իւրն պաղեալ կամ պակշեալ» (անդ, 4):

Ճմուտ < արբ. jmad, հյ. պաղեալ / պակշեալ:

«Թեփուկ որ ի գլուխն լինի, զոր տաճիկն հազազ ասէ և պարսիկն սապուսայ» (ԱՕՔ, 105):

Հազազ < արբ. ḥaḥaḍ, հյ. թեփուկ:

«Որ քուն չի լինի և վասվաս, որ է տֆնութիւն եւ ձրի խորհուրդ մարդուն» (անդ, 105):

Վասվաս < արբ. vasvās(a), հյ. տֆնութիւն:

«Լազին, որ է կպչտուկ, այն դեղն է՝ որ քաշելով չի կոտրիլ, զերդ զմեղր» (ՂԶ, 366):

Լազին < արբ. lazi], հյ. կպչտուկ:

Մանոթանանք միջին հայերեն բժշկարաններում և ախրապատին ժողովածուներում հաճախ գործածվող արաբերեն անվանումներին:

Ախտանուեներ. — անթըֆախ «աչքի բորբոքում». <antafaq, արաղան (արական, եարաղան) «դեղնախտ». <araqān, աքիլե (աքիլայ) «փտախտ». <āqilā, բահաղ «մաշկի պիսակութիւն». <bahāq, բուրհան (պուրհան, պուհրան, պաւհրան, պոհրան, պոխրան) «հիվանդութիւն ճգնաժամը». <buh-rān, դեկ (դրկ) «թոքատենդ, բարակացավ». <diqq, զուգամ (զուքամ, զուքում, սուքում) «շնչողիների կատար». <zukām, բուահշահ (բուաշայ) «զող, ջղաձգութիւն». <ra'sa(t), բուահայ «արգանդի ուռուցք». <raja, բուամաա (ուամաա, ըրումաթ) «աչքի ջրհոսութիւն». <ramat («հուն. ῥεῦμα «հոսել», սեռ. ῥεῦματος), բուիպ (բրգ, բպղ) «քառորյա ջերմ». <rub<sup>c</sup> «քառորդ» (արբ. arba<sup>c</sup> «չորս» բառից. humma rub<sup>c</sup> «չորսորյա ջերմ», humma<sup>c</sup> «ջերմ»), բուուաա-պաթ «աչքի խոնավացում, ջրակալում». <rutūbat, բուուպայ (բուուպա) «կրթ-քացավ, սրտացավ, աստմա». <rabu, թաշանուճ (թըշանայճ, թըշընըճ, թըշ-նըճ, թշնաճ, թշնիճ, թըսնիճ, դշանիճ, տշանայճ, նսիճ) «շղաձգութիւն». <tašannu] (արմատն է՝ šann] «կծկել»), թուխմայ «ստամոքսի սուր խան-գարում». <tuxma, իսալ «լուծ». <ishāl, իտաթ «ախտանշան». <idr, adār, լակուա (լախուալ, լախու, լաղուալ, լըխուէ) «անդամալուծութիւն, ներվի լու-ծանք». <laqva, լահմի «մաշկի այտուցում». <lahmī, լոչ (լոջ, լորչ, լաւչ) «պապակ, տենդ». <lavj, իսանազիրան «խոզուկ». <xanāzīrān (արբ. xanāzīr «խոզ»), իսավաղան (դաֆաղան, իաֆաղան, որից կեղծ ստուգաբանութիւնը՝ իսափական, իսափանակ) «սրտի ուժգին ախտահարում». <xafaqān «սրտի խփոց» (արբ. xafaq «զարկերակ» բառից), իուլինջ (խոլինջ, կոլինջ, զու-լինջ) <qūlanj. այս բառի հայերեն իմաստը ակադ. Հ. Աճառլանը և Յ. Կարս-տը բացատրում են՝ «խոցուկ, ուռուցք» (տե՛ս Հ. Աճ., Արմ., Յ. Կարստ, WM), պրոֆ. բժիշկ Ա. Ս. Կժոյանը՝ «փորի սաստիկ ցավ, գալարումով» (տե՛ս ԳԲՄ, 224), իսկ Նորայր Բլուզանդացին՝ «թիկնացաւութիւն» (տե՛ս «Բառագիրք ստորին հայերենի»): Բժիշկ Ա. Ս. Կժոյանի բացատրութիւնը համընկնում է ոչ միայն Գրիգորիսի, այլև Ամիրզոյլաթ Ամասիացու գոր-ծածութիւնը. «Եւ Դ աղբ պալղամն այն է, որ գետ հալած ապիկի լինալ ինքն թանծր է, հով է և չոր քան զամէն աղբ պալղամն. գուշակէ ստամո-քին հովութիւն և աշային (=փորին—Մ.Մ.), և դուլինջ» (տե՛ս ԱՕԲ, 92): Նորայր Բլուզանդացու բացատրութիւնը համապատասխանում է կոլինջ (զո-լինջ) բառի բարբառային իմաստին՝ «թիկունքի ցավ»: Կարծում ենք, որ ինչ-պես Կժոյանի, այնպես էլ Նորայր Բլուզանդացու կարծիքները ստույգ են: Խթինակ ալ-աահմ «որովայնախեղդ». <ihtināq «խեղդ» al-rahim «արգանդ», իտմբայ (հումբայ) «այրող ախտ, կարմիր քամի, տապաստ, օձացավ, ժան-տախտ»: Կարստը և Նորայր Բլուզանդացին այս բառը կապում են արբ. hum-ra(t) «կարմիր» բառի հետ, որը միաժամանակ արտահայտում է «կարմիր քամի», «պալարախտ», «ժանտախտ» իմաստները: Կամշ «ակնեղջուրի ախ-տահարում, որի հետեանքով՝ թուլատեսութիւն, պղտորատեսութիւն». <kumš, kamša (akmaš «աչքի պղտորութիւն»), հակկայ «ստամոքսի ծանրութիւն, փքվածութիւն». <hiqā, haqva, հասպա «քութիշ, վարդ, սև վարդ». <hašba, մմուա (ճրմուա) «քնափութիւն». <Jumud, մըտամ «գողութիւն». <Judam, նազլայ (նուզլայ, նզլայ) «հարբուխ». <nazla, nuzla, նասուր «կոշտուկ». <nā-sūr, նգրիզ (նիգրիզ, նկրիս, նքրիս) «հողատապ, պողպար». <niqris, նուպայ (նուպթ, նուրաթ) «հիվանդութիւն դարձը». <nōba, շաղիխայ (շակիլայ, շա-կակայ) «կես գլխացավութիւն, անգար, միգրեն». <šaqīqa, շուկակ «քոսի մի

տեսակն է» <šukā'i (Հուկն. σοῦκκαί), պարսաւ շքոս» <baraš, սապալ շաշ-  
քի թուլատեսութիւն» (այս բառի հոմանիշն է կամշ) <sabal (պրս. sābal),  
սափրայ (սաֆրա) «դեղնախտ» (այս բառին հոմանիշ են՝ զմաստ, արաղան) <šafra  
(նշանակում է նաև «մաղձ»), սեղմ «թոքատենդ, բարակացավ» (հոմ.  
դրկ) <saqm, սիլ (սիլլ) «թոքախտ» <sill, սքթայ «կաթված» <sakta,  
վաավաւ շանքնութիւն» <vasvās, վարամ (վէրէմ) «պալարախտ, տուբեր-  
կուլոզ» <värām, verem, սոււար (դուար, դրվար) «զլխապտուլտ» <duar,  
ֆալէն (ֆէլիճ, ֆէլճ, ֆելենշ, ֆիլէնշ, փէլիճ, փալլիճ, փիլինշ, փելինշ)  
«կաթված, մարմնի մի կողմի լուծանք» <fālij, fēlij:

Մ ար մ ն ի ա խ տ ա հ ա ր վ ո ղ մ ա ս ե ր՝ ահշա (ահշահ) «փոր, փորոսիք»  
<aḥšā, դուտայ (դաւտայ, դոտայ) «գեղձ» <quta, մաճաս «բազկերակ» <mašassa,  
հեհեպ «կողերի մաշկը» <hājib, hijāb, դաճիա «եղջերաթաղանթ,  
լուսանցիկ, եղջերենիկ» <qar. iyya (արբ. qarṇ «եղջուր» բառից), պաւապ  
«ստամոքսադուռ» <bavvāb, փաքք «ողնաշար» <faqr, faqra, faqār, fuqar,  
քաղայուց «փաղաբուշտ» <kautāṭ:

Բ ժ ի շ կ և բ ու ժ ու մ՝ հաքիմ «բժիշկ» <ḥakīm, Գառան «վիրա-  
բույժ» <jarrah, տիպ (հոգն. տիպիք) «բժշկութիւն, բուժում» <tybb,  
ապիպ «սպաքինութիւն, բուժում» <tabīb (այս բառից է նաև տպպուրիւն  
«բժշկութիւն, բուժում»):

Դ ե ղ ա գ ո Ր ժ ու թ լ ու ն՝ ախրաբադին (ախրաբադին, ախրապատին, ախ-  
րապատին) «դեղագիրք» <aqrābadīn (արբ. aqar «դեղ»), ախրաս (աղրաս,  
դուրս, կուրս) «դեղ» <qurs (հոգն. aqras), ըռամ (ռամ) «դեղատոմս,  
ցուցում, հանձնարարութիւն» <rasm, թարքիպ (թարթիպ) «դեղագիրք» <tar-  
tib, լայուխ (լուղի, լուխ, լուք) «լիզելիք» <laṣūq, luṣūq (laṣūqa «լիզել»  
բառից), իքսիր (էլիքսիր) «կենսահեղուկ» <el — ikṣīr, հապ (հաք) «դե-  
ղահատ» <ḥabb «հատիկ, դեղահատ», մաղճուց (մաճուց, մալճուց, մոլճուց)  
«դեղախոլուս» <maṣjun, միհամ (մալհամ) «սպեղանի» <malham, մոքիամ  
«բուժիչ ծեփոն» <marham, մուխլ «խմելիք դեղ» <muql, մապուխ (մատ-  
պուխ) «դեղախարշու» <maṭbux, յատար «դեղագործ» <aṣṭār, Գուարիշ  
«դեղախառնուրդ» <juvāriš (պրս. gūvāriš), Գուկրայ «դեղեր եփելու աման» <nuqra,  
Գուսխայ (նուսխաթ) «դեղորինակ, դեղի պատրաստման պատճեն,  
դեղատոմս» <nusxa(t) «պատճեն, դեղատոմս», շիաֆ (շաֆ, շափ) «եր-  
կարավուն հաք» <šiyāf, պրուա «զանազան բույսերից պատրաստվող աչքի  
դեղ» <bārūd, byrūd, սղուա «քիթը քաշելու դեղ» <suṣūṭ, սփուփ  
(սֆուֆ) «դեղափոշի» <sufūf, սուք «դեղերի մշկախառն բաղադրութիւն» <suk,  
տեմէա (տիմէտ, տմէտ) «թրշոց» <ḍimād, տլե «բուժիչ քսուք» <tilā:

Բժշկական բառանունները գործածութիւն գրեթե նույն հաճախութեամբ  
շարունակվել են միջին գրական լեզվի ամբողջ ընթացքում: Այսպես՝

## XII դար, Մխիթար Հերացի

«Վասն միօրեայ շերման, որ պատճառն զուզամ և նուզլայ և հազ լինի»  
(ՄՀ, 29):

Արբ. zukām «շնչուղիների կատար» <nuzla «հարբուխ»:

«Եւ նոպայէ ի մէկայլ նոպայն հրեսուն և վեց պահ լինի միջոցն» (անդ, 92):

Արբ. nōba(t) «նոպա»:

«Եթէ անբորբոս լինի (շերմն), նա ընծայի իւրմէն արական, որ է մարմնոյն դեղնիլն: Իսկ եթէ բորբոսած լինի՝ նա խումբայ ընծայէ, որ է կարմիր և տաք այտոց՝ որ ուտէ զմարմինն» (անդ, 93):

Արբ. araqān «դեղնախտ». humra «կարմիր քամի»:

«Ապա թէ բնութիւն կապ լինի, զկակուղ հուկնայն ի բանի պահէ» (անդ, 123):

Արբ. hoqna «կլիզմա» (նախնական իմաստը՝ «տկճոր»):

«Ապա թէ տաքութիւն շատ լինի և ուժով, դու տուր հետ թանին զայս դուրս» (անդ, 43):

Արբ. qurs «դեղ»:

«Ի վերայ ստամոքացն տմէտ արա մրտի շրով» (անդ, 96):

Արբ. dimād «թրշոց»:

«Ապա պատեհ է ի բան տանիս մէկ մի ի տաք մանուննոյն, զերդ անգժատի մանունն, կամ անկժատի հապն»:

Արբ. maʿjun «դեղախյուս». ḥabb «դեղահատ»:

«Եւ զայս տլէն ի վերայ այտոցին դիր» (անդ, 72):

Արբ. ḥilā «քսուք»:

«Առ աֆտիմոն եօթն դրամ և ի ներս ի մապուխն ընկէ» (անդ, 126):

Արբ. maḥbux «դեղախարշու»:

### XIII դար, Գրիգորիս

«Մաղձերն, որ բորբոսին ի ներս երակացն, ոչ արձակին բուխարով, և ոչ լուծամամբ, և ոչ քրտամամբ» (ԳՐՄ, 18):

Արբ. buxār «գոլորշի, շոգի»:

«Յիշենք զպլղամն յառաջն, զի պլղամն յամէն օր ջերմն բերէ» (անդ, 19):

Արբ. balʿam «խորխ, լորձ»:

«Նման է այս նեղոյս երակն ի քրշանայնին ճիճն»:

Արբ. tašannuj «ջղածգություն»:

«Մնայ յերակքն ի ջերմէն ի յառաջին պահէն մինչ ի մէկայլին նօպն, որ է ժամ» (անդ, 18):

«Ինքս ի մէկ մաղձէ լինի և ի սաֆրայէ, որ դեղին մաղձ է» (անդ, 20):

Արբ. šairā «դեղին մաղձ»:

«Ըմուտն նեղ է, որ յղուղն լինի» (անդ, 25):

Արբ. jumrud «քնափություն»:

«Մեքային երակն, որ անուանի խաղաղացնող և սարահին, որ անուանի խերնկած՝ ի յարողջութեան երակն նման են» (անդ):

Արբ. sakta «կաթված»:

### XV դար, Ամիրդովլաթ Ամասիացի

«Գաղիանոս ասէ, թէ պօհրան այն իրքն է, որ հիւանդին կու հանդիպի, և այնով կամ կու մեռանի կամ կու ապրի և այս յայն ժամն կու լինի, որ բնութիւնն և իլտն ի մէկ մէկէ կու բաժնին» (ԱՕԲ, 77):

Արբ. burhān «ճգնաժամ». xld, axlat «նյութ, նյութեր»:  
«Գիտացիր, որ այս խառնվածոցն բժշկապետքն արլատ ասեն, և այսոք  
Կ են—սաֆրայն և արիւնն և պալղամն և սավտայն» (անդ, 22):

Արբ. saudač «սև մաղձ, լեղի»:

«Եւ Դ ազգ պալղամն այն է, որ զետ հալած ապիկի լինայ. ինքն թանձր է,  
հով է և շոր քան զամէն ազգ պալղամն. գուշակէ ստամոքին հովութիւն և ահ-  
շային, և դուլինձ» (անդ, 92):

Արբ. ahšā «փոր, փորոտիք». qūlanj «փորացավ»:

«Պուխարն ի ստամոքէն ի գլուխն կու ելանէ» (անդ, 28):

«Եւ թէ ի վրան դեղին փրփուր գայ՝ գուշակէ որ դեղնութիւն պիտի լինայ,  
որ է յարազանն» (անդ, 71):

«Եւ ձմեռն լինի զուգամ և նուզլայ, և հազ և սիլ շատ լինի» (անդ, 85):

Արբ. sll «թոքախտ»:

«Այնոք որ տաք բնութիւն են և սաֆրայոտ՝ աշացաւութիւն և սավտայի  
ցաւեր լինայ» (անդ):

«Եւ մարդկաց ի յայս եղանակն... սուպաք և սֆթայ և ֆալն շատ լինի»  
(անդ):

Արբ. fālij «ներվի լուծանք, կաթված»:

## XVII դար, Ասար Սեբաստացի

«Այլ գիտացիր որ ի յայս հիւանդութեանս ի սկիզբն՝ մարդոյն խաֆաղան  
դիպի եւ սիրտն խառնի, եւ հիւանդն տապի եւ շարժկութի» (ՂՀՀ, 459):

Արբ. xafaqān «սրտի խփոց»:

«Ապա թէ լուծումն պնդէ, տուր տապաշիրին խուրսն» (անդ):

Արբ. qurs «դեղ»:

«Գիտացիր, որ ամենայն հիւանդութիւն եւ պէսպէս ցաւեր ամենեցուն  
պատճառն ի ստամոքին լիութենէն է, որ շի կարենալ հալել զկերակուրն, մնա  
ի ստամոքին մէջն, մաղձեր դառնայ, որպէս սաֆրայ, պալղամ եւ սավտայ, եւ  
ապականէ զարիւնն եւ ազգի ազգի ցաւեր ընծայէ առ մարդս եւ վնաս գործէ»  
(անդ, 454):

XVII դարում ընդօրինակված մի ձեռագիր դեղարանում կարդում ենք՝  
«Առաջի դեղ՝ զայս ակրաս երես, որ զլերդն ուժովացնէ» (ՂՀՀ, 416):

Արբ. aqras qurs «դեղ»:

«Այլ մաքուխ որ Յիսէ բժիշկն գրեց յոյր նուխաքնոյն» (անդ, 420):

Արբ. maṭbux «դեղախարշու», nusxa(t) «դեղատոմս»:

«Երբ առնուլ կամենաս՝ պատրաստ արա զինչ այլ դեղի ըռասմ է» (անդ,  
425):

Արբ. rasm «ցուցում, հանձնարարութիւն»:

«Մաճուն Կոմիտ թագաւորի, որ օգտէ զօդուածացաւի եւ նկրիսի» (անդ,  
426):

Արբ. niqris «հողատապ, պողպարա»:

«Շաֆ որ օգտէ միջացաւութեանն եւ ծնկացաւութեանն, եւ լուծումն առնէ»  
(անդ, 447):

Արբ. šiyāf «երկարավուն հաբ»:

«Երբ յողջնութեանն յոյրմէտ ըմբել տաս՝ զանձն առողջ պահէ ի ցաւերոյ  
եւ ի տիպոց» (անդ, 426):

Արբ. ṭybb «բուժում»:

Բժշկական մի քանի արաբերեն բառեր պահպանվել են մինչև այժմ: Գրական լեզվում ունենք՝ հաբ, նոպա. բարբառներում՝ հաֆիմ (հէքիմ), որից՝ հաֆիմարան «բժշկության գիրք», հիլլաթ «ցավ, հիվանդություն» (<արբ. օillat), որից՝ հիլլաթվոր «ցավ, պակասություն ունեցող», կամշ, որից՝ կամշնալ, կամշնել «պղտորվել» (աշքի), խումրա «օձացավ, տապաստ», խոլիենն (ղոլինջ) «թիկնացավ», վարամ (վէրէմ) «պոլարախտ, հյուժախտ, վերք», իմաստափոխված՝ «թույն». այս բառից են՝ վարամոտ «թունոտ» (Կոտայք), վննամ թնլուկ «խղճուկ, նվազ, վատ» (Վան):

Բարբառներում վերապրող այս բառերի մեջ անկասկած կան բանավոր փոխառություններ:

Միջին հայերենը արաբերենից ընդունել է մի շարք աստղագիտական բառանուններ, ինչպես՝ ամպար «մոլորակ» <amber (ստգբ. Յ. Կարստի), այուլիս շուսաստղ». <aʿyyūq, ասուպ «թուչող աստղ». <ašhub (ստգբ. Յ. Կարստի), զանապ «գիսաստղ». <danab, զօհալ «երեակ». <zuhāl, զոհրա «արուսյակ». <zuhra, թուրայա (մոլորակ է) <ḍurayyā, մառեխ «հրատ». <mirrīx, տապրան (աստղ է) <dabarān, օտարիտ «փալլածու». <uṭarid և այլն:

Այս կարգի բառերից միջին հայերենում լայն տարածված են՝ զոհրա, զօհալ, ինչպես և շամս «արեգակ» <šams, դամար «լուսին» <qamar, պատր «լիալուսին» <badr, bedr. վերջիններս ավելի շուտ բանավոր փոխառություններ են:

Արաբերեն աստղագիտական բառերից արդի գրական լեզվում վերապրել է միայն ասուպ բառը:

Քիմիային վերաբերող բառեր՝ մատան (մատեն) «մետաղ, հանքաքար». <maʿdan, զայն «պղնձարջասպ». <zāj, հատատ (հողուք, հոռուտ, հօգօղ, հոտոտ) «երկաթ». <hađid, huḍaḍ, huḍuḍ, զինջարակ «ժանգառ». <zanjār, կլայեակ <qalaʿi, խալխաղար (խալխղար) «երկաթօքսիդ». <qulquṭār, զուճան «ապակի» <zujāj, զճճի (զճիճի, զուճաճի) «ապակենի, հեղուկ ապակի». zujāja, պիօր «բյուրեղ». <billūr, զիպաղ «անդիկ». <zibaq, նագրուն «բորակ». <naṭrun, կալի <qalia, քիպրիթ «ծծումբ». <kubrit, kabrit, սնպատին «փորձաքար». <sunbāḍaj, ալքիմիա <alkīmya և այլն:

Այս բառերից արդի գրականում պահպանվել են՝ կալի, կլայեկ, ալքիմիա: Գրական այլ փոխառություններ՝ ագատ «հասարակածի հատված» <ʿaqd «կապ, պսակ, մանլակ», ազազ «քանոն». <ʿidāda, կոթք «տրամագիծ» — այս բառը ակադ. Հ. Աճառյանը կապում է թրք. götüru բառի հետ (Արմ. բառ.), իսկ Յ. Կարստը ստուգաբանում է արբ. quṭr բառից (WM), որ ավելի հավանական է. յաշիպ «բուսաբան». <ʿaššāb. թասիֆել «հանճարել, հորինել». <tašavnūr, թախթըզ «գրված կամ գրելի, թուղթ». taxīit, պրաու «ջնջագիր». <bardī, մակալաթ «ստեղծագործության մաս, գլուխ, բաժին, հոդված». <maqālāt «հոդված», սանիաթ «արվեստի ստեղծագործություն». <šanʿat, կաֆա (կափա) հանգավոր բանաստեղծություն <qāfiya, պարուբայ «ժողովածու, հավաքածու». <berāt:

Արդի գրականում այս բառերից գործածական է կաֆա բառը:

\* \*  
\*

Միջին հայերեն գրականությունը արաբերենից վկայում է շուրջ հինգ

հարյուր ժողովրդական բնույթի փոխառություններ, որոնք ժամանակին եղել են ավելի լայն գործածական, քան գրական փոխառությունները, հանդես են եկել բառակազմական տարբեր ձևերով, և դրանց մի մասը այսօր էլ կենսունակ է մեր բարբառներում:

Եթե գրական փոխառությունների ներթափանցման համար ժողովուրդների կուլտուրական շփումը արդեն բավարար հիմք է, իսկ նրանց համակեցությունը լոկ սօմանդակ նշանակություն ունի, ապա բանավոր փոխառությունների անհրաժեշտ պայմանը ժողովուրդների համակեցությունն է, սերտ, առօրյա հարաբերությունները: Թե՛ գրական, թե՛ ժողովրդական փոխառությունների հարցում կարևորությունից զուրկ չէ նաև գերիշխանության հանգամանքը, բայց սա ևս ավելի էական է ժողովրդական փոխառությունների կապակցությամբ: Սովորաբար բռնության ենթարկված ժողովուրդը հարմարվում է տիրողին, ենթարկվում նրա լեզվական ձևմանը:

Ժողովրդական փոխառությունների հանգամանքները պարզելու համար պիտի հաշվի առնել որոշ պատմական իրողություններ:

Մինչև արաբների կողմից Հայաստանը նվաճելը հայ ժողովուրդն արաբների հետ առնչվում էր երկրից հարավ ընկած սահմանային շրջաններում, ուր բնակություն էին հաստատել բազմաթիվ արաբ ցեղեր: Իսկ երբ Հայաստանը նվաճվեց արաբներից, խալիֆայության համար առաջնակարգ խնդիր դարձավ երկիրը արաբ ռազմունակ ցեղերով բնակեցնելը: Հատկապես 774—775 թվականների հայկական ապստամբություններից հետո արաբներն սկսեցին զանգվածորեն գաղթել Հայաստան. այդպես՝ շալբանիների ցեղը տիրեց Դատվանին, սուլայմ ցեղը գրավեց Բաղեշից մինչև Կարին ընկած շրջանները, կայսիկները հաստատվեցին Վանա լճի շրջակա գավառներում, ութմանիկները՝ Առբերանում և այլն:

Արաբ պատմիչ Յակուբիի վկայությամբ՝ 786—809 թվականների ընթացքում, երկիրը «զսպելու» նպատակով, այնքան արաբ ցեղեր բերվեցին «Արմինիա», «որ ոչ ոք չէր հանդգնի շարժվել»<sup>2</sup>:

851 թվականին Հայաստան արշավեց Բուղան՝ իր հետ բերելով արաբ նոր գաղթականություն: Այս առթիվ պատմիչ Թովմա Արծրունին գրում է՝ «...ըսկըսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն տաճկաց, որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս»<sup>3</sup>:

Արաբ գաղթականությունը Հայաստանում գրավելով հողային ընդարձակ տարածություններ՝ հիմնեց մի շարք ամիրայություններ, որոնք խալիֆայության թուլացումից հետո էլ երկար ժամանակ պահպանում էին իրենց գոյությունը:

IX դարի երկրորդ կեսից սկսած ուժեղացած հայկական նախարարությունները պայքար էին մղում Հայաստանում բուն դրած արաբական ամիրայությունների դեմ, որոնք խոչընդոտում էին երկրի միավորմանը: Բագրատունիների հզորացած իշխանությունը կարողացավ իրեն ենթարկել մի քանի ամիր

<sup>2</sup> Տե՛ս Ա. Տեր-Առնոյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, 1965, էջ 62:

<sup>3</sup> Թովմա Արծրունի, 1852, էջ 170:

րայությունների՝ Մանազկերտի կայսիկներին, Բերկրիի ութմանիկներին, Կարին քաղաքի, Հեր և Սալմաստ գավառների ամիրաներին:

Արաբական ամիրայությունների մասին հիշատակությունները հասնում են մինչև XI դարը, որից հետո լուրս են: Մասնագետ-պատմաբանների ենթադրությունները՝ այդ շրջանից նրանք սկսել են խառնվել Հայաստան ներթափանցած սելջուկների, քրդերի հետ:

Հայերենի բառապաշարի քննության համար կարևոր հանգամանք է, որ հայ ժողովուրդը բուն իր երկրում արաբական տիրապետության շրջանում, ինչպես և դրանից հետո որոշ ժամանակ, ապրել է արաբ ցեղերի հարևանությամբ: Դա չէր կարող անհետևանք լինել: Կարծում ենք, որ ժողովրդական խոսակցական հայերենը, հատկապես VIII դարի վերջերից, երբ արաբ ցեղերի բնակեցումը Հայաստանում մեծ չափերի էր հասել, թերևս մինչև IX դարի վերջերը կամ X դարը՝ արաբերենից անմիջաբար փոխառություններ էր կատարում: Դրա հետքերը որոշակիորեն պահպանվել են մեր մի շարք բարբառներում:

Քննենք մի քանի օրինակ՝

Ընդակ «ապրանք, ինչք» <արբ. rızq (հոգն. arzāq): Հանդիպում է *Խնուսի, Մշո, Վանի, Կարինի, Ակնա և այլ բարբառներում*: Բազմիցս վկայված է միջին հայերենում (*Անսիզք.*, էջ 85, *Ջաք. Սարկ.*, Բ, էջ 30, *Ֆրիկ, Բան.*, էջ 125 և այլն):

Մազրա (մզրա, մըզրա) «արտորայք, շրջակա մշակելի հողեր» <արբ. mazzraʿa: Պահպանված է *Շատախի, Մոկաց, Ողմի բարբառներում*: Շատախի բարբառում կա այսպիսի արտահայտություն՝ «Մըզրէք'օվ կ'եղ». սա նշանակում է այնպիսի գյուղ, որի տները ցրված են միմյանցից հեռու՝ շրջապատված իրենց արտերով: Շատախում կան մի շարք գյուղանուններ մզրա բառով. այսպես՝ Պապոնց մզրա, Բաղչկանց մզրա, Շինա մզրա, Քոսենց մզրա: Միջին հայերենում այս բառը վկայված է 1243 թ., 1291 թ. արձանագրություններում. օր. «Զգեղն Մեծոփ իւր մզրայիւքն» (Վիմ. տար., էջ 133):

Ոնմ «վախ» <արբ. w ahm: Բայացած՝ ոնմիլ, ոնմոիլ «սաստիկ վախենալ, սոսկալ». պահպանվել է *Ախալցխայի բարբառում*:

Ոխվ, ոխֆ, վախմ «սրբապատկան, վանքին կտակված մի բան», «վանքապատկան հող, կալվածք» <vaqi: Բազմիցս վկայված է միջին հայերեն հիշատակարաններում ու արձանագրություններում: Պահպանվել է *Շատախի բարբառում՝ տխվի, Մոկաց բարբառում՝ վուխվի ձևերով, որոնց մեջ բառավերջի ի-ն ածականացնող ածանց է. բառի իմաստն է՝ «անձեռնմխելի, սրբապատկան»:*

Ժղուլ, ժխուլ, մշղուլ «զբաղմունք», «զվարճանք», «զբոսանք» <արբ. šurī, mašūl «աշխատանք, զբաղմունք, զվարճանք»: Միջին հայերենում վկայված է Գր. Տաթ., էջ 36 (ժխուլ ձևով), Մխ. Հեր., 124 (ժղիլ՝ իբրև բայ), Վաստակոց գրքում, էջ 32 (մշղիլ) և այլն: Ալաշկերտի, Մշո, Խնուսի, Նոր Բայազետի, Վանի բարբառներում ժղել նշանակում է «զբաղվել, խոսելով ժամանակ անցկացնել»: Խնուսի բարբառում ժխուլ նշանակում է «զբույց»: Մշո բարբառում ժխտուն՝ «այնտեղ, ուր հավաքվում են խոսելով ժամանակ անցկացնելու»: Շատախի բարբառում ունենք մծուլ աճել (<mašqul ձևից), որ նշանակում է «զբաղվել, ժամանակ վատնել»:

Խալասս «մաքուր, ազատ, զերծ» <արբ. xalās, xāliş: Միջին հայերենում



վկայված է Կ. Երզնկացու, Հ. Երզնկացու բանաստեղծություններում: Վանի բարբառն ունի խալիս, որ նշանակում է «մաքուր». օր. «խալիս արծաթ»: Նույն բառը բայացած հանդիպում է Տրիկի մոտ՝ «փրկել» իմաստով. «Մի՞թէ կարեք զիս խալբել եւ ի տանջանացն զիս ազատել»: Հովհ. Երզնկացին ունի «ազատվել» իմաստով. «Գոհ եմ Աստուծոյ բարոյն, որ ի ջո տեսոյդ խըլբայ»: Սասունի, Շատախի, Վանի, Նոր Նախիջևանի բարբառներում խըլբել բայը շատ գործածական է «ազատվել, պրծնել, վերջանալ» իմաստներով: Օր. Շատախի բարբառում՝ հրմէն խըլբայվ «բոլորը վերջացավ»:

Հասրաք «կարոտ».<արբ. hasrāt: Վկայված է Կ. Երզնկացու, Տրիկի, Հ. Երզնկացու երկերում՝ Շատախի բարբառում պահպանվել է խասրաք ձևով. «Ժանգոտ մախաթ, վա՛վ քի խասրաթ» (= ժանգոտ մախաթ, ո՛վ է քեզ կարոտ): Բառասկզբի հ>խ համապատասխանությունը ցույց է տալիս, որ փոխանությունը Շատախում բավականին հին է, որովհետև թուրքական շրջանում արդեն հ>խ օրենքը չէր գործում: Գրինակ՝ թրք. havar >բարբ. հավար («Հավար տարէք՝ տէք՛էր կընգ՛ան»):

Հուրի «գեղուհի», «կին».<արբ. hūrīyya: Շատախի բարբառում պահպանվել է տրիսուրի բարդության մեջ, որ կազմված է տէր հուրի բառերից և նշանակում է «տերտերակին»: Այս բառում ևս ունենք հ>խ համապատասխանություն: Ուշ շրջանում բարբառը հուրի բառը երկրորդ անգամ փոխանել է թուրքերենից՝ անփոփոխ պահելով հ-ն. հուրի փււրի:

Արբ. աջաբ (աճապ)< aǰāib «զարմանալի» բառից Մշո, Սասունի, Կարնո, Շատախի, Վանի բարբառները կազմել են աջբառես, որ նշանակում է «զարմանալի տեսքով, տգեղ, այլանդակ»:

Թարկել, քոռկ (տալ), քոռկել<արբ. tark «թողում», taraka «թողնել»: Պահպանվել է Ալաշկերտի, Մոկաց, Մշո, Սասունի, Կարնո, Ակնա, Խոտրջուրի և այլ բարբառներում:

Միրաս, միրաք, մէրաս «ժառանգություն».<արբ. mīrād: Գործածել է Տրիկը՝ միրաք ձևով. «Ո՞չ ի հօրէ առեալ միրաք, ոչ Աստուծոյ տուած նորայ» (Բան., էջ 126): Հանդիպում է Վանի (միրաս), Պոլսի (մէրաս) բարբառներում: Բառավերջի թխ տարբերությունը պայմանավորված է արբ. Թ հնչյունի յուրահատուկ արտասանությամբ: Հենց արաբերենում, նայած խոսվածքին, Թ-ն կարող է կամ ք, կամ ս արտասանվել:

Թարութ<արբ. tābut, tʿābut «գերեզման» բառը Մոկսի և Շատախի բարբառները պահպանել են «ղազաղ» իմաստով: Շատախի հնագույն ծիսական մի սգո երգի մեջ ասվում է՝

Հայրո՛ւր, մէկ ձի օրօրէք՛,  
Թի յես մեռայ՝ ձի խորըցէք՛,  
Թարութ Հանդըռոմ կապըցէք՛,  
Յարոչ տըռնէն ձի ընցուցէք՛:

Մէլ «հույս» բառը, որ ակադ. Հ. Աճառյանը ստուգաբանում է արբ. նույն-իմաստ amal բառից, պահպանվել է Ղարաբաղի բարբառում. մէ՛լավ կաց՝ «հույսով մնա»: Այս բառը միջին հայերենում վկայում են Առաքել Սյունեցին («Աղամզիրք»), Նաղաշ Հովնաթանը. ինչպես՝ «Մէլով եմ, զայում զայում, սիրոյդ գինով եմ, զայում» (ՀԱԳ, 243):

Ռուպ, ըռուպ, ոուբ «դռնաք».<արբ. rubb:

Միջին հայերենի բժշկարաններում բազմիցս վկայված այս բառը պահանջել են Վանի, Շատախի, Ուզմի, Մոկսի, Խոյի, Ախալքալաքի բարբառները: Ակադ. Ն. Աճառյանը արաբական տիրապետության շրջանի մասին գրում է. «Ձունենալով որևէ գրվածք այս շրջանի ժողովրդական լեզվով, մենք իսկապես չգիտենք, թե հասարակ ժողովրդի լեզուն որչափով ազդվել էր արաբերենից»<sup>4</sup>:

Մենք փորձեցինք ցույց տալ, որ արաբերենի հետքերը հայ բարբառների մեջ պահպանվել են մինչև մեր օրերը: Արդ, եթե ազդեցությունը կարող է այսքան հարատևել՝ ինչո՞ւ չհավատալ, որ XII դարում՝ միջին գրական լեզվի մշակման շրջանում, այն ավելի խոր արմատներ է ունեցել խոսակցական հայերենում: Երբ միջին հայերենը գրական լեզվի ճանաչում ստացավ, ինչպես Կիլիկիայի, Միջագետքի ու Սիրիայի, այնպես էլ բուն Հայաստանի հեղինակների երկերում երևացին ժողովրդական բնույթի արաբական փոխառություններ: Միջագետքում ու Սիրիայում՝ սկսած VII դարից մինչև հիմա, հայերն ապրում են արաբների հետ կողք-կողքի: Կիլիկյան Հայաստանը սահմանային հարևանություն ուներ Գամասկոսի ու Հալեպի արաբ սուլթանությունների հետ, իսկ 1375 թվականից ընկավ Եգիպտոսի արաբների լծի տակ: Զարմանալի չէ, որ այս կողմերի հայ հեղինակների երկերում կան բանավոր ճանապարհով անցած արաբական փոխառություններ: Օրինակ՝ Վարդան Այգեկցու<sup>5</sup> առակներում.

«Մենք հիլաթով ենք գիսօսքն ի նոցանէ ուսէր և զխաբելն» (ՀԱԳ, 350):

«Եղբարքն հիլաթեցին զնա, և ոչ թէ գալքն կերան» (անդ, 349):

Արբ. հիլատ «նենգություն», հյ. հիլաթով՝ «նենգությամբ», հիլաթել՝ «նենգել, վնասել, ամբաստանել»:

«Ամ տուր մեզ քանի մի բարով խապրիկ» (անդ): Արբ. xabar «լուր, տեղեկություն»:

«Ասացեր են իմաստունքն, թե Գ իրք հայֆ է. ի կուրին եոչև ճրագն հաֆ է. խելօք մարդն մօտ յանգէտն հայֆ է. թէ զճրագն ի յարեգակն վառեն, հաֆ է» (անդ): Հայֆ, հաֆ<արբ. haif «ափսոս»:

«Ով զանմաթ չէ քաշէ, նա շահ չի գտնուր» (անդ, 347): Արբ. zahm at «դժվարություն, անհարմարություն, նեղություն»:

«Այր ոմն վաճառական հալալ կին ունէր և հարամ կին» (անդ, 344):

Արբ. halal «մաքուր, ազնիվ, անարատ». արբ. harām «անազնիվ, անմաքուր, պիղծ»:

«Ի. փուշն ի փողն փակաւ և ի մեռանելոյ նորով ազատեցաւ» (անդ, 335):

Արբ. javr «բռնություն, ուժ». հյ. նորով (չորով) «ուժով, բռնությամբ, հազիվ, մի կերպ»:

«Խիստ բարձր ձայնիւ ճնշեաց մատա՞ք կանչելով» (անդ): Արբ. madad «օգնություն, ա՛խ»:

«Թատպիր և հնար գտաւ և ասաց» (անդ, 348): Արբ. tedbīr «միջոց»:

«Եհան ի վիմի տակէն շատ մալ և տարաւ ի տուն իւր» (անդ, 333): Արբ.

<sup>4</sup> Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 173:

<sup>5</sup> Այգեկցին ծնվել է Տլուբ (Գուլիսե) գավառում, ապրել ու ստեղծագործել է Սև լեռների Այգեկ վանքում (XIII դար):

māi «եզ»: Բերված նախադասության մեջ գործածված է «հարստութուն, գանձ» իմաստով:

«Ես ի սկզբանէ մսագործ էի. և արդ ո՞ արար զիս պայթար»: Արբ. baytar «պայտար»:

«Եւ ունէր շատ ոսկի և արծաթ և շատ գեղորայք և ազարակ և շատ մլխեր» (անդ, 335): Արբ. musik «հարստութուն»:

Կիլիկիո Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում».

«Եւ թագավորն է, որ կարէ դեկան շինել և քաղաք և բերդ և մեծ գետոց կանդարայ և հոգետուն ի մեծ ճամփնի և ի կապնի երկրին» (ՄԴ, 16): Արբ. qančara «կամուրջ»: Այս բառը մինչև օրս պահպանված է Հաճնի (գանդայօ), Զեյթունի (գէնդէրէ), Բուլանխի (գանդարա) բարբառներում:

«Եթէ ոք զմարդոյ անասուն տեսնու ի շվան փաթըթած կամ ուրեք փակած կամ կոտրած, նա զէտ իր անձին է պատեհ սրտացաւել և խալսել զինք» (անդ, 77, 78):

Կիլիկիո Հեթում Պատմիչի «Ժամանակագրության» մեջ.

«Կեոն տէրն Հայոց կալաւ զՊէմունտ բրինձն Անտաքոյ և զնտանեաց ի Սսոյ կլայն» (ՄԺ, II, 60): Արբ. qal<sup>a</sup> «բերդ, ամրոց»:

«Եւ եղել սաստիկ ժողոր ծովու և կտրեցան և բերդնաւ և կորսնվան քրիստոնեայքն և իւրեանց ըոզակն» (ՄԺ, II, 75):

Այս բնույթի փոխառություններ կան և բուն Հայաստանի միջին հայերենով գրող հեղինակներին՝ Տրիկի, Կ. Երզնկացու, Հ. Երզնկացու, Վարդան Արեւիցու, Խ. Կեչառեցու երկերում, XII, XIII, XIV դարերի Բջնիի, Անիի, Շիրակի արձանագրություններում, հիշատակարաններում:

Մի քանի օրինակ Կոստանդին Երզնկացուց.

«Քո սէրդ իմ սրտիս զերդ հուր,

Քո տեսդ աշերուս իմ նուր» (ԿԵ, 158):

Արբ. nür «լույս»:

«Քո սիրտդ ի յաշխարհիս

ի հասրաթէն է հուր վառել» (անդ, 177):

«Այսօր եմ հուժմով իշխան» (անդ, 154):

Արբ. hukm «հրաման»:

«Ես եմ առանց սրլէհ

ու մերկ եմ յանդիման կանգնել» (անդ, 183):

Արբ. silāh «զենք»:

«Դու յաճապ քաղցր ու լատիֆ ես խօսելով»:

Արբ. °aĵāib «զարմանալի». latif «նուրբ»:

«Զերդ ըզլուսին սուրաք բուր,

Շուրջ երեսին մազերն ոլոր» (անդ, 163):

Արբ. şurat «կերպարանք, ձև, երես»:

«Մտրուպ բլբուլնի շատ կան,

խօսին ի սիրու շատ բան» (անդ, 157):

Արբ. muṭrib «երգիչ»:

«Ես վանց քո սիրոյդ համար

Խել եմ և եղեալ խումար,

Զերա քո տեսդ է դամար» (անդ, 159):

- Արբ. xumār «խենթ, գիժ, գինով». qamar «լուսին»:  
 «Լուսին սուրաթով լուս ես,  
 Պատրես ու թամամ ելնես» (անդ):
- Արբ. badr «լիալուսին». հյ. պատրել՝ «բուրբել»:  
 «Լեզուովն քաղցր շաքար  
 ու սրտովն է գերդ ըզջալատ» (անդ, 185):
- Արբ. Jallād «դահիճ»:  
 «Որ շրիինիս հաբր աստենիս,  
 Որ շարնէ զօրն ըզքեզ մագառ» (անդ, 186):
- Արբ. haqīr «անարգ». mazād «աճուրդ»:  
 «Բայց դահր ի քեզ չէ՛ հարիֆ,  
 է Կոստանդին, ունկայ ի զատ»:
- Արբ. qahr «բռնություն». harīf «ընկեր»:  
 «Զայս բանքս ի Կոստանդեայ  
 դապուլ արա, որ քեզ տրւի» (անդ, 198):
- Արբ. qabūl «ընդունում, համաձայնություն». հյ. դապուլ անել, դապուլ  
 այնել (առնել) «ընդունել, համաձայնվել»:  
 «Դարձիր ու յետ նայէ  
 ու գիտ խելոք քատպիր ու ճար,  
 Որ շմնաս ի մէջ ծովուն» (անդ, 203):
- Հովհաննես Երզնկացուց.  
 Միրես մանկութեան անունն ու նքսեֆ մանկան շունենաս» (ՀԵ, 144):
- Արբ. nāsīf «վատահուստ, հավատ»:  
 «Մընել ես ւ յաշխարհս եկել, տուր խապար, թե ուստի՞ կու դաս» (անդ,  
 144):
- «Մթխալ մ՝ աւելի շարար, այլ կըշոեց զամէնըն շափով» (անդ, 149):
- Արբ. miθqāl (փոքր շափ է):  
 «Ով որ օտարին վատ ասէ, նա ինքն դարիպ լինենայ,  
 Երթայ ի յօտար երկիր, զդարիպին դատրըն գիտենայ» (անդ, 154):
- Արբ. yarīb «օտարական». qadr «ուժ, մեծություն, վիճակ, արժեք»:  
 «Բանիկ մի դալաք արի, որ զօճու ձագըն սիրեցի» (անդ, 155):
- Արբ. çalaṭ «սխալ, հանցանք, մեղք»:  
 «Հովհաննէսին մայրն է, տրղայ,  
 հագեր վալայ վըրան նուպայ» (անդ, 165):
- Արբ. jubba «կարճ վերարկու»:  
 «Հա՛յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,  
 Զկաթդ որ կերայ, հալալ արայ» (անդ, 166):
- «Այսօր ծեծեց իմ հայր դատին,  
 Թ՛ է՞ր կու սիրես հայուն որդին»:
- Արբ. qādī «գատավոր»:  
 «Զերթ զոսկի է խալաս, որ այլ չերևի» (անդ, 185):
- Արբ. xalās «մաքուր». ʿaib «արատ, թերություն, սխալ, պակասու-  
 թյուն»:  
 Ֆրիկից.  
 «Եւ գինչ այիպ առ նա լինի, ամենևին այն չերևի» (ՖՔ, 238):
- Արբ. ʿaib «թերություն»:

«Ոչ դավի՛ւ ոչ երդում ունիս» (անդ, 218):

Արբ. qavl «պայման»:

«Ձամէնն է հաշուով զուգեր

Անդալատ Աստուած դատաւոր» (անդ, 223):

Արբ. Կalał «մեղք, սխալ, հանցանք». հյ. անդալատ՝ «անմեղ, հանցա-  
զերծ, անսխալական, անարատ»:

«Ժողովեցի շատ մի բարի,

Ընդակ արի զնա թաթարի» (անդ, 25):

Արբ. rızq (հոգն. arzâq) «ունեցվածք, ապրանք, ավար»:

«Գնաց մանկութեան հասրաթև

ու երեկ ինձ հոգ անհիշուն» (անդ, 40):

«Աճապ ամ յէ՛ր կու դատիս,

Աշխարհիս երակ դու Ֆրիկ» (անդ, 113):

Արբ. Գajab «արդյոք»:

«Ամ երբ հանց ընկեր քո բախտն ու թալեհն»:

Արբ. ĩäly<sup>c</sup> «երջանկության աստղ»:

«Թէ լինէր ինձ դօլուաթ և խելք ի բարին»:

Արբ. dawlat «բարիք, հարստություն, ունեցվածք»:

«Ֆալաֆ, թէ քեզ ֆուֆր ասեմ,

Նայ ասեն, թէ մարդըն մոլոր» (անդ, 217):

Արբ. falak «ճակատագիր». kufr «հայհոյանք»:

«է՛ր ես հագել դու նասիֆ

ու նստել զինչ մէկ ի նուին» (անդ, 128):

Արբ. nasīj «հյուսկեն»:

«Թէ խելք ու բասար ունիս» (անդ, 86):

Արբ. basar «տեսողություն», «բանականություն»:

Ընդգծված փոխառությունները առօրյա գործածության բառեր են, որոնք ժողովուրդների երկարատև շփման պայմաններում միայն, բանավոր ձևով լեզվից լեզու անցնելով, կարող էին այսպես մրցման մեջ մտնել հարազատ լեզվի շատ ու շատ բառերի հետ:

Կա մի հանգամանք, որը մտածել է տալիս, թե միջին հայերենի արաբական փոխառությունները բուն Հայաստանում անմիջաբար արաբերենից չեն, այլ թեևրև ներթափանցել են հարևան պարսկերենի միջնորդությամբ: Ակադ. Հ. Աճառյանն այդպես էլ կարծում է<sup>6</sup>: Ո՞րն է այդ հանգամանքը. արաբական տիրապետությունը Հայաստանում վերանում է IX դարի վերջերին, և այդ տիրապետության ամբողջ ընթացքում հայ մատենագիրների երկերում արաբերեն բառեր կա՛մ չկան, կա՛մ հանդիպում են հատ ու կենտ. արաբական փոխառությունները երևան են գալիս ավելի ուշ՝ այն ժամանակ, երբ Հայաստանում արաբական ազդեցություն չկար (հիմնականում XII դարից):

Նախ. ինչո՞ւ արաբների տիրապետության շրջանի հայ մատենագրության մեջ արաբական փոխառություններ քիչ կան: Որովհետև ժամանակի միակ պրական լեզուն՝ գրաբարը, կտրվելով ժողովրդական լեզվի ակունքներից՝ մնացել էր հին օրինաչափությունների շրջանակներում: Գրաբարագիր հեղինակները սրբությամբ պահելով լեզվի հին օրենքները, պահպանում էին նաև հնուց

<sup>6</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 183, 186:

ավանդված մայրենի բառապաշարը: Ուրեմն բնական պետք է դիտել, որ այս շրջանի գրական երկերում արաբերեն փոխառությունները հազվագյուտ են:

Մյուս կողմից՝ չենք կասկածում, որ հայերենին արաբերեն բառեր անցել են նաև պարսկերենի միջոցով, բայց մի՞թե մինչև XII դարը պարսիկները մեզ հարևան չէին. չէ՞ որ արդեն VII դարից նրանք ենթարկված էին արաբական ազդեցության: Ինչո՞ւ VII—XII դարերում պարսկերենի միջոցով արաբերեն բառեր չէին ներթափանցում մեր գրավոր լեզվի մեջ: Ուրեմն այստեղ ուրիշ պատճառ կա՝ ճի՞ն և միակ գրական լեզուն՝ որը խուսափում էր նոր ու անտեղի փոխառություններից:

Չպետք է անտեսել մի կարևոր հանգամանք ևս. բուն Հայաստանի հեղինակների երկերում հանդիպում են այնպիսի արաբական փոխառություններ, որոնք հնչյունական արտահայտությամբ ուղղակի համընկնում են արաբական բառաձևերին, իսկ դրանց կողքին հաճախ առկա են պարսկական հին կամ նոր տարբերակները: Բերենք մի քանի օրինակ.

Հովհ. Երզնկացին ունի՝

«Խողըն ջօհար ե՞րբ ճանչե, զօրն ի բուն զաղբըն կու փորէ» (ՀԵ, 143):

Արբ. Jauhar: Վկայված է նաև Ստ. Օրբելյանի կողմից՝ ջաւհար ձևով (Պատմ., էջ 185, 298): Այս բառը արաբները փոխ են առել պարսկերենից (<պրս. gōhar), բառասկզբի ց-ն տառադարձելով յ-ի: Միջին հայերենի ջօհար ձևը համապատասխանում է արաբականին: Սրա կողքին դեռ դասական շրջանից ունենք նաև գոհար:

Կոստ. Երզնկացին ունի՝

«Ով կնոջ սուրբ և բարու ինք հանդիպի,

նա իր թան է պարծանաց թագաւորի» (ԿԵ, 219):

Արբ. ta] «թագ».<պրս. tag: Դասական շրջանից ունենք նաև իրանյանին համապատասխանող թագ, որ բերված նախադասության մեջ առկա է թագաւոր բառում:

Ֆրիկ.

«Թէ բուրջն ու թալեհն աղէկ՝

Յաստուծոյ է քեզ հրամայած,

Զինչ յաշխարհըս մարդ որ կայ՝

Զերդ մըշակ են քեզ կանգնած» (ՖԲ, 226):

Հյուբշմանն այս բառը կապում է արբ. bur] բառի հետ, որը ևս իրանական ծագում ունի.< burg «աշտարակ»: Ֆրիկի բանաստեղծության մեջ հավանորեն գործածված է «բարձրություն» կամ «աստիճան» իմաստով: Դասական հայերենում նույն բառը ունենք բուրջն ձևով:

Տէհուն (դահուն, տահուն) բառը, որ նշանակում է «կաքավ», վկայված է Լ. Երզնկացու, Գր. Մագիստրոսի երկերում: Ծագում է արբ. t̄āihū] բառից, որի պարսկերեն բառաձևն է՝ t̄ihū:

Լազուարդ, լաժուարդ, լաջվարդ. վկայված է Գր. Տաթևացու, Մխ. Հերացու և այլոց կողմից: Ծագումով պարսկական է՝ lažvard: Հնդկերենում դարձել է lajvard, որն անցել է արաբերենին. այստեղ հնդկականի կողքին կա նաև lazvard: Հայերենում հանդիպում է թե՛ լաժվարդ, թե՛ լաջվարդ, թե՛ լազվարդ: Առաջին ձևը պարսկերենից է, վերջին երկուսը՝ արաբերենից (տե՛ս Լ. Աճառյան, Արմատական բառարան, համապատասխան բառի տակ):

Ճունդիկ «զինվոր» բառը փոխառյալ է արաբական jundī ձևից, որը

ակադ. Աճառյանը կապում է պրս. Կund, պհլ. gund բառերի հետ: Դեռ դասական շրջանից ունենք նաև գունդ, որ համապատասխանում է իրանյան ձևին:

Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ հայերենի կապը արաբերենի հետ բուն Հայաստանում, ինչպես Կիլիկիայում, Սիրիայում, որոշ ժամանակ եղել է անմիջական:

Որտեղի՞ց և ինչպե՞ս XII դարում ժողովրդական բնույթի արաբական փոխառությունները մտան միջին գրական լեզվի մեջ: Անշուշտ՝ ժամանակի խոսակցական հայերենից: Չպետք է մոռանալ, որ միջին գրական հայերենը մշակվել է խոսակցական լեզվի հետ սերտ կապի պայմաններում: Միջին գրական հայերենի մեջ չի կարելի շտեմել ժամանակի խոսակցական լեզվի պարզ դրոշմը: Հենց տարբեր բարբառների ազդեցությամբ էլ մեծ մասամբ պայմանավորված է միջին գրական լեզվի ոչ միատարր բնույթը: Թեպետ միջին գրական լեզվի սկզբնավորման շրջանում արաբները Հայաստանում ազդեցություն չունեին, բայց այն բառապաշարը, որ երկարատև համակեցության պայմաններում անցել էր խոսակցական հայերենին, XII դարում դեռ պահպանվում էր, և երբ կենդանի խոսքի հիման վրա սկսեց մշակվել միջին գրական լեզուն, այնտեղ առատորեն մուտք գործեցին ժողովրդի մեջ պահպանված արաբերեն բառերը:

Այսպիսով՝

1. VIII դարի կեսերից հայ ժողովուրդն իր բուն երկրում ապրել է արաբ ցեղերի հարևանությամբ, ըստ որում երկու դար (VIII և IX դդ.) կրել է արաբական բռնատիրության ծանր լուծը. այդ պայմաններում արաբերենից շատ բառեր են անցել ժամանակի խոսակցական հայերենին, որոնք միջին գրական լեզվի ձևավորման շրջանում դեռևս կենսունակ են եղել:

2. Գրական միջին հայերենի ժողովրդական բնույթի արաբական փոխառությունների աղբյուրը եղել է խոսակցական միջին հայերենը:

Ժողովրդական բնույթի արաբական փոխառությունները արտացոլում են կյանքի տարբեր կողմերը, միաժամանակ դրանք կենդանի վկայում են այն հարաբերությունների մասին, որոնք երբևէ գոյություն են ունեցել հայ ժողովրդի և արաբ զավթիչների միջև:

Ժողովրդական փոխառությունները, ըստ իմաստային-կիրառական ոլորտների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

1. Պետական կյանք և պաշտոնավարություն արտահայտող բառեր. — ամիրայ (ամիր) «իշխան, տեր» <արբ. amīr, էմիր «հրաման, կարգադրություն» <արբ. emīr, խալիփայ (խալիֆայ) «ամիրապետ» <xalīfa, ըռայիս (ըռաիս, ուլիս) «գլխավոր, կառավարիչ» <ra'īs («արբ. ra's «գլուխ»), մելիք «իշխան» <malīk, նալիպ «օգնական» <nā'ib «փոխանորդ, օգնական», սուլտան (սուլթան) <sulṭan, վազիր (վեզիր, ոզիր) <vezīr, հուլք «հրաման» <ḥukm, դահր (խահր, կահրայ) «իշխանություն, ուժ, բռնություն» <qahr, qahrā, մանշուր «հրովարտակ» <man-šur, լաղապ «տիտղոս, պատվանուն» <laqab, ջաւր «բռնություն, շահագործում, անիրավություն» <Javr, Jevr, հեջուպ (հեճուպ) «թագավորական սենեկապետ» <hājib, դաւիլ «գաշնագիր, մուրհակ» <taḥvīl, ալամ (լալամ) «դրոշմ» <alam, ուլ «գորշակ» <rāya, միրի «պետական գանձարան» <mīrī, մուխթասիպ «ոստիկան, հարկահավաք» <muḥtasib («ḥasab «հաշիվ»),

սամսար հարկահավաք, միջնորդ»։ <samsār, մունետիկ թթազավորական հրամանները հրապարակող, կանչող, հայտնող»։ <munādī (mu նախածանցով՝ nādā «կանչել» բառից), շալատ (ճէլլատ, ջէլլէդ) «դահիճ»։ <ǰallād, ըրըշֆաթ «կաշառք»։ <rašvat, rišvat, rušvat «պարգև, աշխատավարձ, կաշառք»։

2. Իրավունք և դատ.— դախիրայ օրենք»։ <ṭariq «ուղի, ճամփա», օրենք», դատի «դատավոր»։ <qādī, տալապ «պահանջ»։ <ṭalab, ṭaleb, ջազալ «պատիժ, տուգանք», «վարձատրութիւն, պարգև»։ <ǰazā, Jezā, ջաֆա «անարդարութիւն»։ <ǰafā, դաւի «բողոք, վեճ»։ <daʿvā, խասմ «թշնամութիւն»։ <xas̄m, խիսմ «դատի մեջ հակառակորդ»։ <xasm, xasīm, դալատ «հանցանք, մեղք, սխալ»։ <ǰalat, տաղակ «ապահարգան»։ <ṭalāq «արձակել»։

3. Հարկեր.— ապուր (հարկի մի տեսակ է) <ʿubūr, դաման <damān, խարած «գլխահարկ»։ xarāǰ, հազը (հարկի մի տեսակ է) <ḥazīra, մրուր «տուրք»։ <murūr, ուշուր «տասնորդ»։ <ʿušr, ռասմ (հարկի մի տեսակ է) <rasm:

4. Պատերազմ.— դմիշկ «պողպատե սուր»։ <dīmīšq, մուդրէ «սուսեր»։ <maǰra, սլեհ «զենք»։ <silāh, ճուշան (ճօշ) «զրահ»։ <ǰaušan, մնճեհ «պատերազմական մեքենա»։ <manǰanīq, շխրայ «տանջելու գործիք»։ <šaxr (անստուլզ), ճունդիկ «զինվոր»։ <ǰundī, պրս. ǰundī (<gund), համլայ «հարձակում»։ <ḥamla, խասար (հիսար, սխար, սղար) «պաշարում»։ <ḥisār «պաշարել», դազա «կոխիվ»։ <ǰazā «հարձակվել», ǰazvāt «հարձակում», դազալ «աղետ»։ <qaza, դալալ «գնդակահարութիւն»։ <qalʿ:

5. Վաճառք և գործարք.— դուքան «խանութ»։ <dukkān, բազազ «վաճառող» <bazzāz, տէֆ (անել) «ապրանքը վաճառել, քշել»։ <daʿʿ «քշել, վաճառել», խարճ «ծախս» <ḥarǰ, նաղտ «կանխիկ դրամ»։ <naqd, ջամ «գումար»։ <ǰamʿ, ջումլայ «ամբողջ գումար»։ <ǰumla, խաստ «մասնավճար»։ <qist, ըրիմն «գրայվ»։ <remon, մազատ «աճուրդ»։ <ma-zād, ամանաթ «ավանդ»։ <amānat, կապալ «վաշխ»։ <qabāla, դալլ (դալ) «համաձայնութիւն»։ <qavl, շարթ «պայման, պայմանագիր»։ <šart, խաֆիր «երաշխավոր», «երաշխավորութիւն»։ <xāfir «պահակ, պատասխանատու, երաշխավոր», թամասուկ «պարտամուրհակ»։ <tammassuk (mask «կառչել, բռնել» արմատից), ապրալ «ամանի քաշը»։ <ʿabra, միզան «կշիռք»։ <mī-zān, ատիլ «կշիռ» <ʿādīl «հավասար, արդար, կշիռ», մէն (քաշ է)։ <mann, ռուպ (րուպ) «քառորդ չափը»։ <rubʿ, մթխալ (փոքր չափ է)։ <mīḥqāl, վաքիա (չափ է) <vaqiya, խանթար (դանթար, կանթար, խանսար) «ցենտներ» <qanḥar (պրս. ginfār, հուն. χεντηνάριον, լատ. centenarium), ոթլ «լիտր»։ <raǰl:

6. Պչրանքի առարկաներ.— աղեղ «սուտակ»։ <ʿaqīq, դրակ «մարգարիտ» <ḍurr «մարգարիտ» և հլ. աղ (ակն), եամանի «կիսաթափանցիկ, մուգ կարմիր ակ»։ <yamanī, հաշմ «լասպիս»։ <yašm (<հուն. ἴασπις), ջոհար «գոհար» <ǰauhar, սեպան «սև սաթ»։ <sabaǰ, թարկ «աղամանդի երեսները»։ <արբ. ǰarq, ǰaraq «շերտ» (ըստ Յ. Կարստի):

7. Հագուստեղեն.— ռիդա՝ «վերարկու»։ <rida՝ «հագուստ, վերարկու», ճուպալ «կարճ վերարկու»։ <ǰubba, դուռալ «արարական լախն ֆա-



բազա»։ <durra<sup>a</sup>, զուհար պոտի»։ <zunnār, տրէզ շորի բանվածք»։ <tirāz (tarz «ձև, կերպ»)։

8. Կոորեդեն. — առլաս <ātlas, հարիր ամետաքս»։ <harīr, նասիճ Եջուսկեն»։ <nasīj, քթան Երամբակի կտոր»։ <kattān (ktun) «վուշ», կազ կերպաս»։ <qazz:

9. Արհեստներ. — հաշամ սափրիչ»։ <hajjām, ճոն կաշեգործ»։ <Juna, հատաա (հղուղ) Երկաթագործ»։ haddād, խապազ Եհացագործ»։ <xabbāz, նաճար Եջուսն»։ <naJJār, պայտար <baytar, տապախ 1. կաշեգործ», 2. Եդարաղանոց»։ <dabbāy (նուլն իմաստներով), քասապ Եմազործ»։ <qaşşāb, լպուտ Եգզրար» <libāf:

10. Գործիքներ. — ըռըզայ Եողակ»։ <rassa, մղլակ Եդոան փակ»։ <miylāq, պարզունակ Եզսպանակ, սողնակ»։ Կարսուր այս բառը կապում է արբ. <barzīn, արամ. barzīnā բառերի հետ. ենթադրում է, որ սկզբում այն ունեցել է \*պարզիճակ ձևը, ապա ժողովրդական ստուգաբանութիւմբ դարձել է պարզունակ. մամար Եգամ»։ <mismār, նօքտայ Եսալր»։ <nuqta (արբ. բարբառներում՝ nokta), նկատ Եծակիչ, զարդարիչ»։ <naqqāt, մկսար (մսկար, մքսար) Եմիս ծեծելու տախտակ»։ <miksār, սատիր Ետապար»։ <sāfūr, մկրատ <miqrād Եկարող, խուզող», ապրախիլ Եմագնիս»։ կազմված է արբ. ապր ibra Եասեղ» և հայերեն խիլ «խլող» բաղադրիչներով. կթարգմանվի՝ Եասեղ խլող»։

11. Կրոնական բառեր. — դերի Եվանք»։ <deray (dair), դերէն Եվանական»։ <derayin, դերինակ Եուխտազնացութուն», զեւիա Եիսլամական եկեղեցի կամ սրբատեղի»։ <zāvīa, զեհես (զեհիտ) Եմանմեղական կրոնավոր, ճգնավոր» <zahīd Եժուժկայ, ճգնավոր, կրոնավոր» (zuhd Եժուժկայութուն»), ըսասուլ Եմանմեղական առաքյալ»։ <rasul, քնիշտ Ետաճար»։ <kānīsat, ճեմիայ Եմզկիթ»։ <Jāmī<sup>c</sup>, հաճի Եուխտազնաց»։ <hajjī, հէճ Եուխտազնացութուն»։ <hajj, մահտեսի <muqdisī, մէզար Եսրբի զերեզման»։ <māzār, թուղայ Եմանմեղականի աղոթք»։ <du<sup>a</sup>, սալալ (սաղավաթ) Եմաղթանք»։ <šalā(t), šalavāt Եաղոթք, մաղթանք, ընծա», ոռքուն Եսուրբ քար»։ <rukū, մամբար (մանբար) Եմզկիթի բեմ»։ <minbar Եամբիոն, բեմ», մեհրապ Եմզկիթի խորան» <mihrāb, մուղրի Եիսլամ հոգեորական»։ <muqrī, մսլիմանակ Եմանմեղական»։ <muslimān, շիս Եիսլամ վանահայր»։ <šēx, իպիս (իբպիզ, իպիս) Եղև, սատանա»։ <iblīs, նալաթ Ենզողք»։ <na'lat, սունաթ Եթլպատում»։ <sunnat, ոխվ (ոխֆ, վախմ, ոխմ) Եվանքապատական»։ <vaqf, vaquf:

12. Բնութիւն. — փիլաք (ֆալաք) Եերկինք»։ <falak Եերկինք, աստղ, ճակատազիր», քալաք Եերկնքի պարունակ»։ <kalak, շամս Եարև»։ <šams, նուր Ելուլս»։ <nūr, դամար Ելուսին»։ <qamar, պատր (պէտիր) Ելիալուսին»։ <badr, bedr, ռեհ Եքամի»։ <rīh, հաւայ Եօզ, եղանակ»։ <havā<sup>c</sup>, այն Եաղբուր»։ <ain, խիմս Եկլիմա», Եերկրամաս»։ <iqlim (հուն. klīma), թիլ Եբուր»։ <tall (հոգն. tilal), մաղարայ Եքարանձավ»։ <mayāra, պահր Եժով»։ <baħr, սեհալ (սեհլ, սէհլ) Եժովափ»։ <sāhil:

13. Կենդանիներ. — Վալրի՝ ապուզնայ (ապուզէն) Եկապիկ»։ <abūzinna(t), խնտուզ (խնդուզ) Եջրշուն»։ <qunduz, թիմաս Եկոկորդիլոս»։ <timsāh, խալիզոն Եխխունջ»։ <halazūn, սարատան Եխեցգետին»։ <sara-tān, ֆար Եմուկ»։ <fā'r, fā'rā(t):

Բնտանի՝ հարկան ճանասուն»։ <haivān, դաւար քրեոնատար անասուն»։ <davvāb, մայ ճեղ, արջատ»։ <māl, մարքար քրաստ»։ <markab, պաքարայ ճկով»։ <baqara, շամայ ճուղտ»։ <Jamal, շնիրայ ճի»։ <Janība, փահլ ճարու ճի»։ <faḥl, քումայթ ճարմավադուն ճի»։ <kumait:

Թռչուններ՝ դահուն (տահուն, տէհուն) ճկաքավ»։ <īhūj, teyhūj, դունէն (տունէն, սուռայն) ճսալամբ»։ <durrāj, կուռար ճագոավ»։ <γurāb, լուկայ ճարծիվ»։ <uqāb, սակա ճանգղ»։ <saqr, պղպղայ ճթութակ»։ <babḡa:

14. Ուտելեղեն և խմիչքներ. — զահրէ ճթերք»։ <daxīra, ըուլզ (ուլզ) քրիինձ»։ <aruz, (հլ. որիզ), զիլիպան ճարգանակ»։ <zilībiyā (Ըստ Յ. Կարստի), զիրպան <zīrbāj <zīra-ba ճշամանի կերակուր», մուտակակ ճհավի արգանակ»։ <mudaqqaq, հավարի ճալրե խաշիլ»։ <havārī, հարիրայ ճալլուրախլուս»։ <harīra, հերիսայ <harīsa, մուզավարայ ճկանաչեղենով կերակուր»։ <muzavvara, հալիմայ ճքաղցր ապուր»։ <hulām, նուղըլ ճչոր մրգեղեն, աղանդեր»։ <nuql, թրնճուպին, թրնճպին ճմանանա»։ <tārānjubīn (պրս. tarangūbīn), մարապայ <murabbā, նատիֆ ճշաքարի թանճրուք»։ <nāḡif, ֆանիտ ճշաքար»։ <fanīḡ, նապաթ (շաքարի մի տեսակն է)»։ <nabāt, աղիտա թթանճրացրած դոշար»։ <caqīda, ըուլզ քոշար»։ <rubb, ճուլզայ ճզովացուցիչ խմիչք, մրգահլութ»։ <Jullāb (պրս. gulāb), ճարայ ճեփված մրգահլութ»։ <šarāb, ճարբաթ ճքաղցր ըմպելիք»։ <šarbat, տիբս քոշար»։ <dibs, ֆուխա (փուկայ) ճգարեջուր»։ <fuqā, խահուն ճսուրն»։ <qahva:

15. Հաստատութլուններ և շինութլուններ. — ալաթ ճբաղնիք», ճավաղան»։ <ālat, ամարաթ ճհոգետուն, ճրի պանդոկ»։ <imārat, ուպատ ճիջևան»։ <rabāt, ճուկակ (սոխախ, սուխախ) ճփողոց»։ <zuqāq, կանդարայ ճհամուրջ»։ <qanḡara, հուճրա ճխուց», ճխորշ» <ḡuḡra, բար քոլու»։ <bāb, աթուն ճհոց»։ <atūn:

19. Վիճակ, դրութլուն, հատկանիշ արտահայտող բառեր. փարտ ճկենտ»։ <fard, արզ ճնկատելի, տեսանելի»։ <arhaz, այկան (այան) ճհատակ»։ <a<sup>c</sup>yan ճերկացող, նկատելի», թամամ ճլրիվ, ամբողջ»։ <tamām, լալեղ (լալեխ) ճհամապատասխան»։ <lāyīq, սաֆի ճանխաուն, անապակ»։ <safī, խալաս ճմաքուր»։ <xalāḡ, xālīḡ, համամ ճտաքուկ»։ <ḡammām, խաս ճընտիր»։ <xasḡ, խալպի ճկեղծ»։ <qalb, խարայ ճքալքաված»։ <xarāb, պատլիլ ճփչանալ»։ <baḡāḡal ճփուն, անգործածելի, անպետք», հաքր ճանարգ»։ <ḡaqīr, ապլահ ճհիմար» <ablah, մաղպուն ճխարված»։ <maḡbūn, ճաֆիլ ճանգետ»։ <ḡāfil, էլում ճգիտուն»։ <ulum, խիկար ճխելք, իմաստուն»։ <ḡiqār, միզան (միզայն) ճարամաղրութլուն», ճխաունուրգ»։ <mizāj, հալ ճվիճակ»։ <ḡāl, հալրան ճգարմացած, ճփոթված, մոլորված»։ <ḡairān, մաղլաղ ճկախված, գլուխկոնծի»։ <mu<sup>c</sup>allaq, մասխարայ ճծիծաղելի»։ <masxara, խումար ճխենթ», ճգինով»։ <xumār (xamr ճխմիչք), մավիճ ճվետ-վետ»։ <maḡv ᳚ ճալիք», ճվետ-վետ», հարաքաթ ճկալտաութլուն, աշխուժութլուն, ճարժում»։ <harakat, քալ ճկիզիչ, ալրող»։ <kāvī, լատիֆ ճնուրբ»։ <laḡif, քաթիֆ թթանճր, խիտ»։ <kaḡif, լազիճ ճկաչուն, մածուցիկ»։ <laḡij, սալիլ ճհալված»։ <sāyile ճհոտղ» <sā'il ճհեղուկ», ճապուն ճխեղճ, նիհար»։ <zabūn ճբարակ», մլղուն ճանիծված», <ma<sup>c</sup>um, մուխատրա ճլտանգավոր»։ <muxāḡara, մէշում (մաշում) ճչարաբաստիկ,

վատ»։ <maš'um, մշթին «գարշահոտ» <mintin, զըֆըր «հոտած»։ <zafir, մողամ (մոտամ) «մշտապես»։ <mudām, ժղուլ «զբաղմունք»։ <šuyi «աշխատանք, զբաղմունք», մուճուր «վարձված»։ <ma'jūr, աճուճ-բաճուճ «թղուկ, փոքրիկ»։ <yājūj-bājūj (mājūj), բարաթ «բավարար»։ <bābat, էմնութիւն (էմինութիւն) «անվտանգութիւն»։ <emīn «անվտանգ», խավաթ (խավլ, կավլ, խավլէթ) «միայնակ, լուռ, առանձին»։ <xalvat, խառզ (զարզ) «սուզված»։ <γaraq (բրբ. γαρզ), խատր (ղադր, դատր) «զորութիւն» <qadr, խարիպ (ղարիպ) «օտարական»։ <γarīb, եասիր (եսիր, էսիր) «զերի»։ <'asīr, լաճապ (լաշապ) «զարմանալի»։ <'ajāib, խեր «օգուտ, բարիք»։ <xayr, ճէլ «փայլ»։ <Jilā, ոճմ «վախ»։ <vahm «վախ, երեակալութիւն», պէլալ «փորձութիւն»։ <bālā, թուաքար «մտատանջ, մտազբաղ»։ <tofakkur, սակատ «խեղված, խեղանդամ»։ <saqat, սակմիլ «հոգնել, ձանձրանալ» <saqm, սարիաթ «աճապարանք»։ <sari' «արագ, շտապ», սիասաթ «պատրաստութիւն»։ <siyāsāt, ֆլեհիլ «աճել»։ <falāh «աճ», ումբր «տարիք»։ <umr, մէլ «հուլս»։ <amal:

17. Բնավորութիւնն և վարվեցողութիւնն արտահայտող բառեր. — ալիպ (ալպ, լալպ) «արատ, թերութիւն, ամոթ»։ <ʿaib, զաղալ «խաբեբա»։ <z aʿal, թաղսիրութիւն «ստորութիւն»։ <taxsīl, հիլալ (հիլլալ) «նենգութիւն, ամբաստանութիւն»։ <hīla, տապզէ «իզացող»։ <tabaz «պատկանող», մհեա «ուրացող»։ <mulhid, նկիրացող «երախտամոտ»։ <nakar, inkār, շաթրութիւն «ճարպկութիւն»։ <šatir, քաֆրիկ «չվստահող, անհավատ, անխիղճ»։ <kāfir, սէքին «հեղ, հանգիստ»։ <sākin, ֆաւուլ (ֆաւուլ, ֆոտուլ) «հանդուզն, ինքնավստահ, հետաքրքրասեր»։ <fuḍūl, քիպր «մեծամտութիւն»։ <kibr, քիւֆր «հայհոյանք»։ <kafir, պոի «վայրենի»։ <barri «վայրենի, վալրի, դաշտալին» (bari «ցամաք», barriya «մարդկանցից հեռու, քաղաքից դուրս»), անվրվաթ «արբ. muruvvat «մեծահոգութիւն», «արիութիւն»։ հլ. ան- նախածանցով՝ «փոքրոգի, անարի», անշաղաւաթ «արբ. šafqat «խիղճ», ան- նախածանցով՝ «անխիղճ», էհմալ «անփութութիւն»։ <i'hmāl, լէշրաթ «մարդամոտութիւն, հարաբերութիւն, խնդութիւն»։ <ʿiśrat, նսեֆ «վստահութիւն»։ <nāsif, շաղավաթ «սիրալիրութիւն»։ <šawq «սեր, կարոտ», šawqiyat «սիրալիրութիւն», ոֆա «հավատարմութիւն, երդում»։ <vaifā, սադրիլ «թաքնվել, պահվել»։ <satr, sitr, սապապ «պատճառ»։ <sabab, սապո (սապր) «համբերութիւն»։ <šabr, վատ «խոստում»։ <vaʿad, vaʿade, քալիմալ «խոսք»։ <kāllme, օսիաթ (ոսիաթ, վասիէթ) «պատգամ»։ <wašīyat, աաէթ (լատէթ) «սովորութիւն, բարք»։ <ʿadaī, ʿadet, եխթիաթ «զգուշութիւն, հեռատեսութիւն»։ <ihṭiyat, ոէսմ «ծես»։ <rasm, rusum, զէքէթ (զէքաթ, զաքաթ) «ողորմութիւն, բարերարութիւն»։ <zekāt, դալալ «քնքշութիւն, սիրալիրութիւն»։ <dalāl, ըռովիլ «խաղաղանալ, հանգստանալ, բավականանալ»։ <rifāq «հանգիստ», թապիէթ «սովորութիւն»։ <tabīʿat, թաքրար (թէքրար) «կրկնութիւն, փորձ»։ <takrār «կրկրկրնել, փորձել», թարկել (թորկ տալ, թորկել) <tark «թողում», taraka «թողնել», իխրար «հաստատում»։ <iqrar, իսթիղմալ «օգտազործում»։ <istyʿmāl, լութֆ (լութֆի) «սիրալիրութիւն, քնքշութիւն, բարեգործութիւն»։ <luṭf «սիրալիր», «քնքշութիւն» (laṭīf «նուրբ»), խաթր (հատր) «հիշում, մտազրութիւն»։ <xāṭyr, խապուլ (ղապուլ, կարիլ) «համաձայնութիւն, ընդունում»։ <qabūl, խասիաթ (խասլիաթ) «առանձնահատկութիւն, բնավորութիւն»,

քնութիւն, հատկութիւն»։ <xəşşiyat «հատկութիւն», միւննէթ «պարտավորում»։ <minnat<sup>c</sup>, լէզէթ «հաճույք»։ <lezzet «համ, հաճույք», մուրաս «իղձ, տենչանք, ցանկութիւն»։ <mürād «ցանկալի», «իղձ» (կազմվել է mū նախածանցով՝ arāda «ուզենալ» բառից)։

ժողովրդական փոխառութիւնները բանավոր լեզվում լայնորեն գործածվելու պատճառով սովորական են դարձել միջին հայերենի համար և հաճախ, ենթարկվելով նրա բառակազմական օրենքներին, հանդես են գալիս զանազան բաղադրութիւններում. օրինակ՝

Ամիրա—ամիրայութիւն, ամիրապետ, ամիրապետութիւն.

Ղալատ (խալատ)—ղալատել (խալատել), խալտիլ, խալտանք, անղալատ.

Թետպիր—թղպրել (թտպրել), թտպրիլ (թտպրվիլ), թտպրար «խորհրդատու», թետպիր դնել «հենարան դնել» (բուլսի).

Թարկ—թարկել, թորկ տալ, թորկել, թարկիկ տալ.

Թաքրար «կրկնութիւն»—թաքրար այնել, թաքրար նստել.

Ժղուկ—ժղլիլ, ժղլանք, ժղլտուն.

Ղալպ (խալպ, խալպի)—խալպի զուգել «կեղծել».

Հիլայ (հիլայ) «նենգութիւն»—հիլայք «ամբաստանութիւն», հիլայ անել, հիլայել.

Ալամ «դրոշ»—խաչալամ «խաչվառ».

Հուբմ «հրաման»—հուբմարար «իշխան», հուբմ այնել «հրամայել».

Մելիք—մելքել (մլքէլ) «ճորտացնել».

Խսար (հիսար)—խսարել (հիսարել, սխարել, սղարել) «պաշարել».

Սլեհ «զենք»—սլեհվոր, սլեհտուն «զինանոց».

Ջազա (ճազա) «պատիժ»—ճզայել, ջազա այնել.

Շէր «երգ»—շէրասաց «երգասաց».

Այիպ (այպ, էպ)—այպով, այպվոր.

Խէր «բարիք»—բարով խերով.

Խումար «խենթ, զինով»—խումարութիւն (խումրութիւն), խումրիմ (խումրեմ).

Հաքր «անարգ»—հաքրել, հաքր անել (այնել).

Մաղպուն «խաբված»—մաղպուն լինիլ.

Կահրայ (ղահր, խահր) «բռնութիւն, ուժ»—կահրայութիւն, կախրահան «առանց անհրաժեշտութեան».

Մունետիկ—մունետկել.

Շարթ «պայման»—շարթ անել «պայմանավորվել».

Աջապ (աճապ) «զարմանալի»—աճապարար (աճպարար).

Ջեհետ «մահմ. կրոնավոր»—զեհետաժողով «խառնաժողով».

Եխթիար «զգուշութիւն»—էխթիար անել «հսկել».

Թաղսիր «փոքր, ստոր»—թաղսիրութիւն.

Թուաբար «մտատանջ»—թուաբարիլ (թուազարիլ) «մտատանջվել».

Լայեղ—լայեղվոր.

Խալաս—խալրսել, խալրսիլ.

Խապար—խապրիկ, խապրիկ անել.

Ղարղ (խառղ) «սուղում»—ղարղ լինիլ «սուզվել, խեղդվել».

Համլայ «հարձակում»—համլայ կապել «հարձակվել, հարձակում գործել».

Շաթր «վարպետ, ճարպիկ, խարեբա»—շաթրութին «խարեբայութուն»:  
Մէշում (մաշում) «շարաբաստիկ, վառ, վատթար»—մէշումութին «դժբախ-  
տութուն», մեշում լինիլ «վատանալ»:

Շաղավաթ «սեր, կարոտ»—շաղավաթ այնել:

Խապուլ «համաձայնութուն»—խապուլ անել (ղապուլ ընել) «ընդունել,  
համաձայնվել»:

Տէվրան «ըրջան»—տևրան առնել «շուռ գալ, դառնալ»:

Նետիր «առաջ, ընդդեմ»—նետիր քաշել «առաջ բերել»:

Ջըֆըր (զուֆր) «փրփուր»—զըֆըրթըփիլ «փրփրաթափվել», զըֆըրքաղիլ  
«փրփուրը վերցնել»:

Հալալ—հալալութին, հալալ այնել (անել, առնել) և այլն:

Ժողովրդական փոխառութիւններէ բանավոր լեզվի մեջ շարունակվել են  
միջին հայերենի զարգացման ամբողջ ընթացքում: Այդ երևում է տարբեր ժա-  
մանակների՝ գրավոր հուշարձանների մեջ: Այսպես.

## XII դար, Ներսես Շնորհալի

«Ջետ ըզշահէն հանց սուր երթայ,

Համլայ կապէ դատարկ դառնայ» (ԲԶ, 610):

Արբ. hamla «հարձակում»:

«Ծս ի՞նչ կարդամ զհիւմէն քեզ ճառ,

Խելօքն ծով է ու խիկար» (անդ):

Արբ. hiqar «իմաստուն»:

«Իրք մի կայ ու ինքն է ջրբեր,...

Դատարկ նա չէ ռափկի ընկեր» (անդ):

Արբ. rafiq «բարեկամ, ընկեր մարդ»:

«Կաթողիկոսն էր անղալատ,

Տիր վիճակէն ոք չէր ի զատ»:

Դալալ «սխալ, մեղք»:

## XIII դար, Սմբատ Սպարապետ

«Եթէ ոք առուտուր կամ փոխ այնէ ընդ սէրէֆիկ, ու խալապայ կամ խա-  
բեութին լինի ի մէջն, եւ կենայ գրած ի սերեֆիկն տֆթարըն փոխն ու պո-  
մանն, ու սերեֆիկն ճանշած ու վկայած ըզորդ մարդ լինի, փորձած հալալ, նա  
ի դարպասն երդնու սերեֆիկն ի խողն եւ յաւետարանն, որ իր գրածն որ կայ  
յիր տֆթարն՝ նա ըզորդ է, նա աւտան իր, ու առնուն զիրաւունքն: Ապա թէ  
խիսմն ուննայ երկու աղէկ վկայ որ ինքն որ խալապայն կենայ ու լինի ի վե-  
րայ, որ վկայեն ըզորդ, նա խամին է իրաւունքըն, եւ ոչ սերեֆիկն» (ՂՀՀ, 199):

Արբ. šarāfi > սերեֆիկ (սերեֆիկ) «սեղանավոր, դրամափոխ».  
> Դալալալ (դալալալ) «շփոթութուն».  
> daftar > տֆթար «տետր, մատյան».  
> haial «աղնիկ».  
> xasm/xasim > խիսմ «չատի մեջ հակառակորդ»:

«Եւ թէ ոք ի մագաւն գրաստ ծախէ կամ գնէ, նա այնուհետեւ գնօղին  
բախտ է» (անդ):

Արբ. mazād «աճուրդ»:

«Եւ այս է սայգայն եւ իրաւունքն այնոցիկ՝ որ լսեն ի դարպասն, որ յի-  
րենց վերայ ելնեն դատըստընին եւ հիլայնաց խօսք ասեն, եւ իրենք լուեն, ու

չելնեն ի յոտն ու դիմախօսութիւն այնեն» (անդ, 197):

Արբ. hīla «նենգություն, ամբաստանություն»:

«Եւ թէ կնիկն մեռնի յառաջ քան զայրիկն, եւ տղայ չկենայ, նա դարձցնէ զինչ հետ կնկանն իրբ առել լինայ, թէ նաղտ եւ թէ այլ ցեղ կումաշ, զամէնն» (անդ, 193):

Արբ. naqd>նաղտ «կանխիկ դրամ». qumāš >կումաշ (կումայշ) «1. ընտիր կերպաս. 2. շարժական գույք»:

#### XV դար, Մկրտիչ Նաղաշ

«Մալի հաւաք մի՛ լինիր, մեծութիւնն քեզ չի պիտի» (ՀԱԳ, 67):

Արբ. mal «1. անասուն, եզ. 2. ունեցվածք». hasrāt «կարոտ»:

«Հայր զենէհար, հասիր մէտէթ, հոգիս քակուավ» (անդ, 69):

Արբ. mādad>մէտէթ (մադաթ) «օգնություն»:

«Յով որ քաղցրիկ նայես և նադար առնես,

Այլ հաւաք չի մնար, ով տեսնէ զքեզ» (անդ, 75):

Արբ. nađar «հայացք»:

«Նաղաշն ասաց թէ զարիպին կեանքն է հարամ» (անդ, 80):

Արբ. ʒarīb «օտարական, պանդուխտ»:

«Այդ անյատակ ծովուդ նման

Գերիս ի մէջն դարդ արար» (անդ, 81):

Արբ. ʒaraq (բարբառային՝ ʒarq) «սուզում», որից՝ դարդ առնել «սուզվել»:

#### XVI դար, Նահապետ Քուչակ

«Գիշեր ու ցորեկ կուլամ. անափ իմ եարն կու լսէ՞» (ՀԱԳ, 140):

Արբ. aʒab «արդյոք»:

«Իր օնքն էր զալմով քաշած, իր բերանն շաքրով ի լի» (անդ, 144):

Արբ. qalam «գրիչ»:

«Իմ սիրտս երկու դուռ ունի՝ մէկ զաղտ, մէկն արանի» (անդ, 152):

Արբ. ʿalani «հայտնի»:

«Տեսայ իմ հոգուս հոգին զարդարած ու բաղնելուայ.

ես ալ ի դէմիկն ելայ՝ նեղ սողալս ու խիստ զալապայ» (անդ, 150):

Արբ. zuqāq >սողախ (սօխախ, սուխախ, զուկակ) «փողոց». ʒalaba «շփոթություն»:

«Դեռ ի մուրած չէի հասել, նայ առին զան վարդն ի ձեռացս» (անդ, 147):

Արբ. mūrād «իղձ»:

«Ձեռ նորով է տարած կամ խաբած է զինքն դրամով» (անդ):

Արբ. javr «բռնություն»:

#### XVII դար, Նաղաշ Հովնաթան

«Զլինի ինձ մոռանաս, քարկես» (ՀԱԳ, 235):

Արբ. tark «թողում». հյ. քարկել «թողնել»:

«Ապա է՛ր ինձ շարիր խապար» (անդ, 236):

Արբ. xabar «լուր»:

«Հայի՛Ք որ թշնամոյն շուտ կու հաւատաս» (անդ, 251):

Արբ. հալի «ափսոս»:

«Հավէն վնաս որպէս ըզհուր» (անդ, 264):

Արբ. havã<sup>c</sup> «օդ, եղանակ»:

«Ասէ՛ք սուրաթիս նման քաշէ» (անդ, 242):

«Զեռնէս վեր ընկավ ղալամըն» (անդ, 236):

Միջին հայերենով գրող տարբեր հեղինակների լեզվում ժողովրդական բնույթի արաբական փոխառութիւնները միևնույն հաճախութեամբ հանդես չեն գալիս: Կան հեղինակներ, որոնք առհասարակ քիչ են դիմում օտար բառերի. օրինակ, Առաքել Բաղիշեցին, Խաչատուր Կեչառեցին. հեղինակներ էլ կան, որոնք սիրում են առատորեն օգտագործել բանավոր լեզվում գործածական փոխառյալ բառերը՝ դրանով ևս ձգտելով հարազատ մնալու ժողովրդի կենդանի խոսքին. այդպես են վարվում Յրիկը, Կոստ. Երզնկացին, Մկ. Նաղաշը, Հովհ. Թլկուրանցին, Գր. Աղթամարցին, Ն. Քուչակը և ուրիշներ: Այս հեղինակների լեզվում օտար բառերի կիրառութիւնն այդպիսով ստանում է յուրահատուկ իմաստավորում, որի շնորհիվ չի զգացվում խորթ մոլախոտերի խեղդիչ ճնշում մայրենի բառապաշարի հարուստ անդաստանում:

Օտար բառերը բանաստեղծական խոսքի մեջ հաճախ հանդես են գալիս հայերեն ավանդական բառերի կողքին որպէս նրանց հոմանիշներ կամ նույնանիշներ: Բերենք մի քանի օրինակ.

«Քո սէրդ իմ սրտիս զերդ հուր,

Քո տեսդ աչերուս իմ նուր,

Իմ դիմացս ելնուս զերդ հուր,

Խղճեա՛ քո գերոյս, իմ լոյս» (ԿԵ, 158—159):

Արաբերեն նուր «լույս» և հայերեն լոյս բառերը նույնանիշներ են:

«Զերդ ըզլուսին սուրաթ բոլոր

Շուրջ երեսին մազերն ոլոր» (անդ, 163):

Արաբերեն սուրաթ «դեմք» և հայերեն երես բառերը հոմանիշներ են:

«Այսօր եմ հուլմալ իշխան,

Հաւսար սիրելեացդ որ կան,

Հրաման ունիմ և ֆարման,

Վարդին երևան թող գան» (ՀԱԳ, 55):

Արաբերեն հուլմ, հին հայերեն հրաման (<պահլավերենից), նոր պարսկերեն ֆարման բառերը նույնանիշներ են:

«Հազար հետ ամանաթ ու երդում տամ քեզ,

Զոր ինչ հետ ինձ արիբ, այլ մարդոյ չանես» (անդ, 75):

Արաբերեն ամանաթ բառն այստեղ նշանակում է «հավաստիացում», որ դառնում է հայերեն երդում բառին հոմանիշ:

«Կարօտ կարօտովդ էի, հասրաթովդ ի ժուռ կուգայի» (անդ, 139):

Հայերեն կարօտ բառին իբրև նույնանիշ բերված է արբ. հասրաթ բառը:

«Յով որ քաղցրիկ նայես և նադար առնես,

Այլ հասրաթ չի մնար, ով տեսնէ զքեզ» (անդ, 75):

Հայերեն նայել բառին իբրև հոմանիշ դրված է արաբ. նադար «հայացք» բառով կազմված՝ նադար առնել «հայացք ձգել»:

Այսպիսով, ժողովրդական փոխառութիւնները միջնադարի մեր հայ բանաստեղծներին չեն մղել մայրենի բառապաշարը մոռացութեան տալուն, այլ ծառայել են որպէս մի օժանդակ միջոց՝ բանաստեղծական խոսքը ժողովրդական լեզվի արտահայտչական երանգներով օժտելու համար:

Քննված բառերից ժամանակակից մի շարք բարբառներ պահել են բավական թվով բառեր. դրան անշուշտ որոշ չափով նպաստել է հարևան լեզուների՝ արաբերենից ունեցած մեծ արդեցությունը (պարսկերենի, թուրքերենի): Բայց աշխարհաբար երկու գրական տարբերակները՝ արևելահայ և արևմտահայ, իրենց մշակման ու կատարելագործման ընթացքում, աստիճանաբար հրաժարվել են այս փոխառությունների մեծագույն մասից՝ կրկին կլանքի կոչելով ժողովրդի հիշողության մեջ պատմական հանգամանքների բերումով մշուշապատված մայրենի բառապաշարը:

Այսօրվա մեր գրական լեզվում արաբական փոխառությունների թիվը (գրական, թե խոսակցական ճանապարհով մտած) մոտավորապես երեք և կես տասնյակ է. ալքիմիա, աճպ(արար), ամիր, ատլաս (կտորը), ասուպ, բակլա, թաս, լոբի, խիկար, խսիր, կալի, կաֆա, կապալ, կավատ, կլայեկ, կոլոտ, կողպ(ել), հաբ, հաշիշ, հերիսա, հինա, մելիք, մկրատ, մումիա, մունեստիկ, նարինջ, նոպա, շամամ, շեխ, շիպ, պայտար, պատնջան, օեհան, սնդուկ, սղկ(ել), սուլթան:

#### ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲԱՌԵՐ

Միջին գրական լեզուն վկայում է դասական հայերենին անժանոթ շուրջ 600 իրանական բառեր՝ մեծ մասամբ նոր պարսկերենից եկող, ինչպես և պահլավերեն, զենդերեն հնագույն բառաձևեր, որ գրաբար մատենագրությամբ չեն ավանդվել երբեմն պատահականորեն, երբեմն բարբառային և ոչ ընտիր դիտվելով:

Միջին գրական լեզվի շնորհիվ նրա բարբառներից առաջին անգամ գրական ասպարեզ են մտել պահլավերեն, զենդերեն այնպիսի բառեր, ինչպես՝

Ազոփի «ազնվականություն»․ <պհլ. āzātih:

Այս բառը նոր պարսկերենում ստացել է āzāti ձևը՝ բառավերջի և-ի անկումով: Հայերեն բառաձևը համընկնում է պահլավականին:

Ահոկ «մոլուխուն, հանցանք»․ <պհլ. āhōk, որից կազմվել են նաև՝ ահոկել «վնասել»:, ահահոկ «անվնաս», ահոկութիւն «մոլութիւն, վնաս»: նոր պարսկերենն ունի āhō ձևով:

Անդոհ «վիշտ, մտատանջություն, ցավ»․ <պհլ. andōh, որից կազմվել են՝ անդոհիլ «անհանգստանալ, սաստիկ վախենալ», անդոհական «սարսափելի», անանդոհ «անհոգ, անցավ»:

Բոշխենի «վայելել»․ <զնդ. baxšna «վայելք»:

Գասական հայերենը նույն արմատից կազմել է մի այլ բառաձև՝ բմբոշխենի «լիանալ»:

Գոսակ «քարձ»․ <պհլ. \*kōsak (նոր պարսկերեն՝ kōsa):

Գրտակ «կյոր հաց»․ <պհլ. girtak (նոր պարսկերեն՝ girda):

Դարիճենիկ «կինամոն»․ <պհլ. dar-i-čēnik (նոր պարսկերեն՝ dar-i-čini):

Դեհ «կողմ»․ <պհլ. dēh (նպրս. dih «գլուղ»):

Դեհկան «կուսակալ»․ <պհլ. dēhkān (նպրս. dihkān):

Խոշակ «գատարկ հասկ»․ <պհլ. xōšak (նպրս. xōša):

Խոստակ «ավատ»․ <պհլ. xvāstak (նպրս. xvāsta):

Խոստակզար «ավատառու»․ <պհլ. xvāstakdār:

Կակժիրակ «նեղատու մի խոտաբույս»․ <պհլ. kakžirak (նպրս. kážira):



Կոռզպեա «արհեստապետ»։ Հայեր. \*karug-pat:  
 Համշիրակ «կաթնակից, սննդակից»։ Հայեր. hamširak (նպրս. hamšira):  
 Հարակաշ «վարուցանքի ընկեր»։ Հայեր. hadakaš:  
 Հեշմակ «ղեկ»։ Հայեր. \*hešmak (զենդերենում կա aēšma):  
 Ճուռակ «բաղե»։ Հայեր. Հւրրակ (նպրս. ĩurra):  
 Մուռակ «կոշիկ»։ Հայեր. Հmōčak, որից կազմվել է մուռակկար (մուռ-  
 կար) «կոշկակար» (նպրս. mōza):  
 Նշաստակ «ցորենի օսլա»։ Հայեր. nišastak (նպրս. nišasta, որը միջին  
 հայերենում առաջ է բերել զուգահեռ նիշաստա ձևը):  
 Շատիկ «եղջանկութուն, հաճույք»։ Հայեր. šadik/šatik (նպրս. šadi):  
 Պիսակ «բոր»։ Հայեր. pēsak «բորոտ»:  
 Ջոկ «անջատ. խումբ»։ Հայեր. Jōk (նպրս. Jōx):  
 Ջուխտ «զույգ»։ Հայեր. Juxt (նպրս. Juft):  
 Վզեց (վսեն) «տուգանք. վարձք. վնաս»։ Հայեր. vīzyāna, որից՝ վզեցակ,  
 վզեցիկ «վնասվել. տուգանվել»:  
 Վստահի «մաքուր»։ որ. վստահի արոհն (ՄՀՁ). Հայեր. vistāxv:  
 Տապահակ «մաի մի խորտիկ»։ Հայեր. tabāhak (նպրս. tabāha):  
 Տարազուկ «կենդանակերպ կշեռք»։ Հայեր. tarāzūk (նպրս. tarāzū):  
 Փաթերակ «փորձանք»։ Հայեր. patyarak, որից կազմվել են՝ փաթերակի  
 «փորձանքի գալ», փաթանք «փորձություն»։ Նոր պարսկերենն ունի patyara  
 ձևով:

Այս կարգի բառերը, որ ամենահնագույն ժամանակներից եղել են հայե-  
 րենի բառապաշարի մեջ, իսկ դա հաստատվում է նրանց ծագմամբ, կարելի է  
 համարել միջին հայերենյան ա՛յն հիմունքով, որ գրական լեզվում գործած-  
 վելու իրավունք նրանք ստացել են միջին հայերենի շնորհիվ՝ պահպանված լի-  
 նելով նրա բարբառներում:

Մի քանի խոսք պարսկերեն բառերի ներթափանցման հանգամանքների  
 մասին:

Պարսկերեն բառեր հանդիպում են ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ  
 Կիլիկիայի միջին գրական տարբերակներում, ըստ որում՝ մեծ մասամբ ժողո-  
 վրդրական փոխառություններ, որ մեր լեզվին անցած պիտի լինեն բանավոր  
 կերպով: Բուն Հայաստանը, ինչպես գիտենք, Պարսկաստանի հետ սահմանա-  
 յին հարևանությամբ կապված էր հնագույն ժամանակներից ի վեր, և սա եր-  
 կու ժողովուրդների, նրանց լեզուների մշտական շփման հիմնական առիթն էր,  
 իսկ Կիլիկիան հեռու էր Պարսկաստանից և անմիջական շփում չուներ նրա  
 հետ, ուրեմն ի՞նչ ճանապարհով էին պարսկերեն բառեր ներթափանցում այն-  
 տեղ: Հետևյալ հնարավորությունները կային.

1. Կիլիկիայի հայությունը տարեցտարի բազմանում էր բուն Հայաստա-  
 նից եկող բնակչությամբ, որոնք, իհարկե, նախկին բնակավայրերում չէին  
 թողնում իրենց բառապաշարը:

2. Կիլիկիան առևտրական կարևորագույն օջախ էր, ուր մուտք ունեին  
 առևտրով զբաղվող տարբեր ազգերի բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ  
 թվում՝ պարսիկներ:

3. Կիլիկիայի թագավորները, իշխանները, մտավորականները արաբա-  
 կան, սելջուկյան, մոնղոլական տերությունների հետ հարաբերությունների մեջ  
 մտնելիս շփվում էին նաև նրանց պարսիկ պաշտոնյաների հետ, որոնք կարե-

վոր դեր էին կատարում այդ տերութիւնների քաղաքական, տնտեսական, մտավորական կյանքում:

Այս հանգամանքները, ինչպես և մշակութային կապերը, առիթ էին ստեղծում պարսկերեն բառերի Կիլիկիա ներթափանցելուն:

Պարսկերեն փոխառութիւնները, ըստ իմաստային-կիրառական ոլորտների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

1. Բ ու յ ս եր . — ազարիոն (կարմիր, կրակագունջ մի ծաղիկ) <պրս. azaryūn (azaryōn), ազատգրախտ <պրս. azād diraxt—թարգմ. «մեծ ծառ» (ստգբ. ն. Բյուզանդացու), ակիր (էկիր) «բաղշտակ». <agir(egir), անգուտան (աթբ. անճուտան) «շանխոտ». <angudān, անճիրիտամ (Հնդկաստանում աճող թվանման մի միրգ) <anjīr-i-Ādam, աշրաս «շրեշ». <iš-rās, ապրուն «վալրի ազոխ». <ābrūn, ապրուր (ակաղ. Աճառլանն ուղղում է՝ ապրուր) «ամբուր». <ābrūd, ասլանճ (ներկատու վալրի մի խոտ. կանաչխոտ) <aslanj (ստգբ. Յ. Կարստի), ասպրամ «ոեհան». <ispāryām, բանկ (բանգ) (թմրեցուցիչ թունավոր մի բույս) <bang, բէշ (բիշ, պէշ, պիշ) (խիսա թունավոր մի խոտաբույս) <bēš (bīš), բրինձ «որիգ». <birinj, բրսի անդարու «հովվի բիր. մատիտեղ». <barsiyāndārū, գազ «մոշենի». <gaz, զգմազ «մոշենու պտուղը». <gazmāzak, գուլիսապահ «ցալգածաղիկ». gul-i-šabāh, նշանակում է՝ «վարդ առավոտվա» (ստգբ. Ղ. Ալիշանի), դարապղպեղ «երկար պղպեղ». <dār-i-pilpil, որ բառացի թարգմանվում է՝ «պղպեղի ծառ» (արաբական հնչյունադարձութվամբ՝ dārifilfil), դարիճենիկ «կինամոն». <պհլ. dār-i-čēnik (նոր պարսկական ձևն է՝ dār-i-čīni), դոճ (խիճատու մի ծառ) <dōž (պարսկերեն բառի հնագույն ձևը՝ \*dōj, որից առաջ է եկել հայկականը՝ չկա: Ստգբ. Հյուբշմանի), եղրեւանի <arjevān, ըռագիան «սամիթ». <rāzyāna, ըռէլվանդ «խավարծիլ». <rēvand, rīvand, զարիր «դեղին կոճ». <zarīr, զարտալու «ծիրան». <նպրս. zard-ālu, որ բառացի թարգմանվում է՝ «փոքրիկ դեղին ծիրան» (ստգբ. Յ. Կարստի), զրիշկ «ծոր» (վալրի թթվաշ մի բույս) <zīrišk, թաթրալ «վալրի սուճախ». <tatra (tatri), թախ (թաղ) «հնդկական խոշոր արմավենի». <tāl, թարանկուպին «մանանա». <tar «թարմ» և <angubīn «մեղր» (ստգբ. Ղ. Ալիշանի), թիթում «սուճախ». <tutum, թուխմաքան «փրփրեմ». <tuxmagān, թուտարի (թուխարի) «ձաղխոտ». <tūdārī, իշխուն «գաբծիլ». <išxūn, լալա «կակաչ». <lāla, լալազար <lāla-zār (անուշահոտ, բայց վնասակար և թմրեցնող բույս է), խաշխաշ <xašxāš, խառ (խար) «փուշ». <xar, խառթութ (խարթութ) «սև թութ». <xaitūt, խարաք «տհաս արմավ». <xarak, խարզահրալ (թունավոր վալրի մի բույս). <xarzahra, խարպիզակ «սեխ» <պհլ. xarbūzak (պրս. xarbūza), խէրպուէ «հիլ». <xīrbūyā, խիար <xiyār, խոշակ «դատարկ հասկ». <պհլ. xōšak (պրս. xōša), խուռամ «անթառամ ծաղիկ». <xurram, կակժիրակ (կակժիրակ) «վալրի ուտելի մի բույս, կրտիմ» <պհլ. \*kākzīrak (պրս. kāzira), կաղամբ <kalam, կանդանալ «պրաս». <gandāna, կանկար <kangar, կապար «կապարացախ». <kabar, կապարս (դաս. հայերենում՝ գաւարս) «կորեկի մի տեսակը». gāvars, կնճիթ (կնճուլթ, կանճուլթ, կնջիթ) «քնշուլթ» (ձիթատու բույս). <kunjīd, կոկան (կոկամ) «մի տեսակ մանր սալոր». <kūkām, կուլ «վարդ». <gul, համիշաբահար «ազոխ». hamisabahār, մահդանակ (հաստ ցողունով բարձր մի բույս, ուտենու նման երկար տերեւներով և մանր սպիտակ ծաղիկներով) <māhudāna

(անշուշտ հայկականը պիտի ենթադրել պհլ. \*māhūdānak-ից), մաշ «մի տեսակ բակլա», <māš, մարանճու «ծնեբեկ». <mārānjūy, մարխ «փշատերև մի ծառ». <marx, մարվ «ալեորուկ» <marv, մեխակ <mēxak, մեհրիկ «մրվանտակ». <mihrgiyāh, շաֆտալու «զեղձ». šaft-ālū- թրգմ. «փոքր դեղձ». շնկառ «իշու մառու». <šangar, շորալ «աղի ծաղիկ». šōrah, šūrah, շուշ «ծիլ». <šafš, չուքաղ (չուգաղ) «գաղի վարդը». čüb-gaz, պուզիտան «տղալի խոտ». <büzīdan, պեհման (պահման, բահման) «իշաքեղ». <bahman (bahmān), տևար (տիւտար) «զեի ծառ». նպրս. <div-dār:

2. Կենդանիներ. — բլբուլ (պլպուլ) «տխակ». <bulbul, դարաբ «փախտորիկ». <đār-āb (ստգր. Յ. Կարստի), ըռուպահ «աղվես». <նպրս. rōbāh (rūbāh), թէքէ «մորեխ». <takā, թութակ <tōtak, իշտրմուղ «ջալլամ». <ušturmurγ, կաչաղակ <պհլ. kačalak (նպրս. kaJala), դրմրզ (կարմիր գույնի մի կենդանի, ոսպի չափ, ապրում է դառն կաղնու տերևի վրա. որանից ստացվել է կարմիր ներկ) <qirmiz, ճուռակ «բազէ». <պհլ. čurrak (պրս. čurra), մալմուն «կապիկ». <meimūn, փալանիկ «կառքի ձի». «շորի». <pālāni, քարժանկ «խեցգետին». <xārcang:

3. Բնութիւն. — ասան «առափոտ». <āsān, բահար «գարուն». <<bahār, քէմար «նորած լուսին», «նոր ամիս». <նպրս. kamar, դապ «գետ». <zāb, ապխոր «աղբլուր». <āb-xōr (ստգր. Յ. Կարստի), աթաշ «հուր». <ātāš (ստգր. Հյուբշմանի), սալտ «ջեր. պարզ, ջինջ օր». <sāda (ստգր. Յ. Կարստի), հրուանդան <farāvand (Յ. Կարստ):

4. Մարդ. — դաստ «ձեռք». <dast, դանդան «առջևի ասամները. հեփան». <dandān, կէրտան «վիզ». <gārdān, փաչալ «աղդր» <pāča, բարչամ (փարչամ) «մազափունջ». <parčam(pherčem), կուլակ «խոպոպ». <պրս. kila (անշուշտ պահլավերեն կորած ձևից է հայերենը), զիլֆ «գանգուր մազ». <պրս. zulf, խալ «խալ». <xāl:

5. Պետութիւն, տիտղոս, պաշտոն. — փատիշահ «արքա. փաշա». <pādšāh, խաքան «սուլթան». <xāqān, խան «իշխան» (պարսիկ կամ մոնղոլ) <xān, ազտիհ «ազատանի». <պհլ. āsātih (պրս. āzāti), թաղթ «գահ». <taxt, ալինպետ «ատենապետ». <āyēn bād, արգբէդ «բերդակալ». <arz-bād, դեհկան «կուսակալ». <պհլ. dēhkān (պրս. dihkān), քարգոն «վարչարար». kārkun, քէտխուտալ «իշխանավոր, մեծավոր». <ketxudāy, զզիր «տանուտերի օգնական». <gizīr «պլուղապետ», բաճդար «հարկահան». <bāJ-dār:

6. Պատերազմ, զենքեր. — լաշկար «զորք». <laškār, ջոկ «խումբ». <պհլ. \*jōk (պրս. jōx), սալար (սաղար) «հրամանատար». <նպրս. salār, ուրգահ «բանակատեղի». <ördügāh, խօլ «գումակ». <նպրս. qōl, բահլիկ «ձեռքի զրահ». <պհլ. bahlīk (պրս. bahla), ճօշ (ճօշան) «զրահ». <Jauš(Jaušan), ճաւշանիռու «երեսի զրահ». <Jaušan-i-rū, գուրզ (գուզ) «լախտ». <gurz (ստգր. Մ. Պոտուրլանի), խալաչուրի «մի տեսակ թուր». qalāčūrī, խանչար (խէնչէր) «գաշույն». <xančar, խիշտ «նիզակ». <xīšt, նախմ (նաղմ) «ակն». <naγm, նաճակ «սակր». <načak, načak (ստգր. Յ. Կարստի), չարխ «աղեղ». <čarx, զախմել «խոցել, վիրավորել». <zaxm «զենքից առաջացած խոց» (ստգր. Հ. Աճառլանի), լաղել «ցցանցով թշնամունքով». <yaγma «ցանց»:

7. Կրոն. — աթաշփարիշտ «կրակապաշտ». <ātāš «կրակ» և parast «պաշտել», բուտփարիշտ «կուսապաշտ». <but «կուռք» և parast, դանըշման

(դանիշմանդ) «մանմեղական գիտուն, կարգացող, մոլլա» <նպրս. dāniš-mand, դրուժ եղև> <պհլ. drūj, հեշմակ եղև> <պհլ. \*hešmak (զնդ. aēšma), մղկիթ (մսքիթ) <նպրս. mazgit (արբ. masjid), բեհեշտի եղրախտալին> < bihišti (ստգբ. ն. Բյուզանդացու);

8. Առետուր, դրամ. — պաղրկան (պաղրկեան) «վաճառական» < <bāzargān, գազ (կազ) «արշին» <gaz, թէրազու (թէրազի) «կշեռք» < <tārāzū (կա նաև տարազուկ ձևով, <պհլ. tarāzūk ձևից), ման (կշռաչափ է) <պհլ. man (պրս. mān), խալվար <xarvār, վաճիպ (երկարության չափ է) <նպրս. vajab, պարապար «միակշիռ. հավասարաչափ» <նպրս. barabar (bārabār), սանկ «կշռաքնր. ծանրություն» <sang(sāng), հալթադրամ «լոթ-նոց» <haft «լոթ» և diram «դրամ», նոխադրամ «խննոց» <nuh «խնն» և diram, դահադրամ «տասնոց» <դահ «տասն» և diram, թասու «մեկ քա-նորդ դանկ» <tasū, պլիկ «մանր դրամ» <pūl «փող» և հլ. -իկ (մասնիկը), ներհ (նիրհ, նեհ, նիհ) «սակ» <nirx, փէշքէշ «անվճար» <pēškāš:

9. Հագուստ. — ամլուխտ (ամլախտ) «կոշիկ» <նպրս. hamlaxt (ստգբ. Թ. Կարստի), բարուճ «տոնաման» <pā «տոք» և pūš «ծածկ», մու-ճակ «կոշիկ» <պհլ. mōčak, չմուշկ «հողաթափ» <čamšāk, բազպան «թե-նոց» <bāzu «բազուկ» և pāna (-pān, -bān) (ստգբ. Հյուբշմանի), լաչակ (լաչակ) «գլխաշոր» <lačak, պեչալ «գլխաշոր» <pīča, պլուզ «վերնաշա-պիկ» <balūz, շալ «շալ» <šāl, շար «շղարշ» <նպրս. šār (ստգբ. Հյուբշմանի), շմաթ «գոգնոց» <šāmād, չուխալ (մի տեսակ երկար վերնահագուստ) <čūxā, սարքուլալ (սարքուլա) «գլխարկ» <sar-kūlāh (ստգբ. Հյուբշմանի), բալափուշ «վերարկու» <bālā «վերին» և pūš «ծածկ» (ստգբ. Հ. Աճառլանի), շարփուշ «երշխանական խուլը» <šarpūš, վալալ «զգեստ» <valā, մեն-թան «հագուստ» <nēmtan, փէշ «քղանցք» <pāš, սեկէք «կոճակ» <sagak:

10. Զարդեղեքն. — զրպա «զարդ» <zipa, դանկալ (դանքալ) «մի տեսակ գոհար» <tanga (ստգբ. Թ. Կարստի), զառ «ոսկի» <zar, լալ «ռու-բին» <lāl, շաւար «զիսկ, մարգարտ սշար» <sāhvār, պատաշխանի «ռու-բինի մի տեսակը» <նպրս. badaxšānī, պատժախ «մի ազնիվ քար է» <ba-daxsī, սէլլան <seylān, քարիպար (քարիպար, քարուպար, քարուպալ) «սաթ» <նպրս. kāhrubā, պիստ (պէսէդ) «մարշան» <bussad, խալիալ (խալիալալ) «սպարանջան» <xalxāl:

11. Տնալին իրեր — ապխոր (ապախարէ) «մետաղե աման, կոնքի կամ կժի նման» <abxōra, բղուկ (բղղակ) «կթխալի տեսակ, որով գինի են խմում» <նպրս. bulūk, գաւ «գինու, ջրի փարչ» <gāv «կով. եզան ձևի սկան» (ստգբ. Հ. Աճառլանի), դաշտիշոն (դաստիշու) «լվացվելու տաշտակ» <dast «ձեռք» — šuy «լվանալ» (ստգբ. Հ. Աճառլանի), դաստապրիկ (դաս-պրրիկ) «ձեռք լվանալիս շուր լցնելու կուժ, շոնիճ» <պրս. dast — արբ. ibriq «շոնիճ», թանկիրալ «կաթսա» <նպրս. tangira (արբ. ձևը՝ tanjira), թափուր «փալտից սկուտեղ» <tafūr, խան «ափսե» <նպրս. xān (xvān), դաւալ «տապկոց, թավա» <tāva, սէնի (սէյնի, սինի) «մատուցարան» <sinī, հաւան «փոքրիկ սանդ» <hāvan, կանդի «խցան» (<կանդիլ) <kandūra (kandurī), կար «չվան» <kar, ալիշ «կրակխառնիչ» <āgīš, նաճալ «կար-պետ» <nayča (ստգբ. Հ. Աճառլանի), խալի (խալիչա) «գորգ» <qālī, qālīča, պալաշ «բարձ» <bālīš, փարդա (փէրտա, փէրտէ) «վարագուլը, քող» <parde, բոբ «օթոց» <bōb, ախեստ «պահարան. մթերանոց» <āgišta (նպրս. արտասանությամբ՝ āyeštā), խօն (խան) «սեղան» <xōn (xān):

12. Ու տ ե լ ի ք, խ մ ե լ ի ք. — գրտակ եկիր հաց՝ <պհլ. girtak (պրս. girda), կտապ (կուտապ) «մեջը չամիչ, ընկուլզ դրած խմորեղեն»։ <պհլ. kütāb (պրս. kūdāb), ման «հում կաթի սեր»։ <mān, մէվզա «աղանդեր»։ <նպրս. māivā «միրգ» և māza «քաղցրեղեն», խմիրէ (խամիրէ) «կոմպոտ»։ <xamīra, կուլանկուպին «վարդի մուրաբա»։ <gul-angubin, շիրախուժ (շիրախուշկ, շիրախուշտ) «մանանա»։ <šir-xišt, տապարզա (տըպզա) «ընտիր բլուրեղաշաքար»։ <tabarza, նշաստակ (նշաստա) <պհլ. nišastak (պրս. nišāsta), թարխանալ «չորթան»։ <tarxāna, լեղանդ (կերակուր է) <lālang, երվըշտալ <պրս. erišta, զէրտա «քաղցր ուտելիք»։ <zārdā, տապահակ «մսի խորտիկ»։ <պրս. tabāha (հայերեն բառաձևը անշուշտ պհլ. \*tabāhak-ից պիտի լինի), քուֆտալ <kūfta, խոշկար «կոշտ ալյուր»։ <xoškār, գոհճ «մեծ կտոր աղ»։ <պհլ. girič, կաֆ «եփելիք մի բանի վրա առաջացած փրփուր»։ <kaf, շիրալ «քաղցրի մածուկ»։ <šira, տինար (տնար) «շաքարաջուր»։ <պրս. dīnār, խոշապ «օշարակ»։ <xōš «լավ» և āb «ջուր»։

13. Վ ի ճ ա կ, տր ա մ ա դր ու թ յ ու ն. — ազար «սխուր, վշտացած»։ <āzār (ստգբ. Մ. Պոտուրյանի), անդիշայ «մտածմունք, հոգս»։ <andīša, անդոհ «անհանգստութիւն, ցալ»։ <պհլ. andōh, բաստ «երջանկութիւն. փրկութիւն, ապաստարան»։ <bast, բէումէտ «անհույս»։ <bēūmid, բէտար «արթուն. զվարթ»։ <bēdār, բէշարա (բէջարա) «խեղճ, խղճուկ»։ <bēčāra, բոշխընել «վայելել»։ <գնդ. baxšna «վայելք», գէժ (գիժ) «հիմար»։ <gēj(gīj), գուման «հույս. կարծիք. կասկած. տարակույս»։ <gumān, անտանալ (ըռնտանալ) «լավանալ»։ <rind «լավ. սիրուն», զեն (զէն, զեան, զիան) «վնաս»։ <ziyān, զէնէհար «երդում, խոստում, ապավինում»։ <zinhār, զէրուզապար «դես ու դեն, վեր ու վար, անհաստատ»։ <zēr-va-zabar, թուրուշ «ենեղացած, անտրամադիր»։ <turs, թօնի «ապուշ»։ <tūnī, ժիր «աշխուժ»։ <žir, շատ «ուրախ»։ <šād (պհլ. šāt), շատիկ «հանուլք, երջանկութիւն»։ <պհլ. šādik, šātik (պրս. šādi), ումէկ (ումէկ) «հույս»։ <նպրս. umēdgah, աննջ «զժվարութիւն»։ <ranj, սարխօշ «գինով, խենթ»։ <sar «զլուխ» և xōš «լավ, ուրախ», տէրա (դարդ) «վիշտ»։ <նպրս. dārd (dard), փաթերակ «փորձանք»։ <պհլ. patyārak (պրս. patyāra), փօշաման (փոշիման) «զղջացած»։ <pašimān, նիազիլ «ենեղվել»։ <niyāz, ճիվան «ջահել»։ <jivān:

14. Վ ա ր ք ա գ ի ծ. — անոկ «մոլութիւն, հանցանք, վնաս»։ <պհլ. āhōk (պրս. āhō), բուխտան «չարախոսութիւն, զրպարտանք»։ <նպրս. buhtān, բէվաֆա (բէվաֆա, պէօֆա) «անհավատարիմ»։ <պրս. be- և արբ. vafā, գունահար «մեղավոր»։ <gunāh-gar, դեժպուհի (դժպհի) «խարդախ, չար, ձանձրացնող»։ <dəžpīh, դուշման «թշնամի»։ <dušman, դրուժան «խարբերա»։ <պհլ. drōžan, թախտան «թալան. ասպատակութիւն»։ <նպրս. tāxtan (ստգբ. Գ. Խալաթլանցի), իհադ (հադ) «օտար»։ <yad, խուլ «վատ սովորութիւն»։ <xūy, կամկար «ինքնակամ»։ <պհլ. kāmkar (պրս. kāmgar), չեխ (չախ) «հանդիմանութիւն»։ <čax, շաստս «մատնիշ»։ <Jāsūs, սարկարտան (սէրկէրուէն) «անվճռական»։ <sar-gardan (sār-gārdēn), ֆիղան «բողոք. լաց»։ <fužān, քուսել «հրմշտել»։ <kūs, նախշիղեուար «անբան»։ <naqš i dēvār, դաստուր «թուլլովութիւն»։ <dastūr, զանախ «դատարկ խոսք»։ <zanax, գանգալ «կատակ»։ <gangal:

15. Հ ա ր ա բ եր ու թ յ ու ն ն եր. — խօշար «սիրունի»։ <xōš «լավ» և yar «բարեկամ, սիրելի», համշիրակ «կաթնակից, սննդակից»։ <պհլ. ham-

šīrak (պրս. hamšīra), համառ հուղեկից. <hamrāh, հարակաշ վարուցանքի ընկեր, կիսարար. <պհլ. hadakas, տլոն «հոմանի» բառը կարստը ստուգաբանում է նպրս. dil «սիրտ» և xōn «արլուն» բաղադրիչներով:

16. Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն բ ա ո ճ ր .

ա) Արվեստ. — բամբ «թավ» (ձալն). <bam, գոս (քոզ) «մեծ թրմբուկ». <kōs, դարդարայ «թմբուկ». dabdāba, շանկի «երգիչ». <նպրս. čangī, շաշտա «վեցլարլա երաժշտական գործիք». <šašta, սազել «գործիքը լարել. նվագել». <sāzīdan, փէշակար «նկարիչ, արվեստագետ. գեղագետ». <pēšagar, նիգար (նիկեար) «նկար, պատկեր». <nigār, նախշինիգար «նկարակերտ». <naqš i nigār, տաստան (ղէստան, դաստան) «առակ, հեքիաթ». <dāstān, ճուհի (ճոհի, ջուհի) «առակախոս». <juhi:

բ) Շինարարութլուն. — գաճ «կիր. շաղախ». gaJ, kaJ, շեշխանայ «վեցանկուն շինութլուն». šāš-xāna:

գ) Քիմիա. — գուգոգար (կոլկոտար, կալկատար, կողքոթար, քուլքոթար) «երկաթօքսիդ». <quqatar, դարվազալինէ «երկաթի թորիում». <darvāza «թորիում» և āyinī «երկաթի», ըռասուխտ «պղնձօքսիդ». <rāsuht (արբ. rūsahtaJ), դապարճատ «բլուրեղ». <zabarjad, դառինայ «ծծումբ». <zarna, պորայ «սողա». <bōra (արբ. būraq, որից՝ բորակ), սպէտրոլ «սպիտակ մետաղ». sāpēd (sepīd) «սպիտակ» և rōy «մետաղ»:

դ) Բժշկութլուն. — ուսիտ (կամ ուստատ) «բժիշկ». <ustād (սագբ. Թ. Կարստի), բիմար «հիվանդ». <bimār (սագբ. Մ. Պոտուրլանի), բրին «վերք». <burin, հու «շարավալից արլուն». <hū, բրսամ (բրսիմ, բրսէմ, պրսիմ) «թոքացավ» <barsām (bar «կուրծք» և sam «տաքութլուն»), թուխմայ «ստամոքսի ցավ, ծանրամարսութլուն». <tuxma, խորայ «որքլուն». <xaura (xoura) «խեցգետին. որքլուն», սարսամ (սրսէմ, սրսիմ) «մինիս-գիտ». <sarsām, պիսակ «քոս, բոր, բորոտութլուն». <պհլ. pēsak «բորոտ» (պրս. pīsa), տապաստ «մոլորքոր» — կարսան ալս բառը ստուգաբանում է պրս. tāb, tabāsīdan «տապել» բառից. գոնջ «խեղանդամ. կուրծքը ներս. սապատավոր». <gunJ, գոսակ «անմազ». <պհլ. \*gōsak (պրս. gōsa), քանչալ «ճաղատ». <նպրս. kanjar, մարձել (մորձել) «շփել». <marz, փանզէհիր «հակաթույն». <pazāhr (badzāhr), ըռուշնալիալ (աչքի դեղ է) <rōšanāyī (rōšan «լույս» և āyī «մալր» = լուսամալր: Սագբ. Թ. Կարստի):

17. Գլուղատնտեսութլուն. — մաշարայ «մարգ». <նպրս. māšāra, չեչ «ցորենի դեզ կալի մեջ». <čāč, ոաշպար (ոանջպար) «հողագործ». <ranjbar, բունպան «ձիապան». <pūn «ձիու երամ» — pan, ըռքէպրտար «ախոռակետ». <rikabdār, խուշկի «ձիու չոր թրիք». <xuški, կոտոշ «եղջլուր». <gadaš, քնիուշ «ձիու ծածկոց». <kūnpūš (սագբ. ն. Բլուզ. և Քաշունու), ֆընտու (ձիու հիվանդութլուն է) <pundā:

18. Արհեստ. — դամ «ուռկան». <dām, դարիճան «կաղապար». <dariča (սագբ. Նյուբշմանի), թանագ «թիթեղ». <tanaga, դոխ «ջրաղացի ձագար». <dōl, կոռպետ «արհեստակետ». <պհլ. \*karug-pat, ութալ «վարպետ». <ustā, ռէնաէ «տաշիչ». <rāndā, պարպար «սափրիչ». <bar-bar:

Միջին հայերեն բաղմամբնութլ գրական հուշարձաններում պարսկերեն բառերի գործածութլունը միշտ նույն հաճախութլունը չունի. կան հեղինակներ, որոնց լեզվում ալդ փոխառութլունները շատ չեն. ն. Շնորհալի, Սմբատ Սպա-

բապետ, Հեթում Պատմիչ, Ն. Պալիենց, Խ. Կեչառեցի, Ա. Բաղիշեցի. հեղինակներ էլ կան, հիմնականում բանաստեղծներ, որոնց աշխարհիկ, հատկապես սիրային ոտանավորներում պարսկերեն բառերը, անգամ ոճերը, բավականին մեծ տեղ ունեն. Կ. Երզնկացի, Մ. Նաղաշ, Հ. Թլկուրանցի, Գ. Աղթամարցի, Ն. Հովնաթան. այս բանաստեղծների սիրային ստեղծագործությունները անշուշտ հորինվել են միջնադարում լայն ժողովրդականություն վայելող գուսանական արվեստի որոշ հետևողությամբ, մի արվեստ, որը լեցուն էր պարսկերենի տարրերով:

Այժմ ծանոթանանք պարսկերեն բառերի գործածությանը:

1217 թվականին Կիլիկիայում գրված մի դաշնագրից՝ «Ու առնուն զիրէնց բայժն ի ճանբէն, զինչ ցեղ ինչֆի յայս աւր էն առել» (ՂՀՀ, 258):

Բայժ կամ բաժ<պրս. bāž «մաքս»:

Լևոն V թագավորի 1332 թվականի մի արտոնագրից՝ «Ապա տան տարի մի համբերութիւն, կամ ըղըրկէն զբենն զոր արած լինի, կամ զենին անողն՝ որ գայ վճարէ զոր արած լնի» (անդ, 262):

Ձեն(զէն) կամ զիան<պրս. ziyān «վնաս»:

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքից՝ «Եւ արդ որք օգտիք և կամ շահիք սովաւ, ինձ Սմբատայ մեղաց թողութիւն հայցեցէք, եւ որ վզենկիֆ՝ դուք չէք յիսնէ վզենկել, այլ ի յիրաւանցն» (ՂՀՀ, 191):

Վզենկիլ «տուժել».<զենդ. vīzyāna:

Մի այլ օրինակ նույն Դատաստանագրքից. «Եւ թէ ոք տայ զիր ձի մարդոյ ի բան... նա տանի ի ջուր կամ ի կապ կամ ի փոս, կամ յայլ տեղ փոթորկեցնէ, որ վնասի կամ մեռնի, նա պատեհ է, որ աղէկ իմանան զպատճառն... նա թէ յուղարկողին արտորացնելոյն լինի լեալ, նա պատուցնողին մեղ չկայ. ապա թէ յաղփորթութէնէ լինի, նա այն դատաւորին խեղճն է, որ ըստ մեղանաց շաքուցն տուգանէ զմեղականն, բահրակ թէ զգուշացուցել լինի տէրն ու պնդել ի վերայ իրացն զտանողն ու նշան տուել, ու նա այլ ազգ անէ» (ՄԳ, 78):

Բահրակ «մանավանդ, առանձնապես»:<պրս. bahrak.

1036 թվականի Շիրակի մի արձանագրությունից՝ «Գնեցի հալալ ընչից իմոց կուղպականի գ և ձիթհան և այգի և հողեար և հտու ի սուրբ փրկիչս» (ՂԱՇ, 82):

Կուղպակ «կրպակ»<պրս. kuīpā:

1358 թվականի Բջնիի արձանագրությունից՝ «Կրկին նորոգեցաք զեկեղեցիս և զբունիաք արձանս վերստին հաստատեցաք» (ՂԱԱ, 273):

Բունիաք «հիմք, կազմություն».<պրս. bunyād:

«Բէց ու շինական ու գործաւոր զինչ են Աստուածածնայ ծառայ» (անդ):

Բէց «աշխատող».<պրս. bāčā:

«Ազատ և քարխան արարին հարկէ և ի ծառայութենէ» (անդ):

Քարխան «հարկից ազատ».<պրս. tarxān:

1314 թվականի Գլաձորի վանքի արձանագրությունից՝

«Աւուրքըս ցուրտ ու պարզկայ,

Չարտախս բարձր ու կրակ չկայ» (ՂԱՍԿ, 135):

Չարտախ «բարձր պահակակետ».<čartāq:

Նաչատուր Կեչառեցուց՝

«Յայնժամ փոշիման դարձաւ

Ի վերայ իւր շատ խընդալուն» (ԽԿ, 145):

- Պրս. pašimān «զղջացած»:  
 «Կին մարդոյ պարտ չէ խօսել  
 Ոչ յատեն և ոչ յեկեղեցի.  
 Ուր մտնու՝ անոկ բերէ,  
 Անամաչ՝ և անկասկածելի» (ԽԿ, 159):  
 Անոկ «մոյություն, արատ, վնաս».<պհչ. āhōk:  
 Ֆրեկից՝  
 «Մէկին բեհեզ և ծիրանի,  
 Մէկին բրդէ շալ մի շանկնի» (ՀԱԳ, 4):  
 Պրս. šāl ~ «շալ»:  
 «Մէկին ըռախտ և զրեհի,  
 Ճոխով նստի ի պէտաւ ձի» (անդ, 5):  
 Պրս. raxt «սարք»:  
 Պրս. zirih «գրահ»:  
 Կոստանդին Երզնկացուց՝  
 «Ասցի. Ես գունահփար—Դու թագաւոր, քեզիկ մեղայ» (ՀԱԳ, 33):  
 Պրս. gunāh-gār «մեղավոր, հանցավոր»:  
 «Սարխօշ եմ յայն սիրուն, և է միտս ի հօն՝ յուր ինք լինայ» (անդ, 34):  
 Պրս. sar-xōš «ուրախ գլուխ». «գինով»:  
 «Զմեռն բանդ էր և խաւար,  
 Գարուն էհաս ու նոր բահար» (անդ, 39):  
 Պրս. bahār «գարուն»:  
 «Ես քանի՜ հառաչ բերեմ կամ ի սրտէ կենամ ազար» (անդ, 48):  
 Պրս. āzār «վիշտ, նեղություն». «վշտաբեկ»:  
 «Ոչ ոնիմ ես օգնական յոյս և ապաւէն ինձ կամ եար» (անդ):  
 Պրս. yar «բարեկամ. սիրելի»:  
 «Թէ հիւրնդին տաս կերակուր քաղցր ու անուշ նման շաքրի,  
 Նայ մազձով սիրտն է ի լի՝ նորա թուի զահր ու լեղի» (անդ, 49):  
 Պրս. zahr, zāhr «թույն»:  
 «Քաղցր է բլբուլ ձայնդ ու անուշ  
 Եւ մեզ նստել շաքար ֆրուշ,  
 Զինչ սիրտ նեղած կա և թուրուշ,  
 Ան քեզ ոնիս յուրախութեան» (անդ, 46):  
 Պրս. šakar-fārūš «շաքարավաճառ». «շաքար տվող»:  
 Պրս. turš «թթված. նեղացած. դժգոհ»:  
 «Գայ վարդն գաղտ ու անգուման» (անդ, 41):  
 Պրս. gumān «կասկած. կարծիք», որից հյ. անգուման «անսպասելի, ան-  
 կասկած, հանկարծակի»:  
 «է՛ր զաֆիլ կաս յաշխարհիս՝ և անհոգ ի ժուռ գաս կամկար» (անդ, 48):  
 Պրս. kām-kār «ինքնիշխան, ինքնակամ»:  
 «Դու է՛ր կաս յանդիշայ խիստ թւայքար ողորմելի» (անդ, 50):  
 Պրս. andīša «մտածմունք, հոգս, վիշտ», որից հյ. կալ յանդիշայ՝ «մտա-  
 ծել, մտածմունքի մեջ լինել»:  
 «Խոսիմ ես հազար տաստան,  
 Հրաման ունիմ և ֆարման» (անդ, 55):  
 Պրս. dāstān «առակ, հեթաթ»:



- Պրս. farmān «հրաման»:  
 «Շրթունքտ բերէ զփարդան,  
 Իւր լեզուն խօսի լարման.  
 Քաղցր է ու շիրին ձայնն այն» (անդ, 56):
- Պրս. pardāh «փայլ, շքեղութիւն, պայծառութիւն»:  
 Պրս. širin «քաղցր, անուշ»:  
 «Զաչերս արեամբ հետ իւր թանամ,  
 Զիրայ հոգիս յիսնէ տարաւ» (անդ, 51):
- Պրս. zī-rā(zē-rā) «բայց, քանի որ, որովհետեւ»:  
 Մկրտիչ Նաղաշից՝  
 «Վարդն ի բլբուլն ասաց՝ Հազար զինանար.  
 Դու մի լինիր շուտով ի յիսնէ բէգար» (ՄՆԲ, 109):
- Պրս. zīnhār «փրկութիւն, ապավեն, ապաստան». «հավատ, սկզբունք».  
 րցկնչ. «ողորմի՛ր, խնայի՛ր»:  
 Պրս. bizār «ձանձրացած, հոգնած»:  
 «Ահա ես քեզ ֆիդա, իմ թաճի սարվար» (անդ):
- Պրս. fedā «նահատակ, զոհ»:  
 Պրս. sarvar «հրամանատար, զլխավոր»:  
 «Զար ու ֆիդան կանչեմ յալամս հաւասար» (անդ, 109):
- Պրս. zār «ողբ»:  
 feqan «սուգ, կոծ»:  
 «Վարդն ի բլբուլն ասաց՝ Այս ի՞նչ գունահ է,  
 Զինչ դու հետ ինձ արիր՝ կատարյալ մահ է» (անդ, 108):
- Պրս. gonāh «հանցանք»:  
 «Բլբուլն ի վարդն ասաց, թէ՛ սիրով կայրես,  
 Նայ իմ հոգուս հոգին, ումէտն դու ես» (անդ, 107):
- Պրս. omid «հույս»:  
 «Դու բահր ես ու նիզար, լատիֆ ու նարին» (անդ, 11):
- Պրս. bahr «փայլուն, սքանչելի, լուսավոր»:  
 Պրս. negār «պատկեր». «պաշտելի»:  
 Պրս. nārin «վայելուշ»:  
 «Հասրաթ կայ իմ սրտիս, անշէջ կու վառի,  
 Որ զքեզ արժան գտայ ու թէզ կորուսի» (ՀԱԳ, 74):
- Պրս. tez «շուտ, շտապ, արագ»:  
 Նահապետ Քուչակից՝  
 «Ինձ խիփն ու դուայ կուգայ՝ քո ծոցուդ այլ մարդ տիրանայ» (ՀԱԳ,  
 135):
- Պրս. qosse «վիշտ, մտատանջութիւն» (ստգբ. Բ. Զուգասզյանի):  
 «Կարօտ կարօտովդ էի, հասրաթովդ ի ժուռ կուգայի.  
 Անկարծ ինձի դէմս ելար, ես ատոր կուման շունեի» (անդ, 139):
- gumān «կասկած. սպասում»:  
 «Ծս ալ ի դէմիկն ելայ՝ նեղ սօղախ ու խիստ դալապայ.  
 Պէջան ալ ի վեր տարաւ, ուներովն արաւ, թէ՛ գնա» (անդ, 150):
- Պրս. pīča «զլխաշոր»:  
 «Փարչիկ մ՛ալ անուշ գինի առի, խօշ եարիս դուռն գնացի» (անդ, 138):
- Պրս. xōš «լավ. սիրուն. անուշ», yār «սիրելի»:

«Կամ ա՛ն զիս ծոցդ ի բուն, կամ տէսքուր տուր երթ՞ամ ի տուն» (անդ, 145):

Պրս. dastūr «թույլտվութիւն»:

Գրիգորիս Աղթամարցուց՝

«Գնամ ի վարդն զԵՆԵԿԱՐ

Եւ ծառայեմ սրտովս յօժար» (ՀԱԳ, 103):

Zinhār «ապաստան»:

«Զօրն ի ճղոյն լինիմ ի կախ,

Եւ միշտ դիտեմ վարդին ռահ» (անդ, 109):

Պրս. rāh «ճանապարհ»:

«Կեան ու պլկեան ձայնդ կուգայ» (անդ, 108):

Պրս. gāh, begāh «ժամ ու անժամ»:

«Այտով զիս հարիր ՚ւ արիր խուրտ ու մուրտ» (ԳԱԲ, 210):

Պրս. xurd «մանր». «խուրտ ու մուրտ՝ «փշուր-փշուր»:

«է՛ դօնեայ տրեան, ծաղիկ նրոնենի» (անդ, 206):

Պրս. gonçe «կոկոն» (ստգբ. Բ. Չուգասոյանի):

Պրս. dehān, dahān «բերան» (ստգբ. Բ. Չուգասոյանի):

«Վահեմ թէ լինիմ ի քեզնէ նուտայ» (անդ, 204):

Պրս. jodā «անշատ, զատ»:

«Ըռանկ վարդին որպէս ըզլալ

Տեսաւ պլպուլն եղաւ պէհալ» (անդ, 134):

Պրս. rang «գույն»:

Պրս. bihāl «անուժ»:

Պրս. bulbul «սոխակ»:

Միջին հայերենի պարսկերեն փոխառութիւնների զգալի մասը շարունակում է ապրել ժամանակակից բարբառներում. այսպես, օրինակ՝

Ակիշ—Երևան, Վան, Շատախ, Խոյ. ագիշ—Մուշ, Կարին, Զեյթուն, Հաճն, Սեբաստիա. ալիշ—Նոր Բայազետ, Բաղեշ. ախուշ—Ազուլիս:

Թափուր—փայտի սկուտեղ. քեփուր ձևով՝ Ղարաբաղ, Խնուս, Համշեն. տեփուր՝ Երևան, Խարբերդ, Խոտրջուր. տափուրիկ՝ Զուլա:

Գավ—Երևան, Թբիլիսի, Արճեշ:

Գոին—մեծ կտոր (աղ, շաքար). կրոօն ձևով՝ Ղարաբաղ:

Գրտեակ—Երևան. գրոնագ—Մուշ, Կարին. կրտեակ—Վան, Շատախ,

Մոկս, Ոզիմ. վրթանակ—Ղարաբաղ, Գորիս, Ղարաղաղ:

Ման—հում կաթի երեսը բռնած սերը.—Մուշ, Քղի, Մաշկերտ:

Դամ—ուռկան. դամբ ձևով՝ Թբիլիսի:

Թանագ—թիթեղ. թաննիֆ՝ ձևով՝ Վան, Շատախ:

Թագ—Վան, Խոյ. թաժա—Կարին, Շատախ:

Լախ—թույլ.—Ղարաբաղ, Շամախի, Վան. լակ—Երևան:

Խալվար—երեսուն փութ.—Երևան, Ղարաբաղ, Խոյ, Վան, Մուշ, Կարին:

Պլիկ—մանր դրամ.—Վան. պլեկ—Շատախ:

Փեշֆեշ—ձրի.—Խոյ, Ղարաբաղ, Երևան:

Ջեզգա—շարք, կարգ.—Խոյ, Կարին, Մուշ, Երևան:

Ջուխտ—զույգ.—Կարին, Մուշ, Թբիլիսի, Վան, Խոյ. ջօթ—Շատախ:

Թէգ—շտապ. շուտ.—Կարին, Մուշ:

Գան—ժամանակ.—կ'անխ ձևով՝ Վան, Շատախ, Մոկս, Ոզիմ:

Խան—Իջևան. հյուրանոց.—Խոյ, Վան, Շատախ, Երևան:  
 Քյոշա—անկյուն.—Երևան, Վան. գ'օշա—Շատախ:  
 Չուփար—ցանկապատ.—Երևան, Նոր-Բայազետ, Խոյ:  
 Չարտախ—բարձր պահակակետ. շարդախ—Խոյ, Վան, Մուշ, Երևան:  
 Բարչամ—մազափունջ. բրոչամ ձևով՝ Շատախ:  
 Կէրդան (գ'արդան)—վիզ.—Խոյ:  
 Ռանջպար—հողագործ.—Երևան. ռէնջբւր—Շատախ. ռըշպար—Խոյ.  
 ռաշպար—Վան:  
 Բրին—վերք.—Վան, Խոյ, Շատախ:  
 Խիար—վարունգ.—բոլոր բարբառներում:  
 Շաֆտալու (շաֆթալու)—դեղձ.—Խոյ:  
 Աշխարա—հայտնապես.—Երևան, Ղարաբաղ, Վան:  
 Դեհ—Երևան, Վան, Շատախ, դի—Մուշ, Կարին:  
 Դաստուր—թույլտվութիւն.—Վան, Շատախ, Մուշ:  
 Փարդա—փայլ.—փէրտան՝ Պոլիս. փէրտէխթ՝ Վան:  
 Փարդա—վարագույր.—Խոյ, Երևան, Ղարաբաղ:  
 Քեթխուդա—Երևան, Ղարաբաղ:  
 Զախմ—կատաղի, համարձակ.—Շատախ:  
 Լաշակ—գլխաշոր.—Ղարաբաղ, Երևան, Խոյ. լաշի—Շատախ:  
 Մենթան (մինթան)—Երևան, Կարին:  
 Փէշ—քղանցք.—Խոյ, Ղարաբաղ, Երևան:  
 Զուխա—երկար վերարկու (տղամարդու).—Ղարաբաղ, Լոռի:  
 Մախմուր—սևաթուխ.—Վան, Շատախ, Երևան, Խոյ:  
 Բոզ—գորշ, մոխրագույն.—Շատախ, Մոկս, Վան, Մուշ:  
 Լպուտ—գզրար.—Շատախ, Վան:  
 Ռունտ—լավ. գեղեցիկ.—Ախլթալաք, Ախլցխա, Խոտրջուր. ռինտ—Զեյ-  
 թուն, Մարաշ, Համշեն, Պոլիս, Մուշավա, Ասլանբեկ:  
 Գիծ—Երևան, Ղարաբաղ, Խնուս, Թբիլիսի, գ'էծ—Շատախ, Վան, Նոր  
 Բայազետ:  
 Գուման—հույս, կարծիք, կասկած.—Գյուման ձևով՝ Խոյ, Ղարաբաղ, Կա-  
 րին:  
 Փոշաման—զղջացած.—փօշման—Շատախ, Վան, Ղարաբաղ, Խոյ, Երևան,  
 Նոր Բայազետ:  
 Զիվան—երիտասարդ.—Երևան, Թբիլիսի, Ղարաբաղ, Խոյ, Զուղա:  
 Դուշման—թշնամի.—Երևան, Խոյ, Վան, Ղարաբաղ, Մուշ, Կարին:  
 Դրուստ—Թբիլիսի, Ղարաբաղ:  
 Զիան—Մուշ, Սասուն, գէն—Շատախ, Վան:  
 Թաղթ—գահ.—Վան, Ղարաբաղ, Խոյ, Կարին:  
 Թամաշա—տեսարան, դիտում.—Ղարաբաղ, Խոյ, Վան, Մուշ, Կարին:  
 Միջին հայերենով ավանդված պարսկերեն բառերից արդի գրական լեզ-  
 վում գործածվում են՝ բաբուն, բահրա, բաշ, բրինձ, գաջ, գավ, գզիր, գիծ,  
 գուրդ, գրտնակ, դարչին, դարպաս, եղրեանի, գառ «ոսկի», թուփակ,  
 լեշ, լոր, ժիր, խալ, խալի, խան «մահմեդական իշխան», կանկար (բույսը),  
 կաշաղակ, կարավան (քարավան), հրվանդան, մախմուր, մեխակ, յար, շալ,  
 շատ, շմուշկ, շուխա, փալանիկ:

Հայ ժողովրդի հարաբերությունները թուրք ցեղերի հետ սկսվում են XI դարից. սկզբում սելջուկ թուրքերի, այնուհետև մոնղոլ-թաթարների, ուզբեկ թաթարների, թուրքմենների, ի վերջո՝ օսման թուրքերի հետ: Բուն Հայաստանը շփվում էր Ատրպատականում հաստատված սելջուկ-թուրքական ակկոյունլի ցեղերի հետ: Հայրենիքում ևս թուրք տարրը հետզհետե արմատավորվում էր: Իսկ 1473 թվականին Հայաստան ոտք դրին օսման թուրքերը:

Կիլիկիայի հայկական պետությունը նույնպես մշտական հարաբերությունների մեջ էր Դամասկոսի, Իկոնիայի, Նիկիայի թուրքական իշխանությունների հետ:

Թուրք ցեղերը, երբ հրի ու սրի էին մատնում Մերձավոր Արևելքը, դեռևս քաղաքակրթության ամենաստորին աստիճանի վրա էին գտնվում. նրանց գլխավոր զբաղմունքը կողոպուտն էր, մեկ էլ՝ անասնապահությունը:

Պատահական չէ, որ միջին հայերենը այս լեզվախմբից ոչ մի գիտական կամ ուսումնական բառ չի վկայում: Թուրքերն այս շրջանում դեռևս շունչին գրականություն, մշակույթ. նրանք խիստ ցածր էին կանգնած բոլոր այն ժողովուրդներից, որոնց նվաճում էին:

Թուրքական փոխառությունները միջին հայերենի զարգացման առաջին շրջանում աննշան տեղ են գրավում: Դրանք մեծ մասամբ թաթարերենից կամ մոնղոլերենից են: Բերենք գործածության օրինակներ.

Մաղափա Աբեղա (XIII դար).

«Թազուդարն մեծացաւ և հարստացաւ, և զմեզ չէ ի մոռել. և զմեր ասախն չէ ի յառնել» (ՊԹ, 66):

Ասախ (յասախ) <թթր. yasaq «օրենք»:

«Ապա հրամայեաց իւրոց արդուչեացն, այսինքն դատաւորացն» (անդ, 43):

Արդուչի <թթր. yarıuçi «դատավոր»:

«Ղանին սիրտն լաւացաւ ի հետ քեզ» (անդ, 61):

Ղան <թթր. qan «իշխան»:

«Մեծ ելչուվ յիս յղարկեա» (ՂՀՀ, 244):

Ելչի (էլչի) <թրք. elçi, թթր. ilçi «դեսպան»:

Վարդան Պատմիչ (XIII դար).

«Ասացի՜ թե զինչ քրիստոնեայ և արքաւուն կայ ընդ ծով և ընդ ցամաք, ամենու սիրտ հետ քեզ լաւ է և քեզ աղօթք են առնում» (ՎՊ, 156):

Արքաւուն (արքայուն) <մոնղ. arkaun, ärkävün «քրիստոնյա»:

«Եւ ունէր ի ձեռին բալիչ մի և երկու հանդերձ էր կարել տուել» (անդ, 158):

Բալիչ <մոնղ. bališ (դրամ է):

Անանուն Սեբաստացի (XIII դար).

«Սալտուխն եղև փեսայ նորայ, և Ելտկուզն արքայակ նորին» (ՄԺ, II, 134):

Արքայակ (աթաբակ) <սելջ. շաղաթ. atabeg «թագավորահայր, կառավարիչ»:

«Եւ զարք տաճկանց որ ի դարբանդն էին, ոչ հառն մուտ. և նոքայ հատեալ զլեռն Կոտաս ընդ անանց տեղիս գնացին, որոց էր գլխաւոր Սաբաթայ պախաուուր» (անդ, 138):

Պահատուր (բահադուր, բախադուր) <թրք. մոնղ. bahadur (bahatur)  
«կտրիճ, պատերազմող»:

Ֆրիկ (XIII դար).

«Մէկն է շաղար կապոտ աշուի,  
Կարճահասակ և փանաքի» (ՀԱԳ, 7):

Չաղար <թրք. ճագը «խաժակն»:

Ն. Պալիենց (XIV դար).

«Դամուրտաշն բազում հեծելօք, աւելի քան լի (30000) և բազում հետե-  
ւակօք, այսինքն ամենայն օրդուին իւր, ահամայ և բոնութեամբ ի յաշխարհն  
Հայոց ի Կիլիկիա մտաւ և բազում աւերս արար» (Մժ, II, 188):

Օրդու <թրք. ordu «բանակ»:

Թուրքերեն բառերը ավելի հաճախ են դառնում միջին գրական լեզվի  
զարգացման երկրորդ փուլում, հատկապես՝ XVI—XVII դարերի լեզվական  
հուշարձաններում, որ պայմանավորված է թուրք տարրերի նոր աշխուժաց-  
մամբ և Օսմանյան կայսրութեան ստեղծմամբ:

Թուրքերեն բառերի գործածութեան օրինակներ միջին գրական լեզվի զար-  
գացման երկրորդ շրջանից.

Հովհաննէս Արեւիշեցի (XVI դար).

«Եւ շատ շարիք գործեաց՝ ճանապարհորդ կոտորեաց և քալանեաց բազում  
մեծունեայք» (Մժ, II, 227):

Փալանեկ <թրք. thalamag:

Եւ նորին շար խորհուրդ խափանեցաւ, զի այն էր միտքն՝ որ զԷնգիշարիքն  
ի բերդն դնէր» (անդ):

Էնգիշարի (ենգիշարի, ենիշերի) <թրք. yeni-çeri «նոր զորք»:

«Երբ ի վերայ շահին բազում հեծելով և անթիւ արապով, քօփով և զար-  
պազանգով և վաթսուն հազար քրանգչով» (անդ, 229):

Թօփ <թրք. thop «թնդանոթ. զենք»:

Թրանգչի <thufankçi «հրացանավոր» ( <thufank «հրացան»):

«Գիշերով ի լիար զնաց մինչև ի Կապուտկողն» (անդ, 231):

Ի լիար (իլլար) <թրք. ilğar «սրբնթաց, արագ, ճեպրնթաց»:

«Եւ եկեալ ի Յարճէշ, տեսաւ զի Իբրահիմ փաշէն և Մահմադ սոլթան ի յետ  
էին դարձեր, զԱրճիշու բերդի թուանգչիքն հաներ և զժողովուրդն սուրգուն  
արեր մինչև յԱրճիէ» (անդ):

Սուրգուն <թրք. sürgün «աքսոր»,

որից՝ սուրգուն անել «աքսորել»:

Գր. Կամախեցի (XVII դար).

«Սուլթան Օսմանն դարձեալ զնաց յԼստամպօլ իւր աւաբունն, դուլն շա-  
րացաւ թե մեզ հանց թագաւոր պիտոյ չէ, զարկին սպանեցին զթագաւորն»  
(Մժ, II, 269):

Ասխար (ասկար) <թրք. askar «զինվոր». «զորք».

Դուլ <չուլ «ստրուկ». «զինվոր»:

«Թվին ՌՀԱ (1622) նստաւ սուլթան Մուստաֆան, յետոյ կրկին մազուլ  
արին զսուլթան Մուստաֆան» (անդ):

Մազուլ (մանզուլ) <թրք. mahnzul «պաշտոնանկ», որից՝ մանզուլ անել—  
պաշտոնազրկել:

«Թվին ՌՀԴ (1625) ուռուզն եկեալ զՏրապիզոնու բերթն առաւ, ապրիելի

ժԳ, օրն կիրակի, կեցաւ Դ օր և ապա գնաց Մհ (240) ղայեղ էր» (անդ):

Ղայեղ<թրք. շայաք «նավակ»:

«Ապազան ի յետնն վազեց Զ(80) ղաթար ուղտ, Կ(60) ղաթար ջորի առեց, ամէն բեռնով, շատ մարդ բռնեց, շատք այլ ջարդեց» (անդ):

Ղաթար<թրք. շադեր, շեդեր «շափ»:

«Եւ ի սոյն ամի վրացի Մովրովն ջարդեց զՂայեղայ խանն, զՂասախ խանն, շատ ղզլպաշ, որ իսկի շի մնաց, Գ(3) անգամ» (անդ):

Ղզլպաշ «ավազակ, թալանչի զորք».<թրք. շաշալբաճ, որ բառացի նշանակում է «կարմիր գլուխ, տաք գլուխ»:

Նահապետ Քուչակ (XVI դար).

«Կուլամ նա կուտաս ճուղապ. «Սապո արա, սիրուն հասանիս».

Սև սապո, ա՛մ, քանի՞ անեմ, եփեցաւ նիկարս ի փորիս» (ՀԱԳ, 135):

Սապո<թրք. sabax «համբերութուն», որից՝ սաբր անել «համբերել»:

Ճիկար<թրք. jiyer «թոք»:

«Այս մութն ու խաւար տարիս, քեզկէ շէր բերեր մայրս զիս,

Բերաւ սիրոյ տէր արաւ, սիրոյ տէր՝ որ կ'ելնէ հոգիս» (ՀԱԳ, 137):

Քեզկէ<թրք. kheşke «երանի թե»:

«Իմ եար բարձրագնայ լուսին, յո՛ւր կ'երթաս գիշերդ անհուն,

Շատ յերդիք ի վար հայիս, կու տեսնես, շատ կիւզել ի քուն» (անդ, 141):

Կիւզել<թրք. güzel, gözal «գեղեցկուհի»:

«Թէ գան ու զիմ տեղն ասեն, նայ հեռու եմ, այլ հեռանամ.

Թէ գան ու զիմ տեղն ասեն, նայ զըննիլն եմ, կտրեմ ու գամ» (անդ, 146):

Զըննիլ<թրք. zinjil «շղթա»:

«Բարակ սիրոյ տէր մարդու՝ ինքն ու իր եարն մէն ի քուն.

Պագ տան ու պագ առնուն, ղօլայն էն մէկալ գիշերուն» (անդ, 145):

Ղօլայ<թրք. çolay «հեշտութուն. հաճույք»:

«Երթամ հաբեղայ լինամ գամ ես ի քո ծոցդ այ կենամ,

Աննայ այբուբենն ասեմ, ինչ որ քո գրկիդ տիրանամ» (անդ, 148):

Աննայ<թրք. anjah «հազիվ». «այնքան»:

«Ծառն տերևովն աղէկ երբ երակ կենան սիրելին.

Ղազալն երբ ի ծառն ընկնի նա տերևն ի վար կու թափի» (անդ, 153):

Ղազալ<թրք. çazel «չորութուն». «չորացած տերև»:

Ղազար Սեբաստացի (XVI—XVII դար).

«Տուր պագ մ՝ երեսէդ, գէմ շէ ղիյամաթ,

Թէ շէ կու մեռնիմ, կու մնամ հասրաթ» (ՀԱԳ, 171):

Ղիյամաթ<թրք. çiyamât «անհնարին», «չգտնվող»:

Քուչակ Վանեցի.

«Յաբաշ քեզ ղուլուխ անէ,

Յընտստան քեզ ճորտ ու ծառայ» (անդ, 177):

Ղուլուխ<թրք. qulluq «ծառայութուն», որից՝ ղուլուխ անել «ծառայել»:

«Յրանկն ուր ղալիլն վերայ

Ել կուտայ, ծովէն ղուրս կուգայ» (անդ, 177):

Ղալ (=ղօլ)<թրք. çol «թև», «կողմ»:

Թուրքերեն բառերը ըստ իմաստային-կիրառական ուղղորտների կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

Իշխանութիւն — ալլոան (էլլոան) «արքայիկ, վասալ»։ <թթր. eyliqan (eyl «երկիր, ցեղ», qan «իշխան»), բեկ «իշխան»։ <թրք. beg, նոյնն «մոնղոլ իշխան»։ <noyan, չէլէպի «պարոն»։ <թրք. çebebi, աթաբակ «կառավարիչ, թագավորահայր» <athabeg, աֆէնտի (ափենտի) «մեծավոր»։ <թրք. efendi, եամաղ «շքստումբ, շոկատ»։ <թրք. yamaq, ելչի (էլչի) «դեսպան, պատգամավոր»։ <թրք. elçi, թթր. ilçi:

Պաշտոն, ծառայութիւն.— չավուշ «ոստիկան, օրենսգետ»։ <թրք. çavuş, սուպաշու «ոստիկանապետ»։ <su-baş, տառուղայ «ոստիկանապետ»։ <չղթ. daruğa, վոլվոտայ «հարկահաւաք»։ <թրք. voyvoda, արդուչի «դատավոր»։ <թթր. yarğuçi, արգուչի «աղերսարկու»։ <թրք. arzaçi («արբ. arıza «խնդիրք, աղերսագիր», թրք. -çi մասնիկով), բիգիլչի «գրագիր»։ <թթր. bitikçi (bitik «գիր, գրվածք», որից, բարբառներում՝ բթիկ, փթթիկ «կախարդական գիր»), տաղմաճի «դրոշմահար»։ <չղթ. tamğaç, քալամաչի «թարգմանող»։ <թթր. khālimāçi, քարիտլի «ժամապահ»։ <թրք. kharakol, քեշիկ «պահակ»։ <թթր. kheşik:

Պետութիւն.— ետալեխ «հրամանագիր, արտոնագիր»։ <թթր. yerliy «հրովարտակ» (yar «լուր, հայտարարութիւն» բառից), մուչալկա «պալմանագիր»։ <թրք. mücelgya, ասախ (լասախ) «օրենք»։ <թթր. yasaq, պալրախ «դրոշ»։ <թրք. bairaq (բարբառներում՝ պարբիս, պալրախաար), դուղայ «տեգի մի ծալրը ձիու պոչ անցկացված թուրքական դրոշ»։ <թրք. tuğ, կէնճ «պատանդ»։ <թրք. genj:

Հարկեր.— խալան <թթր. qalan, խափչուր «անանահարկ»։ <թթր. qubjur, տղղու <թթր. turğu, սուրսաթ <թրք. sürsat:

Ճնշում.— խալբալանք «շահագործում, լլկում»։ <թրք. xalbalāq (որից՝ խալբալի «փչացնել», օր. «Ջուրք, որք ամուլ առնեն և խալբալեն զսերմն».— Ն. Բալ., 70, տե՛ս ՆԲՄՀ), կիլապչա «ձեռքերը կապող շղթա»։ <թրք. kelepçe («Վիդն ի զէնճիլ, ձեռն (ի) կիլապչան»—Ն. Ժող., I, 34, տե՛ս ՆԲՄՀ):

Պատերազմ.— բարան «պարսպաքանդ մեքենա» (?), թըւանկ «դենք, հրացան»։ <thufank, թօփ «թնդանոթ»։ <thop, նաճաղ «սակր»։ <naĭjaq (պրս. naĭak), պասխաղ «ընդհանուր հրամանատար»։ <թթր. bašboγ (ըստ սկաղ. չ. Աճառլանի՝ հալերեն բառաձևը աղավաղված գրչութիւն է), բուլուք պաշի «խմբապետ»։ <թրք. bölük-baş, ելքան «կապիտան»։ <թրք. elqan, դարեթ (դարետան) «կապիտան»։ <kapudan, եէնիչարի «նոր զորք»։ <veni-çeri, խըզըլպաշ (ղըզըլպաշ) «թուրքական զորք»։ <qəzəl «կարմիր» և baš «գլուխ», որղու (օրտու, ուրտու) «բանակ»։ <urdu (ordy, orda), խօլ «գումակ» թրք. qol (նպրս. qōl), տուրղայ «զինանշան» (թուրքական)։ <tuğra:

Առևտուր.— բալիշ (դրամ է) <մոնղ. bališ, թանկա (դրամ է) <չղթ. thanka, թուման (թօման) «տասը հազար»։ <թթր. thuman, փարայ (դրամ) <թրք. պրս. phara, կոթրու «առանց կշռելու, մոտավոր չափով վաճառք»։ <թրք. götürü, պէճ «կանխավճար»։ <թրք. pey, չարչի «մանրավաճառ»։ <թրք. çarçi:

Կենցաղ.— բիճ «պոռնկորդի»։ <թրք. bi], piç, թալան, թալնիլ <թթր. thalamag, թօզ «փոշի» <thoz, դումայ «ապորինի կին»։ <թրք. quma, մատուկ «կեխտուտել»։ <թրք. murdarlamak, սուչ «սխալ, հանցանք»։ <suç, փուշտ «ցոփ»։ <phuşt, շլտու «պարզև»։ <թրք. çilda:

Տնային իրեր.— ալախ գաւաթ»։ <ayaq, պտեհա գրինու գաւաթ»։ <արև. թրք. badya «ապուրի պնակ» (Կաղանի թթր. badyan «փալտե մեծ սկավառակ»), թափսի (թէփսի) «ափսե»։ <թրք. thepsi, թաղար «աման»։ <չղթ. thayar, փիթլայ պատրուկ»։ <չղթ. phitla, տոպրակ պարկ»։ <թթր. tubrak, եաղլուխ արբիչ»։ <yaqləq, եաթախ (եաթաղ) «անկողին»։ <yathak, եողան (եողրան, յողան) «վերմակ»։ <yorqan:

Հագուստ.— գէիմ «հագուստ, համազգեստ»։ <giyim (kiyim), խարդան պատվավոր հագուստ»։ <թրք. qaftan, շուլ (չուլ) «հնամաշ հագուստ»։ <çul, փարանիկ «թուրք կնոջ շրջազգեստ»։ <ieraJe, խուշակ «գոտի»։ <quşaq, պոխտախ «թաթար մեծավորի կանանց գլխարկ»։ <boçtaq (որից՝ պոխտախաւոր), ուճիփաք «քող»։ <ürpāk, ճոթ «կտոր»։ <Joth, չիթ (կտորի մի տեսակ) <çith, սկեռլատ արնտիր կերպաս»։ iskerlet:

Գույներ.— պոյա գուլն»։ <boya, դանաւուզ «մուգ կապույտ»։ <kawa-nəs, կուհագ «մուգ կարմիր»։ <güwez (արբ. kawāziy), չաղար «խաժ» <çaqər:

Բույսեր.— ալոն «վայրի մի պտուղ, կարմիր գուլնի»։ <արև. թրք. alu], անտուզ «կղմուխ»։ anduz, արտուն «գրիհի»։ <թթր. artuç, ելագ (ելակ) «մորի»։ <թթր. yilak, եմիշ «սեխ»։ <yemiş, զողալ «հոն»։ <թթր. zoçal, թաթուլայ «արջընկուկ»։ <thathula, թութուն «ծխախոտ»։ <thüthün, դամիշ (խամիշ) «եղեգ»։ <qaməş, դհի «վայրի մանանեխ»։ <թթր. qəçə, ուզում «քիշմիշ»։ <üzüm, սրզու «խցանակաղնի»։ <sizu, սեկուտ «ուրի»։ <sögüd, սուլու «հաճար»։ <թթր. sulu, տալիկ «հաստ ճուղ»։ <dal, քոք «արմատ»։ <khökh:

Կենդանիներ.— ապուշ «պիծակ»։ <abraş, խանտալայ «մուկ»։ <թթր. qandala, չաքուրկայ «մորեխ»։ <çekirge, խառկալ «ազուավ»։ <qarqa, սաղ-սրդան «կաշաղակ»։ <saqsəqhan, իթակլու «բաղն»։ <արևել. թրք. ithelgü, քէքլիկ «կաքավ»։ <khekhlik, սախա «ձկնկուլ»։ <saqqa, ելասար «չղջիկ»։ <yerasa, զերտալ «կգաքիս»։ <zerdave, զաղառ «մեծ շուն»։ <zayar «որսի շուն», բուղալ «ցուլ»։ <buğa, լետեկ «ծի»։ <yedek, ալան «տոլուծ»։ <as-lan:

Անասնապահութիւն. — աղալ «փարախ»։ <ağal, ջիլայ «սանձ»։ <արևել. թրք. çəlaw, խամութ «կաշի, որով ձին կապուում է կառքին»։ <թթր. qamut (հմտ. չ. Աճառլան, Արմ., Գ, 353):

Բնութիւն. — դաղ «սար»։ <dağ, եազի «հարթավայր»։ <yazə, չու «անապատ, տափաստան, դատարկ տեղ»։ <çöl, սամսար «մարգագետին»։ <sansar, չալիր-չիման «մարգագետին»։ <թրք. çayər «մարգագետին» և պրս. çämān «պարտեզ», ճիմ «գուղձ»։ <չղթ. çim, կու «լիճ»։ <göl, տալ-ղալ «ալիք»։ <dalğa (որից՝ տալղայ առնուլ «ալիք տալ»), սաղ «ծանծաղ»։ <թրք. səğ:

Նրածշառութիւն. — աւզան «երգող»։ <արև. թրք. avzan, իւզուր «մե-ղեղի»։ <ögür, շէսիեոր «երգեցողութիւն»։ <şaqyr, չալել «նվագել»։ <çalmak, չալփարալ «փոքրիկ թմբուկ»։ <çalphara («պրս. çār-phāra. çahār «չորս» և phāra «շերտ»):

Մարդ. — չոճուխ «երեխա»։ <çöşuq, պուլիկ (պուլ, բուլիկ) «հասակ» <boy, էքսէ «վիզ, ծոծրակ»։ <ense (բարբ. enkse), կէքս «կուրծք»։ <göks, բեղ «ընչացք»։ <չղթ. biğ (բարբ. bəyər):



Հիվանդութիւն. — դում «հարբուխ» արև. թրք. timao, տմադուն «հարբուխ». <չղթ. dumaγu, սրզու «ցամ, ջղակծկում». <szzi, սրզուլու «ցամոտ». <szəzu, հարայ «վերք». <yara, հարալու «վերքոտ». <yaralə, մաթեայ «թարախ». <matya, ֆրանկ զահմէդի «սիֆիլիս». <fränk-zahmati, խիպիլի «մզմամանջ». <թթր. kabalak, քուլթեշ «հարսանիթ». <qurd-ešni, փալիտ «կակազ». <phelek:

Բուժում. — հախու «yaqə «տաքացնող», հէքիմպաշի «բժշկապետ» <«արբ. <hakim և թրք. baši «գլուխ, պետ»:

Ուտիլիք. — դուման «էրիշտա». <թրք. tutma], լապլապու «բոված, հատուկ պատրաստված սիսեռ». <leblebi, երեմուկ «խոշոր աղացած ալյուր» <irmik, երշիկ (երեշկիկ, իրեշկենք) «խճուղ». <զվո. թրք. erişgi, irişgink, կէշկէկ «շիլլա». keşgek, դմուզ «ծիու կաթով ըմպելիք». <չղթ. qimiz, քեշ «չորթան». kheş, պադմազ «չորշար». <bekmez, նոդլու (նոլլ) «աղանդեր», <nuql, փախլաւայ. <baqlava, պալ «մեղր». <bal, տուզ «աղ». <tuz, տուզլու «աղի». <tuzlu:

Թուրքերեն բառերից արդի գրական լեզուն պահել է՝ ալոն, բեդ, բեկ, բիճ, ելակ, երշիկ, խամաթ, ֆուքեշ, շոֆել:

#### ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՌԵՐ

Միջին գրական լեզուն հունարենից ավանդում է բավականին թվով նոր փոխառութիւններ, որոնք վերաբերում են կյանքի տարբեր բնագավառների՝ կրոն, գիտութիւն, վարչական կյանք, կենցաղ և այլն: Բերենք օրինակներ՝

Կրոնական. — ապոկրիփար «զրան երեց». <ἀποκρυφιαριος, դիակոն «սարկավազ». <διάκονος, էմիլոյիս «եպիսկոպոս» <ἐπιλωτης, մոնոզոն «միալնակցաց». μονάζων, պատրիարք «հայրապետ». <πατριάρχης, պերիտուտ (պերետուտ) «հոգևոր տեսուչ». <περιοδευτής, սակելառ (սակելառիտ) «եկեղեցու խմբավար». <σακιδάριος, եմիփորոն «եպիսկոպոսական խաչազարդ, ուրար». <ὠμοφόριον, կնկուղ (կնզուղ) «վեղար». <κουκούλιον, իկոն «հունական եկեղեցու սրբապատկեր». <εἰκών:

Գիտական. — աստոնոմի «աստղաբաշխական աղյուսակ». <ἀστρονομία, դիոպտա (դիոպտառ) «բարձրութիւն և հեռավորութիւն չափելու գործիք». <δίοπτρα, արտերի «շնչերակ». <ἀρτηρία, դուսպինիա (դասպինիա) «զժվարաշնչութիւն». <δύσπνοια, դիպպետոս (դիատոս) «անցվորիկ, շաքարախտ». <δυσβήτης, զմայ «աստմա». <ἀσθμα, լիպիրիա «ջերմախտ». <λιπυρία, ֆէլէմունի «տենդ». <φλεγμονή, սնթերի «թունավոր լուլծ». <δυσεντερία, միթոիտոս «հակաթուլն». <ἀντιδοτος Μιθριδάτειος (այս դեղի գլուտը հուլները վերագրել են Միհրդատ Պոնտացուն), կուլուռիա «աչքի մի դեղ». <κολύριον, (հոգն. κολύρια), տախիրոն «սպեղանի». <διαχυλος:

Վարչական. — անափորայ «գիմում բարձրագուն իշխանութիւն, աղերսագիր». <ἀναφορά, լաւաւուրիա (լոդոուրիա) «փաստաթուղթ, գրութիւն». <λογαριασμός, վուլ «կնիք. կնքված թուղթ». <βούλλα (լատ. bulla), սինոն (սնուր) «սահման». <σύνορος, զիքուն «սահման». <ζίχοι (հոգն. սեռ. ζίχων), եպարքի «սահմանք». <ἐπαρχία, եպարքոս (եպարխոս) «փոխարքա, կուսակալ». <ἐπαρχος, պատրիկ «խառվարիչ». <πατρικιος (<լատ. patricius), անթիպատ

(անթիպատրիկ). «փոխպատրիկ». <ἀντι-πατριχος, դուքս (դուկ, տուկ) <δούξ (լատ. dux), եւտուկարտոր քինքնակալ». <αυτοκρατωρ, դիմիտոն քրանտ». <δύμωσιος, դեկանինոն (տիկանիւան) «տասնապետ, ոստիկան, նվիրակ». <δεκανίων, եղգիկոս «գաւապոր». <ἐκδικος, խարտուրար (խարտուղար, քարտուղար) «քարտուղար». <χαρτουλάριος:

Կենցաղային. — աքարթալ «մաքուր». <ἀκρατος (ἀγάτης), ենքեր «անձեռոց». <ἐγχείριον, գմիղին «գմելի». <σπυλίον, լրտիկ (լպտիկ) «փոքրիկ կաթնա». <λεβήτιον, խալիին «կաթնա». <χαλκίον, կեղար «մառան». κελάριον, բեթթիկա «իջևան». <ἀποθήκη, իմերիական «ամենօրյա». <ἡμέρα, ետր «աղիճ». <ἐταίρα, եքսողիոն «թաղման հանդես». <ἐξόδιον, դիաթիկ (տիաթիկ, տիատիկ) «կտակ». <διδάσκη, պոռլգ «օժիտ». <προίξ, մակար (մակարայ) «երջանիկ». <μάχαρ և այլն:

#### ԼԱՏԻՆԵՐԵՆ, ԻՏԱԼԻՆԵՐԵՆ ԲԱՌԵՐ

Լատիներեն և իտալերեն բառերը վկայվում են մեծ մասամբ Կիլիկիայի միջին գրական լեզվում: Դրանք ամփոփված են պատմագրական, աստվածաբանական, իրավագիտական աշխատություններում և վերաբերում են կրոնի, զինվորականության, պաշտոնավարության, իրավաբանության, կենցաղի: Բերենք օրինակներ.

Կրոն. — Բուլ «պապական կոնդակ». <bullā, լեկաթ (լիկաթ) «պապական նվիրակ». <լատ. legatus (ֆր. արտասանությամբ՝ légat), ֆրա «կրոնական եղբայր». <միջ. լատ., իտ. frā (<լատ. frater), պատրի «կաթոլիկ կրոնավոր». <լատ. pater, դաղմաս «կաթոլիկ». <dalmaticus, վիճիլ (վճիլ) «գիշերալին աղոթք, եկեսցէ». <vigiliae, էնչենիայ «սրբագործութուն, եկեղեցու օրհնութուն». <լատ. encaenia, գորփուրայ (գորփուրայ, կորփուրայ) «լատին եկեղեցում նշխարքի տակ փոփոգ կտակ». <լատ. corporalis, բրուէնտ (բըրվէնտ) «հոգեւորականի եկամուտ». <միջ. լատ. praebende «արդյունք», քլաւլուսար «վանք». <միջ. լատ. claustrum:

Պաշտոն, ծառայութիւն, իրավագիտութիւն. — գոնտուստապլ «ավագ պարոն». <իտ. contestabile, գոնտուլոս (գոնտուլ) «կուսակալ». <լատ. consul, թուճ «դուքս». <իտ. doge, կոմս <միջ. լատ. comes, բրէսէտ «նախագահ, դատավոր». <լատ. praesed, աքթոր «փաստաբան». <լատ. actor, բրոզոնտար «ավագ նոտար». <լատ. protonotaril, աքթա «փաստաթուղթ, գործ». <լատ. acta, դէրմն «օրենսդրութուն». <իտ. termine, տէքրէթ «օրենք». <decretum, տէգրէդալք (թէքրէթալք) «օրենսգիրք, օրենքներ». <decretalia:

Զինվորական կյանք. — արմա «զինանշան». <իտ. arma, սիգնայ «դրոշմ». <լատ. signa, միլես «մարտիկ, հագարական». <լատ. miles, դալապր (դեղապր) «կացին». <լատ. dolabre, որից՝ դալապրել «կացնահարել», պրացալ «փոքր ասպար». <միջ. լատ. brazalis:

Կենցաղ. — գոնբալք «ավագակներ». <իտ. compagni, լազրիա «խոնարհութուն, խնդրանք». <լատ. latria, գամպիւմ «փոփոխութուն». <cam-bium, չունիմունի «ձեւականութուն, ծես, արարողութուն». <լատ. caeremonia (իտ. cerimonia), ցիմնդիր «գերեզմանատեղի». <իտ. cimitero, նոթըրել «անուցել». <լատ. nutrix (իտ. nutrice), պըտթէ (պըթէ) «տակառ». <իտ. botte, սուլ (սուլ) «կոշիկ». <լատ. solea:

Ֆրանսերեն բառերը, ինչպես լատիներեն, իտալերեն բառերը, գերազանցորեն հանդիպում են Կիլիկիայի գրական միջին հայերենում: Հատուկ կենսաբառեր ներթափանցել են նաև բուն Հայաստան: Ֆրանսերեն բառերը հիմնականում ամփոփված են դիվանական և պատմական գրականության մեջ: Կրանք վերաբերում են պետական, հասարակական կյանքին, պաշտոնավարությանը, կրոնին, իրավագիտությանը, առևտրին, կենցաղին:

Պետական կյանք, պաշտոնավարություն. — ամբարուր <sup>2</sup>(ըմբարուր, ումբարուր, օնբարուր) «եվրոպացի կայսր»։ <Ֆր. empereur (<լատ. imperator), ըռէ (ռէ) «թագավոր»։ <հֆր. rel, գուրդ «արքունիք»։ <հֆր. court, շաստել «ղրղլակ»։ <հֆր. chastel (<լատ. castellum), բրինձ «թագաժառանգ»։ <Ֆր. prince, որից՝ բրբննութիւն «իշխանութիւն, թագավորութիւն», բրբնձէս «արքայազուստր»։ <հֆր. princesse, տուկ (դուկ) «դուքս»։ <հֆր. duc, լատ. dux, գաւնց (գօնց, գոււնց, գոււնս) «կոնսուլ»։ <հֆր. cuens, գոնթ (գոււնթ, գոււնդ) «կոմս»։ <Ֆր. comte, որից՝ գոււնդութիւն «կոմսութիւն», գուրդէզ «սպետ»։ <հֆր. courteis, լիզիոն «վասալ»։ <հֆր. ligion (<բյուզ. λιγιον), լիճ «վասալ, իշխան, ենթակա»։ <հֆր. lige, որից՝ լիութիւն «ենթակալութիւն», մարգիզ <Ֆր. marchis, պալլ (պէլ, բէլ) «մեծ իշխան»։ <հֆր. bail, որից՝ պալլութիւն «իշխանութիւն», պարոն «բարոն, իշխան»։ <baron, ջանցլեր (ջանսլեր) «արդարութիւն նախարար»։ <Ֆր. chancelier, ջամբրլալ (ջամլալ, ջամուալ, զամբերլինդ) «սենեկապետ»։ <հֆր. chambrelan:

Ծառայություն. — պաներ «ոստիկան»։ <հֆր. banier, ըռէճիստր «գորանցում»։ <հֆր. registres, գուլէճ «ժողով, կոլեկտիվ»։ <հֆր. collègue, պողլեր (պողլեռ) «ավագ մատուցող»։ <Ֆր. bouteiller:

Հասարակական հարաբերություններ. — բուրճէս (պոռճէս) «քաղաքացի»։ <հֆր. bourgeois, գումին (գէմին, գումուն) «համայնք»։ <հֆր. commun, quemun (բյուզ. κοινον), ուիճ «հարուստ»։ <Ֆր. riche:

Կրոն. — ջարբոն (ջարբուն) «վեղար»։ <հֆր. chaperon, դրավերս «խաչի լախքին դրված փայտը՝ թեկերը»։ <Ֆր. traverse, նուլի «ծննդյան գիշեր»։ <հֆր. noël, ջարմ «կախարդանք»։ <հֆր. charme, բրաշուր (բրէշուր) «ունիթոռ քարոզիչ»։ <Ֆր. précheur, անզլ. preacher, Դամբլ «ս. Երուսաղեմի տաճարը»։ <հֆր. Temple (լատ. templum «տաճար»։ որից՝ դամբլցի «տաճարական, կարգավոր», ֆրէր «կրոնավոր, կարգավոր եղբայր»։ <Ֆր. frère, արծուէսք (արծվէսք) «արքեպիսկոպոս»։ <հֆր. arcevesque, բասաճ «խաչակրաց արշավանք»։ <Ֆր. passage (միջ. լատ. <passagium):

Իստարան. — ջալունջ «դատական բողոք»։ <հֆր. chalonge, որից՝ ջալընջել, ջալունջ այնել «դատարանին «բողոքել», բլալթ «ինքնապաշտպանական խոսք դատարանում»։ <Ֆր. plaid, որից՝ բլալթել «դատարանի առաջ իր դատը պաշտպանել» (Ֆր. plaider), տրֆրնտել «պաշտպանել, արգիլել»։ <Ֆր. défendre, ջաստել «պատժել»։ <հֆր. chastier, սալզալ (սալզ) «կալանք ապրանքի վրա, բռնագրավում», որից՝ սալզել (սազել) <հֆր. saisir, ֆալլիլ «դատի մեջ պարտվել»։ <Ֆր. faillir, օմաճ (օմալճ) «պարտավորութիւն»։ <հֆր. hommage, բրվլէճ «հատուկ արտոնութիւն»։ <Ֆր. privilège, անսիզ «օրենք»։ <Ֆր. assis (<assises), աուզաթ «փաստաբան»։ <Ֆր. avocat:

Առևտուր. — դոււնէզ «տուրոնական դրամ»։ <tourneis, ըստըլին «ստերլինգ»։ <հֆր. sterlin (իտ. sterlino, անզլ. sterling), լիվր «հին եվրո-

պական դրամ, որ փոխարինվեց ֆրանկով»։ <հֆր. livre, մարկ ամիջնադար-  
յան արծաթե դրամ»։ <հֆր. marc, սոլ պրամ 44 ու.»։ <ֆր. sol, օն Եերկա-  
րության հնագույն մի չափ»։ <ֆր. auna Եարմունկ» բառից, քիթ «հաշիվը  
փակված, վերջացած, փոխհատուցված»։ <ֆր. quitte:

Կեցցաղ.— զամբո (ջամբո, ջամո) Եսենյակ»։ <հֆր. cambre, ֆր.  
chambre, հանապ Եմեծ և լայն դավաթ»։ <ֆր. hanap, գուբ Եգավաթ»։  
<հֆր. coupe, ճուստր Եմրցանք»։ <հֆր. Jostre, դուռնալ Եմրցահանդես,  
հանդես»։ <ֆր. tournoi, ըռիպալտ Եխարդախ»։ <հֆր. ribald, դրախդուբ  
Եղավաճան»։ <հֆր. traïtor, մարիան Եամուսնություն»։ <հֆր. mariage:

\* \* \*

Մանթեանանք հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն բառերի  
կիրառությանը:

«Մերկ արապիկ մի ես տեսայ,

էր խանութպան ու ջամբոայ» (ՆՇԲԶ, 627):

Ջամբոայ <հֆր. chambrelan «սենեկապետ»:

«ՌՃԼԶ (1136)—Մեռու Լաւիզ ըռէ տը ֆրանցն» (Մժ, II, 57):

Ըռէ (ռէ) <հֆր. rei «թագաւոր»:

«Եւ զգատերսն իրաւունք է, որ ի նահապետութեան տուն կարգեն, որ է  
թագաւոր կամ բրինձ կամ մարկիզ կամ այսպիսիք» (ՄԴ, 16):

Բրինձ <ֆր. prince «թագաժառանգ»:

Մարկիզ <ֆր. marchio «բղեշխ»:

«Եւ գունթն Հեռի պսակվեցաւ ընդ Ջապէլ դուստր թագաւորին Ամառէ»  
(Մժ, II, 60):

Գունթ <հֆր. comte «կոմս»:

«Թագաւորն ընկլիզաց Ըռիշարդ... գնաց յայնկոյս ծովուն և բռնուեցաւ  
ի տուն Տաւս տը Ռիշէն» (անդ):

Տունկ <հֆր. duc «դուքս»:

«ՌՄԻԶ (1226)—Եկաց երրորդ թագաւոր Հայոց Հեթում որդի Կոստանդեայ  
պայլոյն Հայոց» (Մժ, II, 64):

Պայլ <հֆր. bail «մեծ իշխան»:

«...գտոյն գիրքս ես ներսես Պալիանէնց թարգմանէի ի բուրդս Հոռմոց»  
(Մժ, II, 179):

Քուրդ <հֆր. court «արքունիք, դաստակերտ»:

«ՌՃԵԶ (1146)—Եղեւ երկրորդ բասանն ֆոանգաց, որ եկն ընբրուրն և  
ըռէ տը ֆրանցն» (անդ, 58):

Բասան «խաշակրաց արշավանք»։ <ֆր. passage:

Ընբրուր (ըմբրուր) «կայսր»։ <ֆր. empereur:

«Նոյնպէս եւ զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն եւ լին ճորտքն, նա իր-  
մընցով զիրենք դատեն իշխանաց իշխանքն» (ՂԷ, 219):

Լին <հֆր. lige «վասալ, իշխան, ենթակա»:

«Հրաման եւ սիգեղ դայր նմա ի խանէն» (Մժ, II, 185):

Սիգեղ (սիգէլ) «հրովարտակ, կնիք, կնքված գրություն, կավածագիր».

<լատ. sigillum:

Եւ ելեալ զօրօք գայր ի Միշագետս մերձ. ի սիւնօն Ուոհայոց քաղաքին» (ՄԺ, II, 181):

Սիւնօն<հուն. σύνφορος «սահման»:

«Առնու պոաստինս հարիւր՝ որ է գեօղեան» (KWM, Վարդան Արևելցի):

Հուն. προῶσταιον «գլուղ, ավան, արվարձան»:

«Առնու փոխան .Ճ. պոաստին զՍեւաստ քաղաք եւս ընդ նըմին» (KWM, Ստ. Օրբելյան):

«Նումսուլ է զանդրանիկն կացուցանել յաթոռ ինքնակալութեան» (ՄԳ, 16):

Նումսու<հուն. νόμος «օրենք, կարգ, կանոն»:

«Եւ պատեճ է, որ յիր հայրենի երկրէն զէդ եղբօր մի կէս բաժին տան իր աժօք ընդ պոոյզն» (ՄԳ, 16):

Պոոյզ<հուն. ποίξ «օժիտ»:

«Ի սորին Իննոցէնտիոսին ժամանակն եղեն յաշխարհի բազում... գունբայքն... սոքա են աւազակքն՝ սպանօղք» (Ն. Բալ., 464):

Դունբայք<իտ. compagni «ավազակներ»:

«Եւ սկիզբն եղև դամփլցեց» (ՄԺ, II, 56):

Դամբլցի «տաճարական»<ֆր. templarii «Երուսաղեմի տաճարի խաչակիր ասպետ»:

«Եւ եղև մեծ սով ի Ֆրանսն, որ արժեցաւ ցորենն ի ստերն Դ լիվր» (ՄԺ, II, 61):

Ստերն<ֆր. sterne «չափ. մեկ խորանարդ մետր» (այսպես բացատրում է «Մանր ժամանակագրություններ» աշխատության հրատարակիչ Վ. Հակոբյանը, տե՛ս ՄԺ, II, էջ 86):

Լիվր «հին եվրոպական դրամ».<հֆր. livre:

«Երբ պաճն կատարած լինի ի կոճակն... ապա թէ յառաջ որ պաներոյն բաղարջն որ խուփն է, ամենեւին զկոճակն կթես» (Գիրք վստ., 193):

Պան «մեղրահաց», հուն. πᾶνις, լտ. panis, ֆր. pain:

«Եւ իւրք կանայօֆ ուղղեն զչուրն ի յամանն... իբր ի պրքէ» (Գիրք վստ., 5):

Կանայ «խողովակ, փող».<հուն. κάννα, լտ. canna:

Այս բառը օգտագործվում է նաև բժշկագիտության մեջ՝ «փող» իմաստով. օրինակ՝

«Եւ եթէ քար կենայ ի մարդոյն ի կանայն կամ ի փաղաբուշտն, նա առնուն զիրենս ծլերն... նա զգոզն յորդորէ ու զկանայն սրբէ ու զբնութիւնն արծկէ ու լուծէ» (KWM, Բժշկարան. Բ, 213):

Այս փոխառություններից գործածության հաճախությամբ հատկապես աչքի են ընկնում ֆրանսերեն բառերը, որոնց թիվը թեև մեծ չէ, բայց կիրառությամբ նկատելի տեղ են գրավում: Կարելի է ենթադրել, որ ֆրանսերեն բառերի զգալի մասը ներթափանցել է խոսակցական լեզվի միջոցով, մանավանդ, եթե հիշենք, որ ավանդական մի բառ բացատրելիս հեղինակը կարող է դիմել նրա ֆրանսերեն համարժեքին՝ իբրև ավելի ընդունված բառի. օր. «Վճարն կրկին լինի, որ է տուալ» (Սմբատ Սպարապետ, տե՛ս ՂՀ, 271). ֆր. double «կրկին»:

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Գրաբարի համեմատությամբ միջին գրական լեզվի բառապաշարային տարբերությունների գլխավոր աղբյուրներից մեկը բառային նորակազմություններն են: Միջին գրական լեզուն ասպարեզ է բերում գրաբարին անծանոթ բազմաթիվ նորակազմ բառեր, որոնք արտացոլում են միջնագարի հայկական իրականությունը՝ սկսած առօրյա հոգսերից մինչև պետական կյանք, մինչև գիտության ու արվեստի տարբեր ճյուղերը: Նոր բառեր ստեղծելու կարևոր պայմանը ժողովրդի առաջագիմությունն էր, տնտեսական, քաղաքական, կրթական կյանքի նոր վերելքը: Միջին գրական լեզուն հատկապես մեծ դեր կատարեց հայ գիտական տերմինաբանության մշակման գործում. բազմաթիվ նոր բառանուններ հանդես եկան բժշկագիտության, իրավաբանության, տոմարագիտության, մաթեմատիկայի, ճարտարապետության, նկարչության, կրթության և այլ մասնաճյուղերում:

Միջին գրական լեզվի նորակազմ բառերը տարբեր տիպի են. կան արմատական բառեր, որոնք գոյացել են գրաբարում գործածական, բայց անկախ հանդես չեկող արմատներից, կամ՝ տարբեր բաղադրիչների այնպիսի միաձուլմամբ, որ այլևս նախկին բաղադրիչները չեն գիտակցվում, կամ՝ քարացած և իբրև ուղիղ ձևեր ընկալվող քերականական ձևերից. կան իսկական, բաղճյուսական, հարադրական, կցական բարդություններ և ածանցյալ կազմություններ:

Ծանոթանանք բառախմբերին՝ ըստ կազմության.

1. Արմատական բառեր, որ գրաբարում անկախ գործածություն չեն ունեցել, իսկ միջին հայերենում ինֆնուուսյն բառեր են:

Պագ (պաք) «համբույր». գրաբարում բայարմատ է՝ պագ-ան-ել, և հանդես է գալիս երկիր պագանել հարադրության մեջ. միջին հայերենում անկախ բառ է.

«Մանուկ սիրո տէր լինի, պաֆն առնու, կարօտն անցանի» (ՆԲՄՀ):

«Պագ մի յերեսէդ կաթէ գեորասան» (Հ. Թլկ., տե՛ս ՀԱԳ, 90):

«Զայդ պագդ որ քո բերնէն դու տուիր քո սրտի կամով,

Հանցեդ անուշիկ պտուղ ոչ ցամաք երկիր կէր 'և ոչ ծով» (Ն. Քուչ., տե՛ս ՀԱԳ, 142):

Ման «պտույտ». գրբ. մանել բայի արմատն է.

«Զոտքըն առեալ մանի ճեմէր» (Հ. Թլկ., տե՛ս ՆԲՄՀ):

Գիլ «պտույտ», որից՝ ի գիլ «երերուն». գրբ. գլոր, գլորել բառերի արմատն է:

«Յորժամ դու քակես ըզչարին ու շթողուս որ դաննայ ոլոր,  
Սահուն 'ւ երերուն պահես յաստնորս ի գիլ 'ւ ի գլոր» (Ֆր., տե՛ս ՀԱԳ, 8);  
Մտ «հոսող հյութ»։ գրբ. ծորել, ծորումն բառերի արմատն է։  
«է նա կանաչ կոճակ բուր,  
Անպակ գինով լըցած տկճոր.  
Կարմիր մեղուք ի ներս աղուոր,  
Նղբայր, դու կեր գինչ մեղրի ծոր» (Ն. Շնորհ., տե՛ս ՂԶ, 65);  
Վկայված է նաև Քիմիաբանութիւն, էջ 129 (ՆԲՄԸ):  
Կոկ «հարդ, ողորկ»։<գրբ. կոկել, կոկումն։  
«Տանիսն է կոկ գինչ զապիկի,  
Առիքն ի քաղիթ նրմանի» (Ն. Շնորհ., տե՛ս ՂԶ, 66):  
«Կոկ գետինն ոչ խմէ գջուրն» (Գիրք վստ., 159):  
Կոխ «խաղողակոխ», «շեմ»։ գրբ. կոխել, կոխան, ոտնակոխ, կոխումն  
բառերի արմատն է։  
«Եւ լուացած ազգի ազգի մաքրութեամբ մտանէ ի հնձանն և առնէ զկոխն»  
(Գիրք վստ., 85):  
«Եւ կին մարդ բնաւ ոչ է պարտ մերձենալ ի կոխն, այլ հետ կալ ի հըն-  
ձանէն» (անդ, 86):  
«Եւ գխաչն զարծաթին զոր ընկեցին, որ էր մարդաչափ մի, տարան եղին  
զնա ի կոխ դրան՝ ի դուռն մոթթին նախշուան քաղաքին, որ կայ մինչև ցայ-  
սօր» (Մտթ. Ուռհ., 180):  
Հալ «հալում»։ գրբ. հալել, հալումն բառերի արմատն է։  
«Եւ գտան ի քարափ քարայր մի մեծ յոյժ լցեալ թերապարզ արծաթով,  
որ հալ մի պակաս էր առ ի սրբել զնա ամենեւին» (Միխ. Ա., 497, հմմտ.  
ՆԲՄԸ):  
Չարկ «հարված»։ գրբ. զարկանել բայի արմատն է։  
«Յորժամ թահրի մարդն, եւ ոտքն ի քարն դիպի,...  
կամ զարկս առնու, նա ջանայ բնութիւն որ արիւն յղարկէ անդ» (ՄԸ, 22):  
Խաչ «արգանակ»։<գրբ. խառչել։ Միջին հայերենում վկ. Բժ. Ա., 33.  
«հաւի խաչ» (տե՛ս ՆԲՄԸ):  
Կիզ «խորոված»։<գրբ. կիզուլ «այրել»։  
«Ոչ ուտի հաց առանց աղի, և ոչ կիզ և ողջակէզ առանց հրոյ» (Չար.  
Մործ., տե՛ս Հ. Աճ., Արմ., Գ, 1178):  
Խոստ «խոստում, ուխտ»։ գրբ. խոստանալ, խոստովանել, խոստումն բա-  
ռերի արմատն է։ Վկ. Վրդն., Առ., 94. «Չէ՛ պարտ զխոստն մոռանալ»։  
Կոփ «հարված» (մուրճով)։<գրբ. կոփել «կռանով, մուրճով հարվածել»։  
«Արա զարուեստ հիւանութեան, զկոփ, զտաշ, զձև» (Ոսկիփ., տե՛ս ՆԲՄԸ):  
«Ձկոփ և զտաշ նորա սրբաքերս արասցես վանդակաւ» (անդ):  
Կիծ «աչքի մի հիվանդութիւն»։<գրբ. կծանել։  
«Բոր և կիծ որ աչացն ի կոպն լինայ» (ԱՕԲ, 181):  
«Սահակն ասէ, թէ կիծն ի յաշքն չի լինար, բայց ի կոպին մէջն կու լի-  
նայ» (անդ, 182):  
Ձեկ «լուր»։ գրբ. զեկուցանել, իրագել։ Վկ. Աբր. Կրետ., 93 (տե՛ս Հ. Աճ.,  
Արմ., Բ, 920):  
Կոյզ (կուզ) «ողկույզ», «խաղողի վազ», «հավաք»։ գրաբարում հանդես  
է գալիս ողկոյզ բաղադրութեան մեջ։

«Գնա ի կուզերն եւ պատրաստութեամբ ըմբռնեա երկու մատամբդ մէկ պտուղ մի, եւ խլեա ի կոյզկապէն, այնպէս որ չպտղի պտուղն» (Գիրք վաս., տե՛ս ՂԶ, 98):

«Եւ բաց եւ տես, գտանես զամէնն մեղուք կոյզ յիրերաց վերայ զերդ խաղող» (անդ, 102):

Ապուր «չրալի կերակուր»: Գրաբարում կազմում էր՝ անձնապուր, մազապուր, դիրապուր, ապրել, ապրուստ, ապրանք և այլն:

Այս բառերի քննութիւնը ցույց է տալիս, որ արմատից մինչև ինքնուրույն բառ զարգացում ունեցել են գլխավորապես բայարմատները:

2. Իբրև արմատական ընկալվող բառեր, որ առաջացել են նախկին բաղադրյալ կազմութիւններից՝ բաղադրիչների միաձուլմամբ և մթագնումով:

Ձերդ (զէրդ, զէրթ, զէդ, զէտ, զէթ) «որպես. ինչպես». առաջացել է գրթ. գի+արդ կապակցութիւնից (հմմտ. նՂԲ):

«Դատիմ զերթ զամեն մըշակ» (ՉԵ, 145):

«Եւ պարտի տալ հաւատարմութիւն իր պարոնին զեդ լիճ պարոնի» (Սմբ., Անս., տե՛ս ՂԶ, 191):

Մէն «միայն».<մի+այն բաղադրիչներից. -այն-ը ածանց է, որով ունենք նաև՝ երկ-այն, բարբառային՝ էրկէն, միանգամ-այն և այլն:

«Հրամայէ որէնքս որ թէ զայնոր ձեռքն կտրեն՝ որ քաւէ զսպանութիւնն զոր արար, նա ի դատաւորին կամքն է, թէ վասն իր հոգոյն խղճայ եւ խրատէ մէն» (Սմբ. Դատ., տե՛ս ՂԶ, 213):

Դուր «ուր, որտեղ».<ընդ+որ կապակցութիւնից.

«Դուր որ պող շղթիւր մի կայ, դու կանանչ, ես ցօղն ի վերայ» (Ն. Քուչ., տե՛ս ՉԱԳ, 145):

Ծ ա ն.—Միջին հայերեն գրականութեան մեջ վկայվում են նաև այս բառի նախնական ձևերը՝ ընդ ու, ընդու, որոնցում, ինչպես տեսնում ենք, բաղադրիչները գիտակցվում են.

«Ատով խոցեցիր դու զիս, ես ղարիպ եմ, երթամ ի ընդո՛ւր» (Ն. Քուչ., տե՛ս ՉԱԳ, 138):

Դունչ «բերանը և ծնոտը».<ընդ+ունչ կապակցութիւնից.

«Խողըն ջօհար ե՛րբ ճանչէ, զօրն ի բուն զաղբըն կու փորէ,

Կոխէ նա զքո ջօհարն, ղընչովն այլ ըզբեզ խոցէ» (ՉԵ, 143):

Այլվի/այլվայ (այլուի, այլուս) «կրկին, դարձյալ».<այլ+վայր, այլ+ու+վայր կապակցութիւնից: Վայր բառը հայերենում գործածվել է ո՛չ միայն «տեղ», այլև «ժամանակ» իմաստով. վերջին իմաստի հետ է կապվում վայրկեան բառը, որ կազմված է վայր-իկ-եան բաղադրիչներով և նշանակում է «փոքր ժամանակ, կարճ միջոց»:

Վայր բառը «ժամանակ» իմաստով հանդես է գալիս նաև միջին հայերենում.

«Եւ վասն այդ պատճառանացդ արիւնն վայր մի եռայ և ի դուրս գայ, և վայր մի ի ներք հաւաքի» (ՄԶ, 16):

Այլ+վայր կապակցութեան մեջ վայր բառը արտահայտում է ժամանակի իմաստ, և բառի սկզբնական նշանակութիւնն է՝ «նոր ժամանակ», այսինքն՝ «դարձյալ, կրկին»: Այլվի, այլվայ բառաձևերում տեղի է ունեցել վայր բաղադրիչի այ երկբարբառի պարզեցում և բառավերջի ր-ի անկում: Վայր բառը այսպիսի հնչյունափոխութեամբ հանդիպում է նաև անկախ գործածութեամբ.



«Թե յաւուր միում մտօքն խորհուրդ արաւ. և ինքն ընդ յինքն իմաստնայ- սիրեց և ասաց, թէ քանի կենամ ի յաս անշահ վի սառնայպատ լեառներս, որ ոչ կերակուր կայ և ոչ մխիթարանք» (Վրդ. Առ., տե՛ս 2ԱԳ, 345):

Եթե այլվի / այլվայ (այլուի / այլուայ) բառաձևերում բաղադրիչները գրե- թե չեն գիտակցվում, որով տվյալ ձևերը մոտենում են արմատական բառերի աստիճանի, ապա այլվայր, այլուվայր, այլ վայր կապակցություններում բա- ղադրիչները գիտակցվում են, ուստի վերջին ձևերը միջին հայերենում մնում են որպէս կցական, հարադրական բարդություններ:

Հօսկայ (ուսկայ) «ահա», հօնկայ (հունկայ, ունկայ) «այնտեղ, ահա, այն է».<(յ)այս+կայ, (յ)այն+կայ կապակցություններից.

«Հօսկայ մերկ եմ ես հիմայ,

նւայ նըստել ու խիստ կուլայ» (2Ե, 229):

«Հօնկայ տէրտէրդ կու ճորայ,

Թէ Աշան ընկեր է ի հետ նորայ» (2ԱԳ, 58):

Իսա «այս», ինա «այն», իղա «այդ».<այս+սա, այն+նա, այդ+դա կա- պակցություններից.

«Պարոնայք, իսայ գրաստս իմ է» (Սմբ. Անս., տե՛ս Դ2, 198):

«Եւ ժողովուրդն չէ իրաւունք որ ընտրեն՝ թէ ինա երէցն լաւ է քան զիսայ կամ այլ անոյշձայն» (Սմբ. Դատ., տե՛ս Դ2, 215):

Քանձ (քանց).<քան+զ կապակցությունից.

«Եւ զինչ իսկի իրք ծախեն ի շուկայն սամորով ու ի տունն ծախեն՝ նա քանց զսամորչէքն այլ իրք շտան» (Գիվան. գր. Կիւ., տե՛ս Դ2, 259):

Ղորդ (ըղորդ) «ուղիղ, ճիշտ, ճշմարիտ, իրավ».<ուղիղ+որդ բաղադրիչ- ներից.

«Պարտ է գիտել, եւ զմեղուաց տունն այնպէս շինել, որ գարունն մինչ արեւն ցայթէ՝ նա յինքն դիպի ղորդ ընդդեմ. եւ այս վասն այնր լաւ է, որ ձմեռն ջեր լինի եւ յամառն հով» (Գիրք վատ., տե՛ս Դ2, 100):

«Եւ լիճ ճորտն պարտի որ ի յայն օրն երթայ անսղալ. եւ կամ ցուցնէ ըղորդ զիր անձինն պատճառքն շաւուշին, կամ այլ յետոյ» (Դ2, 191):

Մ ա ն.—Միջին հայերեն գրականության մեջ վկայվում է նաև այս բառի նախնական ձևը՝ ուղղորդ, որտեղ բաղադրիչները գիտակցվում են:

3. Որպէս արմատական ընկալվող բառեր, որ գոյացել են հոլովական, խոնարհման քաղցած ձևերից՝ քերականական իմաստների մթագնումով և իբրև ուղիղ ձևեր դիտվելով.

Հօս (հոս), հօդ (հօդ), հօն (հոն) «այստեղ, այդտեղ, այնտեղ». եզակի նախդրով հայցականի ձևեր են.<յայս, յայդ, յայն: Այ>օ(ո) համապատաս- խանության համար կարելի է հօս, հօդ, հօն բառաձևերը համեմատել պայ- ման>պոման (պոմն, պոմն), պայծառ>պոծառ (պօծառ), այնց>ոնց բառա- ձևերի հետ:

«Աշխարհս է ոչինչ նըման, շատ դատին դառնան փոշիման,

Հալալ ու հարամ անեն՝ հոս թողուն ՚ւ ի հոն կու գրնան» (2Ե, 157):

Այնց / էնց / հայնց / հենց / հանց / ոնց. հոգնակի սեռական-տրականի քա- ղացած հոլովաձևեր են. վերջինը գործածվում է «ինչպես» իմաստով, մյուս- ները՝ «այնպես, այնպիսի, որպես, ինչպես».

«Եւ զամէն աւուր զգեղ եւ զկիրակուր ուրիշ ի զիր եհան, եւ այնց ասաց՝

զայտ նուխաթնիտ... զլերդն ուժովացնէ եւ զցաւիլն տանի» (Ախրապ., տե՛ս ՂԶ, 415—416):

«Էնց մարդն որ բանիկ ունի, կամ ուսմամբ կամ ի բնութենէ, Համեմ է հոգոց մարդկան, 'ւ զհիւանդ հոգիս բըժըշկէ» (ՆԵ, 149):

«Եկի առի հանց կրակի,

Ոչ գրէի, ոչ կարդայի» (անդ, 164):

«Ու հայնց հավնեցաք մենք ու Մայստոն ու իրեն ձիաւորքն որ շինեն Վիրէնց տունն ի Սեւ պուրճն» (Դիվան. գր. Կիլ., տե՛ս ՂԶ, 258):

«...տուաք Զուի դանկն իւր հողովն եւ ջրովն ոնց բնական լեալ է ի սուրբ Յովաննէս» (ՂԱՇ, 21):

Լման (ի լման) «լրիվ. ամբողջովին. բոլորովին». <լրումն բառի նախադրիվ տրականից՝ ի լրման.

«Խաշատուր, զարթիր ի քնոյ, կատարէ զգործքդ ի լրման,

Ծանիր զարարիչն Աստուած, որ շտանի գեհենն ի հաւան» (ԽԿ, 147):

Դուրս. <դուռն բառի դուրս հոգնակիի հայցական հոլովածն է.

«Ծայրն ի դուրս թող» (Գիրք վատ., 140):

«Կանափն ծեծես, եղն դուրս կու տայ, առ և ի գործ ած» (ՆՃԲ, Կանափ):

Մի շարք բայերի անցյալ կատարյալի հիմքը հանդես է գալիս իբրև ինքնուրույն բառ.

Թանալ—բաց «խոնավ».

Բանալ—բաց (օր. «բաց գոյն» Ամիրտ. Օգ. բժ.):

Լալ—լաց. «Քանի՛ լաց պահես զայս խղճուկ գերիս» (ՆԲՍՀ):

Դառնալ—դարձ «դարձյակ», «օրավար». «Գերանն այն ո՛ւմ նման. դարձերն այն ո՛ւմ նման» (Տաղ եկեղեցւոյ, տե՛ս ՆԲՍՀ). «Եւ է միլն երկոտասան ոճ դարձի եզանց հերկողաց» (Միխ. Աս., 56, տե՛ս ՆԲՍՀ) և այլն:

Վերը քննած նորակերտ բառերից պիտի տարբերել միջին հայերենի՝ գրաբարին անծանոթ բազմաթիվ բնիկ և ենթաշերտային արմատական բառերը, որոնք թեև գրականութան մեջ ուշ են ավանդված, բայց նորակազմութուններ չեն: Այս կարգի բառեր են, օրինակ՝ ակոայ, բէն «թիկունք», նուս «մեջք», կուց «կիցբուռ», նուտ «ոլոք», նիւ «թև, ոտք», բումբ, դէկ «ընկերք», բոն «լորձ», շոն «ուժ», դոն «կլոր հաց», մաք «գոշաք», գուլ «բութ», թոշ «թույլ, լայն», նուկ «թեք», բունձ «հող», հոր «դազգահ», լիմ «կարժառ», ժախ «վայրի բողկ», բոգ «օձի սխտոր», կասկ «շագանակ», շօթ «լավաշ» և այլն:

4. Միջին գրական լեզուն վկայում է գրաբարին անծանոթ բազմաթիվ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմութուն է.

Լմնել «կատարել, լրացնել, ավարտել, վերջացնել». լման «լրիվ» բառից.

«Առաջին օրն զքո խօսքդ լմնեցի.—առլեխ եմ գրել տունել՝ կարդալ տուր, և զինչ քո սրտիդ պիտի աւելի՛ զայն այլ գրել տուր» (Վրդն. Արև., տե՛ս Մ. Աբեղյ., Հայ. գր., II, 205):

Նենգել «վնասել» (գրբ. հոմ. վիասել, մեղանչել). նենգ ածականից.

«Երբ ձագերով բոյն գտնվի, ու զմայրն ի վերայ, նա մի՛ նենգել մօրն» (Սմբ. Դատ., 78):

Հարկել «ստիպել» (գրբ. հոմ. հարկադրել, ստիպել). <հարկ «պարտավորութուն» բառից.

«...պատեհ է ստուգութեամբ քննել զճշմարիտն, թէ կինն զցուլն է հարկել ու խաբել, թէ ցուլն զկինն» (Սմբ., Դատ., 52):

Ավիել «բռնել» (գրբ. բռուն հարկանել). <ափ գոյականից.

«Ապայ զնաց և այլ գէր մեծ դմակ մի էբեր և դիր ի յան դմակին տեղն և լարեց զականատն ի ներքեն. և ասաց. կարեմ ավիել զվնասայկարն իմ. և ինքն զնաց» (Վրդ. առ., տե՛ս ՉԱԳ, 347):

Ըղորդել «ճշտել, ուղղել, կարգի հրավիրել».

«...Նւ զժանդր շալակն ի վերայ եպիսկոպոսացն է դրել, որ թէ իսկի պակսէ՛ նա զամէնին վճարն Աստուած յիրենցմէ վճարուի, եւ ի հայրապետէն՝ թէ զեպիսկոպոսն շղորդէ» (Սմբ. Դատ., տե՛ս ՂԶ, 226):

Ճապղել «փշացնել, ոտքի տակ տալ».<նապաղ «տարածած» բառից.

«Ապա եկեալ յանկարծակի տէր այգոյն և տեսաւ զմիրքն վաթած և զխաղող նապղաց» (պիտի ուղղել՝ ճապղած—ՄՄ. վկ. Վրդ. Առ., տե՛ս ՉԱԳ, 347):

Տրբստիլ «հաստատվել».  
պարսկերենից միջին հայերենում փոխառյալ դրուտ «ճիշտ, հաստատ» բառից.

«Եւ երբ երդնու շավուշն՝ նա տրբստեցաւ ի վերայն ու հերիք եղաւ» (ՂԶ, 192):

Ալկել «կերակրել, բտել» (անասունի).<արբ. ալիկ «անասնակեր» բառից.

«Եւ թէ ոք զնէ գրաստ՝ զինչ ու լինի, եւ տանի յիր տունն ու ալկէ, եւ ունայ յիր տունն ինչլի վաղն, ու տան ջուր, նա իր է, այլ շղառնայ» (ՂԶ, 199):

Օգտել «օգնել».<օգուտ բառից.

«Ձայս ամէնս յիրար խառնէ, հին քթան կտաւով ի վերայ այտոցին պահէ, շատ օգտէ» (ՄԶ, 24):

Գրաբարին անծանոթ բազմաթիվ պարզ բայեր կան, որոնց նորակերտ կամ հին լինելը դժվար է որոշել. միւսն «սուզել», մախալ «նախանձել», ցոնալ «նուրբ քայլել», վիճակել «ժառանգել», խոռիլ «պակասել», խոռել «վտարել, արսորել», զահրնդել «սարսափել», աղետալ «խղճալ», յեմել «սպասել», շապկել «պատել», սեբեկել «ամանի բերանը սերեկով փակել», սեպել «ընդունել», նխմել «տորոել», տապկել «տապակել», հոտալ «հոտ քաշել», կֆալ «կուշ զալ», հակել «ընդունել», ստածել «խնամել» և այլն: Այս բառերի մի մասը անշուշտ պործածական է եղել հին հայերէնի բարբառներում:

5. Միջին գրական լեզուն ավանդում է սոսկածանցավոր, բազմապատկական, պատճառական նորակազմութիւններ, ինչպես՝

Կալնուլ «բռնել» (գրբ. ունել) <կալ-ն-ուլ.

«Մկներն ասացին ընդ իրար՝ թէ Այդ է՞ր է, որ մեք ոչ սլեհ ունիմք եւ ոչ եղջիր, եւ կատուն զմեզ դիւրաւ կալնու» (ՂԶ, 285):

Վառչիլ «այրվել».<վառ-չ-իլ.

«Ի յամելն և ի բազմանալն վառչի և բորբոսի (արիւն)» (ՄԶ, 70):

Հովնալ «սառել».<հով-ան-ալ.

«Եւ ականջքն սպիտակէ եւ հովնայ» (ՂԶ, 145):

Շաղնալ «տաքանալ».<շաղ-ան-ալ.

«...ձեռտ ի վերայ մարմնոյն դնես, մինչև շաղնայ» (ՄԶ, 12):

Աղվնալ «նիհարել, ցամաքել».<աղու-ան-ալ.

«Ապա թէ մարդն լուծումն ուննայ եւ երեսն աղվնայ, չէ ահոկ՝ զի յայնոր լինի» (անդ):

Խորվնալ «խորանալ».<խոր-ու-ան-ալ.

«Եւ աչքն խորվնայ» (անդ):

Խոցնալ «ախտահարվել, վերք բացվել».<խոց-ան-ալ.

«Ապա թէ շատնայ մաղձին լուծումն, և վախես յաղեցն՝ որ շի խոցնայ, հոկնայ դիր» (ՄՀ, 96):

Ուտենալ «ուռչել».<ուռ-են-ալ.

«Նոյնպէս և ձեռքն և բազուկն յորժամ այտչի և ելունդ ելանէ կամ զարկք առնու, ուտենայ ի յանթն խոլային մարմին, և առնէ զչերմն» (ՄՀ, 22):

Յաջենալ «բուժվել, առողջանալ».<յ-աջ-են-ալ.

«Վասն լերդացաւի որ ի շերմութենէ ցաւի, եւ զայն գրենք որ Գրիգոր վահրամայ որդին իւրն արար եւ այնով յաջեցաւ» (ՂՀ, 415):

Շառուել «ճեղքել».

«Ապա թէ աներ արոյնն կայ հաւաքած ի յինքն, զայն տեղիքն շառուէ, և զաւեր արոյնն հան» (ՄՀ, 75):

խոցուել (խոցոտել, խոստել) «ծակծկել, ցավել».<խոց(ո)տ-ել.

«Եւ ասաց, թէ ամէն անձս ծանդրացեալ է և խորս կոյ խոսուէ ի դիմաց դմակին» (ՀԱԳ, 347):

«...այտոցն պինտ լինի և խոցուէ զերթ նետով» (ՄՀ, 24):

Թալկտիլ «թուլանալ».<թալուկ-տ-իլ.

«...թէզ բերէք զխորովուն. սիրտս կոյ թալկտի և կոյ տապի» (ՀԱԳ, 335):

Յարեցնել «կապել».

«Եւ ի յամենայն կերակրոց՝ որ զսավտայն շարժեն... պատրաստ կալ, և ի պարկեշտ կերակուրք յարեցո» (ՄՀ, 19—20):

«Ի հով և ի գիճային կերակուրք յարեցո» (անդ, 21):

Թերեցնել «նվազեցնել, պակասեցնել».

«Եւ ի կոճակն թէ շատ պան կենայ՝ դու թերեցո, եւ զչափն թող, զի շատ պանն հիւանդացուցանէ զմեղուն» (ՂՀ, 101):

Մխոցնել «ծուխ տալ».

«Եւ աղէկ մխոցո (փեթակն), զի իւր կեանքն այն է» (անդ):

խոցնել «վիրավորել».

«Եթէ վնասէ տղայ զտղայ կամ խոցցնէ՝ նա նոյնպէս ի հասակն հային ու ի խոցն, եւ զղեղգինն յայնոր վերայ դնեն» (անդ, 211):

Փոթորկեցնել «շատ վազեցնելով շարշարել».

«Եւ թէ ոք տայ զիր ձին մարդոյ ի բան..., նա տանի ի ջուր կամ ի կապ կամ ի փոս, կամ յայլ տեղ փոթորկեցնէ, որ վնասի կամ մեռնի, նա պատեհ է, որ աղէկ իմանան զպատճառն» (Մմբ. Դատ., 78):

6. Կրկնավորն եր.—Իբրև կրկնավոր հանդես են գալիս գոյականներ, ածականներ, թվականներ, մակբայներ. ժամ ժամ «ժամանակ առ ժամանակ», երակ երակ «տեղ տեղ, մաս մաս», երեսuf երեսuf «կարգ կարգ», դաս դաս, մէկ մէկ, գատ գատ «հեռու հեռու», ոլոր ոլոր, թէզ թէզ, խլոռ խլոռ, ֆշիկ ֆշիկ, տրկուկ տրկուկ «մինչև վերջ» և այլն:

Ի նախորդով կրկնավորներ են՝ հետ ի հետ «կողք կողքի», գատ ի գատ «հեռու հեռու», մօտ ի մօտ «իրար մոտիկ», ֆով ի ֆով, ման ի ման «ուրոր ոլոր», ժամ ի ժամ «ժամեժամ», շար ի շար «շարք շարք» և այլն:

7. Հարադրական բայեր.—Միջին գրական լեզուն հարուստ է բայական նորակերտ հարադրություններով, ինչպես՝ յաշու ունել «նայել», աշօֆ աճել (այնել) «աչքով անել», յօնօֆ առնել «ուներով անել», յիշման տալ «հիշել», զրուց(ն) տալ «զրուցել», յուլանց տալ «մղել», թապալ տալ «թավալվել», ընտալ տալ (ընդ այլ տալ) «խենթանալ», ընդ այլ խօսիլ (ընդալ խօսիլ, ասել)

«խենթանալ, ցնորվել», երդումն տալ / երդումն ուտել «երդվել», մտիկ առնել (այնեկ, անեկ) «նայել», մտիկ դնել «նայել, ուշ դարձնել», ման առնույ «գալար առնել», ման ի ման գալ «գալարվել», յիրար գալ «փակվել, միանալ», ի մէկ տեղ գալ «հավաքվել», ի դուրս գալ «ելնել», յերևան գալ «երևալ», ի լոյս գալ (աշաց) «տեսնել», ի մազն գալ «բարակել մազի շափ», ի գատ առնույ «հեռացնել», ի գատ պահել «հեռու պահել», ի յետ կենալ «հեռու մնալ, հրաժարվել», դանակ ածել «դանակահարել», դանակ ֆաշել, մոծիր դառնալ «մոխրանալ», խեղ դառնալ «խելագարվել», ի նօշ բնկնիլ «բամբասվել», դուրս առնույ «ալեկոծվել, թունդ առնել», լուր դնել «լսել», ի լոյս ելնել «արթնանալ», շէն մնալ «ամբողջ մնալ», շէն պահել «ամբողջ պահել» և այլն:

8. Կցական բարդութուններ. — Որոշ բառակապակցութիւնների և հարադրական բարդութիւնների միացմամբ միջին գրական լեզվում գոյացել են կցական բարդութիւններ, որոնց մեծ մասը բարբառային բնույթի է, ինչպես՝

Հանցեղ / էնցեղ / հնցեղ «այնպիսի» <(յ)+այն+ցեղ. օր. «Ոք չէ տեսել էնցեղ գիտուն» (Ն. Շնորհ., տե՛ս ՆՐՍՀ):

Հանցգուն / րնցգուն / րնցկուն «այնպիսի. այնպես. այնքան» <(յ)+այն+ց+գոյն. օր. «Հնցգուն քար ափով ածես՝ որ շօգնէ հազար ումբաւոր» (Յր., տե՛ս ՀԱԳ, 8): «Րնցգուն վայելուչ՝ աղւոր են եղբայրքն ի մէկ տեղ եկել» (ՀՆ, 146):

Այլուվայր «կրկին» <այլ+ու+վայր բաղճյուսական հարադրութիւնից. «Երբ հիանդին զհանդերձին դղացկանի հագցնես, և այլուվայր հանես, և հիւանդին հագցնես՝ առանց լուանալոյ, օգտէ ի յայս շերմանս» (ՄՀ, 121):

Յուր «մինչև» <ց+ուր. «Եւ եփէ ցուր ջուրն հատնի և կաթն մնայ» (ՄՀ, 51):

Ինչվի (ինչֆի) «մինչև» <«մինչև+ի» <Առնուն զիրէնց բայժն ի ճամբէն, զինչ ցեղ ինչֆի յայս ար էն առել» (Դիվ. գր. Կիլ., տե՛ս ՂՀ, 258):

Ինչուր «մինչև» <մինչ+ուր. «Եւ այնպէս երթան ինչուր զգողն գտնուն» (ՂՀ, 199):

Ինչուրվի «մինչև» <մինչ+ուր+վայր. «...պահէզն ու լանջն ինչուրվի Գլիժորին դուռն ինչվի գետն... իմ գնած էն» (ՂԱՇ, 77):

Հանչաֆ «այնքան» <յ+այն+չափ+ք. «...հանչաֆ խմեց՝ որ խումբեց» (ՂՀ, 213):

Մէկալ (մէկայլ) «մյուս» <մէկ+այլ. «զկինն սպաննէ անմեղ զեղ մեղկան և թողու զմէկալն» (Մմբ. Դատ., 52):

Հիտրաց «իրար հետ, միասին. իրար ետևից» <հետ+իրերաց. «Երկու օր հիտրաց նուպայ առնու, և օր մի շառնու» (ՄՀ, 116):

9. Իսկական բարդութիւններ. — Միջին գրական լեզվի բառակազմական կարևոր միջոցներից մեկը իսկական բարդութիւնի տեսնական է: Գրական հուշարձաններում վկայվում են թե՛ բարբառային, թե՛ անհատական բնույթի բազմաթիվ նորահայտ բարդութիւններ, ինչպես՝

ա) հոգակապով. — ժամատուն «եկեղեցի», սրբաբար, հոգետուն «աղբատներին խնամելու տուն» (<հոգի+ա+տուն), հայրենետէր (հէրէնէտէր) «կալվածատեր, հողատեր» (<հայրենի+ա+տէր), պարոնահող, ձիթահանֆ, խոտահար, ագեկալ «թամբի գոտի», գանձագին, ջնջագիր «անգրել թուղթ» (<ջինջ+ա+գիր), կիսավհար, մարդաթիւ, զիւգակից «ամուսին», կենակից (նույնը),

կողակից (նույնը), աղէկասիրտ «բարեսիրտ», շուտահալ «դյուրամարս», դի-  
րահալ (նույնը), մսագործ, շատակեր, շատախում, միահետ «միանգամից»,  
աղուէսացաւ, օծացաւ, ականջացաւ, դեղագիր և այլն:

բ) Առանց հոդակապի.— հաւկիթ, հաւձագ, կապձակ «խաղողի՝ կապին  
միանալու տեղը», կոյզկապ «ողկուզկապ», անպատ «բանջարանոցի պատ»,  
պարսմայր «մայր մեղու», արեւմարբ «արեւամուտ», արեգզեր «տաք», արեւըն  
(նույնը), արեգդեմ «արեւակողմ», ամպշող, ջրմայր «ջրիմուտ» (<ջուր+մայր  
«մամուտ», գորտնբուրդ (նույնը), փշափ (<ափ+շափ+բ), յետմնաց «հա-  
ջորդ, սերունդ», շարկամ «թշնամի», շնքիթ «շան քիթ ունեցող», փկից, սօլ-  
կար «կոշկակար», գղակկար «գլխարկ կարող», մուճակկար «մաշիկ կարող»,  
վատուծ, ստամոքցաւ, ստամոքբերան, ոսկրցաւ, ակոացաւ, ակոատակ, մահ-  
տարածամ, ականջթոռ (ակնջթոռ) և այլն:

10. Ա ծ ա ն ց ու մ.— Ածանցման միջոցով միջին գրական լեզվում կազմը-  
վել են բաղմամբիվ նոր բառեր: Կենսունակ ածանցները հետևյալներն են.

ա) նախածանցներ.

ան.— անօթի «բաղցած», «անօթեան», անրնգմահ «անրնական մահ, ինք-  
նասպանութիւն», անկարգ «չամուսնացած», անհասակ «փոքր», անպարապ  
«զբաղված», անամաչ «անամոթ», անբան, անխում «առանց խմելու», անկեր,  
անեփ, անեկ, անկոկ, անկրակ, անկուտ, անբուրդ, անհամիմաղ «առանց դա-  
տի, դատախազի», անթողլի «աննորի» և այլն:

տ.— տձև, տքուն «անքուն», տհալ «ղավուրմա» (հոմ. ժոռդ):

չ.— շմեղ «անմեղ», չբեր, շմարդ, շունետոր:

բ) վերջածանցներ.

—ակ.— խոչակ «շնչափող» (հոմ. խոիկ), կոնակ «թիկունք» (<կուն),  
մնջնակ «համր», բլբլակ «խարխուլ», խէչակ «բուլսի հենարան» (հոմ. վերու-  
նող), բեռնակ «փոքր բեռ», դոնակ, բուլթակ «լարավոր նվագարանի բանալի»  
և այլն:

—ական (-կան).— մարսական, լուսական «լուսավոր», լեզեռնական, ծա-  
ռայական, լծկան, դղացկան «հղի», ծծկան, խարական «խարանիչ» և այլն:

—ան.— կթան, թացան, մէրան, կախան, մայրան «պատվաստելու տեղը»,  
հօրան «ոչխարի և այծերի հոտ», լարան «թել, պարան», լեսան, լծան, կա-  
պան «անանցանելի վայր», մեղկան «մեղավոր, մեղադրյալ», վազան, քշտան  
«խփող», խրչան «խոնչացող», կարկաչան, ճօճան «ճօճացող, ճոճուն», գովան  
«գովելի» և այլն:

—անբ.— հիլայանք «մեղադրանք», մախանք «նենգութիւն», ծեծանք, խա-  
րանք, տուժանք:

—ային.— գիճային «խոնավ», փոթոթային «տտիպ», խոլային «խորթ»,  
ձիւնային, ցրտային, հովային, լուսային, գետային, առնային և այլն:

—անց.— բռանց «բռնութեամբ», փանց «ափով», գլխանց «գլխով»:

—ացի (-ցի).— գեղացի, հոռոմցի, արեւելցի, ծովեցի, լեռնցի, առնացի,  
ափցի «ափով», բոնցի, աքցի, ուղղացի «իրավացի», հոգցի «դիտմամբ», դրա-  
ցի «հարկան»:

—ացու.— մաթացու «դոշաբացու», ապրացու «ապրելիք», կորկոտացու,  
սերմացու և այլն:

—ատ.— խեցատ «խեցու բեկոր» (հոմ. բունձ), ծարատ (ծայրատ) «ծայրը

կտրած», հերատ «մազը թափված», ծնծատ «մաշկահան ցորեն», ժռատ «խակ խաղող» (<ժռու «խակ» բառից), ակնատ «ծուղակ»:

-ար (-արար, -րար).—կտցար (թռչուն), կիսրար, հացրար «հացագործ», լուսրար, լկամարար «սանձագործ», լուացարար, ժրարար «աշխուժ, արագաշարժ»:

-արան.—լուարան «լվացվելու աման», ձեռնարան «անձեռոց»:

-աւոր (-ւոր).—ձեռնաւոր «մեծաւոր, իշխանաւոր», հեծելւոր «ձիավոր», ժառանգաւոր, գործաւոր «աշխատավոր», կարողւոր «զորավոր», կարեցւոր «ճարտար», բրաւոր, բահաւոր, ցելւոր, բեռնաւոր, խշտաւոր, ձգեցւոր «վիժող», ֆելւոր «խարդախ, խորամանկ, կախարդանքով հմայող», խոցւոր (խոցաւոր), ըխտաւոր «խենթ», ասծնւոր (աստուոր) «մահկանացու. աստի աշխարհ», հեռեւոր (<հեռի+ա+ւոր), աչքաւոր «աչք ունեցող» (օր. «ի մէջ կուրին և աչքաւորին»), պատեհւոր «հարմար», ուռուոր «հատակ ունեցող», խնկաւոր «խունկ ունեցող», աղւոր «լավ, սիրուն»:

-եկ (-կեկ).—աղեկ, աղկեկ, գերեկ (<գերի-ակ), լայնկեկ, կոճկեկ (կոճկիկ), ամրկեկ, թուկեկ, ծանրկեկ, կակղկեկ, մանրկեկ, հաստկեկ, կարճկեկ, ուժովկեկ, կամկեկ «զգուշութեամբ» և այլն:

-ի.—դամոնի, լիմոնի, լալի, ջրի, իսկի և այլն:

-իկ (-կիկ).—ամպիկ, այրիկ, զրկիկ, բերնիկ, դնչիկ, դանկիկ, ժամիկ, ժկիկ «ժամիկ», լերդիկ, բեկեղիկ (հաց), աշիկ, ափիկ, բանիկ, քշիկ, յուշիկ «զգուշ», բրդիկ, ձայնիկ, ձագիկ, բռնիկ «փոքր բուռ», շալկիկ, սպրիկ «մաքուր, բոլորովին», սպրկիկ (նույնը), սպկիկ (նույնը), խնկիկ, աւելիկ, ուժովկիկ, կոճիկ «տրորելու, ձեծելու գործիք», խշիկ «ճշուղ՝ տերևներով և պտուղներով», կեռիկ «փայտե գործիք, որով ջուրը հորից հանում են», խոթիկ «ծիրան» (հոմ. պարկուկ), գետուկիկ (մի ձուկ է):

-իք (-իք, -ուք, -ուք).—հերիք, հարկիք «կամք», ծառութիք «վախ, վախկոտութիւն», կանացիք «ամսական», արծուիք «ջրգողութիւն», պառիկիք «անկողին. ննջարան», ծխանելիք, խմելիք, ձեփելիք, պատելիք, մայրենիք «մայրենի ստացվածք», յերջք «վերջավորութիւն», յերջունք (նույնը), ոհմք «վախ», մաշուք «մաշվածք», արուրք «կապ ամուսնական», կելուրք (կիլուրք) «նենգութիւն», այրուք «այրված մի բան» և այլն:

-եւան.—պիտեւան «պիտանի», գոյնեւան «գոյնզգույն», հոտեւան «հոտավետ»:

-ին.—լոին, գաղտին «գաղտնի»:

-եստան.—ըմբելեստան (<ըմբելի-ա-ստան), խմելեստան, աղեստան (աղի-ա-ստան), լեղեստան, կղզեստան:

-իչ.—ծակիչ, կոկիչ, խառնիչ, գանիչ «ճիպոտ», տաշիչ և այլն:

-եղ.—հոտեղ, ժոռեղ «տհալ», հասակեղ:

-եճ.—յեզեն «առավոտյան», հետէն «երբեմն», հարեն «միշտ»:

-ոտ.—աղբոտ, գինոտ, թանոտ, նգոտ, բժոտ «ճպոտ», պղզամոտ «մաղձոտ», ցեցոտ «քմահաճ», լակոտ:

-կոտ.—մաղասկոտ, գիրացկոտ, ծիծաղկոտ և այլն:

-ով.—ճորով «բռնի, բռնութեամբ», ուժով «ուժեղ», բարով, յամով «ուշ», ոճով «կարգով», ապով «պատճառով», լուսով «ցերեկ ժամանակ», գունով «գունեղ», գինով «խմած», հոտով «հոտավետ»:

-ովի.—ծալովի, դնովի, բերովի, տանովի և այլն:

-ող.—ունող «բռնող», հասկնող «գիտակից», ուցնող «ուսուցիչ», կան-

լող «ճայնածու», ոսկող «ոսկեզարդող», աջող «ճարպիկ», քշտող «հարու տվող», ազդող «ազդեցիկ», խօսող «աքլոր»:

-ոց (-անոց).—Քրչոց, ճաշոց «գիրք պատարագի ընթերցանության», մանոց «մանկիք», թխոց «թուխսի (ձու)», թնթոց «կաթսան խառնելու ձող», կթոց, խառնոց, կոճոց «տրորելու գործիք. երկար փայտ», հօտոց «էտոց», հաստոց «պատվար», թափնոց «պտուղ թափելու ձող, գործիք», բազկանոց «ապարանջան», ծղանոց (նույնը), լանջանոց «կնոջ լանջի վարդ», գրանոց, աշոց «ակնոց», կաշեգործնոց, ոսկերչնոց, գրակիրոց «գլխարկ կարելու արհեստանոց», սօլկարնոց «կոշիկ կարելու արհեստանոց», հացանոց «հացատուն», շարչնոց «մանրավաճառի խանութ», խասպնոց «մսավաճառի խանութ», մսայգործոց (նույնը), գաղտնոց «գաղտնի տուն», լիտանոց «վատահամբավ տուն», կացոց «կացարան», ակնոց «արգելանոց» (հավի, գազանի), իշոց «հայհոյանք» (կա և իշունց), աղբկուտոց «աղբատեղի», աղբնոց, խլոց(ք) «խլված բան», ծածկոց, կապոց, ծանրոց, հնոց «հին, ծեր» (օր. «դոխն լաւ է և ախորժական. հնոցն չոր է և կապ» Բժ. Ա., 110, տե՛ս ՆԲՄՀ), ծառանոց «պարտէզ»:

-ուկ.—իշուկ, հաւուկ, բողկուկ «նոր ընծուղված եղջուր», փշրուկ «փշրանք», կոճուկ «կոճիկ», խոցտուկ «ծակոց» (<խոցտել բայից), ողորմուկ «խեղճ», խղճուկ, դեղուկ «թունավորած», լրջուկ «կապույտ», գաղտուկ «գաղտնի», ակնջուկ (բույս), լպրծուկ «սողուն», ձգեռտուկ «գկրտոց», հարցուկ «հարց», գտելուկ «հանելուկ», հանելուկ (գրք. հոմ. առեղծուած):

-ու (-ոյ).—խորու «խորր», ձճու «քիչ» (<ձիճն), խաշու (խաշոյ), խորովու «խորոված», ճկրու (ջգրու):

-ծու (<ածոյ).—փոխծու (փոխծոյ), ծալծու, գուգծոյ:

-ուն.—եկուն «եկած» (խմոր), ելուն «դուրս եկած», եփուն «եփած», աղուն «աղալիք», ժածուն «շարժուն», ճօճուն, գաղտուն «գողունի», գնայուն, մնայուն և այլն:

-ուրիւն.—լճութիւն «ենթակայություն, վասալություն», ողջնութիւն «առողջություն», մտաւարժութիւն «մտատանջություն», նեղհոգութիւն «անհանգրստություն», կահրայութիւն «բռնություն», աղփրթութիւն «սանձարձակություն», տուրտվութիւն «վեճ, աղմուկ», կեցութիւն «ապացույց», օգտութիւն «օգուտ» և այլն:

-ում (-ումն).—աջողում «հաջողություն», յնում (<յետնումն) «հետո», կեցցումն «ապացույց», հանարումն «անօրինություն» և այլն:

-ման.—կեուման «թեք», լարման «լարված», փուման «փուված», վառման «վառված», գզման «գզված», հեծելման «ծիավոր» և այլն:

-եղեն.—չրեղեն «չրալի», հողեղեն, քարեղեն «քարե աման» և այլն:

-իւն.—բողիւն «բողից վազած խեժը», հատիւն «մաշկ» (ցորենի, գարու և նմանների), լուիւն «վնասատու միջատ», կտրիւն «երիտասարդ»:

-եւ.—մտեւ «մուտք, եկամուտ», իրանեւ «իրաւունք», քնեւ «քունք»:

-ուտ.—սալուտ, կոկնուտ «քարուտ», կառնուտ «փշուտ», կաղնուտ, ծառուտ, ահուտ «վախենալի տեղ», բալուտ «միգամած տեղ», դորկուտ «ողորկ տեղ, հատակ», պարզուտ «քամիչ» և այլն:

-ուց.—դեղնուց, յէգուց «վաղը», նեղուց «նեղ», լայնուց «լայն»:

-պան.—հացպան «հացագործ» (հոմ. հացբար), հաւապան, խանութպան և այլն:



## Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1) Միջին գրական լեզուն խոսակցական լեզվի միջոցով, իբրև բնական ժառանգորդ, իր մեջ ընդունել է հին գրական լեզվի բառապաշարի ամենակենսունակ տարրերը, որոնք հայերենի բոլոր դրսևորումների համար ընդհանուր են:

2) Միջին գրական լեզուն մերթ ուժեղ, մերթ ավելի թույլ արտահայտված ձևով կրել է հին գրական լեզվի բառապաշարային ազդեցությունը, որն արտահայտվել է խոսակցական լեզվից դուրս եկած հին բառերի օգտագործմամբ:

3) Միջին գրական լեզուն գրաբարի համեմատությամբ կրել է բառապաշարային ակնառու փոփոխություններ, որոնք պայմանավորված են՝

ա) հնուց եկող մի շարք բառերի վերաիմաստավորմամբ.

բ) բարբառային բառերի անսահմանափակ կիրառությամբ.

գ) նորակազմություններով (ժողովրդական և անհատական բնույթի).

դ) մասնագիտական բառանունների լայն տարածմամբ և մշակմամբ.

ե) նոր փոխառությունների ներթափանցմամբ:

Միջին գրական լեզվի բառապաշարը անշափելի սահմաններով ընդարձակվել է գրաբարի համեմատությամբ, հարստացել մինչ այդ գրական լեզվին անծանոթ բարբառային, նորակերտ և եկամույժ բառերով: Միաժամանակ, միջին գրական լեզվի մշակման միասնական սկզբունքների բացակայության հետևանքով՝ հաստատուն նորմաներ չեն ստեղծվել բառային համարժեքների կիրառության ասպարեզում: Բավական է հիշել, որ, օրինակ, նայել հասկացության համար միջին գրական լեզուն անարգել կերպով օգտագործում է՝ նայել, նայիլ, աշել (էջել), յաշու ունել, մտիկ անել (առնել, այնել), մտիկ դնել, սլալ, արգ անել (առնել, այնել), նադար առնել և այլն: Եվ այս վիճակը տևում է միջին գրական լեզվի զարգացման ամբողջ ընթացքում՝ թե՛ առաջին, թե՛ երկրորդ փուլերում: Այս իրողությունը թեև լեզվի մշակվածության առումով բացասական է, բայց պատմական ուսումնասիրության համար ընձեռում է մեծագույն առավելություն՝ հնարավորություն ստեղծելով բազմակողմանի պատկերացում կազմելու ժամանակի խոսակցական լեզվի, նրա բնական վիճակի, կրած ազդեցությունների մասին:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

### ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿԵՐ

#### ԱՐԱՔԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Ալալուսան (ալալուսան, ալուսայ)—վառ-  
վառուկ. < aalusan (< հուեն. ἀλλουσον):  
Ազատ—հասարակածի հատված. < 'aqd:  
Աղաղ—քանոն. < 'idāda:  
Աղէմ—ներկած կաշի. < adīm:  
Աթխար (աթխար, օթխոր, ալթխոր, Իթ-  
խիր)—վաղամեռուկ (բույսը). < idxir,  
adxar:  
Աթուն—հնոց. < atūn (ասուր. atūnu, ասոր.  
atōnā):  
Ալաբ—բաղնիք. լիճ. < alāt:  
Ալաժահրի (ալաժարի, ալաժար)—տորու-  
նազգի մի բույս, որի մանրիկ պտուղ-  
ները չորացնելով և աղալով՝ դեղին ներկ  
են ստացել: Այլ կերպ կոչվում է արեել-  
յան տորուն: < al-Jahri: Ծվրուպացիք ան-  
վանում են Alizari:  
Ալամ (յալամ)—դրոշակ. < 'alam:  
Խաչալամ (խաչելամ)—խաչվառ:  
Ալանի—հայտնի. < alani:  
Ալատի—սխորազգի մի բույս է, ունի  
մեկ թիզ երկարութամբ հինգ կամ վեց  
տերև, որոնց համը գլթորի համն է հի-  
շեցնում. < alatini (հուեն. ἐλατίνη):  
Ալափ—հնձված խոտ՝ անասուններին սա-  
լու. < alaf:  
Ալափել—թալանել:  
Ալափ առնել (այնել)—թալանել, ավերել:  
Ալիկ—անասնակներ. < 'alīq:  
Ալիկել—անասունին կերակրել:  
Ալուն—շան մանուշակ. բույս է, որի սեր-  
մերը բազում հիվանդութուններ են  
բուժում և հակաթուլյն են: Դրանք գոր-  
ծածող օձի, կարծի խայթոցից չի ներ-  
գործվում: < halēj:  
Ալպուն—բաղշտակ. < albujj:  
Ալսուս—մատուտակ. < al-sūs:

Ալքիմիա—քիմիա. < al-kīmyā:  
Ախախիա (աղաղիա, կակիա, խախիա)—  
ազասիա ծառը և նույնի խեժը. < āqāqia:  
Ախիսնու—մի տեսակ անհան. < aqīnus (< հուեն.  
ἄκινος):  
Ախիոն—վերապազրուխ (խոտ է). < aqiuon  
(< հուեն. ἄκις κοῦς բառից):  
Ախլիմիա—բժշկական մի բույս. < al-qali-  
mia:  
Ախլուաջ (ախլուաչ)—թղենու նման մի ծառ,  
որ տաք երկրներում է աճում. < axar-  
sāj:  
Ախուսան—երեցուկ. < aqhavān:  
Ախուսա—Արաբիայի մի ծաղիկ. < aqhūn:  
Ակրաբադին—գեղազիրք. < aqrābadīn:  
Ակրաս—գեղ. < aqrās (qurs):  
Ակրկարհայ—խաբոզ. < 'āqir qarhā:  
Անշահ (ահշայ, աշայ)—փոր, փորոտիք.  
< ahsā':  
Աղալունի—հալվի փայտ. < āyālux (< լատ.  
agállōchon):  
Աղեղ—գեղնակարմիր թանկագին քար. սար-  
գիտն. < 'aqīq:  
Աղիտայ—չկարծրացած, կիսաեփ շաքար.  
< 'aqīda:  
Աղմերուք—այրված, բովված աղ. < հյ. աղ +  
արք. < mahruq «այրված» (Յ. Կարսո):  
Անալ—արաբական մի բույս է, որի պտուղը  
օրգանիզմը մաքրում է վնասակար նյու-  
թերից. հոմ. սինեմարի. < 'ājāla:  
Անալպ—արդյոք. < 'ājāb (տե'ս և Յանալ 2):  
Անուն-բաճուկ (մաճուկ)—փոքրիկ, մանրիկ,  
նրբիկ. < արբ. պրս. yā'jūj-mā'jūj (bā-  
jūj):  
Անուր (անուռ, հանուր)—վարունգանման  
մի պտուղ է. շխիար. < 'ājūr:  
Անպարար (անպարար, անպարար)—ձեռ-

նածու. < 'ajāib «գարմանալի» + հյ. արար՝

Ամալ (եմէլ) — գործ. < 'amal;

Ամանաթ — ավանդ. հավաստիացում. < amanat;

Ամարաթ — աղքատներին կերակրելու ձրի ճաշարան. < imarat;

Ամիր(ա) — իշխան. < amir(a);

Ամիրայուրիւն — ամիրի իշխանության շրջանը էր ժողովրդով;

Ամիրայետ — Ամիրաների վերադաս;

Ամիրայետուրիւն — ամիրաների պետութիւն;

Ամիր ալ մումին — հավատացյալների իշխան՝ խալիֆա. < amir-al mūminin (արբ. mūmin «հավատացյալ»);

Ամլան (ամլէն) — զգթորի մեծությամբ մի պտուղ է, սև գունի, որից չիր են պատրաստում. < amlañ;

Ամպան (անպան, ամվան) — ձիու ազի (լիզերն ամբացնող բույս է). < anbañ;

Ամպար (ամբար) — մոլորակ. < amber (Յ. Կարստ);

Ամպար սստեղք — յոթ մոլորակները;

Այարիճ (յարիճ, հայեարիճ) — բաղադրյալ ղեղ. < āyāriñ;

Այեան (այան) — պարզ, հստակ, երևացող. < a'yan;

Այիպ (այպ, այիբ) — թերութիւն, արատ, սխալ, ամոթ. < a'ib, 'ayb;

Այպվոր { արատ ունեցող;  
Այպով

Այն — աղբյուր. < 'ain;

Այուխ — լուսաստղ. < 'ayyūq;

Այրաս — կապույտ շուշան. < ayras (հուն. ἴρις, լատ. iris);

Այրասա — կապույտ շուշանի արմատ. < ay-rasa;

Անագ իւլ — նէվգայ — մոլորակ է. < 'ānaq;

Անթաֆախ — աշքի բորբոքում. < antafaq;

Աննիտան (աննուտան, անգուտան, անկիտան) — 1. քեղերդ (բույս). 2. գարշահոտ ուտանային խեժ. < anjudān («պրս. angudān, angidan»);

Անդարնի (աղ) — քարաղ. < andarāni; Անդրբիանը սար է Մավրիտանիայում (ստգր. Յ. Կարստի);

Անդարա — իշխոտ. < anayrā («հուն. ἀνάγρᾱ»);

Անդուց — գիշահոտ վարդ. < aniqun;

Աննիպար — գետեղբայր անվույտանման բույս է, կարմրավուն թփերով ու ծաղիկներով. < anjubar (պրս. angabār);

Անմարվար — անհողի. < հյ. անթարբ. muruwat «մեծահողութիւն, մարդասիրութիւն, ներողամտութիւն»;

Անշաղավար — անխիղճ. < հյ. անթարբ. šaf-qat «խիղճ»;

Անսխուր — անվարձ. < հյ. անթարբ. sequer (երբ. sek'er);

Անքեպուրի — աշքի սարդոստենի. < 'anka-butli («ankabūt «սարդ»);

Աշքի (յաշքի, աշուղ) — սիրահար. գուսան. < ašq;

Ապլահ — հիմար. < ablah;

Ապուզնայ (ապուզէն) — կապիկ. < abūzin-nata;

Ապուկալամին (ապուկալին) — ծաղկավոր զիպակ. < abūqalamūn.

Ապուր — հարկ՝ տարանցիկ ճանապարհներով ապրանք տեղափոխելու. < 'ubūr «անցում»;

Ապրախիլ — մագնիս. < ibra «ասեղ» + հյ. խիլ = ասեղ խող;

Ապրայ — ամանի քաշը. < 'abra;

Ապրանն — մի տեսակ շնխաղող. հակորուկ. քաքանաջ. < abranñ;

Ասարբլ յարք — տերևատ. < asad-ul-'arq;

Ասլ — որևէ բույսի արմատը. < ašl, ašal «արմատ, ծագում»;

Ասլի — ազնիվ, ազնվական. < ašil «գտարյուն. ազնվական»;

Ասխիս — բույս է. < ašxis;

Ասմին (յասմին) — անուշաբույր ծաղիկ՝ սպիտակ կամ դեղին թերթերով. < yāsa-min, yāsmīn;

Ասուպ — թռչող սատղ. < ašhub (Յ. Կարստ);

Ասպուր — կրտիմ. < 'ašfur;

Աստախոտու (աստախոտու, ստախոտու) — արեղախոտ. < aštūxūdūs («հուն. στυγῶδες»);

Ասրուցն — սիլիկոն, կարմրադեղ. < asranñ;

Ատապ (էտէպ) — քաղաքավարութիւն. < adab (ādāb);

Ատէր (ադաթ, յատէթ) — կարգ, սովորութիւն. < 'ādaṭ, 'ādeṭ;

Ատիլ — քաշ. < 'ādil;

Ատլաս — կտոր է. մետաքս-սատին. < āṭlas;

Ատմատ — հնդկական բակլա. < aṭmāṭ;

Արական (արախան, արազան) — գալիկութիւն, դեղնախա. < araqān;

Արաթ — ինչ որ ծառ, որի փայտը օգտագործվել է բերանի հիվանդութիւններ բուժելու համար. < 'arāṭk;

Արգ — տեսանելի, նկատելի. < arhan zahar «պարզ» (լատ Յ. Կարստի);

Արգ անել — նկատել;

Արգ(ն) — շիբ. < արբ. պրս. 'arq, 'arz (լատ Կարստի);

Արիշ — խեչակ. < 'ariš;

Արիֆ — մարգարէտին. < 'arif;

Արճուան—լուսնաստերերի. ծաղկավետ կարճ մի ծառ է. < arjūvān (պրս. arjāvān):

Արմինացի—մոտ կես մետր բարձրությամբ խոտաբույս է, որի հատիկները լորու նման են և մաշկավոր. հոմ. մեղրածուծ. < arminin, լատ. Horminum:

Արուս—հարս, հարսնացու. < 'arūs:

Արտանիսա—սառուծածանիկ (բույս). < 'artanisa:

Արիդուլի—հաստաղի. Յ. Կարստն այս բառը կապում է արբ. qayvīy (հոգն. aqvlyā) բառի հետ:

Աշուկ (օշակ, ուշակ)—1. ծառի խեժ է. 2. բորակի ու անուշադրի նման կանաչ նյութ. < uššaq:

Աշնե (օշնե, օշնայ)—ջրի մուռ, գորտնրուջղ, կաղնու մամուռ. < ušna (ošna):

Աքիլե—փտախա. < āqilā:

Աքիլ—մլիխ (քիլմէլիք) — խոտաբույս է. < ikiil-ul-malik շեշխանի պսակ):

Աքո (աքո)—աղտ. փորի ավելորդ. Կարստն այս բառը ստուգաբանում է արբ. 'akar բառից:

Աքումէջք (աքումէջ)—կենդանու սրունքների և բարձերի մեջտեղի ծառ:

Աֆիոն (աֆիոն)—խաշխաշ. < afiyūn (< հուն. ἄπιον, պրս. abyūn):

Բար—գուռ. < bāb:

Բարբար—հարմար. բավական. < bābat:

Բարբուցան (բարբուցան, բարբուցուց, պապու-նէճ)—երիցուկ. ճփնի. < bābūnaǰ:

Բազազ—կերպասավաճառ. < bazzāz:

Բալասան (պալասան)—1. մեռնի ծառ. 2. նույնից ստացվող անուշահոտ յուղ. < պրս. արբ. balasān (լատ. Balsamum):

Բալուտ—խողկաղին. < արբ. պրս. balūt:

Բակլայ—լորագզի մի պտուղ. < bāqilā (պրս. bāqilā):

Բահաղ (պահաղ)—պիսակ. < bahaq (պրս. bahak):

Բահման—փշաքեղ. < bahman:

Բայեան—տեսանելի. հայտնի. < bayān, beyān:

Բայեան անել—հայտնել, հռչակել:

Բան—տաք վայրերում բուսնող ծառ, կաղի-նի նման պտուղներով, որոնցից ստացվում է ընտիր յուղ. < արբ. պրս. bān:

Բասար (պասարաթ)—բանականություն. < bašar, baširat:

Բարբար(իկ) — մարդկացի. < barbar (Յ. Կարստ):

Բետեիկ (պետեիկ)—քոչվոր արար. < be-  
duin:

Բրկատուն (պրկատուն)—կտավախոտ, ջղա-  
խոտ. գազտիկուր. < bazr(a) qaṭūnā:

Բզրուկ—մկնականջ. < bizr, buzr, bozr:

Բիլեդիր—մի տեսակ դաղձ. < արբ. պրս. be-  
lādūr (հուն. πύρεθρον, ֆր. Bertram, իսպ. pelitre, լատ. pietro):

Բիլիան (պալիլան)—զղթորի մեծութամբ մի պտուղ է, կորեղով, հալիլաների ցե-  
ղից: Աշքի, ներվերի հիվանդություններ է բուժել: < balilāǰ:

Բուբակ (բոթակ, բողակ, փիլթակ, փոթա)—  
հալոցք. քուրա. < būtaqa (պրս. pūta):

Բուխար (պուխար, բուխերի, բուխերիկ  
բիւրիկ)—շոգի, գոլորշի. < buxār:

Բուրհան (բուհրան, պուրհան, պուհրան,  
պահրան, պահրան, պիւրհան)—տաքնապ.  
հիվանդության վտանգավոր օրբ, ճգնա-  
ժամ. < buhrān:

Բոում (պուում, պումի)—բեկնի ծառը,  
< butum:

Բրքայ (բրգայ, պրքէ)—ավազան. < birka  
birket:

Դաղե—մազլցող բույս է. < dādī:

Դալալ—սիրալիրություն. < dalāl:

Դալիլ—նշան. առաջնորդող. < dalīl:

Դախիրայ—օրհն, կանոն. < tariqa (tariq  
բուղի, ճամփա) բառից):

Դահնագոյն—սխեռագոյն. < taḥīn:

Դահուն (տահուն, տէհուն)—մի տեսակ  
կաքավ. < taḥūǰ, teyḥūǰ:

Դաման—հարկ է. < damān:

Դարապ—զրամատուն. < darh:

Դարիթ—նավակ. արբ. < tarida:

Դարիսվար (դալիսվար. տալիսվար)—հնդ-  
կական զեյթունի տերև. < tālisīar:

Դարուցան (դարուցանջ, դարինաջ, դարինիճ,  
տարունան, դրունան) — ղեղաբույս է՝  
արմատը կարճանման, իսկ ծաղիկները  
սպիտակ, ճառագայթաձև. < darūnaǰ.  
պրս. darunak բառի արբ. ձևն է (Ն.  
Բյուզանդացի):

Դաւաբ—զրատ, անասուն. < davvāb:

Դաւի (սխալ գրչությամբ՝ դօի)—վեճ. < da-  
vā:

Դաւիլ—դաշնագիր. մուրհակ. համաձայնա-  
գիր. < dahvil:

Դեկ (զբկ)—թոքատենդ. < diqq:

Դերանիկ (եկեղեցական. < deir,  
Դերանիկ {dair, der «վանք» բառից. ըստ  
Դերեկ {կարստի՝ \*deray-in կազմութ-  
յամբ:

Դերի—վանք. < deray:

Դլաբ (տլաբ)—սափրիչ. < արբ. պրս. dal-  
lāk:

Դիուցաղուցար—հինայի յուղ. < duhn  
«յուղ»—əl-hinnā շեշխանի):

Դմեշխ—Դամասկոս. < Dimišq:

Դմիշկ—պողպատե սուր. <dimišq:  
 Դովլաբ (դովլաբ) — բարիք. ունեցվածք.  
 <dawlat:  
 Դոլուարուար—ունեոր:  
 Դուռէն (տուռէն, տուռայն)—սալամբ (թըր-  
 չուեն). <durra] (Ն. Բյուզանդացի):  
 Դուռայ—արարական լայն ֆարաջա. <dur-  
 ra'a:  
 Դուրն—արկղիկ. <durj]:  
 Դուրան—խանութ. <dukkān:  
 Դրակ—մարգարտի աղ. <արբ. պրս. durr  
 «մարգարտ» և հյ. աղ (<աղն):  
 Ծալուր—հակինթ. <արբ. yaqūt (պրս. yā-  
 kūt):  
 Ծամանի—կիսաթափանցիկ մութ-կարմրա-  
 դուխ աղ. <yamani (սագր. Բ. Պատկան-  
 յանի):  
 Եաշմ (եասպ)—ասպիս (քարը). yašm, yasb  
 (<հուն. ἄσπις):  
 Եասիր (էսիր)—գիրի. <'asir:  
 Ելէն—ճար, դարման. <illa]:  
 Ելսիաբ—զգուշություն. հեռատեսություն.  
 <ihīyat:  
 Եխիաբ այնել—հակել:  
 Եմն (ամն)—իր, գործ, առարկա. <emr:  
 Յամն բնկնիլ { Յամն բնկնիլ { գործածվել:  
 Երպատուր—կորզվախուսկ. եղգի նման մի  
 բույս է, ունի վարդանման ծաղիկ. <yar-  
 batūr:  
 Զալում (զալմ)—խիստ, անարդար, բռնա-  
 վոր. <zālim:  
 Զահրեր—ծոթերն. <sa'tar:  
 Զանմար (զանմէթ, զախմաթ)—վիշտ, տհա-  
 ճություն, անհարմարություն, դժվա-  
 րություն, դժբախտություն. <zahmat:  
 Զահրայ—վայրի մեխակ. <zahra:  
 Զահրէ—մթերք. <ḡaxire:  
 Զաղալ—նենգ, խարբրա. <zayal:  
 Զաղապ—աղվամազ. <zayab:  
 Զայն—պղնձարջասպ. <zā]:  
 Զանապ—համաստեղություն. <zanab:  
 Զաննապիլ (զըննպիլ)—կոճակաղկ. <zan-  
 jabil:  
 Զապուն—նիհար. բարակ. խեղճ. <zabūn:  
 Զառնապ (զառնաբ)—դեղին ծաղիկով և դեղին  
 սերմով անուշահոտ մի բույս է. <zarnab:  
 Զարեն—աղի ծովերի եղերքի բույս է, երկա-  
 րոզ և ձվոզ. Գործածել են ոսկրացավի և  
 հարրուխի դեմ. <արբ. պրս. zare':  
 Զարու (զիբաւ)—հերձի ծառ. <ziru:  
 Զարուր—ալոճ. <zar'ūr:  
 Զաւնալ (զոհալ, զոհալ)—երևակ. <zuhāl:  
 Զաֆրան (զափրան, զափարան)—քրքուճ.  
 <za'farān:

Չեհեմ (զեհիտ)—մահճեղական կրոնավոր.  
 <zahid բժուճեղալ. ճգնավոր. առաքինի.  
 կրոնավոր» (zuhd—ժուճեղալություն):  
 Չեհեմսոնոզով—մոլլայաժողով. փոխարե-  
 բարար՝ խոսնածողով:  
 Չեւիա—խոսմական վանք. <zāvīa:  
 Չէքէք (զէքաթ, զաքաթ)—ողորմություն.  
 <zekāt:  
 Չըֆրրհամ—գարշահամ. <zāfir «գարշ-  
 գարշահոտ»:  
 Չիաֆէթ—խնջույթ. <ziyāfat:  
 Չիլիպան—արզանակ. <zilibiyā (ըստ. Յ.  
 Կարստի):  
 Չիկ—շրջանակ. եղերք. զիհ. <ziq «շապկի  
 զիհ եղերք» (պրս. zih):  
 Չիճջարակ—ժանգառ. <zanjār:  
 Չիճջուփր (զիճճեֆր)—խրուկ, կինարարիս,  
 կարմիր ներկ. <zanjāfir:  
 Չիպաղ—սնդիկ, ծիպակ: <zibaq (Ն. պրս.  
 Jiva, պլ. Jibak): Միջին հայերենում,  
 ինչպես և արդի մի քանի բարբառներում,  
 կա նաև ճիվա, որ համապատասխանում  
 է պրս. Jiva ձևին:  
 Չիրպան—չամանի շիլլա. <zirbā] (պրս.  
 zirbā):  
 Չլզիլ—ոտքը սահել. <zalaq. հայերենի  
 բարբառներում կա զլսվիլ, զլխվիլ,  
 սլխվիլ ձևերով:  
 Չնէնի (զճճի, զոճճի)—ապակենի, հե-  
 ղուկ ապակի. <zu]ā]ja (<zu]ā], zi]ā],  
 zā]ā] «ապակի» բառից):  
 Չոհրայ—արուսյակ. լուսաբեր. <zuhra:  
 Չուզամ (զուբամ)—հարրուխ. <zukām:  
 Չուկակ—փողոց. <zuqāq:  
 Չուճան—ապակի. <zu]ā]:  
 Չուճար—փորք գոտի. <zunnār (<հուն.  
 ζώνιον):  
 Չուռայ—մի տեսակ կորեկ. <zurra  
 (Ն. Բյուզանդացի, Դ. Ալիշան):  
 Չուրափէ—ընձուղա. <zurā]fa (ասոր. zūrā-  
 phā):  
 Չուֆր (զֆր)—փրփուր. <zufir:  
 Չֆրփիլ—փրփուրը թափվել:  
 Չֆրքաղել—փրփուրը հավաքել:  
 Չպիպշ (զպիպճէշ, զպիպ-ճպէլ). <zabib.  
 ul-Jabal:  
 Էլում—գիտուն. <'ulum:  
 Էնմալ—բաց թողում, թերացում, անփու-  
 թություն. <'ihmāl:  
 Էնմալ անել—չկատարել, բաց թողնել,  
 թերանալ:  
 Էմնուքիւն (էմինութիւն)—ապահովութ-  
 յուն, խաղաղություն, անգործություն.  
 <emin «ապահով, հաստատուն, ամուր,  
 անվտանգ» (Ն. Բյուզանդացի, Յ. Կարստ):

էմր—հրաման, կարգադրություն. <emr:  
 Ընջաց—մեծ թաս, կոնք. <inġāna, ասոր.  
 agġānā ակուժ, ջրաման>:  
 Ըռահան (ռահան, ըռէհան, ռեհան)—աս-  
 պրամ. <raihān:  
 Ըռահշահ (ըռաշայ)—ջրածաղություն. մար-  
 մնի դող, սարսուռ. <rahša':  
 Ըռանայ—կեղծ հղիություն, արգանդի ու-  
 ռուցք. <raġa':  
 Ըռամատ (ռամատ, ըրմատ)—աչքի ջրհո-  
 սություն. <ramad:  
 Ըռայիս (ըռաիս, ռայիս)—կառավարիչ.  
 գլխավոր. <ra'is:  
 Ըռայիի—ծարիր. <el-rāsih:  
 Ըռայայ (ըռըպայ, ըրըպէ, ըրըպը, ըրիպ)—  
 քառորդ ջերմ. <rabā, rūb':  
 Ըռասմ (ռասմ)—կանոն, դեղ ընդունելու  
 սահմանված կարգ, դեղատոմս. <rasm:  
 Ըռասուլ—մահմեդական առաքյալ. <rasūl:  
 Ըռբեկ—ասպանդակ. <rikāb:  
 Ըռզակ—ասլանք. ինչք. ավար. <rizq  
 (հոգն. arzāq):  
 Ըռզայ—օղակ. <rassa:  
 Ըռըջֆաթ (ըրջֆատ)—կաշառք. <rašvat,  
 rišvat, rušvat:  
 Ըռըսուպ—նստվածք. մըր. <rāsib, rusūb:  
 Ըռթլ (ռոթլ)—լիտր. <raṭl:  
 Ըռիմոն—գրավ. <rimon, rimon:  
 Ըռովկիլ—բավականանալ. հաճույք ստա-  
 նալ. <riḡāq Էհանգիստ, բավականութ-  
 յուն>:  
 Ըռուզ (ռուզ)—բրինձ. <aruz:  
 Ըռումպ (ռումբ)—փամփուռ. <rumb:  
 Ըռուտայաթ—աչքի զիջություն. <rutūbat:  
 Ըռուպ (ռուպ)—դռար. <rubb:  
 Ըռուպու—սրտացավ. աստմա. <rabu.  
 Թալէհ (տալէհ)—աստղ երջանկության.  
 <ṭāiḥ:  
 Թալիսայ—բարակ թել. <ṭalq (<պրս. talk):  
 Թախրը—թուղթ. <taxiṭ:  
 Թաղանդաստ—իգարող. ակրկարհա. <tā-  
 ġundast:  
 Թաղսիրութիւն—ստորություն. <taxsīr:  
 Թամամ—լրիվ. <tamām:  
 Թամաշայ—տեսարան. խաղ. <tamāšā (ma-  
 šā Էգրոսանք, տեսարան>):  
 Թամասուկ—պարտամուրհակ. <tammassuk:  
 Թաշանուհ (Թաշանիհ, Թըսնիհ, Թըշանայհ,  
 Թշնան, տշանայհ, դշնայհ, նսիհ)—  
 ջրածաղություն. մարմնի որևէ մասի  
 կծկում. <tašannuj:  
 Թապիլդ—սովորություն. <tabri'at:  
 Թաս—թաս. <ṭās:

Թասիֆել—հորինել, հանճարել, ստեղծա-  
 գործել. tašavvur:  
 Թասիֆօղ—ստեղծագործող:  
 Թարկ—ադամանդի երեսը. <ṭarq, taraq  
 Էշերա> (Յ. Կարստ):  
 Թարկել (Թարկ տալ, Թորկել)—վերջ տալ,  
 թողնել. <tark Էթողում> (taraka—  
 թողնել):  
 Թարքիպ (Թարթիպ)—դեղագիր, դեղատոմս.  
 <tarkib, tartib:  
 Թաուր (Թապութ)—գերեզման. դազաղ.  
 <tābut, t'abut:  
 Թաքար (Թէքար) այնել—կրկնել, փորձել.  
 <takrār, tākrār:  
 Թեպիլ (Թապիլ, Թպտիլ, Թդրիլ)—1.  
 միջոց, ճար, հնար, կարգադրություն.  
 2. բուժում, ստածում. 3. խորհուրդ.  
 <tedbīr:  
 Թեպրել—1. միջոց գտնել. 2. բուժել. 3.  
 ըննարկել, խորհուրդ տալ:  
 Թեպար—խորհրդակից:  
 Թէնպէհ—նախագողւշացում. <tenbih:  
 Թիլ—Թալիսման (հոգն. Թըլիբ, Թըլացք).  
 <til:  
 Թիլ—բուր. <tall (հոգն. tilal):  
 Թիմսահ—կոկորդիլոս. <timsāh:  
 Թմբուլ (Թամբուլ)—երկարուկ մուգ-կարմիր  
 սալոր. <tambūl:  
 Թմրնդի—հնդկարմամ. <tamra-ul-hindi:  
 Թնօպ—կվինի. այս ծառի խեժը, որ կոչվում  
 է կիվ, օգտագործվել է որպէս ծամոն.  
 <tannūb:  
 Թուլ (Թուաղ)—մճիկ. <tūbāl:  
 Թուաքար (Թուապար)—մտատանջ. <tafak-  
 kur, tefekür (Ն. Բյուզանդացի, Մ. Պո-  
 տուրյան):  
 Թուելիդ—երրորդ. <ṭāliṭat:  
 Թուելիթ—վայրկյան. <ṭāniyat:  
 Թուղայ—մահմեդականի աղոթք. <du'ā  
 Էաղոթք> (Յ. Կարստ):  
 Թուրայա—համաստեղություն. <ṭurayyā:  
 Թուրիառ մուլքից—երազահան. <ta'bīr  
 Էբացատրել> k mulk:  
 Թումու—վայրի բակալ. <turmus:  
 Թրնուպից (Թրնուպից)—մանանա, գաղպե.  
 <tārān]ubin: Կա և բարանկուպից ձևով,  
 որ համապատասխանում է պարսկերեն  
 tarangūbin բառին:  
 Թրպուր—հիլի նման բույս. Հարավային  
 Ասիայում աճող. <turbud:  
 Ժիպակ—սնդիկ. zibaq. Կա և ժիվայ, որ  
 համապատասխանում է պրս. živa բա-  
 ռաձևին:

ծխուլ — գրադմուհք. < օսյլ — աշխատանք.  
գործ. գրադմուհք. տե՛ս և մաշխուլ;  
ծխլտուհ — գրադվելու, ժամանակ անց-  
կացնելու տեղ;  
ծղլիլ — գրադվել, գրոսնել;  
ծղլանք — գրադմուհք. հանելի գործ:

Իմպուր — թրթնջուկի արմատը. < yanbüt  
(Յ. Կարստ):

Իրող (եթող, եէթող, եէթուհ) — կաղանջան,  
ժառ (կաթնային բույս է). < yatū:

Իխար (բիրար) — հաստատու. բնդուհուս.  
< iqrār:

Իմպիկ — թորակ. < inbiq:

Իպիս (իրպլիզ, իպլիս) — սատանա, դև. < ib-  
lis:

Իսաղ — ջահել. պատանի (հին Սահակ անվան  
մի ձևն է). < ishāq:

Իսալ — ցավ, հեղանգութուն. < ishāl:

Իսթիզալ — գործածություն. < istāʿmāl:

Իսթիզալ ահել — գործածել:

Իտար — նշան. նշանավորում. < idr (adār):

Իքսիր (էլիքսիր) — բուժահեղուկ, կենսահե-  
ղուկ, կենսաջուր. < el-iksīr:

Իրուխ — արմատ. արմտիք. < ʿurūq:

Լաբլաբ — բաղեղ. վրանածաղիկ. < lablab:

Լազիհ — մածուկ. < laziḥ:

Լակուա (լախուայ, լախու, լաղուայ, լը-  
խուէ) — անդամալուծություն. դիմային  
ներքի լուծանք. < laqva:

Լաղապ — տիպոս. պատվանուն. < laqab:

Լաղլախ (լախլախ) — բուժիչ հեղուկ՝ մրգե-  
րի հյութերով պատրաստված. < lax lax:

Լայխվոր — հարմար. համապատասխան.  
պատեն. < laḡiq:

Լայլ (լալ) — սուտակ. < laʿl (կա և պրս. lal):

Լայուխ (լուղի, լուխ, լուք) — լիզելիք գեղ.  
< laʿūq, luʿūq:

Լապսան — մանանեխ. < labsān:

Լատիֆ — նուրբ, քնքուշ, խորթելի, մեղմ,  
փափուկ. < laṭif:

Լեհեֆ — ծածկոց. < lihaf:

Լեհեպ — կրակի տապ. բոց. < leheb:

Լեղ — ծարիր. < liq (Ն. Բյուզանդացի, Յ.  
Կարստ):

Լեղից (լիլայն) — լեղակ. < lilānī (պրս.  
lilang):

Լէզէթ — համ. հաճույք. < lezzet:

Լիմալ — կիտրոն. < արբ. պրս. limā:

Լիֆ (սխալ գրչությամբ՝ լիֆ) — գնդիկ. <  
layif (լույֆ — գունդ):

Լոկոն — կոծիկ. < luqun:

Լոկոնել — կոծիկ անել:

Լոշ (լոշ, լորշ, լաշ) — հիվանդի տաքու-  
թյուն. պապակ. < lavš:

Լովիաս (լուպիա, լորի) < lūbiyā:

Լուապ (լղապ, լուղապ) — մածուցիկ և սը-  
նընդարար հյութ, որ գտնվում է բույ-  
սերի բոլոր մասերում, մանավանդ ար-  
մատներում. 2. թանձր հեղուկ, որի մեջ  
խեթ է լուծված. 3. սերմերից և պտուղ-  
ներից հանված և թանձրացրած հյութ.  
< luʿāb:

Լուրֆ — սիրալիք. բարեգործ. < lurf:

Լուպնի — 1. ծառ, որից չամչախունկ է  
ստացվում. 2. չամչախունկ. < lubnī:

Լուք — ներկանյութ. < luk (Ն. Բյուզանդա-  
ցի):

Լուֆ — նվիկ. < luf:

Լուֆահ — մանրագոր. < luffāh:

Լպուտ — գզրար. < libād:

Լոհ — թիակ. < lauh:

Խազալ (չաքալ) — սեր, սիրախոսություն.  
սիրային բանաստեղծություն. < yazal  
(yazāl):

Խազամ — մեխակ. < xuzāma:

Խազիրան — գետնատարած բույս է, տերե-  
ղներն ու ճյուղերը սիսեռինը հիշեցնող.  
ունի մանր ծաղիկներ և բողբոջ նման  
տակ. < xayzurān:

Խաբր (խաթր) — տե՛ս Հաբր:

Խալանց (խալանճ) — մարդահասակ ծառ է,  
տերեղները մոշենու տերեղի նման, մանր,  
կարմիր ծաղիկներով: Ծաղիկը սպեղանի  
է գաղանահարի < xalanj:

Խալապայ (ղալապայ) — կոնի, շիոթու-  
թյուն. < xalaba:

Խալապարալ — կովարար:

Խալաս (խալիս) — մաքուր. ազատ. գերծ.  
անարատ. < xalās (xālis):

Խալսել — ազատել:

Խալսիլ — ազատվել:

Խալի (հալի, խաղա, զալլի, զալլի) — խո-  
տաբույս, որն օգտագործվել է փտախո  
և խոցեր բուժելու համար. < qalli:

Խալիա — կալաքար. < qalia:

Խալիգոն — խխունջ. < halazūn:

Խալիֆայ (խալիֆայ) — ամիրապետ. < xalifa:

Խալխ — ժողովուրդ. < xalq:

Խալխադար (խալխար) — երկաթօքսիդ. <  
qulqulār:

Խալպ (խալպի) — կեղծ, խարդախ. < qalḡ:

Խալվաթ (խալվեթ, խալվ, կավլ) — առան-  
ձին, մենակ, հանգիստ. < xalv(at):

Խահուկ — սուրճ. < qahva:

Խաղուկ (խաղուկ, խախակ) — քրքուժի  
յուղ. < xulūq:

Խամազ — մատնող. դավաճան. < xamaz:

Խամգել — մատնել. լիմազողին տունն  
աւերի (ՀԱԳ, 143):

Խամզուքիւն—մասնութիւն, դաժանա-  
 նութիւն:  
 Խամիրէ—թթխմոր. <xamira:  
 Խանգիր(ան)—խոզուկ (հիվանդութիւնը).  
 <xanāziran:  
 Խանդակ (խանտակ, խէնտէկ) — խրամ.  
 փոս. <xandaq:  
 Խանդակել (խանտակել, խենտեկել)—փորել:  
 Խանդարեկ (խանդարեո, խանդարեա)—վայ-  
 րի եզրագակ. <qanārdin:  
 Խանգար —իշխանածագիկ. <մոնդ. qan և  
 արբ. zahr ճմեխակ):  
 Խանթար (դանթար, կանթար, խանսար) —  
 ցենտներ. <qanṯar (պրս. qinṯar):  
 Խապար—հացագործ. <xabbāz:  
 Խապար—լուր, տեղեկութիւն. <xabar  
 Խապրիկ—լրէկ:  
 Խապուլ (դապուլ, դարուլ, կարիլ)—համա-  
 ձայն. զոհ. <qabūl:  
 Խապուլ այնել (անել, առնել)—ընդունել.  
 համաձայնվել, զոհանալ:  
 Խառղ (դառղ, դարղ)—մայրամուտ. սու-  
 զում. <ṡaraq (բարբ. ṡarq):  
 Խառղիլ—մայր մտնել. սուզվել:  
 Ղարղ լիցիլ—սուզվել:  
 Խառնուպ—եղջուրենի. տհաճ հոտով մի  
 ծառ է, պտուղը երկկամաձև և գունը դե-  
 ղույն: Տերեւը բուժում է ուռուցք, գըլ-  
 խացով: <xarṅub:  
 Խաս—ընտիր. <xasṡ:  
 Խասապ—թոք. օր. Վթոքացաւի և ամե-  
 նայն ցաւոց որ ի խասապն լինի ընծա-  
 յեալ, օգտէ՝ (Գիրք վստ. 162): <qasāb:  
 Խասապլ տարիքէ (խասապ-տարիքէ, խա-  
 սապարիքէ, խասապ-ըլ-տարիքէ, դասա-  
 պըլ գարիբայ, խասապգարիբայ)—հընդ-  
 կական եղեգ. խունկեղեգ. շավառ. <qasāb  
 -ul-qarīra:  
 Խասիաք (խասլիաթ)—ընույթ. բնավորու-  
 թիւն. առանձնահատկութիւն. յուրա-  
 հատկութիւն. շնորհք. <xāṡṡiyat:  
 Խասիբ (խսիբ, հասիբ)—արոտավայր. ալպ-  
 յան մարգագետին. <ḥaṡīr:  
 Խասլայ—մաքուր. <ḥāliṡa:  
 Խասմ—թշնամութիւն. <xasṡ (xasīm—  
 թշնամի):  
 Խաստ—հեղուկներէ շափ է. <qisṡ (qasṡ).  
 Խաստ—մաս. մասնավճար. բաժին. <qisṡ:  
 Խավաղան (խաֆաղան, խափաղան, խափա-  
 նակ, դաֆողան)—սրտի ուժգին ախտա-  
 հարուճ. ուժգին բարբախում. <xafaqān  
 (պրս. xafaqān). արբ. xafaq քղարկե-  
 րակ է, xafaqān քարտի խփոց):  
 Խատիմ—ոչնչութիւն. շնչին. <ḥaḍīm:  
 Խատիմ—եկվոր. <qadeṡ:

Խաւթ (դաւթ, դադր)—ուժ. գորութիւն.  
 <qadr:  
 Խարաղ (խարատ, դարատ)—կոծ. <qaraqḥ:  
 Խարան—զլխահարկ. <xarāḥ:  
 Խարապ—բայթայված. <xarāb:  
 Խարբախ (խարբախ, խարբակ)—ծննդյան  
 վարդ (հոմ. վրացի կոծ). <xarbaq:  
 Խարիպ (խարիփ, դարիպ, դարիբ, կարիբ)—  
 պտնդուխտ. <ṡarīb:  
 Խարիպուկ (փաղաք):  
 Խարն—ծախս. դժվարութիւն. <ḥarṡ:  
 Խարշուկ—վայրի մանանիխ. <xarṡuq:  
 Խարտալ—մանանիխ. <xardal:  
 Խաւլինց (խուլինջ, խոլինջ, կոլինջ, կոլընջ,  
 դուլինջ)—1. Թիկնացավ. 2. փորի սաս-  
 տիկ ցավ. <qūlinj (պրս. kulānj):  
 Խաւլնցան—Alpinia բույսը. <արբ. պրս.  
 xulinjan:  
 Խափիբ (դափեթ, դաֆեթ)—երեսնակ, անի-  
 ծած ծաղիկ. <ṡāfiṡ:  
 Խաֆիլ—միամիտ <qāfil:  
 Խաֆիբ — երաշխավոր. պատասխանատու.  
 պահակ. <xāfiṡ:  
 Խեյր—բարիք. օգուտ. <xayr:  
 Խեյրատ—եղջուրի կուտ. <աբբ. պրս. qirat  
 (հուն. χερᾶτιον, որից դասական հայե-  
 րենն ունի՝ կեյրատ):  
 Խէլանդէն—բարի. բարեսեր. <արբ. xayr և  
 պրս. andāča արամադրութիւն. վիճակ:  
 Խթինակ ալ-աւիմ—որովայնախեղդ. <iḡ-  
 tināq al-raḥīm:  
 Խիարշամբար (խիար շամպայ)—ծառ աղա-  
 ցիայի ցեղից. <xiyārṡanbar:  
 Խիկար—իմաստուն. <ḥiḳār:  
 Խիսմ—դատի մեջ հակառակորդ. <xasṡ  
 (xasīm):  
 Խիր—սպիտակ մանուշակ. <xīr:  
 Խիրի (խիրու)—մեխակ, շահպրակ. <xīri  
 (xīru):  
 Խլնմա—1. երկրամաս. 2. կլիմա. <iqlim  
 (<հուն. klīma):  
 Խլնփ—անուշահոտ ուռենի. <xilāf:  
 Խլտ (ախլատ)—նյութ. հյութ. <xīd (հոգն.  
 axlad):  
 Խնդէ (խունսայ. խունուս)—ըրեշ. <արբ.  
 պրս. xunṡā, xunṡa (Յ. Կարստ):  
 Խնուուգ (խնուուգ)—1. ջրշուն. կուղր. 2.  
 կղբի մորթի. <qunduz (հ. Աճառյան):  
 Խոզար—դալարիք. եղեգ. <xazzā (xaizaran  
 քաւաղան):  
 Խոխ—դեղձ. <xaxxa:  
 Խուզամի—մկան աղանջ (բույսը). այս  
 բույսի վայրի տեսակն օգտագործվել է  
 երակներէ և ուղեղի խցանումները բու-  
 ժելու համար. <xuzāmī:



եռիխ (խօխ, խուղ, խօղ) — խորիւ. <չսլ  
(օչսլ) — ողնուղից:

եռիխայ — ամբոթ. կոիվ. <չսլա:

եռւմար — խենթ. գինով. <xumār:

եռւմրելի — գինովանալ, հարբել:  
եռւմրիլ

եռւմրութիւն — 1. խենթութիւն, 2. գինովութիւն:

եռւմրայ (հումրայ) — այրող ախտ. ժանտախտ. օձացաւ. տապաստ. կարմիր քամի <humra (Յ. կարստ):

եռնն (ղունն) — քնքշանք. պըրանք. նազանք. քիտեհ՝ թե ինչ խրննեք արիւր դու ինձի» (ՆԲՄՀ). <qun] (Ն. Բյուզանդացի): Պարսկերենում՝ շուն]:

եռւպայգ (խուպայգ, խուպէգ, խուպուղիկ, սխալ գըշութիւն քամի — փիփեթ. <xubbāz:

եռուս (կուս, դուս) — գեղ. qurs (agrās):

եռուտ (դուստ, քուշտ, կուստ, կուստ) — կապարասի (բուշք). <արբ. պրս. qust, ասոր. kuštha, լատ. costus, հուն. κόστος: Քուշտ ձեռք հնուց եղել է հայերենում. Ամիրզոյլթ Ամասիացիին դուստը մեկնում է քուշտ բառով. «Ըռուստ, որ է քուշտ... քաղցր է լեզի է» (Անդ. Անպ.):

եպիլ — կզակի տակ կախված միւր. <չabab:

եսար (հիսար, սխար, սղար) — պաշարում. <hāsār:

եսարել (սխարել, սղարել) — պաշարել:

եսիր — պարիխ, եղգնահյուս փուց. <hāsīr:

կազ — կերպաս. <qazz:

կալի — կալաքար. <qalī:

կակուլայ (խախուլա, դաղուլէ, քէքուլէ) — մալախ, հիլ. <qāqulla, լատ. Cardamomum:

կահրայ (զահր, խահր) — բռնութիւն. ուժ. իշխանութիւն. <qahra, qahr:

կահրայութիւն — բռնութիւն:

կախրահան (կահրահան) — առանց անհրաժեշտութիւն, առանց կարիքի:

կամշ — թուլատեսութիւն. աչքի պղտորութիւն. <kumš, kamša, akmaš:

կամշնալ — պղտորվել (աչքի):  
կամշոնիլ

կանդարայ — կամուրջ. <qanāra:

կապալ — 1. պայմանավորված տուրք. 2. կաշառք. <qabala:

կապալառու — 1. կաշառք վերցնող.  
կապալար (կապալար)

2. կապալ վերցնող:

կապալատու — 1. կաշառք տվող. 2. կապալ տվող:

կառան — շվան. <qarān:

կասբ (քասպ) — թախ (մի տեսակ արմավ, մեծ, համեղ, փոքրիկ կտոճ, կարմրավուն). <qasb:

կասլայ — դափնի, սարդենի, հոփի, շար. <qasla:

կասլապտուղ — դափնու պտուղ:

կարուրայ (խարուրայ, դարուրայ) — միգաման. <qārūrā:

կաւատ — անառակութիւն, պաղշտութիւն միջնորդ. <qavvad:

կաֆայ (կափայ) — հանգավոր բանաստեղծութիւն. <qāfiya:

կիլիլի (կիլիլ, կիլիլ, դիլիլ, դուլիլ) — կանաչ մի ծառ, որի վրա լոբանման հատեր են՝ թանձր պարկուճի մեղ ամփոփված: Տերեւները երեք-երեք են դասավորված: <qul-qul:

կլայ — բերդ. ամբոց. <qalā'a:

կլայել — բերդապատել, պարսպել:

կլայեակ — անաղ. <qalā'a:

կլայկել — անաղապատել:

կլմուխ — մի տեսակ կոճապղպեղ. <qalmūh, qulmūh:

կնբիլ (զամպիլ) — մի տեսակ ափարբիտն. <qanbil:

կնզում — սպիտակ աքիտ. Յ. կարստն այս բառը կապում է արբ. պրս. նույնիմաստ qāqum բառի հետ (WM):

կոբր — դիւմեար. տրամագիծ. <qubr:

կոլրնջ (դուլինն, խոլինն, խուլինն) — 1. ստամոքսի սուր ցավ. 2. թիկնացավ. qulin] (պրս. qūlān]:

կոլոտ — կարճահասակ. <qulā:

կոզպիլ — կողպել. <qulī:

կոտոբ — թալ (թաղթ). <qatāf, quṭbāb:

կուճաշ (կուճաշ) — բնութի կերպաս. <qumāš:

կուպայ — գմբեթ. <qubba:

կուտար — աղաւ. <qurāb.

կուռայ — դուրան կարդացող. <qurra:

կուրան (դուրան) — մահմեդականների կրօնը և դիրքը. <qurān:

կարան (զաթրան, զադրան) — ծոթրին. <qatrān:

կրտիմ (կրտոմ, դրտում, դուրտում, գորթոմ) — կակիթրակ. <qartām:

կրտմանէ (կրտմանա) — շաման <qard māni:

կրիկ — զարչին. <qarfa:

կոթայ (կոթայ, կութայ) — հյուսիս և համեղ մի բանջարեղեն, վարունգի ցեղից. աճել է Կիլիկիայում. <qibṭā:

Հազազ (հատատ) — փշոտ ճուղկերով թուփ կամ փոքր ծառ. <haqāq:

Հազր — հարկ է. <hazīra:



Հիլայ առնել (այնել, անել) — ամբաստանել;  
 Հիլիոն (հալիոն) — ծնեքեկ. <halion;  
 Հիլիոնուտ — ծնեքեկ շատ եղած տեղ;  
 Հիլաթ — պակասութուն. հիվանդութուն.  
 <hillat;  
 Հիլաթվոր (հիլաթուր) — պակասութուն  
 ունեցող;  
 Հինայ — <hinna;  
 Հիսեուար — ժառանգորդ. <արբ. սրբ. hisse-  
 dar;  
 Հլտիթ — մաղթ կոչված խեղճ (ստացվել է  
 Երպատուր բույսից): <haltit: Հլտիթի  
 մի տեսակը կոչվում է շարհուտ, որը հիա-  
 նալի հակաթուլն է եղել: Ըստ Բեյթարի՝  
 X դարի մի արար բժիշկ ավանդել է,  
 թե հայերը խուժաստանցիների դեմ պա-  
 տերազմելիս, երբ թունավոր նետերից  
 վիրավորվել են, վերքեր վրա շարհուտ են  
 բռնել և անվնաս մնացել (տե՛ս Հայ բու-  
 սակ, 412): Վաստակոց գիրքը շարհու-  
 տի ծուխն առաջարկում է որպես դեղ  
 բույսերի վնասակար ճիճուների դեմ  
 (տե՛ս անդ, 413):  
 Հնդիպե — (հնդուպայ) — եղերդակ. <hindiba;  
 Հնդկոկ — անորոշ բույս է. <hindquq;  
 Հոկնայ (հուկնայ) — տկճոր. կլիզմա. <hoc-  
 na;  
 Հոմեի — մի բարձր բույս՝ սև, բարակ ճյու-  
 դերով. օգտագործվել է փորլուծի դեմ:  
 <homāna;  
 Հուլար (հուլապ) — մեկ թիզ բարձրությամբ,  
 մանր և սպիտակ ծաղիկներով մի բույս.  
 <hulb;  
 Հուլպայ — հացհամեմ. <hulba;  
 Հուերայ — խորշ. <hujra;  
 Հումայգ — թրթնջուկ. <humaid;  
 Հուսամ — վայրի խիրի (անճարակ). <husama;  
 Հուրի — գեղուհի. կին. <huriyya;  
 Հուքմ — հրաման. <hukm;  
 Հուքմ առնել (այնել անել) — հրաման  
 տալ, հրամայել;  
 Հուքմարար — պետ, իշխանավոր;  
 Հրչակ (հարչակ, արչուկ) — ծվաղ. <haršaq;  
 Վայրի պաղատու մի ծառ է. ունի մանր,  
 սևավուն, համեղ պտուղներ, որոնցից  
 չիբ են պատրաստել՝ շամշարակ կամ  
 վուզ կոչված:  
 Ղարթ (ղափթ, զափեթ, զաֆեթ) — երես-  
 նակ, անիծած ծաղիկ. <çafit: Մեկ թիզ  
 բարձրությամբ դառնահամ բույս է, ծի-  
 բանագույն ծաղիկով:  
 Ղազա — կռիվ. իբրաքանդու. <qaza (qazvat  
 հարձակում):  
 Ղազայ — աղետ. դժբախտութուն. ճակա-  
 տազիբ. <qaza:

Ղալայ — գնդակահարութուն. <qalc;  
 Ղալատ (խալատ) — սխալ. հանցանք. <qala;  
 Անդալատ — անսխալական. անմեղ:  
 Խալատուր — հանցավոր;  
 Խալտիլ — սխալվել. մեղք գործել;  
 Ղալամ — գրիչ. մատիտ. <qalam;  
 Ղալիայ — ուտելիք է. <qalia;  
 Ղալիոն — կտրածի խոտ. çaliyün (լտ. Ca-  
 lium): Դեղին ծաղիկով մի խոտաբույս է:  
 Ղալիպ (խալիպ) — կաղապար. կտոր. <qalib;  
 Ղալիպել — կաղապարել;  
 Ղալպ տե՛ս խալպ;  
 Ղահր — տե՛ս կահրայ;  
 Ղամար — լուսին. <qamar;  
 Ղամպիլ — ապրանճ. <qanbil;  
 Ղանարայ — սպանդանոց. <qannara;  
 Ղանիա — աչքի եղջերաթաղանթ, լուսանցիկ,  
 եղջերիկ. <qarniyya;  
 Ղանոն — նվագարան. <qanun;  
 Ղապուլ — տե՛ս խապուլ;  
 Ղավլ (ղաւլ, խավլ) — պայման. <qavl;  
 Ղատի — դատավոր. <qādī;  
 Ղար (խար, կառ) — դափնի. <çar;  
 Ղարասե — վայրի սալոր. <qarasiya;  
 Ղարիկոն — փայտի վրա աճող սուռնկ. <qa-  
 riqun (հուն. ἄραιχόν): Հայերենում կա-  
 նակ հուռնական ձևով՝ աղարիկոն, ախա-  
 րիկոն;  
 Ղարդ — տե՛ս խառդ;  
 Ղաֆիլ — անգետ. <çafil;  
 Ղլէֆ. (խլէֆ, կլէֆ) — պատյան, կեղև. <  
 çelāf;  
 Ղուլայ — գմբեթ. <quilla;  
 Ղուլգաս — մի տեսակ թութ. <qulgas;  
 Ղուլպ — հնդկական ոլոռ. <quib;  
 Ղրֆայ (ղրբֆայ) — անմեղուկ, փրփրեմ,  
 դանդու. <xarfa, սրբ. xurfa;  
 Ճալուզայ (ճաղուզա) — մի տեսակ եղենի,  
 որը նշի նման չոր պտուղներ է տալիս. <  
 Jalūza;  
 Ճանակ — կզմուխ. <Janah;  
 Ճառա(յ) — կարաս. <Jara (սրբ. gara);  
 Ճառահ — վիրաբույժ. <Jarrāh;  
 Ճատե (ճատէ) — խնկածաղիկ, մարեմախոտ.  
 <ja'da;  
 Ճատվար (ջատվար) — լուսնի թուփ (բույս).  
 <Jadvār;  
 Ճարնիր (ճարճրուկ, ճրճրուկ) — ասորեկ  
 (բույս). <Jirjir;  
 Ճաւարս — խաղող. <Javars;  
 Ճեմիայ — մզկիթ. <Jamīc;  
 Ճզայել — 1. պատեիլ. 2. վարձատրել. <Jazā,  
 Jēzā «պատիժ», «վարձ»: Տե՛ս և ջուզայ;  
 Ճեհեզ — ընծա, նվեր, օժիտ. <Jihāz:

ձրզահ—եղնգաբար <Jizc:  
 ձիա—վիզ.<Jid:  
 ձիփա—կիր, բուռ, գիպս.<Jibs (լս. gyp-  
 su m, հուն. γύψος):  
 ձլէ—փայլ.<Jila:  
 ձնդիան—օձի սխտոր.<Janjian (լս. Cen-  
 tiana):  
 ձոհար (ճօհար, ճուհար, ջոհար)—գոհար. <  
 Jauh ar:  
 ձոն—1. կաշի. 2. կաշեգործ.<Juna  
 ձոր(ով)—բունի —Jav r Երևանու թյունն: Տե՛ս  
 և ջար: ~  
 ձուարիշ — գեղերի խառնուրդ. < Juvariš  
 (պրս. gūvāriš):  
 ձուլապ—օշարակ.<Jullab (պրս. gulāb):  
 ձուլիճար—նառն ծաղիկ.<Jullnār (պրս.  
 gul-i-nār):  
 ձուճուճ—շահակուլ (բույս).<JumJum:  
 ձունդիկ—գինգոր.<Jundi (պրս. yundi):  
 ձուշան (ճօշ, ճաւշան)—ղաւհ.<Jaušan:  
 ձուպայ—կարճ և լայն վերարկու.<Jubba:  
 ձուպար—յախու.<Jabar:  
 ձուվապ (ճէվապ, ճոււապ, ջոււապ, ճուղապ)  
 —պատասխան.<Jävāb, Jevāb:  
 ձուրուճ—գանցանք.<Jurūm:  
 ձօզպէ (ճազպ—պուէ)—հնդկընկույզ (փոքր  
 տեսակի).<արբ. պրս. Jāvz-bava, Jāvz-i-  
 bava:  
 ձօշիր (ճաւշիր)—խիժատու մի ծառ է.<  
 Jāvšir (պրս. gāvšir):  
 ձօհար (ճուհար)—մետաղի հալոցք.<Juvārās  
 (պրս. gūvāridān):

Մազաւ—աճուրդ.<mazād:  
 Մազրայ—արտորայք. շրջակա մշակելի հո-  
 դեր.<mazraʿa:  
 Մալ—եղ.<māl:  
 Մալազ (մալաս)—անմաղ. անշափահաս.<  
 malas:  
 Մալուճ—ուսուցիչ. գիտուն.<maʿlūm, muʿ-  
 allim:  
 Մալուճ անել (աշնել, առնել)—սովորեցնել:  
 Մախմուր—թուխ. սե.<maḥmur:  
 Մախլաթ—հողված. բաժին. զուխ. մաս.  
 <maqalat:  
 Մահալ (մահալլէ)—թաղ.<maḥalla:  
 Մահակ—փորձաբար.<maḥakk:  
 Մահլապ (մահլպի)—շէի (ծառ)<maḥlab:  
 Մահմէզ—կոշիկի խթան.<mihmaz:  
 Մահմեզուր—խթանակիր:  
 Մահմէզել—կոշիկը խթանել:  
 Մահտեսի (մուղղուսի)<muqdisi:  
 Մահր—փեսացուի ընծան հարսնացուին.  
 <maḥr:  
 Մահրասայ—վարդապետ.<marxasa:

Մաղապ—անորոշ մի բույս.<maḥab:  
 Մաղարայ—բարանձավ.<maḥāra:  
 Մաղաղ—պտույտ. գլուխկոնծի.<muʿallaq:  
 Մաղնուճ (մաճուն, մայճուն, մոյճուն)—  
 ղեղախուս.<maʿjūn:  
 Մաղպուճ—խաբված.<maḥbūn:  
 Մաղպուճ լիճիլ—խաբվել:  
 Մանաս—բազկերակ.<maJassa:  
 Մամբար (մանբար)—մզկիթի բեմ.<minbar:  
 Մամիթայ (մամիսա, մամիտա, մամշա)—  
 ծիծեռնակի խոտ.<māmīṯa:  
 Մամիրա (մամիրան)—կանթեղխոտ.<ma-  
 mirān:  
 Մայմուտա—գոփելի.<maḥmūda:  
 Մայս (միյս)—վայրի պղպեղ <mis, mays:  
 Մայտան (մոյտան, մօտան)—հրապարակ.<  
 maidān:  
 Մանախուլայ (մանախուլիայ, մալախուլիա)  
 —հոգեկան հիվանդութուն է. մելա-  
 մաղձութուն, մելանխուլիա.<արբ. պրս.  
 mālixūliya (հուն. μελαγχολία):  
 Մանշուր—հրովարտակ.<manšūr:  
 Մաշալա—Աստուծու կամեցածը <mašʿala:  
 Մաշարայ—աժու. մարգ. բանջարանոց.<  
 mašāra (պրս. mašāra):  
 Մաշղուլ—զբողված. <mašḡūl (տե՛ս և  
 ժխուլ):  
 Մշղիլ—զբաղվել:  
 Մառեխ (մարեխ)—հրատ.<mirrix:  
 Մասխարայ—ծաղրաշարժ, ծիծաղելի.<mas-  
 xara:  
 Մափիճ—վետ-վետ.<maḥj:  
 Մատան (մատէն)—հանք.<maʿdan:  
 Մատպուխ (մապուխ) — ղեղախարշու. <  
 maḥbūx:  
 Մարան—կռանի ծառ (զգթորի մեծությամբ  
 տափ պտուղներ է տալիս).<murrān:  
 Մարար (մորիբ)—տերեփուկի մի տեսակն  
 է. Բուժում է լեղապարկի խցանումը,  
 թոքախոր, բորբ, քոսը, մեղմացնում է  
 արյան ուժգին հոսքը, սաստիկ ջերմու-  
 թյունը.<murar:  
 Մարապայ (մուրապայ)—մրգանույշ.<mu-  
 rabba:  
 Մարմախուր (մարմահուլ, մարմահան, մար-  
 մահուզ, մարմայոյզ, մարմարոյզ)—մի  
 խոտաբույս է.<marmaxūr (լս. Marum):  
 Մարքաբ—զբաստ.<markab:  
 Մաւայ—բնակատեղի. <meʿvā, maʿwā:  
 Մելիք—իշխան.<malik:  
 Մլթել—ճորտացնել. ստրկացնել. հարըս-  
 տահարել:  
 Մեհրապ—մզկիթի խորան.<miḥrāb:  
 Մէլ—հույս.<amal:  
 Մէճ—կշիռ.<mann:

Մէզար—գերեզման. սրբավայր. սրբի գերեզման. < māzār;  
 Մէնիս (մէնիթ) — ժողով. խորհրդարան. < mājis;  
 Մէնհան (մինհան) — ծրարգիր. < minhāj;  
 Մէշում (մաշում) — վատ. վատթար. գէշ. թշվառ. չարարատտիկ. < māš'um;  
 Մէշում լիցիլի — վատանալ. վատթարանալ;  
 Մէշումուքիւն — զժրախտու թշուհ. թշվառու թշուհ;  
 Մէտ — ախորժակ. < ma'cydat (բարբ. mi'ce);  
 Մէտէթ (մադաթ) — օգնութիւն. < mādād;  
 Մթխալ — փոքր չափ. < mišqal;  
 Միզան — կշիռք. < mizan;  
 Միզան — տրամադրութիւն. < mizā;  
 Մինայ — նազանգիտ. < minā;  
 Միսվար (մուսվար) — ատամ լվանալու միջուկ. < misvak;  
 Միրաս (միրազ, մէրաս, միրաթ) — ժառանգութիւն. < mirāš;  
 Միրի — պետական գանձարան. < miri;  
 Մինցէթ — պարտք. պարտավորութիւն. < minnat;  
 Մինցէթ անիլ (այնիլ) — պարտավորեցնել;  
 Մինամ (մալհամ) — սպեղանի. < malham;  
 Մլինտ — ուրացող. < mulhid;  
 Մլոուց — անիծված. < mal'ūn;  
 Մկսար (մջսար, մսկար) — միս ծեծելու տախտակ կամ կոճղ. < miksār;  
 Մկրատ — կարիշ. խուզիշ. < miqrād;  
 Մհրուզ — այրված. < mahruq;  
 Մճնն — պատերազմական մեքենա. < manjanīq;  
 Մճրին — գիշահոտ. < mintin, muntin (ntin < վատ հոտ);  
 Մճրայ — մինարիթ. < mināra;  
 Մշմիշ (միշմիշ) — ծիրան. < mišmiš;  
 Մոզամ (մուամ) — միշտ, հաճախ, պարբերաբար. համակ. < mudām;  
 Մոզին — կանչող. երգիչ. < mušdīn;  
 Մոտակակ — հավի արգանակ. < madaqqaq;  
 Մորհամ — բուժիչ ծեփոն. սպեղանի. < marham;  
 Մու — սամիթանման մի խոտաբույս է. < mū (հուն. μῦθ);  
 Մուզ (մազ) — մարխոշ. < muz;  
 Մուզավարայ — կանաչեղենով կերակուր. < արբ. պրս. muzavara;  
 Մուլուխ (մըլուխ) — ծովու ծանկ (ծովեզրյա մի բույս է մորենու նման). < malūx;  
 Մուլք — հարստութիւն. ունեցվածք. կալվածք. < mulk;  
 Մուխատրայ — վտանգ. վտանգավոր. < muxāṭara;  
 Մուխթասիպ — ոստիկան < muḥtasib;

Մուխլ — խմելու դեղ. < արբ. պրս. < muql;  
 Մուկլ (մուզլ) — ծառի խեժ է. < muql;  
 Մուրդէ — սուսեր < maṣra;  
 Մուրդի — խալամ կրոնավոր. < muqsi;  
 Մուճուր — ծառ. < maḥūr;  
 Մուճրուքիւն — ծառայութիւն;  
 Մումիա — զմուսած դի. < mūmiya;  
 Մունեմիկ — կանչող. < munadi (nada < կանչել);  
 Մունեմիկ — կանչել, հայանել, հայտարարել;  
 Մուշապար — խուփ. < mušabhak;  
 Մուշրաբի — լուսնթագ (աստղանուն). < muštarī;  
 Մուռ — զմուռ. < murr;  
 Մուտանջանայ (մութանջայ, մութանան) — գոլորշիով եփած միս. < muṭanjāna;  
 Մուրատ — իզմ. ցանկութիւն. < murād (arād < երկնայ);  
 Մուլիմ { — մահմեդական. < muslimān, muslim;  
 Մամար — միխ. < mismār;  
 Մարուպ (մըտըր, մըթըրփ) — երգիչ. < murrib;  
 Մարան (մըվան) — համեղ. համեմված. անուշահոտ. < murawwāh (կա և պրս.);  
 Մարահար — հովհար. < marvāha;  
 Մարուր — տուրք. < murūr;  
 Յանապ (յաջապ, անապ) — զարմանալի. < caḥar;  
 Աբրամես — այլանդակ. զարմանատես;  
 Անպարար — ձեռնածու;  
 Յանապ (անապ, յաբ) — արդյոք. < caḥar;  
 Յաշիպ — բուստարան. < caššab;  
 Յապուլմեմուցիբ — արարեցրին, մահմեդականներին տրվող մականուն. < aḥbid-ul-maminin;  
 Յատար — զեղազործ. < caḥar;  
 Յէշրաբ — ուրախութիւն. < cašrat;  
 Յուկապ — արժիվ. < caqab;  
 Յունապ — վայրի մի պտուղ է. < cunnab;  
 Նազար (նատար, նազար) — կարծիք. ընկալում. դիտում. ըմբռնում. հայացք. < naḥar;  
 Նազար (նազար) առնել (անել, այնիլ) — հայացք ձգել;  
 Նազրուց — բորակ. < naḥrūn;  
 Նազլայ (նուզլայ, նզլայ) — հարբուխ < արբ. պրս. nazla;  
 Նալ — պայտ. < naḥl;  
 Նալար — նզովք < naḥlat;  
 Նալաշ — նկարիչ. < naqqāš;

նադշ—գարդանկար. <naqš;  
 նախշել (նադշել)—նկարել, ծաղկել՝  
 նախշըրար—ծաղկող (պրս. նախշըեար. <  
 naqyš + khar);  
 նադարայ—թմբուկ. <načara (naqra «խփել»  
 բառից);  
 նադիշտ—վայրի նուռ. <nāyīšt;  
 նադտ—կանխիկ դրամ. <naqd;  
 նաճար—հյուսն. <naǰār;  
 նայիպ—օգնական. <načib;  
 նամամ (նամամ)—մեշ, սուսամբար. <  
 nammām;  
 նաշ—դազադ. <načs;  
 նապար—մի տեսակ շաքար, որ ստացվել են  
 nabāt կոչված բույսից;  
 նասբ—տունիկերի կարգ. բույսերի շաբբ. <  
 našb;  
 նասիճ—հյուսնիկ. <nasiǰ;  
 նասիպ—ճակատագիր. <našib;  
 նասուր—մարմնի կոշտ. <nāsūr;  
 նառիֆ—շաքարի պատրաստուք. <naǰif;  
 նավալէ (նավալա)—նվեր. <nāval;  
 նարինջ—<nārinǰ;  
 նարնիս (նոճէս)—նարդիս. <nārǰis;  
 նաֆաս—շունչ. <nafas;  
 նաֆաստո—ծանրաշունչ;  
 նգրիգ (նեգրիգ, նկրես, նքրես)—ոտքի ցավ,  
 հողատապ, պողպատ. <niqris;  
 նետիր—դեմհանդիման. ընդդեմ. առջև. <  
 nadir;  
 նըսիան (նսիան)—մոռացկոտություն. հի-  
 շոգության կորուստ. <nisyan (լտ, am-  
 nesia);  
 նկատ—նշխարքի ծակծկիչ. <naqqāt;  
 նկիրացող—ուրացող. <nakar, inkar;  
 նկտայ—կես. <nuqta;  
 նշայ—օսլա. <nišā (կա և պրս.);  
 նոպայ (նոպաթ, նօրաթ, նուպայ)—հիվան-  
 դության դարձը. տաքնապ. նոպա. <  
 nōba(t);  
 նուկրայ—դեղ եփելու աման. <nuqra;  
 նուղլ—աղանդեր. <nuql;  
 նուճուֆար (նոնոֆար, նիլուֆար)—ջրա-  
 շուշան. <niñūfar;  
 նուսխայ (նուսխաթ)—դեղօրինակ. դեղա-  
 տոմս. <nusxa(t);  
 նուր—լույս. <nūr;  
 նսեֆ—վստահություն. <nāsif;  
 նսեֆոլ—վստահող;  
 նօրտայ—սայր. <nuqta (բարբ. noktā);  
 նֆլ (նֆլայ, նֆլի)—խոնդատին ցեղակից  
 մի բույս. <nafal;

Շաքռէն (շահթռէն)—անձխոտ. <šāhtarraǰ  
 (պհլ. šāhtarak «թագավորական բան-

շար». նպրս. šāhtara); Հայերենը պա-  
 հել է բառիս պահպանված ձևը՝ շահթա-  
 ռակ (շաթառակ): Մեր կարծիքով՝ ա-  
 բարեբննն այս բառը վերցրել է ոչ թե  
 պարսկերենից, այլ հայերենից, ահա թե  
 ինչու. պահպանվելու-ակ մասնիկով բա-  
 ների կ-ն անաղարտությամբ պահել է  
 հայերենը (օր. նամակ, հրեշտակ, հրո-  
 վարտակ). պարսկերենը կորցրել է այն  
 (šāhtara): Արբ. šāhtarraǰ-ը չի համա-  
 պատասխանում պրս. šāhtara ձևին,  
 որովհետև պրս. ձևում չկա արբ. յ հըն-  
 շյունի համապատասխանը, իսկ այն  
 գտնում ենք հյ. շահթառակ կամ շա-  
 թառակ ձևերի բարբառային արտասա-  
 նության մեջ՝ շահթառագ, շաթառագ  
 (հմմտ. աղ>ագ, տաղ>տագ): Արարե-  
 րենը օտար գ-ն ստաղարձում է յ-ի,  
 ինչպես՝ բուրգ—burǰ, թագ—taǰ, գոհար—  
 ĵuħar և այլն: Շահթառակ (շահթառագ)  
 բառի արարացած ձևը՝ շահթռէն, հետա-  
 գայում նորից վերադարձել է հայերենին:  
 Շարբուրիւն—ճարպկություն. վարպետու-  
 թյուն. խարդախություն. <šātir;  
 Շակակուլ (շախաղուլ, շաղաղուլ)—երես-  
 նակ. <šaqāqul;  
 Շանայ—բարձր մի բույս է, ճյուղերի ծայ-  
 րերը փշավոր, տերևը կանաչադեղին,  
 մրտենու տերևի նման, կարմիր վարդիկ-  
 ներ է տալիս և հատիկներ. <šahib;  
 Շահմիանդալ—վայրի ձմերուկ. <šahmat-ul-  
 ĥanḡal բառի պրս. ձևն է. šahm-i-ħan-  
 tal;  
 Շաղավաթ — սիրալիրություն. զիջում. <  
 šawqiyat (šawq «սեր, կարոտ»);  
 Շաղավաթ այցել (անել, առնել)—զիջել,  
 սիրալիր լինել;  
 Շաղիխայ (շակիկայ, շակակայ)—անգար,  
 կես գլխի ցավ, միգրեն. <šaqīqa;  
 Շամամ—փոքրիկ, կլոր, խատուտիկ սեխ. <  
 šammām;  
 Շամս—արև. <šams;  
 Շապահ—մի բույս է. <šabah;  
 Շառ—շարիք. <šarr;  
 Շառտել—ճեղքել (մի սուր բանով). šart  
 «ճեղքում» (šarata «ճեղքել»);  
 Շարաբ (շարապ)—մրգահյութ. <šarāb;  
 Շարբաթ—շաքարաջուր. <šarbat;  
 Շարթ—պայման. պայմանագիր. համաձայ-  
 նություն. <šart;  
 Շարթ այցել (անել)—համաձայնվել. պայ-  
 մանավորվել;  
 Շարբարան (շուքբարան)—խնդակոթ, մուլա-  
 խինդ (թունավոր մի բույս է). <šavka-  
 rān;

Շաք—պատուհան. <šaqq;  
Շեխ—խալաթ վանահայր. <šex;  
Շեն—գնդածաղիկ. <ših;  
Շեր—երգ. բանաստեղծություն. šecyr;  
Շերասաց—տաղասաց. երգասաց;  
Շերմ—խոտարույտ է. <šarm;  
Շիաֆ (շափ, շաֆ)—մի դեղ է. <šiyāf;  
Շիպ (շապ)—պաղլեղ. <šabb;  
Շիբայ—տանջանքի գործիք. <šaxr;  
Շեն—խրոնջ. <šanj;  
Շուկակ (շուղախ, շուխախ)—1. ճեղք. 2. մի տեսակ քոս. <šaqq (հոջն. šuquq, šiqaq);  
Շարամ—կաղնջան. <šabram;  
Շրիք—ընկեր. գործակից. <šarik;

Ոլաիկ—մոշ. <ulaiq;  
Ոխվ (ոխֆ, ոխմ, վախմ)—կրոնական կայ-վածք. վանքապատական. <vaqf (մեկն. ն. Մատի);  
Ոխլ էնել (անել, առնել)—վանքին կտակել, սրբին նվիրել;  
Ոհմ (վահմ)—վախ, սարսափ. <vahm;  
Ոհմիլ (վահմիլ)—սաստիկ վախենալ;  
Ոյբան (վաթան)—հայրենիք. <wañan;

Ումբր—կյանք (տե'ս օմբ);  
Ուշուր—տասանորդ. <cušr;  
Ուպիսուլ—խնձոր. <արբ. պրս. ubhul;  
Ուսամ—մի տեսակ կարմիր ծաղիկ. <huzama;  
Ոֆայ—երգում. հավատարմություն. <vafā;

Չարաղիկ (ջաթաղիկ, ջաթղիգ)—կաթուղի-կոս. <ġataliq;  
Չումար—խուրձ. <ġummār;

Պագրըրլ-պանն (պագրպանն) — բանդի հունք. <bazr-əl-banġ (պրս. bazr-i-bang);  
Պագի—մի քանի. մի շարք. <bačz;  
Պալատուր (պլատար, բալատուր)—պալար-տուկ. շագանակի մեծությամբ սև գույ-նի մի պտուղ է. <balāḏūr (լտ. Anacardium);  
Պախարակ—ճախարակ <bakara;  
Պահրի—ձուկ. <bahri (bahr «ծով» բառից);  
Պաղղամ (պհամ)—1. անուշահոտ խիժատու մի ծառ է. 2. նույն ծառի փայտը. <baqam (պրս. bakam);  
Պամ—բամբ. <bamm (պրս. bam);  
Պայտար <baytar;  
Պանբուլայ (պոնթուլայ)—ճազում. մակա-բույս է, որ աճում է մեծ մասամբ ձի-թենու, ինչպես նաև տանձենու, նշենու վրա. տալիս է դեղին կամ կարմիր ծա-ղիկներ և հատապտուղ. <bantuma;

Պապառոն—չոսմի պապ. <արբ. պրս. bāb-i-Rūm;  
Պապլաս—վայրի խաշխաշ. <bāblaš (հուն. πέπλος);  
Պասպային—կճութ կոչված բույսը. <bas-bāyij;  
Պասպաս (պասպասայ)—հնդկական ընկույ-զի (ճօղպեխ) կեղև, որ տերևի ձև ունի՝ մեկը մյուսի մեջ հազած. <bāsbās(a);  
Պատեխ (պատեկ, պտեխ, պթեխ)— սեխ. <baṭṭix;  
Պատինճան (պատընջան, պատնիճան, պան-ճան, վաղրճան)—սմբուկ, պորնջան. <badinġan;  
Պատլիլ (պտղիլ)—փշանալ. <baṭṭal «փուճ, անգործածելի» (bīl «հերքել, մերժել»);  
Պատր (պէտիր) լիալուսին. <badr, bedr;  
Պատրուն—սեհանազգի մի բույս է. <bād-rūj;  
Պարաս—քոս. <baraš;  
Պարզունակ—զսպանակ. սողնակ. <barzin, արամ. barzina (հին լտ. version);  
Յ. կարստը գտնում է, որ այս բառը սկզբում հայերենում եղել է \*պարզիակ, հետո ժողովրդական ստուգաբանու-թյամբ դարձել պարզունակ;  
Պարկուկ—ծիրան. <barquq (հուն. πραικόκ-χου, լտ. praecoqua);  
Պարուբայ—ժողովածու. հավաքածու. <be-rāt, պրս. parvanda (Յ. կարսա);  
Պաւապ—ստամոքսադուռ. <bavvāb;  
Պաւասիր—վերք. բշտիկ. թութք. <bavsiṛ;  
Պաքարայ—կոզ. <baqara;  
Պզուր—սերմ. հատիկ. <buzūr;  
Պէլայ—փորձանք. <bālā;  
Պէզ (հոջն. պէզաստան)— կտավ. <bezz (պրս. bēz);  
Պէտաւ—բեզվին, արար, բեզու. <bādāw «բոշվոր արար» (badiyat «անապատ» բառից);  
Պտոյեանք—բեզվիններ;  
Պէտավի (պէտաւ)—արարական, բեզվինա-կան. <bādāwi;  
Պիլիսկի—հովվի քամոց. երկճուղանի, կո-բազուկ և մեջք փոս պտղով մի բույս է. billiski; լտ. Galium Aparine;  
Պիլօր (պլօր)—բյուրեղ. <billūr;  
Պլզամ (պալզամ)—լորձ. խորխ. <balġam;  
Պլզամիկ {—լորձոտ (հոմ. գիջարեուրիւն);  
Պլզամոտ {  
Պխուրմարիամ—արջտակ. <արբ. պրս. ba-xuī-maryam;  
Պղպղայ—թութակ. <babġā;  
Պնդեղ— արքայակաղին. <bunduq; Պնդել բառի նմանությամբ, ժողովրդական

սառուգաբանությամբ կազմվել է նաև պնդեցի:

Պուլ (պօլ)—հնդկական վարունգ. <bul:

Պուկ—շեփոր. <būq:

Պուրն—բուրգ. <burj:

Պաի—վայրենի. վայրի. <barri (barr «ցամաք». barrīya «մարդկանցից հեռու. քաղաքից դուրս». barri «դաշտային. վայրի. վայրենի»):

Պսք (պսուտ, պիտիզ, բուստ)—մնջանի տակ. <busd (պրս. bussad, bissad):

Պսուր (պուսր, պուսիթ, պսրը, պուր)—արմավ. <busr, bisr, busur:

Պուպ—հոփի բեր. <baṭbat, bṭbat:

Պրիսմե—մետաքսեղեն. <ibrisum:

Պրուխ—շրեշ. <birvāq (brūq):

Պրուտ—աչքի մեկ կաթեցնելու դեղ. <bārūd, byrūd:

Պրտու—ջնջադիր. <bardī:

Պոսպոսոդ—շողոթորթ <bašbaša:

Ջազայ (ճգայ)—1. պատիժ. 2. տուգանք. 3. վարձատրություն. <ǰazā:

Ջաթադիկ—տե՛ս չաթադիկ:

Ջալատ (ճէլլատ, ջէլլէդ, ջէննէդ)—դահիճ. ǰallād:

Ջամ—գումար. <ǰam°:

Ջամալ—ուղտ. <ǰamal:

Ջամիայաթ—բազմություն. <ǰama°at:

Ջաւր—բունություն. <ǰavr, ǰevr:

Ջաֆայ—անարդարություն. <ǰafā:

Ջնիբայ—ձի. <ǰani ba:

Ջոհար—տե՛ս ճոհար:

Ջումլայ—1. դումար. 2. ամբողջություն. <ǰumla:

Ռամ—կախարչություն. <raml:

Ռամեթ (բամաթ, բուհմաթ)—բազադրյալ մի դեղ է. <rāmak:

Ռայ—դրոշակ. <rāya:

Ռապատ—իջևան. <rabāt:

Ռատիցէն—խեժ է. <rāṭinaǰ (հուն. ῥητινῆ):

Ռատպայ—առվույս. <raṭba:

Ռափիկ—ընկեր. բարեկամ մարդ. <rafiq:

Ռեհ—քամի. <rih:

Ռէւս—սովորություն. <rasm:

Ռիտդէ—վերաբեր. <rida:

Ռոքուն—սուրբ քար. <rukun:

Ռուպ (բուպ)—քառորդ. <rub°:

Սադիր—ծոթրին. <sa°tar:

Սադրիլ—դադարել. <saṭr:

Սալա—կողով. <salla(t):

Սալաթ (սալէթին, սալաթա)—զարու նման մի բույս. <salat:

Սալայ—աղօթք. <salā(t):

Սալիխայ—մի տեսակ դարչին. <salīxa:

Սախի—քաղցրաբերան. <արբ. պրս. sāqiy:

Սալատ—խեղանդամ. հաշմանդամ. խեղված. <saqat:

Սալմիլ—ձանձրանալ. հոգնել. <saqm:

Սալո—աղուավ. <saqr:

Սահիպ—շեֆ. <saḥib:

Սաղապ (սալէպ)— աղվեսի ձու կոչված բույսը (բստ Ա. Ամասիացու՝ կոտրկի տակ). <sa°lab:

Սաղավաթ—1. ընծա. 2. աղոթք. 3. հանուն հավատքի պատերազմի կոչ. <salavāt:

Սան—Հնդկաստանում աճող մի հսկա ծառ, փարթամ ճյուղերով ու բազմաթիվ տերևներով. պտուղը բուժիչ ձեթ է տալիս. <sāñ:

Սամադ—մի տեսակ քար. <summāqi:

Սամխ (սամդ)—խեժ, կռեղ. <samγ:

Սամսար—1. միջնորդ. 2. հարկահավաք. <samsār:

Սայել (սակել)—հալված. <sāyile:

Սայելե աղ—հալած աղ:

Սայիլ—հեղուկ. <sā'il:

Սայրան—դրոսանք. <saīrān (seyrān):

Սանամրքի (սինամէթի, սինամաթի)—արաբական մի բույս է. աճալ. <արբ. պրս. sanā-i-Mekki (Մեքքայի սանա):

Սանիար—ստեղծագործություն. <san°at:

Սանտալ—ճանդան. անուշահոտ մի փայտ, բուժիչ հատկություններով. <sandal (<լտ. santalum):

Սապալ—աչքի հիվանդություն է. կամշ. <sabal (նպրս. sābāl):

Սապապ—պատճառ. <sabab:

Սապո—հալվէ. <saḅr (լտ. Aloe):

Սապր—համբերություն. <saḅr:

Սասալիոս—օշախ կոչված ծառը և իր պրտուղը. <sāsaliūs (<հուն. σέσαλις):

Սաւտայ (սէվտայ)—սև մաղձ. լեղի. <saudā°:

Սէվտայոս — մաղձոտ. մելամաղձիկ. տանջված:

Սատա—լեռնային մի բույս է, աճում է քարքարոտ տեղերում, գույնը սպիտակ է, ճյուղերը բազում և անուշահոտ. սրբտի դեղ է. օգտակար է փորացավին և կատաղած շան կծածին. <saṭa, saṭāxis (<լտ. stachys):

Սատան (սատէճ)—մաքուր. <sādaǰ (պրս. sāda):

Սատապ (սաղապ, սատաֆ)—խոտաբույս է, որ մեծ մասամբ աճում է թղենու մոտ. օգտակար է բազմաթիվ հիվանդություններին. <sadāb:

Սատափ—խեցի. <saḍaf:



Սաաէն—կաժ. հնդկական մի բույս է, որ աճում է ջրի մեջ՝ տալով անուշահոտ, բուժիչ հատկութիւններ ունեցող տերեւներ. <sādaǰ:

Սատիր—կացիւն. <sātir:

Սատիր—սածիւ, շիթիւ. <sadīr:

Սատրել—սածիւել, շիթիւել:

Սատրինջ—շախմատ. <šatranǰ, siṭranǰ:

Սարախ (սարախս)—պտեր. ճյուղերն իրար կպած, սև արմատով մի բույս է. արմատը մեղրով խառնած՝ դեղ է տափակ ճիճվի դեմ. <saraxs:

Սարատան—խեցգետին. <saraṭān:

Սարի—կայմ. <šārī:

Սարիաք—շտապում, աճապարանք. <sari' Եարագ, շտապ:

Սարգանդ—ավազի մեջ աճող բազմաճյուղ մի բույս, սպիտակ ծաղիկներով, որը հոտոտալիս և ծխելիս ուղեղը թարմացել է, հարբուխը արագորեն բուժվել. <sar-yand:

Սարմախ—հոռոմի սպանախ, դաթք. <պրս. արբ. sarmaq:

Սաֆի (սափ)—պարզ. միայն մաքուր. <sāfi, sāf:

Սափ—երակ. <šāfin:

Սափարայ—սրինգ. <šaffāra:

Սափրայ (սաֆրայ)—մաղձ. <šafirā:

Սաֆրայոտ—դեղնախոտավոր:

Սաֆրան (զափրան, գաֆրան)—քրքում. <արբ. պրս. za'ferān:

Սաֆսաֆ—ուռի տերև. <šafšāf:

Սեհալ—(սեհլ, սէհլ)—ծովափ. <sāhīl:

Սեղմ—թորատենդ. <saqm:

Սեպան—սև սաթ. <sabaǰ:

Սերեֆիկ—սեղանավոր. զրամափոխ. <šarrafi:

Սէյլան—թանկագին քար է. սարդիոն. <արբ. պրս. seilān:

Սէքին—հեզ. <sākin:

Սէֆիլ—խեղճ. <sāfil:

Սըռ (սիր)—զաղտնիք. <syrr:

Սըֆաք—դեմք. <šifāt:

Սըար—ծածկոց. <sitāra (sitr Եծածկել, բառից):

Սիլ (սըլ, սիլլ, սլ)—թորախոտ. <sill:

Սիասաք—պատարաստութիւն. <siyāsāt:

Սիդիզոն (սիդիզոն, սիլիզոն)—կարմրագիւղ. <siliqūn:

Սիսպար (սիսպան)—մի տեսակ սիսեռ. <sis-bān:

Սիֆուց—խողովակ. <šifūn:

Սլին—զենք. <silāh:

Սլեհուց—զինատուռ:

Սլեհուք—զինակիր. <արբ. պրս. silāh-dār:

Սկզնայի մայնուց—խայթող սպեղանի. <պրս.

suguzna Եխայթող, Եոզնիք. արբ. may-jun Եխյուս. Եխմոր. Եսպեղանիք:

Սղար—պաշարում (տե'ս խար):

Սղկել—փշրել. <šahq Եփշուր:

Սղուտ—քիթը քաշելու դեղ. <su'ūt:

Սնգուր (սնգնգուր)—ձուկ է. <saqanqūr:

Սնդուկ—արկղ. <sundūq:

Սնոպար (սնովպար, սինոպրի, սնոպար, սննոպար, սննոպրի)—փիճի <šanaubar:

Սնպալից—փորձաքար. <sunbādaǰ:

Սոխախ (սուխախ)—տե'ս գուկակ:

Սորնջան (սուլնջան)—աշնանային ձնծաղիկ. <sūrinjān:

Սուլտան (սուլթան) <sulṭān:

Սունաք—թլպատութիւն. <sumnat:

Սուս—մատուտակ. <sūs:

Սուրաղաստանայ—լուծիչ մի բույս, ծոթրինին նմանվող. <suraqastāna:

Սուրաք (սուռաթ)—կերպարանք. դեմք. երես. ձև. եղանակ. <šurat:

Սուք—դեղերի մշակախոն բաղադրութիւն. <suk:

Սուֆրա (սուփրա)— 1. ճաշասեղան. 2. սփռոց. <sufra:

Սպիտան—սպիտակեղ (ներկ). <isbidaǰ (պրս. isfidāk):

Սպստան (զպստան)—շան պտկունք. մարդաշափ բարձրութեամբ ծառ է, փայտը սպիտակ, կեղևը կանաչ, մեծ և կլորակ տերեւներով, կաղնի չափ հատիկավոր ողկույթաձև պտուղներով, սպիտակ և կաշուն հյութով. <sabistān (Կպրս. saḡpistān):

Սըքֆել (սըքֆիլ)—ճամփորդել. գնալ. անցնել. <արբ. šaraf Եճամփորդ, անցորդ):

Սփուփ (սֆուֆ)—դեղափոշի. <sufūf:

Սքայ—կաթված. <sakta:

Սոզ (սոտ)—կեպեղիս. բազմօգուտ մի բույս է <su'ūd:

Վազիր (ոզիր)—վեզիր <vezir:

Վախմ—տե'ս ոխվ:

Վան (ոան, ոճ)—բաղշտակ. <vajǰ:

Վասվաս—անքնութիւն. <vasvās:

Վատ—խոտում. <va'ād, va'ade:

Վարս—դեղին կոճ, դեղնախոտակ կոշված բույս. <vars:

Վաքիայ—կշիռ. <vaqiya:

Վերեմ (վարամ)—պալար. ուռուցք. պալարախոտ. <verem, vārām:

Վշամ—մի տեսակ ուտելիք. <višām:

Տալապ—պահանջ. <ṭalab:

Տալիհ—բանան. <ṭalḥ:

Տալի (տալղ)—գետնի աստղ կոշված բույս. <ṭalq:

Տաղակ—ապահարգան. <talāq;  
 Տանր—լորի. <daʿr;  
 Տամպուռ—երաժշտական գործիք է. <tan-  
 bār;  
 Տանդ (տանտ)—արքայահատ. կաղինի նման  
 մի պտուղ է. <dand;  
 Տապախ—1. կաշեգործ. 2. կաշեգործատուն.  
 <dabbay;  
 Տապախ—անասուններին դիպչող սուր վա-  
 րակիչ հիվանդութուն. <ʿābīx;  
 Տապաղ (թաբաղ)—պնակ. <tabaq;  
 Տապաղայ (տապախայ)—շերտ. հարկ. <ta-  
 baqa;  
 Տապաշիր—հնդկեղեղի մոխրը՝ թրջած և  
 աղուսիկի նման չորացրած. <tabāšīr;  
 Տապար—մի տեսակ կարմիր թուղ. <tabbār;  
 Տապզե—իզացող. <tabaz «պատկանող» (Յ.  
 կարստի ստուգաբանությամբ);  
 Տապլ—թմբուկ. <tabl;  
 Տապրան—աստղ է. <dabarān;  
 Տարաբիթ (տարասիտ)—բուժիչ մի խոտ է,  
 որ Հալեբում է աճում. <tarābīṭ;  
 Տարանայ—աստիճան. <daraja;  
 Տարդոն (տարխոն, տարդուն)—թարխուն.  
 նվինազդի բույս է. լինում է թե՛ վայրի,  
 թե՛ աճու. <արբ. tarxūn (լատ. Dracun-  
 cubus, ֆր. Estragon, ռու. эстрагон);  
 Տարպայ—անգամ. <darba;  
 Տարքար—տետր, մատյան. <daftar (հուն.  
 διστάριον);  
 Տէհուն—կաթավ. <ʿāihūn (պարս. tīhū);  
 Տէմէտ (տիմէտ, տրմէտ)—վիրակապ. վերքի  
 խոուս <dimād;  
 Տէվրան—դարձ. պտույտ. շրջան. շրջապը-  
 տույտ. ժամանակաշրջան. <deuerān;  
 Տէվրան աճել (առնել)—պտտվել;  
 Տէֆ (անել)—վաճառել. հրել. քշել. սաղաց-  
 նել. <dafc;  
 Տըվա (տուս, տուվա, դուվա)—աղոթք. <  
 duʿā;  
 Տիբս—դոշար. <dibs;  
 Տիպ—բուժում. բժշկութուն. հոգածութուն  
 <tybb;  
 Տիպխ—ճաղով կոչված մակարույր և նրա-  
 նից ստացվող խեժը (սիսեոի հատիկնե-  
 րի չափ պտուղների ունի, որոնք օգտա-  
 գործվում են դեղագործության մեջ և  
 ուսեղի չեն). <dibq;  
 Տլէ—սպեղանի. <tīlā;  
 Տլիսմ  
 Տլիսմար { — կախարդանք, բժժանք. <ti-  
 lism(at);  
 Տնագ—ծաղր. <tannaz (Յ. կարստ);  
 Տնագել  
 Տնագ այնել { —ծաղրել;

Տուխն (տուխ)—կորեկի մի տեսակը (սև կո-  
 րեկ). <duxn;  
 Տուխ—ծխախոտ. <duxān;  
 Տուլաս (տուզու)—կարոսանման մի բույս  
 է, աղվամազոտ և սպիտակ. <duqas,  
 dūqū;  
 Տախպ—բուժող. բուժիչ. բժիշկ. <tabīb;  
 Տապուրից—բուժում;  
 Տրէզ—շորի բանվածք. <tirāz;  
 Բուխտ (ուրուխ, ուրբուխ)—քաֆուրի տակ  
 կոչված բույսը. <ruqʿat;  
 Փատլայ—արտաթորանք. <iadla;  
 Փարասիոն (ֆարասիոն)—հոտիտ, մեղրա-  
 ծուծ. <farāstun (<հուն. παράσιον);  
 Փարտ (ֆարտ)—կենտ. <fard (fārd);  
 Փաքր (փաքար)—ողնաշար. <faqr, faqar,  
 fuqar (սուրբ. Յ. կարստի, տե՛ս WM);  
 Այս բառը երկար ժամանակ համարվել  
 է անստույգ (տե՛ս չ. Աճառյան, Աբմ.,  
 փաքար բառի տակ); Նորայր Բյուզան-  
 դացին նույն բառի փաքր ձևը ընդունել  
 է որպես փոքր բառի մի ոչ ճիշտ գրչու-  
 թյուն և ընթերցել է՝ փոքր (տե՛ս Նո-  
 րայր, Հայկ. բառաքն., էջ 94); Յ.  
 կարստի ստուգաբանությունը, մեր կար-  
 ծիքով, ճիշտ է. փաքր/փաքար բառաձե-  
 վերը թե՛ արտահայտությամբ, թե՛  
 իմաստով համընկնում են արբ. faqr,  
 faqar բառաձևերին; Ահա մի օրինակ.  
 Ե՛ր հիւանդին փաքր չեղևայ նիհարու-  
 թիւն և ոչ բարակութիւն» (Մ՛, 33);  
 կարծում ենք, խոսքն իրոք ողնաշարի  
 մասին է;  
 Փափղեմց—մերձարևադարձային մի բույս.  
 պտերազգի. <falimūn;  
 Փիլաք (ֆալաք)—1. երկինք. 2. ճակատա-  
 դիր. <falak (որից՝ falaki «գուշակ»);  
 Փնտուկ—իջևան, պանդոկ. <funduq;  
 Փու (ֆու)—անորոշ մի բույս. ոմանք հա-  
 մարել են կատվախոտ, ոմանք՝ սև պղղ-  
 պեղ. <արբ. fū;  
 Փուրկան—զուրան. <furqān;  
 Փուկայ (ֆուխա)—գարեջուր. <fuqqāc;  
 Փստուղ (ֆըստուխ) պիստակ. <fustuq  
 (պել. pistak);  
 Քադայուց—բուշտ. kautaʿat;  
 Քարիֆ—թանձր. հաստ. մեծ. խոշոր. կո-  
 պիտ. <kaṭīf;  
 Քալիմայ—խոսք. <kālime;  
 Քամուն—չաման. <kammūn;  
 Քապապայ—պղպղի մեծությամբ դառնա-  
 համ հունդ, բուժիչ հատկութուններով.  
 ներմուծվել է Հնդկաստանից, Բունեսյից,  
 Ջավայից. <kabāba;

Գ ասապ—մսագործ. <qassāb:  
 Գարաէ (քարաւիտ)—կրտիմ (ջրկոտեմի մի տեսակը). <karaviā:  
 Գաւ—կիզիչ. <kāvi:  
 Գաֆան—պատան. <kāfān:  
 Գաֆար—անհավատ. անխիղճ. անզուժ. <kāfir:  
 Գաֆրիկ—նույնի փաղաքշականը, որ աս-  
 փել է սիրելի մարդու:  
 Գարանաջ (քակոնիճ, քաջուկիճ, քանքա-  
 նան)—մի տեսակ շինարար. <kārkunaj:  
 Գրան—բամբակի կտոր. <kattān, նպրս. ka-  
 tān:  
 Գիթրայ (քիթրայ)—շատ. <keθīrā, պրս.  
 kātira:  
 Գիւս—կիր. <kils:  
 Գիմէ (քամահ)— բողբոջ. <kam' (յոգն.  
 kama'):  
 Գիպր—մեծամտութիւն. <kibr:  
 Գիպրիթ—ծոռմը. <kabrīt:  
 Գիւֆր (քուֆր)—հայհոյանք. հիշոց. <kufr:  
 Գֆրեյ  
 Քուֆր ասել { —հայհոյել:  
 Գնիշո—տաճար. <kanīšat:  
 Գշոթ (քուշթ, քշոթր)—գայլիտու. <kušut:  
 Գումայթ—արմավագույն ձի. <kumait 1.  
 Եարմավագույն. 2. նույն գույնի ձի:  
 Գուշնայ—վայրի ոլոտ. քիսամ. <kušna:  
 Գոււար—սոխանման մի բանջարեղեն. պրսս.  
 <kurrāš:  
 Գուրմ—խաղողի որթ. <karm:

Գուրմ (քորմ, ղուրիմ)—չինարի նման մի  
 ծառ, բայց մրգատու. <qurm:  
 Օմր (աւմր, ումր, ումբր)—կյանք. <omr,  
 cumr:  
 Օմրիկ:  
 Օշնայ—կաղնու մամուռ. <ušna:  
 Օսիաթ (ոսիաթ, վասիէթ)—պատգամ. <wa-  
 šiyat:  
 Օտարիտ—փայլածու. <uštārid:  
 Փալէն (ֆէլիճ, ֆէլճ, փէլիճ)—մի կողմանի  
 լուծանք. <fāliš:  
 Փանիտ—սպիտակ փուխր շաքար. <fanid:  
 Փար—մուկ. <fā'rā(t), fā'r:  
 Փարպիտն — ափարբիտն. կաթնատու մի  
 բույս. կոչվ. նաև՝ գայլի կաթ. արբ. far-  
 bityun. պրս. farbityun (հուն. εὐφρόσυτον):  
 Փաւղուլ (ֆաւտուլ, ֆօտուլ)—հետաքրքրա-  
 սեր. հանդուգն. <fuḡul, fodul:  
 Փիթիլ—պատրույց. <fiṭil:  
 Փիլ—փիղ. <fil:  
 Փինճան (փիլճան)—գաղաթ. <finjān, filjān:  
 Փլեհիլ—անել. falāh, aflah «ան»:  
 Փիլիթ—խեղճ. <faqr:  
 Փուլան—ոմն. <fulān:  
 Փուտանէն—դաղձ. <fūtanaš:  
 Փուֆել (փուփէլ)—բուրբալ. մի տեսակ ըն-  
 կույզ. Հնդկաստանից է ներմուծվել. <  
 faufāl:  
 Փոտանջ—ծոթրիւն. <fudanš (պրս. pūdāna),

ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ԾԱՆԿ

Ազատդրախտ—բարձր մի ծառ, որ ալոնի  
 մեծութեամբ պտուղներ է տալիս. <āzād  
 diraxt (սողբ. ն. Բյուզանդացու):  
 Ազար—վշտացած. նեղացած. <āzār (սողբ.  
 Մ. Պտուրյանի):  
 Ազարեյլ—վշտացնել. նեղացնել:  
 Ազարիոն—ոսկեզույն մի ծաղիկ. <ādaryōn,  
 āzaryōn:  
 Ազարին — ազնվականութիւն, իշխանու-  
 թիւն. <azār. āzālih (նպրս. āzāli):  
 Աթաշ—հուր, կրակ. <ātāš:  
 Աթաշփարիտ—կրակապաշտ. <ātāšparast:  
 Ախստ—պահարան. միջերանոց. <āqīšta.  
 նպրս. āγestā (սողբ. չ. Աճառյանի):  
 Ակար (ակիր)—բաշխ (բույս). <agīr (egīr):  
 Ակիշ—կրակխառնիչ. <āgīš:  
 Ահեթ—մազնիս. <āhāng:  
 Ահոկ—մուրթիւն. հանցանք. վնաս. <az.  
 āhok (նպրս. āho):  
 Աձոկել—վնասել:

Ահոկութիւն— պակասութիւն. թերու-  
 թիւն. վնաս:  
 Աճահոկ—անվնաս:  
 Ամլուխտ (ամլախտ)—կոշիկ. <amlyun. ham-  
 laxt (սողբ. Յ. կարստի):  
 Ամօխտայ—գիտուն. գիտնական. <amūxta:  
 Ային(ակ)—որինակ. <āyin «կարգ. ընթացք.  
 կերպ» (սողբ. չ. Աճառյանի):  
 Այնեպետ—ատենապետ. <āyēn-bād:  
 Անգուժատ (անկուժատ, անգժատ, անկ-  
 ժատ)—ժանտախտ մի խեժ. քաղբան,  
 մաղթ, կապնդիկ. <anguzad:  
 Անգժատաբեր—անզուժատ տվող բույսը:  
 Անգուտան (անկիտան)—լեռնային մի բույս  
 (համեմատելի), եփում է ուտում են. զո-  
 խը, որ կոչվում է տրոզան, հում են  
 ուտում. <angudān, angidan: Այս բա-  
 ռի արարացած ձևն է anjūdān, որ հա-  
 յերենում տվել է աննուտան, աննիտան:

Անդարձ (անդէրձ)—1. կտակ. 2. խորհուրդ.  
 <andarz;  
 Անդարձագիր—կտակի թուղթ:  
 Անդարձական—կտակային:  
 Անդերձապետ (յանդերձապետ)—խորհրդակա-  
 նան:  
 Անդիշայ—հոգս. մտաձմուռ. <andīša;  
 Անդոն—մտատանջություն, անհանգստո-  
 թյուն. ցավ. <պհլ. andōh;  
 Անդոնիլ—անհանգստանալ. վախից դո-  
 ղալ. սիրտը բարձիւնել:  
 Անդոնական—սարսափելի:  
 Անանդոն—անցավ, անվիշտ, խաղաղ:  
 Անխուէշքարէ — սեփականություն. <պհլ. xwēškāri (պրս. xvaskār) «ազգական», «սեփական». Յ. Կարստը բառակցքի ան-ը ուղղում է \*համ<ham և բարձր բացատրում՝ «համապատասխանություն»:  
 Անձրուք (անձրութ, անձրութ)—խեղ, որ մի փշարույից է ստացվում. օգտագործվել է որպես ղեղ. <anzarut;  
 Անճիրիտամ—հնդկական միրգ է, թղի նման. <anġir-i-Adam (ստգր. չ. Աճառյանի և Ն. Բյուզանդացու):  
 Անջիման—ժողով. <պհլ. anġaman, hanġaman (նպրս. anġuman):  
 Աշդահակ—վիշապաձուկ. <պհլ. aždahāk (նպրս. aždahā):  
 Աշմ—հասպիս. <պրս. yašm;  
 Աշրաս—շրեշ. <նպրս. išrās (հպրս. siriš);  
 Աշքարայ (աշկարա, էշկեարէ)—հայտնապես. <հպրս. āškāra (նպրս. āšikār, պհլ. āškārāk);  
 Ապաղարէ (ապարիարէ, ապարիօրէ, ապ-խոր)—մետաղի աման՝ կոնքի կամ կժի նման <ābxōra (Բուզազովի այս բառը բացատրում է āb «ջուր» և xōrdan «խմել» կազմությամբ):  
 Ապիզար—նզովված. հրաժարված <bezārī «չարչարված, ձանձրացած, հրաժարված»:  
 Ապիզրիլ—կնոջից բաժանվել:  
 Ապրշահր—բարձրամանդակ. <abaršahr;  
 Ապրուն—վայրի ազոխ. <ābrūn (ստգր. Յ. Կարստի):  
 Ապրուն—մի տեսակ սմբուլ. <ābrūd (ակադ. չ. Աճառյանը հայերեն բառաձևն ուղղում է՝ ապրուն):  
 Ասան—առավոտ. <պհլ. āsān (ստգր. Մարի-վարտի):  
 Ասլան—ներկատու վայրի մի խոտ. <նպրս. aslanġ (ստգր. Յ. Կարստի):  
 Ասպրամ—ուհեան. <ispārġām;  
 Արայիշ—հանդես. ծես. <նպրս. ārāyīš;  
 Արգեիդ—պարսից արքունական մի պաշտոն. <arz-bād;

Արկ—ավան. միջնաբերդ. <նպրս. arg, ark;  
 Աֆթիմոն (աֆթիմոն, օթիմոն)—իզաբող. դառը արմատով մի խոտաբույս, որի արմատը ատամնացավի ղեղ է. <aftimūn (<հուս. ἐπιθιμουον):  
 Բաբուն—կոշիկ. <pā-pūš «տաք ծածկող»:  
 Բազպան—թևնոց. <պհլ. զենդ. bāzupān;  
 Բաձ (բաձ)—մաքս. <bāž, bāj;  
 Բաձրար—մաքս վերցնող:  
 Բաձտուն—մաքսատուն:  
 Բաձակել—բույսի շուրջը փոս բացել՝ ջրե-լու համար. <պհլ. \*bāžak;  
 Բաձակցունել—մաքրել. խնամել:  
 Բաձել (բաձել)—վայելել. <bāj «վայելք» բառից (ստգր. Յ. Կարստի):  
 Բալափուշ—վերարկու. <bālāpuš (bālā «վե-րին»—pūš «ծածկ»—ստգր. չ. Աճառյանի):  
 Բահար—գարուն. <bahār;  
 Բահրակ—մանավանդ. ամենից ավելի. ա-ռանձնապես <bahrak;  
 Բահրայ (պահր, պահրէ)—հարկ է. <bahra;  
 Բանդար—մաքս վերցնող (հոմ. բաձրար) <bāj-dār;  
 Բամբ—թավ. <bam;  
 Բամբերգայից—թավաձայն:  
 Բանդար—բանուկ, վաճառաշահ քաղաք. <bandar;  
 Բանկ (բանդ, բանդի)—թունավոր, թմրեց-նող բույս. խելառ խոտ. <bang (սնս. bhangā);  
 Բաստ — երջանկություն. ապաստարան. փրկություն. <bast;  
 Բարկժամ (բարգժամ, փէժամ, բարգամ)— խեղ, որ խոյժղանի հոտ ունի. քաղբան, չարհոտ. <նպրս. bārgužad, bāržad (ստգր. Ն. Բյուզանդացու, Յ. Կարստի, չ. Աճառյանի):  
 Բարչամ (փարչամ)—մազափունջ. <parčam, pherčem;  
 Բեհեշտի—ղրախոտային. <bihišti, bāhišti (ստգր. Ն. Բյուզանդացու):  
 Բեխապար—անգետ. անտեղյակ. <bexabar (ստգր. Մ. Գոտուրյանի):  
 Բեհրեդ (փահրեդ)—ժուժկալություն ու տե-լու մեջ. <parhēz;  
 Բեշ (բեշ, պեշ, պեշ)—թունավոր մի բույս է. <նպրս. beš, biš;  
 Բեշմար—անթիվ. անհաշիվ. <be-šumār;  
 Բեշմուշ (բեշի մշուշ)—1. բեշ թունավոր բույսը. 2. այն կենդանին, որն ապրում է բեշի թփի տակ՝ կուղր. <beš-mūš;  
 Բեումէտ (պեումէտ)—անհույս. <beūmid (ստգր. Մ. Գոտուրյանի):

Բևվայֆա (բէվաֆա, պէոֆա)—անհավատարիմ. անվստահելի. <պրս.—արբ. bē-vaiā;  
 Բէտար—արթուն. <bēdār;  
 Բէց (բէչ)—ծառա. աշխատող. <bāčā;  
 Բէշարա (բէշարա)—խեղճուկ. <bē-čāra;  
 Բէսիֆա—տձև. ազեղ. աներես. <պրս.—արբ. bē-sifat;  
 Բլբուլ (պլպուլ)—սոխակ. <bulbul;  
 Բիմար—հիվանդ. <bi-mār;  
 Բշխունց—եկեղեցում գործածվող սանդնագործ դաստառակ. <piš-xun;  
 Բոբ—գորգ. օթոց. <պհլ. պրս. bōb;  
 Բոշխնել—վայելել. <պնդ. baxšna;  
 Բուխտան (բուխտան)—շարախոսութուն. գրպարտում. <նպրս. buhtān;  
 Բունյաբ—հիմք. կազմութուն. <bunyād;  
 Բունպան—ձիապան. <նպրս. pūn ձիերի երամակն և pan;  
 Բուստ (շիստ, պէսէդ, պիստ)—մարջան. <bussād;  
 Բուտփարիստ—կռապաշտ. <butparast (but «կուռք» և parast «պաշտող»);  
 Բրին—վերք. կտրվածք. <burin, birin;  
 Բրինոտել—վերքոտվել;  
 Բրինձ—որիդ. <պհլ. birinj];  
 Բրնձաղագ (բրնձի աղաց; Բրնձահանգ)—բրնձի աղաց;  
 Բրինձօրամ—փլավքամիկ;  
 Բրսամ (բրսիմ, բրսէմ, պրսիմ)—թոքատենդ. <barsām (bar «կուռք» և sām «տաքութուն»);  
 Բրսի անդարու—մատիտենդ. <barsiyāndārū;  
 Դագ—մոշենի. <gaz;  
 Դագ (կադ)—արշին. <gaz;  
 Դան—դաջ. <gaĭ (kaĭ);  
 Դանգալ—կատակ. <gangal;  
 Դաւ—գինու, ջրի փարչ. <gāv;  
 Դգմագ (գզմաստ, գզմոս)—մոշենու պտուղք. <gazmiāzak;  
 Դզիր—գյուղի տանուտերի օգնական. <gizir «գյուղապետ» (արբ. արտասանությամբ՝ Jazir);  
 Դէժ (գիժ)—հիմար, խենթ, ապուշ. <gež, geĭ, giž, giĭ;  
 Դուիլ—հիմարանալ, խենթանալ;  
 Դոնջ—խեղանդամ. սապատավոր. <gunĭ;  
 Դոնջանալ—խեղանդամ դառնալ;  
 Դոնջուքիւն—խեղանդամութուն;  
 Դոռ (դոռ, կոռ)—մահեղականի գերեզման. <gōr, gūr «գերեզման»;  
 Դոռել (կոռել)—թաղել, սքողել (նվաստացուցիչ իմաստով);  
 Դոս—մեծ թմբուկ. <kos;

Դոսակ—1. քարձ. 2. կարճ. նպրս. kōsa (հայերենը պհլ.\*kōsak ձևից պիտի լինի);  
 Դուլ (կուլ)—վարդ. <gul;  
 Դուլվարդ—վարդի մի տեսակը, որի յուրաքանչյուր ճյուղին երեքական ծաղիկ է լինում: Օգտագործվում է թեյի մեջ;  
 Դուլբայշարաբ—շաքարախառն վարդ. <gul-ba-šakar;  
 Դուլխապան—ցայգավարդ. ցայգածաղիկ <gul-i-šabāh;  
 Դուման—1. կարծիք. 2. հույս. 3. տարակույս. <պհլ. gumān, պրս. gumān;  
 Անգուման—անկասկած. անահնկալ;  
 Ցանգումանի (յանգումանի)—անսպասելի;  
 Դումբէթ (կումբէթ)—նպրս. gunbad, gunbād (դաս. հյ. գմբէթ);  
 Դունահ—մեղք. հանցանք. <նպրս. guna;  
 Դունահարաբ—մեղավոր. <gunāh-gār;  
 Դունիժ(ա-տակ)—անձրութ. <նպրս. gouniz (ստգբ. Յ. Կարստի);  
 Դուրգ (գուդ)—լախտ. <gurz (ստգբ. Մ. Գոտուրյանի);  
 Դուին—մեծ կտոր աղ. <girič;  
 Դրտակ—կլոր հաց. <պհլ. girtak, նպրս. girda «կլոր հաց»;  
 Դրտակ—նպրս. gird «բոլորակ. շրջան». girdana «խաղանիվ». գրտակ բառը անշուշտ գալիս է պահլավերենի շրջանից, որ հայտնի է դառնում անշուշտ ի ձայնավորի բացակայությամբ և բառավերջի -սի մասնիկի առկայությամբ;  
 Դրտնել—գրտնակել;  
 Դուլգոդար (կուլկոտար, կալկատար, կողքոթար, քուլքոթար)—երկաթօքսիդ. երկաթահող. այրած արջասպ. <նպրս. qulqatār, gulqantār (հուն. γάλακτος, γαλακίτης);  
 Դարդարայ—թմբուկ <dabdāba;  
 Դահարամ—տասը դրամանոց. <dah-diram;  
 Դահել (դահիակ)—տասանորդ. <dah-yak;  
 Դամ—ուռկան. <dām;  
 Դանդան (դանտան)—ատամ. <պհլ. dan-dān (ստգբ. չյուրջմանի);  
 Դանքըման (դանիշման, դանիշման)—մահեղական գրազետ. կարդացող. մոլլա. նպրս. dāniš-mand (ստգբ. Յ. Աճառյանի);  
 Դանկա (դանքայ)—մի տեսակ գոհար. կարասը ստուգաբանում է պրս. tanga, tanaga բառից;  
 Դաստիշոն (դաստիշոն)—տաշտակ. <dast «ձեռք»—šuy «լվալ»;  
 Դաստ—ձեռք. <dast;  
 Դաստա—տրցակ. <dasta;  
 Դաստան—տե'ս Տաստան;

Դաստալայք—մահակ, բիր. < dasta-čob;  
 Դաստառչայ—թաշկինակ. սկիհի ծածկոց. <  
 dastārča;  
 Դաստաքար—վարպետ. արվեստավոր. ձե-  
 ուղեւ. < dastakār;  
 Դաստուր (տէսթուր)—թույլավություն.  
 < dastūr;  
 Դաստուրօրին—թույլավություն;  
 Դաս(տ)պրիկ (դաստապրիկ)—կուժ. < պրս.  
 dast «ձեռք» և արբ. ibriq «շունիճ»;  
 Դավայ (թավայ)—տապկոց. < tāva (tāba);  
 Դարաբ—փայտփորիկ. < dār-āb (ստգբ. Յ.  
 Կարստի);  
 Դարապղպկ (դարիպղպեղ)—1. պղպեղի  
 ծառ. 2. երկար պղպեղ. < dār-i-pilpil  
 (արբ. արտասանութեամբ՝ darīfilfil, որից  
 էջ. դարաֆուր);  
 Դարեպաս (դարպաս)—1. մեծ դուռ. 2. պա-  
 լատ. 3. նվեր (մեծավորին տրվող); Կա-  
 պրս. ǰarvāz, darvāza. հայերեն ձևը են-  
 թաղմունք է պահլավերենից;  
 Դարպաս տալ—ընծա տալ (մեծավորին);  
 Դարպաս առնել (այնել)—մեծավորի ըն-  
 ղունեկութեան պատրաստակ;  
 Դարպասցի—պալատական;  
 Դարիճակ—կաղապար. < պհլ. \*darīča, պրս.  
 darīča, արբ. արտասանութեամբ՝ dara]a);  
 Դարիճեցիկ (դարիսեն, դարսենեկ)—կինա-  
 մոն. < պհլ. \*dar-i-čēnik (նպրս. dār-i-čī-  
 ni);  
 Դարիշատ—հնդկական կաղնու փայտ. dār-  
 i-sāg (ըստ Յ. Կարստի);  
 Դարվազայիճէ—երկաթի թորիում. < darvāza  
 «թորիում»—āyini «երկաթի»;  
 Դեծպուհի—շար. խարդակ. ձանձրացնող  
 (դաս. էջ. դժպիհի). < dəḫpīh, dəḫpich;  
 Դեհ (դէհ, դիհ, դի)—կողմ. < պհլ. deh, պրս.  
 dih «դուր», հինդուստ. dih, դնշ. di  
 (ստգբ. չյուրջմանի); Դեհ (դիհ, դի) բա-  
 ուրի զոգոճ իմաստը գիտակցվում է պհլ.  
 dehkān «կուռսակալ» բաղադրութեան մեջ;  
 Դեհկան—կուռսակալ. գաղտնապետ. պհլ.  
 dehkān, պրս. dihkān;  
 Դեհկանութիւն—կուռսակալություն. գա-  
 ղառապետություն;  
 Դոխ—ջրաղացի ձագար. < պրս. dōl, որի  
 նախնական իմաստն է «զոլլ», ապա  
 «ձագար»;  
 Դոն (դոշ, տոշ)—կարմիր ներկ և խեժ տվող  
 մի ծառ. < dōz;  
 Դոյդ—ծուխ. ընտանիք. < dūd;  
 Դուճան—տնիս բուճան;  
 Դուշման—թշնամի. < dušman;  
 Դուրաս—ճիշտ. լրիվ. ուղիղ. ամբողջ. ողջ.  
 durust;

Դրստել (տրստել)—ուղիղել, ճշտել;  
 Եար (յար)—բարեկամ. սիրելի. < yar;  
 Եղեր—ուժ. < eger, eyer;  
 Եղրուանի—յասամանի. arjevān (ստգբ. Ն.  
 Բյուզանդացու);  
 Երաշխ—աշխետ. < raxš;  
 Երվըշտայ—էրիշտա. —erišta;  
 Զահր (զէհր)—թույն. < zahr, zāhr (դաս. էջ.  
 մահր);  
 Զահրել—թունավորել;  
 Զախմել—խոցել, վերավորել (մի որևէ բա-  
 նով). < zaxm «խոց, վերք», որ լինում է  
 պատերազմական զենքերից» (ստգբ. չ.  
 Աճառյանի);  
 Զանախ—գասարկախոս. < zanax;  
 Զանկապան—սոնապան. < պհլ. zangpān;  
 Զապ—հոսք. գետ. < zāb, zahāb;  
 Զապարճատ—բյուրեղ, կապտաշորթ. < za-  
 bar]ad;  
 Զապուն—նիհար. խեղճ. < zabūn;  
 Զառ—ոսկի. < zar, zarr;  
 Զառել—ոսկու կամ արծաթի բարակ թերթի;  
 Զառելի—ոսկեզօծել, արծաթապատել;  
 Զառելուց—ոսկեզօծ, արծաթապատ;  
 Զարիճայ—մկեղեղ. < zarna;  
 Զարքաշ—ոսկեհուռ. < zarkaš;  
 Զար—ողբ. < zār;  
 Զարիթ—դեղին կոճ (բույս). < zarīr;  
 Զարպապ (զարբաբ) — ոսկեկար. < zār-baf  
 (bāfi);  
 Զարտագոյն—դեղնազույն. < zardgōn;  
 Զարտալու—ժիրան. < zard-ālu;  
 Զեն (զէն, զեան, զեան)—վնաս. < ziyān;  
 Զենարար—վնասակար;  
 Զենել—վնասել;  
 Զենիլ—վնասվել;  
 Զենկել—վնասել;  
 Զենկուած—վնասված;  
 Զենութիւն—վնաս;  
 Զենակար—վնասակար. < ziyānkār;  
 Զեւիաղար—1. դարվիշներին վանքի մեծա-  
 վոր. 2. սենեկապետ. < zāvladār;  
 Զէնէհար (զինհար)—1. երգում. խոսում.  
 համաձայնություն. 2. ահ և երկյուզ.  
 3. քանգատ. 4. խզճա՞, ողորմի՞ր, ապա-  
 վե՞ն եղիր. < zīnhār;  
 Անգեցեհար—անգուլթ. անողորմ. դրժող;  
 Զէման—ժամ. < zāmān;  
 Զէրա (զիրայ, զերայ)—բայց. քանի որ.  
 որովհետև. —zī-rā (zē-rā);  
 Զէրուզապար—վեր ու վար. գետ ու գետն. <  
 zēr-va-zabar «վար ու վեր»;  
 Զէրտա—քաղցր ուտելիք. < zārdā;

Ջերտէփիլավ — քաղցր մրգերով՝ չամչով,  
խուրմայով, չրով փլավ. <zārdā phtlav:  
Ջրայ — զարգ. <zibā:  
Ջիլ (զիր) — շատ բարձր (ձայն). <zil, zir:  
Ջիլֆ — գանգուր. <zulif:  
Չուիրակ — ծոթոր. <պհլ. \*zuvirak:  
Չրեհ — զրահ. <zirih:  
Չրբբատ (զրմբատ, զրնպատ, զրոււպատ,  
զուրբատ, զրորատ) — ցնդվար (բույս). <  
zurunbād, zurunbā:  
Չրիշկ (զրեշկ) — ծոր. կոծոխուր. վայրի թըթ-  
վաչ հյուսթալի մի պտուղ. <zirīšk:

Ընագիւն (նագիւն, ոգիւն) — սամիթ. <ṛā-  
zyāna (արբ. rāziyānī):  
Ընախտ — սարք. համադգեստ. <նպրս. raxt:  
Ընական (ընէյկան, ռէյկան) — ընդհանուր.  
հասարակ. ժողովրդական. <ṛāhgān, rāy-  
gān:  
Ընամ (նամ, սեմ) — ժողովուրդ. զորք. <ram:  
Ընանվան — վազող. արագավազ. <ṛāhvān:  
Ընասուխտ — այրած պղինձ. <ṛāsuxt (<արբ.  
rūsaxtaī):  
Ընատ (նատ) — ավազ. <պհլ. ṛāt, պրս. rād:  
Ընէյվան — 1. խավարծիլ. 2. նույնից պատ-  
րաստված լուծողական. <նպրս. revand,  
rivand:  
Ընիմոն (ռեմոն, ռոնետ) — զբաղական. <remon, ri-  
mon, ramūn:  
Ընիմոն (ռիմոն, ռոնետ) — լափ. գեղեցիկ. <ṛind,  
rund:  
Ընրնտիկ (ննտիկ) — լավիկ. սիրունիկ:  
Ընրնտնալ (ննտնալ) — լավանալ. գեղեցկա-  
նախ:  
Ընրնտոթիւն — լավութիւն. առողջու-  
թիւն. գեղեցկութիւն:  
Ընուշնայիայ — ռուսամայր (աշքի դեղ է). <  
rošānāyi (ստգր. Յ. կարստի):  
Ընուպան — աղվես. <նպրս. rōbāh, rūbāh:  
Ընրկարտար (ընքեպղար) — ձիապան. <արբ.  
պրս. rikābdār (արբ. rikāb Եասպան-  
դակ է պրս. dār):  
Ընտրակ — թանկագին մի կտոր. պրս. is-  
tarva, պհլ. \*sitavrak:

Թագայ (թագէ, թատայ) — թորմ. նորահաս.  
<tāza:  
Թագնալ — թարմանալ. նորանալ. կանաչել:  
Թարբայ — աղտոր (= սոււմախ). <atara:  
Թալ (թաղ) — հնդկական խոշոր արմավենի.  
<āi:  
Թախթ (թաղթ) — զահ. <taxt:  
Թախտան — թալան. ավար <āxtan:  
Թախթնել — թալանել. ասպատակել:  
Թակլալակ — լատին սարկավագի շապիկ. <ta-  
gāiā Էկարն հանդերձ):

Թանագ — թիթեղ. <tanāga:  
Թանապայ — դահլիճ. <tinābi, tanbi:  
Թանգ — թամբակալ, թամբի զոտի. <tang  
(արբ. արտասանութիւն՝ tanj):  
Թանկիրայ — կաթնա. <tangira (արբ. արտա-  
սանութիւն՝ tanjira):  
Թանուխ — շնաշխարհիկ. մեծագին. <tansūx,  
Թասայ — վիշտ. հոգս. անհանգստութիւն.  
հոգատարութիւն. <tāsa:  
Թասայիլ — հոգալ:  
Թասայ առնել — անհանգստացնել:  
Թասայոտ — հոգատար:  
Թասու — զրամ է. 1/4 դանկ. <tasū:  
Թավթայ — մետաքսի դիպակ. <tāftan, tāfta:  
Թարանկուպիւն (թառանկոյն) — մանանա. <  
tar Եթարմ է և angubin Էմեդր) (արբ.  
արտասանութիւն՝ թրնուպիւն):  
Թարխան — հարկից ազատ. <tarxān:  
Թարխանութիւն — ազատութիւն (հարկից):  
Թարխանայ — շորթան. <tarxāna:  
Թափուր — փայտից սկուտեղ. <tāfur Էանոթ  
քարեղեն կամ խեցեղեն):  
Թեմաչի — թաթարական զորք. <timāj Էնե-  
տի նպատակ) (ըստ աղագ. չ. Աճառյա-  
նի՝ քեմաչի նշ. է Էաղեղնավոր զորք):  
Թէգ — շուտ. շտապ. <tiz:  
Թէրագու (թէրագի, տարագուկ) — կշեք՝ կեն-  
դանակերպ զլիտով. <tārāzu:  
Թէքէ — ծովի մորեխ. <tākā:  
Թիթուլ — աղտոր. <tutum:  
Թուգ — մի տեսակ սոււնկ. <tanūb (արբ.  
tannūb):  
Թուայ — թոնիթ (ըստ չ. Աճառյանի մեկնու-  
թյան), աղու, օջախ (ըստ Ն. Բյուզան-  
դացու մեկնութեան): Եթառագիթք ստո-  
րին հայերենի աշխ. մեջ Ն. Բյուզան-  
դացին բերում է այսպիսի օրինակ՝ Է...  
զկնի խցիլոյն դիր ի թուայքն, որ է  
օճախ, և վառէ ի ներքոյ հուր... — Գի-  
միար. <teva, tāba:  
Թուրակ — tōtak:  
Թուխմայ — ստամոքսի ցավ. դժվարամար-  
տութիւն. <tuxma:  
Թուխմայիլ — վքենել:  
Թուխմայութիւն — վքենութիւն, դժվարա-  
մարտութիւն:  
Թուխման — երեխա. <պրս. tuxma Էժագում.  
սերմ. ընտանիք):  
Թուխմաքան — փրփրեմ. <tuxmagān:  
Թուխան (թուան) — զրամ է. <tmān:  
Թուտարի (թութարի) — ձագխոտ. <tudrai:  
Թուրուշ — նեղացած, թթված. <turš:  
Թուրվանտայ — վաղահաս բուսականութիւն  
<նպրս. turvanda:  
Թուրքման — Թուրքմեն. <turkmān:

Թրաշ ընել—սափրել. <terās:

Թրաշել—սափրել:

Թօնի—ապուշ. <tūni:

Ժամ—խոնվ. <žāž (խիստ փշոտ մի բույս):

Ժիր—աշխուժ. <žir:

Ժրել (ժրել)— աշխուժանալ. լավանալ.  
ստողջանալ:

Իշխուն—թթվաշ մի բույս. <išxūn:

Իշորմուղ—ջալլամ. <ušturmurγ:

Լալ—Թանկագին բար է. <պրս. արբ. lāl:

Լալա—կակաշ. <lāla:

Լալազար—վնասակար թմբեցնող մի բույս է, քառակուսի, ուռուցիկ պտուղներով.  
<lālazār:

Լալեֆշան—կակաշ ցանող. <lālā-fišān:

Լալիս—մետաքսե բարակ կտոր. <lālas:

Լախ (լախ)—թուլ. <laγ:

Լախրնալ—թուլանալ. փշանալ:

Լախտ—գոտի <laxt:

Լաշկար—գորբ. <laškār:

Լաշակ (լաշակ)—գլխաշոր. <lačak:

Լաշկիկ—փոքրիկ գլխաշոր:

Լեղակ—մշկան եղիճ, հնդիկոն. <lela (պհլ.  
\*lelak):

Լեղանց—կերակրատեսակ է. <lālang:

Լեշ—լեշ. <նպրս. lēša, lēše:

Լկամ—սանձ <ligām:

Լկամարար—սանձագործ:

Լպուտ—աղեղով բամբակ գզող. <պրս.-արբ.  
<ilbād:

Լսալ—խալ. <xāl:

Լսալաչուրի—մի տեսակ թուր. —qalāčuri:

Լսալի (խալիշա)—գորբ. <qālī, qālīča:

Լսալիցն—բույս է. <xelenj, xilinj, qālinj:

Լսալխալ—ապարանջան. <xalxāl:

Լսալվար—երեսուն փուլ. <xarvār:

Լսահրման—հաղթող <արբ. qahra—պրս.  
mān:

Լսամ—խակ. տհաս. <xām:

Լսան—ափսե. <նպրս. xān, xvān:

Լսան—մեծավոր. <նպրս. xān (մոնղ. γan):

Լսան (խանայ, խանէ)—իջևան. տուն. <xān,  
xāna:

Լսանչար (խէնչէր)—դաշույն. <xančar:

Լսաշխաշ—խաշխաշ. <xāšxāš:

Լսառ (խար)—փուշ. <xār:

Լսառի պտուղ—վայրի թփերի պտուղ:

Լսառուք (խարբուք)—սև թութ. <xartūt:

Լսարաք—չոր արմավ. <xarak:

Լսարանֆուլ (դարանֆիլ, դարաֆիլ)—շահո-  
գրամ. ցածր թփերով, երկարավուն փո-

դաձե բաժակով, կապտա-կարմրավուն  
թերթերով մի ծաղիկ է. <garanful:

Լսարանդակ (խարուանդայ, խարվանդայ)—  
իշավար. Նորիպան. <նպրս. xarbanda  
(պհլ. \*xarbandak):

Լսարբակ (խարպիզակ)—սեխ. պհլ. <xar-  
būzak (նպրս. xarbūza):

Լսարգան—տաղավար. <xarkāh:

Լսարգահրայ—վայրի թունավոր բույս է. <  
xarzahra:

Լսաւանդ—տիկին. Յ. Կարսուր ստուգարա-  
նում է xudāvand բառից:

Լսափշիկ—1. Եթովպացի. 2. հնդիկ. <պհլ.  
xabašik (արբ. habaši):

Լսարան—Թագավոր. <xāqān:

Լեխուկ—հիլ. <xirbūyā:

Լիար—վարունգ. <xiyār:

Լիշտ—նիզակ. <xīšī:

Լիշտուր—նիզակավոր:

Լիմիրէ (խամիրէ)—մրգանուշ (կոմպոտ). <  
xamira:

Լիշիլ—չորանալ. <xušk (տե'ս և խուշի):

Լիզակ—բոժոժ. պհլ. gōzak:

Լիցնայ (ղոնճայ)—կոկոն. <qonče (ստգր.  
Բ. Չուգասպանի):

Լիշակ—գատարկ հասկ. <պհլ. xōšak (նպրս.  
xōša):

Լիշկար (խոշկար)—1. խոշոր աղացած ալ-  
յուր. 2. նույնից թլված հաց. 3. մաղ,  
որով մաղում են խոշոր ալյուրը:

Լիստակ—ավատ. պայմանական հողատի-  
րություն. <պհլ. xvāstak (նպրս. xvasta):

Լիստակար—ավատառու. <պհլ. xvāstak-  
dār:

Լիսրով (ային)—արքայական. <xusrav:

Լիսրտակ—փոքր. մանր. <պհլ. xurtak (պրս.  
xurda):

Լիւլամ—ժառա. <γulām:

Լիւլ—վատ սովորություն. <xūy:

Լուցի—արյունոտ. արյունալի. <xūni:

Լուշկ—չոր. <xušk:

Լուշկիկ—չոր:

Լուշկի—ձիու չոր թրիք. <xuški:

Լոււամ—անթառամ. <xurram:

Լուլ—գուժակ. <նպրս. qōl:

Լուց (խուց, խան)—սեղան. <xōn, xān:

Լուշ—լավ. սիրուն. <xōš:

Լուշար—մրգաշուր. <xōš-āb:

Լուշար—սիրունի. <xōš-γar:

Լուլ—լավ. <xōb:

Լուրայ—1. Ինցգետին. 2. քաղցկեղ. <xaura,  
xoura:

Կակիթակ (կակիթակ)—ներկատու մի բույս  
է. <պհլ. \*kākžirak (նպրս. kāžira):



կան (դահ) — ժամանակ. <gāh:  
 կահ-կահ (կեահ-կեահ) — շուտ-շուտ:  
 (Յ)անգրահ — անժամանակ, անպատեհ ժամի:  
 Յանգահիլ — ուշանակ:  
 կաղամբ — kalam:  
 կամկար (կամակար) — ինքնակամ. ինքնիշ-  
 խան. աղատ. <պհլ. kāmākār (նպրս.  
 kāmgar):  
 կամկար — հանդիստ. հանելիորեն. <gām-  
 gār:  
 կանդանայ — պրաս (բույս). <gandāna:  
 կանկար — փշարույս է. <kaoḡar:  
 կաչաղակ <պհլ. \*kačalak (նպրս. kačala):  
 կապար — գետնատարած մի բույս. <kabar:  
 կապարս (կավարս) — գեղին կորեկ (դաս. հյ.  
 գաւարս). կա նպրս. gāvārs:  
 կարուան — կարավան. <նպրս. kārvān (պհլ.  
 kāravān):  
 կաֆ — փրփուր. kaī:  
 կեզ — թեք. <նպրս. kež, gež <թեք. կա և  
 ke], kā] <կեռ):  
 կեզնել — թեքել:  
 կերտան — վիզ. <gārdān:  
 կնճիթ (կնճութ, կանճութ, կնճիթ) — բնջութ  
 <kunčid, պհլ. kunčit):  
 կոկան (կոկամ) — մի տեսակ մանր սալոր.  
 <kūkām):  
 կոռոշ — եղջյուր. <gadāš  
 կուլ (դյուլ, կյուլ) — վարդ. ծաղիկ. <gul:  
 կուլակ — խոպուպ. մաղափուռ. նպրս. kila:  
 կուլանկուլիւն — վարդի մուրաբա. <gul-an-  
 gubīn):  
 կուղպակ — կրպակ. նպրս. kulpa, kurpa:  
 կուման — տե'ս Գուման:  
 կումկում — խոտեղեն ծաղիկ, հարսնուկի նը-  
 ման. <kūm-kūm):  
 կուցան — տե'ս գուցան:  
 կուանել — կարսոր կապում է girāhidan  
 <պատկերացնել, մտածել> բառի հետ:  
 կուղպակ — արհեստապետ. <պհլ. karug-pat:  
 կուսպ (կուտապ) — խմորեղեն՝ մեջը չամիչ,  
 ընկուղ. պհլ. kūtāb, պրս. kūdāb):

Համավար — հավասար. միակերպ. <hamvār:  
 Համիշա — միշտ. <նպրս. hamiša:  
 Համիշաբահար — աղոթ. <hamiša-bahār:  
 Համշիրակ — կաթնակից. սննդակից. <պհլ.  
 \*hamsīrak (նպրս. hamsira):  
 Համահ — ուղեկից. <hamrāh:  
 Հայրան — հմայված. <hayran:  
 Հավթարամ — յոթնոց. <haft <յոթ> -diram  
 <բրամ):  
 Հարակաշ — վարուցանքի ընկեր. կիրար. <  
 պհլ. \*hadakaš:  
 Հարգիլ — ամեն անգամ. <har-giz:

Հարեան — դրացի. <պհլ. \*hadavan):  
 Հաւածիպակ (հաւածիպա) — սնդույրատու  
 մի բույս. նպրս. havajuva:  
 Հաւան — սանդ. <hāvān):  
 Հեմիան — պայուսակ. քսակ. <hamyān:  
 Հեշմակ — դե. <պհլ. \*hešmak (դնդ. aešma):  
 Հէշ (հիշ) — ոչինչ բան. <heč, hič):  
 Հոշիբուակ — մի տեսակ խուսկ. <hoši <լավ>  
 և böyak <բուրոց):  
 Հու — թարախ. շարավախառն արյուն. <hū:  
 Հրուանդան — հրվանդան. <farāvand (ստղբ.  
 Յ. Կարստի):

Ղալամ-բրաշ — գրչաքիչ. <qalam-iraš:  
 Ղուսայ — մտատանջություն. <gosse (ստղբ.  
 Բ. Չուգասոյանի):  
 Ղրֆա (ղրբֆայ, զրբֆայ) — անմեռուկ, փրբ-  
 փրբեմ. <xurfa (արբ. xarfa):

Ճարմակ — պարզ. մաքուր. սպիտակ. հստակ.  
 պրս. čarma, պհլ. čermak:  
 Ճաւշանիու — երեսի գրան. <արբ. -պրս.  
 jaušan-i-rū:  
 Ճերկայ — շարք. կարդ. <čjārgā:  
 Ճիւան — ջահել. <čjivān):  
 Ճոկան — կեռագլուխ զավաղան. <čogān (պհլ.  
 čōpgān):  
 Ճուհի (ճոհի, ջուհի) — առակախոս. ծաղրա-  
 ծու. երգիծող. <čjuhi):  
 Ճուռակ — բաղե. <պհլ. čurak (նպրս. čurra):

Մամառաստան — գերեզմանոց. <նպրս. ma-  
 zārstān):  
 Մակար (մէկէր) — գուցե. <magar (māgār):  
 Մահդանակ — մի տեսակ ոլու. <māhūdāna):  
 Մայմուց — կապիկ. <meymūn):  
 Ման — կշիւ. <mān (պհլ. man):  
 Մաշ — մի տեսակ ոլու. <māš):  
 Մաշարայ — ածու. <նպրս. māšāra):  
 Մաւի — կապույտ. <արբ. պրս. māvi <երկ-  
 նագույն):  
 Մարանու — ծնեքիկ. <\*mārānūy):  
 Մարգանկուշ — անճարակ (խոտարույս). <  
 marzangōš):  
 Մարխ (մախր, մախրի) — փշատերև խիժա-  
 տու մի ծառ. <marx):  
 Մարմուշ (մարգիմուշ) — մկնդեղ. <marǧ-i-  
 mūš):  
 Մարվ — ալեորուկ. <marv):  
 Մարտակուշ — չափահաս. <նպրս. mardgōš):  
 Մարտասանկ (մարդասանկ, մարցանք,  
 մարձանք) — հանք. <murdāsang):  
 Մեխակ — mēxak):  
 Մեհրիկ — մրվանտակ (բույս). <mihrgiyāh):  
 Մեցրան — գրեստ. <nēmtan):

Մզկիթ (մաքիթ) — նպրս. mazgit (արբ. ար-տասանությամբ՝ masjid):  
Մէվզա — աղանդեր. < նպրս. mäivä (mivä) «մրդեղեն» և mäzä «բարիք, քաղցրեղեն»:  
Միլ — շյուղ. < mil:  
Մինայ — էմալ. < mina:  
Մուղալ — մոնղոլ. < նպրս. muḡal:  
Մուճակ — կոշիկ. < պհլ. mōčak (նպրս. mō-za):  
Մուճակալ (մուճկար) — կոշիկակար:

Յեմկար — խոստմնադիր. մուրհակ. < yādgar:

Նազ — ուն:  
Նախշիդեուար — անբան. < nagš-i-dēvār:  
Նախշիճիզար — նկարակերտ. < nagš-i-nigār:  
Նախմ (նաղմ) — ական. < naḡm:  
Նաղմել — ականել:  
Նաճակ — սակր. < նպրս. naġak, načak (թրք. naġaq, որից՝ հյ. Գաշախ, Գաճաղ):  
Նաճայ — խտր. կարպետ. < nayča:  
Նալուզ — նոր տարի. < nouruz:  
Նեմուզ — կեսօր. հարավ. < nimrōz:  
Ներն (նեհ, նիրհ, նիհ) — սակ. < nirx:  
Նիադիլ — նեղվել. անհանգստանալ. < niyāz:  
Նիզար (նիկեար) — նկար. պատկեր. < nigār:  
Նիշան — նշան. < նպրս. nišān:  
Նիշաստա (նշաստակ) — ցորենի օսլա. < ni-šāsta, պհլ. nišastak:  
Նշանայ — ակնարկ. < nišāna:  
Նշանայ տալ — ակնարկել:

Շալ — ձի:  
Շաու — ուրախ. < šād (պհլ. šāt):  
Շաուիկ — հաճույք, երջանկություն. < պհլ. šādik, šātiḥ, նպրս. šādi:  
Շար — շղարշ. < նպրս. šār:  
Շարփուշ — իշխանական խուլթ. < sarpuš:  
Շաւար (շահաւար) — զարդեղեն, զիսկ, մար-դարիտ. < šāhvār:  
Շարար. Ֆրուշ — շաքարավաճառ. < šakar-šārūš:  
Շաֆտալու (շէֆտալի) — զեղձ. < šaft-ālu «մանր զեղձ»:  
Շէշխանայ — վեցանկյուն շինություն. < šāš-xānā:  
Շէրիբամիկան — Բամիանի առյուծ (մահա-նուն է). < šer-i-Bāmiyān (ստգր. Մարկ-վարտի):  
Շիրայ — քաղցր նյութ. < šira:  
Շիրախու (շիրախուշկ, շէրիշտ) — մանա-նա. < šir-xušt, širxišt, šir-xušk:  
Շիրից — քաղցր. < širin:  
Շմար — գոգնոց. < šāmād:  
Շնկառ — (շանկիար) — իշու մառու (վարունգ-ազգի մի բույս է). < šengār, šangāl:  
282

Շորայ — բույս, որից կալաքար են պատրաս-տել. աղի ծաղիկ. < šorah, šūrah:

Ուկայն (ուզայն, ուզան) — այնուհետև. < հյ. ու և պրս. kāč, kāj (ստգր. Յ. Կարստի):  
Ումէկ (ոմէկ) — հույս. նպրս. umedgāh:  
Ումկելի — հուսադրել:  
Ուսրայ — վարպետ. < usta:  
Ուսիտ — բժիշկ. Կարսուր ուղղում է ուս-տատ և կապում պրս. ustād «բժիշկ, վարպետ» բառի հետ:  
Ուրդգան — բանականողի < ordugān:

Չահ — ջրհոր. < čāh (ստգր. Մ. Պոտուրյանի):  
Չամբար — շրջան. < čanbar, čambar:  
Չամբար առնուլ — շրջան անել:  
Չամշա (շերեփ) — փայտի շերեփ. < նպրս. čamča:  
Չանչուլ — եղունկ. ճանկ. < čančul:  
Չանկի — երգիչ. < նպրս. čangi:  
Չաշտայ (շաշտայ) — երաժշտական վեցլար-յա գործիք. < šašta:  
Չարեկ — քառորդ. čaryak:  
Չարխ — աղեղ. < նպրս. čarx:  
Չարխել — նետ արձակել:  
Չարխաուր — նետաձիգ, աղեղնավոր:  
Չարտախ — բարձր պահակակետ. < čārtaq:  
Չափար — ցանկապատ. < čapar:  
Չեխ (չախ) — հանդիմանություն. < čax:  
Չախել — հանդիմանել:  
Չեչ — շեղջ. < čāč:  
Չից — շին (դաս. ցեց). < čin:  
Չիցար — սոսի. < činār, čänār (ստգր. Յ. Կարստի):  
Չմուշկ — ոտնաման. < čamšāk:  
Չմուշկակար:  
Չուխայ — տղամարդու կրկար, թեթև վերար-կու. < čuxā:  
Չուբազ — վարդի մի տեսակ է. < čub-gaz:  
Պագրիկան (պագրիկան) — վաճառական. < bāzargān:  
Պալաշ — բարձ. < bālīs:  
Պահր (պահրէ) — մաս. < bahr, bahrā:  
Պատաշխանի — մի տեսակ ուղբին. < badax-šāni:  
Պատմախ — ազնիվ մի քար. < badaxši:  
Պարապար — հավասար. < barabar:  
Պարպար — սափրիչ. < barbar (bārbār), իտալ. barbieri:  
Պաւզ (պոզ) — գորշ. < boz:  
Պաւզիտան (պուզիտան) — բույս է. տղայի խոտ. < būzidan:  
Պիլի — մանր դրամ. < pāl և հյ. -իկ:  
Պեհման (պահման, բահման) — իշաքեղ. < bahman (bāhmān):

Պեշայ—լաշակ. <piša:  
 Պեխալատ—անխալ. <պրս. be-արբ Կալա:  
 Պեկուման—անսպասելի. անկասկած. <be-gumān:  
 Պեհսապ—անթիվ. <be-hisab:  
 Պեմունաթ—առանց պարտավորութեան. <be-munnat:  
 Պեմուրատ—անմուրազ. <be-mūrād:  
 Պիսակ—մանր պալարներ մաշկի վրա. <պհլ. pēsak:  
 Պիսկուքիւն—մաշկի պիսակահարում:  
 Պիստ—տե՛ս բուստ:  
 Պլատիկ (բալատիկին)—գաղազան <balāti-gin:  
 Պլուզ—կարճ հագուստ. վերնաշապիկ. <նպրս. balūz:  
 Պարայ—բորակ. <bōra (արբ. būraq):  
 Պրիկ—պրիկ—թարթում. <նպրս. pirīng:  
 Ջասուս—մատնիչ. <ĵāsūs, ĵessās:  
 Ջոկ—առանձին. անջատ. խուււր. <պհլ. \*ĵok (նպրս. ĵox):  
 Ջոկելի—առանձնացնել:  
 Ջուհակ—ոստայնագործ. <ĵulāhak:  
 Ջուխտ—գույգ. <պհլ. ĵuxt (պրս. ĵuft):

Ռահ—ճանապարհ. <rah:  
 Ռահական—ճամփորդական:  
 Ռահակից—ուղեկից:  
 Ռահել, Ռահրդել—ճամփորդել:  
 Ռահվար—արագագնաց (ձի). <rahvār:  
 Ռանջ (ըռանջ)—գծավարութեան. <ranĵ:  
 Ռանջով—գծավարութեան:  
 Ռանջար (ռանջար)—աշխատավոր. հողագործ. <ranĵ-bar:  
 Ռեզ—խոնավ. ջրոտ. <riz շրջանած):  
 Ռեմեկ—կոկիչ, տաշիչ. <randā:  
 Ռեմեկել—տաշել, կոկել:

Սազել—սարքել. գործիքը լաքել. <sāzidan:  
 Սալար (սաղար)—գորավար. <salār:  
 Սայո—պարզ, ջինջ օր. <sāda (սոգր. Յ. Կարստի):  
 Սանկ—կշռաքար. ծանրութուն. <sang, sāng:  
 Սատակ—պարզ. <sāda (արբ. արտասանութեան) sādā] <հյ. սատակ, սատէճ):  
 Սարայ—սրահ. <sarāy:  
 Սարխոշ—գինով. <sar-xoš:  
 Սարկարդան (սարկարտան, սերկէրտէն)—անվճռական. <sar-gardān, sār-gārdēn:  
 Սարթամ (սրտէմ, սրտիմ)—մինինգիտ. <sar-sām:  
 Սարքուլայ (սարուլա)—դրակ. <նպրս. sar-kūlāh:

Սեկեր—օդ. կոճակ. <sagak:  
 Սեյլան—ազնիվ քար. <seylān:  
 Սորակալ—ձիապան. այս բառը, որ համարվել է անստույգ, ն. Բյուզանդացին ուղղում է՝ ստորա-կալ. <պհլ. stōr ճձի> (զնդ. staora, պրս. sutūr, ustūr) և հյ. կալ բազազրութեամբ:  
 Սուզակ—հագուստի վրա կարված զրպան. նպրս. sūza, sūzāni:  
 Սուլուլ—սուր մաս. ծայր. <sulul:  
 Սպարիշ—տոն. հանգես. <sipārtis:  
 Սպեթրոյ—սպիտակ մետաղ. կլայեկ. <sāpēd (sepid) շոպիտակ>—rōy ճձիտաղ):  
 Սրահանգ—սպա. <sarhang:  
 Սրիկոն (սղիկոն)—ներկ է. <նպրս. sariqūn, seriqūn, seliqun:

Վալայ—հագուստ. շոր. <vālā:  
 Վանիպ—շափ է. նպրս. vaĵab:  
 Վասմա—բասմա. <vasma (basma):  
 Վսնց (վգնց)—1. տուգանք. 2. վնաս. 3. վարձք. <զնդ. vīzyāna:  
 Վգնցիկիլ—վնասվել:  
 Վստահի—1. պարզ. մաքուր. 2. անշուշտ <պհլ. vistāxv (նպրս. gustāx):

Տապահակ—մսի մի խորտիկ. նպրս. tabāha:  
 Նայերեն բառաձեք պահլավերենից պիտի լինի՝ \*tabāhak, Կա և արբ. tabāhaĵa:  
 Տապաստ—մոլորոր. Կարսուր կապում է tāb շոպաչ, tabāsidan շոպաչի բառերի հետ:  
 Տապաստ—գորգ. <tabasta:  
 Տաստան (դաստան, դէստան)—հեքիաթ. առակ. <dāstān:  
 Տատայ—դաստիարակ. <նպրս. dādā (հուս. татъ):  
 Տարազուկ—կենդանակերպ կշեռք. <պհլ. tarāzūk (նպրս. tarāzu):  
 Տափուր (տեփուր, տեփրիչ)—մատուցարան. ափս. <tafar, tāfar:  
 Տեար (տիվտար)—զեկ ծառ. <div-dār:  
 Տերտ (դարդ)—վիշտ. <նպրս. dārd (dard):  
 Տիլպեր—սրտի բարեկեամ. սիբիլի. <dil-bār:  
 Տիմար (անար)—զրամի միավոր է. <dinār:  
 Տլոն—հոմանի. <նպրս. dil-hūn (xūn):  
 Տրիֆիլ (թրիֆիլ)—եռաշերտ. եռածալ. <նպրս. trīfal:  
 Տոստոզանի (տոստոջանի)—լիքը բաժակ. <dost-kām:  
 Բովան (բեվան)—զնացող. <ravān:  
 Փաքերակ (փեթերակ)—փորձանք. <պհլ. patyārak, պրս. patyāra:

Փարերակիլ—*փորձանքի գալ*;  
 Փալանցիկ—*կառքի ձի*. Չորի. <palāni;  
 Փայիտ—*պիղծ*. գոեհիկ. <pālit;  
 Փայփուսի—*ոտքի մոխիր*. <pai-būs;  
 Փանգեհիր—*հակաթույն*. <pādzähr, pāzähr;  
 Փաշայ—*ազգր*. <pāčā;  
 Փանչին—*նպատակ*. <parčīn;  
 Փասպան—*թիկնապան*. <pāsban;  
 Փատիշան—*(փաթշան)*—*արքա* <pādsāh;  
 Փարդայ—*փայլ*. շուք. <pardāh;  
 Փարտայ—*վարագույր*. <parda;  
 Փեծատ—*խեժ է*. <pež-zad;  
 Փեցեհիր—*պատուհան*. panjara (pānjār);  
 Փեշ—*բաշ*. <pāš;  
 Փեշակար—*արվեստագետ*. գեղագետ. նկարիչ. <peša-gar;  
 Փեշաւոր—*նշանավոր*. նշանակալից. աչքի ընկնող. <pešvar;  
 Փեշքեշ—*ձրի*. <peškāš;  
 Փնդուկ—*(փնտուկ, ֆնդուկ, ֆունդուկ)*—*պանդուկ*. <նպրս. funduk;  
 Փոշաման—*(փոշիման)*—*զղջացած*. <pašimān;  
 փոշամրնիլ—*զղջալ*;

Փանրիպար—*(քարիպար, քարապար, քարուպայ)*—*սաթ*. նպրս. kahrubā;  
 Փանչալ—*քարծ*. նպրս. kunjār;  
 Փարգոն—*արքա*. <kārkun (ստգր. Յ. Կարստի);  
 Փարժանկ—*խեցգետին*. <xārčang;  
 Փեման—*աղեղ*. կեռիկ. <kemān;  
 Փեմար—*նոր ամիս*. նորած լուսին. <նպրս. kamar;  
 Փեշկե (քաշքա)—*բայց*. այնուամենայնիվ. <նպրս. kāšk, kāškī;  
 Փեյտխուտայ—*մեծավոր*. <ketxudāy;  
 Փեոշայ—*անկյուն*. <kuša;  
 Փնփուշ—*ձիու ծածկոց*. <kūnpūš;  
 Փուսել—*հրմշակել*. <kūs;  
 Փուֆտայ—*կոլոլակ*. <kūfta;  
 Ֆարման—*հրաման*. <farmān;  
 Ֆեմ (Ֆանտ, Ֆանդ)—*հնարք*. խորամանկուկյուն. <fānd;  
 Ֆրետու—*ձիու հիվանդուկյուն է*. <fundā;  
 Ֆիդան—*բողբոջ*. լաց. ողբ. <fuṭān (բրբ. (figān);  
 Ֆրիար—*ողբ*. <faryād;

ԹՈՒՐԿԱԿԱՆ ԲՍՈՒՆՐԻ ՑԱՆԿ

Ազագուն—*ժանիք*. սեղանատամ. թրք. azu;  
 Ազմիշ (իհնիլ)—*կատաղել*. <azmiš «կատաղած» (azmak «կատաղել»);  
 Աթաբակ—*Թագավորահայր*. կառավարիչ. <չաղաթ. atabeg, արևել. թրք. atabeg;  
 Աթաբակուրից—*իշխանուկյուն*;  
 Ալոն—*վայրի մանր պտուղ է, կարմրագույն*. <արևել. թրք. aluñ;  
 Ալշի—*գիպս*. <alçā;  
 Աղալ—*փարախ*. <ağal;  
 Աղարամայ (ախթարմա, ախտարմա, աղթամա)—*1. կաթոլիկացած հայ*. 2. խժամուժ. 3. խառնիճաղանճ. <թրք. aḡtarma «փոխադրուկյուն» բառից;  
 Աղլանկ—*ոչխարի համար գանձվող հարկ*. <թրք. aḡalhaqq «փարախի իրավունք» (թրք. aḡal «փարախ» և արբ. haqq «իրավունք»);  
 Այախ—*կավաթ*. <ayaq;  
 Այլդան (էլդան)—*արքայիկ*. վասալ. Թագավոր. <թթր. eyl-yan (eyl «երկիր. ցեղ»-յան «իշխան»);  
 Անուզ—*կղմուխ*. <anduz;  
 Ապուշ—*պիժակ*. <abraš, ebraš;  
 Ասլիխ (հասլախ, հասլեխ, յասլեխ)—*զրուկյուն*. <թրք. yarlaq (թրք. yar «չուր, հայտարարուկյուն»);

Ասախ (հասախ, յասախ)—*օրենք*. <թթր. yasaq «օրենք», սուփ. թրք. yasaḡ «արգելված»;  
 Անասախ—*անօրենք*. ապօրինի;  
 Ասլան—*առյուծ*. թրք. թթր. aslan;  
 Ասկար—*զինվոր*. äskār;  
 Արզուչի—*աղբսարկու*. <arzaçi (aržəmag «ցանկանալ») <արբ. «ariza «խնդիրք. աղբսագիր»;  
 Արխ—*առու*. <թթր. arx, սուփ. թրք. arḡ;  
 Արդուչի—*ղատավոր*. <թթր. yarçuçi;  
 Արտուն—*զիհի*. <թթր. artuñ, թրք. ardəñ;  
 Արքայուն (արքաուն)—*բրեստոնյա*. <մոնղ. arkaun, ärkävün;  
 Ազան—*երգիչ*. <արևել. թրք. avzan;  
 Ատայ (օղա, էօղա)—*սենյակ*. <թրք. oda;  
 Արթախ (օրթաղ)—*գործի ընկեր*. <ortaḡ, ortaḡ;  
 Աֆեմտի (ափէնտի)—*պարոն* <թրք. efendi, äfändi;  
 Բաբան—*պարիսպ քանդող մեքենա*. <? Բաբանքար;  
 Բագ—*բերանի կապ*. <թրք. baḡ «կապ» (ստգր. Յ. Կարստի);  
 Բալարան—*Թմբուկ*. <թրք. balaban;

Բալիշ—զրամ է. <մոնղ. bališ, արևել. Թրք. bališ.

Բախադուռ (բահադուր, պահատուր)—բաջ, պատերազմող. <Թրք. bahadur, pahatur:

Բաղչէ—պարտեզ. <բալչե (նպրո. bāyčā):

Բարիշել ( պարբշել ) — հաշմփել. < bariš «հաշտ» (barəšmag «հաշտփել»):

Բարուք—վառող. <barut, barət:

Բարայ (բուքա, բոքա)—բմբիշ. <Թրք. bükä:

Բեղ—բնչացք. <արևել. Թրք. շաղաթ. biç, զվո. bəyəç:

Բեղաւոր:

Բեք (բէք, բեոք)—մեծ. <böyük «մեծ», pek «հույժ»:

Բէկ—իշխան. <beg, bey:

Բէկ-խաբուն—իշխանուհի, պարոնուհի. < beg hatun (beg xatun):

Բիդիկշի—զրազիր. <Թրք. bitikçi (bitik «զիր»): Նոր Բայազետի բարբառում՝ բիթիկ, կարճո բարբառում՝ փիթիկ «կախարդական զիր»:

Բիբուն—բուլոր. <bütün:

Բիմ—պոռնկորդի. <pič, biĭ, phiĭ «ավելորդ», «պոռնկորդ»:

Բուլուխ պաշի—խմբապետ.—bölük-başə:

Բուխերիկ—վառարան. <buxari:

Բուդայ—ցուլ. <buç:

Բրիցն—պղինձ. <pirinç:

Գէիմ—հագուստ. <giyim, kiyim:

Դրզըլէլմայ—չոտմ. բառացի՝ կարմիր խընձոր. <Թրք. güzüil-Alma (զվո. güzüil-eima):

Դաղ—սառ. լեռ. <daç, tag:

Դաղայ (Թախլա)—զուխկոնծի. <taqla (զվո. thaçla):

Դամուր-տաշ (դամուրտաշ)—երկաթաքար. <demirtaş (demir «երկաթ»—taş «քար»):

Դուման—էրիշտա. <tutmaĭ, tudmaĭ:

Դում—հարբուխ. Թրք. tumav, արևել. Թրք. tımao. տե՛ս և Տմաղուց:

Դմոտ—հարբուխ ունեցող:

Դուրլու-դուրլու (Թիւրլու-Թիւրլու)—տեսակ-տեսակ. <Թրք. dürlü, durlu «տեսակ»:

Դուսաղ—աղմազեքի. <Թրք. tutsaq:

Դոստաղ—մեծ գավաթ. շոնիճ. պղնձե թաս. փոքր փայտե գավաթ <արև. Թրք. tostaqan, tostayan:

Եարաղ (եաթախ, յաթաղ, յաթախ)—անկողին. <yaṭaq:

Եաղուխ—Թաշկինակ. գլխաշոր. <Թրք. aylux, yaqləq:

Եագի—տարածութուն. հարթութուն. մակերես <Թրք. yazə, yazü «հարթափայր»:

Եամաղ—շքախուժք. ջոկատ. <yamaq:

Եախու—տաքացնող, այրող. <yaçə:

Եարար—օգտակար. <yarar:

Եարայ—վերք. <yara:

Եարալու—վերքոտ <yaralə:

Ենիշարի (ենիշեցի, ենզիշարի)—Թուրքահան հատուկ զորք. <yeni-çeri «նոր զորք»:

Ելազ (ելակ)—գետնամորի. <Թրք. yilak (Թրք. jilak, çilek, çileng):

Ելասար—չղջիկ. <yerasa:

Ելշի (էլշի)—պատգամավոր. դեսպան. <Թրք. ilçi, Թրք. elçi:

Ելթան (էլթան)—իշխան. պետ. նավապետ. <Թրք. elqan:

Եմիշ (եմիշ)—սեխ. <Թրք. yemiş:

Երեմուկ—խոշոր ալյուր. <Թրք. irmik:

Երշիկ (երեշիկ, երիշեցի) — երշիկ. <զվո. Թրք. erişgi, irişgink:

Եոդան (եոդան, յոդան)—վերմակ. <Թրք. yorçan:

Չաղառ—որսի շուն. <zaçar:

Չանպախ (զամպախ)—սպիտակ շուշան. < zanbaç, zambax:

Չանկու—ասպանդակ. <üzengi:

Չերտայ—կզաքիս. <zerdave:

Չեջիլ—շղթա. zenjil:

Չոդալ—հոն. <Թրք. zoçal:

Չոդալեցի—հոնի ծառ:

Թաթուլ (Թաթուլա)—արջընկույզ. <thathula:

Թալան—կողոպուտ. <Թրք. talan:

Թալեցի—կողոպուտի (Թրք. talamaç):

Թաղար—1. աման. 2. հարկ. <չաղաթ. taçar:

Թանկա—զրամ է. <չաղաթ. tanka:

Թալի—նարդի. <Թրք. tavla, tavli:

Թափսի (Թէփսի)—մատուցարան <thepsi, thäpsi:

Թէմէլ—հիմք. <tämäl:

Թէմուխ—անուշահոտութուն. < tensux:

Թէֆեկ—դափնի. <defne:

Թէք (Թաք)—միայնակ. կենտ. <tek, täk:

Թուանկ—հրացան. <tufank:

Թոզախ—բույսի աղվամազ. <tozaç:

Թուրուն (Թուրոյն, Թոյթոյն)—ծխախոտ. <tütün:

Թուման—զամառ. <tuman:

Թոզ—փոշի. <toz:

Թօփ—*Թնդանոթ* <thop, thup;  
 Թօփալախ—*բույս է.* <topaləq;  
 Իամ (յամ) — *իջևանատեր. ժամապահ.* <  
 ԹԹր. yam;  
 Իթալիու—*Թոչուն է. արեկ.* Թրթ. itelgü;  
 Իլդար—*սրբնթաց.* <ilgar;  
 Իկտիշ—*խառնածին ձի.* <Թրթ. igdiš;  
 Իւզերլիկ—*փեղեկ.* <Թրթ. üzerlik;  
 Լալլալու—*մաշկահան արված, բոված սի-*  
*սեռ.* <Թրթ. läbläbî, leblebi;  
 Լարարթ—*ազնիվ բար է.* <lakerda;  
 Խաբ—*աման.* <qab, çab;  
 Ի խաբ տալ—*կաթը որոշյալ ամանով*  
*փոխ տալ;*  
 Խարդան—*պատվավոր հագուստ.* <Թրթ. qaf-  
 tan;  
 Խարուն—*ազնիվ տիկին.* <xatun;  
 Խալան—*թաթարական հարկ.* <qalan;  
 Խալբալանթ (խըլլալիկ, խարբալուժ, խալ-  
 բալուժն)—*փորձանք. աղետ.* <Թրթ. xar-  
 bal, xalbaləq;  
 Խալբալի—*ոչնչացնել. փշացնել;*  
 Խաղա—*մուշկի յուղ.* <qalya;  
 Խամանիկ (ղիմանիք, զիմանի)—*տիկնիկ.* <  
 qaimaj, qymaj;  
 Խամիշ—*եղեգ.* <Թրթ. çamiš, çaməš;  
 Խամութ—*ձիու յուժ.* <xamut, xamuth;  
 Խանում (հանում)—*xanəm, hanəm;*  
 Խանտալայ—*մուկ.* <ԹԹր. qandala;  
 Խաշլամայ—*խաշու.* <xaşlama;  
 Խառկայ—*ազոպ.* <qarqa, çarça;  
 Խասիջու—*տերունի.* <xassinju (արթ. xass  
 և Թրթ. inju *տերունի*);  
 Խաւնայ (խօձայ)—*ուսուցիչ.* <xoña;  
 Խափալը—*ոչխարի հարկ.* <ԹԹր. qubjur;  
 Խզրլլալաշ (չզըլլաշ, զզրաշ)—*ավազակ. Թա-*  
*լանչի. զինվոր.* <qəzəlbaš, çəzəlbaš;  
 Խոզակ—*նոճիկ պտուղ.* <qozaq;  
 Խուրի (զուրի, կուրի)—*տուփ.* <quthu,  
 çuthu;  
 Խուտուզ—*կզպի մորթի.* <Թրթ. ԹԹր.  
 qundus;  
 Խուշակ—*զոտի* <qušaq, çušaç;  
 Խոլ—*ուզմամթերք.* <qol (<պրս. qol *պու-*  
*մակ*);  
 Ծանտրմակ—*ճոճ.* <saldərmak;  
 Կատրաղա—*մի տեսակ նավակ.* <qadərga;  
 Կեաւոր—*անհավատ* <gyawur;  
 Կէնն—*երթասարդ.* <gen);  
 Կէշկէկ (քէշկէկ)—*մի տեսակ խաշի* <keš-  
 gek, geškek;

Կէշիկ—*պահակ.* <ԹԹր. keşik, kəşik;  
 Կէօքս—*կուրծք.* <goks;  
 Կիլալայա—*ձեռքերը կապելու շղթա.* <ke-  
 lepçe (<արթ. kelläb);  
 Կորրու—*առանց կշեկու վաճառք.* <Թրթ.  
 götürü;  
 Կորայ (կօրայ)—*համեմատ.* <göre;  
 Կուկնար—*փիճի (ծառք).* <köknar;  
 Կուհազ—*մուգ կարմիր. գորշակարմիր.* <  
 güwes (արթ. kawāzly);  
 Կրիտ—*խոտեղեն մի բույս.* <ğirid;  
 Կօլ (գոլ)—*լիճ. ջրափոս.* <göl;  
 Կօմրուկ—*հարկ է.* <gömrük, gümrük;  
 Կօմրուկչի—*հարկահավաք.* <gömrükçi;  
 Կօշիկ (քոշիկ)—*գնալ. հեռանալ. տեղից-տեղ*  
*փոխադրվել. արշավել.* <göçmek;

Հայվայ—*սերկեկի* <aiwa;  
 Հէքիմպաշի—*բժշկապետ.* <արթ. hakim և  
 Թրթ. başi;

Ղարեթան—*կապիտան.* <Թրթ. çapudan;  
 Ղադար (ղաթար)—*չափ.* <çəder;  
 Ղամիշ—*տե՛ս Խամիշ;*  
 Ղան—*իշխան.* <ԹԹր. çan, çan;  
 Ղայեղ—*նավակ.* <çayəç;  
 Ղանարայ—*սպանդանոց.* <qanara;  
 Ղատիֆայ—*թալշածաղիկ.* <qadife;  
 Ղարանֆիլի—*մեխակ.* <qaranfil;  
 Ղարալայու—*բույս է.* <qaraçalə;  
 Ղարխու—*անիծյալ.* <ԹԹր. çarçu;  
 Ղարփուզ—*ձմերուկ.* <qarpuz;  
 Ղզրաշ—*տե՛ս Խզրլլալաշ;*  
 Ղնի—*վայրի մանանիխ.* <qəçə;  
 Ղմուզ—*ձիու կաթով բմպիլիք.* <չղթ. çimiz;  
 Ղուլ—*ստրուկ. ծառ.* <çul;  
 Ղոււմայ—*ապօրեի կին, հարճ.* <quma;  
 Ղուռութայ—*ժողով.* <ԹԹր. çurultay;

Ճէլալ (ջէլալ)—*լմբոստ. ավազակ.* <jelal;  
 Ճէլալի—*ավազակապետ. ապստամբ.* <Jela-  
 lə;  
 Ճիմ—*պուղձ. խոտախառն հողակոշտ.* <չղթ.  
 çim;  
 Ճղայ—*փուփուլ.* <Jəçay;  
 Ճմրի—*զձուձ.* <Jimri;  
 Ճոք—*ծայր.* <ԹԹր. Jol;  
 Ճոք—*կտրք.* <Jit;  
 Ճոք անել—*կտրել;*

Մալ—*տուրք.* <ԹԹր. mal;  
 Մարեայ—*թարախ.* <matya;  
 Մանգուլ—*պաշտոնանկ.* <mänzəl;  
 Մանօշայ—*բույս է.* <Թրթ. mənəşe;  
 Մասուրայ—*մաքոք.* <Թրթ. masura;

Մեռանի (մրտուհի)—կեղտոտել: <murdarlamak:

Մեռաուրիւն (մրտութիւն) — կեղտոտութիւն:

Մուշկալա—պատմանագիր: <müşelgya:

Մուտաւ—կեղտոտ: <murdar:

Մրկոր—Ամերիկոյի Սմասիացիին զուգահեռ է դնուած արկորակ, որ անծանոթ բուսանուն է: Ենթադրում է նաև, թէ մրկոր թրք. mürver «թանթրվենի» բառն է (տե՛ս Հայ. բուս., 610):

Յաղել—ցանցով բռնել: <թրք. ay(aq) eցանց բառից:

Յետեկ—ձի: <թրք. yedek:

Յուտ (յոտ)—հալվեի փայտը: <թրք. öd:

Նանադ—սահր: <nañaq (պրս. ձևը՝ nañak):

Նոյից—մոտոյի իշխան: <մոնղ. noyan (չին. lao-ye):

Նօղու—աղանդիր: <noqlə (արբ. nuql):

Շաքր (շաթր)—տուջաղանց: <şatər:

Շարմաշուրայ—բաղեղ: <şarmaşəq:

Շէխաբօր—կանչ. երգ. <şaqyr, çaqyr, şaqəryər «կանչել, երգել, զուլ»:

Շիրիւն—նստարան: <թթր.

Շինկ—մեկ բուսորդ կիլոգրամ: <թրք. şinik (նհուն. σινίξ):

Ռեախ (օճախ, օջախ)—խարույկ: <oñaq:

Ռտախ (օթախ, օթաղ, օտաղ)—սենյակ. սրահ: <otaq, othaq, odaq:

Ռրդու (օրդու, ուրտու)—բանակ: <թրք. ordə, urdu, ordu, orda:

Ռւզում—քիշմիշ: <üzüm:

Ռւկուլ(ի)—վուշ: <üşkül:

Չալել—նվազել: <çalmak:

Չալղա—փարթամ: <çaqla, çayla, çaqala:

Չալղա կապել—փարթամորեն կանաչել:

Չալփարայ—ձեռքի փոքրիկ կիսաթմբուկ: <çalpara (պրս. çār <çahār-pāra):

Չախմախ—հրահան: <çaqmaq:

Չախու—փոքրիկ դանակ: <çaqə:

Չախուեկ, չախեկ:

Չախչախ—չխչխկիկ. մուրհիկ. ջրաղացի մի մասնիկ: <çaqəçaq «մուրհիկ» <նպրս. çäkäçäk):

Չաղար—խաժակն: <çaqər:

Չայիր—չիման—մարդագետին: <çayər çämän:

Չաշուտ—միաբան: <çaşud:

Չավուշ—ժանդարմ: <թրք. çavuş:

Չատր(ժաղիկ)—վրանածաղիկ: <թրք. çädər:

Չարչի—մանրավաճառ: <թրք. çärçi:

Չարպէլեր—սպիտակ շղարշ: <çar-be-çehr:

Չարուշ—մուրհ: <çekuş, çäkhiç:

Չակուրկայ—մորեխ: <çekirge:

Չեխ—շուն վանելու. ձայնարկութիւն: <չօզ «գո՛ւրս ել»:

Չեկ—աղետ. տանջանք. բարկութիւն: <չօզ (<պրս. çaxidan):

Չէլէպի—պարոն: <çelebi:

Չէքիրտէկ—արմատ. հիմք. կորիզ. էութիւն. ոսկոր. սերմ: <çekirdek:

Չէրուշեր—հարստահարութիւն: <չօզ բարից:

Չիզիտամ (չքտամ)—ձնծաղիկի մի տեսակը, որ և՛ գարնանը, և՛ աշնանն է ծաղկում: <չիզdim:

Չիք—չիթ (կտորը): <çit:

Չոքել—ձնիկ բալ: <çökmeç:

Չուլ (Չուլ)—հնամաշ շոր, հագուստ: <çül:

Չում—հոն: <թթր. çum:

Չքնուր—ճակնդեղ: <çukundur:

Չօլ—անապատ. տափաստան. դատարկ տեղ: <çöi:

Չօլ առնել—անապատի վերածել:

Չօնուխ—երեսա: <çöñuq, çöñuq:

Չօրոիկ (չորտիկ)—ծառ է: <çordik:

Պագմազ (պէքմէզ)—դոշար: <bekmez:

Պալ—մեղր: <bal:

Պայրախ—դրոշակ: <balraq:

Պայրախտար—դրոշակիր:

Պասխաղ — ընդհանուր հրամանատար: <թթր. başboy:

Պատեայ—բաժակ. գինու գավաթ. արեւել. թրք. badya «սպուրի պնակ», կազանի թթր. badyan «փայտի սկուտեղ»:

Պէհ—կանխավճար: <pey, beh:

Պկամ(բաղամ)—խիժատու մի ծառ: <baqam:

Պուղուն-պուղուն—կցմցուկ. արեւել. թրք. buçun «հոդ», «ծալ», օսմ. թրք. boçun-boçun «կապ-կապ», «ծալ-ծալ»:

Պուրղու (բուրղու)—շաղափ: <buçun:

Պօխտախ—թաթար կանանց գլխարկ: <թթր. boytaq:

Պօխտախուր—գլխարկավոր:

Պօյ (բոյ)—հասակ. երկարութիւն: <boy:

Պօյիկ (բօյիկ):

Պօյա—գույն. ներկ: <boya:

Պօյանի—ներկարար: <boyañə:

Չարան—թաթար խանի որդի: <?

Չան գիլում—ծաղկահավաքի տոն: <Jan-gülüm (պրս. Jan gül, թրք. güllum «իմ ծաղիկ»):

Չէք (չէք)—գերազանց. շատ: <çok, çoq:

Ջիլայ—սանձ. <արևել. թրք. Շօlaw:  
Ջիտայ—երկարութեան չափ է. <Jida:  
Ջլուու—նվեր. <člǫdǫ:

Ռոնվար—քող. <urpāk:

Սալզ (սալթ)—միայն. <salt:

Սախրն (զաղրն, սախլըն)—ուշադրութուն.

<saqən, saʒən, saxən:

Սախրն կենալ—զգույշ լինել. ուշադիր լինել:

Սադ—ծանծաղ. <սօչ:

Սադիսայ—առողջ. հանգիստ. <saqsə:

Սադսրզան—հաշտակ. <saqsəʒan:

Սայայ—պարզ. անզարդ. <saya:

Սանջախ—զրոշակ. <sanjaq:

Սարուխ (սարլի)—փաթաթոց. <sarəq:

Սապղար—հաշմանդամ. <թթր. ?:

Սար (սրու)—ջնարակ. <թթր. sər:

Սարել—ջնարակել:

Սեկուտ—ուռի. <šögüd:

Սրզու—խցանակադնի. <sizu:

Սրզու—հողատու. ոսկրացավ. ջրակծկում.

<səzi, səzə:

Սրզուլու—ցավոտ. <səzə-lu:

Սրմա (սրմայ)—ոսկեջուր. ոսկեթել. <sər-  
ma:

Սինկիր—ջիզ. մկան. <sinjir, sinir:

Սկեռլատ—ընտիր կերպաս. <iskerlet:

Սղամիշ—պարզ. <թթր. siurjamiš:

Սղմիլ—պարունակվել. <səymak:

Սնփարայ—փորձաքար. <sənpara:

Սոն (սոն)—ելք. վերջ. <šon:

Սուբայ—միայն. —subay:

Սուլու—հաճար. <թթր. sulu:

Սունկար—սպունգ. <sünger:

Սուչ—սխալ. հանցանք. <suč:

Սուպաշու—միլպեռ. <թթր. su-bašə:

Սուս—լուռ. <sus:

Սուս լինել—լռել:

Սուսար—կուղ (կենդանին). <sansar:

Սուրզուն (սրւրզուն)—աքոսք. <sürgün:

Սուրսար—հարկ է. <sürsät:

Վարսամ(ան)—սուսամբար. <թթր. marse-  
mani:

Վոյվոտայ—հարկահավաք. <voyvoda:

Տալ—հաստ ճյուղ. <dal:

Տալիկ:

Տալլայ—ալիք. <dalya:

Տալլայ առնուլ—ալիք սալ. հուղվել:

Տամլա—զրոշմ. <թթր. tamya:

Տաղմանի—զրոշմահար. <չաղաթ. tamyačə:

Տառ—նեղախրտ. <dar, tar:

Տառուղայ—ոստիկանապետ. <չաղաթ. da-  
ruya:

Տերփու—խարոց. <dörpi, dörophü:

Տիզմիշ (այնել)—ուղղել, կարգավորել. թթր.

dizi «կարգ», düz «ուղղել», düzmiš

«ուղղել»:

Տղու—հարկ է. <թթր. turyu:

Տուրղայ—թուրքական զինանշան. <tuɾa:

Տուզ—աղ. <tuz:

Տուզու—աղի. <tuzlu:

Տմաղուն—հարբուխ. <թթր. dumayu:

Տոպրակ—պարկ. <թթր. tubrak:

Տրմախ—փոցի. <թթր. tərmaç:

Փալիտ—կակաղ. <phelik:

Փախլալայ (փաքլալա) — մեղրաբլիթ. <  
baktlava, baqlava:

Փայիզայ—թաթարական պատվո սախտակ.  
չին. pai-tseu:

Փարայ—փող. <պրս. թթր. phara:

Փարանիկ—թուրք կնոջ շրջագրեստ. <feraje

Փերում—լաստ. <pereme:

Փիրթախ (բրթախ)—եղինջագրի մի խոտա-  
բույս. ալպակխոտ. <putraq:

Փիլթայ—պատրուկ. <չաղաթ. pilla:

Փուշտ—ցոփ. շվայտ. լկտի <pust, bust:

Փուշտայ—կույտ. <պրս. թթր. pušta:

Քազրան—կաթսա. <qazran:

Քալամաչի—թարգմանող. <թթր. kälimäçi:

Քարխուլի—ծամապահ. <karakol, karawul:

Քեշ—չորթան. <kheš:

Քեշիկ—պահակ. <թթր. kheşik:

Քեսիկթոյ—զինված դնապան. <թթր. khe-  
şik:

Քեքիկ—կաքավ. <khekhlik:

Քոշկ—պարտեզով տուն. դղյակ. <khöšk:

Քոթ—արմատ. <khökh:

Օթաղայ—ցցունք. <չաղաթ. othaɾa:

Օսր—երկաթե սալ. <örs:

Օտա—սենյակ. <oda:

Օտաղ—տե՛ս Ոտախ:

Օրղու—տե՛ս Որղու:

#### ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Արանասիա—անթառամ ծաղիկ. <ἀθανασία:

Արեթայ—ալյուրի կամ ցորենի ճաշ. <ἀρήρα:

Ալպայսուր—1. թափանցիկ մառմառ. 2.

նույնից պատրաստված անթ. <ἀλά-  
βαστρον(-ς):

Ակուլուք (ակողուլիթ)—ուղեկից. հետևորդ. օգ-  
նական. <ἀκόλουθος:



Աղարիկոց (ախարիկոն, խարիկոն, զարի-  
կոն)—մի տեսակ սունի. <αγαρίκον:  
Աղբեկ—տուղտ. <άλθαία:  
Աղմա (եղամա)—բանջար է. <άλμα:  
Աղկեպ (ծիշտը՝ աղկէփ)—եղինջ. <ακαλήφτι  
սոφρ. չ. Աճառյանի):  
Աղմուր—աղաջրով համեմունք. <άλμορίς:  
Աղուցիտ(ից)—զինվոր. <αχόνιτον:  
Ամառաանքոս—մանրագոր. <αβρότανον  
(սոփր. Յ. Կարստի):  
Այաս—նախահանգիստ. <Αϊγίας (սոփր.  
Յ. Կարստի):  
Այիզոց (այիզոն, այզոն)—լիճադղիկ. <  
αείζων εώνθρακας:  
Անաթեմայ—անեծք. <ανάθημα:  
Անաթեմայել—նորվել:  
Անափորայ—աղբրապղբ. դիմում. <αναφορά:  
Անգարիոց—տարապարհակ. <αγγαρήιον:  
Անդիլիպս—բարեխոս. պաշտպան. <αντίλη-  
ψίς:  
Անդիլտերիոց—հեղուկի չափ է. <αντλητή-  
ριον:  
Անդրաբեկ—փրփրեմ. <ανδράχνη:  
Անթեմ—երեցուկ. <ανθέμιον:  
Անթիպատ—փոխ-պատրիկ. <αντι-πατρις:  
Անիսոց—բույր. անսոն:  
Անոգանալ—կարգալ. <αναγιγιώσχω:  
Անոն—թոշակ. ոսկի. պաշար. <ανώνα  
(լատ. onnopa):  
Անտեղնատու (անտիղնատու)—անկաս-  
կած. անպայման. <αντι-γνομονέω εσω-  
κωκարծիք լինել. γνιστός (լատ. gnotos)  
եծանոթ):  
Անթիլու (անթիլոս, ենթիլէս)—օձաձուկ. <  
έγγελος:  
Ապաղաս (ապղաս)—փափուկ. <άπαλός  
(հոգն. άπαλάς):  
Ապահիլպատ—փոխ-հյուպատոս. <από ύπα-  
τικός:  
Ապրիւնդիոց—բարձրեցեղ. <αβρότανον (սոփր.  
Յ. Կարստի):  
Ապոլոս—երիտասարդ. <άβρολος:  
Ապոլիբս—մուրհակ. <απόδειξις:  
Ագեղ—սպիտակ կապ. <άργιλος:  
Ատակոս—խեցգետին. <άσταχος:  
Ատառապոն—սասողաբաշի գործիք. <  
άστρολάβιον:  
Ատառնոմի—աստղաբաշխական աղյուսակ.  
άστρονομικόν (-μιοն):  
Արիս—հարավ-արևմտյան քամի. <εὔρος:  
Արխան (արիսոն)—իշխան. <αρχων:  
Արխիս—լրի կարմիր դաղձ. <όριγανίς:  
Արդիրոս—արծաթ. <άργυρος:  
Արտեմիսից—բույս է. <άρτεμισια, άρτέμισον,  
άρτέμισιν:

Ալյուխոս (ալյուխոս)—բազմահունք. <  
όλοσχοινος:  
Ափարփի (արարբի, արարբիոն)—կաթնուկ  
(բույր). <εύφορβιον:  
Ափիմեդիոն—ամենօրյա. <άφτημερινός:  
Բալիդարիա—ճանապարհի խոտ. <περιστε-  
ρών:  
Բարբուր (բարբուր)—նվազարան. <βάρβιτος:  
Բաւտամ (բուտամ)—խոց. <άποστύμα:  
Բերբիկա—իջևան, հյուրանոց. <άποθήκη:  
Բեկ (բակ) —մահակ, գալազան. <βάκλον,  
βάκυλον (<լատ. baculum. կա է սուր.  
bōqia մահակ):  
Բեկար (բիկար)—արքայի կամ մեծ իշխանի  
փոխանորդ. <βικάριος (լատ. vicarius):  
Բիլոտր—մեղրատու բույս է. <βλίττω εσθη-  
ραδանός բառից:  
Բրարիոց—1. մարեմադղիկ. վառվառուկ.  
2. հաղթանակի ծաղիկ. հաղթանակի  
պսակ. <βραβείον:  
Բոլիզմուց—գայլային ախորժակ. աղանու-  
թյուն. <βαυλιμία բառից:  
Գաղատոս—քարտաշ. <χολαστή:  
Գաղատոսաշէն:  
Գուլայ—սափրիչ. <χουρεύς:  
Գրամար—ժանրության չափ է. մեկ գրամ.  
<γραμμάριον սոփր. Մ. Աղգերյանի):  
Դասպիցիա (դասպիցիա)—շնչարգելու-  
թյուն. <δύσπνοια:  
Դեկանիոց (տիկանիական)—տառնապետ. ոս-  
տիկան. նվիրակ. <δεκανίον (δέκα εσωσ):  
Դեմարոս—ժողովրդի իշխան. պետ. <  
δήμαρχος (սոփր. Հյուբրմանի):  
Դեմոն—բազմություն. <τόν δῆμον:  
Դեսպիցա—արքայադուստր. պարոնուհի.  
իշխանուհի. <δέσπινα:  
Դիարիկ (տիարիկ, դիարիկ)—կտակ. <  
διαθήκη:  
Անտիարիկ—անկտակ:  
Դիակոց—սարկավագ. <διάκονος. (սոփր.  
Հյուբրմանի):  
Դիպոլոս—սատանա. <διάβολος εσωπα-  
նա. բաժանող. ջրվող. ատերություն,  
նախանձ ներշնչող (սոփր. չ. Աճառ-  
յանի):  
Դիպոս (դիպոսոս)—շաքարախոտ, անց-  
վորիկ. <διαβήτης:  
Դիկատոր (դիկատոր)—հրամայող. թելա-  
դրող. բնաջող <δικτάτωρ:  
Դիմիսոց—բանտ. <δημόσιος (-όν) (սոփր. չ.  
Աճառյանի):

Դեպիտառ (հիշար՝ զիտպոսա)—երկրաչափական մի գործիք. <δίοπτρα (տե՛ս ԿՆԲ, Յաւել):

Դիքտիոն (ընդերտիոն, ընդիկտիոն)—սասնըհինգ տարվա մի շրջան. <ինδικτιών:

Դոմեթիկոս—հաժտապարթ. <δογματικός:

Դուկենարիոս (զուկենարիոս)—երկհարյուրապետ. փոխարթա. <δουκηνάριος (լատ. ducenarius):

Դուքս (տուկ)—իշխան. <δούξ (լատ. dux):

Դրիփարտայ—փայտե վանդակապատ. ցանկապատ. <δρύφακτον, δρύφακτα:

Դրուեգար—վաշտապետ. <δρουγγάριος (լատ. drungarius):

Եթիա (էթիայ, էթիա, էթւայ)—ձկնկուլ. <αἰθια (սոգր. ՆՆԲ):

Եզդիկոս—դատավոր. <ἐκδικτος (լատ. ecdicus):

Եզերարս (էլերարոս, էլերոս, զերոս, էրոս, էրուրոս)—մրտի տակ. ծննդյան վարդ. <ἐλλέβορος:

Եղեսպակ (ալիսֆաղին)—մեղրթերթ (բույս). <ἐλελίφακον:

Եղիկանոս—թռչուն է. <ἀλκυών:

Եղուրոս—կատու. <αἰλουρος:

Եղոփիմ—եղջերու. <ἐλαφος, ἐλαφον:

Եղուտր—իշխանական մի աստիճան. <Illustris:

Ելիտուփից:

Ենքեր—անձեռոց. <ἐγκείριον (χειρ εձեռք):

Եպարքի—նահանգ. <ἐπαρχία:

Եպարթոս (եպարիոս, հիւպարթոս)—կուսակալ. փոխարթա. <ἐπαρχος:

Եպեցես (պին)—հրակայուն խեցեմորթ. <αἰπινναί:

Եպիտրոպոս (եպիտրոպոս)—խնամակալ. ուսուցիչ. վերակացու. <ἐπίτροπος:

Եթիւ (եթևս, երեւս, երեփս, երիս)—բանահնա. երեց. <επρεύς:

Եսմոս (երմոս)—տաղ. երգ. բանահյուսութիւն. <ειρμός εկապակցութիւն, կարգ, շարք:

Եսկապոտերայ (էսկապոտրայ)—պալատական մի պաշտոն. կայսերական պահակ. <ἐξκουβίτωρ (սոգր. Յ. Կարստի):

Ետր—անբարոյական կին. աղիճ. <ἐταῖρα (սոգր. Յ. Կարստի):

Երեկից—բույս է. <ἐρεκιντ:

Եւտուկարտոր—ինքնակալ. <αυτοκράτωρ:

Եփտեփտ—թորախ. <ήφθισις:

Եքսոդիոն—թաղման հանդես. <ἐξόδιον:

Զրկի (զհի)—կաշի. տիկ. <ασκος:

Զիտառ—հեղձ արեղա. <σιχάριος (բուս Յ. Կարստի):

Զիբուն—սահման. <ζίχοι, հոդն. սեպ. ζίχων:

Զմայ—աստմա. <ἀσθμα:

Զմիդիւն—զմեիւ. <σμιλίον (սոգր. Հյուբըմանի):

Զմիւռնիա—շատակեր մի ձուկ է. <σμίρνα:

Զուրոպ—նկարիչ. <ζωγράφος:

Զովից (զամմին, շոմին, շոմին)—արգանակ. <ζωμός (զավառ. հուն. ζώμιον):

Իմելոյիս—եպիսկոպոս. <ἡμιλώτης:

Իփիմերուկ—առօրյա տեղեկագիր. սոմարական մի գիրք՝ եփրեմվերդի. <ἐπι εփրων, ἡμέρα εορῆς (հայ բարբառներում դարձել է յէփրեմվերդի. Սեբաստիայի բարբառում՝ արուսէրդէն):

Իքսարիոս—1. րդեշի. 2. կրոնական պետ. <ἔξαρχος:

Ըկրիկոն (ըրթիկոն, կրտիկոն, լիթիկոն)—թորախտային. <ἐκτικόν (ուղիղ ձևը՝ ἐκτικός):

Փայտայ—ծով. <θάλαττα:

Փեմ (թէմ)—զավառ. շրջան. շրջանակ. <θέμα:

Փեմ (եպոց)—մի տեսակ աման. <θερμός:

Փողոփա (Փողոփ, թողոփոս, ութողոփոզ, աթողոփոս) — սողոցղյուր. <ἀντόλοψ (սոգր. autulopus):

Փուխմուկ—ուխտատեղի. <բուս է խանա. <հուն. τόμβος «գերեզման» է պրո. χάνα «տուն». բուս Կարստի, ժողովրդական ստուգարանու թյամբ թուխման բարբառ դարձել է թուխ-մանուկ:

Իմարմիկ—ճակատագիր. բարս. <εἰμαρμένη:

Իմերիկան—ամենօրյա. <ἡμέρα, ἡμερία:

Իպպատոս (հյուպպատոս)—Օպատոս:

Իպպե—ձիարձակարան. <ἵππεια:

Իսթայիդէ (սթայիդէ)—կեցցե՛ս. <εἰς πολλά ἔτη:

Իսթայա—շոր թուղ. <ισχάς, հոդն. ισχάδος, հյթ. ισχάδας:

Լալիպպիսի (լոլիպպիսի)—բաղադրի մի տեսակ. <λευκοθραξία:

Լալիպպիս (լոլիպպիս, լոլիպպիս)—փաստաթուղթ. <λογησιασμός:

Լալիս—վանք. <λαύρα:

Լեթիկ (լպիկ)—կաթսա. <λεβήτιον, λέβητος (լեβիտոս):

Լեթից—դատավարութիւն. <λιταυεία:

Լիդատ (լիկաթ)—պապական նվերակ. <λεγατόν:

Խալիկին—*խաթա*. <γαλκίον, γαλκείον;  
Խարաուրար (*խարաուղար, քարաուղար*)—  
χαρτουλάριος;  
Խիմուլա(կաւ) — *կալճային սպիտակ կամ  
կարմիր հող*. <κιμωλία γῆ;

Կաղաճքի—*խուճի է*. <κάλαμος, καλαμίτης;  
Կանայ—*խողովակ*. *փող*. <κάννα;  
Կանկեր (*հիշտը՝ կանսուեր, կանխուեր*)—  
հնարավոր է. *գուցի*. <κάνιστρον;  
Կաւնաւ (*հօնօժ*)—*անօրէն*. <οικόνομος;  
Կերար (*կիթաւ*)—<κιδάρα;  
Կերմոս—*մանր դրամ*. <κέρμα;  
Կեփալ (*կիֆալ*)—1. *գլուխ*. 2. *գլխավոր  
երակ*. <κεφαλική (<արք. պր. qifāl);  
Կիւ (*կէր, կիււ*)—*տիւր*. *պարտն*. <κύρι;  
Կլիմ (*կլիմ*)—*երկրի կամ երկնքի բաժան-  
մունք*. <κλίμα;  
Կնկուլ—*վեղար*. <κουκούλλιον;  
Կոն (*կօն*)—*նկար*. <εἰκών;  
Կոպտոն (*կոպտուն*)—*կապուտի թեփր*. <  
κοπτή, κοπτών (լս. copta);  
Կուլուկաւ—*նվիկ*. <κολοκασία;  
Կուան—*հոն, շուժ*. <κράνεια;

Հուվարաստիւ—*բույս է*. ὑποκιστίς;  
Հոսք (*հոսք*)—*տոճիկ*. <ρόγα;  
Հոսքվոր } —*վարձկան*;  
Հոսքաւ }

Մալարա—*բույս է*. <μάραθρον, μάραθρον, μά-  
ραθος;  
Մալարայ—*երջանիկ*. <μάχαρι;  
Մաղաս—*մարմնի հեղուկ նյութերից՝ շիճը,  
խուխր, շողիքը, քրտնիքը*. <μαλαξίος  
(սոգք. Յ. Կարստի);  
Մաղասկար (*մաղսկաթ*) — *հիվանդ, որի  
մաղասը կաթում է*;  
Մաղասկարիլ;  
Մաղասկարիք—*մաղասը կաթելու հիվան-  
դություն*;  
Մաղասխոտ—*ինչ որ բույս, որ բուժել է  
մաղասկաթիքը*;  
Մաղր—*խիժ, որ ստացվել է երպատուրից.  
<μάλδα, μάλδη*;  
Մանդրայ (*մանրայ*)—*փարախ*. <μάνδρα;  
Մանձակ—*պատնջան*. <μελιττάνα;  
Մար—*կապույտ*. <μαζών;  
Միթիաոս—*դեղձափ*. <άντιδοτος Μιθριδά-  
τειος;  
Միթր—*քահանա*. *թագ*. <μίτρα;

Միլ—*երկանաքար*. <μύλος;  
Մլաղուց;  
Մոդ (*մոթ*)—*շփ է*. <μόδιος;  
Մոլոշ (*մոլոխ, մոլոշ, մոլոշիա, մոլոխիա*)—  
հիփեթթ. <μολόχη, μολάχη;  
Մոմիա—*կուպր*. <μούμια;  
Մոնագան—*միանախայց*. <μονάζων;

Ոփսարի—*ձուկ է*. <όψαριον;  
Պան—*մեղրատարտակ*. <πᾶνις;  
Պաստեղ — *եփած և թերթ-թերթ շորացրած  
պտուղ*. <πάστιλος;  
Պատրիարք—*հայրապետ*. <πατριάρχης (պա-  
τριά εθνη), *երեսանիք* և *արքա երջանիլ*);  
Պաստիկ—*գլուխ*. <προάστειον εφίλλω. *ար-  
վարձան, քաղաքամերձ վայր*. *ափան*;  
Պոռչգ—*օժիտ*. <προίξ;  
Պտեղ—*ծփի*. <πετλία;  
Պտղի } —*ծփի*;  
Պտեղամոտ }  
Պրոկոդ—*կաղ*. <πρόχολος;  
Պրոպատիկ (*պրոպատիկէ*) — *ափաղան*. <  
προβατική (լս. probatica);

Սակելյան (*սակելյանիս*)—*եկեղեցական խրճ-  
բափար*. <σακελλάριος (լս. sacellarius);  
Սարու—1. *մոդիւ*. 2. *ինչ որ երե*. <σαῦρος  
γλωρός (լստ Յ. Կարստի);  
Սեմական—*դերեզմանական*. <σήμα, *σηματος  
ենշան*. *հիշատակ, դերեզման, դամբա-  
րան*;  
Սերբի—*թունավոր լույժ*. <ουσεντερία;  
Սողէն—*խողովակ*. <σωλήν;  
Սուկան—*վերարկու*. <δύξ. *հուն*. σουκανία,  
հֆր. soucanie (սոգք. Յ. Կարստի);

Վուլ—*կնիք*. <βούλλα (լս. bulla);  
Տախիլոն—*սպեղանի*. <διαχύλον;  
Տերսիւ—*տենդ*. <τῆξις;

Բոտել—*փնտրել*; *հարստը համեմատում է  
հուն*. ἐρωτάω *բարի հետ*;  
Քարտեզ (*կարտեզ*)—*թղթադրամ*. <χάρτης;  
Քարտիգան (*քարտիգան*)—*դրամատուն*;  
Քարտեզ (*քարտեզ*)—*թուղթ*. <χάρτης;  
Ֆելեմունի—*ջերմ, որ առաջանում է ուռուց-  
քի հետևանքով*. <φλεγμονή;  
Ֆլարիոս—*կողմ*. <φλεγυρός;

Ալպիսոն (սխալ գրչությամբ՝ ալպիսոն) —  
ասպիս քարը. լատ. albiston (հուն. ἄσπετος-  
τος);  
Արմա — զինանշան. <իտալ. arma;  
Արաբոնաքում (օպոպոնաքում) — սեփեհի  
խեժ. < opopanax, opoponax (սեփե-  
-acum). իտալ. իսպ. opoponaco;  
Ափշեղ(թ) — արխազ(նեթ). <լատ. apsilae;  
Աքթա — գործ. փաստաթուղթ. <լատ. acta;  
Աքթոր — փաստարան. <լատ. actor;  
Բարիսոն — հայրենիք. <լատ. patrimonium;  
Բալաժ — ապարանք. <իտալ. palazzo, սո-  
ման. palaz (<միջ. լատ. palatium);  
Բուլ (պուլ, վուլ) — պապական կոնդակ. <  
լատ. bulla (հուն. βύλλα);  
Քրեստ — նախագահ. դատավոր. <լատ. prae-  
sed, praesid-is, praeses;  
Քրուկետ (բրվենտ) — հոգեորականի եկամուտ.  
<միջ. լատ. praebenda (լատ. prebend,  
ֆր. prébende);  
Քրուցուսիան — ընթացք. պրոցես. <լատ. pro-  
cessio;  
Քրոցոնոտար — ավագ նոտար. <լատ. protono-  
tar;  
Գաբիոլ — պալատ. <լատ. capitolium;  
Գաբիուս վեներիս — ձարխոտ. <լատ. capil-  
lus veneris;  
Գամալիմ — փոփոխություն. < cambium;  
Գալուսամեն (կորգոմեն) — վայրի քարակե.  
<լատ. cardamomum;  
Գոյգոյմերես — վարունգ. <լատ. cucumeres;  
Գոյրոգումա — քրքրում. <լատ. curcuma (ասոր.  
kurkama);  
Գոնբայ(թ) — չարագործ. ավագակ. <իտալ.  
compagni;  
Գորփուրայ — քառակուսի կտավ, որ փռում  
են նշխարի սկիհի տակ. <լատ. corporalis;  
Գուրդայ — սաղմոսների մեջ մի բաժանմունք.  
երկու, երեք, չորս տունը մեկ գուրդա է.  
լատ. copula (եբր. גֶּבֻל);  
Գունտուտապլ — սպարապետ. ավագ իշխան.  
<իտալ. contestabile;  
Գուլոն(ցի) — համայնքի անդամ. <colonier;

Կու. սեփեհի. <լատ. terminus, իտալ.  
termine;  
Դորգեմ — զիսկ. <լատ. torquem;  
Էնչենիայ — վերանորոգություն. պայծառու-  
թյուն. <լատ. encaenia Եսրբագործու-  
թյուն, օրհնություն);  
Էպոյլ — վայրի թանթրվենի. <լատ. ebulum,  
ebulus, ֆր. hieble, իտալ. ebbio;  
Էրոյգայ — ճարճուկ. <eruca;  
Թոդան — ձուկ է. <իտալ. totano;  
Թուն — դուքս. <իտալ. doge;  
Ինսթիկաթոր — առջնորդ. <լատ. instigator;  
Լադրիա — խոնարհություն. <լատ. latria;  
Լարեկ — կեչի. <larix;  
Լեկաթ (լիկաթ) — պապական նվիրակ. <le-  
gatus;  
Լէկ — մետաղի ձուլվածք. <լատ. liga (lega),  
իտալ. lega Եմետաղ);  
Լուսէնիոն — տեսողություն. <lucenga;  
Լոնիգայ — տրամախոսություն. <լատ. logica;  
Կալպանում — չարհոտ. մաղթ. քաղբան. <  
լատ. galbanum (հուն. γαλβάνη);  
Կուպայ — բաժակ. <լատ. cupa, cuppa;  
Մանիսր (մայճիստր) — մագիստրոս. <միջ.  
լատ. magister;  
Մանիբուլ — պատարագիչ քահանայի բազ-  
պան. <լատ. manipulus;  
Մատիտ — կապարե գրիչ. մատիտ. <իտալ.  
matita;  
Միլես — հազարական (զինվոր) — լատ. miles;  
Մնուր — քարոզիչ. <minores;  
Նորրել — սնուցել. <լատ. nutrix, իտալ. nut-  
rice;  
Նորրիչ — սնուցող;  
Ուրպ — քաղաք. <լատ. urbs (urbis, urbem);  
Չունիմունի — ձեռականություն. <իտալ. ce-  
rimonia, լատ. caeremonia;  
Պատրի — կաթուղի կրոնավոր. <լատ. pater;  
Պրոթ (պրթէ) — տակառ. <իտալ. botte;  
Պիպլոդե — գրատուն. <bibliotheca;  
Պրազալ — ձեռքի վահան. <միջ. լատ. braza-  
lis;  
Սիգնայ — գրոշակ. <լատ. signa;

Սիվիլական (սիւիւական) — քաղաքացիական.  
Հւտ. civilis, իտալ. civil;  
Ստամին — կտոր. կտափ Հւտ. stamen;  
Սօլ — կոշիկ. Հւտ. solea;

Վիգ — շրջան. նահանգ. Հւտ. vicus;  
Վիգիլ (վճիլ) — գիշերային աղթք. հսկում.  
կեկեցէ. Հւտ. vigiliae;

Տամոցել — ազնվական օրիորդ. Հիտալ. domi-  
gella;  
Տելհար — երկար գետ. զստ Յ. կարստի՝  
Հւտ. talaris;  
Տէգրեղալ (թէքրէթալ) — դատական օրենք.  
Հմիջ. լտ. decretalia;

### ՖՐԱՆՍԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՅԱՆԿ

Ամբրուր (ըմբրուր, օնբրուր, ումբրուր) —  
եվրոպացի կայսր. Հֆր. empereur  
«կայսր» (լտ. imperator). ստգր. Ա.  
Տեր-Միքայելյանի (հրտրկ. Ս. Անեցու  
Պատմության);

Անսիզ — օրենք. Հասսիս;  
Անսիզուր — իրավաստեր;  
Ավուգաթ (աւուգայթ) — փաստաբան. Հհֆր.  
avocat;  
Արժուէսք (արժվէսք) — արքեպիսկոպոս. Հ  
հֆր. arcevesque;

Բասան — խաչակիրների արշավանք. Հֆր.  
passage «անցում». միջ. լտ. passagium;  
Բաւտաւիլիկօն — առաքելական (գեղանյութ  
է). Հհֆր. apostolicum, apostolikon (կա  
կ լտ.);

Բէլ — կնքանայր. Հհֆր. baile «դայակ»;  
Բլայք — դատի մեջ պաշտպանություն. Հ  
plaid;  
Բլայքել — պաշտպանել. հֆր. Հplaidier;  
Բուրնէս (պուրնէս, պուրնէս, պուրնէս) — քա-  
ղաքացի. Հհֆր. bourgeois (իտալ. borg-  
hese, բլղնդ. βουργέσιος);

Բրաչուր (բրեշուր) — կաթոլիկ քարոզիչ. Հ  
հֆր. précheur (ստգր. Ղ. Ալիշանի);  
Բրնմնս — իշխանադուստր. արքայադուստր.  
Հհֆր. princesse;

Բրինձ — իշխան. իշխանորդի. Հհֆր. prince;  
Բրնմութիւն — իշխանություն;  
Բրոնց (բրվէնց) — նահանգ. գավառ. Հհֆր.  
la provence;

Բրվլէն — արտոնություն. Հհֆր. privilège;  
Գամբր — սենյակ. Հհֆր. gambre (հֆր.  
chambre, լտ. camera);

Յիմեդիր — գերեզմանատեղի. Հիտալ. cimite-  
ro, միջ. լտ. coemeterium;

Յոյգարայ — շաքար. Հիտալ. zucchero;  
Փորմ — ձև. Հւտ. forme;  
Փունդ — մի տեսակ աման. չափ. Հւտ. funda;  
Փուննի (փրեննի) — սուսամբար. վարսամ. Հ  
լտ. phrention;

Քլայուսուր — վանք. Հմիջ. լտ. claustrum;  
Ֆլորի (ֆլօրի, ֆլորին) — դրամ է. Հմիջ. լտ.  
florenus;  
Ֆրա — հոգևոր եղբայր. Հիտալ. fra (Հւտ.  
frater. ստգր. Յ. կարստի);

Գաւնց (գօնց, գունց) — կոնսուլ. Հհֆր.  
cuens;  
Դոլէն (գօլէն) — կոլեկտիվ. միաբանություն.  
Հհֆր. collège, լտ. collegium;

Դոնք (գունդ, գունթ, գունց, գունս, գոնդ)  
— կոմս. Հհֆր. comte, հֆր. cuens, լտ.  
comes (ստգր. Նյուբրշմանի);  
Դունդուրիւն — կոմսություն;  
Դուր — գավաթ. Հհֆր. coupe (միջ. լտ.  
coppa);

Դունմին (գէմին, գունմուն) — համայնք. Հհֆր.  
commun, quemun (բյուզ. κοινότητα);  
Դուրդ — դրակ. քաղաքամերձ տուն. ամա-  
ռանոց. բակ. Հհֆր. court;  
Դուրլէգ — ասպետ. Հհֆր. courteis;

Իամբլ (դամփլ) — 1. տաճար. 2. տաճարա-  
կան ասպետ. Հհֆր. temple (ստգր. Յ.  
կարստի);

Իամբլի — կարգավոր զորական;  
Իուլէթ — ձիու ճակատի մազափունջ. Հհֆր.  
toupet (ստգր. Ն. Բյուզանդացու);  
Դուննայ — մրցախաղ. Հհֆր. tournoi, tournée;  
Դուննէգ — դրամ է. Հհֆր. tourneis (հֆր.  
tournois);

Դրաիդուր (դրայիդուր) — գավաճան. Հհֆր.  
traitor;  
Դրավէրս — խաչի թեքք. Հհֆր. traverse;

Ընէ — թագավոր. Հհֆր. rei (իտալ. 're');  
Ընիպալտ — խարդախ. հֆր. ribald, իտալ.  
ribaldo (հֆր. ribaud);  
Ըստրալին — ստերլինգ. հֆր. sterlin (իտալ.  
sterlino);

Լիգին — վասալ. հֆր. lige (բյուզ. λιγιον);

Լին—վասալ. իշխան. ենթակա. <ֆր. vige:  
 Անլին—անենթակա:  
 Լնուփուց—վասալութուն:  
 Լիվր—զրամ է. մեկ ֆրանկ. <ֆր. livre:  
 Կալոփ—ձիու վազք. <ֆր. galop:  
 Կալափցնել (կալոփցնել, կալալփցնել) —  
 ձիուն վազեցնել:  
 Կարդայն—մի տեսակ ջերմ. <ֆր. quartaine  
 (իտալ. quartan, իսպ. cuartana. սևֆր.  
 Յ. Կարստի):  
 Կարդինալ—<cardinal:  
 Կլափ—ջրային թռչուն է. ֆր. grèbe:  
 Հանապ—մեծ և լայն դավաթ. <ֆր. harlap:  
 Հառնէզ—սարք. շարժական գուլք. <ֆր.  
 harnais:  
 Հաստատ—նիզակավոր. ֆր. hastat (լատ.  
 hasta հնիզակ):  
 Ճնիժ—երինջ. <genisse:  
 Մայստր—խորհրդական. <ֆր. maistre:  
 Մարզիկ—իշխանական մի աստիճան. <ֆր.  
 marchis:  
 Մարզիգուրիւն:  
 Մարզիգուրի:  
 Մարաշախտ — գորավար. մարշալ. <ֆր.  
 marechal:  
 Մարիան—ամուսնութուն. <ֆր. mariage:  
 Մարկ—արծաթե զրամ է. <ֆր. marc:  
 Մարտ—ամանի ծեփ. <ֆր. mortier:  
 Նոյել—ծննդյան զիշեր. <ֆր. Noël:  
 Նուտոն—ուրվական. <ֆր. lutin:  
 Ոսբիթալ (օսպիթալ, ըսպիթալ, ուսպիթալ)  
 —գործաս. <ֆր. hospital, լատ. hospital:  
 Ունծայ (ունց)—կշիռ է, փոքր շափ. պրտ-  
 դունց. ֆր. once:  
 Ոփոսնո (օփրանթ, օփրանտ)—գոհ. գոհո-  
 դութուն. ժամուց. ֆր. ofrende:  
 Պակ—զարդ է. ֆր. bague:  
 Պայլ—իշխան. ֆր. bail:  
 Պայլուրիւն—իշխանութուն:  
 Պաներ—միլիցիայի սպա. շավուշ. <ֆր.  
 banier:  
 Պատրոն—իշխանական աստիճան է. <ֆր.  
 patron «պատրիկ. պաշտպան. պիտ»  
 (ստգր. ն. Բյուզանդացու):  
 Պարոն—իշխան. բարոն. <ֆր. baron:  
 Պարոնութիւն—իշխանութուն:  
 Պարոնսեալ—պարոն դառնալ:

Պարոնորդի—պարոնի որդի:  
 Պարոնիկ—երիտասարդ պարոն:  
 Պարոնայապ—սկեսրայր:  
 Պարոնամայր—սկեսուր:  
 Պարոնացալ—հողատապ. պողազրա:  
 Ման.—կա և պարոն «տանուտեր» իմաս-  
 տով, որ ծագում է լատ. patronus (բարբ.  
 paronus) «տանուտեր» բառից (Յ. Կար-  
 ստի ստուգաբանութամբ):  
 Պացին «կոնք». «լողանքի տաշտ». ֆր. bas-  
 sine:  
 Պարն (պօրն)—սահման. <ֆր. borne:  
 Պոդլեր (պօդլեր)—ավազ մատուցող. <ֆր.  
 bouteiller:  
 Պոռնէս—տե՛ս Բուրնէս:  
 Ջարխար—զրքի զլուխ. <ֆր. chapistre:  
 Ջարրոն (Ջարրուն)—վեղար. <ֆր. chaperon  
 (իտալ. ciapellone):  
 Ջալուց—զանգատ. <chalonge:  
 Ջալուցել—զանգատվել:  
 Ջալուց այնել—բողոքել, բողոք հայտնել:  
 Ջամբ (Ջամո)—սենյակ. արքունի զիվանա-  
 տուն. <chambre: Տե՛ս և Գամբո:  
 Ջամոայ (Ջամբոայ, Ջամբայն, Ջամպլայն)—  
 սենեկապետ. զիվանապետ. <chamblain,  
 chambellan:  
 Ջանուն—կրօնավոր. <ֆր. chanoine:  
 Ջանցիլր (Ջանսիլր)—կանցիլր.—chancelier:  
 Ջանցիլրութիւն (Ջանսիլրութիւն)— կանց-  
 լիլրութուն:  
 Ջասուել—պատժել. <ֆր. chastier:  
 Ջասուլ—ղղյակ. <ֆր. chastiel:  
 Ջարմ—կախարհանք. <ֆր. charme (լատ.  
 charme):  
 Թին—հարուստ. <ֆր. riche:  
 Սայգայ (սազայ, սայժին)—բունազրավում.  
 <ֆր. saiste, saigne:  
 Սայզել—բունազրավել:  
 Սիզենս—եկեղեցական երգի մի ցուցում. <  
 ֆր. sequenz (լատ. sequentia, իտալ.  
 sequenza):  
 Սպառան—խոց ձիու ծնկան վրա. Կարստը  
 կապում է ֆր. esparfain բառի հետ:  
 Սրոս—այտուց. <ֆր. suros:  
 Սոլ—զրամ. <ֆր. sol:  
 Տամ—իշխանուհի. <ֆր. dame:  
 Տըլֆին—գելֆին. <ֆր. delphin:  
 Տուայր—օժիտ. <ֆր. douaire:  
 Տուգատ—զրամ է. <ducate:  
 Տուկ—զուքս. <duc:  
 Տուպլ—կրկին. <double:

Յֆնդիլ—արդիլիկ. պաշտպանել. <defen-  
dre.

Քիթ—ազատ, զերծ. <հֆր. quite.

Գումանուր—հրամանատար. <ֆր. com-  
mandeur.

Օդրիլ—արտոնել. <otréier.

Օման (օմայն)—պարտավորութուն. պար-  
տաթուղթ. <հֆր. hommage, hommailge  
(միջ. լատ. homagtum, իտալ. omaggio).

Օց—երկարության չափ է. <ֆր. aune շ1.

արմունկ. 2. չափի հնագույն միավոր  
լատ. uina).

Օփրանտ—տե՛ս Ոփրանա.

Ֆայլիլ—դատը կորցնել. <ֆր. failier.

Ֆավր (ֆէվր, հաւր)—բակլա. ոլոռ. լոբի. <  
ֆր. fave (կատալոնյան բարբառով),  
fève (հյուսիսային ֆր.), have (կասկե-  
րեն):

Ֆարսին—ձիու քոս. <farcin.

Ֆրայն—հացենի. <ֆր. frene.

Ֆրեր—խաչակիր զինվոր. <ֆր. frère.

ԱՍՈՐԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Անցակ—չար ոգի. <harnāgā.

Բահլի—կեց <bahl (պհլ. bāxr, միջ. պրս.  
balx, որից՝ բաղխ):

Բուժին—ճրագի պատրույգ. <būšina.

Բում—եկեղեցական վերատեսուչ. <bud.

Գլոս—կասկիկ. <glōs.

Գունի—պարտեզ. այգի. դրախտ. <ginū  
(հբբ. gan, արբ. Jannat):

Գունց—բաղնիքի ավազան. gūrā «դուլլի  
չրաման»:

Ջուզայ—արծաթ դրամ է. <zūzā.

Խածիրայ—ռոճիկ. թողակ. <qašai.

Խարբալ (խորբալ)—մազ. <‘arbāli.

Խալիժ—ալյուրի մի ճաշ. <xəwīšā.

Խիլայ (խլայ)—շղարշ. նուրբ զգեստ. <xil‘ā.

Խիլայիլ—զգեստ նվիրելով պատվել:

Խուց—xuššū, արբ. xušš «պատասպարան»:

Մարիլ (ժարուր, ժարոյր)—աչքի սև զեղ.  
ասոր. šədišā (արբ. qarūr):

Մարուրիլ—բույս է:

Մոթոր (ժոթորին, ծոթրին, ծաթրին)—բույս.  
šəḍrā.

Կադայ—դուլլ. <qūlē.

Կապիդայ (կապիլայ)—հանրատուն. <qa-  
pēlā (<հուն. kapēleia):

Կապեդուրի—տիրուհի:]

Կասկարայ—1. միս խորովելու վանդակաձև  
գործիք. 2. կաթսայի եռոտանի. <kaskā-  
rā.

Կուլպ—ջրշուն. <kaibā.

Հազար—խնձորի մեծությամբ մի պտուղ. <  
xazūrā.

Ղաշայ—տերտեր. <qaša, qašisā (թրք.  
khešiš):

Մախար—մեծ անեղ. հերյուն. խթան. <mə-  
xalīā.

Մաշար—սզոցի բերան. <masārā նորը՝  
məššar.

Մաշարայ—թոքախոտ, բարակացավ <māšrā.

Մար—տեր. <mārā.

Մարիշայ—երգ. <madrāšā.

Նաժառայ (կան) -- նվիրյալ. կուսակրոն.  
կույս. <našrāyā.

Նսոժրա (ցի) (նաժարա (ցի), նազարա (ցի)) —  
քրիստոնյա. <našrāyā.

Շէք (շէք) — ազոճեջ. ազդր. քայլ. <šaqa.

Շիդար—խենթ. <šətar.

Սահր (սահրա)—լուսին. <sahrā.

Սարբին (սարբի, սարպին)—ամբար. պա-  
հեստ <sarbina.

Սիդա—բուրվառ. <sidā, saidā.

Սինգ—կշռաքար. <sing.

Սցիկ—կարիք. պահանջ. կարոտութուն. <  
səneq, səniqā.

Սցկիլ—կարիք ունենալ. քաղցել:

Ի սցիկ լիցեյլ—կարիքի մեջ լինել. կարիք  
ունենալ:

Սցկուփուց—կարոտութուն:

Փուրկայ (փուսկայ)—հյուրատուն. պան-  
դոկ. <prūtkā.

Քալիթր—անասունի ստամոքս. <kālīḥ.

Քաւշ (քոշ)—արու այծ. <kewšā «ոչխար»:

ԵՐԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

(ԱՆ)սխուր—տնդին. անվարձ. երբ. sekher:  
 Գեհ—վիհ. գերեզման. փոս. <gaia (հունա-  
 բենի միջոցով՝ gē):  
 Գեղգեղ—անիվ. <galgal:  
 Դարում—հարավ. <dārōm:  
 Եմակ (էմակ)—ձոր. <ēmāq, ʿēmeq:  
 Քալպիոբ—աշտարակ. <talpiyōt:

Թամուզ—ժողով է. <tammūz:  
 Թեման—հյուսիս. <temān:  
 Թորայ — սովորութուն. ճաշակ. <torāh  
 (արբ. [awr]):  
 Թուրե—օրենքների գիրք. <tōrā:  
 Հագնի—դափնի. երբ. \*egen (անցել է հու-  
 նարենի միջոցով՝ ἀγνός):  
 Սորեկ—էնտր (խաղող) <sōrēq (հուն. sō-  
 rék):

ՎՐԱՅԵՐԵՆ Բ ԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Ատայայ (արտայայ)—տավարի ազդրի փա-  
 փուկ միս. <artāla:  
 Բալախ—փշախոտ. <balaxi:  
 Բոչոյ—փոքրիկ ձի. <bačā:  
 Գմիր—ուժեղ. գորեղ. <gmiri:  
 Գուլայ—սիրտ. <guli:  
 Դդալիալ (դրոփալ)—թագուհի. մայր թա-  
 գուհի. <քարթվ. dedophali (<deda  
 ամայր & uphali թագուհի, պարոնու-  
 հի):  
 Դեդեպուլ (դէտէպուլ)—վրաց աղնվակահ. <  
 didebulli բիշխան):  
 Դպէլ—իշխանական տիազոս. <tbeli:  
 Էրիսքավ—զորագլուխ. <eri շորք. բազ-  
 մութուն & thavi շղուխ (ստգր. Ղ.  
 Ալիշանի):  
 Թոկ—չվան <thoki:  
 Թոկել—վզին չվան անցկացնել:  
 Թոչ—ստոցագրի. <thošī:  
 Լազուտ—եզրկտացորեն. <լազ. lazudi:  
 Խազ—գիծ. <xazi:  
 Խազել—գծել:  
 Խազիլ (խազիթ, զազիլ)—արխազացի. <վր.  
 qaziv:  
 Խաա—զարդ. նախ. <xati:  
 Խատել  
 Խատուտիկ } —նախշուն:  
 Խատումաո }  
 Խարի—եզ. <քարթվ. xari (ստգր. Ն. Բյու-  
 զանդացու):

Խիզան—պանդուխտ. <վր. xizani:  
 Խորբալ—ցորեն. <xorballi:  
 Խորամ—հնձած խոտի մի խուրձ, մի գիրկ.  
 <վր. xoromi:  
 Ծէս—արարողութուն. <cesi (հուն. θυσία):  
 Ծիա—ձի:  
 Ծիկնալար—ղիվանազպիր. <mcignobari:  
 Ծինամձոր—վանահայր. <cinamjvari:  
 Ծոլա' (ծո')—ա'յ տղա. <վր. culi շտղա,  
 մանչ):  
 Կացի—տղա. <kaci:  
 Կուծուտի—երեցուկ. <xuceri (ստգր. Յ.  
 Կարստի):  
 Կրուլ—անեծք. <վր. kruli:  
 Կոտոչ—եզլուր. <վր. kotoši (նպրս. ga-  
 dāš):  
 Ճեճուլ—չինացի. <վր. čene-uli (čin-uli):  
 Ճիլ—սեղ. <čilli:  
 Մամթալար—պաշտոնյա. < mamath-mtha-  
 vari:  
 Մամիուղ (մամփուղի, մամփուլ, մամփալ,  
 մամփաղի)—արքա. նահապետ. իշխան.  
 <վր. mamphali:  
 Մանդիկ—խուրջին. պայուսակ. <mandiki:  
 Մաշիկ—կոշիկ <mašia:  
 Չեչ—կեղևանք. <čeča:  
 Փոցիս—ճանկուրի, արմուխ, կոանդիլ. <  
 phocxi:  
 Փոցիսի (փոցիսի):  
 Քալա' (քա')—ա'յ աղջիկ. <khali:  
 Քշիկել (քշիկել)—սաստիկ. <khišpeba:  
 Քուի (քոր, քորայր)—խոռոչ. որջ. քարան-  
 ձավ. <khvabi:



Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ

ԲԱՅԸ ԵՎ ՆՐԱ  
ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԶԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

## Մ Ո Ւ Տ Ք

Գրական հայերենն իր պատմական զարգացման ընթացքում ունեցել է երեք հիմնական դրսևորումներ՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար: Գրաբարն իր ամբողջության մեջ մանրագնին քննված է, իսկ աշխարհաբարն իր գրական երկու հատվածներով ահա արդեն 100 տարուց ի վեր հանգամանորեն քննվում է, առավելապես՝ արևելահայ գրականը սովետական շրջանում: Սակայն հայ բանասիրությունն անարդար է գտնվել միջին հայերենի հանդեպ՝ հատկապես նրա քերականական կառուցվածքն ուսումնասիրելու իմաստով: Անցյալ դարի հայ լեզվաբաններն այլևայլ հարցերի քննության ժամանակ հրնթացս իրենց շարադրանքի խոսել են միջին հայերենի մասին, վկայակոչել միջին հայերենի քերականական կառուցվածքին, մասնավորապես բային և նրա խոնարհման համակարգին վերաբերող լեզվական փաստեր, սակայն միջին հայերենն ամբողջությամբ չեն ուսումնասիրել: Բացառություն են կազմում գերմանացի հայագետ Յ. Կարստի՝ միջին հայերենին նվիրված ուսումնասիրությունները, մասնավորապես «Historische grammatik des Kilikisch-Armenischen» (Ստրասբուրգ, 1901) արժեքավոր աշխատությունը:

Մեծավաստակ հայագետ Ա. Այտընյանն իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» (Վիեննա, 1866) խիստ արժեքավոր ուսումնասիրության «Նախաշավիղում» «ուսմկորեն» ընդհանուր հասկացության տակ հարյուրավոր օրինակներով մեջ է բերել գրաբարին ժամանակակից և նրա հետ գոյատևած, սակայն գրաբարի խոնարհման համակարգին «անհարազատ» ձևեր, որոնք բնականոն կերպով կազմավորեցին միջին հայերենի խոնարհման համակարգը:

Մխիթարյան միաբան Ղ. Հովնանյանը մեծ սիրով ձեռնարկել էր միջին հայերենի ուսումնասիրությանը, սակայն վերահաս մահը խանդարեց իր ավարտին հասցնելու սկսած գործը, և նրա «Հետազոտությունք նախնյաց ուսմկորենի վրա» (Վիեննա, 1897) արժեքավոր աշխատությունը դժբախտաբար մնաց որպես միջինհայերենյան գրվածքների մի ծաղկաբաղ՝ տեղ-տեղ արված արժեքավոր բառական, քերականական դիտողություններով:

Սովետահայ լեզվաբաններից միջին հայերենի քերականության, մասնավորապես բայի և նրա խոնարհման համակարգի մասին խոսել են վաղամեծիկ լեզվաբան պրոֆ. Ս. Ղազարյանն իր «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (Երևան, 1954) աշխատության և պրոֆ. Գ. Զահուկյանն իր «Հայոց լեզվի զարգացման փուլերը» (Երևան, 1965) ուրվագծային նկարագրության մեջ: Պրոֆ. Ա. Աբրահամյանն իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953) աշխատության մեջ առավել մանրամասնորեն քննել է միջին հայերենի դերբայները: Իսկ մեծանուն հայագետ

պրոֆ. Աճառյանը ինչպես «Հայոց լեզվի պատմության» (մասն II, Երևան, 1951), այնպես էլ «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» (հատոր IV Ա, Երևան, 1959, հ. IV Բ, Երևան, 1961) աշխատությունների մեջ տալիս է միջին հայերենի բայի և նրա խոնարհման համակարգի խիստ ամփոփ նկարագրությունը, սակայն, դժբախտաբար, ինքն անձամբ չի հետազոտել, այլ, իր խոստովանությամբ, բացառապես օգտագործել է գերմանացի հայագետ Կարստի աշխատությունները: Ահա ինչու մեծանուն հայագետի ուսումնասիրությունների այդ հատվածները Աճառյան լեզվաբանի խորությունն ու ստուգությունը չունեն: Այս բոլորը ցույց են տալիս, որ ի նորոք և ամբողջովին պետք էր ուսումնասիրել միջին հայերենի բայն ու նրա խոնարհման համակարգը:

Սույն աշխատության մեջ բայն ու նրա խոնարհման համակարգը առանձին-առանձին քննված են XII—XIV դդ.՝ միջին հայերենի այսպես կոչված «կիրիկյան դասական» շրջանում, ինչպես նաև XV—XVII դդ., երբ միջին հայերենի համակարգի մեջ բարբառային ներթափանցումները շատանում են, մի բան, որ աշխատանքում հստակորեն երևում է:

Մեր կարծիքով, անցյալի հայ լեզվաբանության՝ միջին հայերենի հետազոտությունից խուսափելու հիմնական պատճառն այն է, որ մեր լեզվի այդ փուլը չի ներկայանում այն դասական ամբողջացվածությունները ու կուռությամբ, որ ունեն գրաբարը, և ոչ էլ այն պարզությամբ ու դյուրահաղորդությամբ, որ ունեցավ կազմավորված աշխարհաբարը: Առաջին հայացքից միջին հայերենը, կարծես, լեզվական իրողությունների որպես մի խառնակություն և ներկայանում, սակայն փաստերի մեջ խորամուխ լինելիս կարելի է նկատել, որ միջին հայերենը, ինչքան էլ անցումային մի օղակ լինի, իր հերթին ունի իր քերականական համակարգը, թեև դրան կից որպես հնաբանություն օգտագործվում են գրաբարի քերականական համակարգի շատ իրողություններ: Առավել ընդհանուր ասած՝ միջին հայերենն ավելի աշխարհաբար է, քան գրաբար, թեև՝ վերջինիս մեջ եղած լեզվական-քերականական երկրորդական երևույթների նոր զնահատությամբ ու համատարած կիրառությամբ: Կազմավորված միջին հայերենին առանձնահատուկ խոնարհման համակարգին հետևելով՝ մենք աշխատել ենք ներկայացնել մեր լեզվի այդ փուլում գրաբարի համեմատությամբ կատարված փոփոխությունները և հատկապես այն նորը, որը միջին հայերենի խոնարհման համակարգն է դիմագծում՝ տարբերելով այն գրաբարից, ինչպես նաև աշխարհաբարից:

Մենք միջին հայերենի բայն ու նրա խոնարհման համակարգն ամբողջությամբ, սպառիչ կերպով ուսումնասիրած լինելու հավակնությունը չունենք, սույն ուսումնասիրությունը «Ակնարկներ» համեստ խորագիրը կրող հատորի մի մասն է կազմում, և մեր նպատակն է եղել առավել ընդհանուր գծերով ներկայացնել մեր լեզվի այդ շրջանի խոնարհման համակարգը՝ շխորանալով նաև զուտ տեսական բնույթ կրող հարցերի մեջ:

## ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ XII—XIV ԴԴ.

### Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

ա) Միջին հայերենում պահպանված են գրաբարյան բոլոր շորս<sup>1</sup> լծորդությունները՝ իրենց պարզ և ածանցավոր ձևերով. ինչպես՝

Ե խոնարհման պարզ բայեր՝ գնել (ՍԳԴ, էջ 12), քագել «թագադրել» (ն. տ. էջ 16), գրել (ն. տ. էջ 16), ջամբել «կերցնել, խմցնել» (ն. տ. էջ 30) և այլն:

Հնդհանուր առմամբ Ե խոնարհման պարզ բայերը այլ լծորդությունների շեն փոխանցվում, թեև Ֆրիկն ունի սիրենալ, լսենալ, յիշենալ (Դիվ. էջ 299, 300, 359) ձևերը, սակայն դրանք ավելի շուտ հանգավորման նպատակով են արված:

Քիչ ավելի բարդ վիճակ են ներկայացնում Ե խոնարհման ածանցավոր բայերը. այստեղ գտնում ենք գրաբարյան գտանել (ԿԵԲ, էջ 196, ՀԵԲ, էջ 149, ՄՀՁՄ, էջ 37), ելանել (Գրգս. Քնն. էջ 20,77), ցուցանել (Գրգս. Քնն. էջ 22, ՄՀՁՄ, էջ 37), տեսանել, հարկանել, լուծանել և այլ բայաձևեր, սակայն միջին հայերենի համար առավել բնորոշն ան ածանցի՝ ա ձայնավորի սղումով հանդես գալն է, ինչպես՝ սպաննել, նակ՝ սպանել (ՍԳԴ, էջ 10, 17, 25), խածնել (Գրգս. Քնն. էջ 46), ելնել, անցնել, հարցնել և այլն:

Հետաքրքրական է նշել, որ այս խոնարհման 4 բայեր՝ գտանել, իջանել, մտանել, տեսանել միջին հայերենում բայական փոխանցման են ենթարկվել և հանդես են գալիս ու խոնարհման ածանցավոր բայերի խոնարհմամբ: Այսպես՝ գտնուլ (ՖրԴ, էջ 355, 453, ԿԵԲ, էջ 197, ՎԱԱ, էջ 45, ՍԳԴ, էջ 27), իջնուլ (ՎԱԱ, էջ 242, Գրգս. Քնն. էջ 28, 83, ՂՀՆՌ, էջ 152, 306, 317 և այլն), մտնուլ (ՖրԴ, էջ 288, 442), տեսնուլ (ՖրԴ, էջ 249, 303, 368, ՎԱԱ, էջ 27, 93, 113, Գրգս. Քնն. էջ 59) և այլն:

«Հայկազնյան բառարանին» այս ձևերը բոլորովին անծանոթ են: Հետաքրքրական է նկատել, որ այս նույն բայափոխանցումը կատարվել է նաև հայերենի մի շարք բարբառներում, առավելապես՝ արևմտահայ բարբառներում:

Որ հայերենը բայական փոխանցումներով հարուստ է, այդ ոչ մի կասկածի ենթակա չէ. շափազանցություն շէր լինի, կարծում ենք, եթե ասեինք, որ գրաբարում ամեն մի լծորդություն կարող էր վերածվել ամեն մի այլ պարզ կամ ածանցավոր լծորդության. ավելին. կան բայեր, որոնք հանդես են գալիս

<sup>1</sup> Գրաբարի ո խոնարհման գոլ բայը ևս անորոշ դերբայաձևով գործածված է միջին հայերենում՝ «...Անիմաստ մարդն տեսանէ զինքն, կարծէ յաղթող զու...» (ՎԱԱ, էջ 242):

գրաբարում մի քանի պարզ և ածանցավոր լծորդություններով, ինչպես՝ խլրտամ, խլրտեմ, խլրտանամ, խլրտիմ (ԱռձԲ, էջ 379), ծորամ, ծորանամ, ծորենամ, ծորեմ, ծորիմ (ն. տ. էջ 411), քրտնամ, քրտնիմ, քրտանեմ, քրտանիմ, քրտնում (ն. տ. էջ 840—841) և այլն:

բ) Հայտնի է, որ դասական գրաբարում ի խոնարհման և՛ պարզ, և՛ ածանցավոր բայերն անորոշ դերբայում ունեն —ել վերջավորություն, գրաբարի քերականներից ոմանք նույնիսկ ի խոնարհում ասելով հասկանում են ե խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորաձև դրսևորումը: Բայց հենց V դարում, ետդասական շրջանում ի խոնարհման բայերը հանդիպում են —իլ վերջավորությամբ, իճչպես՝ խոնարհիլ (ՄԽՊԷ, 3 և է): Միջին հայերենը ձգտել է ի խոնարհման բայերն արտահայտել —իլ լծորդությամբ, ինչպես՝ աշխատիլ (Գրգս. Քնն. էջ 3), նախանձիլ (ԿԵԲ, էջ 200), կամիլ (ՎԱԱ, էջ 160), լինիլ, (ՀԵԲ, էջ 265), ապրիլ, նստիլ, խօսիլ (Գրգս. Քնն. էջ 57, 59, 71) և այլն: Մեկ-մեկ հանդիպում են նաև —ել վերջավորությամբ ձևեր. հայել (Գրգս. Քնն. էջ 55, 85), նստել (ՍԳԴ, էջ 16, Գրգս. Քնն. էջ 105), տանել (ՍԳԴ, էջ 17) և այլն: Թվում է, թե միջին հայերենը պիտի կարողանար կարգավորել այս երեք վույթը, սակայն շամբողջացրեց, քանի որ միջին հայերենում —իլ վերջավորություն էր ունենում նաև ե խոնարհման բայերի կրավորակերպը, ինչպես՝ կերակրիլ (ՖրԴ, էջ 496), կախիլ (ՎԱԱ, էջ 239), շարժիլ (Գրգս. Քնն. էջ 15), տհենիլ (ՎԱԱ, էջ 210) և այլն:

Այսպես նաև ածանցավորները. մի կողմից՝ ուսնիլ, մեռնիլ, բուսնիլ, անկանիլ, մյուս կողմից՝ փլչել, փախչել, հանգչել: Հաճախ երկվորյունը նկատելի է նույն հեղինակի երկում, այսպես՝ Սմբատ Գունդստապլի «Դատաստանագրքում» ունենք հանգչել (էջ 52), հանգչիլ (էջ 6, 30):

Ինչևիցե, միջին հայերենով գրող հեղինակները փորձել են կարգավորել բայական սեռի ու խոնարհման կերպի գրաբարից ժառանգված խառնաշփոթությունը, սակայն պատմական հանգամանքների պատճառով այդ իր ավարտին չի հասել:

Այստեղ պետք է խոսել —իլ վերջավորությամբ կրավորական բայերի մասին, որոնք ունեն —ալի, —վիլ և —իլ վերջավորությունները: Գրաբարում, ինչպես հայտնի է, բայը շուներ կրավորականի դրսևորման մի յուրահատուկ ընդհանուր ձև. ի կրավորակերպ խոնարհումը, նույնիսկ ոչ լիովին, կիրառելի էր միայն ե խոնարհման բայերի համար, ուստի հենց V դարից սկսած ստեղծվել են նորահնար ձևեր: Միջին հայերենի շրջանում կրավորականը դրսևորման հատուկ ձև է ստանում: Ճիշտ է, գրողները հաճախ օգտագործում են նաև գրաբարյան կրավորակերպ ձևեր, սակայն իշխողը նորն է: —ալի կրավորականն, անշուշտ, իր սկիզբն է առնում հին հայերենի դարձուած, յօրինուած, շինուած բառաձևերում եղած ու(ած) մասնիկ-վերջավորությունից: Թվում է, թե սա միակ հնարավոր ու ճիշտ ձևն է, որ հետագայում առավել ևս պարզություն մտցրեց բայի խոնարհման համակարգում: Միջին հայերենով գրող հեղինակի լեզվամտածողությանը գրաբարյան ձևերը հարազատ չէին, այլ պարզապես սովորույթի ուժով էին օգտագործվում, այլապես ինչո՞վ բացատրել այն երեք վույթը, որ գրաբարի՝ կրավորական իմաստի բայաձևերն ունենում են —վիլ վերջավորություն, ինչպես՝ «Ծկեղեցին վկայէ, որ աղէկ մարդ լինի, նա ընդունվի» (ՍԳԴ, էջ 23), կամ՝ «Ծթէ եկեղեցականք լինին, նա նոյնպէս ըստ կարգի դատվին» (ն. տ. էջ 47): Այս նախադասություններում ունենք ընդունիմ

կրավորական (տե՛ս ԱռձԲ. էջ 309) և դատիմ հասարակ սեռի (ԱռձԲ. էջ 235) բայերը, մինչդեռ նրանք չեն գիտակցվում կրավորական սեռի իմաստով, ուստի հեղինակը հասկանալի դարձնելու համար ավելացնում է ու(ւ) կրավորականի մասնիկ:

Այսպես և լցուի (Գրգս. Քնն. էջ 29, 60, 7), բաժնվի (ՄԳԴ, էջ 50), փաթթվի (ՄԳԴ, էջ 13) և այլն:

Առանձին դեպքերում կրավորական սեռի բայն ունենում է -ուել վերջավորություն, ինչպես՝ բաժնվել (ՄԳԴ, էջ 50, 51), պսակուել (ՄԳԴ, էջ 56), ինչպես՝ «...խոստացել լինայ թէ պսակվեմ<sup>2</sup> ընդ քեզ» (ՄԳԴ, էջ 52), թեև երկու տող ցած ունի՝ «Նա ճաթն է, որ պսակվի»: Գրաբարյան մի շարք կրավորակերպ շեղոք բայեր միջին հայերենում օգտագործվում են -իլ վերջավորությամբ՝ հոտիլ «հոտել», փոխիլ «փոխվել», հաղորդիլ «հաղորդվել»:

զ) Ա խոնարհման ածանցավոր բայերն անորոշ դերբայում հանդես են գալիս և՛ -անալ գրաբարաձև վերջավորությամբ՝ ուրախանալ, պարտաճանալ (Գրգս. Քնն. էջ 15), չորանալ, սևանալ (ՄՀՁՄ, էջ 38), և՛ -նալ վերջավորությամբ, ինչպես՝ շատնալ (Գրգս. Քնն. էջ 6, 23), ողջնալ (ՄԳԴ, էջ 80), խոշորնալ (Գրգս. Քնն. էջ 12), մեծնալ (ն. տ. էջ 30) և այլն:

-են ածանց ունեցող բայերում ձայնավորի սղումը սովորական չէ, ինչպես՝ երևենալ (ՄՀՁՄ, էջ 66), մերձենալ (ՄԳԴ, էջ 9, 28), գիտենալ (ն. տ. էջ 21):

դ) Միջին հայերենում օգտագործվում են ու խոնարհման և՛ պարզ, և՛ ածանցավոր բայեր, ինչպես, ածանցավորներից՝ կալնուլ (ՖրԴ, էջ 251), զգննուլ, ՖրԴ, էջ 440), ջեռնուլ (ՎԱԱ, էջ 154), առնուլ (Գրգս. Քնն. էջ 3, 107, ՍԳԴ, էջ 10) և այլն:

Ու խոնարհման պարզ բայեր՝ «Եւ ջուր հանել ի գետոյ ջրելոյ....

չկարէ որ արգելուլ» (ՄԳԴ, էջ 20):

«Ոչ նմանին այս ջերմերս ի յիրար՝ ի սկսնուլն և թողուլն...»

(Գրգս. Քնն. էջ 20):

«Եւ ես այլ արիւն ոչ հեղում (ՎԱԱ, էջ 64):

«Եւ գինին յերակին ուժն յաւելու...» (ՂԶՆԴ, Ա գիրք, էջ 144):

Մենք գիտամբ վերը բերեցինք այսքան շատ օրինակներ, քանի որ գերմանացի հայագետ Կարստն իր «Historische grammatik des Kilikisch-Armenischen» աշխատության մեջ այն կարծիքն է հայտնել, որ իբր «չորրորդ լծորդության առաջին տեսակը (ուլ) ջնջվել է. մնում է միայն երկրորդ տեսակը -նում» (տե՛ս Հ. Աճառյան, ՀԼՊ, մասն Բ, էջ 248):

Պատճառական բայերը հավասարապես հանդես են գալիս և՛ գրաբարյան -ուցանել վերջավորությամբ, և՛ -ցնել տարբերակով, ինչպես՝ դարձուցանել (ՄՀՁՄ, էջ 53), տկարացուցանել (ն. տ.), սատակեցուցանել (ՎԱԱ, էջ 5), կորուսանել (Գրգս. Քնն. էջ 57), մյուս կողմից՝ անուշցնել (ՄԳԴ, էջ 44), ուցնել (ն. տ. էջ 10, 26, 44), ապրեցնել (ն. տ. 49) և այլն:

Նկատելի է, որ պատճառականի նորակազմ կամ միջինհայերենյան տարբերակված ձևերում ունենք -ցնել վերջավորությունը, ինչպես՝ յաւելցնել

<sup>2</sup> Բոլոր դեպքերում աշխատել ենք հարազատորեն պահպանել հեղինակների ուղղագրությունն ու կետագրությունը, ուղղել ենք միայն արտառոց սխալները:

(ՄԳԴ, էջ 31), բանեցնել (ն. տ. էջ 37), մօտեցնել (Գրգա. Քնն. էջ 74), շողցնել (ն. տ. էջ 11), կիցցնել (ՄԳԴ, էջ 34) և այլն:

Այստեղ ևս նույնը պիտի ասենք, ինչ վերևում. սովորույթի՝ ուժով միայն պատճառական բայերն ունենում են -ուցանել վերջավորությունը. այդ են վկայում նաև միայն միջին հայերեն լեզվին հատուկ պատճառական մի շարք բայեր, ինչպես՝ աճեցնել (ՄԳԴ, էջ 43), գմարթեցնել (ն. տ. էջ 43), խոցցնել (ն. տ. էջ 12), հարեճացնել (ն. տ. էջ 47), վկայեցնել (ն. տ. էջ 21) և այլն:

### ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅ

Անորոշ դերբայը, ինչպես գրաբարում, ենթարկվում է ու հոլովման. բացառականում ունի ոչ վերջավորություն, ինչպես՝ «Մեղաց ըզսուզն ի հաս պահենք, որ դադարենք անդ ի լալոյ» (ՖրԴ, էջ 310), «է՛ր պարապիս դու ի լալոյ» (ՀԵԲ, էջ 172), «ի շնչելոյ», «ի հազալոյ» և այլն:

Դերբայի սեռական-բացառականը հանդիպում է նաև ու վերջավորությամբ, ինչպես՝ «Պատմութիւն և նախագիտութիւն վասն հինգօրեայ և վեցօրեայ ջերմերոյն, որ բնական սավտային բորբոսելուն լինի» (ՄՀՋՄ, էջ 129):

Մեր լեզվի այս շրջանում -ում վերջավորությամբ անկատար դերբայի, ինչպես նաև այդ դերբայով կազմված ներկա և անկատար ժամանակների շինք հանդիպում: Վաղուց ի վեր հայագիտությանը հայտնի են հետևյալ օրինակները.

ա) XII դարի հայ բժշկապետ Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարութիւն» (Վենետիկ, 1832) աշխատության մեջ. «Ապա թէ հիւանդին թպտիրն մաշում<sup>3</sup> լինի, կերակուր չոր չէ պատեհ, նա ընծային այլ ցեղ նիւթ...» (էջ 61):

Արսեն Այտընյանը -ում վերջավորությամբ «գավառական նոր դերբայներուն վրայ» խոսելիս այս վկայությունը գնահատում է որպես -ում վերջավորությամբ անկատար դերբայի նախաձև (ՔՔ, էջ 104):

բ) Վարդան Արևելցու (13-րդ դարի պատմիչ) «Պատմութիւն տիեզերական» (Մոսկվա, 1861) աշխատության մեջ. «Ասացի թէ. «Զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն քեզ հետ լաւ են և քեզ աղօթք են առնում» (էջ 207)<sup>4</sup>:

<sup>3</sup> Բնաստիրական գիտությունների գոկտոր Ալ. Մարգարյանն իր «Հայերենի հարադիր բայերը» արժեքավոր աշխատության մեջ գտնում է, որ մաշում արաբերենից փոխառված բառ է՝ «չարաղետ, շարաբաստիկ, շարագուշակ», որ գործածական է նաև պարսկերենում ու թուրքերենում: Ուստի այդ նախադասությունը պետք է հասկանալ հետևյալ կերպ. «Ապա թէ հիվանդին (հիվանդի համար) «թտպիրը» (հիվանդության դարմանումը) շարաղետ լինի» (էջ 471):

Ավելացնենք, որ այս բացատրությունը ճշտվում է և հետևյալ փաստով. «Իսկ Փնտուխտարն էր մօրօք եւ ունէր մէշում (=վատ) ձի և Սղուրն էր տղայ և ձին աղէկ: Երբ իմացան թէ հասնել կամի Տաթարն և զերկուսն բմբռնել, Սղուրն իջեալ ի տաճիկ ձիոյն՝ ետ ի Փնտուխտարն, և ինքն ելաւ ի վատ ձին» (ՂՀՆԹ, էջ 245):

<sup>4</sup> Մ. Արեղյանը հետևյալ կերպ է գնահատում այս փաստը. «Դա ցույց է տալիս, որ արևելյան բարբառների մեջ XIII դարից առաջ արդեն այդ ձևը հաճախված պիտի լիներ իբրև սահմ. ներկայի մի բաղադրիչ մաս, որպեսզի «առնելում եմ» ձևը դառնար «առնում եմ»: Եթե «այսուհի եմ», «առնելում եմ» ձևերը դեռ կարող էին զգացվել իբրև մի դարձված, «առնում եմ» ձևն այլևս դարձված չէ, այլ լուկ խոնարհման մի բաղադրյալ ձև. որովհետև դա այլևս չի կարող զգացվել իբրև անորոշ դերբայի ներգոյական «եմ» բայով» (ՀԼՏ, էջ 314): Ա. Մարգարյանը վերոհիշյալ աշխատության մեջ գտնում է, որ լեզվական այդ փաստը մեզ ավանդված է 1589 թ. ձեռագրից (Ձ 1770), մինչդեռ նախորդ դարերի ձեռագրերում չկա: Մյուս կողմից՝ ՁՁ 1518 (1591 թ.),

Վերջերս հայագիտության մեջ բերվում է նաև նորահայտ հետևյալ օրինակը. «Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին» (ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958 թ., էջ 358): Ավանդված է Զաքեոս գրչից (1474 թ. Վայոց ձոր):

Վերևի օրինակները շեն կարող հիմք ծառայել պնդելու, որ — ում վերջավորությամբ անկատար դերբայ ու նրանով կազմված ժամանակներ են եղել այս շրջանի միջին հայերեն մատենագրության մեջ:

#### ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Շատ հարուստ դրսևորումներ ունի միջին հայերենում ապառնի դերբայը. նախ՝ ինչպես գրաբարում, միջին հայերենում ևս ապառնի դերբայը դրսևորվում է մեծ մասամբ — ոց վերջավորությամբ. այս վերջավորությամբ ապառնի դերբայից կազմվում են միայն բաղադրյալ ժամանակներ, ինչպես՝ «Մերկ էկինք յաշխարհս և մերկ գնալոց եմք յաշխարհէս» (ՎԱԱ, էջ 283):

«...Յաւրն ահագին ասելոց է ընդ մեզ աստուած...» (ն. տ. էջ 102):  
«Նոյն մարմընովդ ես դու զալոց,  
Որ Քո խաչողքն լինին առակ» (ՅրԴ, էջ 420):

Ի խոնարհման բայերում ապառնի դերբայի ի խոնարհիչը փոխվում է ե-ի, ինչպես՝ «...Ով ոք սատանայի բարոյն և ուխտին հաւատայ, բաժին նորա վերջն այնպես լինելոց է» (ՎԱԱ, էջ 253): Կամ՝ «Ասէ մայրն. «Այժմ դիտացի, որ ապրելոց էք դուք» (ն. տ. էջ 120):

Ապառնի դերբայի —ի վերջավորությամբ տարբերակը միջին հայերենում շատ սակավ կիրառություն ունի. եղած օրինակներից են (ստորագելիական վերադրի կիրառությամբ).

«Նա է պատուած յամէն տեղի,  
Յամեն մարդոյ է գովելի» (ՅրԲ, էջ 238):  
«Այս ի յումմէ՞ է դիտելի:  
Կամ ի յումմէ՞ ցանաշելի» (ՅրԲ, էջ 250):

«Արդ՝ հարցանելի է, թէ առաջին վաճառելովն .Ն. յ.Բ. դրամ ծախեցաւ» (ՎԱԱ, էջ 272):

Շատ ավելի հետաքրքրական են ապառնի դերբայի —ոյ, ինչպես նաև նրա հնչյունափոխված —ու տարբերակի կիրառությունները: Ամբողջ գրաբար մատենագրության մեջ հետազոտողները միայն մի քանի օրինակներ են գտել, որտեղ ապառնի դերբայն արտահայտված լինի —ոյ վերջավորությամբ: Պրոֆեսոր Ա. Աբրահամյանն իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953) աշխատության մեջ այդ բոլորը ի մի է բերել (տե՛ս էջ 148—150): Ահա առավել հայտնի օրինակներից մեկը. «...Զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ»<sup>5</sup> (Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, VI, գլ. 8):

<sup>1</sup>478 (1657 թ.), 4584 (Ժէ դ.) ձեռագրերում «ազօք բն առնում»-ի փոխարեն ունենք «ազօք բն յառնում» ձևը: Եզրակացություն. «ձեռագրային հիշյալ տվյալներն ու անհամապատասխանությունները ցույց են տալիս, որ իրական հիմք չկա «ազօք բն առնում» ձևը XIII դարի լիզվական փաստ դիտելու կամ իբրև այդպիսին ճանաչելու համար» (էջ 472):

<sup>5</sup> Արսեն Այտընյանը «Քրեական քերականության» մեջ գրում է. «Նոյն էր շատ անգամ հին դրաբարին ալ ոճը. Տացէ ինձ հաց առելոյ և հանդերձ զգնելոյ» (անդ, էջ 102):



Ապառնի դերբայի այս կազմութիւնը շատ լայն կիրառութիւն ստացավ միջին հայերենում: Նախ՝ այստեղ նորութիւնն այն է, որ -ոյ վերջավորութիւնը դերբայն ունի մի տեսակ ածական-որոշչի կիրառութիւն, ինչպես՝ «...եւ թէ անբժշկելի լինի զարկն և ուտելոյ անասուն լինի, նա զգինն տայ» (ՄԳԴ, էջ 80):

«Մտալելոյ ժամն գնաց՝ զերդ զերեկի զարն որ շունիս» (ՖրԴ, էջ 169):

«Զաղն անհամ ո՞վ է տեսել, թե լինի նա պիտանացու,

Ոչ աղբ ի պարտէզ ձգել, 'ւ ոչ է քար ինքըն շիւնելոյ» (ՀԵԲ, էջ 149): Այսպես նաև՝ «ծնելոյ աուր» (ՖրԴ, էջ 308), «հանգչելոյ տեղիք» (ՄԳԴ, էջ 31), «արժելոյ, ստածելոյ վէրք» (ն. տ. էջ 48) և այլն:

Անցումը -ոյ վերջավորութիւնը ձևից -ու-ի, պատկերավոր ասած, մեկ բայ էր միայն: Հայտնի է, որ գրաբարյան -ոյ վերջավորութիւնը պատմական հնչյունափոխութիւնը դարձել է -ու: Արդ, ապառնի դերբայի բոլոր ձևերի մեջ այս է իշխում միջին հայերենում: -ոյ վերջավորութիւնը գրաբարում բաղաձայնից առաջ արտասանվում էր -ու. գրաբարյան անոյշ, ոյժ, շոյտ, բոյթ և այլ բառեր, ինչպես նշում է պրոֆ. Մ. Աբեղյանը, աշխարհաբար գրականին են անցել անուշ, ուժ, շուտ, բութ (մատ) գրութիւնը<sup>6</sup>:

-Ու վերջավորութիւնը ապառնի դերբայը միջին հայերենում հանդես է գալիս՝

ա) Պարագայական կիրառութիւնը. ինչպես՝ «Գլուխն է գեր, ոտքըն փափուկ, անդամքն աղէկ է խորվելու:

«...ևիստ փոշիման ի վայր մընաց, պաշար շունէր հետ տանելու:

...Ֆրի՛կ, զարթիր ի խոր քրնոյդ՝ եարաղ արա քեզ զընալու» (ՖրԴ, էջ 309—310):

բ) Որոշչի կիրառութիւնը. ինչպես՝ «Եւ զայդ ի դողալուն ատենէ սկիզբն արա...» (ՄՀԶՄ, էջ 101):

գ) Առավելագուց որպէս ժամանակակերտ դերբայ ապառնի բաղադրյալ ժամանակում. ինչպես՝ «Երբ որ յէգուց մեռնելու ես, քեզ ճար արա, ի՞նչ կու նայիս» (ՖրԴ, էջ 267):

«Ժանգոտ պըղինձ ենք հաւասար, ներքեւ հողին եմք փրտելու» (անդ, էջ 310):

«Նա դու ասա, թէ՛ մի՛ ցաւիք, հիւանդս աս լաւնալու է» (ՎԱԱ, էջ 295): էջ 295):

դ) Ժամանակակերտ-դերբայական ձևերից պետք է տարբերել ապառնի դերբայի ներքոհիշյալ դերբայ-ստորոգելիական վերադիր կիրառութիւնը. «Աքիս(տ)ն գնաց առ գումէշն և առ լուսաւորս երկնից, թէ՛ լերուք ինձ խնամի, զի դուտար իմ կարգելու է» (ՎԱԱ, էջ 25):

«Նոյնպէս պատուելու է այն մարդն, որ զընկերն գովէ» (անդ, էջ 248):

#### ԱՆՅՅԱԼ ԴԵՐԲԱՅ

Խոսել միջին հայերենում անցյալ դերբայի կիրառութիւն մասին նշանակում է կրկնել այն բոլորը, ինչ հայտնի է գրաբարի անցյալ դերբայի կիրառութիւն մասին, մի բան, որ մեր նպատակը չէ, քանի որ մեզ հետաքրքրում

<sup>6</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, Երևան, 1931, էջ 116:

են առավելապես միջին հայերենի խոնարհման համակարգին առանձնահատուկ բայական իրողությունները: Միջին հայերենով գրող բոլոր հեղինակները՝ պատմագիր, բանաստեղծ թե բժիշկ, իրենց ստեղծագործություններում օգտագործում են գրաբարի անցյալ դերբայի բոլոր կիրառությունները, որ մանրամասնորեն մշակված են պրոֆ. Ա. Աբրահամյանի վերոհիշյալ աշխատության մեջ: Վաղակատարի նոր ձևերի հետ կողք-կողքի օգտագործվում են անցյալ դերբայով և եմ օժանդակ բայով կազմվող ձևերը. ինչպես՝ «Եւ մարդ, որ իւր տաքութիւնն ի խոշորութենէն է պատճառն, որ լոկցեալ է ի թթու ջուր... և իւր մարմինն քանձաղցեալ է և արգիլեալ զբուխարն և նշանն այս է, որ մորթն մարմնոյն պնդեալ լինի...» (Գրգս. Քնն. էջ 13):

Ինչպես գրաբարում, այստեղ ևս անցյալ դերբայաձևը լինիմ բայի հարադիր խոնարհմամբ արտահայտում է կրավորականության գաղափար. ինչպես՝ «Եւ այն հում պալղամն ի շատ թուխմայէ լինի հաւաքեալ ի ստամոքն և ի փորոքն, զի զօրութիւնն ընկղմեալ լինի» (ՄՀՁՄ, էջ 33) և այլն:

Հասկանալի է, որ մեզ առավելապես հետաքրքրում են գրաբարյան կիրառությունների համեմատությամբ առաջացած փոփոխությունները:

ա) Միջին հայերենում շենք հանդիպում եմ բայի ստորադասական ձևերով կազմված բաղադրյալ ապառնի ժամանակի, այսինքն՝ չկան մեռեալ իցէ, ժողովեալ իցեմք և այլ ձևեր:

բ) Միջին հայերենում շենք հանդիպում տեսեալ է իմ, լուեալ էր քո և առավելապես ընթերցեալ իցէ նորա ձևերի, ինչքան էլ որ խոսքի շարադրանքը գրաբարյան լինի:

գ) Միջին հայերենում շեն հանդիպում անցյալ դերբայի բայական հավելադրության ոճական կիրառությանը, մի բան, որ գրաբարում խիստ տարածված էր. ինչպես՝ «Իսկ իբրև կարի բռնադատեցաւ... և շտապեալ տագնապեցաւ» (Փ. Բուզանդ, IV, ԺԶ). «մաւրտ եղեալ կռուին» (Եղիշե, I յեղ.) և այլն:

դ) Միջին հայերենում շենք հանդիպում անցյալ դերբայի դիմավոր իմաստով կիրառությանը, մի բան, որ հատուկ էր գրաբարին, ինչպես՝ «Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ» (Խորենացի, I, Ժ):

Հետաքրքրական է այս տեսակետից մեջ բերել մի փաստ, որ նկատել է Ղևոնդ Հովնանյանն իր «Հետազոտությունք նախնյաց ուսմանորենի վրա» աշխատության մեջ. Հայոց Գագիկ թագավորի և մետրոպոլիտ Մարկոսի հայտնի միջտղեկի շարադրանքում իրար ժամանակակից երեք հայ պատմիչներ միևնույն նախադասության բայաձևը տարբեր ձևով են գրում. այսպես՝ «Եւ իբրև ընդ պինիս մտին, ասէ թագաւորն. լուեալ է իմ թէ ունիս դու շուն ազնիւ» (Կիրակոս Գանձակեցի). «Յայնժամ սկսաւ ասել Գագիկ ցկիւռ Մարկոս՝ եթէ լուեալ եմ եթէ քո շուն զօրաւոր կայ» (Մատթէոս Ուռհայեցի): «Իբրև ճաշեցին և ուրախացան ի գինի, ասէ Գագիկ ցՄարկոս. լսել եմ թե մեծ շուն ունիս և կամիմ տեսնուլ զնա» (Սմբատ Գունդստապլ) (ՂՀՆՌ, Գիրք Ա, էջ 18—19):

Կիրակոս Գանձակեցի և Մատթէոս Ուռհայեցի պատմիչները ստեղծագործել են գրաբար, և բայաձևը գրաբարյան է, մինչդեռ Սմբատ Գունդստապլը՝ աշխարհաբար:

#### ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Միջին հայերենում վաղակատար դերբայը գտնում ենք և՛ -ել, և՛ -եւ վերջավորություններով: -ել վերջավորությունն, անկասկած, առաջացել է գրա-

բարի անցյալ դերբայի -եալ վերջավորութունից, հայերենի համար շատ սովորական եա>ն հնչյունափոխությամբ, ինչ որ գտնում ենք գրեաց-գրեց, ցորեան-ցորեն, ապա և բարբառային՝ լեարդ-լերդ, սարեակ-սարեկ և բազմաթիվ այլ բառերում (տե՛ս Մ. Աբեղ. ՀԼՏ, էջ 119): Մեկ անգամ որ առաջացել էր -ել դերբայական մասնիկը, լ>ր ձայնորդների հնչյունափոխությամբ (մի բան, որ հայերենին հատուկ է) առաջացել է նաև վաղակատարի -եւ վերջավորութունը:

Թե առաջինը ո՞ր հեղինակը գրաբարի անցյալ դերբայն օգտագործեց -ել վերջավորությամբ, դժվար է պարզել, միայն թե կարելի է ասել, որ XII դարում վաղակատար դերբայն իր -ել և -եւ վերջավորութուններով, ինչպես ասում են, քաղաքացիական իրավունք էր ստացել. այնքանով, որ լեզվի հարցերում պահպանողական Ներսես Շնորհալի բանաստեղծն իր առակներում օգտագործում է վաղակատար ձևերը այնքան անգամ, ինչքան որ խոսքի համար անհրաժեշտ է եղել. ահա այդ օրինակները.

-ել վերջավորությամբ. «Ի յԱստուած բանն է նրմանել,

Հերն վայելուչ և գոուզ եկել...» (Բանք շափաւ, Վենետիկ, 1830, էջ 574):

«Հանց գեղեցիկ հաւ իմաստուն

Ոք շէ տեսել էն ցեղ գիտուն...» (ն. տ. էջ 581):

-եւ վերջավորությամբ. «Իրք մի կայ ու ինքն է ջրբեր,

Հանց գինեխում մարդ շէ տեսեր» (ն. տ. էջ 567):

Այս շրջանի մյուս գրողների ստեղծագործություններում մենք հանդիպում ենք վաղակատար դերբայի ամենալայն կիրառության: Տրիկն իր «Տաղ հոգեշահ» բանաստեղծությունը (145 տող) հանգավորում է վաղակատարի -ել վերջավորությամբ, ինչպես՝

«Սի՛րտ իմ, ընդէ՛ր ես խրոռվել,

Ա՛չք իմ, ընդէ՛ր ես խաւարել.

Խե՛ղք իմ, ընդէ՛ր ես ճապաղել.

Մի՛տք իմ, ընդէ՛ր ես շիւարել» (ն. տ. էջ 405):

Այսպես և Կոստանդին Երզնկացին իր «Բան գարնան օրինակաւ խորհուրդ ի Քրիստոս (մի՛ մարմին հասկանայք զբանս, այլ հոգեւոր)» բանաստեղծության բառատողի վերջին տողը, ինչպես՝ «...Ձի արեգակն է մեզ ծագել...»:

«...Հանց որ փրոհն գեղեցկացել...» (Բանաս., էջ 117):

«...Ամէնն են բարութեամբ լրցել...

...Հաւասար գերկիր են արբուցել...» (էջ 118) և այլն:

Մյուս կողմից՝ -եւ վերջավորությամբ է հանգավորում Հովհաննես Երզնկացին իր «Տաղ Ադամայ» բանաստեղծության 53—72 տողերը.

«Ի յերկնատրաց դասուց

Սադայէլ գերեան էր շրջեր

Ի յերկնից անդունդս իջեր

՚Ի ի լուսոյն խաւար մնացեր,

ՁԱդամ ի դրախտէն հաներ

՚Ի յանասնոց երկիրն է ձրգեր...» (Բանաս., էջ 226—227):

Վերը բերվածներից ճիշտ չէր լինի այն եզրակացությունը հանել, որ այս կամ այն հեղինակը նախապատվություն է տալիս -եւ կամ -եւ վերջավորությունամբ դերբայական ձևերին: Իրականում, նույն հեղինակը, ինչպես ն. Շնորհալույց բերված օրինակով տեսանք, օգտագործում է երկու ձևերն էլ: Ավելին, հաճախ այդ երկու վերջավորություններով կիրառություններ գտնում ենք միևնույն նախադասության մեջ. ինչպես՝ «Դիաւճէնն ասէ, թէ այս ջերմանս պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին տազնապեւ է և տաճցեւ է, և իր տաքութենէն զայս ջերմս յերեւան է բերել» (ՄՀՁՄ, էջ 27):

Կամ թե չէ հեղինակը նույն բայը օգտագործում է երկու ձևերով էլ, ինչպես՝ «Ցուցանէ առակս, թէ շատք լան և ապայշաւեն, որ ձեռնայմուտ ի գործ և յարուեստ ինչ, զոր շեն ուսել...» (ՎԱԱ, II, էջ 57): «Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ զիր արուեստն թողու, որ սովորեւ է և ուէր, նայ թողու զայն և երթայ զայն անէ, որ չէ ուէր և ոչ գիտէ... ամէն մարդ պիտի որ զինչ որ ուէր զան անէ» (ն. տ. էջ 132):

Այսպես և՛ «Վարդ, որ գերեսըտ շես բացել» (ԿԾԲ, էջ 119):

«Մեզ ալ սիրուդ աշվի բացեւ (հս)» (ն. տ. էջ 132):

Վաղակատարում երկու վերջավորություն են ունենում նաև պատճառական և կրավորական բայերը, ինչպես՝ կորուսել է (ՍԳԴ, էջ 60), թուլացուցել են (ն. տ. էջ 30), լցուել է (Գրգս. Քնն. էջ 51), բայց և՛ ուսուցեւ է (ՎԱԱ, II, էջ 14):

Բացի եմ օժանդակ բայի հետ վաղակատար ժամանակներ կազմելուց, վաղակատար դերբայը լինիմ և կամ բայերի հետ կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ: Սա, անկասկած, կազմվել է գրաբարյան բաղադրյալ ժամանակների նմանողությամբ. ինչպես՝ «Եւ թէ որդիքն մեռել լինին թազաւորին...» (ՍԳԴ, էջ 16):

Այս տեսակետից ուշագրավ են հետևյալ նախադասությունները. «...Ձերդ որ հիւանդն ի յառաջն կերակրեալ լինի տաք և շորային կերակուր, նոյնպէս և ըմպելիքն տաք և շորային լինի խմել, և շատ հոգս լինի տարել կամ տքնութիւն, կամ դատել լինի շատ...» (ՄՀՁՄ, էջ 91): «Եւ երակին վատուժութեան պատճառն այն է, որ մարմնոյն զօրութիւնն հատել և կտրել լինի» (ն. տ. էջ 39):

«Ոմանք ընդ...»

յաջակողմեան դասին բազմել.

Ոմանք չեն արժանի

ի յիր տեսոյն, կան հալածել» (ԿԾԲ, էջ 179):

Վերևի օրինակներից երևում է, որ լինիմ բայի բաղադրությամբ կազմված ժամանակներում վաղակատարն արտահայտում է հարակատարի իմաստ, աշխարհաբար լեզվամտածողությամբ այլ կերպ չի էլ կարելի հասկանալ: Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ արդի հայերենում վաղակատար դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակներ չեն կազմվում:

Վերևում ասացինք, որ վաղակատար դերբայի այս կիրառությունները գրաբարի հետևողությամբ են: Այդ նույն պատճառով է, որ, կարծում ենք, միջին հայերենում վաղակատարն ունի ածական-որոշիչ կիրառություն, մի բան, որ հատուկ չէ ո՛չ արևելահայ, ո՛չ արևմտահայ գրական լեզուներին և ո՛չ էլ

բարբառներին: Ահա այդ կիրառությունները. «Եւ այլ կու հրամայէ օրէնքս, որ թէ մարդ ուժ անէ տառապել մարդոյ... նա դարպասն վճարել տայ...» (ՄԳԴ, էջ 71): Այս նույն կիրառությունն ունենք «Դատաստանագրքի» օրենքների ցանկում՝ «Վասն որ տառապել մարդոյ ուժ անէ» (էջ 13): «Տառապել մարդոյ գիրք, որ քշիկ դեղօք մեծ բան այն է...» (ՂՀՆԹ, Ա գիրք, էջ 132): Հեղինակը քաղել է հնագույն բժշկարաններից:

Դժբախտաբար այլ փաստեր չունենք, բայց տարբեր հեղինակների տարբեր բովանդակությամբ գործերում հանդես եկած այս ձևերը չէին կարող գրչագրական սխալներ լինել:

### ՀԱՐԱԿԱՏԱՐ ԳԵՐԲԱՅ

Արդի հայագիտության մեջ հարակատար դերբայը վաղակատարից զատույն չվում է կատարված գործողության հետևանքային կամ հարատևման երանգ արտահայտելու առանձնահատկությամբ: Հարակատար դերբայի մեջ այդ առանձնահատկությունն են շեշտել պրոֆ. պրոֆ. Գ. Սևակն ու Ա. Աբրահամյանը: Ահա նրանց բնորոշումները. «Հարակատար դերբայը նույնպես ցույց է տալիս կատարված գործողություն, ինչպես և վաղակատարը, սակայն այն հիմնական տարբերությամբ, որ միաժամանակ արտահայտում է այդ ավարտված գործողության հետևանքը իբրև մնայուն, հարատևող արդյունք» (ընդգծումը մերն է— ՍԱ)<sup>7</sup>:

«Հարակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ որոշ հետևանքով, իբրև գործողի կամ եղողի ակական կամ ժամանակավոր հատկանիշ» (ընդգծումը մերն է—ՍԱ)<sup>8</sup>:

Ընդհանրապես հայերենում հարակատար դերբայը կազմվում է դերբայական -ած և -ուկ մասնիկների միջոցով: -Ուկ վերջավորությամբ հարակատար դերբայը հայերենում սահմանափակ կիրառություն ունի, այն առավելապես օգտագործվում է Մշո, Վանի, Մոկաց և մի շարք այլ բարբառներում ու խոսվածքներում, մասամբ և արևմտահայերենում՝ ավելի շուտ խոսքին բարբառային երանգավորում տալու միտումով:

Հարակատար դերբայի -ած վերջավորությամբ տարբերակը հայերենի բոլոր դրսևորումներում էլ՝ ընդհանուր խոսակցական, գրական լեզու թե բարբառներ, — այս բոլորի մեջ էլ ամենալայն կիրառություն ունի: Բացառություն չի կազմում և գրաբարը. բավական է ծանոթանալ պրոֆ. Աբրահամյանի բերած փաստերին (տե՛ս վերոհիշյալ աշխատության 204—215 էջերը) համոզվելու համար, որ գրաբարում ևս հարակատար դերբայը թե՛ իբրև գոյական, ածական ու մակբայ և թե՛ իբրև բաղադրյալ ժամանակի կազմի մեջ մտնող դերբայ (տե՛ս էջ 218) լայն կիրառություն ունի: Ուրիշ հարց է, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, հարակատար դերբայը գրաբարում բայական-քերականական հատկանիշով չի գիտակցվում, այլ յարժեքավորվում է որպես գոյական, ածական, մասամբ և մակբայ:

<sup>7</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 298:

<sup>8</sup> Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 193:

Այս իմաստով միջին հայերենում հարակատար դերբայը քերականական իմաստով ամբողջացած երևույթ է. նա հանդես է գալիս որպես գոյական, ածական և առավելապես՝ որպես ժամանակակերտ դերբայ:

Հայագիտության մեջ դիտված հրևույթ է, որ հարակատար դերբայը ներգործական սեռի բայերի դեպքում արտահայտում է կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպային դրսևորման: Միջին հայերենի փաստերը առավել քան հաստատում են այդ տեսակետը: Այս շրջանի՝ միջին հայերենով ստեղծագործած հեղինակների մեր ձեռքի տակ եղած գործերում հարակատար դերբայի (հատկապես ածականական և դերբայական կիրառությամբ) ներդրողական սեռի կիրառությունն չկնք նկատել: Բացառություն են կազմում, թերևս, Հովհաննես Երզնկացու մոտ հանդիպող հետևյալ կիրառությունները.

«Ամենայն իրք, որ ինքն աշօք չէ տեսած,  
Հաւատով հեռաւորն ի ձեռն է եկած.  
Յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն են գոված,  
Յաշխարհէս հաւատով յերկինքն են ելած» (ՀԾԲ, էջ 197):

Այս քառատողի մեջ չէ տեսած և գոված են հարակատար բայաձևերը թվում է, թե ներգործական սեռի են, թեև այդ որոշակիորեն չի կարելի պնդել. դեռ չենք խոսում այն մասին, որ կարող էին խոսքի հանգամանքի անհրաժեշտության՝ հանգավորման արդյունք լինել: Մինչդեռ հարակատար դերբայի կրավորական իմաստով կիրառության հարյուրավոր օրինակներ ունենք:

Ներսես Շնորհալու առակներում հանդիպող ներգործական սեռի բայերի հարակատարները առանց բացառության կրավորական իմաստ են արտահայտում. ինչպես՝

«Եկեղեցին բարձր էր և լայն,  
Անսին շինած էր (=չինված էր)՝ ւ անգերան» (էջ 570):  
«Գրած է (=գրված է) ի գիրն աւետաբեր» (էջ 579):  
«է սրբած (=սրված է) գետ հայելի» (էջ 582):  
«Ի յարգանդէ մօրն անդրստին,  
Սրբած էր (=մաքրված էր) Հօրն անեղին» (էջ 569):

Ապա և՝ «Գայր նրկանակ մի գեղապանծ,

Աշխարհաշէն փրոան եփած,  
Ի յեփողէն իւրմէ խոռած (=խոռված՝ ծակված),  
Եւ ի նմանէ դարձեալ լրցած (=լցված)» (էջ 570):

Միջին հայերենում լայն տարածում ունի հարակատար դերբայի գոյականական կիրառությունը, որ երբեմն հանդիպում է ք գոյականակերտ մասնիկով. այսպես՝ «Ամենայն որ զմկրտածն (=մկրտվածին) մկրտէ, նա կորսնէ ղկարգն, և որ ձեռնադրածն (=ձեռնադրվածին) ձեռնադրէ, նա նոյն է...» (ՍԳԴ, էջ 22): «Եւ ինքն գերդ քնացածն երկնայ, շունենայ իմացութիւն վասն ցաւոց մարմնոյն...» (Գրգս. Քնն. էջ 62): «Ջրաղացք և այսպիսի շինուածք ազատ է» (ՍԳԴ, էջ 18): «Բայց պարտ է ամէն դատաւորաց գիտենալ, որ աշխարհիս ամէն վայելվածք երազի նման է և անցաւոր» (ն. տ. էջ 19): «Կզանալն լինին ի յառաջսն, վասնզի ողնայշարին զօթուածքն խլին, նայ կզանայ...» (Գրգս. Քնն. էջ 76—77): «ՁՔրիստոսի արեամբ զնածքս, (=գնվածներիս), եպիսկոպոսքն կու ծախեն» (ՖրԴ, էջ 276) և այլն:

Հարակատար դերբայով ածականի կիրառությունն ունեն ինչպես շեղոք, այնպես էլ ներգործական սեռի բայերը. վերջինները այս դեպքում ևս կրավորական իմաստով են օգտագործվում: Օրինակները շեղոք սեռի բայերով. «Եւ թէ այս իջած արիւնս միջակ լինի և նօսը, նայ իւր ուռիցն ի մորթին լինի...» (Գրգս. Քնն. էջ 29): «Եւ յառաջ քան զամէնն յիշենք զկատողած շանցն զխածածան» (ն. տ. էջ 45), «Նա դու ծառ ես ծաղկած, որ ես բերել՝ պտուղ բարի: Մաքրած մարդ ու քաղցած, ի քեզ ի մօտ ով հանդիպի...» (ԿԾԲ, 207): «Ամենքն են զըրախտ ծաղկած...» (ՀԾԲ, էջ 148):

Ներգործական սեռի բայերով՝ «Իսկ այն ցան, որ լինի ի յայն կեղևն, որ ի քերած (= քերված) յեղջիւրի նման է» (Գրգս. Քնն. էջ 80): «Թէ ի յաշխարհս շատ կենաս, զինչ ժողոված (= ժողովված՝ հավաքված) ջուրն որ հօտիս» ((ՖրԴ, էջ 270): «[Մահն] անողորմ բաժանէ զնոր պսակած (= պսակված) հարսն ու փեսայ» (ն. տ. էջ 294): «Շիշ մի հալած (= հալված) ոսկի ի գետինն ի վայր վաթեցի» (ԿԾԲ, էջ 155): «Զինչ գործած (= գործված) մեղք կայր յաշխարհս, զամէն գրտաւ Ստեղծողն առ իս» (ՖրԴ, էջ 265):

Միջին հայերենում հարակատար դերբայն առավելապես հանդես է գալիս հարակատար զխավոր և բաղադրյալ ժամանակների կազմութեան մեջ:

Գերակշռում են, անշուշտ, եւմ օժանդակ բայի հետ կազմված ժամանակները: Այս դեպքում, ինչպես վերևում նշել ենք, ներգործական սեռի բայերը արտահայտում են կրավորական սեռի իմաստ, որտեղ վ ածանցը չի արտահայտվում: Այս խնդրի մեջ խորամուխ լինելիս կարելի է ասել նույնիսկ, որ վ ածանցի կիրառությունն ավելորդ է, քանի որ հարակատար դերբայի բուն իսկ առանձնահատկությունը՝ գործողութեան հետևանքի, ժամանակավոր կամ տեղական հատկանիշի գաղափար արտահայտելը, ավելորդ է դարձնում վ ածանցի կիրառությունը հարակատար դերբայում, որովհետև վ-ն այդ նույն իմաստները պիտի հաղորդեր դերբայածինն:

Հարակատար ներկայի և հարակատար անցյալի օրինակներ շեղոք սեռի բայերով. «Ոչ եմք մեռած ւ՛ ոչ կենդանի» (ՖրԴ, էջ 541): «Ըրբ որ հովիւքն են մալուրած ըզցրուեալ հաւսս ո՞նց ժողովեն» (ն. տ. 276): «Մէկ էլ ի նոցա միջին էր մեռած ւ՛ անկած ի տեղին» (ՀԾԲ, էջ 156): «Մառքըն ծաղիկս ի վեր փըշեն, թէ կան դալար ու շեն մըսած» (ԿԾԲ, էջ 150): «Ես, Սմբատ անարժան... բազում աշխատանօք աշխատեցայ ի դատաստանագիրս..., վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս հանց, որ իսկի շէին ի հասկընալ» (ՍԳԴ, էջ 15), «Եւ այն մասն որ շէ բորբոսած, այրնէ պցուրտն» (ՄՀԶՄ, էջ 88) և այլն:

Օրինակներ ներգործական սեռի (կրավորականի իմաստով) բայերով.

«Այն մարդն, որ Դաւիհ ունի, յոչումէ իսկի շէ ծեծած» (ՖրԴ, էջ 385):

«Բայց պարտ է արթուն կենալ՝ վերուստ է ամէն պատրաստած.

«Աւրհնեալ յամենայն շընշոյ նա գոված [է]» (ն. տ. էջ 389):

«Վասն սրբոց առաքելոցն, Որ ի քենէ են ձեռնադրած» (ն. տ. էջ 320):

«Եւ նայ ասաց, թէ իմ հորթոյն լեզուն հատած էր» (ՎԱԱ, II, էջ 11):

«Եւ եկեալ ըղտոյն և էր բարձած յոյժ» (ՎԱԱ, II, էջ 26):

«Ով գիտութիւն ունի անբաւ՝ ի մարդկանէ ինքն է գոված» (ԿԾԲ, էջ 204):

«Յաշխարհիս այլ գեղեցիկ իրք չէ տեսած,

Զինչ լինի տունն հընազանդ մէկ հրամանաց» (ԿԾԲ, էջ 219):

«Վասն այտոր է՝ որ ջերման կարգին չաքսն առ բազում դասս մարդկան ծածկած է» (ՄՀՁՄ, էջ 132); «Գաւառաց հարկն, որ սահմանովն որ սահմանած է, առնուն պարոնայքն» (ՍԳԴ, էջ 18):

Վերևի օրինակներում հարակատար ժամանակով օգտագործված բոլոր ներգործական սեռի բայերը կրավորական իմաստ ունեն. նրանցից մի մասում արտահայտված է ներգործող խնդիրը՝ «յոչումէ չէ ծեծած», «ի շնչոյ գոված», «ի մարդկանէ գոված», «ի Բենէ են ձեռնադրած», իսկ մյուսներում, թեև ներգործող խնդիրն արտահայտված չէ, բայց ենթադրելի է: Այսպես՝ «լեզուն հատած էր», «հարկն սահմանած է» (ո՛ւմ կողմից), «իրք չէ տեսած» (ո՛ւմ կողմից) և այլն: Գուցե կ'ընդհանրենք, որ սրանք ներգործակա՛ն սեռի գաղափար են արտահայտում, այդ դեպքում կստանանք անիմաստ նախադասություններ, ինչպես՝ «լեզուն՝ ինքը կտրել էր», «հարկը՝ ինքը սահմանել էր» և այլն:

Հարակատար դերբայով կազմվում են նաև բաղադրյալ ժամանակներ լինիմ, կամ և ունիմ բայերի հարադրությամբ, ինչպես՝ «Իսկ թանին փոխան գարեջուր տուր, յոր եփած լինի կենդանի խաչեփար, որ ի մանր և ի մեծ ճակերոյն սրբած լինի, և լուացած լինի աղէկ քաղցր ջրով և ջնջխած լինի» (ՄՀՁՄ, էջ 43): «Եւ իւրեանց պատճառն շատ է կամ լինի զարկած, կամ կտրած, կամ թափած, կամ զօթվածոցն խախտեալ...» (Գրգս. Քնն. էջ 28):

Կամ բայի հարադրությամբ, ինչպես ներգործական, այնպես էլ չեզոք սեռի բայերի հետ. «Ի Սահակայն կայր մորթին գրած» (ՍԳԴ, էջ 44): «Եւ թէ սպաննողն է լել պատճառ, նա զէտ սպաննող զինքն դատեն, զէտ որ գրած կայ ի շատ տեղ» (ն. տ. էջ 69): «Զի փատլան ի ներքս ի մարմինն արգիլած կան, որ շելանեն ի գլուխն...» (ՄՀՁՄ, էջ 13): «Ես եմ աման հողէ՝ ւ յիս լըցած կայ խազինայ» (ԿԵԲ, էջ 188):

Ունիմ բայի հարադրությամբ բաղադրյալ ժամանակներ առավելապես հանդիպում են Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ. «Յորժամ ի կրին քարն ջուր հասանի, նա զիւր տաքութիւնն՝ որ ի ներքս է պահած ունէր, ի դուրս հանէ» (անդ, էջ 39):

#### ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Պրոֆ. Ա. Աբրահամյանն իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ պատմականորեն քննելով ենթակայական դերբայի էությունն ու արտահայտած իմաստները, ի տարբերություն նախկին սահմանումների, տալիս է այս դերբայի՝ իր բնորոշումով՝ հետևյալ «մոտավոր» սահմանումը. «Ենթակայական դերբայը ցույց է տալիս գործող կամ եղող, լինելու կամ գործողության կատարման համար ունակ լինելու բայական գաղափար՝ առանց առարկայանալու» (էջ 228, ընդգծումը հեղինակինն է):

Ենթակայական դերբայը գրաբար լեզվում հանդես է գալիս -ող կամ -օղ և -իչ վերջավորություններով: -իչ վերջավորությամբ ձևը համարվում է ավելի հին: -իչ վերջավորությամբ ենթակայական դերբայի նոր կազմություններ միջին հայերենում չեն հանդիպում<sup>9</sup>. Եղածները գրաբարից ուղղակիորեն

<sup>9</sup> Արսեն Այտընյանն իր «Քննական քերականության» մեջ արևմտահայ գրականում -իչ ժանիկով կազմվող ենթակայական դերբայների մասին գրում է. «Բուն աշխարհաբար բայերն է՝ ոչ մեկը կրնա իչ առնուլ, ինչպես են՝ զոցել, ուզել, բնել, փնտռել ևլն» (անդ, էջ 101):



անցած ձևեր են: Մինչդեռ ող-օղ վերջավորություններով ենթակայական դեր-բայները միջին հայերենում շատ ավելի լայն կիրառություն ունեն, քան գրա-բարում: Ենթակայական դերբայով հանգավորվող բանաստեղծական խոսքի նմուշներ կան միջին հայերենում, ինչպես՝

«Պահոց պահող շեմ, այլ կերող,  
Որբոց, այրեաց եմ ես զրկող,  
Ընդ խնդացողս եմ ես լացող» (ՀԵԲ, էջ 175):  
«Թէ տղայ էք մտօք, կաթինըն սիրող,  
Ես լինիմ ձեզ ծնօղ՝ կաթն արբուցանող,  
Թէ իմաստուն էք՝ մտօք հզոր ու կարող,  
Հաստատուն կերակրոց լինիմ ձեզ պատուող» (ն. տ. էջ 185—186)  
և այլն:

Հայագիտության մեջ վեճ է եղել այն մասին, թե ենթակայական դերբայի որ վերջավորությունն է ավելի հին ու ընտիր՝ -ող, թե -օղ: Միջին հայերենի համար այդպիսի հարցադրումը տեղին չէ. բավական է նայել հենց վերևի օրինակին, որտեղ նույն տեղում ունենք և՛ օղ, և՛ -ող վերջավորությունները, այն է՝

«Ես լինիմ ձեզ ծնօղ՝ կաթն արբուցանող»:

Այսպես էլ Ֆրիկի մոտ. «Չարին ատեցող եղէք, որ շինիք բաժին գեհե-նոյն (Դիվան, էջ 490), բայց և՛ «Դու ես բաշխաղ ամէն բարեաց» (ն. տ. էջ 421), կամ՝

«Մէկն է արդար, ՚ւ առաքինի,  
Պահալ, ճրգնող, լաւ, պիտանի» (ն. տ. էջ 548):

Օրինակներ մյուս հեղինակներից՝ գնօղ (ՎԱԱ, էջ 272), ֆարշօղ (ն. տ. էջ 171), ծնօղ (ն. տ. էջ 15), բայց և՛ զարբեցողսն, զարբեցող (ն. տ. էջ 15), ուսցնող (ՄԳԴ, էջ 45), քառմեցնող (ՄՀՁՄ, էջ 37), պարկեշտցնող (ն. տ. էջ 100), ցամաֆեցնող (Գրգս. Քնն. էջ 36) և այլն, և այլն:

Այսպիսով, կիրառական իմաստով այս երկու մասնիկները իրարից տարբերություն չունեն, առավելապես աւ>օ, ապա և օ>ո պատմական հնչյունափոխությամբ բոլորովին նույնացել են:

Ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենում ենթակայական դերբայ կազմվում է ամեն մի բայից:

-Ող և -օղ վերջավորություններ ավելանում են ներկայի և անցյալի հիմքերի վրա. հետևողականորեն ներկայի հիմքի վրա են ավելանում ե, ի, ու խոնարհման (պարզ թե ածանցավոր), ինչպես նաև պատճառական բայերում, ինչպես՝ բաշխաղ (ՖրԴ, էջ 421), խաբող (ՀԵԲ, էջ 186), գնօղ (ՎԱԱ, II, էջ 272), գտնողին (ՄԳԴ, էջ 20), սպաննող (ն. տ. էջ 26), առնող (ն. տ. էջ 44), ցամաֆեցնող (Գրգս. Քնն. էջ 36), ուսցնող (ՄԳԴ. էջ 45) և այլն: Սակավ բացառություններից պետք է նշել Ֆրիկի մոտ հանդիպող ատեցող (էջ 49), Հեռացու այրեցող (էջ 4) ձևերը, որոնք կազմված են անցյալի հիմքից: Սրանց հակառակ հետևողականորեն անցյալի հիմքի վրա ավելանալով է կազմվում ա խոնարհման բայերի ենթակայականը, ինչպես՝ խնդացող (ՀԵԲ, էջ 175), ցանկացող (ն. տ. էջ 185), (զ)բացող (ՄՀՁՄ, էջ 75):

Միջին հայերենում ևս ենթակայական դերբայը բայի խոնարհման համակարգի մեջ չի մտնում, այլ եմ, լինիմ և այլ օժանդակ բայերի հետ կազմում է, այսպես կոչված, «պոտենցիալ» ժամանակներ, ինչպես՝

«Որք մանկունք էք, տղայք, ուսման ցանկացող,  
եղերուք Աստուծոյ ու մարդկան սիրող,  
Յուսացէք դուք յԱստուած, որ բարեացն է տուող...» (ՀԵՐ, էջ 185):

Վերևի օրինակներում սիրող և տուող ենթակայական դերբայները ստորագելիական վերադրի արժեքով են, առաջինը՝ եղերուք սիրող՝ «սիրեցեք» պոտենցիալ հրամայականի իմաստով է, իսկ երկրորդը՝ տուող է՝ «տալիս է» պոտենցիալ ներկա ժամանակի իմաստով:

### ԺԵՏԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ

Այժմ հայագիտության մեջ ընդունված տեսակետ կա, որ ժխտական դերբայը հատուկ է ոչ միայն արևելահայ գրականին, այլև, գրաբարը բացառած, հայերենի բոլոր դրսևորումներին, առավելապես, կը ճյուղի բարբառներին: Պրոֆ. Ա. Աբրահամյանը, մանրամասնորեն ուսումնասիրելով ժխտական դերբայի դրսևորումները հայոց լեզվի մեջ ամբողջությամբ, ի տարբերություն ժխտական դերբային տրված նախկին սահմանումների<sup>10</sup>, տվել է հետևյալ առավել համապարփակ ու ճիշտ սահմանումը. «ժխտական դերբայը ցույց է տալիս մի գործողության կամ եղելության գաղափար, որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով՝ (ընդգծումը հեղինակինն է)»<sup>11</sup>:

Արդ, ինչպես է ձևավորվում ժխտական դերբայը և ի՞նչ արտահայտություններ ունի միջին հայերենում: Ժխտական դերբայը ձևավորվում է անորոշ դերբայից և չ ժխտական մասնիկով կազմված օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերից. ինչպես, օրինակ՝ «...Ձի երբ ի սրբոյն ի սահմանէն շեն ի պատկառիլ (= շեն պատկառում), նա ի մեռոյս որպէ՛ս» (ՍԳԴ, էջ 27): «Նւ շեն ի հասկանալ (= շեն հասկանում) մրտօք ճանշել բան ժածկաբար» (ԿԵՐ, էջ 201): «Ձէր ի գիտել (= չէր իմանում), թէ մերկիկ խատառակ էր, և յուրացեալ եմուտ ի քաղաքն» (ՎԱԱ, II, էջ 51):

«է՛ր շես ի լալ (= լաց շես լինում), 'ւ [շես ի] ապաշխարել,  
Նւ զքո անշափ մեղքըն [շես ի] քաւել» (ՖՐԴ, էջ 409):

Վերևի օրինակներում, ինչպես կարելի է հասկանալ մտքից, շեն ի պատկառիլ, շեն ի հասկանալ, չէր ի գիտել, շես ի լալ և այլ բայաձևերը սահմանականի ներկա և անցյալ անկատար ժխտական ձևեր են, արտահայտված ի նախդիրով և անորոշ դերբայով: Իսկ ի՞նչ կազմություն է սա: Ինչպես հայտնի է, հայ լեզվամտածողութայամբ ներկա ժամանակը գործողության մեջ լինելու (ներգոյականի) գաղափար է արտահայտում և, ինչպես ցույց է տալիս պրոֆ. Ա. Ղարիբյանն իր «Լեզվական մտածողության տարատեսակները հայերենում» հոդվածում (ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատոր II, Երևան, 1947), այս լեզվամտածողությունը հատուկ է հայերենի

<sup>10</sup> Արդի ըմբռնմամբ ժխտական դերբայը կազմում է միայն պայմանականի ապառնու և անցյալ ապառնու ժխտական ձևերը (կսիրեմ-չեմ սիրի, կսիրեի-չեի սիրի):

<sup>11</sup> Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 261:

բոլոր հատվածներին ու դրսևորումներին: Միջին հայերենում կան փաստեր, որ այս կազմությունները նույնիսկ միայն ժխտակա՛ն ձևերին հատուկ չեն եղել. այսպես՝ Մխիթար Հերացի բժշկապետի «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ գտնում են ի նախդիրով և անորոշ դերբայով ներկա ժամանակի կազմության հաստատական հետևյալ օրինակները. «Եւ երբ հիւանդութիւն եփի, երակ առ, զի մաղձն ի յայրիլ լինի» (էջ 119): «Խասիէթ զիւրական և զառանձին գործն է ի ասել, զոր անուանեն յատուկ» (ն. տ. էջ 133): Իսկ Վարդան Այգեկցու առակներում ունենք հետևյալ առավել հստակ օրինակը. «Իբրեւ եհաս առաջի կայլոյն, ասէ աղուէսն ի միտս իւր. դառնում և տեսնում զխէչփառն, թէ ի գալ է» (ՎԱԱ, II, էջ 38):

Մեծավաստակ հայագետ Արսեն Այտընյանը, ինչպես վկայված է «Քննական քերականութիւն» աշխատության մեջ, նման օրինակներ է նկատել Հովհան Մամիկոնյան պատմիչի մոտ. «Յոյնք են ի գալ. Յայրել էք ի տալ» (Նախաշավիղ, էջ 126), մի բան, որ, իր բառերով ասած՝ «արդի բացասական բայերուն կազմութեանն համար կարեւոր է» (ն. տ. էջ 126):

Վերևի ձևերը նույնպես ներգոյականի կազմություններ են. գրաբարում ներգոյականի գաղափարն արտահայտվում էր եզակիում տրականի կամ հայցականի վրա ի նախդիր ավելացնելով: Այստեղ ի նախդիրն ավելացած է հայցական ձևի վրա, քանի որ գրաբարում անորոշ դերբայը ենթարկվում է ու արտաքին թեքման, որի ներգոյականի իմաստը միայն հայցականի վրա ի նախդիր ավելացնելով է կազմվում:

Ժխտական դերբայը, սակայն, միջին հայերենում միաձև արտահայտություն չունի. ինչքան որ ուշադիր կերպով դուրս ենք գրել դերբայի կիրառությունները, փաստերը մեզ թույլ են տալիս հետևյալ շորս տեսակների մեջ խմբավորել դերբայի դրսևորումները.

ա) Ի նախդիրով և անորոշ դերբայով.

բ) Ի նախդիրով և անորոշ դերբայի լ ձայնորդի ր-ի հնչյունափոխված ձևով.

գ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով (առանց ի նախդիրի).

դ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի լ ձայնորդի ր-ի հնչյունափոխված ձևով (առանց ի նախդիրի):

Նկատի ունենալով, որ 2-րդ և 4-րդ տեսակներում լ>ր հնչյունափոխությունը քերականական արժեք չի ներկայացնում, կարելի էր նաև երկու մեծ խմբերի բաժանել: Օրինակներ՝

ա) Ի նախդիրով և անորոշ դերբայով (սահմանական ներկա և պայմանական ապառնի ժամանակներով). «Ձի ամենեկին օրէնքս չէ ի տալ (=թույլ չի տալիս), որ բիճն երէց լինի, այլ՝ որպէս վերոգրեցաք՝ երբ յաղէկ ազգէ լինի» (ՄԳԴ, էջ 33):

«...[Որ] այրիկն լինայ պիղծ, հայնց որ, այնոր բանիւ չէ ի կարել (=չկարողանա, հնարավոր չլինի) ի հուն իջնել... և չկարէ ապրեցնել զկինն, նա կու հրամայէ օրէնքս, որ բաժնեն» (ն. տ. էջ 49):

«Ապա անուանեցին զայս ջերմս ի յայն տեղին՝ որ չէ ի յերևել, (=չի երեւվում) և պակաս է, զի այս անունս լնու զայն գօրն, և զայն տեղին, որ չէ ի յերևեճալ» (ՄՀՁՄ, էջ 110):

«Եւ երբ տեսանէ բժիշկն, որ այս սլատահմունքս ի հիւանդութեան սկիզբն

են, և շեն ի պակասել (= շեն պակասում) և ոչ ի յաւելնալն (= շեն ավելանում), ապա գիտենայ՝ որ հիւանդութիւնն դեռ ի յառաջին ժամանակն է և ի սկիզբն» (ն. տ. էջ 137):

«Քաղաւորք և հայրապետք զԱստուած կրրկին բարկացընեն.

երբ յիրար շեն ի հաշտիլ (= շեն հաշտվում), զԱստուած որո՞վ հաշտեցընեն» (ՅրԴ, էջ 278):

«Ձաւր հանապազ դու կաս ի քուն՝ շես ի ասել (= շես ասում) թ՛աւր կայ գալոյ» (ն. տ. էջ 307):

«...Ձմատնէհարն մոմն կու առնու, քարն, ջուրն կամ փուշն շեն ի առնուլ (= շեն առնում)» (ՎԱԱ, II, էջ 306):

«Ջհուտ մի ի հորն էր անկել և էր օրն շաբաթ և եկեալ քրիստոնեայ մի, թե բերեմ շուան և հանեմ զքեզ ի հօրուս. և ասաց, թէ շեմ ի կամիլ (= շեմ ուզում), զի շաբաթ էր» (ն. տ. էջ 310): «...Եւ թաղաւորն բոկ էրեկ և ասաց. թէ շես ի խօսիլ (= շես խօսի), ես զիս կու սպանեմ» (ն. տ. էջ 315): «Ասի առակաց, թէ գալին ձագն բռնեցին... և ասեն՝ ասայ «եչ». նա ասէ. ես կու երթամ, զի՛հ անցաւ, այլ շեմ ի հասնիլ (= շեմ հասնի)» (ն. տ. էջ 321):

Օրինակներ անցյալ անկատարով.

«Ես, Սմբատ... բազում աշխատանօք աշխատեցայ ի դատաստանագիրս... վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս հայնց, որ իսկի շէին ի հասկնալ (= շէին հասկանում)» (ՍԳԴ, էջ 15):

«...Բայց թէ ընդ ծուլութենէ շփնտոէ գնողն զիրքն և ի ծալն կենայ աւերն, նա գնողին է. զի է՛ր շէր ի հայել (= շէր նայում) գումաշն» (ն. տ. էջ 63):

«Ազուան գտաւ կոշտ մի թարխնայ... և կամէր ճաշակել և էր այգոցն. և յայնժամ արձակ շէր ի հաշակել (= շէր ուտում)» (ՎԱԱ, II, էջ 30):

«Եւ յորժամ կերթային, որ հաց հանէի(ն), դուռն շէր ի բացվիլ (= շէր բացվում)» (ն. տ. էջ 304):

«Սուրբ հայր մի ի դժոխոցն ահէն ոչ ի յաղօթք... շէր ի հանգչիլ (= շէր հանգստանում)» (ն. տ. էջ 305):

Ինչպես կարելի է տեսնել վերևի օրինակներում, ե, ա, ու խոնարհման բայերն անորոշ-ժխտական դերբայում ունեն՝ 1) ել (շես ի ասել, շէր ի ճաշակել, շէ ի կարել), 2) ալ (շէ ի տալ, շէ ի յերեւնալ, շէին ի հասկնալ), 3) ուլ (շեն ի առնուլ) վերջավորութուններ: Մինչդեռ ի խոնարհման բայերն ունեն և՛ իլ (շեմ ի կամիլ, շէր ի հանգչիլ, շես ի խօսիլ), և՛ ել վերջավորութուններ՝ շէր ի հայել, շէր ի յերեկել: Մյուս կողմից՝ ե խոնարհման բայերը կրավորական իմաստով օգտագործվելիս ենթարկվում են ի խոնարհման և ունենում են կրավորական վ ածանց. շէր ի բացվիլ:

Վերևի օրինակներում շէ ի կարել, շեմ ի հասնիլ դրված են պայմանականի ժխտականի իմաստով: Հայտնի է, որ արևմտահայ գրականում և ընդհանրապես Կր ճյուղի բարբառներում սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակներն օգտագործվում են նաև որպես պայմանական եղանակի ժամանակներ: Ասենք, այս երևույթը միջին հայերենին կամ արևմտահայերենին միայն հատուկ չէ: Ինչպես վկայում է Ա. Այտընյանը՝ «Մատենագրութեան սկիզբները՝ բուն բնափր գրոց մեջ (ընդգծումը մերն է—ՍԱ) բաւական յաճախեալ ոճ է՝ Եկ առաքեմ զքեզ. գնամք. եկ երթամք շրջմք. թող անիծանէ. Ասեմք զի իջցէ («ըսեմք որ իջնայ» (ՔՔ, էջ 74): Ահա և մի օրինակ Եղիշեհից. «Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին (= կկատարվեն) խորհուրդք կամաց քոց» (Եղիշե, I յեղանակ):

Պատճառը հայտնի է: Պրոֆ. Հ. Աճառյանը հստակորեն է ձևակերպել. «Գրաբարը թեև ստորադասականի ներկա ժամանակը ուներ, բայց ստորադասականի անցյալ անկատարի (իմա՝ անցյալի ապառնի—ՍԱ) համար առանձին ձև չուներ, և այդ պակասը լրացնում էր՝ նրա փոխարեն գործածելով սահմանականի անկատարը: Սահմանականի անկատարը իբրև ստորադասական գործածելու այս ձևը ազդեց նաև ներկայի վրա և շուտով սկսեցին սահմանական ներկան էլ գործածել իբրև ստորադասական ներկա (Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 4, Ա մաս, էջ 386)<sup>12</sup>:

բ) Ի նախդիրով և անորոշ դերբայի և ձայնորդի Ե-ի հնչյունափոխված ձևով.

«Եւ գան մարդիքն ի վերայ և բռնեն. զի ի ծառն շեն ի կարեւ (=չեն կարողանում) ելնել» (ՎԱԱ, էջ 319):

«Շուն եմ առ դուրբս քո քաղցած.

Չեմ ի հայցեւ (=չեմ հայցում) ըզհաց մանկանց» (ՖրՊ, էջ 487):

«Ես շեմ ի տաւ (=չեմ տալիս) հանց պատասխան,

Դու հանց անսիրտ յինչի՞ եղար» (ն. տ. էջ 476):

«Նա շէր ի տաւ (=չէր տալիս) հալաւիկ մի

՝ և ոչ հաց մի իւր հոգուն համար» (ն. տ. էջ 480):

գ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով (առանց ի նախդիրի հանդես գալու).

«Զի տալ (=թուլլ չի տալիս) հրաման օրէնքս, որ ծառայ ի մարդոյ ժառանգութիւն ածեն» (ՍԳԴ, էջ 33):

«Թէ որ կարգաւոր արեղայ... միս ուտէ... պարտ է դատել... շկայ հրամանք, որ ուտէ. և տես զայլազգիսն որ շեն ուտել (=չեն ուտում)» (ն. տ. էջ 37—38):

«Որդունքն շեն ինձ ռղորմիլ (=չեն խղճա) թող թէ հազար երդումըն տամ» (ՖրՊ, էջ 253):

«Մինչ ածէ զմահն ու մաւտ է և անողորմ գրաւըն գայ...»

Զի ասել (=չի ասի), թէ պարտական է կամ աղքատ և կամ տրղայ,

Զի խղճալ (=չի խղճա) օտարական, թող թէ հազար դառըն կու լայ,

Զի քրճնել (=չի քննի) թագաւոր, իշխան, ոչ զայնոսիկ որ կու մուրայ

...Մահըն կուգայ յանկարծակի, այլ շի թողուլ (=չի թողնի) որ նա շընչայ» (ն. տ. էջ 297):

«Օձի նման է մեղքն, որ ի ծակն սուր կու մտանէ, և դուրս շեն կարել (=չեն կարող[անում]) քարշել (ՎԱԱ, էջ 119):

«Եւ աւուր միում ասէ եզն մի առ միւս եզն, թե ի՞նչ առնեմ. զի անխնայ կու լծեն զիս ամէն օր և շեն ռղորմիլ (=չեն խղճում)» (ն. տ. էջ 160): «Ասէ այրն, ո՛վ գայլ զիմ իշուկս կորուսել եմ և շեմ գտնուլ» (=չեմ գտնում) (ն. տ. էջ 238):

<sup>12</sup> Ապացույցի համար բերենք գրաբարից մի քանի օրինակ.

«Բայց թէ գիտէի (=*իմանայի*) թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում... մեծարանօք արձակէի (=*կարձակեի*) զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն» (Փ. Բուզանդ, IV, ԾԴ):

«Եւ զմիսն եթէ սիրտ ուրուք առնույր (=*ախորժեր*) և ուտէր (=*ուտեր*)՝ ոչ վնասէր (=*չէր վնասի*)» (Ծգնիկ, I, ԺԵ):

«Զի այնչափ կուտեցան ի վերայ, որ և տեղի չգտանէին՝ որ յեզր ելանէին (=*ելնեին*, դուրս գային)» (Հովհ. Մամիկոնյան):

«Եւ վէմն շէր շարժիլ (=չէր շարժվում)» (ն. տ. էջ 171):

«Եւ ասէ աղուեսն. թէ դայ սիրտն ունէր կամ ականջ, յեր լսեց դբու գոռալն  
և գերծաւ ի ձեռաց քոց, նայ շէր կրկին յետս դառնալ<sup>13</sup> (=չէր վերադառնա)»  
(ն. տ. էջ 6):

դ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի չ ձայնորդի ր-ի հըն-  
չյունափոխված ձևով.

«Ֆրրի՛կ, շունիս խելք իմաստի, է՛ր շես լրսեր (=չես լսում) դու խրատի»  
(ՖրԴ, էջ 290):

«Հազար ցեղ թապտիր կածեմ թէ (բա)ներուս ելնիմ ի հուն,

ժամ ժամ ի դէպկապ կուգա, շի րնկնիր (=չի ընկնում) իմ ջուրն ի յա-  
նուն» (ն. տ. էջ 342):

«է՛ր շես երթար (=չես գնում) ի միտքդ ի վար,

է՛յ, գերեվար մարդ ու տրխմար» (ն. տ. էջ 478):

«Եւ այս են բանք նորա, որ թէ գմորթ նորա ի հուր արկանեն, նա շի այ-  
րիբ (=չի այրվում, չի այրվի)» (ՎԱԱ, II, էջ 101):

«Ցուցանէ առակս, թէ հին թշնամին նոր սիրելի չէ (?!) լինիր (=չի լինի)»  
(ն. տ. էջ 228):

«Ի՛շուն բնութին և սահմանք է, որ ի դիժար տեղ անկանի և կամ ի շա-  
ղախ խրի, այլ ան տեղովն շի գնար (=չի գնա)» (ն. տ. էջ 156):

«Իմ սիրտ վատին մի՛ լսեր ու շարին տեղ իսկի մի՛ տար.

Յայս աստընւորիս վերայ վատն իսկի մարդոյ շի մնար» (ՀԵԲ, էջ 156),

«Մո՛յ Յովաննէս... Չես ուրանար գթո աստուած,

Ու շես լսեր դու մեկ խօսաց» (ն. տ. էջ 170):

«Խիստ խղճուկ եմ ու անյոյս.

...Չերևիր եզերն ճանփուս» (ԿԵԲ, էջ 162):

«Զի թէ մարդ զգլուխն ի կշեռքն չղնէ, գանձ շի գտնուր (=չի գտնի)»  
(ՂՀՆՈՒ, 2-րդ մաս, էջ 327):

Մենք հատուկ նպատակով այսքան շատ օրինակներ բերեցինք ժխտական  
դերբայի այս կիրառության համար՝ աշխատելով տալ բայաձևերի դրսևորում-  
ները այս շրջանի հեղինակների գործերում:

Առաջին իսկ հայացքից կարելի է տեսնել, որ սերտ աղերսակցություն  
կա միջին հայերենի այս վերջին ձևերի և արևմտահայ գրականի սահմանա-  
կանի ներկա, անցյալ անկատար և պայմանականի ժխտական ձևերի կազմու-  
թյան մեջ: Արսեն Այտընյանն իր «Քննական քերականության» մեջ արևմտա-  
հայ գրական լեզվի ե, ի, ա (պարզ և ածանցավոր) խոնարհման բայերի սահ-  
մանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների խոնարհման  
հետևյալ տախտակն է տալիս.

Ներգործական

Ա լծորդ

- Չեմ (չէի) լսեր
- Չես (չէիր) լսեր
- Չի (չէր) լսեր
- Չենք (չէինք) լսեր

Բ լծորդ

- Չեմ սորվիր Չէի սորվեր
- Չես սորվիր Չէիր սորվեր
- Չի սորվիր Չէր սորվեր
- Չենք սորվիր Չէինք սորվեր

<sup>13</sup> Նույն առակի մեկ ուրիշ տարբերակում բայաձևն ունենք շէր դառնալ ձևով (ն. տ. էջ 7):

Չէք (չէիք) լսեր

Չեն (չէին լսեր

Գ լծորդ

Չեմ (չէի) կարդար

Չես (չէիր) կարդար

Չի (չէր) կարդար

Չենք (չէինք) կարդար

Չէք (չէիք) կարդար

Չեն (չէին) կարդար

Չէք սորվիր Չէիք սորվեր

Չեն սորվիր Չէին սորվեր

Դ լծորդ

Չեմ (չէի) մոռնար

Չես (չէիր) մոռնար

Չի (չէր) մոռնար

Չենք (չէինք) մոռնար

Չէք (չէիք) մոռնար

Չեն (չէին) մոռնար (անդ էջ 83)<sup>14</sup>:

Ահա և Ասատուրների քերականության սահմանումը. «բացասական բայերուն սահմանական ներկան ու անկատարը կը կազմուին եմ բային բացասականովը (չեմ, չէի), և ամեն մեկ բայի բացասական ձևովը:

Բայերուն բացասական ձևը կը կազմուի աներեւոյթին վերջի լ գիրը ր-ի փոխելով. ՄԻՐԵԼ, շեմ սիրեւ, շես սիրեւ, շի սիրեւ (փոխանակ՝ չէ սիրեւ): ԽՕՍԻԼ, շեմ խօսիր, շես խօսիր, շի խօսիր, ԿԱՐԴԱԼ, շեմ կարդար, շի կարդար<sup>15</sup>:

Արեւմտահայ գրականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին: Նույնիսկ ի խոնարհման բայերի անցյալ անկատարի ժխտականի ի>ե հնչյունափոխությամբ՝ շէր փախշեր: Ինչպես տեսնում ենք, երկու քերականներն էլ ու խոնարհման բայերի օրինակներ չեն բերել: Դա հասկանալի է, քանի որ արեւմտահայ գրականում՝ «Ուլ վերջացող բայերէն միայն թողուլ և զբօսնուլ բայերն են որ ամբողջապէս կը խոնարհուին... և երկուքն ալ իրարմէ տարբեր ձևեր ունին կատարյալի և հրամայականի մէջ»,—բացատրված է Ասատուրների քերականության մեջ (ն. տ. էջ 163):

Արդ, այս բոլոր չորս ձևերից ո՞րն է ավելի շատ օգտագործվում: Բերված օրինակներից կարելի է տեսնել, որ ավելի շատ օգտագործվում են 1-ին, 3-րդ և չորրորդ տեսակները: Մյուս կողմից՝ դժվար է ասել, թե ժամանակագրական կարգով ո՞րն է սկզբնականը, քանի որ նույն հեղինակն օգտագործում է 2-րդ, 3-րդ և նույնիսկ բոլոր 4 ձևերն էլ. այսպես, օրինակ, Վարդան Այգեկցու առակներում գտնում ենք՝ շեմ ի կամիլ (էջ 310), շես ի գալ (էջ 312)—1-ին տեսակ. շեն ի կարեւ (էջ 319)—2-րդ տեսակ. շես վախիլ (էջ 217), շեմ գրտնուլ (էջ 238)—3-րդ տեսակ. շես հաւատար (էջ 12), շի այրիք (էջ 101)—4-րդ տեսակ: Նույնը և Ֆրիկի մոտ. շեն ի հաշտիլ (էջ 278), շես ի ասել (էջ 307), շես ի լալ (էջ 409)—1-ին տեսակ. շեմ ի գիտեւ (էջ 252), շեմ ի տար (էջ 476), շեմ ի հայցեւ (էջ 48)—2-րդ տեսակ. շեմ իմանալ (էջ 296), շի թողուլ (էջ 297), շեմ ելնել (էջ 242)—3-րդ տեսակ. շես առնեւ (էջ 375), շես լսեւ (էջ 290), շի րնկնիր (էջ 342)—4-րդ տեսակ:

Սակայն ակնբախ է մի բան. ձգտումը 4-րդ ձևն է՝ օժանդակ բայով և անորոշ դերբայի լ>ր հնչյունափոխությամբ, մի բան, որ, ինչպես վերևում

<sup>14</sup> Այտրեյանը նույնպես ընդունում է ժխտման դերբայ: Ահա նրա դիտողությունը. «Շատ հաճախյալ սխալ է՝ չէր տեսնուէր. չէր գործէր. չէի լսէր. չէին սպասուէր. փոխանակ ըսելու՝ չէր տեսնուէր ևլն—որ հառաջ եկած է բացասական ձևը շեմաշեմալէն (ընդգծու մը մերն է—ՍԱ) և անկատարի հետ շփոթելեն (ՔՔ, էջ 86):

<sup>15</sup> Զապել Ն. Ասատուր, Գործնական քերականութիւն արդի աշխարհարարի, Բ գիրք, Կ. Պոլիս, 1915, էջ 175:

ցույց տվեցինք, արևմտահայ գրականում ընդհանուր և միակ տիրապետող ձևն է:

Այս շրջանի գրականության մեջ արդի հայերենի պայմանականի ժխտական ձևերը հիշեցնող բայաձևեր չեն հանդիպում, ձեռքի տակ եղած փաստերում միայն երրորդ դեմքով ձևեր ունենք, որ բնականորեն պետք է այդպիսի վերջավորություններ ունենային:

### ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Միջին հայերենն ունի 5 եղանակ. սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական և հարկադրական: Մենք նպատակ չունենք այստեղ բայի եղանակների տեսական քննություն անել, քանի որ արդի հայերենի բայի և խոնարհման տեսությանը նվիրված աշխատություններում (Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953. Հ. Անաոյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, Ա գիրք, Երևան, 1959, Բ գիրք, Երևան, 1961, Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Երևան, 1962 և այլն) այդ հարցը բազմակողմանիորեն քննված է, մանավանդ որ այդ երևույթների հիմքը նույն «աշխարհաբար» լեզվամտածողությունն է:

Գրաբարի համեմատությամբ մենք միջին հայերենում ունենք 3 նոր եղանակներ. ըղձական, պայմանական և հարկադրական՝ իրենց լեզվական, ձևախմբատային առանձնահատուկ արտահայտություններով: Մյուս կողմից՝ անգործածական է դարձել գրաբարի ստորագասական եղանակը, թեև այս շրջանում ստորագասականի I և II ապառնիների կիրառությանը տեղ-տեղ հանդիպում ենք: Այդ մասին իր տեղում կխոսենք:

Այժմ քննության ենթարկենք եղանակները առանձին-առանձին:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Միջին հայերենում սահմանական եղանակն ունի 9 ժամանակ. ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալ ապառնի, վաղակատար, անցյալ վաղակատար, հարակատար, անցյալ հարակատար և անցյալ կատարյալ: Գրաբարի համեմատությամբ այստեղ ունենք 6 նոր ժամանակներ, համապատասխանաբար կազմված ապառնի, վաղակատար և հարակատար դերբայներից՝ եւ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար բայաձևերի ավելացումով:

Սահմանական եներկա և անցյալ անկատար ժամանակներ.— Միջին հայերենում սահմանական եղանակի ներկան ու անցյալ անկատարը, որպես օրենք, կազմվում են գրաբարյան ներկայի ձևերի վրա կու ավելացնելով. ինչպես՝ «Եւ ասէ առիծն. նենկաժող աղուես. եկ ի վայր. և ասաց. ոչ գամ, վասն զի զհետ մտելոցն կուտեսանեմ և զելն ոչ. վասն զի զամենայն կու սատակեցուցանէր առիծն» (ՎԱԱ, II, էջ 5):

«Իու ես քաղաք Չինումաչին,

Մարդիկ ի քեզ յուշ կու մըտնուն» (ՀԵԲ, էջ 135):

«Մեռաւ Ուռնայ և մնաց .Բ. որդի և արտ մի իւրեանց հայրենի և յամէն տարի կու ցանէին և ի կալնի կէս կու առնէին և՝ տուն մի է[ր] իւրեանց միջնակով՝ զկէսն ի մէկի դիհն կու լնուին... երփ կու տանէին, նայ փոքր եղբայրն



թի մի .Բ.ս ի յիր բաժնէն կու առնուր, ի մեծ եղբօրն ի դիհն կու լնուր...» (ՎԱԱ, II, էջ 304):

«Կարի տեսա ես շատ կարուան,  
Որ կու իջնայր ի հորասան» (ՆՇԲՁ, էջ 576):

Ինչպես որ բարբառների ճյուղային պատկանելիությունը որոշողը հիմնականում սահմանական ներկայի ու անցյալի անկատարի կազմությունն է, այնպես էլ գրաբարն ու միջին հայերենը սահմանազատողը այս «գրամանալի» կու մասնիկն է, որ Արսեն Այտընյանի ճշգրիտ բնութագրումով «արդի լեզուին գլխատուր կերպարանափոխ ընդոն եղած է» (ՔՔ, էջ 75—ընդգծումը մերն է—ՍԱ): Գրաբար լեզվով գրված օվկիանածավալ գրականության մեջ թե՛ հին ժամանակներում և թե՛ ընդհուպ մինչև մեր օրերը չի կարելի գտնել կու մասնիկով կազմված ոչ մի բայածև, մինչդեռ միջին հայերենով գրող ոչ մի հեղինակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած ներսես Շնորհալուց մինչև Ֆրիկ, Երզնկացիները և հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները:

Արդ՝ բնականաբար հարց է ծագում, թե ինչպե՞ս, ե՞րբ և ինչո՞ւ ստեղծվեց այս մասնիկը: Այս բոլոր հարցերին էլ Արսեն Այտընյանը պատասխանել է իրեն հատուկ գիտական մանրակրկիտությամբ և խորաթափանցությամբ: Ծիշտ է, հայագետները հետազայում ևս քննության են առել այս հարցը, առաջ են քաշել նոր գիտական ենթադրություններ, սակայն ցարդ ամենագիտականն ու ամենահամոզիչը, մեր կարծիքով, մնում է Այտընյանի տեսակետը<sup>16</sup>, որը և ընկած է մեր շարադրանքի հիմքում: Վերևում ասացինք, որ դեռևս V դարում նույնիսկ «բուն ընտիր գրոց մեջ»<sup>17</sup>, գրաբարի ներկա և անցյալ անկատար ժամանակները գործածվում էին միաժամանակ ստորագասական եղանակի ապառնիների փոխարեն. հետագա դարերում գրաբարի ստորագասականի I և II ապառնիների գործածությունից դուրս գալու հետևանքով խառնակություն և անորոշություն առաջացավ լեզվի մեջ նույն բայածևի մեջ (սիրեմ-սիրում եմ, սիրեմ, կսիրեմ, պիտի սիրեմ. սիրէի-սիրում էի, սիրէի, կսիրեի, պիտի սիրեի) էպես իրարից տարբեր եղանակների ձևերի նույնանալու պատճառով: Մինչդեռ լեզվի զարգացմանը բնականորեն հատուկ է պարզեցումը: Անհրաժեշտությունը առաջ բերեց նոր մասնիկ՝ կու, որ, զրվելով ստորագասական դարձած ներկա և անկատար բայածևերի վրա, սահմանազատեց սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակները ստորագասականից: Կու մասնիկը մեր գրավոր աղբյուրներում առաջին անգամ երևում է XII դարում<sup>18</sup>, «սակայն անտարակույս է որ նոյն ատեն յանկարծ չբուսաւ, ինչպէս որ հարկաւորութիւն ալ յանկարծ շէր զգացուած» (ՔՔ, էջ 75—76):

Այնուհետև Արսեն Այտընյանը, քննելով այն հարցը, թե ի՞նչ բառ է այս մասնիկը, առաջ է քաշում այն տեսակետը, թե «հնոց կու մասնիկը՝ կայ ու

<sup>16</sup> Պրոֆ. Զ. Աճառյանը անվերապահորեն ընդունում է Արսեն Այտընյանի տեսակետը (տե՛ս նրա «Լիակատար քերականություն...», Երևան, 1959, հ. IV, Ա, էջ 393):

<sup>17</sup> Անտարակույս երևույթը կար հայերենում նաև նախագրային շրջանում, քանի որ նման լեզվական իրողությունները դարերի բարեշրջությունների հետևանք են:

<sup>18</sup> Եթե պարզվի, որ Կեղծ Շապուհ Բագրատունու «Պատմությունը» (որտեղ կու եղանակիչը մենք գործածված ենք գտնում երեք անգամ, այն էլ՝ երկխոսության մեջ, ինչպես՝ կու տաւալի, կու գործենք, կու սիրէ) իսկապես X դարի գրավոր հուշարձան է, ապա առաջնությունն ինքնին կանցնի նրան, և հարկ կլինի կու եղանակիչը դիտել ո՛չ թե XII, այլ X դարում առաջին անգամ գրավոր ավանդված իրողություն (տե՛ս ԱՄՂԶԲ, էջ 376):

բառերուն բաղադրութիւնն է, եւ թէ ամփոփմամբ ըսուած է կ'ու նայի՝ փոխանակ կայ ու նայի -կու ուտէ՝ փխկ. կայ և ուտէ... որ յետոյ ընդհանուր ձեւ մ'եղած է մնացած դէմքերուն ալ. կու լսենք՝ փխկ. կանք ու լսենք, կու տեսանէք, փխկ. կայր ու տեսանէք և այլն (ն. տ. էջ 76—77)<sup>19</sup>: Կու մասնիկը հետագայում ու ձայնավորի հնչյունափոխությամբ տվել է կը, կի, իսկ նոր ժամանակներում՝ կ', կ:

Կու մասնիկի կազմութեան վերաբերյալ վերևում տրված բացատրությունը միանգամայն ճշտվում է հայ բարբառների ընձեռած փաստերով: Մեր «Կեսարիայի բարբառը»<sup>20</sup> աշխատության մեջ (ապակետիպ, Երևան, 1961) ցույց ենք տվել, որ սահմանափակի գա գիրէմ, գա գիրէս, գա գիրէ, գա գիրէնք... ձևերում գա եղանակիչը երրորդ դեմքի եզակի կայ > գա բայաձևն է, որ համաբանության օրենքով տարածվել է մյուս դեմքերի վրա՝ դառնալով եղանակիչ: Ապացույց՝ ներկա ժամանակի ժխտական կազմությունը.

**Ներկա**

չի քամ գիրէմ	չի քանք գիրէնք
չի քաս գիրէս	չի քաք գիրէք
չի քա գիրէ	չի քան գիրէն

Դժվար չէ համոզվել, որ չիքամ, չիքաս, չիքա առաջացել են չ+կամ, չ+կաս, չ+կայ ձևերից՝ շ-ի ազդեցությամբ կ>ք հնչյունափոխությամբ: Մյուս կողմից՝ բարբառումս ըղձական բայաձևեր են՝ գիրէմ, բէրէմ, մանցունէմ և այլն: Իսկ պայմանականի բայաձևերը՝ գը (<կը) գիրէմ, գի բէրէմ ,գը մանցունէմ:

Արդարամիտ լինելու համար ասենք, որ մեծ հայագետը իր ժամանակին նկատել է այս՝ գրելով. «Գուցէ ասով այն երեսոյթն ալ կարենայ մեկնուիլ՝ որ գաւառական լեզուաց մէջ կը լսուի՝ Տեսնէ կայ, հայի կայ, խօսայ կայ» (ՔՔ, էջ 77): Այս բացատրությունը, սակայն, չի ներդաշնակվում իր աշխատության 98-րդ էջում հայտնած այն կարծիքին, որ, իբր, թուրքերենի յօր (>կօր) շարունակական մասնիկը ուրիշ գավառականում եղել է կուզէ կա: Եթէ մեծ հայագետը կա մասնիկի ետադաս կիրառությունը շարունակականի դրսևորում է դիտում, կարելի է գուցե համաձայնել, բայց թուրքական ծագման հետ՝ երբեք:

Հարցն այսպես է հասկացել նաև պրոֆ. Հ. Աճառյանը: Ահա նրա դատողությունները խնդրո առարկա դարձած հարցի վերաբերյալ. «Դրականապես հաստատելու համար, թե կու ծագում է կալ բայից՝ մեզ իբրև լավագույն ապացույց ծառայում է Կեսարիո բարբառի բացասականի կազմությունը: Այստեղ մենք ունենք՝

<sup>19</sup> Կու մասնիկի ծագման մասին հայ և օտար հայագետներ արտահայտել են հետևյալ կարծիքները.

ա) Հ. Պետերման—կամ բառից՝ ա-ի սղմամբ և մ>ու փոփոխությամբ (հմմտ. անուն-անոմն).  
 բ) Մ. Աբեղյան—նախաձև կոյ մասնիկից, մի անկախ բառ, որ նշանակել է «ախ».  
 գ) Գ. Ղափանցյան—լազերեն «նույնապաշտոն» ԿՕ մասնիկից.  
 դ) Ա. Մուրվալյան—քարթվելական ՕԿՈՆ «պիտի» մասնիկից.  
 Ըստ Ա. Մարգարյանի կարծիքի, կու-ն առաջացել է կամիմ բայի կամի (եզակի III դեմք) բառաձևից՝ կ-ին հավելված ու հնչյունով, որ ավելացված է արտասանական բարեհնչյունության աահանքով:

<sup>20</sup> Աշխատությունը որպես թեկնածուական դիսերտացիա է գրված. ավարտված է 1956 թ., պաշտպանված՝ 1958 թ.:

չկամ կարգամ «չեմ կարդում»  
չկար գրէի «չէի գրում»  
չկաս գրէիր «չէիր գրում»

(Աւարձան, Պատմ. հայ Կես., Բ, 1664):

Կասկած չկա, որ այս բոլորի մեջ չկամ, չկաս, չկար<sup>21</sup> զանազան խոնարհյալ ձևեր են կալ «կենալ» բայի, որից ածանցված է նաև կայ ու կու (ԼՔՀԼ, Երևան, 1959, հ. 4, Ա, էջ 397—398):

Այժմ տեսնենք, թե կու մասնիկը ինչ շահով և ինչպիսի՜ փոփոխություններով է հանդես գալիս միջին հայերենում: Բոլոր հեղինակներն էլ թե՛ բաղաձայնով և թե՛ ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ դնում են կու. այսպես՝ «...Յափիկն ունէր տաճկի խնկիկ Ու ի շուրջ կուզայ զետ փերեզիկ» (ՆՇԲԶ, էջ 565): «Հետ կու կանչէ զետ ըզգեհոտ» (Ն. տ. էջ 570): «Գարին ի փորըն կու աճէ» (Ն. տ. էջ 571): «Ամեն սզգ և երկիր իրենց հաշվովն և ժամովն տօն կու անեն... և մէկ և ընդ որ կու երթան տօնքն...» (ՄԳԴ, էջ 30): «Կու հրամայէ ս. Սահակ թէ սզէտ և պեղծ մարդիկ բաժին կու ձգեն... և կու ասեն, թե այլ և այլ են ազգաց և քրիստոնէից եկեղեցիք» (Ն. տ. էջ 29): «Թէ որ զայս միութիւնս կու փակեն ու կու այլայլեն. ...նա ապա զմեզ զքրիստոնէքս ի մեր հօրէն և ի մօրէն կու փակտեն, զի երբ յիրացմէ կու փակտենք, նա ու նոցանէ կու փակտինք...» (Ն. տ. էջ 29—30):

«Մենք կանք և տեսանեմք զմկնատիզ քարն՝ որ է խանդումանդ, որ խաւիաթով զերկաթն կու Գաշէ» (ՄՀԶՄ, էջ 120):

«Եւ երբ իմանաս, որ օր քան զօր երակն կուտկարանայ...» (Ն. տ. էջ 34): «Քուտկինն գանկատէին մօրերուն և ասէին, թե խոզերուն անխնայ կու տան, թէ կերէք. և մեք սովամահ կու լինիմք» (ՎԱԱ, էջ 22):

«Աբրահամ հիւրընկալ և աստուածասէր,

Վասն սիրոյ զԻսահակ մատուղ կու զենէր» (ՅրԴ, էջ 244):

«Վասն այնոր զայն արար, որ խիստ կու սիրէր» (Ն. տ. էջ 245):

«Ուսկայ եղաւ այնչափ տարի, որ տուն ու տեղ դեռ կու փակի» (Ն. տ. էջ 289):

«Եւ թվենայ բժշկին, երբ զերական բռնէ, թէ կու փոխափոխ տեղոջէ ի տեղ» (Գրգս. Քնն. էջ 4):

«Եւ խայտառին նշանն այս է, որ թվի մարդոյն, թէ մրջիմն կու երթայ ի վերայ այն մարմնոյն և կամ փուշ կու հասնի ի մարմինն» (Ն. տ. էջ 72):

«Ես Կոստանդին, որ զըրեցի,

կու փափագիմ ի յայն լուսոյն...» (ԿԾԲ, էջ 130):

«Խիստ խղճուկ եմ ու անյոյս,

Կու ծրփամ ի մէջ ծովուս» (Ն. տ. էջ 162):

Ունենք նույնիսկ պիտիմ բայի ներկան կու-ով. ինչպես՝

«Թագաւորին այն կու պիտի, որ իւր ծառայն ոչ սրղալի» (ՅրԴ, էջ 290):

«Երկու ցեղ սէր կայ ի հաւս, զայս աղուոր գիտնալ կու պիտի» (Ն. տ. էջ 491):

Վերևի օրինակներում կարելի է տեսնել, որ կու մասնիկ են ունենում անկանոն խոնարհման կու լինիմք, կու երթայ, կուտան, ինչպես նաև զբարարա-

<sup>21</sup> Ծիշտ է, որ Աւարձանի «Պատմություն հայ Կեսարիո» երկհատոր աշխատությունը արժեքավոր է, սակայն, դժբախտարար, բարբառի հնչյունական երևույթները հարթեցված են, հարմարեցված գրականին:

ձև կրավորականի կազմութիւնն ունեցող բայերը՝ կու փոփոխի, կու ֆակի: Իսկ այս փաստը վկայում է այն մասին, որ միջին հայերենի լեզվամտածողութիւնից անբաժան է կու մասնիկը:

Ստորև մենք բերելու ենք նաև օրինակներ կու մասնիկի հնչունափոխված ձևերով, բայց հենց այստեղ ասենք, որ կու մասնիկը ընդհանուր է բոլոր գրողների համար. ավելին. ո՛չ Ներսես Շնորհալու, ո՛չ Սմբատ Գունդատապալի, ո՛չ Գրիգորիսի և ո՛չ էլ Կոստանդին Երզնկացու մոտ կու մասնիկի հնչունափոխութեան դեպքի շենք հանդիպում:

Միջին հայերենով գրած առանձին հեղինակների մոտ մենք հանդիպում ենք կու մասնիկի կ հնչունափոխութեան. եղած օրինակներում կ մասնիկը հանդես է գալիս միշտ ձայնավորից առաջ<sup>22</sup>: Օրինակներ.

«Յորժամ բորբոսն ի ներքս ի յերական լինի ի յարեն՝ ի յար և ի սուր և այրեցող ջերմանն, հումայի մուհրիղայ կասեն» (ՄՀՁՄ, էջ 4):

«...Քներն ի ներս երթայ, և փորն փարփուտ և դատարկ կերևայ» (ն. տ. էջ 39):

«Յուցանէ առակս, թէ շատ մարդիկ կապրին ի հետ մեղաց» (ՎԱԱ, էջ 11):

«Եւ ես գիրկ առնէի զլուսնկին շուքն՝ բռնէի և ի վայր կիջնայի ի տունն և բան մի կասէի, որ ինչ գեղեցիկ զումաշ կայր ի տանն, նա ամէնն ինձ կերևար...» (ն. տ. 298):

Այսպես նաև՝ կասես (ՖրԳ, էջ 270), կերթայ (ՀԵՖ, էջ 147, 158), կուզէ (ն. տ. էջ 150), կասեն (ն. տ. էջ 163) և այլն<sup>23</sup>:

Պետք է ենթադրել, որ կու մասնիկի ու ձայնավորն սկզբում սղվել է ու ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ՝ կից վանկերի նույնութեան անբարեհնչունութեան պատճառով՝ կու ուզեմ—կուզեմ, կու ուտեմ—կուտեմ և այլն, իսկ հետագայում երևույթը տարածվել է ընդհանրապես ձայնավորով սկսվող բոլոր բառերի վրա: Արդի արևելահայ գրականում, ինչպես հայտնի է, կ մասնիկը դրվում է նաև բաղաձայնների վրա (կգրեմ, կխաղամ): Մյուս կողմից՝ այս փաստերը մեզ թույլ են տալիս ասելու, որ կու>կը հնչունափոխութիւնը ավելի ուշ շրջանի երևույթ է և, հասկանալի պատճառով, միջին հայերենի լեզվաձևը գրաբարից զանազանող այդ մասնիկը շէր կարող այդքան շուտ փոփոխութեան ենթարկվել:

Ուշադրութեան արժանի է, որ Վարդան Այգեկցու առակներում կու-ի փոխորեն ունենք կոյ<sup>24</sup> մասնիկը, ինչպես. «Այս քանի տարի կայ, որ կոյ վարեմ

<sup>22</sup> Բաղաձայնից առաջ կը ձևով ունենք գործածված Ֆրիկի մոտ՝ «Առաւել հաստատեցաւ ւերդ ի հոգիս ու կը խընդամ»: Տողատակում, սակայն, ունենք «կու խընդամ» տարբերակը (Գիվան, 257):

<sup>23</sup> Նույն այս բանաստեղծն իր քերականութեան մեջ հավաստում է կու մասնիկի ընդհանրական կիրառութիւնը՝ գրելով. «...նն ոմանք զի յաւելուն ի սոսայ կու՝ որպէս կոփեմ, ես, է. թէ-պէտ այդ կու խոշոր է(իմա՝ գոեհիկ, ոամիկ—ՍԱ), սակայն ընու զներկայի տեղին, և յայտնի ցուցանէ զժամանակն, գրեմ, գրես, գրէ. կու գրեմ, կու գրես, կու գրէ... Սոքայ ամենեքին զներկայ ժամանակն, և զեզականութիւն ի վերայ երից դիմաց ծանուցանեն» (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր 2380, էջ 190ա):

<sup>24</sup> Հապացույց այն բանի, որ կու մասնիկն առաջացել է կոյ նախաձևից, Մ. Արեղյանը վկայակոչում է «ձեռագիրների մեջ երևացող» կոյ հաճես, կոյ առե՛, կոյ վարեմ (ՀԻՏ, էջ 326—327) ձևերը: Վ. Այգեկցու օրինակով կարող ենք համոզվել, որ կոյ ոչ թե նախաձև է, այլ, ինչպես վերևի օրինակներում ցույց է տրվում, ու>ոյ հնչունական ընդհանուր երևույթի մեկ առանձին արտահայտութիւն: Ինչպես արժատորեն նկատում է Ա. Մարգարյանն իր «Հայերենի հարադիր բայերը» աշխատութեան մեջ՝ «Եվ որովհետև ժառանգը ծնողից է սերում, ոչ ծնողը՝ ժառանգից,

և կոյ վաստակիմ, զհատն դու կոյտես և զարդն ինձի կոյ կերցընես» (ՎԱԱ, էջ 155): «Առաքեալն կոյ հրամայէ, թէ լաւ է բնակիլ յանայպատի քան ընդ կնոջ անզգամի» (ն. տ. էջ 135): «Թագաւորն այն լսեց, թէ թագաւորին փեսայն բժշկութիւն կոյ առնէ և դեւս հանէ» (ն. տ. էջ 135):

Այսպես նաև՝ կոյ հաճես (էջ 131), կոյ ուտեն (էջ 151), կոյ զար (էջ 196) և այլն: Համոզվելու համար, որ կոյ մասնիկը նույն կու-ն է, կարելի էր ու>ոյ հնչյուննափոխութեան օրինակ բերել հենց իրենից՝ հեղինակից՝ «...և յիսնէ զինչ որ ոյգէ...» (էջ 135) «մայմունդն կոյզէր» (էջ 196):

Սխալ կլիներ կարծել, թե միջին հայերենում սահմանականի ներկան ու անկատարը ձևավորվում են բացառապես կու մասնիկով: Առանց բացառութեան, բոլոր հեղինակներն էլ առանց վերապահութեան օգտագործում են գրաբարյան ներկայի ձևեր: Ավելին, եթե հաշվելու լինենք, կտեսնենք, որ հաճախ գրաբարյան ձևերը մի քանի անգամ շատ են, քան կու մասնիկով ձևերը: Սըմբատ Գունդստապլի «Գատաստանագրքում» և Մ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատութեան մեջ, օրինակ, այդ հարաբերութիւնը 1-ի դիմաց 20 է՝ հօգուտ գրաբարյան ձևերի: Այստեղ, հասկանալի է, էականը տոկոսային հարաբերութիւնը չէ, այլ երևույթը. մեկը նորածին է, մյուսը՝ հնացած: Նորը պիտի հաղթէր, դրա լավագույն վկայութիւնն են կը ճյուղի 30-ից ավելի բարբառները, արևմտահայ գրական լեզուն, մինչդեռ գրաբարակերպ կազմութեամբ միայն մեկ բարբառ ունենք (Խոտրչուր): Հաճախ կարելի է հանդիպել մի այսպիսի երևույթի. նույն նախադասութեան մեջ իրար կողք-կողքի օգտագործված են և՛ մեկը, և՛ մյուսը: Ահա օրինակ՝ «...Աչքն խորանայ, և աչաց գուբն քարտկի, և ի յաչքն ճպուռ լինի, և կոպքն թուլանան, և ի վայր քաշվի, զերդ մարդոյ որ կէայ և ի քուն կամի լինել... և ճակտին կաշին քաշի, և քներն ի ներս երթայ, և փորն փարփուտ և դատարկ կեռնայ» (ՄՀԶՄ, էջ 39): «Եւ զայս ամենայն թշնամութիւնս ի մեր մէջս ի ձերդ այդ շներդ և մարդիք կու առնեն, որ տարին ի բուն ձեզ մորթեն և կթեն և ձեր բուրթն կտրեն և ձեր գառներեն խորովեն» (ՎԱԱ, II, էջ 244):

Նրկընտրութեան երևույթը նկատելի է ոչ միայն այս պարագայում, այլև ընդհանրապես: Ասենք, միջին հայերեն լեզուն էլ, իր ամբողջութեան մեջ վերցրած, ունի լեզվա-քերականական ձևերի բազմազանութիւններ, որոնք, իհարկե, լեզվի զարգացման ընթացքում պետք է կայունանային, նոր երևույթները պիտի ընդհանրանային, հները պիտի զիջեին ու մոռացվեին, սակայն Կիլիկիայի հայ պետականութեան խորտակման հետևանքով միջին հայերեն գրական լեզվի զարգացումը ևս իր բնական ու տրամաբանական վախճանին չհասավ:

Համփոփումն այս բոլորի, կարծում ենք, ավելորդ չէր լինի բոլոր չորս խոնարհումների բայերով (ներկա և անցյալ անկատար ժամանակներով) խոնարհման մի տախտակ տալ ստորև.

ներկա		անցյալ անկատար	
կու ծախեմ	կու ծախեմք (նաև ~ենք)	կու ծախէի	կու ծախէաք
կու ծախես	կու ծախէք	կու ծախէիր	կու ծախէիք
կու ծախէ	կու ծախեն	կու ծախէր	կու ծախէին

ապա հասկանալի է, որ կու // կ-ի համար կոյ-ը նախալոր ձև ճանաչվել երբեք չի կարող» (էջ 372):

կու խօսիմ	կու խօսիմք (հակ՝-ինք)	կու խօսէի	կու խօսէաք
կու խօսիս	կու խօսիք	կու խօսէիր	կու խօսէիք
կու խօսի	կու խօսին	կու խօսէր	կու խօսէին
կու խաղամ	կու խաղամք (հակ՝-անք)	կու խաղայի	կու խաղայաք
կու խաղաս	կու խաղաք	կու խաղայիր	կու խաղայիք
կու խաղայ	կու խաղան	կու խաղայր	կու խաղային
կու թողում	կու թողումք (հակ՝-ունք)	կու թողուի	կու թողուաք
կու թողուս	կու թողուք	կու թողուիր	կու թողուիք
կու թողու	կու թողուն՝	կու թողուր	կու թողուին

Ապառնի և անցյալ ապառնի ժամանակներ. — Ապառնի դերբայի քննութեան բաժնում մենք ցույց տվեցինք այս դերբայն իր դրսևորումներով (-ոց, -ի, -ոյ, -ու), որ և բաղադրյալ ժամանակների կազմութեամբ ամենից հարուստն է միջին հայերենում: Քանի որ այս բաժնում քննութեան ենք ենթարկում սահմանական եղանակի ժամանակները, ուստի մեզ առավելապես հետաքրքրում են ապառնի դերբայի -ոյ և -ու վերջավորութեամբ ձևերը, որոնց վրա եմ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ձևերի ավելացումով ստանում ենք ապառնի և անցյալ ապառնի ժամանակները, ինչպես՝

«Եւ զինչ որ հիւանդին տալու է՝ ատենն տա» (ՂԸՆԹ, Բ գիրք, էջ 349):

«Գաղտուկ նայիս աշուերդ ի դուրս, թէ յո՞ր տեղիք եմ գնալոյ» (ՖրՒ, էջ 308):

Աշխարհս շէ քեզ մընալոյ» (ՀԵՔ, էջ 172):

«Հոգով ի դժոխն ես զընալոյ» (ն. տ. էջ 235):

Վարդան Այգեկցու հետևյալ նախադասութեան մեջ ապառնի դերբայը ունենք և՛ -ոյ, և՛ -ու վերջավորութիւններով. «Յորժամ ... ես երևիմ քեզ հիւանդին զլիսոյն դիհն, նա դու ասա, թէ մի՛ ցավիք. հիւանդս աս լաւնալու է. և լինի այնպէս, թէ լինիմ ոտից դիհն, դու ասա, թէ մեռնելոյ է» (ՎԱԱ, II, էջ 295):

Այս երկու ձևերից գերակշռողը -ու վերջավորութեամբ ապառնի դերբայն է: Ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ համապատասխան վերջավորութիւնների ավելացումով, ինչպես՝ ասել-ասելոց, գնալ-գնալոց, առնել-առնելոց, ծառայել-ծառայելոց, շինել-շինելոց, մնալ-մնալոց, գնալ-գնալու, տալ-տալու, փտել-փտելու:

Ածանցավոր բայերի դեպքում ապառնի դերբայը հանդես է գալիս անորոշի հնչյունափոխված ձևով՝ մեռանիմ-մեռնել-մեռնելու, լաւանալ-լաւնալ-լաւնալու և այլն:

Այս նկատումով, կարծում ենք, ճիշտ կլինեն ընդունել պրոֆ. էդ. Աղայանի այն տեսակետը, թե ապառնի դերբայը կազմվում է ո՛չ թե ներկայի հիմքից, այլ անորոշի, այն է՝ դերբայական բայահիմքից (տե՛ս «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում» հոդվածը (Պատմա-բանասիրական հանդես, 1963 թ., № 3):

Ահա և չորս խոնարհումների բայերի ապառնի ժամանակի պատկերը.

ապառնի

ժախելու հմ	ժախելու հմք	ժախելու էի	ժախելու էաք
ժախելու հս	ժախելու էք	ժախելու էիր	ժախելու էիք
ժախելու է	ժախելու են	ժախելու էր	ժախելու էին
խօսելու հմ	խօսելու հմք	խօսելու էի	խօսելու էաք
խօսելու հս	խօսելու էք	խօսելու էիր	խօսելու էիք
խօսելու է	խօսելու են	խօսելու էր	խօսելու էին
խաղալու հմ	խաղալու հմք (նան՝ենք)	խաղալու էի	խաղալու էաք
խաղալու հս	խաղալու էք	խաղալու էիր	խաղալու էիք
խաղալու է	խաղալու են	խաղալու էր	խաղալու էին
թողելու հմ	թողելու հմք (նան՝ենք)	թողելու էի	թողելու էաք
թողելու հս	թողելու էք	թողելու էիր	թողելու էիք
թողելու է	թողելու են	թողելու էր	թողելու էին

Վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակներ. — Ի տարբերություն ապառնի և հարակատար դերբայների, վաղակատարը լոկ ժամանակակերտ դերբայ է. վաղակատարը (ներկա և անցյալ) ձևավորվում է -ել կամ -եր վերջավորություն ունեցող բայաձևի վրա եմ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատարի ավելացումով: Այս դեպքում տարբեր խոնարհումների բայեր տարբեր հիմքերից են կազմվում:

Ե և ի խոնարհման պարզ բայեր. «Եւ ստածէ զամէն մէկ իւր բժշկութեամբն, որպէս յիշել եմ, և յիշել կամիմ ի գիրքս ուրիշ ուրիշ» (ՄՀՁՄ, էջ 31): «Եւ այս ջերմս շատ գայ, որ ի չիւր երակն ժողովել է խարտէշ մաղձն...» (Գրգս. Քնն. էջ 26): «Ասաց նմա, թէ տուր զիմ եզն, որ գողացեր ես, այդչափ ժամանակ ի տան քում պահե՛ր ես» (ՎԱԱ, էջ 12), «Յուցանէ առակս, թէ ամենայն մարդ զիւր արուեստն թողու, որ սովորեր է...» (ՎԱԱ, էջ 132): «Աղան նրաւոր էր փէնճէրէն Ափն երեսին էր, խիստ կուլար» (ՀԵԲ, էջ 167):

Ինչպես տեսնում ենք, Ե և ի խոնարհման պարզ բայերի վաղակատարը կազմվում է I հիմքից: Բացառություն է կազմում ասել բայը, որ անցյալ դերբայում ունի ասացել ձևը, ինչպես՝ «Զի Մովսէս է ասացել, թե երգվիր երգմամբ...» (ՍԳԴ, էջ 72): «Յորժամ նոյ ի տապանն էր, ասացել են, թէ տապանն ժակեցաւ» (ՎԱԱ, էջ 316):

Ե խոնարհման ածանցավոր. «Եւ ետես, զի ճրագու մկանն ելեր էր ի փոլէն ի դուրս» (ՎԱԱ, էջ 26):

Մեծ գոհութիւն, հարիւր հազար,

Մեզ աւետիք է նոր հասել» (ԿԵԲ, էջ 117):

Ի խոնարհման ածանցավոր. «Եւ յիւրմէս շատ մարդ է մեռել» (Գրգս. Քնն. էջ 50):

«...Զի ամէն պիտի, որ զինչ որ ուսէր (է) զան անէ» (ՎԱԱ, էջ 132): Մնել ես՝ և աշխարհս եկել, տուր խապար, թե ուստի՝ կու գաս» (ՀԵԲ, էջ 144):

Ու խոնարհման. «Պարտ է ամենայն մարդոյ որ զբժկական արուեստս ի հոգս է առել...» (ՄՀՁՄ, էջ 1): «Երբ արիւնն խանձել լինի և այրել, նա յառաջ հիւանդն արեան ջերմ է կալել...» (ն. տ. էջ 115):

Խնուլ բայում, ինչպես գրաբարում, հանդես է գալիս արմատական ց-ն,

ինչպես՝ «Եւ ի քո դիմաց փակել ես դու զականջդ ու պինդ խըցել» (ԿԵԲ, էջ 177):

Ա խոնարհման պարզ բայեր. «...Եւ զոր գոնուի յայս գործս, նա այն ի յիր սրտին խեղճն է մնացել» (ՄԳԴ, էջ 38): «Զեր խօսքդ մեզ դեղ եղավ, ձեր տեսողդ եմք մենք խընդացել» (ՀԵԲ, էջ 147):

«Զինչ կարդացել ես ու լրսել,  
Զայն չկամիս իսկի լրսել» (ՖՐԴ, էջ 406):

Ա խոնարհման ածանցավոր բայեր. «...Այս ջերմանս պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին տագնապեր է և տախցեր է» (ՄՀԶՄ, էջ 27):

«Նա զհոգիդ յափտեան

անյիշելի ես մոռացել.

...Ոմանք սրբաթըռիչ

Թևօք յերկինս են վերացել» (ԿԵԲ, էջ 177--178):

Պատճառական բայեր. «Զի զայս ի նիկիայի սահմանն ամրացուցել են և կապել...» (ՄԳԴ, էջ 38):

«Ֆըրի՛կ, հերիք ես դու խաւսել,

Զամէն մարդ ես ձանձրացուցել» (ՖՐԴ, էջ 409):

«Ոմանք չոր և անպիտան

են մահաբեր փուշ բուսուցել» (ԿԵԲ, էջ 178):

Վերևում բերված օրինակներում կարելի է տեսնել, որ օժանդակ բայը, ըստ նպատակահարմարության, հաճախ դրվում է դերբայից առաջ՝ առավելապես բանաստեղծական խոսքի մեջ. է մնացել, են բուսուցել, են վերացել և այլն: Մյուս կողմից՝ բայերի կուտակման դեպքում օժանդակ բայը չի կրկնվում, ինչպես՝ ամրացուցել են և կապել, կարդացել ես ու լսել, ծնել ես, եկել և այլն:

Ահա և վերևի մեր չորս բայերի վաղակատարը.

վաղակատար		անցյալ վաղակատար	
ծախել եմ	ծախել եմք (նաև՝ -ենք)	ծախել էի	ծախել էաք
ծախել ես	ծախել էք	ծախել էիր	ծախել էիք
ծախել է	ծախել են	ծախել էր	ծախել էին
խօսել եմ	խօսել եմք	խօսել էի	խօսել էաք
խօսել ես	խօսել էք	խօսել էիր	խօսել էիք
խօսել է	խօսել են	խօսել էր	խօսել էին
խաղացել եմ	խաղացել եմք	խաղացել էի	խաղացել էաք
խաղացել ես	խաղացել էք	խաղացել էիր	խաղացել էիք
խաղացել է	խաղացել են	խաղացել էր	խաղացել էին
թողել եմ	թողել եմք	թողել էի	թողել էաք
թողել ես	թողել էք	թողել էիր	թողել էիք
թողել է	թողել են	թողել էր	թողել էին

Հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ.— Այս ժամանակների հարցը արդի հայագիտության մեջ խիստ վիճելի է դարձել: Պրոֆ. էդ. Աղայանն իր «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում»



(Պատմա-բանասիրական հանդես, 1963 թ. № 3) հոդվածի մեջ, ինչպես նաև «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Երևան, 1968 թ.) աշխատության մեջ չի ընդունում հարակատար ժամանակներ բոլոր սեռերի բայերի համար: Ահա նրա եզրակացությունը. «Մենք հարակատար դերբայը դիտում ենք որպես առարկայի վիճակ արտահայտող դերբայ կատարյալ, ավարտված կերպային իմաստով և բնած է, կտրած է, կտրված է և նման կապակցությունները բայի եղանակային ձևեր չենք համարում»: Այս եզրակացությունը նա հանգել է արդի հայերենի խոնարհման համակարգի կառուցվածքային վերլուծությամբ.

Պրոֆ. Աղայանն իր եզրակացությունը չի ընդհանրացնում հայերենի բոլոր դրսևորումների վրա և ոչ էլ արևելահայ գրական լեզվի պատմության բոլոր փուլերի վրա: Ինչպես արևմտահայ գրական լեզուն, այնպես էլ միջին հայերենը այս տեսակետից առանձնահատկություններ ունեն. միջին հայերենում կան հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ, որոնք կազմվում են հարակատար դերբայի և եմ օժանդակ բայի միջոցով: Բավական է բերել հարակատար ժամանակի ժխտականի կազմության մի քանի օրինակներ. համոզվելու համար, որ միջին հայերենում հարակատարի դրսևորումը չի նույնանում արդի գրականի հետ. «...եւ այն մասն, որ չէ բորբոսած, այրնէ գցուրտն» (ՄՀՋՄ, էջ 88): «Թէ այն օտար շունն դայն հացն ուտէ, նայ չէ կատղած» (Գրգս. Քնն. էջ 46): «Յաշխարհիս ա՛յլ գեղեցիկ իրք չէ տեսած», Զինչ լինի տունն հնազանդ մէկ հրամանաց» (ԿԵԲ, էջ 219): «Ասացին, թէ գնամք՝ ընդ միւս դուռն մտանեմք, որ գլուխ չէ կախած» (ՎԱԱ, II, էջ 246):

Մեր բերած բոլոր օրինակներում (և ոչ միայն նրանցում)՝ ա) հարակատարի ժխտական ձևերում օժանդակ բայը դրված է դերբայից առաջ, բ) եզակի երբորք դեմքի օժանդակ բայն ունի չէ ձևը: Իսկ սրանք երկու հիմնական կառուցվածքային փաստարկներ են, որոնք հիմք են տալիս պրոֆ. էդ. Աղայանին ընդունելու արդի հայերենում հարակատար ժամանակների՞ գոյությունը:

Միջին հայերենում հարակատար ժամանակները չեն նույնանում և արևմտահայ գրականի հարակատար ձևերի հետ. ինչպես ցույց ենք տվել հարակատար դերբայի քննության բաժնում, միջին հայերենում ներգործական սեռի բայերից հարակատար ժամանակներ չեն կազմվում, իսկ արևմտահայ գրականում, ընդհակառակն, հարակատար դերբայը և բայաձևերը գործածվում են ներգործական նշանակությամբ: Ավելին, արևմտահայ գրականում հարակատար և անցյալ հարակատար ժամանակները, առավելապես ներգործական սեռի բայերի դեպքում, օգտագործվում են վաղակատարի և անցյալ վաղակատարի փոխարեն, ինչպես՝ «Մա տունին մուտքը... ծխախոտի մեծաքանակ մթերք մը կար պատրաստ, ինչպես որ իրենց իմացուցած էին կանխավ» (ԳՋՆ, Երևան, 1941 թ. էջ 17): «...Մեջքի դաշույնը, որուն երկաթը Պոլսեն եկած գնած է, Դամասկոսի դուրաթեք երկաթ, վետվետող երանգներով, երբեք զուր տեղը փայլատակած չէ» (ն. տ. էջ 18):

Միջին հայերենում առավելապես հանդիպում են ե, ի և ա խոնարհումներով հարակատար ժամանակներ, իսկ ու խոնարհմամբ և պատճառական կերպի հարակատարի ձևեր չեն հանդիպում:

Օրինակներ հարակատար ժամանակներով. նախ՝ և խոնարհման բայերով. «...Այս շերմանս տէրն...ի յաւազանն թող չյամէ շատ, զի գիճութեններն առգիլած են ի ներքս ի մարմինն» (ՄՀՋՄ, էջ 13), «Ի մարմինն մարդոյ բնական

չորս դիճուժիւն կայ, և են նոքա կարգած մէկ հետ մէկի» (ն. տ. էջ 26): «...Ջերդ լօկնայ մարդն ջրով, որ խառնած է յինքն տաք իրք» (Գրգս. Քնն. էջ 11): «Եւ գրուցի պատճառն լինի, որ գարկած է ի վերայ ողնայշարին ի յղուղն...» (ն. տ. էջ 77):

Ի խոնարհման բայերով. «Այն ջերմն՝ որ ի գուրս ի յերակացն լինի, նոպէ ունի, զի մաղձն է բորբոսած և մէկայլ ցեղն ցնեբքսէ յերակսն լինի, զի պալղամն է բորբոսած» (ՄՂՋՄ, էջ 109): «Եւ յորժամ ճմուռ նեղս պատահի մարդոյն ի յորժամ և է, նայ զինչ կերպ որ է մարդն՝ այնպես կենայ՝ թէ ի նստուկ<sup>25</sup> է՝ շկարէ պառկել, և թէ նստած է՝ շկարէ յոտն ելնել» (Գրգս. Քնն. էջ 59):

«Տէ՛ր, ցօղե՛ա յիս՝ցօղ կենաց.

Կամ ծարաւի ՚ւ եմ թառամած» (ԿԵԲ, էջ 152):

«Չունինք մարդ կենդանի, հոգուով մեռած եւն հաւասար» (ԿԵԲ, էջ 202):

«Երկուս ընդ իրար կուին, մէկ ի մէկ իսկի շի նմանին,

Մեկ էլ ի նոցա միջին էր մեռած ՚ւ անկած ի տեղին» (ՉԵԲ, էջ 156):

Ա խոնարհման բայերով. «...Այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն...» (ՍԳԴ, էջ 15): «...Եւ եկեալ ըրտոյն և էր բարձած յոյժ» (ՎԱԱ, II, էջ 26):

Սահմանականի բաղադրյալ ժամանակների պատկերը ամբողջական դարձնելու նպատակով ստորև դնում ենք մեր շորս բայերի հարակատար (ներկա) և անցյալ հարակատար ձևերը.

հարակատար (ներկա)

ծախած եմ      ծախած եմք  
ծախած ես      ծախած էք  
ծախած է      ծախած են

խօսած եմ      խօսած եմք  
խօսած ես      խօսած էք  
խօսած է      խօսած են

խաղացած եմ      խաղացած եմք  
խաղացած ես      խաղացած էք  
խաղացած է      խաղացած են

(թողած եմ)      (թողած եմք<sup>26</sup>)  
(թողած ես)      (թողած էք)  
(թողած է)      (թողած են)

անցյալ հարակատար

ծախած էի      ծախած էաք  
ծախած էիր      ծախած էիք  
ծախած էր      ծախած էին

խօսած էի      խոսած էաք  
խօսած էիր      խոսած էիք  
խօսած էր      խոսած էին

խաղացած էի      խաղացած էաք  
խաղացած էիր      խաղացած էիք  
խաղացած էր      խաղացած էին

(թողած էի)      (թողած էաք)  
(թողած էիր)      (թողած էիք)  
(թողած էր)      (թողած էին)

Անցյալ կատարյալ.— Այս ժամանակն իր արտահայտած իմաստով նույնն է, ինչ որ գրաբարում և աշխարհաբարում: Սակայն տարբեր խոնարհման բայեր գրաբարի հանդեպ զգալի առանձնահատկություններ են դրսևորում, ահա ինչու նպատակահարմար է շարադրել յուրաքանչյուր խոնարհում առանձին-առանձին:

Ե խոնարհման պարզ բայեր.— Անցյալ կատարյալում հիմնականում պահպանում են գրաբարյան վերջավորությունները. շեղումներ նկատելի են եղակի

<sup>25</sup> —ուկ վերջավորությամբ հարակատար դերբայի հազվագյուտ կիրառություններից մեկն է:

<sup>26</sup> Ու խոնարհման ձևերը դնում ենք խոնարհման տախտակն ամբողջացնելու նպատակով:

թվում, III դեմքում: Եզակի III դեմքում գրաբարյան -եաց վերջավորության հետ գտնում ենք նաև -եց հնչյունափոխված վերջավորությունը, ինչպես՝ «...Ձխոզին ոսկրն փորձեցի, և գտայ որ օգտեց ի հիւանդութեան ի վերջքն» (ՄՀՁՄ, էջ 121): «...Թէ ի նոյն տարին, որ գնեց զիր գինին ամբողջ պահէ, նա լեալ է բարի» (ՄԳԴ, էջ 63): «Կու հրամայէ օրէնքս, որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատել. մէկ մասն արբեցողութեան, որ ինքն մարդ էր ու հայնչաք խմեց, որ խումրեցաւ» (ն. տ. էջ 69): «Սատանան զիս խաբեց» (ՎԱԱ, էջ 203):

Այնուամենայնիվ գերակշռում են -եաց վերջավորությամբ ձևերը, ինչպես՝ հրամայեաց (ՄԳԴ, էջ 29), կարգեաց (ն. տ. էջ 29), անարգեաց (ն. տ. էջ 44), վառեաց (ՄՀՁՄ, էջ 12), անուանեաց (ն. տ. էջ 36) և այլն, և այլն:

Շատ անգամ միևնույն նախադասության մեջ գտնում ենք երկու ձևերն էլ, ինչպես՝ «...Հայնչաք խմեց, որ խումրեցաւ... վասն վնասուն, զոր զործեաց» (ՄԳԴ, էջ 69):

Այսպիսով, և խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալ ժամանակում գրաբարյան ներգործակերպ վերջավորությունների համեմատ ունեն հետևյալ պատկերը.

-ի	-ի	-աք	-աք
-եր-իր	-եր, -իր	-էք, -իք	-էք, -իք
—(եաց)	—(եաց) (-եց)	-ին	-ին

Հոգնակի առաջին դեմքում միշտ ունենք -աք, ինչպես՝ գրեցաք (ՄԳԴ, էջ 22, 24, 28 և այլն), վերոգրեցաք (ն. տ. էջ 33), կարգեցաք (ն. տ. էջ 57), յիշեցաք (ՄՀՁՄ, էջ 15, 103) և այլն:

Ասել, գիտել, կարել բայերը (մարթել, մերկել շեն հանդիպել), ինչպես գրաբարում, անցյալ կատարյալի հիմքում ունեն -աց<sup>27</sup> բաղադրիչը, ինչպես՝ ասացաք (ՄՀՁՄ, էջ 3), ասացաւ (ն. տ. էջ 112), ասացին (Գրգս. Քնն. էջ 10): Ունենք նաև ասի ձևով՝ «Օր մի շափ, թէ Տէր մեղայ» (ՀԵԲ, էջ 170), գիտեաց (ՄԳԴ, էջ 74), կարցաք (ն. տ. էջ 81), չկարացի (ն. տ. էջ 24) և այլն: Մյուս կողմից՝ ածել, բերել, ինչպես գրաբարում, ունեն արմատական հիմք, ինչպես՝ ածին (ՄԳԴ, էջ 29), երբ (ՀԵԲ, էջ 194):

Ե խոնարհման ներգործական սեռի բայերը, ըստ անհրաժեշտության, խոնարհվում են նաև կրավորակերպ, ինչպես գրաբարում, ունենալով -այ, -ար, -աւ, -աք, -այք, -ան վերջավորություններ, ինչպես՝ խառնեցան (=խառնըվեցին, ՄԳԴ, էջ 34), փոխեցաւ (=փոխվեց, փոխադրվեց, ն. տ. էջ 37), գրեցաւ (=գրվեց, ն. տ. էջ 48, 49, 58, 69 և այլն), հաւաքեցաւ (=հավաքվեց, ՄՀՁՄ, էջ 12), ասացաւ (=ասվեց, ն. տ. էջ 112), գրկեցաւ (=գրկվեց, ՀԵԲ, էջ 192) և այլն, և այլն:

Ե խոնարհման ածանցավոր բայեր.—Միջին հայերենում ևս այս բայերն ունեն արմատական հիմք, սակայն գրաբարի համեմատությամբ այստեղ կերպի վերջավորություններն իրենց արժեքը կորցրել են: Մինչդեռ գրաբարում -այ, -ար, -աւ, -աք, -այք, -ան վերջավորությունները դրվում են և խոնարհման ներգործական սեռի բայերի վրա (կրավորական դարձնելու նպատակով), միջին հայերենում դրվում են և՛ ներգործական սեռի (ներգործակերպ խոնարհ-

<sup>27</sup> Հանդիպում է նաև կանոնավոր ձևով՝ -եաց վերջավորությամբ. «Եւ պատուիրեաց մկանցն և ասեաց» (ՎԱԱ, էջ 64):

մամբ), և՛ շեզոք սեռի բայերի վրա: այսպես, օրինակ՝ «Երբ տեսայ, որ կու  
կախէր, զայլոց իրք այլ առի գերիս» (ՖրՊ, էջ 265):

«Ես երկու դաշտ տեսայ տափակ (ՆՇԲԶ, էջ 573):

«Դանակ առ զմորթն շրջէ,

Թէ չէ՛ ելալ միսն ի բանէ» (ն. տ. էջ 571):

«Ապա թէ տեսանէ զչերմանն ժամանակն՝ որ անցաւ...» (ՄՀՋՄ, էջ 139):

«Գտի խիստ աղէկ հաքիմ մի և իմաստուն և հարցայ, թէ մեր թագաւորն  
ի խիստ է նեղած» (ՎԱԱ, էջ 115): Այսպես նաև՝ ելաւ (ՍԳԴ, էջ 76, ՀԵԲ,  
էջ 158, ԿԵԲ, էջ 124, 162), հասաւ (ՄՀՋՄ, էջ 139), իջաւ (Գրգս. Քնն. էջ 7,  
ՖրՊ, էջ 269, 352) և այլն, և այլն:

Վերևի նախադասութիւններում մենք ունենք տեսայ, հարցայ կատարյալի  
ձևերը, որոնք ունեն ուղիղ խնդիր լրացում: Մյուս կողմից՝ շեզոք սեռի ելաւ,  
անցաւ, հասաւ, իջաւ բայերն ունեն գրաբարյան կրավորաձև վերջավորութիւն-  
ներ:

Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ միջին հայերենով գրված  
աշխատութիւններում և խոնարհման ներգործական սեռի ածանցավոր բայե-  
րի գրաբարաձև կրավորականի ոչ մի կիրառութիւն չի հանդիպում, այլ կրա-  
վորականը կազմվում է ու>վ ածանցով, ինչպես՝ սպանվաւ (ՍԳԴ, էջ 69):

Վերևում շարադրվածից չպետք է եզրակացնել, որ և խոնարհման ածան-  
ցավոր բայերում -ի, -եւ... վերջավորութիւններով անցյալ կատարյալի կազ-  
մութիւններ չկան միջին հայերենում: Ո՛չ. կան և նման կազմութիւններ, ինչ-  
պես՝ գտի, տեսի (ՍԳԴ, էջ 38), տեսին (ՄՀՋՄ, էջ 7), արկի (ՀԵԲ, էջ 179),  
իջի (ն. տ. էջ 249) և այլն, սակայն գերակշռողը -այ, -ար, -աւ... վերջավո-  
րութիւններով ձևերն են: Նկատելի է նաև, որ և է վանկային աճեցումները  
ևս կորցրել են իրենց կիրառութիւն տրամաբանական հիմքը. է վանկային  
աճեցումը դրվում է նաև բաղաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝  
էզարկ (ՍԳԴ, էջ 74), էհաս (ԿԵԲ, էջ 226), էստեղծ (ՖրՊ, էջ 398) և այլն:

Այսպիսով, միջին հայերենում և խոնարհման ածանցավոր բայերը  
ընչէլ են կերպային վերջավորութիւնները. և՛ ներգործական սեռի (ներգոր-  
ծակերպ), և՛ շեզոք սեռի բայերը ստանում են -այ, -ար, -աւ... վերջավորու-  
թիւններ:

Կարծում ենք, ավելորդ չէր լինի այս երևույթն արձանագրել խոնարհման  
մի փոքրիկ տախտակով.

գտանել (ներգործական սեռի, ներգործակերպ խոնարհում), հասանել (շե-  
զոք սեռի).

գտայ	գտաք	հասայ	հասաք
գտար	գտայք	հասար	հասայք
գտաւ	գտան	հասաւ	հասան

Միջին հայերենում սկիզբ առած այս երևույթը հետագայում ամբողջացավ  
ու տիրապետող դարձավ: Այժմ գրական լեզվի երկու հատվածներում էլ բա-  
ցարձակապես այս կազմութիւնն է իշխում:

Ի խոնարհման պարզ բայեր.— Գրաբարի համեմատութեամբ առանձնա-  
հատկութիւններ չեն դրսևորում. և՛ պարզ, և՛ ածանցավոր բայերն ունեն  
կրավորակերպ վերջավորութիւններ (-այ, -ար, -աւ...), ընդ որում պարզ

բայերն ունեն ցոյական-բաղադրյալ հիմք<sup>28</sup>, իսկ ածանցավորները՝ արմատական հիմք:

Օրինակներ՝ «Յուստիանոս կայսրն կամեցաւ յիւր աւուրքն...» (ՄԳԴ, էջ 39): «Բայց տեսնուլ պիտի, թէ ի՞նչ ցեղ էր յուղարկելն, ի՞նքն յոժարեցաւ ի գնալն, թէ ի կահրա յուղարկուեցաւ» (ն. տ. էջ 73): «Իսկ այն նշաննին՝ իր հետ ջերմանն հանդիպեցաւ...» (ՄՀՁՄ, էջ 114): Այսպես նաև՝ համարեցալ (ՄԳԴ, էջ 30), խամբեցաւ (ն. տ. էջ 69), շհամարձակեցալ (ն. տ. էջ 27), լրբեցաւ (ն. տ. էջ 20), բորբոսեցաւ (ՄՀՁՄ, էջ 63, 88), համարեցան (ն. տ. էջ 110), ուրդեցաւ (ն. տ. էջ 132) և այլն:

Ի խոնարհման ածանցավոր բայեր. «Ապա պատէ՛հ տեսաք գրել, թէ ուստի ընկաւ սահմանս (տիպօնս) այս» (ՄԳԴ, էջ 35): «Մեք բուսալ գերթ ծաղիկ յերեսն ի հողոյն» (ՀԵԲ, էջ 183):

«Ա՛յ, այս բանս է հիանալի  
...Թէ մէկ Ադամ և յնայէ  
Քանի՞ ազգեր ծրնան յերկրի» (ՅՐԴ, էջ 530):

խոնարհման ընդհանուր պատկերը.

պարզ բայ		ածանցավոր բայ	
կամեցայ	կամեցաք	բուսայ	բուսաք
կամեցար	կամեցայք	բուսար	բուսայք
կամեցաւ	կամեցան	բուսաւ	բուսան

Ա խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերն անցյալ կատարյալում ունեն բաղադրյալ-ցոյական հիմք: Պարզ բայերը գրաբարի նման ունեն -ի, -եր, —աք, -էք (-իք), -ին վերջավորութիւններ. ինչպես՝ «...Ձվաներն աշխարհական պարոնայք հոգացին» (ՄԳԴ, էջ 34): «...Ձիս աստուած դաւանեցիր և հավատացիր» (ՎԱԱ, էջ 146):

Դիտելի է, որ այս խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորակերպ վերջավորութիւններով ձևեր միջին հայերենում չեն հանդիպում, մինչդեռ գրաբարում կրավորական սեռի բայ ստանալու միակ հնարավոր եղանակն է դա:

Ա խոնարհման ածանցավոր բայերն ունեն կրավորակերպ վերջավորութիւններ. բայահիմքերը հանդես են գալիս միջին հայերենի հնչյունափոխական ընդհանուր օրենքին համապատասխան. ինչպես՝ «Ահա երբ ուժվորեցին պարսիկք ի վերայ Հայոց, նա տանէին գերիցնին ի հեծել և այնկից ի վեր թուլցաւ» (ՄԳԴ, էջ 34): «...Վասնզի մաղձն շատցաւ ի յայս անդամս, և իշաւ ի թոքն, և արար թորայցաւ» (Գրգս. Քնն. էջ 7): «Ասացի... թէ ինձ համար է այս խորովուս և զիս մոռցան» (ՎԱԱ, էջ 191):

«Խնձոր ձգեց մըտիկ շարի,  
Մէկ մ'այլ ձգեց ցածցայ 'ւ առի» (ՀԵԲ, էջ 154):

Որպես հեղինակային լեզվի առանձնահատկութիւն պետք է դիտել այն երևույթը, որ այս խոնարհման բայերի, ինչպես և ընդհանրապես եզակի III դեմքի —ալ վերջավորութիւնը Վարդան Այգեկցու մոտ գտնում ենք օ հնչյունափոխված ձևով, ինչպես՝ «...Պատահեց նմա շունն և նայ դարձօ արունայ-

<sup>28</sup> Նստել բայն ունի նաև արմատական հիմքը, ինչպես՝ «նստայ» (ՀԵԲ, էջ 155):

թաթախ և լալով եմուտ ի խուցն. փակեաց զդուռն. զղջացօ և անկօ առաջի սրբութեանց աստուծոյ» (ՎԱԱ, էջ 10); Հնչյունափոխական այս երևույթն իր արտահայտութիւնն է գտել նաև դատօտր (էջ 12), մեղօտր (էջ 22), և այլ բաներում: Մեր կարծիքով, սա սխալ գրչութեան հետևանք չէ, այլ միջին հայերենում կատարված աւ երկբարբառի օ-ի հնչյունափոխվելու (կարաւտ>կարօտ, դաւտի>գօտի) տարածումը աւ հնչյունակապակցութեան վրա:

Խոնարհման պատկերը հետևյալն է.

պարզ բայ		ածանցավոր բայ	
հոգացի	հոգացաք	մոռցալ	մոռցաք
հոգացիր (-եր)	հոգացէք (-իք)	մոռցար	մոռցայք
հոգաց	հոգացին	մոռցաւ	մոռցան

Ու խոնարհման բայերում ևս պարզ բայերի կրավորակերպը վերացված է. կրավորականութիւնն արտահայտվում է վ մասնիկով, ինչպես՝ թողվաւ (= թողնվեց, ՄԳԴ, էջ 39, 49 և այլն):

Պարզ բայերն ունեն գրաբարյան վերջավորութիւններ, ինչպես՝ «...Մարմինն և զարին... զոր վասն մերեհեհեղ...» (ՍԳԴ, էջ 30): «...Բնաւ շկարէ ամուսնանալ ոչ այն, որ եթող և ոչ այն, որ թողվաւ» (ն. տ. էջ 39):

Ու խոնարհման ածանցավոր բայերը ևս գրաբարյան համակարգն ունեն, ինչպես՝ «...Եւ յորժամ ջեռաւ, պատեցաւ զմջով լծվարին...» (ՎԱԱ, II, էջ 154):

Առնույ բայը, ինչպես գրաբարում, ունի ներգործակերպ վերջավորութիւններ. ինչպես՝

«Թէ պահես զիմ պատուիրանն, որ առեր յինէն

Ի դրախտէն փոխեմ յերկինս՝ ի դասս լուսեղէն» (ՀԵԲ, էջ 209):

«Գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն ի շորրօրդ և ի պակասելոյ ժամանակն հասաւ, և ի պակասելն էառ» (ՄՀՁՄ, էջ 138): «Ապա անուանեցին զայս ժամանակս ի պակասն. զի իւր գործոյն առին և զիւր անուն» (ն. տ. էջ 135):

Ընդհանրապես պետք է նկատել, որ այս խոնարհմամբ քիչ բայեր են պահպանված, իսկ այդ քիչն էլ մատենագրութեան մեջ սակավ է արտահայտվում:

Ի թույլ բաղադրիչ ունեցող բայերում բաղադրիչը խախտված է. կան դեպքեր, երբ հանդես է գալիս, ինչպես՝ հանգեալ (հանգչիմ-հանգ(ի)—Գրգս. Քնն. էջ 106), թագեայ (թագչիմ-թագ(ի)—ՀԵԲ, էջ 210), զարթեալ (ՅրԴ, էջ 489), քաղցեալ (ՎԱԱ, II, էջ 91), քաղցեալ (ն. տ. էջ 131), կոբեալ (կորնչիմ-կոր(ի)—ն. տ. էջ 124 և այլն): Ավելի շատ են այն դեպքերը, երբ ի թույլ բաղադրիչը հանդես չի գալիս. ինչպես՝ «...Եհար ժանաւքն զինձն և զերկուս բաժին կտրեաց և զաղիքսն ի վայր թափեցաւ և փախաւ (ՎԱԱ, էջ 4): «...Ի ժամ կոխելոյն զհնձանն դանակ մի կորաւ ի մէջ խաղողին» (ն. տ. էջ 203) և այլն:

Պատճառական բայեր.—Անցյալ կատարյալում կրավորակերպ կազմութեամբ չեն հանդիպում: Ներգործակերպ խոնարհումը նման է գրաբարին. բայահիմքի վրա դրվում են -ի, -եր (-իր),—<sup>29</sup>աբ, -էբ (-իբ), -ին վերջավորութիւնները, ինչպես՝ «Եւ հավնեցոյց զամենն ի բանս, զոր արար... քան զամէնն ի վեր նստուցին» (ՍԳԴ, էջ 40): «Կորուսիր զազատ հոգիդ՝ և այդ հողէղէն

<sup>29</sup> Այս դեմքում -ոյց վերջավորութեան փոխարեն հանդիպում է նաև -ուց, ինչպես՝ պառկեցոյց (ՎԱԱ, էջ 164), կանչեցոյց (ն. տ. էջ 301) և այլն:

մարմնոյդ համար» (ՀԾԲ, էջ 159): «Հազար ձի վազան բերի, վազցուցի և այլ ոչ հասուցի» (ն. տ. էջ 156):

«Նա իր բարբառն ահեղ զարհուրեցոյց զիս, որ զարթայ» (ԿԾԲ, էջ 189): «Յաչիցս աղբերացն ջուրն քաշեցի, զինչ որ սընուցի, Զիմ լերդս զինչ զհաց կերայ, ա՛յ, եղբարք, ինչ որ բուսուցի. Երկու լոյսն ի մի դարձաւ գիշերին, ինչուր հասուցի» (ՖրԴ, էջ 365):

Պատճառական բայերի անցյալ կատարյալի խոնարհման պատկերը հետևյալն է.

վազցուցի	վազցուցաք
վազցուցիր (-եր)	վազցուցիք (-էք)
վազցոյց (-ուց)	վազցուցին

Այսպիսով, միջին հայերենում անցյալ կատարյալ ժամանակում գրեթե վերացել է կրավորակերպ (կրավորական սեռի) խոնարհումը: Կրավորակերպ խոնարհում չեն ունենում և խոնարհման ածանցավոր, ա, ու խոնարհման պարզ և՛ պատճառական կերպի բայերը: Այս խոնարհումներում կրավորական սեռն արտահայտվում է կրավորական վ՛ ածանցով:

Դեռևս և խոնարհման պարզ բայերը կրավորական են դառնում ի խոնարհման ենթարկվելով: Սակայն հաճախ կրավորակերպ խոնարհվող բայը ևս ստանում է կրավորական ածանց, ինչպես՝ ծեծուեցաւ (ՍԳԴ, էջ 54), պսակուեցաւ (ն. տ. էջ 56), սպանվաւ (ն. տ. էջ 69), յուզարկուեցաւ (ն. տ. էջ 73) և այլն:

#### ՀՐԱՄՈՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հրամայականը միջին հայերենում արտահայտվում է երկու ձևով՝ բուն հրամայականով և ժխտական կամ արգելական հրամայականով: Հորդորական հրամայական միջին հայերենում չի հանդիպում, քանի որ գրաբարի II ապառնի ժամանակը, որի հոգնակի II դեմքից էր կազմվում հորդորական հրամայականը, չի օգտագործվում: Ասեմք, գրաբարում ևս հորդորական հրամայականն առավելապես ոճական արժեք ունի, ահա ինչու գրաբարի շատ բերականներ այդ ձևը չեն ընդունում կամ համարում են ստորադասականի տարբերակված ձև:

Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականում հանդես է գալիս անցյալի հիմքը՝ շեշտի տակ ց հնչյունի անկումով. ինչպես՝

«Խնդրեա՛ և զի՛տ ըզկորուսեալս,  
Օգնեա՛, կանգնեա՛ ըզգլորեալս» (ՀԾԲ, էջ 181):  
«...Ըզսուրբ Հոգին մեզ առաքեա՛,  
Մխիթարեա՛ զմեզ հասարակ» (ՖրԴ, էջ 420):

«Եւ բժշկեա՛ զայտոցն և զելունդն իւր բժշկութեամբն, զոր գրած է իւր դուռն» (ՄՀԶՄ, էջ 23):

Այսպես նաև՝ գիտեա՛ (ՄՀԶՄ, էջ 34), հիշեա՛ (ՀԾԲ, էջ 173), քաւեա՛ (ն. տ. էջ 176) և այլն:

Բայց միջին հայերենի համար սա՛ չէ օրինաչափականը, այլ հրամայական եզակիի եա> է հնչյունափոխված վերջավորությամբ ձևերի օգտագործումը, մի բան, որ հետագայում տիրապետող դարձավ արևմտահայ գրականում

և բարբառներում: Օրինակներ. «Ապա առ բակլայի ալուր և շուշան ծաղկի տակ... զայս ամէնս աղա և մաղէ՛ և ընդ մարմինն շփէ՛ յուշիկ յուշիկ» (ՄՀՁՄ, էջ 14): «Ապա ա՛ն աֆտիմոն եօթն դրամ, և ի ներս ի մըտպուրին ընկէ, խառնէ՛, և ապա անոէ՛ զամէնն, և պարզէ՛...» (ն. տ. էջ 126):

«...Ձմահուն օրըն դու յիշէ՛,

Զխրրատս ի սրտիդ տընկէ՛, սա յամեն շարէ զքեզ պահէ» (ՀԵԲ, էջ 146):

«Փոյթ արձակէ՛ զնա ի կայէ,

...Դանակ ա՛ն զմորթըն շրջէ՛» (ՇԲԶ, էջ 571):

Այսպես նաև՝ հաշվէ՛ (ՍԳԴ, էջ 58), վնարէ՛ (ն. տ. էջ 60), ծախէ՛ (ն. տ. էջ 66), խառնէ՛ (ՄՀՁՄ, էջ 8), ծեփէ՛ (ն. տ. էջ 9), ապաշխարէ՛ (ՖրԴ, էջ 290), ազատէ՛ (ՎԱԱ, II, էջ 134) և այլն:

Հանել բայի հրամայականի եզակին ունի հա՛ն ձևը. ինչպես՝ «Եւ ի վերայ շար նախանձուն [մէկն] ասաց թագաւորին. հա՛ն զիմ մէկ աշքն» (ՎԱԱ, II, էջ 260): «...Եւ ըստ հիւանդին ուժոյն արին հա՛ն (ՄՀՁՄ, էջ 121):

Ե խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը կազմվում է բայահիմքի վրա –էփ վերջավորութեան ավելացումով. ինչպես՝ «Զամէն ազգի արուեստվոր պատուեցէ՛ք, բայց զգարբինն, զհիւան և զքարգործն՝ աւելի» (ՍԳԴ, էջ 19): «Առաքեալքն... շուսուցին թէ վասն նախանձու և ատելութեամբ պատուեցէ՛ք... զմիութիւնն» (ն. տ. էջ 30): «Մանկտիք, երբ ի հաց նըստիք, ձենեցէ՛ք աղքատք ձեզ ընկեր» (ՀԵԲ, էջ 158):

Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերի կրավորակերպ ձևերի շինք հանդիպում:

Ե խոնարհման ածանցավոր բայերի եզակի հրամայականում հանդես է գալիս արմատական հիմքը՝ շեշտով, իսկ հոգնակիում ավելանում է –էփ վերջավորութիւնը. ինչպես՝ «Թէ երէց... մարդ յղարկէ թէ գնա ի յինայ բանն... կամ հետ մարդոյ հետ հա՛ս» (ՍԳԴ, էջ 26): «Ապա քամէ՛ և արկ ի ներքս տասն դրամ թառընկտին» (ն. տ. էջ 52): «Զմիտք նաւավար դու տե՛ս, որ բարձր է գանձ շահաւոր» (ՀԵԲ, 150): «Եւ նայ առեալ զթուխտն և գնաց և գրեալ էր ի մէջ թխտին այսպես... հատէ՛ք զգլուխ թխտին բերողին» (ՎԱԱ, II, էջ 141): «...Կայեցէ՛ք՝ ասէ՛ զդոցա ոտն ու զձեռն և արկէ՛ք ի հուրն անշէջ» (ն. տ. էջ 261):

Հարկանել բայի հրամայականում արմատական կ բաղաձայնն ընկնում է. «Զայս ամէնս յիրար խառնէ՛, հա՛ր<sup>30</sup> աղէկ, և ի վերայ գլխոյն դի՛ր» (ՄՀՁՄ, 17):

Յուցանել բայը սպասվող ցո՛յց ձևի դիմաց ունի ցուցո՛ւ. «Եկել ես օտար յերկիր, մէկ ցուցո՛ւ, թէ ի՞նչ կու կենաս» (ՀԵԲ, 144):

Ինչպես Ե խոնարհման պարզ բայերում, այստեղ ևս ներգործական սեռի բայերի կրավորակերպ (կրավորական սեռի իմաստով) խոնարհված բայաձևերի շինք հանդիպում: Ավելին. և՛ ներգործական, և՛ շեղոք սեռի բայերը հանդես են գալիս նաև կրավորակերպ վերջավորութիւններով, ինչպես՝ «...Եւ այլն ետես զսատանայ և ասաց, թէ հասի՛ր յաւգնութիւն» (ՎԱԱ, II, էջ 185):

«Զամէնն ձրգէ՛, ՚ւ ազատ մընայ

...Գտի՛ր տեղի ՚ւ ասա՛ մեղայ» (ՖրԴ, էջ 327—328):

Ի խոնարհման բայերի հրամայականի կազմութիւնը նման է գրաբարին. ինչպես՝

<sup>30</sup> Հնարավոր է ենթադրել, որ հառել, հարու պայերի հրամայականն է.



«Գիտես մարմին եմք կենդանի,  
Չեմք ապառաժ քարանձախի.  
Նայեա՛ց և տե՛ս, Տէ՛ր մեր բարի» (ՖրՊ, էջ 543):  
«Հայեա՛ց յանշէջ, հուրն և անանց,  
Յիշեա՛ զքո մեղքն ու լաց» (ՀԵԲ, էջ 173):

«Եւ զայս ի ֆռանկաց եկեղեցականացն տե՛ս ու ուսի՛ր, որ ջանուն (կանոն) անուանեն (ՍԳԴ, էջ 21—22):

Պարզ բայերի եւա՛ց վերջավորութիւնը շատ անգամ հնչյունափոխութեամբ է հանդեպ գալիս. ինչպես՝ «Եւ յորժամ ասաց աղուվէսն զգալն, թէ նայեա՛յ յաշս իմ...» (ՎԱԱ, II, էջ 98—99): Կամ՝ «Եւ նայ աղաշէր զհրեշտակն և պաղատէր, թէ ողորմեա՛յ և զհոգիս մի՛ առնեք» (ն. տ. էջ 177): Ունենք նաև եւ>ե հնչյունափոխված ձևով մեկ օրինակ. «...Նայ ասաց, թէ վաղն ալ արեկ բանե՛ց<sup>31</sup> և առ զ. Գ. աւուր վարձն և զնայ» (ն. տ. էջ 147): Ճիշտ է, «Առձեռն» բառարանը շունի բանել (բանիմ) բայը, բայց այս ուսմական բառը պետք է զնար ի խոնարհման պարզ բայերի տակ:

Ա խոնարհման պարզ բայերում, ինչպես գրաբարում, շեշտի տակ անցյալի հիմքի ց բաղադրիչն ընկնում է. ինչպես՝ «...Ձայս ամէնս աղա՛ և մաղէ՛» (ՄՀՁՄ, էջ 14): «Ապա թէ ամառն լինի և օդն տաք, զմարմինն հով ջրով աղէկ լուա՛»<sup>32</sup> (ն. տ. էջ 17):

«Այն մարդն որ աւտայ սորա, կամ աստէն իւր տուն կու շինէ,  
Չաւտամ թէ նա խելք ունի, աւտա՛ որ խիստ յիմար է» (ՀԵԲ, էջ 151):

Հոգնակիւում անցյալի հիմքի վրա ավելանում է -էֆ վերջավորութիւնը: Ածանցավոր բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալի հիմքի վրա -իւր վերջավորութեան ավելացումով, ինչպես՝ «Ո՛վ մարգ... բարձրացի՛ր հոգով ...և ջերմացի՛ր հրով սիրոյ նորա» (ՎԱԱ, II, էջ 80): «Թափէ զգինիդ և լրջացի՛ր և իմացի՛ր<sup>33</sup> զաւր տանջելոյ» (ՖրՊ, էջ 307):

Հոգնակիւում գրաբարյան -այք, -արուք կրավորակերպ վերջավորութիւնների փոխարեն գտնում ենք -էֆ վերջավորութիւնը, ինչպես՝ «...Ձամէնն այդ ձևովդ իմացէ՛ք. ու թող ի ձեր քսակդ շմտնէ ի յայն հարամ իրացն» (ՍԳԴ, էջ 45):

Իմանալ բայը եզակի հրամայականում ունի նաև իմա՛ ձևը. ինչպես՝ «Ձայս իմա՛ որ երբ ծառ յորժամ կտրի... այն ծառն վատթարի, և թառամի տերևն» (ՄՀՁՄ, էջ 37):

Դառնալ բայում ունենք ց>ձ հնչյունափոխութիւնը՝ դարձի՛ր (ՀԵԲ, էջ 165), մինչդեռ բառնալ բայում պահպանվում է չհնչյունափոխված ձև՝ «Այլոց այնչափ բառցի՛ր, Որքան քեզ ես բեռն դրեի» (ԿԵԲ, էջ 176):

Թանալ բայի հրամայականը գտնում ենք թա՛ց ձևով (ՄՀՁՄ, էջ 34, 70):

Այսպիսով, ա խոնարհման բայերում ևս կրավորակերպ խոնարհման շեշտ հանդիպում: Ավելին. ածանցավոր բայերի հոգնակիի -այք, -արուք կրավորակերպ վերջավորութիւնների փոխարեն ունենք ներգործակերպ -էֆ վերջավորութիւն:

<sup>31</sup> Տողատակի ծանոթագրութեան մեջ տարբերակներից մեկում ունենք բանի:

<sup>32</sup> Կարծում ենք, որ սրա անորոշ դերբայը ուսմական լուալ ձևն է:

<sup>33</sup> Իմացի՛ր ձև ունենք նաև այլ հեղինակների մոտ, ինչպես՝ ՄՀՁՄ, էջ 4, Գրգս. Քնն. էջ 83 և այլն:

Ու խոնարհման բայերի հրամայականի օգտագործման հետևյալ դեպքերն ենք նկատել. ա՛ն (ՄՀՁՄ, էջ 9), կա՛լ (ՄՀՁՄ, էջ 83), լի՛ց (ն. տ. էջ 147, 148 և այլն): Ու խոնարհման լեսուլ բայը հրամայականում ունի և խոնարհման պարզ բայերի վերջավորություն՝ -է. «Ա՛ն քահրիպար, և յատպէ... և լեսէ՛ խիստ մանտր» (ՄՀՁՄ, էջ 150):

Ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի միայն եզակի դեմքով կիրառության դեպքերի ենք հանդիպել. ինչպես գրաբարում, ունեն -իւ վերջավորություն.

«Զարթի՛ր և գիտացի՛ր, որ մեզ դարուն կամի յայտել» (ԿՅԲ, էջ 178):

«Մի՛ վճիր և մի՛ ճականիր ի մէջ վիճողաց. այլ իմաստութեամբ փախի՛ր ի դուաց» (ՎԱԱ, II, էջ 85—86):

Հետաքրքրական է պատճառական բայերի հրամայականի կազմությունը. եզակիում զուգահեռ ձևով հանդես են գալիս գրաբարյան -ո՛ (հայտնի է, որ գրաբարում սուր շեշտի հետևանքով -ոյց ածանցի յ և ց հնչյունները դուրս են ընկնում) վերջավորությամբ ձևեր, ինչպես՝ «Որ ի սիրտ է ելել՝ անուղացո՛ւ և ուրախացո՛ւ, և որ հոգս ունի՛ փարատէ՛ զհոգսն և անհոգացո՛ւ, և որ վախեալ է և երկիւղ ունի՛ ամեհէ և աներկիւղացո՛ւ...» (ՄՀՁՄ, էջ 15):

«Վաստակէ՛ և անեցո՛ւ, որ վրճարէ գտուողն...» (ԿՅԲ, էջ 151):

«...Եւ ասաց նմայ... թէ ինձ մեկ ընկեր այլ կայ ի վիմին տակն. զնայ զարթո՛(յ) զնա» (ՎԱԱ, II, էջ 131):

Մյուս կողմից՝ -ո՛ւր վերջավորությամբ նոր ձևեր, ինչպես՝ «Եւ հետ այնոր գինութիւնն կակղացո՛ւր թմրհնդով և սրքնուպինով: Ապա թէ բնութիւնն խիստ կակող լինի... զստամոքսն զօրացո՛ւր նոան ջրով» (ՄՀՁՄ, էջ 25): «...Եւ այլ պղղատունի կոթ և զարի լուացած ցամաքեցո՛ւր և ապա կերցո՛ւր» (ն. տ. էջ 41): «Ապա թէ վատուծ է հիւանդն շատ քրտնելոյ, զհիւանդն ի հով տուն նստեցո՛ւր և տո՛ւր սփռել ի տունն վարդ» (ն. տ. էջ 97) և այլն:

Այսպիսով, միջին հայերենում հրամայական ձևերում ներգործական սեռի բայերը կրավորակերպ խոնարհում (կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար) չեն ունենում, նույնիսկ ա խոնարհման բայերի կրավորակերպ -ա՛յք, -արո՛ւք վերջավորությունները փոխարինված են -է՛ք վերջավորությամբ: Ե խոնարհման պարզ բայերում գրաբարյան ձևերին զուգահեռ օգտագործվում են -է՛ք վերջավորությամբ ձևեր<sup>34</sup>, որոնք տիրապետող միակ ձևը դառնալու ձգտում ունեն: Պատճառական բայերում հանդես են գալիս նոր ձևեր՝ -ո՛ւր վերջավորությամբ (ցամաքեցո՛ւր, կակղացո՛ւր, կերցո՛ւր և այլն):

#### ԳՐԱԲԱՐԻ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Միջին հայերենը, ինչպես և ամեն մի ժողովրդի լեզվական նոր դրսևորում կամ որակ, շինական պարիսպներով անջատված չէ նախորդ շրջանի լեզվական իրողություններից: Մեր քննության ընթացքում տեսանք, թե շեշտված, որակական տարբերություններով հանդերձ, միջին հայերենը ինչքան աղերսակցություններ, ընդհանրություններ և նույնացումներ ունի գրաբարի հետ: Միջին հայերենում ըստ պատեհի օգտագործվում են նաև գրաբարի

<sup>34</sup> Այս ձևն, անշուշտ, եղել է և նախորդ շրջանի գրաբար մատենագրության մեջ. ինչպես՝ «Եւ զու զբոյգ ժողովէ՛ և հրամայէ՛ յԱրևելս տանել» (Սեբեոս, ԺԳ):

ստորագասականի I և II ապառնի ժամանակները: Դիտելի է, սակայն, որ դրանք ավելի շուտ աշխատություն կամ խոսքի ընդհանուր գրաբար շարադրանքի դեպքում են օգտագործվում: Այս շրջանի մատենագիրներն, անշուշտ, գրաբար էին կրթություն ստանում և իրենց ստեղծագործություններում պատմական կամ դավանաբանական, կրոնական-եկեղեցական հարցերի մասին խոսելիս սովորույթի ուժով ոճին տալիս էին գրաբարյան լեզվական երանգ, այսպես նաև՝ երբ ավետարանից կամ կրոնական այլ գրքից պատմողաբար խոսք էին մեջ բերում: Վերևի մեր ասածները ապացուցելու համար Սմբատ Գունդստապլի «Դատաստանագրքից» կարելի է բերել հետևյալ հատվածները. «Եւ ոչ յիշեն զՔրիստոսի հրամանն, զոր հրամայեաց ս. առաքելոյն Պետրոսի, թէ դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (էջ 29): «Եւ թէ ոչ՝ որ վասն ոչինչ ազգ սղալանաց կամ ծուլութեամբ յամեցնին, նա զարին նոցա և զկորուստ երկրին ի ձեռաց նոցա խնդրեցից՝ ասէ տէր» (ն. տ.): «Որ հակառակ եկեղեցի շինէ կամ քահանայութեան գործ այնէ ընդդէմ, անհնազանդութեամբ, հարցէ զնա օձն և սպանցէ» (ն. տ. էջ 42):

Նույն բանը նկատում ենք Հովհաննես Երզնկացու մոտ. արարչագործության և Քրիստոսի ծննդյան մասին խոսելիս ոճը դառնում է գրաբար, առավել շատ են օգտագործվում ստորագասականի ձևեր.

«Մնանի տղայաբար մանուկ կուսածին,  
Զի և մեզ շնորհեցէ ծնունդ հոգէծին.  
...ի երկրի շրջեցաւ բանըն հայրածին,  
Զի բարձցէ զփուշ մեղաց մեր պատուհասին.  
Մըկըրտէր Յովհաննէս ըզտէրն ի ջըրին,  
Զի ջրով մաքրեցիմ մեղքն ադամային.  
...Զի մեզ դարձուցէ յիւր սէրն առաջին» (Բանաստեղծություններ, էջ 194):

Եվ վերջապես մի օրինակ էլ Կոստանդին Երզնկացուց.

«Ասաց աստուած. Արասցուք մարդ՝  
ի պատկերի մերում նրման,  
Զի իշխեսցէ արարածոց,  
ամենեցուն կացցէ իշխան» (Բանաստեղծություններ, էջ 221):

Օրինակները շատ են, սակայն մենք նպատակ չունենք հեղինակների լեզվի ոճական առանձնահատկությունները քննելու: Մեզ հետաքրքրողը երևույթի լեզվական կողմն է: Մեր ասածը, անշուշտ, բացարձակ ճշգրտությամբ չպետք է ընդունել: Միջին հայերենով գրող հեղինակները շատ անգամ ստորագասականի ձևերն օգտագործում են «անհարկի», երբ խոսքային-ոճական հանգամանքներ չկան: Այդ տեսակետից ուշագրավ է Վարդան Այգեկցին, որի առակներում առավել հաճախ են հանդիպում ստորագասականի ձևերը: Եվ ընդհանրապես, այս շրջանի հեղինակների մեջ Այգեկցու լեզուն ընդհանուր տպավորությամբ ավելի շատ է գրաբարյան: Դրանում կարելի է դուրսբերել համոզվել: Ահա նրա ժողովածուի առաջին առակից մի հատված. «Թագաւոր մի, որ տիրէր ամենայնի, արար երկու ապարանս գեղեցիկս և կարգեաց զաւրս .թ. դաս յապարանս իւր, զի կա[ց]ցեւ ի հրամանս թագաւորին. և ոմանք ի զաւրաց թագաւորին հպարտացան և անկան ի փառաց. և ի միւս ապարանսն

պահապանս կացուց զի պահեսցի՛ն, և եկեալ զաւրաց իշխան առ միւս ապարա-  
նից պահապան և խաբեաց և եհան զնայ յապարանիցն» (էջ 1):

Սա, կարելի է ասել, քիչ բանով կամ գրեթէ ոչնչով չի տարբերվում V դա-  
րի դասական գրաբար մատենագրութեան լեզվից:

Ճիշտ է, միջին հայերենում գրաբարի ստորադասական ձևերն օգտագործ-  
վում են, սակայն լեզվի այդ շրջանն ունի ստորադասականի դրսևորման ի՛ր  
ձևերը: Այստեղ պատկերը նույնն է, ինչ որ սահմանական ներկայի դեպքում.  
օգտագործման բուն իսկ փաստը կամ հաճախականութունը կարևոր չէ. էա-  
կանն այն է, որ կա նորը, որ գրավում է հնի տեղը և ձգտում է ընդհանուր ու  
բացարձակ դառնալու:

Միջին հայերենի համար բնորոշը ստորադասականի նոր արտահայտու-  
թյուններ են՝ ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներով, որ  
ստորև քննելու ենք:

#### ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Այս եղանակն ունի 2 ժամանակ՝ ապառնի և անցյալ ապառնի: Իմաստով  
համապատասխանում է արդի հայերենի ըղձական եղանակին: Ըղձական եղա-  
նակի կազմութեան համար օգտագործվում են գրաբարյան սահմանական ներ-  
կա և անցյալ անկատար ժամանակները: Միջին հայերենում սահմանական ներ-  
կա և անցյալ անկատար ժամանակների կազմութեան մասին խոսելիս ասա-  
ցինք, որ գրաբար լեզուն ստորադասականի անցյալ ապառնու համար ձևեր  
չունի, այսինքն՝ գրաբարում խոսելու էի<sup>35</sup>, խոսելի, կխոսելի, պիտի խոսելի  
ժամանակներն արտահայտող առանձին բայաձև չկար, այլ օգտագործվում էր  
անցյալ անկատար ժամանակը՝ ըստ ցանկութեան այս իմաստներից մեկնու-  
մեկն արտահայտելու համար: Ինչպես որ անցյալ անկատարն արտահայտում  
էր ստորադասականի անցյալ ապառնու գաղափար, համաբանութեան օրենքով  
ներկան էլ արտահայտեց ստորադասականի ապառնու գաղափար: Եվ իրոք,  
ստորև կտեսնենք, որ միջին հայերենում ըղձական եղանակը այդ բազմաձե-  
վութունը որոշ շափով պահպանել է:

Այսպես՝ ըղձական եղանակի բայաձևերը նույնանում են սահմանականի  
ներկա և անցյալ անկատար բայաձևերի հետ:

Օրինակներ ստորադասական ապառնի ժամանակով.

«Եւ եկեալ բժշկապետացն և ասեն ընդ առիժն, թէ քո ցաւոյդ այլ դեղ  
չկայ, քան որ զիշուն ախանջսն կտրեն և զսիրտն հաւեն և տան, որ ուտես և  
աղեկնաս» (ՎԱԱ, II, էջ 6—7):

«Արի՛ք ի ծովափն իջնունք ու ձկներ բրոնենք վարըմով.

Առնունք և ի տուն տանինք, խորովենք զինքըն կրակով» (ՀԾԲ, 155):

«Խրատ մի քեզ տալ կամիմ, զուգեմ օղ քան զոսկի խալաս,

Սիրես ' և ի յականջդ ածես, թէ դու քո զկեանքըդ կամենաս»

(ն.տ. էջ 145):

«Մանուշակն էր ժողովել

հաւտար զամէն զժաղկին,

Թէ՛ եկէ՛ք մեք միաբան

<sup>35</sup> Գրաբարի II ապառնի ժամանակը հաճախ օգտագործվում է այս ժամանակի իմաստով:

Երթանք կտրեճք զվարդենին,  
Որ շգա վարդն կարմիր  
և գեղեցիկ տերև սփռիճ,  
Ու ի նորա պայծառ տեսուն  
Որդիք մարդկան ի մեզ շխայիճ» (ԿԵԲ, էջ 138):

Օրինակներ ստորագասականի անցյալ ապառնի ժամանակով.

«Թէ լինէր, որ զքեզ տեսն[է]ի առ յիս գալով.  
Եւ խընդութեամբ ի դէմ գայի քեզ սիրով.  
Ի յերկրի երեճ դըն[է]ի քեզ կոխելով  
Ու զհոգիս անդ հանէի յօժար կամով» (ԿԵԲ, էջ 167):  
«Պիտէր մեզ նաւապետ  
մարդ կենդանի՝ զերդ նոյ արդար,  
Որ մեզ տապան գործէր,  
Մովուս լինէր եզր ու վճար  
Կամ նման Աբրահամու  
...մարդ մի լինար,  
Որ յիւր ի ծնընդենէն  
մէկ մ'աստուծոյ հաճոյանար» (ն. տ. էջ 201—202):

Ըղձական եղանակի բայաձևերը հաճախ հանդես են գալիս թող եղանակիչ-բառով: Այս դեպքում խոսքն ստանում է նաև թելադրանքի բնույթ: Գործածական է I, առավելապես III դեմքի համար: Ինչպես՝ «Զէ իրաւունք, որ թագաւորն անպսակ սիրողով կենայ... թող օրինաւոր ամուսնանայ» (ՍԳԴ, էջ 17): «Թագաւորն ի խէշ հայրապետի թող շնստի, զի չէ հրաման» (ն. տ.):

«...Թող մաշիմ ի յայս հոգս և խիստ հնանամ» (ՖԴԴ, էջ 444):

«Որք որ լըսեն այս ողբերոյս, թող ըզմեղաց սուզըն պահեն»

(ն. տ. էջ 274):

«Վասն այնոր ի յետ բանամ  
զիմ սրտիս մէջն, որ է դեղին,  
Ով որ տեսնու զիմ սիրտս ի բաց՝  
թող գայ լըսէ զիմ գանգրտնին» (ԿԵԲ, էջ 144):

Թող եղանակիչով ստորագասականի (ըղձականի իմաստով) կիրառություններ ունենք նաև գրաբարում, ինչպես՝ «Ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ» (Փ. Բուզանդ, VI, 7): Եւ կամ՝ «Եւ զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուտսն՝ զոր կերեալ են շորեքարիւր դահեկան, զայդ ամենայն թող բերեն...» (Յովհ. Մամիկոնեան):

Ըղձական բայաձևերը հանդես են գալիս նաև որ, թէ, երբ, եթէ և այլ շաղկապներով ու եղանակավորող բառերով: Այս դեպքում գործողության եղանակի դրսևորման համար նշանակություն ունի նաև եղանակիչ բառի ու ըղձական բայաձևի շարահյուսական կապը: Նման արտահայտություններով ըղձական բայաձևերն առավելապես օգտագործվում են ստորագասական նախադասություններում:

«Նկ որ ասեմ քեզ այլ առակ,  
Որ թէ սընկիս՝ վառես կըրակ...» (ՆՇԲԶ, էջ 565):

«...Ողորմութեանդ քո ես մնամ,

Որ տաս Դու ինձ համբերութիւն, որ սատանին գերի չըլնամ»

(ՅրԴ, էջ 254):

«Ասէ մարդն. շունիմ ես աստ նշան կոտոյն. ապայ թէ գաս, որ կապեմ գրեզ, որ ոչ փախչիս և ես գնամ առնում զնշան կոտոյն և գամ առ քեզ» (ՎԱԱ, էջ 115): «Ապա եթէ առնու վարդի ձէթ, ձիւնով կամ պաղով հովացնէ, և ի վերայ գլխոյն դնէ, նոյնպէս և զկուրծսն իւրովն օծանէ: Եվ ջուր զոր խմէ հով թող խմէ. ապա թէ ի բաղանիսն եղկ ջրով աւազան մտէ և շուտ ելանէ, խիստ օգտակար է»<sup>36</sup> (ՄՀՁՄ, էջ 9):

Մինչև հիմա բերված բոլոր օրինակներում ըղձականի բայաձևերը ճիշտ ու ճիշտ համընկնում են արդի հայերենի ըղձականի հետ: Մինչդեռ միջին հայերենում, ինչպես վերևում ասացինք, ըղձականը որոշ չափով պահպանել է գրաբարյան բազմիմաստութունը: Միջին հայերենում կան օրինակներ, որոնց մեջ ըղձական բայաձևերն արտահայտում են պայմանականի գաղափար. ինչպես՝ «Եւ երևեալ հրեշտակին ասաց. թէ տանիմ զքեզ ի դրախտն, դու համբերե՛ս» (=կհամբերե՛ս). և ասաց, թէ՛ ե՛րբ լինի (=կլինի) այդ» (ՎԱԱ, II, էջ 170): «Եւ ասէ ջաղացպանն. Զոր հրեշտակն ասաց՝ ես ոչ արարի. և այժմ գայ և գտանէ զիս, և մեռանիմ մեղօք, և ամօթով լինիմ» (ՂԶնԲ, էջ 284): «Թէ դու լըսես այս խրրատիս, անանց լուսոյն շուտ հասանիս (=կհասնես)» (ՅրԴ, էջ 270): «Եւ նա ասէ. դուք էք ծիծաղելո արժանի, զի դա հեղաւ երկիր. թէ արբեալ էի, նա ինքն զիս հեղէր (=կթափեր) երկիր» (ՎԱԱ, II, էջ 258): «...Եւ ասէ ցնա. ո՛վ որդեակ, եթէ այդպէս պարկեշտ կեցեալ էիր դու յառաջագոյն, այժմ ի վերայ բարձի մեծագնոյ նստէիր (=կնստերիր) և բազում ախորժ կերակուրս և խորտիկս ուտէիր (=կուտերիր) և անուշ համ գինի ըմպէիր (=կըմպերիր) (ն. տ. էջ 267):

Թվում է, որ զուգահեռ կարելի էր անցկացնել գրաբարյան հետևյալ կիրառութիւնների հետ. «Արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել. տո՛ւր ի բաց. ապա թէ ոչ, կոտիմք (=կկռվենք) մեծաւ պատերազմաւ» (Փ. Բուզանդ, V, 1Բ): «Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ վարինն ոք ըմպիցէ՝ սատակի (=կմեռնի)» (Եզնիկ, I, ԺԵ): «Վարազի՝ որ գազանագոյն է քան զամենայն գազանս՝ ուտի միսն և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եթէ ուտէր ոք՝ չվնասէր» (=չէր վնասի կամ չէր վնասվի):

#### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՎԱՆԱԿ

Պայմանական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալ սպառնի: Այս եղանակն իր արտահայտած իմաստով նույնանում է արդի հայերենի պայմանականի հետ: Պայմանական եղանակը կազմվում է գրաբարյան ներկա (ըղձական) բայաձևերի վրա կու մասնիկի ավելացումով: Կազմութեան տեսակետից բոլորովին չի տարբերվում միջին հայերենի ներկայից.

<sup>36</sup> Յրանսերեն լեզվում ըղձականի (mode subjunctive) գաղափարի դրսևորումն անբաժանելի է որ (que) եղանակիչից: Այդ եղանակի բայաձևերը խոնարհման տախտակում ունեն հետևյալ պատկերը.

que j'aime	que nous aimons
que tu aimes	que vous aimez
qu'il aime	qu'ils aiment

նախադասութիւնից դուրս չի կարելի որոշել սահմանականի ճերկան և անցյալ անկատարը միջին հայերենի պայմանականի ապառնիից և անցյալ ապառնիից, այլ միայն խոսքի, նախադասութիւնի մեջ: Այս նույնացումն է պատճառը, որ արևմտահայ քերականները պայմանական եղանակ առանձին չեն ընդունում<sup>37</sup>:

Դիտենք, որ արևելահայ գրականի քերականները ևս երկար ժամանակ չէին կարողանում որոշել այս բայաձևերի արտահայտած իմաստն ու տեղը խոնարհման տախտակում: Պրոֆ. Մ. Աբեղյանը միայն 1906 թ. կը-ով կազմը-ված ապառնիի ձևերը առանձնացնում է սահմանական եղանակի ձևերից և նրա անցյալի ձևերը հետ միասին դնում է մի ընդհանուր եղանակի տակ՝ այն անվանելով ենթադրական եղանակ (Հ. Բարսեղյան, ԱՀԲԽՏ, էջ 233):

Այս դեպքում բայաձևի բազմաեղանակայնութիւնն նույն երևույթն ունենք, ինչ որ գրաբարում, մի բան, որ վերևում տեսնենք:

Կու եղանակիչը դրվում է ինչպես բաղաձայնով, այնպես էլ ձայնավորով սկսվող բայերից առաջ. ինչպես՝ «...Ասցին, թէ մեք ի գողութիւն կու երթանք կամ արեկ ի հետ մեզ ու թէ չես ի գալ, մեք կու սպանենք» (=կսպանենք) զքեզ» (ՎԱԱ, II, էջ 312): «Եկն էրէցն... էառ զաւետարանն և կարդաց զայն փոխն, որ ասէ, թէ՛ օտար էի և ժողովեցէք զիս, մերկ էի և զգեցուցէք զիս... լսեաց զայն աղքատն և ուրախացաւ... ասա փութով կու կատարի» (=կկատարվի) կամք իմ» (ն. տ. էջ 264): «Ասէ այրն. ո՛վ կին դու, եթէ ասեմ, մեկուց կու մեռնիմ» (=կմեռնեմ)» (ն. տ. էջ 161):

«...Պէն միախորման մօլլա ղըզի.

Զիրար սիրենք խօշ կու լինի» (=կլինի)» (ՀԾԲ, էջ 165):

«Սէրն որ հաստ ու կարծ լինի, նայ յետոյ լէքան կու բացուի,» (=կբացվի)» (ՅԲԴ, էջ 491):

Ինչպես սահմանականի կու եղանակիչը, պայմանականի եղանակիչն էլ գտնում ենք հնչյունափոխված ձևով (կ, կոյ), ինչպես՝ «Ել դեն և ասաց ընդ յայրն, թէ՛ յորժամ գաս և առնուս զդուտար թագաւորին, ես երթամ և մտանեմ այլ թագաւորի դուտար, և դու անդ մի՛ գար, թէ չէ յայնմանէ կելանեմ» (=կելանեմ) և ի քեզ կոյ մտանեմ» (=կմտանեմ)» (ՎԱԱ, II, էջ 134): «Եւ ասաց հրըշտակն, թէ՛ մի՛ խաւսիր ի մէջ դրախտին թէ չէ՛ կոյ հանեն» (=կհանեն) զքեզ ի դրախտէն» (ՎԱԱ, II, էջ 169): «Այս ցաւուս թէզով ճար արա թէ չէ սքթայ կանէ» (=կանի)» (ՄՀՋՄ, էջ 8):

#### ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Արդի հայ քերականագիտութիւնն մեջ ըղձական եղանակի ձևերի հետ պիտի եղանակիչ ունեցող բայաձևերը խոնարհման աղյուսակում առանձնացվում են որպէս առանձին՝ հարկադրական եղանակի ձևեր: Արևելահայ գրականի քերականներից միայն պրոֆ. Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականութիւն» (1906 թ.) մեջ վերջնականապես լուծեց այս հարցը՝ և՛ ապառնիի, և՛ անցյալ ապառնիի ձևերը համարելով նոր՝ հարկադրական եղանակի ձևեր:

Արևմտահայ քերականագիտութիւնն մեջ Արսեն Այտընյանն իր հուշակազմը «Քննական քերականութիւն» մեջ այս ձևերը դեռևս չի արժեքավորում և խո-

<sup>37</sup> Տե՛ս Ա. Այտընյան, Քերականութիւն, էջ 56—57. Զապել Հ. Ասատուր, ԳՔ. էջ 130:

նարհման տախտակի մեջ չի մտցնում, մինչդեռ Ասատուրների քերականության մեջ այս բայաձևերն արժեքավորվում են, մտցված են սահմանական եղանակի մեջ՝ «բացարձակ ապառնի» և «անկատար ապառնի» անվանումներով:

Հարցն այն է, որ պիտի ձևը պիտիմ բայի սահմանական ներկայի եզակի III դեմքի ձևն է. ահա ինչու երկար ժամանակ այն դիտվել է որպես սոսկ եղանակիչ, ինչպես գուցե, երևի, թերևս և այլ բառեր: Իրապես, միջին հայերենում մենք ունենք պիտիմ բայի ներկայի և անկատարի շատ ու շատ կիրառություններ, ինչպես՝

«Ի ծովէ նա վերածցի,

...Քաղցրիկ ցողէ յոր տեղ պիտի (=հարկավոր է)» (ՆՇԲԶ, 562):

«Թէպէտ և է դառն ու լեղի,

Ամենեցուն մեզ նա պիտի» (ն. տ. էջ 564):

«Վեր յարեւելս կայր քաղաք մի...»

Գերիս յիւր մէջըն պիտէի» (ն. տ. էջ 568):

Այսպես նաև անորոշ դերբայի մոտ. «Պիտի հանց ջանալ ի հոս, որ երեսն ի հոն շամաչէ» (ՖրՄ, էջ 485): «Աւաղ մեզ հայիլ պիտի յայն արևն որ լոյս կու ծագէ» (ՀՆԲ, 157):

Դիտենք, որ պիտիմ բայն իր բուն իմաստով գրեթե մեր օրերում էլ գործածական է եղել: Հիշենք Թումանյանի հետևյալ տողերը.

«Իմ երազը շատ էր շքեղ՝

Դրախտ պիտե՞ր քաղաք ու գեղ...»:

Սակայն լեզվի այս շրջանում էլ կարելի է նկատել, որ պիտի ձևը դարձել է եղանակիչ բառ, որը ստորադասականի բայաձևերին տալիս է անհրաժեշտորեն կամ հարկադրաբար կատարվելիք գործողության գաղափար: Լավագույն ապացույցը այն բանի, որ լեզվի այս շրջանում պիտի բայաձևը չէր պահել իր բայական անկախ իմաստը՝ այն է, որ հանդիպում է հնչյունափոխված ձևերով. ինչպես՝ պիտ, տի, որոնց մասին ստորև կխոսենք:

Հարց է ծագում. ինչպե՞ս է առաջացել, եղանակիչի ինքնուրույն կիրառությունն ստացել այս բառը: Ասացինք, որ պիտի բայաձևն արտահայտում է «հարկավոր է» իմաստը, ուստի սրան պետք է հաջորդեր որ ստորադասական շաղկապով սկսվող ենթակա բնույթի երկրորդական նախադասություն (բայի եղանակային ձևով)<sup>38</sup>, ինչպես՝ «Եւ ասեն իշուանքն ընդ քուռկնին, թէ՛ համբերեցէ՛ք, այն խոզերն, որ կուտեն, նա պիտի որ վնարեն զամէն, զինչ կերեալ են» (ՎԱԱ, II, էջ 22): «...Եւ իսպիտակերես պիտի որ տանէի զքեզ» (ն. տ. էջ 177):

«Թէ արիւնն յերբ այրի և բորբոսի և թանձրագոյն լինի, նայ պիտի որ յիւր կերպէն ի սև մաղձն դառնայ. և թէ շունենայ խառնուրդ այս մաղձերս ...նայ յիւրեանց ժամն ի յիւրեանց շարն պիտի որ կենան» (Գրգս. Քնն. էջ 21):

Շարունակությունն արդեն պարզ է. հայերենում, առավելապես ժողովրդական լեզվի մեջ, սովորական բան է ստորադասական նախադասություններ

<sup>38</sup> Արսեն Այտընյանն այս մասին գրում է. «Պիտի հին դիմազուրկը, որ հիմա միայն ստորադասականով մեկտեղ կը բանի ապառնի շինելու, հին ուսմանը մեջ սկսավ որ շաղկապով գործածուիլ. այսպես՝ պիտի որ լինի» (ՔՔ, էջ 97):



րում շաղկապներ շգործածելը: Այստեղ ևս չի գործածվում որ ստորագրասական շաղկապը, որի հետևանքով վերևի մեր ձևերը կդառնային պիտի (որ) դառնայ, պիտի (որ) կենան, պիտի (որ) տանէի և այլն:

Սակայն այստեղ ուշագրավը պիտի բայաձևի վերածվելն է եղանակիչի, ինչպես. «Եւ ասաց դէն, թէ ես կերթամ ի յայս անուն թագաւորի դուստրն և ի բերանոյ աղջկան պիտի ասեմ, թէ զայս անուն մարդ բերէք, որ ելնեմ և երբ բերեն... ես պիտի փախչիմ» (ՎԱԱ, էջ 136): «Ճգնաւորն ասաց, թէ՛ թագաւորն և իւր կիսն... ամէն մեկ-մէկ բան ըղորդ խօսին, նայ տղան պիտի լավնայ» (ն. տ. էջ 308):

«Զիմ գըլուխբ ու զարինըս վարձ պիտի տամ,

Որ տանի զիս յայն տեղն, որ ես կու ցանկամ» (ՖրՒ, էջ 443):

Քերված օրինակներում հարկադրականի բայաձևերում պիտի եղանակիչը «հարկավոր է» բայական իմաստով թարգմանելիս միտքը ճիշտ չէր ստացվի. այս բոլոր օրինակներում պիտի եղանակիչը ըղձական բայաձևին տալիս է հարկադրաբար կամ անհրաժեշտորեն կատարվելիք գործողության գաղափար:

Այս շրջանի հեղինակների երկերում պիտի եղանակիչը հանդիպում է հնչյունափոխված ձևերով էլ: Իսկ սա վկայում է, որ եղանակիչը բավականին հնություն ունի, քանի որ մաշվածության երևույթը չէր կարող շատ շուտ վերսկսվել: Մի անգամ երբ պիտիմ բայի եզակի III դեմք լինելու իմաստը թուլացել էր, պիտի ձևը կորցնում է վերջավորության ի ձայնավորը, որը բայի պրաբարյան ըմբռնմամբ և՛ խոնարհիչն է, և՛ դեմքի ու թվի ցուցիչը: Հայտնի է, որ պրոֆ. Ս. Աբեղյանը բայ հասկացության մեջ դրան էր առաջնություն տալիս:

Այսպես՝ «...Զայն մեղաւոր մարդն, որ պիտ ապաշխարէ և դառնայ ի մեղաց... նմայ առողջութիւն պիտի տայ, որ ապաշխարէ» (ՎԱԱ, II, էջ 178):

Ավելի հաճախ են այն դեպքերը, երբ պիտի եղանակիչը հանդես է գալիս տի մասով միայն. ինչպես՝ «.Ռ. դեկայն, որ ի պատուհան դրի, վերուցիր պահեցիր թէ ոչ. և ասաց կին... այս մեկ գիշերս ինչ տի լիճայ, վաղն պահեմ» (ՎԱԱ, II, էջ 186):

«Յորժամ յարութիւն լինի, փողն երկու ձայնիւ տի գոչէ» (ՖրՒ, էջ 347):

«Բարձր ես նըստեր ի վերայ խալուդ՝

Յետև տի գաս ադկից ի վար» (ն. տ. էջ 479):

«...Ով աստէն ճարտար կացել, նա «զեկա՛յք» ձայնըն տի լլսէ» (ՀԵԹ, 152):

Հարկադրական եղանակի արտահայտության մի առանձնահատուկ ձև ունի միջին հայերենը. կամել բայի ներկայի խոնարհված ձևերի հետ (կամիմ, կամիս...) բայը անորոշ դերբայով օգտագործելիս արտահայտում է հարկադրականի գաղափար: Ինչպես՝ «Ապա թէ գիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն երկար կամի քաշել (=պիտի քաշի, պիտի տևի), պատեհ է որ զկերակուրն հաստ տայ» (ՄՀԶՄ, էջ 137): «Իսկ յայս ի ժամանակս ի լման եփի հիւանդութիւնն... և ի հոս ցուցանէ բնութիւնն՝ զոր ինչ լինել կամի (=պիտի լինի)» (ն. տ. էջ 135):

«Որով շափով շափես՝

Նոյնովըն քեզ կամին շափել (=պիտի շափեն):

Որով զոք դատիս՝

Նոյն դատաստան կամիս կրեւլ (= պիտի կրես)»<sup>39</sup> (ԿԵԲ, 179):

Միջին հայերենի այս կիրառութիւնների նախաձեռնը մենք գտնում ենք և գրաբարում. «Այն ինչ արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր: Իբրև օրն հինգ-օրեայ շաբաթուց լուսանալ կամէր» (ՆՃԲ, հ. I, էջ 1042):

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Միջին հայերենում գրաբարի բաղադրյալ ժամանակները լայն կիրառութիւն ունեն. առավելագոյն անցյալ և ապառնի դերբայներով և եմ օժանդակ բայով կազմվող վաղակատար-հարակատար ներկա (հարակատար) և վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար) ժամանակները. ինչպես՝ «Եւ երակքն փոքր գան, զի առանձնական տաքութիւնն զերակն փոքր շարժէ յոլով, զի խոճկեցեալ է և վատուծեալ է» (Գրգս. Քնն. էջ 15): «Եթէ տեսնուս, որ լսելիքն խափանեալ է մէկ ականջին և կամ երկուքին, և հետ այսոր մէկ մի ի վզայարանացն և կամ շորս զգայարանքն տկարացեալ են. դուն գիտացի՛ր որ պատահումն յղեղն է» (ն. տ. էջ 93):

Այս նույն կազմութիւնների ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ձևերը (անցյալ դերբայ + իցեմ, իցես, իցէ...) գրեթե չեն օգտագործվում: Պատճառը հասկանալի է. գրաբարում այս կազմութիւնները համապատասխանում են աշխարհաբարի՝ հարակատար դերբայով և լինել բայի ըղձական, պայմանական և հարկադրական ձևերով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակներին (սիրեալ իցեմ = սիրած կամ սիրված լինեմ, կլինեմ, պիտի լինեմ), իսկ միջին հայերենում, ինչպես ստորև կտեսնենք, հարակատարով երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմութիւնը շատ է տարածված:

Հայտնի է, որ անցյալ դերբայով կազմված վերոհիշյալ բաղադրյալ ժամանակները գրաբարում հանդիս են գալիս նաև մի այլ կառուցվածքով: Դրանցից յուրաքանչյուրի եզակի թվի III դեմքին կցվում են անձնական դերանուններ՝ սեռական հոլովով: Այս դեպքում դեմքը և դեմքի թիվն արտահայտվում են ոչ թե եմ բայի, այլ անձնական դերանվան միջոցով. ինչպես՝ սիրեալ է իմ, սիրեալ էր իմ, սիրեալ իցէ իմ (տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանութիւն, Երևան, 1958, էջ 231—232): Գրաբարի այս բաղադրյալ ձևերը այս շրջանի հեղինակների գործերում չեն հանդիպում: Հատուկենտ կիրառութիւններ գրտնում ենք վարդան Այգեկցու տառակներում:

Միջին հայերենում լայն կիրառութիւն ունեն նաև ապառնի դերբայի -ոց մասնիկով կազմված գրաբարի բաղադրյալ ժամանակները: Դիտելի է, սակայն, որ ներգործական սեռի բայերն այս դեպքում կրավորականի իմաստ չեն արտահայտում, մինչդեռ դրուբարում, օրինակ, սիրելոց եմ կարող է արտահայտել սիրելու եմ, սիրվելու եմ իմաստները: Ապառնի դերբայով բաղադրյալ

<sup>39</sup> Այս երևույթն իր ժամանակին նկատել է Ա. Այտրնյանը՝ գրելով. «Ուրիշ ձև բաղադրյալ ապառնի մ'ալ ունեին ԺԲ, ԺԳ դարերը, ճիշդ բանի մը նոր լեզվաց նման. այսպես՝ Շարժ կամի լինել (գետնաշարժ պիտի ըլլայ). Հիւանդն ստոյգ մեռանել կամի (պիտի մեռնի), Տե՛ս ՔՔ, էջ 97: Պրոֆ. Հ. Աճառյանն էլ գրում է. «Ապառնի համար միջին հայերենում առանձին ձև չկա. գործածվում է սահմանականի ներկան (կու նախամասնիկով միացած) և կամ կամիմ բայի հետ միացած անորոշը» (ԼՔՂԷ, հ. IV, Ա գիրք, էջ 380):

յալ ժամանակների օրինակներ այդ դերբայի քննութեան բաժնում բերել ենք: Այստեղ ավելորդ չէր լինի երկու օրինակ ևս բերել.

«Եւ աւագակն գղջացաւ զչարիսն, զոր առնելոց էր (=անելու էր) առ նոսա» (ՎԱԱ, II, էջ 303):

«Երբ հանց ցեղ էր լինելոց (=լինելու էր), է՛ր հանդիպայ ես այս շարիս» (ՖրՊ, էջ 266):

Այս դերբայով կազմված ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնիի ձևեր (սիրելոց իցեմ, սիրելոց իցես...) միջին հայերենում շեն հանդիպում:

Ինչ վերաբերում է անցյալ դերբայից վերլուծական կառուցվածքով կազմված դիմավոր ձևերին (սիրեալ լինիմ, սիրեալ եղէ, սիրեալ լինիցիմ և այլն), ապա նկատելի է, որ այս բաղադրյալ ժամանակների կիրառությունը նվազագույնի է հասել, առավելապես հանդիպում են ներկա ժամանակի ձևեր, ինչպես՝ լինիմ լեալ (ՄԳՊ, էջ 17), լինի արեալ (ն. տ. էջ 24): Մյուս ժամանակներով ձևեր շեն հանդիպում, և ընդհանրապես այս կազմությունները փոխարինված են հարակատար դերբայով կազմված բաղադրյալ ձևերով:

Արդ, երկրորդական բաղադրյալ ժամանակների ի՛նչ ձևեր են յուրահատուկ լեզվի այս շրջանին: Լեզվի այս շրջանին յուրահատուկ են հարակատար դերբայով և լինիմ, կամ, ունիմ և այլ օժանդակ բայերով կազմվող բաղադրյալ ժամանակներ. ինչպես. «Եւ երբ խաղղի ջերմն, ա՛րկ ի վերայ գլխոյն եղկ ջուր, յոր եփած լինի շոր մանուշակն և վարդ...» (ՄՀՁՄ, էջ 8): «Եւ ապա տո՛ւր կերակուր խաշոյ՝ որ յուլոյ մսէ լինի զուգած» (ն. տ. էջ 10): «Եւ իւր պատճառն այն է՝ որ տաքութիւնն արգելած լինի(ն) ի ներքս ի մարմինն զերդ քամի և պահած լինի» (ն. տ. էջ 39):

Ինչպես այս, այնպես էլ հարակատար դերբայի քննութեան բաժնում բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ ներգործական սեռի բայերն այս կիրառությամբ ևս զրսևորում են կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպային արտահայտություն: Այդպես չէ, սակայն, արդի հայերենում. «Նա իր դասը սովորած կլինի», «Նա այդ ներկայացումը տեսած կլինի» և նման կառուցվածքի նախադասություններ, որտեղ հարակատար դերբայով կազմված բաղադրյալ ժամանակ-ստորոգյալն ունի ուլիղ խնդիր (դասը, ներկայացումը) լրացում, միանգամայն օրինաչափական են արդի հայերենի համար:

Այնուամենայնիվ, միջին հայերենի այս ձևերի և արդի հայերենի (նաև արևմտահայ աշխարհաբարի) հարակատար դերբայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակների միջև հիշտ չէր լինի հավասարության նշան դնել, արդի հայերենում այս ձևով կազմվում և կիրառվում են գրեթե բոլոր ժամանակները, մինչդեռ միջին հայերենում առավելապես գործ են ածվում ներկա և անցյալ անկատար ժամանակները.

Հայտնի է, որ գրաբարում անցյալ դերբայով բաղադրյալ ժամանակների կազմությանը մասնակցում են նաև կամ և ունիմ բայերը, ինչպես՝ զարմացեալ կայ, նշանակեալ ունիմ և այլն: Այսպես էլ միջին հայերենում՝ հարակատար դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակներ են կազմվում կամ և ունիմ բայերի հարադրությամբ, ինչպես՝ «Իսկ իբրև ժողովեցան երկիրն ամէն ի հանդէսն բազումք ժողովուրդք և կային նստած գլխիբաց» (ՎԱԱ, II, էջ 27), «Եւ այն եկեղեցւոյ դուռն երկու ծառ կայր բուսած (անդ, էջ 212):

«Ծառ մի ծաղկեալ գեղեցկապէս և լի պրտողով կայ զարդարած»  
(ԿԵԲ, էջ 151):

«...Հանց տես, թե հիմն ի վերայ ջրոց կայ անհաստաս իրք մի շինած»  
(Ն. տ. էջ 204):

«Քո ընգերին հոր մի՛ փորել  
Թէ չէ այն քեզ կայ պատրաստած» (Ն. տ. էջ 205):

Ինչպես բերված օրինակներից կարելի է համոզվել, կամ բայը հարադրովում է ինչպես շեղոք, այնպես էլ ներգործական սեռի բայերի հետ. վերջինները արտահայտում են կրավորական սեռի իմաստ:

Ունիմ բայը նույնպես հարակատար դերբայի հետ երկրորդական բաղադրյալ ժամանակներ է կազմում: Այս դեպքում ներգործական սեռի բայերը պարտադիր կերպով կրավորականի իմաստ չեն արտահայտում, այլ՝ ներգործական սեռի. ինչպես՝ «...Հասանէ իւր տաքութիւնն ի շորրորդ գիճութիւնն՝ որ ընդ ամենայն մարմնոյն յօղուածան են, և զամենայն անդամս պինտ ունին բոճած» (ՄՀՁՄ, էջ 39): «Իսկ այս իրուին... շունին հնար և ճար ամենևին բորբոսելոյ, զի երկու դէմսն ժողոված ունին՝ զբնութեանն և զմարմնոյն» (Ն. տ. էջ 92—93):

Վերևի նախադասութիւններում ունենք ներգործական սեռի բայ-ստորոգյալներ՝ իրենց ուղիղ խնդիրներով ((զ)անդամս, դէմսն): Հասկանալի է, որ կրավորական սեռն այս դեպքում պետք է հատուկ դրսևորում ունենար: Եվ իրոք, այս կառուցվածքի բայերում կրավորականութիւնն արտահայտվում է վ կրավորական ածանցի միջոցով. ինչպես՝ «Ձերդ լօկնայ մարդն ջրով, որ խառնած է յինքն տաք իրք, և կամ ջուր, որ բնութենէ ունի գտաքութիւն, որպէս ծծմ[բ]ին ջուրն և կպրին ջուրն, զի այս ջրերս, որ խառնված ունին ի սկզբանէ զօրութեամբ...» (Գրգս. Քնն. էջ 11): Այլև՝ «Եւ այն մաղձն, որ զայս նեղս բերէ, նայ լինի ի հաստ պղղամէ և ի կոկ, և կամ յայն պղղամէն, որ խառնած ունի ի սև մաղձէն...» (Ն. տ. էջ 61):

Միջին հայերենում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են նաև վաղակատար դերբայի (-ել վերջավորութեամբ) և լինիմ, կամ բայերի հարադրութեամբ, ինչպես՝ «...Եւ իւր տէրն շատ հոգս լինի քաշել և շատ սուգ, կամ յայլ ցեղ ջերմերուն շատ աւուրք լինի յամել առ ինքն: Եւ այն որ յերկար և բազում դատել լինի, և այն որ պար շատ լինի կացել... և այնոց որ շատ տաք դեղեր կերել լինին և խմել...» (ՄՀՁՄ, էջ 40): «Բայց աղէկ պիտի տեսնուլ ու փնտռել վկայօք, որ ընդ վնասուն տէրն ի դարպաս ստացել լինի և ի դարպասն էր գնացել ու ասացել, և թէ շինի գնացել և խրատ առել ու ասացել...» (ՍԳՊ, էջ 80):

Մյուս կողմից՝ «Իսկ անմիտն ի խաւարի

կայ թանճացել<sup>40</sup> յերազ քրնով» (ԿԵԲ, էջ 171):

Ինչպես նշել ենք վաղակատար դերբայի քննութեան բաժնում, այս կազմութիւններում վաղակատար դերբայը գրաբարի անցյալ դերբայի հնչյունափոխված ձևն է (-եալ>-ել). պատահական չէ, որ վաղակատարի՝ միջին հայերենին հատուկ -եք վերջավորութեամբ ձևից կազմված բաղադրյալ ժամանակների չեն հանդիպում:

<sup>40</sup> Տողատակ ունի նաև՝ թանճացել:

Միջին հայերենում ևս անկանոն բայերը՝ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում դրսևորած առանձնահատկություններին համապատասխան, կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ կմտնեն առնել, դնել, լսել, նանաչել, յառնել, յանցանել, մեղանչել և տալ բայերը, որոնց անցյալ կատարյալի հիմքը չի կազմվում այլ արմատից, այլ նույն բայից՝ յուրահատուկ հընչյունական փոփոխությունների դրսևորումով: Վերոհիշյալ բայերից յանցանել չի օգտագործվում, այլ հանդես է գալիս հարադիր կիրառությամբ: Սակավ կիրառություն ունեն յառնել և մեղանչել բայերը: Յառնել բայը հանդիպում է անցյալ կատարյալ և հրամայական ձևերով, ինչպես՝ հարեալ (ՆԲ, էջ 156), յարեալ (ՎԱԱ, II, էջ 293): Հրամայականում՝ արի՛ (ՎԱԱ, II, էջ 112, ՆԲ, էջ 210), արի՛ք (ՆԲ, էջ 155): Արի՛ և ե՛կ բայաձևերի միացությունից ստացվել է արիեկ (ՎԱԱ, II, էջ 144), ապա և արե՛կ (ՖրԴ, էջ 284, ՎԱԱ, II, էջ 112) հրամայականի ձևը:

Մեղանչել բայն ունի վաղակատարի ձև՝ մեղանչել է (ԿԵԲ, էջ 171), իսկ անցյալ կատարյալում դեռ իշխող են գրաբարյան ձևերը՝ մեղար (ՎԱԱ, II, էջ 82), մեղալ (ՆԲ, էջ 211):

Ճանաչել բայն անորոշում ունի նանչել հընչյունափոխված ձևը: Ներկայի հիմքից կազմվող ձևերում հանդիպում են երկու ձևերն էլ՝ նանչնան (ՍԳԴ, էջ 21), նանաչեն (ՄՀՁՄ, էջ 37): Անցյալ կատարյալում ունենք ծանեան (ՆԲ, էջ 237), սակայն միջին հայերենի համար ավելի բնորոշ է նանաչեց (ՎԱԱ, II, էջ 123) ձևը:

Այս խմբի մնացած չորս բայերը միջին հայերենում լայն կիրառություն ունեն: Անորոշ դերբայում զանազան հընչյունափոխված ձևերով է հանդես գալիս առնել բայը (անել, այնել, այրնել): Ներկա և անցյալ անկատար ժամանակներում, ինչպես մյուս բայերը, անկանոն բայերը հանդես են գալիս գրաբարաձև՝ դնէ (ՍԳԴ, էջ 21), լսես (ն. տ. էջ 60), կամ կու մասնիկով՝ կու անէր (ՍԳԴ, էջ 45), կու լսես (ՖրԴ, էջ 392), կու տայք (ՎԱԱ, II, էջ 170), կոյ առնես (ն. տ. էջ 187) և այլն:

Ի տարբերություն գրաբարի՝ այս անկանոն բայերն ունեն վաղակատար և հարակատար դերբայներ, որոնք կազմվում են անցյալի հիմքի վրա -ել, -եր և -ած վերջավորությունների ավելացումով: Այս դերբայներից կազմված վաղակատար և հարակատար (ներկա և անցյալ) ժամանակները լայն կիրառություն ունեն միջին հայերենում, ինչպես՝ արել են (ՍԳԴ, էջ 30), դրել ենմ (ն. տ. էջ 52), լսեր էի (ՆԲ, էջ 281), լսել էր (ՎԱԱ, II, էջ 7) և այլն: Մյուս կողմից՝ դրած է (ՍԳԴ, էջ 33), շես դրած (ԿԵԲ, էջ 31), շէր տւած (ՖրԴ, էջ 423) և այլն:

Այս խմբի բայերի խոնարհման մեջ զգալի փոփոխություններ են կատարված հատկապես անցյալ կատարյալի և հրամայական (բուն) ձևերում: Ճիշտ է, առնել և դնել բայերը անցյալ կատարյալում հանդես են գալիս արարիք (ՎԱԱ, II, 119), արար (ՄՀՁՄ, էջ 81), եղ (ՍԳԴ, էջ 29), եղաք (ՄՀՁՄ, էջ 77) ձևերով, սակայն հրամայականում ընդհանուր են դարձել արէ՛ք (ՍԳԴ, էջ 24, ՖրԴ, էջ 310) և դրէ՛ք (ՎԱԱ, II, էջ 257, ՖրԴ, էջ 395) ձևերը:

Լսել բայի անցյալ կատարյալը կազմվում է կանոնավոր կերպով, ինչպես՝ լսեցի (ՆԲ, էջ 156), լսեցիր (ԿԵԲ, էջ 133), լսեցին (ՍԳԴ, էջ 43, ՎԱԱ, II,

էջ 124) և այլն: Իսկ հրամայականում տարածված ձևեր են լսէ՛ (ՍԳԴ, էջ 50), լսես՛ (ՖրԴ, էջ 316), լսեցէ՛ք (ն. տ. էջ 395), լսէ՛ք (ՎԱԱ, II, էջ 8):

Հանդիպում են նաև այս ժամանակների գրաբարյան ձևերը, ինչպես՝ լուայ (ՀԵԲ, էջ 210), լուարո՛ւք (ն. տ. էջ 184):

Տալ բայի անցյալ կատարյալում հետևողականորեն ունենք տուի, տուիր, տուա խոնարհման նոր ձևերը, ինչպես՝ տուի (ՖրԴ, 270, 370, ՀԵԲ, էջ 154), տուիր (ՖրԴ, էջ 286, ՎԱԱ, II, էջ 169), տուին (ՎԱԱ, II, էջ 204), տուա (ՖրԴ, էջ 330, ՀԵԲ, էջ 156):

Հոգնակի հրամայականում տարածված ձև է տուէ՛ք (ՖրԴ, էջ 379, ՎԱԱ, II, էջ 136):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դեռևս մեր լեզվի այս շրջանում խախտըվել էր այս խմբի բայերի անցյալի հիմքից կազմվող ձևերի գրաբարյան օրինաչափությունը: Նկատելի է բայաձևերի վերջավորությունների կազմության պարզեցում՝ լսեցի, լսեցիր, լսեց՝ փոխանակ լուայ, լուար, լուաւ. տուի, տուիր, տուա՝ փոխանակ ետու, ետուր, ետ դժվար ըմբռնելի ձևերի: Լեզվի այս շրջանում սկսված պարզեցման և միօրինականացման այս ձգտումը հետագայում օրինաչափ դարձավ, որով և աշխարհաբարի շրջանում այս խմբի լսել, հանաչել, մեղանչել բայերը դադարեցին անկանոն խոնարհման ենթարկվելուց և դարձան կանոնավոր խոնարհման բայեր:

Անկանոն խոնարհման բայերի երկրորդ խմբի մեջ մտնում են գալ, երթալ, ըմպել, լինել, ունել, ուտել բայերը, որոնց անցյալի հիմքում հանդես է գալիս հոմանիշ մեկ այլ արմատ, որ միայն իմաստայի՛ն աղբյուրակցություն ունի անորոշի ուղիղ ձևի հետ: Անցյալի հիմքից կազմվող ձևերում փաստորեն խոնարհվում է մի այլ բայ՝ իր օրինաչափություններով. ինչպես՝ գալ-եկ, երթալ-չոգ, ըմպել-արբ, լինել-եղ, ունել-կալ, ուտել-կեր:

Վերոհիշյալ բայերից ըմպել և ունել սակավ կիրառությամբ են հանդիպում. ըմպել բայն անցյալ կատարյալում հանդիպում է կանոնավոր ըմպեաց (ՎԱԱ, II, էջ 125) ձևով, իսկ ենթակայականը, ինչպես գրաբարում՝ արբեցող (Գրգս. Քնն. էջ 24) ձևով:

Ունել անցյալ կատարյալում ունի կալալ (ՎԱԱ, II, էջ 58) ձևը: Ուշագրավ է, որ այս բայը ներկայում կու եղանակիչ չի ունենում, այլ հանդես է գալիս գրաբարաձև, ինչպես՝ ունին (ՍԳԴ, էջ 40), ունէի (ՖրԴ, էջ 475) և այլն:

Այս խմբի բայերից միջին հայերենում առավել գործածական են գալ, երթալ, լինել, ուտել: Ներկայի հիմքից կազմվող ձևերում գրաբարի համեմատությամբ առանձնահատկություններ չեն դրսևորում: Բոլորն էլ ներկա և անցյալ անկատար ժամանակում միջին հայերենի խոնարհման համակարգին համապատասխան ունենում են կու (կոյ, կ) եղանակիչ, ինչպես՝ կուգայ (ՆՇԲԶ, էջ 565, ՍԳԴ, էջ 24), կու գայր (ՆՇԲԶ, էջ 580), կոյ գայր (ՎԱԱ, էջ 173), կու երթան (ՍԳԴ, էջ 30), կու լինիմք (ՎԱԱ, էջ 22), կու ուտեն (ՍԳԴ, էջ 31), կոյ ստեմ (ՎԱԱ, էջ 151, 193) և այլն:

Անցյալ կատարյալ ժամանակում լինել բայը ձգտում է ընդհանուր -այ, -ար, -ալ վերջավորությունների, ինչպես՝ եղար (ՎԱԱ, էջ 130), եղալ (ՍԳԴ, էջ 30—37), եղան (Գրգս. Քնն. էջ 10) և այլն:

Գալ բայն անցյալ կատարյալում ունի և՛ գրաբարաձև եկիր (ՀԵԲ, էջ 281, ՖրԴ, էջ 402) և՛ եկալ (ՀԵԲ, էջ 160) ձևերը:

Երթալ բայն անցյալ կատարյալում ունի շոգ հիմքը, ինչպես՝ շոգան (ՖրԴ, էջ 419):

Միջին հայերենի խոնարհման համակարգին համապատասխան գալ, լինել և ուտել բայերի անցյալի հիմքից կազմվում են վաղակատար և հարակատար ժամանակներ, ինչպես՝ եկել է (ՆՇԲԶ, էջ 574), շեմ եկել (ՎԱԱ, էջ 136), եկած է (ՀԵԲ, էջ 197), շէր եղեր (ՖրԴ, էջ 397), կերել եմ (ՀԵԲ, էջ 326), կերեր եմ (ՎԱԱ, էջ 44, 155) և այլն: Ուտել բայի ենթակայականը հանդիպում է կերող ձևով՝ Պահոց պահող շեմ, այլ կերող (ԿԵԲ, էջ 175):

Գալ բայը հոգնակի հրամայականում ունի եկէ՛ք (ՎԱԱ, էջ 265, ՍԳԴ, էջ 17) ձևը:

#### ՊԱԿԱՍԱՎՈՐ ՔԱՅԵՐ

Մեր լեզվի այս շրջանում գրեթե չեն օգտագործվում գոլ և գոգ պակասավոր բայերը. առաջինը փոխարինված է լինել բայով, իսկ երկրորդը, ինչպես հայտնի է, գրաբարում մեծ մասամբ II ապառնի ժամանակով էր օգտագործվում: Միջին հայերենը, ինչպես տեսանք, ունի այս ժամանակի կազմութայն իր ձևերը:

Եմ, կամ, պարտիմ բայերը ևս ապառնի ձևերով հանդես չեն գալիս, այլ միայն սահմանական ներկա և անցյալ ժամանակներով: Այսպիսով, գրաբարի պակասավոր բայերը միջին հայերենում կարելի է ամփոփել խոնարհման հետևյալ տախտակով.

				եմ
ներկա՝				անցյալ անկատար՝
եմ	եմք (ենք)			էի էաք
ես	էք			էիր էիք
է	են			էր էին

#### Կայ

ներկա՝ կայ, կան

Անցյալ անկատար՝ կայր (կար), կային

Պարտել (= պարտավոր լինել)

				անցյալ անկատար՝
ներկա՝				
պարտիմ	պարտիմք			պարտէի պարտէաք
պարտիս	պարտիք			պարտէիր պարտէիք
պարտի	պարտին			պարտէր պարտէին

#### ԺԵՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Միջին հայերենում բայի ժխտական կամ բացասական ձևերը հարուստ դրսևորումներ ունեն: Բայի բացասական ձևերը կազմվում են հաստատականի վրա ոչ, չի, չ<sup>41</sup>, մի՛ բացասական մասնիկների ավելացումով: Այժմ տեսնենք, թե բայի տարբեր ժամանակները ժխտականի կազմութայն ի՛նչ ձևեր ունեն:

Ժխտական դերբայի քննութայն ժամանակ մենք խոսեցինք ներկա և անցյալ անկատար (ուտտի և պայմանական ապառնի և անցյալ ապառնի) ժամանակների ժխտականի դերբայավոր կազմութայն մասին, սակայն վերոհիշյալ

<sup>41</sup> Հստ Այտրնյանի՝ «Ընտանեկան լեզվով գրողներուն քով շատ ավելի հաճախ է չ, քան թե ոչ» (ԶԶ, էջ 87):

ժամանակներն ունեն նաև ժխտականի այլ կազմութիւններ: Միջին հայերե-  
նում գրաբարակերպ ներկայի ժխտականը կազմվում է՝

ա) Բայաձևի վրա չ ավելացնելով, ինչպես՝ «...Եւ այս ցեղս զստածումն  
և զբժշկութիւնն շրնդունի բնաւ» (ՄՀՁՄ, էջ 37). «Եւ պատճառն այն լինի, որ ի  
պատեհի ժամն արին չբողո ի յամեջն և ի բազմանալն վառի և բորբոսի»  
(ն. տ. էջ 70). այսպես նաև՝ շնաճի (ՄԳԴ, էջ 10), շնազանդի (ն. տ. էջ 11),  
չմտնէ (ն. տ. էջ 40) և այլն: Բերված օրինակներում երևում է, որ չ մասնիկն  
ավելանում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող բայաձե-  
վերի վրա:

Որպես հեղինակնային լեզվի առանձնահատկություն պետք է դիտել Գրի-  
գորիսի մոտ հանդիպող հետևյալ երևույթը. նման կազմութիւնների դեպ-  
քում թե՛ ձայնավորով և թե՛ բաղաձայնով սկսվող բառերից առաջ գտնում ենք  
յ հնչյունի հավելում, ինչպես՝ «Իսկ թէ հայիս և շարձկնայ լուսայմուտսն, նա  
չյօգաէ միլն, այլ նոյն կուր կենայ» (էջ 85). «Եւ մարդն շղփտէր թէ շունն  
կատղած է թէ ոչ, նայ այսպէս փորձէ» (ն. տ. էջ 46). այսպես նաև՝ շընծայի  
(էջ 16), շկշտանայ (էջ 48), շհանդարտէ (էջ 79) և այլն: Այս օրինակներում,  
բայտ երևույթին, ի> յ հնչյունափոխություն ունենք. յ-ն դրվում է (չի>չյ) թու-  
լացած ի-ի փոխարեն:

բ) Միջին հայերենում գրաբարակերպ ներկայի ժխտականը կազմվում է  
նաև չի մասնիկի ավելացումով. ինչպես՝ «Եւ ի ստամոքին ի վատուժութե-  
նէն... զկերակուրն հալել չի կարէ, և լինի որ աւիրէ զկերակուրն» (ՄՀՁՄ,  
էջ 25):

«Երանի, որ զայն ահեղ օրըն չի մոռնայ» (ԿԾԲ, էջ 205):

«Առջև աչերուս քայլես...»

Չի դառնաս հեղ մի յիս հայես.

Չի գիտե՛ս քո պլպուլն եմ ես» (ԿԾԲ, էջ 160):

Սովորաբար չի ժխտականը դրվում է բաղաձայնով սկսվող բառերի վրա,  
բայց պատահում է նաև ձայնավորից առաջ. ինչպես՝ «...նա չի ընդունի զա-  
լազանին գիճութիւնն» (ՄՀՁՄ, էջ 42):

Ժխտականի այս նույն կազմութիւններն ունեն նաև ըղձականի ապառնին  
և անցյալ ապառնին: Այդ հասկանալի է, քանի որ գրաբարի ներկա և անցյալ  
անկատար բայաձևերը միջին հայերենում ստորադասականի՝ ըղձական ապառ-  
նիի և անցյալ ապառնիի, իմաստ են արտահայտում, ինչպես՝ «Եւ իւր ստա-  
ծումն այս է... յամենայն ցեղ տաք կերակրոց պատրաստ պահել, որ չվառի  
(=չվառվի) բնական տաքութիւնն և ի բաղանեաց պատրաստ կալ, որ չբորբոսի  
(=չբորբոսնի) յաւելուածքն ի մորմինն» (ՄՀՁՄ, էջ 16): Ահա և ժխտական  
ըղձականի մի օրինակ չի մասնիկի կազմութեամբ. «Բայց յորժամ խաղաղի  
ջերմն, ապա ի բաղանիս մտո՛ւ և տե՛ս որ չօժանես զմարմինն ձիթով, ոչ չի  
խցկի գաղտ շնշահանքն, ձիթին ղորկութեամբն չի բռնես. և երբ քրտնի, ապա  
օժէ՛ զմարմինն խիրի ձիթով... բայց տե՛ս աղէկ որ չի վատուծի հիւանդն»  
(ն. տ. էջ 10):

Թող եղանակավորող բառով կազմվող ըղձական բայաձևերում ևս ժըխ-  
տականն արտահայտվում է չ և չի մասնիկների ավելացումով, ինչպես՝ թող  
չնստի (ՄԳԴ, էջ 17), թող չլինի (ն. տ. էջ 19), թող չուտէ (ՄՀՁՄ, էջ 46), բայց  
և՛ թող չի յամէ (ն. տ. էջ 23), թող չի մտէ (ն. տ. էջ 24) և այլն:



զ) Ի տարբերութիւն չ և չի մասնիկներէ, որոնք հավասարապես դրվում են թե՛ ներկա և թե՛ ստորագրասական (ըղծական) բայաձևերի վրա, ոչ ժխտականը դրվում է միայն սահմանականի ներկայի և անցյալ անկատարի վրա, ինչպես՝ «(Յերբ) արիւնն չընծայի, նայ գոյն և գեղեցկութիւն ոչ ունենայ (=չի ունենում), և գողն սպիտակ լինի» (Գրգս. Քնն. էջ 16): «Իսկ թէ տաքութիւնն ի շարանց լինի.... երեսն լինի բաց կարմիր և շառագոյն, և շերմն մարմնոյն ոչ կալնու (=չի պատում) կըսկիծ» (ն. տ.):

«Իմաստունն ոչ երկընչի,  
Թէ հարկանէն զինքըն սըրով» (ԿԵԲ, էջ 172):

Արդ, հարց է առաջանում. այս բոլոր ձևերից ո՞րն է ավելի նախընտրելի միջին հայերենի համար: Այս հարցադրումն իսկ ճիշտ չէ. միջին հայերենում առանց խտրութեան օգտագործվում են բոլոր ձևերն էլ: Հաճախ նույն նախադասութեան մեջ կարելի է հանդիպել և՛ մեկ, և՛ մյուս ձևին, ինչպես՝ «Ամենայն խոց, որ ոչ չորանայ, չողջանայ» (ՄՀՁՄ, էջ 53). «...Զօճանես զմարմինն ձիթով, որ չի խցկի գաղտ շնշահանքն» (ն. տ. էջ 10). և կամ՝ «Զիս որ արեամբըդ գրնեցիր, այլ չերկընչիմ՝ ոչ վախենամ» (ՖրԴ, էջ 255):

Այսպիսով, սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը միջին հայերենում ունեն ժխտականի 7 դրսևորումներ՝ 4 դերբայավոր և 3 մասնիկավոր: Եթե վերցնենք, օրինակ, քայլել բայը, ապա նրա սահմանականի ներկա և անկատար ժամանակները կունենան ժխտականի հետևյալ ձևերը.

ներկա (անկատար)		անցյալ անկատար	
չեմ ի քայլել	չեմք ի քայլել	չէի ի քայլել	չէաք ի քայլել
չես ի քայլել	չէք ի քայլել	չէիր ի քայլել	չէիք ի քայլել
չէ ի քայլել	չեն ի քայլել	չէր ի քայլել	չէին ի քայլել
չեմ ի քայլեր	չեմք ի քայլեր	չէի ի քայլեր	չէաք ի քայլեր
չես ի քայլեր	չէք ի քայլեր	չէիր ի քայլեր	չէիք ի քայլեր
չէ ի քայլեր	չեն ի քայլեր	չէր ի քայլեր	չէին ի քայլեր
չեմ քայլել	չեմք քայլել	չէի քայլել	չէաք քայլել
չես քայլել	չէք քայլել	չէիր քայլել	չէիք քայլել
չի քայլել	չեն քայլել	չէր քայլել	չէին քայլել
չեմ քայլեր	չեմք քայլեր	չէի քայլեր	չէաք քայլեր
չես քայլեր	չէք քայլեր	չէիր քայլեր	չէիք քայլեր
չի քայլեր	չեն քայլեր	չէր քայլեր	չէին քայլեր
չքայլեմ	չքայլեմք	չքայլէի	չքայլէաք
չքայլես	չքայլէք	չքայլէիր	չքայլէիք
չքայլէ	չքայլեն	չքայլէր	չքայլէին
չի քայլեմ	չի քայլեմք	չի քայլէի	չի քայլէաք
չի քայլես	չի քայլէք	չի քայլէիր	չի քայլէիք
չի քայլէ	չի քայլեն	չի քայլէր	չի քայլէին
ոչ քայլեմ	ոչ քայլեմք	ոչ քայլէի	ոչ քայլէաք
ոչ քայլես	ոչ քայլէք	ոչ քայլէիր	ոչ քայլէիք
ոչ քայլէ	ոչ քայլեն	ոչ քայլէր	ոչ քայլէին

Ապառնի, վաղակատար և հարակատար բաղադրյալ ժամանակների ժրխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի վրա շ մասնիկի ավելացումով:

Ի տարբերություն հաստատական ձևերի, ժխտականի դեպքում օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ, ինչպես՝

«Աշխարհս շէ քեզ մնալոյ  
է՞ր պարապիս դու ի լալոյ» (ԿԾԲ, էջ 172):

«Ո՛վ պիղծ, որ դու բժիշկ ես, դու զքեզ է՞ր շես բժշկել» (ՎԱԱ, II, էջ 296):  
«Եւ ասեն. քաւ լիցի, տիկին, մեք շեմֆ ասել» (ն. տ. էջ 297):

«Թէ յառաջագոյն զայս գիտացել էին առաջինքն, նա շէին արել վասն այս ահիս՝ քան մէկ անուն» (ՄԳԴ, էջ 30):

Նկատենք, որ վերոհիշյալ ձևերի ներկայի եզակի III դեմքում օժանդակ բայը չի հնչյունափոխվում, ինչպես՝ շէ հրամայել (ՄԳԴ, էջ 49), շէ յաղթել (ՄՀՁՄ, էջ 111), շէ աշակերտել (ԿԾԲ, էջ 187), շէ տեսել (ՅԲԴ, էջ 409), շէ ծնել (ն. տ. էջ 265) և այլն:

Ջի հնչյունափոխված ձևով օրինակ ունի Հովհաննես Երզնկացին՝ «է՞ր չի ասել... մեղայ» (էջ 230): Իսկ տողատակում, այլ ձևազերբում ունի՝ շե՛ս ասել, և դա ավելի ճիշտ է, քանի որ հեղինակը դիմում է խոսակցին: Մինչդեռ հայտնի է, որ արդի հայերենում նման կազմություններում երրորդ դեմքի է օժանդակ բայը փոխվում է ի-ի (չի սիրելու, չի սիրել):

Վաղակատար ներկա և անցյալ ժամանակների ժխտականը հանդիպում է նաև ոչ մասնիկով. այս դեպքում էս օժանդակ բայը գրվում է դերբայից առաջ, ինչպես՝ «Եւ նոքա ասեն. քան զքեզ ալ խաղք մարդ այլ ոչ եմ տեսեր» (ՎԱԱ, II, էջ 50): «Այր մի գող բազում գողութիւնս արար և եկեալ ի զղջումն. և՛ ոչ էր քարկեր զգողութիւն» (ն. տ. էջ 185):

«Ոչ եմ արկել ես փող ի գուշ,  
Ոչ եմ քաղել զմեղացն փուշ...» (ԿԾԲ, էջ 174):

Ի տարբերություն արդի հայերենի, հարակատար ժամանակների ժխտականի կազմության դեպքում օժանդակ բայը միշտ գրվում է դերբայից առաջ, ինչպես՝ «Տեսեալ աղւեսուն ասաց. զարմացեալ եմ ո՛վ ագռաւ... Թէ ինչ է պատճառն, որ հաւանց թագաւոր շես դրած» (ՎԱԱ, II, էջ 31): «Եւ այս հանչաք էր գրած ի կանոնքն, ու այլ առաջ շէր գնացած, զոր, թէ գնացած էր՝ նա պատեհ էր» (ՄԳԴ, էջ 38—39):

«Մառքըն ծաղիկըս ի վեր փըշեն,  
Թէ կան դալար ու շեն մըսած» (ԿԾԲ, էջ 150):

Այս դեպքում ևս ներկայի եզակի III դեմքում է օժանդակ բայը չի հնչյունափոխվում, ինչպես՝ շէ օրինած (ՄԳԴ, էջ 21), շէ ընդունած (ն. տ. էջ 33), շէ կախած (ՎԱԱ, II, էջ 246), շէ տեսած (ԿԾԲ, էջ 219) և այլն:

Շարունակելով մեր խոնարհման տախտակը, կարծում ենք, ավելորդ չէր լինի ստորև տալ քայլել բայի ապառնի, վաղակատար և հարակատար ժամանակների կազմությունները ժխտական խոնարհմամբ.

**Ապառնի**

**Անցյալ ապառնի**

չեմ քայլելու	չեմք քայլելու	չէի քայլելու	չէաք քայլելու
չես քայլելու	չէք քայլելու	չէիր քայլելու	չէիք քայլելու
չէ քայլելու	չեն քայլելու	չէր քայլելու	չէին քայլելու

Վաղակատար (ներկա)		Անցյալ վաղակատար	
չեմ քայլել	չեմք քայլել	չէի քայլել	չէաք քայլել
չես քայլել	չէք քայլել	չէիր քայլել	չէիք քայլել
չէ քայլել	չեն քայլել	չէր քայլել	չէին քայլել

Վաղակատար (ներկա)		Անցյալ վաղակատար	
ոչ եմ քայլել	ոչ եմք քայլել	ոչ էի քայլել	ոչ էաք քայլել
ոչ ես քայլել	ոչ էք քայլել	ոչ էիր քայլել	ոչ էիք քայլել
ոչ է քայլել	ոչ են քայլել	ոչ էր քայլել	ոչ էին քայլել

Հարակատար (ներկա)		Անցյալ հարակատար	
չեմ քայլած	չեմք քայլած	չէի քայլած	չէաք քայլած
չես քայլած	չէք քայլած	չէիր քայլած	չէիք քայլած
չէ քայլած	չեն քայլած	չէր քայլած	չէին քայլած

Անցյալ կատարյալի ժխտականը կաղմվում է դրական ձևի վրա չ մասնիկ ավելացնելով, ինչպես՝ «...Չուսուցին թէ վասն նախանձու և ատելութեամբ պատուեցէք...» (ՄԳԳ, էջ 230). «Թէ զիրար բշտեն ու սպաննեն, նա թէ արծոյին կամօք է, որ շասաց կամ չգատեց...» (ն. տ. էջ 82). «Հանց փորձելոյ ինձ տայ լեղի՝ ես գայն աոի շամաչեցի» (ՖրԳ, էջ 289). «Ասէ Գաղիանոս, եթէ՛ շտեսայ ես որ բնական սաւտայն ցներբսէ երակացն բորբոսեցաւ...» (ՄՀԶՄ, էջ 63):

Վերևի օրինակներում կարելի է տեսնել, որ չ մասնիկը դրվում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող բայերի վրա, մինչդեռ բաղաձայնով սկսվող բայաձևերը ունենում են նաև չի մասնիկ, ինչպես՝ «Ապուճարեհն ասէ... գոլորշիքն ամենայն մարմնոյն ջերմացեալ սրանան, վասն ան պատճառին՝ որ կերակուրն չիւր ժամն չի հանդիպեցաւ (ՄՀԶՄ, էջ 26). «Անկայի յոսկոյ ցընոր ու զհոգոյ տուն չի շինեցի» (ՖրԳ, էջ 362), այսպես նաև՝ չի դիրի (ՖրԳ, էջ 288), չի տեսաք (ՎԱԱ, II, էջ 199), չի հասաւ (ն. տ. էջ 93) և այլն:

Անցյալ կատարյալի ժխտականի կաղմության երրորդ ձևն ստացվում է բայաձևից առաջ ոչ մասնիկի ավելացումով, ինչպես՝ «...Ընդէ՛ր ոչ կատարեցեր, զոր կարդացեր. ես օտար էի և ոչ ժողովեցեր, մերկ էի և ոչ զգեցուցեր, քաղցեալ էի և ոչ կերակրեցեր (ՎԱԱ, II, էջ 264): «...Եւ սկսաւ ջուր արկանել ի նմայ, զի կարծեաց, թէ ջրոյ աման է. և ոչ լցաւ ջրով» (ն. տ. էջ 95):

Ինչպես սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակների ժխտականի մասնիկավոր ձևերը, անցյալ կատարյալի ժխտականի այս երեք ձևերն էլ հավասար կիրառություն ունեն մեր լեզվի այս շրջանում:

Այսպիսով, խոնարհվող քայլել բայն անցյալ կատարյալում կունենա հետևյալ ձևերը.

#### Անցյալ կատարյալ

չբայլեցի	չբայլեցաք
չբայլեցիր (-իր)	չբայլեցիք
չբայլեաց	չբայլեցին

չի քայլեցի	չի քայլեցաք
չի քայլեցեր (-իր)	չի քայլեցիք
չի քայլեաց (-եց)	չի քայլեցին
ոչ քայլեցի	ոչ քայլեցաք
ոչ քայլեցեր (-իր)	ոչ քայլեցիք
ոչ քայլեաց (-եց)	ոչ քայլեցին

ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄՈՅԱԿԱՆ

Միջին հայերենում արգելական հրամայականը հարուստ դրսևորումներ ունի: Նախ՝ գրաբարի հետևողությունը արգելական հրամայականը կազմվում է տվյալ բայի սահմանական եղանակի ներկայի II դեմքից: Եզակի թվում բայի դիմային և վերջավորությունը փոխարինվում է Ե-ով: Հոգնակիում ներկայի բայածեր մնում է անփոփոխ: Այս բայածեից առաջ դրվում է մի՛ արգելականը: Այսպիսով, բոլոր խոնարհումների արգելական հրամայականի բայածերը ունեն հետևյալ վերջավորությունները.

- ե խոնարհում՝ -եր, -էք
- ի խոնարհում՝ -իր, -իք
- ա խոնարհում՝ -ար, -այք
- ու խոնարհում՝ -ուր, -ուք

Այս օրինաչափությունները տարածվում են ինչպես ածանցավոր, պատճառական, այնպես էլ անկանոն բայերի վրա: Ստորև բերում ենք օրինակներ բոլոր 4 խոնարհումների բայերով.

Ե—«Ձրանի գերկու ծայրն ամուր մի՛ պահեր,

«Հանց կրրակ մի՛ վառեր, որ յինքն դու այրիս» (ՖրԴ, էջ 249—250):

«Եւ գնաց առ կին և ասաց. ա՛յ կին, ես քեզ բան մի ասեմ և դու զան մարդոյ մի՛ ասեր» (ՎԱԱ, II, էջ 133):

«Իսկ շորային ձիթերովն մի՛ օծաներ զմարմինն» (ՄՀՁՄ, էջ 13):

«Ձանցաւոր կեանքս զայս բնաւ մի սիրէք,

Յաստուծոյ օրինացն բնաւ զձեզ մի՛ զատէք» (ՀԵԲ, էջ 198):

Հայտնի է, որ գրաբարում ե խոնարհման ներգործական սեռի բայերը, ինչպես ներկա ժամանակում, արգելական հրամայականում ևս կարող են ունենալ կրավորականի վերջավորություններ (-իր, -իք)՝ դառնալով կրավորական սեռի: Ներկա ժամանակում կրավորականի այդ կազմությունը գործում է միջին հայերենում, սակայն հրամայական եղանակում՝ ոչ: Այս կազմությունները ե խոնարհման արգելական կրավորականի ձև չենք գտնում այս շրջանում:

Ի—«...Այլազգին ասաց. մի՛ պատերազմիր, համբերէ՛, որ ես քեզ արինեակ բան մի ասեմ» (ՎԱԱ, II էջ 168): «Յուցանէ առակս, թէ մի՛ հայիր ի մարդն, որ բարձր է քան զքեզ... մի՛ հայիր ի կարի արդարն և անյոյս լինիր. այլ հայեաց ի մեծ մարդիկ և մխիթարիր» (ն. տ. էջ 195): «Յուցանէ առակս, թէ մի՛ վիճիր և մի՛ անկանիր ի մէջ վիճողաց...» (ն. տ. էջ 85—86):

- «Այլ և զբերանդ լրկամէ և շատ մի՛ խօսիր,
- Ձրաբան և հերձուածող բանիւ մի՛ լինիր,
- Ձստախօսն և զերդմնազանցըն մի՛ ընդունիր» (ՀԵԲ, էջ 201):

Ա.—«Եւ թէ հետ կերակրոյ կարես տալ՝ զինչ և իցէ կերակուրն, երկու կամ երեք տարպայ. թէ շօգտէ, դու այլ մի՛ մնար հիւանդին» (ՄՀՁՄ, էջ 150): «...Քաց դու զիմ երախտիքն մի՛ մոռանար, որ զիշեր ու ցերեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կոյ ուտեն քահանաքն և ժողովուրդքն» (ՎԱԱ, II, էջ 151):

«Հայ իմ մարիկ մի՛ տրխմարնար,  
Չրկայ նրման գէմ Աշային...» (ԿԵԲ, էջ 167):  
Մի՛ մարմին հասկանայք զբանս...» (ԿԵԲ, էջ 117):

Վարդան Այգեկցու մոտ երբեմն, ըստ երևույթին հոգնակի ձևի ազդեցութեամբ, եզակիումը վերջավորութիւննից առաջ գտնում ենք յ հնչյունի հավելում, ինչպես՝ մի՛ գայր (էջ 27), մի՛ վախենայր (էջ 91):

Ու.—«Թէ արիւնն յաւելցել լինի, պարտ է երակ առնուլ... ապա թէ կարմիր լինի և նօսր, առ ժամն կապէ զհրակն, և մի՛ թողուր որ արիւն հանէ» (ՄՀՁՄ, էջ 124): «Եւ զբնութիւն լուծէ մրգանց ջրովն, և ամենևին երակ մի՛ առնուր» (ն. տ. էջ 122):

Միջին հաշիւներում կա արգելական հրամայականի կազմութեան յուրահատուկ ձև. մի՛ արգելականը դնելով անորոշ դերբայի վրա, ստանում ենք մի տեսակ մեղմական արգելական հրամայական, գրաբարի հորդորական հրամայականը հիշեցնող իմաստով. օրինակ՝ «Մի՛ պատճառել այսար յէգուց, թէ շէ մեղաւք ոտնակապիս» (ՖրՊ, էջ 268):

«Իմ սիրտ, վատին մի՛ լսեր, ու շարին իսկի տեղ մի՛ տալ» (ն. տ. էջ 357):

«Դարձի՛ր դու խոնարհեց,

Մի՛ բարկանալ ինձ ի սրբտաց...» (ն. տ. 314):

«...Ու մի՛ զաստուած փառաց փոխել

...Ձհրպարտութիւնըն մի՛ սիրել» (ԿԵԲ, էջ 180):

«Մի՛ հաւատալ ամէն մարդոյ,

Թէ զիրենք ցուցնեն քեզ խիկար (ն. տ. էջ 199):

«...Երգվի՛ր երգմամբ առ այնպիսին... բայց մեզ հրամայել է... թէ մի՛ երգնուլ, բայց թէ երգնու և կատարէ, նա թող ապաշխարէ և քալէ» (ՍԳԴ, էջ 72):

Հասկանալի է, որ այս դեպքում հոգնակիի դրսևորման հնարավորութիւն չունի լեզուն: Ի խոնարհման բայերն այս դեպքում անորոշում ունեն -իլ վերջավորութիւն, ինչպես՝

«Մի՛ փառաց դու հետեիլ,

Մի՛ անգանիլ անեզր ի ծով» (ԿԵԲ, էջ 175):

«Մի՛ մոլորիլ ու զքեզ խաբել,

Մի ըզհոգիդ կորուսանել» (ՖրՊ, էջ 407):

Այսպես նաև՝ մի՛ խորհիլ (ՎԱԱ, II, էջ 25), մի՛ վիրավորիլ (ն. տ. էջ 308) և այլն:

Ֆրիկի մոտ խօսիմ բայը հանդիպում է -ել վերջավորութեամբ, ինչպես՝

«Մի՛ սուտ խաւել և զոք զըրկել» (էջ 407):

«Մի բամբասել դու վայլ ոք, մի՛ խաւել դուզարն աւելի» (էջ 493):

Արգելականի այսպիսի կազմութիւններում է խոնարհման ներգործական սեռի բայերն ըստ անհրաժեշտութեան կրավորական սեռի կամ կրավորակերպ շեղոքի իմաստ են արտահայտում անորոշում -իլ վերջավորութիւն ունենալով, ինչպես՝

«Կոստանդին, իմ խըրատիս  
հաւան կացիր դու հեզաբար,  
Մի՛ ի(զուր) հոգօք մաշիլ՝ (=մի՛ մաշվիր)  
վասն անցաւոր կենաց համար» (ԿԾԲ, էջ 194):

Այս բոլոր ձևերից դուրս Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատութեան մեջ գտնուած ենք արգելական հրամայականի կազմութեան մի յուրահատուկ ձև. մի՛ արգելականն ուղղակի ավելանում է գրաբարյան ներկայի եզակի երկրորդ դեմքի վրա<sup>42</sup>, ինչպես՝ «Ապա թէ գարեջուրն քացիի ի ստամոքսն մի՛ տաս զգարեջուրն: Ապա թէ ի յայդ ջերմդ վերաբերութիւն հանդիպի, մի՛ արգելես, մանաւանդ ի հիւանդութեան սկիզբն» (ՋՄ, էջ 82): «Եւ իւր ստածումն ընդ յառաջսն մի՛ շտապիս, և մի՛ լուծման դեղ տաս, այլ տուր մըր-զաջուր և մանիշակի շարապ...» (ն. տ. էջ 104): «Եւ այլ ուրդի՛ որ ի շորս օրն հաղ մին առնու զնուպայն, այլ դու մի մտիկ դնես իւր նուպային, և մի՛ ընդունիս, այլ զինքն ի յար նշանացն իմացիր, և մի՛ ի նուպայէն» (ն. տ. էջ 88):

Բերված օրինակներում կարելի է տեսնել, որ արգելական հրամայականի վերոհիշյալ ձևերը իրենց արտահայտած իմաստով մոտ են ըղձականի ժխտական ձևերին, բարբառների ազդեցութեամբ արդի գրականի մեջ թափանցած շմտնես, շտխրեմ, շտոսես, շծիծաղեմ ձևերի արժեքով, ինչպես՝

«Ոտք շղնե՛ս էլ տունս,  
Մրտեցի՛ր անունս» (Հ. Թումանյան, «Մարտ»):  
«Իմ գերեզմանին դուք շմտեմաք...» (Վ. Տերյան):

Եվ իրոք, հեղինակի հետևյալ խոսքի մեջ այդ հստակորեն երևում է. «Ապա թէ նիւթն շատ լինի և հաստ, որ գերդ պաղած լինի, մի՛ տաս սրբնճպին... և այլ պատրաստ՝ որ հով ջուր շտաս ի յայս հիւանդութիւնս...» (ՋՄ, էջ 83): Գրաբարում ստորադասական եղանակի ձևերը կազմվում էին մի՛ արգելականով: Ուստի վերևի այս ձևերն էլ ստորադասականին իմաստային մոտիկութիւն ունենալու հետևանքով կազմվել են մի՛ արգելականով:

Ինչպես արդեն ասել ենք, ըղձական ապառնին և անցյալ ապառնին կազմվում են հաստատական բայաձևերի վրա շ կամ շի մասնիկներ ավելացնելով (տե՛ս էջ 353), իսկ պայմանականի ժխտական ձևերը նույնն են, ինչ որ սահմանական ներկայի դերբայավոր կազմութեամբ ժխտական ձևերը:

Խոնարհման տախտակը լրացնելու նպատակով ստորև դնում ենք ըղձական և պայմանական եղանակների ժխտական խոնարհումը.

Ը ղ ձ ա կ ա ն և ղ ա ն ա կ

ապառնի		անցյալ ապառնի	
շքայլեմ	շքայլեմք	շքայլէի	շքայլէաք
շքայլես	շքայլէք	շքայլէիր	շքայլէիք
շքայլէ	շքայլեն	շքայլէր	շքայլէին

<sup>42</sup> Խոսելով գրբ. ներկա և անկատար ժամանակների՝ ստորադասականի իմաստով կիրառու-թյան մասին, Այսրենյանը գրում է. «Այս ձևով հրամայական, և մանավանդ արգելական ալ կար ն գարուն մեջ, որ հետո խափանեցա՞վ. Մի՛ լինիս գրկեալ. մի՛ անցանէ քստ քեզ. Մի՛եջ շե: ԲՆԵԼալ րցէ՛ մի՛ մեղադրես. Մի՛ վաճառեմ: Կար նաև է դարուն ընտանեկան լեզվին մեջ՝ Մի՛ պատրիս. Մի՛ ոք սուտ ասէ և խաբէ գրեզ. Մի՛ շտապիս, ժԲ դար» (ԲԲ, էջ 74):

ապառնի		անցյալ ապառնի	
չի քայլեմ	չի քայլեմք	չի քայլէի	չի քայլէաք
չի քայլես	չի քայլէք	չի քայլէիր	չի քայլէիք
չի քայլէ	չի քայլեն	չի քայլէր	չի քայլէին

Պ ա յ մ ա ն ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ապառնի		անցյալ ապառնի	
չեմ ի քայլել	չեմք ի քայլել	չէի ի քայլել	չէաք ի քայլել
չես ի քայլել	չէք ի քայլել	չէիր ի քայլել	չէիք ի քայլել
չէ ի քայլել	չեն ի քայլել	չէր ի քայլել	չէին ի քայլել
չեմ ի քայլեր	չեմք ի քայլեր	չէի ի քայլեր	չէաք ի քայլեր
չես ի քայլեր	չէք ի քայլեր	չէիր ի քայլեր	չէիք ի քայլեր
չէ ի քայլեր	չեն ի քայլեր	չէր ի քայլեր	չէին ի քայլեր
չեմ քայլել	չեմք քայլել	չէի քայլել	չէաք քայլել
չես քայլել	չէք քայլել	չէիր քայլել	չէիք քայլել
չի քայլել	չեն քայլել	չէր քայլել	չէին քայլել
չեմ քայլեր	չեմք քայլեր	չէի քայլեր	չէաք քայլեր
չես քայլեր	չէք քայլեր	չէիր քայլեր	չէիք քայլեր
չի քայլեր	չեն քայլեր	չէր քայլեր	չէին քայլեր

Հարկադրականի ժխտականը կազմվում է հաստատական բայաձևերից առաջ ոչ մասնիկ ավելացնելով, ինչպես՝ «Թէ մէկ արւ ապաշխարեալ էիր, աստուած զքոյ մեղքն ոչ պիտի յիշէր» (ՎԱԱ, էջ 177): «Ապայ յետ մահ[վ]ան իմոյ բնաւ զիս մտաւք այլ ոչ պիտի ձգեն» (ն. տ. էջ 191):

Քայլել բայի ժխտականը հարկադրականում կունենա հետևյալ ձևերը.

ապառնի		անցյալ ապառնի	
ոչ պիտի քայլէ	ոչ պիտի քայլեմք	ոչ պիտի քայլէի	ոչ պիտի քայլէաք
ոչ պիտի քայլես	ոչ պիտի քայլէք	ոչ պիտի քայլէիր	ոչ պիտի քայլէիք
ոչ պիտի քայլեմ	ոչ պիտի քայլեն	ոչ պիտի քայլէր	ոչ պիտի քայլէին

Գ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Մեր լեզվի այս շրջանում ևս օգտագործվում են հայերենի բոլոր 4 խոնարհումները՝ իրենց պարզ և ածանցավոր արտահայտութուններով:

Ե խոնարհման պարզ բայերն անորոշ դերբայում ունեն -ել վերջավորութուն, ինչպես՝ այրել (ԱԱԱԱ, էջ 46), եփել, մաքսել (անդ, էջ 18), ավիրել (ՆՀԲ, էջ 164), կանչել, կախել (անդ, էջ 179) ևլն:

Բարբառային արտահայտութուն պետք է համարել Նաղաշ Հովնաթանի (XVII դ.) լեզվի մեջ հանդիպող կու եփիս («էնտով կու եփիս ծտանքրն»—Բանաստեղծթ. էջ 114), գրիճ («Գրինք՝ Կարապետ»—անդ, էջ 131), պահիլ («Ես որ տեսնիմ՝ կարիլ շեն խելքս պահիլ»—անդ, էջ 226) ձևերը: Առաջին երկուսը, ճիշտ է, խոնարհված ձևով են հանդես գալիս, սակայն ենթադրելի է միայն -իլ վերջավորութամբ անորոշ դերբայ: Ե խոնարհման բայերը ի խոնարհման փոխանցելու միտումն առավել ևս հաստատվում է նույն հեղինակի մոտ հանդիպող կու տեսնիմ («Ղալամ ունքերդ կու խաղայ, Կու տեսնիմ՝ սիրտս կու դողայ»—անդ, էջ 36) բայաձևով, որ ե//ի ածանցավոր ներգործական սեռի բայի եզակի բայաֆոխանցումն է այս շրջանում:

Անորոշ դերբայով հարադրվող ժխտական կազմութուններում Ե խոնարհման ներգործական սեռի բայերն ունենում են և՛ -ել, և՛ -իլ վերջավորութուններ, ինչպես՝ շես ղրկել («Մէկ խապար շես ղրկել»—անդ, էջ 42), շասել («Մէկն շասել. «Թարկն տւէք»—անդ, էջ 120). մյուս կողմից՝ շի ջոկիլ («Ձի ջոկիլ միմհանց շաղգամ և գաղար»—անդ, էջ 82), շես լսիլ («Կարդացողաց խօսք շես լսիլ»—անդ, էջ 137) ևլն:

Այս երկվության լավագույն վկայութունն են միևնույն հեղինակի մոտ հանդիպող հետևյալ զուգահեռ ձևերը՝ շի կարել (ՆՀԲ, էջ 82, 121)—շեմ կարիլ (անդ, էջ 29, 45), զի գիտել (անդ, էջ 91)—շի գիտիլ (անդ, էջ 98), շեն ճանաչել (անդ, էջ 118)—շեն ճանաչիլ (անդ, էջ 121): Այս երկվությունը հատուկ է նաև շեզոք սեռի բայերին, ինչպես՝ շես վախել (ՆՀԲ, էջ 42), բայց և՛ շածիլ «արժել» (անդ, էջ 111) ևլն:

Ե խոնարհման ածանցավոր բայերն անորոշ դերբայում ունեն -ել վերջավորութուն, ինչպես՝ արկանել (ԱԱԱԱ, էջ 54, 125), մտնել (անդ, էջ 192), սպա և խոնարհված ձևերից՝ կու սպաննել (անդ, էջ 343), տեսանեմ (ՀԹՏ, էջ 220) ևլն:

Այս շրջանում ևս Ե խոնարհման (ինչպես նաև ի խոնարհման) բայերի -ան, -են ածանցների հնչյունափոխությունը կարգավորված չէ. ինչքան ձայ-



նավորի սղումով, նույնքան էլ ձայնավորի անփոփոխ արտահայտությամբ ձևավորի ենք հանդիպում: Մեր այս խոսքը կարելի է փաստել հետևյալ զուգահեռ ձևերով՝ ելնէ (ԱԱԱԱ, էջ 27)—ելանէ (անդ, էջ 258), կու բուցնէ (անդ, էջ 349)—բուսուցանէ (անդ, էջ 358), կու սպաննէ (անդ, էջ 34)—սպանանէ (անդ, էջ 95) ևլն, ևլն:

Անորոշ դերբայով է խոնարհման ածանցավոր բայի ժխտական կազմության օրինակներ քիչ կան. չէր ելնել (ԱԱԱԱ, էջ 123), չելնել (անդ, էջ 325), չի գտնիլ («Ձի գտնիլ մէկ էչն ու կն»—անդ, էջ 118): Վերջին օրինակը ապացույց է, որ -ել, -իլ կրկնակի վերջավորությունը ածանցավոր բայերի դեպքում ևս առկա է:

Մեր լեզվի այս շրջանում է խոնարհման ածանցավոր շորս բայերի՝ գտանել, իջանել, մտանել, տեսանել՝ փոխանցումը ու խոնարհման գրեթե ամբողջանում է. այդ են վկայում հեղինակների մոտ հանդիպող հետևյալ փաստերը. ա) տեսնուլ (ԱԱԱԱ, էջ 123), չի տեսնուլ (ժխտական ներկա, անդ, էջ 164), ապա և խոնարհված ձևերով՝ տեսնում (ՀԹՏ, էջ 132, 134), տեսնուս (ՆՀԲ, էջ 40), տեսնումք (ՄՂ, էջ 81) ևլն. բ) իջնուլ (ԱԱԱԱ, էջ 265, 290, 344), կու իջնու (անդ, էջ 35), իջնուն (ՀԹՏ, էջ 160), իջնու (ՉԱՕ, էջ 8) ևլն. գ) կու մտնու (ԱԱԱԱ, էջ 41), մտնումք (ՆՀԲ, էջ 205), մտնուս (անդ, էջ 148), տի մտնում (ՀԹՏ, էջ 202), չի մտնուլ (ժխտական ներկա, ԱԱԱԱ, էջ 524) ևլն. դ) կու գտնումք (ԱԱԱԱ, էջ 127), գտնում (ՄՂ, էջ 98, 102), գտնուս (ՆՀԲ, էջ 148), գտնուին (ԱԱԱԱ, էջ 83), չի գտնուլ (ժխտական ներկա, անդ, էջ 19) ևլն, ևլն: Անորոշ դերբայի հարադրությամբ կազմվող ժխտական ձևերում սրանք ունեն -ուլ վերջավորություն, ինչպես՝ չի գտնուլ (ԱԱԱԱ, էջ 19), չի տեսնուլ (անդ, էջ 164): Ավելին. այս երևույթն այնքան կենսունակ է, որ տարածվում է և խոնարհման ածանցավոր երկու այլ բայերի վրա, ինչպես՝ ելնում (ԱԱԱԱ, էջ 138, 259), կելնու (ՀԹՏ, էջ 138, 142), ելնում (ՆՔԴ, էջ 43), կու ելնէ (ԱԱԱԱ, էջ 38) ևլն. բ) հասնու (ՉԱՕ, էջ 100), չի հասնուլ (անդ, էջ 16) ևլն: Ե // ու բայափոխանցման այս երևույթն ավելի առաջ զնալով տարածվել է նաև ի խոնարհման մի քանի բայերի վրա, ինչպես՝ կու դպնու (գրբ. դիպիմ, ԱԱԱԱ, էջ 15, 282), դպնու (ՆՔԴ, էջ 45), թոնումք (գրբ. թոշիմ, ՆՔԴ, էջ 5) ևլն:

Սակայն սխալ կլինեի կարծել, որ վերևի բայերն իրենց ավանդական խոնարհման ձևերով այս շրջանում հանդես չեն գալիս: Վերևի մեր հեղինակների գործերի մեջ մենք գտնում ենք նաև կու ելնէ (ԱԱԱԱ, էջ 38), կելնես (ՆՀԲ, էջ 33), կու մտնէ (ԱԱԱԱ, էջ 21) և այլ ձևեր: Այս կիրառությունների դեպքում, անշուշտ, դրդապատճառը սովորույթի ուժն է:

Ե // ա բայափոխանցման բարբառային երևույթ պետք է համարել տեսնաս (ՆՀԲ, էջ 37), չի մտնալ (ԱԱԱԱ, էջ 426) ձևերը, որոնք ներկայիս արևմտահայ բարբառներում և գրականում կենսունակ ձևեր են:

Մեր լեզվի այս շրջանում ի խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերը անորոշ դերբայում ունեն -իլ վերջավորություն, մինչդեռ մեր լեզվի նախորդ շրջանում (XII—XIV դդ.) ի խոնարհման բայերն ունեն և՛ ել, և՛ -իլ վերջավորություններ:

Ստորև բերում ենք այս շրջանի (XV—XVII դդ.) հեղինակներից վերցրած օրինակներ՝ բացառաբար անորոշ դերբայի կիրառությամբ. նստիլ (ԱԱԱԱ, էջ 216), բորբոսիլ, հոտիլ, փտիլ (անդ, էջ 355), ծիծաղիլ (ՆՀԲ, էջ 131), հայիլ

(անդ, էջ 29), բնակիլ (ՄՂ, էջ 131), տխրիլ (ՆՀԲ, էջ 175), հագնիլ (ԱԱԱԱ, էջ 67), մեռանիլ (ՄՂ, էջ 149, ՆՀԲ, էջ 112), բուսնիլ (ԱԱԱԱ, էջ 247, 311), մեռնիլ (ՀԹՏ, էջ 137) ևլն:

Գրաբարում անցյալի հիմքում ի թույլ բաղադրիչով արտահայտվող ի խոնարհման բայերը նույնպես անորոշ դերբայում ունեն -իլ վերջավորութուն, ինչպես՝ թռչիլ (ԱԱԱԱ, էջ 5), փախչիլ (ՆՀԲ, էջ 92) ևլն:

Ինչքան որ ուշադիր ենք եղել, -իլ վերջավորությամբ ի խոնարհման բայերի հետևյալ եզակի օրինակներն հնք արձանագրել՝ 1) մեռանել՝

«Պատրաստ եմ մեռանել վասն անուան նորին,  
Այնմ, որ եբարձ ըզփուշ մեր պատուհանին» (ԳԱ, էջ 125).

2) լինել՝ «Եւ ճանաչել ըզշարն ու զբարի.  
Նրման լինել ձեր աստ ա՜յողի» (անդ, էջ 144).

3) ապրել՝ «Համբարձմանն շեն մրափել,  
Գնան սարն ծաղիկ քաղել:  
Կասեն. «Սև մազն է սպիտակել,  
Թախին մենք շատ պիտենք ապրել» (ՆՀԲ, էջ 102):

Վերևի երկու օրինակներում մեռանել, լինել ձևերը հանդես են գալիս զուտ գրաբար գրված ստեղծագործություններում (որի համար և խոսքը ամբողջությամբ ենք մեջ բերել), ուստի նրանք գրաբար ձևեր են և գրաբարի համար ճիշտ: Երրորդ օրինակում ապրել զուտ խոսքային հանգամանքի բերումով՝ հանգավորելու համար է արված: Վերջապես ունենք տանելն խաբուսիկ ձևը Զաբարիա Ազուլեցու «Օրագրության» մեջ (Երևան, 1938 թ.)՝ «Սորայ շատ կենալն, շատ փող տանելն պատճառն՝ ել աքուլեցի Մուսաբէկի տղերքն կլաւ» (էջ 111), որը, կարծում ենք, տանելոյն>տանելուն ապառնու հնչյունափոխված ձևն է, գոնե նախադասության շարահյուսական ըմբռնումն այդ է թելադրում: Ե խոնարհման պատկանող ներգործական սեռի բայերը կրավորական դառնալիս անորոշ դերբայում բացառապես -իլ վերջավորութուն ունեն, այսպես, օրինակ՝ այրիլ «այրվել» (ԱԱԱԱ, էջ 46, 159, ՆՔԳ, էջ 104), շարժիլ «շարժվել» (անդ, էջ 89), յաւերիլ «ավերվել», վարիլ «գերեվարվել» («Յաւերիլ քաղաքին ի սպառակործան, վարիլն ի գերութիւն ազգիս խղճական»—ՄՂ, էջ 145), փրկիլ «փրկվել» (ՄՆ, էջ 132), ազատիլ «ազատվել» (ԶԱՕ, էջ 163) ևլն:

Նորաստեղծ կրավորակերպ շեղոք, կրավորական և շեղոք սեռի բայերը նույնպես, առանց բացառության, անորոշում -իլ վերջավորութուն են ունենում, ինչպես՝ նղփտիլ «ճեղքճեղքվել» (ԱԱԱԱ, էջ 588), վատուծիլ «սկարանալ, թուլանալ» (անդ, էջ 21, 23), խառնիլ «խառնել (սրտի)» («զսրտին խառնիլն այլ կտրէ»—անդ, էջ 112, «զսրտին խառնիլն տանի»—անդ, էջ 271), զարժիլ «շարժվել» («զակուային զշարժիլն ամրացնէ»—անդ, էջ 334):

Հասկանալի է, որ կրավորականի նորակազմ -ու ածանցով բայերն անորոշ դերբայում բացառապես -ուիլ վերջավորութուն ունեն, ինչպես՝ ուտուիլ (ԱԱԱԱ, էջ 74), քաշուիլ (անդ, էջ 88), խառնուիլ (անդ, էջ 123), բռնուիլ (անդ, էջ 194, 614), ֆերուիլ (անդ, էջ 150) ևլն:

Անորոշ դերբայի հարադրությամբ կազմվող ժխտական ձևերում ի խոնարհման բայերը մնում են անփոփոխ՝ միշտ ունեն -իլ վերջավորութուն, ինչպես՝ չողորմիլ (ԱԱԱԱ, էջ 231), չի դատիլ (ՆՀԲ, էջ 86), չեն բանիլ (անդ, էջ 103), չի բուսնիլ (ԱԱԱԱ, էջ 372), չի անցանիլ (ոմկ. անդ, էջ 23), չի գտնուիլ «չի գտնվում» (անդ, էջ 10) ևլն:

Ի // ա բայափոխանցման օրինակ ունենք անկանոն լինիմ—լինալ (ԱԱԱԱ, էջ 45) բայի մեջ: Իսկ Նաղաշ Հովնաթանի մոտ հանդիպող կու տանեն (էջ 12), կու նստեն (էջ 13), ինչպես նաև Մկրտիչ Նաղաշի՝ նայես (Բանաստեղծք., էջ 110) բայաձևերը, ինչպես ձեռագրերի համեմատությունից պարզվում է, գուտ գրչագրական սխալներ են:

Այսպիսով, մեր լեզվի այս շրջանում Ի խոնարհման բայերի անորոշի ձևը վերջնականապես կայունանում է: Միջին հայերենն իր այս առանձնահատկությունը ժառանգեց արևմտահայ գրական լեզվին ու մի շարք բարբառների: Ա խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերն անորոշ դերբայում ունեն -ալ վերջավորություն: նկատելի է, որ ածանցավոր ձևերում ձգտում կա -ան ածանցի ա հնչյունը սղելու, օրինակ՝ մթնալ (ԱԱԱԱ, էջ 35, 118), բոցնալ (անդ, էջ 71), չի հովնալ (ՆՀԲ, էջ 46):

Անորոշով ժխտական կազմելու դեպքում ևս ա խոնարհման բայերը մնում են անփոփոխ, ինչպես՝ շես տալ (ՆՀԲ, էջ 37), շես իմանալ, շես բանալ, չի հովնալ (անդ, էջ 46) ևլն:

Ա // ու բայափոխանցման եղակի օրինակը գտնում ենք ժողովրդական կենալ // կենուլ ձևի մեջ.

«Երբ կին տեսնում, ցանկանամ դժոխոց դուռն մօտենամ....

Երթամ յանապատ կենում, ո՛չ տեսնում, ո՛չ ցանկանամ» (ՆՔԴ, էջ 97):

Մեր լեզվի այս շրջանում ևս օգտագործվում են ու խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայեր, որոնք ինչպես հաստատական, այնպես էլ անորոշ դերբայից կազմվող ժխտական ձևերում ունեն -ուլ վերջավորություն, ինչպես՝ քֆնուլ (ԱԱԱԱ, էջ 60, 78, 110), առնուլ (անդ, էջ 249), շես թուլուլ (ՆՀԲ, էջ 8), չի մտնուլ (ԱԱԱԱ, էջ 524):

Պատճառական բայերում հաղթել է ժողովրդական ձևը. Ի տարբերություն նախորդ շրջանում հանդիպող տկարացուցանել, սատակեցուցանել ձևերի, այստեղ գտնում ենք պակսեցնել (ԱԱԱԱ, 46), քանծուցնել (անդ, էջ 17), եոցնեն (անդ, էջ 28), թմրեցնել (անդ, էջ 18), հովցնել (անդ, էջ 4) ձևերը, որոնց մեջ անցյալի հիմքի ց վերջավորությունը միաժամանակ կատարում է -ոյց > -ուց պատճառական ածանցի պարտականությունը, իսկ պատճառական բայերի -անել վերջավորությունը հնչյունափոխվում է ե և Ի խոնարհումների ածանցավոր բայերի մասին ասվածին համապատասխան:

Ժխտական կազմության դեպքում պատճառական բայերը մնում են անփոփոխ, ինչպես՝ չի հասցնել «չի հասցնում» (ԱԱԱԱ, էջ 381), չի ուտեցնել «չի կերցնում» (անդ, էջ 200), չի բշտեցնել (անդ, էջ 429), չի երևցնել (անդ, էջ 481), չի ծարեցնել (անդ, էջ 538) ևլն:

Այս շրջանի հեղինակների լեզվական առանձնահատկություններից մեկն էլ թուրքերեն և պարսկերեն լեզուների, լեզվական արտահայտությունների առատ կիրառումն է. հաճախ պատահում է, որ հեղինակը ստեղծագործության մեջ գունավորում տալու նպատակով, ըստ նախասիրության, դիմում է թուրքերենին կամ պարսկերենին, այսպես՝ ՆՀԲ, էջ 142, 176, 247, ՄՂ, էջ 140, ՆՔԴ, էջ 109 ամբողջական տողեր, հոտվածներ ունեն թուրքերեն լեզվով, իսկ Գրիգորիս Աղթամարցի 195—199 էջերում առատորեն օգտագործում է պարսկերենը:

Այս շրջանում լայն կիրառություն ունեն թուրքերեն-արաբերեն բառերով և հայերենի առնել, տալ, լինիլ, մնալ և այլ օժանդակ բայերի հարադրությամբ

կազմվող բայաձևերը, ինչպես՝ բաթմիշ արեց (ՆՀԲ, էջ 25), շարթ արիւր (անդ, էջ 112), թալիւմ շեն առեալ (անդ, էջ 83), հօքմ առաւ (ԶԱՕ, էջ 71), մահրում մընամ (ՆՔԳ, էջ 70), հայրան մնացի (անդ, էջ 102), բարկն տւէք (ՆՀԲ, էջ 120), զարար տվեց (ԶԱՕ, էջ 144): Կան նաև հայացած ձևեր՝ չի թամամեն (ՆՀԲ, էջ 120), փոշիմանիլ (անդ, էջ 175):

Այս շրջանի մեր հեղինակները անհարկիորեն են օգտագործում թուրքերենն ու պարսկերենը՝ վերացնելով գրական-գրավոր լեզվի և խոսակցականի միջև եղած տարբերությունը: Այս լեզվական «ազատամտութունը» հետագայում աղտոտեց մեր լեզուն թյուրք-թաթարական ուժեղ նստվածքով, որի դեմ անհրաժեշտ եղավ տասնչակ տարիներ պայքարել՝ մեծ հայագետ Ա. Այտընյանի պատկերավոր արտահայտութամբ՝ «անշափության հասած չափի» փոխառյալ բառերը դուրս վտարելով մեր լեզվից և նրանց փոխարեն օգտագործելով մոռացության տրված հայերեն բառեր ու արտահայտութուններ:

### ԱՆԿԱՏԱՐ ԳԵՐՔԱՅ

Միջին հայերենի նախորդ շրջանում (XII—XIV դդ.) դերբայների կիրառության իրողությունները քննելիս ասել էինք, որ -ում վերջավորութամբ անկատար դերբայի գրսեղորման միայն մեկ կասկածելի օրինակ կա. և դա հասկանալի է, քանի որ XII—XIV դդ. միջին հայերենը առավելապես կիլիկյան գրական հայերենով է ներկայացված: Սակայն նույնը չի կարելի ասել XV—XVII դդ. միջին հայերենի մասին, քանի որ XVII դ. կեսերից սկսած իրար ժամանակակից և միևնույն բարբառի ներկայացուցիչ երկու հեղինակներ իրենց լեզվի մեջ լայնորեն օգտագործում են -ում՝ և -իս վերջավորութամբ անկատար դերբայի, ներգոյական հոլովի բազմաթիվ ձևեր: Այդ հեղինակներն են՝ XVII դ. վերջի բանաստեղծ և նկարիչ Նաղաշ Հովնաթանը (1661—1722)<sup>2</sup> և Զարբրիա Ազուլեցին (1630—1691): Այս վերապահությունից երևում է, որ մյուս հեղինակների մոտ -ում և -իս դերբայական վերջավորությունների չենք հանդիպում, քանի որ նրանք բոլորն էլ կիլիկյան բարբառի ներկայացուցիչ են և ապրել ու ստեղծագործել են այդ բարբառի ազդեցության սահմաններից ներս: Մինչդեռ Նաղաշ Հովնաթանը Ում ճյուղի բարբառի ներկայացուցիչ է և ապրել ու ստեղծագործել է Ում ճյուղի բարբառներով խոսող միջավայրում (Շոտթ, Ազուլիս, Թիֆլիս, Երևան, էջմիածին):

Մենք նպատակ չունենք այստեղ մանրամասնորեն -ում մասնիկի պատմական քննություն կատարելու, քանի որ դա հայագիտության ամենածեծված հարցերից մեկն է, այլ ավելի շուտ՝ արձանագրելու կիրառության դեպքերը: Ապացուցված իրողություն է<sup>3</sup>, որ -ում վերջավորութամբ անկատար դերբայը

<sup>1</sup> Այս հեղինակների մոտ դերբայի ամ, ան հնչյունափոխված ձևեր չեն հանդիպում:

<sup>2</sup> Նաղաշ Հովնաթանը ծնվել է Շոտթ գյուղաքաղաքում, Ազուլիսի մոտ, իր կրթություն ստացել է Ազուլիսում, ուր և ձեռագիր է ընդօրինակել:

<sup>3</sup> Ա. Մարգարյանն իր «Հայերենի հարադիր բայերը» աշխատության մեջ, մանրամասնորեն քննելով -ում մասնիկի ծագումը, գտնում է, որ «-ում-ով անկատար և նրանից կազմված ներկա ու անցյալի անկատար ժամանակները ծագումնաբանորեն կարող են կապվել աևոռոշի միայն մի հույովաձևի հետ, որ է հենց նախդրով աևոռոշը կամ աևերևույթ ներգոյակաւը» (էջ 482) և կամ՝ «-ում-ով անկատարը ծագումնաբանական ոչ մի կապ չունի -ում-ով ներգոյականի հետ և սերում է բացառապես աներևույթ ներգոյականից» (էջ 493): Իսկ ի՛նչ ճանապարհով. ահա անցման ճանապարհը՝ ի հասնուլ եմ > հասնուլ եմ, հասնում եմ, ի զնալ եմ > զնալ եմ > զնում եմ (էջ 485): Այնուհետև հեղինակը գրում է. «Անորոշի վերջնահնչյունը եթե ժողովրդա-խոսակցական

նույնական է ներգոյականի –ում վերջավորության հետ: Եվ իրոք, –ում վերջավորությամբ կամ նրա փոփոխությամբ կամ նրա հնչյունափոխված ձևերով անկատար ունեցող բարբառներում գտնում ենք նաև –ում վերջավորությամբ ներգոյական հոլովի կազմություն: Նաղաշ Հովնաթանը նման շատ ձևեր է օգտագործել՝ «Մոցումդ կայ ոսկոյ մաղան, ապրանք ու մալ այ» (Բանաստեղծք. էջ 247): «Նուիրիմ կեանք, արև՝ ի մէջ երկրումս,

Շատ կարօտ թողիր իմ տարթիլի սրտումս» (անդ, էջ 239):

«Դատումն ասողով իրար ծակեն» (անդ, էջ 119): Այսպես նաև՝ մատնումդ (էջ 7), սրտումս (էջ 22, 97), փուշումն (էջ 107), մէջլիսումն (էջ 162)՝ Բերում ենք և Զ. Ագուլեցու «Օրագրությունից» (Երևան, 1938 թ.): Օրինակներ. «Այս երկրումս լաւ բրինձ կնի» (էջ 24), «Թվին ողէումն ոչ թէ մին օրի էր կոհվն, այլ մինչի ի օր աղմուկ կէր քաղաքումն» (անդ, էջ 32), «Աղամիրի ք տղէն՝ որ մնաց, մեծն Շմաւոն է, որ այս դավտարումս անունն գրած շատ տէղ կայ» (անդ, էջ 92) ևլն: Դեռևս Ա. Այտընյանն իր «Քննական քերականության» մեջ շատ ճիշտ կերպով բացատրել է, որ հայերենի բարբառների –ում վերջավորությամբ ներգոյականը գրաբարում տրական հոլովում –ում վերջավորություն ունեցող բառերի (առավելապես թվականներ, դերանուններ և որոշ ածականներ)՝ ի նախդիրով ներգոյականի գաղափարի կազմության ձևերի անմիջական շարունակությունն է: Տարակույս չկա, որ XVII դ. վերջում գրական արտահայտություն գտած այս իրողությունը շատ հին երևույթ է: Լեզվական երևույթները մեկ-երկու տարում չեն առաջանում: Եթե մեր մատենագիրները գրաբար լեզվի մաքրության հարցում նախանձախնդիր պահպանողականներ չլինեին, –ում մասնիկի հնագույն արտահայտությունների բազմաթիվ փաստեր կունենայինք մեր ձեռքի տակ, որովհետև անհնար էր, որ մատենագիրը ուսած լեզվով գրելիս իր խոսած մայրենի բարբառի իրողությունները այս կամ այն չափով շարտահայտեր իր աշխատասիրության մեջ: Եւ իսկապես, մեր պատմահայր Մ. Խորենացու (V դ.) «Հայոց պատմություն» աշխատության մեջ՝ «Եւ յաջմէ ջուրց հոսանաց ի բարձրաւնդակում կուռ կայով ի տեղուց ի վեր զերեսս ամբարձեալ՝ երեւցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ» (Խոր. I, ԺԱ) նախադասության մեջ բարձրաւնդակում բառի –ում վերջավորությունը այլ կերպ անհասկանալի կմնար, քանի որ բարձրավանդակ բառը, ինչպես և –ակ վերջավորությամբ բոլոր բառերը, գրաբարում ենթարկվում են ի–ա խառն հոլովման:

Վերևում ասացինք, որ ում ձևույթով ներգոյական ունեցող բարբառներն ունեն նաև –ում վերջավորությամբ անկատար դերբայ: Արդ, ի՛նչ կապ կա այս երկուսի միջև: Այսօր հայագիտության մեջ ընդունված տեսակետ կա, որ ում ձևույթը նախապես ավելացել է անորոշ դերբայաձևի վրա. դրա լավագույն ապացույցը Հավարիկի բարբառի ընձեռած փաստերն են, որտեղ ում ձևույթն ուղղակի ավելանում է անորոշ դերբայաձևի վրա, այսինքն՝ ասենք, արդի գրական հայերենի խաղում, գրում, կարդում՝ անկատար դերբայաձևերը Հավարի-

---

լեզվի մի մասում փոխարինվում է ր–ով, ապա մի այլ մասում այն փոխարինվում է մ–ով... եմ շփանդակ բայի ազդեցությամբ... սկիզբ է առել որոշ, այն է՝ –նուլ վերջավորվող, ինչպես՝ ելնուլ, տննուլ, գտնուլ, հեծնուլ, տեսնուլ, թողուլ // թողնուլ, զարթնուլ բայաձևերից» (էջ 486):

<sup>4</sup> Հետաքրքրություն է ներկայացնում և պրոֆ. Գ. Զախովյանի արտահայտած հետևյալ տեսակետը. «Անկատարի ում վերջավորությունը կապվում է ներգոյականի ում վերջավորության հետ: Սակայն դժվար է համաձայնվել այն կարծիքի հետ, թե անկատարը անորոշի ներգոյականն է... Մեզ ավելի հավանական է թվում հետևյալ ենթադրությունը. ում–ը դրվել է սկզբնապես այն–

կում կարտահայտվեն խաղալում, գրելում, կարդալում ձևերով: Հասկանալի է, որ գոյականների ներգոյականը նախորդում է բայերի ներգոյականի վերոհիշյալ ձևերին. գործողության և եղելության ընթացքի մեջ գտնվելու զաղափարն արտահայտելու անհրաժեշտությունը ստեղծել է իր լեզվական արտահայտությունը: Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ -ում վերջավորությամբ անկատար դերբայից միայն սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակներ են կազմվում, քանի որ հայ լեզվամտածողությամբ այս ժամանակները գործողության կամ եղելության մեջ լինելու զաղափար են արտահայտում:

Նաղաշ Հովնաթանի՝ և իր հետևորդների՝ Նաղաշ Հակոբի, Ստեփանոս Շոռոթեցու ստեղծագործություններում -ում վերջավորությամբ անկատար դերբայով կազմված ներկա և անկատար ժամանակների օգտագործման բազմաթիվ ձևեր կան. հաճախ այն տպավորությունն էս ստանում, որ, կարծես, արեւելահայ գրականով այսօր գրված բանաստեղծությունն էս կարդում.

«է՞ր էս կարմիր երեսդ ծածկում,  
Չարսաւդ վերադ հաւաքում,  
Նաղաշին սիրտն էս տապակում» (ՆՀԲ, էջ 48):

«Շատ վախտ է, որ շես երևում,  
Սէկ խապար ու գիր շես բերում,  
Վառ կրակով սիրտս էս երում,

Չեմ համբերում» (անդ, էջ 72):

«է՞ր շես կտում, է՞ր էս դորում,  
Ով լսում է՝ թքում, մրում.  
է՞ր շես վանքին այգին բրում,  
Խոտն քաղում, մատն ջրում» (անդ, էջ 148):

«Սաստիկ սիրուտ հիւանդացայ, էս շեմ հանփեում,  
Ձեր դողն անց կու կենամ, էր շես երևում.  
Քոյ բերանէն ինձ մէկ ուրախ խաբար շես բերում,  
Վառ կրակով դու իմ սրտիս մէջն էս երում» (անդ, էջ 247):

Օրինակները համատարած են Չ. Ազուլեցու մոտ, ինչպես՝ «Ռարցեալ, էս յետ մինն գալիս այ, Ի թուման ուզում, մինն զառավխանի դավի այ անում, մինն՝ գեղի, այս ամէնն սուտ դավի են անում» (Օրագր. էջ 102): «Յունիս բումն Ջուզու անապատն շինում էին» (անդ, էջ 47), «Երևանայ Սէֆիդուլի խանն թողնում շէր, թէ՛ Աբասղուլի խանի վարիսներն գայ, փողն տանի» (անդ, էջ 87) ևլն: Ինչպես բերված օրինակներից երևում է, ում ձևույթը բոլոր դեպքերում ավելանում է ոչ թե անորոշ դերբայի վրա, այլ բայահիմքի վրա՝ երև+ում, բեր+ում, համբեր+ում, քաղ+ում, թողն+ում ևլն: Միալ կլինե՞ր կարծել, թե վերոհիշյալ հեղինակները և ընդհանրապես Ազուլիսի բարբառը բայահիմքն են հորովում, իրականում այստեղ մի սովորական հնչյունափոխություն է կատարվել, որ լեզվաբանության մեջ անվանում է մաշվածություն: Երկար ժամանակ կիրառելով՝ անորոշ դերբայի վերջավորություններն ընկել են: Այս

պիսի անունների վրա, որոնք միաժամանակ և բայահիմքեր էին (հմտ. գործում եմ «1. գործի մէջ եմ և 2. գործ եմ անում») ապա անալոգիայով տարածվել այլ ձևերի վրա» (տես Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 46):

հնչյունափոխությունն իր զուգահեռներն ունի մեր լեզվի մեջ, վերցնենք թեկուզ Մեղրու բարբառի օրինակը, որտեղ հարանման հնչյունափոխություն գտնում ենք բոլոր 4 խոնարհումներում, ինչպես՝ մրնալ, ի՛րվա՛լ—մրնաս, ի՛րվա՛ս, սրբէլ—սրբէս ա՛ղիլ «ազալ», սէ՛րիլ «սիրել», քի՛րիլ «քերել»—լղէ՛ս, աի՛րի՛ս, ֆի՛րի՛ս, մրոանիլ «մոռանալ» լի՛վանիլ լվանալ»—մրորնէս, լի՛վի՛նիս<sup>5</sup>:

Բայց այս հնչյունափոխությունը ինչ-որ բանի մասին մտածել տալիս է. մտովի կարելի է պատկերացնել, թե ինչքան երկարատև ժամանակ պետք է ընկած լինի ուզել-ուզելում-ուզում, բերել-բերելում-բերում ձևերի հնչյունափոխության միջև:

Գիտությունը հայտնի է, որ Զուղայի բարբառը —ում դերբայական մասնիկից բացի, անկատար դերբայը ձևավորում է —ման ձևությամբ<sup>6</sup>, և իսկպես, նաղաշ Հովնաթանի մի բանաստեղծության մեջ, որի վերնագիրն է «Զուղայեցոց հայրենի պարզ լեզուն այ, զոր կու պարծենան» (վերնագիրը ցույց է տալիս, որ ն. Հովնաթանը Զուղայի բարբառի հավակնոտ ներկայացուցիչներին է ծաղրում), հեղինակը —ման վերջավորությամբ անկատար դերբայը ջուղայեցու ուղղակի խոսքի մեջ երկու անգամ օգտագործել է.

«Զուղայեցիք անք, կու պարծենք,  
Մեք մեր լեզուն գրոց կարծենք.  
....Դաշտըցիք զատ նանաշման շեն,  
Խոր անումըն՝ հայր կու կանչեն.  
Այծ ան ասում, խաշվի թա էծ.  
Գրոց լեզուն յիմաման շեն» (նՁԲ, էջ 197):

Այս օրինակները լույս են սփռում և մի ուրիշ հարցի վրա. պրոֆ. Աճառյանն իր «Քննություն նոր-Զուղայի բարբառի» (Երևան, 1940 թ.) աշխատության մեջ գտնում է, թե —ման վերջավորությամբ ներգործական սեռի բայերից անկատար դերբայ կազմվելու դեպքում դերբայաձևը անպայման միայն կրավորական սեռի իմաստ կարող է արտահայտել (անդ, էջ 251), մինչդեռ մեր վերևի բայերը հենց ներգործական սեռով են հանդես եկել և ունեն ուղիղ խընդիր (զատ ճանաշման շեն, լեզուն յիմաման շեն): Մենք չենք ուզում պնդել, որ նոր-Զուղայի բարբառն այսօր այս երևույթը պետք է պահած լինի, այլ պարզապես այն, որ գոնե մեկուկիս դար առաջ —ման մասնիկով ներգործական սեռի բայերից նոր-Զուղայի բարբառը ներգործական սեռի իմաստով անկատար դերբայ կազմում և օգտագործում էր:

Նաղաշ Հովնաթանի մոտ հանդիպում ենք նաև —իս<sup>7</sup> մասնիկով անկատար դերբայաձևին: Սա, անշուշտ, Ս ճյուղի բարբառների ազդեցության հետևանք է, քանի որ, ինչպես վերևում տեսանք, Ազուլիսը Ում ճյուղի բարբառ է. Հե-

<sup>5</sup> Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 201—215:

<sup>6</sup> —ման վերջավորությունը, ըստ երևույթին, ոչ թե փոխառյալ է պարսկերենից, այլ իր հերթին ումն վերջածանցի ներգոյական հոլովը՝ գործողության մեջ լինելու գաղափարն արտահայտել կարողանալու միտումով արված: Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 99—103:

<sup>7</sup> —իս մասնիկով անկատար դերբայաձևը նույնպես ներգոյականի գաղափար է արտահայտում: Պետք է որ կազմված լինի —ի մասնիկ ունեցող դերբայաձևի գրաբարյան հոգնակի հայցական ձևից՝ ներգոյականի գաղափար արտահայտելու համար, ինչպես ունենք Փ. Բուզանդի մոտ՝ ի լալիսն (լացողների մեջ):

տաքրքրական է նշել, որ Զաքարիա Ազուլեցու «Օրագրութեան» մեջ, բացի միավանկ բայերի տալիս, գալիս (լալիս ձևը չի հանդիպել) ձևերից՝ իս վերջավորութեամբ անկատար դերբայ չունենք: Նաղաշ Հովնաթանի մոտ իս մասնիկով անկատար դերբայն օգտագործվում է՝

ա) Հիմնական գործողութեան հետ զուգահեռ կատարվող գործողությունն արտահայտելու իմաստով՝ պարագայական կիրառութեամբ, ինչպես՝

«Մէնակ ու ծածուկ մնալիս՝

Սիրու սէրդ մոռանալիս

Դարդերս է՞ր շես իմանալիս՝

Գեղեցիկ երեսդ բանալիս» (ՄՆԲ, էջ 15):

«Լուր, է՞ր շես այգումն բանում

Ճախն կտրում, փային տանում

Զեր տնտեսանն բուրդ մանում,

Աման լանալիս քու հանում» (անդ, էջ 149):

«Նորահաս մանկունքն գինույ թաս տալիս,

Կարմիր գինի, արծաթէ թաս շողշողալիս,

Մէկն խաղ էր կանչում, մէկն՝ պար գալիս» (անդ, էջ 168):

Իս վերջավորութեամբ անկատար դերբայի այս կիրառությունը հատուկ է Ում Ճյուղի բարբառներին, որտեղից և, անտարակույս, անցել է արևելահայ դրական լեզվին:

բ) Առավել հետաքրքրական են նույն հեղինակի մոտ հանդիպող այն ձևավորը, երբ իս վերջավորութեամբ անկատար դերբայը օժանդակ բայի հետ կազմում է ներկա ժամանակ (ոչ երկրորդական, այլ գլխավոր բաղադրյալ): Ահա այդ օրինակները.

«Նոր ծաղկեցաւ ծառն, գարունն էհաս, է՞ր ես ինձնէ հեռանալիս,

Նազանի քաղցրիկ եար, բարով դո՛ւ էլ գաս է՞ր ես ինձնէ հեռանալիս»

(անդ, էջ 15):

«Զայնն կտրած, բռնած գուն,

Եղով սանդրում է քաբուն,

Կարդալիս են շարան-փարան» (անդ, էջ 119):

«Երբ որ տեսնում եմ՝ սիրտ[ս] է դողալիս,

Ոչ ինձ հետ խօսում ես, ոչ մէկ վարթ տալիս,

Մնացել եմ տխուր, լալով շուռ գալիս» (անդ, էջ 246):

Նման կազմությունները Ս Ճյուղի բարբառներին են առանձնահատուկ, այդտեղ նույն դերն ու նշանակությունն ունեն, ինչ որ Ում Ճյուղի բարբառներում ում ձևով ձևով կազմված անկատար դերբայաձևերը:

Ս. Մարգարյանցը ևս, որ ուսումնասիրել է Ազուլիսի բարբառը, իր աշխատության մեջ (Ազուլեցոյ բարբառը, Մոսկվա, 1883 թ.) դնում է իս վերջավորութեամբ դերբայով կազմվող ներկա ժամանակի մի շարք ձևեր (չի նրնչէլիս, մընալիս րն ևլն): Այս դերբայով գրական հայերենում կազմվում են երկրորդական բաղադրյալ ժամանակներ (գրելիս եմ լինում, գրելիս եղա ևլն), մինչդեռ ո՛չ Նաղաշ Հովնաթանի և ո՛չ էլ Զաքարիա Ազուլեցու մոտ նման կիրառությունների չենք հանդիպում:



Միջին հայերենի այս շրջանում ապառնի դերբայը ևս հարուստ դրսևորումներ ունի: Ապառնի դերբայը հանդես է գալիս ինչպես անորոշ դերբայի ածանցմամբ՝ *–ոց մասնիկով*, այնպես էլ անորոշ դերբայի սեռականի ի, ո(յ) > ու վերջավորություններով<sup>8</sup>:

Ապառնի դերբայի *–ի վերջավորությամբ* ձևը սակաւ կիրառություն ունի. եղած օրինակներն են.

«Մարդն որ շատ անդէճ լինի, յաշխարհիս հոգարն կու մաշի.

Հով ջուրն իր կրակ թվի, ի յահէն քանց մոմ կու հալի.

...Շաքարն իր լեղի թվի և լեղին իւրան խմելի» (ՆՔԳ, էջ 90).

«Այս աստնվորիս վրայ երկու բան ողորմ ու լալի.

Մէկ որ սիրոյ տէր լինի, մէկ որ գայ գրողն ու տանի» (անդ, էջ 97):

Զարմանալի և ընդունելի բառերը մի քանի անգամ օգտագործում է Ամիր-դովլաթ Ամասիացին, սակայն Առձեռն բառարանը այս բառերը որպես ածական է դնում:

Առավել հետաքրքրական է Զաքարիա Ազուլեցու օգտագործած տեսնուլի ապառնի դերբայաձևը. «Այս Շմաւոնս գնաց Շամախի՝ Նաջաֆղուլի խանին յետ հսար տէսնուլի» (ԶԱՕ, էջ 123):

Ու խոնարհման ապառնի դերբայի եզակի օրինակն է սա թե՛ հեղինակի և թե՛ ընդհանրապես այս շրջանի գրականության մեջ: Հայտնի է, որ գրաբարում ու խոնարհման բայերն ապառնի դերբայում որպես կանոն ու հնչյունը սղում են (թողուլ—թողուց, թողլի. արգելուլ—արգելուց, արգելլի), իսկ միջին հայերենում, ինչպես ստորև կտեսնենք, ու խոնարհման բայերը ապառնի դառնալիս ու խոնարհիչը փոխում են ե-ով, ինչպես՝ թքնուլ—թքնելուն (ԱԱԱԱ, էջ 28, 46, 81), առնուլ—առնելուն (անդ, էջ 133, 195, 366) ևլն: Եթե մեր լեզվի այս շրջանում *–ոց* և *–ի վերջավորությամբ* ապառնի դերբայների օգտագործումը հազվագյուտ երևույթ է, գրաբարաբանություն, ապա *–ոյ* և *–ու վերջավորությամբ* ապառնի դերբայի օգտագործումը համատարած երևույթ է:

*–ոյ* > ու վերջավորությամբ ապառնի դերբայը ունի մի քանի տարբերակված կիրառություններ.

ա) Գոյականների հետ (որոշչի պաշտոնով). ինչպես՝

«Մի՞թէ մեռանելոյ օրս մոտեցաւ,

Եւ հոգիս ի մարմնոյս բաժնիլ կամեցաւ» (ՄՆ, էջ 161):

«Յորժամ ես ի միտ ածեմ զիմ եղբարքն ու զիմ սիրելիքն,

Հոգիս բերանիս կառնու, քակտելոյ ճարակ մի չունի» (անդ, էջ 166):

<sup>8</sup> Հայտնի է, որ գրաբարում ապառնի դերբայը երկու կերպ է դրսևորվում՝ անորոշ դերբայի վրա *–ոց մասնիկի ավելացումով* և անորոշ դերբայի սեռականի ի վերջավորությամբ: Թեև գրաբարում անորոշ դերբայը ենթարկվում է ո հոլովման (հոլովվում է միայն եզակի), սակայն գրաբար մատենագրության մեջ մի շարք բայեր, ինչպես նաև հայերենի մի շարք բարբառներում, անորոշ դերբայը ենթարկում են ի հոլովման: Գոյականի սեռական հոլովի և անորոշ դերբայի սեռական հոլովի (ապառնի դերբայ) նույնական դրսևորման հիմքը պատկանելության արտահայտումն է. մինչդեռ գոյականի սեռական հոլովը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերում (Հայաստանի տուֆը, երեսայի գիրքը), անորոշ դերբայի սեռական հոլովն արտահայտում է ապագայում կատարվելիք գործողությանը պատկանող առարկան՝ քանդելու տուն (այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 154—156):

Նման կիրառութեամբ — ու վերջավորութեամբ ապառնին ավելի հաճախ է հանդես գալիս, ինչպես՝ լուսնալուս կերպն (ԱԱԱԱ, էջ 202), ողջանալու նշան (անդ, էջ 557), պատմելուն պատճառն (անդ, էջ 123), պագնելու տեղ («Երեսդ է կարմիր գէտ վարդ, պոռնկներդ է պագնելու տեղ» — ՆՔԳ, էջ 52) ևլն:

բ) Անկախ կիրառութեամբ (պարագայական պաշտոնով), ինչպես՝

«Ո՛վ ողորմելի խէղճ կանանիք,  
Մեծ պասն կուգայ, ի՞նչ կանիք  
....Նրկուշարթի՛ լուացք անելու,  
Աման-լուայ, ղբուլ հանելու,  
Սրբանքն ամէն դուրս տանելու» (ՆՀԲ, էջ 106):

«Ճար մի տեսէք մեզ ելնալու.  
Գնանք թ՛ուր ենք մեք գնալու.  
Այլ ճար շունիք աստ կենալու.  
Փող չի մնաց հացի տալու» (ՄՂ, էջ 144):

«Գիշերս ես ի դուրս ելայ թէ եար մի գտնեմ սիրելու.  
Գրողն ալ ի դէմս ելաւ, լուկ նազար արաւ տանելու.  
Նկո՛ւ՛ տանելուն ցուցնեմ, տանելու դշիւն զարնելու.  
Զարախն ալ ափին ունի, ո՛չ խմէ ո՛չ տայ խմելու» (ՆՔԳ, էջ 77):

Այս շրջանում, առաջին անգամը լինելով մեր մատենագրութեան մեջ, հանդիպում ենք ու կրավորական մասնիկով ապառնի դերբայների: Ամիրդովլաթի մոտ ունենք հետևյալ շորս օրինակները. «Եւ թէ ըոֆաւտան հաւկթով ի գործ արկանեն՝ աւգտէ հագին և գողին բռնուելուն» (Անգիտաց անպէտ, էջ 131). «Աւգտէ զանկիկին կախուելուն» (անդ, էջ 265). «Եւ իր հունտն աւգտէ ջղերուն յիրար քաշուելուն» (անդ, էջ 445). «Զկինն կու պատեղորեցնէ, յորժամ կինն լուացուելուն ետև՝ մէկ մըն այլ անով լուանայ» (անդ, էջ 597):

Արդեն ասել ենք, որ անորոշ դերբայում կրավորականի նման կազմութիւնները — ուիլ (-վիլ) վերջավորութիւնն ունեն, իսկ սեռական ձևերում գտնում ենք ի>ե հնչյունափոխութիւն:

գ) Ստորոգելիական վերադրի կիրառութեամբ. ինչպես՝ «Գրող, անհաւատ Գրող, դեռ մանուկ եմ, շեմ տանելու» (ՆՔԳ, էջ 77). «Ով որ սիրոյ տէր մարդոյն մեղադրէ, ինքն է առելու(ն)» (անդ, էջ 94):

«Այն որ չորացնելու է, չորացնեն. և այն որ այրելու է, այրեն»

(ԱԱԱԱ, էջ 24):

Մեր լեզվի այս շրջանում առավել շատ են ու վերջավորութեամբ ապառնի դերբայով սահմանական բաղադրյալ ժամանակների կիրառութիւնները, ինչպես՝ կիսելու ես, լսելու եմ (ՆՀԲ, էջ 217), մտնելու ես, անցանելու ես (ՄՆ, էջ 147), գնալու եմք (անդ, էջ 167) ևլն: Այս մասին ավելի մանրամասն կիսուվի սահմանական եղանակի ժամանակների կազմութեան բաժնում:

#### ԱՆՅՅԱԼ ԴԵՐԲԱՅ

Այս շրջանում, նախորդի համեմատութեամբ, ակնառու կերպով պակասել են անցյալ դերբայի կիրառութիւնները. բավական է ասել, որ — եալ վերջավորութեամբ անցյալ դերբայով և լինիմ բայով բաղադրյալ ժամանակի կիրառու-

թյան գրեթե չենք հանդիպում. նման կազմութիւններում անցյալ դերբայի  
-ել հնչյունափոխված ձևերն ունենք, որոնց մասին իր տեղում կխոսենք: Անց-  
յալ դերբայով առատորեն բաղադրյալ ժամանակներ են կազմում Հովհաննես  
Թլկուրանցին, Գրիգորիս Աղթամարցին և Մարտիրոս Ղրիմեցին իրենց՝ գրա-  
բարով գրած ստեղծագործութիւնների մեջ, սակայն նկատելի է մի առանձնա-  
հատկութիւն. գրաբարում նման կազմութիւններում ներգործական սեռի բա-  
յերը միաժամանակ արտահայտում են կրավորական սեռի իմաստ (սիրեալ  
եմ—սիրել, սիրվել եմ, սիրած, սիրված եմ), իսկ միջին հայերենում առավե-  
լապես կրավորական իմաստով են կիրառվում: Մինչդեռ այս շրջանում կրավոր-  
ականութիւն արտահայտելու հնարավորութիւնը մթազնվում է, և հեղինակ-  
ները ու՛՛վ կրավորական ածանց են օգտագործում, ինչպես՝

«Ուռն կանաչ է այգոյս,  
Որթն բացեալ<sup>9</sup> է տնկոյս» (ԳԱ, էջ 257):

Այս նույն կիրառութիւնն ունենք նաև Նազաշ Հովնաթանի մոտ.

«Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,  
Որ այսօր բացուեալ է, վաղին անցանի» (Բանաստեղծթ. էջ 170):

-եալ վերջավորութեամբ անցյալ դերբայի մի քանի այլ կիրառութիւններ  
ունի Հ. Թլկուրանցին.

ա) Դերբայական անկախ կիրառութեամբ.

«Եւ Յովհաննէս Թուգօրնցի,  
Լցեալ մեղօք թշուառական,  
Խնդրէ ի ձէնջ սրտի մտօք.  
Հոգոյն ասել զտէր ողորմայն» (Տաղեր, էջ 167):

բ) Ածական-որոշի կիրառութեամբ. ծաղկեալ ծառ (էջ 155), ապա և հըն-  
չյունափոխված ձևով՝ այրեցել սիրտ՝ «Քանի՛ զիմ այրեցել սիրտ արիւնես»  
(անդ, էջ 151):

գ) Հնչյունափոխված ձևով՝ գոյականական կիրառութեամբ.

«Մահն հերիք է մեզ խրատ,  
Որ կենդանի գոք չէ թողէր.  
Ոչ թագաւոր և ոչ իշխան,  
Թ՛ունին հարիւր հազար հեծել,  
Ոչ քահանայ լ՛ոչ ճգնաւոր,  
Ոչ մեծատուն լ՛ոչ տառպել» (անդ, էջ 181):

Մյուս հեղինակների մոտ եմ բայով հարադրված անցյալ դերբայի բաղա-  
դրյալ ժամանակների կիրառութիւնը նույնպես խիստ սահմանափակ է.  
Ամիրզովլաթը «Անգիտաց անպէտի» նախաբանի կիսագրաբար շարադրանքի  
մեջ դեռ մի քանի օրինակներ ունի. ահա դրանք՝ նուագեալ էր, բնակեալ են  
(էջ 2), արհնեալ է («Որ է արհնեալ յարիտեանս. ամէն»—էջ 11), տպաւո-  
րեալ է (էջ 14): Սակայն բուն նյութի շարադրութեան ժամանակ, որպես գրա-

<sup>9</sup> Այլ գրութիւններում՝ բացուեալ:

բարաբանություն, նման կազմությամբ մի երկու տեղ օգտագործում է միայն «որ ի վերոյ գրեալ է» արտահայտութիւնը (էջ 54, 519), այլ օրինակ չունենք: Մի քանի օրինակներ գտնում ենք Մկրտիչ Նաղաշի մոտ՝ «տուեալ է» (այլ գրչութիւններում՝ տըվեւ է, տըվել է, տուել է, էջ 108), անկեալ է (այլ օրինակում՝ ընկեւ է, էջ 112), մոռացեալ է («Մոռացեալ է զօր մահուան և ոչ յիշէ նա զդատաստան» — էջ 117):

Վերևի բոլոր կիրառութիւնները զտարյուն գրաբարաբանութիւններ են, մի տեսակ արհեստական կիրառումներ, այդ առավել ևս զգալի է Զաքարիա Ագուլեցու «Օրագրութեան» մեջ՝ «...քունզի մեր նախնի պապերն աստ են թաղեալ» (էջ 130), «Թ՛վին ռճժգ ...քսկիսբն մինչևի կատարածն դիր ցաւագար... հարամի, գողի տարի շէր տեսեալ. որ և տարէկան մարդն զարմանայր, թէ շեմ տէսեալ» (էջ 71): Սա գրաբար ուսած Զաքարիան է, մինչդեռ XVII դարի Զաքարիա մարդու լեզվի մասին լրիվ գաղափար կարելի է կազմել իր իսկ լեզվի հետևյալ երկու նմուշներով. «Զուր անցի աման, տեսայ, որ արեգական գ յիսեն բռնված, մին յիսեն բաց: Այսպէս մինչի կէս սհաթ մնաց, ապայ քիչ քիչ բացվեցավ» (էջ 67): «Միմոն ասաւ, թէ ես Սիմոնս Աբասղուլի խանին հսարն որ տվի, ողնձ թուման տալու եմ խանին» (էջ 70): Գործածված բոլոր բայաձևերն էլ շեղվում են գրաբարից:

Գրաբար լեզվով գրված ամեն մի գրվածքում բաղադրյալ ժամանակներով բայաձևեր առատորեն օգտագործվում են (օր. «Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն դառնացեալ, եթէ քմբեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն» — Եղիշէ, IV յեղ.): Մինչդեռ մեր լեզվի այս շրջանում բաղադրյալ ժամանակները փոխարինվեցին նորակազմ և նոր իմաստավորում ստացած աշխարհաբարի ձևերով, և հայերեն խոսքը քերականական կառուցվածքով, նամանավանդ ականջի համար, այլ կերպ է հնչում, այլ կերպ է տպավորվում:

#### ՎՍՂՍՎԱՏԱՐ ԴԵՐԲԱՏ

Վաղակատարը, ինչպես հայտնի է, առաջացել է գրաբար լեզվի անցյալ դերբայից՝ հայերենի համար շատ սովորական եա>ե (գրեալ>գրել) պատմական հնչյունափոխութեան հետևանքով: Ներկայումս, մեր գրական լեզվի 2 հատվածներում էլ վաղակատար դերբայը միայն մեկ կիրառութիւն ունի՝ եմ օժանդակ բայի հետ կազմում է սահմանական եղանակի վաղակատար (գրել եմ — գրեր եմ և անցյալ վաղակատար (գրել էի — գրեր էի) ժամանակները:

Վաղակատար դերբայը մեր լեզվի այս շրջանում առավել հարուստ դրսեվորումներ ունի: Միջին հայերենի նախորդ շրջանում մենք տվել ենք օրինակ, երբ վաղակատար դերբայաձևը ածական-որոշի կիրառութիւն ունի: Այս շրջանում ևս ունենք օրինակ Հովհ. Թլկուրանցու մոտ.

«Ես եմ ափ մի հողէ, դուն հրեղէն ես՝

Քանի՛ զիմ այրեցել սիրտս արյունես» (ՀԹՏ, էջ 151):

Հայտնի է, որ գրաբարի անցյալ դերբայաձևերով մի քանի գոյականներ ու ածականներ են կիրառվում արդի գրական հայերենում (սառուցյալ, հեծյալ), սակայն զարմանալի է, որ դեռևս միջին հայերենում գրաբարի անցյալ դերբայով ձևերը հնչյունափոխված են հանդես գալիս, ինչպես՝

«Թէ ըսկի շրկայ սուրբ վարդապետ,  
Մեզ սուրբ գրքօք խրատ տուէր,  
Մահն հերիք է մեզ խրատ,  
որ կենդանի զոք չէ թողէր:

Ոչ թագաւոր և ոչ իշխան,  
Թ՛ունին հարիւր հազար հեծել,  
Ոչ քահանայ լ՛ոչ ճգնաւոր,  
Ոչ մեծատուն լ՛ոչ տառապել» (ՀԹՏ, էջ 181):

Հեծել, անշուշտ, հեծյալ բառն է, իսկ տառապել՝ տառապյալ: Այս կիրառութիւնները լավագույնս վկայում են, որ միջին հայերենում հնչյունափոխված՝ վաղակատարի ձևի տակ՝ մեր հեղինակները գրաբարի անցյալ դերբայն էին տեսնում: Աշխարհաբարում, ըստ երևույթին, մեռել (<մեռեալ) միակ բառն է, որի մեջ կատարված է այս հնչյունափոխութիւնը:

Այս շրջանում ևս հեղինակներն օգտագործում են վաղակատար դերբայի և՛ լ, և՛ ր վերջավորութիւն ունեցող ձևերը, ինչպես՝ հասկացուցեր է, ղալտեցուցեր [է], մերկացուցեր է (ՆՔԴ, էջ 69), ասեր են, ստուգեր են (ԱԱԱԱ, էջ 85), կորեր է, հատեր է (ՄՆ, էջ 170), արբեցուցեր ես (ՀԹՏ, էջ 150), հագեր է (անդ, էջ 176) ևլն. մյուս կողմից՝ չեմ շինել, դադարել եմ, սառուցել է, անճարակել եմ, չեմ լսել (ՄՆ, էջ 146), չէ մնացել, չիւ արծել, հնազանդել էր (ՀԹՏ, էջ 181), զուգել էր, գրել էր, պատմել էր (ԱԱԱԱ, էջ 124) ևլն: Հաճախ նույն նախադասութեան մեջ հանդիպում են և՛ մեկ, և՛ մյուս ձևերը, ինչպես՝ «...Հելինացոց երկիրն այս կղզիս և ի յայս ժամանակս՝ կղզի է եղել, և ծովն ծածկեր է զինք, և այն բլուրն կղզի է մնացել հիմայ» (ԱԱԱԱ, էջ 126):

«Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր, գիտացէ՛ք, եար եմ կորուսել,  
Ա՛յ քարեր, ա՛յ թփեր, աճապ ի ձեզ չէ՞ եկել,  
Ա՛յ քարէ կարմրնջնի, ի ձեզ չէ՞ անցել.  
Զիս ի բուն թողեր, ելեր, զնացեր» (ՆՔԴ, էջ 48):

Մի խոսքով, այս շրջանում դեռ վաղ է վաղակատար դերբայների այս երկու տարբերակների այնպիսի զատորոշված կիրառութիւն փնտրել, ինչպիսին գտնում ենք հիմա՝ մի կողմից արևմտահայ գրական լեզվում և կը ճյուղի բարբառներում (ր վերջավորութեամբ), մյուս կողմից՝ արևելահայ գրականում և Ում ճյուղի բարբառներում (լ վերջավորութեամբ):

Վերևում մենք խոսեցինք սահմանական եղանակի ժամանակների մասին. սակայն միջին հայերենում վաղակատար դերբայով կազմվում են նաև երկրորդական բաղադրյալ ժամանակներ՝ լինիմ բայի հարադրութեամբ. այս դեպքում միշտ հանդես է գալիս լ վերջավորութեամբ վաղակատար դերբայ, ինչպես՝ ուտել լինի, խածել լինի (ԱԱԱԱ, էջ 26), առել լինի, վատուծել լինի (անդ, էջ 40), դեղնել լինի (անդ, էջ 315), կապուտցել լինի (անդ, էջ 316), հովցել լինի (անդ, էջ 617) ևլն: Բ վերջավորութեամբ կիրառութեան եզակի օրինակներ կան. «Տուտ, որ որդն է... աւգտէ այն աշիցն որ ջուր լինի իջեր» (ԱԱԱԱ, էջ 579): Սա, ըստ երևույթին, գրաբարական սխալ է:

### ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Հիշեցնենք, որ միջին հայերենի նախորդ շրջանում ներգործական սեռի իմաստի արտահայտութեամբ հարակատար դերբայով կազմված ժամանակներ

չկային: Ի տարբերություն նախորդ շրջանի, քննության ենթակա շրջանում, մի շարք հեղինակների մոտ ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակների կիրառության բազմաթիվ օրինակներ ենք գտնում, ինչպես՝

«Իմ սիրելին ինձ հմար, տես քանի՞ ցեղ վարդ է փաղած» (ՆՀԲ, էջ 24).

«Այսօր ....սիրտս ուրախութիւն կանէ,

Ձէրայ իմ սիրելունանէ

Շատ բարև ու գիր եմ բերած» (անդ, էջ 60):

«Գոհանամք զաստուծոյ, որ զայս ամէն նա է պարգևած» (անդ, էջ 181):

«Երէկ քեզի պէս էի, ճյսօր զիս այս հայն է ձգած» (ՆՔԳ, էջ 91):

«Ոչ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,

Ձարկած է զիս շամփուքն բռնած կրակին» (անդ, էջ 104):

Ապա և Զ. Ազուլեցու մոտ. «Ընստամայբադ ասելն այս է, որ Ընստամ-խանն տէղս ամարաթ է շինած» (Օրագրություն, էջ 25), «Ժ տարի էր, որ սո-րայ պարտք էր տված» (անդ, էջ 49):

Ներգործական սեռի կիրառություններն անառարկելի են նաև հետևյալ բարդ ստորադասական նախադասություններում.

«Ինձ գրած ես, թէ. «Յովնաթան.

Կայլուրդ հենց է՝ քամած թան» (ՆՀԲ, էջ 115):

«Ըսած էիր, թէ փայ անիս,

Մէկ անդամն ըրիսին տանիս» (անդ, էջ 143) ևլն:

Վերևի օրինակները ուշադիր կարգալիս կարելի է համոզվել, որ հարակատար ժամանակով գրված բայաձևերը ոչ թե կատարված գործողության հարատևման գաղափար են արտահայտում, այլ ավելի շուտ վաղակատարի իմաստով կիրառություններ են: Եվ ընդհանրապես ներգործական և շեղոք սեռի բայերը հարակատարով օգտագործելու նախապայմանը հենց բայիմաստի՝ հարատևման մնայուն հետևանք թողնելու իմաստի դրսևորումն է: Արդի արևմուտահայ գրական լեզուն նույնպես, ի տարբերություն արևելահայ գրականի, ներգործական սեռի բայերը վերևի իմաստներով է կիրառում: Ինչպես որ արևմելահայ գրականը օգտագործում է վաղակատարի բայաձևեր, այնպես էլ արևմտահայ գրականը նույն իմաստով օգտագործում է հարակատարի ձևեր:

Ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակների (նաև դերբայի) իրենց բուն իմաստով կիրառելն, անտարակույս, պահանջ առաջադրեց, որ կրավորական սեռով օգտագործվելու դեպքում բայաձևն ունենա կրավորականի մասնիկ: Եվ իրոք, ի տարբերություն նախորդ շրջանի, մենք գտնում ենք թե՛ հարակատար դերբայի և թե՛ հարակատար ժամանակների կրավորական ու մասնիկով դրսևորված բազմաթիվ ձևեր: Նախ բերենք հարակատար դերբայի ածականական կիրառության օրինակներ.

«Յառաջի տարաճան կու լինի այս խառնուած դեղս» (ԱԱԱԱ, էջ 13):

«...Եւ թէ կերուած ալուային կաթեցնեն՝ ամրացնէ» (անդ, էջ 131):

«Նոր փոված վարդի նման ես,

Ափսոս, որ խիստ շատ նազ կանես» (ՆՀԲ, էջ 37):

«Ձարդարել ես զինչ գարնան բացւած վարդ» (անդ, էջ 226):

Այսպես նաև՝ բացուած ծաղիկ (ԱԱԱԱ, էջ 507), կտուած ոսք (անդ, էջ 46), երված սիրտ (ՆՂԲ, էջ 241), խոցուած սիրտ (անդ, էջ 63), ապա և դերբայական կիրառութեամբ՝ պսակուած (ՆՂԲ, էջ 116), զարդարուած (անդ, էջ 226) ևլն:

Բայց դեռևս քիչ են կրավորական իմաստով հարակատար ժամանակի օգտագործման ձևերը. ահա մեր նկատած մի քանի օրինակները. «...և իր ուժն Բ բնութիւնն խառնուած է, որ մէկ մէկի հակառակ է» (ԱԱԱԱ, էջ 402): «Եւ Գս ասէ թէ ինքն խառնուած է ի հակառակ բնութիւնն» (անդ, էջ 353): «Ասէ Պատէհհին թէ սպանաւն Բ ցեղ է. Ա՛ սև, և Ա՛ խառնուած է ի այլ ցեղ գուններ» (անդ, էջ 67): Այս բայը նույն հեղինակի մոտ կրավորական կիրառութեամբ գտնում ենք երկրորդական բաղադրյալ ժամանակում. «Բայց թէ զարութեամբ նման շինի հետ մէկ մէկի, և տարաճան նման լինի հետ մէկ մէկի. ասկից որ խառնուած լինի, մուհթատիլ բնութիւն ընծայի» (անդ, էջ 12): «Եւ այն մարդուն որ ի ստամոքն պեղծ խառնուած կենայ... թէ զջուրն խմեցնեն, շատ աւզտէ» (անդ, էջ 184):

«Նոր գարուն է, ձեր բախշումն բացված է լալայ» (ՆՂԲ, էջ 228):

Իսկ Զաքարիա Ագուլեցին կրավորական հարակատարի բազմաթիվ ձևեր ունի, ինչպես՝ «Այս Շմաւոնս շատուց ցանկայր հոր Վիրաբն շինելոյ, քանզի յին ժամանակաց հորն լցված էր, վերայ եկեղեցին, խախթված էր» (Օրագր., էջ 81): «...Զաքարէս... մեր հայրենի տունն վեր կալայ, նորն շինեմ, զերայ շատուց շինված էր» (անդ, էջ 90): «Որ մեր տներն ձեռք տվիք շինելու, Ալէքսան էլ ձեռք տվեց, ինքն էլ շինեց. զերայ Աղամիրն, Սարկաւաք, որ է Ամիր, սոքայ եխպայրք էին բաժանված» (անդ, էջ 91) ևլն:

Այսպիսով, դեռևս XV—XVII դդ. ուրվագծված ենք գտնում կրավորական սեռի բայերի հարակատարի կիրառութիւններ, որոնք անկախ բայաձևի մնալուն հետևանք թողնելու իմաստ արտահայտելու հնարավորութիւնից, այսօր սովորական կիրառում ունեն մեր գրական լեզվի մեջ:

#### ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ

Մեր լեզվի այս շրջանում ենթակայական դերբայը հանդես է գալիս միայն -ող վերջավորութեամբ: -իչ վերջավորութեամբ ենթակայական դերբայ գրեթե չի հանդիպում. մեկ կիրառութիւն ունի Մարտիրոս Ղրիմեցի բանաստեղծը և օգտագործում է որպես գրաբարաբանութիւն՝ գրաբար խոսքի մեջ.

«Օրհնեա՛ զանիծիչն քո,

Աշակերտեա՛ դու Յիսուսի» (ՄՂ, էջ 112):

-ող վերջավորութեամբ ենթակայական դերբայը կազմվում է բոլոր բայերից, ինչպես. և խոնարհման բայեր՝ ստեղծող, նախշող (ԶԹՏ, էջ 119), փակող (անդ, էջ 148). և խոնարհման բայեր՝ կարդացող (ԳԱ, էջ 233), ունեցող (ԱԱԱԱ, էջ 302), բացող (անդ, էջ 62): Առավել շատ կիրառվում են պատճառական բայերից կազմված ենթակայական դերբայներ, ինչպես՝ «Մուրխի, որ է թուլացնող... Մուխաշիին, որ է խոշորացնող... Հազիմ, որ է մարսեցնող... Լազիղ, որ է սահեցնող... Մուհամմիր, որ է կարմրեցնող» (ԱԱԱԱ, էջ 16). նաև՝ չորացնող, սահեցնող, կալցնող (անդ, էջ 17), ուծովցնող, բուսցնող, բուսուցանող (անդ, էջ 18) ևլն:

Այս շրջանում ևս ա խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմը-  
վում է անցյալի հիմքից, ինչպես՝ կարդացող, ունեցող ևլն:

Ենթակայական դերբայը ենթարկվում է ի հոլովման և հանդես է գալիս  
անկախ, որպես գոյական, ինչպես՝

«Ար՛ե՛կ, ար՛ե՛կ իմ խուպ սուրաթ,  
Փառք ու պատիւ քո ստեղծողին,  
Եղեմական դրախտէն կուգաս,  
Օրհնեալ անուն քո նախշողին» (ՀԹՏ, էջ 119):  
«Առեալ տարան զնամակն ի դուռն վարդին,  
Հազրէ վարդին դիմաց կարդացող բերին» (ԳԱ, էջ 233):

Ստորոգելիական վերագրի կիրառությամբ ևս բազմաթիվ օրինակներ  
ունենք, ինչպես՝

«Ո՛վ մեծ հըզօր քաջ կիպարիտ,  
...լըսող էիր վարդապետաց» (ՀԹՏ, էջ 197):  
«Սըսայ երկրիս աստղ լուսատու,  
Կանգնող էիր յամէն ժամու» (անդ, էջ 198):

«Ապրիշում... և ինքն այրող և շուրացնող է» (ԱԱԱԱ, էջ 67): «Բայց Մին-  
հաճին տէրն ասեր է թէ սպաննող է» (անդ, էջ 34): Այսպես և՛ պարգևող  
է, բաշխաւոյ է, տուող է (անդ, էջ 1), յիսակող է (անդ, էջ 6) ևլն:

Ինչպես արդեն ասել ենք, ենթակայական դերբայի այս եղանակային կի-  
րառությունները մի տեսակ սահմանական ներկայի դրսևորումներ են: Այս  
իմաստով պատահական չէ, որ Համշենի բարբառում ենթակայական դերբայը  
օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր:

### ԺԵՏԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Խոսելով ժխտական դերբայի դրսևորումների մասին, մենք ցույց տվինք,  
որ մեր լեզվի նախորդ շրջանում (XII—XIV դդ.) բոլոր հեղինակներն էլ ան-  
խըտիր օգտագործում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար,  
ինչպես նաև պայմանականի ապառնի և անցյալ ապառնի ժամանակներում  
ժխտական կազմության 4 ձևերն էլ. դրանք են՝

- ա) Ի նախդիրով և անորոշ դերբայով (չէ ի տալ).
- բ) Ի նախդիրով և անորոշ դերբայի ր վերջավորությամբ (չեմ ի տաւ).
- գ) Օժանդակ բայով և անորոշ դերբայով (չի տալ).
- դ) Օժանդակ բայով և անորոշ դերբայի ր վերջավորությամբ (չի տաւ).

Զարմանալի օրինաչափությամբ միջին հայերենի այս շրջանում առաջին  
երկու ձևերը գործածությունից դուրս են գալիս: Սա, անշուշտ, կապված է այդ  
ձևերում գրաբարյան ներգոյականի գաղափարի կազմության մթազնման հետ:  
Նախորդ շրջանում էլ անորոշ դերբայից կազմված ժխտական ձևերում ի նախ-  
դիրի հանդես չգալը ինքնին արդեն վկայում էր այդ ձևերի քերականական  
կազմության իմաստի մթազնման մասին: Առաջին եղանակով ներկա ժամա-  
նակի ժխտականի կազմության քիչ օրինակ ունենք. «Սև զփորն կու ճղքեն, և  
զմէջն կու յիստկեն, և զիրիկամն... և զճրագուն ի տեղն կու թողուն, շեն ի հա-  
նել» (ԱԱԱԱ, էջ 511):



«Թէ դու կու սիրես սրտովդ, ինձ ասա՛, ես եմ կարօտով,  
Թէ շես ի սիրել սրտով, սուրբ Սարգիս ՚Աստուած քեզ խոտով» (ՆՔԴ,  
էջ 50):

Ի նախդիրով և անորոշ դերբայի Ե վերջավորութեամբ ներկա ժամանակի  
կազմութեան ևս քիչ օրինակ ունենք. «Եւ այն տեղն որ այն կաւն կու լինէր՝  
դուս դրին, և պահապանք դրին, եւ շեն ի ձրի տար ի այն կաւէն մարդու»  
(ԱԱԱԱ, էջ 127):

«Այբէն մինչև ի քէն գանկատ անեմ ես,  
Բարև յէ՞ր շես ի տար, սուտ խոտվեր ես» (ՀԹՏ, էջ 223):

Երկու օրինակ էլ ունենք պայմանականի կազմութեամբ Քուշակի հայրեն-  
ների մեջ.

«Խօջ եար, արևուդ համար, որբուկ եմ, զիս մի՛ լացնիր.  
Տղայ եմ, շեմ ի կենար, զիս ի քո կրակդ մի՛ ձգեր» (Դիվան, էջ 49):

«Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինամ, շեմ աւտար ու շեմ մոռանար,

Հազար եար կուտան փոխան, շեմ առնուր ու զքեզ շեմ ի տար» (անդ,  
էջ 65):

Սրանք էլ, ըստ երևույթին, նախորդ շրջանի հեղինակների լեզվական ազ-  
դեցութեան հետևանք են, քանի որ, ասենք, Ամիրդովլաթը վերևի 2 ձևերի կող-  
քին ժխտականի կազմութեան մյուս 2 եղանակներով հարյուրավոր ձևեր է օգ-  
տագործում:

3-րդ ու 4-րդ ձևերը նույնպես հեղինակները նախասիրութեամբ են օգ-  
տագործում: Ամիրդովլաթը հավասարապես օգտագործում է երկու ձևերն էլ,  
ինչպես՝ շէաֆ գիտնալ (ԱԱ, էջ 2), շէր կարել (անդ, էջ 5), շեն առնուլ (անդ,  
էջ 123), շեն կարել (անդ, էջ 192), շէր այնել (անդ, էջ 320), շի բնձայել (անդ,  
էջ 137), շի նմանիլ (անդ, էջ 372) ևլն: Մյուս կողմից՝ շի դիմաւար (անդ, էջ  
20), շի ելաներ (անդ, էջ 368), շեն գիտեր (անդ, էջ 442), շի ուտուիւր (անդ,  
էջ 570), շի մտնուր (անդ, էջ 414) ևլն: Նաղաշ Հովնաթանը, ճիշտ է, օգտա-  
գործում է 2 ձևերն էլ, սակայն զգալի առավելութեամբ 3-րդ ձևին է նախա-  
պատվութիւն տալիս, թվային հարաբերութիւնը մոտավորապես 1-ի դիմաց  
6 է՝ հօգուտ 3-րդ ձևի: Ահա մի քանի օրինակներ.

«Երբ որ բարով հասնիմք շնորհազարդ գարուն,  
Ես էլ շեմ համբերել, կելնեմ աւարայ» (Բանաստեղծութիւններ, էջ 42):

«Դու շես վարել շահէն, սուլթան ու խանէն,

Մէկ խապար շես դրկել ի քո բերանէն» (անդ, էջ 42):

Զարբրիա Ագուլեցին 4-րդ ձևի կիրառութեան մեկ դեպք իսկ չունի, մինչ-  
դեռ 3-րդ ձևով տասնյակ օրինակներ ենք գտնում, ինչպես՝ շէ երկիլ (Օրագր.  
էջ 16), շի հասնուլ (անդ, էջ 16), տալ շին (անդ, էջ 81), տալ շեմ (անդ, էջ 88),  
կարիլ շենֆ (անդ, էջ 102) ևլն:

Ընդհակառակն, Քուշակը 3-րդ ձևը սակավ է օգտագործում (գործածու-  
թեան 4 դեպք ունի), իսկ Մարտիրոս Ղրիմեցու մոտ 3-րդ ձևը բոլորովին չի  
հանդիպում:

Մենք, անշուշտ, նպատակ չունենք ժխտական դերբայի կազմութեան այս

2 ձևերի կիրառության վիճակագրությունը տալու, այլ՝ արձանագրելու այն ճշմարտությունը, որ ժխտականի կազմության 4-րդ ձևը ուսումնասիրվող դարաշրջանի վերջում ակնհայտորեն դրսևորվում է որպես Կը ճյուղի բարբառների հատուկ երևույթ: Եվ իրոք, այժմ թե՛ արևմտահայ գրական լեզուն և թե՛ Կը ճյուղի բարբառների մեծամասնությունը իրենց ներկան, անցյալ անկատարը, ուստի և պայմանականի ժխտականը այս ձևով են կազմում: Մյուս կողմից՝ արևելահայ գրականը և Ում ճյուղի բարբառները (որոշ իմաստով նաև Ս ճյուղի) պայմանականի ժխտականը կազմում են 3-րդ ձևով, այսինքն՝ անորոշ դերբայի հետ ժխտական ձևով եմ օժանդակ բայը խոնարհելով, որտեղից էլ՝ բառավերջի բաղաձայն հնչյունի մաշվածությամբ՝ առաջացան և 30-ական թվականներին զնահատվեցին ժխտական դերբայի նորակազմ ձևավերը (չեմ կարդալ—չեմ կարդա(լ), որոնք այսօր միմիայն պայմանական եղանակի ժխտական ձևերն են կազմում):

Այժմ տեսնենք, թե անորոշ դերբայով (լ վերջավորությամբ) կազմված ժխտական դերբայը ինչ դրսևորումներ ունեն մեր լեզվի այս շրջանում:

Ե խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերն ունեն —ել վերջավորություն, ինչպես՝ չեն ասել (ԱԱԱԱ, էջ 3), չի խափանել, չի տտպել (անդ, էջ 7), չես վախել, չես դրկել (ՆՂԲ, էջ 42), չէր ելնել (ԱԱԱԱ, էջ 123), չի ելանել (անդ, էջ 368), չելնել (անդ, էջ 325) ևլն:

Որպես բարբառային առանձնահատկություն, նաղաշ Հոփնաթանի և Զաբարիա Ազուլեցու մոտ գուգահեռաբար գտնում ենք —իլ վերջավորությամբ ձևեր. ինչպես չես ասիլ (ՆՂԲ, էջ 22), չես կարիլ (անդ, էջ 29, 45), չի գիտիլ (անդ, էջ 98), չի խմիլ (անդ, էջ 113), չի գտնիլ (անդ, էջ 83), կարիլ չէ (ԶԱՕ, էջ 24), չեմ ուտիլ (ՆՂԲ, էջ 148):

«Տըգէտ խօճայ կայ, որ կերթայ բազար,  
Զի ջոկիլ միմեանց շաղգամ և գազար» (ՆՂԲ, էջ 82):

«Ես կարդալ գիտիմ,

Ապայ ծանիլ չիմ,

Կարդայ, սովորիբ,

Ես խօ խափիլ չիմ» (անդ, էջ 131):

«Տիրացուն քանց ժողովուրդն շատ,

Զեն նանաշիլ գրած գիրն» (անդ, էջ 121) ևլն:

Սրանք, անշուշտ, բայերի ներգործական սեռի կիրառության դեպքում հանդես եկող ձևեր են: Այս ձևերը հետագայում իրենց արտահայտությունը գտան արևելահայ աշխարհաբարի մեջ, արտահայտվելով բոլոր հեղինակների մոտ: Այս ձևերից էլ առաջացավ արևելահայ գրականի ժխտական դերբայը, որը Ե խոնարհման բայերի համար ունի —ի վերջավորություն (չեմ գրիլ, չես գրիլ, չի գրիլ—չեմ գրի, չես գրի, չի գրի):

Սրանցից պետք է զանազանել Ե խոնարհման ներգործական սեռի բայերի գրաբարակերպ կրավորականի անորոշ դերբայի —իլ վերջավորությամբ արտահայտությունը, ինչպես՝ «Ես յորժամ եփես՝ այս երկու զարութիւնն ի մէկ մէկէ չի բաժնիլ և չի փոխիլ» (ԱԱԱԱ, էջ 10): «Ես ասէ Դս թէ լաւն մոմին այն է որ կարմրժեռ լինի. և ասած է թէ չի մարսիլ և չի փոխիլ» (անդ, էջ 427): «Ես թէ սֆուֆ առնես՝ աւգտէ արուն թքնելուն եւ շուտ չի մարսիլ» անդ, էջ 403):

«Ծն գիտէի, թէ մարդն չի մեռանիր  
Եւ աստէնի կենացս չի բաժանիլ» (ՄՆ, էջ 159):

Ապա և՛ չի շարժիլ (ՄՆ, էջ 172), շուտով (անդ, էջ 188) ևլն:

Պատճառական բայերը միշտ -ել վերջավորութիւնն ունեն, ինչպես՝ չի  
հասցնել (-չի հասցնում, ԱԱԱԱ, էջ 381), չի ուտեցնել (անդ, էջ 200), չի  
բշտեցնել (անդ, էջ 429), չի երեցնել (անդ, էջ 481), չի ծարեցնել (անդ, էջ  
538) ևլն:

Ի խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերն ունեն -իլ վերջավոր-  
ութիւնն, ինչպես՝ չի թողմիլ (ԱԱԱԱ, էջ 111), չի նմանիլ (անդ, էջ 372), չեն  
բանիլ (ՆՀԲ, էջ 103), չեն խոնարհիլ (անդ, էջ 120), չի անցանիլ (ԱԱԱԱ, էջ  
23), չի բուսնիլ (անդ, էջ 125) ևլն:

Ու կրավորական ածանցով կազմվող նորակերտ կրավորական բայերն  
ունեն -ուիլ վերջավորութիւնն, ինչպես՝ «էլ չի ցարվիլ գլխի գօտիկ» (ՆՀԲ, էջ  
121), «Եւ այս ուծս որ հակառակ է, և ամենայն տեղ չի գրտընուիլ...»  
(ԱԱԱԱ, էջ 10): «Եւ ինքն շուտովիլ, եւ թէ ուտեն՝ իր դեղն փսխելն է» (անդ,  
էջ 74): Ապա և՛ չի ծեծուիլ (անդ, էջ 168), չի գտնուիլ (անդ, էջ 366), չի գոր-  
ծուիլ (անդ, էջ 514) ևլն:

Ա և ու խոնարհումների թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերը համապա-  
տասխանաբար ունեն -ալ և -ուլ վերջավորութիւններ, ինչպես՝ չես ատալ  
(ՆՔԳ, էջ 44), չի մնալ (ՆՀԲ, էջ 56), չի չորանալ (ԱԱԱԱ, էջ 69), չի ողջանալ  
(անդ, էջ 131), չես իմանալ, չես բանալ, չի հովնալ (ՆՀԲ, էջ 46), չի թողուլ  
(անդ, էջ 407), չեն առնուլ (անդ, էջ 123), չեն տեսնուլ (անդ, էջ 164) ևլն:

Բոլոր դեպքերում չ ժխտական մասնիկն ավելանում է եմ օժանդակ բայի  
ներկա և անցյալ անկատար ձևերի վրա. ներկա ժամանակի եզակի III դեմ-  
քում է-ն հնչյունափոխվում է ի-ի (տե՛ս վերևի օրինակները): Այս դեպքում  
թե՛ բաղաձայնով և թե՛ ձայնավորով սկսվող բայերում չ մասնիկն ուղղակի  
կարող է դրվել բայաձևի (դերբայի) վրա, ինչպես՝

«Մէկն շասել (=չի ասում). «Թարկն տէք» (ՆՀԲ, էջ 120):

«Մարդ կայ, որ ինքն շանել (=չի անում) մեծութիւն» (անդ, էջ 84):

«Այն անասուն լաւ է, որ բնութիւնն մարդուն բնութեան մատիլ է. և ի  
մահն հոտէն կաթն կու յիմացուի, որպէս շունն և գայլն, և այն անասունքն որ  
միսն շուտովիլ, և որ մարդն յիրմէնցէ կու պժգայ» (ԱԱԱԱ, էջ 188). «Եւ ամե-  
նայն ճոհարնին ի արմասն մուտ չկարել այնել, եւ արմասն ամենուն մուտ  
կայնէ» (անդ, էջ 37). ապա և՛ շայնել (ԱԱԱԱ, էջ 82), շելնել (անդ, էջ  
325), շառնել (անդ, էջ 247) ևլն:

Բոլոր դեպքերում օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ: Բարբառա-  
յին երևույթ պետք է համարել Զաքարիա Ազուլեցու լեզվում ժխտական կազ-  
մութիւնների հակառակ դասավորութիւնը, երբ օժանդակ բայը դրվում է  
դերբայից հետո և ենթարկվում է բարբառին հատուկ հնչյունափոխության,  
ինչպես՝ «Ամսրդամու միշի Թէսիլն ծովն երես այ, մեծ նավ բարձած գնալ չէ  
(=չի գնում)» (Օրագր. էջ 15). «Այս պատճառէս խաներն սայ ձեռաց տալ չին  
(=չեն տալիս)» (անդ, էջ 81). «Ծն Զաքարիայ գնամ, խանիցն դաստուր ուզեմ,  
թէ մեք կարիլ չենք (=չենք կարող[անում] տէրս կենալ» (անդ, էջ 102): Ինչ  
վերաբերում է անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր հնչյունափոխված ձևով կազմը-

վող ժխտական ժամանակների վերջավորություններին, ապա պետք է ասել, որ 4 խոնարհման բայերը համապատասխանաբար ունենում են հետևյալ վերջավորությունները. -եր՝ չի ելաներ (ԱԱԱԱ, էջ 368), չի ասեր (ՆՀԲ, էջ 84), չի խմեր (անդ, էջ 209). -իր՝ չի նմանիր (ԱԱԱԱ, էջ 9), չես հայիր (ՀԹՏ, էջ 145), չես խօսիր (ՄՂ, էջ 106). -ար՝ չի դիմանար (ԱԱԱԱ, էջ 20), չի գնար (ՀԹՏ, էջ 132), չես կշտանար (ՆՀԲ, էջ 137). -ուր՝ չբողուր (ԱԱԱԱ, էջ 49), չի բողուր (անդ, էջ 96), չի մտնուր (անդ, էջ 423), չեմ առնուր (ՆՔԳ, էջ 65) ևլն:

Ե խոնարհման ներգործական սեռի՝ գրաբարակերպ կրավորական ունեցող, ինչպես նաև -ուիլ վերջավորությամբ նորակերտ կրավորական բայերը համապատասխանաբար ունեն -իւր և -ուիր վերջավորություններ, ինչպես՝ «Նազիճ, որ է կաշուկ. այն դեղն է որ քաշելով չի կտրիր (=չի կտրվում)» (ԱԱԱԱ, էջ 15): «...Ասոր շարապն չի փոխիր (=չի փոխվում) ի սաֆրայ» (անդ, էջ 413): «Եւ այն որ նուրվանքն է՝ դանկով չի աաշուիր» (անդ, էջ 414): «Եւ դեղին պղինձն կու կտորի, տաք չի ծեծուիր» (անդ, էջ 564): «Եւ ինքն չի ուտիր» (անդ, էջ 570):

Առաջին 3 խոնարհումների ձևերը ճիշտ ու ճիշտ համապատասխանում են արդի արևմտահայ գրական ձևերին: Արևմտահայերենի քերականները ու խոնարհում, որպես համակարգ, չեն ընդունում: Դժբախտաբար անցյալ անկատար ժամանակով ձևեր չեն հանդիպում. հետաքրքրական կլիներ իմանալ, թե ի խոնարհման բայերն այս ժամանակում ինչպիսի դրսևորում կունենային:

### ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Միջին հայերենի այս շրջանում բայի խոնարհման պատկերը նույնն է, ինչ նախորդ շրջանում, այն է՝ ունենք 5 եղանակ՝ սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական և հարկադրական: Սահմանական եղանակը հանդես է գալիս 9 ժամանակներով, որոնք նույնանում են արդի գրական լեզվի հետ, հրամայականը՝ հաստատական և ժխտական ձևերով, իսկ վերջին 3 եղանակները՝ ապառնի և անցյալ ապառնի ժամանակներով:

Գրաբարի ստորադասական եղանակը իր երկու ապառնիներով գրեթե անգործածության է մատնված, մոռացված: Բավական է ասել, որ Հովհաննես Թլկուրանցի բանաստեղծը ստորադասականի գործածության միայն մեկ դեպք ունի, այն էլ գրաբարյան քարացած արտահայտության մեջ.

«Ով արբէ զզայ սրբութեամբ,

Ոչ ճաշակէ զմահ յախտեան.

Նա ի յիս բընակեսցէ

Եւ ես ի նմա անգրաւական» (Տաղեր, էջ 168):

Իսկ Ամիրզովլաթ Ամասիացի բժիշկը իր «Անգիտաց անպէտ» սովորածավալ աշխատության մեջ ստորադասականի կիրառության ոչ մի դեպք չունի: Ինչ վերաբերում է այս շրջանի մյուս հեղինակներին, ապա նրանք ստորադասականի ձևերն առավելապես օգտագործում են իրենց խրատական-բարոյական բանաստեղծություններում, գրաբարյան քարացած արտահայտություններում ու կրոնական-եկեղեցական բովանդակությամբ խոսքի մեջ. մի խոսքով՝ օգտագործում են որպես գրաբարաբանություն. օր.

«Եկա՛ք ժողովուրդ, երկրպագեսցուք,

Զի նայ է յոյս հաւատացելոց» (ՆՀԲ, էջ 124):

«Այս նշանաւս  
Սուրբ խաչիս,  
Աղաչեսցուի» (անդ, էջ 127):

«Կոչնական երբ գայցէ հոգուն ւաւանդման,  
Նա շի տա այլ համբեր մարդուն հրաւիրման  
...Ղօղեկով փախիցէ յահէ հրեշտակին» (ՄՆ, էջ 139):

Զպետք է մտանալ, որ մեր կյանքի այս շրջանում ուսումնառութիւնը գրաբար լեզվով էր: Ավելին, շատ անգամ հեղինակները սովորույթի ուժով կամ իրենց ուսույլ լինելն ապացուցելու համար անխառն գրաբարով էին գրում (մինչև իսկ Խ. Աբովյանը զերծ չմնաց այս բանից), սակայն, այնուամենայնիվ, գրաբարի ստորադասական եղանակը իր ըմբռնումը կորցրել է այս շրջանում. Զաքարիա Ագուլեցին, օրինակ, ստորադասականի սխալ, աղավաղված ձևեր է օգտագործում, ինչպես՝ «Ծս... Զաքարիայ... որ ուր որ գնամք, թէ գիւղ և եթէ քաղաք թէ մտանիցեմ, կամ թէ զատիկ արարիցեմ, կամ թէ նշանաւոր բան կամ թէ օր հանդիբիցէ գրիցեմ» (Օրագր. էջ 29): «Ծս Զաքարիա... ուր և հանդիբիցէ, զատիկ կամ վարդավառ կամ սուրբ խաչ կամ չրաւրհնիք արարիցեմ կամ թէ ինչ գիւղ կամ քաղաք մտանիցեմ կամ թէ էլանիցեմ, գրեսցեմ» (անդ, էջ 5—6): Վերևի երկու նախադասութիւններում արարիցեմ ձևը պետք է ուղղել՝ առնիցեմ (կամ՝ արարից), իսկ գրեսցեմ՝ պետք է ուղղել՝ գրիցեմ (կամ՝ գրեցից): Այժմ տեսնենք, թե խոնարհումը նախորդ շրջանի հետ համեմատած՝ գրսևորման ինչ ընդհանրութիւններ ու տարբերութիւններ ունի:

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա և անցյալ անկատար ժամանակները մեծ մասամբ կազմվում են կու, կը, կի մասնիկներով, ինչպես՝ կու սիրէ (ՄՂ, էջ 87), կու բերէ (անդ, էջ 90), կու նեղէ (ԳԱ, էջ 133), կու բանամ (անդ, էջ 136), կու բուսնի (ԱԱԱԱ, էջ 9), կու մեռնի (անդ, էջ 19) կու լնուն (անդ, էջ 143) ևլն: Կու մասնիկը դրվում է բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ, սակայն կարող է դրվել նաև ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ, ինչպես՝ կու ասեմ (ՄՂ, էջ 90), կու այրի (ՄՆ, էջ 108), կու անկանի (ԱԱԱԱ, էջ 19), կու արծէ (անդ, էջ 190), կու որսար (անդ, էջ 345) ևլն: Սակայն ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ ավելի շուտ գտնում ենք կի մասնիկը, ինչպես՝ կանես (ՆՀԲ, էջ 5), կելնես (անդ, էջ 33), կառնուս (անդ, էջ 135), կուտէր, կասէր (ՄՂ, էջ 114), կանուանէին, կասէին (ԱԱԱԱ, էջ 333), կուժովցնէ (անդ, էջ 53), կելնէ (ՆՔԴ, էջ 87), կանեմ (անդ, էջ 104) ևլն:

Զայնավորով սկսվող բայաձևից առաջ կու և կի մասնիկների անխտիր կիրառութեան օրինակ է հետևյալ նախադասութիւնը. «Մուսալլաս, ինքն քաղցուն է (որ է մայ ի փուխթէն), որ կու եոցնեն, և զփրփուրն կառնուն, և այնչաք կելիեն որ Բ բաժինն կու մնայ և Դ բաժինն կերթայ... և զարունն յիստակ և պայծառ կու առնէ, և զկերակուրն կու մարսէ» (ԱԱԱԱ, էջ 350):

Սակաւ դեպքերում կի մասնիկը հանդես է գալիս բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ, ինչպես՝ կսպաննէ (ԱԱԱԱ, էջ 275, 296, 405, 503 ևլն), կգուրցէ (ՆՔԴ, էջ 92), կիսէր (անդ, էջ 65), կմնայ (ԶԱՕ, էջ 14) ևլն: Բաղա-

ձայնով սկսվող բայաձևերից առաջ, եթե կու շղրվի, ապա սովորաբար հանդես է գալիս կը մասնիկը, որ գրվում է անջատ, ինչպես՝ կը փոխի (ԱԱԱԱ, էջ 369), կը տանի (անդ, էջ 433), կը գտուի (անդ, էջ 454), կը բխայ (ՀԹՏ, էջ 217), կը քարգոծենք (ՆՀԲ, էջ 197), կը դասեն (անդ, էջ 198), կը դողամ (ՆՔԴ, էջ 64) ևլն:

Կու մասնիկը գրվում է ինչպես գրաբարաձև կրավորական, այնպես էլ նորակազմ կրավորական բայաձևերի վրա, ինչպես՝ կու զատի, կու բաժանի (=բաժանվում է—ԱԱԱԱ, էջ 10), մյուս կողմից՝ կու բացուի (անդ, էջ 5), կու յիշուի (անդ, էջ 24) ևլն: Անկանոն բայերը նույնպես ներկա և անկատար ժամանակները կազմում են կու, կը, կ մասնիկներով, ինչպես՝ կու այնէ (ԱԱԱԱ, էջ 3), կու առնէ (անդ, էջ 61), կայնէր (անդ, էջ 122), կու դնեն (անդ, էջ 22, 28), կու տան (ՄՆ, էջ 101), կու լինայ (ԱԱԱԱ, էջ 13), շուռ կուգաս (ՆՀԲ, էջ 195), կուտայ (ՀԹՏ, էջ 209) ևլն: Ավելին. կու մասնիկով սահմանականի ներկա և անկատար կազմելու լեզվամտածողութունն այնքան ամուր է հեղինակների մոտ, որ պիտիմ և գիտեմ բայաձևերի վրա էլ են դնում, ինչպես՝ կու պիտի (ԱԱԱԱ, էջ 4, 20, 21, 36, 180, 183 ևլն, ՆՔԴ, էջ 78), կու պիտիս (ՆՀԲ, էջ 76), կու գիտէ (ՄՂ, էջ 115), կու գիտէ (ՆՔԴ, էջ 93): Գիտեմ բայաձևը, ինչպես գիտենք, նույնիսկ աշխարհաբար և մեր գրական լեզվի երկու հատվածներում անփոփոխ ձևով արտահայտում է ներկա ժամանակի իմաստ: Վերևում մենք նկարագրեցինք ներկա և անկատար ժամանակների կազմության ձգտումը մեր լեզվի այս շրջանում: Սակայն սխալված կլինեինք, եթե կարծեինք, որ այս շրջանում գրաբարաձև ներկայի դրսևորում չկա մեր լեզվի մեջ: Բոլոր հեղինակների մոտ էլ անխտիր մենք գտնում ենք գրաբարյան ներկա և անկատար ժամանակների դրսևորումներ, ինչպես՝

«Մ'էջլիս նստեն (=նստում են) սազով-դամով,  
...Գինի խմեն (=խմում են) ոսկէ ջամով» (ՆՀԲ, էջ 13):  
«Աշուն նրման է ծերութեան,  
Մերք մեռանեն և՛ անցնին գնան» (ՀԹՏ, էջ 168):

Ապա և՛ լնուս (ՀԹՏ, էջ 127), թողուս (անդ, էջ 135), գովեմ (ՆՀԲ, էջ 11), ուսանին (անդ, էջ 79), պարծենաս, ասեն (ՆՔԲ, էջ 44), խմէաք (անդ, էջ 76), տեսնէր (ՄՆ, էջ 10) ևլն: Առավել շատ են և խոնարհման ներգործական սեռի բայերի գրաբարաձև կրավորականի ձևերը, որ իր տեղում կտեսնենք:

Ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ այս՝ հաճախ նույն նախադասության մեջ իրար կողք-կողքի հանդես են գալիս ներկայի կազմության երկու ձևերն էլ. օրինակ. «Եւ թէ զիր ջուրն ի քիթն կաթեցնեն, զարունն կտրէ և թէ յամէն ար Ա դրամ տաս, աւգտէ շարային, և թէ շատ ուտեն՝ զսերմն՝ կտրէ, և զաչքն մքնցնէ, և մոռաց բերէ, և թէ քամես զգալարն՝ և Խ դրամ իր ջրէն խմես, ԿՈՒ ՍՊԱՆԱՆէ պաղեցնելովն. և օգտէ բշտին կսկծալուն. և իր ջուրն սպաննող է. զշարութիւնն ի լերդն ԿՈՒ ՀԱՍՑնէ, և խելքն ԿԱՆՑնի, և արուն կերթայ, որպէս հարբած ԿՈՒ Լինի» (ԱԱԱԱ, էջ 115): «Եւ զիր հատն որսորդնին ԿԱՌՆԵՆ, և իրենց որսած մսին մէջն դնեն, որ շի հոտիր... և այս խոտս՝ զգոզն յորդորէ, և զհայզն ԿՈՒ ԲԱՆԱՑ, և զթանծր քամեստանն ԿՈՒ ՅՐՈՒԷ, և զլերդին կալուածն ԿՈՒ ԲԱՆԱՑ, և աւգտէ փայծղանն զթոքն կու յիստկէ, և զսրտին խաղալն ԿՈՒ ՏԱՆԻ, և ըռուպուին՝ և հազին՝ և արծուոց՝ աւգտէ» (անդ, էջ 98):

Նախորդ շրջանի համար գրաբարյան և նորակազմ աշխարհաբար ներկայի

կիրառութեան հաճախականութեան մասին խոսելիս ասել էինք, որ շատ անպամ գրաբարյան ձևերը տասնապատիկ անգամ ավելի շատ են օգտագործվում, քան նոր ձևերը: Այս շրջանում այդ նույն հարաբերութիւնը նորակազմ ձևերի օգտին է, այսինքն՝ կու մասնիկով ձևերը խոսքի մեջ տասնյակ անգամներ ավելի շատ են հանդիպում, քան գրաբարյան ձևերը: Ստորև բերված օրինակը մեր ասածի լավագույն ապացույցն է (կրկնակի ընդգծումները նորակազմ ձևերն են). «Եւ ցեղ մըն այլ կայ որ այնոր պախարի վահշի ԿՈՒ ԱՍԵՆ, որ քարգամանի՝ վայրի պախրէ (եապան իյնէի). այս ցեղն ի լեռներուն ի գոգն ԿՈՒ ԼԻՆԻ, եւ ի մորեստնուն ի մէջն. եւ այսպէս տեղրանք ի շուրջ ԿՈՒ ԳԱՅ և ԿՈՒ ԲՆԱԿԻ, եւ աճենուն բնութիւնն մէկ ի մէկ ԿՈՒ ՆՄԱՆԻ. եւ այն եզն որ որձ է՝ յորժամ հիւանդանայ նա, յաւձ ԿՈՒՏԷ և ԿՈՒ ՈՂՋԱՆԱՅ. եւ այն որ վայրի պախրէ՝ այն ԿՈՒ ԵՐԹԱՅ զքիթն ի յաւձուն ծակն ԿՈՒ ԴՆԷ և շնշովն դաւձն ի դուրս ԿՈՒ ՔԱՇԷ, եւ աւձն շուտ մի դուրս ԿՈՒ ԳԱՅ, հանց որ խընդմանդ քարն գերկաթն ԿՈՒ ՔԱՇԷ և կպչի, եւ աւձուն ագուն ԿՍԿՍՆՈՒ և ԿՈՒՏԷ. եւ աւձն ԿՈՒ ՇԱՐԺԻ և ԿՈՒ ԹԱՊԼՏԻ, եւ ԿՈՒ ԶԱՆԱՅ որ խայթէ, եւ ԿՈՒՏԷ զինքն լման, հանց որ սրութիւնն եւ կսկիծն ի յաչքն ԿԵԼՆԷ, եւ աչիցն արցունք ԿՈՒ ՎԱԹԻ, աչիցն աղբուրն աղտ և ճիպո ԿՈՒ ԺՈՂՎԻ և ԿՈՒ ՊՆԴՆԱՅ ժամանակն այն ճիպոն, որպէս որ ի ականջն ԿՈՒ ԼԻՆԻ աղտի պէս» (ԱԱԱԱ, էջ 38):

Անկատար դերբայի քննութեան բաժնում մենք արդեն ասել ենք, որ քննութեան ենթակա դարաշրջանների վերջում իրար հայրենակից Ձ հեղինակներ սահմանական ներկա և անկատար ժամանակները կազմում են իրենց բարբառին հատուկ — ում վերջավորութեամբ: Արդ, սահմանականի ժամանակների կազմութեան մեջ կու մասնիկը ի՞նչ տեսակարար կշիռ ունի այս շրջանում: Զխոսելով մյուս հեղինակների մասին, պետք է ասել, որ և՛ նաղաշ Հովնաթանը, և՛ Զաքարիա Ագուլեցին անխտիր կերպով օգտագործում են կու մասնիկով ներկայի և անկատարի ձևեր: Նշանակում է՝ այս մասնիկը ընդհանուր կիրառութիւն ունի XV—XVII դդ. բոլոր հեղինակների մոտ: Ահա մի քանի լրացուցիչ օրինակ ևս.

«Քաղցր խօսքով կու ծիծաղիս, կու մնամ մայիլ,  
Կարմիր երեսոգ կու շողշողայ, չեմ կարիլ հայիլ» (ՆՃԲ, էջ 45):

«Մով աչքերիդ մտիկ կանեմ՝ ձեռաց կու գնամ,  
...Թէ որ դու էլ ինձ կու սիրես, ասէ՛, իմանամ.

...Ես որ պինդ հոգոց կու հանեմ, է՞ր չես իմանայ» (Ն. տ. էջ 46): «Դարցեալ Ժէյգիդունի նավերն Կալիս կու բառեան, Կալիս կու դադարկացնեն. այլ տեղ չկայ» (ԶԱՕ, էջ 16): «Աստի շուրի Ամսրդամ խայավան այ ջրով, որ նավ կու գնայ, կուգայ» (անդ, էջ 15):

Պետք է խոստովանել, սակայն, որ կու մասնիկը (հնչյունափոխված ձևավերով հանդերձ) միայն ընդհանուր կիրառութիւն ունի քննութեան ենթակա շրջանում, սակայն ո՛չ բացարձակ, ինչպես է այժմ արևմտահայ գրական լեզվում և Կր ճյուղի բարբառներում: Այն ժամանակ հայ պետականութեան բացակայութիւնը և լեզվամշակման տարերային բնույթը գրական ընդհանուր մեկ պարտադիր ձև չէին կարող ենթադրել, ասենք, աշխարհաբար գրական հայերենն ինքն էլ խանձարուրում էր: Լեզվական այս բազմատեսակութիւնը շարունակվեց ընդհուպ մինչև XIX դարի կեսերը (Արևելահայաստանում՝ ավելի ուշ էլ), երբ վերջնականապես ձևավորվեցին և մշակվեցին մեր ժողովրդի

երկու հատվածների գրական լեզուները, և յուրաքանչյուրը իր ներսում ունեցավ միասնական, պարտադիր կիրառելի քերականական ձևեր:

Ապառնի և անցյալ ապառնի ժամանակներ.— Ի տարբերություն նախորդ շրջանի՝ ապառնի ժամանակը հանդես է գալիս ու վերջավորութեամբ դերբայով, ինչպես՝

«Դու էդ ծաղկունքդ ո՞ւմ հետ ես կիսելու,  
...նաղաշ մնացած է եսիր և գերի՝  
Թէ պայծառ երեսդ ե՞րբ եմ տեսնելու» (ՆՂԲ, էջ 216):

«Տխուր մնացել չեմ, սիրտս՝ հարալու,  
Մինչև ե՞րբ եմ սիրուտ ծարաւ մնալու,  
Ես կու թողնեմ՝ երթամ, էլ չեմ յետ գալու,  
Դադաստանին ո՞նց ես ինձ ջուղաբ տալու» (անդ, էջ 246):

«...նեղ է դուռն ատենին, որ ես մտնելու,  
Նշանաւ սուրբ խաչին ես անցանելու» (ՄՆ, էջ 147):  
«Հաւասար զնալու եմք մենք, զի այն կեանքն է մեզ հայրենի» (անդ, էջ 167):

— ու վերջավորութեամբ ապառնի դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմության մի երկու օրինակ ունենք այս շրջանում. ինչպես՝ «Եւ թէ յայն ատենն որ զտղայն բերելու լինի՝ կախէ, շուտ ծնի» (ԱԱԱԱ, էջ 355): «Դարցեալ, մին էլ մահանայ արին, թէ՛ այս շուխի տէրն գայ, փող դնի բանքվումն, մուշոզգայ, տան, թէ՛ մեք այս շուխէս Ուրումէշի բանաք ոչ, ծախինք ոչ, մեք ձեր փողն յետ տալու լինիք» (ԶԱՕ, էջ 131):

— ոչ վերջավորութեամբ ապառնի դերբայով ժամանակի կազմության երկու դեպք է միայն հանդիպում նաղաշ Հովնաթան բանաստեղծի մոտ.

«Երբ որ ինձ հետ մէյտան մտար,  
Ես էլ չեմ տալոյ քեզ դադար» (Բանաստեղծութիւններ, էջ 112):  
«Նապար ես ղրկել քո բերանէն,  
«Ասէք, շատ մի՛ հեռանալ տանէն,  
Մէկ օր գալոյ եմ քո քերխանէն» (անդ, էջ 9):

Այս վերջինը տետրակներից մեկում գտնում ենք և գալու եմք ձևով: Պետք է խոստովանել, որ սահմանական եղանակի ապառնի ժամանակներով ձևեր միջին հայերենը քիչ է օգտագործում, անհրաժեշտութեան դեպքում ավելի շուտ հարկադրական ապառնի ձևեր է օգտագործում, սակայն ապառնի ժամանակի՝ տարբեր դեմքերով ու թվերով հանդես գալը (ինչպես ցույց են տալիս վերևի օրինակները) վկայում է, որ նա հաստատուն տեղ ունի միջին հայերենի բայի խոնարհման համակարգում:

Վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակներ.— Ինչպես վաղակատար դերբայի քննության բաժնում նշել ենք, այս շրջանի հեղինակներն անխտիր օգտագործում են վաղակատարի *և՛ լ, և՛ ր* վերջավորութիւններով ձևեր, ինչպես՝ «Սուրբ Կարապետն սիրել ես, նաշար խօսքով կողկողել ես, Իբր շորս կողմն գովել ես» (ՆՂԲ, էջ 147), բայց և՛

«Անմահ ու անգրող զհոգիս հաներ ես  
Դու ինձ սիրելի և՛ ինձ բարեկամ ես



...Անթուր ւ՝ անդանակ զարինս հեղեր Ես  
Գնաց իմաստութիւնս՝ զմիտքս տարեր Ես» (ՀԹՏ, էջ 151):

«Քար եմ բերեր սարերոյս,  
Փուշ եմ կրեր ձորերոյս,  
Պատ եմ բոլորեր այգոյս» (ԳԱ, էջ 254):

Ի տարբերութիւն նախորդ շրջանի, XV—XVII դդ. հեղինակների մոտ դտնում ենք վաղակատար ժամանակի ու կրավորականով կիրառութեան բազմաթիւ դեպքեր, ինչպես՝ «Մուֆաթթէ, որ է բացող. այն դեղն է որ զմատտան որ ի բարակ ծակտիքն որ լցուել է և կալուել է, շարժէ զծակտիքն բանայ» (ԱԱԱԱ, էջ 16): «Ինքն բուս մըն է որ իրար է փատուել որպէս շուվան, և հուսուել է» (անդ, էջ 599): «Դու զարդարվել Ես զառ ու զառբաֆով» (ՆՀԲ, էջ 25): «Մաշվել եմ, զալում, զալում» (անդ, էջ 9): «Բաղչի դուռն է բացվել մէջ քո դարպասին» (անդ, էջ 203):

Պատճառը հասկանալի է. նախորդ շրջանի հեղինակները վաղակատարի կրավորականի լեզվամտածողութիւնն արտահայտում էին անցյալ դերբայով և լինիմ բայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակներով, մինչդեռ քննութեան ենթակա շրջանում, ինչպես վերևում տեսանք, նման կազմութիւններ չեն գործածվում: Մի մասնակի առանձնահատկութիւն ևս. բարբառային տարրերի աշխուժացման հետեանքով վաղակատար դերբայի հետ դրվող օժանդակ բայը ենթարկվում է տարբեր հնչյունափոխութիւնների, ինչպես՝ «Զեր բախի մէջն բացվել ա սմբուլն» (ՆՀԲ, էջ 40): «Ինձ մէկ տղայ ջուր տվել այ» (անդ, էջ 101): «Ես Զաբարիայ գնացել ի Ըսպահան» (ԶԱՕ, էջ 168) ևլն:

Հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ. — Հարակատար դերբայի քննութեան բաժնում նշեցինք, որ մեր լեզվի այս շրջանում եմ օժանդակ բայով սահմանականի հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ են կազմվում ինչպես շեղոք ու կրավորական, այնպես էլ ներդրական սեռի և պատճառական կերպի բայերից. օրինակ՝ պառկած են (ՀԹՏ, էջ 179), ընկած Ես (ՆՀԲ, էջ 26), կարօտած էր (ԳԱ, էջ 134), անցուցած է (գինքն ի բան է անցուցած, էջ 151), աւերած է (Շատ մարդոյ տուն է աւերած» ՆՀԲ, էջ 60)։

«Սովորած եմ գործել սալակ.

Զերա շատ եմ կտրած թալակ» (ՆՀԲ, էջ 146) ևլն:

Այսպիսով, սահմանական եղանակի հարակատար ժամանակների կազմութեամբ միջին հայերենի այս շրջանն ավելի հարուստ դրսևորումներ ունի, քան արդի գրական հայերենը, քանի որ այժմ գրական հայերենում ներգործական սեռի բայերը զլիսավոր բաղադրյալ ժամանակներում հարակատար ժամանակով չեն օգտագործվում:

Հարակատար դերբայով կազմվում են նաև երկրորդական բաղադրյալ ժամանակներ, ընդ որում ո՛չ միայն լինել բայի հարադրութեամբ, ինչպես՝ նդֆած կու լինի (ԱԱԱԱ, էջ 41), թէ մեռած լինի (անդ, էջ 70), ծնած լինի (անդ, էջ 192), այլև մի քանի ա՛յլ բայերի հարադրութեամբ, ինչպես՝ խառնուած կենայ (ԱԱԱԱ, էջ 184), պահած կա (ՀԹՏ, էջ 178), գրած կայ (ԶԱՕ, էջ 92) ևլն: Հետաքրքրական է հետևյալ փաստը. նույնիսկ երկրորդական բաղադրյալ ձևերում կրավորականի գաղափարի դրսևորման համար անհրաժեշտութիւն է զգացվում դերբայը կրավորաձև դնելու, ինչպես՝ գրված կայ (ԶԱՕ, էջ 11), խառնուած կենայ (ԱԱԱԱ, էջ 184):

Անցյալ կատարյալ.—Ե խոնարհման պարզ, ինչպես նաև պատճառական կերպի բայերի եզակի II դեմքում տիրապետողը -իր վերջավորութունն է, ինչպես՝

«Մնացիր շարեաց զաւակ» (ՀԹՏ, էջ 193):

«...Փորեցիր քեզ գուբ ու խոր,

Վառեցիր հանց հուր ու բոց» (անդ, էջ 194):

«Զսիրտս երեցիր ու սղկեցիր ու փաշեցիր յաշքըդ սուրմայ» (ՀԹՏ, էջ 217):

«Հոգիս կորցրիր, զալում,

Ինձ փրչացրիր, զալում» (ՆՀԲ, էջ 7):

-Եր վերջավորութունը սակավ է հանդիպում, օգտագործվում է որպես գրաբարբանություն, ինչպես՝ համբուրեցեր, սնուցեր, կանգնեցուցեր (ԳԱ, էջ 158), փորձեցեր (ՀԹՏ, էջ 194) ևլն:

Եզակի III դեմքում այս շրջանում ևս հավասարապես օգտագործվում են և՛ -եց, և՛ -եաց վերջավորութունները, ինչպես՝ փաղեց (ՀԹՏ, էջ 131), ձգեց (անդ, էջ 61), խմեց (ԱԱԱԱ, էջ 320), ուզեց, խայթեց (անդ, էջ 321), մյուս կողմից՝ մատնեաց, շարշարեաց (ՀԹՏ, էջ 161), հնչեաց (ՆՀԲ, էջ 36), յղեաց (ՄՂ, էջ 101) ևլն:

Հոգնակի I դեմքում ամենուրեք -աք վերջավորութուն ունենք, ինչպես՝ յիշեցաք (ԱԱԱԱ, էջ 139), լսեցաք (անդ, էջ 250), փորձեցաք (անդ, էջ 429), կրեցաք, գրեցաք, կիսեցաք, կտրեցաք (ՄՂ, էջ 115), հեռացաք, զրկեցաք, շահեցաք (ՆՀԲ, էջ 216) ևլն:

Ասել բայը օգտագործվում է և՛ բաղադրյալ-ցոյական, ասաց (ՄՂ, էջ 111), և՛ արմատական՝ ասիր (ՄՂ, էջ 95, 99), ասին (ՆՔԴ, էջ 88), ասաւ (ԶԱՕ, էջ 70, 100) ձևերով:

Քերել, ածել բայերը անցյալ կատարյալում արմատական հիմք ունեն, ինչպես՝ եքեր (ՀԹՏ, էջ 191), բերիր (ՆՀԲ, էջ 112), ածին (ՆՔԴ, էջ 92), էած (անդ, էջ 45, 61) ևլն:

Հանել բայը հանդիպում է նաև կանոնավոր ձևով՝ ցոյական հիմքով, ինչպես՝ «Հանեցին զիս յիմ այգոյս» (ԳԱ, էջ 280):

Ե խոնարհման ածանցավոր բայերում նոր ձևերը դեռևս չեն տիրապետում, այլ հինն ու նորը հավասարապես օգտագործվում են, այսպես՝ «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» (ՀԹՏ, էջ 122), բայց և՛ «Փորձեցեր զմեղքն ու տեսեր» (անդ, էջ 194). ելան (ՀԹՏ, էջ 164), հասան (անդ, էջ 167), իջայ (ԳԱ, էջ 103), բայց և՛ էջ (ՀԹՏ, էջ 201), հնաս (ՆՀԲ, էջ 15), էանց (ՄՂ, էջ 101) ևլն:

Ինչպես այս, այնպես էլ այլ խոնարհման բայերի եզակի III դեմքում գտնում ենք ի նոր աճականը, ինչպես՝ իլաց (ՆՔԴ, էջ 57), իխած (անդ, էջ 56), իհան (ԱԱԱԱ, էջ 4), իառ (անդ, էջ 5), իղիր (անդ, էջ 5) ևլն:

Ի, ա և ու խոնարհման բայերն ունեն ֆուլյն գրսևորումները, ինչ որ նախորդ շրջանում:

Արժե հիշատակել մի քանի մասնակի երևույթներ. տրամիմ բայը սպասվող տրամեցաւ ձևի փոխարեն գտնում ենք տրամաւ ձևով՝ «Տրամաւ երէցն ի յիր մտի» (ՄՂ, էջ 101): Քողով սպասվող քող, եքող ձևերի փոխարեն ունի քողաւ՝ «ամէնն թողաւ Երևան» (ԶԱՕ, էջ 107): Արբեճալ բայը գտնում ենք արբայ ձևով. «Ի բուրմանէ հոտոյն արբայ» (ԳԱ, էջ 223), նույնիսկ ասել՝ ասաւ ձևով՝ «Ըսպահանայ բերած զիրն նշանց տվի, ասաւ՝ լաւ» (ԶԱՕ, էջ 100): Վերևի ձևերն, անշուշտ, սխալ համարել չի կարելի, քանի որ հայերենի

խոսվածքներում այսօր էլ այս ձևերը օրինաչափ են: Այս տեսակետից հետա-  
քրքրական է, որ ժողովրդական կանգնիմ «կանգնել» բայը ևս ունի -ալ վեր-  
ջավորություն՝ «Կանգնալ ի վերայ ոտաց և թուղթն ի յափին» (ԳԱ, էջ 233):

Գրաբարյան ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի անցյալ կատարյալում  
բաղադրիչը չի արտահայտվում, ինչպես՝ փախար (ՄՂ, էջ 95), զարթալ  
(ԱԱԱԱ, էջ 321), թռալ (անդ, էջ 5), կորալ (ՉԱՕ, էջ 161) ևլն: Ի բաղադրիչը  
հանդիպում է գրաբար շարադրանքի կամ գրաբարյան արտահայտությունների  
մեջ, ինչպես՝ «Ղօղեալ յինէն թափեալ, թէ մեռանիմ ես» (ԳԱ, էջ 158):

Պատճառական բայերում, եզակի III դեմքում -ուց վերջավորությունը  
տիրապետող է, ինչպես՝ ուսուց (ԳԱ, էջ 138), խաղեցուց, նստուց (ԱԱԱԱ,  
էջ 321), բանացրուց (ՉԱՕ, էջ 124), ֆուրացրուց (անդ, էջ 140) ևլն: Սակավ  
կիրառությունում է հանդիպում են նաև -ոյց վերջավորությամբ ձևեր, ինչպես՝  
զօրացոյց (ՀԹՏ, էջ 199), կացոյց (ՄՂ, էջ 101), ցաւեցոյց (ԳԱ, էջ 226):

Անցյալ կատարյալ ժամանակի դրսևորումների մասին բերված փաստերը  
ամփոփելով՝ կարելի է ասել, որ մեր լեզվի այս շրջանում դեռևս շատ են բազ-  
մազանությունները, գրաբար ու աշխարհաբար զուգահեռ դրսևորումները. այս  
իմաստով քերականական մի «համայնապատկեր» է Ամիրդովլաթ Ամասիացի  
բժշկապետի աշխատության հետևյալ հատվածը, որ մեջ ենք բերում ամբող-  
ջությամբ՝ ընդգծելով անցյալ կատարյալով դրված բոլոր բայերը, իսկ գրա-  
բար լեզվի համեմատությամբ կատարված փոփոխությունները ցցուն դարձնե-  
լու համար, որտեղ պետք է, փակագծի մեջ տալիս ենք մեր հին լեզվում ըն-  
դունված ձևը. «Եւ քաղաք մի կայ, որ այնոր՝ Մուլթան կասեն, Ա մարդ մըն ի  
այս պէշէս կէս մթխալ կերաւ, և յայն պահն պոնկներն ուտեցաւ (-ուտեան  
կամ ուտան), և աշուին ի տեղացն ի դուս ելաւ (-ել[իւ]), եւ ընկաւ (-անկաւ),  
ու ինք գինք շի գիտացաւ (-ոչ գիտաց), և զկէս դրամ ճատվարն տրորեցիմ, եւ  
ի կաթն խառնեցին, որ խմեց (-խմեաց), և ի Ա ժամու յետեւ սկսաւ փսխել-  
ցեղ ու ցեղ գուն էր. եւ ի այն փսխելուն հոտէն՝ այնոք որ ի ան բոլորքն էին,  
անխելացան և անկան, որպէս հարբած. եւ յետոյ՝ խելքն ի վրանին եկաւ  
(-եկն). և այլուի կէս մթխալ ճատվար տրորեցիմ և գինով խմցուցիմ (-խմե-  
ցուցին). եւ այլուի փսխեց (-փսխեաց) խիստ. եւ յետոյ՝ բուն եղաւ (-եղւ). եւ  
յորժամ զարթաւ (-զարթեաւ) ի քնուն՝ շատ ֆրտնեցաւ. և կերակուր ուզեց  
խալսեցաւ» (ոսովական բառեր—ՍԱ—ԱԱԱԱ, էջ 320—321):

Գրաբարի համեմատությամբ ի՛նչ կարգի փոփոխություններ ենք նկա-  
տում վերևի հատվածում.

ա) Կրավորակերպ -այ, -ար, -ալ վերջավորությունները կորցրել են իրենց  
իմաստը, դրվում են ինչպես շեզոք (ելաւ, եկաւ), այնպես էլ ներգործական  
սեռի պարզ բայի վրա (գիտացաւ).

բ) Ի թույլ բաղադրիչով բայերն իրենց ըմբռնումը կորցրել են (ուտեցաւ,  
զարթաւ).

գ) Գրաբարի բայաձևը կրել է հնչյունական փոփոխություններ (փսխեց,  
խմեց, խմցուցին, ընկաւ).

դ) Կազմվել են նոր բայաձևեր (ուզեց, խալսեցաւ):

Այս բոլորի հետ մեկտեղ վերոհիշյալ հատվածում կան ձևեր, որոնք նույ-  
նանում են գրաբարի հետ (սկսաւ, անկան, քրտնեցաւ, խառնեցին, տրորե-  
ցին):

Մի խոսքով՝ մեր լեզվի այս շրջանում այսօրվա ըմբռնմամբ միօրինա-

կանացած, կուռ համակարգի վերածված խոնարհման համակարգ դժվար է գտնել, այդ պիտի առաջանար ավելի ուշ՝ XIX դ. երկրորդ կեսին:

#### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Այս շրջանում ևս հորդորական հրամայականի կիրառության ոչ մի դեպքի չենք հանդիպում: Բուն հրամայականի դրսևորումները, նախորդ շրջանի համեմատությամբ, ունեն հետաքրքրական նորություններ: Այժմ տեսնենք ըստ առանձին խոնարհումների:

Ե խոնարհման պարզ բայերի հրամայականի եզակիում տիրապետողը -է վերջավորությամբ ձևն է, ինչպես՝ խառնէ՛, տրորէ՛, ծեփէ՛, ծեծէ՛, (ԱԱԱԱ, էջ 152), ծեծէ՛, մաղէ՛, շաղէ՛ (անդ, էջ 27), խնամէ՛, ծածկէ՛, վառէ՛ (ԳԱ, էջ 165), յիշէ՛, սարսափէ՛, գովէ՛ (ՄՆ, էջ 143), փալէ՛ (ՆՔԴ, էջ 46), պատուէ՛, անհծէ՛, սիրէ՛ (անդ, էջ 84), սիրէ՛ (ՀԹՏ, էջ 123), ցուլէ՛ (անդ, էջ 124), պատուսէ՛ (անդ, էջ 92) ևլն: Պատահում են նաև -եա՛ վերջավորությամբ ձևեր, ինչպես՝ պահեա՛, ատեա՛, խոստովանեա՛ (ՆՀԲ, էջ 92), պահեա՛, առաջնորդեա՛ (ՄՂ, էջ 129), ակնարկեա՛, լուսաւորեա՛ (ԳԱ, էջ 103), սակայն այս ձևվերը կիրառում են միայն վերոհիշյալ հեղինակները և այն էլ՝ գրաբար շարադրանքի մեջ: Նախորդ ձևերի կենսունակությունը շեշտելու համար ասենք, որ ո՛չ Ամիրզովլաթը, ո՛չ Նահապետ Քուչակը, ո՛չ էլ Թլկուրանցին գրաբարաձև հրամայականի կիրառության մեկ ձև իսկ չունեն, մյուս կողմից՝ և՛ Նաղաշ Հովնաթանը, և՛ Գրիգորիս Աղթամարցին միաժամանակ օգտագործում են հրամայականի -է վերջավորությամբ ձևեր, ինչպես՝ երզէ՛, եղանակէ՛ (ԳԱ, էջ 132), պահէ՛, հարէ՛, շարէ՛ (ՆՀԲ, էջ 90), փաղէ՛, աղէ՛, մորթէ՛ (անդ, էջ 149) ևլն):

Ե խոնարհման պարզ բայերում որպես հնչյունափոխական պարզ երեվույթ սկսված լեզվական այս իրողությունը (պարեա՛ > պարէ—եա > է) տարածվել է նաև ի խոնարհման պարզ բայերի վրա, ինչպես՝

«Մէկ խօսէ՛, սիրտս հովանայ» (ՆՀԲ, էջ 69):

«Ա՛յ իմ գեղեցիկ պատկեր որ աչերդ է ծով տերինտաս,

...Այրով դուն ինձի հայէ՛ որ լինամ հետ քեզի հաւաս» (ՆՔԴ, էջ 77):

«Եւ յորժամ ուզենաս որ ի բան տանիս՝ զբ ոտացդ լերբանքն աւծէ այս ձիթովս, և յանկողին մո՛ւտ և պառկէ՛» (ԱԱԱԱ, էջ 180):

Լեզվական այս իրողությունը հետագայում օրենքի ուժ ստացավ արևմտահայ գրական լեզվում, որտեղ է և ի խոնարհման բայերի եզակի հրամայականն ունի է վերջավորություն (լսէ՛, սուրվէ՛—տե՛ս Ա. Այտընյան, ՔՔ, էջ 56—57):

Այսպիսով, այս շրջանում ի խոնարհման պարզ բայերի գրաբարաձև -եաց վերջավորությունը գրեթե չի օգտագործվում: Ինչքան որ ուշադիր ենք եղել, գրաբար շարադրանքում հանդիպել ենք միայն 2 օրինակի.

«Հայեա՛ց պատկերս ի մանկութեան» (ՀԹՏ, էջ 202):

«Նայեա՛ց մէկ ընդ իս աշօքըդ մէստան» (ԳԱ, էջ 208):

Թլկուրանցու մոտ հանդիպում ենք նաև կամեց հնչյունափոխված ձևով մեկ օրինակի. «Վամե՛ց դու ինձ հոգի, և՛ ես կու կամիմ քեզ» (Տաղեր, էջ 145):

Սակայն այս շրջանում առավել հետաքրքրական են Ե խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերի հրամայականի -իւ վերջավորությամբ ձև-

վերը, ինչպես՝ «ի մեր պաղչիցս ելի՛ր գընա» (ԳԱ, էջ 130): «Եւ իր հունտն գրած է ի վերայ պէին՝ ի պզրնուն, գտի՛ր և կարգա՛» (ԱԱԱԱ, էջ 111) ևլն:

Նման վերջավորութիւններով գրսևորումներ ունեն նաև ի խոնարհման պարզ բայերը, ինչպես՝

«Դադարեա՛ ի շարեաց, բարեաց հետևի՛ր,

Դուռն բաց գարտիդ և խոստովանի՛ր (ՄՆ, էջ 137):

«Նայեաց մէկ ընդ իս աշօքըդ մէստան,

Կամ քաղցրիկ խօսի՛ր կամ տո՛ւր պատասխան» (ԳԱ, էջ 208):

«...Գընա, շրջի՛ր, յայլ տեղ և զնա որոնէ» (անդ, էջ 229):

«Ե՛կ, ինձ մօտ նստի՛ր, ինչ գանգատ ունես՝ ինձ ասայ, կարմիր վարդի-թէր» (ՆՀԲ, էջ 29):

-Իր վերջավորութիւնն, անշուշտ, գրաբարի մյուս ածանցավոր բայերի եզակի հրամայականի ձևն է (հմմտ. գրաբարի շիջի՛ր, գոհացի՛ր, գարթի՛ր ձև-վերի հետ), որ համաբանութիւն և ընդհանրացման օրենքով տարածվել է և (պարզ և ածանցավոր) և ի խոնարհման պարզ բայերի վրա: Հայտնի է, որ հրամայականի այս վերջավորութիւնը հետագայում տիրապետող դարձավ արևելահայ գրական լեզվի մեջ:

Ե խոնարհման ածանցավոր բայերը միաժամանակ ունեն գրաբարաձև դրսևորումներ, ինչպես՝ տե՛ս (ՀԹՏ, էջ 191), գի՛տ (ԱԱԱԱ, էջ 381, 407), ե՛լ (ԳԱ, էջ 254), ա՛րկ (ԳԱ, էջ 47, 121), հա՛ն (ԱԱԱԱ, էջ 121, 386) ևլն: Սրանց հոգնակին կազմվում է -էք վերջավորութիւնն ավելացումով (շեշտի տակ), ինչ-պես՝ տեսէ՛ք (ՆՀ, էջ 25), պագէ՛ք (ՆՔԴ, էջ 101) ևլն:

Ե խոնարհման պարզ բայերում, ի տարբերութիւն նախորդ շրջանի, առա-վել շատ են օգտագործվում հոգնակի հրամայականի արմատական-հիմքային ձևերը (ոչ ցոյական), ինչպես՝

«Ասի. «Կանչէ՛ք գայ տէր Աբրահամըն,

Թան ուղարկօղն զնա շիհանդամըն» (ՆՀԲ, էջ 153):

«Սեղանս լցեալ միրգ և ծաղիկ, շիինի վեր քաղէք,

Իշտահով կերէք, սրտով խմեցէք, ուրախ ծիծաղէ՛ք» (անդ, էջ 160):

«Ածէք, խմէ՛ք կարմիր գինի, խմողն ուրախ լինի» (անդ, էջ 180):

«Ես Ջաքարէս ասի. երփ որ կենում չէք, եկեք, թէ տուն, թէ այթի, թէ աջ-հաս, թէ շոր թէ պղինձ, թէ արծաթ, ինչ որ կայ, բաժնեցէք, ձեր յիսէն տա-րէք, պահէ՛ք, կամ տվէ՛ք Գրիգորն պահի» (ԶԱՕ, էջ 117) ևլն:

Ինչպես տեսնում ենք, այս ձևերը առավելապես Ում ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների մոտ են հանդիպում: Մյուս հեղինակները հրա-մայականի հոգնակին ընդհանուր առմամբ ճիշտ են կիրառում, ինչպես՝ աճե-ցէ՛ք, շրջեցէ՛ք (ՀԹՏ, էջ 163), գոչեցէ՛ք (ՄՂ, էջ 138), պահեցէ՛ք, յիշեցէ՛ք (ՆՔԴ, էջ 102) ևլն: Եվ իրոք, հրամայականի կազմութիւնն ոչ ցոյական ձևերը արդեն թափանցել են արդի գրական հայերենի մեջ: Մամուլում, գրականու-թիւնն մեջ, առավելապես բանավոր խոսքի մեջ ամենուրեք հանդիպում են, նույնիսկ աշխատում են դուրս մղել ցոյական հիմքով կազմված ճիշտ բայա-ձևերը, այն աստիճանի, որ շատ հայագետներ կարծում են, որ պետք է ընդուն-վեն որպես գրական ձևեր: Մեր կարծիքով, խոսքի տնտեսման պարագան (մեկ վանկ զեղչվում է՝ պարեցե՛ք-պարե՛ք) այս դեպքում վճռական դեր է կատա-րում:

Քերել, ածել, հանել բայերը ունեն արմատական (ոչ ցոյական) ձևեր, ինչպես՝ հա՛ն (ՀԹՏ, էջ 124), բե՛ր (ՄՆ, էջ 104), ա՛ծ (ԱԱԱԱ, էջ 180), ածե՛ք (ՆՀ, էջ 180):

Ասել բայը եզակիում ունի ասա՛ (ՆՀԲ, էջ 29), իսկ հոգնակին գտնում ենք ասե՛ք (ՀԹՏ, էջ 204, ՆՔԴ, էջ 101) ձևով:

Ա խոնարհման բայերի հրամայականի դրսևորումներում փոփոխություն չենք նկատում. ինչպես գրաբարում, եզակին հանդես է գալիս շեշտակիր անցյալի հիմքով (ց-ի անկումով). օրինակ՝ խաղա՛ (ՆՀԲ, էջ 73), խղճա՛ (ՆՔԴ, էջ 60), կարդա՛ (ԱԱԱԱ, էջ 111) ևլն, իսկ հոգնակին՝ անցյալի բայահիմքի վրա -էք վերջավորությունն ավելացնելով. գնացե՛ք (ՆՀԲ, էջ 25), ողբացե՛ք (ՄՆ, էջ 152), լացե՛ք (անդ, էջ 152):

Ա խոնարհման ածանցավոր բայեր՝ դարձի՛ր (ՀԹՏ, էջ 178), իմացի՛ր, ուրախացի՛ր (ՆՀԲ, էջ 38), յիմացե՛ք հասկացե՛ք (ԱԱԱԱ, էջ 24) ևլն:

Ու խոնարհման բայերի հրամայականի հետևյալ օրինակներն ունենք՝ թո՛ղ (ԳԱ, էջ 212, ՄՆ, էջ 131), ա՛ն (ՆՔԴ, էջ 51), առե՛ք (անդ, էջ 101): Լնու բայը եզակի հրամայականում ունի լի՛ց (ԱԱԱԱ, էջ 121, 175, 346, ՄՆ, էջ 102) ձևը:

Ինչպես նախորդ շրջանում, ի թույլ բաղադրիչով բայերի միայն եզակիի ձևեր են հանդիպում, որոնք ունեն -ի՛ր վերջավորություն. զարթի՛ր (ՀԹՏ, էջ 145), փախի՛ր (ՆՀԲ, էջ 89, 139), հանգի՛ր (ՀԹՏ, էջ 208):

Նախորդ շրջանի նման հրամայականն արտահայտվում է ինչպես գրաբարյան (զարթո՛ւ, ՄՆ, էջ 182, հանգո՛ւ ՆՀԲ, էջ 124, ապրեցո՛ւ ՆՔԴ, էջ 129), այնպես էլ նորակազմ վերջավորություններով, ինչպես՝ իմացո՛ւր, ուրախացո՛ւր, իմացո՛ւր (ՆՀԲ, էջ 160):

Այս շրջանում, անշուշտ, տիրապետողը նոր վերջավորությամբ ձևերն են: Ավելին. Ամիրզոյաթի մոտ -ուր վերջավորության ր հնչյունը արդեն մաշվել ընկել է, ինչպես՝ «Ա՛ն զջուրն բողկին և եռցո՛ւ վարդի ձիթով, և յականջն կաթեցո՛ւ» (ԱԱ, էջ 108). «Եւ որ կին որ դժար ծնանի, քիչ մի տրորէ՛ և խմցո՛ւ ճուլապով» (անդ, էջ 321). «Եւ զջուրն ի վերէն կամաց ի վայր վաթէ, եւ լուքն մնայ, եւ շորցո՛ւ, և այլուի լոսէ՛ և ի բան տա՛ր» (անդ, էջ 202): Այսպես և՛ տափկցո՛ւ (անդ, էջ 139), եռցո՛ւ (անդ, էջ 207), կաթեցո՛ւ (անդ, էջ 459) ևլն: Կպուցանել բայի հրամայականն ունի կպու ձևը՝ «Մեծէ՛ և մաղէ՛, եւ սամխի ջրով շաղէ՛, եւ կպո՛ւ այն պատն որ կրով ծեփած լինի, որ շորնայ» (ԱԱԱԱ, էջ 527):

#### ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Գրաբարի ստորադասական եղանակի բայաձևերի անգործածության մասնվելու հետևանքով ըղձականի ձևերը առավել հաճախակի են հանդիպում այս շրջանի հեղինակների գրվածքներում: Նույնիսկ Մարտիրոս Ղրիմեցին և Գրիգորիս Աղթամարցին, որոնց խոսքը այս շրջանի մյուս հեղինակների հետ համեմատած առավել գրաբարաբանություններ ունի, օգտագործում են ըղձականի բազմաթիվ ձևեր, գրանցով հանգավորում են իրենց բանաստեղծական խոսքը, ինչպես՝

«Ելէք երթանք այսինչ գետնէն,  
Նստէնք ծաղկեալ մէջ շարտախին,  
Ձուկն հանենք տանք կրակին.  
Մեզէ անենք, խմենք գինին» (ՄՂ, էջ 139):

«Պուրզազ, դու հիմանց ֆանդիս,  
Քո շինուածքդ ամէն կործանի,  
Աւեր ւ անտերունչ մնաս» (անդ, էջ 111):

«Գանգատ մ'առնեմ սիրով քեզ,  
Թէ միտ դրնես ու լըսես,  
Զծառայս քո անտես շառնես,

Զխորհուրդ սրբտիս յայտնեմ քեզ» (ԳԱ, էջ 155):

«Այգի՛, ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան,  
Ընդ է՛ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,  
...Քակի (Կ=բանդվի) քո ամուր պատդ, դառնաս աւերակ.  
Չօրնա ճուղդ ու տերևդ ծառոցըդ շիտակ,  
Ամէն ոտրն խաղա ի քեզ համարձակ.

Վերնա բուս ու բանճար ամէն կանաչ տակ» (ԳԱ, էջ 225):

Այս շրջանի հեղինակների գրվածքներում ևս հանդիպում ենք բոլոր 4 խառնաբնույթի քայտերի ըղձական եղանակի երկու ժամանակների հարչուրավոր կիրառությունների, ինչպես՝ «Եւ զայս գիրքս շինեցաք և ստուգեցաք շատ բառերով և պատմություններով. զի որք կարդան՝ հեշտութեամբ յիմանան» (ԱԱԱԱ, էջ 2):

«Եղբայրք, յորժամ բազմիք սեղան,  
...Զլնի շատ խմէք դառնաք բոց,  
[Եւ] սահմանէք կռիւ, տնկոց,  
Գլուխ ծակէք՝ արիւն ի ծոց,  
Զեր ծնողաց սիրտն շինէք խոց» (ՆԶԲ, էջ 188):

Ըղձականի անցյալ ապանու կիրառության լավ նմուշ է Քուչակի հետևյալ հայրենը, որ բերում ենք ամբողջությամբ.

«Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, զօրն ըզքո տուն մտնուի,  
Ան բարձր մօյտան շարտախդ ես ի հոն բուն մը շինէի.  
Ոնց որ մութն մթանայր, ցածնայի ծոցդ մտնուի,  
Ոնց որ լուսըն լուսանայր, բարձրանայի ի բունս մտնուի.  
Ես ապրշմէ խուշախ, զօրն զքո միջաց գիրկ ածէի,  
Կամ քաղցըր նուան գինի, զօրն ըզքո փարշդ պիտէի,  
Առնիր ու բերնիդ դրնիր, ցածնայի դունչդ պագնէի,  
Կամ ապրշմէ կոճակ, որ շինիցդ գիրկ ածէի» (Դիվան, էջ 73):

Օրինակները կարելի է տասնուպատկել, հարյուրապատկել: Ըղձական եղանակն իր լրիվ իրավունքների մեջ է, խոսքի համար փնտրովի ու անխուսափելի դարձած բայաձև: Այս շրջանում ևս ըղձականն արտահայտվում է թող, թէ, որ շողկապներով և եղանակավորող բառերով, ինչպես՝ թող մնաս (ՀԹՏ, էջ 153), թող եփէ, ուտէ ցանէ (անդ, էջ 73), թող ֆաղեմ (ՆԶԲ, էջ 34), թէ պահես, թէ մնաս (ՀԹՏ, էջ 169), թող լուսնան (ԱԱԱԱ, էջ 171), որ մտանես (ԳԱ, էջ 212) ևլն, ևլն:

Հետաքրքրական մեկ օրինակ ունի Մարտիրոս Ղրիմեցին, որն ըղձական բայաձևն օգտագործում է թուրքերենի տէյի (=ասելով) եղանակավորող բառով (հանգավորելու նպատակով).

«Նլար փախար գաղտագողի,

Սահաթի փողն ուտեմ տէյի (Բանաստեղծթ. էջ 95):

Ամիրզովլաթ Ամասիացին ու Ն. Քուչակը ըղձական եղանակը հաճախ օգտագործում են նա (նէ) եղանակավորող բառով, ինչպես՝ «Եւ մէկ դեղի մի տաք կու ասենք, մեկնութիւնն այն է, որ յորժամ մարդ վինքն ուտէ նա, իր բնական տաքութենէն այլ աւելի տաքութիւն երեւցնէ մարդոյն ի անձն... Բայց այս դեղս մուտ այնէ, եւ աւելի շայնէ, որ յիմացուի նա՝ ասեն թէ յառաջի աստիճանն է. գերդ՝ ըստախօտոսն. եւ թէ դեղին ուժն մուտ այնէ, կա՛մ տաքութիւնով, կա՛մ հովութիւնով, բայց զեն շառնէ նայ (= շվնասի), ասեն թէ երկու աստիճանն է» (ԱԱԱԱ, էջ 9): Ահա և մի երկու օրինակ Քուչակից.

«...Թէ ես լամ նա հաղ ունիմ, որ գիտեմ ինչ եմ կորուսել» (ՆՔԴ, էջ 50),

«Դաւիթ մարգարէն ասաց՝ թէ շարկամ ունիս նա սիրէ՛» (անդ, էջ 84):

«Ամենայն ծառ պտուղ կուտայ, թէ ուրին շի տայ նա՝ համ ի՛նչ» (անդ, էջ 55) ևլն:

Ըղձական եղանակի բայաձևերն օգտագործվում են նաև կրավորական ձևերով՝ ինչպես գրաբար, այնպես էլ նոր, աշխարհաբար կազմությամբ, օրինակ՝ «Ընդ քո ընկերի, Ընդ համախոհի, Ընկեր նեստորի Ընկղմիք (= ընկրղմվեք) յերկրի, Ըղունկդ քափի (= թափվի), Ընքվիդ բորտի» (= բորտովի—ՄՂ, էջ 118): «Եւ թէ ուտուի (= ուտվի)՝ աղեցն զեն է» (ԱԱԱԱ, էջ 325): «Եւ յորժամ զհաճար ըլ թէսն տրորեն նա, պիտի որ այս մուխալլասաին հնտէն և կամ ճղէն ի մէջն գտնուի (= գտնվի—ԱԱԱԱ, էջ 372): «Եւ թէ ծաղկունք են, որպէս մանուշակն, եւ նոճէսն, և զանպախն, եւ որ սոցին նման է, ան ատենն ժողովել կու պիտի՛ որ լման հասնի, և բացուի, եւ շի վաթի եւ շի փոփոխի ի գունէն» (անդ, էջ 21): «Զգուշութիւն քեզ գրեցի. Որ շխաբուիս (= շխաբվես) հոռոմ պառուի» (ՄՂ, էջ 104) ևլն:

Սակայն նախորդ շրջանի համեմատությամբ ըղձական եղանակի կիրառության առավել կարևոր առանձնահատկությունը ապառնի ժամանակում և խոնարհման շեղոք և ներգործական սեռի բայերի (ներգործական սեռի կիրառությամբ) եզակի III դեմքի ՝ի վերջավորությունն է: Ստորև բերում ենք տարբեր հեղինակների մոտ նկատված օրինակները. «Եւ թէ մեղրով խառնես և տաս՝ աւգտէ սաքթաին, եւ եարաղանին. եւ զզլուխն կու թեթևացնէ, և շի թողուր որ շուտ նարբի մարդն» (ԱԱԱԱ, էջ 96): «Շահն մարդ ղրկեց, այս Գօրգին Միրզեն տարաւ Ըսպհան, քուրբացնի, անունն փոխի, դնի Շահբանդայ խան» (ԶԱՕ, էջ 140): «Տէր Աստուած զմեզ ազատի այս պարտքերուս, այս շարշարանքիս» (անդ, էջ 163):

«Լաւ է՝ քո պարոն կենդան շի,

Քեզ տեսնողն ո՞նց ամանչի,

Քանի քո ըսկեսուր տան շի՝

Եկ այվանն,

Բեր սեղանն,

Քեզ հետ խմի, տաղեր կանչի

Յովնաթանն» (ՆՀԲ, էջ 39):

«Ով մոնթ կուզես եանայ-եանայ,

Հիմայ գայ, լսի՛ զարմանայ» (անդ, էջ 118):



«Փամհարն գնա, ժամ կանչի,  
Ստեփանն գայ, հաւն շանչի,  
Տէր Գրիգոր լսի, ղանչխանչի,  
Ետ դառնայ, տրամի և մաշի» (անդ, էջ 142):

Պայմանական եղանակում այս նույնի դրսևորում ունենք Զաքարիա Ագուլեցու մոտ. «Թէ որ տէսնու, խան ինքն, բէկ ինքն, ղազի ինքն, ինադ կանի (=կանի), բո թումանով պրծանիլ չէ (=չի պրծնի)» (Օրագր. էջ 101):

Հետաքրքրական է, որ այս ձևերը հանդիպում են ո՛չ միայն Ում ճյուղի ներկայացուցիչ հեղինակների մոտ, այլ նաև Ամիրդովլաթ Ամասիացի բժշկապետի մոտ: Հայտնի է, որ արևելահայ գրական լեզվում ևս նման հնչյունափոխված ձև ենք գտնում (գրեմ, գրես, գրի,—երգեմ, երգես, երգի): Գրական լեզուն այս ձևը վերցրել է, անշուշտ, Ում ճյուղի բարբառներից, մասնավորապես Արարատյան բարբառից: Պրոֆ. Ա. Ղարիբջանն իր «Հայ բարբառագիտություն» (Երևան, 1953 թ.) աշխատության մեջ գրում է. «Ըղձական և պայմանական եղանակները (իմա՝ Արարատյան բարբառի—ՍԱ) բոլորովին նման են գրական լեզվին» (անդ, էջ 226): Ասենք, Ում ճյուղի մյուս բարբառներում ևս նույն այս հնչյունափոխությունը գտնում ենք, ինչպես՝ Ղարաբաղի բարբառ. կյիրէմ, կյիրէս, կյիրի (անդ, էջ 239). Ագուլիսի բարբառ. սիրեմ, սիրես, սիրի (անդ, էջ 258) ևն: Արդ, ի՞նչ հնչյունափոխություն է սա եթե ե>ի՝ հայերենի համար ոչ անսովոր հնչյունափոխության երևույթը չէ<sup>10</sup>, ապա մնում է ենթադրել, որ ի խոնարհման բայերի ըղձականի համապատասխան ձևի ազդեցությամբ է կազմված (ապրիմ, ապրիս, ապրի): Կարելի է ենթադրել, որ այս հնչյունափոխությունը կարող է աղերսակցություն ունենալ ե խոնարհման բայերի ժխտական կազմության շեմ մանիլ (=չեմ մանի), շեմ թարկիլ (=չեմ թարկի, շեմ թողնի), շեմ ուտիլ (=չեմ ուտի) ձևերի հետ:

Մեր լեզվի այս շրջանում ևս ըղձական եղանակի բայաձևերն իրենց գրաբարյան սկզբնաձևերի բազմիմաստությունը պահում են. պայմանական եղանակի իմաստով կիրառության բազմաթիվ դեպքեր ունենք, ինչպես՝ «Գիշերն ի յերազն տեսաւ թէ մարդ մի եկաւ ասաց, թէ՛ Յամէն ար վաղվնիւրց տուն զքո գոզն Գ տարպայ կուլ տուր, ողջանաս (=կբուժվես). արաւ այսպէս նա՝ ողջացաւ» (ԱԱԱԱ, էջ 465): «Եւ այս բառերն որ ճլէ տուող, եւ հայող եւ կտրող որ կու ասենք, յետեւ պատմենք (=կպատմենք), թէ Աստուած կամենայ» (անդ, էջ 8):

«Շուտով հասնիս (=կհասնես) սիրուս՝ թէ դու անսուտ ես» (ՀԹՏ, էջ 146):  
«Մաքուր և զուտ ըմպանակիս,  
Ով սիրելի, երբ հանդիպիս  
...Հնգէն, վեցէն վեր շանցանիս,  
Թէ չէ յետոյ լինիս ճառիս,  
Շատ վատ ասես (=կասես) Մարտիրոսիս» (ՄՂ, էջ 135):

<sup>10</sup> Եւ, ես (բայական իմաստով) բառերի ե>ի հնչյունափոխության դեպքեր կան Նաղաշ Հովնաթանի մոտ. «Գեղեցիկ պատկեր իս, դու, իմ պատելի» (Բանաստեղծ. էջ 18). «Սիրամարգ, ընդէ՛ր տրտում իս» (անդ, էջ 194). «Խապար շիմ՝ թէ քեզ ի՞նչ արի» (անդ, էջ 207): Երևույթը խորթ չէ նաև այլ բարբառների համար, մասնավորապես՝ Թբիլիսիի բարբառի համար: Ավելին, վերևի ձևերը գուցե թե վերջինիս ազդեցությամբ տեղի ունեցած լինեն:

«Աշխարհիս մի՛ հաւատար, զօրն ի բուն գէժ սուտ կու խօսի,  
...նաբէ, թէ՛ ուրախ պահեմ (=կպահեմ) ու առնեմ (=կանեմ) զօրերդ  
ի բարի,  
ի մէջն ի ծովուն տանի ու պահէ ի տարտարոսի» (ՄՆ, էջ 125) ևլն:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Այս եղանակի բայաձևերը, նախորդ շրջանի համեմատութեամբ, կիրառու-  
կան առանձնահատկութիւններ չունեն. կազմվում են ըղձականի բայաձևերի  
վրա կու մասնիկի ավելացումով: Բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ  
դրվում է կու: Զայնավորով սկսվող բայաձևերից առաջ սովորաբար դրվում է  
կու, սակայն կու մասնիկը կ'հնչունափոխված ձևով կարող է դրվել բայա-  
ձևին կից: Ստորև տալիս ենք պայմանական եղանակի կիրառութեան մի քանի  
օրինակներ.

«Երևոտ եմ ես քեզ հաւան, թանց որ դու ինձ ես,  
Մառայ եմ քեզ անձամբս, որ զիս շի խոցես (ժխտական պայմանական—  
ՍԱ):

Կամե՛ց դու ինձ հոգի՛ւ ես կու կամիմ քեզ,  
«Հոգի» ասայ. դու ինձ, լ՛ ես կու ասեմ քեզ» (ՀԹՏ, էջ 145):

«Զասելոյ բանն քո տանն շասես,  
Լեզուդ կու սովբի՛ ալոց էլ կասես» (ՆՀԲ, էջ 90):

«Իմ եա՛ր... կամ առ զիս ծոցդ ի քուն, կամ տէսթուր տուր երթամ ի տուն.  
— Ոչ կ[՛]առնում ի ծոցս ի քուն, ոչ տէսթուր տամ երթաս ի տուն»  
(ՆՔԴ, էջ 53):

«Հալբաթէ Զաքարէն գայ. թէ որ յետի գայ, մարդ կու գայ, կու բերէ, շատ  
դարդիսար կուտան. ահա ձեզ գրեցի» (ԶԱՕ, էջ 98): «Այս պատճառէս առաջի  
յիշած Աստուածապովն ել ինձ Զաքարիա մայա շէ տալ, թէ՛ տանի, ախպօրն  
նման կու տայ խանի, բէկի, կու կորէ» (անդ, էջ 161) ևլն:

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Նախորդ շրջանի հետ համեմատած՝ պիտի եղանակիչով կազմված հար-  
կադրական եղանակի բայաձևերի կիրառութիւնն ավելի աշխուժանում և տի-  
րապետող է դառնում: Պիտի եղանակիչով հարկադրական բայաձևեր են օգ-  
տագործում այս շրջանի բոլոր գրողները, ինչպես՝ «Այլ ցեղ մըն այլ պատմեմ  
զգեղերուն զարութիւնն... և դեղեր կայ որ շատ պիտի եփի» (ԱԱԱԱ, էջ 20):  
«Եւ ասեր է Գրոցս ժողովողն թէ այս խոտիս է. շավիլայ ասէ, եւ պ. պարթա-  
րասք ասէ. եւ շատ անուանք ունի որ պիտի յիշուի» (անդ, էջ 109): «Եւ տերեւն  
որ եփած լինի՝ զնօզլան խափանէ, որ ի փողն պիտի իջնուր» (անդ, էջ 287):

«Թէ քոյ ընկերին դու շար կամենաս,  
Զարն քեզ կուգայ, անճար կու մընաս,  
Բեօհտան բաներէ պիտի հեռանաս  
...Անցաւոր ընչից շինի դառնանաս,  
Հող ես, եւ վերջն պիտի հող դառնաս» (ՆՀԲ, էջ 89):

«Պըտուկն է բացեր վարդոյս,  
Գարուն է հասեր այգոյս,  
Պիտի տեսնում կեանք և լոյս» (ԳԱ, էջ 273):

Նահապետ Քուչակը, Մարտիրոս Ղրիմեցին և մանավանդ Մկրտիչ Նաղաշը պիտի եղանակիչն օգտագործում են տի հնչյունափոխված ձևով, ինչպես՝

«Յորժամ յարութիւն լինի, փողն երեք ձայնիւ տի կոչէ.

Ով ասդէն բարի կացեր նա զ«Եկայք» ձայնն տի լսէ» (ՆՔԴ, էջ 85):

«Յաւուր միում գնեց հաւ մի,

Մեզ տի բերէր խահվէալթի» (ՄՂ, էջ 100):

«...Անուն քաղաքիդ որ կոչի Ահեօլ.

Հաց ու կեր շունի, միայն ջուրն է պօլ,

Վերջն տի մնա խարապա և չեօլ» (անդ, էջ 110):

«Զինչ բարի գործեցիր, նայ գայն տի տանիս:

...Ո՞վ շահաւ յաստէնէս, որ դու տի շահիս:

...Ո՞վ հասաւ մուրատին, որ դու տի հասնիս» (ՄՆ, էջ 137):

Սակայն, այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ պիտի բառը դեռ օգտագործվում է գրաբար լեզվում ունեցած իր բայական արժեքով, ինչպես՝ պիտի հանել (ԱԱԱԱ, էջ 23), պիտի առնուվ, կտրել (անդ, էջ 23), կաթեցնել պիտի (անդ, էջ 118), մեռնիլ պիտէր (ՆՔԴ, էջ 96) ևլն:

Ամիրզողվաթ Ամասիացի բժշկապետի լեզվին առանձնահատուկ է պիտի բառով ստորադասական կառուցվածքի նախադասութիւնների կիրառութիւնը. ինչպես՝ պիտի որ փորձեն (ԱԱ, էջ 4), պիտի որ պահես (անդ, էջ 24), պիտի որ փակէ (անդ, էջ 29), պիտի որ եփէ (անդ, էջ 39), պիտի որ դնեն (անդ, էջ 45), պիտի որ լինի (անդ, էջ 124), պիտի որ շերթայ (անդ, էջ 145), պիտի որ խառնես (անդ, էջ 316), պիտի որ եոցնես (անդ, էջ 335), պիտի որ լսմուի (անդ, էջ 340) ևլն:

#### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ա) Անցյալ դերբայի -եալ վերջավորությամբ կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակների կիրառութիւնը, ի տարբերութիւն նախորդ շրջանի, նվազագույնի է հասցված. նախ՝ անցյալ դերբայով և լինիմ բայի հարադրությամբ կազմված ձևեր բոլորովին չեն հանդիպում, այլ եմ օժանդակ բայի հարադրությամբ միայն մի քանի ձևեր ենք գտնում. ինչպես՝ նուագեալ էր, բնակեալ են (ԱԱԱԱ, էջ 2), աւրհնեալ է (անդ, էջ 11), տուեալ է (ՄՆ, էջ 108), անկեալ է (անդ, էջ 112), մոռացեալ է (անդ, էջ 117), քաղեալ են (ԶԱՕ, էջ 130) ևլն:

Մեր լեզվի այս շրջանում անցյալ դերբայի այս կիրառութիւնը, թվում է, դուրս գրաբարաբանութիւն է, ինչպես՝ Նաղաշ Հովնաթանի հետևյալ բանաստեղծութիւն մեջ.

«Շատ շի խմէք զինչ արբեցեալ  
Աչքերդ արտասուօք թացեալ  
Թէ չէ կասեն մի յարուցեալ  
Խիզան կասեն. «է՞ր ես լացեալ»  
Մանր մանկունք իմացեալ  
Կասեն. «Այս մարդս է շեթացեալ»  
...Զալում գնի կարմր[ա]ցեալ

Քանի՜ փող ես փշացուցեալ» (Բանաստեղծք. էջ 187):

Նման կազմութուններում ներգործական սեռի բայերը, ինչպես գրարարում, արտահայտում են կ' ներգործական, կ' կրավորական սեռի իմաստ: Բ) Նկատելի է, որ այս շրջանում -ոց մասնիկով ապառնի դերբայաձևի կիրառությունը գրեթե վերանում է: Այս շրջանի նույնիսկ գրաբարամոտ գրվածքներում -ոց վերջավորութայամբ ապառնի դերբայի շենք հանդիպում: Բացառություն է կազմում, ինչքան էլ զարմանալի լինի, Նաղաշ Հովնաթանը, որի մոտ կիրառության միայն երեք դեպք կա: Ահա այդ օրինակները.

«Ես կատու եմ, ոտքս արագ,  
Մկանց ես խիստ եմ հակառակ,  
Ահա ամենքդ հասարակ,  
Զքեզ առնելոց եմ խայտառակ» (ՆՀԲ, էջ 97):

«Որպէս վանից շէթն խիտիր,  
Նման նմա բարուքդ շնթիր,  
Դատաստանին լինելոց են  
Հաւերն քեզ վրէժխնդիր:

...Տէրն Քրիստոս գայ ի յատեան,  
Զմեզ ժողովել յըշտեմարան,  
Մեծ դատաստան լինելոց է,  
Հոգիդ՝ մտնելոյ քաւարան» (անդ, էջ 139):

Առաջին քառատողը ամբողջութայամբ մի շարք ձեռագրերում շենք գտնում, իսկ հաջորդ երկու քառատողերում լինելոց (է) բայաձևի օգտագործումը, կարծում ենք, պայմանավորված է խոսքի բովանդակութայամբ, կարծես հեղինակը գրաբարյան քարացած ձևեր բերած տեղավորած լինի կենդանի խոսքի մեջ: Այսպիսով, մեր լեզվի այս շրջանում -ոց վերջավորութայամբ ապառնի դերբայի օգտագործումը զուտ գրաբարաբանություն է: -ոց մասնիկով կազմվող ապառնի դերբայի փոխարեն երկրորդական բաղադրյալ ժամանակում հանդես է գալիս -ու վերջավորութայամբ ապառնի դերբայ, որով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակները համապատասխանում են արդի գրական հայերենի ձևերին: Ծիշտ է, օրինակները գեռես քիչ են, բայց երևույթն արդեն կա: Ահա եղած օրինակները. «Եւ թէ յայն ատենն որ զտղայն բերելու լինի՝ կախէ, շուտ ծնի» (ԱԱԱԱ, էջ 555): «Մեք այս շուխէս Ուռումէլի բանաք ոչ, ծախինք ոչ, մեք ձեր փողն յետ տալու լինի[մ]ք» (ԶԱՕ, էջ 131): «Շմառնս բոթճ թուման սանադով խանին տալու կընի(?), տված կնի» (անդ, էջ 99):

Արդ, երկրորդական բաղադրյալ ի՞նչ ժամանակներ են օգտագործվում այս շրջանում: Նախ՝ նշենք, որ բացի Ամիրդովլաթ Ամասիացի բժշկապետից՝ մեր մյուս հեղինակների մոտ հանդիպող երկրորդական բաղադրյալ ժամանակների կիրառությունը սահմանափակվում է վերևում բերված օրինակներով: Իսկ Ամիրդովլաթն օգտագործում է բաղադրյալ ժամանակների հետևյալ ձևավորը. ա) անցյալ դերբայի -եալ վերջավորության -ել<sup>11</sup> հնչյունափոխված ձևով, Բ) հարակատար դերբայի -ած վերջավորութայամբ և լինի բայաձևի հարադրութայամբ: Պատահական չէ, որ մենք ասում ենք՝ լինի բայաձևի հարադրու-

<sup>11</sup> -եւ վերջավորութայամբ դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակի միայն մեկ օրինակ ունենք. «Եւ ազտէ այն աշիցն որ շուր լինի իջեւ» (=իջած է լինում՝ լինի—ԱԱԱԱ, էջ 579):

թյամբ, քանի որ եղած բոլոր օրինակներում (ներկա թե ըղձական ժամանակի կիրառությամբ) միայն այս բայածին ենք գտնում: Միջին հայերենի այս շրջանում երկրորդական բաղադրյալ ժամանակների կիրառությունները, ո՛չ գրաբարում և ո՛չ էլ արդի գրական հայերենում ունեցած կշիռն ու բազմաձևությունները շունեն: Անցյալ դերբայի —ել հնչյունափոխված ձևով և լինի բայածնով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակները համապատասխանում են արդի գրականի հարակատար դերբայով կազմվող համապատասխան ձևերին, ինչպես՝ «Բայց ասեր են թէ դեղերուն աղէկ ժամանակն այն է, որ Գաւել լինի» (= հասած է լինում կամ հասած լինի — ԱԱԱԱ, էջ 23): «Եւ զթարանկուպինն այսպէս ճանաչես... լանն այն է որ յիստակ լինի... եւ ի աղէկ խոտի վերայ լինի ընկել» (= ընկած լինի կամ ընկած է լինում)» (անդ, էջ 24): «...Եւ թէ տղտով եւ հոռոմ ձիթով ի զաւրուածին վերայ դնես՝ որ եղէզ և կամ փուշ մտել լինի (= մտած է լինում կամ մտած լինի), հանէ եւ ի դուրս քաշէ» (անդ, էջ 59): «Եւ այն մարդուն որ ոսկորն կտրել է՝ խմցնեն, յայն պահն բուսցնէ. եւ թէ ի տեղացն ելել լինի (= ելած է լինում կամ ելած լինի)՝ ի տեղն բերէ, խիստ փորձած է» (անդ, էջ 172) ևլն:

Վերևի մեր բերած բոլոր օրինակներում բայերը չեզոք սեռի են (հասնել, ընկնել, մտնել, ելնել), իսկ դա ցույց է տալիս, որ լինիմ բայի հարադրությամբ կազմություններում պարտադիր կերպով կրավորականի իմաստի արտահայտություն չկա: Ավելին. նույնիսկ ներգործական սեռի բայերը նման կազմություններում կարող են արտահայտել ներգործական սեռի իմաստ, ինչպես՝ «Եւ թէ այն մարդուն որ մահացու դեղ առել լինի (= առած է լինում կամ առած լինի)՝ ժբ գարէ ծանտութենովն տաս որ խմէ» (ԱԱԱԱ, էջ 40): «Եւ լանն այն է որ այն գայն ՈՍԿՈՐ կերել լինի» (= կերած է լինում կամ կերած լինի — անդ, էջ 152): «Եւ որ մահացու ԴԵՂ լինի խմել (= խմած է լինում կամ խմած լինի), որպէս զարարեհ, եւ ծովու լապրստակ... ասոնց ամենուն թրիաքն է» (անդ, էջ 189):

Գրաբարում, ինչպես հայտնի է, անցյալ դերբայով և լինիմ բայով կազմված բաղադրությունները առավելապես կիրառական են այն ժամանակաձևների համար, որոնք կրավորակերպ (կրավորական սեռի դարձնելու համար) դրսևորում չունեն: Բոլորովին պատահական չէ, որ նման կազմություններ առավելապես կրավորական նշանակությամբ անցյալ անկատար ժամանակում են հանդես գալիս, իսկ գրաբար լեզվում անցյալ անկատար բոլոր 4 խոնարհումներում ներգործակերպ և կրավորակերպ տարբերակված արտահայտություններ չունի: Մյուս կողմից՝ այս կազմությունները կիրառվում են այն բայերի հրամայականում, որոնք կրավորականի հարմար ձև չեն կարող ունենալ, ինչպես՝ արա՛, արարէ՛ք—արարեա՛լ լեր, արարեա՛լ լերուք, դի՛ր, դի՛ք—եղեա՛լ լեր, եղեա՛լ լերուք, տո՛ւր, տո՛ւք—տուեա՛լ լեր, տուեա՛լ լերուք ևլն:

Ճիշտ է, գրաբարում ևս վերևի կազմությունները պարտադիր կերպով կրավորականի իմաստ չեն արտահայտում, սակայն միջին հայերենում ներգործական սեռի բայերի հետ լինիմ բայի հարադրությամբ կրավորական իմաստի դրսևորումն այն աստիճան թուլացած է, որ դերբայը դրվում է նորակազմ կրավորականի ձևով, ինչպես՝ «Արճիճ... եւ թէ նաւոր տախտակ այնն եւ կապեն ի տեղն որ ջեղն քաշուել լինի (= քաշված է լինում), աւգտէ» (ԱԱԱԱ, էջ 70): «Եւ թէ ջրով եփեն, եւ այն մարդուն որ գոզն բռնուել լինի (= բռնված

է լինում)՝ աւագան առնես, բացուի» (անդ, էջ 152): «Զմիսն որ ի յակոռային տակէն կերուել լինի (=կերված է լինում)՝ բուսցնէ» (անդ, էջ 607) ևլն:

Ճիշտ շէր լինի կարծել, որ նման կազմութիւններում ներգործական սեռի բայերը կրավորական իմաստ չեն կարող արտահայտել: Ամիրդովլաթի մոտ մենք գտնում ենք նաև այդպիսի կիրառութեան դեպքեր, ինչպես՝ «Եւ թէ պախյու արդար եղով խառնես, որոյ ձեռքն և ոտքն նդքել լինի (=ճեղքված է լինում՝ լինի)՝ աւծես, աւզտէ» (ԱԱ, էջ 39): «Եւ թէ ի բերանդ առնուս՝ զտղրուկն ի խոշկէ հանէ, որ փակել լինի» (=փակված է լինում—անդ, էջ 81):

Վերևի ձևերին հակառակ՝ հարակատար դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակներում ներգործական սեռի բայերը միշտ արտահայտում են կրավորական իմաստ. ինչպես՝ «Մունաշշիֆ... այն դեղն է որ գիճութիւնն որ ժողված լինի (=ժողովված, հավաքված է լինում) ի կուրծքն ...հանէ և յիստկէ և սրբէ» (ԱԱԱ, էջ 19): «Անխինօս, ինքն խոտ մըն է որ ...տերեւներուն ծայրն նդքած կու լինի (=ճեղքված է լինում), եւ կամ բաժնած կու լինի» (=բաժանված է լինում—անդ, էջ 41): «Աստարատիղաւս. ինքն խոտ մըն է... նման է պապունաճի ծաղկին. եւ զագաթնին մէկ մէկէ զատած կու լինի» (=զատված է լինում—անդ, էջ 71): Այսպես նաև՝ «աւնիսն խառնած լինի» (անդ, էջ 69), «թէ լուացած լինի՝ սավտայ լուծէ» (անդ, էջ 186), «կաթն որ եփած լինի» (անդ, էջ 189) ևլն: Պատահական չէ, որ նման կազմութիւններում կրավորական սեռի հարակատար դերբայ շատ սակավ է հանդիպում, թեև մի երկու օրինակ ունենք՝ խառնուած լինի (ԱԱԱ, էջ 12), շաղուած լինի (անդ, էջ 126), կալուած լինի (անդ, էջ 321): Ունենք նաև խառնուած կեւայ (անդ, էջ 184):

Նման կազմութիւններում չեզոք սեռի բայերը ևս քիչ են գործածական: Ահա նկատված օրինակները. «մէջն ելած լինի» (ԱԱԱ, էջ 70), «մեռած լինի» (անդ, էջ 72):

#### ԱՆԿԱՆՈՆ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Անկանոն բայերն, անշուշտ, չէին կարող զերծ մնալ այս շրջանում խոնարհման մեջ կատարված փոփոխութիւններից: Նախ՝ գալ, տալ միավանկ բայերն ունենում են գալիս, տալիս անկատար դերբայի ձևեր, որոնցից էլ կազմվում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները, ինչպես՝ «Գ օրի ձուն էր գալիս, քամի, բօրան սաստիկ» (ԶԱՕ, էջ 134): «Սիմոնն գիր էր տալիս չուրի զ ամիս, որ փողն ժողովի» (անդ, էջ 70):

«Մարդ կայ՝ մեղաց մէջ տալիս է լողի» (ՆՀԲ, 91) ևլն:

Իսկ անկանոն խոնարհման այլ բայեր ունենում են —ում վերջավորութեամբ անկատար դերբայ և նրանից կազմված ներկա և անկատար ժամանակներ, ինչպես՝ «Է տարի այ, որ կոխ էին անում» (ԶԱՕ, էջ 53):

«Ասացի՛ անունդ շտամ,

Ապա բան ես անում խիստ խամ (ՆՀԲ, էջ 111) ևլն:

Նախորդ շրջանի համեմատութեամբ կատարված փոփոխութիւններն առավելապես դրսևորվում են անցյալ կատարյալ և հրամայական ձևերում: Այսպես՝ առնել և դնել բայերի անցյալ կատարյալում տարածված են արի (ՆՀԲ, էջ 37, ՆԲԳ, էջ 58), արիբ (ՄՆ, էջ 108), արեց (ՆՀԲ, էջ 25) կամ արաւ

(ՆՔԴ, էջ 44, 60), դրի՛ր (ՆՔԴ, էջ 45), դրի՛ք (ՄՂ, էջ 115), դրի՛ն (ՀԹՏ, էջ 165), իսկ հրամայականում՝ արա՛ (ՀԹՏ, էջ 153, ԳԱ, էջ 13, ՆՔԴ, էջ 45), արէ՛ք (ՄՂ, էջ 115, ԳԱ, էջ 22), դի՛ր (ԱԱԱԱ, էջ 121, 321, ՆՂԲ, էջ 218, ՆՔԴ, էջ 58), դրէ՛ք (ՄՆ, էջ 163) նոր ձևերը:

Լսել բայը արդեն գրեթե կանոնավոր է դարձել. անցյալ կատարյալում միշտ հանդիպում են լսեցի (ԱԱԱԱ, էջ 342), լսեց (ՄՂ, էջ 108, ՆՔԴ, էջ 57), լսեցի՛ն (ՄՆ, էջ 105), իսկ հրամայականում՝ լսէ՛ (ՀԹՏ, էջ 183, ՆՔԴ, էջ 59, 92), լսեցէ՛ք (ԳԱ, էջ 279) ձևերը: Միայն Նաղաշ Հովնաթանի մոտ, գրաբար շարադրանքում, հանդիպում են լուայ («Յանկարծ լուայ աւետեաց ձայն» — էջ 128) և լո՛ւր (էջ 149) ձևերը:

Գալ բայի անցյալ կատարյալում առավել հաճախադեպ են -այ, -ար, -ալ վերջավորությամբ ձևերը, ինչպես՝ եկալ (ՀԹՏ, էջ 207, ՄՂ, էջ 115, ՆՔԴ, էջ 52), եկան (ՄՆ, էջ 103, ՀԹՏ, էջ 165) ևլն: Եզակի հրամայականում ունենք բարբառային նոր ձևեր՝ եկո՛ւ, եկո՛ւ:

«Ծն քո սիրուն շեմ դիմանար, հալալ արա, հանսը մեռայ,  
Առ ի հետ այլ զոսկի՛ փէտատ, և՛ եկո՛ւ փորէ ինձի թուրպայ» (ՀԹՏ, էջ 217):  
«Գրող, անհաւատ Գրող, դեռ մանուկ եմ, շեմ տանելու.

Եկո՛ւ՝ տանելուն ցուցնեմ, տանելու զշլին դարնելու» (ՆՔԴ, էջ 77):

Իինել բայի անցյալ կատարյալում հավասարապես հանդիպում են և՛ գրաբարյան, և՛ -այ, -ար, -ալ վերջավորություններով նոր ձևեր, ինչպես՝ եղայ (ՀԹՏ, էջ 219), ԳԱ, էջ 210), եղար (ՀԹՏ, էջ 225), եղալ (ԱԱԱԱ, էջ 4, 25, ՀԹՏ, էջ 199, ԳԱ, էջ 134), եղան (ՀԹՏ, էջ 164) ևլն:

Եզակի հրամայականում միաժամանակ հանդիպում է եղի՛ր (ԱԱԱԱ, էջ 2, ՆՔԴ, էջ 84) ձևը:

Պակասավոր բայերից զոգ չի օգտագործվում, զոլ և պարտել ունեն հետևյալ եզակի կիրառությունները՝ «Այսպէս գիր կամ խաբար Ադամայ որդոց ոչ զոյ» (ԶԱՕ, էջ 98): «Նաև պարտի՛ք հանապազ սեղան բազմիլ աստ, ուրախանալ» (ՆՂԲ, էջ 158): «Պարտիմք աշխատողացն ողորմի տալ մէկ բերան» (անդ, էջ 179):

Կայ բայը ներկայում հանդես է գալիս նաև II դեմքով. «Անսասան կենօք կաւ մէջ աշխարհի» (ԳԱ, էջ 249): «Միշտ պատուիրէ, որ արթուն կաւ» (ՆՂԲ, էջ 139):

Կայ բայի անցյալ անկատար ժամանակը Զ. Ագուլեցու մոտ հանդես է գալիս բարբառային՝ հնչյունափոխված ձևով. «Նախըվանայ մինչև ի թարվեզ որ շատ տեղ կեր, որ խմելու ջուր չկեր» (Օրագր. էջ 62): «Շահի դալամում սորայ նման զինաթով, խազինով խան չկէր» (անդ, էջ 70):

Նաղաշ Հովնաթանի և Զ. Ագուլեցու մոտ եմ օժանդակ բայն առավել շատ հնչյունափոխված ձևերով է հանդես գալիս: Այսպես՝ «Մնացել ամ (=եմ) հէյրան ու մաթ» (Բանաստեղծթ. էջ 19): «Սայ էլ ընկաւ..., ասաւ, թէ՛ այն գիրն աղարկել ամ (=եմ) Ըսպահան» (Օրագր. էջ 100): «Գեղեցիկ պատկեր իս (=ես), դու իմ պատուելի» (ՆՂԲ, էջ 18): «Այսչափ բաներս քեզ համար այ» (=է—անդ, էջ 20): «Ունքերդ վրայ կապած հրեղէն կամար այ» (անդ, էջ 42): «Թափսօր խացին՝ հաց ան (=են) ասում» (անդ, էջ 197) ևլն:

Մեր լեզվի այս շրջանում ևս բայի ժխտական ձևերը կազմվում են հաստատականի վրա ոչ, չի, չ, մի՛ բացասական մասնիկների ավելացումով: Այժմ տեսնենք, թե բայի ժխտական ձևերը նախորդ շրջանի հետ համեմատած ի՛նչ ընդհանրություններ և մանավանդ տարբերություններ ունեն: Սահմանական եղանակի գրաբարածե<sup>12</sup> ներկան և անցյալ անկատարը, ուստի և ըղձականի ապառնին և անցյալ ապառնին ժխտական են դառնում ոչ, չի և չ բացասական մասնիկների ավելացումով: Թվում է, թե այս երեքից առավել շատ հաճախողեալ են չի մասնիկով ձևերը, որոնք առավելապես դրվում են բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ. ինչպես՝ «Տաֆէհ, որ է դարձնող. այն դեղն է որ դմատտան չի թողու (=չի թողնում) որ քայլէ եւ երթայ ի ամենայն գաւղուածքն» (ԱԱԱԱ, էջ 18): «Եւ թէ յիրմէն գաւաթ շինեն եւ ի մջէն գինի խմեն զմարդն չի հարբեցնէ (=չի հարբեցնում) քանի որ մեծ գաւաթ լինի» (անդ, էջ 231): «Եւ այն որ ի ջուրն չի մխուի (=չի մխվում՝ խրվում) և չի նստի (=չի նստում) յատակն՝ չէ աղէկ» (անդ, էջ 390):

Ստորև բերված օրինակներում չի մասնիկը դրված է ըղձական բայաձևերի վրա.

«Ղոչի չի տայֆ (=չտաք)՝ կոտրէք սիւնն,

...Շատ չի խմէֆ (=չխմեք) գինչ արբեցեալ» (ՆՀԹ, էջ 187):

«Ամուր եմ քարիդ նման որ մորճիկն. ի յիս չի բանի (=չբանի).

Բարձր եմ թուխ ամպիդ նման որ ոչ ով ի յիս չի հասնի» (=չհասնի—ՆՔԴ, էջ 55):

«...Թէ երբ կարեմ տանել ի տուն

Մարդ չի տեսնէ (=չտեսնի) մութն ի մթին» (ՄՂ, էջ 106) ևլն:

Չի մասնիկը ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ հազվադեպ է դրվում. այս շրջանում եղած օրինակներն են՝ «Եւ թէ զԱ կտոր արճիճն ի վերայ մսին ձգես որ կու եփի, չի եփի և հում մնայ» (ԱԱԱԱ, էջ 71): «Զքարինքն այսպէս ճանաչես եւ յիմանաս. որ պիղծ յիրք ի յինք չի խառնի (=չխառնվի), որ շափրէ (=չափրի), եւ այլ իրօք Զի ԱՊԱԿԱՆԻ (=չապականվի), եւ յիստակ եւ աղուոր ելնէ ի տեղացն (անդ, էջ 24): «Այս Բանաւշահս Մ տարի որբ մնաց, պատճառ հայրենի տներն ու տղերքն, թէ այլոց ձեռք չի ընկնի (=չընկնի)» (ԶԱՕ, էջ 92): Վերևի բերված օրինակներից երևում է, որ չի, ինչպես նաև չ և ոչ մասնիկները դրվում են ինչպես գրաբարածե ներկա (ներգործական և կրավորական սեռի), այնպես էլ պատճառական ու նորակազմ կրավորական (չի մխուի) բայաձևերի վրա, այնպես որ գրաբարածե արտահայտություն ասելով այս դեպքում հասկանում ենք ներկայի ոչ դերբայավոր կազմություն: Համեմատաբար նվազ կիրառություն ունի չ մասնիկը, որ դրվում է ներկայի և անցյալ անկատարի, ինչպես նաև ըղձական ապառնու և անցյալ ապառնու թե՛ ձայնավորով և թե՛ բաղաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝

«Ես ան հաւերուն էի որ գետինն ի կուտ շուտէի (=չէի ուտում),

Թոչի երկնօքն երթի թէ սիրոյ ականատն շընկնէի (=չընկնեի).

<sup>12</sup> ներկա և անցյալ անկատար ժամանակների դերբայավոր ժխտական կազմությունների մասին տե՛ս «Ժխտական դերբայ» բաժինը:



Ակնատն ի ծովուն միջին էր լարած ու ես չգիտէի (=չգիտեի)»  
(ՆՔԴ, էջ 61):

«Մովսէս մարգարէ շասես (=չես ասում).  
Ի ի Դավթայ իսկի շամաշես (=չես ամաշում).  
ԶԱբրահամ հայրըն տանիս» (ՀԹՏ, էջ 176) ևլն:

Այս շրջանում սահմանական եղանակի դերբայավոր կազմութեամբ ներկա և անկատար ձևերի երևան գալու հետևանքով շ մասնիկը՝ դրվելով եմ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ձևերի վրա (ի տարբերութիւն արդի գրականի՝ ժխտական մասնիկով օժանդակ բայը կարող է դրվել և դերբայից հետո)՝ կազմում է ժխտական նոր ձևեր, ինչպես՝

«Սաստիկ սիրուտ հիւանդացայ, հս շեմ հանքերում,  
Զեր դոռովն անց կու կենամ, է՞ր շես երևում,  
Քոյ բերանէն ինձ մէկ ուրախ խաբար շես բերում» (ՆՀԲ, էջ 247):  
«Ինձ հետ խօսում շես, սիրտս արիւն ես արած» (անդ, էջ 233):

Եզակի երրորդ դեմքում է օժանդակ բայը կարող է հնչյունափոխվել ի-ի կամ մնալ անփոփոխ, ինչպես՝

«Եսխէն բաց շէ թողում (=չի թողնում) լուսարարի» (ՆՀԲ, էջ 117):  
«Դեռ շէ կարում կանչել հազի» (անդ, էջ 118):  
«Տանտէրն խօսում շի (=չի խոսում), միտք արէք» (անդ, էջ 177):

Ի տարբերութիւն շի և շ մասնիկների՝ ոչ ժխտական մասնիկը (ի դեպ, նշենք, որ այս մասնիկի կիրառութիւնը մյուսների համեմատութեամբ շատ քիչ է) միշտ դրվում է ներկա և անկատար ձևերի վրա, ինչպես՝

«Ա՛յ, Նաղա՛շ, դու լսէ, զինչ որ քարոզես,  
Ի՞նչ շահ է քո ասելդ, երբ ոչ կատարես» (=չես կատարում—ՄՆ, էջ 127):  
«Տեկեղեցին ոչ երևայ (=չի երևում).  
Եւ զեկեալ հիւրսն ոչ խղճայ» (=չի խղճում—ՄՂ, էջ 97) ևլն:

Ըղձական եղանակի բայաձևերի հետ ոչ ժխտականի բարբառային կիրառութեան (ոչ մասնիկը դրվում է բայաձևից հետո) երկու դեպք գտնում ենք Զաքարիա Ագուլեցու մոտ. «Մեք քանի բազրկան այսօր գոխտուկ դուրս ելաք, փախաք, թէ բռնեն ոչ (=չբռնեն), կամ թէ փող ուզեն» (Օրագր. էջ 47): «Զերայ Աբասղուլի խանի վարիսներն դայիլ շի կացան, թէ՛ դու Երևան Սէֆիղուլի խանի դուլուղումն էս. բալթի բեզ թողնու ոչ (=չթողնի), գաս Ըսպհան» (անդ, էջ 99):

Պայմանական եղանակի ապառնիները ևս սակավ կիրառութեամբ կարող են ունենալ շ և շի ժխտական մասնիկները, ինչպես՝ «Եւ թէ զմասահին զկաշին ի Ա. գեղի մի բոլորն շուրջ ածեն, եւ տանին ի այն գեղին մէջն տուն մի կախ այնեն նա, ի այն գեղն իսկի կարկուտ շգայ (=չի գայ (ԱԱԱԱ, էջ 171):

«Եւ Յովհաննէս Թուրկուրանցի,  
...Հան ի սրտէտ սէր աշխարհիս՝  
Տէրն շտանի զկամքդ ի կատար» (ՀԹՏ, էջ 133):

«Ասէ Քտ, թէ իյինքն տաքութիւն եւ հովութիւն այլ կայ... եւ այլ բժշկապետք ասեր են թէ հով է. եւ թէ հով չէր նա, իր քամութան սպաննող շէր լինիր (=չէր լինի) իր հովութենովն և պաղեցնելով» (ԱԱԱԱ, էջ 115):

«Ծրբ որ աղքատ իւր դէմն ելնէ,  
...Թէ զօրն ի բուն աղաղակէ,  
Նա շի տանի (=չի տանի) զձեռն ի քէսան» (ՄՂ, էջ 87):

Ինչպես բերված, այնպես էլ մեր ձեռքի տակ եղած մյուս բոլոր օրինակներում շի ժխտական մասնիկը դրվում է III դեմքի վրա, և բայաձևերը համընկնում են գրաբարնակերպ ներկային, այնպես որ վերևի բայաձևերը չի կարելի նույնացնել արդի գրական հայերենի ժխտական դերբայի բայաձևերի հետ, որոնք ձևով ըղձական եղանակի եզակի III դեմքի հետ նույնանալով, անփոփոխ կերպով հանդես են գալիս մյուս դեմքերի համար ևս, ինչպես՝ շեմ գրի, շէի գրի, շես գրի, շէիր գրի ևլն:

Այսպիսով, մեր լեզվի այս շրջանում ևս արդի գրական հայերենի ժխտական դերբայը հիշեցնող մի միասնական, ընդհանուր բայաձև չունենք: Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ I և II դեմքերի պայմանականի ժխտականը այս շրջանի հեղինակներն արտահայտում են ժխտականի դերբայովոր կազմության ձևերով, այն է՝ առավել շատ անորոշ դերբայի հետ եմ օժանդակ բայը ժխտական ձևով խոնարհելով, իսկ սակավ դեպքերում՝ անորոշ դերբայի վերջավորության լ>ր հնչյունափոխված բայաձևի հետ եմ օժանդակ բայի ժխտական ձևերը խոնարհելով, ինչպես՝ «Ծւ որ խմէ զինքն՝ զտաքութիւնն խաղեցնէ շուտով. եւ թէ չէր, հով հումրային շէր աւզտել» (=չէր օգնի—ԱԱԱԱ, էջ 115):

«Նոան կարմիր ծաղկի նման ծամերդ հինած,  
...Չես ասիլ թէ նախաշ[ի]ն ուշն ու խելքն գնաց,  
Ամա՛ն-ամա՛ն, շեմ մոռանալ (=չեմ մոռանա) մինչև յաւիտեան»  
(ՆՀԲ, էջ 22):

«...Ծրբ որ բարով հասնիմք շնորհազարդ գարուն,  
ես էլ շեմ համբերել (=չեմ համբերի), կելնեմ աւարայ» (անդ, էջ 42):  
«Աստուած սիրես, էլ շեմ կարիլ դիմանալ,  
...Ախիր հող կու դառնաս, այդպէս շես մնալ» (=չես մնա—անդ, էջ 219):

Որպես բարբառի առանձնահատկություն, օժանդակ բայը կարող է դրվել դերբայաձևից հետո, ինչպես՝ «Թէ որ տէսնու, խան ինքն, բէկ ինքն... ինադ կանի, Բո թումանով պրծանիլ չէ» (=չի պրծնի—ՉԱՕ, էջ 101):

Ահա և մի քանի օրինակ անորոշ դերբայի հնչյունափոխված ձևից կազմված բայաձևով.

«Ամէն առաւօտ և լոյս  
Պլպուլն ասէր. «Ծ՛լ այգուս,  
Չեմ էլնե՛ր (=չեմ էլնի) ես այս յայգուս» (ԳԱ, էջ 258):  
«Սատաղայ ես քեզ երթամ,  
...Քեզ եմ պահեր արմաղան,  
Հազար որսու շես տար (=չես տա)<sup>13</sup> զայն» (ՄՆ, էջ 103):

<sup>13</sup> Օրինակներից մեկում՝ Հազար որսոյ շես իտար զայն:

«Զարկամն գայդ շէր աներ (=չէր անի), զինչ որ դուն կանեսս,  
Անթուր ւ՛ անդանակ զարիւնս հեղեր ես» (ՀԹՏ, էջ 151) ևլն:

Սահմանական եղանակի ապառնի, վաղակատար և հարակատար ժամանակների ժխտականը նախորդ շրջանի համեմատությամբ ուշագրավ առանձնահատկություններ չունի. կազմվում է դերբայաձևերի վրա եմ օժանդակ բայի ժխտական ձևերի<sup>14</sup> ավելացումով, ինչպես՝ շեմ ուզելու (ՆՀԲ, էջ 241), շեմ գալու (ՄՆ, էջ 180), շեմ խմեր, շեմ կերեր (ԳԱ, էջ 255), շեմ սիրել, շեմ արել (ՆՔԴ, էջ 73), շեմ առած (ՆՀԲ, էջ 119), շե մեռունած (ՄՂ, էջ 90) ևլն: Բոլոր դեպքերում ներկա ժամանակի եզակի III դեմքում բայաձևը մնում է է, ինչպես՝ շե հասել (ԱԱԱԱ, էջ 15), շե տեսել (անդ, էջ 67), շե թողեր (ՀԹՏ, էջ 181), շե արեր (ՄՂ, էջ 90), շե տարել (ՆՔԴ, էջ 67), շե գործած (ՆՀԲ, էջ 148), շե գրած (ԱԱԱԱ, էջ 114) ևլն:

Արժե նշել հետևյալը. նաղաշ Հովնաթան բանաստեղծը և Զաքարիա Ազուլեցին մեկ-մեկ վաղակատարում և մանավանդ հարակատարում իրենց բարբառին հատուկ ժխտականի կազմություններ են օգտագործում, այն է՝ օժանդակ բայը դնում են դերբայից հետո, ինչպես՝ «Դարցեալ, աթոռակալն եկաւ, մին շունչն ի դիան հարկ է, որ ամէն հայ ի դիան կուտան էջմիաժինն. այս գ տարի է, որ առէլ շէր» (=չէր առել—ՉԱՕ, էջ 86): «Այս պատճառէս դ տարի էր, որ իւր որդի Գրիգորն տէսած շէր» (անդ, էջ 77): «Ամենեկին մարմինն փտած շէր» (անդ, էջ 81):

«Պինդ լցէք տօլուի թասն,

...Քանի եկած շէ մեծ պասն» (ՆՀԲ, էջ 186):

«Շատ վախտ է, որ դու ինձ մօտ խմած շես փիալայ» (անդ, էջ 228):

Անցյալ կատարյալ ժամանակի ժխտականը կազմվում է բայաձևերին շ. շի մասնիկներ կցելով, ինչպես նաև նրանցից առաջ ոչ մասնիկ ավելացնելով: Այս երեքից առավել շատ գործածական է շի մասնիկը, որ դրվում է բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ, ինչպես՝ շի կերայ (ՆՀԲ, էջ 206), շի փտեցան (ԱԱԱԱ, էջ 435), շի մնաց (ՄՆ, էջ 128) ևլն: Սակավ դեպքերում շի մասնիկը դրվում է ձայնավորով սկսվող բայաձևից առաջ, ինչպես՝ շի ողջացաւ (ԱԱԱԱ, էջ 465), շի աշողեց (անդ, էջ 149):

Չ մասնիկը հավասարապես դրվում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝ չբացիր (ՆՀԲ, էջ 112), չդիմացա (անդ, էջ 193), չելար, չեկիր (ՆՔԴ, էջ 67), չասաց (ՀԹՏ, էջ 227):

Ոչ ժխտականը նվազ կիրառություն ունի, առավելապես հատուկ է Մ. Ղրիմեցու լեզվին, ինչպես՝ ոչ արբուցիւր, ոչ եղեր (Բանաստեղծ. էջ 88), ոչ կարացի (անդ, էջ 102):

Զաքարիա Ազուլեցին իր բարբառին հատուկ ձևով անցյալ կատարյալի ժխտականը մեծ մասամբ կազմում է ոչ մասնիկով, որն այս դեպքում դրվում է բայաձևից հետո, ինչպես՝ «...մինչի ես գնացի ոչ, ականատէս չէլայ, գրէցի ոչ» (Օրագր. էջ 6): «Դաշտեցիք Մեկթումն ուզին ոչ» (անդ, էջ 77): Այսպես նաև՝ բացին ոչ (անդ, էջ 83), թողեց ոչ (անդ, էջ 87), ասացի ոչ (անդ, էջ 98) ևլն:

<sup>14</sup> Ոչ ժխտական մասնիկով կազմվող վաղակատարի ձևեր չեն հանդիպում:

Ճնշող մեծամասնությունը հրամայականի ժխտական ձևերը կազմվում են ներկա ժամանակի II դեմքի (եզակիում *ս-ն* փոխվում է *ր-ի'* գրես-գրեր, աղաս-աղար կն) բայաձևերի վրա մի' արգելականի ավելացումով: Ստորև բերում ենք օրինակներ ըստ խոնարհումների.

Ե խոնարհում—մի' հաներ (ՀԹՏ, էջ 149), մի' սպանաներ (անդ, էջ 153), մի' լացներ (ՆՔԴ, էջ 49), մի' արձակեր (ԳԱ, էջ 223), մի' մեղադրեմ (ՆՀԲ, էջ 193), մի' տրտնջեմ (ՄՂ, էջ 115) ևլն: Ինչպես նախորդ շրջանում, այս բայերի գրաբարյան կրավորական սեռի կիրառությունների շենք հանդիպում: Նաղաշ Հովնաթանն ունի մի' ֆաղիւր ձևը, սակայն ո՛չ թե կրավորական, այլ ներգործական իմաստով՝

«Մի' ֆաղիւր իմ հոգին, [ինձ մին] ճար արայ, է՛ր ես ինձնէ հեռանալիս» (Բանաստեղծթ. էջ 196):

Բացառություն են կազմում Մ. Նաղաշի մոտ եղած հետևյալ երկու օրինակները. «Նաղա՛շ, մի' խաբիւր (=մի' խաբվիր) մեղօք, մի դատիր անասնոյ նման» (Բանաստեղծթ. էջ 124): «Նոքայ փոշիման գնացին, և դուք այլ կերթաք, մի' խաբիւր (=մի' խաբվեք—անդ, էջ 127):

Ի խոնարհում—մի' հետեիր (ՄՂ, էջ 134), մի' հետեիւր (անդ, էջ 140), մի' դատիր (ՆՔԴ, էջ 94) ևլն:

Ա խոնարհում—մի' հաւատար, մի' գողանար (ՀԹՏ, էջ 193), մի' կենար (ՄՂ, էջ 136), մի' մոռնար (ՆՔԴ, էջ 86), մի' կենայր (ՆՀԲ, էջ 183), մի' հաւատայր (ՄՂ, էջ 108), մի' գնայր (ԳԱ, էջ 225), մի' ձանձրանայր<sup>15</sup> (ՄՆ, էջ 163) ևլն:

Ու խոնարհում—մի' թողուր (ՆՀԲ, էջ 205), մի' թողուր (ՄՂ, էջ 115), մի' թողուր (ԱԱԱԱ, էջ 432) ևլն:

Այս շրջանում ևս անորոշ դերբայի վրա մի' արգելականի ավելացումով կազմվող հրամայականի կիրառության շատ դեպքեր ունենք, ինչպես՝ «Ի ջերմերուն յառաջն մի' տալ» (ԱԱԱԱ, էջ 164): «Լան այն է որ շորացնեն եւ թըրջեն՝ հապայ ուտեն. եւ ժ հատ կե՛ր, յաւելի մի' ուտել» (անդ, էջ 120):

«Իմ վրայ դամ մի' բռնել, քո սէրդ ինձ խելք ե՛րբ է թողել» (ՆՔԴ, էջ 73):

«Կ'ասեմ թէ՛ Սիրէ՛ դու զիս, մի' իմ սիրտըս քիկըրցընել» (անդ, էջ 75):

«Ինձ կարօտ մի' թողուլ, նազու սիրական» (ՆՀԲ, էջ 35):

«Ա՛մ, քանի' ու քանի' ասեմ թէ՛՝ «Աչվիդ ծարուր մի' լնուլ,

Ու զայս իմ կարմրուկ արիւնս ատ ձերմակ շլինքդ մի' առնուլ» (ՆՔԴ, էջ 67):

«Ծն դարիպ եմ, դիպշիլ մի' երած սրտիս» (ՆՀԲ, էջ 40):

Ինչպես տեսնում ենք, ի, ա, ու խոնարհման բայերը նման կազմություններում համապատասխանաբար ունենում են -իլ, -ալ, -ուլ վերջավորություններ, մինչդեռ Ե խոնարհման բայերը, առանց կերպային դրսևորման, կարող են ունենալ և -իլ վերջավորություն, ինչպես՝

<sup>15</sup> Ինչպես տեսնում ենք, ա խոնարհման բայերը հոգնակիում հետևողականորեն ունենում են -այր վերջավորությունը, այնպես որ Մկրտիչ Նաղաշի մոտ հանդիպող մի' մոռացեմ («Ըզձեզ կու աղաչեմ զիս մի' մոռացեմ», Բանաստեղծթ. էջ 164) ձևը սխալ պետք է համարել (թեև հետաքրքրական է որպես արդի հայերենի համանման երևույթի նախաձև), մասնավորապես որ մյուս օրինակներում ունենք՝ չի մոռանալ ձևով:

«...Մեք Մեկքումն ուզում չէնք, դու էլ ուզիլ մի՛» (ՁԱՕ, էջ 77):  
«Քեզնէ խնդրիմ, որ մի անիլ (= մի՛ արա) ինձ աւարայ» (ՆՂԲ, էջ 37):  
«Խոցուած սիրտըս մի՛ քանդիլ» (անդ, էջ 63):  
«Աստուած սիրես, էլ մի՛ բռնիլ մահանայ» (անդ, էջ 221):  
«Մի՛ լար, մի՛ տրտում կենար, մի՛ հաշվիլ դօրս քեզ տարի» (ՆՔԴ, էջ 60) ևլն:

Նաղաշ Հովնաթանի և Զաքարիա Ազուլեցու լեզվին հատուկ են մի՛ք ժխտականով հրամայականի կազմութիւններ, սակայն, ի տարբերութիւն արդի գրական հայերենում բարբառային ազդեցութեամբ գործածվող համապատասխան ձևերի (մի՛ք գրի, մի՛ք խոսի), բայց ձևն այս դեպքում միշտ դրվում է անորոշ դերբայով (արգելական բառաձևը կարող է դրվել դերբայից առաջ կամ հետո), ինչպես՝ «Այլ ճար չի մնաց. ասացի, թէ՛ այլ ումմեքէ ասի՛լ մի՛ք» (Օրագր. էջ 98): «Ասել ան՝ կէսն ձեզ, կէսն տվէք մեզ... այրե՛լ մէք, դարուլ շարին» (անդ, էջ 131):

«Հանի՛լ մի՛ք շուտ վեր կենաք» (ՆՂԲ, էջ 108):  
«Մէնակ մի՛ք ուտիլ, լաւ բաժանեցէք, հաւասար շարէք» (անդ, էջ 161):  
«Թոյլ մի՛ք տալ, որ եղբայրութեան սէրն հովանայ» (անդ, էջ 184):

## ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ՝

Վաղուց ի վեր հայագիտության մեջ ավանդույթ է դարձել մակբայը, կապը, շաղկապն ու ձայնարկությունը անվանել չթեքվող խոսքի մասեր և դրանք «չթեքվող խոսքի մասեր» խորագրի տակ ուսումնասիրել: Այդպես վարվել ենք և մենք:

Եթե միջին հայերենի բառագիտության և ձևաբանական կառուցվածքի մասին այնուամենայնիվ ինչ-որ շափով խոսվել է, ապա չթեքվող խոսքի մասերի վերաբերյալ միայն առանձին փոքրիկ ցանկեր ու համապատասխան բառերի հավաքածուներ են տալիս Կարստն<sup>1</sup> ու Ա. Այտրեյանն<sup>2</sup> իրենց աշխատությունների մեջ: Իսկ պրոֆ. Հ. Աճառյանը դրանք է որ ամփոփել և տեղադրել է իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» աշխատության մեջ (տե՛ս հատոր V, Երևան, 1965 թ.): Չուզենալով երբեք նսեմացնել հայագիտության մեծ երախտավորների աշխատանքը՝ նշենք, որ Կարստը, օրինակ, իր վերոհիշյալ աշխատության միջին հայերենի ձայնարկությունների հատվածում, Աճառյանի խոստովանությամբ՝ «գնում է միայն երկու բառ՝ հայ «այո» և անհայ, անհայ «ահավասիկ»: Բայց այս երկուսն էլ մակբայ են և դժբախտաբար և ոչ թե ձայնարկություն» (տե՛ս վերոհիշյալ աշխատությունը, էջ 405):

Այսօր հայ քերականության մեջ գնահատվում է և 10-րդ խոսքի մասը՝ «եղանակավորող բառեր» անվանումով: Առաջին անգամ լինելով՝ մեր աշխատության մեջ քննության են ենթարկված և միջին հայերենի եղանակավորող բառերը:

Լեզուներում «չթեքվող խոսքի մասեր» անվանման տակ մտնող բառերն ընդհանրապես սակավ են փոփոխությունների ենթարկվում: Ավելին. որևէ լեզվի կրած փոփոխությունների համար աստիճանացույց կարող են ծառայել վերևի խոսքի մասերը, այնպես որ հետաքրքրական է իմանալ, թե այդ «զգայուն» խոսքի մասերն ի՛նչ փոփոխություններ են կրել միջին հայերենում:

Ինչպես ուսումնասիրության մեջ կարելի է նկատել, չթեքվող խոսքի մասերը միջին հայերենում երկու կարգի փոփոխությունների են ենթարկվել. 1) անգործածական դարձած գրաբարյան համապատասխան ձևերի դիմաց աշխարհաբար լեզվամտածողությամբ կազմվել են նոր բառեր. 2) օտար լեզուներից, հատկապես պարսկերենից և թուրքերենից մեր լեզվի մեջ են թափանցել զանազան բառեր:

<sup>1</sup> J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901:

<sup>2</sup> Ա. Այտրեյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866:

Նկատի ունենալով, որ միջին հայերենի երկու շրջաններում չթեքվող խոսքի մասերի կիրառությունները մեծ տարբերություններ չեն դրսևորում, մենք դրանք քննել ենք ամբողջ միջին հայերենում ընդհանրապես՝ տեղ-տեղ ըստ հարկի նշելով առանձին հեղինակների լեզվա-ոճական առանձնահատկությունները:

Աշխատանքում ներկայացված են միջին հայերենի շրջանի առավել հայտնի գրական դեմքերի երկերի մեջ օգտագործված մակբայները, նախդիրներն ու կապերը, շաղկապները, եղանակավորող բառերը և ձայնարկությունները: Անշուշտ, ամբողջ միջին հայերենում օգտագործված տվյալ խոսքի մասերին պատկանող այլևայլ բառեր կարող է դուրս մնացած լինեն մեր աշխատանքից: Սակայն պետք է նկատի ունենալ, որ սույնով հայագիտության մեջ չթեքվող խոսքի մասերն առաջի՛ն անգամը լինելով ուսումնասիրվում են իրենց ամբողջության մեջ:

### Մ Ա Կ Բ Ա Յ

Արդի հայ քերականագիտությունը նյութական իմաստ ունեցող և ընդհանրապես խոսքի մասերի որոշման հիմքում դնում է «բառերի ընդհանուր, խոսքի մասային իմաստը» (տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 224): Այս մոտեցումը մակբայի՝ որպես առանձին խոսքի մասի, ըմբռնումը հստակեցրեց: Մի կողմից մակբայները՝ հատկանիշի հատկանիշ ցույց տվող խոսքի մասային իմաստ ունեցող բառերը, առանձնացվեցին պարագայական կիրառություն ունեցող ածականներից և այլ խոսքի մասերի պատկանող բառերից, մյուս կողմից բուն մակբայներից տարբերակվեցին եղանակավորող բառերն այն հիմունքով, որ ի հակադրություն մակբայների՝ «եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից, օբյեկտիվ որևէ հատկանիշ չեն ցույց տալիս, այլ արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը և նախադասության անդամ չեն լինում» (ն. տ. էջ 231):

Սույն աշխատանքում միջին հայերենի մակբայների քննությունը մենք կատարել ենք վերոհիշյալ տեսական դրույթներից ելնելով: Սակայն, բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ ընդհանրապես խոսքի մասերի և մասնավորապես չթեքվող խոսքի մասերի միջև անանցանելի սահմանասյուներ չկան. նույն բառը, ըստ իր արտահայտած իմաստի և տվյալ կիրառության, կարող է հանդես գալ մե՛րթ որպես մակբայ, մե՛րթ որպես կապ ու եղանակավորող բառ. օրինակ՝ «Աչացըս լոյս իմ որդի, Մեծ մխիթար իմ սըրտի, Կուսի կաթամբ սնուցի, Եւ մօր գըթով գըգուեցի: Թագաւորել յուսայի, Հստ աւետեացն, որ առի, Արդ տեսանեմ ի խաչի, եւ մօրըս աղիքն խորովի» (ՀԵԲ, էջ 245): «Արդ, գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ...» (ՍԳԴ, էջ 15): «Արդ, եղբայրքս, սերմանեցէ՛ք ի սուրբ սըրտի գործըս բարեաց...» (ԿԵՏ, էջ 152):

Վերևի երեք նախադասություններում ունենք արդ բառը, սակայն տարբեր խոսքիմասային իմաստով, առաջինում արդ բառը մակբայ է, քանի որ այժմ, հիմա բառերի իմաստով է օգտագործված, ունի նյութական իմաստ, մինչդեռ

վերջին երկու նախադասություններում արդ քանը նյութական իմաստ չունի, ուստի եղանակավորող բառ է կամ պարբերություններ կապող շաղկապ:

Այսպես և՛ հայտնի է, որ —(ա)պէս մասնիկը մակբայակերտ ածանց է, մինչդեռ հետևյալ օրինակում այդ մասնիկով կազմված բառը ոչ թե մակբայական, այլ եղանակավորող բառի կիրառություն ունի.

«Այլ և զբերանդ լրկամէ և շատ մի՛ խօսիր,  
Զրաբան և հերձուածող բանիւ մի՛ լինիր  
...Նըմանապէս զաշքըդ և զականջըդ քո ամրացո՛ւ» (ՀԵՔ, էջ 201):

Օրինակները կարելի է շատացնել. կարծում ենք, որ բերվածներն էլ հերիք են մեր մոտեցման հիմունքը բացահայտելու համար:

#### ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱՋՄՈՒԹՅԱՆ

Ըստ իրենց առաջացման հիմունքի, միջին հայերենում մակբայները բաժանվում են հետևյալ հինգ տեսակների. 1) պարզ կամ արմատական մակբայներ, 2) բարդ մակբայներ, 3) ածանցավոր մակբայներ, 4) քերականական ձևերից առաջացած մակբայներ, 5) նկարագրական մակբայներ:

1) Պարզ մակբայներ.— Հասկանալի է, որ պարզ կամ արմատական բառերը մենք օգտագործում ենք որոշ պայմանականությամբ, քանի որ պարզ կամ արմատական կոչվող մակբայների մեջ մտնում են ածանցված և բարդված այնպիսի բառեր, որոնք միջին հայերենի (և ոչ միայն միջին հայերենի) լեզվամտածողությամբ որպես այդպիսիք չեն գիտակցվում<sup>3</sup>: Մենք աշխատել ենք ըստ այբբենական կարգի առավել լրիվ չափով տալ այդ մակբայները՝ հավատացած լինելով, որ հայագիտության ինչ-ինչ հարցերի լուսաբանման համար այդ անպայման օգտակար կլինի:

Պարզ մակբայների մեջ պետք է տարբերակել գրաբարյան մակբայները և նորակազմությունները: Միջին հայերենում կիրառված գրաբարի պարզ մակբայներից են արդ, այժմ, աստ, այտի, անդ, աստէն(ս), անդէն(ս), անդր, աստի, անտի, աստանօր, անտանօր, բնաւ, բարով, դեռ, դարձեալ, երէկ, երբեմն, զկնի, զիա՛րդ, է՛ր, ընդէ՛ր, իսկոյն, կարի, կրկին, կանուխ, համակ, հեռի, հանապազ, հուսկ, մի՛, միասին, մէն, յէգուց, յառաջ, յիրաւի, յոյժ, յաւէտ, յոյով, յանկարծ, յայժմիկ, յաւիտեան, յերագ, յարածամ, յանախ, յար, յետոյ, նախ, շոյտ (շուտ), շուտով, սպառ, ստէպ, վաղվադակի, վայր, վեր, վաղն, վաղիւն, ուրեք, ուշ, ուստի ևլն:

Պետք է նկատել, որ գրաբարյան այս մակբայները միջին հայերենով գրած բոլոր հեղինակների կողմից հավասար չափով չեն օգտագործված, կան մակբայներ, որ միայն մեկ հեղինակի մոտ եզակի կիրառություն ունեն, օրինակ՝ աստանօր, անտանօր մակբայները միայն մեկ անգամ կիրառված ենք գտնում Մարտիրոս Ղրիմեցու մոտ, որը բարբառային ընտիր նորաբանությունների հետ միասին ունի դասական հայերենի հնաբանություններ: Ահա այդ օրինակները.

<sup>3</sup> «Արմատները քարացած ձևեր են լեզվի մի որոշ վայրկյանին և ածանցներն են միայն նույն վայրկյանի կենդանի և շարժուն ձևերը... արմատ են այն բառերը, որոնք նույն լեզվի մեջ կարող են խոսողի կամքի համեմատ և ուզած ժամանակ գումարվիլ և բազմապատկվիլ, բայց չեն կարող հանվիլ և բաժանվիլ (ՀԱՀԱՔ, հ. է, էջ 3):



«Աստաճօր ի պատմել ճառս անկարանամ.

Անտաճօր մերս անցանք առ տէր յիշեցան» (ՄՂԲ, էջ 149):

Այսպես նաև՝ ճախ (ՍԳԴ, էջ 29), աստի (ՄՀՋՄ, էջ 2), յաւէտ (ՄՂԲ, էջ 152), համակ (ՖրԲ, էջ 57), զկնի, ուստի (ԿԵՏ, էջ 223), զի՛արդ (ՀԵՐ, էջ 189, 190 և ԳԱԲ, էջ 114), կարի (ՀԵՐ, էջ 189 և ՆՇԲՉ, էջ 561—562) ևլն: Մինչդեռ այլ մակբայներ հաճախակի կիրառութիւն ունեն. դրանցից են՝ աստ (ՀԵՐ, էջ 151, 191, ԿԵՏ, էջ 210, ՆՇԲՉ, էջ 572, ՄՀՋՄ, էջ 10, 29, ՍԳԴ, էջ 30, ՖրԲ, էջ 34 ևլն), անդ (ՀԵՐ, էջ 195, 229, 237, ԿԵՏ, էջ 167, 179, 210, 222, ՆՇԲՉ, էջ 564, ՖրԲ, էջ 84 ևլն), այժմ (ԿԵՏ, էջ 179, 189, 224, ՄՀՋՄ, էջ 4, 37, ՍԳԴ, էջ 29, ԳԱԲ, էջ 106) ևլն:

Աշխատութեան բնույթի պատճառով մենք շինք կարող այստեղ գրաբար-յան մակբայների կիրառութեան հաճախականութիւնը քննել, այլ մենք կաշխատենք ստորև ցույց տալ, թե նոր, «ռամկական» բառերն որքան առավել աշխույժ են, իսկ նրանց կիրառութիւնը՝ հաճախակի:

Միջին հայերենի նոր «պարզ» մակբայներն են. առջև, այլուվայր, այլվայր, այլուայր, ասկից, անկից, այլվա(յ), այլվի, աստընուոր(ս), անգուման, աղէկ, ետ, ընցգուն, ընդոր, լման, խոյոր, կամկար, կամաց, հոս, հոն, հիմա, հիմի, հիմիկ, հայնց, հետ, ո՛նց, ուսկամ, վաղվնիքն ևլն: Սրանց վրա պետք է ավելացնել նաև մի, էլ բառերի հարադրութեամբ կազմված մակբայները՝ հեղ մի, հաղ մի, պահ մի, հիմի էլ, ապա նաև ղանազան բայական հարադրութիւններում հանդես եկող մակբայները:

Վերևում բերված մակբայները միջին հայերենին նույնքան հարազատ են, որքան «սահմանազատիչ» կու մասնիկով կազմվող ներկա, անցյալ անկատար ձևերը: Քննենք դրանցից մի քանիսը.

ա) Հայտնի է, որ գրաբար լեզուն նօրից, կրկին, վերստին իմաստներն առավելապես արտահայտում էր անդրէն, դարձեալ մակբայներով, ինչպես՝ «Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս, քան զառաջինսն» (Մատթ.), «Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելովն» (ՄեՊՂ, I, ԺԱ) ևլն: Մինչդեռ միջին հայերենում, ինչպես վերևում կարելի է տեսնել, անդրէն բառի կիրառութեան շինք հանդիպում, իսկ դարձեալ մակբայը միայն մի երկու հեղինակի մոտ է հանդիպում հազվագյուտ կիրառութեամբ (ՀԵՐ, էջ 156, 178, ՄՀՋՄ, էջ 14, 37, ՖրԲ, էջ 121, ՎԱԱ, էջ 154, 169): Ահա բոլորը: Սակայն այլ է այլուվայր, այլվայր, այլուայր, այլվա, այլվի (=նորից, կրկին) բառերի բախտը. այդ մակբայը հնչյունափոխված ձևերով օգտագործված ենք գտնում միջին հայերենով գրող գրեթե բոլոր հեղինակների մոտ, այսպես, օրինակ՝ «Ապա քամէ և արկ ի ներքս տասն դրամ թառընկպին, և աճրոէ, և այլուվայր (=վերստին) քամէ» (ՄՀՋՄ, էջ 52): «Ապա թէ ի կաթէն տաքութիւն լինի, գարեջուր տուր՝ որ ջերմն հանդարտի, և այլուայր կաթն տուր» (ն. տ. էջ 56): «Ապա թէ ջերմն այլուայր դառնայ, զնոյն ստածումնդ ի բան պահէ» (ն. տ. էջ 71): «Եւ թէ որ գայ յեղբայրութիւն և փօշմանի, նա կարէ այլվա առնուլ զիր իրքն ու ելնել» (ՍԳԴ, էջ 43): «Եւ թէ զչորն ծեծեն եւ ի յաշքն քաշեն՝ այլվա զառաջի աւզուտն առնէ» (ԱԱԱԱ, էջ 76):

Առավել շատ տարածված է այլվի ձևը. ինչպես՝ «Ապա թէ այտով չի յաջողի այլվի (=վերստին) ի բաղանիս մտէ» (ՄՀՋՄ, էջ 28): «Այսօր ճարակ ինչ առնեմ, երբ մեղօքս ես այլուի կորայ» (ՖրԲ, էջ 79):

«Մարդիկ զինչ գարնան ծաղիկ փթթին 'ւ այլվի շորանան» (ՀԵԲ, էջ 160):  
«Եկի հանց եարի մ'առի, որ սիրած է 'ւ այլվի թողած» (ՆՔԴ, էջ 71):  
«Մոցդ նշանց տրիր, այլվի ծածկեցիր» (ՆՀԲ, էջ 35):  
«Գէնայ բահար, այլվի բահար» (ՀԵԲ, էջ 157):

«Ասեր է գրոյս շինողն թէ Ա տարեկան տղան մատուս բ մթխալ տէկ պարտէկ կերաւ... և այլուի քիչ մի մարն կաթովն այլուի խմցուցին, և այլուի փսխեց...» (ԱԱԱԱ, էջ 126): Այսպես նաև՝ «...դառնայ այլվի» (ՄՀՁՄ, էջ 39), «այլվի եփէ» (ն. տ. էջ 45), «այլուի դառնայ» (ՎԱԱ, էջ 8), «անկեալ էր այլվի» (ն. տ. էջ 168): «այլվի գայ» (ՀԹՏ, էջ 152) ևլն:

բ) Միջին հայերենն անհնար է պատկերացնել առանց հոս, հոն (հօս, հօն) մակբայների: Հենց այստեղ ասենք, որ այս մակբայները ճիշտ չէ որպես լոկ արևմտահայ բառեր գնահատել, ուրիշ հարց է, որ միջին հայերենի այս մակբայները միայն արևմտահայ բարբառներում և արևմտահայ գրական լեզվում պահպանվեցին: Գուցե այս հանգամանքը բանալի հանդիսանար բուն միջին հայերենում, ինչպես նաև միջին գրական հայերենի գոյության ժամանակաշրջանում դիմազծված բարբառային տարբերությունների առկայության: Ինչևիցե, փաստ է, որ միջին հայերենով գրող գրեթե բոլոր հեղինակները օգտագործում են այս մակբայները. ոմանք երբեմն ի նախդիրով՝ ի հոս, ի հոն, ոմանք էլ առանց նախդիրի՝ հոս (հօս), հոն (հօն): Այսպես, օրինակ՝ «...և ի հոս ցուցանէ բնութիւն՝ զոր ինչ լինել կամի» (ՄՀՁՄ, էջ 135). «Ըզմէկն անդէնին դու տուր ու զմէկ այլն ի հոս քեզ ճարակ» (ՖրԲ, էջ 59). «Երթամ շի կենամ ի հոս, ուր երթամ հոն ալ շի կենամ (ՆՔԴ, էջ 68): Ստորև բերվող օրինակներում հոս մակբայը կիրառված է նաև առանց նախդրի. «...Հալալ ու հարամ անեն՝ հոս թողուն 'ւ -ի հոն կու գրնան» (ՀԵԲ, էջ 157): «Մեզ խղճացէք՝ մի թողուք հոս» (ՄՂԲ, էջ 115): «Եւ հոս շատ երկար և մեծ է տարել զբանս...» (ՍԳԴ, էջ 28):

Նույն շափով և ավելի տարածված է հոն բառը: Ահա օրինակներ.

«Լաւ ի հոս աշխատիս և ի ՀՈՆ հանգչիս,

Լաւ ի հոս մեռանիս և ի ՀՈՆ ապրիս» (ՄՆԲ, էջ 145):

«Ուրախութեամբ նստին ի ՀՈՆ» (ԿԵՏ, էջ 121):

«Սարխօջ եմ յայն սիրուն,

Ի է միտքս ի հօն՝ յուր ինք լինայ» (ն. տ. էջ 191): «...այլ գան յաւադ եկեղեցին և ի հոն առնուն իրենց քահանայից գիտելութեամբ» (ՍԳԴ, էջ 25):

Ապա և՝ «Հոն աղօթէր զողջ օրն ի բուն» (ՆՇԲՁ, էջ 577):

«Հոն քո տերտերն կու ճորայ» (ՀԹՏ, էջ 227):

«Հինգ վեց ամիս հոն մնացիր (ՄՂԲ, էջ 93):

«...Եւ այն ծակն, որ մաղարայ է, ի հօն կեցողնին գան կու շաղեն... և ինքն ի կղզու մի կու գայ, որ ի հոն բուս շկա» (ԱԱԱԱ, էջ 125) ևլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, հոս, հոն մակբայները կարող են հանդես գալ և՛ ի նախդիրով, և՛ առանց նախդրի. շատ անգամ նույն նախադասության մեջ երկու տարբեր ձևերով. «Երթամ շի կենամ ի հոս, ուր երթամ հոն ալ շի կենամ» (ՆՔԴ, էջ 68): Կամ՝ «Հալալ ու հարամ անեն՝ հոս թողուն և-ի հոն կու գրնան» (ՀԵԲ, էջ 157):

<sup>4</sup> Այլվի բառի իմաստի ճշտման լավ օրինակ է. բանաստեղծը խոսքին ուժգնություն է տվել մակբայի կրկնությանը. հայտնի է, որ գենայ (gene) թուրքերեն բառ է (այժմ էլ կենդանի), որ նշանակում է նորից:

Եթե նկատի ունենանք, որ, ըստ երևույթին, այս մակբայներն առաջացել են ի այս, ի այն ձևերից<sup>5</sup>, որտեղ ի նախդիրը բնականորեն պետք է դերանուններին կից գրվեր, ապա հասկանալի կլինի, որ ի հոս, ի հոն ձևերում նախդիրը անհարկի կրկնվում է, մի երևույթ, որ հատուկ է ո՛չ միայն միջին հայերենին, այլև նույնիսկ դասական գրաբարին:

գ) Միջին հայերենին ուրույն երանգ է տալիս ոնց մակբայը: Անշուշտ, սրա նախաձևն է հայնց (հանց) (ԿԵՏ, էջ 193) բառը, որը լայն կիրառություն ունի միջին հայերենում, այն տարբերությամբ, որ հանց բառը միաժամանակ զըրվում է գոյականների վրա, ինչպես՝ հանց մահուան (ԿԵՏ, էջ 173), հանց հոգի (ՖրԲ, էջ 142), հանց տաճիկ (ն. տ. էջ 143) ևլն: Այստեղ ևս, կարծում ենք, պետք է կատարված լինի նույն հնչյունափոխությունը, ինչ այն-ի այն>հոն բառի մեջ: Չէ՞ որ միջին հայերենում այ-ա>ո, օ հնչյունափոխության դեպքեր կան՝ ինչպես՝ պայման>պօման, պայծառ>պօծառ:

Վերևում ասացինք, որ պատմականորեն ճիշտ չէ կարծել, թե հոս, հոն արևմտահայ բառեր են: Այս նույն մոտեցմամբ ճիշտ չէր լինի կարծել, որ ո՞նց բառը արևելահայ գրականի և բարբառների սեփականությունն է, այլ մեր լեզվի զարգացման որոշ շրջանում առավել ընդհանուր կիրառություն գտած բառ, ինչպես այդ ապացուցում են ստորև բերված օրինակները: Պետք է նկատել, սակայն, որ ո՞նց բառը չեն կիրառել միջին գրական հայերենով գրող մի շարք հեղինակներ: Այսպես՝ XII—XIV դդ. գրական միջին հայերենում ո՞նց մակբայը չեն կիրառել ո՛չ Ն. Շնորհալին, ո՛չ Մ. Հերացին, ո՛չ Վ. Այգեկցին և ո՛չ էլ Ս. Գունդստապլը, Երզնկացիների մոտ սակաւ կիրառություն ունի, մինչդեռ Ֆրիկը լայն շափով օգտագործում է: Նույնպես և՛ երկրորդ շրջանի հեղինակներից չեն կիրառել Մ. Նաղաշը, Ամիրդովլաթ Ամասիացին, Գ. Աղթամարցին, Մ. Արիմեցին: Քիչ շափով կիրառված ենք գտնում Քուչակի մոտ, մինչդեռ Հովհ. Թլկուրանցին և Նաղաշ Հովնաթանը ո՞նց բառի բազմաթիվ կիրառություններ ունեն:

Հապացույց մեր ասածի բերենք օրինակներ.

«...Ձինչ ձուկն ի ջրէն հանած, նա այլ ո՞նց կենայ կենդանի» (ՀԵՔ, էջ 147):

«Ձայս շորս յիրար ո՞նց սազեմ. ամէն մէկ յինքըն կու քաշէ» (ն. տ. էջ 161):

«Առանց նաւավարի՝ ւ առանց թեւի ո՞նց ես կացել» (ԿԵՏ, էջ 176):

«Մեք գոհանամք յողորմածէն, թէ ի մեղաւորքս ո՞նց կու գթայ» (ՖրԲ, էջ 50):

«Թէ ո՞նց խաբեց սատանայ...» (ՖրԲ, էջ 182) ևլն:

XV—XVII դդ. հեղինակներից, ինչպես ասացինք, օգտագործել են Հ. Թլկուրանցին, Ն. Հովնաթանն ու քիչ շափով՝ Քուչակը: Ահա օրինակներ՝

«Սրտիս ալ ո՞նց տամ համբեր յերբ լեզուովդ ի յիս շի խօսիս» (ՆՔԳ, էջ 45):

«Ով զքեզ սիրէ ո՞նց մեռանի» (ՀԹՏ, էջ 135):

«Ո՞նց կարէ գովել զքեզ» (ն. տ. էջ 136):

«Քեզ ո՞նց մոռանամ, զալում,

Ես ո՞նց հեռանամ, զալում» (ՆՀԲ, էջ 9):

<sup>5</sup> Այժմ արևմտահայ գրականում սակավ կիրառությամբ հանդիպում է նաև հող ձևը:

«Քեզ ո՞նց թողնիմ, ո՞նց հեռանամ, ո՞նց մոռանամ» (ն. տ. էջ 47):  
«Նազու, ես սիրտս ո՞նց քանդեմ» (ն. տ. էջ 38) ևլն:

դ) Գրաբարի արդ, այժմ և նույնիմաստ այլ բառերի դիմաց օգտագործված ենք գտնում (ի) հիմայ գրաբարին անծանոթ բառը, ինչպես նաև՝ նույն բառը հիմի (էլ), հիմիկ հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ «...Նա ի հիմայ օրէնքս կու հրամայէ, որ վասն այսօր եպիսկոպոսն շիշխէ...» (ՄԳԳ, էջ 21), «Նա գրած է հիմայ...» (ն. տ. էջ 34):

«Հօսկայ մերկ եմ ես հիմայ» (ՀԵԲ, էջ 229):

«Եւ հիմի պատեհ է, որ ասեմ քանի մի բան վասն դեղերուն» (ԱԱԱԱ, էջ 24): «Հիմի ի՞նչ տեսնենք» (ՎԱԱ, էջ 137):

«Հիմի գայ ծերութիւնն, որ ինք ըզմահն էր գուշակել» (ԿԵԲ, էջ 178):

«Իմ եա՛ր, քեզ վատ չեմ ասեր, դու հիմի է՛ր ես խոռվեր» (ՆՔԳ, էջ 69):

«Բաստիկ որ կրես յիմիկ, մեծամօթ և մերկ խայտառակ» (ՆՔԳ, էջ 57):

«Արի ու պընդէ ըզմէջքդ և գտիր հիմիկ քեզ ճարակ» (ն. տ. էջ 59):

«Հիմիկ ճարտար բժշկես դու...» (ՀԹՏ, էջ 193):

«Շատ դու ինձ ատեն հասեր, հիմիկ ինձ յէ՛ր ես խոռվել» (ՆՔԳ, էջ 96):

ևլն:

ե) Գրաբարին անծանոթ, զուտ միջին հայերենին հատուկ է աղէկ բառը, որ առավելապես մակբայական կիրառութիւն ունի: Բառս օգտագործված ենք գտնում Մ. Հերացի և Ա. Ամասիացի բժշկապետների, ինչպես նաև Կ. Երզնէ-կացու մոտ: Ինչպես՝ «Ապա պարտ է բժշկաց քննել և իմանալ աղէկ...» (ՄՀՋՄ, էջ 2): «Երբ քրտնի, ապա օժէ զմարմինն խիրի ծիթով, և մարձէ աղէկ...» (ն. տ. էջ 10):

«Աղէկ մտիկ դիր ու ճանչէ...» (ԿԵՏ, էջ 195):

«Ան ատենն ժողվել կու պիտի, որ աղէկ հասել լինի ծաղիկն» (ԱԱԱԱ, էջ 21): «Ձքարինքն այսպէս ճանաչես և յիմանաս, որ պիղծ յիրք իյինք չի խառնի... եւ աղէկ պահուի... եւ անվնաս տեղ դրուի, որ ի յինքն զեն չհասնի եւ աղէկ մնայ» (ն. տ. էջ 24) ևլն:

զ) Կան նաև նոր մակբայներ, որոնք այս կամ այն հեղինակի մոտ են միայն հանդիպում. այսպես՝ Ամիրզովլաթ Ամասիացին հաճախ օգտագործում է լման (=ամբողջովին, լիովին) մակբայը, ինչպես՝ «Եւ օձն կու շարժի եւ կու թապլտի և կու ջանայ, որ խայթէ և կուտէ զինքն լման» (ԱԱ, էջ 38): «...Ան ատենն ժողվել կու պիտի, որ լման հասնի» (ն. տ. էջ 21):

է) Միջին հայերենում նոր բառեր են՝

1) հայնց, հանց, ընցկուն, հնցկուն, որ իմաստով համապատասխանում են այսպես, այդպես, այնպես բառերին: Հանց, հնցկուն բառերը միջին հայերենում ունեն նաև մակբայական կիրառութիւն, ինչպես՝ «...Այն բաժնողքն հայնց կու անեն» (ՄԳԳ, էջ 30):

«Ով լինի իմաստնոյն

ինք հակառակ՝ շար կամելով,

Նա հանց տես, թէ լել Յուդայ» (ԿԵՏ, էջ 171):

«Յորժամ զինքն ի գետնէն հանեն՝ պիտի որ կտրեն այսպէս. հանց կու պիտի, որ զկղմիտրն տաքցնեն» (ԱԱԱԱ, էջ 180):

«Եւ եթէ ուզենաս, որ զինքն հնցկուն ի գործ արկանես...» (ն. տ. էջ 81):

2) Գէնա, (=թրք. «նորից, կրկին»)—«Գէնայ բահա՛ր, այլի բահար» (ՆԵՐ, էջ 157):

3) Թուաբար (=թրք. «միամիտ, անհոգ»)—«Կամ վանց այս սուտ կենցաղոյս քա՛նի կենաս դուն թրաբար» (ԿԵՏ, էջ 193):

4) Պարապար (=թրք. «հավասար»)—«Հինգերորդն այն է, որ դեղին ուժն և հիւանդութեան ուժն պարապար լինի» (ԱԱԱԱ, էջ 4):

Ածանցավոր ու այլ կազմութիւններով փոխառված մակբայներից են՝ պէտումէտ (ԿԵՏ, էջ 162), նահախ (ՆՆՐ, էջ 38), բէգուման (ն. տ. էջ 76), տիֆատիֆա (=«կտոր-կտոր»—ՆՆՐ, էջ 217), փարա-փարա (=թրք. «կտոր-կտոր»—ՆՆՐ, էջ 47), եանայ-եանայ (ՆՆՐ, էջ 118, 217) ևլն:

2.Բարդ մակբայներ.—Միջին հայերենն անհամեմատ հարուստ է բարդ մակբայներով: Պետք է նկատել, որ այս մակբայներն առավել շատ նորակազմութիւններ են, միայն մեր լեզվի այդ շրջանին յուրահատուկ մակբայներ: Բարդ մակբայների մեջ ավելի շատ են անիսկական բարդութեամբ կազմվածները, իսկ վերջիններին մեջ՝ նախդիրներով կապակցվող, ապա և որոշիչ-որոշյալ կապակցութեամբ հանդես եկող մակբայները:

Նախ խոսենք խոսքի մասերից բարդված մակբայների մասին: Սրանց մեջ ամենից շատը հենց մակբայների բարդութեամբ կազմվածներն են, ինչպես՝ սակաւ-սակաւ (ՄՂՋՄ, էջ 21, 27, 66, ՎԱԱ, էջ 124), երագ-երագ (ԳԱՐ, էջ 131), վեր-վեր (ՆՆՐ, էջ 120), մէն-մէն (ՆՔԴ, էջ 60, 70), ստէպ-ստէպ (ԳԱՐ, էջ 214), շոտ-շոտ (ՆՆՐ, էջ 109, ՄՂՋՄ, էջ 142, ԱԱԱԱ, էջ 15), տրկուկ-տրկուկ (ՆՆՐ, էջ 159), իդեհիդեհ (ՄՂՋՄ, էջ 69), ուշիկ-ուշիկ (ՄՂՋՄ, էջ 29), յուշիկ-յուշիկ (ն. տ. էջ 14), տակտակ (ԱԱԱԱ, էջ 37, 145) ևլն: Օրինակներ՝ «Զմարմինն մանուշակի ձիթով օժէ և նոնֆարի, և ուշիկ-ուշիկ զմարմինն մարձէ» (ՄՂՋՄ, էջ 29): «...Քան զասպայ ի ծալն էի, նա տրկուկ-տրկուկ քակեցալ» (ՆՆՐ, էջ 159): «Իմ եա՛ր, խղճա՛ քո գերտյոգ, քո գերուոգ մէն-մէն կենալուդ» (ՆՔԴ, էջ 60): «Եւ այն որ ալմասին գէշ ցեղն է, եւ բորոտ, եւ սպիտակգուն, եւ տակտակ, մէկ մէկի վերայ» (ԱԱԱԱ, էջ 37) ևլն:

Ածականների բարդութեամբ կազմված մակբայներն առաջանում են միայն որակական ածականներից, ինչպես՝ բարկ-բարկ (ՅՐՐ, էջ 111, ՆՆՐ, էջ 225), ֆիշ-ֆիշ (ՄՂՋՄ, էջ 33, 43, 65, ՆՔԴ, էջ 64), պինդ-պինդ (ՆՆՐ, էջ 120), տաֆ-տաֆ (ԱԱԱԱ, էջ 132), նօւր-նօւր (ԱԱԱԱ, էջ 71), յերկան-յերկան (ԱԱԱԱ, էջ 97), փոֆր-փոֆր (ՎԱԱ, էջ 14), շար-շար (ն. տ. էջ 18), ծակ-ծակ (ն. տ. էջ 90) ևլն:

Օրինակներ՝ «Զօրն կերուխում առնէք,

...նաև բարկ-բարկ ծիծաղէիք (ՅՐՐ, էջ 111):

«...Պինդ-պինդ կանչեմք. Ձի ի տուրնջեան» (ՆՆՐ, էջ 120) ևլն:

Գոյականներով կազմված մակբայներ՝ ծամ-ծամ (ՄՂՋՄ, էջ 16, ՆՔԴ, էջ 102), կտոր-կտոր (ԱԱԱԱ, էջ 123), կում-կում (ՄՂՋՄ, էջ 44, 51), ծին-ծին (=«կետ-կետ»—ԱԱԱԱ, էջ 133), դաս-դաս (ՎԱԱ, էջ 43), երես-երես (ն. տ. էջ 90), մաս-մաս (ՆՆՐ, էջ 111): Իսկ շարվէշարով («նստինք շարվէշարով»—ՆՆՐ, էջ 210), յօրէօր (ՅՐՐ, էջ 87), տարէտար (ՅՐՐ, էջ 201) բառերը կազմված են առաջին գոյական բաղադրիչի հոլովված ձևով:

Թվականներով կազմված մակբայներ են՝ մէկ-մէկ (ՆՆՐ, էջ 158), մին-մին (ՄՂՋՄ, էջ 55):

Կան նաև բայահիմքերով կազմվածներ՝ վազ-վազ (ՆՂԲ, էջ 112), օլոր-օլոր (ՆՔԴ, էջ 68): Օրինակներ՝ «Աւաքերէց եղար դու վազ-վազ» (ՆՂԲ, էջ 112): «Կուպակդ է օլոր-օլոր, քո բերանդ է փոքր ու բոլոր» (ՆՔԴ, էջ 68):

Անհամեմատ շատ են արմատի կրկնութեամբ և գրաբարյան առ, գ, ընդ, բստ, ի նախդիրներով բարդված մակբայները. այլընդայլ (ՎԱԱ, էջ 131), միբստմիռչէ (ՄՂՋՄ, էջ 5, ՎԱԱ, էջ 137), օրբստօրէ (ն. տ. էջ 47, 65, ՅրԲ, էջ 135), փախիփախ (ՂԵԲ, էջ 176), մանիման (ԿԵՏ, էջ 117), բացիբաց (ՆՇԲՁ, էջ 583), եորնդեռ (ԱԱԱԱ, էջ 96), զատիզատ (ՄՂՋՄ, էջ 37), կաղընդկաղ (ՆՇԲՁ, էջ 576), ինֆնրստինֆն (ՄՂՋՄ, էջ 15), մէջընդմէջ (ՄՂՋՄ, էջ 16, 48, 105), յետիյետ (ՎԱԱ, էջ 164), օրգաուր (ՅրԲ, էջ 42), խիտաոխիտ (ՄՂԲ, էջ 133) ևլն:

Օրինակներ՝ «Այժմ ցուցանեմ և ասեմ զնշաննին և զստածուն և զբժըշկութիւնն զատ ի զատ, զամէն մէկ» (ՄՂՋՄ, էջ 37):

Ոչխար էի ի քում փարախ.

՚ի եմ վտարած ես փախիփախ» (ՂԵԲ, էջ 176):

«...Ու երթայր կաղընդկաղ ի տուն» (ՆՇԲՁ, էջ 576) ևլն:

Միջին հայերենում շատ են տարբեր բաղադրիչներով և ի նախդիրով բարդված մակբայները: Այստեղ, անշուշտ, առաջին հերթին պետք է խոսել (ի)վայր, (ի)վեր մակբայներով կազմված բարդութունների մասին, ինչպես՝ ծովնիվայր (ԿԵՏ, էջ 200), դարիվայր (ՆՂԲ, էջ 137), երեսնիվայր (ՆՂԲ, էջ 170, ՅրԲ, էջ 26, ՆՔԴ, էջ 91, ԱԱԱԱ, էջ 116), երեսդիվեր (ՂԹՏ, էջ 170), ծաղիկնիվեր (ԿԵՏ, էջ 150), յետնուցնիվեր (ՎԱԱ, էջ 139) ևլն. ապա նաև՝ (ի)բուն բաղադրիչով բարդվածների մասին. օրնիբուն (ՆՇԲՁ, էջ 577), զօրնիբուն (ՅրԲ, էջ 25, 205, 216, 229, ՂԹՏ, էջ 127, ՂԵԲ, էջ 143, 148), գիշերսիբուն (ՆՔԴ, էջ 54) ևլն:

Օրինակներ՝ «Զինչ զօրնիբուն մարդըն խորհի, Գիշերն ամէնըն խափանի» (ՅրԲ, էջ 25). «Այս ծովական գիշերսիբուն՝ ես երկու շրջան մանեցի» (ՆՔԴ, էջ 54): «Անպտուղ ծառ ես դարիվայր» (ՆՂԲ, էջ 137) ևլն:

Կից նախդիրով գործածվող մակբայներից առավել հաճախ հանդիպում է նորակազմ զօրն (=ամբողջ օրը) բառը, ինչպես՝ «Զօրն ես ի իւր սէրն կենամ» (ԿԵՏ, էջ 163). «Զօրն աղաչել պիտի զաստուած, որ գիտութեան հոգի մեզ տայ» (ՅրԲ, էջ 47). Շատոց խոստանայ հանգիստ ու պահէ զօրն երբեմանի» (ՄՆԲ, էջ 125) ևլն: Առ նախդիրով կազմված մակբայներից են՝ առաւել (ՄՂՋՄ, էջ 2, ԳԱԲ, էջ 112), առժամայն (ՄԳԴ, էջ 68, ՅրԲ, էջ 76), առանձին (ՄԳԴ, էջ 32): Կան նաև ի նախդիրով կազմված մակբայներ. իզուր, ի պակասն (=առնվազն). «Յայս տեղս օրէնքս դժար սաստ է հրամայել, զի գրել է, որ մեռնի, կամ ի պակասն՝ զձեռն կտրեն» (ՄԳԴ, էջ 52): «...Որ դրամ քշտեն կամ դրամ հարթեն անխեղճ առ պարոնութիւնն զձեռն կտրեն ի պակասն» (ն. տ. էջ 64):

Որոշիչ-որոշյալ կցական բարդութեամբ կազմված մակբայներից են՝ յայնժամ (ՂԵԲ, էջ 144, ԿԵՏ, էջ 122, ՄԳԴ, էջ 22), յորժամ (ՄՂՋՄ, էջ 10, 12, 22, ՄՆԲ, էջ 111, ՂԹՏ, էջ 155), այսօր, պարզերես (ՂԵԲ, էջ 152), ամօքերես (ն. տ. էջ 231), այլև՝ (ի) մէկտեղ (=միասին) նորակազմ, շատ կիրառութուն ունեցող բառը, ինչպես՝ «Մէկտեղ ելաք, մէկտեղ նըստաք, ան ժամանակն ո՛ւր է հիմայ» (ՂԹՏ, էջ 217): «...Ընցզուն սիրելի շարկամ մէկտեղ ո՛վ իսկի տեսել է» (ՂԵԲ, էջ 162): «Յուրտ է. արի մէկտեղ պառկինք, Որ տաքանանք, գինովանանք» (ՆՂԲ, էջ 38) ևլն:

Ան ժխտական մասնիկով կազմված գրաբարյան անդադար (ՀՆԲ, էջ 159, ԿՆՏ, էջ 121, 124, 192), անյապաղ (ՍԳԴ, էջ 61, ՎԱԱ, էջ 180), անթաց (ՀՆԲ, էջ 152) և այլ մակբայների հետ ունենք նորակազմ անդուր (=անդադար) մակբայը. ինչպես՝ «Անդուր 'ւ անդադար կու առնէ ֆըրեաթ» (ԳԱԲ, էջ 194): «Փորդ ծակվի, ողբաս անդուր» (ՀՆԲ, էջ 140):

Այլևայլ կապակցութիւններով միացած՝ անիսկական բարդությամբ կազմված մակբայներ են նաև՝ անդեանդ (ՎԱԱ, էջ 153), խեռուխատ (ԿՆՏ, էջ 184), ցիրեցան (ՄՂԲ, էջ 145), ևս քան զևս (ՎԱԱ, էջ 108), գիշեր ու ցերեկ (ԿՆՏ, էջ 159, ՎԱԱ, էջ 151), տիւ և գիշեր (ԿՆԲ, էջ 173, 177), յաւէտ միշտ (ՀՆԲ, էջ 223), աղիողորմ (ն. տ. էջ 228), յետույստազ (ԱԱԱԱ, էջ 13) ևլն:

Իսկական բարդությամբ կազմված մակբայները քիչ են. գրաբարյան միաբան (ՄՆԲ, էջ 156), միատեղ (ՆՀԲ, էջ 51), բարձրածայն (ՄՆԲ, էջ 102, ԳԱԲ, էջ 233) մակբայների հետ մեկտեղ ունենք իսկական բարդությամբ նորակազմութիւններ՝ կիսկատար (ՄՆԲ, էջ 158), խելագնաց (ՀԹՏ, էջ 149), միատակ (ՍԳԴ, էջ 81), միալար (ՖրԲ, էջ 179) ևլն: Օրինակներ՝ «Ու թէ անցնել տայ ընդ բարն՝ միատակ վճարէ տէրն (ՍԳԴ, էջ 81): «Նայ մահն յանկարծակի հասաւ յետեվանց, Զինչ թատպիր ունէի, կիսկատար մնաց» (ՄՆԲ, էջ 158): «Խելագնաց ի վայր մնացի» (ՀԹՏ, էջ 149): «Ո՞վ կարէ պատմել միալար» (ՖրԲ, էջ 179):

3. Ածանցավոր մակբայներ.— Հայերենն ընդհանրապես, ուստի և միջին հայերենը հարուստ է ածանցավոր մակբայներով: Հայտնի է, որ մակբայակերտ ածանցներն ըստ իրենց տեսակարար կշռի բաժանվում են երկու մասի. ա) բուն մակբայակերտ ածանցներ՝ -(ա)բար, -(ա)պէս, -օրէն, -(ա)գին. բ) ածանցներ, որոնցով լրացուցիչ կերպով կազմվում են նաև մակբայներ (—ակի, —ովին, —ին ևլն):

Ա. Բուն մակբայակերտ ածանցներ.— Այս մակբայակերտ ածանցներով կազմված մակբայների համեմատութիւնը ցույց է տալիս, որ միջին հայերենում -(ա)բար ածանցն ավելի կենսունակ է, քան մյուսները: Այսպես՝ միջին հայերենի երկու շրջանի 10 հեղինակի ստեղծագործութիւնների մէջ, մեր հաշվումներով, -(ա)բար մասնիկով կազմված են 30 մակբայներ՝ առանձնաբար (ՄՂԲ, էջ 91), անկարգաբար (ն. տ.), անքննաբար («անքննաբար բխումն» — ԳԱԲ, էջ 107), անհատաբար (=անհատնում կերպով — ԳԱԲ, էջ 143), արիաբար (ն. տ. էջ 125), աստուածաբար (ԿՆՏ, էջ 226), բռնաբար (ՄՂԲ, էջ 154), գաղանաբար (ՄՂԲ, էջ 90), գաղտաբար (ՍԳԴ, էջ 37, ԿՆՏ, էջ 200, ՎԱԱ, էջ 11), երկրորդաբար (ՄՂԲ, էջ 91), զօրեղաբար<sup>6</sup> (ՄՂԲ, էջ 154), թշնամաբար (ԿՆՏ, էջ 193), թագնաբար (ԳԱԲ, էջ 234), խոհեմաբար (ՄՂԲ, էջ 154), ծածկաբար (ԿՆՏ, էջ 201, ՄՆԲ, էջ 139, ՎԱԱ, էջ 34, 126 ևլն), ծառայաբար (ԿՆՏ, էջ 226, 227), կարգաբար (=կարգով — ՄՆԲ, էջ 128), հեզաբար (ԿՆՏ, էջ 194, ԳԱԲ, էջ 122), հանդարտաբար (ՎԱԱ, էջ 117), համառոտաբար (ՍԳԴ, էջ 15), մոլեգնաբար (ՀՆԲ, էջ 177), միաբար (ՖրԲ, էջ 180), յանկարծաբար (ՄՆԲ, էջ 139), նենգաբար (ՎԱԱ, էջ 12), ողորմաբար (ԿՆՏ, էջ 119), սիրելաբար (ՍԳԴ, էջ 24), վայրաբար (=ստոր ձևով — ՄՆԲ, էջ 131, ՎԱԱ, էջ 20), վիճաբար (ՄՂԲ, էջ 154), տղայաբար (ՀՆԲ, էջ 194), բարունաբար (ԳԱԲ, էջ 155, 162), քննաղաբար (ՄՂԲ, էջ 154): Օրինակներ՝

<sup>6</sup> Ընդգծված մակբայները «Առձեռնում» չկան:

«Զգրեալս ընկալ խոհեմաբար,  
 Անցեալ ատորբք բանք վիճարար.  
 Զոր առարկաւ ՔՆՆՈՂԱՔԱՐ,  
 ...Յետ այտորիկ ԶՕՐԵՂԱՔԱՐ,  
 Կայսրն խմբօք բազմահամար  
 ...Քան զայս աւելն է բոնարար (ՄՂԲ, էջ 154—155):  
 «Գազանարար կաննէ սավաշ  
 ....Թէ հարցանես ճուղապ չի տար  
 Կամ ղողանջէ անկարգաբար  
 Եւ թէ կրկնես երկրորդաբար  
 Ահեղ գոչէ, քան զգիւահար» (ՄՂԲ, էջ 91) ևլն:

Նույն հեղինակների մոտ —(ա)պէս մասնիկով ընդամենը 11 մակբայ ենք գտնում. անընտրողապէս (ՎԱԱ, էջ 5), գեղեցկապէս (ԿԵՏ, էջ 151, 201), դառնապէս (ՎԱԱ, էջ 54, 125), ծառայապէս (ԳԱՔ, էջ 178), հոգեպէս (ԿԵՏ, էջ 184), միապէս (ՍԳԴ, էջ 52, ՎԱԱ, էջ 93), յայտնապէս (ԿԵՏ, էջ 181, ՄՂԲ, էջ 94, ԱԱԱԱ, էջ 61), նմանապէս (ՄՀՁՄ, էջ II), վայելչապէս (ԿԵՏ, էջ 221), տիրապէս (ՄՆԲ, էջ 121), փութապէս (ՎԱԱ, էջ 62): «Առձեռնի» հետ համեմատութիւնից պարզվեց, որ բոլոր այս 11 մակբայներն էլ գրաբարից վկայված են: Այսպիսով, —(ա)պէս ածանցով կազմված և ոչ մեկ նոր մակբայ չկա մեր վերոհիշյալ հեղինակների մոտ:

—օրէն ածանցով կազմված մակբայներն ընդամենը հինգն են. արքայօրէն (ԳԱՔ, էջ 143, 144), գայլօրէն (ՄՂԲ, էջ 149), համօրէն (=ամբողջովին—ՍԳԴ, էջ 56), համերսօրէն (ԳԱՔ, էջ 190), բաբունօրէն (ՄՂԲ, էջ 153):

Ինչպես երևում է վերևի ընդգծումներից, —օրէն ածանցով կազմված մակբայներից միայն երկուսը չեն վկայված գրաբարից: Դրանք են՝ գայլօրէն, համերսօրէն:

«...Կրճտեալ ատամամբք իբր զչար գազան  
 Գիշատել զ[գ]առինս գայլօրէն սպառնան» (ՄՂԲ, էջ 149):  
 «Ճանկամ տեսանել ըզքեզ իմ պըսակ փառաց լուսեղէն  
 Ի իւսեցից երզրս տաղիս, զքեզ գովեմ համերսօրէն (ԳԱՔ, էջ 190):

—ազին ածանցով ունենք ընդամենը 4 մակբայներ. արտասուազին (ՀԵՐ, էջ 228), ողորմազին (ԿԵՏ, էջ 229, ՄՆԲ, էջ 151), սաստկազին (ԳԱՔ, էջ 114) և տրտմազին (ն. տ. էջ 118): Սրանք բոլորն էլ վկայված են նաև գրաբարից:

Այսպիսով, —ա/բար ածանցով կազմված մակբայները կրկնակի շափով ավելի են, քան մնացած երեք մակբայակերտ ածանցներով կազմվածները միասին վերցրած: Եթե սրա վրա ավելացնենք նաև այն հանգամանքը, որ այդ ածանցով կազմված մակբայներից ութը գրաբարից չեն վկայված, հասկանալի կլինի, թե —ա/բար մակբայակերտ ածանցն ինչքան ավելի կենդանի է, քան մյուս ածանցները:

Մի բացատրութիւն. բոլոր դեպքերում, երբ նշում ենք մակբայի՝ գրաբարում վկայված լինելը, անշուշտ, չենք ուզում ասել, որ մեր հեղինակները այդ մակբայները որպէս նախնայց լեզվից ուսած բառեր են կիրառել, բայց, այնուամենայնիվ, մեզ համար առավել հետաքրքրութիւն են ներկայացնում նորակազմութիւնները, որոնք մասնիկների կենդանութեան լավ ապացույց են:



Ինչ վերաբերում է մեր մակբայակերտ ածանցների իմաստային աղերսակցութեանը, ապա պետք է ասել, որ -(ա)բար, -(ա)պէս, -օրէն ածանցները արտահայտած իմաստով իրար մոտ են. դրա լավագույն վկայութունը ինչպէս գրաբարում, այնպէս էլ միջին հայերենում նույն բառի վրա վերոհիշյալ ածանցների ավելացման փաստն է: Այսպէս, միջին հայերենից կարելի էր նշել հետևյալ զուգահեռները. ծառայաբար-ծառայապէս, բարունաբար-բարունօրէն ևլն. մյուս կողմից՝ գրաբարի համեմատապէս մակբայի դիմաց միջին հայերենի համեմատօրէն նոր մակբայը ևլն:

Բ. Ինչպէս վերևում նշեցինք, միջին հայերենում ունենք նաև -ակի, -ովին և -ին վերջավորութիւններով քիչ թվով մակբայներ: Դրանք են՝ -ակի-յան-կարծակի (ԿԵՏ, էջ 146, 167, 228, 190, ՖրԲ, էջ 47, ՄՆԲ, էջ 158, ՀԹՏ, էջ 148, 162, ԱԱԱԱ, էջ 30) ևլն, առանձնակի, փութանակի (ՆՀԲ, էջ 135), բոլոր Յ-ն էլ վկայված գրաբարից. -ովին-գլխովին. «Տեսայ ... դոմանս, որ գլխովին կորեան, ամէնն վասն ազահութեան» (ՄՆԲ, էջ 117). -ին-Այս վերջավորութեամբ ունենք կրկին (ՖրԲ, էջ 122), վերստին (ՍԳԴ, էջ 42, ՀԵԲ, էջ 267, ՖրԲ, էջ 161, 203 ևլն), ամենեկին (ՄՀԶՄ, էջ 38, ՍԳԴ, էջ 24) և կշտին նոր բառը, որ հանդիպում է Հովնաթանի մոտ. «Գինոյ կուժն կըշտին ցրցեց» (ՆՀԲ, էջ 141): Հստ երևութիւն -ուք ածանցով է կազմված նաև ողջուք մակբայը, որ գործածված ենք գտնում Ամիրդովլաթ բժշկապետի մոտ. «Աղավնի... թէ ողջուք ճղքես և ի վերայ կարճահարին դնես, օգտէ» (ԱԱ, էջ 45):

4. Քերականական ձևերից կազմված մակբայներ.—Միջին հայերենում դտնում ենք բացառական և գործիական, մասամբ էլ՝ հայցական հոլովներից կազմված մակբայներ: Պատճառը պարզ է, գոյականի կամ այլ խոսքի մասի հոլովված ձևից անցումը մակբայի կատարվում է նախադասութեան մեջ բառի ունեցած շարահյուսական կիրառութեամբ և բառաձևի քերականական կազմութեան մթազնմամբ. այսպէս՝ հայտնի է, որ սակավ մակբայը առաջացել է գրաբարում՝ սակ (=չափ, օրէնք, կերպ) բառի գործիական հոլովի պարագայական կիրառութիւնից: Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատութեան «...իսկ Որմիդդ վասն նորա յո՞ր սակս առնէր» (II, Ե) նախադասութեան մեջ, թվում է, սակ բառն օգտագործված է որպէս գոյական, մինչդեռ «Վայրիկ մի ևս, սակալիկ մի եւս կալցիս ժոյժ» (Բուզանդ, ՊՀ, IV, ՄԵ) նախադասութեան մեջ սակալիկ մի (գրբ. սակ+աւ) բառի մեջ մթազնված են և՛ սակ արմատը, և՛ աւ գրաբարյան եզակի գործիականի վերջավորութիւնը: Նույնպէս և -ուստ վերջավորութեամբ բառերի մեջ՝ հեռուստ, վերուստ, մթազնված է նախագրաբարյան բացառականի -ուստ վերջավորութիւնը:

Այսպիսով, բացառական ու գործիական հոլովաձևերը կարող են վերածվել մակբայների, որովհետև հենց այդ հոլովաձևերով արտահայտված պարագայական կիրառութեամբ բառերն են ավելի աղերսակցվում մակբայների կիրառութեան հետ: Այս տեսակետից հետաքրքրական է, որ արդի հայերենում ներգոյական հոլովից կազմվեցին բոլորովին նոր մակբայներ՝ ներկայում(ս), հնում, հետագայում, հիմնականում, մինչդեռ սեռական հոլովից և ոչ մէկ մակբայ չառաջացավ, քանի որ սեռական հոլովը նախադասութեան մեջ ստորոգյալի հետ չի հարաբերում, պարագայական կիրառութիւն չունի:

Միջին հայերենում ինչպէս հոյցական, այնպէս էլ բացառական ու գործիական հոլովաձևերից կազմվող մակբայների մեջ կան շատ նորակազմութիւններ, որոնց կողքին օգտագործվում են նաև գրաբարյան կազմութիւն-

ներ: Բացառական հոլովածակով ունենք (աշխատել ենք առավել շափով նոր կազմութունները տալ)։ յերեսաց (= առ երեսս—ԿԵՏ, էջ 193), հետէն (ՄՀՁՄ, էջ 41), յետևայն (ն. տ. էջ 42), յանօթուց (ն. տ. էջ 84, 86, ԱԱԱԱ, էջ 32, 88), ամաութեց (ն. տ. էջ 160, 108), ի վերուստ (ՄՆԲ, էջ 116), վաղէն (ՄՆԲ, էջ 148), հիմնէ (ԱԱԱԱ, էջ 94), հեռուստ (ԳԱԲ, էջ 234), առաւօտուց (ՆՀԲ, էջ 18, 19, 24), աստուստ (ՄՂԲ, էջ 150), յետևանց (ԱԱԱԱ, էջ 60, ՎԱԱ, էջ 184), վաղուհնէ (ն. տ. էջ 184, 191), ի տականց (ՎԱԱ, էջ 172)։ Թվում է, որ ընդգրծվածներն անվիճելիորեն նոր կազմութուններ են։ Այսպես, օրինակ, ճիշտ է, գրաբարն ունի երեսաց բառը, բայց ո՛չ մակբայական, այլ կապական բառի իմաստով։ Այդ կարելի է պարզել հետևյալ երկու օրինակների համեմատութունից.

«Ապա իբրև ետես... Փառանձեմ... հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից... յերեսաց (= երեսից, պատճառով) զօրացն Պարսից» (ՓԲՊՀ, IV, ԾԵ)։

«Ձով սիրով ես ընդունիմ  
...նա յետև ինք յերեսաց (= առերեսս)  
Յուցնէ զիր սէրն ու անկատար» (ԿԵՏ, էջ 193)։

Օրինակներ մյուս նորակազմութուններով. «Ի յառաջին օրն տուր կէս լիտր և հետէն յաւելցուր» (ՄՀՁՄ, էջ 41)։ «Յետևայն կերակուր տուր թաղթ և մաշ...» (ն. տ. էջ 42)։ «Եւ տուր յամէն օր շորս նուկի յանօթուց» (ն. տ. էջ 84)։ «Եւ այն խոցն, որ ի զխուն լինի՝ հիմնէ ողջացնէ» (ԱԱԱԱ, էջ 94)։

«Առաւօտուց ծոցիդ վարդն կու փովի» (ՆՀԲ, էջ 18)։  
«Առաւօտուց երկնից ցօղն կարմիր վարդի վրայ մաղած» (ն. տ. էջ 24)։  
«Վերնական օրինաց լինիս դու հմուտ,  
Վաղէն օրն ատենին գտնուս քեզ ի մօտ» (ՄՆԲ, էջ 148)։

Գործիական հոլովով կազմված գրաբարյան վաղիւն (ՀԵԲ, էջ 172), սակաւ (մի) (ՀԵԲ, էջ 151, 152, ԿԵՏ, էջ 182, ՄՀՁՄ, էջ 26 ևլն), բնաւ (բուն + աւ) (ՆՇԲԶ, էջ 577, 579, ՀԵԲ, էջ 146, 198, 206 ևլն), շուտով (ԿԵՏ, էջ 163, 194, ՄՀՁՄ, էջ 14, 17, 20, ՀԹՏ, էջ 146, ՄՆԲ, էջ 104, 130 ևլն), բարով (ՄՀՁՄ, էջ 137)<sup>7</sup> և այլ մակբայների կողքին ունենք նորակազմ մուրատով, ամենովտ (ՄՀՁՄ, էջ 71, 89, 123, 131), ցորեկով (ՆՔԳ, էջ 50, 54) մակբայները. ինչպես՝ «Ոչ հեծնուն ի ձի, ոչ գահեն մուրատով» (ԿԵՏ, էջ 212)։

«Երնէկ ես անոր կուտամ որ առեր իւր եարն է փախեր...  
Առեր ի պաղչան մտեր, ցորեկով զդնչիկն է պագեր» (ՆՔԳ, էջ 50)։  
«Ամենովտ (= ամեն կերպ) զհով ջուրն արգիլէ...» (ՄՀՁՄ, էջ 71)։  
«Ամենովտ (= ամեն ինչով) օգտէ մեծ թիրեաքն» (ն. տ. էջ 123)։  
«Ամենովտ (= այս բոլորով, ի վերա այս բոլորի (այս ջերմերոյս ստածումն այն է՝ որ յառաջ զգլուխքն... սրբէ» (ն. տ. էջ 131)։

Հայցական հոլովից կազմված մակբայները հիմնականում գրաբարյան են, ինչպես՝ ի դուրս (ՀԵԲ, էջ 155, ԿԵՏ, էջ 200), ի ներս (ՀԵԲ, էջ 159, 162), ի յետ (ՀԵԲ, էջ 163), ի վայր (ՀԵԲ, էջ 155, 156, 183 ևլն), ի վեր (ՀԵԲ, էջ 170,

<sup>7</sup> Մենք սրանք դրել ենք «պարզ» մակբայների շարքում, քանի որ միջին հայերենի լեզվական միջոցներով կազմված չեն։

179), յուստ (ՅրԲ, էջ 48), ցնեբֆս (ՄՀԶՄ, էջ 76), ցնեբֆսէ (ն. տ. էջ 6, 59, 63):

Բայական թեքված ձևերից կազմված մակբայների շենք հանդիպել միակը դարձեալ բառն է (ՀԾԲ, էջ 156, 178, ՄՀԶՄ, էջ 14, 37 ևլն), որը գրաբարում ևս մակբայ էր. հմմտ. «Դարձեալ ասեն. «Զբարսմունսն... ցորդին իւր ցրմիզդ ետ» (Եկեմ, II, Ե): Ահա այս պատճառով մենք դարձեալ մակբայը դրել ենք «պարզ» մակբայների մեջ:

5. Նկարագրական մակբայներ. — Որևէ լեզու կամ նրա մեկ առանձին շրջանը ինչքան էլ հարուստ լինի արմատական, ածանցավոր թե այլ կազմությամբ մակբայներով, այնուամենայնիվ, անկարող է այդ բառերով գոհացնել մարդու խոսքը: Ինչպես նույնիսկ հոլովներով հարուստ լեզուներում կան կապերի և այլ միջոցներով հոլովների դրսևորման բազմաթիվ նրբություններ ու երանգներ, այնպես էլ ամեն լեզու ունի իր նկարագրական կազմությամբ խոսքի մասերը: Անշուշտ, ամեն երևույթ ունի իր պատճառը. երբ ի մոտո ենք բննում խնդիրը, նկատում ենք, որ, օրինակ, միջին հայերենում նկարագրական կազմությամբ շատ մակբայներ առաջ են եկել մեր լեզվի տվյալ շրջանում գրաբարյան համարժեքների կորստյան, ավելի ճիշտ՝ կենդանի կիրառություն չունենալու հետևանքով: Այսպես, օրինակ՝ միջին հայերենում ունենք յամբեւայն առեւ, մինչև հիմայ, էնտուց յետ, յայն պահն (= անմիջապես) նկարագրական մակբայները և անոր համար որ (= որովհետև) շողկապը: Կարծում ենք, որ սրանք նոր լեզվամտածողության հետևանք են՝ փոխարինած գրաբարյան հանապազ, ցայժմ, ցարդ, տպա, այնուհետև, վաղվաղակի մակբայներին և քանզի շողկապին: Մեր ասածը, անշուշտ, բացարձակ իմաստով չպետք է հասկանալ. մենք գիտենք, որ գրաբարն ինքն էլ հարուստ է նկարագրական մակբայներով, և միջին հայերենով գրող մեր հեղինակներից շատերը նույնիսկ քաջ գիտեին գրաբարը, սակայն ստեղծագործությունների մեջ անպայման պետք է երևար ժամանակի կենդանի խոսակցական լեզուն կամ բարբառը: Զէ՛ որ ամբողջ միջին հայերենն էլ հենց այդպիսի լեզվական իրողությունների մի ամբողջություն է:

Ինչևիցե, մեր նպատակը նման մանրագնին հետազոտություն կատարելը չէ: Նկատենք, որ ստորև բերվող նկարագրական մակբայների մեջ կան հենց գրաբարյան կազմություններ ևս: Մյուս կողմից՝ հայտնի է, որ նկարագրական մակբայները անխսկական բարդություններ են, մեծ մասամբ հարադրություններ, ուստի և՛ անկայուն կապակցություններ, այնպես որ կապակցության ընկալումն ու կիրառական իմաստը այդպիսի բառերը խմբավորելու հարցում մեծ դեր է կատարում: Օրինակ, ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում, ունենք սրտի մտօ՛ նկարագրական մակբայը. ինչո՞ւ մակբայ. որովհետև ստորև բերված նախադասություններում այդ կապակցությունը այլ կերպ չի կարելի ընկալել, չի կարելի բաղադրիչները որպես մեկը մյուսից անկախ բառ ընկալել. «Ապա իբրև ետես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդին բարբարոսաց, որք սրտի մտօ՛ եկեալ էին ի վաստակ արքունի... ուրախ լինէր...» (Եղիշե, I, յեղ.):

«Յակոր, զարթի՛ր ի քնոյ մեղաց,  
Սրտի մրտօ՛՛ գականջըդ բաց» (ՀԾԲ, էջ 172):

Միջին հայերենում ևս նկարագրական մակբայները կազմված են լինում երկու և երեք բաղադրիչներով: Մեր հաշվումներով, երկու բաղադրիչով կազմված նկարագրական մակբայները եռակի ավելի են, քան երեք բաղադրիչով կազմվածները: Երկու բաղադրիչով կազմված նկարագրական մակբայներից են՝ նոյն ժամայն (ՎԱԱ, էջ 148, 169)<sup>8</sup>, սրտի մտօք (ՀԵՐ, էջ 172), յամբեայն առեն (ն. տ. էջ 198), հագար բերան (ԿԵՏ, էջ 159), շուտով թէզ (ԿԵՏ, էջ 211), դէմ յանդիման (ՆՇՐԶ, էջ 577, ՎԱԱ, էջ 155), այլ առելի (ՄՀԶՄ, էջ 8, 13, 22, 62, ՍԳԴ, էջ 18 կն), եւս առաւել (ն. տ. էջ 35, ՍԳԴ, էջ 19, ՆՀՐ, էջ 80 կն) կամայ ակամայ (ՖՐԲ, էջ 81), մինչև հիմայ (ն. տ. էջ 105), միշտ յարակայ (ն. տ. էջ 106), մէկ այլ (=նորից, ՖՐԲ, էջ 196), մէկ բերան (ՆՀՐ, էջ 24), էնտուց յետ (ՆՀՐ, էջ 87), տեղով-տանով (ն. տ. էջ 184), յայն պահն (=անմիջապէս-ԱԱԱԱ, էջ 39, 126, 171), ամենայն դիմաւ (ն. տ. էջ 102, 108, 118, 173) ևլն: Օրինակներ. «Ասէ Պատէհին, թէ այն որ վայրի է՝ ուժով է ամենայն դիմաւ քան զածուոցն» (ԱԱԱԱ, էջ 108): «...Ածէ ի յարանքն եւ ի ճոններն և նա, յայն պահն զծածուկ մարմինն շարժէ եւ պնդէ» (ն. տ. էջ 39):

«Երթամ, աղաչեմ, բալքի ըոհամ անի, դուռն բանայ,

Մէկ բերան ինձ հետ խօսի, որ էրված սիրտս հովանայ» (ՆՀՐ, էջ 24):

«Երբ անձդ մտաւ սլաքաւ նեղրն,

էնտուց յետ կուզես՝ խրատ տա վարդապետըն» (ՆՀՐ, էջ 87):

«Յամենայն առէն, ի յոյս ըզքեզ ունիմ» (ՀԵՐ, էջ 198) ևլն:

Երեք բաղադրիչով կազմված մակբայներից են՝ հետ մի այլ (ԿԵՏ, էջ 190), օր մի երկու՞ (ն. տ. էջ 25), օր քան զօր (ն. տ. էջ 34, 65), մէկ հետ մէկի (ն. տ. էջ 36, ՀԹՏ, էջ 167), փոքրիշատէ (ՍԳԴ, էջ 27, 32), ևս քան զևս (ՎԱԱ, էջ 108, ԳԱՐ, էջ 111) ևլն: Օրինակներ. «Եւ օր մի երկու՝ շաքարով փոխինտ ուտէ» (ՄՀԶՄ, էջ 25):

«...ննդրի յայն սուրբ տեսոյն,

որ հետ մի այլ (=վերստին, նորից) առ իս նա գայ» (ԿԵՏ, էջ 190):

«Մէկ հետ մէկի (=հաջորդաբար, մեկը մյուսի ետևից) մրգունք (=մրգերը) հասած» (ՀԹՏ, էջ 167) ևլն:

#### ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԽՄԱՍԻ

Արդի քերականագիտության մեջ մակբայների տեսակներն ընդունված է որոշել ըստ նրանց ցույց տված հատկանիշի, այն է՝ թի տվյալ մակբայը խոսքի մեջ հիմնականում ի՞նչ իմաստ է արտահայտում: Ընդունված է մակբայները խմբավորել հետևյալ շորս տեսակների մեջ. տեղի, ժամանակի, ձևի և շափի:

Պետք է նկատի ունենալ, որ խոսքը տվյալ մակբայի՝ լեզվի մեջ ունեցած առավել ընդհանուր կիրառության մասին է, իրականում շատ քիչ մակբայներ կայուն կերպով պիտի կարողանային այս կամ այն տեսակի մեջ մնալ: Շատ մակբայներ, ըստ իրենց կիրառության, մի դեպքում կարող են արտահայտել

<sup>8</sup> Ընդգծվածները, թվում է, նորակազմություններ են:

<sup>9</sup> Ըստ երևութի, զերկեամ մի ձևի հետևողությամբ կազմված:

մեկ հատկանիշ, մյուս դեպքում՝ մեկ ուրիշ հատկանիշ, ըստ այնմ էլ՝ տվյալ կիրառությամբ համարվել այս կամ այն տեսակի մակբայ: Օրինակ՝ միջին հայերենը ֆիշ ածական-մակբայի կրկնությամբ ունի ֆիշ-ֆիշ մակբայը, որը, թվում է, շափի հատկանիշ պիտի արտահայտի, և իսկապես՝ «Բայց ֆիշ-ֆիշ թող խմէ» (ՄՀՁՄ, էջ 43) նախադասության մեջ այն շափի մակբայ է, սակայն՝ «Քիշ-ֆիշ նա իվեր կուգայ, զբարի լոյսն ի հետ կու բերէ» (ՆՔԳ, էջ 64) նախադասության մեջ ֆիշ-ֆիշ մակբայն ավելի շուտ ձևի հատկանիշ է արտահայտում, ուստի ձևի մակբայ պետք է համարել: Այսպես և՛ եթե «Ժամ-ժամ դիմ դարիպուծիւնս ես յիշեմ ու նստիմ ու լամ» (ՆՔԳ, էջ 102), նախադասության մեջ ժամ-ժամ մակբայը դեռ կարող է ըմբռնվել ժամանակի հատկանիշ արտահայտելու՝ «ամեն ժամ» իմաստով, ապա «Իւր նշանն այն է, որ երեսուկարմիր լինի, մէջընդմէջ և ժամ-ժամ դեղին դառնայ» (ՄՀՁՄ, էջ 16) նախադասության մեջ, թվում է, ժամանակի գաղափար չի արտահայտում: Հենց մէջընդմէջ մակբայի կից կիրառությունը ցույց է տալիս, որ երկրորդ նախադասության մեջ ժամ-ժամ մակբայը ձևի հատկանիշ է արտահայտում՝ մեկ-մեկ ձևի մակբայի իմաստով կիրառվելով: Նշանակում է, շատ մակբայներ անփոփոխելիորեն այս կամ այն խմբին չեն պատկանում, այլ ըստ կիրառության են գնահատվում: Ահա այստեղ պետք է խոսել ընդհանրական մակբայների մասին, որոնք այլ բան չեն, քան նույնիսկ խոսքից դուրս, որպես անկախ կենտ բառեր իրենց մեջ երկու կամ ավելի հատկանիշ արտահայտող մակբայներ, ինչպես՝ դեռ, կրկին, յանկարծ, օրդաւուր ևլն: Օրինակ՝ «Զինչ աստուած է պատրաստել, օր զաւուր ի քեզ հասանէ» (ՅրԲ, էջ 42): Օրգաւուր մակբայը կարող է ընկալվել և՛ որպես ժամանակի հատկանիշ արտահայտող, և՛ որպես ձևի հատկանիշ արտահայտող բառ:

Հետաքրքրություն կարող է ներկայացնել այն հարցը, թե վերոհիշյալ շորս տեսակի մակբայներից ո՞րն է ավելի հաճախ հանդիպում հայերեն խոսքի մեջ: Մեր մոտավոր հաշվումներով ձևի մակբայները խոսքի մեջ շատ ավելի հաճախ են հանդիպում, քան մնացած երեքը միասին վերցրած: Այսպես, օրինակ՝ միջին հայերենի 2 շրջանների 10 հեղինակների երկերից դուրս գրված ձևի մակբայները (չհաշվելով դեռ ածանցավոր մակբայները) մոտ մեկ հարյուր են. ժամանակի մակբայները՝ մոտ 50, տեղի մակբայները՝ մոտ 30, իսկ շափ ու քանակի մակբայները՝ մոտ տասը: Հետաքրքրական է, որ այդ նույն համամասնությունը պահպանվում է նաև փոխառյալ մակբայների մեջ:

1) Զևի մակբայներ. — Արտահայտում են ձևի հատկանիշ և նախադասության մեջ հարաբերվում են ստորոգյալի հետ՝ արտահայտելով գործողության կատարման ձևը: Ստորև այբբենական կարգով տալիս ենք միջին հայերենում կիրառվող ձևի մակբայները. այլովայր, այլուայր, այլվա, այլվի, անգուման, աղէկ, առժամայն, առանձին, ամօթեբես, անդադար, անյապաղ, անթաց, անդուր, արտասուագին, ամենայն դիմօֆ, անօթեց, յանօթուց, ամենովտ, բարով, բարկ-բարկ, բացիբաց, բէգուման, գէնայ, դարձեալ, ետ, երագ-երագ, երնդեռ, եանայ-եանայ, զիա՛րդ, զատիգատ, ընդէ՛ր, ընցգուն, ընդուր, թուաբար, ժամ-ժամ, ինֆըստիեֆն, իյետ, խոլուր, խիտաղխիտ, խեռուխատ, խելագնաց, ծակ-ծակ, ծին-ծին, կամկար, կամաց, կտուր-կտուր, կում-կում, կաղընդկաղ, հանց, հայնց, հետ մի այլ, հագար բերան, միասին, մէն, մէն-մէն, մաս-մաս, մին-մին, միբստմիոջէ, մանիման, մէջընդմէջ, մէկտեղ, միաբան, միատեղ, միատակ, միալար, մէկի հետ մէկի, մէկ բերան, մուրատով, յանախ, յանկարծ,

յերկան-յերկան, յետիյետ, յերեսաց, յերագ, նօւր-նօւր, նահախ, շուտ-շուտ, շարվէշարով, շուտով թէզ, ո՛նց, ողորմագին, պինդ-պինդ, պարզերես, պարապար, ստէպ, ստէպ-ստէպ, սաստկագին, սրտի մտօք, վաղվաղակի, վեր-վեր, վագ-վագ, տկուկ-տկուկ, տակ-տակ, տաք-տաք, տրտմագին, տիքա-տիքա, տեղով-տանով, ցիրեցան, օլոր-օլոր, ուշիկ-ուշիկ, փախիփախ, փարափարա կլն: Սրանց վրա պետք է ավելացնել նաև մակբայակերտ -(ա)քար, -(ա)պէս, -օրէն ածանցներով կազմվող գրեթե բոլոր մակբայները (լրիվ ցուցակը տե՛ս էջ 415—417), ինչպես նաև -ակի, -ին ածանցներով կազմվող մակբայների մեծ մասը:

Ինչպես վերևում բերված ցուցակում կարելի է տեսնել, գոյականների, ածականների, թվականների ու մակբայների կրկնությամբ կազմված մակբայները ձևի հատկանիշ են արտահայտում, ձևի մակբայներ են, օրինակ՝ «Թըրչիմ և գամ երագ-երագ» (ԳԱՏ, էջ 131): «Եւ սովորեցաւ տղայն և փոքր փոքր աճեցաւ ի գողութիւն» (ՎԱԱ, էջ 14): «Եւ զան տեսեալ ամենայն կենդանեացն եկեալ ժողովեցան ի վերայ նորա և շարաշար հարին զնայ» (ն. տ. էջ 18): «Գայլքն համբերեցին .Ճ.աւր.Ճ. տարուն և ժողովեցան դաս-դաս, անկան ի վերայ այծիցն և կերան» (ՎԱԱ, էջ 43): «Եւ ապա տուր կում կում որ խմէ» (ՄՀՁՄ, էջ 44):

Այնուհետև առանձին գործածվելիս ժամանակի, տեղի ու շարժի հատկանիշ արտահայտող մակբայներն իսկ կրկնությամբ գործածվելիս ձևի հատկանիշ են արտահայտում, ձևի մակբայներ են դառնում, օրինակ՝ «Ոտքերն էլ վեր-վեր [է] քաղում» (ՆՀԲ, էջ 120): «Յորժամ տեսանեն զհիւանդն, որ շուտ-շուտ շարժի... նա այդ ամէնտ ցուցանեն, որ հիւանդութիւնն սուր լինի» (ՄՀՁՄ, էջ 142): «Եւ հայր վանացն բարէկենդանին .Գ.ազգ ժողով արար և յետիյետ...» (ՎԱԱ, էջ 164) կլն:

2) Ժամանակի մակբայներ.— Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը: Ինչպես արդեն վերևում ասել ենք, որանք ձևի մակբայներից հետո առավել շատ հաճախականությամբ են օգտագործվում խոսքի մեջ:

Միջին հայերենի ժամանակի մակբայներն են՝ աղդ, այժմ, առաւօտուց, այսօր, գիշեր ու ցերեկ, դիւ, երէկ, հրքեմն, զկնի, զօրն, թէզ, թէզ մի, թէզ մը, կանուխ, հուսկ, հիմա, հիմի, հիմիկ, հիմի էլ, մինչև հիմայ, միշտ, յարակայ, յէզուց, յաւէտ, յայժմիկ, յափտեան, յետոյ, (ի)յար, յօրէօր, յաւէտ միշտ, յետևայն, յետևանց, յամենայն ատեն, յայնժամ, յորժամ, նախ, շուտ, շուտով, պահ մի, վաղն, վաղիւն, վաղվնիքն, վաղէն, վաղուենէ, տարէտար, տիւ և գիշեր, գիշեր ու ցերեկ, ցորեկով, օր մի երկու, օրգատուր, օր քան զօր, ուրեք, ուշ, ուստի կլն:

Ինչպես վերևում բերված ցուցակից էլ երևում է, ժամանակի մակբայներն ինքնին ժամանակի գաղափար արտահայտող բառեր են. այստեղ շնք դտնում այլևայլ խոսքի մասերի կրկնությամբ կամ ածանցումով կազմված մակբայներ: Նույնիսկ նկարագրական եղանակով կազմված ժամանակի մակբայները կազմված են ժամանակի գաղափար արտահայտող բաղադրիչներից, օրինակ՝ «Եւ օր մի երկու՝ շաքարով փոխինդ ուտէ» (ՄՀՁՄ, էջ 25): «Եւ երբ իմանաս որ օր քան զօր երակն կու տկարանայ, ապա զհացն ի զինին թաց և տուր...» (ն. տ. էջ 34):

Ժամանակի մակբայները ժամանակի տևողության համեմատ իրենց արտահայտած իմաստով ենթաբաժանվում են մի քանի տեսակների.

ա) Ժամանակի տարրորոշում շարտահայտող, այլ ընդհանրապես մըշտատևություն արտահայտող մակբայներ, ինչպես՝ միշտ, յաւետ, յամենայն ատեն, յաւիտեան, յաւէտ միշտ, միշտ յարակայ ևլն: Օրինակ՝ «Դու ես անմահ, միշտ կենդանի» (ՖրՔ, էջ 139): «Ուրախանանք միշտ յարակայ» (ն. տ. էջ 106): «Յաւէտ միշտ երգել ըզփառս անձանց երից» (ՀՅԲ, էջ 223) ևլն:

բ) Տարրորշված ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի (ժամանակի բաժանման իմաստով) ցույց տվող. ինչպես՝ այժմ, արդ, հիմա, հիմի, հիմիկ, հիմի էլ, կանուխ, ուշ, յետոյ, շուտով ևլն: Օրինակ՝

Վեր ես կացել եիմի էլ նոր,

Դու՝ ինձ գրել ո՞ծանաւոր» (ՆՀԲ, էջ 111):

«Թէ այդ քեզ շեղաւ խրատ, մեծ վընաս յետոյ կամի գալ» (ՖրՔ, էջ 91) ևլն:

գ) Համեմատաբար ստույգ ժամանակի գաղափար արտահայտող մակբայներ. առաւօտուց, վաղիւն, վաղվինիքն, վաղէն, վաղուենէ, յետևանց, ցորեկով, այսօր ևլն: Օրինակ՝

«Իւր եղբարքն առ ինք եկան,

Զփեսաղբայրն առին զփեսայն,

Վաղվնիքն (=վաղ առավոտյան) ի յորս ելան» (ՄՆԲ, էջ 103):

«Երնէկ ես անոր կուտամ որ առեր իւր եարն է փախեր,...

Առեր ի պաղչան մտեր, ցորեկով զղնչիկն է պագեր» (ՆՔԴ, էջ 50):

«Վարդն ալ խօշ լէզէթ ունի՝ վաղվէնէքն (=վաղ առավոտյան) երբ դպչի արև» (ն. տ. էջ 56):

«Ուտէի, խմէի հետ իմ սիրելեաց,

Նայ մահն յանկարծակի հասաւ յետևանց» (ՄՆԲ, էջ 158) ևլն:

3) Տեղի մակբայներ. — Սրանք ցույց են տալիս գործողութեան կատարման տեղը: Տեղի մակբայներն են՝ առջև, ասկից, անկից, աստուստ, աստ, այտի, անդ, անդր, աստէն(ս), անդէն(ս), աստանօր, անտանօր, աստընուօր(ս), աստի, անտի, ի բաց, իդեմիդեմ, ի վերուստ, ի ներս, ի դուրս, ի վայր<sup>10</sup>, ի վեր<sup>10</sup>, հոս, հոն, կշտին, հեռի, հետ, հեռուստ, յետույառաջ, յուստ, վայր, վեր, ներքև, ցներքս, ցներքսէ ևլն:

Ինչպես կարելի է տեսնել բերված ցուցակից, տեղի մակբայները տեղի գաղափար արտահայտող բառերից են կազմված: Տեղի մակբայները շնն կազմվում նաև տարբեր խոսքի մասերի բարդություններով, այլ միայն՝ տեղ ցույց տվող բառերից: Ավելին. սրանցից մի քանիսը նույնիսկ տեղ ցույց տվող գոյականի հայցական հոլովածներ են՝ ի նախդիրով կիրառված, ինչպես՝ ի ներս, ի դուրս, ի վայր, ի բաց (=հեռու), ի վեր: Մենք կարծում ենք, որ սրանք չպետք է դիտվեն որպես նախդրավոր գոյականներ, այլ որպես մակբայներ, քանի որ միջին հայերենը դրանք պատրաստի վերջերի է գրաբարից: Ի ներս, ի դուրս բառերում մենք գտնում ենք ս հոգնակի հայցականի հոլովակերտ մասնիկը, որը միջին հայերենում որպես այդպիսին չի արժեքավորվում: Մյուս կողմից՝ ց նախդիրով կազմված ցներքս, ցներքսէ, ցներքսև մակբայներն ունենք, որտեղ արդեն գրաբարյան ենթադրելի բառաձևը չի պահպանված, իսկ այդ բառերի կիրառությունը կասկած չի թողնում, որ դրանք ոչ թե

<sup>10</sup> Այդ թվում և սրանցով բարդված բառերը՝ երեսնիվայր, երեսդիվեր, վերաստիվայր, ծովնիվայր ևլն:

նախդրավոր գրչականներ են, այլ մակբայներ: Բերենք օրինակներ. «Բսկ ցներֆսէ պատճառն լինի որպէս տրամելն...» (ՄՀՁՄ, էջ 6): «...Եւ պինչսն ցներֆս քորին...» (ն. տ. էջ 76): «Եւ ժողովի այն պաղլամնի ստամոքսն կամ ցներֆսն յամենայն հրախն» (ն. տ. էջ 88):

4) Չափի մակբայներ.—Չափի մակբայներն առանց որոշակիութեան արտահայտում են գործողութեան կատարման շափը: Միջին հայերենում համեմատաբար քիչ թվով շափի մակբայներ են հանդիպում: Դրանք են՝ առաւել, այլ աւելի, գլխովի, ևս քան, լման, կարի, համակ, հեղ մի, հաղ մի, մէկ-մէկ, մկ այլ, յոյժ, յովով, սակաւ-սակաւ, տուպլ և այլն:

Շատ անգամ դժվար է շափի մակբայի և ձևի մակբայի սահմանները որոշել, ուստի մենք որպէս շափի մակբայներ ներկայացրել ենք առավել անառկելիները: Այսպես, թվում է, թե լման նոր բառը ավելի ձևի զաղափար պիտի արտահայտի, սակայն մեր օրինակներում այն շափի իմաստով է կիրառված. ինչպես՝ «Ան ատենն ժողովել կու պիտի, որ լման (=ամբողջովին) հասնի» (ԱԱԱԱ, էջ 21): «Եւ կուտէ զինքն լման» (ն. տ. էջ 38): Նույնպես և՛ առաւել մակբայը, կարող է հանդես գալ և՛ որպէս շափի մակբայ, և՛ որպէս ձևի: Ներքոհիշյալ օրինակներում արտահայտում է գործողութեան շափը.

«Եւ հայր վանացն ասաց—Առաւել ճրգնի,

Վասն այն է նրբաձայն և մօրուս շունի» (ԳԱԲ, էջ 112):

«Արդ վասն ջերմանցն գիտութեան առաւել պէտ առնել արժան է յաղագս երից պատճառանաց» (ՄՀՁՄ, էջ 2):

Անառարկելիորեն շափի մակբայներ են նաև կարի և յոյժ բառերը, որոնք դրվում են ինչպէս ածականների ու մակբայների (հատկանիշի հատկանիշ արտահայտելու իմաստով), այնպէս էլ ստորոգյալների վրա, ինչպէս՝ «Բայց կարի շատ ի լաց կեցաւ» (ՆՇԲԶ, էջ 561): «Որթըն լինէր յոյժ դիրածին» (ն. տ. էջ 562): «Այս կարի բարձրագոյն մըտացս եղական» (ՀԵԲ, էջ 189): «Դրժոխոց ահն է պատեալ և յոյժ սարսեցայ» (ՀԵԲ, էջ 205):

5) Ընդհանրական մակբայներ.—Ինչպէս անվանումն էլ ցույց է տալիս, այս խմբի մեջ մտնող մակբայները իրենց մեջ համատեղում են մեկից ավելի իմաստ, այնպէս որ տվյալ կիրառութիւնից դուրս դժվար է պնդել, թե այդ մակբայն ինչ իմաստ է արտահայտում՝ տեղի, ձևի, շափի, թե ժամանակի: Այսպէս, ուրեմն՝ ընդհանրական են կոչվում այն մակբայները, որոնց մեջ «երկու կամ ավելի իմաստներն այնպէս են համատեղվում (հավասար կամ համարյա հավասար շափով), որ անկարելի է այդ բառը բնորոշել դրանցից միայն մեկով և մյուսին կարևորութիւն չտալ» (Ս. Աբրահամյան, ԶԽՄ, Երևան, 1965, էջ 277):

Միջին հայերենի ընդհանրական մակբայներն են՝ ամենևին, իսկոյն, յառաջ, դեռ, կրկին, յարժամ, յար, յետ, իսպառ, հաճապագ, օրստօրէ, շուտով, յայն պահն, փոքրիշատէ, (ի)տականց, քիչ-քիչ ևլն: Օրինակներ՝ «Հանապագ ի վարդի ջուրն և ի քաֆուրն հոտոտալ տուր» (ՄՀՁՄ, էջ 17): «Զօր հաճապագ դու կաս ի քուն» (ՅԲԲ, էջ 100): «Ով գեղին ագին մորթովն և մսովն և ոսկրովն այրէ և տրորէ գինով և աւծէ ի յարանքն և ի ճոններն նա, յայն պահն զժածուկ մարմինն շարժէ և պնդէ» (ԱԱԱԱ, էջ 39): «Եւ որ զարարե՛հ ուտէ եւ վայրի լապրստակ և թէ այս կաւես ուտէ նա, յայն պահն փսխէ եւ խալսի» (ն. տ. էջ 126) ևլն:



Այս խոսքի մասի մեջ մտնող բառերը, ինչպես հայտնի է, գրաբարի ներկա րերականություններում ևս դիտվում են որպես նախդիրներ (առ, զ, ընդ, ըստ, ի, ց) և նախադրություններ (առանց, վասն, առաջի ևլն): Մենք այս երկու հասկացությունները միացնելով քննում ենք որպես կապ, անշուշտ, ոչ թե արդի հայերենի քերականության ավանդույթով, այլ խնդրո առարկա հարցի ներքին էությունից ելնելով: Նախ՝ հայտնի է, որ գրաբարում իսկ նախդիրները կորցրել էին իրենց բառական անկախությունը. դրա լավագույն ապացույցն այն է, որ շատ նախդիրներ հայոց լեզվի՝ մեզ ավանդված առաջին գրավոր նմուշներում իսկ ձուլված են բառարմատներին, ինչպես՝ ընկեռ (ընդ+կեր), ընդունել (ընդ+ունել), առողջ (առ+ողջ) ևլն: Մյուս կողմից՝ «նախադրություն» անվանումը հունարեն προθεσις բառի պատճենումն է: Իրականում գրաբար լեզվի մեջ իսկ այդ բառերից ոչ բոլորն են կապվող բառից առաջ դրվում (ինչպես՝ «Հինգ հարիւրով շափ յականէ յանուանէ ճանաչեմ» — Նղիշե, «Ուղտուց պէս անհեթեթս վազիցեմք» — Հայկազեան բառարան, հ. II, էջ 647) ևլն:

Առավել ևս միջին հայերենում, որտեղ գրաբարի շարադասության փոփոխության հետևանքով գրաբարում կապվող բառից առաջ դրվող շատ կապեր վեր են ածվել ետադրությունների, իսկ նոր առաջացած կապերը մեծ մասամբ ետադրություններ են:

Կապ խոսքի մասը, թվում է, ամենից վիճելին է խոսքի մասերի համակարգում: Բավական է ծանոթանալ կապի մասին գրված հատուկ ուսումնասիրություններին և դպրոցական ու բուհական դասագրքերում այդ խոսքի մասի բնութագրումներին, տեսնելու համար, թե ինչպես հեղինակները այդ խոսքի մասի սահմանման, ընդգրկման և տարածքի իմաստով իրարից ինչքան տարբեր տեսակետներ են արտահայտում<sup>11</sup>: Մոտեցումների զանազանությունն ու դժվարությունները հենց ուսումնասիրվող նյութից են բխում: Խնդիրն այն է, որ մի քանի խոսքի մասեր, հատկապես գոյականներն ու մակբայները, բացի տվյալ խոսքի մասի հատկանիշի դրսևորումից, կարող են հանդես գալ հոլովառու կիրառությամբ (որպես կապ)՝ արտահայտելով հոլովական մի նրբերանգ: Օրինակ՝ «Արաստուլուխիս... ինքն յերկան զրեւանդն է. և ինքն խոտի տակ է» (ԱԱԱԱ, էջ 86) նախադասության մեջ տակ բառը գոյական է՝ «արմատ» նշանակությամբ: Անմիտ բան կստացվեր, եթե խոտի տակ (ներքև) իմաստով հասկանայինք: Մինչդեռ՝ «Գամ իջանեմ վարդենոյն տակ» (ԴԱՏ, էջ 131) նախադասության մեջ տակ կապ է, ետադրություն: Նույնպես և՝

«Ձայս փոխարէն հատուցիք.

Ձկողըն տիգաւ խոցեցիք» (ՀԵԲ, էջ 243):

Վերևի նախադասության մեջ փոխարէն գոյական է կամ մակբայ, մինչդեռ՝ «Այնոր փոխարէն զի՞նչ խորհեցար» (ՖՐԲ, էջ 209) նախադասության մեջ՝ կապ է:

Շատ անգամ նույնիսկ դժվար է որոշել, թե տվյալ կիրառությամբ բառը կապ է, թե մակբայ. օրինակ՝ «Ելոյ ժողուեցի զիմ մեղքն ու դրբի առջև ու լացի» (ՀԵԲ, էջ 158) նախադասության մեջ առջև բառն, անշուշտ, իմ առջև

<sup>11</sup> Տե՛ս Ս. Աբրահամյանի վերոհիշյալ գիրքը, էջ 280—290:

կապվող բառ+կապ բառակապակցության սեղմ արտահայտությունն է, սակայն առաջև բառը մենք չենք կարող կապ անվանել, քանի որ տվյալ կիրառության մեջ չկա կապվող բառ (ս-ն հոդ է), մինչդեռ առջև բառը նախադասության մեջ պարագայի պաշտոն ունի, ուստի պետք է մակբայ համարել: Այս տեսակետից միջին հայերենում շատ դժվար է մի քանի բառերի (մօտ, մէջ, նման) խոսքի մասսային պատկանելությունը որոշելը: Այսպես, օրինակ՝

«Գովելի ծաղիկ ես դու, ի մէջ ծաղկանցն վարդ թաջիսար» (ՆՀԲ, էջ 32):  
«Բաղչի մէջն ամէն օր վարդ կու քաղես» (Ն. տ. էջ 40):

Վերևի նախադասություններում ի մէջ, մէջն բառերը կապեր են, քանի որ հատկապես մեջը, մեջանելը իմաստը չունեն, մինչդեռ ներքևի նախադասություններում դժվար է որոշել բառի ո՞ր խոսքի մասի պատկանելը՝ այն կախված է անհատական ընկալումից.

«էնօր կեօրայ է տան մէջն սըղալ» (ՆՀԲ, էջ 88):  
«Ով անմեղաց հոր կու փորէ,  
ինքն անկանի ի մէջ գըբին» (ՖրԲ, էջ 209):

Միջին հայերենով գրված գրականության մեջ շատ անգամ կան գրաբարյան ձևեր, որոնք, չգիտես՝ գրաբարի՞ լեզվաբանական պետք է տարրալուծվեն, թե՞ ըմբռնվեն որպես որդեգրված, կազմավորված, պատրաստի ձևեր: Այս իմաստով մենք առանձնապես չենք ծանրանում նախդիրների կիրառության վրա. քննել միջին հայերենում օգտագործված նախդիրները, նույնն է թե՞ քննել գրաբարի նախդիրները, որոնք գրաբարի անցյալի և ներկա քերականության գրքերում այնքան հանգամանորեն ուսումնասիրված են<sup>12</sup>: Սակայն արժե միջին գրական հայերենում նախդիրների կիրառության վրա մի համառոտ ակնարկ գցել. նախ՝ ասենք, որ ինչպես XII—XIV, այնպես էլ II շրջանի՝ XV—XVII դդ. հեղինակները հավասար չափով, ըստ պատեհի օգտագործում են գրաբարյան նախդիրները: Նախդիրների կիրառության տեսակետից դժվար է անհատական նախասիրության սահմանները որոշել, մինչդեռ մնացած կապերի կիրառության ժամանակ որոշակի տարբերություններ ենք նկատում: Այս հարցի մասին մանրամասն կիսովի քիչ ներքև:

Երկրորդ՝ միջին հայերենում չենք գտնում նախդիրների կիրառության այն հարուստ գրանցումները, ինչ որ մեր հին լեզվում: Այսպես՝ առ նախդիրը հայցական հոլովի հետ օգտագործվում է. առ ձեզ (ՀԵԲ, էջ 147), առ իս (ԿԵՏ, էջ 143), առ լատին իշխան (ՄՂԲ, էջ 146), մինչդեռ բացառական և գործիական հոլովների հետ կիրառության դեպքեր չեն հանդիպում: Զ նախդիրը հայցական հոլովի հետ որոշյալ առման դեպքում լայնորեն կիրառվում է, ինչպես՝ զիմ ցաւ (=իմ ցավը, ԳԱԲ, էջ 106), զիմ վարդն (Ն. տ. էջ 226) ևլն, մինչդեռ տրական, բացառական և գործիական հոլովների հետ կիրառության դեպքեր չեն հանդիպում: Հայտնի է, որ գրաբար լեզուն բացառական և գործիական հոլովներով զ նախդրի կիրառության հարուստ գրանցումներ ունեն, այն աստիճան որ՝ գրաբար լեզվում 6-ից ավելի հոլով ընդունողներն այդ կիրառու-

<sup>12</sup> Տե՛ս Արսեն Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 95—119; Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 228—262 ևլն:

թյունները համարում էին առանձին հոլով՝ պատմական (զընկերէ=ընկերոջ մասին) և պարտական (զտամբ=տան շուրջը): Ինչքանով որ ուշադիր ենք եղել, մեր կարդացած հեղինակների մոտ զ+գործիական միայն մեկ կիրառություն ենք գտել Մարտիրոս Ղրիմեցու մոտ, որը շատ ավելի ավանդապահ է, քան իրենից 200—300 տարի առաջ ապրած հեղինակները: Ահա այդ օրինակը՝

«Մնողքն աղէխորով դէմ գաւակաց լան  
Անկեալ զպարանցաւ նոցին հեկեկան» (ՄՂԲ, էջ 149):

Ընդ նախդիրն առավելապես օգտագործվում է սեռական և տրական հոլովների հետ. առաջին դեպքում արտահայտում է փոխաբեն, դիմաց իմաստը, ինչպես՝ ընդ որթոյ (=որթի փոխաբեն, ՖրԲ, էջ 153), կամ՝

«Զի՞նչ գործեցիք անօրէն,  
Զար՝ ընդ բարոյ փոխարէն» (ՀԵԲ, էջ 244):

Տրականի հետ արտահայտում է հետ իմաստը, ինչպես՝ ընդ իրար (ՀԵԲ, էջ 156), ընդ քեզ հաշտեցնես (ՄՆԲ, էջ 121) ևլն: Ընդ նախդրի այս կիրառությունը մարդկային խոսքի ամենահաճախական կիրառումներից մեկն է, սակայն միջին հայերենում առավել շահով այդ միտքն արտահայտվում է հետ կապով, որի մասին իր տեղում կխոսվի: Ընդ նախդիրը հայցական ու բացառական հոլովների հետ սակավ է հանդես գալիս, եղած օրինակներից են՝ ընդ ծագել արևուն (ՄՀԶՄ, էջ 46), ընդ մարդ և ընդ Աստուած (=մարդու և աստուծո միջև—ՖրԲ, էջ 121), ընդ աջմէ հօր (ն. տ. էջ 122), իսկ գործիական հոլովի հետ տակ իմաստով կիրառությունը գրեթե վերացած է՝ տեղը զիջելով տակ, ետեքն կապական կիրառություններին:

Ըստ նախդիրը կիրառվում է միայն տրական հոլովի հետ՝ «նման», «համաձայն» իմաստներով, ինչպես՝ ըստ օրինի (ԿԵՏ, էջ 145), ըստ յիմարաց (ն. տ. էջ 152), ըստ վկայութեան (ՄՆԲ, էջ 116) ևլն: Բացառական և հայցական հոլովների հետ ըստ նախդրի գրաբարյան կիրառությունների չենք հանդիպում:

Յ նախդրի կիրառությանը հայցականի հետ՝ «մինչև» իմաստի արտահայտությամբ, սակաւ ենք հանդիպում, ինչպես՝ մինչև ցեւթն օր (ՄՀԶՄ, էջ 86): Գրաբարյան նման կիրառության տեղ գտնում ենք մինչև կապի տարածուն կիրառություն: Նախդրի տրականի իմաստով ևս սակավ կիրառություններ ունենք. ինչպես՝ ցտէրն (=տիրոջը—ՍԳԳ, էջ 71, 72):

Նախորդների համեմատությամբ առավել հարուստ դրսևորումներ ունի ի նախդիրը: Նախ՝ միջին հայերենում ևս բացառական հոլովը ձևավորվում է ի նախդիրով, ինչպես՝ յամեն շարէ (ՀԵԲ, էջ 146), ի նմանէ, ի ձեզնէ (ՀԵԲ, էջ 218), ի շարեաց անտի (ՆՀԲ, էջ 84), ի դրախտէն (ՀԵԲ, էջ 156), ի ճամփէդ ի դուրս (ն. տ. էջ 144) ևլն: Երկրորդ՝ ճիշտ է, որ միջին հայերենը ներգոյականի գաղափարն առավելապես արտահայտում է նկարագրական ձևով՝ մեջ կապով, սակայն գրաբարաձև ներգոյականի բազում կիրառություններ կան, ինչպես՝ յարեայութեան (=արբայության մեջ—ՄՂԲ, էջ 109), ի մթութեան (=մթության մեջ—ՀԵԲ, էջ 150), ի հող (=հողի մեջ—ն. տ. էջ 144) ևլն: Երրորդ՝ կան նաև ի նախդրի՝ հայցական հոլովի հետ կիրառության դեպքեր, ինչպես ուղևորման իմաստով, այնպես էլ նախդրի տրականի կազմության

իմաստով, ինչպես՝ ի հաց (=հացի—ձԾԲ, էջ 158), մատնէ ի սով, ի սուր (ՄՂԲ, էջ 144), ի սուգ (=սգի. «երբ զայդ գիտէիր, գերի, որ սէրդ ի սուգ տի փոխի»—ՄՆԲ, էջ 126), երթայ ի յօտար երկիր (ձԾԲ, էջ 154), հասանն ի յօթեան (ՄՆԲ, էջ 113) ևլն:

Եթե համառոտակի բնութագրելու լինենք, թե հայոց լեզվի գրաբար և միջին հայերեն դրսևորումները կապերի գործածության տեսակետից ինչ վիճակ են ներկայացնում, ապա կարելի է ասել՝ որքան գրաբար լեզվի համար հարազատ են նախդիրների կիրառությունները, նույնքան միջին հայերենի համար հարազատ են կապերի (ետադրություններ և նախադրություններ) կիրառությունները: Մենք չենք մոռանում, անշուշտ, որ գրաբար լեզուն ևս նախդիրների հետ միասին հոլովական նրբություններ արտահայտելու համար շատ կապեր էր օգտագործում, սակայն ստորև բերված ցանկը կարող է պատկերացում տալ միջին հայերենի լեզվական այդ նախասիրության մասին: Այսպես, մեր կարդացած գրականության մեջ հանդիպած կապերն են. առանց, առջև<sup>13</sup>, առաջի, աղագաւ, առեն, առաջ, բայց (բացի), բերանով, դէմ, դիմաց, դէպ(ի), դուրս, ետ(ետն), ետևէն, գերթ (գերդ), գետ (զէդ), գինչ, գկնի, (ի)զատ, ընդդէմ, ժամանակ, ինչվի, իբր, իբրև, ինչպէս, (ի) խէշ, հետ, հեռի, հակառակ, համար, հանց(որ), հանդէպ, հանգոյն, համեմատ, հասար, ձեռաց, (ի) ձեռն, ևկրուն, մէջ, մօտ, մինչև, մինչ, մերձ, յետ, յաղագս, յանուն, յետև, յանդիման, նման, ներքև, ներքո, նմանակ, նմանապէս, շուրջ, որպէս, շափ, շափով, շափ, շուր(ի), պէս, սիրուն, (ի) վերայ, վրայ, վասն, վանց, տակ, փոխան, փոխանակ, փոխուէն, քով: Նաղաշ Հովնաթանն օգտագործում է նաև թուրքերենից փոխառյալ կապեր՝ կեօրայ, սապապ, վախտ(ն):

Ըստ տեսակների և ըստ կազմության խմբավորելիս՝ վերևի կապերը ստորև մենք մանրամասն քննելու ենք, սակայն այստեղ առավել ընդհանուր գծերով ներկայացնենք դրանք: Նոր կապերի մեջ ամենից շատը գրաբարին անծանոթ բառերն են, որոնք, անշուշտ, մի անգամից չբուսան, այլ դարեր շարունակ պետք է եղած լինեին խոսակցական լեզվում: Դրանք են.

Առեն—«Եւ կիելու առենն սեխի կեղև ձգես ի պտուկն» (ԱԱԱԱ, էջ 192):

Ինչի—«Ձի թէ գողունի լինի ու գովի, ինչի (=մինչև) տարի մի յետ դառնայ» (ՍԳԴ, էջ 61):

(ի)խէշ—«Եւ սպիտակ զառիկն ի քէմիայրերն ի խէշ (=մոտ) անցնել են թէ զիր շարութիւնն տանի շրիկ ձեթն» (ԱԱԱԱ, էջ 145):

Ճկրուն—«Ձար փուշ պատողին ևկրուն (=ի հեճուկս, հակառակ)՝ ես հագնիմ ճաղան կոռ» (ՆՔԴ, էջ 64):

Չափ—«...Եւ կամ սիսոան շափ (=շափ) տաք ջրով խմեն...» (ԱԱԱԱ, էջ 59):

Չուր(ի)—«Ձձեղ քշեմ շուրի Մարզվան (=մինչև)» (ՆԶԲ, էջ 97):

«Կարօտ են քո տեսուդ շուր Հապաշտան, է՞ր ես ինձնե հեռանալիս» (ն. տ. էջ 195):

Քով—«Եւ ի ըղրնկան քովն աւելի միսն ուտէ» (ԱԱԱԱ, էջ 133):

Այս խմբի մեջ պետք է մտցնել նաև փոխառյալ կապերը: Հայտնի է, որ կապերի և ընդհանրապես լթեքվող խոսքի մասերի փոխառություններն անսո-

<sup>13</sup> Ընդգծված կապերը կա՛մ գրաբար լեզվում չկան, կա՛մ որպես կապ առավելապես միջին հայերենին են հատուկ:

վոր երևույթ են լեզուններում: Վերահիշյալ կապերի առկայութունը հայերենում լավագույնս վկայում է, թե թուրքերենն ի՛նչ ավերիչ շափով էր ազդել հայերեն խոսակցական լեզվի վրա: Օրինակ՝

«Ասել ես, թէ զարնան վախտն  
...քեզ ցոյց կուտամ ծոցիս զարդն» (ՆՀԲ, էջ 66):  
«Փընթի մարդիքն են քեօմուրի մանղալ,  
Դուռն լցած է սրբանք և դաղալ,  
Էնօր կեօրայ է տան մէջն սրղալ» (Ն. տ. էջ 88):  
«Վախեմ սապապ նոցա գալն  
Իրիցներն գցեն մալըն» (Ն. տ. էջ 122):

Երկրորդ խմբի մեջ կարելի է մտցնել այն բառերը, որոնք գրաբարյան ձևերի համեմատությամբ հնչյունափոխված՝ նոր կապեր են դարձել. դրանք են՝  
Վրայ (<վերայ բառից)—«Եւ թէ կրակին այրածին վրայ դնես, շատ աւատէ» (ԱԱԱԱ, էջ 86):

Ջետ (գերդ բառից)—«Ջետ զասորի երէց կարդայ» (ՆՇԲԶ, էջ 561):  
Փոխրէն (փոխարէն բառից)—«Այնոր փոխրէն զի՛նչ խորհեցար» (ՅրԲ, էջ 209):

Հաւսար (հաւասար բառից)—«Չի գիտեմ թէ ի՛նձ մէն կուգայ թէ կուգայ հաւսար ամէնուն» (ՆՔԴ, էջ 49):

Գ) Գրաբարյան կապերի դիմաց գտնում ենք նրանց համարժեքները, այսպես՝

Ինչպէս (որպէս-ի փոխարեն)—«Բեր ծծեմ լեզուդ ինչպէս մեղրի ծոր» (ՆՀԲ, էջ 26):

Ներքն (ներքն կապի փոխարեն)—«...եւ յար ներքն լեզուին պահէ» (ՄՀԶՄ, էջ 51):

Յետև (յետ կապի փոխարեն)—«Եւ լաւ թտպիրն այն է որ զինքն դեղ յամելուն յետև ի գործ արկանեն» (ԱԱԱԱ, էջ 27):

Չորրորդ խմբի մեջ կարելի էր խմբավորել այն կապերը, որոնք որպէս բառեր, ճիշտ է, գրաբարում կան, սակայն կապական կիրառություններ չունեն: Դրանք են՝

Դիմաց—«Ջանձնրդ տրւիր վասն օրինաց,  
Մէն կանգնելով հագրի դիմաց» (ՀԹՏ, էջ 198):

Չափով—«Խեղք չունին չափով սխեռի» (ՆՀԲ, էջ 103):

Դուրս—«Ձինչ ձուկն՝ ջրէն դուրս՝ ես կուգամ տապակ» (ՆՀԲ, էջ 34):

Համար—«Կորուսիր զազատ հոգիդ՝ և այդ հողեղէն մարմնոյդ համար» (ՀԵԲ, էջ 159):

Համեմատ—«Ջուրդ դառնահամ և գարշ  
Համեմատ ծովու է լեղի» (ՄՂԲ, էջ 111):

Ձեռաց—«Դու քան ինձ եղեր ես եանուղ՝ էշխի ձեռաց խիստ հաւասով» (ՆՀԲ, էջ 32):

«Շատք մեռնին ի կտննոց ձեռաց» (ՍԳԴ, էջ 52):

Ինչպես հայտնի է, կապերը հիմնականում լրացնում են բառահարաբերությունների այն թերին, որ չի կարող արտահայտվել հոլովների միջոցով: Որ իսկապես այդ է կապերի դերը խոսքի մեջ, առավել ցայտուն կերպով երևում է հոլովման համակարգ շունեցող լեզուններում, որտեղ բոլոր բառահարաբերու-

թյուններն արտահայտվում են բառերի ուղիղ ձևի վրա դրված կապերի միջոցով: Նշանակում է, կապերը նյութական իմաստ չունեն և նյութական իմաստ ունեցող բառերից զանազանվում են վերաբերական իմաստ արտահայտելով: Սակայն վերաբերական իմաստ արտահայտող այլ խոսքի մասեր ևս կան, ասենք, շաղկապները: Արդ, ինչո՞վ են տարբերվում կապերը շաղկապներից: Նրանով, որ կապերը, զրվելով գոյականների, որոշ դերանունների ու մակբայների վրա, արտահայտում են «լրացական», ամբողջացող հարաբերություն և «կապվող բառերը» կապում գերադաս անդամի հետ: Տեսականապես պետք է ենթադրել, որ բոլոր կապերը երբևէ անկախ բառեր են եղել, և նրանց անցումը որպես կապ պատմական երկարատև ժամանակաշրջան է ընդգրկել՝ նյութական իմաստի աստիճանական մթափում և վերաբերության իմաստի աստիճանաբար տիրապետում: Ահա ինչու կապերի տեսակավորման ժամանակ պետք է հաշվի առնել, թե բառի մեջ զուտ կապական և զուտ բառական (ոչ կապական) իմաստները ինչ հարաբերության մեջ են գտնվում: Այս մոտեցումից ելնելով, ինչպես սովորաբար ընդունված է, մենք ևս միջին հայերենի կապերը կամ կապական կիրառություն ունեցող բառերը երեք խմբի ենք բաժանում.

1. Բառեր, որոնք զրկվելով երբեմնի իրենց ունեցած նյութական իմաստից, զուտ բառահարաբերական արժեք ունեն, «գտարյուն» կապեր են: Այս խմբի մեջ առաջին հերթին մտնում են գրաբարյան նախդիրները՝ առ, գ, ընդ, ըստ, ի, ց, ապա և փոխառյալ կապերը՝ կետայ, սապապ, վախտ(ն), ինչպես նաև՝ առանց, առջև, առաջի, աղագաւ, ատէն, դէմ, դիմաց, դէպ(ի), ետ(ն), ետևէն, գերք (գերդ), գետ (գեդ), զինչ, զկնի, (ի) գատ, ընդդէմ, ինչվի, իբր, իբրև, ինչպէս, (ի)խէչ, հետ, համար, հանդէպ, հանգոյն, ձեռաց, ի ձեռն, նկրուն, մէջ, մօտ, մինչև, մինչ, մերձ, յաղագս, յանուն, յետև, յանդիման, նման, ներքոյ, նմանակ, որպէս, շափ, շուր(ի), շափով, պէս, (ի) վերայ, վրայ, վասն, փոխան, փոխանակ, փոխ[ա]րէն, քով:

2. Բառեր, որոնք իրենց մեջ պահում են իրենց խոսքի մասային պատկանելության իմաստը, սակայն այդ իմաստի հետ մեկտեղ ըստ կիրառության կարող են վերաբերական, բառահարաբերական իմաստ արտահայտել: Գարոցական քերականության մեջ այս բառերն ընդունված է անիսկական կապեր անվանել, ինչպես՝ (ի) բաց, առաջ, դուրս, հակառակ, հանց (որ), համեմատ, յետ, հաւ[ա]սար, ներքև, չափ:

3. Բառեր, որոնք առաջին հայացքից և անկախ կիրառությունից ընկալվում են իրենց նյութական իմաստով, սակայն ունեն նաև կապական կիրառություններ, ինչպես՝ բերանով, ժամանակ, հետի, շուրջ, սիրուն (սիրոյն), տակ:

Վերոհիշյալ երեք խմբի կապերը ինչպես գրաբարի, այնպես էլ աշխարհաբարի համեմատության մի շարք առանձնահատկություններ են դրսևորում, որ ստորև ներկայացնում ենք:

Առանց կապը, ինչպես գրաբարում, միշտ նախադաս է. եղած բոլոր օրինակներում, ներառյալ նաև խոսքային հանգամանքներում կիրառվածները, միջին հայերենի երկու շրջանի բոլոր հեղինակների մոտ, միշտ նախադաս կիրառության մեջ է հանդիպում, ինչպես՝

«Առանց նաւվարի, 'ւ առանց թելի ո՞նց ես կացել» (ԿԵՏ, էջ 176):

«...Զի ճաշակել առանց հրամանի» (ԳԱՏ, էջ 143) և այլն:

Հայկազյան բառարանում եղած բոլոր օրինակներում առանց կապը սեռական հոլովով կապվող բառ է պահանջում. դերանունները նույնպես սեռական հոլովով են դրվում, ինչպես՝ «Առանց իմ ոչինչ կարէք առնել» (ՆՔԲ, հ. I, էջ 286): «Թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտօնս Նաւասարդաց առանց քո անցուցանել» (ՓԲՊՀ, IV, ԺԵ): Մինչդեռ միջին հայերենի շրջանում առանց կապն ունենում է նաև ուղիղ ձևով դրված կապվող բառ, ինչպես՝

«Դու զիս՝ որ առանց բան զաստուած ճանաչես» (ՀԵԲ, էջ 190):

«Ես եմ առանց սրլէհ...» (ԿԵՏ, էջ 183):

«...ես առանց շրթունք

Կու խըմեմ լայն գինուն շիշայ» (ն. տ. էջ 191):

Յրիկի մոտ հանդիպող կիրառություններում մեծ մասամբ ուղիղ ձևի վրա է դրված, ինչպես՝

«Եւ լեր դու գրթած ու սուրբ, ողորմած առանց նենգութիւն» (Բանաստեղծ. էջ 87):

«Աւազ առանց հագագ բերան» (ն. տ. էջ 102):

«Ու զուղորդ մարդկանց տունըն

Կու բակես առանց բահաւոր» (ն. տ. էջ 217):

Գուցե կարելի է մտածել, որ մեր հեղինակները խոսքային հանգամանքների բերումով՝ հանգավորման համար են այսպես վարվում, սակայն այդ հանգամանքներից դուրս եղած օրինակները կասկած չեն թողնում, որ առանց կապը միջին հայերենում նոր հոլովառությամբ է հանդես գալիս, ինչպես՝

«Առանց ջուր՝ ձուկն չի ապրիլ, լօք ջրին կտրողն անիծած» (ՆՔԴ, էջ 46):

«Ես աչք՝ ու դու՝ լուս, հոգի՝, առանց լուս՝ աչքն խաւարի» (ն. տ. էջ 52):

Այս տեսակետից հետաքրքրական է հատկապես Նաղաշ Հովնաթանի հետևյալ մեկ օրինակը. նույն բառատողում առանց կապը մե՛կ ընդունում է սեռական հոլով, մե՛կ ուղիղ ձևով բառ.

«Առանց քննելոյ և վկայութեան

Մարդոյ շքարկանաս, շանես դատաստան,

Վերջն հայեսցես դու ամենայն բան,

Առանց հարցանել մի՛ տար պատասխան» (Բանաստեղծ. էջ 89):

Դերանունների հետ կիրառության դեպքեր քիչ են հանդիպում. թվում է, որ դերանուններն ավելի շուտ տրական-հայցական հոլովաձևով են դրված, ինչպես՝ «Առանց քեզ ես ո՛նց ապրիմ կամ իմ աչերս տանի քուն» (ՆՔԴ, էջ 48): «Թէ նուշ թէ շաքար կուտեմ, առանց քեզ չի երթար ի կուլ» (ն. տ. էջ 67):

Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում ևս առանց կապը հատկապես այս, այդ, այն ցուցական դերանունների հետ օգտագործվելիս բառի ուղիղ ձևով դրված կապվող բառ է պահանջում<sup>14</sup>: Սակայն ունենք նաև հայցական հոլովով դրված գոյականի կիրառություններ, ինչպես՝ «Քո գերեզմանը չի կորչի խոով, Առանց շիրմաքար չի մնա երկրում» (ՀՇ, էջ 17): Ժամանակակից

<sup>14</sup> Չենք ասում՝ հայցական, քանի որ այս, այդ, այն դերանունները արդի հայերենում չեն հոլովվում:

հայերենում նման կիրառությունները գնահատվում են որպես բարբառային: Հարցական է մնում այն կետը, թե արդյոք բարբառնե՞րն են ժառանգել միջին հայերենից, թե վերջինս է այն ժառանգել հայերենի բարբառներից:

Առջև կապը Հայկազյան բառարանը գիտե որպես «ոամկական բառիս առաջնաւ կամ առաջն» (հ. I, էջ 312): Այս կապը միջին հայերենում շատ ավելի լայն կիրառություն ունի, քան առաջի բառը: Սակայն զարմանալիորեն, ի տարբերություն մյուս նոր կապերի, մեծ մասամբ նախադաս կիրառություն ունի՝ հաճախ հանդես գալով ի նախդիրով, ինչպես՝ «Ճըրագն ի յառջև կուրին կու վառի՝ ինքըն չըգիտէ» (ՀԵԲ, էջ 137):

«Եւ եղիր յառջև հիրեբին» (ՀԹՏ, էջ 210):

«Մի աստղ ելաւ պայծառ

առջև Արուսեկին լուսոյն» (ԿԵՏ, էջ 124):

«Առջև աշերուս քայլես» (ն. տ. էջ 160):

Առջև կապը հանդես է գալիս նաև ետադաս կիրառությամբ. ընդհանուր տպավորությամբ՝ XV—XVII դդ. հեղինակների մոտ առավել չափով է օգտագործվում որպես ետադրություն և առանց ի նախդրի, թեև օրինակներ ունենք նաև I շրջանից, ինչպես՝

«Շատ ճորտ ու ծառայք ոս զօրք կան ի ձեր առջևը կանգընել» (ՀԵԲ, էջ 147):

«Հանց զերդ ըզգառն էր անմեղուկ,

Հայր սպանողին առջև հեզուկ» (ՆՇԲՊ, էջ 581):

«Կթխակ ի գինով լեցած իմ ետին առջևն է դրած» (ՆՔԴ, էջ 59):

«Ձեր առջևն կանանչ պաղչայ, ծաղկունք և շիման» (ՆՀԲ, էջ 178):

Առաջի կապը, ինչպես վերևում էլ ասացինք, միջին հայերենում սակաւ է կիրառվում և միշտ նախադաս է, ինչպես՝ «...Կարմիր այծենի գտակ ի գլխին ու տրեխ ի յտովին և առաջի թագաւորին երթան և զամբոխն ի բաց վարեն» (ՍԳԴ, էջ 42):

«Կամ առաջի քո ամօթով» (ՀԵԲ, էջ 180):

Հանդես է գալիս որպես ետադրություն. ինչպես՝

«Քո առաջի կամին բերել» (ՅՐԲ, էջ 53):

Ատեն «ոամկական» բառը, ըստ Հայկազյան բառարանի, առաջացել է «ատեան հողմոյ» (դէպ, ժամանակ) կապակցությունից: Ինչպես հայտնի է, այս բառը ներկայումս արևմտահայերենում ամենակենդանի կապերից մեկն է. ավելին՝ մեր երկու գրական լեզուները «սահմանազատող» երևույթներից մեկը կարելի է համարել:

Միջին հայերենում սակավ կիրառություն ունի. որպես նոր կապ միշտ ետադաս կիրառություն ունի, ինչպես՝ «Եւ եփելու ատենն սեխի կեղև ձգես ի պտուկն» (ԱԱԱԱ, էջ 122): «Ինձ գնալու ատեն այլ անպատեհ է» (ԳԱՏ, էջ 236):

Վերջին նախադասության մեջ ատեն բառը կարելի է ընկալել նաև որպես գոյական՝ «ժամանակ» իմաստով: Բայց (բաց) կապը հանդես է գալիս միշտ նախադաս և պահանջում է բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝



«Ով է անմեղ բաց ի ֆէնէ» (ՅրԲ, էջ 124):  
«Յամենայնէ ուտել պատուիրեաց նոցին,  
Բաց ի ծառոյն միոյ բարոյ և շարին» (ԳԱՏ, էջ 107):

Դէմ կապը, ինչպես գրաբարում, միջին հայերենում ևս մեծ մասամբ նախադաս կիրառութիւն ունի, պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝

«Ապա ինչ ցեղ յառաջ երթան  
Դեմ քշնամոյն կամ ոնց յաղթեն» (ՅրԲ, էջ 190):  
«Եկին դէմ յիրար առին» (ՀԹՏ, էջ 209) և այլն:

Հաճախ դէմ կապը հանդես է գալիս ի նախդիրով, ինչպես՝

«Քաղցր ձայնով կարկաչէ նա  
'ի ի դէմ վարդին յերակ խօսել» (ԿԵՏ, էջ 121):  
«Գիշեր ցորեկ կամ երերուն  
Եւ ես կայրիմ ի դէմ վարդուն» (ԳԱԲ, էջ 222):

Դէմ կապը ևս, ընդհանուր սովորությամբ, 2-րդ շրջանի հեղինակների մոտ Ետադաս կիրառությամբ է հանդես գալիս, ինչպես՝ «Իմ եարս ինձ դէմս ելաւ, իւր երեսն էր վարդ ու տերև» (ՆՔԴ, էջ 56): «Դու հազարաց դէմ պահապան» (ՀԹՏ, էջ 198): Թվում է, որ ինձ դէմս ելաւ բառակապակցութիւն է, որտեղ դէմս ելաւ պետք է առանձին վերցնել, իսկ ինձ բառը ստորոգյալի անուղղակի խնդիր լրացում է, սակայն այդպես չէ: Այլ օրինակներ ևս ցույց են տալիս, որ ինչպես այլ կապեր էլ, դէմ կապը դերանունների հետ կիրառվելիս տրական հոլովով կապվող բառ է պահանջում, ինչպես՝ «Զդուռն քո՝ դէմ ինձ մի փակել» (ՀԵԲ, էջ 178):

«Վարդն ի բլբուլն ասաց. ի՞նչ սիասաթ է,  
Որ ալամս բոլոր դէմ քեզ հասրաթ է» (ՄՆԲ, էջ 112):  
«Սիրտս է դեղին ի դէմ քեզի» (ԿԵՏ, էջ 121) և այլն:

Նոր Հայկազյան բառարանը դիմաց բառ՝ որպես կապ չգիտե: Դիմաց գրաբարում դէմք բառի հոգնակի սեռ.-տրականն է, ինչպես՝ «Բայց որչափ դիմացն էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել... փութայր, քան թէ ի նուսնել» (ՄԽՊՀ, I, ԺԵ)<sup>15</sup>: Դեմք բառը համանիշ է երես բառին: Վերջինից հենց գրաբարում էլ կապ (կապական բառ) առաջացել էր. ինչպես՝ «յերեսաց զօրացն Պարսից» (Բուզանդ, IV, ՄԵ), «Փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս» (ՄԽՊՀ, I, ԺԷ): Կոստանդին Երզնկացու հետևյալ նախադասութիւնը դիմաց բառաձևի դեպի կապ անցնելու մի լավ օրինակ է.

«Շատոց խըրատ կուտաս,  
քեզ հաւատան ու են լրսել,  
Եւ ի քո դիմաց փակել  
Ես դու զականջդ ու պինդ խըցել» (Տաղեր, էջ 177):

<sup>15</sup> «Բայց որքան դեմքից երևում էր, ոչ այնքան սպանելու... էր շտապում...»:

Մինչդեռ՝ «Զամէնն արա՛ հիմի յայմնի».

Ի՞նչ կամ ի քո դիմաց կացել» (ն. տ. էջ 121) նախադասութեան մեջ դիմաց բառն արդեն բառական-նյութական իմաստ չունի, այլ կապական բառի կիրառութեամբ է: Սա բավական լույս է սփռում դիմաց կապի առաջացման վրա: Որպես նոր կազմված բառ, միշտ ետադաս կիրառութիւն ունի, ինչպես՝ «Եւ թէ զակոան Ա մարդ մի ի ձեռն առնու իւ բռնէ, այն մարդուն դիմաց<sup>16</sup> իսկի շուն շի հաջէ եւ վնաս շառնէ» (ԱԱԱԱ, էջ 44): «Եւ թէ զայս թութիաս թածա ճրագուով խառնես եւ կրակին դիմաց<sup>16</sup> աւճես... բուցնէ (ն. տ. էջ 182):

Դերանունների հետ գործածվելիս ևս սեռական հոլովով կապվող բառ է պահանջում, ինչպես՝ «Իմ եա՛ր, խըմէ՛ իմ դիմաց, որ ելնէ հոգիս քո դիմաց» (ՆՔԴ, էջ 59):

Դիմաց կապը, ինչքանով որ ուշադիր ենք եղել, նախադաս կիրառութեան միայն մեկ դեպք ունի, այն էլ՝ Ֆրիկի մոտ.

«Զիւր պատուիրանն ես մոռացել:

Դիմաց հոգուդ ես զարագել» (Բանաստեղծթ. էջ 51):

Դէպ կապը, ինչպես հայտնի է, գրաբարում առավելապես օգտագործվում էր ի նախդրի՝ ուղեորման հայցական արտահայտող բառակապակցութեան մեջ: Այդպես է նաև միջին հայերենում, ինչպես՝ «Բայց դատաւորքն պատեհ է, որ հային ի յայն գնողն, թէ յողքատութենէ լինի պատճառն, նա ներելով անեն դէպ ի հարուստն» (ՄԳԴ, էջ 61): «Եկ ի տուն եւ ի զար ի յան պատն եւ ի յան եւ գնաց դէպ ի կին» (ՎԱԱ, էջ 174): Այսպես նաև՝ «Յանկարծ ելաւ օր մի հեղեղ

Զիս դէպ ի ծովն արար վրտար» (ՖրԲ, էջ 201):

«Եկայք եղբայրք, իմ սիրելիք:

Պարտ է գինուն մեզէն հոգալ:

Դէպի պաղեան սէյրան երթալ» (ՄՂԲ, էջ 138) ևլն:

Դժբախտաբար գրչութիւններից չի կտրելի ստույգ մի եզրահանգում անել՝ արդյոք ի նախդրը դէպ կապին կից էր գրվում, թե՛ ոչ, այսինքն՝ գրաբարյան ի նախդրի ուղեորման հայցականի իմաստը պահվում էր, թե՛ ոչ, սակայն դէպ(ի) կապի կիրառութիւնը ածուկանների հետ, ինչպես նաև դէպ ձևով (առանց նախդրի) հանդես գալը ապացուց է, որ միջին հայերենի շրջանում դէպ բառը ինքնին պիտի ընկալվեր որպէս կապ այն նույն ձևով, ինչ որ գրաբարում տրական հոլովի հետ (հմմտ. «Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրժքանչիւր դէպ երեսաց իւրեանց» (Մեղ2, I, ԺԱ): Ահա մեր ենթադրութիւնն՝ ապացուցող օրինակներ. «Եւ գոզին գոյնն դէպ ի սպիտակ լինի... եւ երեսացն գոյնն չի լինիր կարմիր, մանաւանդ դէպ ի սպիտակն լինի» (ՄՀՁՄ, էջ 10): «...աշացն երախն եւ քներոյն ուռչին, եւ լինի որ կարմիր շտեր երեւնան կամ դէպ ի կանանչն» (ն. տ. էջ 66): Վերևի օրինակներում դէպ կապը գրված է գոյականաբար վերցված ածականների վրա (կանաչ, սպիտակ). մյուս կողմից՝ յ՛շ թե գնալու, շարժման գործողութիւն արտահայտող բայի, այլ՝ լինել բայի հետ (երկրորդ նախադասութեան մեջ բայը լռելյայն է հասկացվում): Իսկ ն. Հովնաթանը կապն օգտագործում

<sup>16</sup> Մարզուն, կրակին բառերը և որոշյալ հոգով սեռական հոլովաձևերն են:

է մեծ մասամբ դէպ ձևով, ինչպես՝ «Շամալ կուռդ մեկնէ, ծաղիկ դէպ ինձ բեր» (Բանաստեղծք. էջ 54): «Նստեմք ձիանն, Դէպ մեր վաթաճն» (ն. տ. էջ 74): «Գնաց դէպ Թիֆլիզու խանն» (ն. տ. էջ 110) ևլն:

Զերդ (գերք).—Հայկազյան բառարանն այս երկու ձևերը դնում է նույն բառահոդովածի տակ: Սկզբնաձևն, անշուշտ, գերք բառն է, որտեղ դ-ն շնչեղ խլացման է ենթարկվել: Իմաստով համապատասխանում է ինչպես, որպես, նման, իբր(և) բառերին: Ի դեպ, գրաբար լեզվում գերք բառին հավասար և գուցե ավելի կիրառություն ունեն իբրև, որպէս կապերը, սակայն միջին հայերենում վերջիններս հատուկենտ կիրառություն ունեն: Զերդ, ինչպես նաև սրա հնչյունափոխված գետ ձևերն իրենց վրա են վերցրել իբրև, որպէս կապերի պարտականությունը: Զերդ նախադրությունն ունենում է հայցական հոլովով կապվող խնդիր, ընդ որում, ինչպես զ նախդիրով, այնպես էլ առանց նախդրի՝

«...Զերք զուկի է խալաս, որ այս չերեւի.

Զերք ջոհար ակն է լալ, որ լոյս կու ցաթի» (ՀԵԲ, էջ 185):

«...Զերք գալուճք են ի շարման» (ԿԵՏ, էջ 155):

«Ոմանք ծաղկին գերդ բուրաստանք» (ն. տ. էջ 150):

«Զերդ մընիրայ էր հանց շիտակ» (ՆՇԲԶ, էջ 564):

«Մէկին գերք գեղբայր հասնի» (ն. տ. էջ 583):

«Զերդ բզբոլորեալ լուսին ես լուսով» (ԳԱԲ, էջ 211) ևլն:

Զերդ (գերք) նախադրության հնչյունափոխված ձևն է գետ (գէդ), որը Հայկազյան բառարանը դնում է որպես գերդ բառի բացատրություն, ժողովրդական ձև: Զետ կապը նույնպես պահանջում է հայցական հոլովով կապվող բառ և, ինչպես գերդ կապի դեպքում, կապվող բառը հանդես է գալիս զ նախդիրով կամ առանց նախդրի, ինչպես՝ «...Զի գէդ օտար համարած է իզաց ժառանգացն յԱստուծոյ՝ Մովսէսի բերանով» (ՍԳԴ, էջ 16): «Եւ բորբոսիլն պալղամին կամ ցնէրքս է ի յերակսն լինի, և կամ ի դուրս յերակացն, գեդ ստամոխս...» (ՄՀՀՄ, էջ 80):

«Զետ մով ի տեղըս հալեցայ» (ՀԵԲ, էջ 169):

«Զետ ըգաղար խիստ է յար» (ՆՇԲԶ, էջ 562):

«Զետ Նոյ ունէր երեք որդի» (ն. տ.):

«Տեսայ պատկերք մի գեղեցիկ,

Զէտ զարեգակն որ լոյս կուտայ» (ՀԹՏ, էջ 122) ևլն:

Արդ, ի՛նչ կարելի է ասել գերդ, գետ կապերի և սրանց համանիշ նման կապի կիրառության հաճախականության մասին: Նկատելի է, որ միջին հայերենով գրող մի շարք հեղինակներ նախապատվություն են տալիս այս կամ այն ձևին, իսկ մյուսները հավասարապես օգտագործում են և՛ մեկը, և՛ մյուսը: Այսպես, Հովհաննէս Երզնկացին օգտագործում է բոլոր երեք ձևերն էլ, մինչդեռ Կոստանդին Երզնկացին ու Ամիրզովլաթը գետ ձև չունեն: Մյուս կողմից՝ նկատելի է, որ 2-րդ շրջանի հեղինակներն ավելի շուտ նման կապն են օգտագործում: Ինչքան որ ուշադիր ենք եղել, Ֆրիկի, Քուլակի, Ն. Հովնաթանի մոտ գերդ կամ գետ բառերի կիրառության շենք հանդիպել, իսկ մյուս հեղինակների՝ Հ. Թլկուրանցու, Մ. Նաղաշի, նույնիսկ Գ. Աղթամարցու և Մ. Ղրիմեցու (վերջին երկուսը առավել ավանդապահ են) ստեղծագործություններում գերդ, գետ բառերի կիրառության միայն եզակի օրինակներ ենք գտնում, մինչդեռ

վերևի հեղինակների մոտ նման կապը փնջերով ենք գտնում: Սա, անշուշտ, նոր՝ աշխարհաբար լեզվամտածողութայան մի դրսևորումն է:

Վերևի երկու կապերի համեմատությամբ առավել սահմանափակ կիրառություն ունի զինչ նախադրությունը, որն իմաստով համանիշ է դրանց: Սա ևս պահանջում է հայցական հոլովով կապվող բառ, ընդ որում՝ ինչպես գ նախդիրով, այնպես էլ առանց նախդրի.

«Մարդիկ զինչ գարնան ծաղիկ փթթին՝ և այլվի շորանան» (ՀԵԲ, էջ 160):

«Գնդեցիկ ևս հաւատ, զինչ ըզձառ ծաղկած» (ն. տ. էջ 196):

«Զինչ ձուկն՝ ջրէն դուրս՝ ևս կուգամ տապալի» (ՆՀԲ, էջ 34):

Զկնի գրաբարյան նախադրությունն առավելապես օգտագործում են Մխիթար Հերացին և Գունդատապլը. ինչպես՝ «Վասն այն ջերմանն որ զկնի փորագատութեան և փորանցութեանն լինի» (ՋՄ, Յանկ գրոց, ԺԼ): «...Զկնի այտոր՝ խնծորի ջուր...» (էջ 47): «Բայց վասն զի ելան եկեղեցիքն իրենց սահմանէն, նա ելան և թագաւորքն յիրենց եղեալ կանոնացն և աստիճանաւորքն զկնի իւրեանց» (ՄԳԴ, էջ 42):

Զկնի նախադրության փոխարեն միջին հայերենում ավելի շուտ օգտագործում են յետ, յետև կապերը, որ իր տեղում կտեսնենք:

(ի) Զատ բառը, ի տարբերություն գրաբարի, որտեղ առավելապես մակբայական կիրառություն ուներ, միջին հայերենում հանդես է գալիս որպես կապ՝ բացի իմաստով, ընդ որում՝ որպես ետադրություն. պահանջում է բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝

«Յամենայն մեղաց ի գատ, ասէ, դու կացիր» (ՀԵԲ, էջ 200):

«Քեզնէ գատ էլ շունիմ կուման» (ՆՀԲ, էջ 19):

«Մեզնէ գատ ոշնչով մեր ցան շիմացաւ» (ն. տ. էջ 152):

«Քեզնէ ի գատ, շալապում,

Ոշ-ով իմացաւ» (ն. տ. էջ 58):

«Աչերս երբ քէնէ ի գատ մարդ շուզեր նէ՝ ևս ի՛նչ անեմ» (ՆՔԴ, էջ 75):

Այսպես նաև՝ «չարեաց ի գատ» (ՀԵԲ, էջ 201), «գործոյ ի գատ» (ՄԳԴ, էջ 37), «յաղօթից ի գատ» (ՅրԲ, էջ 90), «երամէն ի գատ» (ՄՆԲ, էջ 165) ևն: Զատ կապը նախադաս կիրառության միայն մեկ դեպք ունի Ֆրիկի մոտ, ահա այդ օրինակը. «Կեր դու յամէն պտղոյ, Ադամ,

Զատ ի մէկէն որ չէ հրամած» (Բանաստեղծթ. էջ 70):

Ընդդէմ կապը, ինչպես գրաբարում, միշտ նախադաս է. ինչպես՝ «ընդէ՞ր արարեր զայդպիսի անարէնութիւնդ ընդդէմ ծնաւդի քո (ՎԱԱ, էջ 14): «Ի գալ սաստիկ հողմոց ծառքն հպարտութեամբ հակառակին ընդդէմ նոցայ» (ն. տ. էջ 121):

«...Թէ չէ ըզհողդ հոգի

Ընդդէմ մարդկան ևս ցուցուցել» (ԿԵՏ, էջ 176):

Նաղաշ Հովնաթանի հետևյալ նախադասության մեջ ընդդէմ կապը, կարծես, ետադաս կիրառություն ունի. «Մեծատան մարդոյ ընդդէմ մի կացցես» (Բանաստեղծթ. էջ 90): Քանի որ նախադասությունն ընդհանրապես գրաբարյան է, ընդդէմ բառը կարելի է ընկալել նաև որպես ընդդէմ մի կացցես՝ բաղադրյալ բայաձևի բաղկացուցիչ մաս:

Նոր կապ է ինչվի նախադրությունը, որ պահանջում է հայցական հոլովով կապվող բառ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ երբեք զ նախդիրով հայցական հոլովի հետ չի գործածվում. ինչպես՝ «...Եւ թէ զղջանայ, նա ինչվի մանն ապաշխարէ» (ՄԳԴ, էջ 42): «Կու հրամայէ, որ ինչվի յետի փողն յետ տան» (ն. տ. էջ 45): «Զի թէ գողունի լինի ու գտվի, ինչվի տարին մի յետ դառնայ» (ն. տ. էջ 61) ևլն: Ինչվի կապը դրվում է նաև յալիտեան մակբայի վրա, ինչպես՝ «...Զէդ հերետիկոս ձգեն զինք ի կարգէն ինչուի՝ յալիտեան» (ն. տ. էջ 37):

Բերված օրինակներից կարելի է տեսնել, որ այս կապի օգտագործումը հատուկ է Սմբատ Գունդստապլին: Միջին հայերենի և ոչ մի հեղինակ այս կապը չի օգտագործում: Սա, անշուշտ, հայերենի մինչ(և) բառի բարբառային հնչյունափոխված, ափելի շուտ՝ այլափոխված ձևն է: Եվ իրոք, Ս. Գունդստապլը մինչև կապը չի կիրառում:

Գրաբարյան իբր և իբրև նախադրությունները նույնպես սակավ կիրառություն ունեն: Եղած օրինակները 2-րդ շրջանի հեղինակների մոտ են, միշտ նախադաս կիրառությամբ. պահանջում են հայցական հոլովով կապվող բառ, ընդ որում՝ կա՛մ զ նախդիրով, կա՛մ առանց զ նախդրի: Մարտիրոս Ղրիմեցու մոտ, որը ինչպես վերևում էլ նշել ենք, խիստ ավանդապահ է, հայցականով դրված կապվող բառը միշտ զ նախդիր ունի, ինչպես՝

«Կրճտեալ ատամամբք իբր զլար գագան» (Բանաստեղծթ. էջ 149):

«Եղեալ բաներս, որ պատմեցի,

Իբր զխրատ ձեզ գրեցի» (ն. տ. էջ 103):

«Կարմիր գունով ցուցանէ նա,

Իբրև զվարդ գեղեցկանայ» (ն. տ. էջ 137):

Մյուս հեղինակների մոտ հայցականով դրված կապվող բառը զ նախդիր չի ունենում, ինչպես՝ «Թէ ոխակալ ես, խոովարար, իբր անօրէն անցաւոր ես» (ՄՆԲ, էջ 122):

«Իբր խրճոռ մի ի ճրդի» (ԳԱԲ, էջ 180):

«Եւ զի՛արդ իշխես դու հայհոյել զնոսին,

Որք են իբրև հրեշտակ ամենակալին» (ն. տ. էջ 114):

Նկատի ունենանք, որ վերջին նախադասությունը և՛ մտածելաձևով, և՛ արտահայտությամբ գրաբարյան է, բայց, այնուամենայնիվ, կապվող բառը զ նախդիր չունի:

Զտարյուն բարբառային բառ է նաև (ի)խէչ կապը: Իմաստով համապատասխանում է մտ կապին և պահանջում է սեռական հոլովով կապվող բառ: Հայկազյանն այն գիտե որպես «ռամկական»: Բառս հատուկ է Ս. Գունդստապլի և Ամիրդովլաթ բժշկապետի բարբառներին: Միայն մեկ օրինակ գտնում ենք Քուչակի մոտ: Սակայն զարմանալին այն է, որ Ս. Գունդստապլն այս կապն օգտագործում է որպես նախադրություն, մինչդեռ Ամիրդովլաթը՝ որպես ետադրություն: Ն. Քուչակի մոտ ևս որպես ետադրություն է օգտագործված: Ահա այդ օրինակը. «Այն մարդուն ի խէչ մի՛ նստիր՝ երբ երթաս զքեզ զրուցէ» (Դիվան, էջ 83): Կարելի է ենթադրել, որ, աշխարհաբար լեզվամտածողությամբ հարազատ, բառս պետք է ետադրություն լիներ, իսկ Գունդստապլը գրաբարյան կապ-նախադրությունների սովորությունով է նախադաս կիրառել: Ստորև

բերում ենք (ի)սէշ կապի կիրառութեան մի քանի դեպքեր. «Եւ թէ կինն մայր լինի որդոց, ու թէ օտար մօրու, զիր պոռոյզն և զմահն անու, եւ թէ պիտի կենայ ի խէշ որդեցն, ո՞ր թէ ոչ՝ նա ելնէ անու իր այրիկն...» (ՄԳԴ, էջ 57): «Եւս առաւել, թէ քիշ լինին կեցել խէշ իրեաց այրուկինք, ու տղայ չկենայ, նա ամէնն դառնայ» (ն. տ. էջ 65): «Եւ ոչ թագաւորն ի խէշ հայրապետի թող չնստի, զի չէ հրաման» (ն. տ. էջ 17): Կրկին նշենք, որ ի տարբերութիւն Գունդատապլի օրինակների՝ Ամիրդովլաթը (ի)սէշ կապն օգտագործում է հայցական հոլովով (առանց զ նախդրի) կապվող բառի հետ, ինչպես՝ «Եւ որ ի ճակտին կաշուն հետն վերցնէ, ի մարդիք ի խէշ խիստ սիրուն լինի» (ԱԱ, էջ 76): «Արճիֆնա... ինքն ի ներկարարնին ի խէշ կու գտուի» (ն. տ. էջ 85): «...Զիր շար կամն յաղթէ եւ ամենայն մարդ ի խէշ պատուական լինի եւ հարկնոր» (ն. տ. էջ 113) ևլն:

Ամբողջ միջին հայերենում լայն կիրառութիւն ունի հետ կապը: Սրանով է արտահայտվում գրաբարի հանդերձ, (ի) միասին կապերով և այլ նախդրիվ կառուցվածքով արտահայտվող միասնութեան գաղափարը: Հետաքրքրական է նշել, որ միջին հայերենում հանդերձ և (ի) միասին կապերով կիրառութիւններ չեն հանդիպում: Հետ բառը գրաբարում ևս օգտագործված է, սակայն ո՛չ թե «միասին», «հանդերձ» իմաստով, այլ ավելի շուտ՝ հետը (զհետ) իմաստով: Հայկազյան բառարանը հենց այդպիսի օրինակներ է բերում՝ «Հետ ոտին տեան շրջեցան: Հետաքրքիր շրջելն հետ ոտին սրբոյն» (հ. II, էջ 89): Հետ կապի հանդերձ, ի միասին իմաստային կիրառութիւնը Հայկազյանը բնորոշում է որպէս «ոսմական», թեպետև հետոսական գրաբար մատենագրութիւնից էլ ավանդված է: Նախ նշենք, որ մեր հեղինակները շատ անգամ հետ կապը շփոթում են յետ բառի հետ. այսպես՝ «Եւ հետ երկու պահուն տո՛ւր զգարեցուրն հովցուցած և մուզ նուան ջրով» (ՄՀՁՄ, էջ 104): «Եկէք որ պաղչան մտնումք ու խմենք հետ ծառ շֆերուն» (ՆՔԴ, էջ 65): «Եւ թէ փակչի ի ծառն ու հետ ծամանակի ընկնի ու սպաննէ զմարդ...» (ՄԳԴ, էջ 74): «Ետղայր քաջօլ կենայր ու յառնէր, Ու հետ տանծին զաշերն ածէր» (ՆՇԲԶ, էջ 565) նախադասութիւններում բացահայտորեն երևում է, որ պետք է լիներ յետ և ոչ թե հետ, քանի որ միասնութեան իմաստ չկա: Այս շփոթը շատ ավելի հստակ երևում է Մ. Հերացու հետևյալ նախադասութեան մեջ. «Փօլօս ասէ, եթէ այս հիւանդութիւնս հետ բոսիմին լինի, եւ հետ զուգամին կամ հետ շատ նուզլայի, որ ի զլիտոյն իջանէ, կամ հետ յերկարօրեայ հազի, կամ յետ շատ արեան ձգելոյ...» (ՀՄ, էջ 49):

Հետ կապը սովորաբար նախադաս կիրառութեամբ է հանդես գալիս, պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «Ապա թէ ջերմն հետ շատ հազին լինի...» (ՄՀՁՄ, էջ 30): «Տեսէք, թէ ի՞նչ զարմանք եղև հետ բուղային և Արուսիին» (ՅրԲ, էջ 209), «Հետ մօլլանուն ծուռ գալ պիտիս» (ՀԹՏ, էջ 229): «Հետ անգէտին մի՛ դատիր, թէ հազար որ զքեզ կու սիրէ» (ՆՔԴ, էջ 94) ևլն, ևլն: Սակավ դեպքերում հետ կապից առաջ դրվում է ի նախդրի, ինչպես՝

- «Հոն քո տէրտէրրդ կու ճորայ,
- Թ՛Աշան ընկեր է ի հետ նորայ» (ՀԵԲ, էջ 166):
- «Աղէկին վատն է ատող
- ՛ և ի հետ բարոյն շարն է նենգով» (ԿԵՏ, էջ 170):
- «Զի ճանչել զվատն յաղէկէն,
- Ի հետ ոմանց աննէ քուշատ» (ն. տ. էջ 185) ևլն:

Հետ կապը դերանունով արտահայտված կապվող բառ ունենալու դեպքում տարբեր հոլովառությամբ է հանդես գալիս: Այսպես՝ ցուցական, փոխադարձ, ինչպես նաև անձնական դերանունների III դեմքը սեռական հոլովով է դրվում. «Ի հետ նորա» (ՀԵԲ, էջ 166), «հետ իւր» (ԿԵՏ, էջ 163), «հետ նորա» (ն. տ. էջ 217), «հետ այնոր» (ՄՀՁՄ, էջ 11), «հետ այսոր» (ն. տ. էջ 24), «հետ անոր» (ՆՔԴ, էջ 68, 84), «հետ մէկմէկի» (ԱԱԱԱ, էջ 12, 13), «հետ միմեանց» (ՖԻԲ, էջ 188) ևլն, մինչդեռ անձնական դերանունների I և II դեմքերն առավելապես տրականով են դրվում, ինչպես՝ «հետ ինձ» (ՀԵԲ, էջ 155), «հետ քեզ» (ԿԵՏ, էջ 174, 233), «հետ մեզ» (ն. տ. էջ 165), «հետ ինձ» (ն. տ. էջ 185, 187), «հետ ինձի» (ն. տ. էջ 123), «մեզ հետ» (ՖԻԲ, էջ 144), «հետ ինձ» (ՀԹՏ, էջ 224, ՄՆԲ, էջ 108, 111, ՆՀԲ, էջ 18, 21, 39, 90, ՆՔԴ, էջ 47, 94) ևլն, ևլն:

Վերևում նշեցինք որ հետ կապը նախադաս կիրառություն ունի, սակայն պետք է ավելացնենք, որ առանձին դեպքերում նաև հտադաս կիրառությամբ է հանդես գալիս: Ինչպես ստորև բերված օրինակներից կտեսնենք, մեր հեղինակները հետ կապը հազվադեպ են հտադաս օգտագործում, իսկ Ն. Հովնաթանը գրեթե միշտ հտադաս է օգտագործում. «Այն քո հաւտուն հետ կու ջանայ» (ՀԵԲ, էջ 167), «Խօսէ՛ դու յիս հետ մէկ կոյս» (ԿԵՏ, էջ 162), «Ճակատդ լցել ես ոսկով, Ունեբերիդ հետ խիստ է խառն» (ՆՀԲ, էջ 51), «Եելօք մարդոյ հետ շրջիր և խօսէ» (ն. տ. էջ 94), «Դու ինձ հետ գրուցէ» (ն. տ. էջ 18), «Գիտե՞ս քեզ հետ շատ խօսք ունիմ» (ն. տ. էջ 229) ևլն, ևլն: Նշանակում է, դեռևս XVIII դարում վաղ աշխարհաբարը գրեթե անցում էր կատարել հատկացուցիչ-հատկացյալ կապակցությամբ արտահայտված կապերի հտադաս կիրառության:

Մեր լեզվի այս շրջանում լայն կիրառում է գտնում համար կապը: Հայկազյան բառարանը բառս որակում է որպես «ռամկական»: Ճիշտ է, Խորենացին ևս օգտագործել է «(ի)համար» (=հաշվին) բառը, սակայն նախադաս կիրառությամբ և որպես իր ժամանակի խոսակցական հայերենի ձև՝ «(Ձանդրանիկն) պահէ առ իւր ի համար քազաւորութեան»: «Շինեալ են տուն ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ»: Բառի անցումը կապական կիրառության, անշուշտ, կատարվել է համար «հաշիվ» իմաստի շնորհիվ: Գրաբար լեզվում համար կապի փոխարեն օգտագործված ենք գտնում վասն բառը, որին կարելի է հանդիպել ամեն նախադասության մեջ: Միջին հայերենը մեզ ավանդել է լեզվական գեղեցիկ նմուշներ, որտեղ միաժամանակ օգտագործված են գրաբարյան վասն և «ռամկական» համար կապերը: Գրաբար ուսած հեղինակն ուզում է վասն բառն օգտագործել, բայց դարաշրջանի խոսակցական լեզվին հարազատ մնալով «ավելորդաբար» դնում է նաև համար կապը: Ահա այդ օրինակները.

«Վասն մերձաւորութեան համար» (ԱԱԱԱ, էջ 187):

«Վասն տգրուկ հանելու համար» (ն. տ. էջ 54):

«Վասն Ադամայ սիրոյն համար» (ՀԹՏ, էջ 163):

«Վասն իմ սրտիս սիրուն համար» (ԿԵՏ, էջ 122):

«Վասն անցաւոր կեանքի համար» (ն. տ. էջ 194):

«Վասն այն մարգարտին համար» (ՖԻԲ, էջ 44):

Բոլոր հեղինակների մոտ էլ համար կապը բացառապես հտադաս կիրառություն ունի, և գոյականով ու դերբայով արտահայտված կապվող բառը սե-

ուական հորովածն է ունենում, ինչպես՝ «Եւ իր փոխանն՝ վասն տղրուկ հանելու համար՝ հլթիսն է» (ԱԱԱԱ, էջ 54): «Եւ ասաց դեն. Աստուծոյ համար և Աստուծոյ սիրոյն համար զնայ ի դուռն արգելէ մեկ պահ մի» (ՎԱԱ, էջ 135): «Հիւանդացաւ մահու համար, Բայց ապրեցաւ նա շատ երկար» (ՆՇԲԶ, էջ 568): Այսպես նաև՝ «սիրոյդ համար» (ՀԵԲ, էջ 159), «որդանց համար» (ԿԵՏ, էջ 159), «չաղցնոց համար» (ՍԳԴ, էջ 20), «մարմնոյդ համար» (ՖԲԲ, էջ 176) ևլն, ևլն:

Դերանուն կապվող բառ ունենալու դեպքում հոլովառութիւնը փոխվում է: Այսպես՝ ցուցական դերանուններով, ինչպես նաև անձնական դերանուններով III դեմքով դրված կապվող բառերը սեռական հոլովածն են ունենում. «այնոր համար» (ՄՀԶՄ, էջ 40, 41), «այդոր համար» (ՖԲԲ, էջ 44, 58), «նորա համար» (ՆՀԲ, էջ 52), «նրա համար» (ն. տ. էջ 52), «անոր համար» (ՎԱԱ, էջ 137) ևլն: Մինչդեռ անձնական դերանվան I և II դեմքերի հետ կիրառութեան բոլոր դեպքերը տրականով են դրված, ինչպես՝

«Թէ դու զիս խապուլ անես, քեզ համար կանգնիմ ես ի ժամ» (ՆՔԴ, էջ 72):

«Զհուրն ինձ համար է պատրաստել» (ՖԲԲ, էջ 124):

«Եկայք ամէնքս յոտք անկանենք,

«Որ մեզ համար ստեղծած է նա» (ն. տ. էջ 125):

«Կինն երդնու, երդամբ ճայթէ.

«Քեզի համար ինձ մահ տիրէ» (ՀԹՏ, էջ 120) ևլն:

Համար, պատճառով կապերի իմաստով է գործածվում սիրուն կապական բառը, ինչպես՝ «Բլբուլին անենք նադար, Որ ի քաֆուր վարդի սիրուն ի շուռ կուգայ քան զգիւհար» (ՀԹՏ, էջ 160): «Քո սիրուն եղեն գուսան» (ՄՆԲ, էջ 102): «Ոմանք յայն ծաղկի սիրուն շորցան ու դարձան դեղին» (ն. տ. էջ 105) ևլն:

Նախդրավոր կազմութեամբ կապական բառերից է ի ձեռն բառը, որ պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «ի ձեռն այդ պատճառանացդ այս ջերմս ընծայի» (ՄՀԶՄ, էջ 31): «...Եւ հոսի ի ձեռն գինութեան» (ն. տ. էջ 122): «Նույնպէս եւ յամենայն մարմնոյն՝ ի ձեռն հազարոյն՝ արկնուի նիւթս» (ն. տ. էջ 48): «Թագաւորք յԱստուծոյ են կարգած, որպէս յՆարայէլի Աստուած ցուցնէր ի ձեռն մարգարէից օծութեան» (ՍԳԴ, էջ 46): Գրաբար լեզվում նույնպէս ի ձեռն կապը լայն կիրառութիւն ուներ, ինչպես՝ «Թէպէտ և պանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (Եղիշե, I եղանակ): Ինչպէս վերևի կիրառութիւններից էլ կարելի է տեսնել, ի ձեռն կապակցութիւնն իր մեջ պահում է կես բառական-նյութական, կես կապական իմաստ: Հայտնի է, որ գրաբարում ի նախդիրը հայցական հոլովի հետ կիրառվելիս կարող է արտահայտվել գործիական հոլովի գաղափար, ինչպէս՝ «...ասելով ի պարսկերէն լեզու» (=պարսկերեն լեզվով—Բուզանդ, IV, ԺԶ): Ուրեմն՝ ի ձեռն սկզբնապէս նշանակել է ձեռնով՝ բառի նյութական առումով, իսկ հետո կիրառվել է կապական իմաստով:

Ներգոյական գաղափարի գրաբարյան նախդրիվ կառուցվածքի պակասելուն զուգահեռ միջին հայերենում աշխուժանում են (ի)մէջ կապով կազմվող ներգոյականի դրսևորման ձևերը: Գրաբարում ևս (ի) մէջ կապով կազմվող ձևեր գտնուում ենք: Բերենք Եզնիկ Կողբացու հետևյալ օրինակը. «Արդ բարիոր



է արեգակն... իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուց-  
 եալ...» (Եղծ աղանդոց, I, 9): Սակայն, իշպես Հայկազյան բառարանի օրի-  
 նակներից էլ կարելի է եզրակացնել, բառս պարզ մէջ ձևով չի օգտագործվում,  
 իսկ ի նախորդի հավելումը բառի վրա ցույց է տալիս, որ գրաբարում մէջ բառը  
 դեռևս իր բառական-նյութական իմաստը պահում է: Մինչդեռ մեր լեզվի այս  
 շրջանում մէջ բառը հաճախ հանդես է գալիս սոսկ որպես կապ, որ ստորև  
 կտեսնենք: Նախ՝ նշենք, որ (ի)մէջ բառը գրաբարյան ձևով շատ կիրառու-  
 թյուններ ունի, նույնիսկ 2-րդ շրջանի հեղինակների մոտ, ինչպես՝ «Եւ առեալ  
 մսայգործացն ժողովեալ զմորթն և զկաշին եղին յաղաղոցն ի մէջ շուկային և  
 ինքեանք գնացին» ՚ի տունս իւրեանց: և ի մէջ գիշերին ժողովեցան շունք...»  
 (ՎԱԱ, էջ 128): «Եւ առաւել ի մէջ իւր գեղի» (ՆՃԲ, էջ 80): «Ք[ո] բան[ն]  
 պահեալ՝ ի մէջ քո մրտաց» (Ն. տ. էջ 92): «Եղին ի բանտ ի մէջ տրդմին»  
 (ՆՇԲԶ, էջ 569): Այսպես նաև՝ «ի մէջ երկրի» (ԿԵՏ, էջ 180), «ի մէջ գիշերիս»  
 (Ն. տ. էջ 167), «ի մէջ գրքին» (ՖրԲ, էջ 209), «ի մէջ ծաղկանց» (ՀԹՏ, էջ  
 166), «ի մէջ գիշերոյդ» (ՄՆԲ, էջ 47), «ի մէջ բերնին» (ՄՂԲ, էջ 102), «ի մէջ  
 սրղաց» (Ն. տ. էջ 112) ևլն, ևլն:

Մէջ կապի կիրառությունը միջին հայերենում գրաբարի համեմատու-  
 թյամբ ունի մի քանի առանձնահատկություններ: Նախ՝ այս շրջանում մէջ  
 բառը, ճիշտ է, նախադաս կիրառությամբ, բայց առանց ի նախորդի է հանդես  
 գալիս, իսկ այդ նշանակում է, որ բառի նյութական իմաստը թուլացել է և  
 անցում է կատարվում դեպի վերաբերական իմաստ արտահայտող խոսքի  
 մասը: Օրինակներ ունենք ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ շրջանի հեղի-  
 նակների մոտ՝ «Տեսէք մէջ գիշերիս շատք, որ պահ մի շեն լել ի քուն» (ԿԵՏ,  
 էջ 124). «Մէջ անգիտաց հաբր եմ ընգել» (Ն. տ. էջ 122). «Տանին մէջ հողուն  
 դրնեն» (ՖրԲ, էջ 172). «Մէջ յամէն սրբոց սևերես» (Ն. տ. էջ 158). «...թէ ար-  
 կանէք մէջ հերիսի» (ՄՂԲ, էջ 104) ևլն, ևլն: Երկրորդ՝ մէջ կապը, առավելա-  
 պես 2-րդ շրջանի հեղինակների մոտ, գտնում ենք ետադաս կիրառությամբ,  
 իսկ դա նշանակում է, որ բառն ըմբռնվում է որպես կապ և աշխարհաբարի  
 շարադասության է ենթարկվում: Եթե առաջին և երկրորդ շրջանի մի քանի հե-  
 ղինակների լեզվի քննություն կատարենք, կտեսնենք, որ, օրինակ, Հովհաննես  
 և Կոստանդին Երզնկացիները մէջ կապը ետադաս կիրառությամբ չեն օգտա-  
 ցործում, մինչդեռ Ամիրդովլաթի մոտ միայն ետադաս կիրառությամբ է, ինչ-  
 պես՝ «հալի մէջ» (ԱԱ, էջ 50), «եղի մէջ» (Ն. տ. էջ 55), «տերևի մէջ» (Ն. տ.  
 էջ 85) ևլն: Մէջ կապը մեծ մասամբ ետադաս է օգտագործում նաև Ն. Հովնա-  
 թանը, ինչպես՝ «խնձորի մէջ (Բանաստեղծթ. էջ 8), «քղթի մէջ (էջ 19), «իմ  
 սրտին մէջն» (էջ 24) ևլն:

Մօտ կապը գրաբարում, ճիշտ է, օգտագործվում է, սակայն ո՛չ վուտ կա-  
 պական իմաստով: Մօտ բառի գրաբարյան բոլոր կիրառությունները մի տե-  
 սակ անցումնային վիճակ են ածական-մակբայից դեպի կապ. այսպես՝ «Մօտ  
 յորմաձս արգելոցացն որսոյն էրիոցն...» (Բուզանդ, IV, ԺԵ): «Մօտ առ նոսա»  
 ևլն: Մօտ բառի գրաբարյան կիրառությունները կարելի էր հավասարեցնել  
 աշխարհաբարի հետևյալ կապակցությունների մեջ ունեցած դերին. «Ես նրան  
 մոտ եմ». «Կայարանին մոտ մի տեղում գրախանութ կա». «Կրակին մոտ մի՛  
 գնա» ևլն:

Ինչպես վերևում բերված օրինակներից էլ կարելի է նկատել, գրաբարում  
 մօտ բառից հետո դրվում է ի նախդիրով բառ: Միջին հայերենում ևս պահ-

պանված է այս կիրառութիւնը. մեր հեղինակները մեծ մասամբ մօտ բառը նախագաս են օգտագործում ի նախդիրով դրված հայցական հոլովով բառի հետ, ինչպես՝ «Դու ընդէ՛ր մօտ ի մահաբն յայտնի լինիս պարզ երեսով» (ԿԾՏ, էջ 174): «Եւ իւր սկիզբն ի խարտեշ մաղձին բորբոսելոյն լինի՛ որ ի ներքս ի յերական բորբոսի, որ մօտ ի սիրտն լինի և մօտ ի ստամոքաց բերանն...» (ՄՀԶՄ, էջ 103): «Մօտ ի քաղաքն եկան հասան» (ՀԹՏ, էջ 200) ևլն:

Միջին հայերենում մօտ բառի կիրառութիւնը գրաբարի համեմատութեամբ մի շարք առանձնահատկութիւններ ունի: Նախ՝ մօտ բառը, ճիշտ է ի նախդիր ունեցող կապվող բառի հետ, սակայն ետագաս կիրառութեամբ է հանդես գալիս, ինչպես՝ «Խելօքն ի յանգէտն ի մօտ, միտք արա թէ ի՞նչ նըման է» (ՀԵԲ, էջ 157): «Զէտ ըզթիթեղն ի մոմն ի մօտ» (ՀԹՏ, էջ 132): Այս դեպքում կապվող բառը դրվում է ինչպես նախդիրով հայցականով, այնպես էլ սեռական հոլովով՝ «...Պատեհ է որ տեղոյն մարդիկ յառաջ գան և ժողվին զայլ շէներաց աղէկ մարդիկքն ու շափեն թէ ի յո՛ր շինու ի մօտ է սպանածն (ՍԳԴ, էջ 68):

«Անգէտ և յիմար մարդն ի մօտ՝

Սա շաժէ ափով մի թրիք» (ՖրԲ, էջ 114):

«Թէ յանգէտ մարդիքն ի մօտ» (ԿԾՏ, էջ 195):

Վերևի կիրառութիւններից անցումը մօտ կապի այսօրվա իմաստով կապական կիրառութեան, ինչպես ասում են, միայն մեկ քայլ է, որ առավելապես օգտագործված ենք գտնում 2-րդ շրջանի հեղինակների մոտ, մասնավորապես՝ Ամիրզովյաթի ու Ն. Հովնաթանի, ինչպես՝ «...Պիտի որ դարբնին քուրան դնեն և փշեն որ հալելու մատ լինի և հանեն» (ԱԱԱԱ, էջ 158): «Անգէտ մարդուն մօտ նա փող մի շաժէ» (ՆՀԲ, էջ 82): «Ծամբա գտէք, ինձ սիրուհուս մօտ տարէք» (ն. տ. էջ 193): «Ինձ մօտ նստիր, պատկերիդ նման քաշեմ» (ն. տ. էջ 41) ևլն: Անձնական դերանունների I և II դեմքերի հետ մօտ կապը տարբեր հոլովառութեամբ է հանդես գալիս, ինչպես՝ «Շատ վախտ է երեսդ ու ծոցդ իմ մօտ շես բացել, կարմիր վարդի թէր» (ՆՀԲ, էջ 30): «Թէ զնա բամպասես՝ էլ քեզ մօտ չի գար» (ն. տ. էջ 90): «Մէկ օր ինձ մօտ արի, պատկերիդ նման քաշեմ» (ն. տ. էջ 229):

Կապերի՝ միաժամանակ տարբեր հոլովներով կապվող բառերի հետ հանդես գալը, անշուշտ, նրանց մեջ բառական իմաստի թուլացման հետևանք է: Հայագիտութեան մեջ ընդունված է կարծել, որ այդ երևույթն սկսվել է գրաբարյան մօտ բառի հոլովական կապակցութեան փոփոխութիւնից: Ինչպես վերևում ցույց տվեցինք, մօտ բառը գրաբարում դրվում է ի նախդրավոր հայցականի վրա, ուստի անձնական դերանունների հետ պիտի տար մօտ յիս, մօտ ի քեզ, մօտ ի մեզ, մօտ ի ձեզ: Հայտնի է, որ աշխարհաբար լեզվամտածողութիւնն առաջին հերթին վերացրեց գրաբարյան նախդիրները: Ի դեպ, ասենք, որ այսպես առաջացավ ներգոյական հոլովն աշխարհաբարի որոշ բարբառներում՝ ի հնում-հնում, յառաջնում-առաջ(ի)նում ևլն: Նախդիրներից զրկված դերանունների վերևի ձևերն աշխարհաբարում ընկալվեցին որպես տրական հոլովաձևեր: Ինչպես գրում է բանասիրական գիտութիւնների դոկտոր Վ. Առաքելյանը, հետագայում ի նախդիրը ընկնում է և լինում է մօտ քեզ-քեզ մոտ, մօտ մեզ-մեզ մոտ, մօտ ձեզ-ձեզ մոտ, իսկ եզակի առաջին դեմքում

էլ համաբանությամբ՝ ինձ մոտ: Սրանից համաբանությամբ առաջանում են ինձ վրա, ինձ համար, քեզ վրա, քեզ համար կլն»<sup>17</sup>: Եվ իրոք, ստորև բերված երկու օրինակներում կարելի է շոշափելիորեն նկատել, թե ինչպես կարող էր կատարվել այդ երևույթը. «Ձաստուած մօտ ի քեզ դու տես ու զմահուն օրըն գու յիշէ» (ՀԵԲ, էջ 147): «Որտեղ որ սիրու տէր կան, Ամէնն մեզի մօտ թող գան» (ԿԵՏ, էջ 154):

Առաջին օրինակում մօտ բառը գրաբարին հարադատ ձևով ի նախդիրով հայցական հոլովածէ է պահանջում, մինչդեռ երկրորդ օրինակում ի նախդիրը միանալով մեզ հայցական հոլովածին՝ տվել է մեզի տրական հոլովածը, մի հոլովածէ, որ ինչպես միջին հայերենին, այնպես էլ այսօր արևմտահայ աշխարհաբարին հարադատ է:

Մինչ և մինչև կապերը, ինչպես գրաբարում, միայն նախադաս կիրառություն ունեն և դրվում են ի նախդիրով արտահայտված հայցական հոլովի վրա, ինչպես՝ «Մէկն այն է՝ որ իւր տաքութիւնն հանապազ միացեղ լինի յառաջմէ մինչև ի վնարն» (ՄՀՁՄ, էջ 57): «Պատեհ է որ հիւանդութեան սկզբնէն մինչև ի հիւանդութեան ի կտաւիլն լինի» (ն. տ. էջ 125): «Ի յԱդամայ մինչև ի քեզ» (ՀԹՏ, էջ 178): «Ձասեմ թէ հանց հողմ իշնէ, որ քակէ մինչև ի յատակ» (ՅԹԲ, էջ 57) կլն: Ի տարբերություն մյուս բոլոր հեղինակների՝ Ն. Հովնաթանը այս կապերն օգտագործում է ուղղակի հայցական հոլովով կուպվող բառի հետ, ինչպես՝ «Աստուած կու սիրէք, մինչև օրհնելն մարդ չի վեր կենայ» (Բանաստեղծթ. էջ 161). «Քո սիրոյդ հալվիմ և մաշիմ մինչև զալ տարի» (ն. տ. էջ 230). «Մինչ համբարձում քոսուն օր է» (ն. տ. էջ 102) կլն:

Յետ կապը, ինչպես գրաբարում, գրեթե միշտ նախադաս է հանդես գալիս և սեռական հոլովով դրված կապվող բառով, ինչպես՝ «Ապա յետ երկու արուրն դարձեալ ի բաղանիս մտո՛» (ՄՀՁՄ, էջ 14): «Ձի յետ կերակուր ուտելոյն տաքութիւնն յաւելնայ» (ն. տ. էջ 39): «Եւ յետ տարոյ միոյ զնա մըկըրտեցին» (ԳԱԲ, էջ 116) կլն: Մ. Նաղաշի հետևյալ օրինակում յետ կապն օգտագործված է, թվում է, տրական հոլովածի հետ. «Անոնց, որ յետ ձեզ կուգան, օրինակ շարեաց մի՛ լինիք» (Բանաստեղծթ. էջ 127): Ն. Հովնաթանն այս կապը ևս ետադաս է օգտագործում: Դժբախտաբար շատ կիրառություններ ղկան, սակայն եղած կիրառությունը խոսքային հանգամանքների թելադրանքով չէ, այլ ուղղակի աշխարհաբար լեզվամտածողության ու շարադասության մի օրինաչափ դրսևորում. «Համբարձման յետ՝ Եղիա կայ» (Բանաստեղծթ. էջ 103): Յետ կապի փոխարեն այս շրջանում գործածվում է նաև յետև կապը: Սա, անշուշտ, հստակված է յետ բառի վրա և շարվապի հավելումով: Հայկազյան բառարանը յետև բառ չգիտե: Ըստ երևույթին, այս կապը բարբառային է և բնականաբար՝ ետադրություն: Ինչպես կարելի է օրինակներից էլ նկատել, յետև կապն օգտագործում է Ամիրդովլաթ բժշկապետը. մեկ օրինակ էլ գտնում ենք Մ. Հերացու մոտ, թեև վերջինս ավելի շուտ յետ կապն է օգտագործում: Օրինակներ. «Եւ թէ կերակրէն յետև ուտեն՝ զկերակուրն կու մարսէ» (ԱԱ, էջ 107). Եւ լաւ թտպիրն այն է, որ զինքն գործ դեղ խմելուն յետև ի գործ արկանեն» (ն. տ. էջ 27). «Եւ ուտելուն յետև ելնէ յարենն նստի մերկ» (ն. տ. էջ 27). «Եւ երբ ջերմն պակասի, ի բաղանիս մտէ, եւ եղկ ջրով լուացվի, եւ ի բաղանեացն յետև ի քուն լինի» (ՄՀՁՄ, էջ 26) կլն:

<sup>17</sup> Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 186:

Յետև բառն ունի նաև անկախ, մակբայական կիրառություն՝ հետո բառի իմաստով. *ինչպես՝ «Եւ թէ զգայլն մէկ քանի ար սսկրով բտեն և յետև՝ զաղբն աղով և պղպեղով խառնեն և ջրով խմցնեն, աւգտէ» (ԱԱԱ, էջ 112). «Եւ Խ օր ի շուքն դիր, եւ յետև կոտրէ զդդումն...» (ն. տ. էջ 121):*

Նման բառը գրաբարում ածական է, մակբայ և նախադրություն: Կապական հստակ կիրառություն չունի. պատահական չէ, որ նման բառի հետ գրաբարում հանդես է գալիս տրական հոլովով կապվող բառ. *ինչպես՝ Աղամայ ոչ գտաւ օգնական նման նմա, նման քեզ, եւ դու՝ նման նոցա ևլն, որտեղ, թվում է, նման բառն ավելի շուտ ածական է և տրական հոլովով լրացում է պահանջում:*

Միջին հայերենում ևս մենք գտնում ենք նման կիրառություններ, սակայն մեր լեզվի այս շրջանի համար բնորոշը նման բառի կապական կիրառությունն է, ինչ որ ստորև բերված օրինակներում կերևա: *Նախ՝ նման բառն ունենում է նախդրիվ հայցականով արտահայտված կապվող բառ, ինչպես՝*

*«Շատ կայ ի յարև նրման ի պնչէն օձըն կու վազէ» (ՉԵԲ, էջ 157):*

*«Աշխարհս ի տուլպ նրման, որ ի վեր և ի վայր թաւալի» (ն. տ.):*

*«Քո տեսն ի լուսին նրման*

*...Աշերդ է ի ծով նրման» (ԿԵՏ, էջ 156):*

*«Անգէտն ի հուր նման, ուր ընկնի գտեղն կու էրէ.*

*Գիտուն ի ջուր նման, ուր երթայ՝ կանանչ բուսեր է» (ՆՔԴ, էջ 94) ևլն:*

Նման կապի հետ նախդրիվ հայցականով որպես կապվող բառ հանդես եկող այս ձևերից է, որ, ի նախդրի վերանալով, ստացվեցին նման + հայցական բառ արտաստվող կապակցությունները, ինչպես՝

*«Խելօքն ի յանգէտն ի մօտ, միտք արա թէ ի՞նչ նման է*

*Աշխարհս է ոչինչ նրման, շատ դատին դառնան փոշիման» (ՉԵԲ, էջ 157):*

*«Երեսդ է լուսին նման ու զիլֆերդ ի դատիր գիշեր» (ՆՔԴ, էջ 48):*

*«Երես՝ այն դումաչ նման, որ հանած է ֆուսկաց մէջէն» (ն. տ. էջ 61):*

*«Պոկունքդ է լիմոն նման, կու բանաս դու մարդու մատան:*

*Լեզուդ է պլպուլ նման, կու գովէ զինչ գարնան նման» (ն. տ. էջ 43) ևլն:*

Միջին հայերենում նման կապը մեծ մասամբ սեռական-տրական հոլովով կապվող բառ է պահանջում, ընդ որում՝ Երզնկացիների մոտ դեռ նախադաս կիրառություններ հանդիպում են, ինչպես՝ *«նման արեգական» (ԿԵՏ, էջ 188), «նման միմեանց» (ն. տ. էջ 173), «նման արարչին» (ՉԵԲ, էջ 209) ևլն, սակայն Ֆրիկից սկսած մեծ մասամբ ետադաս կիրառությամբ ենք գրտնում, իսկ Ամիրզողվաթի, Ն. Քուչակի, Ն. Հովնաթանի մոտ՝ միշտ ետադաս. «Եւ տերեւին տակն զերդ զալուսան խոտի նման կու բուսնի» (ԱԱԱԱ, էջ 84): «Դու հագրեվարդի նման, մարըն չէ բերել քեզ նման» (ՆՔԴ, էջ 43): «Վուսնի նման պայծառ երես բոլորած» (ՆՉԲ, էջ 5): «Սիրամարգի նման քայլին» (ն. տ. էջ 13): «Վարթի նման քոչ երեսդ փայլի, շողշողայ» (ն. տ. էջ 21): «Երեկ վարդի նման ես կու փայլէի, Սիրամարգի նման ի շուրջ կու գայի» (ՄՆԲ, էջ 159): «Գովեմք զհարսն ու զփեսայն, Սոքայ ճակոբայ նրման» (ն. տ. էջ 103) ևլն, ևլն:*

Դերանունների հետ կիրառվելիս նման կապը տարբեր հոլովներ է պահանջում: Այսպես, III դեմքի անձնական դերանունն ու ցուցական դերանունները սեռական հոլովով են դրվում, ինչպես՝

«Դարպաս մի կայր Մըսրայ երկիրն,  
Որ իւր նրման իսկի չի կայր» (ՅրԲ, էջ 199):  
«Այնուր նման գործք պիտի...» (ն. տ. էջ 155):  
«Իր ծոցն է լուսով լցած եւ իր նման իսկի չէ ծնած» (ՆՔԴ, էջ 73):

II և III դեմքի անձնական դերանունները տրական հոլովով են դրվում՝  
ինչպես՝

«Յաշխարհըս քեզ նրման չը կայ» (ՅրԲ, էջ 121):  
«Ծօ՞, ես հանցեղ պարոն էի,  
Որ ինձ նրման պարոն չի կար» (ն. տ. էջ 200):  
«Մատներդ է մոմի նման, ուներդ է թուխ ամպի նման.  
Աչերդ է ծովուն նման, աշխարհս չկայ քեզ նման» (ՆՔԴ, էջ 59) ևլն:

Միջին հայերենում նոր կապ է ներքև բառը, որ Հայկազյան բառարանը  
չգիտե: Աշխարհաբար լեզվամտածողությամբ ներքև կապը պետք է հտադրու-  
թյուն լիներ, սակայն մեր հեղինակների մոտ ավելի շատ նախադաս կիրառու-  
թյամբ է հանդես գալիս, ինչպես՝

«Այս կեանքս է ժանգոտ պղղինձ, որ ներքև հողին կու փրտի» (ՅրԲ, էջ 43):

«Ենծորն ի ծառին ճղին, ի ճղին ներքև տերեխն,  
Հնցկուն իմ հարին ծ...ի ծոցին ներքև շրմաթին» (ՆՔԴ, էջ 53) ևլն:

Ունենք նաև հտադաս կիրառության դեպքեր, ինչպես՝ «Մահու մեղաց  
ներքև եմ ես» (ՀԹՏ, էջ 127): Ամիրգովլաթի մոտ մի՛շտ հտադաս կիրառու-  
թյամբ է, ինչպես՝ «...եւ այն խոցն՝ որ ի լեզուին ներքևն լինայ, աւգտէ» (ԱԱ,  
էջ 94): «Յորժամ ձմեռն լինի՝ աւձերն ի գետնին ներքևն կու մտնուն» (ն. տ.  
էջ 164):

Որպէս կապը կիրառության տեսակետից առանձին հտադրություն չի  
ներկայացնում: Գրաբարի համեմատությամբ սահմանափակ կիրառություն  
ունի, միշտ նախադաս, պահանջում է հայցական հոլովով կապվող խնդիր,  
որը մե՛կ զ նախդիր է ունենում, մե՛կ առանց նախդրի է դրվում, ինչպես՝  
«որպէս զուն» (ՀԵԲ, էջ 173), «որպէս զայրոս» (ն. տ. էջ 180), «որպէս կա-  
պար» (ԿԵՏ, էջ 194), «որպէս հրեշտակ» (ՄՆԲ, էջ 122), «որպէս զսաք» (ԳԱԲ,  
էջ 194), «որպէս որ երամս» (ՆՀԲ, էջ 164) ևլն:

Միջին հայերենում գործածված ենք գտնում նաև շափ և շաֆ կապերը:  
Ինչպես՝ «Սրով ես ինձ հանց արի, որ մահու շափ ես խոցեցայ» (ՅրԲ, էջ 79):  
«Ձայս ըմպանակ, որ ունիս յափ, է կատարեալ հարիւրի շափ» (ՄՂԲ, էջ 135):  
Չաֆ «ռամկական» բառը հանդիպում է Մ. Հերացու, Ս. Գունդստապի և Ամիր-  
գովլաթ բժշկապետի մոտ, ինչպես՝ «Ձամէնս աղա եւ մաղէ, ... հապեր արա մէկ  
պղպեղի հատի շաֆ» (ՄՀԶՄ, էջ 118): «Եւ այն ջրի շաֆ մէկուկէս շաքար խառ-  
նէ» (ԱԱԱԱ, էջ 50): «Ասեր է Մինհաճին տէրն թէ յիրմէն կէս մթխալ եւ կամ  
սիստան շաֆ տաք ջրով խմեն...» (ն. տ. էջ 59): «Եւ այն որ ածուոցն է՝ հաստ  
կու լինի մատի մըն շաֆ» (ն. տ. էջ 111) ևլն:

Կազմությունների մեջ ևս շաֆ բառը փոխարինում է շափ բառին, ինչպես՝  
«...Այնչաֆ շատ հալածեցնէ...» (ՍԳԴ, էջ 21):

Ինչպես բերված օրինակներից էլ կարելի է տեսնել, շափ և շաֆ կապերը

միայն ետադաս<sup>18</sup> կիրառություն ունեն և սեռական հոլովով կապվող բառ են պահանջում: Ի դեպ, շափ կապը (գրաբարը շափ կապ շունի) գրաբարում ևս ետադաս կիրառություն ունեն և չէր արդարացնում իր «նախադրություն» անվանումը: Հիշենք Եղիշեի հետևյալ նախադասությունը. «Զի հինգ հարիւրով շափ յականէ յանուանէ ճանաչեմ»:

Ի տարբերություն գրաբարի, միջին հայերենում համեմատության, նմանության գաղափար արտահայտող կապակցությունը կազմվում է պէս կապով: Գրաբարում, թվում է, ավելի ընտիր ձևեր են որպէս, քստ, իբրև, հանգոյն կապերով արտահայտված նմանության, համապատասխանության գաղափարները: Ահա ինչու Հայկազյան բառարանը պէս կապի ետադաս կիրառությունը («նախընթաց խնդրով») «հանգոյն ուսակականի» է բնորոշում:

Պէս կապը միջին հայերենում միշտ ետադաս է և պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «Եւ կող պնդնայ ժամանակն այն ճիպոն, որպէս որ ի ականջն կու լինի աղտի պէս» (ԱԱԱԱ, էջ 38). «Ասէ Սինէայ Որդին, թէ ինքն ծառ մըն է որ տերեւնին ուռու տերեւի պէս է» (ն. տ. էջ 144). «Յուցանէ առակս, թէ զմարդն փորձել պիտի, որ նենգաոր չէ լինի աւճու պէս» (ՎԱԱ, էջ 130) ևլն:

Ինչպես մի շարք այլ կապեր, պէս բառը ևս դերանունների հետ կիրառվելիս տարբեր հոլովներ է պահանջում: Այսպես, անձնական դերանվան III դեմքի հետ կիրառվելիս սեռական հոլովով կապվող բառ է պահանջում, մինչդեռ նույն դերանվան I և II դեմքերի հետ կիրառվելիս տրականով կապվող բառ է դրվում. «Կարծէ չկայ իւր պէս գիտուն բարի» (ՆՂԲ, էջ 117): «Զեմ տեսեր իւր պէս նզոված» (ՄՂԲ, էջ 90): Մյուս կողմից՝ Մեզ պէս գրոց լեզվի ծով ան» (ՆՂԲ, էջ 198): «Ես գիտեմ, դու ինձ պէս սիրոյ թամահ ես» (ն. տ. էջ 203): «Պալքի քեզ պէս մէկ էլ բերէ» (ն. տ. էջ 237): «Երէկ քեզի պէս էի, այսօր զիս այս հալն է ձգած» (ՆՔԴ, էջ 91) ևլն:

Միջին հայերենում հարուստ դրսևորումներ ունի (ի)վերայ (վրայ) կապը: Նախ՝ ինչպես գրաբարում, կիրառվում է նախադաս, սեռական հոլովով գրված կապվող բառի հետ. ինչպես՝ «Եւ երբ խաղղի ջերմն, արկ ի վերայ գլխոյն եղկ ջուր» (ՄՂՁՄ, էջ 8): «Թագաւորք եւ իշխանք եւ պարոնայք կազմեն զիս ոսկով և արծաթով եւ բազմին ի վերայ իմ» (ՎԱԱ, էջ 151): «Եւ թէ զծառն այրես, մոխիր այնես, եւ քացխով շողես, եւ ի վերայ հառաքաթին դնես՝ օգտէ» (ԱԱԱԱ, էջ 43) ևլն: Վերոհիշյալ բոլոր օրինակներում ի վերայ բառը ֆիզիկական առումով տարածության գաղափար է արտահայտում և հականիշ է տակ, ներքո, ներքև բառերին:

Այս կիրառությունից պետք է տարբերել (ի) վերայ կապի մասին, նկատմամբ, վերաբերյալ, միջև բառերին համանիշ կիրառությունները, որոնք Հայկազյան բառարանի գնահատմամբ էլ «ուսակական» են, աշխարհաբար լեզվամտածողության դրսևորումներ. «Եւ եկն դատաւորն ի յաղմուկն եւ հատուցին վճիռ մահու ի վերայ մսայգործին (= մսագործի նկատմամբ) և սպանին զնայ(յ) իզուր» (ՎԱԱ, էջ 127): «Ու թէ չլանայ, նա յեկեղեցոյն մտոցն իրեն փող մի շտան, ապա ի վերայ աբիականաց բաժնեն զիր բաժինն» (ՄԳԴ, էջ 27):

<sup>18</sup> Ն. Հովնաթանի մոտ շափով կապի հետևյալ նախադաս կիրառությունը զուտ հանգավորման համար է արված. «Ես եր շունին շափով սիսեռի, ինչ լաւ, ֆրասնդ չկայ ձեռնի» (Բանաստեղծք. էջ 103):

«Եւ բլբուլն յանկարծակի

Ելնե-կանչէ ի վերայ վարդին» (=վարդի մասին—ԿԵՏ, էջ 147):

«Շատ պարծեցայ ի վերայ ոսկոյս» (ՖրԲ, էջ 92) ևլն:

Մեր լեզվի այս շրջանում վերայ կապն առավելապես հանդես է գալիս առանց ի նախորդի, իսկ այդ նշանակում է, որ բառական-նյութական իմաստի մթազնում է կատարվում: Իսկ վերայ բառի ետադաս կիրառություններն արդեն ապացույց են, որ բառս ընկալվում է զուտ որպես կապ. «Բարձր էս նրստեր վերայ խալուդ» (ՖրԲ, էջ 177): «Պանդոկ մի կայր վերայ երկրի» (ՆՇԲԶ, էջ 563): «Ի խընկաբեր բլբրին վերայ...» (Ն. տ. էջ 584): «Յայս աստընտրիս վերայ վատն իսկի մարդոյ չի մնար» (ՀԵԲ, էջ 156): «Թռչիմ նստիմ թևիդ վերայ» (ՀԹՏ, էջ 229):

(ի)վերայ կապն անձնական դերանունների I և II դեմքերի հետ գործածվելիս, թվում է, սեռական հոլովով կապվող բառ է ունենում. ինչպես՝ «ի վերայ իմ» (ՎԱԱ, էջ 151), «եո վերայ» (ՄՂԲ, էջ 132), «ի ձեր վերայ» (ԿԵՏ, էջ 122), բայց և՛ «եեզ վերայ» (ՖրԲ, էջ 87):

Ինչպես վերևում բերված օրինակներից էլ կարելի է տեսնել, (ի) վերայ կապի մասին ետադաս կամ նախադաս կիրառության իմաստով որևէ ստույգ բան դժվար է ասել: Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների մոտ ունենք ետադաս կիրառության դեպքեր, մինչդեռ, ասենք, Ամիրդովլաթի մոտ կան նախադաս կիրառության դեպքեր («ի վերայ նարահաթին»—էջ 43, «ի վերայ հեղրապատինին»—էջ 44):

Բանաստեղծական արվեստի պահանջներն առավել ևս են խանգարում, որ այս կիրառությունները հստակ կերպով երևան: Այսպես, թվում է, որ Ն. Շնորհալին և Կ. Երզնկացին հետևյալ նախադասությունների մեջ հարկադրաբար, հանգավորելու համար են վերայ կապը ետադաս կիրառել.

«Ի խընկաբեր բլբրին վերայ,

Չոր կիպարի ծառ մի տեսայ» (ԲԶ, էջ 584):

«Բաժանէցէ՛ք ի ձեր վերայ

Ձվարդս, որ վանց ձեր ցառուտ մեռայ» (Տաղեր, էջ 122):

Սրանց հակառակ՝ Ն. Հովնաթանը վրայ կապը նախադաս է կիրառում, ինչպես՝

«Ես դարիպ եմ, դիպչիլ մի երած սրտիս,

Միծաղելով եկ առնեմ վրայ գրկիս» (Բանաստեղծթ. էջ 40):

Ստորև կարելի է տեսնել, որ Ն. Հովնաթանը վրայ կապի բազմաթիվ կիրառություններ ունի, որոնցից ոչ մեկը նախադաս չէ:

Հատկապես 2-րդ շրջանի հեղինակների մոտ ենք հանդիպում վրայ կապի կիրառությանը: Սա, անշուշտ, նույն վերայ բառն է՝ հնչյունափոխված: Գրաբարը վրայ կապ չգիտե. Հայկազյան բառարանը ոչ մի օրինակ չի տալիս և հղում է ի վերայ բառին: Վրայ բառը բացառաբար որպես ետադրություն է հանդես գալիս, ինչպես՝ «Եւ թէ կրակին այրածին վրայ դնես, շատ աւգտէ» (ԱԱԱԱ, էջ 86): «Փարչ մ'ալ գինի կէս սուլումայ, Գառան մսին վրայ շուռ տայ» (ՄՂԲ, էջ 98): «Առնում զԱղամայ հոգին ու գրեմ ի քթին վրայ» (ՆՔԴ, էջ 89): Ն. Հովնաթանը միայն վրայ կապն է օգտագործում: Ճիշտ է, էջ 29-ում գտնում ենք «Բուխախիդ վերայ» ձևը, սակայն պարզվում է, որ գրչություննե-

բում տարբեր ձևեր կան: Ստորև տալիս ենք օրինակներ ն. Հովնաթանի ստեղծագործություններից.

- «Առաւօտուց երկնից ցօղն կարմիր վարդի վրայ մաղած» (էջ 24):
- «Ետ բաց երեսիդ վրայ շարսան» (էջ 25):
- «Մեր մոնթերի վերայ փոսրն» (էջ 118):
- «Նազանի, ետ բաց ճակատի վրայ մուշրաղն» (էջ 236) կլն, կլն:

Առավելապես միջին հայերենին հատուկ կապեր են ի վեր, ի վայր կապակցությունները, որոնք պահանջում են բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «Եւ ի կիսէն ի վեր՝ մանտր տերեւ ունի» (ԱԱԱԱ, էջ 132): «...այլ ասեր են թէ գեն է միջացն ի վայր» (ն. տ. էջ 180): «Սատանան յիշոցք ասաց. դեռ անկից ի վեր կու վայէ» (ՆՔԴ, էջ 88) կլն:

Վասն կապը գրաբարի համեմատությամբ կիրառական առանձնահատկություններ չունի: Բացառաբար գործածվում է նախադաս՝ գրաբարի յաղագս, ի պատճառս կամ շղիարհաբարի համար կապի իմաստով, ինչպես՝ «Վասն Եւայի իմ կողակցին... Ես այլ նորայ հաւանեցայ» (ՀԵԲ, էջ 229): «Ետ պատուիրան վասըն պրտոյն՝ շուտել անդի» (ԿԾՏ, էջ 222) կլն:

Վասն կապն այն ցուցական դերանվան հետ կիրառվելիս ուղիղ ձևով զրված կապվող բառի հետ է հանդես գալիս: Հայկազյանը գիտե այս ոճը և որպես հունարանություն է որակում: Ավելացնենք, որ գրաբարում այն դերանունը բացառաբար հայցական հոլովով հանդես չի գալիս, այլ մե՛րթ սեռականով, մե՛րթ էլ հայցականով. Օրինակ՝ «Կարծեմ վասն այնոր (=այն պատճառով) արար, թէ ի վեր քարշել զնա կարէ» (ՀԵԲ, էջ 163): «Վասն այնորիկ սուրբն հրեղէն ի մի ծառոյ կայ պատրաստած, Որ ոչ բերէ պրտուղ բարի նա, հատանէ հաւսարակաց» (ԿԾՏ, էջ 151): «...Վասն այնորիկ ի յէտիրնէ Գնայ Ստամպոլ վտարական» (ՄՂԲ, էջ 83): Ինչպես նաև՝ «վասն այնորիկ» (ՀԵԲ, էջ 247), «վասն այնոր» (ԿԾՏ, էջ 144), «վասն այնոր» (ՆՇԲԶ, էջ 580) կլն, կլն: Բայց և՛ «Եւ իւր ստածումն խիստ դժար է վասն այն՝ որ հիւանդութեան զուխն բնութեան յաղթեալ լինի» (ՄՀՋՄ, էջ 33):

- «Եւ հայր վանացն ասաց.— Առաւել ճգնի
- Վասն այն է նրբբաձայն և մօրուս չունի» (ԳԱԲ, էջ 112):
- «Վասն այն՝ տէրտէրների ձեռացն Կուտես շօմաղ եւ գաւազան» (ՆՀԲ, էջ 138):
- «Վասն այն ես այս շարիս դիպիմ որ ի յառաջ դայս լիմանամ» (ՖրԲ, էջ 168) կլն, կլն:

Ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներում, վասն այն կամ վասն այնոր(իկ)<sup>19</sup> կապակցությունները բաղադրյալ շաղկապի իմաստ ունեն. իմաստով մոտ են որովհետև շաղկապին:

Դժբախտաբար օրինակներ չունենք, սակայն մեզ թվում է, որ շաղկապան կիրառությունից դուրս, այսպես կոչված «շահի տրականի» կիրառումը դժվար թե վասն կապը հայցական հոլովով կապվող բառ պահանջեր:

<sup>19</sup> Այնոր ձևը զուտ միջին հայերենյան է: Գրաբարն ունի այս, այդ, այն, այսորիկ, այդիկ այնորիկ ձևերը: Հետագա կիրառության պատճառով վասն կապի հետ միշտ երկրորդ ձևն են գրվում:



Միջին հայերենում նոր կապ է տակ բառը, որն, անշուշտ, հին հայերենի տակ (այստակ իրաց. ստորին մասն. արմատ) բառի կապական կիրառությունն է: Ինչպես իր բառական իմաստն էլ ցույց է տալիս, համանիշ է ներքոյ, ներքև կապերին: Տակ բառը գտնում ենք երկրորդ շրջանի հեղինակների մոտ. միայն ետադաս կիրառություն ունի. պահանջում է սեռական հոլովով դրված կապվող բառ, ինչպես՝ «Այր մի ցանեալ էր յընկոյզի ծառի տակն պարտեզ ձմերուկ» (ՎԱԱ, էջ 149): «Գամ իջանեմ վարդենոյն տակ» (ԳԱՔ, էջ 131): «...որ եղբարքն նստեն ծաղկեալ ծառի տակ» (ՆՀՔ, էջ 170): Հետաքրքրական է, որ Վ. Այգեկցին, օգտագործելով հանդերձ տակ կապը, չի կտրվում գրաբարյան լեզվամտածողությունից և սովորույթի ուժով տակ կապն օգտագործում է ի նախդրի հետ. ինչպես՝ «Կարդացող[ն] ասաց... գնայ քէէ զէջն ի ծառին տակն եւ ել յիշոյն ի ծառն» (Առակք, էջ 174): «Եւ բերին զծեր քահանայն ի սանդիստին տակն» (ն. տ. էջ 138) ևլն:

Փոխան և փոխանակ կապերը, ինչպես գրաբարում, միշտ սեռական հոլովով կապվող բառ են պահանջում՝ «փոխան պտղոյ» (ԿԵՏ, էջ 151), «փոխան հողոյ» (ն. տ. էջ 182), «փոխանակ բարոյդ» (ՄՆՔ, էջ 149), «փոխանակ շաբի» (ՄԳԳ, էջ 70), «փոխանակ նորա» (ՎԱԱ, էջ 179) ևլն: Սակայն միջին հայերենում այս կապերի կիրառությունը գրաբարի հետ չի նույնանում: Գրաբարում միայն նախադաս կիրառություն ունեն, մինչդեռ միջին հայերենում՝ առավելապես ետադաս, իսկ առանձին հեղինակների մոտ փոխան կապը՝ բացառապես ետադաս. «Եւ թէ հազ լինի, տուր խմելոյ տաճիկ կռէզ եւ հայ կաւ. եւ կերակուր՝ ոսքան փոխան՝ հացի փշրուկ... եւ սերկելիին ջրի փոխան՝ մրտի քամուքսն տուր... ապա թէ այդ ջրերդ չիգտուի... դու իւր փոխան փրփրեմի ջուր առ...» (ՄՀՁՄ, էջ 45): «Ապա թէ մարդ սպաննէ, նա տայ զարեան գին կամ զինքն սպաննեն նորա փոխան» (ՄԳԳ, էջ 67): «Զգիտես թէ այդո՞ր փոխան ....քեզ ինչ պիտի գալ» (ՅՐՔ, էջ 89): «Պուտ եմ կերել հացի փոխան» (ն. տ. էջ 71) ևլն, ևլն:

Նոր կապ է քով բառը: Հայկազյան բառարանում ո՛չ քով բառը և ո՛չ էլ այն հիշեցնող որևէ բառ կարելի է գտնել: Ակադ. Հ. Աճառյանը ևս «Արմատականում»<sup>20</sup> բառի ստուգաբանությունը չի տվել, այլ պարզապես՝ հնագույն վկայություններ: Ինչպես վկայում է Հ. Աճառյանը, քով բառն օգտագործված ենք գտնում Վաստակոց գրքի, Ուռհայեցու և Մխիթար Հերացու մոտ: Քով բառն, անշուշտ, հնդեվրոպական ծագում պետք է ունենա: Ավելորդ է ասել, որ հայերենի ամենակենդանի և ամենատարածված բառերից մեկն է: Աճառյանի վկայությամբ՝ քով բառը պահպանված է Ախալցխայի, Ակնա, Ասլանբեկի, Արաբկիրի, Երզնկայի, Եվզոկիայի, Զեյթունի, Ղրիմի, Խարբերդի, Պուսի և մի շարք այլ բարբառներում, մեկ խոսքով՝ ամբողջ արևմտահայ բարբառներում ու գրական լեզվում:

Գժբախտաբար միջին հայերենում բառս սակավ կիրառություն ունի. ինչքանով որ ուշադիր ենք եղել, այն գտնում ենք Ամիրդովլաթի մոտ և միայն մեկ օրինակ Մ. Հերացու մոտ: Ահա այդ օրինակները՝ «Երկրորդն՝ ի տեղեստանն, որ յերակացն փարփուտ են, և ընդյերակսն ի մէջ են, զերդ քովն եւ այլ տեղեստան...» (ՄՀՁՄ, էջ 36): «...Եւ ի ըզրնկան քովն զաւելի միսն ուտէ» (ԱԱԱԱ, էջ 133): «Եւ թէ ըզնկին քովն յաւելի միս լինի, աւծես՝ տանի» (ն. տ. էջ 149): «Եւ ինքն որ բուսնի՝ ի յածուեանց քովերն կու բուսնի» (ն. տ. էջ 194):

<sup>20</sup> Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. 2, էջ 1509:

Ինչպես տեսնում ենք, միայն երկրորդ և երրորդ օրինակներում է որպես կապ օգտագործվում. առաջին օրինակում գոյական է (գոյականաբար օգտագործված), իսկ չորրորդ օրինակում գոյական, սակայն կապական բառի իմաստով օգտագործված: Քով բառը նույնանիշ է մոտ բառին, սակայն որպես միասնության գաղափար արտահայտող բառ օգտագործվում է նաև կոդ(ֆ) իմաստով, ինչպես որ առաջին օրինակում է (կարելի էր համեմատել կուշտ «կողք» բառի «կուշտու ցավում է» կիրառության հետ):

Ինչպես Աճառյանն էլ «Արմատականում» հերքում է իր իսկ տված մեկնությունը, սխալ է քով բառը կապել կոդի հետ: Ոչ թէ կոդ բառի հնչյունափոխությունից է առաջացել ֆով, այլ քով բառն ըստ իր բառական իմաստային բովանդակության օգտագործվել է նաև կոդ(ֆ) իմաստով:

Վերևի շարադրանքից ելնելով՝ այժմ փորձենք կապերի շարադասական կիրառությունները, այն է՝ կապերի դիրքը կապվող բառի համեմատությանը՝ ներկայացնել խմբավորված ձևով:

Որոշ կապեր միշտ դրվում են կապվող բառից առաջ. սրանք ընդունված է նախադրություններ անվանել: Միջին հայերենի կապ-նախադրություններն են նախ և առաջ գրաբարյան նախդիրները՝ առ, զ, ընդ, ըստ, ի, ց, ապա և՛ առանց, բաց(ի), (ի)դէմ, դէպ(ի), զերդ(զերթ), զետ (զէդ), զինչ, զվնի, ընդդէմ, ինչվի, իբր, իբրեւ, հակառակ, հանց (հանց գշաբար «=ինչպես շաբար»), հանգոյն, հանդէպ, մինչև, մինչ, մերձ, (մերձ ի մեզ), յետ, յաղագս, յանուն, (ի)ներքոյ (ի ներքոյ հողին), որպէս, շուր, վասն, (ի)ձեռն, սապապ: Միջին հայերենի կապ-ետադրություններն են. ատեն, աղագաւ, բերանով, դիմաց, դուրս, ետէն, ժամանակ, կեօրայ, նկրուն, ձեռաց, համար, շաֆ, շափ, շափով, պէս, սիրուն (թո սիրուն), վրայ, վախտ(ն), (ի)վեր, տակ, քով:

Միջին հայերենում մի քանի կապեր գործածվում են և՛ նախադաս, և՛ ետադաս: Պատճառը հետևյալն է. դրանց մեծ մասը գրաբարի շարադասության մեջ նախադրություններ են, սակայն աշխարհաբարի շարադասության մեջ որպես լրացյալներ պետք է ետադաս օգտագործվեին: Ինչպես հայտնի է, միջին հայերենն իր ամբողջության մեջ մի անցումնային վիճակ է. մեր հեղինակները կապերն օգտագործել են մե՛կ գրաբարի շարադասության մե՛կ աշխարհաբարի շարադասության մեջ: Այսպես է առաջացել ներքոհիշյալ կապերի շարադասական երկվությունը. (յ)առջև, առաջի, (ի)զատ, (ի)խէշ, հետ, մէջ, մօտ, յետև, նման, ներքև, (ի)վերայ, փոխան, փոխանակ, շուրջ:

## Շ Ա Ղ Կ Ա Պ

Շաղկապ կոչվում են նյութական բովանդակություն շունեցող ու շթեքվող այն սպասարկու բառերը, որոնք «վերաբերական տարբեր իմաստներով իրար են կապակցում համադաս բառեր, բարդ նախադասություն կազմող մասեր, ինչպես և ամբողջական նախադասություններ ու խոսքի հատվածներ» (Ս. Աբրահամյան, ՉԽՄ, էջ 382): Այսպես, օրինակ՝

«...Հուրն և ճառագայթն և նիւթն միացել ու երկու չէ նայ» (ՀԵՔ, էջ 152):  
«Անդ, ի մէջ դրախտին, երեք անձինք կային».

Ադամ եւ Եւայ եւ պատուիրանքն տեսան» (ն. տ. էջ 237):

Վերևի օրինակներում եւ համադասական շաղկապով միացած են հուր,

նառագայթ, նիւթ, ապա և՛ Ադամ, Եւայ, պատուիրան համադաս բառերը: նկատենք, որ նման իմաստ ու կիրառութիւն միայն համադասական շաղկապներն ունեն:

Ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական շաղկապները կարող են կապակցել բարդ նախադասութիւն կազմող մասեր, այն տարբերությամբ, որ առաջինները համադասական կապակցութիւն են արտահայտում, իսկ երկրորդները՝ ստորադասական կապակցութիւն: Այսպես, օրինակ.

«Նաղա՛շ, թէ դու խելք ունես  
Միտ արա դու գարնան ծաղկին,  
Ու գունովք մի պայծառ լինին,  
Չորանան ու դառնան դեղին» (ՄՆԲ, էջ 106):  
Քանի որչ ես, զքեզ պահէ,  
Գլուխ Է անձինդ պէտ արայ.  
Եթէ հաքիմ կարի լինիս՝  
Կեանքդ քան զհով անցնի Է երերայ» (ՀԹՏ, էջ 191):

Վերևի նախադասութիւններում՝ առաջին քառատողում ու համադասական շաղկապը միացրել է համադասութիւն կազմող մասեր, մինչդեռ երկրորդ քառատողի մեջ քանի և եթէ ստորադասական շաղկապներն ստորադասութիւն կազմող մասերն են միացնում գերադաս նախադասութիւններին:

Ինչ վերաբերում է ամբողջական նախադասութիւններ ու խոսքի հատվածներ շաղկապելու խնդրին, ապա պետք է նկատել, որ միայն համադասական շաղկապները կարող են ստանձնել այդ պարտականութիւնը, քանի որ նման դեպքերում գերադաս նախադասությանը շաղկապվելու անհրաժեշտութիւն չի դաշցվում: Այսպես, օրինակ՝ «Իսկ այն ազգ ջերմն, որ պատճառն յերեք հոգիքն լինի, միօրեայ ասեն»: «Այլ այն ցեղ ջերմն որ ի յերեք հոգիքն լինին, չունի օրինակ որ ի յինքն ի նման լինի ամէն դիօք» (ՄՀԶՄ, էջ 4): «Քայց յորժամ խաղաղի ջերմն, ապա ի բսողնիս մտո՛ւ և տես որ չօծանես զմարմինն ձիթով, որ չիսցկի գաղտ շնչահանքն...» (ն. տ. էջ 10): «Արդ սկիզբն աննեմ օգնականութեամբն Աստուծոյ...» (ն. տ. էջ 6) և այլն:

Վերևի 4 օրինակներից առաջին երեքում իսկ, այլ, բայց համադասական շաղկապներն ամբողջական նախադասութիւններ են իրար կապում, ըստ պատեհի և ընկալման՝ նաև խոսքի ամբողջական հատվածներ, իսկ արդ բառը, որ հենց այս կիրառության պատճառով մակբայից անցել է շաղկապական կիրառության, խոսքի ամբողջական հատված է կապակցում:

Ստորադասական շաղկապի՝ նախադասության սկզբում, նույնիսկ խոսքի սկզբում հանդես գալը նրան ամբողջական նախադասութիւններ ու հատվածներ կապակցելու իրավունք չի ընձեռում, քանի որ տրամաբանորեն նա միշտ պետք է ունենա իր գերադաս նախադասութիւնը: Օրինակ՝ «Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի...» նախադասությամբ է սկսում Եղիշե պատմիչն իր դյուցազնավեպը, սակայն ուշադիր լինելու դեպքում կտեսնենք, որ քանզի ստորադասական շաղկապը իր գլխավորած ի բառնալ ազգին Արշակունեաց դերբայակազմ ստորադաս նախադասութիւնը կապում է տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի գերադաս նախադասության հետ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, համադասական շաղկապները կիրառու-

թյան առավել շատ դեպքեր ունեն, քան ստորադասական շաղկապները: Վերջիններս խոսքի մի ամբողջ բնագավառի՝ պարզ նախադասության կառուցվածքին շեն կարող մասնակցել: Չմոռանանք նշել, որ խոսքն ընդհանրապես համադասական շաղկապների մասին է, իսկ առանձին-առանձին վերցրած կտեսնենք, որ շատ համադասական շաղկապներ միայն այս կամ այն կապակցումներում են հանդես գալիս: Այսպես, օրինակ՝ բայց, իսկ, սակայն, այլ և նման համադասական շաղկապները շեն կարող իրար կապակցել համադաս բառեր, մինչդեռ թէ բառը համադասական իմաստով օգտագործվելիս (ոչ կրկնությամբ) միմիայն համադաս անդամներ է կապակցում. ինչպես՝

«Խելօքն որ խօսի ի դուրս թէ ի տան,  
Տգէտքն ծոռն նորա ամէն բան» (ՆՂԲ, էջ 84):

Մինչդեռ նույն թէ բառը հարցականով օգտագործվելիս (որ նույնպես համադասական շաղկապ է) կարող է իրար կապակցել ինչպես համադաս բառեր, այնպես էլ բարդ նախադասության համադաս մասեր, ինչպես՝ «Ծթէ ոք ընդ անգէտս հաղորդի անսուրբ, նա պատեճ է տեսնուլ զմարդն, թէ ի՞նչ մարդ է, եւ կամ յի՞նչ հասակի, խե՞ւ է, թէ՞ խելօք, որ հաքրեց ու արար» (ՍԳԴ, էջ 44): «Կին որ ամուլ լինի, և տղայ չբերէ, նա պատեճ է բժշկօք տեսնուլ եւ իմանալ թէ յոր դիմաց է, ի յայրկնէ՞, թէ՞ կնկնէ» (Ն. տ. էջ 49) և այլն:

Ստորադասական շաղկապների բառային իմաստը, ինչպես նաև համադասական շաղկապների տարբերակված կիրառությունները լավագույնս ապացուցում են, որ շաղկապի՝ որպես խոսքի մաս գնահատման ու բնորոշման ժամանակ պետք է նկատի ունենալ բառի իմաստային կողմը՝ անշուշտ, ձեւաբանական արժեքի ու շարահյուսական կիրառությամբ հանդերձ: Եթե շաղկապները բառային իմաստից զուրկ լինեին, ապա ինչպես ստորադասականներն իրենց մեջ, այնպես էլ համադասականներն իրենց մեջ տարբերակված կիրառություններ չպիտի ունենային: Համադասական շաղկապների տարբերակված կիրառությունների մասին վերևում խոսվեց. այդ նույնը վերաբերում է նաև ստորադասական շաղկապներին: Եթե ուր, թէ (եթէ) ստորադասական շաղկապները քերականական իմաստով ընդհանուր առմամբ նույնական կիրառություններ ունեն, ապա նույնը չի կարելի ասել թէպէտ, եթէ (ներկա իմաստով) յորժամ, երբ, քան, որովհետև և այլ ստորադասական շաղկապների մասին, որոնք կիրառությունից դուրս էլ ակնհայտ բառական իմաստ ունեն՝ թէպէտ—զիջման, եթէ—պայմանի, յորժամ, երբ—ժամանակի, քան—բաղդատության, նրովհետև—պատճառի և այլն:

Իրենց կիրառությամբ ու նախադասության մեջ արտահայտած իմաստով միջին հայերենում շաղկապները հարաբերակից են որոշ դերանունների (առավելապես հարաբերական), ինչպես նաև մակբայների ու կապերի: Արդ, ի՞նչ հողի վրա է այդ հարաբերակցությունը և ինչպե՞ս է բառը դերանունից, մակբայից կամ կապից անցնում շաղկապական կիրառության: Տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի անցումը շաղկապի որոշ առանձնահատկություններ է ներկայացնում, սակայն որպես ընդհանուր պատճառ պետք է նշել բառի շարահյուսական տվյալ կիրառությունը նախադասության մեջ: Երբ ուշադիր քննենք այլ խոսքի մասերից եկած շաղկապները, կտեսնենք, որ նրանք բացարձակ մեծամասնությամբ ստորադասական շաղկապներ են: Այսպես՝ միջին

հայերենում դերանուններից անցած շաղկապներից են՝ ուր, ուր, ֆանի<sup>21</sup>, ինչպես՝ «Նա ի հիմա օրէնքս կու հրամայէ, որ վասն այսօր եպիսկոպոսն շիշխէ պակսեցնել յաթոռոյն իրացն բնաւ... եւ եթէ իրք կենայ, որ ճանչնան, որ ըզորդ իւր լինի ու բնաւ չլինի աթոռին, նա կարէ վկայեցնել...» (ՍԳԴ, էջ 21): Եվ կամ՝

«Հարըստին գանձն ամեն զերթ ջուր հեղեղի:  
Ու հոսէ պահ մի գայ ու շուտ ցամաքի.  
Որ գիտուն է ու սուրբ՝ յԱստուած նրմանի,  
Ու միայն է անմահ ու անեղանելի» (ՀԵԲ, էջ 186—187):

Վերևի կիրառություններում որ բառը ստորադասական շաղկապի արժեք ունի, քանի որ նախադասությունների մեջ որևէ այլ պաշտոն չունի, մինչդեռ՝

«...Ով գիտուն է ու սուրբ՝ ճրագ է լուսով,  
Ուրք զրկած են անդից՝ տանջին խաւարով» (ՀԵԲ, էջ 187):  
«Եւ կէսք... էին ազգէն հըրէից,  
Ուրք յինք դարձան ու հաւատացին» (ԿԵԲ, էջ 147):

Այս նախադասությունների մեջ որք բառը հարաբերական դերանուն է ու ենթակա: Կամ՝

«Քանի միտք դու սուրբ ունիս ու ջանիւ ես սիրող ուսման,  
Գիտուն է հոգիդ պայծառ, որ լոյս տայ քեզ ի մթութեան» (ՀԵԲ, էջ 150):  
«Քանի մարն զիս բերեր, քահանի չեմ խոստովաներ» (ՆՔԴ, էջ 50):

Այս օրինակներում ֆանի բառը ստորադասական շաղկապ է, քանի որ իր դերանվանական որոշակի իմաստից զուրկ է, մինչդեռ՝

«Քանի՛ լամ ու զքեզ ուզեմ զարթըցընեմ ոգոց հանելով» (ՆՔԴ, էջ 50).  
«Քանի՛ ու ֆանի՛ ասեմ, դու ալանջ ունիս նա լսէ» (ն. տ. էջ 97):

Նախադասությունների մեջ ֆանի դերանուն է՝ պարագայական պաշտոնով: Նշանակում է՝ դերանուն-շաղկապ անցման ժամանակ որոշ իմաստով բառի նախկին իմաստի՝ մթազնում է տեղի ունենում, որի հետևանքով բառը որոշակի պաշտոն չի ստանձնում նախադասության մեջ և վերաբերական իմաստ է արտահայտում:

Միջին հայերենում կան նաև կապ (նախադրություն)—շաղկապ անցումներ: Հետաքրքրական է, որ կապերից միայն նախադաս կիրառություն ունեցողները կարող են շաղկապի իմաստով կիրառվել, և առավելապես ստորադասական շաղկապներ են առաջանում, քանի որ միջին հայերենի շարադասությամբ (և ընդհանրապես հայ լեզվամտածողությամբ) ստորադասական շաղկապն է գլխավորում երկրորդական նախադասությունը: Այսպես՝ «...Եւ ի գագթէն մինչեւ ի տակն ծաղիկ կունենայ...» (ԱԱԱԱ, էջ 73), «Մինչ համբարձում քառսուն օր է» (ՆՀԲ, էջ 102), «Նա ինչվի մահն ապաշխարէ» (ՍԳԴ, էջ 42) նախադասությունների մեջ մինչ, մինչև, ինչվի բառերը կապեր են, քանի որ տակ(ն), համբարձում և մահ կապվող բառերի հետ նախադասության անդամ են դառնում, մինչդեռ՝ «Ձայս ամէն անուշ ջրով եփէ՛ մինչև ջուրն զդեղերուն ուժն յինքն առնու» (ՄՀՁՄ, էջ 9), «...Ծպիսկոպոսն եւ դատաւորքն եկե-

<sup>21</sup> Ուր (<ոյր), ֆանի բառերը առանց հարցական նշանի պետք է ընդունել որպես հարաբերական դերանուններ:

դեցույն արգելեն զժողովուրթն եւ զժամն՝ մինչև ապաշխարէ...» (ՄԳԴ, էջ 36), «...Տաք հանդերձով զմարմինն աղէկ ծածկէ, մինչև մարմինն աղէկ քրտնի» (ՄՀԶՄ, էջ 11), ապա և՝

«Յանկարծակի յերրորդ յաւուր,  
Մինչ պահապանքըն պահէին  
Տէրըն յարեաւ ի մեռելոց» (ԿԵՏ, էջ 228),  
«Մինչ հիւրըն գայր՝ մեծարէին  
Եւ մինչ գընայր՝ կողոպտէին» (ՆՇԲԶ, էջ 563)

նախադասությունների մեջ մինչ, մինչև ստորադասական շաղկապի իմաստով են գործածված և ստորադաս նախադասությունը կապում են գերադասին:

Կապ-շաղկապ անցումը շոշափելիորեն պատկերացնելու համար գեղեցիկ օրինակ է ինչուի բառի հետևյալ կիրառությունը. «Եւ հրամայած է, որ ինչ իսկ մարդ մեռնի, թէ հարուստ եւ թէ աղքատ, նա ամենին պառկելիքն եւ հալան ինչուի գօտին ու սօլերն ի վանքն հրթայ» (ՄԳԴ, էջ 31): Ինչուի բառն այստեղ տարածական իմաստով («մինչև գոտին ու կոշիկները») չի օգտագործված, իսկ ենթադրվելիք կապվող բառերը՝ գօտին, սօլերն, ենթակա են: Ինչուի բառը չի օգտագործված նաև ստորադասական շաղկապի իմաստով, այլ համադասական նույնիսկ, մինչև իսկ շաղկապի իմաստով:

Միջին հայերենում կան նաև մակբայ-շաղկապ անցումներ: Վերցնենք թեկուզ յորժամ<sup>22</sup>, ապա և այլ մակբայներից առաջացած շաղկապները: Ինչքան էլ դժվար լինի յորժամ բառի շաղկապական և մակբայական ստույգ կիրառությունները ցուցադրել, կարծում ենք, որ, օրինակ՝

«Յորժամ տօն օրեր լինի, կամ զատկի կամ բարեկենդանի,  
Ամենքն են դրախտ ծաղկած, նա կտրած քան զճիւղ մի ծառի (ՀԵԲ,  
148),

«Յորժամ քեզ տեղ մի ցաւի, այլվի շուտ լաւնայ» (ն. տ. էջ 205)

և այլ բազմաթիվ կիրառություններում բառն իր պաշտոնը չունի նախադասության մեջ, այլ պարզապես ստորադաս նախադասությունը կապում է գերադասի հետ: Թվում է, որ այդ առավել շոշափելի երևում է հետևյալ կիրառությունն մեջ.

«Ուրախ լեր հանապազ, յորժամ վշտանաս,

Դոհացիր դու... երբ աղքատանաս.

...Մեղաց պատճառ ըզքեզ ասա՝ երբ առանձնանաս» (ՀԵԲ, էջ 200):

Ապա բառի մակբայական հայտնի կիրառություններից տարբերվում է, անշուշտ՝ «Սահման էր, որ յառաջ շիշխէր եպիսկոպոսն վանացն, ապա միայն թեմին իշխէր» (ՄԳԴ, էջ 34) նախադասության մեջ ունեցած կիրառությունը, ուր ապա բառը այլ (ներկա իմաստով) ներհական համադասական շաղկապի արժեք ունի:

Ինչ վերաբերում է այլ բառի շաղկապական կիրառությանը, ապա արժե հակադրել հետևյալ կիրառությունները՝ «Ամա ով ուզէ, որ ուսնի, նա թող անտի ուսնի, զի մենք յայս կանոնս չհամարձակեցաք այլ (=այլ, ուրիշ—անորոշ

<sup>22</sup> Նախապես՝ անորոշ դերանուն:

դերանուն) ինչ գրել» (ՍԳԴ, էջ 27): «Եւ այն որ յիստակ է, սեն փայտին մեջն է, եւ բոլորն պատած է այլ (=այլ, ուրիշ—անորոշ դերանուն) գունով»: «Եւ ցեղ մըն այլ (=էլ, ևս—շաղկապ) կայ որ գունն կարմիր է եւ սպիտակ»: «Եւ Բ ցեղ յապանաւան այլ (=էլ, ևս—շաղկապ) երբ ի ջուրն ձգես՝ յատակն իջնու նստի վասն ծանտրութեան» (ԱԱԱԱ, էջ 67): «Եւ այլ (=ավելի—մակբայ) կարմիր քան դան» (ն. տ. էջ 99): «Եւ այլ (=էլի, նորից—մակբայ) իմացիր, որ դեղերուն զկերպն այսպէս է պատմած» (ն. տ. էջ 15):

Այլ բառի հնչյունափոխված ալ ձևը նույնպես հանդես է գալիս մակբայական և շաղկապական կիրառութեամբ, ինչպես՝

«Աչկունք, ծրարեմ ըզքեզ կրակով որ երթաս էրիս.

Լեզր՛ւ, ա՛լ կտրեմ ըզքեզ սուր դանկով որ ա՛լ չի խօսիս.

Սրտիկս, ա՛լ դանակ ածեմ, արիւնին մէջն թապլտիս» (ՆԲԴ, էջ 49):

«Յուլիս ամիսն ալ կիսեցաք,

Հացէ ջրէ ալ կտրեցաք» (ՄՂԲ, էջ 115):

#### ՇԱՂԿԱՊԵՆԵՐԻ ՏՐՄԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Միջին հայերենում շաղկապներն ըստ կազմութեան կարելի է խմբավորել հետևյալ տեսակների մեջ.

ա) Պարզ շաղկապներ.

բ) Քերականական ձևերից առաջացած շաղկապներ.

գ) Բարդ շաղկապներ.

1. Պարզ շաղկապներ<sup>23</sup>.—Պարզ համադասական շաղկապներն են՝ այլ, ալ, էլ, բայց, եւ, իսկ, թե, (հին թե նոր), թե՛, եւ, կամ, սակայն, ու, մանավանդ: Պարզ ստորադասական շաղկապներն են՝ երբ, եփ, զի, թէպէտ, եթէ, թէ, որ, քան, քանի:

2. Քերականական ձևերից առաջացած շաղկապներ են՝ որովհետև և յորժամ:

Առաջինը որ և նետ բառերի գործիական ձևերի բաղադրությունը, իսկ երկրորդը որ+ժամ>որժամ բարդությունն է ի (>յ) նախդիրով:

3. Բարդ շաղկապներ.—Միջին հայերենում անհամեմատ շատ են բարդ շաղկապները, որոնք հանդես են գալիս բարդության հետևյալ տեսակներով.

ա) Կցական—նաև, այլև, միևնչեռ, երբոր, եփոր, թէև, քանզի.

բ) Հարադրական—1) համադասականներ՝ բայց միայն, կամ թէ, և կամ, ու կամ, մանաւանդ թէ, նոյնպէս և, սոյնպէս և, մանաւանդ որ, և ապա, նոյնպէս թէ, ապա որ, կամ թէ չէ. 2) ստորադասականներ՝ յորժամ որ, քանի ինչ, թէ չէ նէ, որտեղ որ, քան թէ, ոնց որ, քանի որ, ով որ, թէ որ, թէպէտ և, ապա թէ, ապա եթէ, որ թէ, ինչ որ, վասն զի, և թէպէտ, թող թէ, թէ չէ, զոր ինչ, զի որ, թէպէտ որ, մինչև որ, մինչ որ:

գ) Կրկնութեամբ կազմված—ո՛չ... ո՛չ, թէ՛... թէ՛, կա՛մ... կա՛մ, եթէ՛... և.թէ՛.

Սրանցից բացի կան նաև զուգադրական շաղկապներ, ինչպես՝ այն... որ, յայնժամ..., որժամ, ոչ թէ... այլ, ոչ եթէ... այլ, քանց... զինչ, չէ թէ... քանց որ, ոչ թէ... քան և այլն:

<sup>23</sup> Պարզ շաղկապ հասկացությունը հարաբերական է. վերին շաղկապների մեջ կան այնպիսիք, որոնք ակնհայտորեն բաղադրված են տարբեր բառերից, ինչպես՝ թէպէտ—թէ+պէտ, սակայն—սակ+այն, եթէ—ե+թէ, եւ—եւ+ս ևլն: Մենք դրանք պարզ ենք համարել, քանի որ միջին հայերենի լեզվամասնողությամբ բաղադրիչներն անկախաբար չեն գիտակցվում:

Նկատենք, որ շաղկապները, հատկապես պարզ շաղկապները և՛ կազմի, և՛ կիրառության տեսակետից գրաբարի համեմատությամբ մեծ փոփոխություններ չեն դրսևորում. միջին հայերենում ոչ այնքան նոր շաղկապներ պետք է փնտրել, որքան հետաքրքրվել, թե գրաբարյան ի՛նչ շաղկապներ մեր լեզվի այդ շրջանում գործածությունից դուրս են մղվել: Եղած փոփոխությունների մասին ստորև խոսվելու է: Այստեղ նշենք, որ միջին հայերենում մեր լեզվի մեջ մուտք են գործել նաև օտար շաղկապներ. դրանցից են՝

Ամա (=բայց)—«Ամա ով ուզէ որ ուսնի, նա թող անտի ուսնի...» (ՄԳԴ, էջ 27):

Հա՛մ... հա՛մ } (=և...և) —«Հա՛մ թանն անիծած, հա՛մ իւր բըղուղն» (ՆՀԲ,

Հէմ... հէմ } էջ 153) «Հէ՛մ կանանչ կու հագնիս, հէ՛մ գոյն ի լալի» (ն. տ. էջ 192): Զերա(յ) (=քանզի)—«Խեւ եմ եւ եղեալ խումար.

Զերա քո տեսդ է դամար» (ԿԾՏ, էջ 159):

«Ամէն աշխարհըս քեզ ֆըտէ,

Զերայ շունիս իսկի դալատ» (ՀԹՏ, էջ 128).

Ձէրէ (=քանզի)—«Մեռելաթաղի գլուխ շունի,

Ձէրէ հեռու է գերեզման» (ՄՂ, էջ 85) և այլն:

Այժմ քննենք միջին հայերենի շաղկապների կիրառությունները: Համադասական շաղկապների մեջ, գրաբարի համեմատությամբ, լայն կիրառություն է ձեռք բերել ու շաղկապը: Ասենք, որ գրաբար մատենագրության մեջ ու շաղկապ գրեթե չի օգտագործվում, իսկ կիրառության առանձին դեպքեր էլ «ընտիր» չեն համարվում: Արսեն Բագրատունին, օրինակ, «Հայերէն քերականութիւն» (Վենետիկ, 1852) աշխատության մեջ գրում է. «Կայ և ու, որ առաւել ռամկօրէն վարի, ի զիրս սակաւ ուրեք...» (էջ 230): Նախ՝ նշենք, որ միջին հայերենով գրող ոչ բոլոր հեղինակներն են օգտագործում ու շաղկապը: Ընդհանուր առմամբ առաջին շրջանի հեղինակներն ավելի քիչ են օգտագործում, քան երկրորդ շրջանի հեղինակները: Այսպես՝ Մխիթար Հերացին, Վարդան Այգեկցին, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիները, երկրորդ շրջանից՝ Ամիրդովլաթ Ամասիացին բացարձակապես ու շաղկապ չեն օգտագործում. Ներսես Շնորհալին, Գրիգորիս Աղթամարցին ու Մարտիրոս Ղրիմեցին սակավ կիրառություններ ունեն, մինչդեռ Ֆրիկը, Մկրտիչ Նաղաշը, Քուչակն ու Նաղաշ Հովնաթանը լայնորեն օգտագործում են: Այս բոլորի մեջ, անշուշտ, առավել զարմանալին Ա. Ամասիացին է, որ XV դարի հեղինակ լինելով և ժամանակի խոսակցական հայերենով գրած լինելով հանդերձ՝ այս հարցում ավելի պահպանողական է, քան գրաբարի դասական հեղինակները: Վերջնենք թեկուզ հետևյալ հատվածը. «Ինքն յայտնի է. եւ աղէկն այն է որ Հնդի լինի եւ կամ Հապաշի. եւ թէ ի շուրն ձգես նա, ի տակն իջնու եւ նստի. եւ տաք է եւ շոր է բ տարաճան. կապող է. եւ կայ ի յինքն սահուկութիւն. եւ յորժամ գինքն ջրով տրորեն եւ ի յաշքն քաշեն՝ գաշիցն սպիտակն տանի, եւ թէ զմթնալն այլ տանի, եւ զարտեւանունքն բուսցնէ. եւ իշխանական զարուածոցն զարութիւնն շունի. եւ զպալղամն լուծէ. եւ աւգտէ...» (ԱԱ, էջ 66): Թվում է, միապաղաղությունն իսկ պիտի թելադրեր տեղ-տեղ ու շաղկապ օգտագործել: Գալով ու, և շաղկապների կիրառության շրջանակներին, նշենք, որ եթե հեղինակը ու շաղկապ չգիտե, ուրեմն և՛ բառեր, և՛ նախադասություններ ու խոսքի հատվածներ իրար է կապում և շաղկապով:



ինչ վերաբերում է ու շաղկապի կիրառությանը, ապա նշենք, որ և շաղկապի համեմատությամբ կիրառական սահմանափակություն չունի: Ու շաղկապով միացվում են ինչպես համադաս անդամներ, այնպես էլ համադաս նախադասություններ ու խոսքի հատվածներ, ինչպես՝

«Տօթ ու ցրտոյն եւ ծարաւի.

Մերկ եւ քաղցած եւ անօթի

...Մարգարտաշար թագ ու գօտի» (ՖրԲ, էջ 28):

«Ունիմ շունչ ու հոգի ու շեմ կենդանի

... Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս կու քակի

Ու բաժանիլն ի քէն ինձ մահ կու թուի» (ՄՆԲ, էջ 108):

Արդի հայերենի համար դիտված է, որ «և շաղկապը... բարդ նախադասություններում հակված է ավելի բաղադրիչ նախադասություններ կապելու, իսկ ու շաղկապը՝ նախադասության անդամներ» (Ս. Աբրահամյան, ՉԽՄ, էջ 409): Միջին հայերենում նման բան որպես լեզվամտածողություն չի կարելի տարբերակել: Այդ նպատակով ահա բերում ենք և, ու շաղկապների խառն օգտագործմամբ մի քանի նախադասություններ. «Եւ ինչ շահ կենայ, ըղորդն այն է, որ զամենն յիրար քշտեն, ու կէս թագւորին է եւ կէս այլ իշանաց...»: «Արծաթն եւ արծաթով կտաւ եւ պրիսմէն, որ ուրդի՝ իշխանացն է ամենն. պղինձ եւ երկաթ, բրդեղէն եւ բամբակեղէն զօրացնէ այն բաժինք...»: «Ոսկեհանքն թագւորինն է, եւ արծաթահանքն ի կէս է ընդ պարոնն, եւ ընդ թագւորն. եւ երկաթ ու պղինձ ու կլայեկն՝ յորում, երկիր գտնվի՝ այնոր է» (ՍԳԴ, էջ 18): Այս օրինակներում տեսնում ենք, որ եւ շաղկապն առավելապես նախադասության անդամներ է կապում, իսկ ու շաղկապը՝ բաղադրիչ նախադասություններ:

Այլ շաղկապը գրաբարում լայն կիրառություն ունի, ինչպես՝ «Ոչ յնգիպտոսէ միայն, այլ յերուսաղէմէ մինչև ի Լիւրիկիա». «Մի՛ յաղթիր ի շարէն, այլ յաղթեա՛ բարեան շարին» (ՆՀԲ, հ. I, էջ 83): Ներհակական այդ նույն իմաստով օգտագործվում է նաև միջին հայերենում, ինչպես՝ «Բայց կարճեցի քան կըրցի, որ չի լինի ընտրողութիւն առաջնորդացն որպէս սահմանած է, այլ կու բանի ըրըջֆաթն և ամեն սղալանքն ի յայնոր կուգայ...» (ՍԳԴ, էջ 24). «Մի՛ մարմին հասկանայք զբանս, այլ հոգևոր (ԿԾՏ, էջ 117):

«Ով երեսօք զըրուց անէ ի մեր միջին ինքն է դաւատ,

Այլ արդար մեզ դատաստան արէք խելօք, պարզ և ազատ» (ն. տ. էջ 184):

«Ամէն մարդոյ մի՛ հաւատայք,

Այլ ընտրեցէք զշար եւ զբարին» (ՄՂԲ, էջ 108):

Միջին հայերենում այլ բառն ավելի շատ օգտագործվում է միավորիչ (էլ, և) իմաստով, ինչպես՝ «Եւ զեղերուն ցեղ մըն այլ հուքմ կայ» (ԱԱԱԱ, էջ 23): «...եւ մէկ ազգ մըն այլ կայ որ ի լերունքն կու բուննի» (ն. տ. էջ 31):

«Մինչև զերկիր ապականեաց,

Եղեն ամէնրն շնատակ.

Այս այլ շեղև հերիք խրատ» (ՖրԲ, էջ 133):

«Խոզըն ջօհար ե՛րբ ճանչէ, զօրն ի բուն զաղբըն կու փորէ.

Կոխէ նա զքո ջօհարն, զընչովն այլ ըզքեզ խոցէ» (ՀԵԲ, էջ 143):

«Նորայ փոշիման գնացին, եւ դուք այլ կերթայք, մի՛ խաբիք» (ՄՆ, էջ 127):

Միավորիչ շաղկապի այս նույն կիրառութեան մի արտահայտութիւնն է այլ շաղկապի՝ խոսքի հատվածներ, նախադասութիւններ կապելու պաշտոնով հանդես գալը, ինչպես՝ «Այլ որ գիտենաս որ յառաջ քան զամենայն ստածումն զհիւանդին ուժն և զտարիքն եւ զկիրպն եւ զերկիրն և ժամ... դու երակ առ... Այլ ի յաւելնալն եւ ի կատարելն հիւանդութեան, որ է երրորդ ժամանակն, պատրաստ՝ որ շառնուս երակ» (ՄՀԶՄ, էջ 66): «Այլ պարտ է գիտենալ զդիւին տէրն եւ զսլին...» (ն. տ. էջ 52):

Այլ համադասական շաղկապն այս կիրառութեամբ հանդիպում է նաև գրաբարում. ինչպես՝ «Այլ ի վախճանելն Վաղենտիանոսի՝ թագաւորէ անօրէնն Վաղէս» (ՆՀԲ, հ. I, էջ 83):

Այլ շաղկապի հնչյունափոխված նոր ձևեր են ալ և էլ շաղկապները, մեր նախնայաց լեզվին անծանոթ, որոնք միջին հայերենում այլևայլ կիրառութիւններ ունեն. ինչպես՝ «Եւ այն որ խառնուած է մէկ մէկի, ան ալ շորս է» (ԱԱԱԱ, էջ 7): «Եւ առ ալ շէ ստուգ» (ն. տ. էջ 85): «Ասէ նորրնձայն, թէ այն որ ինձ պատահեցաւ թէ քեզ ալ էր պատահեալ յառաջն, դու ալ պիտի փաղչէիր յեպիսկոպոսութենէ» (ՎԱԱ, էջ 138—139): Ապա և՝

«Կոճկէկզ էլ արձակ անես ու ճերմակ ծոցըդ ցըցընես» (ՆՔԳ, էջ 70):

«Երկուս ընդ իրար կուին, մէկ ի մէկ իսկի շի նմանին.

Մէկ էլ ի նոցա միջին էր մեռած «անկած ի տեղին» (ՀԵԲ, էջ 156):

«Քեամար էլ՝ ես կապել տունդ աւաղան» (ՆՀԲ, էջ 5):

«Ես հղայ սէֆիլ զարընջի,

էլ ի՞նչ խելք կու մընայ ինձի» (ն. տ. էջ 20) և այլն:

Միջին հայերենով գրող որոշ հեղինակների մոտ, ինչպես՝ Ն. Շնորհապետ, Մ. Հերացի, Գ. Աղթամարցի, Հ. Քլկուրանցի ալ կամ էլ շաղկապի կիրառութեան դեպքեր չկան: Մյուս կողմից՝ մեր հեղինակները, ինչպես վերևում բերված օրինակներից էլ կարելի է հզորակացնել, նախապատմութիւն են տալիս այս կամ այն ձևին:

Ինչպես հայտնի է, աշխարհաբարի շրջանում ալ և էլ շաղկապները մեր լեզվի երկու տարբեր հատվածների սեփականութիւն դարձան, էլ՝ արևելահայ գրականի, ալ՝ արևմտահայ գրականի: Միջին հայերենի շրջանում նման տարբերակում չի կարելի տեսնել. Սմբատ Գունդստապալը, օրինակ, որ Ռուբինյաց հարստութեան ներկայացուցիչ ու արքայազն էր նույնիսկ, օգտագործում է էլ: Օրինակներ. «Բայց աղունին վատութեան պատճառն էլ պիտի տեսնուլ...» (Դատաստանագիրք, էջ 81), «Ապա այրկանն հայրենաստներոյ վերայ էլ պիտի հայել...» (ն. տ. էջ 50) և այլն:

Թէ շաղկապի համադասական իմաստով կիրառութիւնը գրաբարի համեմատութեամբ նոր բան չունի: միավորում է համադաս անդամներ, ինչպես՝

«Յով որ դու նայիս եւ առնես նատար

լինի քան ըզմոմ՝ պողպատ է քն քար» (ԳԱԲ, էջ 209):

Թէ շաղկապը հարցականով օգտագործվելիս ավելի շուտ համադաս նախադասութիւններ է իրար կապակցում, ինչպես՝ «Ապա թէ մնայ ջերմն, տես

«<sup>հ</sup>ր ազգէ է. ի նոպայո՞ւմ եւ ի բորբոսային ջերմերուն են, թէ՛ ի յաննոպայ եւ յանբորբոսային ջերմերոյն» (ՄՀՁՄ, էջ 31): «Զի գիտեմ, թէ ի՞նձ մէն կուգայ, թէ՛ կուգայ հաւասար ամէնուն» (ՆՔԳ, էջ 49):

Սակայն համադասական շաղկապը, ինչպես գրաբարում, ներհակական իմաստ ունի, ինչպես՝ «Թէպէտ եւ ասացաք զբնութեան գործերն՝ որ խափանին ի ջերմերոյն եւ ի յայլ ամենայն ցեղ հիւանդութենէ, սակայն ոչ կատարեալ խափանումն» (ՄՀՁՄ, էջ 3): Եվ կամ՝

«Գինին առնէ զքեզ ուրախ.

...Եւ դէմք ի նա փայլեալ լինայ,

Սակայն չթէ խմես գինին,

Կամ սակաւուկ, կամ հետ ջրին» (ՄՂԲ, էջ 136):

Թոուցիկ համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ սակայն ներհակական շաղկապն ավելի սահմանափակ կիրառություն ունի, քան նրան համանիշ բայց բառը:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ կիրառություններ ունեն ստորադասական պարզ շաղկապները: Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում բազմիմաստ կիրառություններ ունի զի ստորադասական շաղկապը: Այսպես՝ զի շաղկապը միջին հայերենում առավելապես հանդես է գալիս որովհետեւ բառի իմաստով պատճառի պարագա ստորադաս նախադասությունը կապելով գերադաս նախադասությանը, ինչպես՝ «եւ հանապաղ ի վարդի ջուրն եւ ի քաֆուրն հոտտալ տուր, եւ ի յար ընդ քուն լինելն զբաղի, զի օգտակար է» (ՄՀՁՄ, էջ 17): Եվ կամ՝

«Պլպո՛ւլ, մի՛ դու զարմանար

զպայծառ վարդիս գեղ պատկերին,

Զի ով որ սէր շունենայ՝

առ ինք շրկայ գեղեցկութիւն» (ԿԵՏ, էջ 142):

Այս պատճառով սակավ կիրառություն ունի որովհետեւ շաղկապը՝ շատ ավելի սակավ, քան գրաբարում էր: Այս կիրառությանը մոտ է զի շաղկապի քանի որ բաղադրյալ ստորադասական շաղկապի իմաստով գործածվելը, երբ պատճառից ավելի հիմունքի գաղափար է արտահայտում, ինչպես՝ «Եւ երեսացն գոյնն կարմիր լինի, զի արիւնն ժխորած լինի եւ շարժած» (ՄՀՁՄ, էջ 22): Եվ կամ՝

«Միայնակ հայրն է հայր, զի հայր նա շունի.

Բանն որդի եւ ծընունդ, զի ոչ ոք որդի» (ՀԵԲ, էջ 189):

«Բայց գունին այլ խիստ հաւատալ չկայ. զի վատուժ է» (ԱԱԱԱ, էջ 8) ևլն: Զի ստորադասական շաղկապը հաճախ հանդես է գալիս որպէսզի բառի իմաստով նպատակի պարագա երկրորդական նախադասությունը կապելով գերադասին, ինչպես՝ «...Եւ ցերեկով ի քուն շի լինի, զի գիշերութեան քունն հանգիստ բերէ» (ՄՀՁՄ, էջ 21): Եւ կամ՝

«Մնանի տղայաբար մանուկ կուսածին,

Զի եւ մեզ շնորհեսցէ՛ ծնունդ հոգէծին,

...Ի յերկինս համբարձաւ յոյսն արարածոց,

Զի եւ մեք բարձրացուք յերկինս ի խորոց» (ՀԵԲ, էջ 195):

Ձի ստորագրասական շաղկապն ունի նաև առավել ընդհանուր կիրառություն. այս դեպքում հանդես է գալիս առ ստորագրասական շաղկապի իմաստով և ըստ հարկի կարող է այս կամ այն ստորագրասական շաղկապի իմաստով հանդես գալ, ինչպես՝ «Եւ արդ բաւական է վասն հալեմաշ ջերմանն՝ որ ի հովութենէ լինի, վասն այն զի շունի առողջութիւն (ՄՀԶՄ, էջ 41): «...կերան և ծանեան նոքա, զի մերկ էին» (ՀԾԲ, էջ 237):

Միջին հայերենում այժմյան իմաստով թէ և եթէ շաղկապների իմաստային որոշակի սահմանազատում չենք նկատում. թէ օգտագործվում է եթե պայմանի ստորագրասական շաղկապի իմաստով և՛ ընդհակառակն, ինչպես՝ «...եւ թէ (=եթե) այրեն եւ զմոխիւրն աւծեն տայուսայլապին՝ աւգտէ... եւ թէ (=եթե) զջուրն յաջիկ ականջն կաթեցնես՝ ձախիկ դիհու ակոացաւութիւնն տանի. եւ թէ (=եթե) զիր պտուղն եւ զծաղիկն տաս կարճահարին՝ աւգտէ. եւ թէ (=եթե) զտակն աւծես հերքունին՝ աւգտէ...» (ԱԱԱԱ, էջ 227): Ապա թէ ջերմն եւ ծարան թէ (=եթե) խիստ լինի, իւր ստածումն այն է՝ որ հով ջուր խմէ...» (ՄՀԶՄ, էջ 27): «Ապա թէ այս ջերմն յամուան աւուրքն լինի, հով ջուր տուր խմել. թէ (=եթե) ձմեռն լինի՝ տաք ջուր թող խմէ» (ն. տ. էջ 34) նվ կամ՝

«Թէ (=եթե) ի յատակս դժոխոց ծանր մեղօք ընկղմեալ ես,

Թէ (=եթե) խոնարհիս քո ընկերին, յերկնից խորանն վեր ելանես»

(ՄՆԲ, էջ 121):

Եթէ ստորագրասական շաղկապն իր հերթին թե շաղկապի իմաստով օգտագործվելիս պայմանի իմաստ կարող է չենթադրել. ինչպես՝ «Ձայս գիտացիր, եթէ (=թե) քանի՛ ազգ են եւ ընդ քանի՛ ցեղ բաժանին, եւ զիւրեանց պատճառն եւ զտեղիքն, եթէ (=թե) ո՛ւր եւ ո՛րպէս լինի» (ՄՀԶՄ, էջ 35): «Ի նոյն պատճառն եւ ի նոյն նշանքդ Մասրճուայն ասէ, եթէ (=թե) իւր առաջի ստածումն այն է, որ տաք հանդերձով զմարմինն աղէկ ծածկէ...» (ն. տ. էջ 11). «Քանզի ասացին բնութեանց իմաստաւէրքն, եթէ (=թե) կենդանի մի կայ ի ծովն...» (ն. տ. էջ 7): «Ոմանք ասեն, եթէ (=թե) չորութիւն արգիլէ զբորբուսիլն» (ն. տ. էջ 92): Բերված նախադասություններում եթէ ստորագրասական շաղկապը գերադաս նախադասությունների ուղիղ խնդիր լրացում երկրորդական նախադասություններ է գլխավորում: Այս նույն իմաստով եթէ ստորագրասական շաղկապը գերադասին է կապում ուրիշի ուղղակի խոսքով արտահայտված երկրորդական նախադասությունը, ինչպես՝

«Այլ հարցանէր ողորմագին

Եթէ՝ Ո՛վ պարտիզպան,

միթէ տեսե՞ր դու զիմ որդին» (ԿԵՏ, էջ 229):

Թէ և եթէ շաղկապների նույնական կիրառության գեղեցիկ օրինակ է հետևյալ նախադասությունը, ուր թէ...եթէ կրկնությամբ են օգտագործված. «Պատեհ է բժշկին՝ որ զայս ջերմանս զստածումն ըստ յաղթող նիւթն այրնէ, թէ՛ մաղձն յաղթէ, եթէ՛ պալղամն» (ՄՀԶՄ, էջ 111): Ունենք նաև եթէ շաղկապի կրկնությամբ կազմված համադասական շաղկապի օրինակներ, ինչպես՝ «Եթէ՛ այր եւ եթէ՛ կին, զի որ եկեղեցական լինի և անորդի մեռնի... իր ընչիցն միայն. քահանայութեան կամ ծխերոյն չկարէ դնել...» (ՄԳԴ, էջ 33): «Եւ հանարին ըստ ուժոյն, եթէ՛ երակ առնուս և եթէ՛ ապիկիք» (ՄՀԶՄ, էջ 49) և այլն: Վերևի կիրառություններից բացի, միջին հայերենում գտնում ենք նաև

թէ, եթէ<sup>24</sup> շաղկապների տարբերակված կիրառություններ. առաջինն առավելապես ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների, իսկ երկրորդը՝ պայմանի երկրորդական նախադասությունների դեպքում, ինչպես՝ «Քաղաքատ ասէ, թէ (=թե) պարտ է բժշկին որ ամէն օր զմաճասին երակն տեսանէ» (ՄՀԶՄ, էջ 34): «Այժմ պատեհ է քննել եւ իմանալ՝ թէ (=թե) է՞ր անուանեցին զայս ջերմս իմիտրիտէօս...» (ն. տ. էջ 109): Թէ ստորադասական շաղկապն այս նույն իմաստով ուրիշի ուղղակի խոսքը կապում է հեղինակային խոսքի՝ գերադաս նախադասության հետ, ինչպես՝

«Բլբուլըն լայ ողորմաբար,  
Աղաղակէ քաղցրաբարբառ,  
Ասէ՝ թէ (=թե)՝ Ի՞նչ եղել պատճառ,  
Վա՛րդ, որ զերեսըդ շես բացել» (ԿԵՏ, էջ 119):  
«Բլբուլն ի վարդն ասաց, թէ (=թե)՝ Աննման ես» (ՄՆԲ, էջ 109):

Ահա և եթէ ստորադասական շաղկապի պայմանի իմաստով կիրառության դեպքեր՝ «...իսկ եթէ (=եթե) ձմեռն լինի, տաք տունն կենայ» (ՄՀԶՄ, էջ 19): «Եթէ (=եթե) կայ թագաւորին կտրճեր ու աղչկներ, իրաւունք է, որ կտրճերն հաւսար ժառանգեն զթագաւորութիւնն» (ՄԳԿ, էջ 16):

Եթէ (=եթե) ճար գիտես, եղբա՛յր, դու այսօր վաղըն մի՛ մընար» (ՄՆ, էջ 128):

«...եթէ (=եթե) հաքիմ կարի լինիս՝  
Կեանքդ քան զհով անցնի՛ւ երերայ» (ՀԹՏ, էջ 191) և այլն:

Քան ստորադասական շաղկապը, որ անհամապատասխանության և տարբերության համեմատություն է արտահայտում, ինչպես գրաբարում՝ իրենից հետո միշտ պահանջում է հայցական հոլովով դրված համեմատվող բառ՝ զ նախդիրով, ինչպես՝ «Ապա ի յառաջ քան զայն որ այս տաքութիւնս զօրանայ, ստածել պիտի եւ բժշկել» (ՄՀԶՄ, էջ 55): «Ապա այն, որ զիր այրն սպաննէ, այլ զինչ կրէ քան զչարաչար մահն արդար իրաւամբ» (ՄԳԿ, էջ 52): «Խրատ մի քեզ տալ կամիմ, զուզեմ օղ քան զոսկի խալաս» (ՀԵԲ, էջ 145): Ապա և՛ քան զճիւղ (ՀԵԲ, էջ 148), քան զնուռն (ն. տ. էջ 151), քան զիս (ն. տ. էջ 166). քան զձին (ԿԵՏ, էջ 212), քան զքեզ (ՖԲԲ, էջ 65), քան զմեծատուն (ն. տ. էջ 75) և այլն, և այլն: Հիշենք, որ գրաբարում ևս համեմատվող բառը միշտ դրվում էր հայցական հոլովով՝ զ նախդիրով, ինչպես՝ «Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցքդ իմ, մանաւանդ զի բազումք ի ձէնչ լաւագոյնք էք քան զիս արութեամբ և զահու ի վեր ըստ հայրենի պատուոյն» (Եղիշե, V, յեղ.):

Քան ստորադասական շաղկապի դեպքում համեմատվող բառի առանց զ նախդրի գործածության հազվագյուտ օրինակներ ունենք, ինչպես՝ «Ապա պատեհ համարեցան երկու զօրաւորացն անուամբ կոչել, քան երկու տկարացն» (ՄՀԶՄ, էջ 110):

Միջին հայերենով գրող հեղինակների մոտ գտնում ենք քան շաղկապի

<sup>24</sup> Թեև գրաբարի ուսուցման ժամանակ ասում են՝ գրաբարում թե-ն եթե է, իսկ եթե-ն՝ թե, այնուամենայնիվ, գրաբարում ևս այդ երկու շաղկապները որոշակի կիրառություններ ունեն, Այս տեսակետից ուզում ենք ուշադրության հանձնել Եղիշեի հետևյալ հատվածը. «Եթէ որ կարի առակելու իցէ աշխարհական մեծութեամբ... այնպիսին ողորմելի է քան զբազումս... թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իրում վայելուչ գուլ, իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ես առաւել առ հոգեւորն...» (II յեղ.):

բարբառային ֆանց<sup>25</sup> ձևը՝ նույնական կիրառությունը ու իմաստով: Հետաքրքրական է նկատել, որ որպես օրինաչափություն այս դեպքում համեմատվող բառը զ նախդիր չի ստանում: Դերանունների հետ կիրառության դեպքեր չլինելու պատճառով դժվար է պնդել, թե արդեն համեմատվող բառը, ինչպես աշխարհաբարում, ուղղականով է դրվում, սակայն երևույթն արդեն սկզբնավորվել էր: Ահա օրինակներ. «Ցուցանէ առակս, թէ առաջի Աստուծոյ լաւ է մի այր բարէգործ, քանց հազար անգեղջ մեղաւոր» (ՎԱԱ, էջ 117): «Գարունն՝ ամենայն կաթերուն գիճութիւնն եւ նաւրութիւնն յաւելի է, քանց այլ եղանակ» (ԱԱԱԱ, էջ 188): «Լաւ է ինձ մէջ գողանաց մարդակերաց բնակելով, քանց անմիտ՝ և անիմաստ» որ յիս խօսի յանգէտ բանով» (ԿԾՏ, էջ 174):

«Աղքատն իմաստուն լաւ է,  
Քանց հազար անգէտ գանձաւոր» (ՖրԲ, էջ 223):  
«Մօտ Աստուած աղքատ մի լաւ է,  
Քանց հազար հարուստ մեծատուն» (ն. տ. էջ 224) և այլն:

Ինչպես վերևում էլ ասացինք, միջին հայերենում ֆանի հարաբերական դերանունը գտնում ենք ստորադասական շաղկապի կիրառությամբ, որ ցույց է տալիս ստորադաս ու գերադաս նախադասությունների գործողությունների միաժամանակություն՝ պայմանի որոշ երանգով. ինչպես՝ «Քանի որձ դասուն ժառանգքն բաւեն, նա իգացն խափանած է յօրնաց» (ՄԳԴ, էջ 16): «Եւ այն որ հին է, չի հալիր. եւ ֆանի կերթայ, կու կարմրի» (ԱԱԱԱ, էջ 29):

«Քանի ողջ ես, զքեզ պահէ» (ՀԹՏ, էջ 191):  
«Դու ֆանի հեռացեալ ես այս քո գերուս՝  
Արտասուքն ի վայր թափես ի աշերուս» (ԿԾՏ, էջ 166) և այլն:

Զիջական իմաստ է արտահայտում թէպէտ շաղկապը, որն իր մեջ պայմանի որոշ երանգ ունենալով, միջին հայերենում դրվում է նաև թեև, թեկուզ շաղկապների փոխարեն, ինչպես՝

«Թէպէտ երկար բան կու խաւսի.  
Ֆրիկն ասել է ի մտաց...» (ՖրԲ, էջ 78):  
«Թեպէտ հարուստ է եւ փարթամ եւ տէր ընչից եւ մեծութեան,  
Բնութեամբն ազահ է եւ անյագ, ջանայ զրկել զամենեսեան» (ՄՆ,  
էջ 116—117):

«Թէպէտ լինես շատ սիրել՝  
Մի՛ հաւատար սրտովդ ի նա» (ՀԹՏ, էջ 191) և այլն:

Թէպէտ շաղկապը մի հետաքրքրական կիրառություն ունի հետևյալ նախադասությունների մեջ: Կրկնությամբ գործածվելով, առանց կրկնություն կազմելու, թէպէտ շաղկապը հանդես է գալիս բայց, սակայն ներհակական համադասական շաղկապների իմաստով: Ահա այդ օրինակը.

«Բազան ի յանտառ մորին թէպէտ բու, թէպէտ (=բայց) բազայ է.  
Ճոհարն ի ծովուն միջին թէպէտ քար, թէպէտ (=բայց) ճոհար է» (ՀԾԲ,  
էջ 157):

Երբ ստորադասական շաղկապը միջին հայերենում հանդիպում է նաև բարբառային, հնչյունափոխված եփ ձևով, ինչպես՝ «...եփ զուզվի եւ կարգվի

<sup>25</sup> Քանց առաջացել է ֆան+գ բաղադրությունից (Աճ. Արմ. Բ. հ. 2, էջ 1383):

ջանուն յեկեղեցին, այլ շկարէ պակսեցնել եպիսկոպոսի յիր ապրանացն՝ մազ մի առանց իրաւանց» (ՄԳԳ, էջ 22): «Ապա թէ անայր կին լինի բերել... նա ճարն է, որ պսակվի, ու եփ պսակվի, նա տուժանք չպարտի» (ն. տ. էջ 52): Այս շաղկապով ունենք նաև եփոք կցականը: Ահա օրինակը. «Եփոք դու էլ ինձ կու սիրես, մէկ դու խմես, մէկ ինձ տաս» (ՆԸԲ, էջ 240):

Բարդ շաղկապներ.— Միջին հայերենում պարզ շաղկապների համեմատութեամբ բավական շատ են բարդ շաղկապները: Բարդ շաղկապները հիմնականում հանդես են գալիս կցական և հարադրական բարդութուններով: Սրանցից զատ, ունենք նաև կրկնութեամբ կազմված և զուգադրական կիրառութեամբ շաղկապներ: Կցական բարդութուններով կազմված շաղկապներից մի քանիսը միջին հայերենում հանդես են գալիս նաև հարադրական կազմութեամբ: Հայտնի է, որ կցական բարդութունները ենթադրում են ավելի վաղ կազմված միացութուններ, որոնք մարդկանց լեզվամտածողութեան մեջ որպես բառական մեկ միավոր են ընկալվում: Մենք հենվում ենք, անշուշտ, գրավոր վկայութունների վրա. այն բոլոր տեղերում, երբ հեղինակները կամ գրիչները բարդութեան բաղադրիչները կից գրութեամբ են ավանդել, ուրեմն՝ կցական բարդութուն ունենք, ապա թե ոչ՝ հարադրական: Այսպես, հայտնի է, որ գրաբար լեզվում ճա, եւ հոմանիշ համադասական շաղկապներն օգտագործվում են ինչպես կցական, այնպես էլ հարադրական բարդութեամբ, ինչպես՝ «Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն հզօրագոյնս կուրին» (ՆՊԻԶ, I, յեղ.): Բայց և՛ «Նաև ի մեզ ծեր եւ հին աւուրց գոյ» (ՆԸԲ, հ. II, էջ 383): Այդպես և միջին հայերենում. մի կողմից ունենք հարադրական բարդութեամբ օրինակներ, ինչպես՝

«Նա եւ լաւ իմանայք, թէ ի՞նչ կու խօսի» (ՖրԲ, էջ 153):

«Ըզջուրն հրոյ նըման տեսայ,

Նա եւ պայծառ, քան զլուսընկայ» (ՆՇԲԶ, էջ 566):

Մյուս կողմից՝ կցական բարդութեամբ օրինակներ, ինչպես՝

«Ջքարոզն տնազ առնէիք

Նաեւ բարկ բարկ ծիծաղէիք» (ՖրԲ, էջ 111):

«Նաեւ ասէին ընդ մանկան,

Թէ բրեցէք, որդեակ սիրական» (ՆԸԲ, էջ 128) և այլն:

Որպես նորակազմութուն երբոր շաղկապն ավելի որպես հարադրական բարդութուն է հանդես գալիս, քան կցական: Կոստանդին Երզնկացու, Ֆրիկի և Նույնիակ Նաղաշ Հովնաթանի մոտ հանդիպող բոլոր օրինակները հարադրական բարդութեամբ են, ինչպես՝ «Երբ որ հնչեց» (ՀԵԲ, էջ 118), «Երբ որ տեսան» (ն. տ. էջ 121), «Երբ որ հոգոց եւ կու հանեմ» (ՖրԲ, էջ 32), «Երբ որ մահն ինձ հանդիպի» (ն. տ. էջ 33), «Երբ որ յիշեցի» (ն. տ. էջ 45) և այլն:

Այնուամենայնիվ, միջին հայերենում կան մի քանի կայուն կցական բարդութեամբ շաղկապներ, որոնք կա՛մ գրաբարից են գալիս, կա՛մ տարրալուծվելիս այլ իմաստ արտահայտելուց զգուշանալով՝ մեր հեղինակները կցական բարդութեամբ են մեզ ավանդել: Այսպես՝ Բանգի ստորադասական շաղկապը, որ հայտնապես կազմված է Բան և զի բառերից, միշտ կցական բարդութեամբ ենք գտնում, ինչպես՝

«...զքո ձայնըդ լուայ, սասանեցայ ես,

Քանզի մերկ եմ՝ և ամօթով, փախեալ թագեայ ես» (ՀԵԲ, էջ 210):

«...Տեսցուք թէ ուստի լեալ եկայք յաշխարհն այն,  
Քանզի ոչ էր այն մեզ երկիր սեփհական» (ՄՂԲ, էջ 144):  
«Յամենայն ժամ տացուք փառս տեառն Աստուծոյ յապենիազին,  
Քանզի ետ կարօղութիւն մեզ հարազատ եղբայր Այվազին» (ՆՂԲ, էջ  
157) Լյն:

Թէև ստորադասական շաղկապը, որ կազմված է թե+ել բառերից, թե-  
պետև սակավ կիրառութիւն ունի, բայց միշտ կցական բարդութեամբ է հան-  
դես գալիս, ինչպես՝

«...Թէև գերեալ գրեզ սատանայ եւ ժանտ արտից շար ծառայ ես» (ՄՆԲ,  
էջ 121):

«...Թէև լինի պարոնորդի եւ աննման» (ն. տ. էջ 169):

Այլև համադասական շաղկապը նույնպես հաճախ կցական բարդված ձևով  
է հանդիպում, ինչպես՝ «Աշխարհս տուն է լի գանձով, փարթամութեամբ եւ  
ճոխութեամբ, Այլև սեղան է բարելի...» (ՄՆԲ, էջ 113): «Այլև քան զամենայն  
խիստ դառն եւ լեղի» (ն. տ. էջ 178): Այս շաղկապը հանդես է գալիս նաև  
հարադրական բարդութեամբ, ինչպես՝ «Եւ ի պալղամէ որ լաղիճ լինայ՝ լուծէ-  
այլ եւ աւգտէ արծուոց» (ԱԱԱԱ, էջ 94):

Որովհետև ստորադասական շաղկապը, բնականաբար, միշտ կցական բար-  
դութեամբ է հանդես գալիս, քանի որ քերականական ձևերի միացութիւն լինե-  
լով՝ բաղադրիչներն անջատ-անջատ չեն կարող օգտագործվել: Վերևում արդեն  
նշել ենք, որ այս շաղկապը սակավ կիրառութիւն ունի, քանի որ բազմամասն  
է և երկարահունչ, ուստի հատկապես շափածո խոսքի մեջ գրեթե չի հանդի-  
պում: Արձակ գրող հեղինակները նույնպես խուսափում են որովհետև շաղկա-  
պից: Եղած սակավ օրինակներից է հետևյալը. «Եւ արդ որովհետև Աստուած  
ոչ յիշէր զշնութիւն քո, նոյնպէս եւ ես թողում յայսմ գիշերիս...» (ՎԱԱ, էջ 70):

Միջին հայերենում անհամեմատ շատ են հարադրական կազմութեամբ  
բարդ շաղկապները: Սրանք իրականում նախապես հանդես են գալիս որպես  
ազատ կապակցութիւններ, սակայն հետագայում իմաստային մերձեցման ու  
միասնութեան հիման վրա վեր են ածվում միմաստ բարդութեան: Հարադրա-  
կան բարդութեամբ կազմված շաղկապներն առավելապես երկու բաղադրիչ  
ունեն, թեև առանձին դեպքերում հանդիպում են երեք և ավելի բաղադրիչնե-  
րով: Երբ ի մոտո քննենք հարադրական բարդութեամբ հանդես եկող շաղ-  
կապները, կտեսնենք, որ մեծ մասամբ հենց շաղկապների միացութիւններ են,  
որոնք օգտագործվում են խոսքն ավելի պատկերավորելու, ուժգնացնելու, մաս-  
նավորելու և նման այլ նպատակներով: Պատկերավոր ասած՝ սրանք շաղկապ-  
ների կիրառութեան մեջ այն նույն դերն ու նշանակութիւնն ունեն, ինչ որ կա-  
պով կապակցումները հոլովական հարաբերութիւնների արտահայտման մեջ:

Հարադրական բարդութեամբ ունենք ինչպես համադասական, այնպես էլ  
ստորադասական շաղկապներ. շաղկապի տեսակի որոշումը կապված է ինչպես  
նրա բաղադրիչների, այնպես էլ բարդութեան արտահայտած ընդհանուր իմաս-  
տի հետ. այսպես՝ կամ թէ, նոյնպէս թէ, կամ թէ չէ համադասական շաղկապ-  
ներ են, քանի որ բարդութեան մեջ կամ, նոյնպէս շաղկապներն են իմաստով  
տիրապետում, ինչպես՝

«Թէ հոգի տալ կու պիտի,  
կամ թէ հոգի հանել մարդուն,



Նա յօժար եմ ես հոգով» (ԿՅՏ, էջ 126):

«...Կարծեմ թ'իսկի չէ մեռնած.

Կամ թէ լու ձիթով է օծած» (ՄՂԲ, էջ 90):

«Նոյնպէս թէ կնիկն տանեն. նա այրիկն համբերէ ու թէ չհամբերէ, նա նոյն պատիժդ է» (ՄԳԴ, էջ 33): «Թող համբուրեմ կամ թէ չէ իմ հոգիս առ, է՛ր ես ինձնէ հեռանալիս» (ՆՆԲ, էջ 15):

Մյուս կողմից՝ մանուաւնդ որ, ապա թէ, թէ չէ նէ ստորադասական շաղկապներ են, քանի որ բարդութեան ընդհանուր իմաստն իսկ ստորադասութիւնն է ենթադրում, ինչպես՝ «Ապա կարէ եպիսկոպոսն զայլ եպիսկոպոս հարկելորեկ եւ մեծարել սիրելաբար, մանուաւնդ որ եպիսկոպոսն զարհիւպիսկոպոսն մեծարէ» (ՄԳԴ, էջ 24): «Եւ զայս գիտեա՛, եղբա՛յր, զի միօրեայ ջերմն... փութով փոխի ի հալեւմաշ ջերմն, մանուաւնդ որ պատճառն յերեք հոգիքն լինի» (ՄՀԶՄ, էջ 34): «Ապա թէ շօզտէ, զնոյն ստածումնդ դարձեալ արա» (ն. տ. էջ 11): «Ապա թէ քրիստոնեայ լինի սպանածն, նա բնաւ չկարէ այլ պատարագ այնել» (ՄԳԴ, էջ 26):

«—Կտրի՛ճ, կու սիրե՛ս դու զիս, մի՛ աներ շատ խալխի իմաց.

Թէ չէ նէ կ'ելնես գլուխդ, արեւուդ ու ալ շատ իրաց» (ՆՔԴ, էջ 56):

Եթե բաղադրիչները միատեսակ շաղկապներ են, այսինքն՝ երկուսն էլ համադասական կամ երկուսն էլ ստորադասական, ապա հարադրութեան՝ շաղկապների որ տեսակին պատկանելը որոշելը դյուրին է, ինչպես՝ եւ կամ, ու կամ, նոյնպէս եւ, եւ ապա համադասական շաղկապներ են, քանի որ բաղադրիչները համադասական շաղկապներ են, ինչպես՝

«Չունիմ հանգիստ եւ կամ քուն» (ԿՅՏ, էջ 159):

«Ով գող է այս գանձիս,

ու կամ նենգով ինձ լինայ,

Աստուծոյ է հակառակ» (ն. տ. էջ 188):

«...նոյնպէս եւ ձեռն եւ բազուկն յորժամ այտչի... առնէ զջերմն» (ՄՀԶՄ, էջ 22):

Ասեն խանին, պարոն եղև քեզ սատան,

Կամի զքեզ բառնալ զորդիդ առնել խան.

Նոյնպէս եւ պարոնին պատրողական բան...» (ՄՂԲ, էջ 147):

«...եւ ապա թէ մեղկան լինի եպիսկոպոսն՝ նա կաթողիկոսի գիտելութեամբ ձգեն զինք կամ տուժին՝ ըստ մեղանացն» (ՄԳԴ, էջ 25):

Մյուս կողմից՝ թէ որ, երբ որ, յորժամ որ, զի որ, քան թէ, մինչ(և) որ, թէպէտ որ, զոր ինչ ստորադասական շաղկապներ են, քանի որ բաղադրիչները կա՛մ ստորադասական շաղկապներ են, կա՛մ ստորադասական շաղկապի վերածված բառեր: Օրինակներ.

Թէ որ—արտահայտում է պայմանի գաղափար, ինչպես՝

«Ինձ դուքսաղ արիւր, կու պահես շաֆով,

Թէ որ զիմիշ կանես, արա ինսաֆով» (ՆՆԲ, էջ 25):

«Թէ որ դու էլ ինձ կո՞ւ սիրես, ասէ՛, իմանամ» (ն. տ. էջ 46):

«Թէ որ դատէ մարդ զիր ընգերն՝

զանձն իւր դատապարտէ» (ԿՅՏ, էջ 213):

Յորժամ որ—արտահայտում է ժամանակի գաղափար, ինչպես՝

«Յորժամ որ... պարգեւեաց մեզ զայս բարիս,  
...Պարտիմք ընտրել զբարութիւնս, մերժել ի մէնջ զչարիս»  
(ՆԶԲ, էջ 130):

«Թէ չար թէ բարի գործես, յօրէ օր զամէն կու գրեն.

Յորժամ որ դիւան դրնեն, զայն դաւթարն յառաջ կու բերեն»  
(ՖրԲ, էջ 87):

Զի որ—առավելապես պայմանի գաղափար է արտահայտում, ինչպես՝  
«Եթէ այր եւ եթէ կին, զի\_որ եկեղեցական լինի...» (ՍԳԴ, էջ 33):

Քան թէ—արտահայտում է համեմատութեան գաղափար, ինչպես՝

«Այլ ո՞վ է մեծ բժիշկ եւ տէր զօրաւոր,

Քան թէ նա, որ զմեզ ստեղծեաց եւ է՛ թագաւոր» (ՀՆԲ, էջ 213):

«Լառ է ի տուն սգոյ ողբ եւ լաց երթալ,

Քան թէ արբեցողաց տունն վեր խաղալ» (ՆԶԲ, էջ 91):

Մինչ(և) որ—առավելապես արտահայտում է ժամանակի գաղափար, ինչ-  
պես՝

«Ընդ հոգոյդ միացիր, մինչ որ մեռանիս» (ՄՆԲ, էջ 144):

«Մնայ յայսպէս ի յեփոցի,

Մինչ որ գիշերն կէս լինի» (ՄՂԲ, էջ 103):

«Տէ՛ր, մի՛ հաներ զմեզ ի կենացս,

Մինչ որ մեր պարտքըս վըճարին» (ՖրԲ, էջ 214):

«Դարձեալ աղաչեմ զքեզ, որ շառնես զինչ ինձ կայ պահած.

Մինչեւ որ վճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուտած»

(ՖրԲ, էջ 229):

«Մինչեւ որ յարութիւն լինի, անդ պահեմ որ դուք գայք տանջիք»

(ն. տ. էջ 85):

(զ)ինչ որ (զոր ինչ)—արտահայտում է ստորագասութեան ընդհանուր գա-  
ղափար՝ դրվելով առավելապես ուղիղ խնդիր երկրորդական նախագասութեան  
սկզբում, ինչպես՝

«Սատանայ զայն ի՞նչ գիտէ,

Զինչ որ քո մըտօքըդ քրննես» (ՖրԲ, էջ 157):

«Զամէնն, զոր ինչ աստէն գործէք դուք՝ անդէն գտանելոց էք» (ՍԳԴ,  
էջ 19) և այլն:

Հարադրական բարդութեամբ կազմված ստորագասական շաղկապի մեկ  
բաղադրիչը կարող է համագասական շաղկապ լինել, ինչպես՝ «...Ըմպելոյ  
պարզ եւ անուշահոտ գինի տուր. յապա թէ շօգտէ, զնոյն ստածումնդ դարձեալ  
արա. օգտակար է» (ՄՀԶՄ, էջ 11): «...Ապա թէ ամառն լինի եւ օդն տաք,  
դմարմինն հով ջրով աղէկ լուա՛» (ն. տ. էջ 17): «Ապա եթէ պատճառն ցուրտ  
ջրոյն լուանալոյն լինի, իւր ստածումն այն է՝ որ ի տաք ջուրն աւազան մտա-  
նէ» (ն. տ. էջ 11) և այլն:

Հաճախ հարադրութեան բաղադրիչը այլ խոսքի մասի պատկանող բառ է  
լինում, որ լեզվի մեջ երբեք շաղկապական կիրառութիւն չունի, ինչպես՝

Թէ շէ (շաղկապ+բայ)—օրինակ՝

«Երնեկ այն մարդոյն ասեմ, որ յաշխարհս ի սուգ կու կենայ.

...Թէ չէ օր հարսնեցըն գայ, նա հանդերձ հարսին շունենայ» (ՀԵԲ, էջ 149)։

«Այլոց այնչափ բառցիր որչափ քեզ ես բեռնն դրերի,  
Թէ չէ ըզհողղ հողի ընդդէմ մարդկան ես ցուցուցել» (ԿԵՏ, էջ 176)։

Ոնց որ (մակբայ+շաղկապ)—օրինակ՝

«Ոնց որ (=հենց որ) տեսան զվարդըն պայծառ,  
Ծաղկունքն առին թէզ մի աւար» (ԿԵՏ, էջ 120)։

«Ոնց որ դու ելլես քալես, արեգակակերպ կու փայլես»

Ոնց որ դու ի տուն մտնուս, խաւարի ամէն աստնուրս»

Ոնց որ առաւօտ լինի, գամ ի դուռդ ասեմ, թէ՛ «Արի...» (ՆՔԴ, էջ 72)։

Ապա թէ (մակբայ+շաղկապ)—օրինակ՝ «Յորժամ բորբոսն ի ներքս ի յերական լինի ի յարեն՝ ի յար եւ ի սուր եւ այրեցող ջերմանն, հումայի հրիղայ կասեն. ապա թէ (=իսկ եթե) դուրս յերակացն բորբոսին, այն են նոպայով ջերմերն» (ՄՀՁՄ, էջ 4)։ «Եւ շուր զոր խմէ, հով թող խմէ, ապա թէ (=իսկ եթե) ի բաղանիսն եղկ ջրով աւազան մտէ եւ շուտ ելանէ, խիստ օգտակար է» (ՄՀՁՄ, էջ 9)։

«Հողի՛, թէ հողիս ուզես, չէ շասեմ՝ հանեմ տամ ի քեզ»

Ապա թէ (=իսկ եթե) աչերս ուզես, ինչո՞վ նայեմ դէպ ի քեզ» (ՆՔԴ, էջ 75)։

Հետևյալ նախադասութեան մեջ ապա թէ շաղկապական բաղադրութիւնն չէ, այլ թէ շաղկապը որպէս թարմատար ավելորդաբար դրված է ապա մակբայի վրա. «...Աստուած թագաւոր թագաւորաց է. Աստուծոյ հրամայն պարտ է կատարել յառաջն, ապա թէ զիմ քեռոյն» (ՎԱԱ, էջ 143)։

Հանց որ (ցուցական բառ+շաղկապ)—օրինակ՝

«...Հանց որ յորսագահն ելան,

Մէկ մի համբուրեաց զփեսայն» (ՄՆԲ, էջ 103)։

Թող թէ (եղանակավորող բառ+շաղկապ)—օրինակ՝ «Որդունքըն չեն ինձի լսել թող թէ (=թեկուզ) հազար երգումըն տամ» (ՅՐԲ, էջ 168)։

«Մինչ ածէ զմահն ու մօտ է եւ անողորմ զըրօղն գայ»

...Զի խրդճար յօտարականն թող թէ (=թեկուզ) հազար դառըն կուլայ» (ն. տ. էջ 45)։

«Զիմաստունն ո՛վ է յաղթել, թող թէ (=թեկուզ) հընար բերեն շարով, Կամ զուզեն բանք աղտեղի և բամբասեն սուտ խօսելով» (ԿԵՏ, էջ 170)։

Վասն զի (նախադրութիւն+շաղկապ)<sup>26</sup>—օրինակ՝ «...Բազում աշխատանօք աշխատեցայ ի դատաստանագիրս ծերացեալ մտօք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն...» (ՍԳԴ, էջ 15)։

«Թագաւորն ոմն կազմեաց զաւրաց իւրոց ճաշ. վասն զի դեսպանք եկեալ էին» (ՎԱԱ, էջ 128)։

Վերոհիշյալ հարադրական կազմութիւններին պետք է տարբերել խոսքային հանգամանքով պայմանավորված՝ շաղկապների խաբուսիկ կուտակումները, որոնք իրականում առանձին-առանձին տարբեր նախադասութիւններին

<sup>26</sup> Վասն զի բառը մենք հարադրութիւն ենք դիտում, քանի որ երկու բաղադրիչներն էլ միջին հայերենում անկախաբար կիրառվում են։ Գրաբարում ևս վասն զի կցական բարդութիւնն չէ (տե՛ս նշԹ, հ. II, էջ 787)։

կամ բառերի են վերաբերում, ինչպես՝ «Երանի ոչք քննեն զվկայութիւնս նորա, բոլորով սրտիւ իւրեանց խնդրեն զնա, զի ոչ եթէ որ գործեն զանօրինութիւն, ի ճանապարհս նորա գնասցեն» (ՄԳԴ, էջ 15): Այս նախադասութեան մեջ իրար կողքի դրված են զի, եթէ, որ շաղկապները, սակայն նրանք հարադրութիւն չեն կազմում, քանի որ վերաբերում են առանձին նախադասութիւնների. այսպես՝ զի անկախ ստորադասական շաղկապ է, որ գլխավորում է ի ճանապարհս նորա գնասցեն ստորադաս նախադասութիւնը, իսկ որ ստորադասական շաղկապը գլխավորում է գործեն զանօրինութիւն ստորադաս նախադասութիւնը, իսկ ոչ եթէ կապակցութիւնը կարելի է համարել մի շարտահայտված զուգահրոթիւն մաս կամ, գրաբար լեզվամտածողութեանը ավելի հարազատ մնալով՝ ոչ-ը համարել ի ճանապարհս նորա գնասցեն նախադասութեան ստորոգյալի ժխտական բառը՝ ոչ գնասցեն, իսկ եթէ բառը՝ թարմատար: Այսպես և՝

«Յայնժամ ողորմի Աստուած, որ աստէն լալով դու խնդրես,

Թէ՛ չէ երբ տանին ըզքեզ, դու ի հօն ճար ո՛ւր գտանես» (ՖրԲ, էջ 156):

Վերևի նախադասութեան մեջ թէ՛ չէ երբ բառերը հարադրութիւն չեն կազմում, քանի որ երբ ստորադասական շաղկապը տանին զքեզ երկրորդական նախադասութիւնն է գլխավորում: Եվ կամ՝ «Ապա թէ՛ բաղանիքն հով լինի, շուտ ի դուրս ելանէ. զի եթէ շատ նստի, հրկիւղ կայ որ ջերմն բորբոսային դառնայ» նախադասութեան մեջ զի եթէ հարադրութիւն չեն կազմում, քանի որ զի շաղկապը վերաբերում է երկիւղ կայ ստորադաս նախադասութեանը, իսկ եթէ շաղկապը՝ շատ նստի նախադասութեանը: Ամբողջ նախադասութիւնը կարելի է արտահայտել հետևյալ ձևով՝ «Ապա թէ՛ բաղանիքն հով լինի, շուտ ի դուրս ելանէ, զի երկիւղ կայ, որ ջերմն բորբոսային դառնայ, եթէ շատ նստի»: Օրինակները կարելի էր շատացնել, սակայն բերված օրինակներից էլ կարելի է տեսնել, որ շաղկապների ամեն կուտակում բաղադրութիւն չի կազմում: Բաղադրութիւն կազմելու համար շաղկապները պետք է ունենան ներքին սերտ միասնութիւն ու մեկ իմաստ:

Վերևի ձևերից քիչ բանով են տարբերվում զուգահրական կիրառությամբ հանդես եկող շաղկապները, որոնք թեև մեկը մյուսին են ենթադրում, սակայն գլխավորում են առանձին նախադասութիւններ, ինչպես՝ «...Ձի ոչ թէ եկեղեցին տօնիցս է, այլ տոնքն եկեղեցոյն» (ՄԳԴ, էջ 30): «...նա չէ թէ՛ վասն կաթողիկոսութեան պատճառանաց փոխեցաւ, քանց որ երկու հարկիքն մէկ եղաւ» (ն. տ. էջ 37):

Միջին հայերենում կան նաև կրկնութեամբ օգտագործվող շաղկապներ՝ բոլորն էլ, առանց բացառութեան, համադասական շաղկապի իմաստով, քանի որ կրկնավոր շաղկապները միավորիչ-հավելական են:

Կրկնավոր շաղկապները մեծ մասամբ կրկնված համադասական շաղկապներ են, ինչպես՝ կա՛մ... կա՛մ, օրինակ՝

«Կա՛մ կերէք, բարի հիւրեր.

Կա՛մ հրաման տրւէք որ թռչին» (ՀԹՏ, էջ 211):

«Կա՛մ ա՛ն զիս ծոցդ ի քուն, կա՛մ տէսթուր տուր երթամ ի տուն»  
(ՆԹԴ, էջ 53):

«Կա՛մ խօսիր ընդ իս, կա՛մ նստիր ի յաջ» (ԳԱԲ, էջ 196) և այլն:

Թէ՛... թէ՛ կրկնութեամբ կազմված շաղկապը նույնպես թէ՛ շաղկապի համադասական միավորիչ կիրառութեան կրկնութիւնից է կազմված, ինչպես՝

«Թէ հետ ֆալաքին սագիս.

Ընովկիս քէ՛ թաց տա, քէ՛ շոր» (ՖրՔ, էջ 220):

«...Թէ՛ աստուածապաշտութիւն է, քէ՛ իմաստասիրութիւն է, քէ՛ աստեղաբաշխութիւն է և քէ՛ երկրաշափութիւն է, եւ քէ՛ թուականութիւն է. քէ՛ բժշկութիւն է. եւ քէ՛ երաժշտականութեան արհեստն է, եւ քէ՛ քերականութեան արհեստն է» (ԱԱԱԱ, էջ 1):

Քանի որ միջին հայերենում եթէ շաղկապն օգտագործվում է թե համադասական շաղկապի իմաստով, ուստի՝ եթէ՛... եթէ՛ կամ քէ՛... եթէ՛ կրկնությամբ ես համադասական շաղկապներ ունենք, ինչպես՝ «եթէ՛ այր և եթէ՛ կին...» (ՄԳԴ, էջ 33), «...քէ՛ շար և եթէ՛ բարի» (ն. տ. էջ 19), «...քէ՛ մաղձն յաղթէ, եթէ՛ պալղամն» (ՄՀՋՄ, էջ 111) և այլն:

Վերևի ձևերից տարբերվում է ո՛չ... ո՛չ կրկնությամբ կազմված համադասական շաղկապը, քանի որ բաղադրությունը շաղկապից կազմված չէ, այլ՝ մակբայ-պատասխանական բառից՝ ո՛չ... ո՛չ: Այս շաղկապը, թվում է, և՛... և՛ կրկնավորին որպես հականիշ է կազմված, ինչպես՝

«Աչերդ ուռնայի նման. ո՛չ ի քուն ես եւ ո՛չ արթուն» (ՆՔԴ, էջ 48):

«Երթամ յանապատ կենում, ո՛չ տեսնում, ո՛չ ցանկանամ» (ն. տ. էջ 97):

«Ո՛չ դարդս գիտես, ո՛չ հալս կիմանաս,

Ո՛չ ինսաֆ կանես, ո՛չ երեսդ բանաս» (ՆՀԻ, էջ 18):

«Մինչ ածէ զմահն ու մօտ է եւ անողորմ գըրօղն գայ.

Ո՛չ ի ծեր կու խնայէ, ո՛չ ի մանուկ՝ և ո՛չ երեխայ» (ՖրՔ, էջ 45) և այլն:

#### ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Վերջին երկու տասնամյակներում հայ քերականական միտքն արժեքավորում է մեկ խոսքի մաս ևս՝ «եղանակավորող բառեր» անվանումով: Ինչպես գիտական ուսումնասիրությունների<sup>27</sup>, այնպես էլ գործնական քերականությունների մեջ եղանակավորող բառերն առանձնացվում և արժեքավորվում են որպես ուրույն խոսքի մաս: Բնականաբար, հարց է առաջ գալիս՝ իսկ նախկինում ի՞նչ խոսքի մասի մեջ էին մտնում եղանակավորող բառերը, քանի որ դրանք միայն վերջին տասնամյակների կամ մեր լեզվի պատմության որևէ որոշակի ժամանակաշրջանի արդյունք չեն: Խնդիրն այն է, որ, ինչպես ստորև միջին հայերենի ու գրաբարի մասին խոսելիս կտեսնենք, նման բառեր մեր լեզվում միշտ էլ եղել են, սակայն ուշադրության չեն արժանացել: Մենք այստեղ նպատակ չունենք հարցի պատմության մասին խոսել, այլ նկատենք, որ դեռևս Մ. Աբեղյանի կողմից առաջարկված այս խնդիրն աստիճանաբար ըմբռնում գտավ հայ քերականների կողմից, և այսօր այդ խոսքի մասը ուսումնական ձևերով ենք տեսնում, դպրոցական դասագրքերում մտցնելու աստիճան մշակված է ու հիմնավորված: Միջին հայերենի շեփեվող խոսքի մասերի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն ճշմարտության, որ այստեղ կան բառեր ու բառակապակցություններ, որոնք չեն նույնանում ո՛չ մակբայների,

<sup>27</sup> Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Չեփեվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965: Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն:

ո՛չ ձայնարկությունների և ո՛չ էլ մյուս շթեքվող խոսքի մասերի հետ, այլ առանձին երևույթ են մեր լեզվի մեջ, ուստի մենք այդ բառերը քննում ենք որպես առանձին խոսքի մաս՝ «եղանակավորող բառեր» պայմանական անվանումով<sup>26</sup>: «եղանակավորող բառեր» անվանումն, անշուշտ, ինչ-որ շափով խոսում է այդ բառերի բառական-իմաստային և քերականական կիրառության մասին: Եվ իրոք, «եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը, որով եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը, նրա որևէ անդամը» (Ս. Գ. Աբրահամյան, ՉԽՄ, էջ 507): Եկատենք, որ եղանակավորող բառերը շին նույնանում ձայնարկությունների հետ, քանի որ վերջիններս հիմնականում զգացական և կամային վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառերը՝ մտածական, դատողական վերաբերմունք: Մյուս կողմից՝ հայտնի է, որ ձայնարկություններն առավել շափով, հատուկ առոգանությամբ արտասանվող ձայնավոր հնչյուններ են, երբեմն նաև մեկ կամ երկու բաղաձայնի կցումով, մինչդեռ եղանակավորող բառերը գրեթե առանց բացառության բառական-քերականական այլևայլ կազմություններ են, թող թե ներկայումս այդ կազմություններն իրենց նյութական իմաստը կորցրել են: Այսպես, օրինակ՝ «Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցւոյն Տիսփոնի քաղաքի և կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ ետուն նմա զերդումն եւ ետուն ինձ ստել» (ՓՔՊԷ, IV; ՄԴ) և «Կարծեմ թէ նազարն նաշաղ է» (ՆՂԲ, էջ 12) նախադասություններում «կարծել» բայի երկու տարբեր ժամանակներ են օգտագործված, սակայն գրաբար նախադասության մեջ բայն իր նյութական արժեքով է, մինչդեռ երկրորդ օրինակում՝ իր նյութական արժեքից հեռացած: Ստորև տրված օրինակներում կարելի է մոտավոր պատկերացում կազմել, թե ինչպե՛ս է բառն իր նյութական արժեքից հեռանում.

«Եղև յանկարծակի

Ինձ բան խօսիլ՝ ով ուզենայ.

Այնպէս, որ ես ի յիմ

խօսից շարելըն զարմացայ» (ԿԵՏ, էջ 190):

«Կարօտ շատ ունիմ, զայլում,

Թող մէկ համբուրեմ, զայլում» (ՆՂԲ, էջ 6):

«Թող Յովնաթան մէկ տաղ ասէ քո թասին» (ն. տ. էջ 35):

Ինչպես տեսնում ենք, առաջին օրինակում շատ բան կախված է առոգանությունից և շեշտադրությունից, եթե այնպէս բառի տրոհումն ըստ արտասանության ճիշտ իսկ լիներ, բոլոր դեպքերում ավելի տրամաբանական կլիներ կարգալ այնպես որ առանց տրոհելու, քանի որ այդ առավել շափով է համապատասխանում նախադասության մտքին: Բայց չէ՞ որ այդ դեպքում մենք կունենանք այնպես որ եղանակավորող բառ: Այդ անցումն ավելի շոշափելի է հաջորդ օրինակներում: Հեղինակն, անշուշտ, թող բառն իր նյութական իմաստով չի օգտագործել, այլ որպես եղանակավորող բառ, սակայն բավական է թող բառը շեշտված արտասանել և այնուհետև փոքր-ինչ դադար տալ, ապա կունենանք նյութական իմաստով բառ, այսինքն՝ այն նույն իմաստով, ինչ որ ունենք հետևյալ օրինակում՝ «Թո՛ղ մեզ այսօր, եւ վաղիւն պատասխանի արասցուք քեզ» (ՓՔՊԷ, IV, ՄԴ): Փորձառական հնչյունաբանու-

<sup>26</sup> Մ. Աբրեղյանն իր «Հայոց լեզվի տեսության» մեջ «եղանակական բառեր կամ մասնիկներ» է անվանում (էջ 132):

թյան խնդիրն է պարզել, թե վերևի կիրառություններում բառն ինչպե՛ս է արտասանվում, սակայն անվիճելի է, որ մենք և՛ բառական, և՛ կիրառական ու քերականական իմաստով տարբեր երևույթների հետ գործ ունենք. կարճ ասած՝ առաջին կիրառություններում թող եղանակավորող բառ է, իսկ վերջին կիրառությունում՝ բայ՝ դրված հրամայական եղանակով: Այսպես նաև նախադասությունների համար, օրինակ՝

«Կոյր են հոգևով աչօք,  
կըտօք յիմար են, անյիմայ,  
թէ տէր ով է խելաց,  
Կամ այս շնորհիս, որ առ իս կայ» (ԿԵՏ, էջ 187):

Այս նախադասության մեջ տէր ով է կապակցությունը, մեր կարծիքով, դրված է՝ «ո՛ւմ է պետք» իմաստով և ոչ թէ՛ տեղը «владельца» ո՛վ է իմաստով, ուստի եղանակավորող բառ է:

Եղանակավորող բառերն առավելապես առնչակցվում են մակբայների հետ: Պատահական չէ, որ դրանք անցյալում մեծ մասամբ մտել են այդ խոսքի մասի մեջ: Սակայն ուշադիր քննությունը ցույց կտա, որ եղանակավորող բառերը բոլորովին չեն նույնանում մակբայների հետ: Այսպես՝ նրանց միջև նախ կա շարահյուսական որոշակի տարբերություն: Մակբայները գերազանցապես ստորոգյալի պարագա լրացումներ են լինում՝ կախված իրենց տեսակից, մինչդեռ եղանակավորող բառերը, զրկված լինելով նյութական իմաստից, նախադասության անդամ չեն դառնում, այլ պարզապես խոսողը դրանցով իր վերաբերմունքն է արտահայտում իրողության նկատմամբ: Ահա ինչու, մակբայները դրվում են հատկանիշ արտահայտող բառերի վրա, մինչդեռ եղանակավորող բառերը դրվում են ինչպես նախադասությունների ու բառակապակցությունների, այնպես էլ ամենայն բառի վրա: Այսպես, օրինակ՝

«Տանին գերեզման դրնեն եւ հողով իւր աչքըն լըցուի.  
Ապա փոշիմանի՝ ւ ասէ թէ՛ հերիք է՝ ւ այլ չի պիտի» (ՆԵԲ, էջ 156):  
«Այլ ստեղծ յոչնչէ՛ զօրութեամբ ինքեան.  
Նախ գերկինս երկնայնօք, յոյժ վայելչական.  
Ապա զորս ի նիւթոյ շորից տարրական» (ՄՂԲ, էջ 142):

Վերոհիշյալ նախադասությունների մեջ ապա և նախ բառերը ժամանակի մակբայներ են և ստորոգյալի լրացում: Նախ... ապա զուգադրությունը կասկած չի թողնում, որ մենք մակբայի հետ գործ ունենք, իսկ ինչ վերաբերում է ապա բառի՝ առաջին նախադասության մեջ անկախ կիրառությանը, ապա այն իմաստով համարժեք է հետո մակբային: Մինչդեռ՝ «...ապայ ով ելանէ ի հովանոյ նորա՝ ի պատուիրանցն եւ գործէ մեղս եւ անգեղջ մնայ, սատանայ՝ աւձն հարեալ սպանցէ զնայ եւ կորընչի» (ՎԱԱ, էջ 46) նախադասության մեջ ապա բառը մակբայ չէ, քանի որ շեշտված կերպով ժամանակ չի արտահայտում:

Ճիշտ է, որ եղանակավորող բառերն առավելապես աղերսակցվում են նախ մակբայների, ապա և ձայնարկությունների հետ: Սակայն ճիշտ չէր լինի կարծել, որ մյուս խոսքի մասերի հետ չեն առնչակցվում: Որպես երբևէ նյութական արժեք ունեցող բառաձևից առաջացած ձևեր նրանք կարող են աղերսակցվել այլևայլ խոսքի մասերի պատկանող բառերի հետ: Այսպես, գրա-

բարյան իսկ գոյականի (որ մեր հին լեզվում նշանակում էր «բուն գոյացութիւն») շաղկապական կիրառութիւնները հայտնի են, սակայն իսկ բառը ոչ պակաս շահով օգտագործվում է նաև որպես եղանակավորող բառ, ինչպես՝

«Ով ընդրէ զշարն ի բարոյն  
՝ և ի սուրբ սրբոէ սիրէ զԱստուած,  
Նա նմա իսկ վայել է  
Իմաստութեան դուռն ու խելաց» (ԿԵՏ, էջ 205):

Անկասկած, նույն իսկ բառից է ձևավորվել իսկի եղանակավորող բառը, որը, կարծես, միջին հայերենով խոսք ձևավորելու համար կենսականորեն անհրաժեշտ է. այն հանդիպում է ամեն բանաստեղծության, ամեն էջի մեջ, ինչպես՝ «...եւ իսկի ճոհար շկայ որ ինքն մուտ շայնէ» (ԱԱԱԱ, էջ 37). «Զինչ որ դժար բառ կայ հայ լեզուաւ՝ պատմէ. զի որ կարգացողն դիրութեամբ հասկնայ, եւ ուսնողն դիրութեամբ ուսանի, եւ իսկի ծածուկ իրք շմնայ» (ն. ա. էջ 25) և այլն:

Եղանակավորող բառերն աղերսակցվում են նաև դերանունների հետ. այսպես՝ հաւնց, հեւնց միջին հայերենում ցուցական դերանուններ են: Հապացույց կարելի է բերել այդ բառերի հետևյալ կիրառութիւնները. «հաւնց աման լինի որ բերանն նեղ լինի» (ԱԱԱԱ, էջ 22). «եւ ասաց այրն այն, թէ գիտէի, որ դուք հաւնց գեղեցիկ էիք» (ՎԱԱ, էջ 137). ապա և՝ «հեւնց բարկացող կայ՝ որպէ՛ս շիւ կող է» (ՆՂԲ, էջ 84) և այլն, մինչդեռ այդ բառերը միջին հայերենում հանդես են գալիս նաև որպես եղանակավորող բառեր, ինչպես՝ «եկի առի հաւնց էրակի» (ՂԵԲ, էջ 164): Հաւնց եղանակավորող բառն առավել շատ օգտագործված ենք գտնում որ բառի բաղադրութեամբ, ինչպես՝ թէ բ դրամ տրորես եւ խմցնես՝ զփայծաղն հալէ... եւ թէ ջրով տրորես... զերկնուն բերանն բանայ, հաւնց որ (= այնպես որ) արուն լուծէ» (ԱԱԱԱ, էջ 94): Եվ կամ՝

«Լաշկարն արար դիզան դիզան.  
Հաւնց որ (= այնպես որ) արիւն գետեր ելան» (ՂԹՏ, էջ 202):

Եղանակավորող բառերն աղերսակցվում են նաև թվականների հետ. այսպես՝

«Մեկ մարդ մի ճուհար ունէր, ՝ և ի խելաց շահել շրկարաց» (ՂԵԲ, էջ 160):  
«Թող էդ բաղէն մէկ վարդ կտրեմ, դու էլ պինդ պահէ» (ՆՂԲ, էջ 46):

Վերևի կիրառութիւններում մէկ, մի թվականներ են, մինչդեռ ստորև բերված օրինակներում նրանք այլևս իրենց նյութական իմաստը կորցրել են, չեն նշանակում հատկապես մի, մէկ (1). ինչպես՝

«Պարի եկ մին ինձ մօտ՝ դու մուրվաթ արայ, է՛ր ես ինձնէ հեռանալիս»  
(ՆՂԲ, էջ 196):

«Եկել ես օտար յերկիր, մէկ ցուցու, թէ ի՞նչ կու կենաս,  
Մեռնիս դու ՝ և ի հող մըտնիս, մեկ ասա, թէ ո՞ւր կու գնաս» (ՂԵԲ, էջ 144)  
և այլն:

Եղանակավորող բառերի՝ կապիտի հետ աղերսակցվելու դեպքեր նույնպես կան. լավ օրինակ է իբրև եղանակավորող բառը, որտեղ և շաղկապը փոխարինված է հոմանիշ ու շաղկապով.



«Ասեն խանին, պարոն հղև քեզ սատան  
Նոյնպէս և պարոնին պատրողական բան  
Իբրու (=իբրև թե) փեսայն լինել նորա դաւաճան» (ՄՂԲ, էջ 147):

Գրաբարում ևս իբրև բառը, ստորադասական շաղկապի իմաստով հայտնի է իրառությունից բացի, ունի նաև կապական և եղանակավորող բառի իմաստով կիրառություններ: Որպես օրինակ կարելի էր բերել Եղնիկից հետևյալ նախադասությունները. «Զիա՞րդ պաշտիցեմք զարեզակն, որ մերթ կոչի իբրև գծառայ ի սպասն՝ յոր կարգեցաւ հասանելոյ...»: Մյուս կողմից՝ «...եւ իբրև խօսուն բերանով անշշունջն բողոքէ» (Եղծ աղանդոց, I, Գ):

Առաջին նախադասության մեջ իբրև կապ է, իսկ երկրորդում՝ եղանակավորող բառ:

Բազմաթիվ խոնարհված ձևեր ևս, հեռանալով իրենց նյութական բովանդակությունից, վեր են ածվել եղանակավորող բառերի: Եղանակավորող բառ դարձած բայական ձևերն առավելապես հանդես են գալիս թէ՛ ստորադասական շաղկապով, ինչպես՝

«Զլիճի թէ ատես զհոգիդ  
Ի վերայ ոսկուդ տաքանաս» (ՖրԲ, էջ 195):  
«Մեծ իմն փորձութիւնք աշխարհիս դիպան  
Միջերկրեայց որ կոչեն աշխարհ յունական,  
Իրէթէ Ստամպօլու մինչ ի Պարսկաստան» (ՄՂԲ, էջ 151):

Նկատենք, որ գրաբար լեզվում նույնպես որպես եղանակավորող բառ նման կազմություններ կային: Բերենք թեկուզ հետևյալ օրինակները. «Եւ յորժամ կարացն տեսլեանն՝ որում ցանկայր, այնուհետև հնարս խնդրէր առն հնոջն կորստեանս ո՛ր գիտէ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել» (ՓՔՊՂ, IV, ԺԵ): «Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւժանի, գրեթէ և մեռանի» (ԵԿՅԱ, I, Գ): «Երկնշէլով երկեաւ թագատրն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց» (ՓՔՊՂ, IV, ԺԶ) և այլն:

Միջին հայերենում թեև քիչ չափով, բայց կան նաև գոյականներից ու ածականներից առաջացած եղանակավորող բառեր, ինչպես՝ «Եւ զինքն ի չուրն դնես զչուրն յինքն քաշէ. եւ զկասպանին իրմով կու ածեն եւ կու կոկեն. եւ շատն (=առավելապես) ի Սարակինոսացն եւ այլազգացն զուրխ ածիլողնին ի բան կու անցանեն ի մեր յերկիրն» (ԱԱԱԱ, էջ 81):

«Անհաց խմեցինք կոտրած գզալով,  
Ամօթաւ կերանք՝ լալով, սգալով:  
Շիտակ (=ուղղակի) մեռնելէ պրծանք ինչ հալով» (ՆՂԲ, էջ 152):

Անկասկած, արաբերեն axir «վերջ, վերջին» գոյական-ածական բառից է առաջացել ախիր (որից և՛ ախր) հղանակավորող բառը, որ գտնում ենք Նաղաշ Հովնաթան բանաստեղծի մոտ.

«Ախիր հող կու դառնաս, այդպէս շես մնալ» (Բանաստեղծթ. էջ 218):

Առաջանալով նյութական բովանդակությունից զրկված այլևայլ բառերից ու խոսքային կապակցություններից, ի տարբերություն մակբայների, որոնք կարող են դրվել միայն հատկանիշ արտահայտող բառերի վրա՝ իրենց հերթին հատկանիշ արտահայտելու համար, եղանակավորող բառերը կարող են դրվել ինչպես նախադասությունների, այնպես էլ նախադասության մի մասի, որևէ

բառակապակցության կամ առանձին մեկ բառի վրա (գոյական, բայ, դերանուն և այլն); Բառահարաբերության մեջ չեն մտնում վերջիններիս հետ, այլ պարզապես արտահայտում են խոսողի վերաբերմունքը, մտածումը: Այսպես՝

1) «...եւ ահա իրօք (<իրաւի) յաղուէսն խեռ է և իմաստուն կենդանի» (ՎԱԱ, էջ 38):

2) «Գիտե՞ս մարմին եմք մսեղի.

Գէմ արձան շեմք ինչ պղընձի» (ՖրԲ, էջ 234):

3) «Ամ, երբ հանց ընկեր քո բախտն.

Ու թալեհն, ամ, ի՛նչ կայ հարկիք» (ՖրԲ, էջ 113):

4) «Խօ կայնաւորին քաղցրաձայն բառըն,

Խօ գոզոան էշ, խօ թազա գառըն,

Խօ քաղցր մեղր, խօ լեղի դառն...» (ՆՂԲ, էջ 79):

5) «Կարծեմ թ'իսկի չէ մեռոնած,

Կամ թէ լոկ ձիթով է օծած» (ՄՂԲ, էջ 90) և այլն:

Վերևի օրինակներից առաջին երեքում իրաւի, գէմ, ամ եղանակավորող բառերը դրված են նախադասության վրա, չորրորդ օրինակում խօ եղանակավորող բառը դրված է առանձին բառակապակցությունների վրա, իսկ հինգերորդ օրինակում լոկ բառը դրված է ձիթով գոյականի վրա:

Գրաբար լեզվում ևս եղանակավորող բառերը դրվում էին ինչպես նախադասությունների, այնպես էլ նախադասության այս կամ այն մասի ու անդամի վրա: Հետաքրքրական է, օրինակ, իսկ եղանակավորող բառի կիրառությունը, որ դրվում է ինչպես գոյականի ու ածականի, այնպես էլ բայի, դերանվան և նույնիսկ մակբայի վրա, ինչպես՝ «եշանագիրքն իսկ» (ԿՎՄ), «և ոչ Զրուանն իսկ» (ԵԿԵԱ), «բազում իսկ գովութիւնք» (ԿՎՄ), «ուր բնակ իսկ իցէ հողն» (ՓՔՊՂ), «որպէս եւ տեսանեմք իսկ» (Եղիշէ), «որում պարգևէր իսկ վիճակ» (ԿՎՄ), «նա եւ նոքին իսկ» (ԵԿԵԱ), «ինքն իսկ կարող էր» (ն. տ.) «պատահեցաք եւ մեք իսկ» (Եղիշէ), «յառաջագոյնն իսկ ասացաւ» (ԵԿԵԱ) և այլն, և այլն:

Վերևում շարադրվածից կարելի է եզրակացնել, որ միջին հայերենում կա մի խոսքի մաս, որի մեջ մտնող բառերը չեն նույնանում ո՛չ մակբայների ու ձայնարկությունների և ո՛չ էլ մյուս խոսքի մասերի պատկանող բառերի հետ: Քանի որ ընդհանրապես չթեքվող խոսքի մասերն առավել չափով առաջացել են նյութական բովանդակություն ունեցող բառերից, ուստի եղանակավորող բառերը բացառություն չէին կարող կազմել: Անշուշտ, եղանակավորող բառերի մեջ կան առանձին բառեր, որոնց խոսքի մասային պատկանելությունը որոշելը դեռևս դժվար է, սակայն ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ եղանակավորող բառերը հնչյունական նույն կազմի մեջ բոլորովին տարբեր իմաստ ու քերականական երևույթ են արտահայտում, ուստի և ըստ իրենց արտահայտած իմաստի և քերականական կիրառության պետք է տարբերվեն նույն հնչյունական կազմով արտահայտված այլ իմաստ ու կիրառություն ունեցող բառերից: Մեկ անգամ որ նյութական կամ բառական իմաստ ունեցող բառերը, զրկվելով իրենց նախնական իմաստից, դառնում են եղանակավորող բառեր, այնուհետև հնչյունական նույն կազմի մեջ նրանք համատեղում են երկու իմաստ, ուստի և երկու տարբեր քերականական կիրառություններ և ըստ հարկի օգտագործվում են այս ու այն իմաստով ո՞՞ք քերականական կիրառու-

թյամբ:

Միջին հայերենը եղանակավորող բառերով հարուստ է, դրանք տասնյակներով են. առավելապես շատ են պարզ ու բարդ՝ տարբեր բաղադրիչներով և խոսքի կապակցություններով կազմված եղանակավորող բառերը:

Հստ կազմության եղանակավորող բառերը նույնպես լինում են պարզ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, բարդ և նկարագրական:

ա) Պարզ եղանակավորող բառեր—մէկ, մին, լոկ (լուկ, լօֆ), թող, իսկ (իսկի), հանց (հենց), ահա, հօսկայ, ամ, արդ, գէմ, հետ, ապա, մանաւանդ, ոչ, նախ, նա, թերևս, ամէն, հաւասար, խո (խօ, խոյ), հասարակ, հա, շիտակ, ստուգ, այո, շատն և այլն:

Պարզ եղանակավորող բառերի շարքը պետք է դրվեն նաև փոխառյալ եղանակավորող բառերը՝ անապ, ախիր, բալֆի (բալֆիմ, բալֆամ), հալա, պարի, դէյի, ֆեշկէ «երանի»:

բ) Ածանցավոր եղանակավորող բառեր—նմանապես, անպատճառ, անհնար, անկասկած, առհասարակ:

գ) Քերականական ձևերից առաջացած—իրաւ (իրաւի, յիրաւի), կարծեմ:

դ) Բարդ և նկարագրական եղանակավորող բառեր—մի՞թէ, միայն, շլինի, որպէս, նոյնպէս որ, մէկ մի, հանց որ (հանցգուն որ), որպէս և, նոյնպէս և, այսպէս և, մէկ էլ, այնպէս որ, ապա թէ ոչ, թէ ոչ, թէ չէ, թէ չէ նա, միայն թէ, ապա թէ (հապա թէ), ոնց որ, տեր ով է, որչափ ևս առանել, ի վերայ այս ամենայնի, աստուած կու սիրէ՛ք, արևուզ համար, հաշուէ թէ, հաշուենք թէ, գրէթէ, լինի թէ, շլինի թէ, թող թէ, կարծեմ թէ, ասես թէ և այլն, և այլն:

1) Պարզ եղանակավորող բառեր.—Վերևում բերված պարզ եղանակավորող բառերը միևնույն ծագումն ու կիրառությունը չունեն, դրանց մեջ կան այսպես կոչված՝ բուն եղանակավորող բառեր, որոնք միջին հայերենում միմիայն որպես եղանակավորող բառ են օգտագործվում: Դրանք են՝ լոկ (լուկ, լօֆ), ահա, հօսկայ, ամ, գէմ, ոչ, նա, թերևս, ամէն, խո (խօ, խոյ), հա, այո: Անկասկած սրանց հետ պետք է դնել նաև փոխառյալ եղանակավորող բառերը՝ անապ, ախիր, բալֆի, (բալֆիմ, բալֆամ), հալա, պարի, դէյի, ֆեշկէ: Եղանակավորող բառերի՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած աղերսակցությունների հարցը քննելիս մնացած պարզ եղանակավորող բառերի մասին այս կամ այն շարքով խոսել ենք, ուստի ստորև քննում ենք բուն եղանակավորող բառերն ու նրանց կիրառությունները:

Լոկ—Գրաբար լեզվում այս բառն առավելապես ածականական կիրառություն ուներ. ինչպես՝ «Երկիր պագանէին նմա ոչ իբրև մարդոյ լոկոյ, այլ իբրև Աստուծոյ ճշմարտի» (ՆՀԲ, հ. I, էջ 891): Մեր հին լեզվում ևս լոկ բառը կիրառված ենք գտնում եղանակավորող բառի իմաստով, ինչպես՝ «Լոկ մնաց զերեզմանն, յորում յառաջագոյն տեսին զնա եղեալ»: «Թեպէտև զայլ ժամանակսն լոկ ի շնորհացն իցեմք, այլ ոչ եթէ և այժմ» (ն. տ. էջ 892) և այլն:

Միջին հայերենում լոկ բառը միայն եղանակավորող բառի իմաստով է օգտագործվում, ինչպես՝ «Ութերորդ դասք են, որ ասեն իրենց զեկանիոն. և են դոքա աղեղնաւորք և ուննան դուպլ վարոցս ի ձևովին և լոկ տապար» (ՍԳԴ, էջ 42): Բայց թէ արժող շկենայ դրած, լոկ փրթուցած լինի ու սնէ վնաս, նա անասնոյն տէրն վճարէ զզենն և զդարպսուն հնկակն» (ն. տ. էջ 79): «Եւ այն որ աղով և ջրով է դրած՝ լաւ է քան զայն որ լոկ ջրով է դրած» (ԱԱԱԱ, էջ 142): Առանձին հեղինակների մոտ լոկ եղանակավորող բառը հանդես է գալիս նաև հնչյունափոխված լուկ և լօֆ ձևերով, ինչպես՝

«...նոյնպէս որ բանի տընտես լուկ խայթոց ունի զինչ մեղու» (ՀԾԲ, էջ 149):

«...լուկ շրջիս զօրըն դու մոլոր» (ՖրԲ, էջ 220):

«Երբ մահն ի վերայ հասնէր, լուկ անհոգ զաշարն խրփէին» (ն. տ. էջ 129):

«Աւա՛ղ, թէ կտրեն զշուրն, լօ՛ք մընայ ձուկն ծառուած» Ապա և՛

«Առանց ջուր՝ ձուկն չի ապրիլ, լօ՛ք ջրին կտրողն անիծած» (ՆՔԳ, էջ 46):

«Հոգիս պարտրկան էի գրօղին, լօ՛ք թող գայ ու առնու տանի» (ն. տ. էջ 48):

«Սիրու հաւն ի ձայն էած, լօ՛ք լսեց սրտիկս ու դողաց» (ն. տ. էջ 45)

և այլն:

Հովհաննէս Երզնկացու մոտ գտնում ենք հօսկայ եղանակավորող բառը: Ահա այդ օրինակը. «Հօսկայ մերկ եմ ես հիմայ» (բանաստեղծութ. էջ 229): Հենց այն հանգամանքը, որ տարբեր գրչութիւններում հօսկայ բառը փոխարինված է «ահաւասիկ», «ահա» բառերով, վկայում է այն մասին, որ դա եղանակավորող բառ է: Հօսկայ բառը վկայված չէ ո՛չ Հայկազյանում և ո՛չ էլ Ստ. Մալխասյանցի մոտ ու Հ. Աճառյանի Արմատական ու Գավառական բառարաններում:

Ամ—Միջին հայերենով գրող գրեթէ բոլոր հեղինակներն օգտագործում են այս եղանակավորող բառը: Զարմանալի է, որ Հ. Աճառյանը ո՛չ Արմատականում և ո՛չ էլ մանավանդ Գավառականում չի նշում այս բառը: Ս. Ամատունին նույնպէս չունի: Ստ. Մալխասյանցը «Բացատրականում» բերում է օրինակներ Կեղծ Ծ. Բագրատունուց և կարծում, թէ «գուցէ պատուագրութիւն [է] այժմ բառի (տե՛ս Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 54): Ամ եղանակավորող բառն, ըստ երևութիւն, այժմ, հիմա մակբայներից կամ ամա «բայց» փոխառյալ շաղկապից է առաջացել: Օրինակներ.

«Ամ, ո՞վ ասաց ձեզ, թէ մերկ էք:

Կամ ո՞վ խաբեաց զձեզ, պատմեցէ՛ք» (ՀԾԲ, էջ 231):

«Ամ, ո՞վ կարէ լեզուով պատմել զբանն աղետին» (ՄՆԲ, էջ 151):

«Հոգի՛, ամ, դու լաւ կասես, սիրտս է սև քան զգործելի» (ն. տ. էջ 166):

«Ամ, երեսդ է՞ր է դեղնել ՚ւ երեսիդ գունն գնացեր» (ՆՔԳ, էջ 50):

«Խօ՛շ եար, ամ, զդուռն բաց ձիւն եկեր ոտվիս կու մըսի» (ն. տ. էջ 54)

և այլն:

Գէմ—Հ. Աճառյանի Գավառականում բառս չենք գտնում: Ս. Ամատունին «Հայոց բառ ու բանում» վկայում է կէմ բառը<sup>29</sup> հղելով անհոգ բառին (տե՛ս էջ 340): Ստ. Մալխասյանցը նույնպէս Բացատրականում կէմ բառը դնում է որպէս բարբառային և հղում անհոգ բառի 1-ին իմաստին, այն է՝ «հոգսերից ազատ, անկասկած, անխոռով»: Միջին հայերենում գէմ բառն օգտագործվում է առավելապէս հաստատական եղանակավորող բառի իմաստով, ինչպէս՝

«Շատ մարդ հասրաթով գէմ կան ի ներքև հողին պառկած» (ՖրԲ, էջ 225):

«Գէմ գայս վատահի գիտեք, որ այս կեանքս մեզ չի մընալ» (ն. տ. էջ 91):

«Ընդ է՞ր յիս շես հայիր, գէմ անհաւատ շես» (ՀԹՏ, էջ 145):

«Յաշխարհս խօրօտիկ գէմ դու միմակ շե՛ս» (ն. տ. էջ 152):

«Գէմ քո մանչն չէ մեռել կամ օտար երկիր գնացեր» (ՆՔԳ, էջ 50):

<sup>29</sup> Միջին Հայերենի բաղաձայնական համակարգին համապատասխան՝ կէմ կարգալու համար պետք էր գէմ գրել:

«Իմ եարն ինձի հիւր եկեր, գէմ հազար տարու՝ թէ գիտես» (ն. տ. էջ 51):  
«Ղարիպն ի յօտար երկիր, գէմ խիստ դիժար կու լինի» (ՄՆԲ, էջ 165)  
և այլն:

Խոս (խոյ, խօ)—Հ. Աճառյանը ճշտորեն գտնում է, որ խո (<խոմ) եղանակավորող բառը «վրաց. խոմ հարցականի մասնիկն է» (տե՛ս Գավառական, էջ 481): Այդ առավել ևս ապացուցվում է միջին հայերենում նրա կիրառությամբ: Խոս եղանակավորող բառն օգտագործված ենք գտնում միմիայն Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններում: Մեկ անգամ արդեն առիթ եղել է ստեղծողի, որ Նաղաշ Հովնաթանը Շոռոթ գյուղից է և իր ստեղծագործությամբ ու ոճով սերտորեն կապված է Ազուլիսի ու Թբիլիսիի բարբառախոս միջավայրի հետ: Այնպես որ, բառս դժվար թե որևէ այլ ծագում և ստուգաբանություն ունենա<sup>30</sup>: Օրինակներ՝ «Աս սեֆիլ բաղպանի նման, խոյ<sup>31</sup> մեռայ քեզ աղաչելով» (ՆՂԲ, էջ 32): «Ես խոյ քեզնից չեմ ուզելու ապրանք, մալ» (ն. տ. էջ 241):

Բառս առավել շատ հանդիպում է խօ ձևով, ինչպես՝ «Ես խօ խափիլ չիմ» (էջ 131): «Կոտրվիլ խօ չէր քո կուռն» (էջ 143): «Երկիրջակ խօ շատ կայ թասթիր» (էջ 150) և այլն:

Նա(յ)—Միջին հայերենում շափազանց շատ գործածական է նա եղանակավորող բառը, ինչպես՝ «Տամիլ, որ է մորթ եւ միս բուսուցանող. եւ մորթ բուսուցանող այն դեղն է որ խոցին միսն թուլ լինի նա, պինդ առնէ եւ մորթ բուսուցանէ» (ԱԱԱԱ, էջ 18): «Եւ յորժամ ես զայս տեսայ, եւ ուզեցի որ դիտնամ... հարցայ նա, զիս ծաղր արին» (ն. տ. էջ 124): Ապա և՛ «Թէ ... աշակերտ ես նայ, դու լսէ զինչ քարոզես» (ՄՆԲ, էջ 120):

«Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ

Նայ վառեցայ գետ մոմեղէն» (ՀԹՏ, էջ 149):

«Ուրտեղ քահանայ տեսեր նա ծոեր ճամփուս ու ելեր» (ՆՔԴ, էջ 50):

«Աչիցս արտասունք ուզեց նա արիւն ի վար վաթեցաւ» (ն. տ. էջ 52):

«Ամենայն ծառ պտուղ կուտայ, թէ ուրին չի տայ նա՝ համ ի՞նչ,

Շատ եար իր եարին լոեր, թէ դու լոես, նա համ ի՞նչ» (ն. տ. էջ 55) և այլն:

Նա եղանակավորող բառը հաճախ հանդես է գալիս նէ ձևով, ինչպես՝ «Թէ իմն ես նէ վար արի, թէ օտար ծաղիկ նա՝ գնա» (ՆՔԴ, էջ 52):

«Երթաւ աղաչեմ... երբ եկիր նէ ալ չերթաս» (ն. տ. էջ 49):

Արդ, ի՞նչ բառ է սա և ի՞նչ աղերսակցություն ունի նա դերանվան և գրաբարյան նա շաղկապի հետ: Ինչպես վկայում է պրոֆ. Հ. Աճառյանը, նա բնիկ հայ բառ է և պատկանում է հնիս. ո՞՞ «այն»<sup>32</sup> դերանվանական արմատին (տե՛ս ՀԱԲ, հ. Ե, էջ 6):

<sup>30</sup> Բանասիրական գիտությունների ղոկտոր Ս. Արրահամյանը, կասկածի տակ առնելով Հ. Աճառյանի բացատրությունը, գրում է. «Որքան էլ այդ բառը (խոմ—ՍԱ) նման է վրացերենի համապատասխան բառին, այնուամենայնիվ ոչ վաղ շրջանի եղանակավորող բառի այդպիսի փոխառությունը հազիվ թե այդքան լայն տարածում գտներ հայերենի համարյա բոլոր բարբառներում, որքան այդ բառը: Այնպես որ այդ բառի շատ լայն տարածված լինելը հայոց լեզվի մեջ կասկածի տակ է առնում հիշյալ բացատրությունը» (Տե՛ս ՉԽՄ, էջ 509):

<sup>31</sup> Ո՞՞ ձայնավորից հետո յ կիսաձայնի ավելացումն, ըստ երևույթին, կատարված է գրաբարի ուղղագրության հետևողությամբ:

<sup>32</sup> Այս բառի մասին Ա. Այտընյանն իր ժամանակին գրել է. «Ոմանց այս մասնկան խոժոռ նայելուն պատճառն է անտարակույս, որ տաճիկ կը համարին. բայց չէ թե միայն օտար չէ, այլ

Հայկազյան բառարանը, ճիշտ է, շգնահատելով որպես եղանակավորող բառ, տալիս է նա բառի՝ եղանակավորող իմաստով կիրառության գեղեցիկ օրինակներ, ինչպես՝ «Նա՛ բնաւ և ո՞վ իսկ կարէ պատմել», «Իսկ նա՛ արդ ոչ իւրեանց ակնունէին թագաւորելոյ, այլ այլում օտար ազգի» (հատոր II, էջ 383):

Հայտնի է, որ նա բառը միջին հայերենում «և» միավորիչ շաղկապի կիրառություն ունի, ինչպես՝ «Որ ասես մի՛ սպանաներ, մի՛ գողանար և մի՛ շնար, նայ (=և) սպանանես, շնաս, զրկես, և մնացիր շարեաց զաւակ» (ՀԹՏ, էջ 193): Այնուհետև՝ վերևում արդեն ցույց տվեցինք, որ եղանակավորող բառերն աղերսակցվում են շաղկապների հետ, այնպես որ նա, նէ եղանակավորող բառերը նույն նա շաղկապի նորիմաստ կիրառություններն են: Իրավացի է պրոֆ. Հ. Աճառյանը, երբ, քննելով նաև բառի շաղկապական կիրառությունը միջին հայերենում, միտքը զարգացնում է հետևյալ կերպ: «Սրանից է յառաջացել թէականի նշանակութիւնը, որ միջին հայերենում երկրորդական նախադասութեան սկիզբն էր դրում, իսկ նոր գաւառականների մէջ դարձել է թէականին վերջադաս նէ, նր, նա. ինչպես՝ «թէ անհոգ կենայ տէր ծառոյն, նա չորանայ ծառն» (Հայերեն արմատական բառարան, հ. Ե, էջ 6):

Վերևի եղանակավորող բառերից բացի, միջին հայերենում կան բառեր, որոնք մեր լեզվի նախորդ շրջանում ևս հայտնի կիրառություններ են ունեցել, ինչպես՝ քերև, օրինակ՝ «Առիծն հիւանդացաւ և ուղարկեաց բժշկաց խնդիր. քերև արասցեն դեղ ցաւոյն» (ՎԱԱ, էջ 6): «Ի շար նախանձ վարեաց զազգն... քերև յափշտակէ զծառայն...» (ՀԹՏ, էջ 124): Արժեք բերել քերև եղանակավորող բառի գրաբարյան կիրառության օրինակներ. «...եւ գայր զճանապարհս իւր քերև յաւազակութենէ» (ՓՅՈՂ, 6-րդ էջ): «Զհազար ամ յաշտ արար զի քերև որդի մի լինիցի նմա» (ԵԿԵԱ, 2-րդ Ա) և այլն:

Այո՛, ո՛չ, չէ նույնպես եղանակավորող բառեր են. ինչպես՝ «Կոչեցին աղուէսն և ասեն. արայ հնար և բեր էշ մի. ասէ՛ աշո՛յ» (ՎԱԱ, էջ 5): «Եւ ասեն ծնողքն նոցա ցնոսայ. լսէ՞ք զայն ձայնն. եւ նոքայ ասեն. աշոյ» (ն. տ. էջ 21): Այո՛ պատասխանական բառն արտահայտվում է նաև նա՛ եղանակավորող բառով, ինչպես՝

«Քաղցրախօս դուդի ու դումրս,  
Հա բաւ փուլացրիւր ումրս» (ՆՂԲ, էջ 53):

Միջին հայերենում լայն կիրառություն ունի ահա՛ ցուցական եղանակավորող բառը, ինչպես՝ «Եւ ել համբաւ նորս ի բազում տեղիս, թէ գայ ահա՛յ նոր զարմանալի զազան մի» (ՎԱԱ, էջ 17): «Եւ ահա՛յ շիւղ ինչ կար ի մորուս նորս» (ն. տ. էջ 105): Ապա և՝ «Ահա եղբայրք իմ սիրելիք, ողորմեցէք ձեզ» (ՆՂԲ, էջ 212): «Ահա՛ հոտըն գար զարնան» (ԿԵՏ, էջ 153): «Ահա՛ այժմ ըսկըսանիմ զմարգարէիցն, որ պատմեցին» (ն. տ. էջ 224): «Ահա՛ եղև պայծառ գարուն» (ՀԹՏ, էջ 139): «Ահա՛յ հոտեցաւ մարմին» (ն. տ. էջ 207) և այլն:

Ինչպես արդեն ասել ենք, միջին հայերենով գրող որոշ հեղինակներ (Ֆրիկ, Քուլակ, Ն. Հովնաթան) գործածում են նաև փոխառյալ եղանակավորող բառեր: Դրանք են.

բավական հին ալ է հայերեն լեզվի մեջ և գուցե ամենահին... ասոր հին ձևն է նա... մինչև ժԳ, ժԴ դար՝ նա շաղկապն յուր առաջին (եւ) նշանակությունն ալ դեռ պահած էր... նա կգտնվի նաև գրված նայ» (ՔՔ, էջ 100):

ա) Բալֆի (բալֆիմ, բալֆամ)—երկբայական եղանակավորող բառ է, որ իմաստով համապատասխանում է հայերեն թերևս, գուցե բառերին, ինչպես՝ «Երթամ, աղաչեմ, բալֆի (=թերևս) ըռահմ անի, դուռըն բանայ» (ՆՀԲ, էջ 24):

«Բալֆի տեսնեմ, ուրախանամ,  
է՞ր ես թողնում՝ կարօտ մնամ» (ն. տ. էջ 223):  
«Թող քո հայրն մեռնի, ապրի իւր որդին,  
Բալֆամ ըռահմ անես դարիպ ճամպորդին» (ն. տ. էջ 35):

բ) Անապ «արդյոք, տեսնես»—սա նույնպես երկբայական եղանակավորող բառ է, ինչպես՝

«Քո ծոցն բախշայ նռան, խնծորի.  
Պինդ կոճ պահես, աջա՞ք էդ ո՞ւմ համար այ» (ՆՀԲ, էջ 42):  
«Գիշեր ու ցորեկ կուլամ, անապի իմ եարն կու լսէ՞» (ՆՔԴ, էջ 47):  
«Ա՛յ քարեր, ա՛յ թփեր, անապ ի ձեզ չէ՞ եկել» (ն. տ. էջ 48):

Հաճախ հանդես է գալիս ամ եղանակավորող բառի հարադրությամբ, ինչպես՝

«Անապ ամ, յէ՞ր կու դատիս  
Աշխարհիս երակ դու Ֆրրիկ» (ՖրԲ, էջ 113):

գ) Պարի «գոնե, գեթ» զիջական կամ սահմանափակման եղանակավորող բառ է: Օգտագործված ենք գտնում ն. Հովնաթանի մոտ.

«Պարի (=գոնե, գեթ) եկ մին ինձ մօտ՝ դու մուրվաթ արայ»... (Բանաստեղծութ. էջ 196):

դ) Տեյի «ասելով»—Թվում է, սահմանափակման եղանակավորող բառ է: Թուրքերենից փոխառյալ: Օրինակը գտնում ենք Մարտիրոս Արմեցու մոտ.

«Ելար փախար գաղտագողի,  
Սահաթի փողն ուտեմ տէյի» (=ասելով—Բանաստեղծ. էջ 95):

ե) Հալա «դեռ, դեռ ոք»—Հայերենի բարբառներում տարածված հայտնի բառն է: Օրինակը գտնում ենք ն. Հովնաթանի մոտ՝ «...դու հալա դիր դոցա մաշին» (Բանաստեղծութ. էջ 149):

զ) Քեշկե<sup>33</sup> «երանի»—բաղձանքի եղանակավորող բառ է, որ գտնում ենք Քուչակի մոտ. «Այս մութն ու խաւար տարիս, քեշկե չէր բերեր մայրս զիս» (Դիվան, էջ 60):

2) Ածանցավոր եղանակավորող բառեր.—Քանի որ եղանակավորող բառերն իրենք այլևայլ խոսքի մասերից են առաջացած, ուստի ածանցավոր եղանակավորող բառերը չեն կազմվում այս կամ այն եղանակավորող բառի վրա ածանցի ավելացումով: Ածանցավոր եղանակավորող բառերն իրենց հերթին այլ խոսքի մասերի պատկանող պատրաստի կազմություններ են, առավելապես ածանցավոր մակբայներից առաջացած, ուստի և ըստ կիրառության ու ընկալման դրանք կարող են դիտվել և՛ որպես մակբայներ, և՛ որպես եղանակավորող բառեր: Ածանցավոր եղանակավորող բառերը թվով քիչ են՝ նմանապէս, անպատճառ, անհնար, անկասկած, առհասարակ: Կարծում ենք, որ վերոհիշյալ բառերը ստորև բերված օրինակներում որպես եղանակավորող բառեր են օգտագործված. «Ապա թէ թագուր չլինի ի հետ ու իշխան յիշվէ իր

<sup>33</sup> Ըստ կիրառության կարող է ընկալվել նաև որպես ձայնարկութուն:

երկիրն դիպան, նա ոսկին թագուորին է՝ անհնար» (ՍԳԴ, էջ 18): «Բայց աղէկ իմանալ պիտի զպատճառն, թէ գիշերն է ըլել յանկասկած, թէ ի մշակէ է...» (ն. տ. էջ 73): «Յորժամ ի մէճլիս նստի, անկասկած սրտիկն արունի» (ՄՆԲ, էջ 167): «Յորժամ առնուն ջերմն ջուր և արկանեն ի հով պուտուկ, անպատճառ տաքնայ հով պուտուկն ի ջերմ ջրէն» (ՄՀՁՄ, էջ 4): «Ա՛ն ի միտ օրինակ զդարբնի փուքսն, որ երբ ի յինքն քաշէ զքնիկ տաք օդն, անպատճառ տաքնայ փուքսն ի յայն տաք օդոյն» (ն. տ. էջ 5):

«Եւ դուք օրհնիք...

Երբ որ մեզ անէք ողորմի

Առնասարակ ամենեցունդ» (ՖրԲ, էջ 117):

«Դուք պատմեցէք առաքելոցն,

«Աշակերտացն առնասարակ» (ն. տ. էջ 138):

«Այլ և զբերանդ լրկամէ և շատ մի՛ խօսիր.

...Նրմանապէս զաշքրդ և զականջրդ քո ամրացո՛» (ՀԵԲ, էջ 201)

և այլն:

3) Քերականական ձևերից առաջացած եղանակավորող բառեր.— Միջին հայերենում կան նաև, թեև քիչ, քերականական ձևերից առաջացած եղանակավորող բառեր, ինչպես՝ իրաւ, իրօի (<իրաւի), յիրաւի, կարծեմ, շինի: Խոնարհված ձևերից առաջացած եղանակավորող բառերն, անշուշտ, շատ-շատ են, բայց, քանի որ թէ, եթէ (հաշուէ թէ, թող թէ և այլն) շաղկապների հարադրութեամբ են հանդես գալիս, ուստի դրանք իրենց տեղում են քննվելու: Օրինակներ.

«Եւ ահա իրօի աղուէն խեռ է և իմաստուն կենդանի...» (ՎԱԱ, էջ 38):

«Չասես, թէ դու մարդ ծընար,

Յիրաւի ի յէջ նմանիս» (ՖրԲ, էջ 155):

«Ֆրի՛կ, քեզ խրատ մի տամ.

է՛ իրաւ, թէ ինձ կու լսես» (ն. տ. էջ 158) և այլն:

«...է՛ր հոգի ստեղծել ՚ւ ի հողոյ մարմին կապել է.

Կարծեմ վասն այնոր արար, թէ ի վեր քարշել զնա կարէ» (ՀԵԲ, էջ 162):

«Վարդ ձգեցիր ի մէջ գոգիս.

Չլինի՛ ձեռս ծոցէդ ջոկիս» (ՆՀԲ, էջ 44):

«Պինդ լցէք տօլուի թասն,

Չլնի՛ մարդոյ տաք վնասն» (ն. տ. էջ 186) և այլն:

4) Բարդութեամբ կազմված եղանակավորող բառեր.— Բարդ եղանակավորող բառերը լինում են ինչպես կցական, այնպես էլ հարադրական կազմութեամբ: Կցական բարդութեամբ կազմվածներն են՝ մի՛թէ, միայն, որպէս:

Մի՛թէ—Երկբայական եղանակավորող բառ է՝ հաճախ հարցական երանգով, ինչպես՝

«Սքանչելատեսիլ դիմօք Միքայէլ հրեշտակն ես միթէ» (ԳԱԲ, էջ 185):

«Բնաւ շեռուր խոտ ու գարի,

Մի՛թէ իւր ճրագն մարի» (ՄՂԲ, էջ 90):

«Մի՛թե մայրըն շերետ դիս...» (ՖրԲ, էջ 34):

«Յորտեղ որ կու նստիմ զիս կմոռանամ ես՝

Մի՛թէ զիս դեղեցիր, կամ դու կախարդ ես» (ՀԹՏ, էջ 152) և այլն:



Բառս գրաբարյան կազմութիւն ունի՝ մի+թէ. մեր հին լեզվում ևս բազում կիրառութիւններ ուներ, ինչպես՝ «Մի՞թէ և զարալիզէ՞ն ևս որ կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ» (ԵԿԵԱ, I, Ե):

Միայն—Սահմանափակման եղանակավորող բառ է՝ կազմված մի+այն բաղադրիչներից: Մեր հին լեզվում ևս օգտագործվել է եղանակավորող բառի իմաստով, ինչպես՝ «...Որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից՝ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն» (ԵԿԵԱ, I, ԻԵ): Եվ կամ՝ «Եւ Աստուած միայն կարող իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի» (ն. տ. II, Ե): Միջին հայերենում շատ գործածական բառ է, այն գտնում ենք բոլոր հեղինակների մոտ, ինչպես՝

«Նոյնպէս հայր և որդի և հոգին բխեալ,

Որ անձամբ և դիմօք միայն բաժանեալ» (ՀԵԲ, էջ 191):

«Դու շես միայն այդ ցաւի տէր,

Ամէն անդարձ այդպէս կուլայ» (ՅՐԲ, էջ 107):

«Արաբացի գալլ նմանիս,

Զձև քահանի միայն ունիս» (ՄՂԲ, էջ 93) և այլն:

Հարադրական կազմությամբ եղանակավորող բառերն առավելապես կազմվում են ցուցական բառերի վրա և, որ շաղկապների ավելացումով, ինչպես՝ հանց որ, հանցգուն որ, նոյնպէս որ, այնպէս որ, որպէս և, նոյնպէս և, այսպէս և:

Հանց որ, հանցգուն որ առաջացել են հանց, հանցգուն ցուցական բառերի վրա որ թարմատար շաղկապի ավելացումով, սակայն ոչ ստորադասութիւն արտահայտելու իմաստով: Իմաստով համապատասխանում են արդի հայերենի՝ այնպէս որ եղանակավորող բառին, ինչպես՝ «...Հանց իմացիր որ ԻԱ մասն հետ ԻԴ մասին՝ Գ մասն յաւելի եղաւ, հանց որ յառաջն սասցաք» (ԱԱԱԱ, էջ 14): «Եւ թմբեցնող է. եւ թէ ուտեն՝ շատ քուն բերէ, հանց որ զսգայութիւնն խափանէ» (ն. տ. էջ 129): «Եւ այլ սուրն եւ աղին՝ ի տաքութիւն ընկերք են, եւ ի նրբութիւն եւ ի լերկութիւն՝ ներհակ են, հանցգուն որ քաղցրն եւ լեղին ընկերք են...» (ն. տ. էջ 6): Ապա և՝

«Զինչ որ հագնի, նա իւր վայլէ.

...Հանց որ շատոց սիրտ մաշեցաւ» (ԿԵՏ, էջ 164):

«Տանի զամէն մարդ, յիւր մուրատէն գերի,

Հանց որ ի շատոց սիրտ անշէջ հուր կ'երի» (ն. տ. էջ 211) և այլն:

Վերևի կիրառութիւնները ցույց են տալիս, որ հանց որ, հանցգուն որ առավելապես սաստկական եղանակավորող բառեր են՝ հաստատականի որոշ կրանգով:

Իրենց արտահայտած իմաստով վերևի եղանակավորող բառերի հետ գրեթե նույնանում են այսպէս որ, նոյնպէս որ հարադրութիւնները, ինչպես՝ «Ասեր է գրոցս շինողն, թէ դալար զուֆան զուգծու այլ կու լինի, այսպէս որ կու ժողովեն զոչխրին ազումիջին զբուրդն և զան ի պտուկ մի կու դնեն...» (ԱԱԱԱ, էջ 159):

«Զաղն անհամ ո՞վ է տեսել, թէ լինի նա պիտանացու.

Ոչ աղբ ի պարտէզ ձգել, 'ւ ոչ է քար ինքըն շինելոյ.

Նոյնպէս որ բանի տընտես լուկ խայթոց ունի զինչ մեղու» (ՀԵԲ, էջ 149):

Այսպէս և, նոյնպէս և, որպէս և հարադրութիւնները, եթէ լրիվ իմաստով եղանակավորող բառ դարձած իսկ շլինեն, ապա իրենց նախաիմաստից հեռանալու ընթացքի մեջ են: Որպէս օրինակ կարելի է բերել այդ բառերի հետևյալ կիրառութիւնները. «Եւ իւր ստածումն այս է... և նոյնպէս ի յամենայն ցեղ տաք կերակրոց պատրաստ պահել, որ շվառի բնական տաքութիւնն» (ՄՀԶՄ, էջ 16):

«Անկաւ նա ի ծով մեղաց և մեռաւ նա յսնգիտութիւն»:

Այսպէս և ամէն անգէտ, կորիցեն ի նոյն շարութիւն» (ՅրԲ, էջ 88):

«Ծրանի է աղբատաց, որպէս և Տէրն իսկ երանէ» (ԿՅՏ, էջ 215):

Բացի սրանցից կան նաև մի շարք այլ հարադրութիւններ, առավելապես ստորադասական շաղկապներ, որոնք այլևայլ կիրառութիւններում որպէս էղանակավորող բառեր են օգտագործվում, ինչպես՝ «Եւ այլ ամենայն ցեղ հիւանդութիւն որ ի հետն շերմն լինի, լորժամ հիւանդութիւն բժշկի, և շերմն արձակի: Ապա թէ ոչ նոյնպէս տեսնա՞նք զշերմն թէ յորո՞յ ազգէ է...» (ՄՀԶՄ, էջ 31): «Ապա աղէկ պիտի իմանալ, որ դրուստ ի վատ թրծելոյ լինի պատճառն և ոչ ի դիպելոյ կամ յայլ իրաց, թէ ոչ, զամանն միայն վճարէ» (ՄԳԴ, էջ 63): «Կասեմ թէ հայերեն ասա, թէ չէ՝ ասեմ դուն լսէ» (ՆՔԴ, էջ 22):

«Եկայք ամէնքս յոտք անկաններ,

Որ մեզ համար ստեղծած է նա:

Թէ չէ՝ ամէնքս մեղաւոր ենք...» (ՅրԲ, էջ 125):

«Ով հողացեալ մարմին ունի, թող անհոգ ի բուն չի կենայ:

Թէ չէ նա գողըն մտանէ աւերէ զիւր տունն ու գնայ» (ՅրԲ, էջ 50):

«Շահ չկայ աշխարհէս ով ոք դատեսցի,

Բայց միայն թէ բարի գործոց հետևի» (ՄՆԲ, էջ 140):

«...Աղեղն եղնենի լինի ու լարն ի վերայ գալենի,

Քաշողն քաջորդի լինի, հապա թէ իմ սիրուն հասանի» (ՆՔԴ, էջ 55):

5) Նկարագրական եղանակավորող բառեր. — Նկարագրական եղանակավորող բառերի մեջ պետք է դնել նախ բայի խոնարհված ձևով և թէ, եթէ, (=թէ) ստորադասական շաղկապով արտահայտվող կապակցութիւնները: Արանք, անշուշտ, նախապես ստորոգյալ+ստորադաս նախադասութիւն ստորադասական շաղկապի շարահարկական միացութիւններ են եղել: Սակայն հետագայում, մի կողմից բայաձևի՝ որպէս գերադաս նախադասութիւն ստորոգյալի, մյուս կողմից շաղկապի՝ որպէս ստորադաս նախադասութիւն ստորադասական շաղկապի իմաստի թուլացման, մթազնման հետևանքով, ստացվել է եղանակավորող բառ արտահայտող մի կապակցութիւն: Պետք է նկատել, որ ամեն բայից չէ որ նման եղանակավորող բառեր են առաջանում, այլ առավելապես այսպէս կոչված վերացական բայերից, որոնք հայերենում օգտագործվում են ինչպէս իրենց նյութական, այնպէս էլ օժանդակ, վերացական բայի իմաստով: Այդ բայերից են՝ հաշվել (=թվել, նակ՝ համարել), կարծել (=կարծիք ունենալ, նակ՝ ենթադրել), լինել (=գոյութիւն ունենալ, նակ՝ դառնալ), ասել (=խոսել, բան հաղորդել, նակ՝ ենթադրել) և այլն: Եվ իրոք, միջին հայերենում նման նկարագրական եղանակավորող բառերը վերևի բայերից են կազմված, ինչպէս՝ «...խոտ մրն է որ տերևն ի ջրկոտիմի տերև կու նմանի. և շատ ծակտիք ունի, ասես թէ ցեցն է ծակծկել» (ԱԱԱԱ, էջ 93):

«է՛ մարդ, որ ի յայս բանէս

Գու բաժին իսկի շունենաս.

Հաշուենք թէ անասուն ես դու...» (ՅրԲ, էջ 194):

«Աւա՛ղ զայն որ շատ դատիս, մարդ չկայ որ զելն ճանաչէ.

Հաշուէ թէ ճուհար ունի՛ ի խոզուն առջև կու վաթէ» (ՆՔԴ, էջ 95):

«Կարծեմ եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն (ԳԱ, էջ 227):

«Գինին շնութեան է օգնական

...Գինին սպանումն գրգռէ.

Թող թէ հոգոյն քանի շար է» (ՀԹՏ, էջ 184):

«Դու բեթըլմամուր և մաքաթուլահ.

Գամ յայդ հեռաւոր ճանպահոյ որ քեզ կայ,

...Լինի թէ աչերս քեզ արժանանայ» (ՀԹՏ, էջ 200):

«Դարձեր եմ մաղասկաթ և շունիմ ղըրար,

Լինի թէ այգեգործն արար զայս ընդ իս» (ն. տ. էջ 226):

Նկատելի է, որ բայական կազմութեամբ եղանակավորող բառերն առավելապես երկբայական իմաստ ունեն: Մյուս կողմից՝ նման կազմութիւններում բայերը դրվում են սահմանական եղանակի ներկա և հրամայական եզակի ձևերով, ընդ որում առավելապես I և II դեմքերով, ինչպես՝ հաշուէ թէ, թող բէ, գրէթէ (հրամայական), կարծեմ թէ, ասես թէ (սահմանականի ներկա):

Վերևի բոլոր ձևերից դուրս կան նաև բառակապակցութիւններ, որոնք խոսքի մեջ իրենց բաղադրիչների առանձին իմաստով ու շարահարկական պաշտոնով հանդես չեն գալիս, այլ ավելի հարում են եղանակավորող բառերին: Մեր կարծիքով, այդպիսի նկարագրական եղանակավորող բառեր են՝ որչափ ևս առաւել, ի վերայ այս ամենայնի, արեւոյ համար, մասամբ և՛ աստուած կու սիրէք և նման կապակցութիւնները:

Որչափ ևս առաւել բառակապակցութիւնը գրաբարյան է, ինչպես որ Եղիշի մոտ էլ գտնում ենք. «Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ևս առաւել առ հոգեւորն» (ՎՎՀՊ, II եղանակ)՝ Միջին հայերենի մեր օրինակն է՝ «...երբ զգրակնուն կամ զպոխտիմոնին վճարն հայնց ուժով կու տայ առնուլ նա, որչափ ևս առաւել զկորսնելոյն...» (ՍԳԴ, էջ 61):

Ի վերայ այս ամենայնի նույնպես գրաբար հայտնի կազմութիւն է և կենդանի ու գործածական նույնիսկ աշխարհաբարում ու արդի հայերենում: Ահա և օրինակներ միջին հայերենից. «Եւ ի վերայ այս ամենայնի կու հրամայէ օրէնքս. որ զինչ հեճկով և կամօք վասն շարութեան վնասէ նա, վճարէ յիւր քսակէն» (ՍԳԴ, էջ 71): «Բայց ի վերայ [այսր] ամենայնի խոզի իսկի պատ չկայ» (ն. տ. էջ 80):

Արեւոյ համար, անշուշտ, ժողովրդական լեզվամտածողութեան մի արտահայտութիւն է, ինչպես՝ «եօջ եա՛ր, արեւոյ համար, որբուկ եմ, զիս մի՛ լացներ» (ՆՔԴ, էջ 49): Աստուած կու սիրէք կապակցութիւնը նույնպես, ինչպես այն ընկալվում է ներկա իմաստով, կարծում ենք, պետք է եղանակավորող բառ համարել, ինչպես՝

«Լաւ մարդն այն է, ինչպես եկեալ է՛ էլ այնպէս գնայ.

Աստուած կու սիրէք, մինչև օրհնելն մարդ չի վեր կենայ.

Թասերն չինի՛

Կարմիր գինի

Չեզ անուշ լինի» (ՆՀԲ, էջ 161):

Այսպես և Աստուծոյ համար, աստուծոյ սիրոյն համար կապակցութիւնները, ինչպէս՝ «...Եւ ասաց դէն առ այրն այն, թէ... աստուծոյ համար զիս ազատէ» (ՎԱԱ, էջ 134): «Եւ ասաց դէն՝ Աստուծոյ համար և աստուծոյ սիրոյն համար զնայ ի դուռն արգելէ մէկ պահ մի...» (ն. տ. էջ 135):

### Չ Ա Յ Ն Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Աշխարհի շատ-չեզովաբաններ պաշտպանում են այն կարծիքը, թե ձայնարկութիւնները խոսքի մասերի մեջ չպետք է մտցնել, մինչդեռ հատկապես հայ քերականութեան վերջին շրջանում (Ա. Այտընյան, Ս. Պալասանյան, Գ. Սեւակ, Ա. Ղարիբջան) այդ կարգի բառերը «ձայնարկութիւն» կամ «միջարկութիւն» անվանումով մտել են մեր քերականութիւնների մեջ: Գուցե մասամբ այդ ժխտողական վերաբերմունքով բացատրվեր այն փաստը, որ հայ քերականները ձայնարկութիւններն այնուամենայնիվ գիտական ուսումնասիրութեան չեն ենթարկել, և ձայնարկութիւնները միշտ մնացել են դպրոցական գործնական ուսուցման սահմաններում: Այս իմաստով զնահատելի է, որ Ս. Աբրահամյանը «Զթեքվող խոսքի մասերը» աշխատութեան մեջ ձայնարկութիւն խոսքի մասը բավական հանգամանալից գիտական քննութեան է ենթարկել: Վերոհիշյալ աշխատութեան մեջ հեղինակը, քննելով ձայնարկութիւնների մասին մինչ այդ տրված սահմանումները, ի վերջո տալիս է այդ խոսքի մասի հետևյալ սահմանումը. «Ձայնարկութիւններն այն բառերն են, որոնք արտահայտում են զգացական ու կամային վերաբերմունք, առանց անվանելու դրանք» (էջ 545): Սահմանումից երևում է, որ ձայնարկութիւնները նյութական, քերականական և վերաբերական իմաստից զուրկ բառեր են, որոնք պարզապես խոսողի զգացական վերաբերմունքն են արտահայտում երևույթի, իրի, եղելութեան նկատմամբ (ն. տ. էջ 544): Այսպես, օրինակ՝

«Թագուոր մի կայր աշուին էր խած,  
Ժում մի ժանի ունէր ու բաշ,  
Սինօռ ունէր մինչ ի Մարաշ,  
Ամէնքդ ասէք իւրեանքն վա՛շ» (ՆՇԲԶ, էջ 584):  
«Երեսդ նման է կարմրափայլ վարդին.  
...Ո՛հ, թող մենք շամամ քաղենք, դու նստիր թախտին» (ՆՀԲ, էջ 205):

Վերևի օրինակներից առաջինում վա՛շ ձայնարկութիւնը արտահայտում է սփսոսանքի ու ցավի զգացում հայոց Տրդատ արքայի վաղանցուկ փառքի համար, մինչդեռ Չ-րդ օրինակում արտահայտված է ուրախութեան և հաճելիութեան զգացում՝ երազած կնոջ տիրանալու ցանկասիրութեամբ:

Մյուս կողմից՝ ձայնարկութիւնները կարող են արտահայտել նաև կամային վերաբերմունք, այսինքն՝ խոսողը դիմում է իր նմանին, կենդանիներին, ինչպէս՝

«—Գնա՛, ծօ՛, տղա տխմար, չի վայլես տաճրիս լուսարար» (ՆՔԴ, էջ 50):  
«—Մօ՛, դուն մուտ ու մի՛ վախել, խամզողդին տունն աւերի» (ն. տ. էջ 51):  
«Հա՛յ իմ մարիկ, ես քեզ ծառայ» (ՀԵԲ, էջ 166):  
«Մնացել ամ հեյրան ու մաթ,

Հոսհմ արա, հե՛յ, բէմուրվաթ» (ՆՀԲ, էջ 19):

«Այսօր տեսայ, խելքս՝ պակսել.

Կանչեմ հարա՛յ... (ն. տ. էջ 37):

Վերևի կիրառութիւններում մենք ունենք հա՛յ, հե՛յ, հարա՛յ կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկութիւններ:

Կազմութեան տեսակետից նկատելի է, որ ձայնարկութիւններն առավելապես մեկ ձայնավորից (ա՛, է՛, ո՛), մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից (ա՛յ, ա՛հ, է՛յ) կամ երկու բաղաձայնից ու մեկ ձայնավորից են կազմված (հա՛յ, վա՛յ, վա՛շ, հե՛յ): Այսպիսով, ձայնարկութիւնները սակավահնչյուն բառեր են, նրանք շեն կարող կազմվել այլևայլ ձևերի ավելացումով:

Պետք է նկատի ունենալ, որ ձայնավորների և վերևում նշված կամ այլ հնչյունակապակցութիւնների ամենայն կարգի կիրառութիւնները ձայնարկութիւն չեն կարող տալ. հայոց լեզվի հնչյուններով կարելի է անսահման թվով հնչյունակապակցութիւններ ստեղծել (ինչպես՝ տա, ջո, մի, թեն, բին և այլն), մինչդեռ հայոց լեզվում ձայնարկութիւնները ինչ-որ շափով սահմանափակ են, նշանակում է՝ տվյալ հնչյունակապակցութիւնն այդ լեզվով խոսող հանրութեան կողմից բառական արժեքով պետք է գնահատված լինի: Այստեղ ևս, ինչպես ևղանակավորող բառերի դեպքում էր, մեծ նշանակութիւն ունի առոգանութեան հարցը: Այսպես, օրինակ՝ ա, է, ո առանձին վերցրած, առանց հատուկ առողանութեան, հայերենի ձայնավորներ են և գոյականական կիրառութիւն ունեն, մինչդեռ հատուկ առոգանութեամբ արժեքավորվում են որպես ձայնարկութիւններ. ինչպես՝

«Ա իմ եղբայր աջացըս լոյս» (ՖրԲ, էջ 93):

«Մանուկ իմ քաջ աղուոր հասակ,

«...է՛, բարի՛ ւ անմեղ տեսակ...» (ՆՇԲԶ, էջ 568):

«է՛ Կոստանդին... հերիք արա սըրտիդ դադար» (ԿՅՏ, էջ 203) ևլն:

Նկատենք, որ նյութական բովանդակութիւն ունեցող այլևայլ բառերի անցումը ձայնարկութիւնների շարքը բառի ներքին նյութազրկման հետ միասին հատուկ առոգանութեամբ արտասանվելու հետևանք է: Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ ջան թուրքական լեզուներից փոխառյալ բառ է (գրաբարը շունի) և «հոգի» է նշանակում: Ժամանակակից թուրքերենում որպես գոյական այդ իմաստով էլ գործածվում է, մինչդեռ միջին հայերենում հատուկ առոգանութեան հետևանքով ջա՛ն բառն ուրախութեան և հաճելիութեան ղգացում է արտահայտում, ինչպես՝ «Եւ ասաց զհհետ աղբարն, թէ՛՛ հղբար ջա՛ն, կին այլ մաւտ ի քեզ մի թողուր» (ՎԱԱ, էջ 17): Եվ կամ՝ «Իմ սիրելիքն՝ գոչեցէք՝ ջա՛ն» (ՄՂԲ, էջ 138): Ի դեպ, միջին հայերենում կան նյութական բովանդակութիւն ունեցող բառերից առաջացած մի քանի ձայնարկութիւններ, որոնց մասին արժեք խոսել: Մօ՛ ձայնարկութիւնը, որ արական սեռի ցուցիչ է, պրոֆ. Հ. Աճառյանի կարծիքով վրացական ծուլի «տղա, մանչ, որդի» բառից է (տե՛ս Արմատական, հ. Գ, էջ 834): Եթե ուշադիր նայենք ծօ՛ բառի կիրառութիւններին, կտեսնենք, որ հայերենում շատ անգամ ավելորդաբար սեռի ցուցիչ հատուկ կամ հասարակ անուն գոյական էլ է դրվում, ինչպես՝

«Մո՛յ Զովանէս, ծո՛յ իմ տրդայ» (ՀԵԲ, էջ 165):

«Մօ՛, ես հանցեղ պարոն էի» (ՖրԲ, էջ 200) և այլն:

ՆՆԲ-ը բառս զնահատում է որպես «ոամկական ձայն, իբր ո՛ր դու»՝ նշելով, որ վկայութունները միջին հայերենից են (հ. I, էջ 1029):

Ափստ՝ս—արտահայտում է ափսոսանքի, զղջման զգացում: Ըստ պրոֆ. Հ. Աճառյանի Արմատականի, պրսկ. aīšōs «անիրավություն, զրկանք» բառից է առաջացել (տե՛ս հ. Ա, էջ 836): Կամային ձայնարկություն է, ինչպես՝ «...Ափստ՝ս, որ ծածկել ես բարակ լաշակով» (ՆՆԲ, էջ 5):

«...Ափստ՝ս, որ խիստ շատ նազ կանես» (ն. տ. էջ 37):

ՆՆԲ-ը բառս զնահատում է ոչսպես՝ «առաել ոամկորէն վաճի, որպէս մջ. աւա՛ղ, եղո՛ւկ» (հ. I, էջ 398):

Աւա՛ղ—պրոֆ. Հ. Աճառյանի կարծիքով պարսկերեն āvāx ձևից փոխառյալ չէ, այլ՝ «առ առաելն պարսկերենը կարող է փոխառեալ լինել հայերենից» (Արմատական, հ. Ա, էջ 794): Ճիշտ է, որ աւաղ բառն անկախաբար նյութական իմաստով չի կիրառված հայերենում, սակայն նրանով կազմված մի շարք բառեր (աւաղուկ (եղկելի, խեղճ), աւաղաբոյս «խղճուկ բուսած», աւեղկել «ափսոսալ, վայ կարդալ») կարող են ապացույց լինել, որ աւաղ երբևէ նյութական իմաստ ունեցող բառ է եղել: Կամային ձայնարկություն է. շատ կիրառական ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում. արտահայտում է ափսոսանք, զղջում, ինչպես՝

«Խաւարաւ աչերս ի լալոյս,

Աւա՛ղ իմ կարճ արևուս» (ԳԱԲ, էջ 257):

«Աւա՛ղ, թէ կտրեն զչուրն, լօք մընայ ձուկն ծառուած» (ՆՔԴ, էջ 46):

«Աւա՛ղ, թէ մեռնիմ պարտօք և շրլինի պարտքս վըճարած» (ՖրԲ, էջ 229)

և այլն:

Ամէն—Ոչ այնքան հայերեն ամէն, որքան եբրայական amēn «ստույգ, ճշմարիտ, այդպես լինի» (Արմատական, հ. Ա, էջ 215) բառի հետ պետք է կապել, ինչպես՝

«Յաւէտ միշտ երգել ըզփառս անձանց երից,

էրից և միոյ փառք յաւիտեանս, ամէ՛ն» (ՀՆԲ, էջ 223):

Եղո՛ւկ—Ըստ պրոֆ. Հ. Աճառյանի բնիկ հայերեն բառ է, հնիս. leug արմատից (Արմատական, հ. Բ, էջ 710): Այս բառից են եղկութիւն «թշվառութուն», եղկել «վայ տալ» և այլն: Իմաստով նույնանում է աւա՛ղ, ափսո՛ս բառերին՝ որոշ սաստկացումով, ինչպես՝ «Եւ աղուէսն ասաց. հազար եղո՛ւկ աներկեղ» (ՎԱԱ, էջ 189): Ապա և՝

«...Ամենեցուն մեզ նա պիտի.

...եղո՛ւկ մարդոյն որ զնա շունի» (ՆՇԲԶ, էջ 564):

«Եղո՛ւկ թէ յայն ձայնէն լսեմ, թէ ե՛րբ լինէն ի ձախ մընամ» (ՖրԲ, էջ 168):

Երճե՛կ, եղո՛ւկ ձայնարկությունների՝ որոշ իմաստով նյութական բովանդակությամբ հանդես գալու օրինակներ կարելի էր համարել զուցե՝ հետևյալ կիրառությունները.

«Հազար երճեկ այս աւուրս, որ մէկ տեղ ենք ժողովել» (ՀՆԲ, էջ 147):

«Երճեկ այն մարդոյն ասեմ, որ յաշխարհս ի սուզ կու՛ կենայ» (ն. տ. էջ 148):

«Հազար եղուկ իմ խելացս, որ հետ քոպիսոյն դատեցայ» (ն. տ. էջ 154)

և այլն:

Վերջին երեք ձայնարկությունները՝ աւա՞ղ, ամէ՞ն, եղո՞ւկ նշՔ-ը գիտե՞ս որպէս գրաբար բառեր և տալիս է վաղ շրջանի վկայություններ: Վերևում տեսանք, որ ի հակադրություն ասիտոս ռամկական բառի, Հայկազյանը աւաղ, եղուկ բառերն էր դնում:

Երանի՞, երնե՞կ—Ըստ պրոֆ. Հ. Աճառյանի սրանք կազմված են երան առանձին անգործածական արմատից, որ իր հերթին կազմված է եր արմատից՝ ան մասնիկով: Ըստ երևույթին սանս.—պարսկ. ran «ուրախանալ» արմատից է առաջացած (Արմատական, հ. Բ, էջ 760): Միջին հայերենում երանի՞, երնե՞կ բաղձանքի կամային ձայնարկություններ են, ինչպես՝

«Երանի՞ հազար բերան արդարոցն...» (ՀԾԲ, էջ 160):

«Երանի՞ քեզ Մարիամ» (ԿՅՏ, էջ 202):

«Երնե՞կ թէ լինէր այս ինձ...» (ՖրԲ, էջ 82) և այլն:

ՆշՔ-ը երանի բառը համարում է գրաբարյան, իսկ երնե՞կ, անշուշտ, գրաբարյան երանեակ բառի հնչյունափոխությունից է առաջացել:

Սրանցից դուրս, թվում է, որ ո՞ւր և ո՞վ ձայնարկությունները պետք է կապ ունենան համապատասխանաբար գրաբարյան ո և ով դերանունների հետ, թեև առաջինը որպէս ձայնավոր, իսկ երկրորդը որպէս ձայնավոր+բաղաձայն միացություն՝ կարող էին ո, ով դերանուններից անկախ ևս առաջանալ: Մեր կարծիքով, անցման երևույթը կատարվել էր դեռևս հնում, ուստի և «Ո՞ տայր ինձ զժուխ ծխանի...» (Մագ. ԼԳ) նախադասության մեջ ո գուցե թե դերանուն չէ, այլ ձայնարկություն, ուրեմն՝ պետք է թարգմանել՝ «Ո՞, տար (տրվեր) ինձ ծխանի ծուխ...» Ո՞, ո՞վ ձայնարկությունների՝ ո, ով դերանուններից առաջացած լինելու օգտին է խոսում նաև ինչպէս գրաբարում, այնպես էլ միջին հայերենում այդ բառերի մեծ մասամբ անձնանունների հետ գործածվելու փաստը, ինչպէս ներքևի օրինակներում տեսնում ենք: Միջին հայերենում այս երկուսն էլ ավելի շուտ կոչական կիրառություններ ունեն, ինչպէս՝

«Ո՞վ Սիմէոն ծերունի...» (ՀԾԲ, էջ 244):

«Քեզ լիցի այս խրատ, ո՞վ մարդ բանաւոր» (ՄՆԲ, էջ 142):

«Վայրի վարճինակդ եմ ես, արգելէ, ո՞ մարդ, թէ կարես» (ՆՔԴ, էջ 54) և այլն:

Պատահական նմանութեամբ (մանավանդ որ այդ ձայնարկությունները գտնում ենք նաև այլ լեզուներում) ա՞հ և ամա՞ն՝ զգացում արտահայտող ձայնարկությունները նույնանուն են հայերեն ահ «վախ» և աման «պնակ» բառերին: Ահ ձայնարկությունը բազմիմաստ է, առավելապէս արտահայտում է դժգոհություն՝ ասիտոսանքի որոշ երանգով, ինչպէս՝

«Ա՞հ, կու յիշեմ ըզձեզ ծաղկունք,

Անուշահամ աղբերակունք.

Ա՞հ, կու յիշեմ ըզձեզ թրուշունք

Քաղցրաբարբառ, և անասունք» (ՀԾԲ, էջ 234):

«Աշուն էր, եղաւ գարուն, ա՞հ, քանի կենանք մեք ի տուն» (ՆՔԴ, էջ 65):

Ամա՞ն նույնպէս բազմիմաստ է. առավելապէս արտահայտում է ցավ, վիշտ, զարմանք: Օրինակ. «Ծս քեզ գիրկ ածեմ, էլ չի կանչեմ ձեռնէդ, ամա՞ն, կարմիր վարդի թէր» (ՆՂԲ, էջ 30):

Հա՞յ ձայնարկությունն, անշուշտ, նույնպէս պատահականորեն նույնա-

նում է հայ բառի հետ: Սա կամային ձայնարկությունն է, ինչպես՝ «Հա՛յ իմ մազդ ուռի մորճիկ, շորանաս թէ զիս մոռանաս» (ՆՔԴ, էջ 47):

Այսպիսով, վերևի կիրառություններից ելնելով, միջին հայերենի ձայնարկությունները նույնպես կարելի է պարփակել զգացում արտահայտող և կամային վերաբերմունք արտահայտող խմբերի մեջ:

ա) Զգացում արտահայտող ձայնարկություններ—ա՛, ա՛հ, ա՛յ, աւա՛ղ, ափսո՛ս, ամա՛ն, երանի՛, երնե՛կ, եղո՛ւկ, է՛, ո՛հ, ջա՛ն, վա՛յ, վա՛շ և այլն:

բ) Կամային վերաբերմունք արտահայտող—ամէ՛ն, ա՛յ, է՛յ, հա՛յ, հա՛րա՛յ, հե՛յ, ծո՛, ո՛վ և այլն:

Մինչ այժմ բերված օրինակներում խոսվեց ձայնարկությունների առանձին կիրառությունների մասին, մինչդեռ խոսքին, արտահայտած զգացումին ուժգնություն տալու նպատակով ձայնարկությունները հաճախ կրկնակ են օգտագործվում, ինչպես՝

«Ամա՛ն-ամա՛ն, խիստ ես անուշ, նազլու սիրական».

«Ամա՛ն-ամա՛ն, խիստ ես պայծառ, շող արէյքական» (ՆՂԲ, էջ 21):

Այսպես նաև իրար հետ կարող են դրվել տարբեր ձայնարկություններ՝ առավելապես նույն զգացումը արտահայտող բառեր, ինչպես՝ ափսո՛ս ու վա՛յ (ՂԵԲ, էջ 210), եղո՛ւկ ու վա՛յ (ՖԲԲ, էջ 33), է՛ աւա՛ղ (ՖԲԲ, էջ 153), աւա՛ղ ու եղո՛ւկ (ՖԲԲ, էջ 172), ափսո՛ս ու վա՛խ (ՆՂԲ, էջ 97), եղո՛ւկ, վա՛յ (ՄՆԲ, էջ 151, 170) մաղա՛թ-հարա՛յ (ՆՂԲ, էջ 135), հա՛յ վա՛հ (ՆՔԴ, էջ 70) և այլն: Օրինակներ.

«է՛, աւա՛ղ, է՛, աւա՛ղ ափսոս կու լինի» (ՖԲԲ, էջ 153):

«Եղո՛ւկ ու վա՛յ հազար բերան, զինչ գործեցաւ» (ՄՆԲ, էջ 151):

«Գոռայր, կանչէր մաղա՛թ, հարա՛յ» (ՆՂԲ, էջ 135):

«Հա՛յ, վա՛հ, իմ սիրած եարն զէտ կատղած շուն զիս էխած» (ՆՔԴ, էջ 70) և այլն:

Վերևի բոլոր կիրառություններում նկատելի է, որ ձայնարկություններն սուրավելապես խոսքի, նախադասության սկզբում են հանդես գալիս, մյուս կողմից՝ առանձին ձայնարկություններ, առավելապես կամային ձայնարկությունները, երբ գործածվում են խոսակցին դիմելու համար, զգացական ձայնարկությունների նման հատուկ դադարով, իսկ գրավոր խոսքում տրոհումով չեն արտահայտվում, ինչպես՝

«Ա՛յ սերովբէք, այ քերովբէք» (ՂԵԲ, էջ 228):

«Ո՛վ խաբեբայ և խիստ սլիկ» (ՆՂԲ, էջ 137) և այլն:

Այսպես նաև գրաբարում՝ «Ա՛յ շարաբարոյ Գալլ Վահան» (ՂՈՎՀ. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ), «Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցքդ իմ» (Եղիշե, V յեղ.) և այլն:

Ձայնարկություններն իրենց իմաստային յուրահատկության պատճառով խոսքի մեջ շատ չեն կիրառվում. առավելապես օգտագործվում են գեղարվեստական խոսքի մեջ, մանավանդ զրուցցի, երկխոսությունների ժամանակ: Այս իմաստով պատահական չէ, որ մեր մշակած բժշկագիտական և դիվանա-ատենական գրականության երկերում (Ս. Գունդատապլ, Ա. Ամասիացի, Գրիգորիս I: այլք) ձայնարկություններ խիստ հազվադեպ են պատահում:

Ձայնարկություններն այլևայլ կազմությունների մեջ չեն մտնում, միայն



պետք է նշել, որ առավելապես տալ, լինել, փաշել և նման բայերի հետ հարադրութուններ են կազմում, ինչպես՝ վայ տալ (ՖրՔ, էջ 100, 168), երանի տալ (ՆՀՔ, էջ 60), վաշ տալ (ն. տ. էջ 86), ախ-վախ տալ (ն. տ. էջ 143), վայ և Լզուկ տալ (ՄՂՔ, էջ 109), ափսոս լինել (ՖրՔ, էջ 153), ախ փաշել (ՆՀՔ, էջ 41, 219) և այլն: Օրինակներ.

«Երնէկ ես անոր կուտամ որ առեր իւր եարն է փախեր» (ՆՔԳ, էջ 50):

«Քեզ ճանաչիր, գլխիդ վայ տուր» (ՆՀՔ, էջ 149):

«Քեզ տեսնելով, ախ փաշելով կու մաշվեմ» (ն. տ. էջ 41):

«է՛ աւա՛ղ, է՛ աւա՛ղ, ափսոս կու լինի» (ՖրՔ, էջ 153) և այլն:

Այստեղ պետք է նշել նաև ձայնարկութունների փոխանվանական կիրառութիւնների մասին. ինչպես գրաբարում՝ «Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց... զվայ և զաւաղ բարեկամացն» (Սղիշե, V, յեղ.), այնպես նաև միջին հայերենում՝ «...Բայց յետոյ զըղջանալով ասնս վայ և թու» (ՀԵՔ, էջ 203):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965:
2. Աբրահամյան Ա., *Գրաբարի ձևնարկ*, Երևան, 1958:
3. Աբրահամյան Ա., *Հայերենի դերբալները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Երևան, 1953:
4. Աբրահամյան Ա., *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Երևան, 1962:
5. Աբրահամյան Ա., *Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ*, («Տեղեկագիր», 1957, № 4):
6. Աբրահամյան Ա., *Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965:
7. Ալիշան Ղ., *Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն*, Վենետիկ, 1895:
8. Աղայան Է., *Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում*, *Պատմա-բանասիրական հանդես*, 1962, № 1 (6):
9. Աղայան Է., *Մեղրու բարբառը*, Երևան, 1954:
10. Աղայան Է., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1967:
11. Աղայան Է., *Գրաբարի քերականություն*, հ. I, գիրք Ա, Երևան, 1964:
12. Աճառյան Հ., *Հայերէն գաւառական բառարան (աէմիւնեան ազգագրական ժողովածու)*, հ. Թ, *Թիֆլիս*, 1913):
13. Աճառյան Հ., *Քննություն նոր-Ջուղայի բարբառի*, Երևան, 1940:
14. Աճառյան Հ., *Կրակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հ. IV Ա, Երևան, 1959, հ. IV Բ, Երևան, 1961:
15. Աճառյան Հ., *Հայոց լեզվի պատմություն*, մասն Բ, Երևան, 1951:
16. Ամատունի Ս., *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912:
17. Այտրենյան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866:
18. Առաֆեյան Վ., *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Երևան, 1957:
19. Առձևն բառարան Հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
20. Առատուր Զ. Հ., *Գործնական քերականություն արդի աշխարհաբարի*, Բ գիրք, Կ. Պոլիս, 1915:
21. Արենյցի Վ., *Պատմություն տիեզերական*, Մոսկվա, 1861:
22. Բագրատունի Ա., *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, 1852:
23. Բարսեղյան Հ., *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953:
24. Բիլզանդացի Ն., *Հայկական բառաքննություն*, Կ. Պոլիս, 1880:
25. Բիլզանդացի Ն., *Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ—ԺԷ դարուց*, Ստոկհոլմ, 1884 (միկրոֆիլմ):
26. Բիլզանդացի Ն., *Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կ. Պոլիս, 1894:
27. Բիլզանդացի Ն., *Քննադատություն Հայրուսակի*, Վիեննա, 1925:
28. Խաչերյան Լ., *Գրություն արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1962:
29. Karst J.—Aussprache und Vocalismus des Kilikisch-Armenischen, Strassburg, 1889
30. Karst J.—Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901.
31. Karst J.—Wörterbuch des Mittelarmenischen. Historisch-Etymologisch (ձեռագիր):
32. Կոստանդին Երզնկացի և իր քերթուածները, հրատ. Պոստուրեան, Բուխարեստ, 1924—1930:
33. Հովհաննես Ղ., *Հետազոտութիւնք նախնեաց ռամկորէնի վրայ*, Վիեննա, 1897:
34. Hübschmann H.—Armenische Grammatik, I, Leipzig, 1895, II, 1897.

35. Ղազարյան Ա., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954:
36. Ղազարյան Ա., Միջին հայերեն, Գիրք Ա, Երևան, 1960:
37. Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:
38. Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944—1945:
39. Սարգսյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
40. Նոր Բաղդիրը Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—1837:
41. Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1963, № 3 (22):
42. Զահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:
43. Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:
44. Սարգսեան Ա., Ազուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883:
45. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
46. Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բազրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

ՍԿՋՔՆԱՂԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱԱԱԱ կամ Ամիրդ. Անգ. անպ — Ամիրդովլաթի Ամասիացույ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, ի լրյս էած հանդերձ ժանօթագրութեամբ Կ. Յ. Բասմաշեան, Վիեննա, 1926:
2. ԱԱՔՔ — Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
3. Ամիրդ. Ուս. բժշկ — Ամիրդովլաթ Ամասիացու Ուսումն բժշկութեան հեղինակային ձեռագիրը, Մաշտոցի անվան մատենադարանի № 8871 ձեռագիր, գրչ. թվ. 1459:
4. Ամիրդ. օգ. բժշկ. կամ ԱՕԲ — Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբագրութիւնամբ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940:
5. Անս. — Assises d' Antioche, Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876:
6. ԱռձԲ — Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
7. ԳԱԲ կամ Գր. Աղթ. — Գրիգորիս Աղթամարցի, ուսումնասիրութիւն, քննական բնագրեր և ծանոթագրութիւններ Մալխա Ավդալբեգյանի, Երևան, 1963:
8. Գ. Հովս. հձ — Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250), Անթիլիաս, 1951:
9. Գրիգ. կամ ԳՔԲ — Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, աշխատասիրութիւնամբ Ա. Ս. Կժոյանի, խմբագրութիւնամբ Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, 1962:
10. Դհվ. I — Դիվան հայ վիմագրութիւն, պրակ I, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966:
11. Դհվ. II — Դիվան հայ վիմագրութիւն, պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960:
12. Դհվ. III — Դիվան հայ վիմագրութիւն, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967:
13. ԵԿԵԱ — Ե. Կողբացի, Եզժ աղանդոց, Թիֆլիս, 1914:
14. ԵՎՂՊ — Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
15. ԶԱՕ — Զ. Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938:
16. ԺԴ հձ — ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:
17. ԺԵ հձ I — ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955:
18. ԺԵ հձ II — ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958:
19. ԺԵ հձ III — ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967:
20. Խաշ. Կեշ. կամ ԽԿ — Ավդալբեգյան, Մ. Թ., — Խաշատուր Կեշառեցի, Երևան, 1958:
21. Կամենեց-Պողոսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրութիւնները, աշխատասիրութիւնամբ Վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963:
22. Կ. Երզնկ. կամ ԿԵ (Տ) — Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրութիւնամբ Արմենուհի Մրապյանի, Երևան, 1962:
23. ԿՂ Հաղբ. — Կարո Ղաֆաղարյան, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքներ և վիմական արձանագրութիւններ, Երևան, 1963:
24. ԿՂՂվ — Կարո Ղաֆաղարյան, Հովհաննա վանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1948:
25. ԿՂ Սանահ. — Կարո Ղաֆաղարյան, Սանահի վանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1957:
26. ԿՎՄ — Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

7. KWM—Karst J., Wörterbuch des Mittelarmenischen (ձեռագիր):
28. ՀԱԳ—XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Երևան, 1938:
29. ՀԱՀԱԲ կամ Հ. ԱՃ. Արմ.—Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926—1935:
30. ՀԱՀԼՊ—Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Բ, Երևան, 1951:
31. Հայերեն արձանագրությունք առարկաներ, աշխատասիրությունք Եվզինն Մուշեղյանի, Երեւան, 1964:
32. ՀԵ(Բ) կամ Հով. Երզնկ.—Հովհաննես Երզնկացի, Ուսումնասիրություն և բնագրեր, Արմենուհի Սրապյան, Երևան, 1958:
33. ՀԹՏ կամ Հ (ռվ.).Քլկ.—Հովհաննես Քլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությունք էմ. Պիվազյանի, Երևան, 1960:
34. Ձեռ. 7151—Մաշտոցի անվան մատենադարանի № 7151 ձեռագիր, գրչ. թվ. XIV դ., վայրը՝ Սյունիք:
35. Ձեռ. 8030—Մաշտոցի անվան մատենադարանի № 8030 ձեռագիր, ճառերտիր, գրչ. թվ. 1341, գրիչ՝ Տերտեր քահանա Երևանցի:
36. ՂԱԱ կամ Ալիշ. Այր.—Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1890:
37. ՂԱԵ կամ Ալիշ. Շիր.—Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեաց Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1881:
38. ՂԱՍԿ—Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893:
39. ՂՀ (Հ) կամ ՂՀՆՈ—Ղ. Հովհաննէան, Հետազոտութիւնք նախնեաց ոսմկօրէնի վրայ, Վիեննա, 1897:
40. ՄԱՀԼՏ—Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
41. Մանր ծմնկ. կամ ՄԺ II—Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.) Կ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956:
42. Մխ. Հեր.—Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, ձեռ. 416, գրչ. թվ. 1279:
43. ՄեշՊ—Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1913:
44. ՄՀ(ԶՄ)—Մ. Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:
45. ՄՂԲ.—Մ. Ղրիմեցի, Բանաստեղծություններ, Երևան, 1965:
46. ՄՆ(Բ).—Մ. Նաղաշ, Բանաստեղծություններ, Երևան, 1965:
47. Մ. Քնշ. Յուց.—Մ. Քնշիշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Ձմառի վանքի մատենադարանի, Վիեննա, 1964:
48. ՆՐՍՀ—Նորայր Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերէնի (ձեռագիր միկրոսպավեն):
49. Ներս. Շնորհ. ԲԶ կամ ՆՇԲԶ—Ներսէս Շնորհալի, Բանք շափաւ, Վենետիկ, ՌՄՀԹ:
50. ՆՀԲ—Նոր բառգիրք հայկազնան լեզուի, Վենետիկ, 1836—1837:
51. Ն. Հովն. կամ ՆՀԲ—Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951:
52. ՆՔԳ կամ Ն. Քուշ.—Ն. Քուշակ, Դիվան, Փարիզ, 1902:
53. Շահխթ.—Շահխաթունեան, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի..., էջմիածին, Կ. II, 1842:
54. Ս(Գ)Գ—Ս. Գունդասապլ, Դատաստանագիրք, էջմիածին, 1918:
55. Սմբ. Դատ.—Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի, Երևան, 1958:
56. Սմբ. Տարեգ.—Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956:
57. ՎԱԱ—Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894:
58. Վիմ. Տար.—Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս.-Պետերբուրգ, 1913:
59. Վստ(կ).—Գիրք Վաստակոց (TEOPONIKA). Թարգմանութիւն նախնեաց լարարացի լեզուէ, Վենետիկ, 1877:
60. ՓՐՊՀ—Փ. Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1912:
61. Ֆ(ր)Բ—Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941:
62. Ֆր(Դ)—Ֆրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Երկու խոսք . . . . .	3
----------------------	---

**Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Ուսումնասիրութեան պատմութեան համառոտ ակնարկ . . . . .	5
Ուսումնասիրութեան մեթոդը . . . . .	24
Միջին հայերենի ընդհանուր բնութագիրը . . . . .	27
Միջին հայերենի հիմքի, նրա բարբառային բաժանվածութեան հարցերը . . . . .	32
Միջին հայերենի ժամանակաշրջանի հարցը . . . . .	42
Սկզբնաղբյուրներն ու նրանց լեզվաբանական արժեքը . . . . .	45

**Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Ձայնավոր հնչյուններ . . . . .	58
Ձայնավորների փոփոխությունները . . . . .	73
Պարբարի երկբարբառների փոփոխությունները միջին հայերենում . . . . .	89
Բաղախայնները և նրանց փոփոխությունները . . . . .	109
Պայթականներ և պայթաշփականներ . . . . .	109
Շփական բաղաձայններ . . . . .	123
Ձայնորդներն ու նրանց փոփոխությունները . . . . .	134
Հնչյունափոխական այլ երևույթներ . . . . .	143
Հնչյունների անկում . . . . .	143
Հնչյունների ամփոփում . . . . .	151
Հնչյունների հավելում . . . . .	153
Հնչյունների առնմանում և տարնմանում . . . . .	155
Հնչյունների բարդացում . . . . .	159
Դրափոխություն . . . . .	161

**Բ Ա Ռ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Առաջարան . . . . .	169
Միջին հայերենի բառաշերտերը . . . . .	173
I. Գրաբարից ավանդված բառեր . . . . .	173
Գրաբարի ազդեցությունը . . . . .	181
Իմաստափոխություն . . . . .	183
II. Միջին հայերենով ավանդված բառեր . . . . .	187
1. Բնիկ բառեր . . . . .	187
2. Ենթաշերտային բառեր . . . . .	191
3. Փոխառյալ բառեր . . . . .	197
Արաբերեն բառեր . . . . .	199
Պարսկերեն բառեր . . . . .	224
Թուրքական լեզուներից ներթափանցած բառեր . . . . .	236
Հունարեն բառեր . . . . .	241
Լատիներեն, իտալերեն բառեր . . . . .	242
Յրանսերեն բառեր . . . . .	243
Բառակազմություն . . . . .	246
Ամփոփում . . . . .	257
Հավելված (օտար բառերի ցանկեր) . . . . .	258
Արաբերեն բառերի ցանկ . . . . .	258
Պարսկերեն բառերի ցանկ . . . . .	275
Թուրքական բառերի ցանկ . . . . .	284

Հունարեն բառերի ցանկ . . . . .	288
Լատիներեն և իտալերեն բառերի ցանկ . . . . .	292
Ֆրանսերեն բառերի ցանկ . . . . .	293
Ասորերեն բառերի ցանկ . . . . .	295
Եբրայերեն բառեր . . . . .	296
Վրացերեն բառերի ցանկ . . . . .	296

**ԲԱՅԸ ԵՎ ՆՐԱ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Մոտի . . . . .	299
Խոնարհման համակարգը XII—XIV դդ. . . . .	
Դերբայներ . . . . .	301
Բայի եղանակները . . . . .	321
Խոնարհման համակարգը XV—XVII դդ. . . . .	
Դերբայներ . . . . .	361
Բայի եղանակները . . . . .	381
Չբեկվող խոսքի մասեր . . . . .	407
1. Մակբայ . . . . .	408
2. Կապ . . . . .	426
3. Շաղկապ . . . . .	451
4. Եղանակավորող բառեր . . . . .	470
5. Չայնարկություն . . . . .	485
Ըգտագործված գրականության ցանկ . . . . .	491
Սկզբնաղբյուրներն ու նրանց համառոտագրությունները . . . . .	493

**ԱԿՆԱՐԿՆԵՐ ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ  
ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ  
Հր. Անառայանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Կազմը՝ Հ. Ա. ՂԱՆԱԼՆՅԱՆԻ  
Տեխ. խմբագիր Ս. Կ. ՋԱԲԱՐՅԱՆ  
Սրբագրիչ Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

ՎՅ 03776      ԽՀԽ 1285.      Պատվեր 922.      Հրատ. 3440.      Տպաքանակ 1500

Հանձնված է արտադրության 26/III 1970 թ., ստորագրված է տպագրության 24/VII 1972թ., տպագրական  
31,0 մամուլ, հրատ. 36,38 մամուլ, պայման. 43,4 մամուլ, թուղթ № 1, 70×108<sup>1</sup>/<sub>16</sub>: Գինը 2 ռ. 70 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան

Ն Կ Ա Տ Վ Ա Ծ Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	Տող	Տպագած է	Պետք է լինի
28	20 ն.	շփման	շփական
47	18 ն.	չ. Երզնկացու.	չ. Երզնկացու.
61	24 վ.	ندو	اندو
88	2 ն.	է>ա	է>ա